

Holy Bible

Aionian Edition®

Արեւմտահայերէն Աստվածաշունչ
Western Armenian New Testament

AionianBible.org
աշխարհի առաջին հետթարգմանուած Աստուածաշունչը
100% անվճար կրկնօրինակել կամ տպել
նաեւ հայտնի է որպէս
“ Մանուշակագոյն Աստուածաշունչ ”

Holy Bible Aionian Edition ®

Արեւմտահայերէն Աստվածաշունչ
Western Armenian New Testament

Creative Commons Attribution 4.0 International, 2018-2025

Source text: Crosswire.org

Source version: 7/18/2013

Source copyright: Public Domain

Translator unknown, 1853

Formatted by Speedata Publisher 5.1.9 (Pro) on 6/2/2025

100% Free to Copy and Print

TOR Anonymously

<https://AionianBible.org>

Published by Nainoia Inc, <https://Nainoia-Inc.signedon.net>

All profits are given to <https://CoolCup.org>

We pray for a modern Creative Commons translation in every language
Translator resources at <https://AionianBible.org/Third-Party-Publisher-Resources>

Report content and format concerns to Nainoia Inc

Volunteer help is welcome and appreciated!

Celebrate Jesus Christ's victory of grace!

Նախաբան

Արեւմտահայերէն at AionianBible.org/Preface

The *Holy Bible Aionian Edition* ® is the world's first Bible *un-translation*! What is an *un-translation*? Bibles are translated into each of our languages from the original Hebrew, Aramaic, and Koine Greek. Occasionally, the best word translation cannot be found and these words are transliterated letter by letter. Four well known transliterations are *Christ*, *baptism*, *angel*, and *apostle*. The meaning is then preserved more accurately through context and a dictionary. The Aionian Bible un-translates and instead transliterates eleven additional Aionian Glossary words to help us better understand God's love for individuals and all mankind, and the nature of afterlife destinies.

The first three words are *aiōn*, *aiōnios*, and *aīdios*, typically translated as *eternal* and also *world* or *eon*. The Aionian Bible is named after an alternative spelling of *aiōnios*. Consider that researchers question if *aiōn* and *aiōnios* actually mean *eternal*. Translating *aiōn* as *eternal* in Matthew 28:20 makes no sense, as all agree. The Greek word for *eternal* is *aīdios*, used in Romans 1:20 about God and in Jude 6 about demon imprisonment. Yet what about *aiōnios* in John 3:16? Certainly we do not question whether salvation is eternal! However, *aiōnios* means something much more wonderful than infinite time! Ancient Greeks used *aiōn* to mean *eon* or *age*. They also used the adjective *aiōnios* to mean *entirety*, such as *complete* or even *consummate*, but never infinite time. Read Dr. Heleen Keizer and Ramelli and Konstan for proofs. So *aiōnios* is the perfect description of God's Word which has *everything* we need for life and godliness! And the *aiōnios* life promised in John 3:16 is not simply a ticket to eternal life in the future, but the invitation through faith to the *consummate* life beginning now!

The next seven words are *Sheol*, *Hadēs*, *Geenna*, *Tartaroō*, *Abyssos*, and *Limnē Pyr*. These words are often translated as *Hell*, the place of eternal punishment. However, *Hell* is ill-defined when compared with the Hebrew and Greek. For example, *Sheol* is the abode of deceased believers and unbelievers and should never be translated as *Hell*. *Hadēs* is a temporary place of punishment, Revelation 20:13-14. *Geenna* is the Valley of Hinnom, Jerusalem's refuse dump, a temporal judgment for sin. *Tartaroō* is a prison for demons, mentioned once in 2 Peter 2:4. *Abyssos* is a temporary prison for the Beast and Satan. Translators are also inconsistent because *Hell* is used by the King James Version 54 times, the New International Version 14 times, and the World English Bible zero times. Finally, *Limnē Pyr* is the Lake of Fire, yet Matthew 25:41 explains that these fires are prepared for the Devil and his angels. So there is reason to review our conclusions about the destinies of redeemed mankind and fallen angels.

The eleventh word, *eleēsē*, reveals the grand conclusion of grace in Romans 11:32. Please understand these eleven words. The original translation is unaltered and a highlighted note is added to 64 Old Testament and 200 New Testament verses. To help parallel study and Strong's Concordance use, apocryphal text is removed and most variant verse numbering is mapped to the English standard. We thank our sources at eBible.org, Crosswire.org, unbound.Biola.edu, Bible4u.net, and NHEB.net. The Aionian Bible is copyrighted with creativecommons.org/licenses/by/4.0, allowing 100% freedom to copy and print, if respecting source copyrights. Check the Reader's Guide and read at AionianBible.org, with Android, and with TOR network. Why purple? King Jesus' Word is royal and purple is the color of royalty! All profits are given to CoolCup.org.

History

Արեւմտահայերէն at AionianBible.org/History

06/21/75 - Two boys, P. and J., wonder if Jesus saves all and pray.
04/15/85 - Aionian Bible conceived as B. and J. pray.
12/18/13 - Aionian Bible announced as J. and J. pray.
06/21/15 - Aionian Bible birthed as G. and J. pray.
01/11/16 - AionianBible.org domain registered.
06/21/16 - 30 translations available in 12 languages.
12/07/16 - Nainoia Inc established as non-profit corporation.
01/01/17 - Creative Commons Attribution No Derivatives 4.0 license added.
01/16/17 - Aionian Bible Google Play Store App published.
07/01/17 - 'The Purple Bible' nickname begins.
07/30/17 - 42 translations now available in 22 languages.
02/01/18 - Holy Bible Aionian Edition® trademark registered.
03/06/18 - Aionian Bibles available in print at Amazon.com.
09/15/18 - Aionian Bible dedicated as J. and J. pray again.
10/20/18 - 70 translations now available in 33 languages.
11/17/18 - 104 translations now available in 57 languages.
03/24/19 - 135 translations now available in 67 languages.
10/28/19 - Aionian Bible nursed as another J. and J. pray.
10/31/19 - 174 translations now available in 74 languages.
02/22/20 - Aionian Bibles available in print at Lulu.com.
05/25/20 - Illustrations by Gustave Doré, La Grande Bible de Tours, Felix Just.
08/29/20 - Aionian Bibles now available in ePub format.
12/01/20 - Right to left and Hindic languages now available in PDF format.
03/31/21 - 214 translations now available in 99 languages.
11/17/21 - Aionian Bible Branded Leather Bible Covers now available.
12/20/21 - Social media presence on Facebook, Twitter, LinkedIn, YouTube, etc.
01/01/22 - 216 translations now available in 99 languages.
01/09/22 - StudyPack resources for Bible translation study.
01/23/22 - Volunteers celebrate with pie and prayer.
02/14/22 - Strong's Concordance from Open Scriptures and STEP Bible.
02/14/23 - Aionian Bible published on the TOR Network.
12/04/23 - Eleēšē added to the Aionian Glossary.
02/04/24 - 352 translations now available in 142 languages.
05/01/24 - 370 translations now available in 164 languages.
08/05/24 - 378 translations now available in 165 languages.
08/18/24 - Creative Commons Attribution 4.0 International, if source allows.
10/20/24 - Gospel Primer handout format.
11/24/24 - Progressive Web Application off-line format.
01/28/25 - All profits are given to CoolCup.org.
03/12/25 - 382 translations now available in 166 languages.
05/04/25 - 393 translations now available in 175 languages.
05/27/25 - 462 translations now available in 229 languages.

բովանդակություն

Նոր Կտակարան

ՄԱՏԹԵՈՍ	11
ՄԱՐԿՈՍ	104
ԴՈՒԿԱՍ	162
ՅՈՎՀԱՆՆՈՒ	261
ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ	336
ՀՈՌՎՄԱՅԵՑԻՍ	435
ԱՌԱՋԻՆ ԿՈՐՆԹԱՑԻՍ	477
ԵՐԿՐՈՐԴԻ ԿՈՐՆԹԱՑԻՍ	516
ԳԱՂԱՏԱՑԻՍ	543
ԵՓԵՍԱՑԻՍ	557
ՓԻԼԻՊՊԵՑԻՍ	571
ԿՈՂՈՍԱՑԻՍ	581
ԱՌԱՋԻՆ ԹԵՍԱԴՈՆԻԿԵՑԻՍ	590
ԵՐԿՐՈՐԴԻ ԹԵՍԱԴՈՆԻԿԵՑԻՍ	598
ԱՌԱՋԻՆ ՏԻՄՈԹԵՈՍ	603
ԵՐԿՐՈՐԴԻ ՏԻՄՈԹԵՈՍ	614
ՏԻՏՈՍ	622
ՓԻԼԻՄՈՆ	627
ԵՔՐԱՅԵՑԻՍ	629
ՅԱԿՈԲՈՒ	659
ԱՌԱՋԻՆ ՊԵՏՐՈՍԻ	669
ԵՐԿՐՈՐԴԻ ՊԵՏՐՈՍԻ	680
ԱՌԱՋԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ	687
ԵՐԿՐՈՐԴԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ	697
ԵՐՐՈՐԴԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ	699
ՅՈՒԴԱՅԻ	701
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ	705

հավելում

ընթերցողի ուղեցույց


բառգիրք

քարտեզներ

ճակատագիր

նկարազարդումներ, Doré

Նոր Կտակարան



Յիսուս ըսաւ. «Յայր, ներ՛ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»:
Յետոյ անոր հանդերձները բաժնելու ատեն՝ վիճակ ձգեցին:
ՂՈՒԿԱՍ 23:34

ՄԱՏԹԷՈՍ

1 Յիսուս Բրիստոսի՝ Դաւիթի որդիին, Աբրահամի որդիին ծնունդի գիրքը: **2** Աբրահամ ծնաւ Իսահակը. Իսահակ ծնաւ Յակոբը. Յակոբ ծնաւ Յուդան ու անոր եղբայրները. **3** Յուդա ծնաւ Փարէսն ու Չարան՝ Թամարէն. Փարէս ծնաւ Եսրոնը. Եսրոն ծնաւ Արամը. **4** Արամ ծնաւ Ամինադաբը. Ամինադաբ ծնաւ Նաասոնը. Նաասոն ծնաւ Սաղմոնը. **5** Սաղմոն ծնաւ Բոոսը՝ Ռախաբէն. Բոոս ծնաւ Ուրբէղը՝ Յուլթէն. Ուրբէղ ծնաւ Յեսսէն. **6** Յեսսէ ծնաւ Դաւիթ թագաւորը. Դաւիթ թագաւորը ծնաւ Սողոմոնը՝ Ուրիայի կնոջմէն. **7** Սողոմոն ծնաւ Ռոբովամը. **8** Ռոբովամ ծնաւ Աքիան. Աքիա ծնաւ Ասան. Ասա ծնաւ Յովսափատը. Յովսափատ ծնաւ Յովրամը. Յովրամ ծնաւ Ոգիան. **9** Ոգիա ծնաւ Յովաթամը. Յովաթամ ծնաւ Աքազը, Աքազ ծնաւ Եզեկիան. **10** Եզեկիա ծնաւ Մանասէն. Մանասէ ծնաւ Ամոնը. **11** Ամոն ծնաւ Յովսիան. Յովսիա ծնաւ Յեքոնիան ու անոր եղբայրները՝ Բաբելոնի տարագրութեան ատենները. **12** Բաբելոնի տարագրութենէն ետք՝ Յեքոնիա ծնաւ Սաղաթիէլը. **13** Սաղաթիէլ ծնաւ Չորաբաբէլը. Չորաբաբէլ ծնաւ Աբիուղը. Աբիուղ ծնաւ Եղիակիմը. **14** Եղիակիմ ծնաւ Ազովրը. Ազովր ծնաւ Սաղովկը. Սաղովկ ծնաւ Աքինը. Աքին ծնաւ Եղիուղը. **15** Եղիուղ ծնաւ Եղիազարը. Եղիազար ծնաւ Մատթանը. **16** Մատթան ծնաւ Յակոբը. Յակոբ ծնաւ Յովսէփը՝ ամուսինը Մարիամի, որմէ ծնաւ Յիսուս, որ կոչուեցաւ Բրիստոս: **17**

Ուրեմն բոլոր սերունդները Աբրահամէն մինչեւ
 Դաւիթ՝ տասնչորս սերունդ են, եւ Դաւիթէն մինչեւ
 Բաբելոնի տարագրութիւնը՝ տասնչորս սերունդ,
 ու Բաբելոնի տարագրութենէն մինչեւ Քրիստոս՝
 տասնչորս սերունդ: **18** Յիսուս Քրիստոսի ծնունդը
 եղաւ սանկերպով: Անոր մայրը՝ Մարիամ, Յովսէփի
 նշանուած, Սուրբ Հոգիէն յղացած գտնուեցաւ՝ դեռ
 իրարու քով չեկած: **19** Յովսէփ՝ անոր ամուսինը,
 արդար մարդ ըլլալով, ու չուզելով որ խայտառակէ
 զայն, կը ծրագրէր ծածկաբար արձակել զայն:
20 Մինչ ան այդպէս կը մտածէր, ահա՛ Տէրոջ
 հրեշտակը երեւցաւ անոր՝ երագի մէջ, եւ ըսաւ.
 «Յովսէփ, Դաւիթի որդի, մի վախնար քովդ առնել
 կինդ՝ Մարիամը, որովհետեւ անոր մէջ յղացուածը
 Սուրբ Հոգիէն է: **21** Ան պիտի ծնանի որդի մը, եւ
 անոր անունը Յիսուս պիտի կոչես, քանի որ ան
 պիտի փրկէ իր ժողովուրդը իրենց մեղքերէն»: **22**
 Այս ամէնը կատարուեցաւ, որպէսզի իրագործուի
 մարգարէին միջոցով ըսուած Տէրոջ խօսքը. **23**
 «Ահա՛ կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի,
 եւ անոր անունը Էմմանուէլ պիտի կոչեն», որ կը
 թարգմանուի՝ Աստուած մեզի հետ: **24** Յովսէփ
 քունէն արթննալով՝ ըրաւ ինչ որ Տէրոջ հրեշտակը
 հրամայեց իրեն, եւ քովը առաւ իր կինը: **25** Ու
 չգիտցաւ զայն՝ մինչեւ որ ան ծնաւ իր անդրանիկ
 որդին. եւ անոր անունը Յիսուս կոչեց:

2 Երբ Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթլեհեմին մէջ՝
 Հերովդէս թագաւորին օրերը, ահա՛ արեւելքէն
 մոզեր եկան Երուսաղէմ, **2** եւ ըսին. «Ո՞րք է ան՝

որ ծնաւ իբր Յրեաներուն թագաւորը. որովհետեւ մենք տեսանք անոր աստղը՝ արեւելքի մէջ, ու եկանք երկրպագելու անոր»։ 3 Երբ Յերովդէս թագաւորը լսեց՝ վրդովեցաւ, եւ իրեն հետ՝ ամբողջ Երուսաղէմը։ 4 Ապա, հաւաքելով բոլոր քահանայապետներն ու ժողովուրդին դպիրները, հարցափորձեց զանոնք թէ ո՛ր պիտի ծնէր Քրիստոսը։ 5 Անոնք ալ ըսին իրեն. «Յրեաստանի Բեթլեհէմին մէջ։ Որովհետեւ սա գրուած է մարգարէին միջոցով. 6 “Դո՛ւն, Բեթլեհէմ, Յուդայի երկիր, Յուդայի կառավարիչներուն մէջ բնաւ ամենափոքրը չես. որովհետեւ Կառավարիչ մը պիտի ելլէ քեզմէ, որ պիտի հովուէ իմ ժողովուրդս՝ Իսրայելը”»։ 7 Այն ատեն Յերովդէս ծածկաբար կանչեց մոգերը, ստուգեց անոնցմէ աստղին երեւցած ժամանակը, 8 եւ դրկեց զանոնք Բեթլեհէմ՝ ըսելով. «Գացէք, ճշգրտութեամբ տեղեկացէք մանուկին մասին, ու երբ գտնէք զայն՝ լուր բերէք ինձի, որպէսզի նս ալ երթամ՝ երկրպագեմ անոր»։ 9 Երբ անոնք թագաւորէն լսեցին այս խօսքը, մեկնեցան. եւ ահա այն աստղը՝ որ տեսեր էին արեւելքի մէջ, կ’երթար անոնց առջեւէն՝ մինչեւ որ եկաւ ու կեցաւ մանուկին եղած տեղին վրայ։ 10 Երբ տեսան աստղը, չափազանց ուրախացան։ 11 Եւ տուն մտնելով՝ տեսան մանուկը, իր մօր՝ Մարիամի հետ. իյնալով երկրպագեցին անոր, ու բանալով իրենց գանձերը՝ մատուցանեցին անոր ընծաներ.- ոսկի, կնդրուկ եւ զմուռս։ 12 Ու երազի մէջ պատգամ ստանալով՝

որ չվերադառնան Յերովդէսի, ուրիշ ճամբայով մեկնեցան իրենց երկիրը: **13** Երբ անոնք մեկնեցան, ահա Տէրոջ հրեշտակը երազի մէջ երեւցաւ Յովսէփի եւ ըսաւ. «Ոտքի ելիր, ան մանուկն ու անոր մայրը, եւ փախիր Եգիպտոս. հոն կեցիր՝ մինչեւ որ քեզի ըսեմ, քանի որ Յերովդէս պիտի փնտռէ մանուկը՝ կորսնցնելու համար զայն»: **14** Ան ալ ոտքի ելաւ, գիշերուան մէջ առաւ մանուկն ու անոր մայրը, մեկնեցաւ Եգիպտոս, եւ հոն էր մինչեւ Յերովդէսի վախճանիլը, **15** որպէսզի իրագործուի մարգարէին միջոցով ըսուած Տէրոջ խօսքը. «Եգիպտոսէն կանչեցի իմ որդիս»: **16** Այն ատեն Յերովդէս, տեսնելով թէ խաբուեցաւ մոգերէն, սաստիկ զայրացաւ, ու դրկեց՝ ջարդեց Բեթլեհեմի եւ անոր ամբողջ հողամասին մէջ եղող բոլոր մանուկները՝ երկու տարեկան ու անկէ վար, այն ժամանակին համեմատ՝ որ ստուգած էր մոգերէն: **17** Այն ատեն իրագործուեցաւ Երեմիա մարգարէին միջոցով ըսուած խօսքը. «Ռամայի մէջ լուեցաւ ձայն մը, ողբ, լաց ու մեծ սուգ. **18** Ռաբել կու լար իր գաւակներուն վրայ ու չէր ուզեր մխիթարուիլ, որովհետեւ չկային»: **19** Երբ Յերովդէս վախճանեցաւ, Տէրոջ հրեշտակը Եգիպտոսի մէջ երեւցաւ Յովսէփի՝ երազի մէջ, եւ ըսաւ. **20** «Ոտքի ելիր, ան մանուկն ու անոր մայրը, եւ գնա Իսրայէլի երկիրը, որովհետեւ մեռան անոնք՝ որ կը փնտռէին մանուկին անձը»: **21** Ան ալ ոտքի ելաւ, առաւ մանուկն ու անոր մայրը, եւ եկաւ Իսրայէլի երկիրը: **22** Իսկ երբ լսեց թէ Արթեղայոս կը թագաւորէր

Յրեաստանի վրայ, իր հօր՝ Յերովդէսի տեղ, վախցաւ հոն երթալու եւ երազի մէջ պատգամ ստանալով՝ մեկնեցաւ Գալիլեայի կողմերը, **23** ու եկաւ բնակեցաւ Նազարէթ կոչուած քաղաքը, որպէսզի իրագործուի մարգարէներուն խօսքը. «Նազովրեցի պիտի կոչուի»:

3 Այդ օրերը Յովհաննէս Մկրտիչը եկաւ, Յրեաստանի անապատին մէջ քարոզելով **2** եւ ըսելով. «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկինքի թագաւորութիւնը մօտեցած է»: **3** Այս է ան, որուն մասին Եսայի մարգարէն խօսեցաւ՝ ըսելով. «Անապատին մէջ գոչողին ձայնը. “Պատրաստեցէ՛ք Տէրոջ ճամբան, շտկեցէ՛ք անոր շաւիղները”»: **4** Յովհաննէսի հագուստը ուղտի մազէ էր, իր մէջքին շուրջ՝ կաշիէ գօտի ունէր, եւ իր կերակուրը՝ մարախ ու վայրի մեղր էր: **5** Այն ատեն Երուսաղէմէն, ամբողջ Յրեաստանէն եւ Յորդանանի ամբողջ շրջակայքէն կ'երթային իրեն, **6** կը մկրտուէին իրմէ՝ Յորդանանի մէջ, ու կը խոստովանէին իրենց մեղքերը: **7** Երբ տեսաւ Փարիսեցիներէն եւ Սադուկեցիներէն շատեր՝ որ եկած էին իր մկրտութեան, ըսաւ. «Իժերո՛ւ ծնունդներ, ո՞վ իմացուց ձեզի՝ խուսափիլ գալիք բարկութենէն: **8** Ուրեմն ապաշխարութեան արժանավայել պտո՛ւղ բերէք. **9** ու մի՛ մտածէք ձեր մէջ ըսել. “Մենք Աբրահամը ունինք իբր հայր”. որովհետեւ կը յայտարարեմ ձեզի թէ Աստուած կարող է այս քարերէն հանել Աբրահամի զաւակներ: **10** Կացինը արդէն իսկ դրուած է

ծառերու արմատին քով. ուրեմն ամեն ծառ որ լաւ պտուղ չի բերեր, կը կտրուի ու կրակը կը նետուի: **11** Արդարեւ ես կը մկրտեմ ձեզ ջուրով՝ ապաշխարութեան համար, բայց ան որ կու գայ իմ ետեւէս՝ ինձմէ հզօր է, ու ես արժանի չեմ անոր կօշիկները կրելու. անիկան պիտի մկրտե ձեզ Սուրբ Հոգիով ու կրակով: **12** Անոր հեծանոցը իր ձեռքն է. իր կալը պիտի մաքրէ եւ իր ցորենը պիտի ժողվէ ամբարը, իսկ յարողը պիտի այրէ անշէջ կրակով»: **13** Այն ատեն Յիսուս եկաւ Գալիլեայէն Յորդանան՝ Յովհաննէսի, որպէսզի մկրտուի անկէ: **14** Յովհաննէս կ'արգիլէր զայն ու կ'ըսէր. «Ես պետք է որ մկրտուիմ քեզմէ, ու դուն կու գաս ինձի»: **15** Յիսուս պատասխանեց անոր «Թո՛ղ տուր հիմա, որովհետեւ այսպէս կը պատշաճի մեզի, որ գործադրենք արդարութիւնը իր ամբողջութեամբ»: Այն ատեն թոյլ տուաւ անոր: **16** Երբ Յիսուս մկրտուեցաւ, իսկոյն դուրս ելաւ ջուրէն, եւ ահա՛ երկինքը բացուեցաւ ու տեսաւ Աստուծոյ Հոգին, որ աղաւնիի պէս կ'իջնէր ու կու գար իր վրայ: **17** Եւ ահա՛ ձայն մը եկաւ երկինքէն՝ որ կ'ըսէր. «Ա՛յս է իմ սիրելի Որդիս՝ որուն հաճեցայ»:

4 Այն ատեն Յիսուս անապատը տարուեցաւ Սուրբ Հոգիէն՝ Չարախօսէն փորձուելու համար: **2** Բառասուն ցերեկ ու բառասուն գիշեր ծոմ պահելէ ետք՝ անօթեցաւ: **3** Եւ Փորձիչը մօտենալով անոր՝ ըսաւ. «Եթէ դուն Աստուծոյ Որդին ես, ըսէ՛ որ այս քարերը հաց ըլլան»: **4** Ան ալ պատասխանեց. «Գրուած է. “Միայն հացով չէ

որ մարդը պիտի ապրի, հապա ամեն խօսքով՝
 որ կ'ելլէ Աստուծոյ բերանէն»։ 5 Այն ատեն
 Չարախօսը առաւ տա-րաւ զայն սուրբ քաղաքը,
 կայնեցուց զայն տաճարին աշտարակին վրայ,
 6 եւ ըսաւ անոր. «Եթէ դուն Աստուծոյ Որդին
 ես, վա՛ր նետէ քեզ ասկէ. որովհետեւ գրուած
 է. “Իր հրեշտակներուն պիտի հրահանգէ քեզի
 համար, որ իրենց ձեռքերուն վրայ կրեն քեզ,
 որպէսզի քարի մը չզարնես ոտքդ”»։ 7 Յիսուս ըսաւ
 անոր. «Դարձեալ գրուած է. “Մի փորձեր Տէրը՝
 քու Աստուածդ”»։ 8 Չարախօսը դարձեալ առաւ
 հանեց զայն չափազանց բարձր լեռ մը, ցոյց տուաւ
 անոր աշխարհի բոլոր թագաւորութիւններն
 ու անոնց փառքը, 9 եւ ըսաւ անոր. «Ասոնք
 բոլորը պիտի տամ քեզի, եթէ իյնաս՝ երկրպագես
 ինծի»։ 10 Այն ատեն Յիսուս ըսաւ անոր. «(Ետե՛ն)՝
 գնա, Սատանայ, որովհետեւ գրուած է. “Տէրոջ՝
 քու Աստուծոյդ երկրպագէ, ու միայն զի՛նք
 պաշտէ”»։ 11 Այն ատեն Չարախօսը թողուց զայն,
 եւ հրեշտակները մօտեցան ու սպասարկեցին
 անոր։ 12 Երբ Յիսուս լսեց թէ Յովհաննէս
 մատնուեցաւ, մեկնեցաւ Գալիլեա։ 13 Ու ձգելով
 Նազարէթը՝ եկաւ բնակեցաւ Կափառնայում,
 ծովեզերեայ քաղաքը, Չաբուղոնի ու Նեփթաղիմի
 հողամասերուն մէջ, 14 որպէսզի իրագործուի
 Եսայի մարգարէին միջոցով ըսուած խօսքը. 15
 «Չաբուղոնի երկիրն ու Նեփթաղիմի երկիրը,
 ծովու ճամբայով Յորդանանի միւս կողմը,
 հեթանոսներու Գալիլեան. 16 խաւարի մէջ բնակող

Ժողովուրդը մեծ լոյս տեսաւ, եւ լոյս ծագեցաւ
 անոնց՝ որ կը բնակէին մահուան երկրին ու շուքին
 մէջ»: 17 Այդ ատենէն ետք Յիսուս սկսաւ քարոզել
 եւ ըսել. «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկինքի
 թագաւորութիւնը մօտեցած է»: 18 Երբ Յիսուս կը
 քալէր Գալիլեայի ծովուն եզերքը, տեսաւ երկու
 եղբայրներ՝ Պետրոս կոչուած Սիմոնը, եւ անոր
 եղբայրը՝ Անդրէասը, որոնք ուռկան կը նետէին
 ծովը, որովհետեւ ձկնորս էին: 19 Ըսաւ անոնց.
 «Եկէ՛ք իմ ետեւէս, ու մարդոց որսորդ ընեմ ձեզ»:
 20 Անոնք ալ իսկոյն թողուցին ուռկանները եւ
 հետեւեցան անոր: 21 Անկէ յառաջ երթալով՝ տեսաւ
 ուրիշ երկու եղբայրներ, Չեբեդեան Յակոբոսն
 ու անոր եղբայրը՝ Յովհաննէսը, որոնք նաւուն
 մէջ կը կարկտնէին իրենց ուռկանները, իրենց
 հօր՝ Չեբեդէոսի հետ: Կանչեց զանոնք. 22 անոնք
 ալ իսկոյն թողուցին նաւն ու իրենց հայրը, եւ
 հետեւեցան անոր: 23 Յիսուս ամբողջ Գալիլեան
 շրջելով՝ կը սորվեցնէր անոնց ժողովարաններուն
 մէջ, կը քարոզէր արքայութեան աւետարանը,
 եւ ժողովուրդին մէջ կը բուժէր ամեն տեսակ
 ախտ ու ամեն տեսակ վատառողջութիւն: 24
 Անոր համբաւը տարածուեցաւ ամբողջ Սուրիայի
 մէջ, եւ բերին անոր բոլոր հիւանդները՝ որ
 զանազան ախտերով ու տանջանքներով կը
 տուայտէին, նաեւ դիւահարներ, լուսնոտներ,
 եւ անդամալոյծներ, ու բուժեց զանոնք: 25 Մեծ
 բազմութիւններ կը հետեւէին անոր՝ Գալիլեայէն,

Դեկապոլիսէն, Երուսաղէմէն, Յրեաստանէն եւ
Յորդանանի միւս կողմէն:

5 Տեսնելով բազմութիւնները՝ լեռը ելաւ: Երբ
նստաւ, իր աշակերտները քովը գացին, **2** եւ
իր բերանը բանալով՝ կը սորվեցնէր անոնց
ու կ'ըսէր. **3** «Երանի՜ հոգիով աղքատներուն,
որովհետեւ երկինքի թագաւորութիւնը անոնցն է:
4 Երանի՜ սգաւորներուն, որովհետեւ անոնք պիտի
մխիթարուին: **5** Երանի՜ հեղերուն, որովհետեւ
անոնք պիտի ժառանգեն երկիրը: **6** Երանի՜ անոնց՝
որ անօթութիւն ու ծարաւ ունին արդարութեան,
որովհետեւ անոնք պիտի կշտանան: **7** Երանի՜
ողորմածներուն, որովհետեւ անոնք ողորմութիւն
պիտի գտնեն: **8** Երանի՜ անոնց՝ որ սիրտով մաքուր
են, որովհետեւ անոնք պիտի տեսնեն Աստուած: **9**
Երանի՜ խաղաղարարներուն, որովհետեւ անոնք
Աստուծոյ որդիներ պիտի կոչուին: **10** Երանի՜
անոնց՝ որ հալածուած են արդարութեան համար,
որովհետեւ երկինքի թագաւորութիւնը անոնցն
է: **11** Երանի՜ ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու
կը հալածեն, եւ ստութեամբ ձեզի դէմ ամեն
տեսակ չար խօսքեր կ'ըսեն՝ իմ պատճառովս:
12 Ուրախացէ՛ք եւ ցնծացէ՛ք, որովհետեւ ձեր
վարձատրութիւնը շատ է երկինքը. քանի որ
այս կերպով հալածեցին ձեզմէ առաջ եղած
մարգարէները»: **13** «Դ՛նէք էք երկրի աղը. եթէ
աղը կորսնցնէ իր համը, ինք ինչո՞վ պիտի աղուի:
Անկէ ետք ո՛չ մէկ ազդեցութիւն կ'ունենայ, հապա
դուրս կը նետուի եւ կը կոխկոտուի մարդոց

ոտքին տակ: 14 Դժվար էք աշխարհի լոյսը. քաղաք
 մը՝ որ լերան վրայ կը գտնուի՝, չի կրնար
 պահուիլ: 15 Ու ճրագը չեն վառեր եւ դներ
 գրուանի տակ, հապա՝ աշտանակի վրայ, որ
 լուսաւորէ բոլոր տան մէջ եղողները: 16 Ձեր
 լոյսը այնպէս թող փայլի մարդոց առջեւ, որ
 տեսնեն ձեր բարի գործերը եւ փառաբանեն ձեր
 Հայրը՝ որ երկինքն է»: 17 «Մի կարծէք թէ եկայ՝
 ւարելու Օրէնքը կամ Մարգարէները: Եկայ ոչ
 թէ ւարելու, հապա՝ գործադրելու: 18 Որովհետեւ
 ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Մինչեւ որ
 երկինքն ու երկիրը անցնին, Օրէնքն յովտ մը կամ
 նշանագիր մը պիտի չանցնի՝ մինչեւ որ բոլորն ալ
 կատարուին”»: 19 Ուրեմն ո՛վ որ այս ամենափոքր
 պատուիրաններէն մէկը լուծէ եւ մարդոց այնպէս
 սորվեցնէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի
 երկինքի թագաւորութեան մէջ. բայց ո՛վ որ
 գործադրէ ու սորվեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի
 երկինքի թագաւորութեան մէջ: 20 Որովհետեւ
 կը յայտարարեմ ձեզի. “Եթէ ձեր արդարութիւնը
 չգերազանցէ դպիրներու եւ Փարիսեցիներու
 արդարութիւնը, բնա՛ւ պիտի չմտնէք երկինքի
 թագաւորութիւնը”»: 21 «Լսեր էք թէ ըսուեցաւ
 նախնիքներուն. “Մի սպաններ”: Ո՛վ որ սպաննէ,
 արժանի պիտի ըլլայ դատաստանի: 22 Բայց ես կը
 յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ զուր տեղը բարկանայ
 իր եղբօր դէմ՝ արժանի պիտի ըլլայ դատաստանի:
 Ո՛վ որ “ապուշ” ըսէ իր եղբօր՝ արժանի պիտի
 ըլլայ ատեանի դատապարտութեան: Ո՛վ որ

"յիմար" ըսէ իր եղբօր՝ արժանի պիտի ըլլայ
 գեհենի կրակին": (Geenna g1067) 23 Ուրեմն եթէ
 քու ընծադ գոհասեղանին վրայ բերես, ու հոն
 յիշես թէ եղբայրդ բան մը ունի քեզի դէմ, 24 հոն
 ձգէ ընծադ՝ գոհասեղանին առջեւ. նախ գնա՝
 հաշտուի՛ եղբօրդ հետ, եւ այն ատեն եկուր՝ որ
 մատուցանես ընծադ: 25 Շուտով համաձայնէ քու
 ոտիսիդ հետ, մինչ ճամբան ես անոր հետ, որպէսզի
 հակառակորդդ չյանձնէ քեզ դատաւորին, ու
 դատաւորը՝ ոստիկանին, եւ բանտը չնետուիս:
 26 Եւ մարտապէս կը յայտարարեմ քեզի. "Բնաւ
 դուրս պիտի չելլես անկէ, մինչեւ որ վճարես
 վերջին նաքարակիտը": 27 «Լսեր էք թէ ըսուեցաւ.
 "Շնութիւն մի ըներ": 28 Բայց ես կը յայտարարեմ
 ձեզի. "Ո՛վ որ կը նայի կնոջ մը՝ անոր ցանկալու
 համար, արդէն անիկա իր սիրտին մէջ շնութիւն
 ըրած է անոր հետ": 29 Ուստի եթէ աջ աչքդ
 կը գայթակղեցնէ քեզ, հանէ՛ զայն ու նետէ
 քեզմէ. որովհետեւ աւելի օգտակար է քեզի՝
 որ անդամներէդ մէկը կորսուի, քայց ամբողջ
 մարմինդ չնետուի գեհենը: (Geenna g1067) 30 Եթէ
 աջ ձեռքդ կը գայթակղեցնէ քեզ, կտրէ՛ զայն
 ու նետէ քեզմէ. որովհետեւ աւելի օգտակար է
 քեզի՝ որ անդամներէդ մէկը կորսուի, ու ամբողջ
 մարմինդ չնետուի գեհենը»: (Geenna g1067) 31 «Նաեւ
 ըսուեցաւ. "Ո՛վ որ արձակէ իր կինը, թող տայ
 անոր ամուսնալուծումի վկայագիր մը": 32 Բայց ես
 կը յայտարարեմ ձեզի. "Ո՛վ որ կ'արձակէ իր կինը՝
 առանց պոռնկութեան պատճառի, ինք շնութիւն

ընել կու տայ անոր, եւ զվ որ կ'ամուսնանայ արձակուածին հետ՝ շնութիւն կ'ընէ"»։ 33 «Լսեր էք դարձեալ թէ ըսուեցաւ նախնիքներուն. "Սուտ երդում մի ըներ, հապա հատուցանէ Տէրոջ ըրած երդումներդ"։ 34 Բայց ես կը յայտարարեմ ձեզի. "Երբեք երդում մի ընէք, ոչ երկինքի վրայ՝ որ Աստուծոյ գահին է, 35 ոչ երկրի վրայ՝ որ անոր ոտքերուն պատուանդանն է, ոչ Երուսաղէմի վրայ՝ որ Մեծ Թագաւորին քաղաքն է, 36 ոչ ալ գլուխիդ վրայ երդում ըրէ, որովհետեւ չես կրնար մէկ մագ ճերմկցնել կամ սեւցնել։ 37 Հապա ձեր խօսքը ըլլայ՝ այրն՝ այր, եւ ոչը՝ ոչ. ասկէ աւելին յառաջ կու գայ Չարեն"»։ 38 «Լսեր էք թէ ըսուեցաւ. "Աչքի տեղ՝ աչք, եւ ակռայի տեղ՝ ակռայ"։ 39 Բայց ես կը յայտարարեմ ձեզի. "Չարին մի դիմադրեր. հապա զվ որ ապտակէ աջ այտիդ, դարձնուր անոր միւսն ալ։ 40 Եթէ մէկը ուզէ դատ վարել քեզի հետ ու բաճկոնդ առնել, թող տուր անոր հանդերձդ ալ։ 41 Եւ զվ որ ստիպէ քեզ մղոն մը երթալ, գնա՛ անոր հետ երկու մղոն։ 42 Տո՛ւր քեզմէ ուզողին, ու երես մի դարձներ անկէ՝ որ կ'ուզէ փոխ առնել քեզմէ"»։ 43 «Լսեր էք թէ ըսուեցաւ. "Սիրէ ընկերդ եւ ատէ՛ թշնամիդ"։ 44 Բայց ես կը յայտարարեմ ձեզի. "Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէք անոնց՝ որ կ'ատեն ձեզ, եւ աղօթեցէ՛ք անոնց համար՝ որ կը պախարակեն ու կը հալածեն ձեզ, 45 որպէսզի ըլլաք ձեր երկնաւոր Հօր որդիները. որովհետեւ իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն

վրայ, եւ անձրեւ կը դրկէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ անարդարներուն վրայ: 46 Որովհետեւ եթէ դուք սիրէք ձեզ սիրողները, ինչ վարձատրութիւն կ'ունենաք. մաքսաւորներն ալ նոյնը չեն ըներ: 47 Ու եթէ բարեւէք միայն ձեր եղբայրները, ինչ աւելի կ'ընէք ուրիշներէն. մաքսաւորներն ալ նոյնը չեն ըներ: 48 Ուրեմն դուք կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Յայրը կատարեալ է»:

6 «Չգուշացէ՛ք որ ձեր ողորմութիւնը չընէք մարդոց առջեւ՝ տեսնուելու համար անոնցմէ. այլապէս՝ վարձատրութիւն չէք ունենար ձեր Յօրմէն, որ երկինքն է: 2 Ուրեմն երբ ողորմութիւն ընես, փող մի՛ հնչեցներ առջեւդ, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններուն ու փողոցներուն մէջ, որպէսզի փառաւորուին մարդոցմէ: Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Անոնք ունեցած կ'ըլլան իրենց վարձատրութիւնը”»: 3 Իսկ դժն՝ երբ ողորմութիւն ընես՝ ձախ ձեռքդ թող չգիտնայ աջ ձեռքիդ ինչ տալը, 4 որպէսզի քու ողորմութիւնդ գաղտնի ըլլայ. եւ քու Յայրդ՝ որ կը տեսնէ գաղտնիքը, բացայայտօրէն պիտի հատուցանէ քեզի»: 5 «Երբ աղօթես՝ նման մի՛ ըլլար կեղծաւորներուն, որոնք կը սիրեն աղօթել՝ կայնելով ժողովարաններուն մէջ ու հրապարակներուն անկիւնները, որպէսզի երեւնան մարդոց: Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Անոնք ունեցած կ'ըլլան իրենց վարձատրութիւնը”»: 6 Իսկ դժն՝ երբ աղօթես՝ մտի՛ր ներքին սենեակդ, գոց՛ դուռդ, եւ

աղօթ՝ Զօրդ՝ որ գաղտնի տեղ կը գտնուի. ու Զայրդ՝
 որ կը տեսնէ գաղտնիքը, բացայայտօրէն պիտի
 հատուցանէ քեզի: 7 Երբ աղօթէք, շատախօս
 մի՛ ըլլաք հեթանոսներուն պէս, որովհետեւ
 կը կարծեն թէ պիտի ընդունուին՝ իրենց շատ
 խօսելուն համար: 8 Ուրեմն մի՛ նմանիք անոնց,
 որովհետեւ ձեր Զայրը գիտէ ձեր պէտքերը՝ դեռ
 դուք չիսնդրած իրմէ: 9 Ուստի դուք սնապէս
 աղօթեցէք. “Զայր մեր՝ որ երկինքն էս, քու անունդ
 սուրբ ըլլայ. 10 քու թագաւորութիւնդ՝ գայ. քու
 կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի
 վրայ: 11 Մեր ամենօրեայ հացը՝ մեզի տո՛ւր այսօր.
 12 մեզի ներ՛ մեր պարտքերը, ինչպէս մենք ալ
 կը ներենք մեր պարտապաններուն. 13 ու մեզ
 մի՛ տանիր փորձութեան, հապա մեզ ազատէ՛
 Չարէն. որովհետեւ քո՛ւկդ են թագաւորութիւնը,
 զօրութիւնը եւ փառքը յաւիտեան. ամէն”:
 14 Արդարեւ եթէ դուք ներէք մարդոց իրենց
 յանցանքները, ձեր երկնաւոր Զայրն ալ պիտի
 ներէ ձեզի. 15 իսկ եթէ դուք չներէք մարդոց իրենց
 յանցանքները, ձեր Զայրն ալ ձեզի պիտի չներէ ձեր
 յանցանքները»: 16 «Երբ ծոմ պահէք, տրտումներես
 մի՛ ըլլաք՝ կեղծաւորներուն պէս. որովհետեւ
 իրենց երեսները կը խաթարեն, որպէսզի երեւնան
 մարդոց՝ թէ ծոմ կը պահեն: Եշմարտապէս կը
 յայտարարեմ ձեզի. “Անոնք ունեցած կ’ըլլան
 իրենց վարձատրութիւնը”:
 17 Բայց դո՛ւն՝ երբ
 ծոմ պահես՝ օծէ՛ գլուխդ ու լուսն երեսդ, 18
 որպէսզի չերեւնաս մարդոց՝ ծոմ պահողի պէս,

հապա քու Զօրդ՝ որ գաղտնի տեղ կը գտնուի:
 Եւ քու Զայրդ՝ որ կը տեսնէ գաղտնիքը, պիտի
 հատուցանէ քեզի»: 19 «Երկրի վրայ գանձեր մի
 դիզէք ձեզի, ուր ցեցը եւ ժանգը կ'ապականեն,
 ուր գողերը պատ կը ծակեն ու կը գողնան: 20
 Զապա երկինքը գանձեր դիզեցէք ձեզի, ուր ոչ
 ցեցը եւ ոչ ժանգը կ'ապականեն, ու ոչ գողերը
 պատ կը ծակեն եւ կը գողնան: 21 Որովհետեւ
 ձեր գանձը ուր որ է, ձեր սիրտն ալ հոն պիտի
 ըլլայ»: 22 «Մարմինին ճրագը աչքն է. ուրեմն
 եթէ աչքդ պարզ է, ամբողջ մարմինդ լուսաւոր
 կ'ըլլայ: 23 Բայց եթէ աչքդ չար է, ամբողջ մարմինդ
 խաւարամած կ'ըլլայ. ուրեմն եթէ քու մէջդ եղած
 լոյսը խաւար է, ալ որքան է այդ խաւարը»: 24 «Ո՛չ
 մէկը կրնայ ծառայել երկու տիրոջ. որովհետեւ
 կամ պիտի ատէ մէկը եւ սիրէ միւսը, կամ պիտի
 յարի մէկուն՝ ու արհամարհէ միւսը: Զէք կրնար
 ծառայել Աստուծոյ եւ մամոնային: 25 Ուստի
 կը յայտարարեմ ձեզի. “Մի մտահոգուիք ձեր
 անձին մասին՝ թէ ինչ պիտի ուտէք կամ ինչ պիտի
 խմէք, ոչ ալ ձեր մարմիններուն մասին՝ թէ ինչ
 պիտի հագնիք. միթէ անձը աւելի չ'է կերակուրէն,
 ու մարմինը՝ հագուստէն: 26 Նայեցէ՛ք երկինքի
 թռչուններուն, որոնք ոչ կը սերմանեն եւ ոչ կը
 հնձեն, ոչ ալ կը ժողվեն ամբարի մէջ. բայց ձեր
 երկնաւոր Զայրը կը կերակրէ զանոնք: Դուք
 աւելի չ'էք արժէր անոնցմէ: 27 Զիմա ձեզմէ ո՞վ
 կրնայ մտահոգուելով՝ կանգուն մը աւելցնել իր
 հասակին վրայ: 28 Եւ ինչո՞ւ կը մտահոգուիք

հագուստի մասին. նկատեցէք դաշտի շուշանները, թէ ինչպէս կ'աճին. ո՛չ կ'աշխատին ու ո՛չ կը մանեն: **29** Բայց կը յայտարարեմ ձեզի թէ Սողոմոն ալ՝ իր ամբողջ փառաւորութեան մէջ՝ չհագուեցաւ անոնցմէ մէկուն պէս: **30** Ուստի եթէ դաշտի խոտը, որ այսօր կայ եւ վաղը փուռը կը նետուի, Աստուած այնպէս կը հագուեցնէ, հապա որչափ աւելի ձեզ, թերահաւատներ: **31** Ուրեմն մի՛ մտահոգուիք՝ ըսելով. "Ի՞նչ պիտի ուտենք", կամ՝ "ի՞նչ պիտի խմենք", կամ՝ "ի՞նչ պիտի հագնինք" **32** (քանի որ հեթանոսները կը փնտռեն այդ բոլոր բաները). որովհետեւ ձեր երկնաւոր Հայրը գիտէ թէ այդ բոլոր բաները պէտք են ձեզի: **33** Բայց նախ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնն ու անոր արդարութիւնը, եւ այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի: **34** Ուստի մի՛ մտահոգուիք վաղուան համար, որովհետեւ վաղուան օրը պիտի հոգայ իրեն համար. բաւական է օրուան իր անձկութիւնը"»:

7 «Մի՛ դատեք, որպէսզի չդատուիք: **2** Որովհետեւ ինչ դատաստանով որ դատեք՝ անով պիտի դատուիք, եւ ինչ չափով որ չափեք՝ անով պիտի չափուի ձեզի: **3** Եւ ինչո՞ւ կը տեսնես եղբօրդ աչքին մէջի շիւղը, ու չես նշմարեր քո՛ւ աչքիդ մէջի գերանը: **4** Կամ ինչպէս կրնաս ըսել եղբօրդ. "Թո՛ղ տուր որ հանեմ աչքէդ շիւղը", երբ ահա՛ գերան կայ քո՛ւ աչքիդ մէջ: **5** Կեղծաւոր, նախ հան՛ քո՛ւ աչքէդ գերանը, եւ այն ատեն յստակ պիտի տեսնես՝ հանելու համար շիւղը եղբօրդ աչքէն: **6** Սուրբ

բանը մի տաք շուներուն, ու ձեր մարգարիտները մի նետէք խոզերուն առջեւ, որպէսզի չկոխկռտեն զանոնք իրենց ոտքերուն տակ, եւ դառնալով չբզբտեն ձեզ»: **7** «Խնդրեցէք՝ ու պիտի տրուի ձեզի. փնտռեցէք՝ ու պիտի գտնէք. դուռը բախեցէք՝ ու պիտի բացուի ձեզի: **8** Որովհետեւ ղվ որ խնդրէ՝ կը ստանայ, ղվ որ փնտռէ՝ կը գտնէ, եւ ղվ որ դուռը բախէ՝ պիտի բացուի անոր: **9** Ձեզմէ ղվ է այն մարդը, որմէ եթէ իր որդին հաց ուզէ՝ քար կու տայ անոր. **10** կամ եթէ ձուկ ուզէ՝ միթէ զձ կու տայ անոր: **11** Ուրեմն եթէ դուք՝ որ չար էք, զիտէք բարի նուէրներ տալ ձեր զաւակներուն, որչափ աւելի ձեր Հայրը՝ որ երկինքն է, բարի բաներ պիտի տայ անոնց՝ որ կը խնդրեն իրմէ: **12** Ուրեմն ամէն ինչ որ կ'ուզէք՝ որ մարդիկ ընեն ձեզի, դուք ալ այնպէս ըրէք անոնց, որովհետեւ ասիկա է Օրէնքն ու Մարգարէները»: **13** «Նեղ դռնէն ներս մտէք. որովհետեւ լայն է այն դուռը, եւ ընդարձակ՝ այն ճամբան, որ դէպի կորուստ կը տանի, ու շատ են անոնք՝ որ կը մտնեն անկէ. **14** որովհետեւ նեղ է այն դուռը, եւ անձուկ՝ այն ճամբան, որ դէպի կեանք կը տանի, ու քիչ են անոնք՝ որ կը գտնեն զայն»: **15** «Չզուշացէք սուտ մարգարէներէն, որոնք կու գան ձեզի ոչխարի հանդերձներով, բայց ներսէն՝ յափշտակող գայլեր են: **16** Իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք: Միթէ փուշերէն կը քաղէն խաղող, կամ տատասկէն՝ թուզ: **17** Այսպէս ամէն բարի ծառ՝ լաւ պտուղ կը բերէ, եւ վատ ծառ՝ չար պտուղ կը բերէ: **18** Բարի ծառը չի կրնար

չար պտուղ բերել, ոչ ալ վատ ծառը՝ լաւ պտուղ բերել: **19** Ամեն ծառ որ լաւ պտուղ չի բերեր, կը կտրուի ու կը նետուի կրակը: **20** Ուրեմն՝ իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք»: **21** «Ո՛չ թէ ո՛վ որ ինծի՝ “Տէր, Տէր” կ’ըսէ, պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը, հապա ան՝ որ կը գործադրէ իմ երկնաւոր Զօրս կամքը: **22** Շատեր այն օրը պիտի ըսեն ինծի. “Տէր, Տէր, միթէ չմարգարեացանք քու անունովոյ, դուեր չհանեցինք քու անունովոյ, եւ շատ հրաշքներ չգործեցինք քու անունովոյ”»: **23** Այն ատեն պիտի յայտարարեմ անոնց. “Ես բնաւ չէի ճանչնար ձեզ. հեռացէք քովես դուք՝ որ անօրէնութիւն կը գործէիք”»: **24** «Ուրեմն ո՛վ որ կը լսէ այս խօսքերս եւ կը գործադրէ զանոնք, պիտի նմանցնեմ զայն ուշիմ մարդու մը՝ որ իր տունը կառուցանեց վեմի վրայ: **25** Տեղատարափ անձրեւ իջաւ, հեղեղները եկան, հովերը փչեցին ու զարկին այդ տան՝ բայց չփլաւ, որովհետեւ հիմնուած էր վեմի վրայ: **26** Իսկ ո՛վ որ կը լսէ այս խօսքերս ու չի գործադրեր, կը նմանի յիմար մարդու մը՝ որ իր տունը կառուցանեց աւազի վրայ: **27** Տեղատարափ անձրեւ իջաւ, հեղեղները եկան, հովերը փչեցին եւ զարկին այդ տան, ու փլաւ. եւ անոր անկումը մեծ եղաւ»: **28** Երբ Յիսուս լմնցուց այս խօսքերը, բազմութիւնը ապշած մնաց անոր ուսուցումին վրայ. **29** որովհետեւ իշխանութիւն ունեցողի մը պէս կը սորվեցնէր անոնց, ոչ թէ դպիրներուն պէս:

8 Երբ այդ լեռնէն վար իջաւ, մեծ բազմութիւններ հետեւեցան անոր: **2** Եւ ահա՛ բոլորտ մը եկաւ

ու երկրպագեց անոր՝ ըսելով. «Տէր, եթէ ուզես՝
 կրնան մաքրել զիս»: 3 Յիսուս՝ երկարելով իր
 ձեռքը՝ դպաւ անոր եւ ըսաւ. «Կ'ուզեմ, մաքրուէ՛»: 4
 Իսկոյն անոր բորոտութիւնը մաքրուեցաւ: 5
 Յիսուս ըսաւ անոր. «Չգուշացիր, ոչ մէկուն
 ըսէ. հապա գնա՛, ցոյց տուր քեզ քահանային,
 ու մատուցանէ՛ Մովսէսի պատուիրած ընծան՝
 վկայութիւն ըլլալու համար անոնց»: 6 Երբ մտաւ
 Կափառնայում, հարիւրապետ մը քովը եկաւ,
 կ'աղաչէր անոր 6 ու կ'ըսէր. «Տէր, ծառաս՝ տունը
 անդամալոյծ պառկած՝ չարաչար կը տանջուի»: 7
 Յիսուս ըսաւ անոր. «Ես կու գամ եւ կը բուժեմ
 զինք»: 8 Հարիւրապետը պատասխանեց. «Տէր,
 ես արժանի չեմ՝ որ դուն մտնես իմ յարկիս տակ.
 միայն ըսէ՛ խօսք մը, ու ծառաս պիտի բժշկուի: 9
 Որովհետեւ ես ալ իշխանութեան տակ մարդ
 եմ, եւ զինուորներ ունիմ իմ հրամանիս տակ:
 Ասոր կ'ըսեմ. “Գնա՛”, ու կ'երթայ. եւ միւսին.
 “Եկ՛ուր”, ու կու գայ. եւ ծառայիս. “Ըրէ՛ այս
 բանը”, ու կ'ընէ»: 10 Երբ Յիսուս լսեց՝ զարմացաւ,
 եւ ըսաւ իր հետեւորդներուն. «Ճշմարտապէս
 կը յայտարարեմ ձեզի, Իսրայէլի մէջ անգամ
 ես չգտայ այսչափ մեծ հաւատք: 11 Ձեզի կը
 յայտարարեմ թէ արեւելքէն եւ արեւմուտքէն
 շատեր պիտի գան ու պիտի բազմին երկինքի
 թագաւորութեան մէջ՝ Աբրահամի, Իսահակի եւ
 Յակոբի հետ, 12 իսկ թագաւորութեան որդիները
 պիտի հանուին դուրսի խաւարը. հոն պիտի
 ըլլայ լաց ու ակռաներու կրճտում»: 13 Յիսուս

ըսաւ հարիւրապետին. «Գնա՛, եւ ինչպէս դուն
 հաւատացիր՝ այնպէս թող ըլլայ քեզի»: Նոյն
 ժամուն անոր ծառան բժշկուեցաւ: **14** Երբ Յիսուս
 եկաւ Պետրոսի տունը, տեսաւ թէ անոր զոքանչը
 պառկած էր՝ տենդով հիւանդացած: **15** Բռնեց
 անոր ձեռքէն, ու տենդը թողուց զայն: Ան ալ
 ոտքի ելաւ եւ կը սպասարկէր անոնց: **16** Երբ
 իրիկուն եղաւ, շատ դիւահարներ բերին անոր.
 խօսքով դուրս հանեց չար ոգիները, ու բուժեց
 բոլոր ախտաւորները, **17** որպէսզի իրագործուի
 Եսայի մարգարէին միջոցով ըսուած խօսքը.
 «Ան ստանձնեց մեր հիւանդութիւնները եւ կրեց
 մեր ախտերը»: **18** Յիսուս՝ տեսնելով իր շուրջը
 մեծ բազմութիւններ՝ հրամայեց որ երթան միւս
 եզերքը: **19** Դպիր մը մօտենալով՝ ըսաւ անոր.
 «Վարդապետ, պիտի հետեւիմ քեզի՝ ո՛ր որ
 երթաս»: **20** Յիսուս ըսաւ անոր. «Աղուէսները
 որջեր ունին, ու երկինքի թռչունները՝ բոյներ, բայց
 մարդու Որդին տեղ մը չունի, ուր հանգչեցնէ իր
 գլուխը»: **21** Ուրիշ մը, որ անոր աշակերտներէն
 էր, ըսաւ անոր. «Տէր, արտօնէ՛ ինծի, որ նախ
 երթամ՝ թաղեմ հայրս»: **22** Յիսուս ըսաւ անոր.
 «Յետեւէ՛ ինծի, եւ թո՛ղ մեռելներուն՝ թաղել իրենց
 մեռելները»: **23** Երբ նաւ մտաւ, իր աշակերտները
 հետեւեցան իրեն: **24** Եւ ահա՛ մեծ ալեկոծութիւն
 մը եղաւ ծովուն մէջ, այնքան՝ որ նաւը կը
 ծածկուէր ալիքներէն. իսկ ինք կը քնանար: **25**
 Աշակերտները զացին իր մօտ, արթնցուցին զինք
 եւ ըսին. «Տէր, փրկէ՛ մեզ, ահա՛ կը կորսուինք»: **26**

Ինք ալ ըսաւ անոնց. «Թերահաւատներ, ինչո՞ւ այդպէս երկչոտ էք»: Այն ատեն ոտքի ելաւ, սաստեց հովերն ու ծովը, եւ մեծ խաղաղութիւն եղաւ: 27 Մարդիկ զարմացան, ու կ'ըսէին իրարու. «Ինչպիսի մարդ է ասիկա, որ նոյնիսկ հովերը եւ ծովը կը հնազանդին իրեն»: 28 Երբ անցաւ միւս եզերքը՝ Գերգեսացիներուն երկիրը, երկու դիւահարներ հանդիպեցան իրեն՝ գերեզմաններէն ելած, չափազանց դաժան, այնպէս որ ոչ մէկը կարող էր անցնիլ այդ ճամբայէն: 29 Եւ ահա աղաղակեցին. «Դուն ինչ գործ ունիս մեզի հետ, Յիսուս, Աստուծոյ Որդի. ատենէն առաջ մեզ տանջելո՞ւ համար եկար հոս»: 30 Անոնցմէ հեռու՝ խոզերու մեծ երամակ մը կար, որ կ'արածէր: 31 Դեւերը կ'աղաչէին իրեն ու կ'ըսէին. «Եթէ հանես մեզ, արտօնէ մեզի՝ որ երթանք մտնենք խոզերու երամակին մէջ»: 32 Ըսաւ անոնց. «Գացէք»: Երբ անոնք դուրս ելան, գացին խոզերու երամակին մէջ, եւ ահա ամբողջ երամակը գահավեժ տեղէն ծովը վազեց ու ջուրերուն մէջ մեռաւ: 33 Խոզարածներն ալ փախան, եւ քաղաքը երթալով՝ պատմեցին ամէն ինչ, նաեւ դիւահարներուն պատահած բաները: 34 Ուստի ամբողջ քաղաքը դուրս ելաւ՝ դիմաւորելու Յիսուսը, ու երբ տեսան զինք՝ աղաչեցին որ մեկնի իրենց հողամասէն:

9 Ուստի նաւ մտնելով՝ անցաւ միւս կողմը ու գնաց իր քաղաքը: 2 Եւ բերին իրեն անդամալոյծ մը, որ պառկած էր մահիճի մէջ: Յիսուս՝ տեսնելով անոնց հաւատքը՝ ըսաւ անդամալոյծին.

«Քաջալերուէ՛, որդեանկ, մեղքերդ ներուած են քեզի»։ 3 Դպիրներէն ոմանք ըսին՝ իրենք իրենց մէջ. «Ասիկա կը հայհոյէ»։ 4 Յիսուս՝ գիտնալով անոնց մտածումները՝ ըսաւ. «Ինչո՞ւ չար բան կը մտածէք ձեր սիրտերուն մէջ։ 5 Ո՞րը աւելի դիւրին է, “մեղքերդ ներուած են” ըսելը, թէ՛ “ոտքի ելիր ու քալէ” ըսելը։ 6 Բայց որպէսզի գիտնաք թէ մարդու Որդին իշխանութիւն ունի մեղքերը ներելու երկրի վրայ, (այն ատեն ըսաւ անդամալոյծին.) “Ոտքի ելիր, ան մահիծող ու գնահատունդ”»։ 7 Ան ալ ոտքի ելաւ եւ գնաց իր տունը։ 8 Երբ բազմութիւնները տեսան՝ զարմացան, ու փառաբանեցին Աստուած, որ այդպիսի իշխանութիւն տուած էր մարդոց։ 9 Յիսուս անկէ յառաջ երթալով՝ տեսաւ մարդ մը, Մատթէոս կոչուած, որ նստած էր մաքս ընդունելու տեղը, եւ ըսաւ անոր. «Յետեւէ՛ ինծի»։ Ան ալ կանգնեցաւ ու հետեւեցաւ անոր։ 10 Տունը սեղան նստած՝ ատենը՝ ահա՛ ուրիշ շատ մաքսաւորներ եւ մեղաւորներ եկած ու սեղան նստած էին Յիսուսի եւ անոր աշակերտներուն հետ։ 11 Երբ Փարիսեցիները տեսան՝ ըսին անոր աշակերտներուն. «Ինչո՞ւ ձեր վարդապետը կ’ուտէ մաքսաւորներու եւ մեղաւորներու հետ»։ 12 Բայց երբ Յիսուս լսեց՝ ըսաւ անոնց. «Ո՛չ թէ առողջներուն բժիշկ պէտք է, հապա՛ հիւանդներուն։ 13 Գացէ՛ք, սորվեցէ՛ք թէ ինչ ըսել է. “Կարեկցութիւն կ’ուզեմ, ու ո՛չ թէ զոհ”։ որովհետեւ ես եկայ կանչելու ո՛չ թէ արդարները, հապա մեղաւորները՝ ապաշխարութեան»։ 14 Այն ատեն

Յովհաննէսի աշակերտները եկան անոր եւ ըսին.
 «Ինչո՞ւ մենք ու Փարիսեցիները յաճախ ծոմ կը
 պահենք, իսկ քու աշակերտներդ չեն պահեր»:
15 Յիսուս ըսաւ անոնց. «Միթէ կարելի՞ է՝ որ
 հարսնետոները սգան, քանի փեսան իրենց հետ է:
 Բայց օրերը պիտի գան՝ երբ փեսան պիտի վերցուի
 իրենցմէ. այն ատեն ծոմ պիտի պահեն: **16** Ո՛չ
 մէկը կը ձգէ նոր լաթի կտոր մը հին հանդերձի մը
 վրայ, որովհետեւ անիկա որ անոր լրումին համար
 դրուած է, կը քաշէ հանդերձը, ու պատռուածքը
 աւելի գէշ կ'ըլլայ: **17** Ո՛չ ալ նոր գինին կը դնեն
 հին տիկերու մէջ. այլապէս՝ տիկերը կը պատռին,
 եւ գինին կը թափի, եւ տիկերը կը կորսուին:
 Հապա նոր գինին կը դնեն նոր տիկերու մէջ,
 ու երկուքն ալ կը պահուին»:
18 Երբ ան այս
 բաները կը խօսէր անոնց հետ, ահա պետ մը եկաւ
 ու երկրպագեց անոր՝ ըսելով. «Աղջիկս թերեւս
 վախճանած է մինչեւ հիմա. բայց եկու՛ր, դիր ձեռքդ
 անոր վրայ, եւ պիտի ապրի»:
19 Յիսուս ալ ոտքի
 ելաւ ու հետեւեցաւ անոր՝ իր աշակերտներուն
 հետ: **20** Եւ ահա կին մը, որ արիւնահոսութենէ կը
 տառապէր տասներկու տարիէ ի վեր, մօտեցաւ
 ետեւէն ու դպաւ անոր հանդերձին քղանցքին.
21 Քանի որ կ'ըսէր ինքնիրեն. «Եթէ միայն դաչիմ
 անոր հանդերձին՝ պիտի բժշկուիմ»:
22 Յիսուս,
 երբ ետեւ դարձաւ ու տեսաւ զայն, ըսաւ.
 «Քաջալերու՛՛, աղջիկ, հաւատքդ բժշկեց քեզ»:
 Եւ
 կինը բժշկուեցաւ նոյն ժամուն: **23** Երբ Յիսուս
 հասաւ պետին տունը, ու տեսաւ սրնգահարները

եւ աղմկարար բազմութիւնը, 24 ըսաւ անոնց.
«Մեկնեցէք, որովհետեւ աղջիկը մեռած չէ, հապա
կը քնանայ»: 25 Անոնք ալ ծաղրեցին զինք: Բայց
երբ բազմութիւնը դուրս հանուեցաւ, ինք ներս
մտաւ, բռնեց անոր ձեռքէն, եւ աղջիկը ոտքի ելաւ:
26 Այս լուրը տարածուեցաւ ամբողջ երկիրը: 27
Երբ Յիսուս յառաջ անցաւ անկէ, երկու կոյրեր
հետեւեցան անոր՝ աղաղակելով. «Ողորմէ՛ մեզի,
Դաւիթի Որդի»։ 28 Երբ տուն հասաւ, կոյրերը եկան
իրեն: Յիսուս ըսաւ անոնց. «Կը հաւատամք թէ
կրնամ ընել այս բանը»: Ըսին անոր. «Այո՛, Տէր»: 29
Այն ատեն դպաւ անոնց աչքերուն եւ ըսաւ. «Թող
ըլլայ ձեզի՝ ձեր հաւատքին համեմատ»: 30 Անոնց
աչքերը բացուեցան, ու Յիսուս ազդարարեց
անոնց՝ ըսելով. «Զգուշացէք որ ոչ մէկը գիտնայ»:
31 Բայց անոնք մեկնելով տարածեցին անոր
համբաւը այդ ամբողջ երկրին մէջ: 32 Երբ
անոնք դուրս ելան, ահա՛ համր դիւահար մարդ
մը բերին իրեն: 33 Երբ դեւը ելաւ, համրը
խօսեցաւ: Ուստի բազմութիւնները զարմացան,
ու կ'ըսէին թէ բնաւ այսպիսի բան երեւցած
չէր Իսրայէլի մէջ: 34 Բայց Փարիսեցիները
կ'ըսէին. «Ան դեւերուն իշխանով դուրս կը հանէ
դեւերը»: 35 Յիսուս կը շրջէր բոլոր քաղաքներն ու
գիւղերը, կը սորվեցներ անոնց ժողովարաններուն
մէջ, կը քարոզէր արքայութեան աւետարանը,
եւ կը բուժէր բոլոր ախտերն ու բոլոր
վատառողջութիւնները ժողովուրդին մէջ: 36 Եւ
տեսնելով բազմութիւնները՝ զթաց անոնց վրայ,

որովհետեւ պարտասած ու ցրուած էին՝ հովիւ չունեցող ոչխարներու պէս: **37** Այն ատեն ըսաւ իր աշակերտներուն. «Հունձքը իրապէս շատ է, բայց գործաւորները՝ քիչ. **38** ուրեմն աղերսեցէ՛ք հունձքին Տէրոջ, որ գործաւորներ ուղարկէ իր հունձքին»:

10 Յետոյ, քովը կանչելով իր տասներկու աշակերտները, իշխանութիւն տուաւ անոնց՝ անմաքուր ոգիներուն վրայ, որպէսզի դուրս հանեն զանոնք, ու բուժեն ամէն տեսակ ախտ եւ ամէն տեսակ վատառողջութիւն: **2** Ահաւասիկ տասներկու առաքեալներուն անունները.- առաջինը՝ Սիմոն, որ Պետրոս կը կոչուի, եւ անոր եղբայրը՝ Անդրէաս, **3** Յակոբոս Չեբեդեան եւ անոր եղբայրը՝ Յովհաննէս, Փիլիպպոս ու Բարթողոմէոս, Թովմաս եւ Մատթէոս՝ մաքսաւորը, Յակոբոս Ալփեան ու Ղեբէոս՝ որ Թադէոս մականուանուեցաւ, **4** Սիմոն Կանանացի եւ Յուդա Իսկարիոփտացի, որ մատնեց զայն: **5** Յիսուս դրկեց այս տասներկուքը եւ պատուիրեց անոնց. «Մի՛ երթաք հեթանոսներու ճամբայէն, ու մի՛ մտնէք Սամարացիներու որեւէ քաղաք, **6** այլ մանաւանդ զացէ՛ք Իսրայէլի տան կորսուած ոչխարներուն: **7** Երբ երթաք, քարոզեցէ՛ք եւ ըսէ՛ք. “Երկինքի թագաւորութիւնը մօտեցած է”: **8** Բուժեցէ՛ք հիւանդները, մաքրեցէ՛ք բորոտները”, հանեցէ՛ք դելերը. ձրի՛ ստացած էք, ձրի՛ տուէք: **9** Մի՛ ունենաք ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ ու ո՛չ պղինձ՝ ձեր գօտիներուն մէջ. **10** ո՛չ ճամբորդութեան

համար պարկ, ոչ կրկին բաճկոն, ոչ կօշիկ, ոչ գաւազան. որովհետեւ գործաւորը արժանի է իր կերակուրին: **11** Երբ քաղաք մը կամ գիւղ մը մտնէք, տեղեկացէ՛ք թէ ո՞վ է արժանաւորը անոր մէջ, եւ մնացէ՛ք անոր քով՝ մինչեւ որ մեկնիք անկէ: **12** Երբ տուն մտնէք, բարեւ տուէ՛ք անոր: **13** Եթէ այդ տունը արժանի է, ձեր բարեւը թող գայ անոր վրայ. իսկ եթէ արժանի չէ, ձեր բարեւը թող վերադառնայ ձեզի: **14** Եթէ մէկը չընդունի ձեզ ու մտիկ չընէ ձեր խօսքերը, երբ մեկնիք այդ տունէն կամ քաղաքէն, թօթուեցէ՛ք ձեր ոտքերուն փոշին: **15** Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Սողոմացիներու եւ Գոմորացիներու երկրին աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը, քան այդ քաղաքին”»: **16** «Ահա՛ կը դրկեմ ձեզ իբր ոչխարներ՝ գայլերու մէջ. ուրեմն խորագէտ եղէ՛ք օձերու պէս, եւ աննենգ՝ աղաւնիներու պէս: **17** Իսկ զգուշացէ՛ք մարդոցմէ. որովհետեւ ատեաններու պիտի մատնեն ձեզ, ու պիտի խարազանեն ձեզ իրենց ժողովարաններուն մէջ: **18** Կառավարիչներու եւ թագաւորներու առջեւ պիտի տարուիք՝ իմ պատճառովս, իբր վկայութիւն անոնց ու հեթանոսներուն: **19** Բայց երբ մատնեն ձեզ, մի՛ մտահոգուիք թէ ի՞նչպէս կամ ի՞նչ պիտի խօսիք, որովհետեւ ինչ որ պիտի խօսիք՝ պիտի տրուի ձեզի այդ ժամուն: **20** Որովհետեւ ոչ թէ դուք էք որ պիտի խօսիք, հապա ձեր օր Յոգին՝ որ պիտի խօսի ձեր մէջ: **21** Եղբայրը մահուան պիտի մատնէ իր եղբայրը, եւ հայրը՝ զաւակը. ու

զաւակներ պիտի ելլեն իրենց ծնողներուն դէմ եւ
 մեռցնեն զանոնք: **22** Բոլորին ատելի պիտի ըլլաք
 իմ անունիս համար. բայց ո՛վ որ տոկայ մինչեւ
 վախճանը, անիկա պիտի փրկուի: **23** Երբ այս
 քաղաքին մէջ հալածեն ձեզ, փախէ՛ք ուրիշ քաղաք
 մը. որովհետեւ ճշմարտապէս կը յայտարարեմ
 ձեզի. “Պիտի չաւարտէք Իսրայէլի քաղաքները,
 մինչեւ որ մարդու Որդին գայ”: **24** Աշակերտը
 գերիվեր չէ իր վարդապետէն, ո՛չ ալ ծառան՝ իր
 տիրոջմէն: **25** Բաւական է աշակերտին՝ որ իր
 վարդապետին պէս ըլլայ, ու ծառային՝ իր տիրոջ
 պէս: Եթէ տանուտերը կոչեցին Բեեղզերուդ,
 որչափ աւելի՝ անոր տնեցիները»: **26** «Ուրեմն
 մի՛ վախնաք անոնցմէ, որովհետեւ ոչինչ կայ
 ծածկուած՝ որ պիտի չյայտնուի, ու գաղտնի՝ որ
 պիտի չգիտցուի: **27** Ինչ որ կ'ըսեմ ձեզի խաւարի
 մէջ՝ խօսեցէ՛ք զայն լոյսի մէջ, եւ ինչ որ կը
 լսէք ականջի մէջ՝ քարոզեցէ՛ք տանիքներուն
 վրայ: **28** Մի՛ վախնաք անոնցմէ՝ որ մարմինը
 կը սպաննեն ու չեն կրնար անձը սպաննել. այլ
 մանաւանդ վախցէ՛ք անկէ՝ որ կրնայ անձը եւ
 մարմինը կորսնցնել գեհենին մէջ: (Geenna g1067) **29**
 Երկու ճնճողուկ չէն ծախուիի մէկ դանգի. սակայն
 անոնցմէ ո՛չ մէկը գետին կ'իյնայ առանց ձեր Զօր
 կամքին: **30** Բայց ձեր գլուխին բոլոր մագերն ալ
 համրուած են: **31** Ուրեմն մի՛ վախնաք, որովհետեւ
 դուք շատ ճնճողուկներէ աւելի կ'արժէք»: **32** «Ուստի
 ո՛վ որ դաւանի զիս մարդոց առջեւ, ես ալ պիտի
 դաւանիմ զինք Զօրս առջեւ՝ որ երկինքն է: **33**

Իսկ ղվ որ ուրանայ զիս մարդոց առջեւ, ես ալ պիտի ուրանամ զինք Զօրս առջեւ՝ որ երկինքն է»։ **34** «Մի կարծեք թէ ես եկայ խաղաղութիւն ձգելու երկրի վրայ։ Ես եկայ ոչ թէ խաղաղութիւն ձգելու, հապա՛ սուր։ **35** Որովհետեւ եկայ զատելու մարդը իր հօրմէն, եւ աղջիկը՝ իր մօրմէն, ու հարսը՝ իր կեսուրէն։ **36** Մարդուն թշնամիները՝ իր տնեցիները պիտի ըլլան։ **37** Ա՛ն որ ինձմէ աւելի կը սիրէ իր հայրը կամ մայրը՝ ինծի արժանի չէ, եւ ան որ ինձմէ աւելի կը սիրէ իր որդին կամ աղջիկը՝ ինծի արժանի չէ։ **38** Ա՛ն որ իր խաչը չ'առնէր ու իմ ետեւէս չի գար, ինծի արժանի չէ։ **39** Ա՛ն որ կը գտնէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ան որ կը կորսնցնէ իր անձը ինծի համար՝ պիտի գտնէ զայն»։ **40** «Ա՛ն որ ձեզ կ'ընդունի՝ զիս կ'ընդունի. եւ ան որ զիս կ'ընդունի՝ զիս դրկողը կ'ընդունի։ **41** Ա՛ն որ մարգարէ մը կ'ընդունի՝ մարգարէի անունով, մարգարէի վարձատրութիւն պիտի ստանայ. ու ան որ արդար մը կ'ընդունի՝ արդարի անունով, արդարի վարձատրութիւն պիտի ստանայ։ **42** Եւ ղվ որ այս պատիկներէն մէկուն միայն գաւաթ մը պաղ ջուր խմցնէ՝ աշակերտի անունով, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի, բնաւ իր վարձատրութիւնը պիտի չկորսնցնէ»։

11 Երբ Յիսուս աւարտեց պատուէր տալը իր տասներկու աշակերտներուն, մեկնեցաւ անկէ՝ սորվեցնելու եւ քարոզելու անոնց քաղաքներուն մէջ։ Երբ Յովհաննէս բանտին մէջ լսեց Քրիստոսի գործերուն մասին, իր աշակերտներէն երկուքը

դրկելով՝ ըսաւ անոր. **3** «Դ՞ռն ես ան՝ որ պիտի գար, թէ ուրիշի մը սպասենք»: **4** Յիսուս պատասխանեց անոնց. «Գացէ՛ք եւ պատմեցէ՛ք Յովհաննէսի՝ ինչ որ կը լսէք ու կը տեսնէք. **5** կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորոտները կը մաքրուին, խուլերը կը լսեն, մեռելները յարութիւն կ'առնեն, եւ աղքատներուն կ'աւետարանուի: **6** Երանի՛ անոր՝ որ չի գայթակղիր իմ պատճառովս»: **7** Երբ անոնք մեկնեցան, Յիսուս սկսաւ բազմութիւններուն ըսել Յովհաննէսի մասին. «Ի՞նչ տեսնելու գացիք անապատը. հովէն տատանող եղէ՞գ մը: **8** Հապա ի՞նչ տեսնելու գացիք. փափուկ հանդերձներ հագած մամրո՞ մը. ահա՛ փափուկ հանդերձներ կրողները՝ թագաւորներուն տուներն են: **9** Հապա ի՞նչ տեսնելու գացիք. մարգարէ՞ մը: Այո՛, կը յայտարարեմ ձեզի, մարգարէէ մըն ալ աւելի: **10** Որովհետեւ ասիկա՛ է ան՝ որուն մասին գրուած է. “Ահա՛ ես կը դրկեմ իմ պատգամաւորս քու առջեւէդ. ան պիտի պատրաստէ ճամբադ՝ քու առջեւդ”: **11** Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Կիներէ ծնածներուն մէջ՝ Յովհաննէս Մկրտիչէն աւելի մեծը ելած չէ”. սակայն երկինքի թագաւորութեան մէջ՝ ամենէն պզտիկը անկէ աւելի մեծ է: **12** Ու Յովհաննէս Մկրտիչին օրերէն մինչեւ հիմա՝ երկինքի թագաւորութիւնը ոյժով կ'առնուի, եւ ուժեղները կը յափշտակեն զայն. **13** որովհետեւ բոլոր Մարգարէներն ու Օրէնքը մարգարէացան մինչեւ Յովհաննէս: **14** Եթէ կ'ուզէք ընդունիլ, անիկա՛ է Եղիան՝ որ

պիտի գար: 15 Ա՛ն որ ականջ ունի լսելու՝ թող
 լսէ: 16 Բայց որո՞ւ նմանցնեմ այս սերունդը: Կը
 նմանի մանուկներու, որոնք հրապարակները
 նստելով՝ կը գոչեն իրենց ընկերներուն 17 եւ
 կ'ըսեն. “Սրինգ նուագեցինք ձեզի՝ ու չպարեցիք,
 ողբացինք ձեզի՝ ու չհեծեծեցիք”: 18 Որովհետեւ
 Յովհաննէս եկաւ, ոչ կ'ուտէր եւ ոչ կը խմէր,
 ու կ'ըսէին. “Դեւ կայ անոր մէջ”: 19 Մարդու
 Որդին եկաւ, կ'ուտէ եւ կը խմէ, ու կ'ըսեն. “Ահա՛
 շատակեր ու գինեսէր մարդ մը, մաքսաւորներու եւ
 մեղաւորներու բարեկամ”: Բայց իմաստութիւնը
 արդարացաւ իր գաւակներով»: 20 Այն ատեն
 սկսաւ կշտամբել այն քաղաքները՝ որոնց մէջ
 կատարուէր էին իր հրաշքներէն շատերը, քանի
 որ չապաշխարեցին. 21 «Վայ քեզի՝ Քորազին,
 վայ քեզի՝ Բեթսայիդա, որովհետեւ եթէ Տիւրոսի
 եւ Սիդոնի մէջ կատարուած ըլլային այն
 հրաշքները՝ որոնք ձեր մէջ կատարուեցան,
 շատո՞նց ապաշխարած պիտի ըլլային քուրձով
 ու մոխիրով: 22 Բայց ձեզի կը յայտարարեմ,
 Տիւրոսի եւ Սիդոնի աւելի դիւրին պիտի ըլլայ
 դատաստանին օրը՝ քան ձեզի: 23 Իսկ դո՛ւն,
 Կափառնայում, որ բարձրացած ես մինչեւ երկինք,
 պիտի իջնես մինչեւ դժոխք, որովհետեւ եթէ
 Սոդոմի մէջ կատարուած ըլլային այն հրաշքները՝
 որոնք քու մէջդ կատարուեցան, տակաւին
 մնացած պիտի ըլլար մինչեւ այսօր: (Hadēs g86) 24
 Բայց կը յայտարարեմ ձեզի թէ Սոդոմացիներու
 երկրին աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին

օրը՝ քան քեզի»։ **25** Այդ ատեն Յիսուս ըսաւ. «Կը ներբողեմ քեզ, ով Հայր, Տէր երկինքի ու երկրի, որ այս բաները ծածկեցիր իմաստուններէն եւ խելացիներէն, ու յայտնեցիր երախաներուն։ **26** Այո, Հայր, որովհետեւ այսպէս հաճելի եղաւ քու առջեւ։ **27** Ամեն բան յանձնուեցաւ ինծի իմ Հօրմէս, եւ ոչ մէկը կը ճանչնայ Որդին՝ բայց միայն Հայրը, ու ոչ մէկը կը ճանչնայ Հայրը՝ բայց միայն Որդին, եւ ան՝ որուն Որդին փափաքի յայտնել։ **28** Եկէք ինծի, դուք բոլորդ որ կը յոգնիք ու բեռնաւորուած էք, եւ ես պիտի հանգստացնեմ ձեզ։ **29** Առէք իմ լուծս ձեր վրայ ու սորվեցէք ինձմէ՝ որ հեզ եմ եւ սիրտով խոնարհ, ու հանգստութիւն պիտի գտնէք ձեր անձերուն։ **30** որովհետեւ իմ լուծս հեշտ է, եւ իմ բեռս՝ թեթեւ»։

12 Այդ ատեն Յիսուս՝ Շաբաթ օր մը՝ գնաց արտերու մէջէն. իր աշակերտները՝ անօթենալով՝ սկսան ցորենի հասկեր փրցնել եւ ուտել։ **2** Երբ Փարիսեցիները տեսան՝ ըսին անոր. «Ահա՛ քու աշակերտներդ կը գործեն, մինչդեռ արտօնուած չէ գործել Շաբաթ օրը»։ **3** Ան ալ ըսաւ անոնց. «Չէ՞ք կարդացեր Դաւիթի ըրածը, երբ ինք եւ իրեն հետ եղողները անօթեցան. **4** մտաւ Աստուծոյ տունը, ու կերաւ առաջադրութեան հացերը, որ ոչ իրեն արտօնուած էր ուտել, ոչ ալ իրեն հետ եղողներուն, բայց միայն քահանաներուն։ **5** Կամ թէ Օրէնքին մէջ չէ՞ք կարդացեր թէ քահանաները կը սրբապղծեն Շաբաթը տաճարին մէջ՝ Շաբաթ օրերը, եւ անպարտ են։ **6** Բայց կը

յայտարարեմ ձեզի թէ այստեղ տաճարէն աւելի
 մեծ մէկը կայ: 7 Եթէ գիտնայիք թէ ինչ ըսել է.
 “Կարեկցութիւն կ’ուզեմ, ու ի՞նչ թէ զոհ”, այն ատեն
 չէիք դատապարտեր անպարտները. 8 որովհետեւ
 մարդու Որդին տէրն է Շաբաթին»: 9 Մեկնելով
 անկէ՝ եկաւ անոնց ժողովարանը: 10 Հոն մարդ
 մը կար, որուն ձեռքը չորցած էր: Ամբաստանելու
 համար զինք՝ հարցուցին անոր. «Արտօնուած է
 բուժել Շաբաթ օրը»: 11 Ան ալ ըսաւ անոնց. «Ձեզմէ
 ի՞նչ է այն մարդը, որ եթէ ոչխար մը ունենայ եւ
 ան փոսի մէջ իյնայ Շաբաթ օրը, չի բռներ ու վեր
 չի հաներ զայն: 12 Հետեւաբար մարդը ի՞նչ ասի
 աւելի կ’արժէ ոչխարէն: Ուրեմն արտօնուած է
 բարիք գործել Շաբաթ օրը»: 13 Այն ատեն ըսաւ այդ
 մարդուն. «Երկարէ ձեռքդ»: Ան ալ երկարեց, եւ
 առողջացաւ միւսին պէս: 14 Իսկ Փարիսեցիները
 դուրս ելլելով՝ խորհրդակցեցան անոր դէմ թէ
 ինչպէս կորսնցնեն զայն: 15 Երբ Յիսուս գիտցաւ՝
 մեկնեցաւ անկէ: Մեծ բազմութիւններ հետեւեցան
 անոր, եւ բուժեց բոլորը. 16 բայց սաստիկ
 հրահանգեց անոնց՝ որ ի՞նչ մէկուն յայտնեն զինք, 17
 որպէսզի իրագործուի Եսայի մարգարէին միջոցով
 ըսուած խօսքը. 18 «Ահա՛ իմ ծառաս՝ որ ընտրեցի,
 եւ իմ սիրելիս՝ որուն հաճեցաւ իմ անձս. իմ
 Հոգիս պիտի դնեմ անոր վրայ, ու իրաւունքը
 պիտի հռչակէ հեթանոսներուն: 19 Ո՛հ պիտի
 հակառակի, ի՞նչ պիտի պոռայ, եւ ի՞նչ մէկը պիտի
 լսէ անոր ձայնը հրապարակներուն մէջ: 20 Պիտի
 չփշրէ ջախջախուած եղբօր ու պիտի չմարէ

պլպլացող պատրոյզը, մինչեւ որ իրաւունքը
 հասցնէ յաղթութեան: 21 Եւ հեթանոսները պիտի
 յուսան անոր անունին»: 22 Այն ատեն բերին
 իրեն կոյր ու համր դիւահար մը, եւ բուժեց
 զայն, այնպէս որ համրն ու կոյրը խօսեցաւ եւ
 տեսաւ: 23 Ամբողջ բազմութիւնը զմայլեցաւ, ու
 կ'ըսէր. «Արդեօք ասիկա՞ն է Դաւիթի որդին»: 24
 Բայց երբ Փարիսեցիները լսեցին՝ ըսին. «Ասիկա
 ուրիշ բանով դուրս չի հաներ դէւերը, բայց միայն
 դէւերուն Բեեղզեբուդ իշխանով»: 25 Յիսուս
 գիտնալով անոնց մտածումները՝ ըսաւ անոնց.
 «Ինքնիր դէմ բաժնուած որեւէ թագաւորութիւն՝
 կ'աւերի, եւ ինքնիր դէմ բաժնուած որեւէ քաղաք
 կամ տուն՝ չի կրնար կենալ: 26 Եթէ Սատանան
 դուրս հանէ Սատանան, բաժնուած է ինքնիր դէմ.
 ուրեմն անոր թագաւորութիւնը ինչպէս պիտի
 կենայ: 27 Ու եթէ ես Բեեղզեբուդով կը հանեմ
 դէւերը, ձեր որդիները ինչո՞վ կը հանեն. ուստի
 անոնք պիտի ըլլան ձեր դատաւորները: 28 Բայց
 եթէ ես Աստուծոյ Յոգիով կը հանեմ դէւերը,
 ուրեմն Աստուծոյ թագաւորութիւնը հասած է
 ձեր վրայ: 29 Կամ մէկը ինչպէս կրնայ մտնել
 ուժեղ մարդու մը տունը եւ յափշտակել անոր
 կարասիները, եթէ նախ չկապէ այդ ուժեղ մարդը,
 եւ այն ատեն կողոպտէ անոր տունը: 30 Ա՛ն որ
 ինծի հետ չէ՝ ինծի հակառակ է, եւ ան որ ինծի հետ
 չի ժողվեր՝ կը ցրուէ: 31 Ուստի կը յայտարարեմ
 ձեզի. “Ամեն տեսակ մեղք ու հայիոյութիւն պիտի
 ներուի մարդոց, բայց Սուրբ Հոգիին դէմ եղած

հայիոյութիւնը պիտի չներուի մարդոց”: 32 Ո՛վ
 որ խօսք մը քսէ մարդու Որդիին դէմ՝ պիտի
 ներուի անոր, բայց ո՛վ որ խօսի Սուրբ Յոգիին
 դէմ՝ պիտի չներուի անոր, ո՛չ այս աշխարհին
 մէջ եւ ո՛չ գալիքին մէջ»: (aiðn g165) 33 «Կան լաւ
 սեպեցէք ծառը, ու անոր պտուղը լաւ կ’ըլլայ,
 կան վատ սեպեցէք ծառը, եւ անոր պտուղը
 վատ կ’ըլլայ. որովհետեւ ծառը կը ճանչցուի իր
 պտուղէն: 34 Իժերո՛ւ ծնունդներ, ինչպէս կրնաք՝
 չար ըլլալով՝ բարի բաներ խօսիլ. որովհետեւ
 բերանը կը խօսի սիրտին լիութենէն: 35 Բարի
 մարդը իր սիրտին բարի գանձէն կը հանէ բարի
 բաներ, իսկ չար մարդը իր սիրտին չար գանձէն կը
 հանէ չար բաներ: 36 Բայց կը յայտարարեմ ձեզի.
 “Ամէն դատարկ խօսքի համար՝ որ մարդիկ կը
 խօսին, հաշիւ պիտի տան դատաստանին օրը”: 37
 Որովհետեւ քու խօսքերէդ պիտի արդարանաս,
 եւ քու խօսքերէդ պիտի դատապարտուիս»: 38
 Այն ատեն դպիրներէն ու Փարիսեցիներէն ոմանք
 քսին իրեն. «Վարդապետ, նշան մը կ’ուզենք
 տեսնել քեզմէ»: 39 Իսկ ինք պատասխանեց անոնց.
 «Չար եւ շնացող սերունդը նշան կը խնդրէ: Ուրիշ
 նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան
 մարգարէին նշանը: 40 Որովհետեւ ինչպէս Յովնան
 մնաց կէտ ձուկին փորին մէջ՝ երեք օր ու երեք
 գիշեր, այնպէս մարդու Որդին պիտի մնայ երկրի
 սիրտին մէջ՝ երեք օր եւ երեք գիշեր: 41 Նինուէի
 մարդիկը դատաստանին օրը պիտի կանգնին այս
 սերունդին դէմ ու պիտի դատապարտեն զայն,

որովհետեւ զղջացին Յովնանի քարոզութեամբ.
 եւ ահա Յովնանէ մեծ մէկը կայ հոս: **42** Հարաւի
 թագուհին դատաստանին օրը ոտքի պիտի ելլէ
 այս սերունդին դէմ ու զայն պիտի դատապարտէ,
 որովհետեւ ինք եկաւ երկրի ծայրերէն՝ Սողոմոնի
 իմաստութիւնը լսելու. եւ ահա Սողոմոնէ մեծ մէկը
 կայ հոս»: **43** «Երբ անմաքուր ոգին դուրս կ'ելլէ
 մարդէ մը՝ կը շրջի անջուր տեղեր, հանգստութիւն
 կը փնտռէ, ու չի գտներ: **44** Այն ատեն կ'ըսէ.
 “Վերադառնամ իմ տունս՝ ուրկէ ելայ”: Կու գայ եւ
 կը գտնէ զայն՝ պարապ, ալլուած ու զարդարուած:
45 Այն ատեն կ'երթայ, եւ կ'առնէ իրեն հետ եօթը
 ուրիշ ոգիներ՝ իրմէ աւելի չար, ու մտնելով հոն
 կը բնակին. եւ այդ մարդուն վերջին վիճակը
 կ'ըլլայ առաջինէն աւելի գէշ: Այսպէս պիտի ըլլայ
 այս չար սերունդին ալ»: **46** Մինչ ինք կը խօսէր
 բազմութեան, իր մայրն ու եղբայրները կայնած
 էին դուրսը, եւ կը ջանային խօսիլ իրեն հետ: **47**
 Մէկը ըսաւ իրեն. «Ահա քու մայրդ ու եղբայրներդ
 կայնած են դուրսը, եւ կը ջանան խօսիլ քեզի
 հետ»: **48** Ինք ալ պատասխանեց իրեն ըսողին.
 «Ո՛վ է իմ մայրս, ու որո՞նք են իմ եղբայրներս»: **49**
 Եւ երկարելով իր ձեռքը դէպի իր աշակերտները՝
 ըսաւ. «Ահա մայրս ու եղբայրներս. **50** որովհետեւ
 իմ որ կը գործադրէ իմ երկնաւոր Հօրս կամքը,
 անիկա է իմ եղբայրս, քոյրս եւ մայրս»:

13 Եւ այն օրը Յիսուս՝ տունէն ելլելով՝ նստաւ
 ծովուն եզերքը: **2** Մեծ բազմութիւններ քովը
 հաւաքուեցան. ուստի ինք նաւ մտաւ ու նստաւ,

իսկ ամբողջ բազմութիւնը կայնած էր ծովեզերքը:
3 Շատ քաներ խօսեցաւ անոնց՝ առականերով,
 եւ ըսաւ. **4** «Ահա՛ սերմնացան մը գնաց՝ որ
 սերմ ցանէ: Երբ կը ցանէր, քանի մը սերմեր
 ինկան ճամբային եզերքը, եւ թռչունները եկան
 ու լափեցին զանոնք: **5** Ուրիշներ ինկան ժայռոտ
 տեղերու վրայ, ուր շատ հող չկար, եւ իսկոյն
 բուսան՝ հողին խորունկութիւն չունենալուն
 համար. **6** սակայն տօթակէզ եղան երբ արեւը
 ելաւ, ու չորցան՝ քանի որ արմատ չունէին: **7**
 Ուրիշներ ալ ինկան փուշերու մէջ. եւ փուշերը
 բարձրացան ու խեղդեցին զանոնք: **8** Իսկ ուրիշներ
 ինկան լաւ հողի մէջ, եւ պտուղ տուին՝ մէկը
 հարիւր, միւսը՝ վաթսուն, միւսը՝ երեսուն: **9** Ա՛ն որ
 ականջ ունի լսելու՝ թող լսէ»: **10** Աշակերտները
 մօտենալով՝ ըսին իրեն. «Ինչո՞ւ առականերով կը
 խօսիս անոնց»: **11** Ինք ալ պատասխանեց անոնց.
 «Քանի որ ձեզի՛ տրուած է գիտնալ երկինքի
 թագաւորութեան խորհուրդները, բայց անոնց
 տրուած չէ: **12** Որովհետեւ ո՛վ որ ունի, անոր
 պիտի տրուի ու առատութեան մէջ պիտի ըլլայ.
 իսկ ո՛վ որ չունի, ունեցածն ալ անկէ պիտի
 առնուի: **13** Ուստի առականերով կը խօսիմ անոնց,
 քանի որ տեսնելով՝ չեն տեսներ, ու լսելով՝
 չեն լսեր, ո՛չ ալ կը հասկնան: **14** Անոնց վրայ
 պիտի իրագործուի Եսայիի մարգարէութիւնը՝ որ
 կ'ըսէ. “Շատ պիտի լսէք՝ բայց պիտի չհասկնաք.
 շատ պիտի տեսնէք՝ բայց պիտի չըմբռնէք: **15**
 Որովհետեւ այս ժողովուրդին սիրտը թանձրացաւ,

եւ իրենց ականջներով ծանր լսեցին ու գոցեցին իրենց աչքերը, որպէսզի աչքերով չտեսնեն, ականջներով չլսեն, սիրտով չհասկնան, եւ դարձի չգան, ու ես չբժշկեմ զանոնք”։ 16 Բայց երանի՜ ձեր աչքերուն՝ որ կը տեսնեն, եւ ձեր ականջներուն՝ որ կը լսեն։ 17 Որովհետեւ ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի թէ շատ մարգարէներ եւ արդարներ ցանկացին տեսնել ձեր տեսածները՝ ու չտեսան, եւ լսել ձեր լսածները՝ ու չլսեցին»։ 18 «Լսեցէք ուրեմն սերմնացանին առակը։ 19 Ո՛վ որ կը լսէ թագաւորութեան խօսքը եւ չի հասկնար, չարը կու գայ ու կը յափշտակէ անոր սիրտին մէջ ցանուածը։ Ասիկա ան է՝ որ սերմ ստացաւ ճամբային եզերքը։ 20 Ժայռոտ տեղերու վրայ սերմ ստացողը ան է, որ կը լսէ խօսքը եւ իսկոյն կ’ընդունի զայն ուրախութեամբ։ 21 Բայց իր մէջ արմատ չունենալով՝ քիչ ժամանակ կը տեւէ, ու երբ տառապանք կամ հալածանք ըլլայ խօսքին պատճառով՝ իսկոյն կը գայթակղի։ 22 Փուշերու մէջ սերմ ստացողը ան է, որ կը լսէ խօսքը, սակայն այս աշխարհի հոգերն ու հարստութեան խաբէութիւնը կը խեղդեն խօսքը, եւ անպտուղ կ’ըլլայ։ (aiōn g165) 23 Իսկ լաւ հողի մէջ սերմ ստացողը ան է, որ խօսքը կը լսէ ու կը հասկնայ. նաեւ պտուղ կու տայ, եւ կը բերէ՝ մէկը հարիւր, միւսը՝ վաթսուն, միւսը՝ երեսուն»։ 24 Ուրիշ առակ մըն ալ առաջարկեց անոնց ու ըսաւ. «Երկինքի թագաւորութիւնը նմանեցաւ մարդու մը, որ իր արտին մէջ լաւ սերմ ցանեց։ 25

Մինչ մարդիկ կը քնանային՝ իր թշնամին եկաւ,
 որոմ ցանեց ցորենին մէջ եւ գնաց: **26** Երբ խոտը
 ծաղկեցաւ ու պտուղ բերաւ, այն ատեն որոմն
 ալ երեւցաւ: **27** Ուստի հողատիրոջ ծառաները
 մօտեցան եւ ըսին անոր. «Տէր, դուն լաւ սերմ
 չցանեցիր արտիդ մէջ. ուրեմն որոմը ուրկէ՞ է»: **28**
 Ան ալ ըսաւ անոնց. «Թշնամի մը ըրած է ասիկա»:
 Ծառաները ըսին իրեն. «Ուստի կ'ուզէս որ երթանք
 ու քաղենք զանոնք»: **29** Իսկ ան ըսաւ. «Ո՛չ,
 որպէսզի երբ որոմը քաղէք՝ ցորենն ալ չփրցնէք
 անոր հետ: **30** Թոյլ տուէք որ երկուքն ալ միասին
 աճին՝ մինչեւ հունձքի ատենը»: Եւ հունձքի
 ատենը պիտի ըսեմ հնձողներուն. «Նախ որոմը
 քաղեցէք ու խուրձ-խուրձ կապեցէք՝ այրելու
 համար, իսկ ցորենը ժողվեցէք իմ ամբարս»»: **31**
 Ուրիշ առակ մըն ալ առաջարկեց անոնց եւ ըսաւ.
 «Երկինքի թագաւորութիւնը նման է մանանեխի
 հատիկի մը, որ մարդ մը առաւ ու ցանեց իր
 արտին մէջ: **32** Արդարեւ ան բոլոր սերմերուն
 ամենէն պզտիկն է, բայց երբ աճի՝ տունկերուն
 մեծագոյնը կ'ըլլայ ու ծառ կը դառնայ, այնպէս
 որ երկինքի թռչունները կու գան եւ կը բնակին
 անոր ճիւղերուն վրայ»: **33** Ուրիշ առակ մըն ալ
 ըսաւ անոնց. «Երկինքի թագաւորութիւնը նման է
 խմորին, որ կին մը առաւ ու պահեց երեք գրիւ
 ալիւրի մէջ՝ մինչեւ որ ամբողջը խմորուեցաւ»:
34 Յիսուս առակներով խօսեցաւ բազմութեան
 այս բոլոր բաները: Առանց առակի չէր խօսեր
 անոնց, **35** որպէսզի իրագործուի մարգարէին

միջոցով ըստւած խօսքը. «Առականերով պիտի բանամ բերանս, եւ պիտի արտայայտեմ աշխարհի հիմնադրութենէն ի վեր ծածկուած բաները»: 36 Այն ատեն Յիսուս արձակեց բազմութիւնը, ու տուն գնաց: Իր աշակերտները մօտեցան իրեն եւ ըսին. «Բացատրէ մեզի արտին որոմներուն առակը»:

37 Ինք ալ պատասխանեց անոնց. «Լաւ սերմը ցանողը՝ մարդու Որդին է, 38 արտը՝ աշխարհն է: Լաւ սերմը թագաւորութեան որդիներն են, բայց որոմը չարին որդիներն են: 39 Թշնամին որ ցանեց զայն՝ Չարախօսն է, հունձքը՝ աշխարհի վախճանն է, եւ հնձողները՝ հրեշտակներն են: (aiōn g165) 40 Ուրեմն ինչպէս որ որոմը կը քաղուի ու կ'այրուի կրակի մէջ, այնպէս պիտի ըլլայ այս աշխարհի վախճանին: (aiōn g165) 41 Մարդու Որդին պիտի դրկէ իր հրեշտակները, եւ պիտի հաւաքեն իր թագաւորութենէն բոլոր գայթակղութիւններն ու անօրէնութիւն գործողները, 42 եւ պիտի նետեն զանոնք կրակի հնոցին մէջ. հոն պիտի ըլլայ լաց ու ակռաներու կրճտում: 43 Այն ատեն արդարները պիտի փայլին արեւի պէս՝ իրենց Յօր թագաւորութեան մէջ: Ա՛ն որ ականջ ունի լսելու՝ թող լսէ»: 44 «Դարձեալ՝ երկինքի թագաւորութիւնը նման է արտի մէջ պահուած գանձին, որ մարդ մը՝ գտնելէ ետք՝ կը ծածկէ, եւ ուրախութենէն կ'երթայ, կը ծախէ իր ամբողջ ունեցածը, ու կը գնէ այդ արտը»: 45 «Դարձեալ՝ երկինքի թագաւորութիւնը նման է առեւտրականի մը, որ գեղեցիկ մարգարիտներ կը փնտռէ, 46 եւ շատ

պատուական մարգարիտ մը գտնելէ ետք՝ գնաց, ծախեց իր ամբողջ ունեցածը, ու գնեց զայն»։ 47 «Դարձեալ՝ երկինքի թագաւորութիւնը նման է ծովը նետուած ուռկանի մը, որ ամէն տեսակ ձուկ կը ժողվէ։ 48 Երբ ուռկանը լեցուեցաւ, հանեցին ծովեզերքը եւ նստան, հաւաքեցին լաւերը ամաններու մէջ, իսկ դուրս նետեցին վատերը։ 49 Այսպէս պիտի ըլլայ աշխարհի վախճանին։ 3 Րեշտակները պիտի ելլեն, արդարներուն մէջէն պիտի զատեն չարերը, (aiōn g165) 50 ու պիտի նետեն զանոնք կրակի հնոցին մէջ. հոն պիտի ըլլայ լաց եւ ակճաներու կրճտում»։ 51 Յիսուս ըսաւ անոնց. «Հասկցա՞ք այս ամէնը»։ Ըսին անոր. «Այո, Տէր»։ 52 Ան ալ ըսաւ անոնց. «Ասոր համար ամէն դպիր՝ որ աշակերտ եղած է երկինքի թագաւորութեան, նման է տանտիրոջ մը՝ որ իր գանձէն կը հանէ նորն ու հինը»։ 53 Երբ Յիսուս աւարտեց այս առակները՝ մեկնեցաւ անկէ։ 54 Գնաց իր բնագաւառը եւ կը սորվեցնէր անոնց՝ իրենց ժողովարանին մէջ, այնպէս որ անոնք կ'ապշէին ու կ'ըսէին. «Ասիկա ուրկէ՞ ունի այս իմաստութիւնը եւ հրաշքները։ 55 Ասիկա հիւսնին որդին չէ. ասոր մայրը Մարիամ չի կոչուիր։ Ասոր եղբայրները՝ Յակոբոս, Յովսէս, Սիմոն ու Յուդա, 56 եւ ասոր քոյրերը՝ բոլորն ալ մեր քով չեն։ Ուրեմն ասիկա ուրկէ՞ ունի այս բոլոր բաները»։ 57 ու կը գայթակդէին անոր պատճառով։ Բայց Յիսուս ըսաւ անոնց. «Մարգարէ մը առանց պատիւի չէ, բացի իր բնագաւառին եւ իր տան

մէջ»։ 58 Ու շատ հրաշքներ չգործեց հոն՝ անոնց անհաւատութեան պատճառով։

14 Այդ ատեն Յերովդէս չորրորդապետը լսեց Յիսուսի համբաւը, եւ ըսաւ իր ծառաներուն. 2 «Ան Յովհաննէս Մկրտիչն է՝ մեռելներէն յարութիւն առած. ուստի հրաշքներ կը գործուին անով»։ 3 Արդարեւ Յերովդէս բռներ էր Յովհաննէսը, ու զայն կապելով բանտը դրեր էր, իր եղբօր՝ Փիլիպպոսի կնոջ՝ Յերովդիայի պատճառով. 4 որովհետեւ Յովհաննէս կ'ըսէր անոր. «Քեզի արտօնուած չէ կին առնել զինք»։ 5 Ուստի կ'ուզէր սպաննել զայն, բայց կը վախնար բազմութենէն, որովհետեւ մարգարէ կը նկատէին՝ զայն։ 6 Երբ Յերովդէսի ծնունդին տարեդարձը կը տօնուէր, Յերովդիայի աղջիկը պարեց հանդիսականներուն առջեւ, ու հաճեցուց Յերովդէսը։ 7 Ուստի երդումով խոստացաւ որ տար անոր ինչ որ ուզէր։ 8 Ան ալ՝ նախապէս խրատուած ըլլալով իր մօրմէն՝ ըսաւ. «Տո՛ւր ինծի Յովհաննէս Մկրտիչին գլուխը՝ ափսէի մը վրայ»։ 9 Թագաւորը տրտմեցաւ. բայց երդումներուն եւ իրեն հետ նստողներուն պատճառով՝ հրամայեց որ տրուի։ 10 Ու մարդ դրկելով՝ զլխատեց Յովհաննէսը բանտին մէջ։ 11 Եւ անոր գլուխը բերուեցաւ ափսէի մը վրայ ու տրուեցաւ աղջիկին. ան ալ տուաւ իր մօր։ 12 Եւ անոր աշակերտները եկան, վերցուցին մարմինը, թաղեցին զայն, ու գացին պատմեցին Յիսուսի։ 13 Երբ Յիսուս լսեց, անկէ նաւով մեկնեցաւ ամայի տեղ մը՝ առանձին։ Երբ բազմութիւնները լսեցին,

ոտքով հետեւեցան անոր՝ իրենց քաղաքներէն: **14**
 Երբ դուրս ելաւ, տեսնելով մեծ բազմութիւն մը՝
 գթաց անոնց վրայ ու բուժեց անոնց հիւանդները:
15 Իրիկունը՝ իր աշակերտները եկան եւ ըսին. «Յոս
 ամայի տեղ մըն է, ու ժամանակը արդէն անցած է.
 արձակէ բազմութիւնը, որպէսզի երթան գիւղերը
 եւ կերակուր գնեն իրենց»: **16** Յիսուս ըսաւ անոնց.
 «Պէտք չկայ որ անոնք երթան, դո՛ւք տուէք անոնց՝
 որ ուտեն»: **17** Անոնք ալ ըսին. «Յոս ուրիշ բան
 չունինք, բայց միայն հինգ նկանակ ու երկու
 ձուկ»: **18** Ըսաւ անոնց. «Յո՛ս՝ ինծի բերէք զանոնք»: **19**
 Եւ հրամայեց որ բազմութիւնը նստեցնեն
 խոտին վրայ: Հինգ նկանակներն ու երկու
 ձուկերը առաւ, դէպի երկինք նայելով՝ օրհնեց, եւ
 կտրելով նկանակները՝ տուաւ աշակերտներուն,
 աշակերտներն ալ՝ բազմութեան: **20** Բոլորը կերան
 ու կշտացան, եւ վերցնելով աւելցած բեկորները՝
 տասներկու կողով լեցուցին: **21** Անոնք որ կերան՝
 հինգ հազարի չափ այր մարդիկ էին, կիներէն
 ու մանուկներէն զատ: **22** Իսկոյն հարկադրեց
 աշակերտները՝ որ նաւ մտնեն եւ իրմէ առաջ
 անցնին միւս եզերքը, մինչ ինք բազմութիւնները
 կ'արձակէր: **23** Բազմութիւնները արձակելէ ետք,
 լեռը ելաւ առանձին՝ աղօթելու: Երբ իրիկուն եղաւ,
 հոն էր՝ մինակը. **24** իսկ նաւը արդէն ծովուն
 մէջտեղն էր՝ ալեկոծութեան մէջ, որովհետեւ հովը
 հակառակ ուղղութեամբ էր: **25** Գիշերուան չորրորդ
 պահուն՝ Յիսուս գնաց դէպի նաւը, քալելով ծովուն
 վրայ: **26** Երբ աշակերտները տեսան զայն՝ որ

կը քալէր ծովուն վրայ, վրդովեցան եւ ըսին թէ աչքի երեւոյթ մըն է, ու վախնալով աղաղակեցին:

27 Իսկոյն Յիսուս խօսեցաւ անոնց եւ ըսաւ. «Քաջալերուեց'էք, եւ եմ, մի վախնաք»: 28 Պետրոս պատասխանեց անոր. «Տէր, եթէ դո՛ւն ես, հրամայէ ինծի՝ որ գամ քեզի ջուրերուն վրայէն»: 29 Ան ալ ըսաւ. «Եկո՛ւր»: Երբ Պետրոս նաւէն իջաւ, քալեց ջուրերուն վրայէն՝ Յիսուսի քով երթալու համար:

30 Բայց տեսնելով հովին սաստիկ ըլլալը՝ վախցաւ: Երբ սկսաւ ընկղմիլ, աղաղակեց. «Տէր, փրկէ՛ զիս»: 31 Յիսուս իսկոյն երկարեց իր ձեռքը, բռնեց զինք ու ըսաւ. «Թերահաւանտ, ինչո՛ւ կասկածեցար»: 32 Երբ նաւ ելան՝ հովը դադրեցաւ: 33 Անոնք որ նաւուն մէջ էին՝ եկան, երկրպագեցին անոր եւ ըսին. «Ճշմարտապէս դուն Աստուծոյ Որդին ես»: 34 Անցնելով միւս կողմը՝ հասան Գեննեսարէթ: 35 Երբ այդ տեղի մարդիկը ճանչցան զինք, մարդ որկեցին ամբողջ շրջակայքը, բերին անոր բոլոր ախտաւորները, 36 ու կ'աղաչէին անոր որ միայն դաչէին իր հանդերձին քղանցքին. եւ անոնք որ դպան՝ բժշկուեցան:

15 Այն ատեն Յիսուսի եկան դպիրներ ու Փարիսեցիներ, որոնք Երուսաղէմէն էին, եւ ըսին. 2 «Ինչո՛ւ քու աշակերտներդ զանց կ'ընեն նախնիքներուն աւանդութիւնը, քանի որ չեն լուար իրենց ձեռքերը՝ երբ հաց կ'ուտեն»: 3 Ինք ալ պատասխանեց անոնց. «Հապա դո՛ւք ինչո՛ւ զանց կ'ընէք Աստուծոյ պատուիրանը՝ ձեր աւանդութեան պատճառով: 4 Արդարեւ Աստուած

պատուիրեց. “Պատուէ՛ հայրդ ու մայրդ. 5 եւ
 ղ՛վ որ անիծէ իր հայրը կամ մայրը, մահի՛ր՝ թող
 վախճանի”։ 6 Բայց դուք կ’ըսէք. “Ո՛վ որ իր հօր
 կամ մօր ըսէ թէ “ինչ օգուտ որ պիտի ստանաս
 ինձմէ՛ Աստուծոյ տալիք ընծայ է”, եւ իր հայրը կամ
 մայրը չպատուէ՛ ազատ է”։ Ա՛յսպէս՝ անվաւեր
 դարձուցած էք Աստուծոյ պատուիրանը՝ ձեր
 աւանդութեան պատճառով։ 7 Կեղծաւորներ,
 Եսայի ճիշդ մարգարեացաւ ձեր մասին՝ ըսելով. 8
 “Այս ժողովուրդը միայն շրթունքով կը պատուէ
 զիս, բայց իրենց սիրտը հեռու է ինձմէ. 9 եւ պարապ
 տեղը կը պաշտեն զիս՝ մարդոց պատուէրները
 սորվեցնելով իբր վարդապետութիւն”։ 10 Եւ
 բազմութիւնը կանչելով իրեն՝ ըսաւ անոնց.
 «Լսեցէ՛ք ու հասկցէ՛ք. 11 ոչ թէ ինչ որ կը մտնէ
 բերանը՝ կը պղծէ մարդը, հապա ինչ որ կ’ելլէ
 բերանէն՝ անիկա՛ կը պղծէ մարդը»։ 12 Այն ատեն իր
 աշակերտները մօտեցան եւ ըսին իրեն. «Գիտնա՛
 թէ Փարիսեցիները գայթակղեցան, երբ լսեցին այդ
 խօսքը»։ 13 Ան ալ պատասխանեց. «Ամէն տունկ՝
 որ իմ երկնաւոր Հայրս չէ տնկած, պիտի խլուի։ 14
 Թողուցէ՛ք զանոնք. իրենք կոյր են, ու կոյրերու
 առաջնորդ։ Եթէ կոյրը առաջնորդէ կոյրը, երկուքն
 ալ փոսը պիտի իյնան»։ 15 Պետրոս ըսաւ անոր.
 «Բացատրէ՛ մեզի այս առակը»։ 16 Յիսուս ըսաւ.
 «Դ՛ուք ալ տակաւին անխելք էք. 17 չէ՛ք հասկնար
 թէ ամէն ինչ որ կը մտնէ բերանը, կը պարունակուի
 փորին մէջ, ու կը ձգուի արտաքնոցը։ 18 Իսկ ինչ
 որ բերանէն դուրս կ’ելլէ՝ սիրտէն յառաջ կու գայ,

Եւ անիկա կը պղծէ մարդը: 19 Որովհետեւ սիրտէն
 կ'ելլեն չար մտածումներ, սպանութիւններ,
 շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ,
 սուտ վկայութիւններ ու հայհոյութիւններ: 20
 Ասոնք են որ կը պղծեն մարդը, բայց անլուայ
 ձեռքով հաց ուտելը՝ չի պղծեր մարդը»: 21
 Յիսուս անկէ մեկնելով՝ գնաց Տիւրոսի ու Սիդոնի
 երկրամասերը: 22 Եւ ահա՛ քանանացի կին
 մը, այդ հողամասերէն ելած, կը պոռար անոր.
 «Ողորմէ՛ ինծի, Տէր, Դաւիթի՛ որդի, աղջիկս
 սաստիկ կը չարչարուի դեւէն»: 23 Ինք ոչ
 մէկ խօսքով պատասխանեց անոր. իսկ իր
 աշակերտները մօտենալով՝ կը թախանձէին իրեն
 ու կ'ըսէին. «Արձակէ՛ զայն, որովհետեւ կ'աղաղակէ
 մեր ետեւէն»: 24 Ինք ալ պատասխանեց. «Ես
 դրկուեցայ միայն Իսրայէլի տան կորսուած
 ոչխարներուն»: 25 Բայց անիկա եկաւ, երկրպագեց
 անոր եւ ըսաւ. «Տէր, օգնէ՛ ինծի»: 26 Ան ալ
 պատասխանեց. «Լաւ չէ առնել զաւակներուն
 հացը ու նետել շուններուն»: 27 Անիկա ալ ըսաւ.
 «Այո, Տէր. սակայն շունները կը կերակրուին իրենց
 տիրոջ սեղանէն ինկած փշրանքներով»: 28 Այն
 ատեն Յիսուս պատասխանեց անոր. «Ո՛վ կին,
 մեծ է հաւատքդ. թող ըլլայ քեզի՛ ինչ որ կ'ուզես»:
 Եւ նոյն ժամուն անոր աղջիկը բժշկուեցաւ:
 29 Յիսուս անկէ մեկնեցաւ. երբ Գալիլեայի
 ծովեզերքը հասաւ՝ լեռը ելլելով նստաւ: 30 Ու մեծ
 բազմութիւններ եկան իրեն, որոնք ունէին իրենց
 հետ կաղեր, կոյրեր, համրեր, հաշմանդամներ

եւ շատ ուրիշներ, ու ձգեցին զանոնք Յիսուսի ոտքը: Ան ալ բուժեց զանոնք. 31 այնպէս որ բազմութիւնը զմայլեցաւ՝ տեսնելով որ համբերը կը խօսէին, հաշմանդամները կը բժշկուէին, կաղերը կը քալէին եւ կոյրերը կը տեսնէին. ու կը փառաբանէին Իսրայելի Աստուածը: 32 Յիսուս՝ բովը կանչելով իր աշակերտները՝ ըսաւ. «Կը գթամ այդ բազմութեան վրայ, որովհետեւ արդէն երեք օրէ ի վեր քովս են, եւ ուտելիք ոչինչ ունին: Չեմ ուզեր անօթի արձակել զանոնք, որպէսզի ճամբան չպարտասին»: 33 Աշակերտները ըսին անոր. «Մենք անապատին մէջ ուրկէ՞ պիտի ունենանք այնչափ հաց, որ կշտացնենք այնչափ մեծ բազմութիւն մը»: 34 Յիսուս ըսաւ անոնց. «Քանի՞ նկանակ ունիք»: Անոնք ալ ըսին. «Եօթը, ու քանի մը մանր ձուկ»: 35 Հրամայեց բազմութեան՝ որ նստին գետինին վրայ: 36 Առաւ եօթը նկանակներն ու ձուկերը, շնորհակալ եղաւ, կտրեց եւ տուաւ աշակերտներուն, աշակերտներն ալ՝ բազմութեան: 37 Բոլորը կերան ու կշտացան, եւ վերցնելով աւելցած բեկորները՝ եօթը զամբիւղ լեցուցին: 38 Անոնք որ կերան՝ չորս հազար այր մարդիկ էին, կիներէն ու մանուկներէն զատ: 39 Երբ արձակեց բազմութիւնը, նաւ մտաւ եւ գնաց Մագդաղայի հողամասը:

16 Փարիսեցիներն ու Սադուկեցիները բովը եկան՝ փորձելու համար զինք, եւ կը խնդրէին իրմէ որ երկինքէն նշան մը ցոյց տայ իրենց: 2 Ան ալ պատասխանեց անոնց. «Երբ իրիկուն ըլլայ՝

կ'ըսէք. “Վաղը լաւ օդ պիտի ըլլայ, որովհետեւ երկինքը շառագունած է”, 3 իսկ առտուն. “Այսօր մրրիկ պիտի ըլլայ, որովհետեւ երկինքը շառագունած ու մթագնած է”: Կեղծաւորներ, գիտէք զննել երկինքի երեսը, բայց չէք կրնար գիտնալ ժամանակներուն նշանները: 4 Չար ու շնացող սերունդը նշան կը խնդրէ: Սակայն ուրիշ նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան մարգարէին նշանը»: Եւ ձգեց զանոնք ու գնաց: 5 Երբ իր աշակերտները անցան միւս եզերքը, մոռցած էին հաց առնել: 6 Յիսուս ըսաւ անոնց. «Ուշադիր եղէք, զգուշացէք Փարիսեցիներու եւ Սադուկեցիներու խմորէն»: 7 Անոնք ալ կը մտածէին իրենց մէջ՝ ըսելով. «Հաց չբերինք մեզի հետ»: 8 Երբ Յիսուս ըմբռնեց՝ ըսաւ անոնց. «Ինչո՞ւ կը մտածէք ձեր մէջ, թերահաւատներ, թէ հաց չառիք: 9 Տակաւին չէք հասկնար եւ չէք յիշեր հինգ նկանակները՝ որ բաժնեցիք հինգ հազարին, ու քանի՞ կողով վերցուցիք. 10 ո՛չ ալ եօթը նկանակները՝ որ բաժնեցիք չորս հազարին, եւ քանի՞ զամբիւղ վերցուցիք: 11 Ինչպէս չէք հասկնար թէ հացի համար չըսի ձեզի. “Չգուշացէք Փարիսեցիներու եւ Սադուկեցիներու խմորէն”»: 12 Այդ ատեն հասկցան թէ չըսաւ որ զգուշանան հացի խմորէն, հապա՜ Փարիսեցիներու եւ Սադուկեցիներու ուսուցումէն: 13 Երբ Յիսուս կ'երթար Փիլիպպոսի Կեսարիային երկրամասը՝ հարցուց իր աշակերտներուն. «Մարդիկ ի՞նչ կ'ըսեն, ո՞վ եմ ես՝ մարդու Որդին»: 14 Անոնք

ըսին. «Ոմանք կ'ըսեն թէ Յովհաննէս Մկրտիչն
 ես, ուրիշներ՝ Եղիան, ուրիշներ ալ՝ Երեմիան
 կամ մարգարէներէն մէկը»: 15 Ըսաւ անոնց.
 «Իսկ դո՛ւք ինչ կ'ըսէք, ո՞վ եմ»: 16 Սիմոն Պետրոս
 պատասխանեց. «Դուն Բրիստոնսն ես, ապրող
 Աստուծոյ Որդին»: 17 Յիսուս ըսաւ անոր. «Երանի՛
 քեզի, Սիմոն, Յովաննի որդի. որովհետեւ ոչ թէ
 մարմինն ու արիւնը յայտնեցին քեզի ասիկա,
 հապա իմ Հայրս՝ որ երկինքն է: 18 Ես ալ կը
 յայտարարեմ քեզի. “Դուն Պետրոս ես, եւ այս
 վէմին վրայ պիտի կառուցանեմ իմ եկեղեցիս,
 ու դժոխքին դռները պիտի չաղթեն անոր: (Hadēs
 g86) 19 Երկինքի թագաւորութեան բանալիները
 պիտի տամ քեզի, եւ ինչ որ երկրի վրայ կապես՝
 երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ, ու ինչ որ
 երկրի վրայ արձակես՝ երկինքի մէջ արձակուած
 պիտի ըլլայ”»: 20 Այն ատեն աշակերտներուն
 պատուիրեց՝ որ ոչ մէկուն ըսեն թէ ինք Բրիստոնս
 է: 21 Այդ ատենէն ետք Յիսուս ցոյց տուաւ
 իր աշակերտներուն թէ պէտք էր որ երթար
 Երուսաղէմ, շատ չարչարանքներ կրէր երեցներէն,
 քահանայապետներէն եւ դպիրներէն, սպաննուէր
 ու յարութիւն առնէր երրորդ օրը: 22 Պետրոս
 մէկդի առաւ զինք, եւ սկսաւ յանդիմանել զինք՝
 ըսելով. «Ամենեւին, Տէր. այդ բանը չպատահի՛
 քեզի»: 23 Ինք ալ դառնալով՝ Պետրոսի ըսաւ.
 «Ետե՛նս գնա, Սատանայ, դուն գայթակղութիւն
 ես ինծի. որովհետեւ ոչ թէ Աստուծոյ բաները կը
 մտածես, հապա՝ մարդոց բաները»: 24 Այն ատեն

Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. «Եթէ մէկը ուզէ գալ իմ ետեւէս, թող ուրանայ ինքզինք, վերցնէ իր խաչը, ու հետեւի ինծի: **25** Որովհետեւ ինչ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, իսկ ինչ որ կորսնցնէ իր անձը՝ ինծի համար, պիտի գտնէ զայն: **26** Քանի որ մարդ ինչ օգուտ կ'ունենայ, եթէ շահի ամբողջ աշխարհը բայց կորսնցնէ իր անձը. կամ մարդ ինչ փրկանք պիտի տայ իր անձին փոխարէն: **27** Որովհետեւ մարդու Որդին պիտի գայ իր **Յօր փառքով**՝ իր հրեշտակներուն հետ, եւ այն ատեն պիտի հատուցանէ իւրաքանչիւրին՝ իր գործերուն համեմատ: **28** Եւ մարտապէս կը յայտարարեմ ձեզի. «Յոս ներկայ եղողներէն կան ոմանք՝ որ մահ պիտի չհամտեսեն, մինչեւ որ տեսնեն մարդու Որդին՝ եկած իր թագաւորութեամբ»»:

17 Վեց օր ետք՝ Յիսուս առաւ իրեն հետ Պետրոսը, Յակոբոսն ու անոր եղբայրը՝ Յովհաննէսը, հանեց զանոնք բարձր լեռ մը՝ առանձին, **2** եւ այլակերպեցաւ անոնց առջեւ. իր երեսը փայլեցաւ արեւի պէս, ու իր հանդերձները ճերմակ եղան՝ լոյսի պէս: **3** Եւ ահա՛ Մովսէսն ու Եղիա երեւցան անոնց, եւ կը խօսակցէին իրեն հետ: **4** Պետրոս ըսաւ Յիսուսի. «Տէր, լաւ է որ կենանք հոս. եթէ կ'ուզես, շինենք հոս երեք վրան, մէկը՝ քեզի, մէկը՝ Մովսէսի, ու մէկը՝ Եղիայի»: **5** Մինչ ան կը խօսէր, լուսաւոր ամպ մը հովանի եղաւ անոնց վրայ, եւ ձայն մը եկաւ ամպէն՝ ըսելով. «Այս է իմ սիրելի Որդիս՝ որուն հաճեցայ. անոր մօտիկ ըրէք»: **6** Երբ աշակերտները

լսեցին, իրենց երեսին վրայ ինկան ու սաստիկ վախցան: **7** Յիսուս մօտենալով՝ դպաւ անոնց եւ ըսաւ. «Ուտքի ելէք, մի վախնաք»: **8** Իրենց աչքերը բարձրացուցին ու ոչ մէկը տեսան՝ բայց միայն Յիսուսը: **9** Երբ լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս հրահանգեց անոնց. «Այդ տեսիլքը ոչ մէկուն պատմեցէք, մինչեւ որ մարդու Որդին մեռելներէն յարութիւն առնէ»: **10** Աշակերտները հարցուցին իրեն. «Հապա ինչո՞ւ դպիրները կ'ըսեն թէ “պէտք է որ նախ Եղիա գայ”»: **11** Յիսուս պատասխանեց անոնց. «Իրաւ է թէ նախ Եղիա պիտի գայ եւ վերահաստատէ ամեն բան: **12** Բայց ձեզի կ'ըսեմ թէ Եղիա արդէն եկած է, ու չճանչցան զայն, հապա ինչ որ ուզեցին՝ ըրին անոր. նոյնպէս ալ մարդու Որդին պիտի չարչարուի անոնցմէ»: **13** Այն ատեն աշակերտները հասկցան թէ Յովհաննէս Մկրտիչին մասին ըսաւ իրենց: **14** Երբ եկան բազմութեան քով, մարդ մը մօտեցաւ անոր, եւ ծնրադրելով՝ ըսաւ. **15** «Տէր, ողորմէ՛ որդիիս, որ կը լուսնոտի ու չարաչար կը տանջուի. քանի որ յաճախ կրակի մէջ կ'իյնայ, եւ յաճախ՝ ջուրի մէջ: **16** Չինք բերի քու աշակերտներուդ, ու չկրցան զինք բժշկել»: **17** Յիսուս պատասխանեց. «Ո՛վ անհաւատ եւ խոտորեալ սերունդ, մինչեւ երբ պիտի ըլլամ ձեզի հետ, մինչեւ երբ պիտի հանդուրժեմ ձեզի: Հո՛ս՝ ինձի բերէք զայն»: **18** Յիսուս սաստեց զայն, դելը ելաւ անկէ, ու պատանին բժշկուեցաւ նոյն ժամուն: **19** Այն ատեն աշակերտները գացին

Յիսուսի քով՝ առանձին, եւ ըսին. «Մենք ինչո՞ւ
չկրցանք հանել զայն»: 20 Յիսուս ըսաւ. «Ձեր
թերահաւատութեան պատճառով. քանի որ
ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Եթէ
մանանեխի հատիկի չափ հաւատք ունենաք,
պիտի ըսէք այս լերան. “Փոխադրուէ՛ ասկէ հոն”,
ու պիտի փոխադրուի, եւ ոչինչ անկարելի պիտի
ըլլայ ձեզի”»: 21 Սակայն այս տեսակը ուրիշ
բանով դուրս չ’ելլեր, բայց միայն աղօթքով ու
ծոմապահութեամբ»: 22 Մինչ անոնք Գալիլեայի
մէջ կը մնային, Յիսուս ըսաւ անոնց. «Մարդու
Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը, 23 ու պիտի
սպաննեն զինք. բայց յարութիւն պիտի առնէ
երրորդ օրը»: Անոնք ալ չափազանց տրտմեցան:
24 Երբ անոնք եկան Կափառնայում, երկդրամեան
տուրքը գանձողները եկան Պետրոսի եւ ըսին.
«Ձեր վարդապետը չի՞ վճարեր երկդրամեանը»:
Ան ալ ըսաւ. «Այո՛, կը վճարէ»: 25 Երբ տուն
մտաւ, Յիսուս կանխեց զինք՝ ըսելով. «Ինչ է քու
կարծիքդ, Սիմոն. երկրի թագաւորները որմե՞ կը
ստանան հարկը կամ տուրքը, իրենց որդիներէն՝
թէ օտարներէն»: 26 Պետրոս ըսաւ. «Օտարներէն»:
Յիսուս ըսաւ անոր. «Ուրեմն որդիները ազատ
են: 27 Բայց որպէսզի չզայթակղեցնենք զանոնք,
զնա՛ ծովը ու կարթ նետէ, եւ ան առաջին ձուկը
որ կ’ելլէ: Երբ անոր բերանը բանաս՝ սատեր մը
պիտի գտնես. ան զայն ու տո՛ւր անոնց՝ ինծի եւ
քեզի համար»:

18 Նոյն ժամուն աշակերտները եկան Յիսուսի քով ու ըսին. «Ո՛վ է մեծագոյնը երկինքի թագաւորութեան մէջ»: 2 Յիսուս ալ կանչեց իրեն մանուկ մը, կայնեցուց զայն անոնց մէջտեղ, 3 եւ ըսաւ. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Եթէ դարձի չգաք ու մանուկներու պէս չըլլաք, բնաւ պիտի չմտնէք երկինքի թագաւորութիւնը”»: 4 Ուրեմն ո՛վ որ կը խոնարհեցնէ ինքզինք՝ այս փոքր մանուկին պէս, անիկա՛ն է մեծագոյնը երկինքի թագաւորութեան մէջ. 5 եւ ո՛վ որ կ’ընդունի այսպիսի մանուկ մը՝ իմ անունովս, զիս կ’ընդունի»: 6 «Ո՛վ որ գայթակդեցնէ մէկը այս պզտիկներէն՝ որոնք ինծի կը հաւատան, աւելի օգտակար պիտի ըլլար անոր՝ որ իշու ջաղացքի քար մը կախուէր իր վիզէն, ու ծովուն անդունդը ընկղմէր: 7 Վայ աշխարհի՛՜ գայթակդութիւններու պատճառով. որովհետեւ հարկ է որ գայթակդութիւնները գան, բայց վայ այն մարդուն՝ որուն միջոցով գայթակդութիւնը կու գայ: 8 Ուրեմն եթէ ձեռքդ կամ ոտքդ կը գայթակդեցնէ քեզ, կտրե՛ գայն ու նետե՛ քեզմէ. աւելի լաւ է քեզի՝ կանգ կամ պակասաւոր մտնել կեանքը, քան երկու ձեռք կամ երկու ոտք ունենալ եւ նետուիլ յաւիտենական կրակին մէջ: (aiōnios g166) 9 Եթէ աչքդ կը գայթակդեցնէ քեզ, հանե՛ գայն ու նետե՛ քեզմէ. աւելի լաւ է քեզի՝ մէկ աչքով մտնել կեանքը, քան երկու աչք ունենալ եւ նետուիլ գեհենի կրակին մէջ»: (Geenna g1067) 10 «Ուշադիր եղէք որ չարհամարիէք այս պզտիկներէն մէկը. քանի որ

կ'ըսեն ձեզի թէ երկինքի մէջ անոնց հրեշտակները ամէն ատեն կը տեսնեն երեսը իմ Յօրս՝ որ երկինքն է: **11** Որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու: **12** Ինչ է ձեր կարծիքը. եթէ մարդ մը ունենայ հարիւր ոչխար եւ անոնցմէ մէկը մոլորի, իննսունինը ոչխարները լեռները չի թողուր ու՝ երթար՝ փնտռելու մոլորածը: **13** Եթէ պատահի որ գտնէ զայն, ճշմարտապէս կը յայտարարեն ձեզի թէ աւելի կ'ուրախանայ անոր համար, քան իննսունինին՝ որոնք մոլորած չէին: **14** Այսպէս՝ ձեր երկնաւոր Յայրը չի հաճիր որ այս պատիկներէն մէկը կորսուի»: **15** «Եթէ եղբայրդ մեղանչէ քեզի դէմ, գնա՛ եւ ըսէ՛ իրեն իր յանցանքը՝ երբ դուն ու ան մինակ էք. եթէ մտիկ ընէ քեզի՝ շահեցար եղբայրդ: **16** Բայց եթէ մտիկ չընէ քեզի, ա՛ռ քեզի հետ մէկ կամ երկու հոգի եւս, որպէսզի ամէն խօսք հաստատուի երկու կամ երեք վկաներու բերանով: **17** Եթէ անոնց ալ մտիկ չընէ, ըսէ՛ եկեղեցիին. իսկ եթէ եկեղեցիին ալ մտիկ չընէ, թող ըլլայ քեզի հեթանոսի ու մաքսաւորի պէս: **18** Գշմարտապէս կը յայտարարեն ձեզի. “Ինչ որ կապէք երկրի վրայ՝ կապուած պիտի ըլլայ երկինքի մէջ, եւ ինչ որ արձակէք երկրի վրայ՝ արձակուած պիտի ըլլայ երկինքի մէջ”: **19** Դարձեալ կը յայտարարեն ձեզի. “Եթէ ձեզմէ երկու հոգի համաձայնին երկրի վրայ՝ որեւէ բան խնդրելու, պիտի ըլլայ անոնց իմ Յօրմէս՝ որ երկինքն է”: **20** Որովհետեւ ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուած ըլլան իմ անունովս, ես հոն եմ՝ անոնց մէջ»: **21** Այն ատեն

Պետրոս մօտեցաւ անոր եւ ըսաւ. «Տէր, եթէ եղբայրս մեղանչէ ինծի դէմ՝ քանի անգամ ներեմ անոր. մինչեւ եօթը անգամ»: 22 Յիսուս ըսաւ անոր. «Քեզի չեմ ըսեր՝ “մինչեւ եօթն անգամ”, հապա՝ “մինչեւ եօթանասուն անգամ եօթը”»: 23 Ուստի երկինքի թագաւորութիւնը կը նմանի թագաւորի մը, որ ուզեց հաշիւ առնել իր ծառաներէն: 24 Երբ սկսաւ հաշիւ առնել, տասը հազար տաղանդի պարտապան մը բերուեցաւ իրեն: 25 Բայց ան վճարելու կարողութիւն չունենալով՝ անոր տէրը հրամայեց, որ ան ծախուի, նաեւ անոր կինն ու զաւակները եւ անոր ամբողջ ունեցածը, ու պարտքը վճարուի: 26 Իսկ ծառան իյնալով՝ երկրպագեց անոր եւ ըսաւ. “Տէր, համբերատար եղիր ինծի հանդէպ, ու ամէնը պիտի վճարեմ քեզի”:

27 Ծառային տէրը՝ գրալով՝ արձակեց զայն, եւ ներեց անոր պարտքը: 28 Նոյն ծառան գնաց, գտաւ իր ծառայակիցներէն մէկը՝ որ հարիւր դահեկան կը պարտէր իրեն, ու բռնելով զայն՝ կը խեղդէր եւ կ’ըսէր. “Վճարէ ինծի ունեցած պարտքդ”:

29 Ուստի իր ծառայակիցը ինկաւ անոր ոտքը, կ’աղաչէր անոր ու կ’ըսէր. “Համբերատար եղիր ինծի, եւ պիտի վճարեմ քեզի”:

30 Բայց ինք չէր ուզեր. հապա գնաց ու բանտը նետել տուաւ զայն՝ մինչեւ որ վճարէր պարտքը: 31 Երբ իր ծառայակիցները տեսան ինչ որ պատահեցաւ՝ շատ տրտմեցան, ու եկան եւ պատմեցին իրենց տիրոջ ամբողջ պատահածը: 32 Այն ատեն անոր տէրը կանչեց զայն ու ըսաւ. “Չար ծառայ, այդ ամբողջ պարտքը

ներեցի քեզի՝ քանի որ աղաչեցիր ինձի. 33 ուրեմն պետք չէր որ դռն ալ ողորմէիր ծառայակիցիդ, ինչպէս ես ողորմեցայ քեզի”: 34 Եւ անոր տէրը բարկանալով՝ յանձնեց զայն տանջողներուն, մինչեւ որ վճարէր ամբողջ պարտքը: 35 Իմ երկնաւոր Յայրս ալ նոյնպէս պիտի ընէ ձեզի, եթէ ձեզմէ իւրաքանչիւրը իր եղբօր սրտանց չներէ իր յանցանքները»:

19 Երբ Յիսուս աւարտեց այս խօսքերը, մեկնեցաւ Գալիլեայէն եւ գնաց Հրեաստանի հողամասը՝ Յորդանանի միւս կողմը: 2 Մեծ բազմութիւններ հետեւեցան անոր, ու հոն բուժեց զանոնք: 3 Փարիսեցիները մօտեցան անոր եւ փորձեցին զայն՝ ըսելով. «Արտօնուած է, որ մարդ մը արձակէ իր կինը՝ որեւէ պատճառի համար»: 4 Ան ալ պատասխանեց անոնց. «Չէք կարդացեր թէ ան՝ որ սկիզբէն ստեղծեց, արու եւ Էգ ստեղծեց զանոնք, ու ըսաւ. 5 “Այս պատճառով մարդը պիտի թողու հայրն ու մայրը, եւ պիտի յարի իր կնոջ, ու երկուքը պիտի ըլլան մէկ մարմին”: 6 Հետեւաբար ալ երկու չեն, հապա՝ մէկ մարմին. ուրեմն մարդը թող չզատէ ինչ որ Աստուած իրարու միացուցած է»: 7 Ըսին իրեն. «Հապա ինչո՞ւ Մովսէս պատուիրեց ամուսնալուծումի վկայագիր տալ եւ արձակել»: 8 Ըսաւ անոնց. «Մովսէս ձեր սիրտին կարծրութեան համար արտօնեց ձեզի՝ որ արձակէք ձեր կիները. բայց սկիզբէն այնպէս չէր: 9 Սակայն կը յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ կ’արձակէ իր կինը՝ առանց պոռնկութեան պատճառի, ու

կ'ամուսնանայ ուրիշի մը հետ՝ շնութիւն կ'ընէ։
 Եւ ի՞նչ որ արձակուածին հետ կ'ամուսնանայ՝
 շնութիւն կ'ընէ»։ **10** Իր աշակերտները ըսին իրեն.
 «Եթէ այդ է պարագան մարդուն եւ իր կնոջ միջեւ,
 օգտակար չէ ամուսնանալ»։ **11** Բայց ինք ըսաւ
 անոնց. «Բոլորը չեն ընդունիր ասիկա, հապա
 անոնք՝ որոնց տրուած է։ **12** Որովհետեւ կան
 ներքինիներ, որոնք այդպէս ծնան՝ իրենց մօր
 որովայնէն. կան ներքինիներ, որոնք մարդոցմէ
 ներքինի եղան. ու կան ներքինիներ, որոնք իրենք
 զիրենք ներքինի ըրին՝ երկինքի թագաւորութեան
 համար։ Ո՛վ որ կրնայ ընդունիլ՝ թող ընդունի»։
13 Այն ատեն մանուկներ բերուեցան իրեն,
 որպէսզի ձեռք դնէ անոնց վրայ եւ աղօթէ. իսկ
 աշակերտները կը յանդիմանէին զանոնք։ **14**
 Յիսուս ըսաւ. «Թո՛ղ տուէք մանուկներուն, ու
 մի՛ արգիլէք զանոնք՝ որ գան ինծի, որովհետեւ
 երկինքի թագաւորութիւնը այդպիսիներունն է»։
15 Եւ ձեռք դնելէ ետք անոնց վրայ՝ մեկնեցաւ
 անկէ։ **16** Մէկը մօտենալով՝ ըսաւ անոր. «Բարի
 վարդապետ, ինչ բարիք գործեմ՝ որ ունենամ
 յաւիտենական կեանքը»։ (aiōnios g166) **17** Ան ալ
 ըսաւ անոր. «Ինչո՞ւ բարի կը կոչես զիս. մէկէն
 զատ բարի չկայ, որ Աստուած է։ Եթէ կ'ուզես
 մտնել կեանքը՝ պահէ՛ պատուիրանները»։ **18**
 Ըսաւ անոր. «Որո՞նք»։ Յիսուս պատասխանեց.
 «Սպանութիւն մի՛ ըներ, շնութիւն մի՛ ըներ,
 գողութիւն մի՛ ըներ, սուտ վկայութիւն մի՛ տար,
19 պատուէ՛ հայրդ ու մայրդ, եւ սիրէ՛ ընկերդ

քու անձիդ՝ պէս»: 20 Երիտասարդը ըսաւ անոր.
 «Պահած եմ այդ բոլորը՝ պատանութենէս ի վեր.
 տակաւին ինչ կը պակսի ինծի»: 21 Յիսուս ըսաւ
 անոր. «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ՝ գնա՛,
 ծախէ ինչքդ եւ տո՛ւր աղքատներուն, ու զանձ
 պիտի ունենաս երկինքը. ապա հետեւէ՛ ինծի»:
 22 Երբ երիտասարդը լսեց այս խօսքը՝ տրտմած
 գնաց, որովհետեւ շատ ստացուածք ունէր: 23
 Յիսուս ըսաւ աշակերտներուն. «Շմարտապէս կը
 յայտարարեմ ձեզի. “Յարուստը դժուարութեամբ
 պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը”»: 24
 Դարձեալ կը յայտարարեմ ձեզի. “Աւելի դիւրին
 է որ ո՛րդտը անցնի ասեղին ծակէն, քան թէ
 հարուստը մտնէ Աստուծոյ թագաւորութիւնը”»: 25
 Երբ աշակերտները լսեցին, չափազանց ապշեցան
 եւ ըսին. «Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ»: 26 Յիսուս
 նայելով անոնց՝ ըսաւ. «Ատիկա անկարելի է
 մարդոց քով, բայց ամէն բան կարելի է Աստուծոյ
 քով»: 27 Այն ատեն Պետրոս ըսաւ անոր. «Ահա՛
 մենք թողուցինք ամէն ինչ ու հետեւեցանք քեզի.
 ուրեմն ինչ պիտի ըլլայ մեզի»:
 28 Յիսուս ըսաւ անոնց. «Շմարտապէս կը յայտարարեմ ձեզի.
 “Դուք՝ որ հետեւեցաք ինծի, միւս գալուստին”,
 երբ մարդու Որդին բազմի իր փառքի գահին
 վրայ, դուք ալ պիտի բազմիք տասներկու
 գահերու վրայ՝ դատելու Իսրայէլի տասներկու
 տոհմերը”»: 29 Ո՛վ որ թողուցած ըլլայ տուներ,
 եղբայրներ, քոյրեր, հայր, մայր, կին, զաւակներ,
 կամ արտեր՝ իմ անունիս համար, պիտի ստանայ

հարիւրապատիկը եւ ժառանգէ յաւիտենական
կեանքը: (aiōnios g166) 30 Բայց շատ առաջիններ
պիտի ըլլան յետին, ու յետիններ՝ առաջին»:

20 «Արդարեւ երկինքի թագաւորութիւնը նման
է հողատիրոջ մը, որ առտուն կանուխ դուրս
ելաւ՝ գործաւորներ վարձելու իր այգիին համար:
2 Երբ համաձայնեցաւ գործաւորներուն հետ՝
օրը մէկ դահեկանի, որկեց զանոնք իր այգին:
3 Երրորդ ժամուան՝՝ ատենները դուրս ելլելով՝
տեսաւ ուրիշներ, որոնք անգործ կայնած էին
հրապարակը, 4 ու ըսաւ անոնց. «Դ՛նք ալ
զացէք իմ այգիս, եւ կու տամ ձեզի ինչ որ
իրաւացի է»: 5 Անոնք ալ զացին: Դարձեալ դուրս
ելաւ վեցերորդ ժամուան եւ իններորդ ժամուան
ատենները, ու նոյնը ըրաւ: 6 Տասնմէկերորդ
ժամուան ատենները դուրս ելաւ, ուրիշներ գտաւ՝
որոնք անգործ կայնած էին, եւ անոնց ըսաւ.
«Ինչո՞ւ հոս ամբողջ օրը անգործ կայնած էք»:
7 Ըսին իրեն. «Որովհետեւ ո՛չ մէկը վարձեց
մեզ»: Ըսաւ անոնց. «Դ՛նք ալ զացէք այգին,
ու պիտի ստանաք ինչ որ իրաւացի է»: 8 Երբ
իրիկուն եղաւ, այգիին տէրը ըսաւ իր տնտեսին.
«Կանչէ՛ գործաւորները եւ տո՛ւր անոնց վարձքը՝
վերջիններէն սկսելով մինչեւ առաջինները»:
9 Երբ եկան անոնք՝ որ տասնմէկերորդ ժամուան
ատենները զացեր էին, ստացան մեկական
դահեկան: 10 Առաջինները գալով՝ կը կարծէին թէ
աւելի պիտի ստանան. բայց իրենք ալ ստացան
մեկական դահեկան: 11 Երբ ստացան՝ տրտնջեցին

հողատիրոջ դեմ եւ ըսին. **12** «Այդ վերջինները մէկ ժամ աշխատեցան, բայց զանոնք հաւասար ըրիւր մեզի՝ որ կրեցինք օրուան ծանրութիւնն ու տաքութիւնը»: **13** Ան ալ պատասխանեց անոնցմէ մէկուն. «Ընկեր, ես չեմ անիրաւեր քեզ. միթէ դուն ինծի հետ չհամաձայնեցամ մէկ դահեկանի. **14** ան քուկդ եւ գնա՛: Կ'ուզեմ որ տամ այս վերջինին՝ քեզի տուածիս չափ. **15** միթէ արտօնուած չ'է ինծի՝ ընել ինչ որ ուզեմ իմ ունեցածիս: Միթէ քու աչքդ չամր է՝ որ ես բարի եմ»: **16** Այսպէս՝ յետինները պիտի ըլլան առաջին, եւ առաջինները՝ յետին. որովհետեւ կանչուածները շատ են, բայց ընտրուածները՝ քիչ»: **17** Երբ Յիսուս կը բարձրանար Երուսաղէմ, ճամբան իրեն հետ առաւ տասներկու աշակերտները՝ առանձին, եւ ըսաւ անոնց. **18** «Ահա՛ կը բարձրանանք Երուսաղէմ, ու մարդու Որդին պիտի մատնուի քահանայապետներուն եւ դպիրներուն, ու մահուան պիտի դատապարտեն զինք. **19** հեթանոսներուն պիտի մատնեն զինք՝ որ ծաղրուի, խարազանուի եւ խաչուի. բայց յարութիւն պիտի առնէ երրորդ օրը»: **20** Այն ատեն Չեբեղէոսի որդիներուն մայրը եկաւ անոր իր որդիներուն հետ, կ'երկրպագէր անոր ու բան մը կը խնդրէր անկէ: **21** Ան ալ ըսաւ անոր. «Ի՞նչ կ'ուզես»: Ըսաւ անոր. «Ըսէ՛, որ քու թագաւորութեանդ մէջ՝ այս երկու որդիներս բազմին, մէկը՝ աջ կողմդ, եւ միւսը՝ ձախ կողմդ»: **22** Յիսուս պատասխանեց. «Չէք գիտեր թէ ինչ կը խնդրէք: Կրնամ խմել

այն բաժակը՝ որ ես պիտի խմեմ, կամ մկրտուիլ
այն մկրտութեամբ՝ որով ես պիտի մկրտուիմ»:
Ըսին իրեն. «Կրնանք»: **23** Յիսուս ըսաւ անոնց.
«Արդարեւ պիտի խմէք իմ բաժակս, ու պիտի
մկրտուիք այն մկրտութեամբ՝ որով ես մկրտուելու
եմ. բայց իմ աջ կամ ձախ կողմս բազմիլը՝ իմս չէ
տալը, հապա պիտի տրուի անոնց՝ որոնց համար
պատրաստուած է իմ Հօրմէս»: **24** Երբ միւս տասը
աշակերտները լսեցին՝ ընդվզեցան այդ երկու
եղբայրներուն դէմ: **25** Իսկ Յիսուս իրեն կանչեց
զանոնք եւ ըսաւ. «Գիտէք թէ հեթանոսներուն
իշխանները կը տիրապետեն անոնց վրայ, ու
մեծամեծները կ'իշխեն անոնց վրայ: **26** Բայց
այդպէս թող չըլլայ ձեր մէջ. հապա ձեզմէ ո՛վ որ
ուզէ մեծ ըլլալ՝ անիկա ձեր սպասարկորն թող
ըլլայ, **27** ու ձեզմէ ո՛վ որ ուզէ գլխաւոր ըլլալ՝
անիկա ձեր ստորակը թող ըլլայ. **28** ինչպէս մարդու
Որդին եկաւ ո՛չ թէ սպասարկութիւն ընդունելու,
հապա՝ սպասարկելու եւ իր անձը փրկանք
տալու շատերու համար»: **29** Երբ անոնք դուրս
ելան Երիթովէն, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ
անոր: **30** Եւ ահա՛ երկու կոյրեր նստած էին
ճամբային եզերքը. երբ լսեցին թէ Յիսուս կ'անցնի,
աղաղակեցին. «Ողորմէ՛ մեզի, Տէր, Դաւիթի Որդի»:
31 Բազմութիւնը կը յանդիմանէր զանոնք՝ որ լռեն,
բայց անոնք ալ աւելի կ'աղաղակէին. «Ողորմէ՛
մեզի, Տէր, Դաւիթի Որդի»:
32 Յիսուս կանգ
առնելով՝ կանչեց զանոնք եւ ըսաւ. «Ի՞նչ կ'ուզէք
որ ընեմ ձեզի»:
33 Ըսին անոր. «Տէր, թող մեր

աչքերը բացուին»։ **34** Յիսուս գթալով՝ դպաւ անոնց աչքերուն. իսկոյն անոնց աչքերը բացուեցան, ու հետեւեցան անոր։

21 Երբ մօտեցան Երուսաղէմի ու հասան Բեթփագէ, Ձիթենիներու լեռան մօտ, Յիսուս դրկեց երկու աշակերտ՝ 2 ըսելով անոնց. «Գացէ՛ք այդ ձեր դիմացի գիւղը, ու իսկոյն պիտի գտնէք կապուած էշ մը, եւ անոր հետ՝ աւանակ մը. արծակեցէ՛ք զանոնք ու բերէ՛ք ինծի։ **3** Եթէ մէկը բան մը ըսէ ձեզի, ըսէ՛ք. “Տէրոջ պետք են”, եւ իսկոյն պիտի դրկէ զանոնք»։ **4** Այս ամենը կատարուեցաւ, որպէսզի իրագործուի մարգարէին միջոցով ըսուած խօսքը. **5** «Ըսէ՛ք Սիոնի աղջիկին. “Ահա՛ Թագաւորդ կու գայ քեզի, հեզ եւ հեծած իշու վրայ, իշու ձագի՝ աւանակի վրայ”»։ **6** Աշակերտները գացին, եւ ըրին ինչպէս Յիսուս պատուիրած էր իրենց. **7** բերին էշն ու աւանակը, դրին անոնց վրայ իրենց հանդերձները, եւ նստաւ անոնց վրայ։ **8** Ահագին բազմութիւն մը փռեց իր հանդերձները ճամբային վրայ. ուրիշներ ճիւղեր կը կտրէին ծառերէն ու կը տարածէին ճամբային վրայ։ **9** Եւ առջեւէն գացող ու իրեն հետեւող բազմութիւնները կ’աղաղակէին. «Ովսաննա՛ Դաւիթի Որդիին։ Օրհնեա՛լ է ան՝ որ կու գայ Տէրոջ անունով։ Ովսաննա՛ ամենաբարձր վայրերուն մէջ»։ **10** Երբ ան մտաւ Երուսաղէմ, ամբողջ քաղաքը շարժեցաւ եւ ըսաւ. «Ո՛վ է ասիկա»։ **11** Բազմութիւնը ըսաւ. «Ա՛յս է Յիսուս մարգարէն՝ Գալիլեայի Նազարէթէն»։ **12** Յիսուս

մտաւ Աստուծոյ տաճարը, դուրս հանեց բոլոր անոնք՝ որ տաճարին մէջ կը ծախէին ու կը գնէին, եւ տապալեց լուսնայափոխներուն սեղաններն ու աղաւնի ծախողներուն աթոռները, 13 եւ ըսաւ անոնց. «Գրուած է. “Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի”, բայց դուք աւագակներու քարայր ըրիք զայն»։ 14 Կոյրեր ու կաղեր եկան իրեն՝ տաճարին մէջ, եւ բուժեց զանոնք։ 15 Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան անոր գործած սքանչելիքները, եւ մանուկները՝ որոնք տաճարին մէջ կ'աղաղակէին. «Ովսաննա՛ Դաւիթի Որդիին», ընդվզեցան 16 եւ ըսին անոր. «Կը լսեն ինչ կ'ըսեն ատոնք»։ Յիսուս ըսաւ անոնց. «Այո, բնաւ չէք կարդացած գրուածը. “Երախաներուն ու ծծկերներուն բերանով գովաբանութիւն կատարեցիր”»։ 17 Ապա ձգեց զանոնք, գնաց քաղաքէն դուրս՝ Բեթանիա, ու կեցաւ հոն գիշերը։ 18 Առտուն, մինչ կը վերադառնար քաղաքը, անօթեցաւ։ 19 Ու ճամբան տեսնելով թզենի մը՝ բռնելով զնա՝ Ոչինչ գտաւ անոր վրայ՝ տերեւներէն զատ, եւ ըսաւ անոր. «Ասկէ ետք ոչ մէկ պտուղ ըլլայ վրադ՝ յաւիտեան»։ Թզենին անմիջապէս չորցաւ։ (aiōn g165) 20 Երբ աշակերտները տեսան, զարմացան ու ըսին. «Ինչպէս թզենին անմիջապէս չորցաւ»։ 21 Յիսուս պատասխանեց անոնց. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Եթէ հաւատք ունենաք ու չտատամսիք, ոչ միայն պիտի ընէք այդ թզենիին եղածը, այլ նաեւ եթէ ըսէք այս լերան. “Ելիր ու ծովը նետուէ”, պիտի

ըլլայ”: 22 Ամեն ինչ որ կը խնդրէք աղօթքի մէջ՝
հաւատքով, պիտի ստանաք»: 23 Երբ ան եկաւ
տաճարը, քահանայապետներն ու ժողովուրդին
երէցները մօտեցան անոր՝ մինչ կը սորվեցներ, եւ
ըսին. «Ինչ իշխանութեամբ կ’ընես այդ բաները.
ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը»: 24 Յիսուս
պատասխանեց անոնց. «Ես ալ ձեզի հարցնեմ
բան մը. եթէ ըսէք ինծի, ես ալ պիտի ըսեմ ձեզի
թէ ինչ իշխանութեամբ կ’ընեմ այդ բաները: 25
“Յովհաննէսի մկրտութիւնը ուրկէ էր, երկինքէն՝
թէ մարդոցմէ”»: Անոնք կը մտածէին իրենց
մէջ՝ ըսելով. «Եթէ պատասխանենք. “Երկինքէն”,
պիտի ըսէ մեզի. “Հապա ինչո՞ւ չհաւատացիք
անոր”»: 26 Իսկ եթէ պատասխանենք. “Մարդոցմէ”,
բազմութենէն կը վախճանք, որովհետեւ բոլորն ալ
մարգարէ կը համարեն Յովհաննէսը»: 27 Ուստի
պատասխանեցին Յիսուսի. «Չենք գիտեր»: Ինք
ալ ըսաւ անոնց. «Ես ալ չեմ ըսեր ձեզի թէ ինչ
իշխանութեամբ կ’ընեմ այդ բաները»: 28 «Ինչ է ձեր
կարծիքը. մարդ մը ունէր երկու զաւակ: Առաջինին
ըսաւ. “Որդեակ, գնա՛, գործէ՛ այսօր այգիիս մէջ”»: 29
Ան ալ պատասխանեց. “Չեմ ուզեր երթալ”: Բայց
յետոյ զոջաց ու գնաց: 30 Միւսին ալ գնաց եւ նոյնը
ըսաւ: Ան ալ պատասխանեց. “Կ’երթամ, տէր”,
սակայն չգնաց: 31 Այս երկուքէն ո՞վ գործադրեց
իր հօր կամքը»: Ըսին անոր. «Առաջինը»: Յիսուս
ըսաւ անոնց. «Ճշմարտապէս կը յայտարարեմ
ձեզի թէ մաքսաւորներն ու պոռնիկները ձեզմէ
առաջ պիտի մտնեն Աստուծոյ թագաւորութիւնը:

32 Արդարեւ Յովհաննէս արդարութեան ճամբայով եկաւ ձեզի, եւ դուք չհաւատացիք անոր. բայց մաքսաւորներն ու պոռնիկները հաւատացին անոր, իսկ դուք տեսաք եւ յետոյ չզղջացիք՝ որ հաւատայիք անոր»: **33** «Լսեցէք ուրիշ առակ մըն ալ: Հողատէր մը կար՝ որ այգի մը տնկեց, ցանկով պատեց զայն, հնձան փորեց անոր մէջ, աշտարակ կառուցանեց, մշակներու յանձնեց զայն եւ ճամբորդեց: **34** Երբ պտուղի ատենը մօտեցաւ՝ իր ծառաները դրկեց մշակներուն, որպէսզի ստանան անոր պտուղները: **35** Մշակները բռնեցին անոր ծառաները, մէկը ծեծեցին, միւսը սպաննեցին, ուրիշ մը քարկոծեցին: **36** Դարձեալ ծառաներ դրկեց՝ առաջիններէն շատ, եւ անոնց ալ նոյնպէս ըրին: **37** Ամենէն ետք իր որդին դրկեց անոնց՝ ըսելով. «Թերեւս պատկառին որդիէս»: **38** Բայց մշակները՝ երբ տեսան որդին՝ ըսին իրարու. «Ա՛յս է ժառանգորդը. եկէք սպաննենք զայն եւ տիրանանք անոր ժառանգութեան»: **39** Ու բռնեցին զայն, այգիէն դուրս հանեցին եւ սպաննեցին: **40** Ուրեմն երբ այգիին տէրը գայ, ինչ պիտի ընէ այդ մշակներուն»: **41** Ըսին իրեն. «Չարաչար պիտի կորսնցնէ այդ չարերը, եւ այգին պիտի յանձնէ ուրիշ մշակներու, որոնք պտուղները իրենց ատենին պիտի տան իրեն»: **42** Յիսուս ըսաւ անոնց. «Բնաւ չէք կարդացեր Գիրքին մէջ. «Այն քարը՝ որ կառուցանողները մերժեցին, անիկա՛ եղաւ անկիւնաքարը: Ասիկա Տէրոջմէն եղաւ, եւ սքանչելի է մեր աչքերուն»: **43** Ուստի կը

յայտարարեմ ձեզի. “Աստուծոյ թագաւորութիւնը պիտի առնուի ձեզմէ, ու պիտի տրուի այնպիսի ազգի մը՝ որ անոր պտուղները բերէ”: 44 Ո՛վ որ իյնայ այս քարին վրայ՝ պիտի կոտորտի, եւ որո՛ւն վրայ որ իյնայ՝ պիտի փսորէ զայն»: 45 Երբ քահանայապետներն ու Փարիսեցիները լսեցին անոր առակները, ըմբռնեցին որ իրենց մասին կը խօսէր. 46 եւ կը ջանային բռնել զայն: Բայց բազմութենէն կը վախճային, քանի որ իբր մարգարէ կ’ընդունէին զայն:

22 Յիսուս դարձեալ առակներով խօսեցաւ անոնց եւ ըսաւ. 2 «Երկինքի թագաւորութիւնը կը նմանի թագաւորի մը՝ որ հարսանիք ըրաւ իր որդիին, ու դրկեց իր ծառաները՝ կանչելու հարսանիքին հրաւիրեալները. 3 սակայն անոնք չուզեցին գալ: 4 Դարձեալ ուրիշ ծառաներ դրկեց եւ ըսաւ. “Ըսէ՛ք հրաւիրեալներուն. «Ահա՛ պատրաստեցի իմ ճաշս. զուարակներս ու գէր անասուններս մորթուած են, եւ ամէն բան պատրաստ է. եկէ՛ք հարսանիքի»”: 5 Բայց անոնք անհոգութիւն ընելով՝ զացին մէկը իր արտը, ու միւսը՝ իր առետտուրին: 6 Ուրիշներ՝ բռնեցին անոր ծառաները, նախատեցին եւ սպաննեցին: 7 Թագաւորն ալ՝ երբ լսեց՝ բարկացաւ. դրկեց իր զօրքերը, կորսնցուց այդ մարդասպանները ու այրեց անոնց քաղաքը: 8 Այն ատեն ըսաւ իր ծառաներուն. “Յարսանիքը պատրաստ է, բայց հրաւիրեալները արժանի չէին: 9 Ուրեմն զացէ՛ք դէպի ճամբաներուն գլուխները, եւ ո՛վ

որ գտնէք՝ հրաւիրեցէք հարսանիքի”։ **10** Այդ ծառաները դուրս ելան՝ դէպի ճամբաներուն գլուխները, եւ ո՛վ որ գտան՝ թէ՛ չար, թէ՛ բարի, բոլորն ալ հաւաքեցին. ու հարսնետունը լեցուեցաւ հրաւիրեալներով։ **11** Երբ թագաւորը մտաւ՝ տեսնելու հարսնետոնները, տեսաւ մարդ մը՝ որ հագած չէր հարսանիքի հագուստ։ **12** Ըսաւ անոր. «Ընկեր, ինչպէս մտար հոս՝ առանց հարսանիքի հագուստի»։ Ան ալ պապանձեցաւ։ **13** Այն ատեն թագաւորը ըսաւ սպասարկուներուն. «Վապեցէք ասոր ոտքերն ու ձեռքերը, եւ առէք ու նետեցէք զայն դուրսի խաւարը. հոն պիտի ըլլայ լաց եւ ակռաներու կրճտում»։ **14** Որովհետեւ կանչուածները շատ են, բայց ընտրուածները՝ քիչ»։ **15** Այն ատեն Փարիսեցիները զացին խորհրդակցելու, թէ ինչպէս խօսքով ձգեն զայն ծուղակի մէջ։ **16** Ու դրկեցին անոր իրենց աշակերտները՝ Յերովդէսեաններուն հետ, եւ ըսին. «Վարդապէտ, զիտենք թէ ճշմարտախօս ես ու ճշմարտութեամբ կը սորվեցնես Աստուծոյ ճամբան, եւ հոգ չես ըներ ոեւէ մէկուն համար, քանի որ երեսպաշտութիւն չես ըներ մարդոց։ **17** Ուստի ըսէ մեզի, ինչ է քու կարծիքդ. «Արտօնուած է տուրք տալ կայսրին՝ թէ ոչ»»։ **18** Յիսուս՝ զիտնալով անոնց չարամտութիւնը՝ ըսաւ. «Ինչո՞ւ կը փորձէք զիս, կեղծաւորներ։ **19** Յոյց տուէք ինծի տուրքին դրամը»։ Անոնք դահեկան մը բերին իրեն։ **20** Ըսաւ անոնց. «Որո՞ւնն են այս պատկերն ու գրութիւնը»։ **21** Ըսին անոր. «Կայսրին»։ Այն ատեն

ըսաւ անոնց. «Ուրեմն ինչ որ կայսրինն է՝ տուէ՛ք կայսրին, եւ ինչ որ Աստուծոյ է՝ Աստուծոյ»։ 22 Երբ լսեցին՝ զարմացան, ու թողուցին զայն եւ գացին։ 23 Նոյն օրը անոր քով եկան Սադուկեցիները, որոնք կ'ըսեն թէ յարութիւն չկայ, ու հարցուցին անոր. 24 «Վարդապետ, Մովսէս ըսաւ. “Եթէ մէկը մեռնի առանց զաւակի, անոր եղբայրը թող ամուսնանայ անոր կնոջ հետ, եւ զարմ հանէ իր եղբօր”։ 25 Ուրեմն եօթը եղբայրներ կային մեր քով։ Առաջինը ամուսնացաւ ու վախճանեցաւ, եւ զարմ չունենալուն համար՝ իր կինը թողուց իր եղբօր։ 26 Նմանապէս ալ երկրորդն ու երրորդը՝ մինչեւ եօթներորդը։ 27 Ամենէն ետք կինն ալ մեռաւ։ 28 Ուրեմն, յարութեան ատեն՝ այդ եօթնէն որոնք կինը պիտի ըլլայ. որովհետեւ բոլորն ալ ունեցան զայն իբր կին»։ 29 Յիսուս պատասխանեց անոնց. «Դուք մոլորած էք. ոչ Գիրքերը գիտէք, ոչ ալ Աստուծոյ զօրութիւնը։ 30 Քանի որ յարութեան ատեն՝ ոչ կ'ամուսնանան եւ ոչ ամուսնութեան կը տրուին, հապա երկինքի մէջ՝ Աստուծոյ հրեշտակներուն պէս են։ 31 Բայց մեռելներուն յարութեան մասին չէ՛ք կարդացեր Աստուծոյ ձեզի ըսուած խօսքը. 32 “Եւ եմ Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը”։ Աստուած մեռելներուն Աստուածը չէ, հապա՝ ողջերուն»։ 33 Բազմութիւնը ասիկա լսելով՝ կ'ապշեր անոր ուսուցումին վրայ։ 34 Բայց Փարիսեցիները՝ երբ լսեցին թէ ան պապանձեցուց Սադուկեցիները, տեղ մը հաւաքուեցան, 35 եւ անոնցմէ օրինական

մը հարցուց՝ զայն փորձելով. **36** «Վարդապետ, որ պատուիրանը մեծ է Օրենքին մեջ»: **37** Յիսուս ըսաւ անոր. «Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ամբողջ սիրտովդ, ամբողջ անձովդ եւ ամբողջ միտքովդ»: **38** Այս է առաջին ու մեծ պատուիրանը: **39** Եւ երկրորդը՝ ասոր նման. «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ՝ պէս»: **40** Այս երկու պատուիրաններէն կախուած են ամբողջ Օրենքն ու Մարգարէները»: **41** Երբ Փարիսեցիները հաւաքուեցան, Յիսուս հարցուց անոնց. **42** «Քրիստոսի մասին ինչ է ձեր կարծիքը. որո՞ւ որդին է»: **43** Ըսին իրեն. «Դաւիթի»: Յիսուս ըսաւ անոնց. «Հապա ինչպէս Դաւիթ Յոգիով զայն Տէր կը կոչէ ու կ'ըսէ. **44** “Տէրը ըսաւ իմ Տէրոջս. «Բազմէ՛ իմ աջ կողմս, մինչեւ որ քու թշնամիներդ պատուանդան դնեմ ոտքերուդ»”: **45** Ուրեմն եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ինչպէս ան իր որդին կ'ըլլայ»: **46** Ո՛չ մէկը կրնար խօսքով մը պատասխանել անոր: Այդ օրէն ետք՝ ոչ մէկը կը յանդգնէր բան մը հարցնել անոր:

23 Այն ատեն Յիսուս խօսեցաւ բազմութեան եւ իր աշակերտներուն՝ ըսելով. **2** «Դպիրներն ու Փարիսեցիները բազմած են Մովսէսի արձոյտին վրայ: **3** Ուրեմն ինչ որ ըսեն ձեզի՝ որ պահէք, պահեցէ՛ք եւ ըրէ՛ք. բայց մի՛ ընէք անոնց գործերուն պէս, որովհետեւ կ'ըսեն՝ սակայն չեն ըներ: **4** Արդարեւ ծանր ու դժուարակիր բեռներ կը կապեն եւ կը դնեն մարդոց ուսերուն վրայ, ու իրենց մատով իսկ չեն ուզեր շարժել զանոնք: **5** Իրենց բոլոր գործերը կ'ընեն մարդոցմէ տեսնուելու

համար. կը լայնցնեն իրենց գրապանակները եւ
 կ'երկնցնեն իրենց հանդերձներուն քղանցքները.
 6 կը սիրեն առաջին բազմոցները՝ ընթրիքներու
 մէջ, առաջին աթոռները՝ ժողովարաններու մէջ,
 բարեւները՝ հրապարակներու վրայ, 7 ու “ռաբբի,
 ռաբբի” կոչուիլ մարդոցմէ: 8 Բայց դուք մի
 կոչուիք “ռաբբի”, որովհետեւ մէկ է ձեր Ուսուցիչը՝
 Քրիստոս, 9 եւ դուք բոլորդ եղբայր էք: Ու երկրի
 վրայ ոչ մէկը կոչեցէք ձեր “հայրը”, որովհետեւ
 մէկ է ձեր Հայրը՝ որ երկինքն է: 10 Եւ դուք
 մի կոչուիք “ուսուցիչ”, որովհետեւ մէկ է ձեր
 Ուսուցիչը՝ Քրիստոս: 11 Ու ձեր մէջէն մեծագոյնը՝
 ձեր սպասարկուն թող ըլլայ: 12 Ո՛վ որ բարձրացնէ
 ինքզինք՝ պիտի խոնարհի, իսկ ո՛վ որ խոնարհեցնէ
 ինքզինք՝ պիտի բարձրանայ»: 13 «Վայ ձեզի,
 կեղծաւոր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ կը գոցէք
 երկինքի թագաւորութիւնը մարդոց առջեւ. դո՛ւք
 չէք մտներ, ու մտնողներուն ալ թոյլ չէք տար՝
 որ մտնեն: 14 Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ եւ
 Փարիսեցիներ, որ կը լափէք այրիներուն տունները,
 ու իբր պատրուակ՝ աղօթքը կ'երկարէք. ուստի
 աւելի խստութեամբ պիտի դատուիք”: 15 Վայ
 ձեզի, կեղծաւոր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ կը
 շրջիք ծով ու ցամաք՝ մէկը նորահաւատ ընելու,
 եւ երբ ըլլայ՝ զայն ձեզմէ երկու անգամ աւելի
 գեհեմի որդի կ'ընէք: (Geenna g1067) 16 Վայ ձեզի, կոյր
 առաջնորդներ, որ կ'ըսէք. “Ո՛վ որ երդում կ'ընէ
 տաճարին վրայ՝ բան մը չէ, բայց ո՛վ որ երդում
 կ'ընէ տաճարի ոսկիին վրայ՝ պարտաւոր կ'ըլլայ”:

17 Յիմարներ ու կոյրեր, որք մեծ է, ոսկին՝ թէ տաճարը, որ կը սրբացնէ ոսկին: 18 Նաեւ կ'ըսէք. "Ո՛վ որ երդում կ'ընէ զոհասեղանին վրայ՝ բան մը չէ, բայց ո՛վ որ երդում կ'ընէ զոհասեղանին վրայի ընծային վրայ՝ պարտաւոր կ'ըլլայ": 19 Յիմարներ ու կոյրեր, որք մեծ է, ընծան՝ թէ զոհասեղանը, որ կը սրբացնէ ընծան: 20 Ուրեմն, ո՛վ որ երդում կ'ընէ զոհասեղանին վրայ, երդում կ'ընէ անոր վրայ ու անոր վրայ եղած բոլոր բաներուն վրայ: 21 Եւ ո՛վ որ երդում կ'ընէ տաճարին վրայ, երդում կ'ընէ անոր վրայ ու անոր մէջ բնակողին վրայ: 22 Եւ ո՛վ որ երդում կ'ընէ երկինքի վրայ, երդում կ'ընէ Աստուծոյ գահին վրայ ու անոր վրայ բազմողին վրայ: 23 Վայ՛ ձեզի, կեղծաւոր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ կը վճարէք անանուխին, սամիթին ու չամանին տասանորդը, բայց կը թողուք Օրէնքին աւելի ծանր բաները՝ իրաւունքը, կարեկցութիւնն ու հաւատքը. ասոնք պէտք է ընէիք, եւ զանոնք չձգէիք: 24 Կոյր առաջնորդներ, որ կը քամէք մժղուկը ու կը կլլէք ուղտը: 25 Վայ՛ ձեզի, կեղծաւոր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ կը մաքրէք գաւաթին ու պնակին դուրսի կողմը, բայց ներսէն լեցուն են յափշտակութեամբ եւ անիրաւութեամբ: 26 Կոյր Փարիսեցի, նախ մաքրէ՛ գաւաթին ու պնակին ներսի կողմը, որպէսզի անոնց դուրսի կողմն ալ մաքուր ըլլայ: 27 Վայ՛ ձեզի, կեղծաւոր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ կը նմանիք ծեփուած գերեզմաններու, որոնք արդարեւ դուրսէն գեղեցիկ կ'երեւնան, բայց

ներսէն լեցուն են մեռելներու ոսկորներով ու
ամէն տեսակ անմաքրութեամբ: 28 Նոյնպէս դուք
դուրսէն արդար կ'երեւնաք մարդոց, իսկ ներսէն
լի էք կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ»: 29
«Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու Փարիսեցիներ,
որ կը կառուցանէք մարգարէներուն տապանները
եւ կը զարդարէք արդարներուն գերեզմանները,
30 ու կ'ըսէք. “Եթէ մեր հայրերուն օրերը
ըլլայինք, անոնց հետ կամակից չէինք ըլլար
մարգարէներուն արիւնին թափուելուն”»: 31
Հետեւաբար դուք կը վկայէք ձեր մասին,
թէ որդիներն էք անոնց՝ որ կը սպաննէին
մարգարէները: 32 Ուստի դուք ալ ձեր հայրերուն
չափը լեցուցէք: 33 Օձեր, իժերու ծնունդներ, ինչպէս
պիտի խուսափիք գեհենի դատապարտութենէն:
(Geenna g1067) 34 Ուստի ահա ես կը դրկեմ ձեզի
մարգարէներ եւ իմաստուններ ու դպիրներ:
Անոնցմէ ոմանք պիտի սպաննէք եւ խաչէք, ոմանք
ալ պիտի խարազանէք ձեր ժողովարաններուն
մէջ ու հալածէք քաղաքէ քաղաք: 35 Որպէսզի
ձեր վրայ գայ երկրի վրայ թափուած ամբողջ
արդար արիւնը, արդար Աբելի արիւնէն մինչեւ
Բարաքիայի որդիին՝ Չաբարիայի արիւնը, որ
սպաննեցիք տաճարին եւ զոհասեղանին միջեւ:
36 Եւ մարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Այս
բոլոր բաները պիտի գան այս սերունդին
վրայ”»: 37 «Ո՛վ Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կը
սպաննէիր մարգարէները ու կը քարկոծէիր քեզի
դրկուածները. քանի՜ անգամ ուզեցի հաւաքել

զաւակներդ, ինչպէս հաւը թելերուն տակ կը
հաւաքէ իր ձագերը, բայց դուք չուզեցիք: **38** Ահա՛
ձեր տունը ամայի պիտի մնայ ձեզի: **39** Արդարեւ
կ'ըսեմ ձեզի թէ ալ ասկէ ետք պիտի չտեսնէք զիս՝
մինչեւ որ ըսէք. “Օրհնեալ է ան՝ որ կու գայ Տէրոջ
անունով”»:

24 Երբ Յիսուս՝ տաճարէն դուրս ելլելով՝ կը
մեկնէր, աշակերտները գացին անոր քով՝
ցուցնելու անոր տաճարին շէնքերը: **2** Յիսուս ըսաւ
անոնց. «Զէք տեսներ այդ բոլորը. ճշմարտապէս
կը յայտարարեմ ձեզի. “Քար քարի վրայ պիտի
չմնայ, ամենը պիտի քակուի”»:

3 Ու երբ ան
նստած էր Ձիթենիներու լեռը, աշակերտները
գացին իրեն՝ առանձին, եւ ըսին. «Ըսէ՛ մեզի, երբ
պիտի ըլլայ ատիկա, ու ինչ պիտի ըլլայ նշանը քու
զալուստիդ եւ աշխարհի վախճանին»:

(aiōn g165) **4**
Յիսուս պատասխանեց անոնց. «Զգուշացէ՛ք որ ոչ
մէկը մոլորեցնէ ձեզ: **5** Որովհետեւ շատեր պիտի
զան իմ անունովս եւ ըսեն. “Ես եմ Քրիստոսը”,
ու պիտի մոլորեցնեն շատերը: **6** Պիտի լսէք
պատերազմներու մասին, եւ պատերազմներու
տարածայնութիւններ. զգուշացէ՛ք՝ որ չվրդովիք,
որովհետեւ պէտք է որ այս ամենը ըլլայ, բայց
դեռ վախճանը չէ: **7** Որովհետեւ ազգ ազգի դէմ
պիտի ելլէ, ու թագաւորութիւն՝ թագաւորութեան
դէմ. եւ տեղ-տեղ սովեր, ժանտախտներ ու
երկրաշարժներ պիտի ըլլան: **8** Սակայն ասոնք
բոլորը ցաւերուն սկիզբն են: **9** Այն ատեն պիտի
մատնեն ձեզ տառապանքներու, պիտի սպաննեն

ձեզ, ու բոլոր ազգերուն ատելի պիտի ըլլաք
 իմ անունիս համար: **10** Եւ այն ատեն շատեր
 պիտի գայթակղին, պիտի մատնեն զիրար ու
 պիտի ատեն զիրար: **11** Շատ սուտ մարգարէներ
 պիտի ելլեն, եւ պիտի մոլորեցնեն շատերը: **12**
 Անօրէնութեան բազմանալուն համար՝ շատերուն
 սերը պիտի պաղի: **13** Բայց ո՛վ որ տոկայ
 մինչեւ վախճանը՝ անիկա պիտի փրկուի: **14** Այս
 արքայութեան աւետարանը պիտի քարոզուի
 ամբողջ երկրագունդին մէջ՝ իբր վկայութիւն
 բոլոր ազգերուն, եւ այն ատեն վախճանը պիտի
 գայ»: **15** «Ուրեմն երբ սուրբ տեղը հաստատուած
 տեսնէք աւերողին պղծութիւնը», - որու մասին
 Դանիէլ մարգարէին միջոցով խօսուած է, - (ո՛վ որ
 կարդայ՝ թող հասկնայ,) **16** այն ատեն Յրեաստանի
 մէջ եղողները լեռները թող փախչին: **17** Ա՛ն որ
 տանիքին վրայ է՝ թող չիջնէ իր տունէն որեւէ
 բան առնելու, **18** եւ ան որ արտին մէջ է՝ թող
 չվերադառնայ իր հանդերձները առնելու: **19**
 Բայց վայ այդ օրերը յղի եղողներուն ու ծիծ
 տուողներուն: **20** Աղօթեցէ՛ք՝ որ ձեր փախուստը
 ձմեռը չըլլայ, ո՛չ ալ Շաբաթ օրը. **21** քանի որ
 այն ատեն այնպիսի մեծ տառապանք պիտի
 ըլլայ, որուն նմանը՝ աշխարհի սկիզբէն մինչեւ
 հիմա եղած չէ, ո՛չ ալ պիտի ըլլայ: **22** Եթէ
 այդ օրերը չկարճնային, ո՛չ մէկ մարմին պիտի
 փրկուէր. բայց ընտրեալներուն համար՝ այդ օրերը
 պիտի կարճան: **23** Այն ատեն եթէ մէկը ըսէ
 ձեզի. «Ահա հոս է Քրիստոսը», կամ. «Յո՛ւս է», մի՛

հաւատաք: 24 Որովհետեւ սուտ Քրիստոսներ ու
 սուտ մարգարէներ պիտի ելլեն, եւ ցոյց պիտի
 տան մեծ նշաններ ու սքանչելիքներ, որպէսզի՝
 եթէ կարելի ըլլայ՝ մոլորեցնեն ընտրեալներն իսկ:
 25 Ահա՛ նախապէս ըսի ձեզի: 26 Ուրեմն եթէ ըսեն
 ձեզի. “Ահա՛ անապատին մէջ է”, մի՛ երթաք. կամ.
 “Ահա՛ ներքին սենեակներուն մէջ է”, մի՛ հաւատաք:
 27 Քանի որ ինչպէս փայլակը կ’ելլէ արեւելքէն ու
 կ’երեւնայ մինչեւ արեւմուտք, այնպէս պիտի ըլլայ
 մարդու Որդիին գալուստը: 28 Որովհետեւ ճշտ
 դիակ կայ, հո՛ն պիտի հաւաքուին արծիւները»: 29
 «Եւ այդ օրերու տառապանքէն անմիջապէս ետք՝
 արեւը պիտի խաւարի ու լուսինը պիտի չտայ իր
 փայլը. աստղերը պիտի իյնան երկինքէն, երկինքի
 զօրութիւնները պիտի սարսին, 30 եւ այն ատեն
 մարդու Որդիին նշանը պիտի երեւնայ երկինքի
 մէջ: Այն ատեն երկրի բոլոր տոհմերը պիտի
 հեծեծեն, ու պիտի տեսնեն մարդու Որդին՝ որ կու
 գայ երկինքի ամպերուն վրայ, զօրութեամբ ու մեծ
 փառքով: 31 Եւ ան պիտի դրկէ իր հրեշտակները
 բարձրաձայն փողով, ու պիտի հաւաքեն իր
 ընտրեալները չորս հովերէն, երկինքի մէկ ծայրէն
 մինչեւ միւս ծայրը»: 32 «Թզենի՛ն սորվեցէք առակ
 մը. երբ անոր ոստերը կակուղնան եւ տերեւները
 ցցուին՝ կը հասկնաք թէ ամառը մօտ է: 33 Նոյնպէս
 դուք՝ երբ տեսնէք այս բոլոր բաները, գիտցէ՛ք
 թէ մօտ է՝ դռներուն քով: 34 Եւ մարտապէս կը
 յայտարարեմ ձեզի. “Այս սերունդը պիտի չանցնի,
 մինչեւ որ այս բոլոր բաները ըլլան”»: 35 Երկինք

ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնան
 պիտի չանցնին»: 36 «Իսկ այդ օրն ու ժամը՝ ոչ
 մեկ մարդ գիտէ, ոչ ալ երկինքի հրեշտակները,
 հապա՛ միայն իմ Հայրս: 37 Բայց ինչպէս Նոյի
 օրերուն պատահեցաւ, այնպէս ալ պիտի ըլլայ
 մարդու Որդիին գալուստը: 38 Որովհետեւ ինչպէս
 ջրհեղեղէն առաջ եղած այն օրերը՝ կ'ուտէին, կը
 խմէին, կ'ամուսնանային եւ ամուսնութեան կու
 տային, մինչեւ այն օրը՝ երբ Նոյ մտաւ տապանը,
 39 ու չգիտցան՝ մինչեւ որ ջրհեղեղը եկաւ եւ քշեց
 տարաւ բոլորը, այնպէս ալ պիտի ըլլայ մարդու
 Որդիին գալուստը: 40 Այն ատեն եթէ երկու մարդիկ
 արտի մը մէջ ըլլան, մէկը պիտի առնուի եւ միւսը
 մնայ: 41 ու եթէ երկու կիներ ջաղացքին մէջ աղան,
 մէկը պիտի առնուի եւ միւսը մնայ: 42 Ուրեմն
 արթուն կեցէք, որովհետեւ չէք գիտեր թէ ձեր
 Տէրը ո՞ր ժամուն պիտի գայ: 43 Բայց սա՛ գիտցէք
 թէ եթէ տանուտէրը գիտնար թէ գիշերուան ո՞ր
 պահուն գողը կու գայ, արթուն կը կենար եւ
 չէր թոյլատրեր՝ որ ծակեն իր տունը: 44 Ուստի
 դուք ալ պատրաստ կեցէք, որովհետեւ մարդու
 Որդին պիտի գայ այնպիսի ժամու մը՝ որ դուք չէք
 ակնկալեր»: 45 «Ուրեմն ո՞վ է այն հաւատարիմ
 եւ իմաստուն ծառան, որ իր տէրը նշանակեց իր
 ծառաներուն վրայ՝ որպէսզի ատենին կերակուր
 տայ անոնց: 46 Երանի՛ այդ ծառային, որ իր տէրը՝
 եկած ատենը՝ պիտի գտնէ թէ այնպէս կ'ընէ: 47
 Շշմարտապէս կը յայտարարեմ ձեզի թէ պիտի
 նշանակե՛ գայն իր ամբողջ ինչքին վրայ: 48 Հապա

երթէ այդ չար ծառան ըսէ իր սիրտին մէջ. “Իմ տէրս կ’ուշացնէ իր գալը”, 49 եւ սկսի ծեծել իր ծառայակիցները, ուտել ու խմել արբեցողներուն հետ, 50 այդ ծառային տէրը պիտի գայ այնպիսի օր մը՝ երբ չի սպասեր, եւ այնպիսի ժամու մը՝ որ չի գիտեր, 51 ու երկուքի պիտի կտրէ գայն եւ պիտի դնէ անոր բաժինը կեղծաւորներուն հետ. հոն պիտի ըլլայ լաց ու ակռաներու կրճտում »:

25 «Այն ատեն երկինքի թագաւորութիւնը պիտի նմանի տասը կոյսերու, որոնք՝ առնելով իրենց լապտերները՝ գացին դիմաւորելու փեսան: 2 Ասոնցմէ հինգը իմաստուն էին, իսկ հինգը՝ յիմար: 3 Յիմարները առին իրենց լապտերները, բայց ձեթ չառին իրենց հետ. 4 սակայն իմաստունները՝ ամաններով ձեթ ալ առին իրենց լապտերներուն հետ: 5 Երբ փեսան ուշացաւ, բոլորն ալ թմրեցան ու քնացան: 6 Կես գիշերին գոչիւն մը եղաւ. “Ահա՛ փեսան կու գայ. գացէ՛ք դիմաւորելու զինք”: 7 Այն ատեն բոլոր կոյսերը ոտքի ելան եւ յարդարեցին իրենց լապտերները: 8 Յիմարները ըսին իմաստուններուն. “Տուէ՛ք մեզի ձեր ձեթէն, որովհետեւ մեր լապտերները կը մարին”: 9 Իմաստունները պատասխանեցին. “Ո՛չ. գուցէ չբաւէ մեզի ու ձեզի. այլ մանաւանդ գացէ՛ք ծախողներուն եւ գնեցէ՛ք ձեզի համար”: 10 Երբ անոնք գացին գնելու՝ փեսան եկաւ. պատրաստ եղողները հարսանիքի մտան անոր հետ, ու դուռը գոցուեցաւ: 11 Յետոյ միւս կոյսերը եկան եւ ըսին. “Տէ՛ր, Տէ՛ր, բաց մեզի”: 12 Բայց ան

պատասխանեց. “ճշմարտապէս կը յայտարարեմ
 ձեզի. “Ես չեմ ճանչնար ձեզ””: 13 Ուրեմն արթնն
 կեցէք, որովհետեւ գիտէք ոչ օրը, ոչ ժամը»: 14
 «Արդարեւ երկինքի թագաւորութիւնը կը նմանի
 ճամբորդող մարդու մը, որ կանչեց իր ծառաները,
 եւ յանձնեց անոնց իր ինչքը. 15 մէկուն տուաւ
 հինգ տաղանդ, մէկուն՝ երկու, ու մէկուն՝ մէկ.
 Իւրաքանչիւրին՝ իր կարողութեան չափով, եւ
 իսկոյն մեկնեցաւ: 16 Հինգ տաղանդ ստացողը
 գնաց, օգտագործեց զանոնք, ու շահեցաւ ուրիշ
 հինգ տաղանդ: 17 Նմանապէս երկու ստացողը
 շահեցաւ ուրիշ երկու ալ: 18 Իսկ մէկ ստացողը
 գնաց, փորեց գետինը եւ ծածկեց իր տիրոջ
 դրամը: 19 Շատ ժամանակ ետք՝ այդ ծառաներուն
 տէրը եկաւ ու հաշիւ ուզեց անոնցմէ: 20 Հինգ
 տաղանդ ստացողը մօտեցաւ եւ բերաւ ուրիշ հինգ
 տաղանդ՝ ըսելով. “Տէր, հինգ տաղանդ յանձնեցիր
 ինծի. ահա՛ ուրիշ հինգ տաղանդ ալ շահեցայ
 անոնցմէ գատ”: 21 Տէրը ըսաւ անոր. “Ապրիս, բարի
 ու հաւատարիմ ծառայ. դրն՝ որ հաւատարիմ
 եղար քիչ բանի մէջ, պիտի նշանակեմ քեզ շատ
 բաներու վրայ. մտի՛ր տիրոջդ ուրախութեան մէջ”:
 22 Երկու տաղանդ ստացողն ալ մօտեցաւ եւ
 ըսաւ. “Տէր, երկու տաղանդ յանձնեցիր ինծի.
 ահա՛ ուրիշ երկու տաղանդ ալ շահեցայ անոնցմէ
 գատ”: 23 Տէրը ըսաւ անոր. “Ապրիս, բարի ու
 հաւատարիմ ծառայ. դրն՝ որ հաւատարիմ եղար
 քիչ բանի մէջ, պիտի նշանակեմ քեզ շատ բաներու
 վրայ. մտի՛ր տիրոջդ ուրախութեան մէջ”: 24 Մէկ

տաղանդ ստացողն ալ մօտեցաւ եւ ըսաւ. “Տէր, գիտէի թէ դուն խիստ մարդ մըն ես. կը հնձես չսերմանած տեղէդ, ու կը ժողվես չցանած տեղէդ. 25 ուստի վախնալով՝ գացի, պահեցի քու տաղանդդ գետինին տակ. ուստի ահա՛ քուկդ՝ քեզի”: 26 Իր տէրը պատասխանեց իրեն. “Չար եւ ծոյլ ծառայ. գիտէիր թէ կը հնձեմ չսերմանած տեղէս, ու կը ժողվեմ չցանած տեղէս. 27 ուրեմն պետք էր որ դնէիր իմ դրամս սեղանաւորներուն քով, որպէսզի տոկոսով ստանայի եկած ատենս”: 28 “Ուստի առէ՛ք ատկէ տաղանդը, ու տուէ՛ք տասը տաղանդ ունեցողին. 29 որովհետեւ ամէն ունեցողի պիտի տրուի, եւ պիտի ըլլայ առատութեան մէջ, բայց չունեցողէն պիտի առնուի ունեցածն ալ: 30 Իսկ նետեցէ՛ք այդ անպետ ծառան դուրսի խաւարը. հոն պիտի ըլլայ լաց ու ակռաներու կրճտում”»: 31 «Երբ մարդու Որդին գայ իր փառքով՝ եւ բոլոր սուրբ հրեշտակները իրեն հետ, այն ատեն պիտի բազմի իր փառքի գահին վրայ: 32 Բոլոր ազգերը պիտի հաւաքուին անոր առջեւ, ու պիտի գատէ զանոնք իրարմէ՝ ինչպէս հովիւ մը կը գատէ ոչխարները այծերէն: 33 Ոչխարները պիտի կեցնէ իր աջ կողմը, իսկ այծերը՝ ձախ կողմը: 34 Այն ատեն թագաւորը պիտի ըսէ իր աջ կողմը եղողներուն. “Եկէ՛ք իմ Հօրս օրհնածները, ժառանգեցէ՛ք այն թագաւորութիւնը, որ պատրաստուած է ձեզի համար՝ աշխարհի հիմնադրութենէն ի վեր: 35 Որովհետեւ անօթեցայ՝ եւ ուտելիք տուիք ինծի, ծարաւցայ՝ ու խմցուցիք ինծի, օտարական էի՝

ներս ընդունեցիք զիս, **36** մերկ էի՝ հագուեցուցիք զիս, հիւանդ էի՝ այցելեցիք ինծի, բանտի մէջ էի՝ եկաք ինծի”։ **37** Այն ատեն արդարները պիտի պատասխանեն անոր. “Տէր, երբ տեսանք քեզ անօթեցած՝ եւ կերակրեցինք, կամ ծարաւցած՝ ու խմցուցինք. **38** երբ տեսանք քեզ օտարական՝ եւ ներս ընդունեցինք, կամ մերկ՝ ու հագուեցուցինք. **39** երբ տեսանք քեզ հիւանդ կամ բանտի մէջ՝ ու եկանք քեզի”։ **40** Թագաւորը պիտի պատասխանէ անոնց. “Շշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Քանի իմ այս եղբայրներուս փոքրագոյններէն մէկուն ըրիք՝ ինծի ըրիք””։ **41** Այն ատեն պիտի ըսէ նաեւ իր ձախ կողմը եղողներուն. “Յեռացէք ինձմէ, անիծեալներ, յաւիտենական կրակին մէջ՝ որ պատրաստուած է Չարախօսին եւ իր հրեշտակներուն համար: (aiōnios g166) **42** Որովհետեւ անօթեցայ՝ ուտելիք չտուիք ինծի, ծարաւցայ՝ չխմցուցիք ինծի, **43** օտարական էի՝ ներս չընդունեցիք զիս, մերկ էի՝ չհագուեցուցիք զիս, հիւանդ ու բանտի մէջ էի՝ չայցելեցիք ինծի”։ **44** Այն ատեն անոնք ալ պիտի պատասխանեն. “Տէր, երբ տեսանք քեզ անօթեցած, կամ ծարաւցած, կամ օտարական, կամ մերկ, կամ հիւանդ, կամ բանտի մէջ, եւ չսպասարկեցինք քեզի”։ **45** Այն ատեն պիտի պատասխանէ անոնց. “Շշմարտապէս կ’ըսեմ ձեզի. “Քանի ատեն փոքրագոյններէն մէկուն չըրիք՝ ինծի ալ չըրիք””։ **46** Ասոնք պիտի երթան յաւիտենական պատուհասին, իսկ արդարները՝ յաւիտենական կեանքին»։ (aiōnios g166)

26 Երբ Յիսուս աւարտեց այս բոլոր խօսքերը, ըսաւ իր աշակերտներուն. **2** «Գիտէ՞ք թէ երկու օր ետք՝ Չատիկ պիտի ըլլայ, ու մարդու Որդին պիտի մատնուի՝ խաչուելու համար»: **3** Այն ատեն քահանայապետները, դպիրները եւ ժողովուրդին երեցները հաւաքուեցան գաւիթը քահանայապետին՝ որ Կայիափա կը կոչուէր, **4** ու խորհրդակցեցան նենգութեամբ բռնել Յիսուսը եւ սպաննել: **5** Բայց կ'ըսէին. «Ո՛չ տօնին ատենը, որպէսզի աղմուկ չըլլայ ժողովուրդին մէջ»: **6** Երբ Յիսուս Բեթանիա էր, բորոտ Սիմոնի տունը, **7** կին մը՝ որ ուներ թանկարժէք օծանելիքի ալապաստրէ շիշ մը՝ եկաւ անոր ու թափեց զայն անոր գլուխին վրայ, երբ ան սեղան նստած էր: **8** Անոր աշակերտները տեսնելով՝ ընդվզեցան եւ ըսին. «Ինչո՞ւ այս վատնումը. **9** քանի որ այդ օծանելիքը կրնար սուղ գինով ծախուիլ ու աղքատներուն տրուիլ»: **10** Յիսուս հասկնալով՝ ըսաւ անոնց. «Ինչո՞ւ կ'անհանգստացնէք կինը. ան լա՛ւ գործ մը ըրաւ ինծի: **11** Որովհետեւ ամէ՛ն ատեն ունիք աղքատները ձեզի հետ, բայց ամէն ատեն չունիք զիս: **12** Ա՛ն որ թափեց այդ օծանելիքը մարմինիս վրայ, ըրաւ իմ թաղումի՛ն համար: **13** Եշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ամբողջ աշխարհի մէջ՝ ո՛ւր որ այս աւետարանը քարոզուի, ասոր ըրածն ալ պիտի պատմուի՝ իր յիշատակին համար”»: **14** Այն ատեն տասներկուքէն մէկը, որ կը կոչուէր Յուդա Իսկարիօվտացի, գնաց քահանայապետներուն եւ ըսաւ. **15** «Ի՜նչ կ'ուզէք տալ ինծի, որպէսզի

մատնեմ զայն ձեզի»։ Անոնք ալ խոստացան անոր երեսուն կտոր արծաթ։ **16** Այդ ատենէն ետք պատեհողութիւն կը փնտռէր, որպէսզի մատներ զայն անոնց։ **17** Բաղարջակերքի առաջին օրը՝ աշակերտները եկան Յիսուսի ու ըսին անոր. «Ո՞ր կ'ուզես որ պատրաստենք քեզի պէտք եղածը՝ զատիկը ուտելու համար»։ **18** Ան պատասխանեց. «Գացէք բաղաքը՝ այսինչ մարդուն, եւ ըսէք անոր. «Վարդապետը կ'ըսէ. "Ժամանակս մօտ է, քո՛ւ բովդ պիտի կատարեմ Չատիկը՝ աշակերտներուս հետ"»։ **19** Աշակերտներն ալ ըրին՝ ինչպէս Յիսուս հրամայեց իրենց, ու պատրաստեցին զատիկը։ **20** Երբ իրիկուն եղաւ՝ սեղան նստաւ տասներկուքին հետ։ **21** Մինչ կ'ուտէին՝ ըսաւ. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի թէ ձեզմէ մէկը պիտի մատնէ զիս»։ **22** Չափազանց տրտմեցան եւ անոնցմէ իւրաքանչիւրը սկսաւ ըսել անոր. «Տէր, միթէ քե՛ս եմ»։ **23** Ան ալ պատասխանեց. «Ա՛ն որ ինծի հետ թաթխեց իր ձեռքը պնակին մէջ, անիկա՛ն պիտի մատնէ զիս»։ **24** Ի՛րապէս մարդու Որդին կ'երթայ՝ ինչպէս գրուած է իր մասին, բայց վայ՛ այն մարդուն՝ որուն միջոցով մարդու Որդին կը մատնուի։ Այդ մարդուն լաւ պիտի ըլլար՝ որ ծնած չըլլար»։ **25** Յուդա, որ պիտի մատներ զայն, պատասխանեց. «Վարդապետ, միթէ քե՛ս եմ»։ Ըսաւ անոր. «Դո՛ւն ըսիր»։ **26** Մինչ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց առաւ, օրհնեց, կտրեց, տուաւ աշակերտներուն եւ ըսաւ. «Ամէ՛ք, կերէ՛ք. այս է իմ մարմինս»։ **27** Նաեւ բաժակը առաւ, շնորհակալ եղաւ, տուաւ

անոնց ու ըսաւ. **28** «Բոլորդ ալ խմեցէք ասկէ. որովհետեւ այս է իմ արիւնս, նոր ուխտին արիւնը, որ կը թափուի՝ շատերուն մեղքերու ներումին համար: **29** Բայց կը յայտարարեմ ձեզի. “Ասկէ ետք ընա՛ն պիտի չխմեն որթատունկին բերքէն, մինչեւ այն օրը՝ երբ ձեզի հետ նոր կերպով խմեմ զայն իմ Յօսի թագաւորութեան մէջ”»: **30** Օրհներգելէ ետք՝ զացին Ձիթենիներու լեռը: **31** Այն ատեն Յիսուս ըսաւ անոնց. «Դուք բոլորդ պիտի զայթակղիք այս գիշեր իմ պատճառովս, որովհետեւ գրուած է. “Յովիւը պիտի զարնեմ, ու հօտին ոչխարները պիտի ցրուին”»: **32** Բայց յարութիւն առնելէս ետք՝ ձեզմէ առաջ պիտի երթամ Գալիլեա»: **33** Պետրոս պատասխանեց անոր. «Թէեւ բոլորն ալ զայթակղին քու պատճառովդ, ես ընա՛ն պիտի չզայթակղիմ»: **34** Յիսուս ըսաւ անոր. «Ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. “Այս գիշեր՝ դեռ աքաղաղը չկանչած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս”»: **35** Պետրոս ըսաւ անոր. «Նոյնիսկ եթէ պէտք ըլլայ որ քեզի հետ մեռնիմ՝ ընա՛ն պիտի չուրանամ քեզ»: Այսպէս կ’ըսէին նաեւ բոլոր աշակերտները: **36** Այն ատեն Յիսուս գնաց անոնց հետ վայր մը՝ որ Գեթսեմանի կը կոչուէր, եւ ըսաւ աշակերտներուն. «Յո՛ն նստեցէք, մինչ ես կ’երթամ հոն՝ աղօթելու»: **37** Իրեն հետ առնելով Պետրոսն ու Չեբեդեոսի երկու որդիները, սկսաւ տրտմիլ եւ շատ վշտանալ: **38** Այն ատեն ըսաւ անոնց. «Իմ անձս չափազանց տրտում է՝ մեռնելու աստիճան: Յո՛ն մնացէք եւ արթո՛ն կեցէք ինծի հետ»: **39** Ու

քիչ մը առջեւ երթալով՝ ինկաւ իր երեսին վրայ, եւ աղօթեց՝ ըսելով. «Իմ հայրս, եթէ կարելի է՝ այս բաժակը թող անցնի ինձմէ. բայց ոչ թէ ինչպէս նա կ'ուզեմ, հապա՛ ինչպէս դո՛ւն կ'ուզես»: 40 Երբ եկաւ աշակերտներուն, քնացած գտաւ զանոնք ու ըսաւ Պետրոսի. «Այդպէս մէկ ժամ ալ չկրցաք արթուն կենալ ինծի հետ: 41 Արթուն կեցէք եւ աղօթեցէք, որպէսզի չմտնէք փորձութեան մէջ. արդարեւ հոգին յօժար է, բայց մարմինը՝ տկար»: 42 Դարձեալ երկրորդ անգամ գնաց աղօթեց՝ ըսելով. «Իմ հայրս, եթէ կարելի չէ որ այս բաժակը անցնի ինձմէ՝ առանց խմելու անկէ, քու կամքդ թող ըլլայ»: 43 Երբ եկաւ՝ դարձեալ քնացած գտաւ զանոնք, որովհետեւ անոնց աչքերը ծանրացած էին: 44 Թողուց զանոնք ու դարձեալ գնաց, երրորդ անգամ աղօթեց՝ նոյն խօսքը ըսելով: 45 Այն ատեն եկաւ իր աշակերտներուն եւ ըսաւ անոնց. «Ասկէ ետք քնացէք ու հանգստացէք. ահա ժամը մօտեցաւ, եւ մարդու Որդին պիտի մատնուի մեղաւորներուն ձեռքը: 46 Ոտքի ելէք, երթանք ասկէ. ահա մօտեցաւ ան՝ որ պիտի մատնէ զիս»: 47 Մինչ ան դեռ կը խօսէր, Յուդա՝ տասներկուքէն մէկը՝ եկաւ, եւ իրեն հետ մեծ բազմութիւն մը՝ սուրերով ու բիրերով, քահանայապետներէն եւ ժողովուրդին երէցներէն: 48 Չայն մատնողը նշան մը տուեր էր անոնց՝ ըսելով. «Ո՛վ որ համբուրեմ՝ ան է, բռնեցէք զայն»: 49 Եւ իսկոյն մօտենալով Յիսուսի՝ ըսաւ. «Ողջոյն, Վարդապետ», ու համբուրեց զայն: 50 Յիսուս ըսաւ անոր. «Ընկեր, ըրէ՛ ինչ բանի

համար որ եկար»: Այն ատեն մօտեցան, ձեռք
 բարձրացուցին Յիսուսի վրայ ու բռնեցին զայն: **51**
 Յիսուսի հետ եղողներեն մեկը՝ երկարեց ձեռքը,
 եւ քաշելով իր սուրը՝ զարկաւ քահանայապետին
 ծառային ու խլեց անոր ականջը: **52** Այն ատեն
 Յիսուս ըսաւ անոր. «Վերադարձուր սուրդ իր
 տեղը, որովհետեւ բոլոր սուր առնողները՝ սուրով
 պիտի կորսուին: **53** Կը կարծես թէ չեմ կրնար հիմա
 աղաչել իմ Զօրս, որ հասցնէ ինծի տասներկու
 լեզեռնէն աւելի հրեշտակներ: **54** Բայց ինչպէս
 պիտի իրագործուին գրուածները, թէ այսպէս
 պետք է ըլլայ»: **55** Այդ ժամուն Յիսուս ըսաւ
 բազմութիւններուն. «Իբր թէ աւագակի՞ դեմ
 ելաք՝ սուրերով ու բիրերով բռնելու զիս: Ամէն
 օր տաճարին մէջ կը նստէի ձեզի հետ եւ կը
 սորվեցնէի, ու չբռնեցիք զիս: **56** Բայց այս
 ամէնը կատարուեցաւ, որպէսզի մարգարէներուն
 գրածները իրագործուին»: Այն ատեն բոլոր
 աշակերտները թողուցին զայն եւ փախան: **57**
 Անոնք որ բռնեցին Յիսուսը՝ տարին Կայիափա
 քահանայապետին, ուր դպիրներն ու երէցները
 հաւաքուած էին: **58** Պետրոս հեռուէն հետեւեցաւ
 անոր՝ մինչեւ քահանայապետին գաւիթը, ներս
 մտաւ եւ նստաւ սպասաւորներուն հետ, որպէսզի
 տեսնէ վախճանը: **59** Քահանայապետներն ու
 երէցները եւ ամբողջ ատեանը կը փնտռէին սուտ
 վկայութիւն մը Յիսուսի դեմ, որպէսզի մեռցնեն
 զայն. **60** բայց չգտան: Թեպէտ շատ սուտ վկաներ
 ալ եկան, ոչինչ գտան: Յետոյ երկու սուտ վկաներ

եկան 61 ու ըսին. «Ասիկա ըսաւ. “Ես կրնամ քակել Աստուծոյ տաճարը եւ կառուցանել զայն երեք օրուան մէջ”»։ 62 Քահանայապետը կանգնելով՝ ըսաւ անոր. «Ոչինչ կը պատասխանես. ինչ կը վկայեն ասոնք քեզի դէմ»։ 63 Յիսուս լուռ կեցաւ։ Ուստի քահանայապետը ըսաւ անոր. «Ապրոհ Աստուծոմով կ'երդմնեցնեմ քեզ, որ ըսես մեզի թէ դո՛ւն ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին»։ 64 Յիսուս ըսաւ անոր. «Դո՛ւն ըսիր։ Բայց կը յայտարարեմ ձեզի. “Ասկէ ետք պիտի տեսնէք մարդու Որդին՝ բազմած Զօրութեան աջ կողմը, ու եկած երկինքի ամպերուն վրայ”»։ 65 Այն ատեն քահանայապետը պատռեց իր հանդերձները եւ ըսաւ. «Հայիոյնց. ալ ինչ պէտք ունինք վկաներու։ Ահա՛ հիմա լսեցիք ատոր հայիոյութիւնը. 66 ինչ կը մտածէք»։ Անոնք պատասխանեցին. «Մահապարտ է»։ 67 Այն ատեն թքնեցին անոր երեսը, ու կռփահարեցին զայն։ Ոմանք ալ ապտակելով՝ ըսին. 68 «Մարգարէացիի մեզի, դո՛ւն՝ Քրիստոս, ո՞վ է ան՝ որ զարկաւ քեզի»։ 69 Երբ Պետրոս դուրսը՝ գաւիթը նստած էր, աղախին մը եկաւ անոր եւ ըսաւ. «Դո՛ւն ալ Գալիլեացի Յիսուսի հետ էիր»։ 70 Բայց ան ուրացաւ բոլորին առջեւ՝ ըսելով. «Չեմ գիտեր ինչ կը խօսիս»։ 71 Երբ դուրս ելաւ՝ նախագաւիթը, ուրիշ աղախին մը տեսաւ զայն ու ըսաւ հոն եղողներուն. «Ասիկա ալ Յիսուս Նազովրեցիին հետ էր»։ 72 Պետրոս դարձեալ երդում ընելով ուրացաւ. «Չեմ ճանչնար այդ մարդը»։ 73 Քիչ ետք՝ հոն կայնողները եկան եւ ըսին Պետրոսի. «Ճշմարտապէս դո՛ւն ալ անոնցմէ

ես, որովհետեւ խօսուածքդ ալ կը յայտնէ քեզ»: 74
Այն ատեն սկսաւ նզովել ու երդում ընել՝ ըսելով.
«Չեմ ճանչնար այդ մարդը»: Իսկոյն աքաղաղը
կանչեց: 75 Պետրոս յիշեց Յիսուսի խօսքը՝ որ
իրեն ըսեր էր. «Դեռ աքաղաղը չկանչած՝ երեք
անգամ պիտի ուրանաս զիս». եւ դուրս ելլելով՝
դառնապէս լացաւ:

27 Երբ առտու եղաւ, բոլոր քահանայապետներն
ու ժողովուրդին երեցները խորհրդակցեցան
Յիսուսի դէմ՝ որ մեռցնեն զայն: 2 Երբ
կապեցին զայն, տարին եւ մատնեցին Պոնտացի
Պիղատոս կառավարիչին: 3 Այն ատեն Յուդա, որ
մատնեց զայն, տեսնելով որ դատապարտուեցաւ՝
զղջաց, վերադարձուց երեսուն կտոր արծաթը
քահանայապետներուն ու երեցներուն, 4 եւ ըսաւ.
«Մեղանչեցի՝ անմեղ արիւն մատնելով»: Անոնք
ըսին. «Մեզի ինչ, դուն անդրադարձիր»: 5 Ան
ալ ձգեց արծաթը տաճարին մէջ, դուրս ելաւ, ու
գնաց՝ խեղդեց ինքզինք: 6 Քահանայապետներն
ալ առնելով արծաթը՝ ըսին. «Արտօնուած
չէ դնել ատիկա կորքանին մէջ», քանի որ
արիւնի զին է»: 7 Եւ խորհրդակցեցան, ու
գնեցին անով բրուտին արտը՝ օտարականներու
գերեզմանատուն ըլլալու համար: 8 Ուստի
այդ արտը կոչուեցաւ «Արիւնի արտ» մինչեւ
այսօր: 9 Այն ատեն իրագործուեցաւ Երեմիա
մարգարէին միջոցով ըսուած խօսքը. «Եւ
առին երեսուն կտոր արծաթը, զինը անոր՝
որ գնահատուած էր, որ Իսրայէլի որդիներէն

ոմանք գնահատեցին, 10 ու տուին զայն բրուտին արտին, ինչպես Տէրը հրամայեց ինծի»: 11 Յիսուս կայնեցաւ կառավարիչին առջեւ: Կառավարիչը հարցուց անոր. «Դ՞ուք ես Յրեաներուն թագաւորը»: Յիսուս ըսաւ անոր. «Դ՞ուք կ'ըսես»: 12 Բայց ոչինչ պատասխանեց՝ երբ կ'ամբաստանուէր քահանայապետներէն ու երէցներէն: 13 Այն ատեն Պիղատոս ըսաւ անոր. «Չե՞ս լսեր, որքան կը վկայեն քեզի դէմ»: 14 Բայց չպատասխանեց անոր. ոչ մէկ խօսք ըսաւ, այնպէս որ կառավարիչը մեծապէս զարմացաւ: 15 Տօնին ատենը կառավարիչը սովորութիւն ունէր բանտարկեալ մը արձակել բազմութեան, ո՞վ որ ուզէին: 16 Այն ատեն ունէին երեւելի բանտարկեալ մը՝ Բարաբբա կոչուած: 17 Ուրեմն երբ հաւաքուեցան՝ Պիղատոս ըսաւ անոնց. «Ո՞վ կ'ուզէք որ արձակեմ ձեզի. Բարաբբան, թէ Յիսուսը՝ որ Քրիստոս կը կոչուի»: 18 Քանի որ գիտէր թէ նախանձի համար մատնած էին զայն: 19 Երբ ինք բազմած էր դատարանը, իր կինը մէկը դրկեց իրեն եւ ըսաւ. «Դուք գործ մի ունենար այդ արդարին հետ, որովհետեւ այսօր շատ չարչարուեցայ երագիս մէջ՝ անոր պատճառով»: 20 Բայց քահանայապետներն ու երէցները համոզեցին բազմութիւնը, որ Բարաբբան խնդրեն եւ Յիսուսը կորսնցնեն: 21 Կառավարիչը ըսաւ անոնց. «Այս երկուքէն ո՞վ կ'ուզէք՝ որ արձակեմ ձեզի»: 22 Անոնք ըսին. «Բարաբբան»: Պիղատոս ըսաւ անոնց. «Հապա ինչ

ընեմ Յիսուսը՝ որ Քրիստոս կը կոչուի»։ 23 Բոլորն ալ ըսին անոր. «Թող խաչուի»։ Իսկ կառավարիչը ըսաւ. «Բայց ինչ չարիք ըրած է»։ Անոնք ալ աւելի կ'աղաղակէին. «Թող խաչուի»։ 24 Պիղատոս՝ տեսնելով թէ անօգուտ է, այլ մանաւանդ աղմուկ կը բարձրանայ՝, ջուր առաւ, ձեռքերը լուաց բազմութեան առջեւ եւ ըսաւ. «Ես անպարտ եմ այդ արդարին արիւնէն. դո՛ւք անդրադարձէք»։ 25 Ամբողջ ժողովուրդը պատասխանեց. «Ատոր արիւնը թող ըլլայ մեր վրայ ու մեր զաւակներուն վրայ»։ 26 Այն ատեն Բարաբբան արձակեց անոնց, եւ խարազանելով Յիսուսը՝ յանձնեց անոնց որպէսզի խաչուէր։ 27 Այն ատեն՝ կառավարիչին զինուորները առին Յիսուսը պալատէն ներս, ու զինուորներուն ամբողջ գունդը հաւաքեցին անոր շուրջ։ 28 Մերկացնելով զայն՝ հագցուցին անոր որդան կարմիր վերարկու մը, 29 եւ հիւսելով փուշէ պսակ մը՝ դրին անոր գլուխը, ու եղէզ մը՝ անոր աջ ձեռքը. եւ ծնրադրելով անոր առջեւ՝ կը ծաղրէին զայն ու կ'ըսէին. «Ողջոյն, Հրեաներո՛ւ թագաւոր»։ 30 Եւ թքնելով անոր վրայ՝ կ'առնէին եղէզը ու կը զարնէին անոր գլուխին։ 31 Երբ ծաղրեցին զայն, հանեցին վրայէն վերարկուն, հագցուցին անոր իր հանդերձները, ու տարին զայն՝ որպէսզի խաչեն։ 32 Դուրս ելլելով՝ գտան կիւրենացի մարդ մը՝ Սիմոն անունով, եւ ստիպեցին զայն որ վերցնէ անոր խաչը։ 33 Երբ եկան տեղ մը՝ Գողգոթա կոչուած, որ կը նշանակէ՝ Գանկի տեղ, 34 տուին անոր լեղիով խառնուած քացախ՝ որպէսզի

խմէ: Երբ համտեսեց՝ չուզեց խմել: 35 Ապա խաչեցին զայն, ու վիճակ ձգելով՝ բաժնեցին անոր հանդերձները. (որպէսզի իրագործուի մարգարէին միջոցով խօսուածը. «Իմ հանդերձներս բաժնեցին իրենց մէջ, եւ իմ պատմունճանիս վրայ վիճակ ձգեցին»:) 36 Ու նստած՝ կը պահէին զայն. 37 եւ անոր գլուխին վրայ դրին իր ամբաստանագիրը. «Այս է Յիսուսը, Յրեաներուն թագաւորը»: 38 Այն ատեն երկու ակազակներ խաչուեցան անոր հետ, մէկը՝ աջ կողմը, միւսը՝ ձախ կողմը: 39 Անոնք որ կ'անցնէին՝ կը հայհոյէին անոր, իրենց գլուխը կը շարժէին 40 ու կ'ըսէին. «Դռն, որ կը քակէիր տաճարը եւ կը կառուցանէիր երեք օրուան մէջ, փրկէ դուն քեզ: Եթէ Աստուծոյ Որդին ես, իջիր այդ խաչէն»: 41 Նմանապէս քահանայապետներն ալ՝ դպիրներուն ու երէցներուն հետ ծաղրելով կ'ըսէին. 42 «Ուրիշները փրկեց, ինքզինք չի կրնար փրկել: Եթէ Իսրայէլի թագաւոր է, հիմա թող իջնէ խաչէն, եւ հաւատանք իրեն: 43 Աստուծոյ վստահած էր. հիմա թող ազատէ զինք՝ եթէ կ'ուզէ զինք, որովհետեւ ըսաւ. “Ես Աստուծոյ Որդին եմ”»: 44 Իրեն հետ խաչուած ակազակներն ալ նոյնպէս կը նախատէին զայն: 45 Վեցերորդ ժամէն՝ մինչեւ իններորդ ժամը՝ խաւար եղաւ ամբողջ երկրին վրայ: 46 Ժամը իննի ատենները Յիսուս բարձրաձայն աղաղակեց. «Էլի, Էլի, լամա սաբաթթանի», որ ըսել է. «Իմ Աստուածս, իմ Աստուածս, ինչո՞ւ քեցիր զիս»: 47 Յոն կայնողներէն ոմանք՝ երբ լսեցին՝ ըսին. «Ասիկա Եղիան կը

կանչէ»: 48 Իսկոյն անոնցմէ մէկը վազեց, առաւ
սպունգ մը, լեցուց քացախով, եւ անցընելով եղէգի
մը՝ տուաւ անոր որ խմէ: 49 Միւսները ըսին. «Թող,
տեսնենք թէ Եղիա պիտի գայ՝ փրկելու զայն»:
50 Յիսուս դարձեալ բարձրաձայն աղաղակեց
ու հոգին աւանդեց: 51 Եւ ահա՛ տաճարին
վարագոյրը երկուքի պատռեցաւ՝ վերէն վար,
երկիրը շարժեցաւ, ժայռերը ճեղքուեցան, 52
գերեզմանները բացուեցան, ու շատ մը սուրբ
ննջեցեալներու մարմիններ յարութիւն առին. 53
եւ գերեզմաններէն ելան անոր յարութենէն ետք,
մտան սուրբ քաղաքը ու երեւցան շատերու:
54 Բայց հարիւրապետը եւ անոր հետ Յիսուսը
պահողները, երբ տեսան երկրաշարժն ու
պատահածները՝ չափազանց վախցան, եւ ըսին.
«Ճշմարտապէս ասիկա Աստուծոյ Որդին էր»:
55 Հոն շատ կիներ կային, որոնք հեռուէն կը
նայէին. անոնք Յիսուսի հետեւէր էին Գալիլեայէն՝
իրեն սպասարկելու: 56 Անոնց մէջ էին Մարիամ
Մագդաղենացին, Յակոբոսի ու Յովսէփի մայրը՝
Մարիամ, եւ Չեբեդէոսի որդիներուն մայրը: 57
Երբ իրիկուն եղաւ՝ հարուստ մարդ մը եկաւ
Արիմաթեայէն, որուն անունը Յովսէփի էր, եւ
ինք ալ Յիսուսի աշակերտ էր: 58 Ան՝ երթալով
Պիղատոսի քով՝ խնդրեց Յիսուսի մարմինը.
այն ատեն Պիղատոս հրամայեց՝ որ մարմինը
տրուի: 59 Յովսէփի առաւ մարմինը, փաթեց
մաքուր կտաւով, 60 ու դրաւ իր նոր գերեզմանին
մէջ՝ որ փորած էր ժայռի մէջ. եւ մեծ քար մը

գլորելով գերեզմանին դուռը՝ գնաց: **61** Մարիամ Մագդաղենացին ու միևս Մարիամը հոն էին՝ գերեզմանին դիմաց նստած: **62** Հետեւեալ օրը, որ Ուրբաթէն ետք էր, քահանայապետներն ու Փարիսեցիները հաւաքուեցան Պիղատոսի քով, **63** եւ ըսին. «Տէր, կը յիշենք թէ այդ մոլորեցուցիչը, մինչ տակաւին ողջ էր, կ'ըսէր. “Յարութիւն պիտի առնեմ երեք օրէն”»: **64** Ուրեմն հրամայէ, որ գերեզմանը ապահովուի՝ մինչեւ երրորդ օրը. որպէսզի իր աշակերտները չգան գիշերուան մէջ, չգողնան զայն եւ չըսեն ժողովուրդին. “Մեռելներէն յարութիւն առաւ”, ու վերջին մոլորութիւնը աւելի գէշ ըլլայ քան առաջինը»: **65** Պիղատոս ըսաւ անոնց. «Դուք պահակազօրք ունիք. գացէք, ապահովեցէք՝ ինչպէս որ կ'ուզէք»: **66** Անոնք ալ գացին եւ ապահովեցին գերեզմանը՝ քարը կնքելով ու պահակազօրքով:

28 Շաբաթ գիշերը, երբ Մէկշաբթին կը լուսնար, Մարիամ Մագդաղենացին ու միևս Մարիամը եկան՝ տեսնելու գերեզմանը: **2** Եւ ահա՛ հզօր երկրաշարժ մը եղաւ, որովհետեւ Տէրոջ հրեշտակը երկինքէն իջնելով՝ եկաւ, դռնէն մէկդի գլորեց քարը ու նստաւ անոր վրայ: **3** Անոր տեսքը փայլակի պէս էր, եւ անոր հագուստը՝ ձիւնի պէս ճերմակ: **4** Անոր վախէն՝ պահակները ցնցուեցան ու մեռելի պէս եղան: **5** Հրեշտակը ըսաւ կիներուն. «Դուք մի՛ վախնաք, քանի որ գիտեմ թէ կը փնտռէք Յիսուսը՝ որ խաչուեցաւ: **6** Ան հոս չէ, որովհետեւ յարութիւն առաւ (ինչպէս

ըսած էր): Եկէ՛ք, տեսէ՛ք այն տեղը՝ ուր Տէրը
 դրուած էր: 7 Յետոյ շուտով գացէ՛ք, ըսէ՛ք անոր
 աշակերտներուն. «Ան մեռելներէն յարութիւն
 առաւ, ու ձեր առջեւէն կ'երթայ Գալիլեա. հոն
 պիտի տեսնէք զայն»: Ահա ըսի ձեզի»: 8 Անոնք
 ալ շուտով դուրս ելան գերեզմանէն, վախով եւ
 մեծ ուրախութեամբ, ու վազեցին պատմելու
 աշակերտներուն: 9 Երբ կ'երթային՝ պատմելու
 անոր աշակերտներուն, Յիսուս դիմաւորեց
 զանոնք եւ ըսաւ. «Ողջոյն»: Անոնք ալ մօտենալով՝
 բռնեցին անոր ոտքերը ու երկրպագեցին անոր: 10
 Այն ատեն Յիսուս ըսաւ անոնց. «Մի՛ վախնաք,
 գացէ՛ք՝ լրի տուէ՛ք իմ եղբայրներուս որ երթան
 Գալիլեա: Զոն պիտի տեսնեն զիս»: 11 Երբ
 անոնք կ'երթային, պահակազօրքէն ոմանք գացին
 քաղաքը եւ պատմեցին քահանայապետներուն
 բոլոր պատահածները: 12 Անոնք ալ՝ երեցներուն
 հետ հաւաքուելով ու խորհրդակցելով՝ շատ դրամ
 տուին զինուորներուն, 13 եւ ըսին. «Սա՛ ըսէ՛ք. “Անոր
 աշակերտները եկան գիշերուան մէջ ու գողցան
 զայն, երբ մենք կը քնանայինք”»: 14 Եթէ այդ բանը
 հասնի կառավարիչին ականջը, մենք կը համոզենք
 զինք եւ ապահով կ'ընենք ձեզ»: 15 Անոնք ալ
 առին դրամը, ըրին ինչպէս որ սորվեցուցած էին
 իրենց, եւ այս գրոյցը մինչեւ այսօր տարածուեցաւ
 Զրեաներուն մէջ: 16 Իսկ տասնմէկ աշակերտները
 գացին Գալիլեա, այն լեռը՝ որ Յիսուս որոշած էր:
 17 Երբ տեսան զայն՝ երկրպագեցին անոր. բայց
 ոմանք կասկածեցան: 18 Իսկ Յիսուս մօտեցաւ

եւ խօսեցաւ անոնց՝ ըսելով. «Ամէն իշխանութիւն
ինծի տրուեցաւ՝ երկինքի մէջ ու երկրի վրայ: 19
Ուրեմն գացէք, աշակերտեցէք բոլոր ազգերը,
մկրտեցէք զանոնք Զօր, Որդիին եւ Սուրբ Զոգիին
անունով: 20 Սորվեցուցէք անոնց պահել ամէն ինչ
որ պատուիրեցի ձեզի: Եւ ահա ամէն օր ես ձեզի
հետ եմ՝ մինչեւ աշխարհի վախճանը»: Ամէն: (aiōn
g165)

ՄԱՐԿՈՍ

1 Աստուծոյ Որդիին՝ Յիսուս Քրիստոսի անետարանին սկիզբը: **2** Ինչպէս Մարգարէներուն մէջ գրուած է. «Ահա՛ ես կը դրկեմ իմ պատգամաւորս քու առջեւէդ, ան պիտի պատրաստէ ճամբադ՝ քու առջեւդ»:

3 «Անապատին մէջ գոչողին ձայնը. “Պատրաստեցէ՛ք Տէրոջ ճամբան, շտկեցէ՛ք անոր շաւիղները”»: **4** Յովհաննէս կը մկրտէր անապատին մէջ եւ կը քարոզէր ապաշխարութեան մկրտութիւնը՝ մեղքերու ներումին համար: **5** Ամբողջ Հրէաստանի երկիրը ու բոլոր Երուսաղեմացիները կ'երթային անոր: Բոլորը կը մկրտուէին անկէ Յորդանան գետին մէջ՝ իրենց մեղքերը խոստովանելով: **6** Յովհաննէս հագած էր ուղտի մազէ հագուստ, եւ իր մէջքը կապած էր կաշիէ գօտի. իր կերակուրը մարախ ու վայրի մեղր էր: **7** Ան կը քարոզէր ու կ'ըսէր. «Ինձմէ հզօրը կու գայ իմ ետեւէս: Ես արժանի չեմ ծռելու եւ անոր կօշիկներուն կապերը քակելու: **8** Արդարեւ ես ջուրով մկրտեցի ձեզ, բայց ան Սուրբ Հոգիով պիտի մկրտէ ձեզ»:

9 Այդ օրերը Յիսուս Գալիլեայի Նազարէթէն եկաւ, ու Յովհաննէսէ մկրտուեցաւ Յորդանանի մէջ: **10** Իսկոյն ջուրէն դուրս ելլելով՝ տեսաւ երկինքը բացուած, եւ Հոգին՝ որ աղաւնիի պէս կ'իջնէր իր վրայ. **11** ու ձայն մը եկաւ երկինքէն՝ որ կ'ըսէր. «Դուն ես իմ սիրելի Որդիս՝ որուն հաճեցայ»:

12 Իսկոյն Հոգին անապատը մղեց

զայն: **13** Քառասուն օր հոն էր՝ անապատին մէջ՝ Սատանայէն փորձուած. զազաններու հետ էր, եւ հրեշտակները կը սպասարկէին իրեն: **14** Յովհաննէսի մատնուելէն ետք Յիսուս՝ Գալիլեա գալով՝ Աստուծոյ արքայութեան աւետարանը կը քարոզէր **15** ու կ'ըսէր. «Ժամանակը լրացած է, եւ Աստուծոյ թագաւորութիւնը մօտեցած է. ապաշխարեցէք, ու հաւատացէք աւետարանին»: **16** Երբ Գալիլեայի ծովուն եզերքը կը քալէր, տեսաւ Սիմոնը եւ Սիմոնի եղբայրը՝ Անդրէասը, ծովը ուռկան նետած, որովհետեւ ձկնորս էին: **17** Յիսուս ըսաւ անոնց. «Եկէք իմ ետեւէս, ու մարդոց որսորդ պիտի ընեմ ձեզ»: **18** Անոնք ալ իսկոյն թողուցին իրենց ուռկանները եւ հետեւեցան անոր: **19** Անկէ քիչ մը յառաջ երթալով՝ տեսաւ Չեբեդեան Յակոբոսն ու անոր եղբայրը՝ Յովհաննէսը, որոնք նաւուն մէջ կը կարկտնէին իրենց ուռկանները: **20** Իսկոյն կանչեց զանոնք. անոնք ալ զացին անոր ետեւէն, նաւուն մէջ ձգելով իրենց հայրը՝ Չեբեդէոսը վարձկաններուն հետ: **21** Մտան Կափառնայում, եւ իսկոյն Շաբաթ օրը ժողովարանը մտնելով՝ կը սորվեցնէր: **22** Անոնք կ'ապշէին անոր ուսուցումին վրայ, որովհետեւ անոնց կը սորվեցնէր իշխանութիւն ունեցողի մը պէս, ոչ թէ դպիրներուն պէս: **23** Անոնց ժողովարանին մէջ մարդ մը կար՝ անմաքուր ոգիով: Ան աղաղակեց. **24** «Թող մեզ. դուն ինչ ունիս մեզի հետ, Յիսուս Նազովրեցի. միթէ մեզ կորսնցնելով եկար: Գիտեմ թէ ով ես՝ Աստուծոյ

Սուրբը»: 25 Յիսուս զայն սաստեց՝ ըսելով.
 «Պապանձ՛ն ու ելի՛ր ատկէ»: 26 Անմաքուր ոգին
 սաստիկ ցնցեց զայն, բարձրաձայն աղաղակեց
 եւ ելաւ անկէ: 27 Բոլորը այլայլեցան, այնքան՝
 որ կը հարցնէին իրարու. «Այս ինչ է. ինչ նոր
 ուսուցում է ասիկա, որովհետեւ անմաքուր
 ոգիներուն ալ կը հրամայէ իշխանութեամբ,
 ու կը հնազանդին իրեն»: 28 Եւ իսկոյն իր
 համբաւը տարածուեցաւ Գալիլեայի ամբողջ
 շրջակայքը: 29 Իսկոյն ժողովարանէն ելլելով՝
 Յակոբոսի ու Յովհաննէսի հետ մտաւ Սիմոնի եւ
 Անդրէասի տունը: 30 Սիմոնի գոբանչը պառկած
 էր՝ տենդով հիւանդացած. իսկոյն անոր մասին
 ըսին իրեն: 31 Յիսուս մօտեցաւ, բռնեց անոր
 ձեռքէն ու ոտքի հանեց զայն. իսկոյն տենդը
 թողուց զայն, եւ կը սպասարկէր անոնց: 32 Երբ
 իրիկուն եղաւ, արեւին մայր մտած ատենը՝ բոլոր
 ախտաւորներն ու դիւահարները իրեն կը բերէին:
 33 Ամբողջ քաղաքը դուռը հաւաքուած էր: 34
 Շատ հիւանդներ՝ զանազան ախտերէ բուժեց,
 եւ շատ դեւեր դուրս հանեց: Դեւերուն թոյլ չէր
 տար որ խօսին, որովհետեւ կը ճանչնային զինք:
 35 Առտուն՝ արշալոյսէն շատ առաջ՝ կանգնեցաւ,
 դուրս ելաւ, գնաց ամայի տեղ մը, ու հոն աղօթեց:
 36 Սիմոն եւ իրեն հետ եղողները հետապնդեցին
 զայն: 37 Երբ գտան զայն՝ ըսին անոր. «Բոլորը կը
 փնտռեն քեզ»: 38 Ըսաւ անոնց. «Եկէ՛ք երթանք
 մերձակայ գիւղաքաղաքները, որպէսզի հոն ալ
 քարոզեմ, որովհետեւ եկած եմ այս նպատակով»:

39 Եւ անոնց ժողովարաններուն մէջ կը քարոզէր՝
ամբողջ Գալիլեայի մէջ, ու դեւեր կը հանէր: 40
Բորոտ մըն ալ եկաւ. կ'աղաչէր, կը ծնրադրէր ու
կ'ըսէր անոր. «Եթէ ուզես՝ կրնաս զիս մաքրել»:
41 Յիսուս գթալով՝ երկարեց ձեռքը, դպաւ անոր
եւ ըսաւ. «Կ'ուզեմ, մաքրուէ՛»: 42 Երբ ասիկա
ըսաւ անոր, իսկոյն բորոտութիւնը գնաց անկէ, ու
մաքրուեցաւ: 43 Իսկ ինք ազդարարեց անոր եւ
իսկոյն ուղարկեց՝ ըսելով անոր. 44 «Չգուշացիր որ
ոչ մէկուն բան մը ըսես. հապա գնա՛, ցոյց տուր
քեզ քահանային, ու մատուցանէ՛ քու մաքրուելուդ
ընծան՝ որ Մովսէս պատուիրեց, իբր վկայութիւն
անոնց»: 45 Բայց ան դուրս ելլելով՝ սկսաւ շատ
հրապարակել եւ բանը տարածել, այնպէս որ ալ
ինք չէր կրնար բացայայտօրէն քաղաք մը մտնել,
հապա դուրսը՝ ամայի տեղեր էր. սակայն ամէն
կողմէ կու գային իրեն:

2 Դարձեալ Կափառնայում մտաւ քանի մը օր
ետք, եւ լսուեցաւ թէ ան տան մը մէջ է: 2 Իսկոյն
շատ մարդիկ հաւաքուեցան, այնքան՝ որ ալ տեղ
չկար, ոչ իսկ դրան շուրջ, ու կը քարոզէր անոնց
Աստուծոյ խօսքը: 3 Մարդիկ եկան իրեն՝ բերելով
չորս հոգիով փոխադրուած անդամալոյծ մը. 4 բայց
տեսնելով որ բազմութենէն չէին կրնար մօտենալ
անոր, քակեցին տան տանիքը՝ ուր կը գտնուէր
Յիսուս, ու ծակ մը բանալով՝ վար իջեցուցին
մահիճը, որուն վրայ պառկած էր անդամալոյծը:
5 Յիսուս տեսնելով անոնց հաւատքը՝ ըսաւ
անդամալոյծին. «Որդեանկ, մեղքերդ ներուած են

քեզի»։ 6 Քանի մը դպիրներ, որ հոն նստած էին, իրենց սիրտերուն մէջ կը մտածէին. 7 «Ինչո՞ւ այս մարդը կ'ըսէ այսպիսի հայհոյութիւններ. ո՞վ կրնայ մեղքերը ներել՝ բացի Աստուծո՞ւմէ»։ 8 Յիսուս իսկոյն ըմբռնելով իր հոգիին մէջ՝ որ անոնք այդպէս կը մտածեն իրենք իրենց մէջ, ըսաւ անոնց. «Ինչո՞ւ այդպէս կը մտածէք ձեր սիրտերուն մէջ։ 9 Ո՞րը աւելի դիւրին է, “մեղքերդ ներուած են քեզի” ըսելը անդամալոյծին, թէ՛ “ոտքի ելիր, ան մահիճդ ու բալէ” ըսելը։ 10 Բայց որպէսզի գիտնաք թէ մարդու Որդին իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերը ներելու, (ըսաւ անդամալոյծին.) 11 “Քեզի կ'ըսեմ. “Ոտքի ելիր, ան մահիճդ ու գնա՛ տունդ”»։ 12 Ան ալ իսկոյն ոտքի ելաւ, եւ առնելով իր մահիճը՝ դուրս ելաւ բոլորին առջեւէն, այնպէս որ բոլորը զմայլեցան, փառաբանեցին Աստուած ու ըսին. «Այսպիսի բան ամենեւին տեսած չէինք»։ 13 Դարձեալ գնաց ծովեզերք։ Ամբողջ բազմութիւնը իրեն կու գար, եւ անոնց կը սորվեցներ։ 14 Երբ կ'անցներ՝ տեսաւ Դեւի Ալփեռսեանը, որ մաքս ընդունելու տեղը նստած էր, եւ ըսաւ անոր. «Յետեւէ՛ ինծի»։ Ան ալ կանգնեցաւ ու հետեւեցաւ իրեն։ 15 Երբ սեղան նստած՝ էր անոր տան մէջ, շատ մաքսաւորներ ու մեղաւորներ ալ սեղան նստած էին Յիսուսի եւ անոր աշակերտներուն հետ. որովհետեւ շատեր կը հետեւէին անոր։ 16 Երբ դպիրներն ու Փարիսեցիները տեսան թէ ան կ'ուտէ մաքսաւորներու եւ մեղաւորներու հետ, ըսին անոր աշակերտներուն. «Ինչո՞ւ կ'ուտէ

ու կը խմէ մաքսաւորներու եւ մեղաւորներու
 հետ»: 17 Երբ Յիսուս լսեց՝ ըսաւ անոնց.
 «Ո՛հ թէ առողջներուն բժիշկ պէտք է, հապա՛
 հիւանդներուն: Ես եկայ ո՛չ թէ արդարները
 կանչելու, հապա՛ մեղաւորները»: 18 Յովհաննէսի
 ու Փարիսեցիներուն աշակերտները ծոմ կը
 պահէին: Ուստի եկան եւ ըսին անոր. «Ինչո՞ւ
 Յովհաննէսի ու Փարիսեցիներուն աշակերտները
 ծոմ կը պահեն, բայց քու աշակերտներդ ծոմ չեն
 պահեր»: 19 Յիսուս ըսաւ անոնց. «Միթէ կարելի՞
 է՝ որ հարսնեւորները ծոմ պահեն, մինչ փեսան
 իրենց հետ է: Այնքան ատեն որ փեսան իրենց հետ
 է՝ կարելի չէ որ ծոմ պահեն: 20 Բայց օրերը պիտի
 գան՝ երբ փեսան պիտի վերցուի իրենցմէ. ապա
 այդ օրը ծոմ պիտի պահեն: 21 Ո՛հ մէկը կը կարէ նոր
 լաթի կտոր մը հին հանդերձի վրայ. որովհետեւ
 այդ նորը՝ որ անոր լրութեան համար դրուած է, կը
 քաշէ հինը, ու պատռուածքը աւելի գեշ կ'ըլլայ: 22
 Ո՛հ ալ մէկը կը դնէ նոր գինին հին տիկերու մէջ.
 քանի որ նոր գինին կը պատռէ տիկերը, գինին կը
 թափի, եւ տիկերը կը կորսուին: Հապա նոր գինին
 դրուելու է նոր տիկերու մէջ»: 23 Շաբաթ օր մը ինք
 կ'անցնէր արտերու մէջէն, եւ իր աշակերտները՝
 մինչ կ'երթային՝ սկսան ցորենի հասկեր փրցնել:
 24 Փարիսեցիները ըսին իրեն. «Նայէ՛, ինչ կ'ընեն
 Շաբաթ օրը, որ արտօնուած չէ»: 25 Ինք ալ
 ըսաւ անոնց. «Բնաւ չէ՞ք կարդացեր Դաւիթի
 ըրածը՝ երբ պէտք ունեցաւ եւ անօթեցաւ, ինք ու
 իրեն հետ եղողները: 26 Ինչպէս մտաւ Աստուծոյ

տունը՝ Աբիաթար քահանայապետին օրով, եւ կերաւ առաջադրութեան հացերը, - որ ոչ մէկուն արտօնուած էր ուտել՝ բացի քահանաներէն, - ու տուաւ իրեն հետ եղողներուն»: 27 Եւ աւելցուց. «Շաբաթը եղաւ մարդուն համար, ոչ թէ մարդը՝ Շաբաթին համար: 28 Յետեւաբար մարդու Որդին տէրն է նաեւ Շաբաթին»:

3 Դարձեալ ժողովարանը մտաւ, ուր մարդ մը կար՝ որուն ձեռքը չորցած էր: 2 Անոնք կը հսկէին անոր վրայ՝ տեսնելու թէ արդեօք պիտի բուժէ՞ զայն Շաբաթ օրը, որպէսզի ամբաստանեն զինք: 3 Ինք ալ ըսաւ ձեռքը չորցած մարդուն. «Ելի՛ր, կայն՛ մէջտեղը»: 4 Յետոյ ըսաւ անոնց. «Շաբաթ օրը բարիք ընել արտօնուած է՝ թէ չարիք ընել, անձ մը փրկել՝ թէ սպաննել»: Անոնք լուռ կեցան: 5 Յիսուս բարկութեամբ շուրջը նայեցաւ՝ անոնց վրայ, տրտմելով անոնց սիրտին կուրութեան համար, ապա ըսաւ այդ մարդուն. «Երկար՛ ձեռքդ»: Ան ալ երկարեց, եւ անոր ձեռքը առողջացաւ: 6 Փարիսեցիները՝ իսկոյն դուրս ելլելով Յերովդեսեաններուն հետ՝ խորհրդակցեցան անոր դէմ, թէ ինչպէս կորսնցնեն զայն: 7 Յիսուս իր աշակերտներուն հետ մեկնեցաւ ծովեզերքը, ու մեծ բազմութիւն մը հետեւեցաւ անոր՝ Գալիլեայէն եւ Յրեաստանէն, 8 Երուսաղէմէն, Եդովմէն ու Յորդանանի միւս կողմէն. նաեւ անոնք՝ որ Տիւրոսի եւ Սիդոնի շրջակայ տեղերէն էին, մեծ բազմութեամբ, երբ լսեցին ինչ որ կ'ընէր՝ եկան իրեն: 9 Յիսուս ըսաւ

իր աշակերտներուն որ նաւակ մը տրամադրուի
 իրեն՝ բազմութեան պատճառով, որպէսզի
 չսեղմեն զինք: **10** Որովհետեւ բուժեց շատերը,
 այնպէս որ տանջանք ունեցողներ կը խռնուէին
 շուրջը՝ որպէսզի դպչին իրեն: **11** Երբ անմաքուր
 ոգիները տեսնէին զինք, կ'իյնային իր առջեւ ու
 կ'աղաղակէին. **12** «Դո՛ւն ես Աստուծոյ Որդի՛ն»:
 Իսկ ինք սաստիկ կը հրահանգէր անոնց՝ որ
 չյայտնեն զինք: **13** Ապա լեռը ելաւ եւ իրեն կանչեց
 իր ուզածները, ու բովը գացին: **14** Եւ ընտրեց
 տասներկու հոգի, որպէսզի ըլլան իրեն հետ, ու
 դրկէ զանոնք՝ քարոզելու, **15** նաեւ իշխանութիւն
 ունենալու՝ ախտերը բուժելու եւ դեւերը դուրս
 հանելու համար.- **16** Սիմոնը՝ որ Պետրոս
 անուանեց, **17** Չեբեդեան Յակոբոսն ու Յակոբոսի
 եղբայրը՝ Յովհաննէսը, որոնք Բաներեգէս
 անուանեց, որ ըսել է. «Որոտումի որդիներ»,
18 Անդրէասը, Փիլիպպոսը, Բարթողոմէոսը,
 Մատթէոսը, Թովմասը, Ալփէոսեան Յակոբոսը,
 Թադէոսը, Սիմոն Կանանացին **19** եւ Յուդա
 Իսկարիովտացին, որ մատնեց զայն: **20**
 Տուն գացին, ու դարձեալ բազմութիւնը
 համախմբուեցաւ, այնպէս որ չկրցան նոյնիսկ
 հաց ուտել: **21** Երբ իրենները լսեցին՝ գացին որ
 բռնեն զինք, քանի որ կ'ըսէին. «Յնորա՛ծ է»: **22**
 Երուսաղէմէն իջած դպիրներն ալ կ'ըսէին. «Անոր
 մէջ Բեեղզեբուղ կայ, եւ դեւերուն իշխանով կը
 հանէ դեւերը»: **23** Յիսուս կանչելով զանոնք՝
 առականերով խօսեցաւ անոնց. «Սատանան

Խնչպէս կրնայ դուրս հանել Սատանան: **24** Եթէ
 թագաւորութիւն մը բաժնուի ինքնիր դէմ՝ այդ
 թագաւորութիւնը չի կրնար կենալ: **25** Եթէ տուն
 մը բաժնուի ինքնիր դէմ, այդ տունը չի կրնար
 կենալ: **26** Եթէ Սատանան կանգնած ու բաժնուած
 է ինքնիր դէմ՝ ան չի կրնար կենալ, հապա
 անոր վախճանը հասած է: **27** Ո՛չ մէկը կրնայ
 մտնել ուժեղ մարդու մը տունը եւ յափշտակել
 անոր կարասիները, եթէ նախ չկապէ ուժեղ
 մարդը, եւ այն ատեն կողոպտէ անոր տունը: **28**
 Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Մարդոց
 որդիներուն պիտի ներուի ամէն մեղք, նաեւ
 հայհոյութիւնները՝ որքան ալ հայհոյեն: **29** Բայց
 ով որ հայհոյէ Սուրբ Հոգիին դէմ, յաւիտեան
 ներում պիտի չունենայ, հապա արժանի պիտի
 ըլլայ յաւիտեանական դատապարտութեան”»: (aiōn
 g165, aiōnios g166) **30** Որովհետեւ կ’ըսէին. «Անմաքուր
 ոգի կայ անոր մէջ»: **31** Յետոյ անոր մայրն ու
 եղբայրները եկան, եւ դուրսը կայնելով՝ մարդ
 դրկեցին ու կանչեցին զայն. **32** բազմութիւնն ալ
 նստած էր անոր շուրջը: Երբ ըսին իրեն. «Ահա քու
 մայրդ ու եղբայրներդ կը փնտռեն քեզ դուրսը», **33**
 ան ալ պատասխանեց անոնց. «Ո՛վ է իմ մայրս,
 կամ որոնք են եղբայրներս»: **34** Եւ նայելով իր
 շուրջը նստողներուն՝ ըսաւ. «Ահա մայրս ու
 եղբայրներս. **35** որովհետեւ ով որ կը գործադրէ
 Աստուծոյ կամքը, անիկա է իմ եղբայրս, քոյրս եւ
 մայրս»:

4 Դարձեալ սկսաւ սորվեցնել ծովեզերքը, եւ մեծ
 բազմութիւն մը անոր քով հաւաքուեցաւ, այնպէս
 որ ինք նաւ մտաւ ու նստաւ՝ ծովուն վրայ. իսկ
 ամբողջ բազմութիւնը ցամաքն էր՝ ծովեզերքը: **2**
 Շատ բաներ կը սորվեցնէր անոնց՝ առականերով,
 եւ կ'ըսէր անոնց իր ուսուցումին մէջ. **3** «Լսեցէք,
 ահա սերմնացան մը գնաց սերմ ցանելու: **4** Մինչ
 կը ցանէր, քանի մը սերմեր ինկան ճամբային
 եզերքը, եւ թռչունները եկան ու լափեցին զանոնք:
5 Ուրիշներ ինկան ժայռոտ տեղ մը, ուր շատ
 հող չկար, եւ իսկոյն բուսան՝ հողին խորունկ
 չըլլալուն համար. **6** սակայն տօթակէզ եղան
 երբ արեւը ելաւ, ու չորցան՝ քանի որ արմատ
 չունէին: **7** Ուրիշներ ալ ինկան փուշերու մէջ.
 փուշերը բարձրացան եւ խեղդեցին զանոնք, ու
 պտուղ չտուին: **8** Իսկ ուրիշներ ինկան լաւ հողի
 մէջ, պտուղ տուին՝ բարձրանալով եւ աճելով,
 ու բերին՝ մէկը երեսուն, մէկը՝ վաթսուն, մէկը՝
 հարիւր»: **9** Եւ ըսաւ անոնց. «Ա՛ն որ ականջ ունի
 լսելու՝ թող լսէ»: **10** Երբ առանձին էր, իր շուրջը
 եղողները՝ տասներկուքին հետ հարցուցին իրեն
 այս առակին մասին: **11** Եւ ըսաւ անոնց. «Ձեզի
 տրուած է գիտնալ Աստուծոյ թագաւորութեան
 խորհուրդը, բայց անոնց որ դուրսէն են՝ ամէն ինչ
 առեղծուած կ'ըլլայ. **12** որպէսզի շատ տեսնեն՝
 բայց չըմբռնեն, շատ լսեն՝ բայց չհասկնան, ու
 դարձի չգան եւ իրենց մեղքերը չներուին»: **13**
 Ապա ըսաւ անոնց. «Այս առակը չէ՞ք ըմբռներ.
 ուրեմն ինչպէս պիտի հասկնաք բոլոր առակները:

14 Սերմնացանը՝ խօսքը կը ցանէ: **15** Ճամբային եզերքը եղողները՝ ուր խօսքը կը ցանուի՝ անոնք են, որ երբ կը լսեն՝ իսկոյն Սատանան կու գայ եւ կը վերցնէ անոնց սիրտերուն մէջ ցանուած խօսքը: **16** Նմանապէս՝ ժայռոտ տեղերու վրայ ցանուածները անոնք են, որ երբ կը լսեն խօսքը՝ իսկոյն կ'ընդունին զայն ուրախութեամբ: **17** Բայց իրենց մէջ արմատ չունենալով՝ քիչ ժամանակ կը տոկան. յետոյ, երբ տառապանք կամ հալածանք ըլլայ խօսքին պատճառով, իսկոյն կը գայթակղին: **18** Փուշերու մէջ ցանուածները անոնք են՝ որ խօսքը կը լսեն, **19** բայց այս աշխարհի հոգերը, հարստութեան խաբէութիւնը եւ ուրիշ բաներու ցանկութիւնները ներս մտնելով՝ կը խեղդեն խօսքը, ու ան կ'ըլլայ անպտուղ: (aiðn g165) **20** Իսկ լաւ հողի մէջ ցանուածները անոնք են՝ որ խօսքը կը լսեն, կ'ընդունին եւ պտուղ կ'արտադրեն՝ մէկը երեսուն, մէկը՝ վաթսուն, մէկը՝ հարիւր»: **21** Յետոյ ըսաւ անոնց. «Միթէ ճրագը գրուանին կամ մահիճին տամկ դրուելու համար կու գայ. արդեօք աշտանակին վրայ դրուելու համար չէ: **22** Որովհետեւ չկայ գաղտնիք մը՝ որ բացայայտ պիտի չըլլայ, եւ չէ եղած պահուած բան մը՝ որ երեւան չելլէ: **23** Եթէ մէկը ականջ ունի լսելու՝ թող լսէ»: **24** Ապա ըսաւ անոնց. «Չգուշացէք թէ ինչ կը լսէք. այն չափով որ դուք կը չափէք, նոյն չափով պիտի չափուի ձեզի. ու ձեզի որ կը լսէք՝ պիտի աւելնայ: **25** Որովհետեւ ո՛վ որ ունի՝ անոր պիտի տրուի. իսկ ո՛վ որ չունի՝ ունեցածն ալ

անկէ պիտի առնուի»: 26 Նաեւ կ'ըսէր. «Աստուծոյ թագաւորութիւնը այնպէս է, որպէս թէ մարդ մը հողին մէջ հունտ ցանէ. 27 քնանայ թէ արթնայ, գիշեր ու ցերեկ, հունտը կը ծաղկի եւ կը մեծնայ, ու ինք չի գիտեր թէ ինչպէս: 28 Քանի որ հողը ինքնիրմէ պտուղ կ'արտադրէ. նախ՝ խոտը, յետոյ՝ հասկը, անկէ ետք՝ լեցուն ցորենը հասկին մէջ: 29 Երբ պտուղը հասուննայ՝ իսկոյն մանգաղը կը դրկէ, որովհետեւ հունձքի ատենը հասած է»: 30 Ապա կ'ըսէր. «Աստուծոյ թագաւորութիւնը ինչ բանի նմանցնենք, կամ ինչ առակով բացատրենք զայն: 31 Մանանեխի հատիկին նման է, որ հողին մէջ ցանուած ատենը՝ երկրի վրայ եղած սերմերուն ամենէն պզտիկն է. 32 բայց երբ ցանուի՝ կը բուսնի, բոլոր տունկերէն ալ մեծ կ'ըլլայ ու մեծ ճիւղեր կ'արձակէ, այնպէս որ երկինքի թռչունները կրնան անոր շուքին տակ բնակիլ»: 33 Շատ այսպիսի առակներով կը բարոզէր խօսքը անոնց, այնքան՝ որքան կրնային մտիկ ընել: 34 Առանց առակի չէր խօսեր անոնց, բայց առանձին՝ իր աշակերտներուն կը մեկնէր բոլորը: 35 Նոյն օրը՝ երբ իրիկուն կ'ըլլար, ըսաւ անոնց. «Եկէ՛ք ծովուն միւս եզերքը անցնինք»: 36 Անոնք ալ բազմութիւնը արձակելով՝ առին զինք, քանի նաւուն մէջ էր. ուրիշ նաւակներ ալ կային անոր հետ: 37 Ու հզօր փոթորիկ մը եղաւ եւ ալիքները նաւուն վրայ կը խուժէին, այնպէս որ արդէն կը լեցուէր. 38 իսկ ինք՝ նաւուն ետեւի կողմը՝ բարձի վրայ կը քնանար: Արթնցուցին զինք եւ ըսին իրեն.

«Վարդապետ, հոգ չե՛ս ըներ՝ որ կը կորսուիմք»:

39 Ուստի ելլելով՝ սաստեց հովը եւ ըսաւ ծովուն.

«Դադրէ, լռու կեցիր»: Հովը դադրեցաւ, ու մեծ խաղաղութիւն եղաւ: **40** Ըսաւ անոնց. «Ինչո՞ւ այդպէս երկչոտ էք. ինչպէս կ'ըլլայ՝ որ հաւատք չունիք»: **41** Անոնք չափազանց վախցան, եւ կ'ըսէին իրարու. «Արդեօք ո՞վ է ասիկա, որ նոյնիսկ հովն ու ծովը կը հնազանդին իրեն»:

5 Ծովուն միւս եզերքը եկան՝ Գաղարացիներուն երկիրը: **2** Երբ ինք նաւէն ելաւ, իսկոյն գերեզմաններէն ելած մարդ մը հանդիպեցաւ իրեն, որ անմաքուր ոգի ունէր: **3** Անոր բնական տեղը գերեզմաններուն մէջ էր, ու շղթայով ալ ոչ մէկը կրնար կապել զայն. **4** որովհետեւ յաճախ ոտնակապերով եւ շղթաներով կապուեր էր, բայց շղթաները կոտրտեր ու ոտնակապերը փշրեր էր, եւ ոչ մէկը կրնար նուաճել զայն: **5** Ամեն ատեն, զիշեր ու ցերեկ, գերեզմաններուն եւ լեռներուն մէջ՝ կ'աղաղակեր, ու իր մարմինը կը ճեղքոտեր քարերով: **6** Երբ հեռուէն տեսաւ Յիսուսը, վազեց ու երկրպագեց անոր, **7** եւ բարձրաձայն աղաղակեց. «Դուն ինչ գործ ունիս ինծի հետ, Յիսուս, Ամենաբարձր Աստուծոյ Որդի. Աստուծով կ'երդմնեցնեմ քեզ, մի՞ տանջեր զիս»:

8 (Զանի որ կ'ըսէր անոր. «Անմաքուր ոգի, ելի՛ր այդ մարդէն»:) **9** Հարցուց անոր. «Ի՞նչ է անունդ»: Ան ալ պատասխանեց. «Անունս Լեզեոն է, որովհետեւ բազմաթիւ ենք»: **10** Շատ կ'աղաչէին անոր՝ որ այդ երկրէն դուրս չղրկէ զիրենք: **11** Հոն,

լերան մօտ, խոզերու մեծ երամակ մը կար՝ որ
 կ'արածէր: **12** Բոլոր դէւերը աղաչեցին անոր եւ
 ըսին. «Մեզ խոզերուն որկէ, որպէսզի անոնց մէջ
 մտնենք»: **13** Յիսուս իսկոյն արտօնեց անոնց:
 Երբ անմաքուր ոգիները դուրս ելան ու խոզերուն
 մէջ մտան, երամակը գահավեժ տեղէն ծովը
 վազեց (երկու հազարի չափ կային), եւ ծովուն
 մէջ խեղդուեցան: **14** Խոզարածները փախան,
 ու պատմեցին քաղաքին եւ արտերուն մէջ,
 ու մարդիկ դուրս ելան՝ տեսնելու թէ ինչ էր
 պատահածը: **15** Եկան Յիսուսի քով, տեսան լեզուն
 ունեցող դիւահարը, որ նստած էր՝ հագուած
 եւ սթափած, ու վախցան: **16** Անոնք որ տեսեր
 էին՝ պատմեցին իրենց թէ ինչ պատահեցաւ
 դիւահարին, նաեւ խոզերուն մասին. **17** իրենք ալ
 սկսան աղաչել անոր, որպէսզի իրենց հողամասէն
 երթայ: **18** Երբ ան նաւ մտաւ, դիւահարը կ'աղաչէր
 անոր՝ որ ըլլայ անոր հետ: **19** Բայց Յիսուս
 թոյլ չտուաւ անոր, հապա ըսաւ անոր. «Գնա՛
 տունդ՝ քուկիներուդ քով, ու պատմէ՛ անոնց ամէն
 ինչ որ Տէրը ըրաւ քեզի, եւ ինչպէս ողորմեցաւ
 քեզի»: **20** Ան ալ գնաց, եւ սկսաւ Դեկապոլիսի
 մէջ հրապարակել ամէն ինչ որ Յիսուս ըրաւ
 իրեն. ու բոլորը կը զարմանային: **21** Երբ Յիսուս
 դարձեալ նաւով անցաւ ծովուն միւս եզերքը,
 մեծ բազմութիւն մը հաւաքուեցաւ անոր քով, եւ
 ինք ծովեզերքն էր: **22** Ժողովարանի պետերէն
 մէկը եկաւ, որուն անունը Յայրոս էր, ու երբ
 տեսաւ զայն՝ ինկաւ անոր ոտքը, **23** շատ աղաչեց

անոր եւ ըսաւ. «Աղջիկս մեռնելու մօտ է. եկ՛ր, դիր ձեռքդ անոր վրայ՝ որպէսզի բուժուի, ու պիտի ապրի»: 24 Ան ալ գնաց անոր հետ: Մեծ բազմութիւն մը իրեն կը հետեւէր, եւ կը սեղմէր զինք: 25 Կին մը՝ որ արիւնահոսութիւն ունէր տասներկու տարիէ ի վեր, 26 շատ չարչարանք կրած էր բազմաթիւ բժիշկներէ, եւ իր ամբողջ ունեցածը ծախսած էր բայց բնաւ չէր օգտուած, այլ փոխարէնը վիճակը կը վատթարանար: 27 Երբ լսեց Յիսուսի մասին, ետեւէն եկաւ՝ բազմութեան մէջ, ու դպաւ անոր հանդերձին. 28 քանի որ կ'ըսէր. «Եթէ միայն անոր հանդերձներուն դպչիմ՝ պիտի բժշկուիմ»: 29 Իսկոյն իր արիւնին աղբիւրը ցամբեցաւ, եւ իր մարմինին մէջ գիտցաւ թէ տանջանքէն բժշկուեցաւ: 30 Յիսուս իսկոյն գիտցաւ ինքնիր մէջ թէ զօրութիւն մը ելաւ իրմէ դուրս, դարձաւ բազմութեան ու ըսաւ. «Ո՛վ դպաւ իմ հանդերձներուս»: 31 Իր աշակերտները ըսին իրեն. «Կը տեսնեն թէ բազմութիւնը կը սեղմէ քեզ, եւ կ'ըսեն. “Ո՛վ դպաւ ինձի”»: 32 Իր շուրջը կը նայէր՝ որպէսզի տեսնէ այս բանը ընողը: 33 Կինը վախցաւ ու դողաց, որովհետեւ գիտէր թէ ինչ պատահեցաւ իրեն. եկաւ, ինկաւ անոր առջեւ, եւ պատմեց անոր ամբողջ ճշմարտութիւնը: 34 Յիսուս ըսաւ անոր. «Աղջիկ, հաւատքդ բժշկեց քեզ. գնա՛ խաղաղութեամբ, ու բժշկուա՛ծ եղիր քու տանջանքէդ»: 35 Երբ ինք դեռ կը խօսէր, ժողովարանի պետին տունէն ոմանք եկան եւ ըսին. «Աղջիկդ մեռաւ, ա՛յլ ինչո՞ւ կ'անհանգստացնես

վարդապետը»: **36** Իսկ Յիսուս, երբ լսեց ըսուած խօսքը, իսկոյն ըսաւ ժողովարանի պետին. «Մի վախնար, միայն հաւատա»: **37** Ու ղչ մէկուն թոյլ տուաւ որ իրեն ուղեկցի, բայց միայն Պետրոսի, Յակոբոսի եւ Յակոբոսի եղբօր՝ Յովհաննէսի: **38** Ժողովարանի պետին տունը հասնելով՝ նշմարեց աղմուկը, նաեւ անոնք՝ որ շատ կու լային ու կը հեծեծէին: **39** Ներս մտնելով՝ ըսաւ անոնց. «Ինչո՞ւ իրար անցած էք եւ կու լաք. մանուկը մեռած չէ, հապա կը քնանայ»: **40** Անոնք ալ զինք ծաղրեցին. բայց ինք բոլորը դուրս հանելով՝ իրեն հետ առաւ մանուկին հայրն ու մայրը, եւ իրեն հետ եղողները, ու մտաւ հոն՝ ուր մանուկը պառկած էր: **41** Մանուկին ձեռքէն բռնելով՝ ըսաւ անոր. «Տալիթա, կումի», որ կը թարգմանուի. «Աղջիկ, (քեզի կ'ըսեմ,) ոտքի ելիր»: **42** Իսկոյն աղջիկը կանգնեցաւ եւ քալեց, որովհետեւ տասներկու տարեկան էր. ու տեսողները հիացումէն զմայլեցան: **43** Յիսուս սաստիկ պատուիրեց անոնց՝ որ ղչ մէկը գիտնայ այս բանը, եւ ըսաւ՝ որ ուտելիք տան անոր:

6 Անկէ մեկնելով՝ գնաց իր բնագաւառը, եւ իր աշակերտները հետեւեցան անոր: **2** Երբ Շաբաթօրը հասաւ, սկսաւ ժողովարանին մեջ սորվեցնել: Շատեր լսելով կ'ապշէին ու կ'ըսէին. «Ասիկա ուրկէ՞ ունի այս բաները. այս ր՞նչ իմաստութիւն է՝ իրեն տրուած, որ այսպիսի հրաշքներ կը գործուին իր ձեռքով: **3** Ասիկա հիւսնը չէ, Մարիամի որդին, եւ Յակոբոսի, Յովսէսի, Յուդայի ու Սիմոնի եղբայրը. եւ իր քոյրերը հոս՝ մեր քով չ'են»:

Ուստի անոր պատճառով կը գայթակղէին: 4
 Սակայն Յիսուս ըսաւ անոնց. «Մարգարէ մը
 առանց պատիւի չէ, բացի իր բնագաւառին,
 իր ազգականներուն եւ իր տան մէջ»: 5 Զոն
 չէր կրնար հրաշք գործել. բայց միայն քանի մը
 հիւանդի վրայ ձեռք դրաւ ու բուժեց զանոնք: 6 Եւ
 անոնց անհաւատութեան վրայ կը զարմանար,
 ու շրջակայ գիւղերը երթալով՝ կը սորվեցնէր:
 7 Իրեն կանչելով տասներկուքը՝ երկու-երկու
 դրկեց զանոնք, եւ իշխանութիւն տուաւ անոնց՝
 անմաքուր ոգիներուն վրայ: 8 Պատուիրեց անոնց՝
 որ ոչինչ առնեն ճամբորդութեան համար, բայց
 միայն գաւազան մը. ոչ պարկ, ոչ հաց, ոչ դրամ՝
 գօտիներուն մէջ, 9 հապա հողաթափ հագնին: Ու
 ըսաւ. «Կրկին բաճկոն մի՛ հագնիք», 10 եւ աւելցուց.
 «Ո՛ր տունը որ մտնէք, հոն մնացէք՝ մինչեւ որ անկէ
 մեկնիք: 11 Իսկ անոնք որ չեն ընդունիր ձեզ ու
 մտիկ չեն ըներ ձեզի, երբ անկէ մեկնիք՝ թօթուեցէք
 ձեր ոտքերուն ներքեւի փոշին, իբր վկայութիւն
 անոնց: Եղմարտապէս կը յայտարարեմ ձեզի.
 “Սոդոմացիներուն եւ Գոմորացիներուն աւելի
 դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան այդ
 քաղաքին”»: 12 Անոնք ալ մեկնելով՝ կը քարոզէին,
 որ մարդիկ ապաշխարեն: 13 Շատ դէւեր դուրս
 կը հանէին, շատ հիւանդներ իւղով կ’օծէին ու
 զանոնք կը բուժէին: 14 Երբ Զերովդէս թագաւորը
 լսեց, (քանի որ անոր անունը յայտնի եղաւ,)
 ըսաւ. «Յովհաննէս Մկրտիչ մեռելներէն յարութիւն
 առած է. ուստի հրաշքներ կը գործուին անով»: 15

Ուրիշներ կ'ըսէին. «Եղիան է», ուրիշներ ալ կ'ըսէին.
 «Մարգարէ մըն է, կամ մարգարէներէն մէկուն
 պէս»: 16 Բայց երբ Յերովդէս լսեց՝ ըսաւ. «Ասիկա
 Յովհաննէսն է՝ որ ես գլխատեցի. մեռելներէն
 յարութիւն առած է»: 17 Արդարեւ Յերովդէս՝
 ինք մարդ որկելով բռներ էր Յովհաննէսը, ու
 կապելով բանտը դրեր էր, իր եղբօր՝ Փիլիպպոսի
 կնոջ՝ Յերովդիայի պատճառով, քանի որ անոր
 հետ ամուսնացած էր. 18 որովհետեւ Յովհաննէս
 կ'ըսէր Յերովդէսի. «Քեզի արտօնուած չէ եղբօրդ
 կինը առնել»: 19 Յերովդիա ո՞ր ունէր անոր դէմ
 եւ կ'ուզէր զայն սպաննել, բայց չէր կրնար. 20
 որովհետեւ Յերովդէս կը վախնար Յովհաննէսէ,
 գիտնալով թէ ան արդար ու սուրբ մարդ մըն
 է, եւ կը դիտէր զայն: Անկէ լսելով՝ շատ բաներ
 կ'ընէր, ու հաճոյքով անոր մտիկ կ'ընէր: 21
 Պատեհ օր մը եկաւ, երբ Յերովդէս իր ծնունդի
 տարեդարձին առիթով ընթրիք մը սարքած
 էր իր մեծամեծներուն, հազարապետներուն
 եւ Գալիլեայի գլխաւորներուն: 22 Յերովդիայի
 աղջիկը՝ հանդէսին սրահը մտնելով՝ պարեց,
 ու հաճեցուց Յերովդէսը եւ իրեն հետ սեղան
 նստողները: Թագաւորը ըսաւ աղջիկին. «Խնդրէ
 ինձմէ ինչ որ կ'ուզես, ու պիտի տամ քեզի»: 23 Եւ
 անոր երդում ըրաւ՝ ըսելով. «Ինչ որ խնդրես ինձմէ՝
 պիտի տամ քեզի, մինչեւ թագաւորութեանս կէսը»: 24
 Ան դուրս ելլելով՝ հարցուց իր մօր. «Ինչ ուզեմ»: 25
 Ան ալ ըսաւ. «Յովհաննէս Մկրտիչին գլուխը»:

խնդրեց՝ ըսելով. «Կ'ուզեմ որ անյապաղ, ափսէի մը վրայ, Յովհաննէս Մկրտիչին գլուխը տաս ինծի»: 26 Թագաւորը չափազանց տրտմեցաւ. բայց երդումներուն եւ իրեն հետ սեղան նստողներուն պատճառով՝ չուզեց մերժել անոր խնդրանքը՝:

27 Ուստի թագաւորը իսկոյն դահիճ մը դրկեց, ու հրամայեց բերել անոր գլուխը: Ան ալ գնաց, բանտին մէջ գլխատեց զայն, 28 ափսէի մը վրայ բերաւ անոր գլուխը եւ տուաւ աղջիկին. աղջիկն ալ տուաւ զայն իր մօր: 29 Երբ անոր աշակերտները լսեցին՝ եկան, վերցուցին անոր մարմինը եւ դրին գերեզմանի մը մէջ: 30 Առաքեալները հաւաքուեցան Յիսուսի քով ու պատմեցին անոր ամեն բան, թէ ինչ որ ըրին, թէ ինչ որ սորվեցուցին:

31 Ան ալ ըսաւ անոնց. «Դ՛ուք առանձին եկէ՛ք ամայի տեղ մը, եւ հանգչեցէ՛ք քիչ մը». քանի որ շատեր կու գային ու կ'երթային, եւ հաց ուտելու իսկ ժամանակ չէին ձգեր: 32 Ուստի նաւով ամայի տեղ մը գացին՝ առանձին: 33 Բազմութիւնը տեսաւ զանոնք՝ որ կ'երթային: Շատեր ճանչցան զայն, ու ոտքով՝ բոլոր քաղաքներէն հոն վազեցին, եւ անոնցմէ առաջ հասնելով՝ անոր քով համախմբուեցան:

34 Յիսուս, երբ դուրս ելաւ, մեծ բազմութիւն մը տեսնելով՝ զթաց անոնց վրայ, որովհետեւ հովիւ չունեցող ոչխարներու պէս էին. ու շատ բաներ սորվեցուց անոնց: 35 Երբ շատ ժամեր անցան, իր աշակերտները եկան իրեն եւ ըսին. «Հոս ամայի տեղ մըն է, ու ժամանակը արդէն շատ ուշ է: 36 Արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի երթան

շրջակայ արտերն ու գիւղերը եւ իրենց հաց գնեն,
 որովհետեւ ոչինչ ունին ուտելու»: 37 Բայց ինք
 պատասխանեց անոնց. «Դուք տուէք ատոնց՝
 որ ուտեն»: Ըսին իրեն. «Երթանք գնենք երկու
 հարիւր դահեկանի հաց ու տանք ատոնց՝ որ
 ուտեն»: 38 Ըսաւ անոնց. «Քանի նկանակ ունիք.
 գացէ՛ք՝ նայեցէ՛ք»: Երբ գիտցան՝ ըսին. «Հինգ,
 եւ երկու ձուկ»: 39 Հրամայեց անոնց, որ բոլորը
 կանաչ խոտին վրայ՝ խումբ-խումբ նստեցնեն.
 40 ու նստան՝ հարիւրական եւ յիսունական
 շարքերով: 41 Հինգ նկանակներն ու երկու ձուկերը
 առաւ, դէպի երկինք նայելով՝ օրհնեց, մանրեց
 նկանակները եւ տուաւ իր աշակերտներուն,
 որպէսզի հրամցնեն անոնց. երկու ձուկերն ալ
 բաժնեց բոլորին: 42 Բոլորը կերան, կշտացան, 43
 եւ վերցնելով բեկորներն ու ձուկերը՝ տասներկու
 կողով լեցուցին: 44 Այդ նկանակներէն ուտողները՝
 հինգ հազարի չափ այր մարդիկ էին: 45 Իսկոյն իր
 աշակերտները հարկադրեց՝ որ նաւ մտնեն, ու
 իրմէ առաջ անցնին միւս եզերքը՝ Բեթսայիդա,
 մինչ ինք կ'արձակէր բազմութիւնը: 46 Եւ անոնցմէ
 հրաժեշտ առնելէ ետք՝ լեռը գնաց աղօթելու: 47
 Երբ իրիկուն եղաւ, նաւը ծովուն մէջտեղն էր, իսկ
 ինք ցամաքին վրայ էր՝ մինակ: 48 Տեսաւ զանոնք՝
 որ կը տանջուէին թի վարելով, որովհետեւ հովը
 իրենց հակառակ էր: Գիշերուան չորրորդ պահուն
 ատենները՝ ծովուն վրայ քալելով գնաց անոնց,
 եւ կ'ուզէր անցնիլ անոնց քովէն: 49 Երբ անոնք
 տեսան՝ որ ծովուն վրայ կը քալէր, կարծեցին

թէ աչքի երեւոյթ մըն է. ուստի աղաղակեցին, **50**
 քանի որ բոլորն ալ տեսան զայն ու վրդովեցան:
 Եւ ինք իսկոյն խօսեցաւ անոնց հետ ու ըսաւ
 անոնց. «Քաջալերուեցէք, են եմ, մի վախնաք»:
51 Եւ նաւ ելաւ անոնց քով, ու հովը դադրեցաւ:
 Անոնք իրենք իրենց մէջ չափազանց զմայլած էին
 եւ կը զարմանային, **52** որովհետեւ նկանակներուն
 հրաշքն իսկ չէին նկատած՝ քանի իրենց սիրտը
 թմրած էր: **53** Միւս կողմը անցնելով՝ հասան
 Գեննեսարեթի երկիրը, ու նաւը տեղաւորեցին:
54 Երբ նաւէն ելան՝ այդ տեղի մարդիկը իսկոյն
 ճանչցան զայն, **55** եւ ամբողջ շրջակայքը հոս-
 հոն վազելով՝ սկսան մահիճներով ախտաւորներ
 բերել հոն՝ ո՛ր կը լսէին թէ կը գտնուէր: **56** Ո՛ր
 որ մտնէր, գիւղերը, քաղաքները կամ արտերը,
 հրապարակներուն վրայ կը դնէին հիւանդները, ու
 կ'աղաչէին իրեն՝ որ գոնէ իր հանդերձին քղանցքին
 դաչին: Եւ անոնք որ դպան՝ բժշկուեցան:

7 Փարիսեցիներէն ու դպիրներէն ոմանք՝ որ
 եկած էին Երուսաղէմէն՝ իր քով հաւաքուեցան: **2**
 Երբ տեսան թէ անոր աշակերտներէն ոմանք՝
 պիղծ, այսինքն՝ անլուայ ձեռքերով հաց կ'ուտեն,
 մեղադրեցին. **3** որովհետեւ Փարիսեցիներն
 ու բոլոր Յրեաները հաց չեն ուտեր՝ մինչեւ
 որ լա՛ւ մը լուան իրենց ձեռքերը, քանի որ
 նախնիքներուն աւանդութիւնը կը պահեն: **4**
 Շուկայէն եկած ատեն եթէ չլուացուին՝ չեն
 ուտեր: Ասոնց նման շատ բաներ կան, որոնք
 ընդունած են ու կը պահեն, ինչպէս՝ գաւաթներու,

փարչերու, պղինձէ անօթներու եւ սեղաններու
 լուացումը: 5 Յետեւաբար Փարիսեցիներն
 ու դպիրները հարցուցին անոր. «Ինչո՞ւ քու
 աշակերտներդ նախնիքներուն աւանդութեան
 համաձայն չեն շարժիր, եւ անլուայ ձեռքերով
 հաց կ'ուտեն»: 6 Ինք ալ պատասխանեց
 անոնց. «Եսայի ճիշդ մարգարեացաւ ձեր մասին,
 կեղծաւորներ, ինչպէս գրուած է. “Այս ժողովուրդը
 միայն շրթունքով կը պատուէ զիս, բայց իրենց
 սիրտը հեռու է ինձմէ. 7 ու պարապ տեղը
 կը պաշտեն զիս՝ մարդոց պատուէրները իբր
 վարդապետութիւն սորվեցնելով”: 8 Որովհետեւ
 Աստուծոյ պատուիրանը ձգելով՝ մարդոց
 աւանդութիւնը կը պահէք, ինչպէս՝ փարչերու եւ
 գաւաթներու լուացումը, ու ասոնց նման շատ
 ուրիշ բաներ կ'ընէք»: 9 Եւ ըսաւ անոնց. «Լա՛ն
 կ'անարգէք Աստուծոյ պատուիրանը, որպէսզի
 ձեր աւանդութիւնը պահէք: 10 Քանի որ Մովսէս
 ըսաւ. “Պատուէ հայրդ ու մայրդ. եւ ո՞վ որ անիծէ
 իր հայրը կամ մայրը, մահով թող վախճանի”: 11
 Բայց դուք կ'ըսէք. “Եթէ մէկը իր հօր կամ մօր ըսէ.
 “Ի՛նչ օգուտ որ ինձմէ պիտի ստանաս՝ Աստուծոյ
 տալիք կորբան է”, (որ կը նշանակէ՝ ընծայ,) ան
 ազատ կ'ըլլայ”, 12 եւ ան թոյլ չէք տար անոր՝
 բան մը ընել իր հօր կամ մօր: 13 Անվաւեր կը
 դարձնէք Աստուծոյ խօսքը՝ ձեր փոխանցած
 աւանդութեամբ, ու շատ ուրիշ բաներ կ'ընէք՝
 ասոր նման»: 14 Ամբողջ բազմութիւնը իրեն
 կանչելով՝ ըսաւ անոնց. «Բոլորդ ալ մտիկ ըրէք

ինծի, ու հասկցէք: **15** Ոչինչ կայ՝ որ դուրսէն մտնէ մարդուն մէջ ու կարող ըլլայ պղծել զայն. հապա ինչ որ դուրս կ'ելլէ անկէ, անիկա է որ կը պղծէ մարդը: **16** Ո՛վ որ ականջ ունի լսելու՝ թող լսէ»: **17** Երբ ինք՝ զատուելով այդ բազմութենէն՝ տուն մտաւ, իր աշակերտները հարցունցին իրեն այդ առակին մասին: **18** Ըսաւ անոնց. «Դո՛ւք ալ այդպէս անխելք էք. չէք ըմբռներ թէ ամէն ինչ՝ որ դուրսէն կը մտնէ մարդուն մէջ, չի կրնար պղծել զայն, **19** որովհետեւ ո՛չ թէ անոր սիրտին մէջ կը մտնէ՝ հապա փորը, եւ արտաքնոցը դուրս կ'ելլէ. ուստի բոլոր կերակուրները մաքուր են»»: **20** Նաեւ ըսաւ. «Ինչ որ կ'ելլէ մարդուն ներսէն, անիկա կը պղծէ մարդը: **21** Որովհետեւ ներսէն, մարդոց սիրտէն, կ'ելլեն չար մտածումներ, շնութիւններ, պռնկութիւններ, սպանութիւններ, **22** գողութիւններ, ազահութիւններ, չարութիւններ, նենգութիւն, ցոփութիւն, չար աչք, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անմտութիւն: **23** Այս բոլոր չար բաները ներսէն կ'ելլեն ու կը պղծեն մարդը»: **24** Կանգնելով՝ անկէ գնաց Տիւրոսի եւ Սիդոնի հողամասերը, ու տուն մը մտնելով՝ կ'ուզէր որ ո՛չ մէկը զիտնայ. բայց չկրցաւ թաքուն մնալ: **25** Որովհետեւ կին մը, որուն աղջիկը անմաքուր ոզի ունէր իր մէջ, լսեց անոր մասին, եկաւ եւ ինկաւ անոր ոտքը: **26** Այդ կինը հեթանոս էր, փիւնիկ-ասորի ցեղէն, ու կը թախանձէր անոր՝ որ հանէ դէռ իր աղջիկէն: **27** Յիսուս ըսաւ անոր. «Թո՛յլ տուր՝ որ նախ զաւակները կշտանան, քանի

որ լաւ չէ առնել զաւակներուն հացը եւ նետել շուներուն»: 28 Ան ալ պատասխանեց անոր. «Այո, Տէր. սակայն շուներն ալ՝ սեղանին ներքեւ՝ կը կերակրուին զաւակներուն փշրանքներէն»: 29 Յիսուս ըսաւ անոր. «Այդ խօսքիդ համար՝ գնա՛, դեւը դուրս ելաւ աղջիկէդ»: 30 Կինը իր տունը երթալով՝ գտաւ որ դեւը ելած էր, իսկ աղջիկը՝ պառկած մահիճին վրայ: 31 Դարձեալ Տիւրոսի եւ Սիդոնի հողամասերէն մեկնելով՝ գնաց Գալիլեայի ծովեզերքը, Դեկապոլիսի հողամասին մէջէն: 32 Մէկը բերին անոր առջեւ, խուլ ու դժուարախօս, եւ կ'աղաչէին՝ որ ձեռք դնէ անոր վրայ: 33 Բազմութենէն մէկդի առնելով զայն՝ իր մատները միսեց անոր ականջներուն մէջ ու թքնեց, եւ դաւաւ անոր լեզուին. 34 ապա երկինք նայելով՝ հառաչեց ու ըսաւ անոր. «Եփփաթա՛», (որ ըսել է՝ բացուէ.) 35 իսկոյն բացուեցան անոր ականջները եւ քակուեցաւ անոր լեզուին կապը, ու շիտակ կը խօսէր: 36 Պատուիրեց անոնց՝ որ ոչ մէկուն ըսեն. սակայն ինք որքան կը պատուիրէր անոնց, անոնք ալ աւելի կը հրապարակէին: 37 Չափազանց կ'ապշէին ու կ'ըսէին. «Ան ամէն ինչ լաւ կ'ընէ. խուլերուն լսել կու տայ, եւ համրերուն՝ խօսիլ»:

8 Այդ օրերը, բազմութիւնը յոյժ շատ ըլլալով եւ ուտելու ոչինչ ունենալով, Յիսուս իրեն կանչեց իր աշակերտները ու ըսաւ անոնց. 2 «Կը գթամ այդ բազմութեան վրայ, որովհետեւ արդէն երեք օր է՝ որ քովս են, եւ ոչինչ ունին ուտելու: 3 Եթէ անօթի ուղարկեմ զանոնք

իրենց տունները՝ պիտի պարտասին ճամբան,
 որովհետեւ ատոնցմէ ոմանք հեռաւոր տեղէ
 եկած են»։ 4 Իր աշակերտները պատասխանեցին
 իրեն. «Այս անապատին մէջ ուրկէ՞ կրնայ մէկը
 հացով կշտացնել ատոնք»։ 5 Հարցուց անոնց.
 «Քանի՞ նկանակ ունիք»։ Անոնք ըսին. «Եօթը»։
 6 Հրամայեց բազմութեան՝ որ նստի գետինին
 վրայ. եւ առաւ եօթը նկանակները, շնորհակալ
 եղաւ, կտրեց ու տուաւ աշակերտներուն, որպէսզի
 հրամցնեն բազմութեան. եւ հրամցուցին։ 7 Քանի
 մը մանր ձուկ ալ ունէին։ Օրհնեց ու ըսաւ՝
 որ զանոնք ալ հրամցնեն անոնց։ 8 Կերան,
 կշտացան, եւ աւելցած բեկորներէն եօթը զամբիւղ
 վերցուցին։ 9 Ուտողները չորս հազարի չափ էին։
 Արձակեց զանոնք, 10 եւ իսկոյն նաւ մտնելով՝
 աշակերտներուն հետ գնաց Դաղմանութայի
 կողմերը։ 11 Փարիսեցիները ելլելով՝ սկսան անոր
 հետ վիճաբանիլ, ու զայն փորձելով՝ կը խնդրէին
 իրմէ նշան մը երկինքէն։ 12 Ան ալ իր հոգիին մէջ
 հառաչելով՝ ըսաւ. «Ինչո՞ւ այս սերունդը նշան
 կը խնդրէ։ Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի
 թէ այս սերունդին նշան պիտի չտրուի»։ 13 Եւ
 զանոնք թողուց, դարձեալ նաւ մտաւ ու գնաց
 ծովուն միւս եզերքը։ 14 Հաց առնել մոռցած էին.
 բայց նաւուն մէջ իրենց հետ միայն մէկ նկանակ
 ունէին։ 15 Պատուիրեց անոնց ու ըսաւ. «Ուշադիր
 եղէք, զգուշացէ՛ք Փարիսեցիներու խմորէն ու
 Հերովդէսի խմորէն»։ 16 Իսկ անոնք իրարու
 հետ կը մտածէին եւ կ'ըսէին. «Որովհետեւ հաց

չունինք»: 17 Յիսուս գիտնալով անոնց մտածումը՝ ըսաւ անոնց. «Ինչո՞ւ կը մտածէք թէ հաց չունիք. տակաւին չէք ըմբռներ ու չէք հասկնար. տակաւին ձեր սիրտը կարծրացած է: 18 Աչքեր ունիք եւ չէք տեսներ, ականջներ ունիք ու չէք լսեր, եւ չէք յիշեր: 19 Երբ հինգ նկանակները կտրեցի հինգ հազարին, բեկորներով լեցուն քանի կողով վերցուցիք»: Ըսին անոր. «Տասներկու»: 20 «Ու երբ եօթը նկանակները կտրեցի չորս հազարին, բեկորներով լեցուն քանի զամբիւղ վերցուցիք»: Անոնք ալ ըսին. «Եօթը»: 21 Եւ ըսաւ անոնց. «Հապա ինչպէս չէք հասկնար»: 22 Երբ գնաց Բեթսայիդա՝ կոյր մը բերին անոր առջեւ, ու կ'աղաչէին իրեն՝ որ դաչի անոր: 23 Ան ալ՝ բռնելով կոյրին ձեռքէն՝ դուրս տարաւ գիւղէն, եւ թքնելով անոր աչքերուն՝ դրաւ ձեռքը անոր վրայ, ու հարցուց անոր թէ կը տեսնե՞ք քան մը: 24 Ան ալ նայեցաւ եւ ըսաւ. «Կը տեսնեմ մարդիկ՝ ծառերու պէս, որ կը քալեն»: 25 Դարձեալ դրաւ ձեռքը անոր աչքերուն վրայ ու նայիլ տուաւ անոր. եւ առողջացաւ, ու յստակօրէն կը տեսներ բոլորը: 26 Յետոյ՝ դրկելով զայն իր տունը՝ ըսաւ. «Մի՛ մտներ գիւղը, ո՛չ ալ մէկու մը ըսէ գիւղին մէջ»: 27 Յիսուս գնաց Փիլիպպոսի Կեսարիային գիւղերը՝ իր աշակերտներուն հետ: Ճամբան հարցուց իր աշակերտներուն. «Մարդիկ ինծի համար ինչ կ'ըսեն, ո՞վ եմ»: 28 Անոնք պատասխանեցին. «Ոմանք՝ Յովհաննէս Մկրտիչը, ուրիշներ՝ Եղիան, ուրիշներ ալ՝ մարգարէներէն մէկը»: 29 Եւ ինք ըսաւ անոնց. «Իսկ դո՞ւք ինծի համար ինչ կ'ըսէք,

ղ՛վ եմ»: Պետրոս պատասխանեց անոր. «Դուն
 Քրիստոսն ես»: **30** Սաստիկ հրահանգեց անոնց՝
 որ ղ՛ն մեկուն խօսին իր մասին: **31** Ապա սկսաւ
 սորվեցնել անոնց. «Պետք է որ մարդու Որդին
 շատ չարչարանքներ կրէ, մերժուի երեցներէն,
 քահանայապետներէն եւ դպիրներէն, սպաննուի,
 ու երեք օրէն ետք յարութիւն առնէ»: **32** Այս խօսքը
 ըսաւ բացորոշապէս: Ուստի Պետրոս մեկդի առաւ
 զինք եւ սկսաւ յանդիմանել: **33** Իսկ ինք դարձաւ, իր
 աշակերտներուն նայելով՝ յանդիմանեց Պետրոսը
 եւ ըսաւ. «Ետե՛ն գնա, Սատանայ, որովհետեւ
 դուն ղ՛ն թէ Աստուծոյ բաները կը մտածես,
 հապա՛ մարդոց բաները»: **34** Երբ իրեն կանչեց
 բազմութիւնը՝ իր աշակերտներուն հետ, ըսաւ
 անոնց. «Ո՛րք որ ուզէ գալ իմ ետե՛ւս, թող ուրանայ
 ինքզինք, վերցնէ իր խաչը, ու հետեւի ինձի: **35**
 Որովհետեւ ղ՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի
 կորսնցնէ զայն, իսկ ղ՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինձի
 ու աւետարանին համար, պիտի փրկէ զայն: **36**
 Քանի որ ի՛նչ օգուտ է մարդուն՝ որ շահի ամբողջ
 աշխարհը, բայց կորսնցնէ իր անձը. **37** կամ՝ մարդ
 ի՛նչ փրկանք պիտի տայ իր անձին փոխարէն:
38 Որովհետեւ ղ՛վ որ ամօթ սեպէ զիս եւ իմ
 խօսքերս դաւանիլը՝ այս շնացող ու մեղաւոր
 սերունդին մէջ, մարդու Որդին ալ ամօթ պիտի
 սեպէ զայն դաւանիլը՝ երբ գայ իր Զօր փառքով
 սուրբ հրեշտակներուն հետ»:
9 Եւ ըսաւ անոնց. «Ճշմարտապէս կը
 յայտարարեմ ձեզի. “Յոս ներկայ եղողներէն

կան ոմանք՝ որ մահ պիտի չհամտեսեն, մինչեւ որ տեսնեն Աստուծոյ թագաւորութիւնը՝ զօրութեամբ եկած»։ 2 Վեց օր ետք՝ Յիսուս առաւ իրեն հետ Պետրոսը, Յակոբոսն ու Յովհաննէսը, հանեց զանոնք բարձր լեռ մը՝ առանձին, եւ այլակերպեցաւ անոնց առջեւ։ 3 Իր հանդերձները փայլուն, չափազանց ճերմակ եղան՝ ձիւնի պէս, այնպէս որ երկրի վրայ ոչ մէկ թափիչ կրնար այդպէս ճերմկցնել։ 4 Ու Եղիա երեւցաւ անոնց՝ Մովսէսի հետ, եւ կը խօսակցէին Յիսուսի հետ։ 5 Ապա Պետրոս ըսաւ Յիսուսի. «Ռաբբի, լաւ է որ կենանք հոս եւ շինենք երեք վրան, մէկը՝ քեզի, մէկը՝ Մովսէսի ու մէկը՝ Եղիայի»։ 6 որովհետեւ չէր գիտեր թէ ինչ կը խօսի, քանի որ զարհուրած էին։ 7 Ամպ մը հովանի եղաւ անոնց վրայ, եւ ձայն մը եկաւ ամպէն՝ ըսելով. «Այս է իմ սիրելի Որդիս, անոր մօտիկ ըրէք»։ 8 Յանկարծ, երբ իրենց շուրջը նայեցան, ուրիշ ոչ մէկը տեսան, հապա միայն Յիսուսը՝ իրենց հետ։ 9 Երբ վար կ'իջնէին լեռնէն, պատուիրեց անոնց՝ որ ոչ մէկուն պատմեն իրենց տեսածը, բայց միայն՝ մարդու Որդիին մեռելներէն յարութիւն առնելէն ետք։ 10 Անոնք պահեցին այդ խօսքը, ու կը հարցնէին իրարու թէ ինչ կը նշանակէ “մեռելներէն յարութիւն առնել”։ 11 Եւ հարցուցին իրեն. «Ինչո՞ւ դպիրները կ'ըսեն թէ “պետք է որ նախ Եղիա գայ”»։ 12 Ան ալ պատասխանեց անոնց. «Արդարեւ նախ Եղիա կու գայ ու կը վերահաստատէ ամեն բան. ինչպէս գրուած է մարդու Որդիին մասին՝ թէ

պէտք է շատ չարչարանքներ կրէ եւ անարգուի:
13 Բայց կ'ըսեն՝ ձեզի թէ Եղիա եկաւ ալ, ու ինչ
 որ ուզեցին՝ ըրին անոր, ինչպէս գրուած էր իր
 մասին»: **14** Աշակերտներուն քով գալով՝ տեսաւ
 մեծ բազմութիւն մը անոնց շուրջը, ու դպիրներ՝
 որ կը վիճաբանէին անոնց հետ: **15** Իսկոյն ամբողջ
 բազմութիւնը՝ երբ տեսաւ զայն՝ շատ այլայլեցաւ,
 եւ յառաջ վազելով զայն կը բարեւէր: **16** Յիսուս
 հարցուց դպիրներուն. «Ինչ բանի մասին կը
 վիճաբանէիք անոնց հետ: **17** Բազմութենէն
 մէկը պատասխանեց. «Վարդապետ, որդիս՝
 որ համր ոգի ունի՝ քեզի բերի: **18** Ո՛ր որ ալ
 բռնէ զայն՝ գետին կը զարնէ՝ զայն. ինք ալ կը
 փրփրի, իր ակռաները կը կրճտէ եւ կը ցամքի:
 Քու աշակերտներուդ ըսի որ հանեն զայն, բայց
 չկրցան»: **19** Ինք ալ պատասխանեց անոնց. «Ո՛վ
 անհաւատ սերունդ, մինչեւ երբ պիտի ըլլամ
 ձեզի հետ, մինչեւ երբ պիտի հանդուրժեմ ձեզի.
 Ինծի բերէք զայն»: **20** Իրեն բերին զայն: Երբ
 տղան տեսաւ զինք, իսկոյն չար ոգին ցնցեց
 զայն, եւ գետին ինկած՝ կը թաւալէր ու կը
 փրփրէր: **21** Յիսուս հարցուց անոր հօր. «Ո՞րչափ
 ատեն է՝ որ այդ բանը պատահեցաւ անոր»:
 Ան ալ ըսաւ. «Մանկութենէն ի վեր: **22** Յաճախ
 կրակի ու ջուրի մէջ կը նետէ զայն՝ որպէսզի
 կորսնցնէ. բայց եթէ կարողութիւն ունիս՝ օգնէ
 մեզի, զթալով մեր վրայ»: **23** Յիսուս ըսաւ անոր.
 «Եթէ կրնաս հաւատալ, ամէն բան կարելի է անոր՝
 որ կը հաւատայ»: **24** Իսկոյն մանուկին հայրը

աղաղակեց եւ արցունքով ըսաւ. «Կը հաւատամ, Տէր. օգնէ իմ անհաւատութեանս»: 25 Յիսուս՝ երբ տեսաւ թէ բազմութիւնը կը խոնուի շուրջը, սաստեց անմաքուր ոգին եւ ըսաւ անոր. «Յամբ ու խոլ ոգի, կը հրամայեմ քեզի, ելի՛ր ատկէ, եւ անգամ մըն ալ մի՛ մտներ անոր մէջ»: 26 Ոգին աղաղակելով՝ սաստիկ ցնցեց զայն ու ելաւ. եւ տղան մեռելի պէս եղաւ, այնպէս որ շատեր ըսին. «Մեռան»: 27 Իսկ Յիսուս անոր ձեռքէն բռնելով՝ ոտքի հանեց զայն, ան ալ կանգնեցաւ: 28 Երբ ինք տուն մտաւ, իր աշակերտները առանձին հարցուցին իրեն. «Մենք ինչո՞ւ չկրցանք հանել զայն»: 29 Ըսաւ անոնց. «Այդ տեսակը կարելի չէ ուրիշ բանով հանել, բայց միայն աղօթքով ու ծոմապահութեամբ»: 30 Անկէ մեկնելով՝ Գալիլեայի մէջէն կ'անցնէին, եւ չէր ուզեր որ մէկը գիտնայ. 31 որովհետեւ կը սորվեցներ իր աշակերտներուն ու կ'ըսէր անոնց. «Մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը, պիտի սպաննեն զայն, ու երբ սպաննուի՝ յարութիւն պիտի առնէ երրորդ օրը»: 32 Անոնք չէին հասկնար այդ խօսքը, եւ կը վախնային հարցնել իրեն: 33 Եկաւ Կափառնայում. ու երբ տուն մտաւ՝ հարցուց անոնց. «Ի՞նչ բանի մասին կը մտածէիք ճամբան՝ իրարու հետ»: 34 Անոնք լուռ կեցան, որովհետեւ ճամբան վիճաբանած էին իրարու հետ՝ թէ ո՞վ է մեծագոյնը: 35 Երբ նստաւ, կանչեց տասներկուքը եւ ըսաւ անոնց. «Եթէ մէկը ուզէ առաջին ըլլալ, բոլորին յետինը թող ըլլայ, ու

բոլորին սպասարկուն»։ 36 Եւ առաւ մանուկ մը, կայնեցուց անոնց մէջտեղ, ապա իր գիրկը առնելով զայն՝ ըսաւ անոնց. 37 «Ո՛վ որ կ'ընդունի այսպիսի մանուկներէն մէկը՝ իմ անունովս, զիս կ'ընդունի. եւ ո՛վ որ զիս կ'ընդունի, ո՛չ թէ զիս կ'ընդունի, հապա՛ գիս դրկո՞ղը»։ 38 Յովհաննէս ըսաւ անոր. «Վարդապետ, տեսանք մէկը որ դէւեր կը հանէր քու անունովդ, բայց մեզի չի հետեւիր։ Արգիլեցինք զայն, քանի որ մեզի չի հետեւիր»։ 39 Յիսուս ըսաւ. «Մի արգիլէք զայն, որովհետեւ չկայ մէկը՝ որ իմ անունովս հրաշք գործէ, ու կարենայ շուտով զիս անիծել. 40 ան որ մեզի հակառակ չէ, մեր՝ կողմէն է։ 41 Ա՛ն որ ձեզի գաւաթ մը ջուր խմցնէ իմ անունովս՝, քանի որ դուք Քրիստոսի կը պատկանիք, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Անիկա իր վարձատրութիւնը պիտի չկորսնցնէ”»։ 42 «Ո՛վ որ գայթակղեցնէ այս պատիկներէն մէկը՝ որ ինծի կը հաւատայ, աւելի լաւ պիտի ըլլար՝ որ ջաղացքի քար մը կախուէր անոր վիզէն, եւ ծովը նետուէր։ 43 Եթէ ձեռքդ կը գայթակղեցնէ քեզ՝ կտրե՛ զայն. աւելի լաւ է քեզի՝ պակասաւոր մտնել կեանքը, քան երկու ձեռք ունենալ ու երթալ գեհեհնը՝ անշէջ կրակին մէջ, (Geenna g1067) 44 ուր անոնց որդը չի վախճանիր եւ կրակը չի մարիր։ 45 Եթէ ոտքդ կը գայթակղեցնէ քեզ՝ կտրե՛ զայն. աւելի լաւ է քեզի՝ կանո մտնել կեանքը, քան երկու ոտք ունենալ ու նետուիլ գեհեհնը՝ անշէջ կրակին մէջ, (Geenna g1067) 46 ուր անոնց որդը չի վախճանիր եւ կրակը չի մարիր։ 47 Եթէ աչքդ կը գայթակղեցնէ

քեզ՝ հան՛՛՛ զայն. աւելի լաւ է քեզի՝ մէկ աչքով
մտնել Աստուծոյ թագաւորութիւնը, քան երկու
աչք ունենալ ու նետուիլ գեհենի կրակը, (Geenna
g1067) 48 ուր անոնց որոնք չի վախճանիր եւ կրակը
չի մարիր: 49 Որովհետեւ իւրաքանչիւրը կրակով
պիտի աղուի, ու ամէն զոհ աղով պիտի աղուի: 50
Աղը լաւ է. բայց եթէ աղը դառնայ անհամ, ինչով
պիտի համեմէք զայն. ձեր մէջ ան ունեցեք, եւ
իրարու հետ խաղանդ եղէք»:

10 Կանգնելով՝ անկէ գնաց Յրեաստանի
հողամասը, Յորդանանի միւս եզերքէն: Դարձեալ
բազմութիւնները անոր շուրջ կը համախմբուէին,
եւ ինչպէս սովորութիւն ունէր՝ դարձեալ կը
սորվեցնէր անոնց: 2 Փարիսեցիները եկան
անոր քով ու հարցուցին՝ փորձելու համար զայն.
«Արտօնուած է մարդու մը՝ որ արձակէ իր կինը»:
3 Ան ալ պատասխանեց անոնց. «Մովսէս ինչ
պատուիրեց ձեզի»: 4 Անոնք ըսին. «Մովսէս
արտօնեց ամուսնալուծումի վկայագիր մը գրել
եւ արձակել»:
5 Յիսուս պատասխանեց անոնց.
«Ձեր սիրտին կարծրութեան համար գրեց ձեզի
այդ պատուէրը. 6 բայց արարչութեան սկիզբէն՝
Աստուած զանոնք արու եւ էգ ստեղծեց: 7 “Այս
պատճառով մարդը պիտի թողու հայրն ու մայրը,
եւ պիտի յարի իր կնոջ, 8 ու երկուքը պիտի ըլլան
մէկ մարմին”: Ուստի ան երկու չեն, հապա՝ մէկ
մարմին. 9 ուրեմն մարդը թող չզատէ ինչ որ
Աստուած իրարու միացուցած է»: 10 Տունը՝ իր
աշակերտները դարձեալ նոյն բանը հարցուցին

իրեն: **11** Ըսաւ անոնց. «Ո՛վ որ արձակէ իր կինը եւ ամուսնանայ ուրիշի մը հետ՝ շնութիւն կ'ընէ անոր դէմ: **12** Ու եթէ կին մը արձակէ իր ամուսինը եւ ամուսնանայ ուրիշի մը հետ՝ շնութիւն կ'ընէ»:

13 Մանուկներ բերին իրեն՝ որպէսզի դաչի անոնց. բայց աշակերտները կը յանդիմանէին բերողները: **14** Երբ Յիսուս տեսաւ, ընդվզելով ըսաւ անոնց. «Թո՛յլ տուէք այդ մանուկներուն՝ որ զան ինծի, եւ մի՛ արգիլէք զանոնք, որովհետեւ Աստուծոյ թագաւորութիւնը այդպիսիներունն է: **15** Եւ մարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ չընդունի Աստուծոյ թագաւորութիւնը պզտիկ մանուկի մը պէս, բնա՛ւ պիտի չմտնէ անոր մէջ”»:

16 Ու գիրկը առաւ զանոնք, ձեռք դրաւ անոնց վրայ եւ օրհնեց զանոնք: **17** Երբ ան դուրս ելաւ, ճամբան մարդ մը վազեց, ծնրադրեց անոր առջեւ ու հարցուց անոր. «Բարի՛ վարդապետ, ինչ ընեմ՝ որ ժառանգեմ յաւիտենական կեանքը»: (aiōnios g166)

18 Յիսուս ըսաւ անոր. «Ինչո՞ւ բարի կը կոչես զիս. մէկէ՛ն զատ բարի չկայ, որ Աստուած է: **19** Գիտենս պատուիրանները. շնութիւն մի՛ ըներ, սպանութիւն մի՛ ըներ, գողութիւն մի՛ ըներ, սուտ վկայութիւն մի՛ տար, զրկանք մի՛ ըներ, պատու՛ հայրդ ու մայրդ»:

20 Ան ալ պատասխանեց անոր. «Վարդապետ, պահած եմ այդ բոլորը՝ պատանութենէս ի վեր»:

21 Յիսուս անոր նայելով՝ սիրեց զայն եւ ըսաւ անոր. «Մէկ բան կը պակսի քեզի. գնա՛, ծախ՛ ունեցածդ, տո՛ւր աղքատներուն, ու զանձ պիտի ունենաս երկինքը. ապա վերցո՛ւր խաչը ու հետեւ՛

ինծի»։ 22 Ան ալ այս խօսքին համար խոժոռելով՝ տրտմած գնաց, որովհետեւ շատ ստացուածք ունէր։ 23 Յիսուս՝ շուրջը նայելով՝ ըսաւ իր աշակերտներուն. «Ո՛րչափ դժուար է Աստուծոյ թագաւորութիւնը մտնել անոնց՝ որ դրամ ունին»։ 24 Աշակերտները այլայլեցան անոր խօսքերէն. բայց Յիսուս դարձեալ ըսաւ անոնց. «Չաւակներ, ո՛րչափ դժուար է Աստուծոյ թագաւորութիւնը մտնել՝ իրենց դրամին վստահողներուն։ 25 Դիւրին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ»։ 26 Անոնք չափազանց ապշեցան եւ ըսին իրարու. «Ա՛լ ո՞վ կրնայ փրկուիլ»։ 27 Յիսուս նայելով անոնց՝ ըսաւ. «Ատիկա անկարելի է մարդոց քով, բայց ոչ՝ Աստուծոյ քով. քանի որ ամէն բան կարելի է Աստուծոյ քով»։ 28 Պետրոս սկսաւ ըսել անոր. «Ահա մենք թողուցինք ամէն ինչ եւ հետեւեցանք քեզի»։ 29 Յիսուս պատասխանեց. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Չկայ մէկը՝ որ թողուցած ըլլայ տուն, եղբայրներ, քոյրեր, հայր, մայր, կին, զաւակներ, կամ արտեր՝ ինծի եւ աւետարանին համար, 30 ու չստանայ հարիւրապատիկը հիմա՝ այս ատեն՝ տուներ, եղբայրներ, քոյրեր, մայրեր, զաւակներ եւ արտեր՝ հալածանքներու հետ, ու յաւիտենական կեանքը՝ գալիք աշխարհին մէջ”։ (aiōn g165, aiōnios g166) 31 Բայց շատ առաջիններ պիտի ըլլան յետին, եւ յետիններ՝ առաջին»։ 32 Երբ անոնք դէպի Երուսաղէմ բարձրացող ճամբան էին, Յիսուս անոնց առջեւէն կ’երթար։

Անոնք այլայլած էին ու հետեւելով՝ կը վախճային:
 Դարձեալ քովը առնելով տասներկուքը, սկսաւ
 ըսել անոնց՝ ինչ որ պիտի պատահէր իրեն. 33
 «Ահա՛ Երուսաղէմ կը բարձրանանք, եւ մարդու
 Որդին պիտի մատնուի քահանայապետներուն ու
 դպիրներուն. մահուան պիտի դատապարտեն
 զայն, հեթանոսներուն պիտի մատնեն զայն, 34
 պիտի ծաղրեն ու խարազանեն զայն, պիտի թքնեն
 անոր վրայ եւ սպաննեն զայն. բայց յարութիւն
 պիտի առնէ երրորդ օրը»: 35 Ապա Յակոբոս
 ու Յովհաննէս՝ Չերեղէնոսի որդիները՝ գացին
 անոր քով, եւ ըսին. «Վարդապետ, կ'ուզենք որ
 ինչ որ խնդրենք՝ ընես մեզի համար»: 36 Ան ալ
 ըսաւ անոնց. «Ինչ կ'ուզէք՝ որ ընեմ ձեզի»: 37
 Անոնք ալ ըսին իրեն. «Շնորհէ՛ մեզի, որ բազմիւնք
 մեզմէ մէկը՝ աջ կողմդ, ու միւսը՝ ձախ կողմդ
 քու փառքիդ մէջ»: 38 Յիսուս ըսաւ անոնց. «Չէք
 գիտեր ինչ կը խնդրէք: Կրնա՞ք խմել այն բաժակը՝
 որ ես կը խմեմ, եւ մկրտուիլ այն մկրտութեամբ՝
 որով ես կը մկրտուիմ»: 39 Անոնք ըսին իրեն.
 «Կրնանք»: Յիսուս ըսաւ անոնց. «Արդարեւ
 պիտի խմէք այն բաժակը՝ որ ես կը խմեմ, ու
 պիտի մկրտուի՞ք այն մկրտութեամբ՝ որով ես
 կը մկրտուիմ. 40 բայց իմ աջ կողմս եւ ձախ
 կողմս բազմիւր՝ իմս չէ տալը, հապա պիտի
 տրուի անոնց՝ որոնց համար պատրաստուած
 է»: 41 Երբ միւս տասը աշակերտները լսեցին,
 սկսան ընդվզիլ Յակոբոսի ու Յովհաննէսի դէմ:
 42 Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք եւ ըսաւ

անոնց. «Գիտէք թէ հեթանոսներուն իշխան համարուածները կը տիրապետեն իրենց վրայ, եւ անոնց մեծամեծները կ'իշխեն իրենց վրայ: 43 Բայց այդպէս թող չըլլայ ձեր մէջ. հապա ձեզմէ ո՛վ որ ուզէ մեծ ըլլալ՝ անիկա ձեր սպասարկորն ըլլայ, 44 ու ձեզմէ ո՛վ որ ուզէ գլխաւոր ըլլալ՝ անիկա բոլորին ստորակը ըլլայ: 45 Քանի որ մարդու Որդին եկաւ ո՛չ թէ սպասարկութիւն ընդունելու, հապա՝ սպասարկելու եւ իր անձը իբր փրկանք տալու շատերու համար»: 46 Յետոյ եկան Երիթով: Երբ դուրս կ'ելլէր Երիթովէն՝ աշակերտներով եւ մեծ բազմութեամբ, Տիմէոսի որդին՝ Կոյր Բարտիմէոս՝ նստած էր ճամբային եզերքը ու կը մուրար: 47 Երբ լսեց թէ Յիսուս Նազովրեցին է, սկսաւ աղաղակել. «Յիսուս, Դաւիթի Որդի, ողորմէ՛ ինծի»: 48 Շատեր կը հրահանգէին անոր՝ որ լռէ: Բայց ան ալ աւելի կ'աղաղակէր. «Դաւիթի Որդի, ողորմէ՛ ինծի»: 49 Յիսուս կանգ առնելով՝ ըսաւ որ կանչեն զայն: Կանչեցին Կոյրը եւ ըսին անոր. «Քաջալերուէ՛, ոտքի ելի՛ր, քեզ կը կանչէ»: 50 Ան ալ իր հանդերձը նետելով՝ կանգնեցաւ ու եկաւ Յիսուսի: 51 Յիսուս պատասխանեց անոր. «Ի՞նչ կ'ուզես՝ որ ընեմ քեզի»: Կոյրը ըսաւ. «Ռաբբունի՛, թող աչքերս բացուին՝»: 52 Յիսուս ըսաւ անոր. «Գնա՛. հաւատքդ բժշկեց քեզ»: Իսկոյն անոր աչքերը բացուեցան, ու ճամբան կը հետեւէր Յիսուսի:

11 Երբ մօտեցան Երուսաղէմի, եւ հասան Բեթփագէ ու Բեթանիա, Ձիթենիներու լերան

մօտ, Յիսուս իր աշակերտներէն երկուքը դրկեց՝
 ըսելով. **2** «Գացէք այդ ձեր դիմացի գիւղը. անոր մէջ
 մտնելով՝ իսկոյն պիտի գտնէք կապուած աւանակ
 մը, որուն վրայ մարդ նստած չէ. արձակեցէք
 զայն ու բերէք: **3** Եթէ մէկը ըսէ ձեզի. “Այդ ինչ
 կ’ընէք”, ըսէք. “Տերոջ պէտք է”, եւ իսկոյն հոս
 պիտի դրկէ զայն»: **4** Գացին ու գտան աւանակը,
 դուրսը՝ փողոցին մէջ, դրան քով կապուած, եւ
 արձակեցին զայն: **5** Հոն կայնողներէն ոմանք
 ըսին իրենց. «Ինչո՞ւ կ’արձակէք այդ աւանակը»:
6 Իրենք ալ պատասխանեցին անոնց ինչպէս
 Յիսուս պատուիրեր էր, եւ թոյլ տուին իրենց: **7**
 Երբ աւանակը բերին Յիսուսի, դրին անոր վրայ
 իրենց հանդերձները, ու նստաւ անոր վրայ: **8**
 Շատեր իրենց հանդերձները կը փռէին ճամբային
 վրայ. ուրիշներ ճիւղեր կը կտրէին ծառերէն եւ կը
 տարածէին ճամբային վրայ: **9** Առջեւէն զացողներն
 ու իրեն հետեւողները կ’աղաղակէին. «Ովսաննա.
 օրինեալ է ան՝ որ կու գայ Տերոջ անունով: **10**
 Օրինեալ է մեր Դաւիթ հօր թագաւորութիւնը՝
 որ կու գայ”: Ովսաննա՝ ամենաբարձր վայրերուն
 մէջ»: **11** Յիսուս մտաւ Երուսաղէմ ու գնաց
 տաճարը: Երբ շուրջը նայեցաւ՝ ամեն բանի
 վրայ, արդէն իրիկուան ժամը ըլլալուն՝ մեկնեցաւ
 Բեթանիա տասներկուքին հետ: **12** Հետեւեալ
 օրը՝ երբ կ’ելլէին Բեթանիայէն՝ անօթեցաւ, **13**
 եւ հեռուէն տեսնելով տերեւալից թզենի մը՝
 գնաց, որ թերեւս բան մը գտնէ վրան. բայց երբ
 գնաց անոր քով, ոչինչ գտաւ՝ տերեւներէն զատ,

որովհետեւ դեռ թուզի ատենը չէր: **14** Ուստի ըսաւ անոր. «Ասկէ ետք ոչ մէկը պտուղ ուտէ քեզմէ յաւիտեան»: Եւ իր աշակերտները լսեցին: **(aiðn g165)**

15 Երբ հասան Երուսաղէմ, տաճարը մտնելով՝ Յիսուս դուրս հանեց տաճարին մէջ ծախողներն ու գնողները, տապալեց լումայափոխներուն սեղանները եւ աղանի ծախողներուն աթոռները, **16** ու թոյլ չտուաւ որ մէկը անժա մը անցընէ տաճարին մէջէն: **17** Եւ սորվեցուց անոնց՝ ըսելով. «Միթէ գրուած չէ. “Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի բոլոր ազգերուն”. բայց դուք զայն աւագակներու քարայր ըրիք»: **18** Դպիրներն ու քահանայապետները լսելով ասիկա՝ կը փնտռէին թէ ինչպէս կորսնցնեն զայն, քանի կը վախճային անկէ. որովհետեւ ամբողջ բազմութիւնը ապշած էր անոր ուսուցումին վրայ: **19** Երբ իրիկուն եղաւ՝ քաղաքէն դուրս ելաւ: **20** Առտուն՝ երբ կ'անցնէին անկէ, տեսան թզենին՝ արմատէն չորցած: **21** Պետրոս վերյիշեց եւ ըսաւ անոր. «Ռաբբի, ահա թզենին որ անիծեցիր՝ չորցած է»: **22** Յիսուս պատասխանեց անոնց. «Հաւանք ունեցէք Աստուծոյ վրայ: **23** Որովհետեւ ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ ըսէ այս լերան. “Ելի՛ր ու ծովը նետուէ”, եւ չտատամսի իր սիրտին մէջ, հապա հաւատայ թէ ինչ որ ըսէ՝ կ'ըլլայ, պիտի ըլլայ անոր՝ ինչ որ ըսէ”: **24** Ուստի կը յայտարարեմ ձեզի. “Ինչ որ կը խնդրէք աղօթքով, հաւատացէ՛ք թէ պիտի ստանաք, ու պիտի ըլլայ ձեզի”: **25** Երբ կայնիք աղօթքի, ներեցէ՛ք՝ եթէ

մէկուն դէմ բան մը ունիք, որպէսզի ձեր Յայրն ալ՝ որ երկինքն է՝ ներէ ձեզի ձեր յանցանքները:

26 Իսկ եթէ դուք չներէք, ձեր Յայրն ալ՝ որ երկինքն է՝ պիտի չներէ ձեր յանցանքները»:

27 Դարձեալ եկան Երուսաղէմ: Երբ կը քալէր տաճարին մէջ, քահանայապետները, դպիրներն ու երէցները եկան անոր, **28** եւ ըսին. «Ինչ իշխանութեամբ կ'ընես այդ բաները. ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը՝ որ ընես այդ բաները»:

29 Յիսուս պատասխանեց անոնց. «Ես ալ ձեզի հարցնեմ բան մը. պատասխանեցէ՛ք ինծի, ու ես պիտի ըսեմ ձեզի թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ այդ բաները: **30** “Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէն էր՝ թէ մարդոցմէ”: Պատասխանեցէ՛ք ինծի»:

31 Անոնք կը մտածէին իրենց մէջ՝ ըսելով. «Եթէ պատասխանենք. “Երկինքէն”, պիտի ըսէ. “Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր”:

32 Իսկ եթէ պատասխանենք. “Մարդոցմէ”՞ »:

Կը վախնային ժողովուրդէն, որովհետեւ բոլորը իրապէս մարգարէ կը նկատէին՝ Յովհաննէսը: **33** Ուստի պատասխանեցին Յիսուսի. «Չենք գիտեր»:

Յիսուս ալ պատասխանեց անոնց. «Ես ալ չեմ ըսեր ձեզի թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ այդ բաները»:

12 Ապա սկսաւ առականերով խօսիլ անոնց հետ ու ըսել. «Մարդ մը այգի տնկեց, ցանկ քաշեց անոր շուրջը, հնձանի փոս փորեց, աշտարակ կառուցանեց, մշակներու յանձնեց զայն, եւ ճամբորդեց: **2** Ատենին ծառայ մը դրկեց

մշակներուն, որպէսզի մշակներէն ստանայ այգիին պտուղէն: **3** Իսկ անոնք բռնեցին, ծեծեցին զայն ու պարապ ճամբեցին: **4** Դարձեալ ուրիշ ծառայ մըն ալ դրկեց անոնց. զայն ալ քարկոծելով՝ գլուխը վիրաւորեցին եւ անպատուուած ճամբեցին: **5** Դարձեալ ուրիշ մը դրկեց, ու զայն սպաննեցին: Շատ ուրիշներ ալ դրկեց, որոնցմէ ոմանք ծեծեցին եւ ոմանք սպաննեցին: **6** Տակաւին սիրելի որդի մը ունէր. վերջապէս զայն ալ դրկեց անոնց՝ ըսելով. «Թերեւս պատկառին որդիէս»: **7** Բայց այդ մշակները ըսին իրարու. «Այս է ժառանգորդը. եկէ՛ք սպաննենք զայն, ու ժառանգութիւնը մերը պիտի ըլլայ»: **8** Բռնեցին զայն, սպաննեցին եւ այգիէն դուրս հանեցին: **9** Ուրեմն այգիին տէրը ինչ պիտի ընէ. պիտի գայ ու կորսնցնէ մշակները, եւ այգին պիտի տայ ուրիշներու: **10** Չէ՞ք կարդացեր սա՞ գրուածը. «Այն քարը՝ որ կառուցանողները մերժեցին, անիկա՞ եղաւ անկիւնաքարը. **11** ապիկա Տէրոջմէն եղաւ, եւ սքանչելի է մեր աչքերուն»»: **12** Անոնք կը ջանային բռնել զայն, բայց բազմութենէն կը վախնային. որովհետեւ զիտցան թէ այդ առակը խօսեցաւ իրենց դէմ: Ուստի թողուցին զայն, եւ գացին: **13** Փարիսեցիներէն ու Յերովդէսեաններէն ոմանք դրկեցին անոր, որպէսզի խօսքով բռնեն զայն: **14** Անոնք եկան եւ ըսին անոր. «Վարդապետ, զիտենք թէ ճշմարտախօս ես, ու ո՞չ մէկուն համար հոգ կ'ընես. քանի որ երեսպաշտութիւն չես ըներ մարդոց, հապա ճշմարտութեամբ կը սորվեցնես Աստուծոյ ճամբան: Արտօնուած է

կայսրին տուրք տալ. տա՛նք՝ թէ չտանք»։ 15 Յիսուս գիտնալով անոնց կեղծաւորութիւնը՝ ըսաւ անոնց. «Ինչո՞ւ զիս կը փորձէք։ Բերէք ինծի դահեկան մը՝ որ տեսնեմ»։ 16 Անոնք ալ բերին։ Ըսաւ անոնց. «Որո՞նն են այս պատկերն ու գրութիւնը»։ Անոնք ըսին իրեն. «Կայսրի՛ն»։ 17 Յիսուս ալ պատասխանեց անոնց. «Ինչ որ կայսրինն է՝ կայսրին տուէք, եւ ինչ որ Աստուծոյ է՝ Աստուծոյ տուէք»։ Ու զարմացան իր վրայ։ 18 Սաղուկեցիներն ալ, որոնք կ'ըսեն թէ յարութիւն չկայ, եկան անոր քով եւ հարցուցին իրեն. 19 «Վարդապետ, Մովսէս գրեց մեզի. “Եթէ մէկուն եղբայրը մեռնի, ու կինը այրի ձգէ եւ զաւակ չթողու, անոր եղբայրը թող ամուսնանայ անոր կինը ու զարմ տայ իր եղբոր”։ 20 Ուրեմն եօթը եղբայրներ կային. առաջինը կին առաւ եւ մեռաւ, ու զարմ չթողուց։ 21 Երկրորդը առաւ զայն եւ մեռաւ. ան ալ զարմ չթողուց. նոյնպէս ալ երրորդը։ 22 Եօթն ալ զայն առին ու զարմ չթողուցին. բոլորէն ետք՝ կինն ալ մեռաւ։ 23 Ուրեմն յարութեան ատեն, երբ յարութիւն առնեն, անոնցմէ որո՞նն կինը պիտի ըլլայ. որովհետեւ եօթն ալ ունեցան զայն իբր կին»։ 24 Յիսուս պատասխանեց անոնց. «Արդեօք դուք մոլորած չէ՞ք՝ քանի որ ոչ Գիրքերը գիտէք, ոչ ալ Աստուծոյ զօրութիւնը։ 25 Արդարեւ երբ մեռելներէն յարութիւն առնեն, ոչ կ'ամուսնանան եւ ոչ ամուսնութեան կը տրուին, հապա երկինքի հրեշտակներուն պէս կ'ըլլան։ 26 Բայց մեռելներուն մասին՝ թէ յարութիւն կ'առնեն, Մովսէսի գիրքին

մեջ չէ՞ք կարդացեր, թէ ինչպէս Աստուած մորենիին մեջէն խօսեցաւ անոր՝ ըսելով. “Ես եմ Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը”: 27 Ան մեռելներուն Աստուածը չէ, հապա՛ ողջերուն. ուրեմն դուք շատ մոլորած էք»: 28 Դպիրներէն մէկը մօտեցաւ, մտիկ ըրաւ անոնց՝ երբ կը վիճաբանէին, ու նշմարելով թէ լաւ պատասխանեց անոնց՝ հարցուց անոր. «Ո՞րն է բոլոր պատուիրաններուն առաջինը»: 29 Յիսուս պատասխանեց անոր. «Բոլոր պատուիրաններուն առաջինը սա է. “Մտիկ ըրէ, որվ Իսրայէլ. Տէրը՝ մեր Աստուածը՝ միակ Տէրն է: 30 Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածը՝ ամբողջ սիրտովդ, ամբողջ անձովդ, ամբողջ միտքովդ եւ ամբողջ զօրութեամբդ”: Այս է առաջին պատուիրանը: 31 Ու երկրորդը՝ ասոր նման. “Սիրէ՛ ընկերդ քու անձիդ” պէս”: Ասոնցմէ մեծ ուրիշ պատուիրան չկայ»: 32 Դպիրը ըսաւ անոր. «Լա՛ն, վարդապետ, ճշմարտութեամբ ըսիր թէ Աստուած մէկ է, եւ անկէ զատ ուրիշ մը չկայ. 33 նաեւ ամբողջ սիրտով, ամբողջ խելքով, ամբողջ անձով ու ամբողջ զօրութեամբ զայն սիրելը, եւ ընկերը իրեն պէս սիրելը՝ բոլոր ողջակէզներէն ու զոհերէն աւելի է»: 34 Յիսուս՝ տեսնելով որ ան խելամտութեամբ պատասխանեց, ըսաւ անոր. «Աստուծոյ թագաւորութենէն հեռու չես»: Եւ ան ուրիշ ոչ մէկը կը յանդգներ բան մը հարցնել անոր: 35 Երբ Յիսուս կը սորվեցներ տաճարին մեջ՝ ըսաւ. «Դպիրները ինչպէս կ’ըսեն թէ “Քրիստոս Դաւիթի որդին է”: 36 Արդարեւ ինք՝ Դաւիթ՝ Սուրբ Հոգիով

կ'ըսէ. «Տէրը ըսաւ իմ Տէրոջս. «Բազմէ իմ աջ կողմս, մինչեւ որ քու թշնամիներդ պատուանդան դնեն ոտքերուդ»»: 37 Ուրեմն ինք՝ Դաւիթ՝ Տէր կը կոչէ զայն. ինչպէս ան կ'ըլլայ իր որդին»: Բազմութենէն շատեր հաճոյքով մտիկ կ'ընէին անոր: 38 Իր ուսուցումին մէջ կ'ըսէր անոնց. «Չգուշացէք դպիրներէն, որոնք կ'ուզեն երկայն հանդերձներով շրջիլ, կը փնտռեն բարեւները՝ հրապարակներուն վրայ, 39 առաջին աթոռները՝ ժողովարաններու մէջ, եւ առաջին բազմոցները՝ ընթրիքներու մէջ. 40 որոնք կը լափեն այրիներուն տուները, ու իբր պատրուակ՝ աղօթքը կ'երկարեն: Ասոնք աւելի խստութեամբ պիտի դատուին»»: 41 Յիսուս գանձանակին դիմաց նստած՝ կը նայէր թէ բազմութիւնը գանձանակին մէջ ինչպէս դրամ կը ձգէ: Շատ հարուստներ՝ շատ բան ձգեցին: 42 Աղքատ այրի մըն ալ եկաւ ու երկու լումայ ձգեց, որ նաբարակիտ մը կ'ընէ: 43 Իր աշակերտները կանչելով իրեն՝ ըսաւ անոնց. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի թէ այս աղքատ այրին՝ գանձանակը դրամ ձգողներուն բոլորէն աւելի ձգեց. 44 որովհետեւ բոլորը իրենց առատութենէն ձգեցին, բայց ան՝ իր կարօտութենէն՝ ձգեց իր ամբողջ ունեցածը, իր ամբողջ ապրուստը»:

13 Մինչ դուրս կ'ելլէր տաճարէն, իր աշակերտներէն մէկը ըսաւ իրեն. «Վարդապետ, տես ինչպիսի քարեր են, եւ ինչ տեսակ շէնքեր»:
 2 Յիսուս պատասխանեց անոր. «Կը տեսնեմ այդ մեծ շէնքերը. քար քարի վրայ պիտի չմնայ,

ամենը պիտի քակուի»: 3 Մինչ ան նստած էր Ձիթենիներու լեռը՝ տաճարին դիմաց, Պետրոս, Յակոբոս, Յովհաննէս ու Անդրէաս հարցուցին իրեն՝ առանձին. 4 «Ըսէ՛ մեզի, երբ պիտի ըլլայ ատիկա, եւ ինչ նշան պիտի ըլլայ այդ բոլորին կատարուելու ատենը»: 5 Յիսուս պատասխանելով անոնց՝ սկսաւ ըսել. «Չգուշացէք որ ոչ մէկը մոլորեցնէ ձեզ. 6 որովհետեւ շատեր պիտի գան իմ անունովս՝ ըսելով. “Ես եմ Քրիստոսը”, ու պիտի մոլորեցնեն շատերը: 7 Բայց երբ լսէք պատերազմներու մասին, եւ պատերազմներու տարածայնութիւններ՝ մի վրդովիք, որովհետեւ պէտք է որ այս ամենը ըլլայ, բայց դեռ վախճանը չէ: 8 Արդարեւ ազգ ազգի դէմ պիտի ելլէ, ու թագաւորութիւն՝ թագաւորութեան դէմ, եւ տեղ-տեղ երկրաշարժներ պիտի ըլլան. սովեր ու խառնակութիւններ ալ պիտի ըլլան: Ասոնք ցաւերուն սկիզբն են: 9 Չգուշացէք դուք ձեզի համար. քանի որ ատեաններու պիտի մատնեն ձեզ, ժողովարաններու մէջ պիտի ծեծեն ձեզ, ու կառավարիչներու եւ թագաւորներու առջեւ պիտի կենաք՝ իմ պատճառովս, անոնց վկայութիւն ըլլալու համար: 10 Բայց նախ պէտք է որ աւետարանը քարոզուի բոլոր ազգերուն: 11 Իսկ երբ մատնելու տանին ձեզ, նախապէս մի մտահոգուիք թէ ինչ պիտի խօսիք, ոչ ալ խոկացէք. հապա այդ ժամուն ինչ որ ձեզի տրուի՝ զայն խօսեցէք. որովհետեւ ոչ թէ դուք էք որ պիտի խօսիք, հապա Սուրբ Հոգին»: 12

«Եղբայրը մահուան պիտի մատնէ եղբայրը, ու հայրը՝ զաւակը. եւ զաւակներ պիտի ելլեն իրենց ծնողներուն դէմ ու մեռցնեն զանոնք: **13** Բոլորին ատելի պիտի ըլլաք իմ անունիս համար: Բայց զի որ տոկայ մինչեւ վախճանը՝ անիկան պիտի փրկուի: **14** Երբ տեսնէք թէ աւերողին պղծութիւնը՝ - որու մասին Դանիէլ մարգարէին միջոցով խօսուած է - հաստատուած է հո՛րն ուր պէտք չէ ըլլար, (զի որ կարդայ՝ թող հասկնայ,) այն ատեն Զրէաստանի մէջ եղողները լեռները թող փախչին: **15** Ա՛ն որ տանիքին վրայ է՝ թող չիջնէ տունը, ու չմտնէ իր տունէն բան մը առնելու. **16** եւ ան որ արտին մէջ է՝ թող չվերադառնայ իր հանդերձը առնելու: **17** Բայց վայ այդ օրերը յղի եղողներուն ու ծիծ տողողներուն: **18** Աղօթեցէ՛ք՝ որ ձեր փախուստը ձմեռը չըլլայ: **19** Որովհետեւ այդ օրերը այնպիսի տառապանք պիտի ըլլայ, որուն նմանը՝ Աստուծոյ ստեղծած աշխարհի սկիզբէն մինչեւ հիմա եղած չէ, ոչ ալ պիտի ըլլայ: **20** Եթէ Տէրը այդ օրերը չկարճեցներ, ոչ մէկ մարմին պիտի փրկուէր. բայց այդ օրերը կարճեցուց ընտրեալներուն համար՝ որ ընտրեց: **21** Այն ատեն եթէ մէկը ըսէ ձեզի. «Ահա՛ հո՛ն է Քրիստոսը», կամ. «Ահա՛ հո՛ն է», մի՛ հաւատաք: **22** Որովհետեւ սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ պիտի ելլեն, ու ցոյց պիտի տան նշաններ եւ սքանչելիքներ, որպէսզի եթէ կարելի ըլլայ՝ մոլորեցնեն նոյնիսկ ընտրեալները: **23** Իսկ դուք զգուշացէ՛ք. ահա՛ նախապէս ըսի ձեզի ամէն ինչ»: **24** «Բայց այդ

օրերը, այդ տառապանքէն ետք, արեւը պիտի խաւարի եւ լուսինը իր փայլը պիտի չտայ. 25 աստղերը երկինքէն պիտի իյնան, ու երկինքի մէջ եղող զօրութիւնները պիտի սարսին: 26 Այն ատեն պիտի տեսնեն մարդու Որդին, ամպերու մէջ եկած՝ մեծ զօրութեամբ ու փառքով: 27 Այն ատեն պիտի դրկէ իր հրեշտակները եւ պիտի հաւաքէ իր ընտրեալները չորս հովերէն, երկրի ծայրէն մինչեւ երկինքի ծայրը»: 28 «Թզենի՛ւն սորվեցէք առակ մը. երբ անոր ոստերը կակուղնան ու տերեւները ցցուին, կը հասկնաք թէ ամառը մօտ է: 29 Դուք ալ՝ երբ եղած տեսնէք ասոնք, գիտցէք թէ մօտ է՝ դռներուն քով: 30 Եշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Այս սերունդը պիտի չանցնի, մինչեւ որ այս բոլորը պատահին”»: 31 Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին»: 32 «Իսկ այդ օրն ու ժամը՝ ո՛չ մէկ մարդ գիտէ, ո՛չ ալ երկինքի մէջ եղող հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, հապա՝ միայն Հայրը: 33 Չգուշացէք, հսկեցէք եւ աղօթեցէք, որովհետեւ չէք գիտեր թէ ատենը երբ է: 34 Ինչպէս ճամբորդող մարդ մը կը թողու իր տունը, իրաւասութիւն կու տայ իր ծառաներուն, իւրաքանչիւրին՝ իր գործը, ու դռնապանին կը հրամայէ որ արթուն կենայ: 35 Ուրեմն արթուն կեցէք, որովհետեւ չէք գիտեր թէ տան տէրը երբ պիտի գայ, իրիկո՛ւնը՝ թէ կէս գիշերին, աթլորականչի՛ն՝ թէ առտուն: 36 Թերեւս յանկարծ գալով՝ ձեզ գտնէ քունի մէջ: 37 Եւ ինչ որ կ’ըսեմ ձեզի՝ կ’ըսեմ բոլորին. “Արթուն կեցէք”»:

14 Երկու օր ետք՝ Չատիկ ու Բաղարջակերք Էր. եւ քահանայապետներն ու դպիրները կը փնտռէին թէ ինչպէս վարպետութեամբ բռնեն զայն եւ սպաննեն: **2** Բայց կ'ըսէին. «Ո՛չ տօնին ատենը, որպէսզի ժողովուրդին մէջ աղմուկ չըլլայ»: **3** Երբ ինք Բերթանիա Էր, սեղան նստած՝ բորոտ Սիմոնի տունը, կին մը եկաւ՝ որ ունէր ալապաստրէ շիշ մը, լեցուած մեծածախս նարդոսի օծանելիքով. կոտրեց այդ շիշը ու թափեց օծանելիքը անոր գլուխին վրայ: **4** Ոմանք ընդվզեցան իրենք իրենց մէջ եւ ըսին. «Ինչո՞ւ այդ օծանելիքը վատնուեցաւ. **5** քանի որ ատիկա կրնար ծախուիլ երեք հարիւր դահեկանէն աւելի, ու տրուիլ աղքատներուն». եւ սաստիկ կը սրդողէին իրեն դէմ: **6** Բայց Յիսուս ըսաւ. «Թողուցէ՛ք զայն, ինչո՞ւ կ'անհանգստացնէք զինք. ան լաւ գործ մը ըրաւ ինծի: **7** Որովհետեւ ամէն ատեն ունիք աղքատները ձեզի հետ, ու երբ ուզէք՝ կրնաք բարիք ընել անոնց. բայց ամէն ատեն չունիք զիս: **8** Ան ըրաւ ինչ որ կրնար. մարմինս նախապէս օծեց՝ իմ թաղումիս համար: **9** Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ամբողջ աշխարհի մէջ՝ ո՛ւր որ այս աւետարանը քարոզուի, անոր ըրածն ալ պիտի պատմուի՝ իր յիշատակին համար”»: **10** Յուդա Իսկարիօվտացին, տասներկուքէն մէկը, գնաց քահանայապետներուն՝ որ զայն մատնէ անոնց: **11** Անոնք ալ լսելով՝ ուրախացան, եւ իրեն դրամ ալ խոստացան: Ուստի կը փնտռէր պատեհութիւն մը՝ որ մատնէր զայն: **12**

Բաղարջակերթի առաջին օրը, երբ կը մորթէին զատիկը, անոր աշակերտները ըսին իրեն. «Ո՛ր կ'ուզես որ երթանք պատրաստենք, որպէսզի ուտես զատիկը»: 13 Իր աշակերտներէն երկուքը դրկեց եւ ըսաւ անոնց. «Գացէ՛ք քաղաքը, ու ձեզի պիտի հանդիպի մարդ մը՝ որ ուսին վրայ կը տանի ջուրի սափոր մը. հետեւեցէ՛ք անոր, 14 եւ ո՛ր որ մտնէ՝ տանտիրոջ ըսէ՛ք. “Վարդապետը կ'ըսէ. "Ո՛ր է իջեւանը, ուր պիտի ուտեմ զատիկը՝ աշակերտներուս հետ"”»: 15 Ան ալ պիտի ցուցնէ ձեզի մեծ վերնայարկ մը՝ կահաւորուած ու պատրաստ. հո՛ն պատրաստեցէ՛ք մեզի»:

16 Իր աշակերտները գացին, մտան քաղաքը, եւ ինչպէս իրենց ըսաւ՝ այնպէս գտան, ու պատրաստեցին զատիկը: 17 Երբ իրիկուն եղաւ՝ եկաւ տասներկուքին հետ: 18 Երբ սեղան նստան եւ կ'ուտէին, Յիսուս ըսաւ. «Շշմարտապէս կը յայտարարեմ ձեզի թէ ձեզմէ մէկը՝ որ հիմա ինծի հետ կ'ուտէ, պիտի մատնէ զիս»:

19 Անոնք սկսան տրտմիլ ու մէկ ամ մէկ ըսել անոր. «Միթէ ցա եմ», եւ ուրիշ մը. «Միթէ ցա եմ»:

20 Ան ալ պատասխանեց անոնց. «Տասներկուքէն ան՝ որ ինծի հետ թաթխեց իր ձեռքը պնակին մէջ: 21 Արդարեւ մարդու Որդին կ'երթայ՝ ինչպէս գրուած է իրեն համար. բայց վսյ այն մարդուն, որուն միջոցով կը մատնուի մարդու Որդին: Այդ մարդուն լաւ պիտի ըլլար՝ որ ծնած չըլլար»:

22 Երբ անոնք կ'ուտէին՝ Յիսուս հաց առաւ, օրհնեց, կտրեց, տուաւ անոնց եւ ըսաւ. «Առէ՛ք, այս է իմ

մարմինս»։ **23** Նաեւ բաժակը առաւ, շնորհակալ եղաւ ու տուաւ անոնց. բոլորն ալ խմեցին անկէ։ **24** Ըսաւ անոնց. «Այս է իմ արիւնս, նոր ուխտին արիւնը, որ կը թափուի շատերո՛ւ համար։ **25** Եւ մարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ասկէ ետք որթատունկին բերքէն բնա՛ւ պիտի չխմեմ մինչեւ այն օրը՝ երբ նոր խմեմ զայն Աստուծոյ թագաւորութեան մէջ”»։ **26** Օրհներգելէ ետք՝ գացին Զիթենիներու լեռը։ **27** Յիսուս ըսաւ անոնց. «Այս գիշեր բոլորդ ալ պիտի գայթակղիք իմ պատճառովս. որովհետեւ գրուած է. “Յովիւը պիտի զարնեմ, ու ոչխարները պիտի ցրուին”»։ **28** Բայց յարութիւն առնելէս ետք՝ ձեզմէ առաջ պիտի երթամ Գալիլեա»։ **29** Պետրոս ըսաւ անոր. «Թէեւ բոլորն ալ գայթակղին, ես՝ բնա՛ւ»։ **30** Յիսուս ըսաւ անոր. «Եւ մարտապէս կը յայտարարեմ քեզի. “Դուն այսօր, այս գիշեր իսկ, դեռ աքաղաղը երկու անգամ չկանչած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս”»։ **31** Պետրոս աւելի կը պնդէր ու կ’ըսէր. «Նոյնիսկ եթէ պէտք ըլլայ որ քեզի հետ մեռնիմ, բնա՛ւ պիտի չուրանամ քեզ»։ Նոյնպէս կ’ըսէին բոլորն ալ։ **32** Եկան վայր մը՝ որուն անունը Գեթսեմանի էր, եւ ըսաւ իր աշակերտներուն. «Յո՛ւստեցէք՝ մինչեւ որ ես աղօթեմ»։ **33** Իրեն հետ առնելով Պետրոսը, Յակոբոսն ու Յովհաննէսը, սկսաւ սաստիկ այլայլիլ եւ շատ վշտանալ։ **34** Հետեւաբար ըսաւ անոնց. «Իմ անձս չափազանց տրտում է՝ մեռնելու աստիճան. հո՛ս մնացէք եւ արթո՛ւն կեցէք»։ **35** Բիշ մը առջեւ երթալով՝

ինկաւ գետին, իր երեսին վրայ, եւ աղօթեց, որ եթէ կարելի է՝ այդ ժամը անցնի իրմէ: **36** Ան ըսաւ. «Աբբա, Յայր, ամէն բան կարելի է քեզի. հեռացնուր այս բաժակը ինձմէ: Բայց ոչ թէ ինչպէս եւ կ'ուզեմ, հապա՜ ինչպէս դո՛ւն կ'ուզես»: **37** Երբ եկաւ ու քնացած գտաւ զանոնք՝ ըսաւ Պետրոսի. «Սիմոն, կը քնանամ. չկրցամ ժամ մը արթուն մնալ: **38** Արթուն մնացէք եւ աղօթեցէք, որպէսզի չմտնէք փորձութեան մէջ. իրաւ է թէ հոգին յօժար է, բայց մարմինը՝ տկար»: **39** Դարձեալ գնաց աղօթեց՝ նոյն խօսքը ըսելով: **40** Ապա վերադարձաւ եւ դարձեալ քնացած գտաւ զանոնք. որովհետեւ անոնց աչքերը ծանրացած էին, ու չէին գիտեր ինչ պատասխանել անոր: **41** Երրորդ անգամ ալ եկաւ եւ ըսաւ անոնց. «Ասկէ ետք քնացէք ու հանգստացէք. բաւական է, ժամը հասաւ, ահա՛ մարդու Որդին պիտի մատնուի մեղաւորներուն ձեռքը: **42** Ոտքի ելէք՝ երթանք: Ահա՛ մօտեցաւ ան՝ որ պիտի մատնէ զիս»: **43** Մինչ ան դեռ կը խօսէր, իսկոյն Յուդա՝ տասներկուքէն մէկը՝ եկաւ, եւ իրեն հետ՝ քահանայապետներէն, դպիրներէն ու երէցներէն դրկուած մեծ բազմութիւն մը, սուրերով եւ բիրերով: **44** Չայն մատնողը նշան մը տուեր էր անոնց՝ ըսելով. «Ո՛վ որ համբուրեմ՝ ան է, բռնեցէք զայն ու տարէք ապահովութեամբ»: **45** Երբ ինք եկաւ՝ իսկոյն մօտեցաւ անոր եւ ըսաւ. «Ռաբբի, Ռաբբի», ու համբուրեց զայն: **46** Եւ անոնք ձեռք բարձրացուցին անոր վրայ ու բռնեցին զայն: **47** Զովը կայնողներէն մէկը՝ քաշեց

սուրը, զարկաւ քահանայապետին ծառային եւ խլեց անոր ականջը: **48** Յիսուս ըսաւ անոնց. «Իբր թէ աւագակի՞ դէմ եկաք՝ սուրերով ու բիրերով բռնելու զիս: **49** Ամէն օր ձեր քով էի եւ տաճարին մէջ կը սորվեցնէի, ու չբռնեցիք զիս. բայց այս բոլոր բաները եղան՝ որպէսզի գրուածները իրագործուին»: **50** Բոլոր աշակերտներն ալ թողուցին զայն եւ փախան: **51** Երիտասարդ մը անոր կը հետեւէր՝ մերկ մարմինին վրայ կտաւ մը առած, սակայն երիտասարդները բռնեցին զայն: **52** Ան ալ ձգեց կտաւը, եւ մերկ փախաւ անոնցմէ: **53** Տարին Յիսուսը քահանայապետին, եւ անոր քով համախմբուեցան բոլոր քահանայապետները, երէցներն ու դպիրները: **54** Պետրոս հեռուէն հետեւեցաւ անոր մինչեւ ներսը՝ քահանայապետին գաւիթը. նստաւ սպասաւորներուն հետ, ու կը տաքնար կրակին քով: **55** Քահանայապետները եւ ամբողջ ատեանը վկայութիւն կը փնտռէին Յիսուսի դէմ՝ որպէսզի մեռցնեն զայն, ու չէին գտներ. **56** որովհետեւ շատեր սուտ վկայութիւն կու տային անոր դէմ, բայց վկայութիւնները համանման չէին: **57** Ոմանք ալ կանգնեցան եւ սուտ վկայութիւն տուին անոր դէմ՝ ըսելով. **58** «Մենք լսեցինք ատկէ՝ որ կ'ըսէր. “Ես պիտի քակեմ այդ ձեռակերտ տաճարը, եւ պիտի կառուցանեմ ուրիշ մը՝ անձեռակերտ՝ երեք օրուան մէջ”»: **59** Բայց այդպէս ալ իրենց վկայութիւնը համանման չէր: **60** Քահանայապետը՝ մէջտեղ կանգնելով՝ հարցուց

Յիսուսի. «Ոչինչ կը պատասխանես. ինչ կը վկայեն ասոնք քեզի դէմ»: 61 Բայց ան լուռ կը կենար ու ոչինչ կը պատասխանէր: Քահանայապետը դարձեալ հարցուց անոր. «Դ՞ո՞ւն ես Քրիստոսը, օրհնեալ Աստուծոյ Որդին»: 62 Յիսուս ըսաւ. «Ես եմ. եւ պիտի տեսնէք մարդու Որդին՝ բազմած Չօրութեան աջ կողմը, ու եկած երկինքի ամպերով»: 63 Քահանայապետը պատռեց իր հանդերձները եւ ըսաւ. «Ա՛յ ինչ պէտք ունինք վկաներու: 64 Լսեցի՞ք ատոր հայհոյութիւնը. ինչ կը թուի ձեզի»: Բոլորը դատապարտեցին զայն՝ թէ մահապարտ է: 65 Ոմանք սկսան թքնել անոր վրայ, ծածկել անոր երեսը, կռփահարել զայն եւ ըսել անոր. «Մարգարէացիի»: Իսկ սպասաւորները ապտակ կը զարնէին անոր: 66 Պետրոս վարը՝ գաւիթն էր: Քահանայապետին աղախիններէն մէկը եկաւ, 67 ու տեսնելով Պետրոսը՝ որ կը տաքնար, նայեցաւ անոր եւ ըսաւ. «Դ՞ո՞ւն ալ Յիսուս Նազովրեցիին հետ էիր»: 68 Բայց ան ուրացաւ՝ ըսելով. «Չեմ գիտեր, ու չեմ հասկնար թէ ինչ կը խօսիս»: Երբ դուրս ելաւ՝ նախագաւիթը, աքաղաղը կանչեց: 69 Աղախինը դարձեալ տեսաւ զայն, եւ սկսաւ ըսել շուրջը կայնողներուն. «Ասիկա՛ն ալ անոնցմէ է»: 70 Ան ալ դարձեալ ուրացաւ: Քիչ մը ատենէն ետք՝ դարձեալ շուրջը կայնողները ըսին Պետրոսի. «Ճշմարտապէս դուն անոնցմէ ես, որովհետեւ Գալիլեացի ես, եւ խօսուածքդ ալ կը նմանի»: 71 Բայց ան սկսաւ նզովել ու երդում ընել՝ ըսելով. «Չեմ ճանչնար

այդ մարդը՝ որուն մասին կը խօսիք»։ 72 Իսկոյն երկրորդ անգամ աքաղաղը կանչեց։ Պետրոս յիշեց այն խօսքը՝ որ Յիսուս ըսեր էր իրեն. «Դեռ աքաղաղը երկու անգամ չկանչած՝ դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս»։ Եւ սկսաւ լալ։

15 Առտուն՝ իսկոյն քահանայապետները, երեցներուն ու դպիրներուն հետ, նաեւ ամբողջ ատեանը՝ խորհրդակցեցան, կապեցին Յիսուսը ու տարին մատնեցին Պիղատոսի։ 2 Պիղատոս հարցուց անոր. «Դ՞նն ես Հրեաներուն թագաւորը»։ Ան ալ պատասխանեց անոր. «Դ՞նն կ'ըսես»։ 3 Իսկ քահանայապետները կ'ամբաստանէին զինք շատ բաներով։ 4 Պիղատոս դարձեալ հարցուց անոր. «Ոչի՞նչ կը պատասխանես. նայէ՛, որքան կը վկայեն քեզի դէմ»։ 5 Յիսուս տակաւին ոչինչ կը պատասխանէր, այնպէս որ Պիղատոս զարմացաւ։ 6 Տօնին ատենը բանտարկեալ մը կ'արձակէր անոնց, ո՞վ որ ուզէին։ 7 Մէկը կար՝ Բարաբբա կոչուած, կապուած իրեն հետ ապստամբողներուն հետ, որոնք մարդասպանութիւն գործած էին ապստամբութեան ատեն։ 8 Բազմութիւնը՝ գոռալով՝ սկսաւ խնդրել, որ ընէ՝ ինչպէս միշտ կ'ընէր իրենց։ 9 Պիղատոս պատասխանեց անոնց. «Կ'ուզէ՞ք որ արձակեմ ձեզի Հրեաներուն թագաւորը»։ 10 որովհետեւ գիտէր թէ քահանայապետները նախանձի համար մատնած էին զայն։ 11 Բայց քահանայապետները գրգռեցին բազմութիւնը՝ որ ան փոխարէնը Բարաբբան

արձակէ իրենց: **12** Դարձեալ Պիղատոս ըսաւ անոնց. «Յապա ինչ կ'ուզէք որ ընեմ անոր՝ որ կը կոչէք Յրեաներուն թագաւորը»: **13** Անոնք դարձեալ աղաղակեցին. «Խաչէ՛ զայն»:

14 Պիղատոս ըսաւ անոնց. «Բայց ինչ չարիք ըրած է»: Անոնք ալ աւելի կ'աղաղակէին. «Խաչէ՛ զայն»:

15 Պիղատոս ալ՝ փափաքելով գոհացնել բազմութիւնը՝ Բարաբբան արձակեց անոնց, ու խարազանելով Յիսուսը՝ յանձնեց անոնց որպէսզի խաչուէր: **16** Չինուորները ներս տարին զայն՝ գաւիթը, այսինքն՝ կառավարիչին պալատը, եւ հաւաքեցին ամբողջ գունդը: **17** Ծիրանի հագցուցին անոր, ու հիւսելով փուշէ պսակ մը՝ դրին անոր գլուխը. **18** եւ սկսան բարեւել զայն ու ըսել. «Ողջոյն, Յրեաներու թագաւոր»:

19 Եղեգով կը զարնէին անոր գլուխին, կը թքնէին անոր վրայ, եւ ծնրադրելով՝ կ'երկրպագէին անոր: **20** Երբ ծաղրեցին զայն, հանեցին վրայէն ծիրանին, հագցուցին անոր իր հանդերձները, ու դուրս տարին զայն՝ որպէսզի խաչեն: **21** Ստիպեցին մէկը՝ Սիմոն Կիւրենացին, Աղեքսանդրոսի ու Ռուփոսի հայրը, որ ատկէ կ'անցներ՝ արտէն գալով, որպէսզի վերցնէ անոր խաչը: **22** Եւ տարին զայն Գողգոթա կոչուած տեղը, (որ կը թարգմանուի՝ Գանկի տեղ,) **23** ու տուին անոր զմուռսով խառնուած գինի՝ որ խմէ. բայց ինք չառաւ: **24** Երբ խաչեցին զայն, բաժնեցին անոր հանդերձները՝ վիճակ ձգելով անոնց վրայ, թէ ով՝ ինչ պիտի առնէ: **25** Երրորդ ժամն՝ Էր՝ երբ

խաչեցին զայն: 26 Անոր ամբաստանագիրին վրայ գրուած էր. «Յրեաներուն թագաւորը»: 27 Երկու աւագակներ ալ խաչեցին անոր հետ, մէկը՝ անոր աջ կողմը, ու միւսը՝ ձախ կողմը: 28 Այսպէս իրագործուեցաւ գրուածը՝ որ կ'ըսէ. «Անօրէններու հետ սեպուեցաւ»: 29 Անոնք որ կ'անցնէին՝ կը հայհոյէին անոր, կը շարժէին իրենց գլուխը եւ կ'ըսէին. «Աւանդ, որ կը քակէիր տաճարը, ու կը կառուցանէիր երեք օրուան մէջ. 30 փրկէ դուն քեզ եւ իջիր խաչէն»: 31 Նմանապէս քահանայապետներն ալ՝ դպիրներուն հետ՝ իրենց մէջ ծաղրելով կ'ըսէին. «Ուրիշները փրկեց, ինքզինք չի կրնար փրկել: 32 Այդ Քրիստոսը՝ Իսրայէլի թագաւորը՝ հիմա թող իջնէ խաչէն, որպէսզի տեսնենք ու հաւատանք»: Իրեն հետ խաչուածներն ալ կը նախատէին զայն: 33 Երբ վեցերորդ ժամը հասաւ՝ խաւար եղաւ ամբողջ երկրին վրայ, մինչեւ իններորդ ժամը: 34 Իններորդ ժամուն՝ Յիսուս բարձրաձայն գոչեց. «Էլոհի՛, Էլոհի՛, լամա՛ սաբաքթանի», որ կը թարգմանուի. «Իմ Աստուածս, իմ Աստուածս, ինչո՞ւ լքեցիր զիս»: 35 Քովը կայնողներէն ոմանք, երբ լսեցին՝ ըսին. «Եղիան կը կանչէ»: 36 Ու մէկը վազեց, լեցուց սպունգ մը քացախով, անցուց եղէգի մը եւ տուաւ անոր որ խմէ՝ ըսելով. «Թողուցէք, տեսնենք թէ Եղիա պիտի գայ՝ իջեցնելու զայն»: 37 Յիսուս բարձր ձայն մը արձակեց ու հոգին տուաւ: 38 Տաճարին վարագոյրը երկուքի պատռեցաւ՝ վերէն վար: 39 Յարիւրապետը՝ որ կեցած էր անոր դիմաց,

տեսնելով որ այսպէս աղաղակելով հոգին տուաւ՝ ըսաւ. «Ճշմարտապէս այս մարդը Աստուծոյ Որդին էր»: **40** Կիներ ալ կային, որոնք հեռուէն կը նայէին: Անոնց մէջ էին Մարիամ Մագդաղենացին, Կրտսեր Յակոբոսի ու Յովսէփի մայրը՝ Մարիամ, եւ Սողոմմէ, **41** որոնք՝ երբ Յիսուս Գալիլէա էր՝ հետեւեր ու սպասարկեր էին անոր: Ուրիշ շատ կիներ ալ կային՝ որոնք անոր հետ ելած էին Երուսաղէմ: **42** Երբ արդէն իրիկուն եղաւ, քանի որ այդ օրը Ուրբաթ էր, այսինքն՝ Շաբաթին նախորդ օրը, **43** Յովսէփ Արիմաթեացին, մեծայարգ խորհրդական մը՝ որ ինք ալ կը սպասէր Աստուծոյ թագաւորութեան, եկաւ ու յանդգնութեամբ մտաւ Պիղատոսի քով, եւ խնդրեց Յիսուսի մարմինը: **44** Պիղատոս զարմացաւ որ արդէն մեռած է: Կանչելով հարիւրապետը՝ հարցուց անոր թէ շատո՞նց մեռած է: **45** Ու երբ ստոյգը գիտցաւ հարիւրապետէն, պարզեւեց մարմինը Յովսէփի: **46** Յովսէփ կտաւ գնեց, եւ իջեցնելով զայն՝ փաթեց կտաւով, դրաւ գերեզմանի մը մէջ՝ որ փորուած էր Ժայռի մէջ, ու քար մը գլորեց գերեզմանին դուռը: **47** Մարիամ Մագդաղենացին, եւ Յովսէփի մայրը՝ Մարիամ, կը նայէին թէ ո՛ր կը դնէին զայն:

16 Երբ Շաբաթը անցաւ, Մարիամ Մագդաղենացին, Յակոբոսի մայրը՝ Մարիամ, ու Սողոմմէ բոյրեր գնեցին, որպէսզի երթան եւ օծեն զայն: **2** Մէկշաբթի առտուն՝ շատ կանուխ, երբ արեւը կը ծագէր, գացին գերեզմանը, **3** ու

կ'ըսէին իրարու. «Մեզի համար ո՞վ պիտի գլորէ քարը՝ գերեզմանին դռնէն», 4 որովհետեւ շատ մեծ էր: Բայց նայելով՝ տեսան թէ քարը գլորուած էր: 5 Մտնելով գերեզմանէն ներս՝ տեսան երիտասարդ մը, որ նստած էր աջ կողմը՝ ճերմակ պարեգօտ հագած, եւ զարհուրեցան: 6 Ան ալ ըսաւ անոնց. «Մի՛ զարհուրիք. Յիսուս Նազովրեցի՛ն կը փնտռէք՝ որ խաչուեցաւ: Ան յարութիւն առաւ, հոս չէ: Ահա՛ այն տեղը՝ ուր դրին զայն: 7 Ուրեմն զացէք, ըսէք անոր աշակերտներուն ու Պետրոսի՝ թէ ահա՛ ձեզմէ առաջ կ'երթայ Գալիլեա. հոն պիտի տեսնէք զայն՝ ինչպէս ըսաւ ձեզի»: 8 Անոնք՝ դողով եւ հիացումով համակուած՝ դուրս ելան՝ ու փախան գերեզմանէն, եւ ո՛չ մէկ բան ըսին ոեւէ մէկուն, քանի որ կը վախնային: 9 (note: The most reliable and earliest manuscripts do not include Mark 16:9-20.) Յիսուս՝ Մէկշաբթի առտուն յարութիւն առած՝ նախ երեւցաւ Մարիամ Մագդաղենացիին, որմէ հաներ էր եօթը դէլ: 10 Ինք ալ գնաց եւ պատմեց անոնց՝ որոնք անոր հետ էին, մինչ կը սգային ու կու լային: 11 Իսկ երբ անոնք լսեցին թէ ան ողջ է եւ ինք տեսած է զայն, չհաւատացին: 12 Յետոյ ուրիշ կերպարանքով երեւցաւ անոնցմէ երկուքին՝ որոնք քալելով արտը կ'երթային: 13 Իրենք ալ զացին ու պատմեցին միւսներուն. բայց իրենց ալ չհաւատացին: 14 Յետոյ երեւցաւ տասնմէկին՝ երբ սեղան նստած էին, ու կշտամբեց անոնց անհաւատութիւնը եւ սիրտի կարծրութիւնը, որովհետեւ չհաւատացին անոնց՝ որոնց ինք

երեւցալ՝ մեռելներէն յարութիւն առած: **15** Նաեւ ըսաւ անոնց. «Գացէ՛ք ամբողջ աշխարհը, ու քարոզեցէ՛ք աւետարանը բոլոր արարածներուն: **16** Ա՛ն որ հաւատայ եւ մկրտուի՝ պիտի փրկուի. ան որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի: **17** Սա՛ նշանները պիտի հետեւին անոնց՝ որ կը հաւատան.- դելէր դուրս պիտի հանեն իմ անունովս, նոր լեզուներ պիտի խօսին, **18** օձեր պիտի առնեն իրենց ձեռքերուն մէջ, ու եթէ խմեն մահառիթ դեղ մը՝ պիտի չվնասէ իրենց. ձեռք պիտի դնեն հիւանդներու վրայ, եւ անոնք պիտի առողջանան»: **19** Այսպէս՝ անոնց հետ խօսելէն ետք՝ Տէրը համբարձաւ երկինք, ու բազմեցաւ Աստուծոյ աջ կողմը. **20** իսկ անոնք գացին եւ կը քարոզէին ամենուրեք: Տէրը անոնց գործակից էր, ու կը հաստատէր խօսքը՝ ընկերացող նշաններով: Ամէն:

ՂՈՒԿԱՍ

1 Քանի շատեր ձեռնարկեցին կարգի դնել մեր մէջ հաստատ գիտցուած բաներուն պատմութիւնը, **2** ինչպէս սկիզբէն աւանդեցին մեզի ականատես վկաները եւ խօսքին սպասաւորները, **3** ինծի ալ՝ որ սկիզբէն հետեւած էի այդ բոլոր բաներուն՝ յարմար թուեցաւ կարգով գրել քեզի, պատուական թեովիլոս, **4** որպէսզի գիտնաս ստոյգը այն բաներուն մասին՝ որոնց համաձայն կրթուեցար: **5** Հրեաստանի Հերովդէս թագաւորին օրերը՝ Աբիայի դասէն Չաքարիա անունով քահանայ մը կար, որուն կինը Ահարոնի աղջիկներէն էր, անունը՝ Եղիսաբէթ: **6** Երկուքն ալ Աստուծոյ առջեւ արդար էին, անմեղադրելի կերպով ընթանալով Տէրոջ բոլոր պատուիրաններուն եւ կանոններուն համաձայն: **7** Չաւակ չունէին, որովհետեւ Եղիսաբէթ ամուլ էր, ու երկուքն ալ յառաջացած տարիք ունէին: **8** Մինչ ան՝ իր դասին օրերը հասնելուն համար՝ քահանայութիւն կը կատարէր Աստուծոյ առջեւ, **9** քահանայութեան սովորութեան համաձայն՝ իրեն վիճակուեցաւ Տէրոջ տաճարը մտնել եւ խունկ ծխել: **10** Ժողովուրդին ամբողջ բազմութիւնը դուրսը աղօթքի կայնած էր՝ խունկի ժամուն: **11** Այդ ատեն Տէրոջ հրեշտակը երեւցաւ անոր, ու կայնեցաւ խունկի գոհասեղանին աջ կողմը: **12** Երբ Չաքարիա տեսաւ՝ վրդովեցաւ, եւ վախը համակեց զինք՝: **13** Հրեշտակը ըսաւ անոր. «Մի վախնար, Չաքարիա, որովհետեւ քու աղերսանքդ

ընդունուեցաւ: Կինդ՝ Եղիսաբէթ որդի մը պիտի ծնանի քեզի, եւ անոր անունը Յովհաննէս պիտի կոչես: **14** Քեզի ուրախութիւն ու ցնծութիւն պիտի ըլլայ, եւ շատեր պիտի ուրախանան անոր ծնունդին համար. **15** որովհետեւ Տէրոջ առջեւ մեծ պիտի ըլլայ: Ո՛չ գինի պիտի խմէ, ո՛չ ալ օղի, ու դեռ իր մօր որովայնէն Սուրբ Հոգիով պիտի լեցուի, **16** եւ Իսրայէլի որդիներէն շատերը պիտի դարձնէ Տէրոջ՝ իրենց Աստուծոյն: **17** Ինք պիտի գայ անոր առջեւէն՝ Եղիայի հոգիով ու զօրութեամբ, հայրերուն սիրտը վերադարձնելու դէպի զաւակները, եւ անհնազանդները՝ արդարներուն իմաստութեան, որպէսզի պատրաստէ Տէրոջ բարեյօժար ժողովուրդ մը»: **18** Չաքարիա ըսաւ հրեշտակին. «Ի՞նչպէս գիտնամ ատիկա, որովհետեւ ես ծեր եմ, ու կինս յառաջացած տարիք ունի»: **19** Հրեշտակը պատասխանեց անոր. «Ես Գաբրիէլն եմ՝ որ կը կայնիմ Աստուծոյ առջեւ, ու որկուեցայ քեզի՝ խօսելու եւ այս բաները քեզի ասելու: **20** Ահա դուն համր պիտի ըլլաս, ու պիտի չկարենաս խօսիլ մինչեւ այն օրը՝ երբ այս բաները ըլլան, քանի որ չհաւատացիր իմ խօսքերուն՝ որոնք պիտի իրագործուին իրենց ատենին»: **21** Ժողովուրդը կը սպասէր Չաքարիայի, եւ կը զարմանային որ ան կ'ուշանար տաճարին մէջ: **22** Երբ դուրս ելաւ՝ չէր կրնար խօսիլ անոնց հետ. ուստի ըմբռնեցին թէ տեսիլք մը տեսած է տաճարին մէջ: Եւ ինք նշան կ'ընէր անոնց, ու համր կը մնար: **23** Երբ իր պաշտօնին

օրերը լրացան՝ իր տունը գնաց: **24** Այդ օրերէն
 ետք անոր կինը՝ Եղիսաբէթ յղացաւ, եւ հինգ
 ամիս կը պահուըտէր ու կ'ըսէր. **25** «Այսպէս ըրաւ
 ինծի Տէրը՝ այս օրերուս, որ իմ վրաս նայեցաւ՝
 նախատինքս մարդոց մէջէն վերցնելու համար»:
26 Վեցերորդ ամսուան մէջ՝ Գաբրիէլ հրեշտակը
 Աստուծմէ դրկուեցաւ Գալիլեայի մէկ քաղաքը,
 որուն անունը Նազարէթ էր, **27** կոյսի մը՝ մարդու
 մը նշանուած, որուն անունը Յովսէփ էր, Դաւիթի
 տունէն. այդ կոյսին անունը Մարիամ էր: **28**
 Հրեշտակը անոր քով մտնելով՝ ըսաւ. «Ողջոյն,
 շնորհընկալ կոյս, Տէրը քեզի հետ է: Դուն կ'իներուն
 մէջ օրհնեալ ես»:
29 Տեսնելով զայն՝ շփոթեցաւ
 անոր խօսքէն, եւ ինքնիրեն կը մտածէր թէ ինչ
 տեսակ բարեւ էր ատիկա: **30** Հրեշտակը ըսաւ
 անոր. «Մի վախ՛նար, Մարիամ, որովհետեւ շնորհք
 գտար Աստուծոյ քով: **31** Ահա՛ պիտի յղանաս
 որովայնիդ մէջ ու որդի մը պիտի ծնանիս, եւ անոր
 անունը Յիսուս պիտի կոչես: **32** Ան մեծ պիտի
 ըլլայ ու Ամենաբարձրին Որդին պիտի կոչուի:
 Տէր Աստուած անոր պիտի տայ իր հօր՝ Դաւիթի
 գահը, **33** եւ Յակոբի տան վրայ յաւիտեան պիտի
 թագաւորէ: Անոր թագաւորութիւնը վախճան
 պիտի չունենայ»: (aiðn g165) **34** Մարիամ ըսաւ
 հրեշտակին. «Ինչպէս պիտի ըլլայ այդ բանը,
 քանի որ ես այր մարդ չեմ գիտեր»:
35 Հրեշտակը պատասխանեց անոր. «Սուրբ Հոգին պիտի գայ
 վրադ, ու Ամենաբարձրին զօրութիւնը հովանի
 պիտի ըլլայ քեզի. ուստի այն սուրբը որ քեզմէ

պիտի ծնի՝ Աստուծոյ Որդի պիտի կոչուի: **36**
 Ահա՛ քու ազգականդ՝ Եղիսաբէթ, ինք ալ՝ իր
 ծերութեան ատեն՝ որդիով մը յղի է. եւ ասիկա
 վեցերորդ ամիսն է անոր՝ որ ամուլ կոչուած էր.
37 որովհետեւ ոչինչ անկարելի է Աստուծոյ»: **38**
 Մարիամ ըսաւ. «Ահա ես Տէրոջ աղախինն եմ, քու
 խօսքիդ համաձայն թող ըլլայ ինծի»: Ու հրեշտակը
 գնաց անոր քովէն: **39** Այդ օրերը Մարիամ
 կանգնեցաւ, փութալով գնաց լեռնակողմը՝
 Յուդայի մէկ քաղաքը, **40** մտաւ Չաբարիայի
 տունը եւ բարեւեց Եղիսաբէթը: **41** Երբ Եղիսաբէթ
 լսեց Մարիամի բարեւը, երախան խայտաց
 անոր որովայնին մէջ. իսկ Եղիսաբէթ լեցուեցաւ
 Սուրբ Հոգիով, **42** ու բարձրաձայն գոչելով ըսաւ.
 «Դուն օրհնեալ ես կիներուն մէջ, եւ օրհնեալ
 է որովայնիդ պտուղը: **43** Այս ինչպէս եղաւ, որ
 իմ Տէրոջս մայրը եկաւ ինծի. **44** որովհետեւ
 ահա՛ երբ քու բարեւիդ ձայնը հասաւ ականջիս,
 երախան ցնծութենէն խայտաց որովայնիս մէջ: **45**
 Երանի՛ անոր՝ որ հաւատացած է, որովհետեւ՝
 պիտի կատարուին այն բաները՝ որոնք Տէրոջմէն
 ըսուեցան իրեն»: **46** Մարիամ ըսաւ. «Իմ անձս
 կը մեծարէ Տէրը, **47** եւ իմ հոգիս ցնծաց իմ
 Փրկիչ Աստուծոմովս, **48** քանի որ նայեցաւ իր
 աղախինին նուաստութեան. արդարեւ ահա՛
 ասկէ ետք՝ բոլոր սերունդները երանելի պիտի
 կոչեն զիս, **49** որովհետեւ Հօգօրը մեծամեծ բաներ
 ըրաւ ինծի: Անոր անունը սուրբ է, **50** եւ անոր
 ողորմութիւնը իրմէ վախճողներուն վրայ է՝

սերունդէ սերունդ: **51** Իր բազուկով զօրութիւն ցոյց տուաւ, ցրուեց ամբարտաւանները իրենց սիրտին երեւակայութեամբ: **52** Չօրաւորները իջեցուց իրենց գահերէն, ու բարձրացուց նուաստները: **53** Անօթիները լիացուց բարիքներով, եւ պարապ ճամբեց հարուստները: **54** Օգնութեան հասաւ իր Իսրայէլ ծառային, յիշելով իր ողորմութիւնը **55** ինչպէս ինք խոստացած էր մեր հայրերուն - Աբրահամի եւ անոր զարմին հանդէպ՝ յաւիտեան»:

(*aiðn g165*) **56** Մարիամ անոր քով մնաց՝ գրեթէ երեք ամիս, ապա վերադարձաւ իր տունը: **57** Եղիսաբէթի ծնանելու ժամանակը լրացաւ, ու որդի մը ծնաւ: **58** Երբ լսեցին անոնք՝ որ կը բնակէին անոր շուրջը, նաեւ անոր ազգականները, թէ Տէրը մեծարած էր զայն իր ողորմութեամբ, անոր հետ ուրախացան: **59** Ութերորդ օրը եկան մանուկը թլփատելու, եւ Չաքարիա կը կոչէին զայն՝ իր հօր անունով: **60** Իսկ անոր մայրը ըսաւ. «Ո՛հ, այլ՝ Յովհաննէս պիտի կոչուի»: **61** Իրեն ըսին. «Քու ազգականներուդ մէջ չկայ մէկը, որ այս անունով կոչուի»: **62** Նշան ըրին անոր հօր թէ ինչ անունով կ'ուզէ որ ան կոչուի: **63** Ինք ալ տախտակ մը ուզեց ու գրեց. «Յովհաննէս է անոր անունը»: Բոլորն ալ զարմացան: **64** Անմիջապէս բացուեցաւ իր բերանը, նաեւ՝ լեզուն, ու խօսեցաւ եւ օրհնեց Աստուած: **65** Վախը համակեց բոլոր անոնց շուրջը բնակողները, եւ այս բոլոր բաները կը պատմուէին Զրէաստանի ամբողջ լեռնակողմը: **66** Բոլոր լսողները անոնց մասին կը

մտածեին՝ ու կ'ըսէին. «Արդեօք ինչ պիտի ըլլայ այս մանուկը»: Եւ Տէրոջ ձեռքը անոր հետ էր: **67** Անոր հայրը՝ Չաքարիա, Սուրբ Զոգիով լեցուած՝ մարգարեացաւ ու ըսաւ. **68** «Օրհնեալ ըլլայ Տէրը, Իսրայելի Աստուածը, որ այցելեց իր ժողովուրդին եւ ազատագրեց զայն: **69** Մեզի փրկութեան եղջիւր մը հանեց իր Դաւիթ ծառային տունէն, **70** (ինչպէս խօսեցաւ սուրբերուն բերանով, որոնք դարերու սկիզբէն ի վեր անոր մարգարէներն էին,) (aiōn g165) **71** փրկութիւն տալու մեր թշնամիներէն ու բոլոր մեզ ատողներուն ձեռքէն, **72** իրագործելու մեր հայրերուն խոստացած ողորմութիւնը եւ յիշելու իր սուրբ ուխտը, **73** (այն երդումը որ մեր հօր՝ Աբրահամի ըրաւ,) որպէսզի մեզի շնորհէ՝ **74** մեր թշնամիներուն ձեռքէն ազատելով՝ առանց վախի պաշտել զինք, **75** սրբութեամբ եւ արդարութեամբ ընթանալով իր առջեւ՝ մեր կեանքին բոլոր օրերուն մէջ: **76** Իսկ դուն, մանուկ, Ամենաբարձրին մարգարէն պիտի կոչուիս, որովհետեւ “պիտի երթաս Տէրոջ առջեւէն՝ անոր ճամբաները պատրաստելու, **77** անոր ժողովուրդին գիտցնելու իրենց փրկութիւնը՝ իրենց մեղքերուն ներումով”, **78** մեր Աստուծոյն գթառատ ողորմութեամբ, որով ճագող արեւը բարձրէն այցելեց մեզի՝ **79** “փայլելու խաւարի եւ մահուան շուքի մէջ բնակողներուն վրայ”, ու մեր ոտքերը ուղղելու դէպի խաղաղութեան ճամբան»: **80** Մանուկը կը մեծնար ու կը զօրանար հոգիով,

Եւ անապատներուն մէջ Էր՝ մինչեւ այն օրը, երբ
դարձեալ ցոյց տուաւ ինքզինք Իսրայելի:

2 Այդ օրերը Օգոստոս կայսրէն հրամանագիր
ելաւ, որ ամբողջ երկրագունդը արձանագրուի:
2 (Այս առաջին աշխարհագիրը եղաւ՝ երբ
Կիւրենոս Սուրիայի վրայ կառավարիչ Էր:
) **3** Բոլորը կ'երթային արձանագրուելու,
իւրաքանչիւրը՝ իր քաղաքին մէջ: **4** Յովսէփ ալ՝
Գալիլեայէն, Նազարէթ քաղաքէն, բարձրացաւ
դէպի Հրէաստան՝ Դաւիթի քաղաքը, որ Բեթլեհէմ
կը կոչուի, (քանի ինք Դաւիթի տունէն եւ
գերդաստանէն Էր,) **5** արձանագրուելու Մարիամի
հետ, որ իր նշանածն Էր ու յղի Էր: **6** Երբ անոնք
հոն Էին՝ անոր ծնանելու օրերը լրացան. **7**
եւ իր անդրանիկ որդին ծնաւ, խանձարուրով
փաթթեց զայն ու մսուրին մէջ պառկեցուց,
որովհետեւ իջեւանին մէջ տեղ չկար իրենց: **8**
Այդ երկրամասը դաշտաբնակ հովիւներ կային,
որոնք իրենց հօտերը կը պահպանէին գիշերուան
մէջ: **9** Եւ ահա՛ Տէրոջ հրեշտակը անոնց վրայ
հասաւ, Տէրոջ փառքը անոնց շուրջը փայլեցաւ,
ու սաստիկ վախցան: **10** Բայց հրեշտակը
ըսաւ անոնց. «Մի վախնաք, որովհետեւ ահա՛
ես մեծ ուրախութեան աւետիս մը կու տամ
ձեզի, որ ամբողջ ժողովուրդին պիտի ըլլայ. **11**
որովհետեւ այսօր՝ Դաւիթի քաղաքին մէջ՝ Փրկիչ
մը ծնաւ ձեզի, որ Օծեալ Տէրն Է: **12** Եւ սա՛
ձեզի նշան մը պիտի ըլլայ. երախայ մը պիտի
գտնէք՝ խանձարուրով փաթթուած ու մսուրի

մէջ պառկած»։ 13 Յանկարծ այդ հրեշտակին հետ երկնային զօրքերու բազմութիւն մը եղաւ, որոնք Աստուած կը գովաբանէին եւ կ'ըսէին. 14 «Ամենաբարձր վայրերուն մէջ՝ Աստուծոյ փանօք, երկրի վրայ՝ խաղաղութիւն, մարդոց մէջ՝ բարեացակամութիւն»։ 15 Երբ հրեշտակները երկինք վերցուեցան անոնցմէ, հովիւները ըսին իրարու. «Եկէ՛ք, երթանք մինչեւ Բեթլեհեմ, ու տեսնենք թէ ինչ է այս եղած բանը՝ որ Տէրը գիտցուց մեզի»։ 16 Ուստի գացին աճապարելով, եւ գտան Մարիամն ու Յովսէփը, եւ մտնելէն մէջ պառկած երախան։ 17 Երբ տեսան, գիտցուցին այն խօսքը՝ որ այս մանուկին մասին ըսուեցաւ իրենց։ 18 Բոլոր լսողները կը զարմանային այն բաներուն վրայ, որ հովիւները կը պատմէին իրենց։ 19 Իսկ Մարիամ կը պահէր այս բոլոր բաները իր սիրտին մէջ, եւ կը խորհրդածէր։ 20 Յետոյ հովիւները վերադարձան, փառաբանելով ու գովաբանելով Աստուած այն բոլոր բաներուն համար՝ որ լսեցին եւ տեսան, ինչպէս իրենց ըսուած էր։ 21 Երբ ութ օրերը լրացան՝ մանուկը տարին թլփատելու։ Անոր անունը դրուեցաւ Յիսուս, որ հրեշտակին կոչած անունն էր՝ դեռ ինք մօրը որովայնին մէջ չղացուած։ 22 Երբ անոնց մաքրութեան օրերը լրացան՝ Մովսէսի Օրէնքին համաձայն, Երուսաղէմ տարին զայն՝ Տէրոջ ներկայացնելու, 23 (ինչպէս գրուած է Տէրոջ Օրէնքին մէջ. «Ամէն արու որ արգանդ կը բանայ՝ պիտի կոչուի “Տէրոջ սրբացած”»,) 24 ու

Տերոջ Օրենքին մէջ ըստւածին համաձայն զոհ
 մը ընծայելու՝ զոյգ մը տատրակ, կամ աղաւնիի
 երկու ձագ: 25 Այդ ատեն՝ Երուսաղէմի մէջ մարդ
 մը կար, որուն անունը Սիմէոն էր: Ան արդար
 եւ բարեպաշտ էր, Իսրայէլի միսիթարութեան
 կը սպասէր, ու Սուրբ Զոգին անոր վրայ էր: 26
 Ան պատգամ ստացած էր Սուրբ Զոգիէն թէ
 մահ պիտի չտեսներ՝ մինչեւ որ տեսներ Տերոջ
 Օծեալը: 27 Ան ալ՝ առաջնորդուելով Զոգիէն՝ եկաւ
 տաճարը, ու երբ ծնողները բերին Յիսուս մանուկը՝
 որպէսզի Օրենքին սովորութեան համաձայն
 կատարեն անոր համար, 28 ինք ալ առաւ
 զայն իր գիրկը, օրհնեց Աստուած եւ ըսաւ. 29
 «Զիմա, Տէր, արձակէ ծառադ խաղաղութեամբ՝
 քու խօսքիդ համաձայն. 30 որովհետեւ աչքերս
 տեսան քու փրկութիւնդ՝ 31 որ պատրաստեցիր
 բոլոր ժողովուրդներուն առջեւ, 32 լոյս մը՝
 հեթանոսները լուսաւորելու, ու փառք՝ Իսրայէլի,
 քու ժողովուրդիդ»: 33 Յովսէփ եւ անոր մայրը
 զարմացած էին այն բաներուն վրայ՝ որ կը
 խօսուէին անոր մասին: 34 Սիմէոն օրհնեց զանոնք,
 եւ ըսաւ անոր մօր՝ Մարիամի. «Ահա այս մանուկը
 սահմանուած է շատ մարդոց իյնալուն ու ելլելուն
 համար՝ Իսրայէլի մէջ, եւ հակաճառութեան
 նշան մը ըլլալու համար. 35 (եւ քու սիրտիդ
 մէջէն ալ թուր մը պիտի անցնի՝) որպէսզի
 շատ սիրտերու մտածումները յայտնուին»: 36
 Նաեւ հոն էր Աննա մարգարէուհին, Փանուէլի
 աղջիկը, Ասերի տոհմէն: Ան յառաջացած

տարիք ունէր. ամուսինին հետ եօթը տարի ապրած էր իր կուսութենէն ետք, 37 ու այրի էր՝ գրեթէ ութսունչորս տարեկան: Ան չէր հեռանար տաճարէն, հապա ծոմով եւ աղերսանքով կը պաշտէր Աստուած՝ գիշեր ու ցերեկ: 38 Այդ նոյն պահուն ան եկաւ, ներքողեց Տէրը, եւ խօսեցաւ անոր մասին բոլոր անոնց՝ որ Երուսաղէմի մէջ կը սպասէին ազատագրութեան: 39 Երբ գործադրեցին ամէն բան՝ Տէրոջ Օրէնքին համաձայն, վերադարձան Գալիլեա, իրենց Նազարէթ քաղաքը: 40 Եւ մանուկը կը մեծնար ու հոգիով կը զօրանար՝ իմաստութեամբ լեցուած, եւ Աստուծոյ շնորհքը անոր վրայ էր: 41 Անոր ծնողները ամէն տարի՝ Չատիկի տօնին՝ կ'երթային Երուսաղէմ: 42 Ու երբ ան եղաւ տասներկու տարեկան, բարձրացան Երուսաղէմ՝ տօնին սովորութեան համաձայն: 43 Երբ օրերը աւարտեցին ու վերադարձան, Յիսուս պատանին մնաց Երուսաղէմ: Բայց Յովսէփ եւ անոր մայրը չէին գիտեր. 44 հապա կարծելով թէ ան ուղեկիցներուն հետ է՝ մէկ օրուան ճամբայ գացին, ու կը փնտռէին զայն իրենց ազգականներուն եւ ծանօթներուն մէջ: 45 Երբ չգտան՝ Երուսաղէմ վերադարձան զայն փնտռելու: 46 Երեք օր ետք գտան զայն տաճարին մէջ. նստած էր վարդապետներուն հետ, մտիկ կ'ըներ անոնց եւ բան կը հարցնէր: 47 Բոլոր զայն լսողները կը զմայլէին անոր խելքէն ու պատասխաններէն: 48 Երբ տեսան զայն՝ ապշած մնացին, եւ մայրը

ըսաւ անոր. «Որդեանկ, ինչո՞ւ անդպէս ըրիր մեզի. ահա՛ հայրդ ու ես կը փնտռէինք քեզ՝ չափազանց մորմոքած»: 49 Ըսաւ անոնց. «Ինչո՞ւ կը փնտռէիք զիս. չէիք գիտեր թէ ես պէտք է ըլլամ իմ Զօրս տունը»: 50 Սակայն անոնք չհասկցան այս խօսքը՝ որ ըսաւ իրենց: 51 Յետոյ իջաւ անոնց հետ ու գնաց Նազարէթ, եւ կը հպատակէր անոնց. բայց անոր մայրը այս բոլոր խօսքերը կը պահէր իր սիրտին մէջ: 52 Յիսուս կը զարգանար իմաստութեամբ ու հասակով, եւ շնորհիւ գտնելով Աստուծոյ ու մարդոց բով:

3 Տիբերիոս կայսրին գահակալութեան տասնհինգերորդ տարին, երբ Պոնտացի Պիղատոս Զրեաստանի վրայ կառավարիչ էր, Զերովդէս՝ Գալիլեայի վրայ չորրորդապետ, անոր եղբայրը՝ Փիլիպպոս՝ Իտուրայի ու Տրաքոնացիներու երկրին վրայ չորրորդապետ, եւ Լիսանիաս՝ Աբիլենէի վրայ չորրորդապետ, 2 Աննայի ու Կայիափայի քահանայապետութեան ատեն՝ Աստուած խօսեցաւ՝ Չաքարիայի որդիին՝ Յովհաննէսի, անապատին մէջ: 3 Ան ալ եկաւ Յորդանանի շրջակայքը եւ ապաշխարութեան մկրտութիւն կը քարոզէր՝ մեղքերու ներումին համար, 4 ինչպէս գրուած է Եսայի մարգարէին խօսքերուն գիրքին մէջ. «Անապատին մէջ գոչողին ձայնը. “Պատրաստեցէ՛ք Տէրոջ ճամբան, շտկեցէ՛ք անոր շաւիղները: 5 Ամեն ձոր պիտի լեցուի, եւ ամեն լեռ ու բլուր պիտի ցածնայ. ծուռը պիտի շտկուի, խորտուբորտ տեղերը

պիտի ըլլան հարթ ճամբաներ, **6** եւ ամեն մարմին
 պիտի տեսնէ Աստուծոյ փրկութիւնը»։ **7** Իրմէ
 մկրտուելու եկող բազմութեան ըսաւ. «Իժերո՛ւ
 ծնունդներ, ո՛վ իմացուց ձեզի՝ խուսափի՛լ գալիք
 բարկութենէն։ **8** Ուրեմն ապաշխարութեան
 արժանավայել պտո՛ղ բերէք, եւ մի՛ սկսիք ձեր
 մէջ ըսել. “Մենք Աբրահամը ունինք իբր հայր”.
 քանի որ կը յայտարարեմ ձեզի թէ Աստուած
 կարող է այս քարերէն հանել Աբրահամի
 զաւակներ։ **9** Կացինը արդէն իսկ դրուած է
 ծառերու արմատին քով. ուրեմն ամեն ծառ՝ որ
 լաւ պտուղ չի բերեր, պիտի կտրուի ու կրակը
 նետուի»։ **10** Բազմութիւնները հարցուցին իրեն.
 «Ուրեմն ինչ ընենք»։ **11** Ան ալ պատասխանեց
 անոնց. «Ո՛վ որ երկու բաճկոն ունի՝ մէկը թող տայ
 չունեցողին, եւ ո՛վ որ կերակուր ունի՝ նոյնպէս
 ընէ»։ **12** Մաքսաւորներ ալ եկան մկրտուելու, եւ
 ըսին անոր. «Վարդապետ, մենք ինչ ընենք»։ **13**
 Ան ալ ըսաւ անոնց. «Մի՛ պահանջէք աւելի՝ քան
 ինչ որ ձեզի պատուիրուած է»։ **14** Չինուորներն
 ալ կը հարցնէին անոր. «Մենք ինչ ընենք»։ Ըսաւ
 անոնց. «Ո՛չ մէկը հարստահարեցէք, ո՛չ մէկը
 զրպարտեցէք, հապա բաւարարուեցէ՛ք ձեր
 թոշակով»։ **15** Քանի ժողովուրդը ակնկալութեան
 մէջ էր, եւ բոլորը կը մտածէին իրենց սիրտին մէջ
 Յովհաննէսի մասին, թէ արդեօք ինք է Քրիստոսը,
16 Յովհաննէս պատասխանեց բոլորին. «Արդարեւ
 ես կը մկրտեմ ձեզ ջուրով, բայց ինձմէ աւելի հզօրը
 կու գայ, որուն կօշիկներուն կապերը քակելու

արժանի չեմ. անիկա՛ պիտի մկրտէ ձեզ Սուրբ
 Զոգիով ու կրակով: **17** Անոր հեծանոցը իր ձեռքն է.
 իր կալը պիտի մաքրէ եւ ցորենը պիտի ժողվէ իր
 ամբարը, իսկ յարդը պիտի այրէ անշէջ կրակով»:
18 Ուրիշ շատ բաներ ալ կ'աւետէր՝ ժողովուրդը
 յորդորելով: **19** Բայց Զերովդէս չորրորդապետը,
 կշտամբուելով անկէ իր եղբօր կնոջ՝ Զերովդիայի
 համար, նաեւ բոլոր չարիքներուն համար՝ որ
 Զերովդէս ըրած էր, **20** սա՛ ալ աւելցուց այդ
 բոլորին վրայ.- բանտարկեց Յովհաննէսը: **21**
 Ամբողջ ժողովուրդը մկրտուեցաւ. Յիսուս
 ալ մկրտուեցաւ, ու երբ կ'աղօթէր՝ երկինքը
 բացուեցաւ, **22** եւ Սուրբ Զոգին իջաւ անոր վրայ
 մարմնաւոր երեւոյթով՝ աղանիի պէս, ու ձայն մը
 եկաւ երկինքէն՝ որ կ'ըսէր. «Դ՞ռն ես իմ սիրելի
 Որդիս, քեզի՛ հաճեցայ»: **23** Եւ ինք՝ Յիսուս՝ սկսած
 էր գրեթէ երեսուն տարեկան ըլլալ: (Ինչպէս կը
 կարծուէր)՝ ան որդին էր Յովսէփի, որ Զեղիի, որ
 Մատաթի, **24** որ Ղեւիի, որ Մեղքիի, որ Յաննէի,
 որ Յովսէփի, **25** որ Մատաթիայի, որ Ամովսի, որ
 Նաւումի, որ Եսդիի, որ Նանգէի, **26** որ Մաաթի,
 որ Մատաթիայի, որ Սեմէիի, որ Յովսէփի, որ
 Յուդայի, **27** որ Յովհաննայի, որ Բեսայի, որ
 Չօրաբաբէլի, որ Սաղաթիէլի, որ Ներիի, **28** որ
 Մեղքիի, որ Ադդիի, որ Կովսամի, որ Եղմովդադի,
 որ Էրի, **29** որ Յովսէսի, որ Եղիազարի, որ Յովրիմի,
 որ Մատաթի, որ Ղեւիի, **30** որ Սիմէոնի, որ
 Յուդայի, որ Յովսէփի, որ Յովնանի, որ Եղիակիմի,
31 որ Մելեայի, որ Մայնանի, որ Մատաթայի, որ

Նաթանի, որ Դաւիթի, 32 որ Յեսսէի, որ Ուրբէթի, որ Բոոսի, որ Սաղմոնի, որ Նաասոնի, 33 որ Ամինադաբի, որ Արամի, որ Եսրոնի, որ Փարէսի, որ Յուդայի, 34 որ Յակոբի, որ Իսահակի, որ Աբրահամի, որ Թարայի, որ Նաթովրի, 35 որ Սերուգի, որ Ռազաւի, որ Փաղէկի, որ Եբերի, որ Սաղայի, 36 որ Կայնանի, որ Արփաքսադի, որ Սէմի, որ Նոյի, որ Դամէքի, 37 որ Մաթուսաղայի, որ Ենովքի, որ Յարեդի, որ Մադաղիէլի, որ Կայնանի, 38 որ Ենովսի, որ Սէթի, որ Ադամի, որ Աստուծոյ որդին էր:

4 Յիսուս՝ Սուրբ Հոգիով լեցուած՝ վերադարձաւ Յորդանանէն, ու Հոգիէն տարուեցաւ անապատը, 2 ուր քառասուն օր փորձուեցաւ Չարախօսէն: Այդ օրերը ոչինչ կերաւ. եւ այդ օրերուն լրանալէն ետք՝ անօթեցաւ: 3 Եւ Չարախօսը ըսաւ անոր. «Եթէ Աստուծոյ Որդին ես, ըսէ՛ այդ քարին՝ որ հաց ըլլայ»: 4 Յիսուս պատասխանեց անոր. «Գրուած է. “Միայն հացով չէ որ մարդը պիտի ապրի, հապա՛ Աստուծոյ ամէն խօսքով”»: 5 Չարախօսը՝ հանելով զայն բարձր լեռ մը՝ ցուցուց անոր երկրագունդին բոլոր թագաւորութիւնները վայրկեանի մը մէջ, 6 ու Չարախօսը ըսաւ անոր. «Այս ամբողջ իշխանութիւնը եւ անոնց փառքը պիտի տամ քեզի. որովհետեւ ինծի յանձնուած է, ու որո՛ն որ ուզեմ՝ կու տամ զայն: 7 Ուրեմն եթէ դուն իմ առջեւ իյնալով երկրպագես, բոլորը քուկո պիտի ըլլան»: 8 Յիսուս պատասխանեց անոր. «Գրուած է. “Տէրո՛ջ՝ քու Աստուծո՛րդ երկրպագէ, եւ միայն

զինք պաշտէ”»։ **9** Ապա տարաւ զայն Երուսաղէմ, կայնեցուց տաճարին աշտարակին վրայ, եւ ըսաւ անոր. «Եթէ դուն Աստուծոյ Որդին ես, վար նետէ քեզ ասկէ. **10** որովհետեւ գրուած է. “Իր հրեշտակներուն պիտի հրահանգէ քեզի համար՝ որ պահեն քեզ, **11** եւ իրենց ձեռքերուն վրայ պիտի կրեն քեզ, որպէսզի քարի մը չզարնես ոտքդ”»։ **12** Յիսուս պատասխանեց անոր. «Ըսուած է. “Մի փորձեր Տէրը՝ քու Աստուծոյ”»։ **13** Երբ Չարախօսը լմնցուց ամբողջ փորձութիւնը, ատեն մը հեռացաւ անկէ։ **14** Յիսուս Հոգիին զօրութեամբ վերադարձաւ Գալիլեա, եւ անոր համբաւը տարածուեցաւ այդ գաւառին ամբողջ շրջակայքը։ **15** Ինք կը սորվեցնէր անոնց ժողովարաններուն մէջ, ու կը փառաւորուէր բոլորէն։ **16** Երբ եկաւ Նազարէթ, ուր ինք մեծցած էր, իր սովորութեան համաձայն Շաբաթ օրը մտաւ ժողովարանը, ու կանգնեցաւ որ կարդայ։ **17** Տուին անոր Եսայի մարգարէին գիրքը։ Երբ բացաւ գիրքը, գտաւ այն տեղը՝ ուր գրուած էր. **18** «Տէրոջ Հոգին իմ վրաս է. որովհետեւ օծեց զիս աղքատներուն աւետարանելու, դրկեց զիս կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, **19** գերիներուն՝ ազատ արձակում եւ կոյրերուն տեսողութիւն յայտարարելու, հարստահարութիւն կրողները ազատ արձակելու, Տէրոջ բարեհաճութեան տարին յայտարարելու»։ **20** Յետոյ զոցեց գիրքը, տուաւ սպասաւորին, ու նստաւ։ Բոլոր ժողովարանը եղողները իրենց

աչքերը սեւեռած էին անոր վրայ: **21** Ուստի սկսաւ ըսել անոնց. «Այսօր այս գրուածը իրագործուեցաւ, ու ձեր ականջները լսեցին»: **22** Բոլորը կը վկայէին անոր մասին, կը զարմանային անոր բերանէն ելած շնորհալի խօսքերուն վրայ, եւ կ'ըսէին. «Ասիկա Յովսէփի որդին չէ»: **23** Ինք ալ ըսաւ անոնց. «Իրաւ դուք ինծի պիտի ըսէք սա առածը. “Բժիշկ, դուն քեզ բուժէ: Ո՛րչափ բաներ լսեցինք՝ որ Կափառնայումի մէջ կատարուեցան. հոն ալ ըրէ՝ քո բնագաւառիդ մէջ”»: **24** Եւ շարունակեց. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ո՛չ մէկ մարգարէ ընդունելի է իր բնագաւառին մէջ”»: **25** Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Շատ այրիներ կային Իսրայէլի մէջ՝ Եղիայի օրերը, երբ երկինք գոցուեցաւ երեք տարի ու վեց ամիս, եւ մեծ սով եղաւ ամբողջ երկրին մէջ. **26** բայց Եղիա անոնցմէ ոչ մէկուն ղրկուեցաւ, հապա միայն Սիդոնացիներուն Սարեփթա քաղաքը բնակող այրի կնոջ մը: **27** Նաեւ շատ բորոտներ կային Իսրայէլի մէջ՝ Եղիսէ մարգարէին ատենը, եւ անոնցմէ ոչ մէկը մաքրուեցաւ, հապա միայն՝ Նէեման Ասորին”»: **28** Ժողովարանին մէջ բոլորն ալ զայրոյթով լեցուեցան՝ երբ լսեցին այս խօսքերը. **29** ուստի կանգնելով՝ դուրս հանեցին զայն քաղաքէն, եւ տարին զայն մինչեւ այն լերան ցցուած ծայրը՝ որուն վրայ իրենց քաղաքը կառուցանուած էր, որպէսզի բարձր տեղէն վար նետեն զայն: **30** Բայց ինք՝ անոնց մէջէն անցնելով՝ գնաց: **31** Ապա իջաւ Գալիլեայի Կափառնայում

քաղաքը, ու Շաբաթ օրերը կը սորվեցնէր
 անոնց: **32** Կ'ապշէին անոր ուսուցումին վրայ,
 որովհետեւ իշխանութեամբ էր անոր խօսքը: **33**
 Ժողովարանին մէջ մարդ մը կար՝ որ անմաքուր
 դելի ոգի ունէր, եւ բարձրաձայն աղաղակեց.
34 «Թող մեզ. դուն ինչ ունիս մեզի հետ, Յիսուս
 Նազովրեցի. միթէ մեզ կորսնցնելո՞ւ եկար: Գիտեմ
 թէ ո՞վ ես՝ Աստուծոյ Սուրբը»: **35** Յիսուս սաստեց
 զայն՝ ըսելով. «Պապանձէ ու ելիր ատկէ»: Դեւը
 գետին զարկաւ զայն՝ բոլորին մէջտեղ, ելաւ անկէ
 եւ չվնասեց անոր: **36** Բոլորը այլալաժ՝ իրարու
 հետ խօսակցելով կ'ըսէին. «Այս ինչ խօսք է, որ
 իշխանութեամբ եւ զօրութեամբ կը հրամայէ
 անմաքուր ոգիներուն, ու կ'ելլեն»: **37** Եւ անոր
 համբաւը տարածուեցաւ շրջակայքին բոլորը
 տեղերը: **38** Ելլելով ժողովարանէն՝ մտաւ Սիմոնի
 տունը: **39** Սիմոնի զոքանչը կը տուայտէր սաստիկ
 տենդով, ու թախանձեցին իրեն՝ անոր համար: **40**
 Յիսուս կայնելով անոր քով՝ սաստեց տենդը, որ
 թողուց զայն: Ան ալ անմիջապէս կանգնեցաւ, եւ
 անոնց կը սպասարկէր: **41** Արեւին մայր մտած
 ատենը՝ բոլոր անոնք, որ զանազան ախտերով
 հիւանդներ ունէին, իրեն բերին զանոնք. ինք
 ալ անոնցմէ իւրաքանչիւրին վրայ ձեռք դնելով՝
 բուժեց զանոնք: **42** Շատերէն դեւեր ալ դուրս
 կ'ելլէին՝ աղաղակելով. «Դուն ես Քրիստոսը,
 Աստուծոյ Որդին»: Բայց ինք կը սաստէր ու չէր
 թոյլատրէր անոնց՝ որ խօսին, որովհետեւ գիտէին
 թէ ինք Քրիստոսն է: **43** Երբ ցերեկ եղաւ, մեկնեցաւ

ու գնաց ամայի տեղ մը. եւ բազմութիւնները կը փնտռէին զայն: Եկան անոր քով, ու կը բռնէին՝ որ չհեռանայ իրենցմէ: **44** Բայց ան ըսաւ իրենց. «Պետք է որ ուրիշ քաղաքներու ալ աւետեմ Աստուծոյ թագաւորութիւնը, քանի որ դրկուած եմ այս նպատակով»: Եւ կը քարոզէր Գալիլեայի ժողովարաններուն մէջ:

5 Երբ բազմութիւնը խոնուեցաւ անոր շուրջը՝ Աստուծոյ խօսքը լսելու համար, ինք Գեննեսարէթի ծովակին եզերքը կանգնած էր, **2** ու տեսաւ երկու նաւեր՝ որ ծովակին եզերքը կեցած էին, եւ ձկնորսները՝ անոնցմէ իջած՝ ուռկանները կը լուային: **3** Ինք մտաւ այդ նաւերէն մէկուն մէջ՝ որ Սիմոնինն էր, խնդրեց անկէ՝ որ քիչ մը ցամաքէն ծովուն մէջ տանի. ու նստելով նաւուն մէջ՝ կը սորվեցներ բազմութիւններուն: **4** Երբ դադրեցաւ խօսելէն՝ ըսաւ Սիմոնի. «Յառաջ տար նաւը՝ դէպի խորունկը, եւ նետեցէք ձեր ուռկանները՝ ձուկ որսալու»: **5** Սիմոն պատասխանեց անոր. «Վարդապետ, ամբողջ գիշերը աշխատեցանք ու ոչինչ որսացինք. բայց կը նետեմ ուռկանը՝ քու խօսքիդ համար»: **6** Երբ ատիկա ըրին՝ մեծ քանակութեամբ ձուկ բռնեցին, եւ իրենց ուռկանը կը պատռտէր: **7** Նշան կ'ընէին միւս նաւուն մէջ եղող իրենց ընկերակիցներուն, որ գան՝ օգնեն իրենց: Եկան ու երկու նաւերն ալ լեցուցին, եւ գրեթէ ընկղմելու մօտ էին: **8** Երբ Սիմոն Պետրոս տեսաւ, ինկաւ Յիսուսի ծունկերուն ու ըսաւ. «Տէր, հեռացիր իմ քովէս, քանի որ ես մեղաւոր

մարդ մըն եմ»։ **9** Որովհետեւ այլապէս էր, ինչպէս նաեւ բոլոր իրեն հետ եղողները, իրենց բռնած ձուկերու առատութեան համար։ **10** նոյնպէս ալ Չեբեղէոսի որդիները՝ Յակոբոս եւ Յովհաննէս, որոնք Սիմոնի ընկերներն էին։ Յիսուս ըսաւ Սիմոնի. «Մի վախնար, ասկէ ետք մարդոց որսորդ՝ պիտի ըլլաս»։ **11** Ու նաւերը ցամաք հանելով՝ թողուցին ամեն ինչ եւ հետեւեցան անոր։ **12** Երբ ինք քաղաքի մը մէջ էր՝ ահա մարդ մը, բորոտութեամբ լեցուն, տեսնելով Յիսուսը՝ ինկաւ երեսի վրայ, աղերսեց անոր եւ ըսաւ. «Տէր, եթէ ուզես՝ կրնան մաքրել զիս»։ **13** Յիսուս երկարելով իր ձեռքը՝ դպաւ անոր ու ըսաւ. «Կ'ուզեմ, մաքրուէ»։ եւ իսկոյն բորոտութիւնը գնաց անկէ։ **14** Ինք պատուիրեց անոր՝ որ ղչ մէկուն ըսէ, հապա՛ ըսաւ. «Գնա՛, ցոյց տուր քեզ քահանային, եւ Մովսէսի պատուիրածին համաձայն՝ մատուցանէ քու մաքրուելուդ ընծան, իբր վկայութիւն անոնց»։ **15** Սակայն անոր համբաւը ալ աւելի կը տարածուէր. ու մեծ բազմութիւններ կը համախմբուէին՝ մտիկ ընելու եւ բուժուելու իրենց հիւանդութիւններէն։ **16** Բայց ինք կը քաշուէր ամայի տեղեր ու կ'աղօթէր։ **17** Օր մը՝ ինք կը սորվեցներ, ու Փարիսեցիներ եւ Օրէնքի վարդապետներ նստած էին, - որոնք ժողվուած էին Գալիլեայի, Յրէաստանի ու Երուսաղէմի բոլոր գիւղերէն, - եւ Տէրոջ զօրութիւնը ներկայ էր բժշկելու համար՝։ **18** Եւ ահա քանի մը մարդիկ բերին անդամալոյծ մարդ մը՝ մահիճով,

ու կը ջանային ներս մտցնել զայն եւ դնել անոր
 առջեւ: 19 Երբ բազմութեան պատճառով չկրցան
 ճամբայ գտնել՝ որ ներս մտցնեն զայն, ելան
 տանիքը, եւ կղմինտրներուն մէջէն՝ մահիճով
 իջեցուցին զայն մէջտեղը, Յիսուսի առջեւ: 20
 Ան ալ՝ տեսնելով անոնց հաւատքը՝ ըսաւ անոր.
 «Մարդ, մեղքերդ ներուած են քեզի»: 21 Դպիրներն
 ու Փարիսեցիները սկսան մտածել՝ ըսելով.
 «Ո՞վ է ասիկա՝ որ հայիոյութիւններ կ'ըսէ: Ո՞վ
 կրնայ մեղքերը ներել՝ բացի Աստուծմէ»: 22
 Երբ Յիսուս ըմբռնեց անոնց մտածումները՝
 պատասխանեց անոնց. «Ինչ կը մտածէք ձեր
 սիրտերուն մէջ: 23 Ո՞րը աւելի դիւրին է, “մեղքերդ
 ներուած են քեզի” ըսելը, թէ՛ “ոտքի ելիր ու քալէ”
 ըսելը: 24 Բայց որպէսզի գիտնաք թէ մարդու
 Որդին իշխանութիւն ունի՝ երկրի վրայ մեղքերը
 ներելու, (ըսաւ անդամալոյծին,) քեզի կ'ըսեմ.
 “Ոտքի ելիր, ան մահիճդ ու գնա՛ տունդ”»: 25
 Ան ալ անմիջապէս կանգնեցաւ անոնց առջեւ,
 վրան առաւ ինչ բանի վրայ որ պառկած էր, եւ
 գնաց իր տունը՝ փառաբանելով Աստուած: 26
 Բոլորը՝ հիացումով համակուած՝ փառաբանեցին
 Աստուած, ու վախով համակուած՝ կ'ըսէին.
 «Այսօր արտակարգ բաներ տեսանք»: 27 Ատկէ
 ետք՝ մեկնեցաւ, եւ տեսաւ մաքսաւոր մը՝ որուն
 անունը Ղեւի էր. ան նստած էր մաքս ընդունելու
 տեղը: Ըսաւ անոր. «Յետեւէ՛ ինծի»: 28 Ան ալ
 ձգեց ամեն ինչ, կանգնեցաւ եւ անոր հետեւեցաւ:
 29 Ղեւի մեծ կոչունք մը սարքեց իր տան մէջ.

ու մեծ բազմութիւն կար մաքսաւորներու եւ
 ուրիշներու, որ անոնց հետ սեղան նստած”
 Էին: **30** Անոնց դպիրներն ու Փարիսեցիները կը
 տրտնջէին անոր աշակերտներուն դէմ՝ ըսելով.
 «Ինչո՞ւ կ’ուտէք ու կը խմէք մաքսաւորներու եւ
 մեղաւորներու հետ»: **31** Յիսուս պատասխանեց
 անոնց. «Ո՛չ թէ առողջներուն բժիշկ պէտք
 է, հապա՛ հիւանդներուն: **32** Ես եկայ ո՛չ թէ
 արդարները կանչելու, հապա մեղաւորները՝
 ապաշխարութեան»: **33** Անոնք ալ ըսին. «Ինչո՞ւ
 Յովհաննէսի աշակերտները յաճախ ծոմ
 կը պահեն եւ աղերսանք կը մատուցանեն,
 նմանապէս Փարիսեցիներուն աշակերտները,
 բայց քուկիներդ կ’ուտեն ու կը խմեն»: **34**
 Ան ալ ըսաւ անոնց. «Կրնա՞ք ծոմ պահել տալ
 հարսնեւորներուն՝ մինչ փեսան իրենց հետ է:
35 Բայց օրերը պիտի գան՝ երբ փեսան պիտի
 վերցուի իրենցմէ. ապա այդ օրերը ծոմ պիտի
 պահեն»: **36** Առակ մըն ալ ըսաւ անոնց. «Ո՛չ մէկը
 կը ձգէ նոր լաթի կտոր մը հին հանդերձի վրայ:
 Այլապէս՝ այդ նորը պատռուածք ալ կ’ընէ, ու
 հինգածին հետ չի յարմարիր այդ նոր լաթէն եղած
 կտորը: **37** Նաեւ ո՛չ մէկը կը դնէ նոր գինին հին
 տիկերու մէջ: Այլապէս՝ նոր գինին կը պատռէ
 տիկերը, ինք կը թափի, ու տիկերը կը կորսուին: **38**
 Հապա նոր գինին դրուելու է նոր տիկերու մէջ,
 որպէսզի երկուքն ալ պահուին: **39** Եւ ո՛չ մէկը հին
 գինին խմելէն ետք՝ իսկոյն կ’ուզէ նորը, քանի որ
 կ’ըսէ. “Հինը աւելի ախորժահամ է”»:

6 Առաջին ամսուան երկրորդ Շաբաթ օրը՝ ինք կ'անցնէր արտերու մէջէն, եւ իր աշակերտները ցորենի հասկեր փրցնելով՝ իրենց ձեռքերուն մէջ կը շփէին ու կ'ուտէին: **2** Փարիսեցիներէն ոմանք ըսին անոնց. «Ինչո՞ւ կ'ընէք ինչ որ արտօնուած չէ ընել Շաբաթ օրերը»: **3** Յիսուս պատասխանեց անոնց. «Չէ՞ք կարդացեր Դաւիթի ըրածը, երբ ինք եւ իրեն հետ եղողները անօթեցան. **4** ինչպէս մտաւ Աստուծոյ տունը, առաւ առաջադրութեան հացերը ու կերաւ, նաեւ տուաւ իրեն հետ եղողներուն. ո՞չ մէկուն արտօնուած էր ուտել զանոնք՝ բացի քահանաներէն»: **5** Եւ ըսաւ անոնց. «Մարդու Որդին տէրն է նաեւ Շաբաթին»: **6** Ուրիշ Շաբաթ օր մըն ալ մտաւ ժողովարանը եւ կը սորվեցներ: Հոն մարդ մը կար՝ որուն աջ ձեռքը չորցած էր: **7** Դպիրներն ու Փարիսեցիները կը հսկէին իր վրայ՝ տեսնելու թէ պիտի բուժէ՞ զայն Շաբաթ օրը, որպէսզի ամբաստանութեան առիթ մը գտնեն իրեն դէմ: **8** Իսկ ինք՝ գիտնալով անոնց մտածումները՝ ըսաւ այն մարդուն, որուն ձեռքը չորցած էր. «Ոտքի ելիր, կայնէ՛ մէջտեղը»: Ան ալ ելաւ ու կայնեցաւ: **9** Ուստի Յիսուս ըսաւ անոնց. «Ձեզի բան մը հարցնեմ. “Շաբաթ օրը ո՞րը արտօնուած է, բարիք ընել՝ թէ չարիք ընել, անձ մը փրկել՝ թէ կորսնցնել”»: **10** Եւ շուրջը նայելով՝ բոլորին վրայ, ըսաւ անոր. «Երկարէ՛ ձեռքդ»: Ան ալ այնպէս ըրաւ, ու անոր ձեռքը առողջացաւ միւսին պէս: **11** Իսկ անոնք լեցուեցան մոլեգնութեամբ, եւ կը խօսէին իրարու հետ՝ թէ ինչ ընեն Յիսուսի:

12 Այդ օրերը՝ լեռը գնաց աղօթելու, եւ ամբողջ
 գիշերը անցուց Աստուծոյ աղօթելով: **13** Առտուն՝
 կանչեց իր աշակերտները, եւ ընտրեց անոնցմէ
 տասներկու հոգի, ու առաքեալ անուանեց
 զանոնք: **14** Սիմոնը՝ որ Պետրոս ալ անուանեց,
 եւ անոր եղբայրը՝ Անդրէասը, Յակոբոսն ու
 Յովհաննէսը, **15** Փիլիպպոսը եւ Բարթողոմէոսը,
 Մատթէոսն ու Թովմասը, Ալփէոսեան Յակոբոսը
 եւ Նախանձայոյզ կոչուած Սիմոնը, **16** Յակոբոսի
 եղբայրը՝ Յուդան, ու Իսկարիովտացի Յուդան՝
 որ մատնիչ եղաւ: **17** Անոնց հետ իջնելով՝
 տափարակ տեղ մը կայնեցաւ, ինչպէս նաեւ
 իր աշակերտներուն խումբը եւ ժողովուրդի
 մեծ բազմութիւն մը՝ ամբողջ Հրէաստանէն,
 Երուսաղէմէն, ու Տիւրոսի եւ Սիդոնի ծովեզերքէն:
18 Անոնք եկած էին մտիկ ընելու անոր խօսքերը, ու
 բուժուելու իրենց ախտերէն: Անմաքուր ոգիներէն
 տանջուողներն ալ եկան եւ բժշկուեցան: **19**
 Ամբողջ բազմութիւնը կը ջանար դաշիլ իրեն,
 որովհետեւ զօրութիւն կ'ելլէր իրմէ ու բոլորը
 կը բժշկէր: **20** Այն ատեն աչքերը բարձրացուց
 դէպի իր աշակերտները եւ ըսաւ. «Երանի՛ ձեզի՝
 աղքատներուդ, որովհետեւ ձերն է Աստուծոյ
 թագաւորութիւնը: **21** Երանի՛ ձեզի՝ որ հիմա անօթի
 էք, որովհետեւ պիտի կշտանաք: Երանի՛ ձեզի՝ որ
 հիմա կուլաք, որովհետեւ պիտի խնդաք: **22** Երանի՛
 ձեզի՝ երբ մարդիկ ատեն ձեզ, ու երբ զատեն ձեզ
 իրենց ընկերութենէն, նախատեն եւ վարկաբեկեն
 ձեր անունը՝ մարդու Որդիին պատճառով: **23**

Ուրախացէ՛ք այդ օրը ու ցնծացէ՛ք, քանի որ ձեր վարձատրութիւնը շատ է երկինքը. արդարեւ իրենց հայրերը նոյնպէս կ'ընէին մարգարէներուն: **24** Բայց վայձեզի՝ հարուստներուդ, որովհետեւ ունեցած էք ձեր մխիթարութիւնը: **25** Վայձեզի՝ որ կուշտ էք, որովհետեւ պիտի անօթենաք. վայձեզի՝ որ հիմա կը խնդաք, որովհետեւ պիտի սգաք ու լաք: **26** Վայձեզի՝ երբ մարդիկ լաւ խօսին ձեր մասին, որովհետեւ իրենց հայրերը այդպէս կ'ընէին սուտ մարգարէներուն»: **27** «Բայց կը յայտարարեմ ձեզի՝ որ մտիկ կ'ընէք. “Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, բարիք ըրէ՛ք ձեզ ատողներուն, **28** օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, աղօթեցէ՛ք ձեզ պախարակողներուն համար: **29** Եթէ մէկը զարնէ այտիդ, միւսն ալ մօտեցուր անոր. եթէ առնէ հանդերձդ քեզմէ, մի արգիլեր որ առնէ բաճկոնդ ալ: **30** Տո՛ւր ամէն մարդու՝ որ քեզմէ կ'ուզէ, ու քու բաներդ առնողէն մի պահանջեր զանոնք: **31** Ինչպէս կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, նոյնպէս ալ դուք ըրէ՛ք անոնց: **32** Եթէ սիրէք ձեզ սիրողները, ինչ շնորհք կ'ունենաք. որովհետեւ մեղաւորներն ալ կը սիրեն զիրենք սիրողները: **33** Եթէ բարիք ընէք ձեզի բարիք ընողներուն, ինչ շնորհք կ'ունենաք. որովհետեւ մեղաւորներն ալ նոյն բանը կ'ընեն: **34** Եթէ փոխ տաք այնպիսի մարդոց՝ որոնցմէ յոյս ունիք վերստանալու, ինչ շնորհք կ'ունենաք. որովհետեւ մեղաւորներն ալ փոխ կու տան մեղաւորներուն, որպէսզի վերստանան նոյն չափով: **35** Հապա

դուք՝ սիրեցէք ձեր թշնամիները ու բարիք
 րըք, փոխ տուէք՝ առանց փոխարէնը բան մը
 սպասելու, եւ ձեր վարձատրութիւնը շատ պիտի
 ըլլայ ու Ամենաբարձրին որդիները պիտի ըլլաք,
 որովհետեւ ան քաղցր է ապերախտներուն ու
 չարերուն հանդէպ: **36** Ուրեմն արգահատող եղէք,
 ինչպէս ձեր Հայրն ալ արգահատող է՝»: **37** «Մի
 դատէք՝ ու պիտի չդատուիք. մի դատապարտէք՝
 եւ պիտի չդատապարտուիք. ներեցէք՝ ու պիտի
 ներուի ձեզի: **38** Տուէք՝ եւ պիտի տրուի ձեզի.
 լաւ չափով՝ կոխուած, ցնցուած, լեփլեցուն պիտի
 տրուի ձեր գոգը. քանի որ պիտի չափուի ձեզի
 այն չափով՝ որով դուք կը չափէք»: **39** Առակ
 մըն ալ ըսաւ անոնց. «Կոյրը կրնայ առաջնորդել
 կոյրը. միթէ երկուքն ալ փոսը պիտի չիյնան: **40**
 Աշակերտը իր վարդապետէն գերիվեր չէ. բայց
 ամէն կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին
 պէս պիտի ըլլայ: **41** Ինչո՞ւ կը տեսնես եղբօրդ
 աչքին մէջի շիւղը, ու չես նշմարեր քու աչքիդ
 մէջի գերանը: **42** Կամ ինչպէս կրնաս ըսել եղբօրդ.
 “Եղբայր, թոյլ տուր որ հանեմ աչքիդ մէջի շիւղը”,
 երբ դուն չես տեսներ քու աչքիդ մէջի գերանը:
 Կեղծաւոր, նախ հան՛ քու աչքէդ գերանը, եւ այն
 ատեն յստակ պիտի տեսնես՝ հանելու համար
 եղբօրդ աչքին մէջի շիւղը»: **43** «Արդարեւ չկայ լաւ
 ծառ մը՝ որ վատ պտուղ բերէ, ոչ ալ վատ ծառ մը՝
 որ լաւ պտուղ բերէ. **44** քանի որ իւրաքանչիւր ծառ
 կը ճանչցուի իր պտուղէն: Որովհետեւ փուշերէն
 թուզ չեն քաղեր, ու մորենիէն խաղող չեն կթեր: **45**

Բարի մարդը՝ բարութիւն կը բխեցնէ իր սիրտին բարի գանձէն, իսկ չար մարդը՝ չարիք կը բխեցնէ իր սիրտին չար գանձէն. քանի բերանը կը խօսի սիրտին լիութենէն»։ **46** «Ինչո՞ւ “Տէր, Տէր” կը կոչէք զիս, բայց չէք գործադրեր ինչ որ կ’ըսեմ։ **47** Ո՛վ որ կու գայ ինծի, կը լսէ իմ խօսքերս ու կը գործադրէ զանոնք, ցոյց տամ ձեզի թէ որո՞ւ կը նմանի։ **48** Ան կը նմանի տուն կառուցանող մարդու մը, որ փորեց, խորացաւ եւ հիմը դրաւ վեմի վրայ. երբ ողողում եղաւ՝ հեղեղը զարկաւ այդ տան բայց չկրցաւ սարսել զայն, որովհետեւ վեմի վրայ հիմնուած էր։ **49** Իսկ ան որ կը լսէ իմ խօսքերս ու չի գործադրեր, կը նմանի մարդու մը, որ հողի վրայ տուն կառուցանեց՝ առանց հիմի. հեղեղը զարկաւ անոր եւ իսկոյն փլաւ, ու մեծ եղաւ այդ տան ակերումը»։

7 Երբ լմնցուց իր բոլոր խօսքերը ժողովուրդին ականջներուն ըսելը՝ մտաւ Կափառնայում։ **2** Հարիւրապետի մը ծառան, որ սիրելի էր իրեն, ծանրօրէն հիւանդացած ըլլալով՝ վախճանելու մօտ էր։ **3** Երբ լսեց Յիսուսի մասին, Հրեաներէն քանի մը երեցներ ղրկելով՝ թախանձեց անոր, որ գայ եւ ապրեցնէ իր ստրուկը։ **4** Անոնք ալ եկան Յիսուսի, փութաջանութեամբ կ’աղաչէին անոր ու կ’ըսէին. «Ան՝ որուն պիտի ընես այս շնորհքը՝ արժանի է, **5** որովհետեւ կը սիրէ մեր ազգը, եւ ինք կառուցանեց ժողովարանը մեզի համար»։ **6** Յիսուս գնաց անոնց հետ, ու երբ տունէն շատ հեռու չէր, հարիւրապետը քանի մը բարեկամներ

դրկեց եւ ըսաւ անոր. «Տէր, մի անհանգստանար, որովհետեւ ես արժանի չեմ որ դուն մտնես իմ յարկիս տակ. 7 ուստի ես ալ արժանի չնկատեցի զիս՝ զալու քեզի. հապա ըսէ խօսք մը՝, ու ծառաս պիտի բժշկուի: 8 Որովհետեւ ես ալ իշխանութեան տակ դրուած մարդ մըն եմ, եւ զինուորներ ունիմ իմ հրամանիս տակ: Ասոր կ'ըսեմ. "Գնա", ու կ'երթայ. եւ միւսին. "Եկ՛ուր", ու կու գայ. եւ ստրուկիս. "Ըրէ՛ այս բանը", ու կ'ընէ»: 9 Յիսուս լսելով ասիկա՝ զարմացաւ անոր վրայ, եւ դառնալով իրեն հետեւող բազմութեան՝ ըսաւ. «Ձեզի կը յայտարարեմ թէ Իսրայէլի մէջ անգամ ես չգտայ այսչափ մեծ հաւատք»: 10 Պատգամաւորները տուն վերադարձան, եւ առողջացած գտան հիւանդ ծառան: 11 Հետեւեալ օրը կ'երթար քաղաք մը՝ որուն անունը Նային էր: Անոր հետ կ'երթային իր աշակերտներէն շատերը, նաեւ մեծ բազմութիւն մը: 12 Երբ մօտեցաւ քաղաքին դրան, ահա մեռել մը դուրս կը հանէին, իր մօր մէկ հատիկ որդին: Ան այրի էր, ու քաղաքէն մեծ բազմութիւն մը անոր հետ էր: 13 Տէրը տեսնելով զայն՝ զթաց անոր վրայ եւ ըսաւ անոր. «Մի լար»: 14 Ու մօտենալով՝ դպաւ դագաղին. կրողները կանգ առին, եւ ըսաւ. «Երիտասարդ, քեզի կ'ըսեմ. "Ոտքի ելիր"»: 15 Մեռելն ալ ելաւ, նստաւ, եւ սկսաւ խօսիլ. Յիսուս տուաւ զայն իր մօր: 16 Վախը համակեց բոլորը, ու Աստուած կը փառաբանէին՝ ըսելով. «Մեծ մարգարէ մը ելած է մեր մէջ, եւ Աստուած այցելած է իր ժողովուրդին»: 17 Անոր

մասին այս տարածայնութիւնը տարածուեցաւ
ամբողջ Զրեաստանի մէջ, ու ամբողջ շրջակայքը:
18 Յովհաննէսի աշակերտները պատմեցին իրեն
այս բոլոր բաներուն մասին: 19 Յովհաննէս ալ իր
աշակերտներէն երկուքը կանչեց իրեն ու դրկեց
Յիսուսի՝ ըսելով. «Դ՞հն ես ան՝ որ պիտի գար,
թէ ուրիշի մը սպասենք»: 20 Երբ այդ մարդիկը
եկան անոր քով՝ ըսին. «Յովհաննէս Մկրտիչը
մեզ դրկեց քեզի՝ ըսելով. “Դ՞հն ես ան՝ որ պիտի
գար, թէ ուրիշի մը սպասենք”»: 21 Նոյն ժամուն
շատեր բժշկեց իրենց ախտերէն, տանջանքներէն
եւ չար ոգիներէն, ու շատ կոյրերու տեսութիւն
շնորհեց: 22 Ապա Յիսուս պատասխանեց
անոնց. «Գացէք, պատմեցէք Յովհաննէսի ինչ
որ տեսաք եւ լսեցիք, թէ կոյրերը կը տեսնեն,
կաղերը կը քալեն, բորոտները կը մաքրուին,
խուլերը կը լսեն, մեռելները յարութիւն կ’առնեն,
աղքատներուն կ’աւետարանուի: 23 Երանի՛ անոր՝
որ չի գայթակղիր իմ պատճառովս»: 24 Երբ
Յովհաննէսի պատգամաւորները գացին, Յիսուս
սկսաւ բազմութիւններուն խօսիլ Յովհաննէսի
մասին. «Ինչ տեսնելու գացիք անապատը. հովէն
տատանող եղ՞՞՞գ մը: 25 Հապա ինչ տեսնելու
գացիք. փափուկ հանդերձներ հագած մա՛րդ մը:
Ահա՛ անոնք՝ որ փառաւոր պատմուճաններով
ու փափկութեան մէջ են, թագաւորական
պալատներն են: 26 Հապա ինչ տեսնելու
գացիք. մարգարէ մը: Այո՛, կը յայտարարեմ
ձեզի, աւելի՛ քան մարգարէ մը: 27 Որովհետեւ

ասիկայ՝ Է ան՝ որուն մասին գրուած է. “Ահա՛ ես կը դրկեմ իմ պատգամաւորս քու առջեւէդ. ան պիտի պատրաստէ ճամբադ՝ քու առջեւդ”։ 28 Արդարեւ կը յայտարարեմ ձեզի. “Կիներէ ծնածներուն մէջ՝ Յովհաննէս Մկրտիչէն աւելի մեծ մարգարէ չկայ”. սակայն Աստուծոյ թագաւորութեան մէջ՝ ամենէն պզտիկը անկէ աւելի մեծ է»։ 29 Երբ ամբողջ ժողովուրդն ու մաքսաւորները լսեցին, արդարացուցին Աստուած՝ որ Յովհաննէսի մկրտութեամբ մկրտուեցան։ 30 Բայց Փարիսեցիներն ու օրինականները անարգեցին Աստուծոյ ծրագիրը իրենց հանդէպ՝ անկէ չմկրտուելով։ 31 «Ուրեմն որո՞ւ նմանցնեմ այս սերունդին մարդիկը, եւ որո՞ւ կը նմանին։ 32 Կը նմանին մանուկներու, որոնք հրապարակները նստելով՝ կը գոչեն իրարու եւ կ’ըսեն. “Սրինգ նուագեցինք ձեզի՝ ու չպարեցիք, ողբացինք ձեզի՝ ու չլացիք”։ 33 Որովհետեւ Յովհաննէս Մկրտիչը եկաւ, ոչ հաց կ’ուտէր եւ ոչ գինի կը խմէր, ու կ’ըսէիք. “Դեւ կայ անոր մէջ”։ 34 Մարդու Որդին եկաւ, կ’ուտէ եւ կը խմէ, ու կ’ըսէք. “Ահա՛ շատակեր ու գինեսէր մարդ մը, մաքսաւորներու եւ մեղաւորներու բարեկամ”։ 35 Եւ իմաստութիւնը արդարացաւ իր բոլոր զաւակներով»։ 36 Փարիսեցիներէն մէկը կը թախանձէր՝ որ ան իրեն հետ հաց ուտէ։ Ան ալ մտաւ Փարիսեցիին տունը ու սեղան նստաւ։ 37 Քաղաքին մէջ մեղաւոր կին մը կար. երբ գիտցաւ թէ ան սեղան նստած է Փարիսեցիին

տունը, անուշահոտ օծանելիքի ալապաստրէ շիշ մը բերաւ, 38 լալով կեցաւ անոր ոտքերուն քով՝ ետեւի կողմը, եւ սկսաւ արցունքով թրջել անոր ոտքերը: Իր գլուխին մազերով կը սրբէր ու կը համբուրէր անոր ոտքերը, եւ օծանելիքով կ'օծէր: 39 Երբ զինք հրաւիրող Փարիսեցին տեսաւ, ըսաւ ինքնիրեն. «Եթէ ասիկա մարգարէ ըլլար, պիտի գիտնար թէ ո՞վ եւ ինչպիսի՞ կին է իրեն դաշողը, որովհետեւ մեղաւոր է»: 40 Յիսուս պատասխանեց անոր. «Սիմոն, բան մը ունիմ քեզի ըսելու»: Ան ալ ըսաւ. «Ըսէ՛, վարդապետ»: 41 Յիսուս ըսաւ. «Փոխատու մը ունէր երկու պարտապան. մէկը հինգ հարիւր դահեկան կը պարտէր, ու միւսը՝ յիսուն: 42 Երկուքին ալ շնորհեց պարտքը, քանի կարողութիւն չունէին վճարելու: Զիմա ըսէ՛, անոնցմէ ո՞վ աւելի պիտի սիրէ զայն»: 43 Սիմոն պատասխանեց. «Կ'ենթադրեմ թէ ան՝ որուն շատ շնորհեց»: Ան ալ ըսաւ անոր. «Շիտանկ դատեցիր»: 44 Ու դառնալով դէպի այդ կինը՝ ըսաւ Սիմոնի. «Կը տեսնեն այս կինը: Ես տունդ մտայ, եւ դուն ջուր չտուիր ոտքերուս. բայց ասիկա իր արցունքով թրջեց ոտքերս, եւ իր մազերով սրբեց: 45 Դուն ինծի համբոյր մը չտուիր, բայց ասիկա հոս մտնելէս ի վեր՝ չդադրեցաւ ոտքերս համբուրելէ: 46 Դուն գլուխս չօծեցիր անուշահոտ իւղով, բայց ասիկա ոտքերս օծեց անուշահոտ օծանելիքով: 47 Ուստի կը յայտարարեմ քեզի. “Ասոր բազմաթիւ մեղքերը ներուած են, որովհետեւ շատ սիրեց. բայց ան՝ որուն քիչ կը ներուի, անիկա քիչ կը սիրէ”. 48

Եւ ըսաւ անոր. «Քու մեղքերդ ներուած են»: **49**
Իրեն հետ սեղան նստողները սկսան ըսել իրենց
մէջ. «Ո՛ր է ասիկա՝ որ մեղքերն ալ կը ներէ»: **50**
Իսկ ինք ըսաւ կնոջ. «Յաւատքդ փրկեց քեզ, գնա՛
խաղաղութեամբ»:

8 Անկէ ետք, ինք կը քարոզէր՝ քաղաքէ քաղաք
ու գիւղէ գիւղ շրջելով, եւ կ'աւետէր Աստուծոյ
թագաւորութիւնը: Տասներկուքը իրեն հետ էին,
2 նաեւ քանի մը կիներ՝ որոնք չար ոգիներէ ու
հիւանդութիւններէ բուժուած էին.- Մարիամ՝ որ
կը կոչուէր Մագդաղենացի եւ որմէ եօթը դել ելեր
էր, **3** Յովհաննա, Յերովդէսի տան վերակացուին՝
Քուզայի կինը, Շուշան ու շատ ուրիշներ, որոնք
կը սպասարկէին անոր իրենց ինչքով: **4** Երբ մեծ
բազմութիւն հաւաքուեցաւ եւ ամեն քաղաքէ
իրեն եկան, առակ մը ըսաւ անոնց. **5** «Մերմնացան
մը գնաց իր հունտը ցանելու: Մինչ կը ցանէր,
քանի մը հունտեր ինկան ճամբային եզերքը եւ
կոխկոտուեցան, ու երկինքի թռչունները լափեցին
զանոնք: **6** Ուրիշներ ինկան ժայռի վրայ, եւ
հազիւ բուսած՝ չորցան, քանի բուսահող չկար:
7 Ուրիշներ ալ ինկան փուշերու մէջ, ու փուշերը
բուսնելով անոնց հետ՝ խեղդեցին զանոնք: **8**
Իսկ ուրիշներ ինկան լաւ հողի մէջ, ու բուսնելով՝
հարիւրապատիկ պտուղ տուին»: Երբ ըսաւ այս
բաները՝ գոչեց. «Ա՛ն որ ականջ ունի լսելու՝ թող
լսէ»: **9** Իր աշակերտները հարցուցին իրեն. «Ի՞նչ
է իմաստը այս առակին»: **10** Ան ալ ըսաւ. «Ձեզի՛
տրուած է հասկնալ Աստուծոյ թագաւորութեան

խորհուրդները, բայց ուրիշներուն՝ առականերով կը խօսիմ. որպէսզի նայելով՝ չտեսնեն, ու լսելով՝ չհասկնան»։ **11** «Ուրեմն սա է առական իմաստը. հունտը՝ Աստուծոյ խօսքն է։ **12** Ճամբային եզերքը եղողները անոնք են՝ որ կը լսեն. յետոյ Չարախօսը կու գայ եւ կը վերցնէ անոնց սիրտէն խօսքը, որպէսզի չհաւատան ու չփրկուին։ **13** Ժայռի վրայիները անոնք են, որ երբ լսեն՝ ուրախութեամբ կ'ընդունին խօսքը։ Բայց արմատ չունին. ատեն մը կը հաւատան, եւ փորձութեան ժամանակ կը հեռանան։ **14** Փուշերու մէջ ինկածները անոնք են, որ լսելէ ետք՝ կ'երթան, բայց կը խեղդուին այս կեանքին հոգերով, հարստութեամբ ու հաճոյքներով, եւ պտուղ չեն հասունցներ։ **15** Իսկ լաւ հողի մէջ ցանուածները անոնք են, որ խօսքը լսելով՝ պարկեշտ ու բարի սիրտի մը մէջ կը պահեն զայն, եւ համբերութեամբ պտուղ կ'արտադրեն»։ **16** «Ո՛չ մէկը՝ ճրագ մը վառելէ ետք՝ կը ծածկէ զայն անօթով մը, կամ կը դնէ մահիճի մը ներքեւ. հապա կը դնէ աշտանակի մը վրայ, որպէսզի ներս մտնողները տեսնեն լոյսը։ **17** Որովհետեւ չկայ գաղտնիք մը՝ որ բացայայտ պիտի չըլլայ, ո՛չ ալ պահուած բան մը՝ որ պիտի չզգիտցուի ու երեւան չելլէ։ **18** Ուրեմն զգուշացէ՛ք թէ ինչպէս կը լսէք. որովհետեւ ո՛վ որ ունի՝ պիտի տրուի անոր, իսկ ո՛վ որ չունի՝ անկէ պիտի առնուի նոյնիսկ ինչ որ ինք կը կարծէ թէ ունի»։ **19** Անոր մայրն ու եղբայրները եկան իրեն, բայց բազմութենէն չէին կրնար մօտենալ

իրեն: 20 Անոր լուր տուին՝ ըսելով. «Քու մայրդ
 ու եղբայրներիդ դուրսը կայնած են եւ կ'ուզեն
 տեսնել քեզ»: 21 Ան ալ պատասխանեց անոնց.
 «Իմ մայրս ու եղբայրներս անոնք են, որ կը լսեն
 Աստուծոյ խօսքը եւ կը գործադրեն զայն»: 22 Օր
 մը՝ ինք նաւ մտաւ իր աշակերտներուն հետ, եւ
 ըսաւ անոնց. «Ծովակին միւս եզերքը անցնինք»:
 Մեկնեցան. 23 բայց մինչ կը նաւարկէին՝ ինք
 քնացաւ: Հովի փոթորիկ մը իջաւ ծովակին վրայ.
 նաւը կը լեցուէր ջուրով, եւ իրենք վտանգի մէջ
 էին: 24 Մօտեցան, արթնցուցին զինք ու ըսին.
 «Վարդապետ, վարդապետ, կը կորսուինք»: Ան
 ալ ոտքի ելաւ, սաստեց հովն ու ալիքները. եւ
 անոնք հանդարտեցան ու խաղաղութիւն եղաւ:
 25 Ըսաւ անոնց. «Ո՞ր է ձեր հաւատքը»: Անոնք՝
 վախով համակուած՝ զարմացան, եւ կ'ըսէին
 իրարու. «Արդեօք ո՞վ է ասիկա, որ կը հրամայէ
 նոյնիսկ հովերուն ու ջուրին, եւ կը հնազանդին
 իրեն»: 26 Նաւարկելով իջան Գադարացիներուն
 երկիրը, որ Գալիլեայի դիմացն է: 27 Երբ ինք
 ցամաք ելաւ, քաղաքէն մարդ մը հանդիպեցաւ
 իրեն: Ան դէւեր ունէր ներսը՝ երկար ժամանակէ
 ի վեր. հանդերձ չէր հագներ, ոչ ալ տան մէջ
 կը բնակէր, հապա՝ գերեզմաններու մէջ: 28
 Տեսնելով Յիսուսը՝ աղաղակեց, ինկաւ անոր
 առջեւ եւ ըսաւ բարձրաձայն. «Դուն ինչ գործ
 ունիս ինծի հետ, Յիսուս, Ամենաբարձր Աստուծոյ
 Որդի. կ'աղերսեմ քեզի, մի՛ տանջեր զիս»: 29
 (Որովհետեւ հրամայեց անմաքուր ոգիին՝ որ

ելլէ այդ մարդէն. արդարեւ երկար ատեն էր որ
 գրաւած էր զայն, եւ ան կապուած կը պահուէր՝
 շղթաներով ու ոտնակապերով, բայց կը կոտորտէր
 կապերը եւ դեւէն կը քշուէր անապատը:) 30
 Յիսուս հարցուց անոր. «Ի՞նչ է անունդ»: Ան ալ
 ըսաւ. «Լեգեոն». որովհետեւ շատ դեւեր մտած
 էին անոր մէջ: 31 Անոնք կ'աղաչէին իրեն, որ
 չհրամայէ իրենց՝ անդունդը երթալ: (*Abyssos* 912)
 32 Հոն խոգերու մեծ երամակ մը կար, որ լեռը
 կ'արածէր: Աղաչեցին անոր՝ որ արտօնէ իրենց
 անոնց մէջ մտնել. եւ արտօնեց իրենց: 33 Ուստի
 դեւերը՝ դուրս ելլելով մարդէն՝ մտան խոգերուն
 մէջ. ու երամակը գահավեժ տեղէն ծովակը վազեց
 եւ խեղդուեցաւ: 34 Խոզարածները տեսնելով
 պատահածը՝ փախան, ու պատմեցին քաղաքը
 եւ արտերը: 35 Մարդիկ դուրս ելան՝ պատահածը
 տեսնելու: Եկան Յիսուսի քով, ու գտան այն
 մարդը՝ որմէ դեւերը ելած էին, նստած Յիսուսի
 ոտքերուն քով, հագուած եւ սթափած. ու վախցան:
 36 Անոնք որ տեսեր էին պատահածը, պատմեցին
 անոնց թէ ինչ կերպով դիւահարը բուժուեցաւ:
 37 Գաղարացիներուն շրջակայքը եղող ամբողջ
 բազմութիւնը կը թախանձէր անոր՝ որ երթայ
 իրենցմէ, որովհետեւ մեծ վախով համակուած
 էին: Ան ալ նաւ մտնելով վերադարձաւ: 38 Մարդը՝
 որմէ դեւերը ելած էին, կ'աղերսէր անոր որ
 ընկերանայ իրեն: Բայց Յիսուս արձակեց զայն եւ
 ըսաւ. 39 «Վերադարձիր տունդ, ու պատմէ ամեն
 ինչ որ Աստուած ըրաւ քեզի»: Ան ալ գնաց, եւ

ամբողջ քաղաքին մէջ հրապարակեց ամէն ինչ որ
 Յիսուս ըրաւ իրեն: **40** Երբ Յիսուս վերադարձաւ,
 բազմութիւնը ընդունեց զինք, որովհետեւ բոլորը
 կը սպասէին իրեն: **41** Եւ ահա՛ Յայրոս անունով
 մարդ մը եկաւ, որ ժողովարանի պետ էր: Յիսուսի
 ոտքը իյնալով՝ կ'աղաչէր անոր որ իր տունը մտնէ,
42 որովհետեւ ունէր մէկ հատիկ աղջիկ մը, գրեթէ
 տասներկու տարեկան, որ մահամերձ էր: Երբ
 Յիսուս կ'երթար, բազմութիւնը կը սեղմէր զինք: **43**
 Կին մը, որ արիւնահոսութիւն ունէր տասներկու
 տարիէ ի վեր, եւ իր ամբողջ ունեցածը ծախսած էր
 բժիշկներուն, բայց ոչ մէկէն կրցած էր բուժուիլ, **44**
 ետեւէն մօտենալով՝ անոր հանդերձին քղանցքին
 դպաւ, եւ իր արիւնահոսութիւնը անմիջապէս
 դադրեցաւ: **45** Ու Յիսուս ըսաւ. «Ո՛վ էր ան՝ որ
 դպաւ ինծի»: Երբ բոլորը կ'ուրանային, Պետրոս
 եւ իրեն հետ եղողները ըսին. «Վարդապետ,
 բազմութիւնը քեզ կը սեղմէ ու կը ճնշէ, եւ կ'ըսես.
 “Ո՛վ դպաւ ինծի”»: **46** Յիսուս ըսաւ. «Մէկը դպաւ
 ինծի, որովհետեւ գիտակցեցայ թէ զօրութիւն
 մը դուրս ելաւ ինձմէ»: **47** Երբ կինը տեսաւ թէ
 ըրածը անկէ թաքուն չմնաց, դողալով եկաւ, անոր
 առջեւ ինկաւ, եւ ամբողջ ժողովուրդին առջեւ
 յայտարարեց անոր թէ ինչ պատճառով դպեր էր
 անոր, եւ թէ ինչպէս անմիջապէս բժշկուեցաւ:
48 Յիսուս ըսաւ անոր. «Քաջալերուէ՛, աղջիկ,
 հաւատքդ բժշկեց քեզ. գնա՛ խաղաղութեամբ»: **49**
 Երբ ինք դեռ կը խօսէր, ժողովարանի պետին
 տունէն մէկը եկաւ եւ ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, ա՛յ մի՛

անհանգստացներ վարդապետը»: 50 Բայց երբ Յիսուս լսեց ասիկա՝ ըսաւ անոր. «Մի վախնար, միայն հաւատա, ու պիտի ապրի»: 51 Երբ տունը մտաւ, ոչ մէկուն թոյլ տուաւ որ մտնէ, բայց միայն՝ Պետրոսի, Յակոբոսի ու Յովհաննէսի, եւ աղջիկին հօր ու մօր: 52 Բոլորն ալ կու լային եւ կը հեծեծէին անոր վրայ. բայց ինք ըսաւ. «Մի լաք. ան մեռած չէ, հապա կը քնանայ»: 53 Անոնք ալ զինք ծաղրեցին, քանի զիտէին թէ մեռաւ: 54 Իսկ ինք բոլորն ալ դուրս հանելով՝ բռնեց անոր ձեռքէն, ու գոչեց՝ ըսելով. «Աղջիկ, ոտքի ելիր»: 55 Անոր հոգին վերադարձաւ, եւ ան անմիջապէս կանգնեցաւ: Յիսուս հրամայեց՝ որ անոր ուտելիք տան: 56 Անոր ծնողները զմայլած մնացին, եւ ինք պատուիրեց անոնց՝ որ պատահածը ոչ մէկուն ըսեն:

9 Իր տասներկու աշակերտները հաւաքելով՝ զօրութիւն ու իշխանութիւն տուաւ անոնց բոլոր դեւերուն վրայ, եւ ախտերը բժշկելու: 2 Ու որկեց զանոնք՝ որ քարոզեն Աստուծոյ թագաւորութիւնը եւ բժշկեն հիւանդները: 3 Ըսաւ անոնց. «Ճամբորդութեան համար ոչինչ առէք, ոչ գաւազան եւ ոչ պարկ, ոչ հաց եւ ոչ դրամ. ոչ ալ կրկին բաճկոն ունեցէք»: 4 Որո՞ւ տուն որ մտնէք՝ հո՞ն մնացէք, ապա անկէ մեկնեցէք: 5 Իսկ անոնք որ չեն ընդունիր ձեզ, երբ դուրս ելլէք այդ քաղաքէն՝ թօթուեցէ՛ք ձեր ոտքերուն փոշին անգամ, իբր վկայութիւն անոնց դէմ»: 6 Անոնք ալ մեկնեցան եւ գիւղէ

գիւղ կը շրջէին, ամենուրեք աւետարանելով ու բուժելով: 7 Զերովդէս չորրորդապետը՝ անոր բոլոր կատարածներուն մասին լսելով՝ տարակոյսի մէջ էր, որովհետեւ ոմանք ըսած էին. 8 «Յովհաննէս մեռելներէն յարութիւն առաւ», եւ ոմանք. «Եղիա յայտնուեցաւ», իսկ ուրիշներ ալ. «Նախկին մարգարէներէն մէկը յարութիւն առաւ»: 9 Զերովդէս ըսաւ. «Յովհաննէսը եւս գլխատեցի, իսկ ղ՛վ պիտի ըլլայ ասիկա՝ որուն մասին այսպիսի բաներ կը լսեմ»: Ու կը ջանար տեսնել զայն: 10 Առաքեալները վերադարձան, ու պատմեցին անոր՝ ինչ որ ըրին. եւ առնելով զանոնք՝ մէկդի քաշուեցաւ ամայի տեղ մը, քաղաքի մը քով՝ որուն անունը Բեթսայիդա էր: 11 Երբ բազմութիւնները գիտցան՝ անոր հետեւեցան: Ինք ալ զանոնք ընդունելով՝ կը խօսէր անոնց Աստուծոյ թագաւորութեան մասին, եւ կը բժշկէր անոնք՝ որ բուժումի պէտք ունէին: 12 Երբ օրը սկսաւ մթննալ՝ տասներկուքը մօտեցան եւ ըսին անոր. «Արձակէ՛ բազմութիւնը, որպէսզի երթան շրջակայ գիւղերն ու արտերը, իջեւանին եւ ուտելիք գտնեն, որովհետեւ հոս ամայի տեղ մըն ենք»: 13 Ըսաւ անոնց. «Դուք անոնց կերակուր տուէք»: Անոնք ալ ըսին. «Մենք հինգ նկանակէն ու երկու ձուկէն աւելի բան չունինք, եթէ չերթանք այդ ամբողջ ժողովուրդին համար կերակուր չգնենք»: 14 (Արդարեւ հինգ հազարի չափ այր մարդիկ կային:) Ըսաւ իր աշակերտներուն. «Նստեցուցէ՛ք ատոնք՝ յիսունական շարքերով»:

15 Այդպէս ըրին, ու բոլորն ալ նստեցուցին: **16** Ինք ալ առաւ այդ հինգ նկանակներն ու երկու ձուկերը, դէպի երկինք նայելով՝ օրհնեց զանոնք, կտրեց ու տուաւ աշակերտներուն, որպէսզի հրամցնեն բազմութեան: **17** Կերան, բոլորն ալ կշտացան, եւ վերցնելով աւելցած բեկորները՝ տասներկու կողով լեցուցին: **18** Երբ ինք առանձին կ'աղօթէր, աշակերտները իրեն հետ էին, եւ հարցուց անոնց. «Բազմութիւնները ինծի համար ինչ կ'ըսեն, ղվ եմ»: **19** Անոնք ալ պատասխանեցին. «Ոմանք՝ Յովհաննէս Մկրտիչը, ուրիշներ՝ Եղիան, ուրիշներ ալ՝ նախկին մարգարէներէն մէկը, որ յարութիւն առած է»: **20** Ինք ըսաւ անոնց. «Իսկ դո՛ւք ինչ կ'ըսէք, ղվ եմ»: Պետրոս պատասխանեց. «Աստուծոյ Քրիստո՛սը»: **21** Յիսուս ազդարարեց անոնց, ու պատուիրեց որ ո՛չ մէկուն ըսեն այս բանը: **22** Եւ ըսաւ. «Պետք է որ մարդու Որդին շատ չարչարանքներ կրէ, մերժուի երեցներէն, քահանայապետներէն եւ դպիրներէն, սպաննուի ու յարութիւն առնէ երրորդ օրը»: **23** Եւ կ'ըսէր բոլորին. «Եթէ մէկը ուզէ զալ իմ ետեւէս՝ թող ուրանայ ինքզինք, ամէն օր վերցնէ իր խաչը ու հետեւի ինծի. **24** որովհետեւ ղվ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, իսկ ղվ որ կորսնցնէ իր անձը՝ ինծի համար, պիտի փրկէ զայն: **25** Քանի որ մարդ ինչ օգուտ կ'ունենայ, եթէ շահի ամբողջ աշխարհը բայց կորսնցնէ ինքզինք, կամ տուժէ: **26** Որովհետեւ ղվ որ ամօթ սեպէ զիս եւ իմ խօսքերս դաւանիլը, մարդու Որդին ալ ամօթ պիտի սեպէ

գայն դաւանիլը՝ երբ գայ իր ու Յօր եւ սուրբ
 հրեշտակներուն փառքով: 27 Բայց ճշմարտապէս
 կը յայտարարեմ ձեզի. “Յոս կայնողներէն կան
 ոմանք՝ որ մահ պիտի չհամտեսեն, մինչեւ որ
 տեսնեն Աստուծոյ թագաւորութիւնը”»: 28 Այս
 խօսքերէն գրեթէ ութ օր ետք՝ առնելով Պետրոսը,
 Յովհաննէսն ու Յակոբոսը՝ լեռը ելաւ աղօթելու:
 29 Մինչ կ’աղօթէր, իր երեսին տեսքը փոխուեցաւ,
 եւ իր պատմութեան ճերմակ ու փայլուն եղաւ: 30
 Եւ ահա՛ երկու մարդիկ կը խօսակցէին իրեն հետ.
 անոնք- Մովսէսն ու Եղիան, 31 փառքով երեւցած,
 եւ կը խօսէին անոր այս կեանքէն մեկնումին
 մասին, որ պիտի իրագործուէր Երուսաղէմի
 մէջ: 32 Պետրոս ու անոր հետ եղողները քունով
 ծանրացած էին. երբ արթնցան, տեսան անոր
 փառքը եւ այդ երկու մարդիկը՝ որ անոր քով
 կեցած էին: 33 Երբ անոնք զատուեցան անոր
 քովէն, Պետրոս ըսաւ Յիսուսի. «Վարդապետ, լաւ
 է որ կենանք հոս եւ շինենք երեք վրան, մէկը՝ քեզի,
 մէկը՝ Մովսէսի ու մէկը՝ Եղիայի». որովհետեւ չէր
 գիտեր թէ ինչ կը խօսէր: 34 Մինչ այսպէս կը խօսէր,
 ամպ մը եկաւ եւ հովանի եղաւ անոնց վրայ. ու
 երբ անոնք ամպին տակ մտան՝ վախցան: 35 Չայն
 մը եկաւ ամպէն՝ ըսելով. «Այս է իմ սիրելի Որդիս,
 անոր մտիկ ըրէք»: 36 Երբ լսեցին այդ ձայնը՝ Յիսուս
 մինակ մնաց: Իրենք ալ լուռ կեցան, եւ այդ օրերը
 ոչ մէկուն բան մը պատմեցին իրենց տեսածներէն:
 37 Հետեւեալ օրը, երբ անոնք լեռնէն վար իջան, մեծ
 բազմութիւն մը դիմաւորեց գայն: 38 Բազմութենէն

մարդ մը գոչեց. «Վարդապետ, կ'աղերսեմ քեզի, նայէ որդիիս, քանի որ իմ մէկ հատիկս է: **39** Ահա՛ ոգի մը կը բռնէ զինք, ինք ալյանկարծ կ'աղաղակէ. ոգին զինք ցնցելով կը փրփրցնէ, ու հագիւ կը հեռանայ իրմէ՝ ջախջախելով զինք: **40** Աղերսեցի քու աշակերտներուդ՝ որ դուրս հանեն զայն, բայց չկրցան»: **41** Յիսուս պատասխանեց. «Ո՛վ անհաւատ ու խոտորեալ սերունդ, մինչեւ երբ ձեզի հետ պիտի ըլլամ եւ ձեզի հանդուրժեմ: Յոս բեր որդիդ»: **42** Երբ կը մօտենար, դելը գետին զարկաւ զայն ու սաստիկ ցնցեց: **43** Իսկ Յիսուս սաստեց անմաքուր ոգին, բժշկեց պատանին եւ տուաւ զայն իր հօր: **44** Բոլորը կ'ապշէին Աստուծոյ մեծամեծ գործերուն վրայ: Մինչ բոլորն ալ կը սքանչանային Յիսուսի բոլոր ըրածներուն վրայ, ան ըսաւ իր աշակերտներուն. «Դուք այս խօսքերը ձեր միտքը պահեցէք՝, որովհետեւ մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը»: **45** Բայց անոնք չէին հասկնար այս խօսքը, եւ անոնցմէ ծածկուած էր՝ որպէսզի չըմբռնեն. ու կը վախնային հարցնել իրեն այդ խօսքին մասին: **46** Մտածում մըն ալ ծագեցաւ անոնց մէջ, թէ արդեօք ո՞վ է մեծագոյնը իրենց մէջ: **47** Յիսուս ըմբռնելով անոնց սիրտին մտածումը՝ առաւ մանուկ մը, կայնեցուց զայն իր քով, **48** ու ըսաւ անոնց. «Ո՛վ որ կ'ընդունի այս մանուկը իմ անունովս՝ զիս կ'ընդունի, եւ ո՞վ որ զիս կ'ընդունի՝ զիս դրկոյ՞ղ կ'ընդունի. որովհետեւ ան որ ամենէն պզտիկն է ձեր բոլորին մէջ, անիկա՛ պիտի ըլլայ մեծը»: **49** Յովհաննէս ըսաւ.

«Վարդապետ, մեկը տեսանք որ դեւեր կը հաներ քու անունովոյ, եւ արգիլեցինք զայն՝ քանի որ մեզի չի հետեւիր»: 50 Յիսուս ըսաւ անոր. «Մի արգիլէք, որովհետեւ ան որ մեզի հակառակ չէ, մեր՝ կողմէն է»: 51 Երբ իր աշխարհէն վերանալու ժամանակը հասաւ՝, հաստատապէս որոշեց՝ Երուսաղէմ երթալ: 52 Եւ իր առջեւէն դրկեց պատգամաւորներ, որոնք երբ գացին՝ մտան Սամարացիներուն մէկ գիւղը, որպէսզի պատրաստութիւն տեսնեն իրեն համար: 53 Բայց չընդունեցին զայն, որովհետեւ անոր երեսը դէպի Երուսաղէմ ուղղուած էր: 54 Երբ իր աշակերտները՝ Յակոբոս ու Յովհաննէս՝ տեսան ասիկա, ըսին անոր. «Տէր, կ'ուզէմ որ ըսենք, որպէսզի երկինքէն կրակ իջնէ եւ սպառէ զանոնք, ինչպէս Եղիա ալ ըրաւ»: 55 Դարձաւ ու յանդիմանեց զանոնք՝ ըսելով. «Չէք գիտեր թէ ինչ հոգիի տէր էք. 56 որովհետեւ մարդու Որդին եկաւ ոչ թէ մարդոց անձերը կորսնցնելու, հապա՝ փրկելու՝»: Եւ ուրիշ գիւղ մը գացին: 57 Երբ անոնք ճամբան կ'երթային, մեկը ըսաւ անոր. «Տէր, պիտի հետեւիմ քեզի՝ ուր որ երթաս»: 58 Յիսուս ըսաւ անոր. «Աղուէսները որջեր ունին, ու երկինքի թռչունները՝ բոյներ, բայց մարդու Որդին տեղ մը չունի՝ ուր հանգչեցնէ իր գլուխը»: 59 Ուրիշի մըն ալ ըսաւ. «Յետեւի՛ ինծի»: Իսկ ան ըսաւ. «Տէր, արտօնէ՛ ինծի, որ նախ երթամ՝ թաղեմ հայրս»: 60 Յիսուս ըսաւ անոր. «Թո՛ղ մեռելներուն՝ թաղել իրենց մեռելները, իսկ դուն գնա՛ ու քարոզէ՛ Աստուծոյ թագաւորութիւնը»: 61 Ուրիշ մըն ալ

ըսաւ. «Տէր, պիտի հետեւիմ քեզի. բայց արտօնէ՛ որ նախ հրաժեշտ առնեմ տանս մէջ եղողներէն»:
62 Յիսուս ըսաւ անոր. «Ո՛չ մէկը՝ որ կը դնէ ձեռքը մաճին վրայ ու ետեւ կը նայի՝ յարմար է Աստուծոյ թագաւորութեան»:

10 Ասկէ ետք՝ Տէրը ուրիշ եօթանասուն ալ որոշեց, եւ իր առջեւէն երկու-երկու դրկեց զանոնք բոլոր քաղաքներն ու տեղերը՝ ուր ինք պիտի երթար: 2 Եւ ըսաւ անոնց. «Հունձքը իրապէս շատ է, բայց գործաւորները՝ քիչ. ուրեմն հունձքին Տէրոջ աղերսեցէք, որ գործաւորներ ուղարկէ իր հունձքին: 3 Գացէ՛ք. ահա՛ ես կը դրկեմ ձեզ իբր գառնուկներ՝ գայլերու մէջ: 4 Ձեզի հետ մի՛ առնէք՝ ո՛չ քսակ, ո՛չ պարկ, ո՛չ ալ կօշիկներ, ու ճամբան ո՛չ մէկը բարեւեցէք: 5 Որեւէ տուն որ մտնէք՝ նախ ըսէք. “Բարեւ այս տան”: 6 Եթէ հոն բարեւի արժանի մարդ կայ, ձեր բարեւը պիտի հանգչի անոր վրայ. այլապէս՝ պիտի դառնայ ձեզի: 7 Մնացէ՛ք այդ տան մէջ, եւ կերէք ու խմեցէ՛ք անոնց քով, որովհետեւ գործաւորը արժանի է իր վարձքին. մի՛ երթաք տունէ տուն: 8 Որեւէ քաղաք որ մտնէք եւ ընդունին ձեզ, կերէք ինչ որ հրամցնեն ձեզի: 9 Բուժեցէ՛ք անոր մէջի հիւանդները եւ ըսէք անոնց. “Աստուծոյ թագաւորութիւնը մօտեցած է ձեզի”: 10 Բայց որեւէ քաղաք որ մտնէք ու չընդունին ձեզ, երթալով անոր հրապարակները՝ ըսէք. 11 “Այն փոշին ալ՝ որ մեր ոտքերուն փակած է ձեր քաղաքէն, կը թօթուենք ձեզի. բայց սա՛ զիտցէ՛ք, որ Աստուծոյ թագաւորութիւնը մօտեցած

Է ձեզի»: 12 Կը յայտարարեմ ձեզի. «Այն օրը Սողոմոնի դատաստանը աւելի դիւրին պիտի ըլլայ, քան այդ քաղաքին»»: 13 «Վայ քեզի, Քորագին, վայ քեզի, Բեթսայիդա. որովհետեւ եթէ Տիւրոսի ու Սիդոնի մէջ կատարուած ըլլային այն հրաշքները՝ որոնք կատարուեցան ձեր մէջ, շատոնց ապաշխարած պիտի ըլլային՝ քուրձով եւ մոխիրի մէջ նստելով: 14 Բայց դատաստանին օրը՝ աւելի դիւրին պիտի ըլլայ Տիւրոսի ու Սիդոնի, քան ձեզի: 15 Եւ դուն, Կափառնայում, որ բարձրացած ես մինչեւ երկինք, պիտի իջնես մինչեւ դժոխք: (Hadēs 986) 16 Ա՛ն որ մտիկ կ'ընէ ձեզի՝ մտիկ կ'ընէ ինծի. իսկ ան որ կ'անարգէ ձեզ՝ կ'անարգէ զիս, եւ ան որ կ'անարգէ զիս՝ կ'անարգէ զիս դրկնողը»: 17 Եօթանասուն աշակերտները վերադարձան ուրախութեամբ, եւ ըսին. «Տէր, քու անունովդ՝ դեւերն ալ կը հպատակէին մեզի»: 18 Յիսուս ըսաւ անոնց. «Կը տեսնէի Սատանան, որ վար կ'իյնար երկինքէն՝ փայլակի նման: 19 Ահա՛ ձեզի իշխանութիւն կու տամ՝ կոխելու օձերու, կարիճներու, եւ թշնամիին ամբողջ զօրութեան վրայ. բնաւ քան մը պիտի չվնասէ ձեզի: 20 Բայց դուք մի՛ ուրախանաք՝ որ չար ոգիները կը հպատակին ձեզի. այլ մանաւանդ ուրախացէ՛ք՝ որ ձեր անունները գրուած են երկինքը»: 21 Այդ նոյն ժամուն՝ Յիսուս Յոգիով ցնծաց եւ ըսաւ. «Կը ներբողեմ քեզ, Յայր, Տէր երկինքի ու երկրի, որ այս բաները ծածկեցիր իմաստուններէն եւ խելացիներէն, ու յայտնեցիր երախաներուն:

Այո, Յայր, որովհետեւ այսպէս հաճելի եղաւ քու առջեւ: **22** Ամէն բան յանձնուեցաւ ինծի՝ իմ Յօրմէս, ու ոչ մէկը գիտէ թէ ով է Որդին, բայց միայն՝ Յայրը, եւ թէ ով է Յայրը, բայց միայն՝ Որդին, եւ ան՝ որուն Որդին փափաքի յայտնել: **23** Աշակերտներուն դառնալով՝ առանձին ըսաւ. «Երանի այն աչքերուն՝ որ կը տեսնեն ձեր տեսածները. **24** արդարեւ կը յայտարարեմ ձեզի. “Շատ մարգարէներ ու թագաւորներ ուզեցին տեսնել ձեր տեսածները՝ բայց չտեսան, եւ լսել ձեր լսածները՝ բայց չլսեցին”»: **25** Ահա՛ օրինական մը կանգնեցաւ, ու փորձելով զայն՝ ըսաւ. «Վարդապէտ, ինչ ընեմ՝ որ ժառանգեմ յաւիտենական կեանքը»: (aiōnios g166) **26** Ան ալ ըսաւ անոր. «Ինչ գրուած է Օրէնքին մէջ, ինչպէս կը կարդաս»: **27** Ան պատասխանեց. «Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ամբողջ սիրտովդ, ամբողջ անձովդ, ամբողջ զօրութեամբդ եւ ամբողջ միտքովդ, ու ընկերդ՝ քու անձիդ՝ պէս»: **28** Ինք ալ ըսաւ անոր. «Շիտակ պատասխանեցիր, ըրէ՛ ատիկա՝ ու պիտի ապրիս»: **29** Իսկ ան՝ ուզելով արդարացնել ինքզինք՝ ըսաւ Յիսուսի. «Բայց ով է իմ ընկերս»: **30** Յիսուս պատասխանեց. «Մէկը Երուսաղէմէն Երիքով կ'իջնէր եւ աւագակներու ձեռքը ինկաւ, որոնք մերկացուցին զայն, վիրաւորելով կիսամեռ թողուցին ու գացին: **31** Պատահեցաւ որ քահանայ մը իջնէ այդ ճամբայէն. տեսնելով զայն՝ միւս կողմէն անցաւ: **32** Նմանապէս Ղեւտացի մը հասնելով այդ տեղը՝ գնաց եւ տեսաւ, ու միւս

կողմէն անցաւ: **33** Բայց Սամարացի մը՝ որ կը ճամբորդէր, եկաւ անոր քով, եւ տեսնելով զայն՝ զթաց: **34** Մօտեցաւ, փաթթեց անոր վերքերը, վրան ձեթ ու գինի թափելով եւ իր գրաստին վրայ դնելով՝ տարաւ զայն պանդոկ մը, ու հոգ տարաւ անոր: **35** Հետեւեալ օրը՝ երբ կը մեկնէր անկէ, հանեց երկու դահեկան, տուաւ պանդոկապետին եւ ըսաւ անոր. «Հոգ տար ատոր, ու ինչ որ աւելի ծախսես՝ պիտի վճարեմ քեզի երբ վերադառնամ»:

36 Ուրեմն այս երեքէն ո՞վ կը կարծես թէ ընկերը եղաւ աւագակներու ձեռքը ինկողին»: **37** Ան ալ ըսաւ. «Ա՛ն՝ որ կարեկցեցաւ անոր»: Ուստի Յիսուս ըսաւ անոր. «Գնա՛, դո՛ւն ալ նոյնպէս ըրէ»: **38** Երբ անոնք կ'երթային՝ ինք գիւղ մը մտաւ, եւ կին մը՝ Մարթա անունով՝ ընդունեց զայն իր տունը: **39** Ան քոյր մը ունէր՝ որուն անունը Մարիամ էր. ան եկաւ, նստաւ Յիսուսի ոտքերուն քով, եւ մտիկ կ'ընէր անոր խօսքերը: **40** Բայց Մարթա շատ զբաղած էր սպասարկութեամբ: Եկաւ անոր քով ու ըսաւ. «Տէ՛ր, հոգ չն՛ս ըներ՝ որ քոյրս մինակ ձգեց զիս սպասարկութեան մէջ. ուրեմն ըսէ՛ իրեն՝ որ օգնէ ինձի»: **41** Յիսուս պատասխանեց անոր. «Մարթա՛, Մարթա՛, դուն շատ բաներու համար կը մտահոգուիս եւ իրար կ'անցնիս. **42** բայց մէկ բան պէտք է, ու Մարիամ ընտրեց այդ լաւ բաժինը, որ պիտի չառնուի իրմէ»:

11 Երբ տեղ մը կ'աղօթէր, դադրելէն ետք իր աշակերտներէն մէկը ըսաւ իրեն. «Տէ՛ր, աղօթել սորվեցուր մեզի, ինչպէս Յովհաննէս սորվեցուց

իր աշակերտներուն»։ 2 Ուստի ըսաւ անոնց. «Երբ կ'աղօթէք՝ ըսէք. “Յայր մեր՝ որ երկինքն ես”, քու անունդ սուրբ ըլլայ. քու թագաւորութիւնդ գայ. քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ”։ 3 Մեր ամենօրեայ հացը՝ տո՛ւր մեզի օրէ օր. 4 ներէ՛ մեզի մեր մեղքերը, քանի որ մենք ալ կը ներենք բոլոր անոնց՝ որ պարտապան են մեզի. ու մի՛ տանիր մեզ փորձութեան, հապա ազատէ՛ մեզ Չարէն”»։ 5 Նաեւ ըսաւ անոնց. «Եթէ ձեզմէ մէկը՝ բարեկամ մը ունենայ, ու կէս գիշերին երթայ անոր եւ ըսէ. “Բարեկամ, ինծի երեք նկանակ փոխ տուր. 6 որովհետեւ մէկ բարեկամս ճամբորդած ատեն ինծի եկաւ, եւ ոչինչ ունիմ՝ անոր հրամցնելու”, 7 ու եթէ ան ներսէն պատասխանէ. “Չիս մի՛ անհանգստացներ. արդէն դուռը գոցուած է, ու զաւակներս իմ քովս՝ անկողինին մէջ են. չեմ կրնար կանգնիլ եւ քեզի հաց տալ”, 8 կը յայտարարեմ ձեզի. “Թէեւ բարեկամութեան համար ոտքի չելլէ՝ անոր տալու, անոր պատճառած տաղտուկին՝ համար պիտի կանգնի ու պետք եղածը տայ անոր”։ 9 Ես ալ կը յայտարարեմ ձեզի. “Խնդրեցէ՛ք եւ պիտի տրուի ձեզի. փնտռեցէ՛ք ու պիտի գտնէք. դուռը բխեցէ՛ք եւ պիտի բացուի ձեզի։ 10 Որովհետեւ ո՛վ որ խնդրէ՝ կը ստանայ, ո՛վ որ փնտռէ՝ կը գտնէ, եւ ո՛վ որ դուռը բախէ՝ պիտի բացուի անոր։ 11 Եթէ որդի մը հաց ուզէ ձեզմէ ոեւէ մէկէն՝ որ հայր է, միթէ քա՛մր պիտի տայ անոր. կամ եթէ ձուկ ուզէ, միթէ ձուկին տեղ զձ պիտի տայ անոր. 12 կամ եթէ հաւկիթ ուզէ, միթէ կարիճ

պիտի տայ անոր: **13** Ուրեմն եթէ դո՛ւք որ չար էք՝ զիտէք ձեր զաւակներուն բարի նուէրներ տայ, որչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց՝ որ կը խնդրեն իրմէ՞»: **14** Յիսուս կը հանէր դել մը՝ որ համր էր: Երբ դելը դուրս ելաւ՝ համրը խօսեցաւ, եւ բազմութիւնները սքանչացան: **15** Բայց անոնցմէ ոմանք ըսին. «Ան դէւերու Բեեղզեբուղ իշխանին միջոցով կը հանէ դէւերը»: **16** Ուրիշներ ալ՝ փորձելու համար՝ կը խնդրէին իրմէ նշան մը երկինքէն: **17** Բայց ինք զիտնալով անոնց մտածումները՝ ըսաւ անոնց. «Ինքնիր դէմ բաժնուած որեւէ թագաւորութիւն՝ կ'աւերի, եւ տուն մը ինքնիր դէմ բաժնուած՝ կը փլշի: **18** Հապա եթէ Սատանան ինքնիր դէմ բաժնուած է, անոր թագաւորութիւնը ինչպէս պիտի կենայ. որովհետեւ կ'ըսէք թէ Բեեղզեբուղով կը հանեմ դէւերը: **19** Իսկ եթէ ես Բեեղզեբուղով կը հանեմ դէւերը, ձեր որդիները ինչո՞վ կը հանեն. ուստի անոնք պիտի ըլլան ձեր դատաւորները: **20** Բայց եթէ ես Աստուծոյ մատով կը հանեմ դէւերը, ուրեմն Աստուծոյ թագաւորութիւնը հասած է ձեր վրայ: **21** Երբ ուժեղ մարդ մը՝ զէնքերը վրան առած՝ պահպանէ իր տան գաւիթը, անոր ինչքը կը մնայ խաղաղութեան մէջ: **22** Բայց երբ իրմէ աւելի ուժեղը յարձակի վրան ու յաղթէ անոր, կը գրաւէ անոր զէնքերը՝ որոնց ան վստահած էր, եւ կը բաշխէ իրմէ առած կողոպուտը: **23** Ան որ ինծի հետ չէ՝ ինծի հակառակ է, եւ ան որ ինծի հետ չի հաւաքեր՝ կը ցրուէ»: **24** «Երբ

անմաքուր ոգին դուրս ելլէ մարդէ մը, կը շրջի անջուր տեղեր, հանգստութիւն կը փնտռէ, ու եթէ չգտնէ՝ կ'ըսէ. «Վերադառնամ իմ տունս՝ ուրկէ ելայ»: 25 Եւ կու գայ, գայն կը գտնէ ակուած ու զարդարուած: 26 Այն ատեն կ'երթայ, եւ իրեն հետ կ'առնէ ուրիշ եօթը ոգիներ՝ իրմէ աւելի չար, ու մտնելով՝ կը բնակին հոն, եւ այդ մարդուն վերջին վիճակը առաջինէն աւելի գէշ կ'ըլլայ»:

27 Երբ ան այս բաները կը խօսէր, բազմութեան մէջէն կին մը ձայնը բարձրացուց ու ըսաւ անոր. «Երանի՛ այն որովայնին՝ որ կրեց քեզ, եւ այն ծիծերուն՝ որոնք կաթ տուին քեզի՞»: 28 Իսկ ինք ըսաւ. «Մանաւանդ երանի՛ անոնց, որ կը լսեն Աստուծոյ խօսքը ու կը պահեն»:

29 Երբ բազմութիւնները կը խոնուէին անոր շուրջ, ինք ըսաւ. «Այս սերունդը չար է, նշան կը խնդրէ. սակայն ուրիշ նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան մարգարէին նշանը: 30 Որովհետեւ ինչպէս Յովնան նշան եղաւ Նինուէցիներուն, այնպէս մարդու Որդին պիտի ըլլայ այս սերունդին: 31 Հարաւի թագուհին՝ դատաստանին օրը ոտքի պիտի ելլէ այս սերունդին մարդոց դէմ ու պիտի դատապարտէ ասոնք, որովհետեւ եկաւ երկրի ծայրերէն՝ լսելու Սողոմոնի իմաստութիւնը. եւ ահա՛ Սողոմոնէ մեծ մէկը կայ հոս: 32 Նինուէի մարդիկը դատաստանին օրը պիտի կանգնին այս սերունդին դէմ ու պիտի դատապարտեն զայն, որովհետեւ զոջացին Յովնանի քարոզութեամբ. եւ ահա՛ Յովնանէ մեծ մէկը կայ հոս»:

33 «Ո՛չ մէկը՝

ճրագը վառելէ ետք՝ կը դնէ ծածուկ տեղ մը, կամ ալ՝
 գրուանի տակ, հապա՝ աշտանակի վրայ, որպէսզի
 ներս մտնողները տեսնեն փայլը: **34** Մարմինին
 ճրագը աչքն է. ուրեմն երբ աչքդ պարզ է՝ ամբողջ
 մարմինդ ալ լուսաւոր կ'ըլլայ, բայց երբ աչքդ չար
 է՝ մարմինդ ալ խաւարամած կ'ըլլայ: **35** Ուստի
 ուշադիր եղիր, որ քու մէջդ եղած լոյսը խաւար
 չըլլայ: **36** Ուրեմն եթէ ամբողջ մարմինդ լուսաւոր
 է ու մոլթ մաս մը չունի, ամբողջովին լուսաւոր
 կ'ըլլայ, ինչպէս երբ ճրագ մը կը լուսաւորէ քեզ
 իր փայլով: **37** Երբ այս բաները կը խօսէր,
 Փարիսեցի մը կը թախանձէր անոր՝ որ իր քով
 ճաշէ: Ան ալ մտաւ եւ սեղան նստաւ: **38** Երբ
 Փարիսեցին տեսաւ՝ զարմացաւ, որովհետեւ
 ճաշէն առաջ չլուացուեցաւ: **39** Տէրը ըսաւ անոր.
 «Յիմա դուք՝ Փարիսեցիներ, կը մաքրէք գաւաթին
 ու պնակին արտաքինը, բայց ձեր ներքինը
 լեցուն է յափշտակութեամբ եւ չարութեամբ: **40**
 Անմիտներ, ան որ արտաքինը ըրաւ, ներքինն ալ
 ինք չըրաւ: **41** Սակայն ողորմութիւն տուէք անոնց
 մէջ եղածներէն, եւ ահա՛ ամէն բան մաքուր կ'ըլլայ
 ձեզի»: **42** «Բայց վայ ձեզի՝ Փարիսեցիներուդ, որ
 կը վճարէք անանուխին, փեղենային եւ ամէն
 տեսակ բանջարեղէնի տասանորդը, բայց զանց
 կ'ընէք իրաւունքը եւ Աստուծոյ սէրը. ասոնք
 պետք է ընէիք, ու զանոնք չթողուիք: **43** Վայ
 ձեզի՝ Փարիսեցիներուդ, որ կը սիրէք առաջին
 աթոռները՝ ժողովարաններու մէջ, եւ բարեւները՝
 հրապարակներուն վրայ: **44** Վայ ձեզի՝ կեղծաւոր

դպիրներ ու Փարիսեցիներ, որ նման էք անյայտ գերեզմաններու, որոնց վրայէն մարդիկ կը քալեն եւ չեն գիտեր»։ 45 Օրինականներէն մէկը ըսաւ անոր. «Վարդապետ, այսպէս խօսելով՝ մեզ ալ կը նախատես»։ 46 Իսկ ան ըսաւ. «Ձեզի ալ վայ՝ օրինականներուդ, որ դժուարակիր բեռներ կը բեռցնէք մարդոց, բայց դուք՝ ձեր մէկ մատով չէք հալիր այդ բեռներուն։ 47 Վայ՝ ձեզի, որ գերեզմաններ կը կառուցանէք մարգարէներուն, մինչդեռ ձեր հայրերը սպաննեցին զանոնք։ 48 Ուստի կը վկայէք եւ հաւանութիւն կու տաք ձեր հայրերուն գործերուն. որովհետեւ իսկապէս իրենք սպաննեցին զանոնք, ու դուք գերեզմաններ կը կառուցանէք անոնց։ 49 Յետեւաբար՝ Աստուծոյ իմաստութիւնը նաեւ ըսաւ. “Անոնց պիտի դրկեմ մարգարէներ եւ առաքեալներ։ Անոնցմէ ոմանք պիտի սպաննեն ու ոմանք հալածեն, 50 որպէսզի աշխարհի հիմնադրութենէն ի վեր թափուած բոլոր մարգարէներուն արիւնը պահանջուի այս սերունդէն։ 51 Արեւի արիւնէն մինչեւ Չափարիայի արիւնը, որ թափուեցաւ զոհասեղանին ու տաճարին մէջտեղ, այո՛, կը յայտարարեմ ձեզի, պիտի պահանջուի այս սերունդէն”։ 52 Վայ՝ ձեզի՝ օրինականներուդ, որ վերցուցիք գիտութեան բանալին. դուք չմտաք, եւ մտնողներն ալ արգիլեցիք»։ 53 Երբ այս բաները կ’ըսէր անոնց, դպիրներն ու Փարիսեցիները սկսան բռնուի կերպով ճնշել զինք, եւ խօսեցնել շատ բաներու մասին. 54 անոր դարան պատրաստելով՝ կը

փնտռեին թե ինչպէս անոր բերանէն խօսք մը՝
որսան, որպէսզի ամբաստանեն զինք:

12 Այդ միջոցին, երբ բիւրաւոր բազմութիւններ
հաւաքուեցան, - այնքան՝ որ զիրար
կը կոխկռտէին, - սկսաւ նախ ըսել իր
աշակերտներուն. «Չգուշացէ՛ք՝ Փարիսեցիներու
խմորէն, որ կեղծաւորութիւնն է: **2** Որովհետեւ
ոչինչ կայ ծածկուած՝ որ պիտի չյայտնուի, ո՛չ ալ
զաղտնի՝ որ պիտի չզհտցուի: **3** Ուստի ինչ որ
ըսիք խաւարին մէջ՝ պիտի լսուի լոյսին մէջ, եւ այն
որ ականջին խօսեցաք ներքին սենեակներուն
մէջ՝ պիտի հրապարակուի տանիքներուն վրայ»:
4 «Բայց ձեզի՛ իմ բարեկամներուս՝ կ'ըսեմ. “Մի՛
վախնաք անոնցմէ՝ որ կը սպաննեն մարմինը,
եւ կարողութիւն չունին անկէ աւելի բան մը
ընելու: **5** Հապա ձեզի ցոյց տամ թէ որմէ՛ պէտք
է վախնաք: Վախցէ՛ք անկէ՝ որ սպաննելէ ետք
իշխանութիւն ունի գեհենը նետելու: Այո՛, կը
յայտարարեմ ձեզի, անկէ՛ վախցէ՛ք”»: (Geenna g1067)
6 Հինգ ճնճողուկ երկու դանգի չէ՛ն ծախուիր.
սակայն անոնցմէ ո՛չ մէկը մոռցուած է Աստուծոյ
առջեւ: **7** Բայց ձեր գլուխին բոլոր մազերն ալ
համրուած են. ուրեմն մի՛ վախնաք, որովհետեւ
դուք շատ ճնճողուկներէ աւելի կ'արժէք»:
8 «Կը
յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ դաւանի զիս մարդոց
առջեւ, մարդու Որդին ալ պիտի դաւանի զայն
Աստուծոյ հրեշտակներուն առջեւ: **9** Բայց ան
որ ուրանայ զիս մարդոց առջեւ, ինք ալ պիտի
ուրացուի Աստուծոյ հրեշտակներուն առջեւ:

10 Ո՛վ որ խօսք մը ըսէ մարդու Ռդդիին դէմ՝
 պիտի ներուկի անոր, բայց ան որ հայհոյէ Սուրբ
 Հոգիին դէմ՝ պիտի չներուկի անոր»: **11** Երբ տանին
 ձեզ ժողովարաններու, իշխանութիւններու եւ
 պետութիւններու առջեւ, մի՛ մտահոգուիք թէ
 ինչպէս կամ ինչ բանով պիտի ջատագովէք
 դուք ձեզ, կամ ինչ պիտի ըսէք. **12** որովհետեւ
 Սուրբ Հոգին պիտի սորվեցնէ ձեզի նոյն ժամուն՝
 ինչ որ պէտք է խօսիլ»: **13** Բազմութեան
 մէջէն մէկը ըսաւ անոր. «Վարդապետ, ըսէ՛
 եղբօրս՝ որ ինծի հետ բաժնէ մեզի ինկած
 ժառանգութիւնը»: **14** Ան ալ ըսաւ անոր. «Մարդ,
 ո՛վ նշանակեց զիս իրաւարար կամ բաժնող՝ ձեր
 վրայ»: **15** Ապա ըսաւ անոնց. «Ուշադիր եղէք եւ
 զգուշացէք ազահութենէ. որովհետեւ մէկուն
 ստացուածքներուն առատութենէն կախուած
 չէ իր կեանքը»: **16** Առակ մըն ալ խօսեցաւ
 անոնց՝ ըսելով. «Հարուստ մարդու մը արտերը
 տուին առատ բերքեր, **17** եւ ան կը մտածեր
 ինքնիրեն՝ ըսելով. “Ի՞նչ ընեմ, որովհետեւ տեղ
 չունիմ՝ ուր բերքերս ժողվեմ”: Եւ ըսաւ. **18** “Սա՛
 պիտի ընեմ. պիտի քանդեմ ամբարներս, պիտի
 կառուցանեմ աւելի մեծերը, հոն պիտի ժողվեմ
 իմ բոլոր բերքերս ու բարիքներս, **19** եւ պիտի
 ըսեմ անծիս. «Ո՛վ իմ անձս, շատ բարիքներ
 ունիս՝ դիզուած շատ տարիներու համար. հանգչէ՛,
 կէր, խմէ՛ եւ զուարճացիր»»: **20** Բայց Աստուած
 ըսաւ անոր. “Անմիտ, այս գիշեր անձդ պիտի
 պահանջուի քեզմէ. ուստի որո՞՞ւ պիտի ըլլան

այդ պատրաստած բաներդ»: 21 Այսպես է ան՝
որ գանձ կը դիզէ ինքնիրեն համար, բայց չի
հարստանար Աստուծոյ մօտ»: 22 Եւ ըսաւ իր
աշակերտներուն. «Ուստի կը յայտարարեմ ձեզի.
“Մի մտահոգուիք ձեր անձին համար՝ թէ ինչ
պիտի ուտէք, ո՛չ ալ մարմինին համար՝ թէ ինչ
պիտի հագնիք. 23 որովհետեւ անձը կերակուրէն
աւելի է, ու մարմինը՝ հագուստէն: 24 Դիտեցէք
ագռաւները, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը
հնձեն, որոնք ո՛չ շտեմարաններ ունին, ո՛չ ալ
ամբարներ, բայց Աստուած կը կերակրէ զանոնք.
դուք որչափ աւելի կ'արժէք թռչուններէն: 25
Ձեզմէ ո՞վ կրնայ մտահոգուելով կանգուն մը
աւելցնել հասակին վրայ: 26 Հապա եթէ չէք
կրնար ամենափոքր բանը փոխել, ինչո՞ւ կը
մտահոգուիք ուրիշ բաներու համար: 27 Դիտեցէք
շուշանները, թէ ինչպէս կ'աճին: Ո՛չ կ'աշխատին
եւ ո՛չ կը մանեն. բայց կը յայտարարեմ ձեզի թէ
Սողոմոն ալ՝ իր ամբողջ փառաւորութեան մէջ՝
չհագուեցաւ անոնցմէ մէկուն պէս: 28 Ուստի եթէ
խոտը, որ այսօր դաշտի մէջ է ու վաղը փուռը
պիտի նետուի, Աստուած այդպէս կը հագուեցնէ,
որչափ աւելի ձեզ, թերահաւատներ: 29 Ա՛լ դուք
մի փնտռէք թէ ինչ պիտի ուտէք եւ ինչ պիտի
խմէք, ու մի շփոթիք. 30 որովհետեւ աշխարհի
ագգերը կը փնտռեն այդ բոլոր բաները, եւ ձեր
Հայրը գիտէ թէ ասոնք պետք են ձեզի: 31 Հապա
դուք խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը, ու
այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի”»: 32

«Մի վախճար, պզտիկ հօտ, որովհետեւ ձեր Հայրը բարեհաճեցաւ՝ որ ձեզի տայ թագաւորութիւնը: **33** Ծախեցէք ձեր ինչքը եւ ողորմութիւն տուէք. չմաշող քսակներ պատրաստեցէք ձեզի համար, ու չպակսող գանձ մը՝ երկինքը, ուր ոչ գողը կը մօտենայ եւ ոչ ցեցը կ'ապականէ: **34** Որովհետեւ ո՛ր որ է ձեր գանձը, հո՛ն պիտի ըլլայ նաեւ ձեր սիրտը»: **35** «Ձեր մեջքերը թող գօտեւորուած ըլլան, ու ճրագները՝ վառուած. **36** եւ դուք նման եղէք այն մարդոց, որ կը սպասեն իրենց տիրոջ թէ երբ պիտի վերադառնայ հարսանիքէն. որպէսզի երբ գայ ու դուռը բախէ՝ իսկոյն բանան անոր: **37** Երանի՛ այն ծառաներուն, որ տէրը արթուն պիտի գտնէ՝ երբ գայ: Եւ մարտապէս կը յայտարարեմ ձեզի թէ ինք գօտին մեջքը պիտի կապէ, սեղան բազմեցնէ զանոնք, եւ առջեւ անցնելով՝ պիտի սպասարկէ անոնց: **38** Եթէ գիշերուան երկրորդ պահուն գայ, կամ երրորդ պահուն գայ եւ այնպէս գտնէ՝ երանելի՛ են այդ ծառաները: **39** Բայց սա՛ հասկցէք. եթէ տանուտէրը գիտնար թէ գողը ո՛ր ժամուն պիտի գայ, արթուն կը կենար ու թոյլ չէր տար՝ որ ծակէ իր տունը: **40** Ուրեմն դուք ալ պատրաստ կեցէք, քանի որ մարդու Որդին պիտի գայ այնպիսի ժամու մը՝ որ դուք չէք կարծեր»: **41** Պետրոս ըսաւ անոր. «Տէր, այդ առակը մեզի կ'ըսես՝ թէ բոլորին ալ»: **42** Տէրը ըսաւ. «Ուրեմն ո՛վ է այն հաւատարիմ եւ իմաստուն տնտեսը, որ տէրը պիտի նշանակէ իր ծառաներուն վրայ՝ որպէսզի ատենին տայ անոնց ուտելիքը: **43**

Երանի այդ ծառային, որուն տէրը՝ երբ գայ՝ պիտի գտնէ թէ այդպէս կ'ընէ: 44 Ճշմարտապէս կը յայտարարեն ձեզի թէ պիտի նշանակէ զայն իր ամբողջ ինչքին վրայ: 45 Հապա եթէ այդ ծառան ըսէ իր սիրտին մէջ. “Իմ տէրս կ'ուշացնէ իր գալը”, եւ սկսի ծեծել ծառաներն ու աղախինները, ուտել, խմել եւ արբենալ, 46 այդ ծառային տէրը պիտի գայ այնպիսի օր մը՝ երբ չի սպասեր, եւ այնպիսի ժամու մը՝ որ չի գիտեր. երկուքի պիտի կտրէ զայն, ու պիտի դնէ անոր բաժինը անհաւատարիմներուն հետ: 47 Այն ծառան՝ որ գիտէ իր տիրոջ կամքը եւ չի պատրաստուիր, ոչ ալ կը գործէ անոր կամքին համաձայն, շատ պիտի ծեծուի: 48 Բայց ան որ չի գիտեր ու ծեծի արժանի բաներ ընէ, քիչ պիտի ծեծուի: Որո՞նք որ շատ տրուեցաւ՝ շատ պիտի պահանջուի անկէ, եւ որո՞նք որ աւելի յանձնուեցաւ՝ ակաւելի պիտի ուզուի անկէ»: 49 «Ես կրակ ձգելու եկայ երկրի վրայ, եւ ինչ կ'ուզեմ՝ եթէ արդէն բոքրեքա՞ծ է: 50 Բայց մկրտութիւնով մը պիտի մկրտուիմ, եւ ինչպէս կը կսկծիմ՝ մինչեւ որ կատարուի: 51 Կը կարծեք թէ ես եկայ՝ երկրի վրայ խաղաղութիւն տալու: Կ'ըսեմ ձեզի. “Ո՛չ, հապա՝ բաժանում”: 52 Որովհետեւ ասկէ ետք՝ մէկ տան մէջ հինգը բաժնուած պիտի ըլլան իրարմէ. երեքը՝ երկուքէն, ու երկուքը՝ երեքէն: 53 Հայրը պիտի բաժնուի որդիէն, ու որդին՝ հօրմէն. մայրը՝ աղջիկէն, եւ աղջիկը՝ մօրմէն. կեսուրը՝ իր հարսէն, ու հարսը՝ իր կեսուրէն»: 54 Նաեւ ըսաւ բազմութիւններուն.

«Երբ տեսնէք ամպ մը՝ արեւմուտքէն ելած, իսկոյն կ'ըսէք. “Անձրեւ պիտի գայ”, եւ այդպէս կ'ըլլայ: 55 Ու երբ հարաւային հովը փչէ, կ'ըսէք. “Տաք պիտի ըլլայ”, եւ այդպէս կ'ըլլայ: 56 Կեղծաւորներ, զիտէք երկրի ու երկինքի երեսը քննել, հապա ինչպէս չէք քններ այս ժամանակը»: 57 «Եւ ինչո՞ւ դուք ձեզմէ չէք որոշեր իրաւունքը: 58 Երբ ոսոխիդ հետ երթաս իշխանին, ճամբան փութա՞ւ ազատիլ անկէ, որպէսզի դատաւորին առջեւ չքաշկռտէ քեզ, դատաւորը՝ ոստիկանին չյանձնէ քեզ, ու ոստիկանն ալ բանտը չնետէ: 59 Կը յայտարարեմ քեզի. “Դուրս պիտի չելլես անկէ, մինչեւ որ վճարես վերջին լուման”»:

13 Այդ ատեն ներկայ եղողներէն ոմանք պատմեցին անոր այն Գալիլեացիներուն մասին, որոնց արիւնը Պիղատոս խառնեց իրենց զոհերուն հետ: 2 Յիսուս պատասխանեց անոնց. «Կը կարծէ՞ք թէ այդ Գալիլեացիները աւելի մեղաւոր էին բոլոր Գալիլեացիներէն, քանի որ այսպիսի չարչարանքներ կրեցին: 3 Կ'ըսեմ ձեզի՝ ո՛չ: Հապա եթէ չապաշխարէք, բոլորդ ալ նոյնպէս պիտի կորսուիք: 4 Կամ թէ այն տասնութ հոգիները, որոնց վրայ Սելովամի աշտարակը ինկաւ եւ սպաննեց զանոնք, կը կարծէ՞ք թէ անոնք Երուսաղէմ բնակող բոլոր մարդոցմէ աւելի յանցաւոր էին: 5 Կ'ըսեմ ձեզի՝ ո՛չ: Հապա եթէ չապաշխարէք, բոլորդ ալ նմանապէս պիտի կորսուիք»: 6 Սա՛ առակն ալ ըսաւ. «Մէկը իր այգիին մէջ ունէր տնկուած թզենի մը. եկաւ

պտուղ փնտռելու անոր վրայ, բայց չգտաւ: 7
 Ուստի ըսաւ այգեպանին. «Ահա՛ երեք տարի է,
 որ կու գամ՝ պտուղ կը փնտռեմ այդ թզենիին
 վրայ, ու չեմ գտներ. ալ կտրե՛ գայն, ինչո՞ւ խափանէ
 գետինը»: 8 Ան ալ պատասխանեց անոր. «Տէ՛ր,
 այս տարի ալ ձգէ գայն, մինչեւ որ բրեմ անոր
 շուրջը ու թրիք դնեմ: 9 Եթէ պտուղ տայ՝ լա՛ւ.
 այլապէս՝ յետագայի՛ն կտրէ գայն»»: 10 Շաբաթ
 օրը՝ ինք կը սորվեցնէր ժողովարաններէն մեկուն
 մէջ: 11 Եւ ահա՛ կին մը կար հոն, որ տասնութ
 տարիէ ի վեր ունէր հիւանդութեան ոգի մը.
 կքած էր, եւ ամենեւին չէր կրնար շիտակ կայնիլ:
 12 Յիսուս տեսնելով գայն՝ կանչեց ու ըսաւ
 անոր. «Կի՛ն, արձակուած ես հիւանդութենէդ»,
 13 եւ ձեռքը դրաւ անոր վրայ: Ան անմիջապէս
 շտկուեցաւ, ու փառաբանեց Աստուած: 14 Քանի
 որ Յիսուս բուժեց Շաբաթ օրը, ժողովարանին
 պետը ընդվզելով ըսաւ բազմութեան. «Վեց օր
 կայ՝ որոնց մէջ պէտք է գործէք. ուրեմն՝ այդ
 օրերը եկէք ու բուժուեցէք, ո՛չ թէ Շաբաթ օրը»: 15
 Ուստի Տէրը պատասխանեց անոր. «Կեղծաւոր,
 ձեզմէ իւրաքանչիւրը Շաբաթ օրը իր եզը կամ
 էշը մտուրէն չ'մրձակեր, որպէսզի տանի՝ ջուր
 տայ: 16 Հապա ասիկա՝ որ Աբրահամի աղջիկ
 էր, եւ ահա՛ տասնութ տարի Սատանան կապած
 էր գայն, պէտք չէ՞ր որ Շաբաթ օրը արձակուէր
 այդ կապէն»: 17 Երբ այս բաները ըսաւ, իր բոլոր
 հակառակորդները ամօթահար եղան. իսկ ամբողջ
 բազմութիւնը ուրախացաւ այն բոլոր փառաւոր

գործերուն համար՝ որ ան կը կատարէր: **18** Եւ ըսաւ. «Ի՞նչ բանի նման է Աստուծոյ թագաւորութիւնը, կամ ի՞նչ բանի նմանցնեմ գայն: **19** Նման է մանանեխի հատիկի մը, որ մարդ մը առաւ՝ իր պարտեզը ցանեց. եւ աճեցաւ, մեծ ծառ մը եղաւ, ու երկինքի թռչունները բնակեցան անոր ճիւղերուն վրայ»: **20** Դարձեալ ըսաւ. «Ի՞նչ բանի նմանցնեմ Աստուծոյ թագաւորութիւնը: **21** Նման է խմորին, որ կին մը առաւ ու երեք գրիւ ալիւրի մէջ պահեց, մինչեւ որ ամբողջը խմորուեցաւ»: **22** Եւ քաղաքներն ու գիւղերը շրջելով՝ կը սորվեցներ, եւ դէպի Երուսաղէմ կը ճամբորդէր: **23** Մէկը ըսաւ անոր. «Տէր, քիչու՞ր են անոնք՝ որ պիտի փրկուին»: **24** Ան ալ ըսաւ անոնց. «Պայքարեցէ՛ք՝ որ մտնէք նեղ դռներ. քանի որ կ'ըսեն ձեզի թէ շատեր պիտի ջանան մտնել՝ բայց պիտի չկարողանան: **25** Անկէ ետք՝ երբ տանուտերը ոտքի ելլէ, գոցէ դուռը եւ դուք մնաք դուրսը, ու սկսիք բախել դուռը եւ ըսել. “Տէր, Տէր, բաց մեզի”, ան ալ պիտի պատասխանէ ձեզի. “Չեմ ճանչնար ձեզ, ուրկէ՞ եք”: **26** Այն ատեն պիտի սկսիք ըսել. “Մենք քու առջեւդ կերանք ու խմեցինք, եւ դուն մեր հրապարակներուն մէջ սորվեցուցիր”: **27** Բայց ան պիտի ըսէ. “Կ'ըսեմ ձեզի. “Չեմ ճանչնար ձեզ, ուրկէ՞ եք. հեռացէ՛ք ինձմէ բոլորդ՝ անիրաւութիւն գործողներ””: **28** Զոն պիտի ըլլայ լաց ու ակռաներու կրճտում, երբ տեսնէք Աբրահամը, Իսահակը, Յակոբը եւ բոլոր մարգարէները՝ Աստուծոյ թագաւորութեան մէջ, իսկ դուք՝ դուրս հանուած:

29 Այնտեղ պիտի գան արեւելքէն եւ արեւմուտքէն, հիւսիսէն ու հարաւէն, եւ պիտի բազմին Աստուծոյ թագաւորութեան մէջ: 30 Ու ահա՛ յետիններ կան՝ որոնք պիտի ըլլան առաջին, եւ առաջիններ՝ որոնք պիտի ըլլան յետին»: 31 Նոյն օրը քանի մը Փարիսեցիներ եկան քովը եւ ըսին իրեն. «Ելիր ու հեռացիր ասկէ, որովհետեւ Յերովդէս կ'ուզէ սպաննել քեզ»: 32 Ինք ալ ըսաւ անոնց. «Գացէք, ըսէք այդ աղուեսին. “Ահա ես դեւեր դուրս կը հանեմ ու բժշկութիւններ կ'ընեմ այսօր եւ վաղը, ու երրորդ օրը աւարտած պիտի ըլլամ”»: 33 Սակայն պետք է որ այսօր եւ վաղը ու միւս օր քալեմ, որովհետեւ կարելի չէ որ մարգարէ մը կորսուի Երուսաղէմէն դուրս: 34 Երուսաղէմ, Երուսաղէմ, դուն որ կը սպաննէիր մարգարէները եւ կը քարկոծէիր քեզի դրկուածները. քանի՞ անգամ ուզեցի հաւաքել զաւակներդ, ինչպէս հաւը թելերուն տակ կը հաւաքէ իր ձագերը, բայց դո՛ւք չուզեցիք: 35 Ահա՛ ձեր տունը ամայի պիտի մնայ ձեզի: Սակայն կ'ըսեմ ձեզի թէ ա՛յլ պիտի չտեսնէք զիս, մինչեւ որ գայ այն ժամանակը՝ երբ պիտի ըսէք. “Օրհնեա՛լ է ան՝ որ կու գայ Տէրոջ անունով”»:

14 Երբ ինք Շաբաթ օր մը մտաւ Փարիսեցիներու պետերէն մէկուն տունը՝ հաց ուտելու, անոնք կը հսկէին իր վրայ: 2 Եւ ահա՛ ջրգողեալ մարդ մը կար հոն՝ իր առջեւ: 3 Յիսուս խօսեցաւ օրինականներուն ու Փարիսեցիներուն՝ ըսելով. «Արտօնուած է Շաբաթ օրը բուժել»: 4 Անոնք

հանդարտ կեցան: Իսկ ինք բռնեց զայն, բռնեց եւ
 դրկեց. 5 Ապա ըսաւ անոնց. «Ձեզմէ որո՞նք էշը կամ
 եզը եթէ հորը իյնայ, իսկոյն չի հաներ զայն՝ Շաբաթ
 օրը»: 6 Այս մասին չկրցան դիմադարձել անոր: 7
 Առակ մըն ալ ըսաւ հրաւիրեալներուն, երբ տեսաւ
 թէ ինչպէս կ'ընտրէին առաջին բազմոցները: Ըսաւ
 անոնց. 8 «Երբ մարդէ մը հրաւիրուիս հարսանիքի,
 մի՛ նստիր առաջին բազմոցին վրայ. որպէսզի
 եթէ քեզմէ աւելի պատուաւոր մէկը հրաւիրուած
 ըլլայ, 9 ան՝ որ քեզ ու զայն հրաւիրեց, չգայ եւ
 չըսէ քեզի. “Տե՛ղ տուր ասոր”. ու անկէ ետք՝ սկսիս
 ամչնալով գրաւել յետին տեղը: 10 Հապա երբ
 հրաւիրուիս՝ գնա՛ եւ նստի՛ յետին տեղը. որպէսզի
 երբ քեզ հրաւիրողը գայ՝ ըսէ քեզի. “Բարեկամ, վեր
 հրամմէ”. այն ատեն փառք կ'ունենաս քեզի հետ
 սեղան նստողներուն առջեւ: 11 Որովհետեւ ո՛վ որ
 կը բարձրացնէ ինքզինք՝ պիտի խոնարհի, իսկ ո՛վ
 որ կը խոնարհեցնէ ինքզինք՝ պիտի բարձրանայ»: 12
 Զինք հրաւիրողին ալ ըսաւ. «Երբ ճաշ կամ
 ընթրիք կը սարքես, մի՛ կանչեր բարեկամներդ, ո՛չ
 ալ եղբայրներդ. ո՛չ ազգականներդ, ո՛չ հարուստ
 դրացիներդ, որպէսզի անոնք ալ փոխարենը
 չհրաւիրեն քեզ՝ ու հատուցում չըլլայ քեզի: 13
 Հապա երբ կոչունք կը սարքես՝ հրաւիրէ՛
 աղքատները, պակասաւորները, կաղերը եւ
 կոյրերը, 14 ու երանելի՛ պիտի ըլլաս, որովհետեւ
 անոնք չեն կրնար փոխարենը հատուցանել
 քեզի. արդարեւ արդարներուն յարութիւն առած
 ատենը փոխարենը պիտի հատուցանուի քեզի»:

15 Հետը սեղան նստողներէն մէկը, երբ լսեց ասիկա, ըսաւ անոր. «Երանի՛ անոր, որ հաց պիտի ուտէ Աստուծոյ թագաւորութեան մէջ»:
16 Ինք ըսաւ անոր. «Մարդ մը սարքեց մեծ ընթրիք մը, ու հրաւիրեց շատ մարդիկ: **17** Ընթրիքի ժամուն՝ դրկեց իր ծառան, որպէսզի ըսէ հրաւիրեալներուն. “Եկէ՛ք, որովհետեւ արդէն ամէն բան պատրաստ է”:
18 Բոլորն ալ միաբերան սկսան հրաժարիլ: Առաջինը ըսաւ անոր. “Ես արտ մը գնեցի, եւ հարկ է որ մեկնիմ ու տեսնեմ զայն. կը խնդրեմ քեզմէ, հրաժարած նկատէ զիս”:
19 Միւսը ըսաւ. “Հինգ գոյգ եզ գնեցի, եւ կ’երթամ որ փորձարկեմ զանոնք. կը խնդրեմ քեզմէ, հրաժարած նկատէ զիս”:
20 Միւսը ըսաւ. “Կնոջ մը հետ ամուսնացայ. ուստի չեմ կրնար գալ”:
21 Ծառան եկաւ ու պատմեց իր տիրոջ այս բաները: Այդ ատեն տանուտէրը բարկացաւ եւ ըսաւ իր ծառային. “Շուտով դուրս ելիր՝ դէպի քաղաքին հրապարակներն ու փողոցները, եւ հոն բեր աղքատները, պակասաւորները, կաղերն ու կոյրերը”:
22 Ծառան ալ ըսաւ. “Տէր, կատարուեցաւ ինչ որ հրամայեցիր, բայց տակաւին տեղ կայ”:
23 Տէրը ըսաւ ծառային. “Դուրս ելիր դէպի ճամբաներուն գլուխներն ու ցանկապատերը, եւ հարկադրե՛ գտածներդ՝ որ հոս մտնեն, որպէսզի տունս լեցուի”:
24 Որովհետեւ, կ’ըսեմ ձեզի, այդ հրաւիրուած մարդոցմէն ո՛չ մէկը պիտի ճաշակէ իմ ընթրիքէս»:
25 Իրեն հետ մեծ բազմութիւններ կ’երթային. դառնալով անոնց՝ ըսաւ. **26** «Եթէ մէկը

ինծի գայ՝ բայց չատէ իր հայրն ու մայրը, կինը եւ զաւակները, եղբայրներն ու քոյրերը, նաեւ իր անձը, չի կրնար իմ աշակերտս ըլլալ: **27** Ո՛վ որ չի կրեր իր խաչը եւ չի գար իմ ետեւէս, չի կրնար իմ աշակերտս ըլլալ: **28** Որովհետեւ ձեզմէ ո՛վ՝ եթէ ուզէ կառուցանել աշտարակ մը՝ նախ չի նստիր ու հաշուեր ծախսը, թէ զայն լրացնելու կարողութիւն ունի: **29** որպէսզի երբ հիմը դնէ եւ չկարողանայ աւարտել, բոլոր տեսնողները չսկսին ծաղրել զինք **30** ու ըսել. “Այս մարդը սկսաւ կառուցանել, բայց չկարողացաւ աւարտել”: **31** Կամ թէ ո՛ր թագաւորը՝ ուրիշ թագաւորի մը հետ պատերազմելու երթալէ առաջ՝ չի նստիր ու խորհրդակցիր, թէ արդեօք տասը հազարով կրնայ դիմաւորել ան՝ որ քսան հազարով կու գայ իրեն դէմ: **32** Եթէ չի կրնար, քանի դեռ ան հեռու է՝ դեսպան ղրկելով խաղաղութիւն կը խնդրէ: **33** Ահա՛ այսպէս ալ ձեզմէ ան որ չհրաժարի իր ամբողջ ինչքէն, չի կրնար իմ աշակերտս ըլլալ»: **34** «Աղը լաւ բան է. բայց եթէ աղը իր համը կորսնցնէ, ինչո՞վ պիտի համեմուի: **35** Ո՛չ հողի, ո՛չ ալ թրիքի յարմար կ’ըլլայ. ուստի դուրս կը նետեն զայն: Ա՛ն որ ականջ ունի լսելու՝ թող լսէ»:

15 Բոլոր մաքսաւորներն ու մեղաւորները անոր կը մօտենային՝ զինք լսելու համար: **2** Իսկ Փարիսեցիները եւ դպիրները կը տրտնջէին ու կ’ըսէին. «Ասիկա կ’ընդունի մեղաւորները եւ կ’ուտէ անոնց հետ»:

3 Ան ալ սա՛ առակը խօսեցաւ անոնց. **4** «Ձեզմէ ո՛վ է այն մարդը, որ եթէ ունենայ

հարիւր ոչխար ու կորսնցնէ անոնցմէ մէկը, չի
 ձգեր իննսունինը անապատին մէջ եւ երթար այդ
 կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն: **5** Ու
 երբ գտնէ, ուրախանալով կը դնէ զայն իր ուսերուն
 վրայ, **6** եւ տուն գալով՝ կը հրաւիրէ բարեկամներն
 ու դրացիները, եւ կ'ըսէ անոնց. «Ուրախացէ՛ք
 ինծի հետ, որովհետեւ գտայ կորսուած ոչխարս»:
7 Կը յայտարարեմ ձեզի թէ այսպէս ուրախութիւն
 պիտի ըլլայ երկինքը մէկ մեղաւորի համար՝ որ
 կ'ապաշխարէ, քան իննսունինը արդարներու
 համար՝ որոնց ապաշխարութիւն պէտք չէ»: **8**
 «Կամ՝ ո՞վ է այն կինը, որ եթէ տասը դրամ ունենայ
 ու դրամ մը կորսնցնէ, ճրագ չի վառեր, տունը
 չ'աւելր եւ ուշադրութեամբ փնտռեր, մինչեւ որ
 գտնէ: **9** Ու երբ գտնէ, կը հրաւիրէ բարեկամներն
 ու դրացիները, եւ կ'ըսէ. «Ուրախացէ՛ք ինծի
 հետ, որովհետեւ գտայ կորսնցուցած դրամս»:
10 Այդպէս ալ, կը յայտարարեմ ձեզի, ուրախութիւն
 կ'ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջեւ մէկ
 մեղաւորի համար՝ որ կ'ապաշխարէ»: **11** Ապա
 ըսաւ. «Մարդ մը ունէր երկու որդի: **12** Անոնցմէ
 կրտսերը ըսաւ հօրը. «Հայր, տո՛ւր ինծի քու
 ունեցածեղ ինծի վիճակուելիք բաժինը»: Ան ալ
 բաժնեց անոնց իր ունեցածը: **13** Շատ օրեր
 չանցած՝ կրտսեր որդին ժողվեց բոլոր բաները,
 մեկնեցաւ հեռաւոր երկիր մը, ու հոն փճացուց իր
 ունեցածը՝ անառակութեամբ ապրելով: **14** Երբ
 ծախսեց ամէնը՝ սաստիկ սով մը եղաւ այդ երկրին
 մէջ, եւ ինք սկսաւ կարօտութեան մէջ ըլլալ:

15 Ուստի գնաց՝ այդ երկրին քաղաքացիներէն մէկուն քով մտաւ. ան ալ իր արտը դրկեց զայն՝ խոզ արածելու համար: **16** Կը ցանկար խոզերուն կերած եղջիւրէն իր փորը լեցնել, բայց ոչ մէկը կու տար անոր: **17** Եւ ինքնիրեն գալով՝ ըսաւ. «Քանի վարձկաններ կան հօրս տունը՝ հացով լիացած, ու ես հոս սովամահ կը կորսուիմ: **18** Կանգնիմ, երթամ հօրս քով եւ ըսեմ անոր. «Յայր, մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւդ, **19** եւ ալ արժանի չեմ քու որդիդ կոչուելու. ըրէ՛ գիս վարձկաններէդ մէկուն պէս»»: **20** Ուստի կանգնեցաւ ու գնաց իր հօր քով: Մինչ ինք դեռ շատ հեռու էր՝ հայրը տեսաւ զայն եւ գթաց. վազելով՝ անոր վիզին վրայ ինկաւ ու համբուրեց զայն: **21** Որդին ալ ըսաւ անոր. «Յայր, մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւդ, եւ ալ արժանի չեմ քու որդիդ կոչուելու»: **22** Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն. «Յանեցէք առաջին պարեգօտը եւ հագցուցէք անոր, մատանի դրէք անոր ձեռքը ու կօշիկներ՝ անոր ոտքերը: **23** Եւ բերէք պարարտ գուարակը, մորթեցէք, ուտենք ու գուարճանանք. **24** որովհետեւ այս որդիս մեռած էր՝ եւ վերապրեցաւ, կորսուած էր՝ ու գտնուեցաւ»: Եւ սկսան գուարճանալ: **25** Անոր երէց որդին արտն էր. երբ եկաւ ու մօտեցաւ տան, լսեց նուագարաններու եւ պարերու ձայնը, **26** ու իրեն կանչելով ծառաներէն մէկը՝ հարցափորձեց թէ ինչ էր այդ: **27** Ան ալ ըսաւ անոր. «Եղբայրդ եկաւ, ու հայրդ մորթեց պարարտ գուարակը, որովհետեւ ողջ առողջ վերստացաւ զայն»: **28** Իսկ

ինք բարկացաւ եւ չէր ուզեր ներս մտնել. ուստի իր հայրը դուրս ելլելով՝ կ'աղաչէր անոր: **29** Ան ալ պատասխանեց իր հօր. «Ահա՛ այսչափ տարի է՝ որ կը ծառայեմ քեզի, ու բնա՛ւ քու պատուիրանդ զանց չըրի. սակայն երբեք ուլ մը չտուիր ինծի՝ որ զուարճանայի բարեկամներուս հետ: **30** Բայց երբ եկաւ այդ որդիդ՝ որ լափեց քու ունեցածդ պոռնիկներու հետ, մորթեցիր անոր պարարտ զուարակը»: **31** Ան ալ ըսաւ անոր. «Որդեանկ, դուն միշտ ինծի հետ ես, ու ամբողջ ունեցածս քուկդ է: **32** Սակայն պէտք էր զուարճանալ եւ ուրախանալ, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ու վերապրեցաւ, կորսուած էր՝ եւ գտնուեցաւ»»:

16 Իր աշակերտներուն ալ ըսաւ. «Չարուստ մարդ մը կար՝ որ տնտես մը ունէր. ասիկա ամբաստանուեցաւ անոր առջեւ՝ որպէս թէ կը փճացնէ անոր ինչքը: **2** Ուստի կանչեց զայն եւ ըսաւ անոր. «Այս ի՞նչ է՝ որ քու մասիդ կը լսեմ. տնտեսութեանդ հաշիւը տուր, որովհետեւ անչես կրնար տնտես ըլլալ»: **3** Տնտեսը ըսաւ ինքնիրեն. «Ի՞նչ ընեմ, որովհետեւ տէրս տնտեսութիւնը կ'առնէ ինձմէ. չեմ կրնար հողագործ ըլլալ», կ'ամչնամ մուրալ: **4** Գիտեմ ինչ պիտի ընեմ, որպէսզի երբ հեռացուիմ իմ տնտեսութենէս՝ ընդունին զիս իրենց տունը: **5** Եւ իրեն կանչելով իր տիրոջ պարտապաններէն իւրաքանչիւրը, ըսաւ առաջինին. «Դուն ռըչափ կը պարտիս իմ տիրոջս»: **6** Ան ալ ըսաւ. «Չարիւր մար ձեթ»: Ըսաւ անոր. «Ա՛ռ մուրհակդ, ու շուտով նստէ՝ «յիսո՛ւն» գրէ»: **7**

Յետոյ ըսաւ միւսին. “Դ՛ռն ռ՛րչափ կը պարտիս”:
 Ան ալ ըսաւ. “Յարիւր քոռ ցորեն”: Ըսաւ անոր.
 “Ա՛ճ մուրհակդ եւ «ութսո՛ւն» գրէ”: **8** Տէրը գովեց
 անիրաւ տնտեսը՝ որ ուշիմութեամբ վարուեցաւ.
 որովհետեւ այս աշխարհի որդիները աւելի ուշիմ
 են իրենց սերունդին մէջ՝ քան լոյսի որդիները: (aĩon
 g165) **9** Ես ալ կ’ըսեմ ձեզի. “Բարեկամներ ըրէք ձեզի
 անիրաւ մամոնայէն, որպէսզի երբ ան պակսի”,
 ընդունին ձեզ յաւիտենական բնակարաններու
 մէջ”: (aĩonios g166) **10** Ա՛ն որ ամենափոքր բանին
 մէջ հաւատարիմ է՝ շատին մէջ ալ հաւատարիմ
 կ’ըլլայ, եւ ան որ ամենափոքրին մէջ անիրաւ է՝
 շատին մէջ ալ անիրաւ կ’ըլլայ: **11** Ուրեմն եթէ
 անիրաւ մամոնային մէջ հաւատարիմ չըլլաք,
 ճշմարիտ հարստութիւնը ո՛վ պիտի վստահի ձեզի:
12 Եթէ ուրիշին բանին մէջ հաւատարիմ չըլլաք,
 ձերը ո՛վ պիտի տայ ձեզի: **13** Ո՛չ մէկ ծառայ կրնայ
 ծառայել երկու տիրոջ. որովհետեւ կան մէկը
 պիտի ատէ եւ միւսը սիրէ, կան մէկուն պիտի
 յարի” ու միւսը արհամարհէ: Չէք կրնար ծառայել
 Աստուծոյ եւ մամոնային»: **14** Փարիսեցիներն ալ՝
 որոնք արծաթասէր էին, այս բոլոր բաները լսելով՝
 կը քամահրէին զայն: **15** Եւ ըսաւ անոնց. «Դ՛ռք էք
 որ մարդոց առջեւ կ’արդարացնէք դուք ձեզ, բայց
 Աստուած գիտէ ձեր սիրտերը. որովհետեւ մարդոց
 մէջ բարձր գնահատուածը՝ զարշելի է Աստուծոյ
 առջեւ: **16** Օրէնքն ու Մարգարէները մինչեւ
 Յովհաննէս էին. այդ ատենէն ետք Աստուծոյ
 թագաւորութիւնը կ’աւետուի, եւ ամէն մէկը

կ'արտոորայ մտնել անոր մէջ: 17 Աւելի դիւրին է՝ որ երկինքն ու երկիրը անցնին, քան Օրէնքէն մէկ նշանագիր իյնայ: 18 Ո՛վ որ կ'արձակէ իր կինը եւ կ'ամուսնանայ ուրիշի մը հետ՝ շնութիւն կ'ընէ, եւ ո՛վ որ կ'ամուսնանայ իր ամուսինէն արձակուած կնոջ մը հետ՝ շնութիւն կ'ընէ»: 19 «Հարուստ մարդ մը կար՝ որ ծիրանի ու բեհեզ կը հագնէր, եւ ամէն օր փառահեղ խրախճանք կը սարքէր»: 20 Ղազարոս անունով աղքատ մըն ալ կար՝ պալարներով ծածկուած, որ պառկած էր անոր դրան քով, 21 ու կը ցանկար կշտանալ հարուստին սեղանէն ինկած փշրանքներէն. նաեւ շուներն ալ կու գային եւ կը լզէին անոր պալարները: 22 Այդ աղքատը մեռաւ, ու հրեշտակները Աբրահամի գոգը տարին զայն: Հարուստն ալ մեռաւ եւ թաղուեցաւ: 23 Մինչ դժոխքը՝ տանջանքի մէջ էր, իր աչքերը բարձրացնելով՝ հեռուէն տեսաւ Աբրահամը, ու Ղազարոսը՝ անոր գոգը հանգիստ նստած: (Hadēs 986) 24 Ուստի գոչեց. “Հայր Աբրահամ, ողորմէ՛ ինձի ու դրկէ՛ Ղազարոսը, որպէսզի ջուրի մէջ թաթխէ իր մատին ծայրը եւ զովացնէ լեզուս, որովհետեւ կը տանջուիմ այս բոցին մէջ”: 25 Աբրահամ ըսաւ. “Որդեակ, յիշէ՛ թէ դուն կեանքիդ ընթացքին ստացար բարիքներդ, նմանապէս Ղազարոս՝ չարիքներ. հիմա ան (հոս) կը մխիթարուի, ու դուն կը տանջուիս: 26 Այս բոլորէն զատ՝ մեր եւ ձեր մէջտեղ հաստատուած մեծ անդունդ մը կայ, որպէսզի ասկէ ձեզի անցնիլ ուզողները չկարենան, ո՛չ ալ ատկէ մեզի գալ ուզողները՝ անցնին”: 27

Ան ալ ըսաւ. “Ուրեմն կը խնդրեմ քեզմէ, հայր, որ դրկես զայն հօրս տունը, 28 քանի որ հինգ եղբայր ունիմ. որպէսզի վկայէ անոնց, որ անոնք ալ չգան այս տանջանքի տեղը”: 29 Աբրահամ ըսաւ անոր. “Անոնք ունին Մովսէսն ու մարգարէները, թող անոնց մտիկ ընեն”: 30 Ան ալ ըսաւ. “Ո՛չ, հայր Աբրահամ. հապա եթէ մեռելներէն մէկը երթայ անոնց՝ պիտի ապաշխարեն”: 31 Իսկ ան ըսաւ անոր. “Եթէ մտիկ չեն ըներ Մովսէսի եւ մարգարէներուն, պիտի չհամոզուին՝ նոյնիսկ եթէ մէկը մեռելներէն յարութիւն առնէ”»:

17 Եւ ըսաւ իր աշակերտներուն. «Անկարելի է որ գայթակղութիւններ չգան. բայց վայ անոր, որուն միջոցով կու գան: 2 Աւելի օգտակար պիտի ըլլար անոր, որ իշու ջաղացքի քար մը կախուէր իր վիզէն ու ծովը ձգուէր, քան թէ գայթակղեցներ այս պատիկներէն մէկը: 3 Ուշադիր եղէք դուք ձեզի: Եթէ եղբայրդ մեղանչէ քեզի դէմ՝ յանդիմանէ զայն. ու եթէ ապաշխարէ՝ ներէ անոր: 4 Եթէ օրը եօթն անգամ մեղանչէ քեզի դէմ, եւ օրը եօթն անգամ վերադառնայ քեզի ու ըսէ՝ “կ’ապաշխարեմ”, ներէ անոր»: 5 Առաքեալները ըսին Տէրոջ. «Աւելցնու մեր հաւատքը»: 6 Տէրը ըսաւ. «Եթէ մանանեխի հատիկի չափ հաւատք ունենայիք, կրնայիք ըսել այս թթենիին. “Արմատախիլ եղիր եւ տնկուէ ծովուն մէջ”. ան ալ պիտի հնազանդէր ձեզի»: 7 «Բայց ձեզմէ ո՞վ, ունենալով երկրագործ կամ հովիւ ծառայ մը, երբ ան տուն մտնէ արտէն՝ իսկոյն կ’ըսէ անոր. “Գնա՛, սեղան նստէ”: 8

3 Զապա չ'ըսեր անոր. “Պատրաստէ իմ ընթրիքս,
 ու գօտիդ կապած՝ սպասարկէ ինծի, մինչեւ որ
 ես ուտեմ եւ խմեմ. յետոյ դուն ալ կեր ու խմէ”։ 9
 Միթէ շնորհապարտ կ'ըլլայ այդ ծառային՝ իրեն
 հրամայուած բաները ընելուն համար. չեմ կարծեր։
 10 Նոյնպէս դուք, երբ ընէք ձեզի հրամայուած
 բոլոր բաները՝ ըսէք. “Մենք անպէտ ծառաներ ենք.
 ըրինք ինչ որ պարտական էինք ընել”»։ 11 Երբ ինք
 Երուսաղէմ կ'երթար՝ Սամարիայի եւ Գալիլեայի
 մէջտեղէն անցաւ։ 12 Ու երբ գիւղ մը պիտի
 մտնէր՝ տասը բորոտ մարդիկ հանդիպեցան
 անոր։ Անոնք հեռուն կայնեցան, 13 իրենց ձայները
 բարձրացուցին եւ ըսին. «Յիսուս վարդապետ,
 ողորմէ՛ մեզի»։ 14 Տեսնելով՝ ըսաւ անոնց. «Գացէ՛ք,
 ցոյց տուէ՛ք դուք ձեզ քահանաներուն»։ Երբ
 կ'երթային՝ մաքրուեցան։ 15 Անոնցմէ մէկը,
 երբ տեսաւ թէ բժշկուեցաւ, վերադարձաւ եւ
 բարձրաձայն Աստուած կը փառաբանէր, 16 ու
 երեսի վրայ անոր ոտքը իյնալով՝ շնորհակալ
 կ'ըլլար անկէ. եւ ինք Սամարացի էր։ 17 Յիսուս
 ըսաւ. «Միթէ տանս ալ չմաքրուեցա՞ն. իսկ ղուր են
 միւս ինը։ 18 Այս օտարազգիէն զատ չգտնուեցա՞ն
 ուրիշներ՝ որ վերադառնալով փառաբանէին
 Աստուած»։ 19 Եւ ըսաւ անոր. «Կանգնէ ու գնա՛.
 հաւատքդ բժշկեց քեզ»։ 20 Երբ Փարիսեցիները
 հարցուցին իրեն. «Աստուծոյ թագաւորութիւնը
 երբ պիտի գայ», պատասխանեց անոնց.
 «Աստուծոյ թագաւորութիւնը չի գար դուրսէն
 երեւցած բաներով։ 21 Եւ պիտի չըսեն. “Ահա՛

հոս է”, կամ. “Ահա՛ հոն”. որովհետեւ ահա՛
 Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսն է»: 22
 Աշակերտներուն ալ ըսաւ. «Օրէն պիտի գան,
 երբ դուք պիտի ցանկաք տեսնել մարդու Որդիին
 օրերէն մէկը, բայց պիտի չտեսնէք: 23 Ու եթէ
 ըսեն ձեզի. “Ահա՛ հոս է”, կամ. “Ահա՛ հոն”, մի՛
 երթաք եւ հետամուտ մի՛ ըլլաք: 24 Որովհետեւ
 ինչպէս փայլակը՝ երկինքին տակ մէկ ծայրէն
 փայլատակելով՝ կը լուսաւորէ մինչեւ երկինքին
 տակ միւս ծայրը, նոյնպէս պիտի ըլլայ մարդու
 Որդին՝ իր գալուստին օրը: 25 Սակայն պէտք է որ
 ինք նախ շատ չարչարանքներ կրէ ու մերժուի այս
 սերունդէն: 26 Ինչպէս պատահեցաւ Նոյի օրերուն,
 այնպէս պիտի ըլլայ մարդու Որդիին օրերուն
 ալ: 27 Կ’ուտէին, կը խմէին, կ’ամուսնանային,
 ամուսնութեան կու տային, մինչեւ այն օրը՝
 երբ Նոյ մտաւ տապանը, ու ջրհեղեղը եկաւ
 եւ կորսնցուց բոլորը: 28 Նմանապէս՝ ինչպէս
 Ղովտի օրերուն ալ պատահեցաւ՝ կ’ուտէին, կը
 խմէին, կը գնէին, կը ծախէին, կը տնկէին, կը
 կառուցանէին: 29 Բայց այն օրը՝ երբ Ղովտ դուրս
 ելաւ Սոդոմէն, երկինքէն կրակ ու ծծումբ տեղաց
 եւ կորսնցուց բոլորը: 30 Նոյնպէս պիտի ըլլայ այն
 օրը՝ երբ մարդու Որդին յայտնուի: 31 Այդ օրը, ան
 որ տանիքին վրայ է եւ իր կարասիները՝ տան
 մէջ, թող չիջնէ՝ զանոնք առնելու. նմանապէս ան
 որ արտին մէջ է՝ թող չվերադառնայ: 32 Յիշեցէք
 Ղովտի կինը: 33 Ո՛վ որ ջանայ փրկել իր անձը՝
 պիտի կորսնցնէ զայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր

անձը՝ պիտի ապրեցնէ զայն: **34** Կը յայտարարեմ ձեզի. «Այդ գիշերը եթէ երկու անձեր մէկ մահիճի մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը մնայ. **35** եթէ երկու կիներ միասին աղան, մէկը պիտի առնուի եւ միւսը մնայ. եթէ երկու մարդիկ արտի մը մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը մնայ»»: **36** Անոնք պատասխանեցին անոր. «Տէր, ո՛ր պիտի ըլլայ այս բանը»: **37** Ան ալ ըսաւ անոնց. «Ո՛ր մարմին կայ, հոն պիտի հաւաքուին արծիւները»:

18 Առակ մըն ալ ըսաւ անոնց, որ գիտնան թէ պէտք է ամէն ատեն աղօթել՝ առանց ձանձրանալու: **2** Ըսաւ. «Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ Աստուծոյ չէր վախնար ու մարդ չէր յարգեր: **3** Նոյն քաղաքին մէջ այրի մըն ալ կար, որ կու գար անոր եւ կ'ըսէր. «Պաշտպանէ իմ իրաւունքս՝ ոսոխիս դէմ»: **4** Ան ժամանակ մը չէր ուզեր անոր մտիկ ընել. բայց յետոյ ըսաւ ինքնիրեն. «Թէպէտ Աստուծոյ չեմ վախնար ու մարդ չեմ յարգեր, **5** գոնէ պաշտպանեմ այս այրիին իրաւունքը՝ զիս անհանգստացնելուն համար, որպէսզի չգայ ամէն ատեն թախանձէ ինծի»»: **6** Եւ Տէրը ըսաւ. «Լսեցէք ինչ կ'ըսէ անիրաւ դատաւորը: **7** Հապա Աստուած պիտի չպաշտպանէ իր ընտրեալներուն իրաւունքը, որոնք կը գոչեն իրեն ցերեկ ու գիշեր, թէեւ համբերատար ըլլայ անոնց հանդէպ: **8** Կը յայտարարեմ ձեզի թէ շուտով պիտի պաշտպանէ անոնց իրաւունքը. բայց երբ մարդու Որդին գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ երկրի վրայ»:

9 Սա՛ առաւկն ալ ըսաւ ոմանց, որոնք իրենք իրենց վրայ կը վստահէին թէ արդար են, եւ կ'անարգէին ուրիշները. **10** «Երկու մարդ տաճարը բարձրացաւ աղօթելու, մէկը՝ Փարիսեցի, ու միւսը՝ մաքսաւոր: **11** Փարիսեցին կայնած էր եւ սա՛պէս կ'աղօթէր ինքնիրեն. “Ո՛վ Աստուած, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց պէս չեմ, յափշտակող, անիրաւ, շնացող, կամ ալ այս մաքսաւորին պէս. **12** հապա շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ, եւ ամբողջ եկամուտիս տասանորդը կու տամ”: **13** Իսկ մաքսաւորը հեռուն կայնած էր, ու չէր ուզեր աչքն ալ բարձրացնել երկինք, հապա՝ ծեծելով իր կուրծքը՝ կ'ըսէր. “Աստուած, ներէ՛ ինծի՝ մեղաւորիս”: **14** Կը յայտարարեմ ձեզի թէ ասիկա այն միւսէն աւելի արդարացած իջաւ իր տունը. որովհետեւ ինքն էր կը բարձրացնէ ինքզինք՝ պիտի խոնարհի, իսկ ինքն էր կը խոնարհեցնէ ինքզինք՝ պիտի բարձրանայ»: **15** Երախաներ ալ բերին իրեն՝ որպէսզի դաչի անոնց: Աշակերտները տեսնելով՝ կը յանդիմանէին զանոնք: **16** Բայց Յիսուս իրեն կանչելով զանոնք՝ ըսաւ. «Թո՛յլ տուէք այդ մանուկներուն՝ որ ինծի՛ գան, եւ մի՛ արգիլէք զանոնք, որովհետեւ Աստուծոյ թագաւորութիւնը այդպիսիներունն է: **17** Եւ մարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ Աստուծոյ թագաւորութիւնը չընդունի մանուկի մը պէս, բնաւ պիտի չմտնէ անոր մէջ”»: **18** Պետ մը հարցուց անոր. «Բարի՛ վարդապետ, ինչ ընեմ՝ որ ժառանգեմ յաւիտենական կեանքը»: (aiōnios g166) **19**

Յիսուս ըսաւ անոր. «Ինչո՞ւ բարի կը կոչես զիս. Աստուծո՞ւմէ զատ բարի չկայ: 20 Պատուիրանները գիտես. շնութիւն մի՞ ըներ, սպանութիւն մի՞ ըներ, գողութիւն մի՞ ըներ, սուտ վկայութիւն մի՞ տար, պատուէ՞ հայրդ ու մայրդ»: 21 Ան ալ ըսաւ. «Պահած եմ այդ բոլորը՝ պատանութենէս ի վեր»: 22 Լսելով ասիկա՝ Յիսուս ըսաւ անոր. «Տակաւին մէկ բան կը պակսի քեզի. ծախէ՛ ամբողջ ունեցածդ եւ բաշխէ՛ աղքատներուն, ու գանձ պիտի ունենաս երկինքը. ապա հետեւէ՛ ինծի»: 23 Ան ալ՝ երբ լսեց այս խօսքը՝ շատ տրտմեցաւ, որովհետեւ շատ հարուստ էր: 24 Երբ Յիսուս տեսաւ զայն՝ շատ տրտմած, ըսաւ. «Ո՛րչափ դժուար է մտնել Աստուծոյ թագաւորութիւնը անոնց՝ որ դրամ ունին: 25 Որովհետեւ աւելի դիւրին է՝ որ ուղտը անցնի ասեղին ծակէն, քան թէ հարուստը մտնէ Աստուծոյ թագաւորութիւնը»: 26 Անոնք որ լսեցին՝ ըսին. «Ա՛լ ո՞վ կրնայ փրկուիլ»: 27 Ինք ըսաւ. «Մարդոց բով անկարելի եղած բաները՝ Աստուծոյ բով կարելի են»: 28 Պետրոս ըսաւ. «Ահա՛ մենք թողուցինք ամեն ինչ ու հետեւեցանք քեզի»: 29 Ան ալ ըսաւ անոնց. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Չկայ մէկը՝ որ թողուցած ըլլայ տուն, ծնողներ, եղբայրներ, կին, կամ զաւակներ՝ Աստուծոյ թագաւորութեան համար, 30 եւ չստանայ բազմապատիկը այս ատեն, ու յաւիտենական կեանքը՝ գալիք աշխարհին մէջ”»: (aiōn g165, aiōnios g166) 31 Տասներկուքը իր բով առնելով՝ ըսաւ անոնց. «Ահա՛ մենք Երուսաղէմ կը բարձրանանք, ու մարգարէներուն միջոցով

մարդու Որդիին մասին բոլոր գրուածները պիտի կատարուին: **32** Որովհետեւ հեթանոսներուն պիտի մատնուի եւ պիտի ծաղրուի, պիտի նախատուի ու պիտի թքնեն անոր վրայ, **33** պիտի խարազանեն եւ սպաննեն զայն. ու յարութիւն պիտի առնէ երրորդ օրը»: **34** Բայց անոնք այս բաներէն ոչ մէկը հասկցան. այս խօսքը ծածկուած էր անոնցմէ, եւ չէին հասկնար ըսած բաները: **35** Երբ ինք Երիթովի կը մօտենար, կոյր մը նստած էր ճամբային եզերքը՝ մուրալու: **36** Երբ լսեց բազմութեան անցնիլը, հարցափորձեց թէ ինչ էր այդ: **37** Լուր տուին իրեն թէ Յիսուս Նազովրեցին կ'անցնի: **38** Ան ալ գոչեց. «Յիսուս, Դաւիթի Որդի, ողորմէ՛ ինծի»: **39** Անոնք որ առջեւէն կ'երթային՝ կը յանդիմանէին զայն, որպէսզի լռէ: Բայց ան ալ աւելի կ'աղաղակէր. «Դաւիթի Որդի, ողորմէ՛ ինծի»: **40** Յիսուս կանգ առնելով՝ հրամայեց որ իրեն բերեն զայն: Երբ ան մօտեցաւ, հարցուց անոր. **41** «Ինչ կ'ուզես՝ որ ընեմ քեզի»: Ան ալ ըսաւ. «Տէր, թող աչքերս բացուին»: **42** Յիսուս ըսաւ անոր. «Թող բացուին. հաւատքդ բուժեց քեզ»: **43** Անմիջապէս իր աչքերը բացուեցան, եւ կը հետեւէր անոր՝ փառաբանելով Աստուած: Ամբողջ ժողովուրդն ալ՝ երբ տեսաւ՝ գովաբանեց Աստուած:

19 Երիթով մտնելով՝ քաղաքին մէջէն կ'անցնէր, **2** երբ ահա հարուստ մարդ մը՝ Չաբէոս կոչուած, որ մաքսապետ էր, **3** կը ջանար տեսնել թէ ով է Յիսուսը. բայց բազմութեան պատճառով

չէր կրնար, որովհետեւ կարճահասակ էր: 4 Ուստի յառաջ վազեց եւ ժանտաթզենիի մը վրայ ելաւ՝ որպէսզի տեսնէ զայն, քանի որ անկէ պիտի անցնէր: 5 Երբ Յիսուս այդ տեղը եկաւ, վեր նայելով՝ տեսաւ զայն ու ըսաւ անոր. «Չաքէ՛րս, աճապարէ՛, իջի՛ր ատկէ. որովհետեւ այսօր տունդ պէտք է մնամ»: 6 Ան ալ աճապարելով իջաւ, եւ ուրախութեամբ ընդունեց զայն: 7 Երբ բոլորն ալ տեսան, կը տրտնջէին ու կ'ըսէին. «Մեղաւոր մարդու քով գնաց՝ իջեւանելու»: 8 Իսկ Չաքէոս կայնեցաւ եւ ըսաւ Տէրոջ. «Տէ՛ր, ահա՛ ինչքիս կէսը կու տամ աղքատներուն. ու եթէ զրպարտութեամբ ոեւէ մէկը զրկած եմ, քառապատիկ կը հատուցանեմ անոր»: 9 Յիսուս ըսաւ անոր. «Այսօր փրկութիւն եղաւ այս տան, քանի որ ինք ալ Աբրահամի որդի է: 10 Արդարեւ մարդու Որդին եկաւ՝ որպէսզի փնտռէ կորսուածը եւ փրկէ»: 11 Երբ անոնք կը լսէին այս բաները՝ առակ մըն ալ ըսաւ, քանի որ ինք Երուսաղէմի կը մօտենար եւ անոնք կը կարծէին թէ Աստուծոյ թագաւորութիւնը անմիջապէս պիտի երեւնար: 12 Ուրեմն ըսաւ. «Ազնուական մարդ մը գնաց հեռաւոր երկիր մը՝ իրեն թագաւորութիւն ստանալու եւ վերադառնալու: 13 Իր տասը ծառաները կանչելով՝ տասը մնաս տուաւ անոնց, ու ըսաւ անոնց. “Շահարկեցէ՛ք՝ մինչեւ որ գամ”: 14 Անոր քաղաքացիները կ'ատէին զայն, եւ պատուիրակութիւն մը դրկեցին անոր ետեւէն՝ ըսելով. “Չենք ուզեր որ ասիկա թագաւորէ

մեր վրայ”: 15 Բայց երբ ան վերադարձաւ՝
 թագաւորութիւնը ստանալով, իրեն կանչեց այն
 ծառաները՝ որոնց դրամ տուեր էր, որպէսզի
 գիտնայ թէ ով ինչպէս շահագործած էր: 16
 Առաջինը եկաւ եւ ըսաւ. “Տէր, քու մնասդ՝ տասը
 մնաս վաստկեցաւ”: 17 Ան ալ ըսաւ անոր. “Ապրիս,
 բարի ծառայ. որովհետեւ ամենափոքր բանին
 մէջ հաւատարիմ եղար, տանը քաղաքի վրայ
 իշխանութիւն ունեցիր”: 18 Երկրորդը եկաւ ու
 ըսաւ. “Տէր, քու մնասդ՝ հինգ մնաս բերաւ”: 19 Եւ
 ըսաւ անոր. “Դուն ալ հինգ քաղաքի վրայ եղիր”: 20
 Ուրիշ մը եկաւ ու ըսաւ. “Տէր, ահա քու մնասդ՝ որ
 կը պահէի թաշկինակի մը մէջ ծրարած, 21 քանի
 որ կը վախնայի քեզմէ. որովհետեւ դուն խիստ
 մարդ մըն ես, կը վերցնես չորած բանդ, եւ կը հնձես
 չսերմանածդ”: 22 Ան ալ ըսաւ անոր. “Բերանովդ
 պիտի դատեմ քեզ, չար ծառայ: Գիտէիր թէ ես
 խիստ մարդ մըն եմ, կը վերցնեմ չորած բանս ու
 կը հնձեմ չսերմանածս. 23 ուրեմն ինչո՞ւ չտուիր
 իմ դրամս սեղանաւորներուն, որպէսզի եկած
 ատենս՝ տոկոսով պահանջէի զայն”: 24 Քովը
 կայնողներուն ըսաւ. “Ամէք ատկէ մնասը, եւ
 տուէք անոր՝ որ տասը մնաս ունի. 25 (Ըսին իրեն.
 “Տէր, ան տանը մնաս ունի”.) 26 որովհետեւ կը
 յայտարարեմ ձեզի թէ ամէն ունեցողի պիտի
 տրուի, ու չունեցողին՝ ունեցածն ալ պիտի առնուի
 իրմէ: 27 Բայց այդ թշնամիներս, որոնք չէին
 ուզեր որ իրենց վրայ թագաւորեմ, բերէք հոս եւ
 մեռցուցէք իմ առջեւս”»: 28 Այս բաները խօսելէն

ետք, յառաջ գնաց՝ որ բարձրանայ Երուսաղէմ:
 29 Երբ մօտեցաւ Բեթփագէի ու Բեթանիայի,
 այն լերան մօտ՝ որ Զիթենիներու լեռ կը կոչուի,
 իր աշակերտներէն երկուքը դրկեց 30 եւ ըսաւ.
 «Գացէք մեր դիմացի գիւղը. երբ մտնէք անոր
 մէջ՝ պիտի գտնէք կապուած աւանակ մը, որուն
 վրայ բնակ մարդ նստած չէ. արձակեցէք զայն
 ու բերէք: 31 Եթէ մէկը հարցնէ ձեզի. «Ինչո՞ւ
 կ'արձակէք», սա ըսէք անոր. «Տէրոջ պետք է»»:
 32 Ղրկուածները գացին, եւ գտան ինչպէս ըսած
 էր իրենց: 33 Մինչ աւանակը կ'արձակէին, անոր
 տէրերը ըսին անոնց. «Ինչո՞ւ կ'արձակէք այդ
 աւանակը»: 34 Անոնք ալ ըսին. «Տէրոջ պետք
 է»: 35 Յիսուսի բերին զայն, եւ աւանակին
 վրայ ձգելով իրենց հանդերձները՝ հեծցուցին
 Յիսուսը: 36 Մինչ կ'երթար, մարդիկ իրենց
 հանդերձները կը փռէին ճամբային վրայ: 37 Երբ
 ալ մօտեցաւ ու Զիթենիներու լերան զառիվայրէն
 կ'իջնէր, աշակերտներուն ամբողջ բազմութիւնը
 սկսաւ ուրախութեամբ բարձրաձայն Աստուած
 գովաբանել՝ այն բոլոր հրաշքներուն համար,
 որ տեսեր էին: 38 Եւ կ'ըսէին. «Օրհնեալ է այդ
 թագաւորը, որ կու գայ Տէրոջ անունով. երկինքի
 մէջ խաղաղութիւն, ու փառք՝ ամենաբարձր
 վայրերուն մէջ»: 39 Փարիսեցիներէն ոմանք
 բազմութեան մէջէն ըսին անոր. «Վարդապետ,
 յանդիմանէ քու աշակերտներդ»: 40 Ան ալ
 պատասխանեց անոնց. «Կը յայտարարեմ ձեզի.
 «Եթէ ատոնք լռեն՝ քարերը պիտի աղաղակեն»»:

41 Երբ մօտեցաւ, քաղաքը տեսնելով՝ լացաւ անոր վրայ եւ ըսաւ. 42 «Գո՛նէ այս օրուանդ մէջ գիտնայիր քու խաղաղութիւնդ. բայց հիմա ծածկուեցաւ աչքերէդ: 43 Որովհետեւ օրերը պիտի գան քու վրադ, երբ թշնամիներդ պատնէշ պիտի շինեն շուրջդ, պիտի պաշարեն քեզ, ամեն կողմէ պիտի սեղմեն քեզ, 44 եւ հիմնայատակ պիտի ընեն քեզ ու մէջդ եղած զաւակներդ. եւ ամենեւին քար մը քարի վրայ պիտի չթողուն մէջդ, քանի որ չգիտցար այցելութեանդ ատենը»: 45 Մտնելով տաճարը՝ սկսաւ դուրս հանել անոր մէջ ծախողներն ու գնողները, 46 եւ ըսաւ անոնց. «Գրուած է. “Իմ տունս աղօթքի տուն է”, բայց դուք աւագակներու քարայր ըրիք զայն»: 47 Ամեն օր կը սորվեցնէր տաճարին մէջ: Իսկ քահանայապետները, դպիրներն ու ժողովուրդին գլխաւորները կը փնտռէին թէ ինչպէս կորսնցնեն զայն. 48 բայց չէին կրնար գտնել թէ ինչ ընեն, որովհետեւ ամբողջ ժողովուրդը շատ ուշադրութեամբ մտիկ կ'ընէր անոր:

20 Այդ օրերէն մեկը, երբ տաճարին մէջ կը սորվեցնէր ժողովուրդին եւ կ'աւետարանէր, քահանայապետներն ու դպիրները վրայ հասան՝ երէցներուն հետ, 2 եւ խօսեցան անոր՝ ըսելով. «Ըսէ՛ մեզի, ինչ իշխանութեամբ կ'ընես այդ բաները, կամ ո՞վ է այդ իշխանութիւնը քեզի տուողը»: 3 Ան ալ պատասխանեց անոնց. «Ես ալ ձեզի՛ հարցնեմ բան մը, եւ ըսէ՛ք ինծի. 4 “Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէն էր՝ թէ

մարդոցմէ»։ 5 Անոնք իրենց մէջ մտածեցին ու ըսին. 6 «Եթէ պատասխանենք. “Երկինքէն”, պիտի ըսէ. “Յապա ինչո՞ւ չհաւատացիք անոր”։ Իսկ եթէ պատասխանենք. “Մարդոցմէ”, ամբողջ ժողովուրդը պիտի քարկոծէ մեզ, որովհետեւ հաստատ համոզուած են թէ Յովհաննէս մարգարէ էր»։ 7 Ուստի պատասխանեցին թէ չեն գիտեր ուրկէ՛ էր։ 8 Յիսուս ըսաւ անոնց. «Ես ալ չեմ ըսեր ձեզի թէ ինչ իշխանութեամբ կ’ընեմ այդ բաները»։ 9 Եւ սկսաւ սա՛ առակը ըսել ժողովուրդին. «Մարդ մը այգի տնկեց ու մշակներու յանձնեց զայն, եւ ճամբորդեց՝ երկար ժամանակի համար։ 10 Ատենին՝ ծառայ մը դրկեց մշակներուն, որպէսզի այգիին պտուղէն տան անոր. իսկ մշակները ծեծեցին զայն ու պարապ ճամբեցին։ 11 Ուրիշ ծառայ մըն ալ դրկեց. անոնք ծեծեցին նաեւ զայն, անպատուեցին եւ պարապ ճամբեցին։ 12 Երրորդ մը եւս դրկեց. անոնք վիրաւորեցին զայն ալ, ու դուրս հանեցին։ 13 Ուստի այգիին տէրը ըսաւ. “Ի՞նչ ընեմ. դրկեմ սիրելի որդիս, թերեւս պատկառին՝ տեսնելով զայն”։ 14 Բայց մշակները՝ երբ տեսան զայն, մտածեցին իրարու հետ՝ ըսելով. “Ա՛յս է ժառանգորդը. եկե՛ք սպաննենք զայն, որպէսզի ժառանգութիւնը մեզի մնայ”։ 15 Եւ այգիէն դուրս հանեցին զայն ու սպաննեցին։ Ուրեմն այգիին տէրը ինչ պիտի ընէ անոնց. 16 պիտի գայ ու կորսնցնէ այդ մշակները, եւ այգին պիտի տայ ուրիշներու»։ 17 Երբ ասիկա լսեցին՝ ըսին. «Ամենեւին»։ Ինք ալ

նայեցաւ անոնց ու ըսաւ. «Հապա ինչ է սա՛ գրուածը. “Այն քարը՝ որ կառուցանողները մերժեցին, անիկա՛ եղաւ անկիւնաքարը”»: 18 Ո՛վ որ իյնայ այդ քարին վրայ՝ պիտի կոտորտի, եւ որո՛ւն վրայ որ իյնայ՝ պիտի փսորէ զայն»: 19 Քահանայապետներն ու դպիրները կը ջանային նոյն ժամուն ձեռք բարձրացնել անոր վրայ, բայց կը վախնային ժողովուրդէն. քանի որ ըմբռնեցին թէ այդ առակը խօսեցաւ իրենց դէմ: 20 Անոր վրայ հսկելով՝ դրկեցին քանի մը լրտեսներ, որոնք կեղծաւորութեամբ արդար կը ձեւացնէին իրենք զիրենք, որպէսզի խօսքով բռնեն զայն՝ տէրութեան ու կառավարիչին իշխանութեան մատնելու համար: 21 Հարցուցին անոր. «Վարդապետ, զիտենք թէ շիտակ կը խօսիս ու կը սորվեցնես, եւ աշառութիւն չես ըներ, հապա ճշմարտութեամբ կը սորվեցնես Աստուծոյ ճամբան: 22 Մեզի արտօնուա՛ծ է կայսրին տուրք տալ՝ թէ ոչ»: 23 Յիսուս՝ նշմարելով անոնց խորամանկութիւնը՝ ըսաւ անոնց. «Ինչո՛ւ կը փորձէք զիս: 24 Յոյց տուէք ինծի դահեկան մը. որո՛ւն պատկերն ու գրութիւնը ունի վրան»: Անոնք պատասխանեցին. «Կայսրին»: 25 Ինք ալ ըսաւ անոնց. «Ուրեմն ինչ որ կայսրինն է՝ տուէք կայսրին, եւ ինչ որ Աստուծոյ է՝ Աստուծոյ»: 26 Այսպէս՝ չկրցան իր խօսքերով բռնել զայն ժողովուրդին առջեւ, ու լռեցին՝ զարմանալով անոր պատասխանին վրայ: 27 Սադուկեցիներէն ոմանք եկան (որոնք կը հակաճառեն թէ յարութիւն չկայ,)

եւ հարցուցին անոր. **28** «Վարդապետ, Մովսէս
 գրեց մեզի. “Եթէ մէկուն եղբայրը մեռնի՝ կին մը
 ունենալով, բայց առանց զաւակի, անոր եղբայրը
 թող առնէ այդ կինը ու զարմ տայ իր եղբօր”: **29**
 Ուրեմն եօթը եղբայրներ կային: Առաջինը կին մը
 առնելով՝ անզաւակ մեռաւ: **30** Երկրորդն ալ առաւ
 այդ կինը եւ ինք ալ անզաւակ մեռաւ: **31** Երրորդն
 ալ առաւ զայն. նոյնպէս եօթն ալ, ու զաւակ
 չծգեցին եւ մեռան: **32** Ամենէն ետք կինն ալ մեռաւ:
33 Ուրեմն յարութեան ատեն՝ անոնցմէ որո՞ն
 կինը պիտի ըլլայ, որովհետեւ եօթն ալ ունեցան
 զայն իբր կին»: **34** Յիսուս պատասխանեց անոնց.
 «Այս աշխարհի որդիները կ’ամուսնանան եւ
 ամուսնութեան կը տրուին: (aiðn g165) **35** Բայց անոնք՝
 որ պիտի արժանանան հասնիլ այն աշխարհին ու
 մեռելներէն յարութեան, ո՛չ պիտի ամուսնանան, ո՛չ
 ալ ամուսնութեան պիտի տրուին, (aiðn g165) **36** քանի
 որ ակնն կրնար մեռնիլ. արդարեւ հրեշտակներուն
 հաւասար են եւ Աստուծոյ որդիներ են, յարութեան
 որդիներ ըլլալով: **37** Բայց մեռելներուն յարութիւն
 առնելը՝ Մովսէս ալ ցոյց տուաւ մորենիին
 պատմութեան մէջ, երբ կը կոչէ Տէրը՝ “Աբրահամի
 Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի
 Աստուածը”: **38** Աստուած մեռելներուն Աստուածը
 չէ, հապա՝ ողջերուն, որովհետեւ անոր համար՝
 բոլորը կ’ապրին»: **39** Դպիրներէն ոմանք ըսին.
 «Վարդապետ, ճիշդ ըսիր»: **40** Եւ ակն չէին յանդգնէր
 բան մը հարցնել անոր: **41** Ըսաւ անոնց. «Ինչպէս
 կ’ըսեն թէ “Քրիստոս Դաւիթի որդին է”: **42**

Դաւիթ ինք Սաղմոսներու գիրքին մէջ կ'ըսէ.
 “Տէրը ըսաւ իմ Տէրոջս. «Բազմէ իմ աջ կողմս, **43**
 մինչեւ որ քու թշնամիներդ պատուանդան դնեն
 ոտքերուդ»”: **44** Ուրեմն Դաւիթ զայն Տէր կը կոչէ.
 հապա ինչպէս իր որդին կ'ըլլայ ան»: **45** Ամբողջ
 ժողովուրդին առջեւ ըսաւ իր աշակերտներուն. **46**
 «Չգուշացէք դպիրներէն, որոնք կ'ուզեն երկայն
 պարեգօտներով շրջիլ, կը սիրեն բարեւները՝
 հրապարակներուն վրայ, առաջին աթոռները՝
 ժողովարաններու մէջ, եւ առաջին բազմոցները՝
 ընթրիքներու մէջ. **47** որոնք այրիներուն տուները
 կը լափեն, ու մարդոց երեւնալու համար՝ աղօթքը
 կ'երկարեն: Անոնք աւելի խստութեամբ պիտի
 դատուին”»:

21 Մինչ կը նայէր, տեսաւ հարուստները՝ որ
 զանձանակը կը ձգէին իրենց ընծաները: **2** Տնանկ
 այրի մըն ալ տեսաւ, որ երկու լումայ ձգեց հոն:
3 Ուստի ըսաւ. «Ճշմարտապէս կը յայտարարեմ
 ձեզի թէ այս աղքատ այրին՝ բոլորէն աւելի
 ձգեց. **4** որովհետեւ անոնք իրենց առատութենէն
 ձգեցին Աստուծոյ ընծաներուն մէջ, բայց ասիկա
 ձգեց իր կարօտութենէն՝ իր ամբողջ ունեցած
 ապրուստը»: **5** Երբ ոմանք կ'ըսէին տաճարին
 մասին թէ “զարդարուած է գեղեցիկ քարերով
 ու նուէրներով”, **6** ըսաւ. «Ասոնք որ կը տեսնէք,
 օրերը պիտի զան, երբ քար քարի վրայ պիտի
 չմնայ. ամենը պիտի քակուի»: **7** Հարցուցին իրեն.
 «Վարդապէտ, երբ պիտի ըլլայ ատիկա, եւ ինչ
 է նշանը՝ թէ այդ բաները պիտի ըլլան»: **8** Ան

ալ ըսաւ. «Չգուշացէք որ չմոլորիք. որովհետեւ
 շատեր պիտի գան իմ անունովս՝ ըսելով. “Ես
 եմ Քրիստոսը, ու ժամանակը մօտեցած է”.
 ուրեմն մի երթաք անոնց ետեւէն: **9** Բայց երբ
 լւեք պատերազմներու եւ խառնակութիւններու
 մասին՝ մի սարսափիք, որովհետեւ պէտք է որ նախ
 այդ բաները ըլլան, բայց վախճանը իսկոյն չէ»: **10**
 Այն ատեն ըսաւ անոնց. «Ազգ ազգի դէմ պիտի ելլէ,
 եւ թագաւորութիւն՝ թագաւորութեան դէմ. **11** տեղ-
 տեղ մեծ երկրաշարժներ պիտի ըլլան, սովեր ու
 ժանտախտներ. նաեւ երկինքէն սոսկալի բաներ
 եւ մեծ նշաններ պիտի ըլլան: **12** Բայց այս բաներէն
 առաջ՝ իրենց ձեռքերը պիտի բարձրացնեն ձեր
 վրայ ու հալածեն ձեզ. ժողովարաններու եւ
 բանտերու պիտի մատնեն, ու թագաւորներու
 եւ կառավարիչներու առջեւ պիտի տարուիք՝
 իմ անունիս համար: **13** Եւ ասիկա վկայութեան
 առիթի պիտի յանգի ձեզի համար: **14** Ուրեմն
 որոշեցէք որ նախապէս չմտածեք՝ թէ ինչպէս
 պիտի պաշտպանեք դուք ձեզ: **15** Որովհետեւ
 ես ձեզի բերան ու իմաստութիւն պիտի տամ,
 որուն պիտի չկարենան ընդդիմախօսել կամ
 դիմադրել ձեր բոլոր հակառակորդները: **16** Պիտի
 մատնուիք ծնողներէ, եղբայրներէ, ազգականներէ
 եւ բարեկամներէ, ու ձեզմէ ոմանք պիտի
 մեռցուին: **17** Բոլորին ատելի պիտի ըլլաք
 իմ անունիս համար. **18** բայց մահ մը պիտի
 չկորսուի ձեր գլուխէն: **19** Ձեր համբերութեամբ
 պիտի տիրանաք ձեր անձերուն»: **20** «Երբ

տեսնէք Երուսաղէմը՝ չորս կողմէն զօրքերով շրջապատուած, այն ատեն գիտցէք թէ մօտ է անոր ակերութիւնը: 21 Այն ատեն Հրեաստանի մէջ եղողները լեռները թող փախչին, եւ անոր մէջ եղողները թող հեռանան, ու անոնք որ արտերն են՝ թող չմտնեն անոր մէջ. 22 որովհետեւ այդ օրերը՝ վրէժխնդրութեան օրեր են, որպէսզի իրագործուին բոլոր գրուածները: 23 Բայց վայ այդ օրերը յի եղողներուն եւ ծիծ տուողներուն, որովհետեւ մեծ հարկադրանք պիտի ըլլայ երկրի վրայ, ու բարկութիւն պիտի գայ այս ժողովուրդին վրայ: 24 Եւ սուրի բերանով պիտի իյնան, բոլոր ազգերուն մէջ գերի պիտի տարուին, ու Երուսաղէմը հեթանոսներուն ոտքի կոխան պիտի ըլլայ՝ մինչեւ որ լրանան հեթանոսներուն ժամանակները»: 25 «Եւ արեւին, լուսինին ու աստղերուն վրայ նշաններ պիտի ըլլան, երկրի վրայ՝ ազգերը վարանումով պիտի կսկծին, եւ ծովն ու ալիքները պիտի գոռան: 26 Մարդոց սիրտերը պիտի նուաղին իրենց վախէն եւ երկրագունդին վրայ եկող բաներուն սպասելէն, որովհետեւ երկինքի զօրութիւնները պիտի սարսին: 27 Այն ատեն պիտի տեսնեն մարդու Որդին ամպի մէջ եկած՝ զօրութեամբ ու մեծ փառքով: 28 Երբ այս բաները սկսին ըլլալ, ելէք եւ վերցուցէք ձեր գլուխը, որովհետեւ ձեր ազատագրութիւնը կը մօտենայ»: 29 Առակ մըն ալ ըսաւ անոնց. «Տեսէք թզենին ու բոլոր ծառերը: 30 Երբ արդէն բողբոջին, տեսնելով դուք ձեզմէ կը գիտնաք թէ

արդէն ամառը մօտ է: **31** Նոյնպէս դուք՝ երբ եղած տեսնէք ասոնք, գիտցէ՛ք թէ Աստուծոյ թագաւորութիւնը մօտ է: **32** Եշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. «Այս սերունդը պիտի չանցնի, մինչեւ որ այս բոլոր բաները ըլլան»: **33** Երկինքն ու երկիրը պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին»: **34** «Ուշադիր եղէ՛ք դուք ձեզի, որպէսզի ձեր սիրտերը չծանրանան կերուխումով, արբեցութեամբ եւ այս կեանքին հոգերով, ու այդ օրը անակնկալօրէն չհասնի ձեր վրայ. **35** որովհետեւ վարմի մը պէս պիտի հասնի ամբողջ երկրի բոլոր բնակիչներուն վրայ: **36** Ուրեմն հսկեցէ՛ք եւ ամէն ատեն աղերսեցէ՛ք, որպէսզի արժանանաք զերծ մնալու այս բոլորէն՝ որոնք պիտի ըլլան, ու կայնելու մարդու Որդիին առջեւ»: **37** Յիսուս ցերեկները կը սորվեցնէր տաճարին մէջ. իսկ գիշերները՝ դուրս կ'ելլէր ու կը կենար Զիթենիներու կոչուած լեռը: **38** Ամբողջ ժողովուրդը առտուն կանուխ կ'երթար իրեն՝ տաճարին մէջ լսելու իր խօսքերը:

22 Բաղարջակերքի տօնը՝ որ Չատիկ կը կոչուէր՝ մօտեցաւ, **2** եւ քահանայապետներն ու դպիրները կը փնտռէին թէ ինչպէս մեռցնեն զայն, քանի որ կը վախնային ժողովուրդէն: **3** Սատանան մտաւ Իսկարիոթտացի մականունեալ Յուդայի ներսը, որ տասներկուքէն մէկն էր, **4** եւ ան գնաց բանակցելու քահանայապետներուն ու մեծաւորներուն հետ՝ թէ ինչպէս մատնէ զայն անոնց: **5** Անոնք ուրախացան եւ միաձայնեցան

դրամ տալ անոր: **6** Ինք ալ խոստացաւ, ու
 կը փնտռէր պատեհութիւն մը գայն մատնելու
 անոնց՝ առանց բազմութեան: **7** Բաղարջակերքի
 օրը եկաւ, երբ պէտք էր մորթել զատիկը:
8 Ուստի դրկեց Պետրոսն ու Յովհաննէսը՝
 ըսելով. «Գացէք, պատրաստեցէք մեզի զատիկը՝
 որպէսզի ուտենք»: **9** Անոնք ալ ըսին անոր.
 «Ո՞ր կ'ուզես որ պատրաստենք»: **10** Ըսաւ
 անոնց. «Ահա՛ երբ մտնէք քաղաքը, մարդ մը
 պիտի հանդիպի ձեզի՝ որ ուսին վրայ ունի
 ջուրի սափոր մը. հետեւեցէք անոր մինչեւ այն
 տունը՝ ուր ինք կը մտնէ, **11** եւ ըսէք տանտիրոջ.
 «Վարդապետը կ'ըսէ քեզի. “Ո՞ր է իջեւանը, ուր
 պիտի ուտեմ զատիկը աշակերտներուս հետ”»:
12 Ան ալ պիտի ցուցնէ ձեզի կահաւորուած մեծ
 վերնայարկ մը. հոն պատրաստեցէք»: **13** Գացին,
 գտան ինչպէս ըսաւ իրենց, եւ պատրաստեցին
 զատիկը: **14** Երբ ժամը հասաւ՝ սեղան նստաւ, ու
 տասներկու առաքելները իրեն հետ: **15** Եւ ըսաւ
 անոնց. «Չափազանց ցանկացի որ այս զատիկը
 ուտեմ ձեզի հետ՝ իմ չարչարուելէս առաջ. **16**
 որովհետեւ կը յայտարարեմ ձեզի. “Ա՛յ բնաւ պիտի
 չուտեմ ասկէ, մինչեւ որ իրագործուի Աստուծոյ
 թագաւորութեան մէջ”»: **17** Ու բաժակը առաւ,
 շնորհակալ եղաւ եւ ըսաւ. «Առէք ասիկա ու
 բաժնեցէք ձեր մէջ: **18** Արդարեւ կը յայտարարեմ
 ձեզի. “Բնաւ որթատունկին բերքէն պիտի չխմեմ,
 մինչեւ որ գայ Աստուծոյ թագաւորութիւնը”»:
19 Ապա հաց առաւ, շնորհակալ եղաւ, կտրեց

ու տուաւ անոնց, եւ ըսաւ. «Այս է իմ մարմինս՝
 որ կը տրուի ձեզի համար. ըրէք ասիկա՝ իմ
 յիշատակիս համար»: 20 Նոյնպէս ալ բաժակը
 առաւ ընթրիքէն ետք, եւ ըսաւ. «Այս բաժակը
 նոր ուխտն է՝ իմ արիւնովս, որ կը թափուի ձեզի
 համար»: 21 «Բայց ահա՛ զիս մատնողին ձեռքը
 ինծի հետ՝ այս սեղանին վրայ է: 22 Իրաւ է թէ
 մարդու Որդին կ'երթայ՝ ինչպէս սահմանուած
 է. բայց վայ՛ այն մարդուն՝ որուն միջոցով կը
 մատնուի ան»: 23 Անոնք ալ սկսան հարցնել
 իրարու թէ իրենցմէ ո՞վ էր՝ որ պիտի ընէր այդ
 բանը: 24 Վէճ մըն ալ եղաւ անոնց մէջ, թէ
 իրենցմէ ո՞վ պիտի համարուի մեծագոյնը: 25 Ան
 ալ ըսաւ անոնց. «Յերթանոսներուն թագաւորները
 կը տիրեն իրենց, եւ անոնք որ կ'իշխեն իրենց
 վրայ՝ բարերար կը կոչուին: 26 Բայց դուք այնպէս
 պետք չէ ըլլաք. հապա ան որ ձեր մէջ մեծագոյնն
 է՝ կրտսերին պէս թող ըլլայ, ու հրամայողը՝
 սպասարկուին պէս: 27 Քանի որ ո՞վ է մեծը,
 սեղան նստողը՝ թէ սպասարկուն: Միթէ սեղան
 նստողը չ'է. սակայն ես ձեր մէջ սպասարկուի
 մը պէս եմ: 28 Եւ դուք անոնք էք՝ որ միշտ ինծի
 հետ կը մնայիք փորձութիւններու մէջ. 29 ես ալ
 թագաւորութիւն մը կը կտակեմ ձեզի, ինչպէս
 իմ Հայրս թագաւորութիւն մը կտակեց ինծի. 30
 որպէսզի դուք ուտէք ու խմէք իմ սեղանէս՝ իմ
 թագաւորութեանս մէջ, եւ բազմիք գահերու վրայ՝
 դատելու Իսրայէլի տասներկու տոհմերը»: 31 Տէրը
 ըսաւ. «Սիմոն, Սիմոն, ահա՛ Սատանան շատ ուզեց

խարբալել ձեզ ցորենի պէս: **32** Բայց ես աղերսեցի քեզի համար, որպէսզի հաւատքդ չպակսի. եւ դուն երբ դարձի գաս՝ եղբայրնձրդ ալ ամրացուր»: **33** Իսկ ինք ըսաւ անոր. «Տէր, ես պատրաստ եմ քեզի հետ թէ բանտ երթալու, թէ մեռնելու»: **34** Ան ալ ըսաւ. «Պետրո՛ս, կը յայտարարեմ քեզի. “Այսօր աքաղաղը պիտի չկանչէ, մինչեւ որ դուն երեք անգամ ուրանաս՝ թէ զիս կը ճանչնաս”»: **35** Նաեւ ըսաւ անոնց. «Երբ դրկեցի ձեզ առանց քսակի, պարկի ու կօշիկներու, որեւէ բան պակսեցամ ձեզի»: **36** Անոնք ալ ըսին. «Ո՛չ մէկ բան»: Յետոյ ըսաւ. «Բայց հիմա՝ ան որ քսակ ունի՝ թող առնէ զայն, նմանապէս պարկը. եւ ան որ սուր չունի, թող ծախէ իր հանդերձը ու սուր մը գնէ իրեն: **37** Քանի որ կը յայտարարեմ ձեզի թէ պէտք է որ սա գրուածն ալ կատարուի իմ վրաս. “Անօրէններու հետ սեպուեցաւ”. որովհետեւ աւարտելու վրայ են ինծի վերաբերող բաները»: **38** Անոնք ալ ըսին. «Տէր, ահա՛ հոս երկու սուր կայ»: Ան ալ ըսաւ անոնց. «Կը բաւէ»: **39** Յետոյ դուրս ելլելով՝ իր սովորութեան համաձայն գնաց Ձիթենիներու լեռը. աշակերտներն ալ հետեւեցան իրեն: **40** Երբ հասաւ այդ տեղը՝ ըսաւ անոնց. «Աղօթեցէ՛ք՝ որպէսզի փորձութեան մէջ չմտնէք»: **41** Ապա մեկուսացաւ անոնցմէ՝ քարընկեցի մը չափ, ու ծնրադրելով՝ կ’աղօթէր **42** եւ կ’ըսէր. «Յայր, եթէ փափաքիս՝ հեռացուր այս բաժակը ինձմէ. բայց ոչ թէ իմ կամքս՝ հապա քուկդ թող ըլլայ»: **43** Երկինքէն հրեշտակ մը երեւցաւ իրեն, ու կը

զօրացներ զինք: Ճգնաժամի մէջ ըլլալով՝ աւելի
 ջերմեռանդութեամբ կ'աղօթէր, **44** եւ իր քրտինքը՝
 գետին ինկող արիւնի մեծ կաթիլներու պէս էր:
45 Աղօթքէն կանգնելով՝ եկաւ աշակերտներուն
 քով, ու գտաւ զանոնք՝ տրտմութենէն քնացած:
46 Ըսաւ անոնց. «Ինչո՞ւ կը քնանաք. կանգնեցէք
 եւ աղօթեցէք, որպէսզի չմտնէք փորձութեան
 մէջ»: **47** Երբ դեռ կը խօսէր, ահա՛ բազմութիւն մը
 եկաւ. Յուդա կոչուածն ալ՝ տասներկուքէն մէկը՝
 կ'երթար անոր առջեւէն, ու մօտեցաւ Յիսուսի՝
 որպէսզի համբուրէ զայն: **48** Յիսուս ըսաւ անոր.
 «Յուդա, համբուրելով կը մատնես մարդու Որդին»:
49 Երբ անոր շուրջը եղողները տեսան ինչ որ պիտի
 ըլլար, ըսին անոր. «Տէր, զարնենք սուրով»: **50**
 Եւ անոնցմէ մէկը զարկաւ քահանայապետին
 ծառային, ու իլեց անոր աջ ականջը: **51** Յիսուս
 ըսաւ. «Թոյլատրեցէք մինչեւ այդ տեղը»: Եւ դպաւ
 անոր ականջին ու բժշկեց զայն: **52** Յիսուս ըսաւ
 իրեն եկած քահանայապետներուն, տաճարին
 մեծաւորներուն եւ երէցներուն. «Իբր թէ աւագակի
 դէմ եկաք՝ սուրերով ու բիրերով: **53** Ամէն օր ձեզի
 հետ էի՝ տաճարին մէջ, եւ ձեռք չերկարեցիք իմ
 վրաս. բայց ասիկա է ձեր ժամն ու խաւարին
 իշխանութիւնը»: **54** Բռնելով զայն՝ տարին եւ
 մտցուցին քահանայապետին տունը. Պետրոս ալ
 կը հետեւէր անոր հեռուէն: **55** Երբ կրակ վառեցին
 գաւիթին մէջտեղը ու նստան միասին, Պետրոս ալ
 նստաւ անոնց մէջ: **56** Աղախին մը տեսնելով զայն՝
 որ նստած էր կրակին քով, ակնապիշ նայեցաւ

անոր եւ ըսաւ. «Ասիկան ալ անոր հետ էր»: 57
 Բայց Պետրոս ուրացաւ զայն՝ ըսելով. «Կին, չեմ
 ճանչնար զայն»: 58 Կարճ պահէ մը ետք՝ ուրիշ
 մը տեսաւ զինք եւ ըսաւ. «Դուն ալ անոնցմէ
 ես»: Պետրոս ըսաւ. «Մարդ, ես անոնցմէ չեմ»: 59
 Գրեթէ ժամ մը ետք՝ ուրիշ մըն ալ կը պնդէր ու
 կ'ըսէր. «Ճշմարտապէս ասիկան ալ անոր հետ էր,
 որովհետեւ Գալիլեացի է»: 60 Բայց Պետրոս ըսաւ.
 «Մարդ, չեմ գիտեր ինչ կը խօսիս»: Անմիջապէս,
 մինչ ինք դեռ կը խօսէր, աքաղաղը կանչեց: 61
 Տերը դարձաւ ու նայեցաւ Պետրոսի: Պետրոս ալ
 մտաբերեց Տերոջ խօսքը, որ ըսեր էր իրեն. «Դեռ
 աքաղաղը չկանչած՝ երեք անգամ պիտի ուրանաս
 զիս»: 62 Պետրոս դուրս ելլելով՝ դառնապէս
 լացաւ: 63 Այն մարդիկը՝ որ բռնած էին Յիսուսը, կը
 ծաղրէին զայն ու կը ծեծէին. 64 Ծածկելով անոր
 աչքերը՝ կը զարնէին անոր երեսին եւ կը հարցնէին
 իրեն. «Մարգարէացիր. ո՞վ է ան՝ որ զարկաւ
 քեզի»: 65 Ուրիշ շատ բաներ ալ կ'ըսէին անոր դէմ՝
 հայհոյելով: 66 Երբ առտու եղաւ՝ ժողովուրդին
 երեցներու ժողովը, քահանայապետներն ու
 դպիրները հաւաքուեցան, տարին զայն իրենց
 ատենին առջեւ եւ ըսին. «Եթէ Քրիստոսը դուն
 ես, ըսէ՛ մեզի»: 67 Ըսաւ անոնց. «Եթէ ըսեմ ալ
 ձեզի՝ պիտի չհաւատաք. 68 ու եթէ հարցնեմ ձեզի
 բան մը՝ պիտի չպատասխանեք ինծի, ո՛չ ալ պիտի
 արձակեք զիս: 69 Ասկէ ետք՝ մարդու Որդին պիտի
 բազմի Աստուծոյ գօրութեան աջ կողմը»: 70 Բոլորը
 ըսին. «Ուրեմն դուն Աստուծոյ Որդի՞ն ես»: Ինք

ալ ըսաւ անոնց. «Դ՛հուք կ'ըսէք թէ ես եմ»: 71 Եւ անոնք ըսին. «Մ'ի՛նչ պէտք ունինք վկայութեան, որովհետեւ մենք իսկ լսեցինք անոր բերանէն»:

23 Անոնց ամբողջ բազմութիւնը կանգնեցաւ, տարին զայն Պիղատոսի, 2 եւ սկսան ամբաստանել զինք ու ըսել. «Ասիկա գտանք, որ կը խոտորեցնէր մեր ազգը, կ'արգիլէր կայսրին հարկ տալ, եւ կ'ըսէր իր մասին թէ ինք Քրիստոսն է՝ թագաւորը»: 3 Պիղատոս հարցուց անոր. «Դ՛հըն ես Հրեաներուն թագաւորը»: Ան ալ պատասխանեց անոր. «Դ՛հըն կ'ըսես»: 4 Ուստի Պիղատոս ըսաւ քահանայապետներուն եւ բազմութեան. «Ես ճշմէկ յանցանք կը գտնեմ այս մարդուն վրայ»: 5 Բայց անոնք կը պնդէին ու կ'ըսէին. «Կը գրգռէ ժողովուրդը, եւ կը սորվեցնէ ամբողջ Հրեաստանի մէջ՝ Գալիլեայէն սկսած մինչեւ այստեղ»: 6 Պիղատոս՝ լսելով Գալիլեայի մասին՝ հարցուց թէ այդ մարդը Գալիլեացի է: 7 Երբ գիտցաւ թէ Հերովդէսի իշխանութեան կը պատկանի՝ դրկեց զայն Հերովդէսի, քանի որ ան ալ Երուսաղէմ էր այդ օրերը: 8 Երբ Հերովդէս տեսաւ Յիսուսը՝ չափազանց ուրախացաւ, որովհետեւ շատո՛նց կ'ուզէր տեսնել զայն. քանի որ շատ բաներ լսած էր անոր մասին, ու կը յուսար տեսնել նշան մը՝ կատարուած անով: 9 Շատ խօսքերով հարցաքննեց զայն, բայց ան ոչինչ պատասխանեց անոր: 10 Քահանայապետներն ու դպիրներն ալ կեցած էին, եւ սաստիկ կ'ամբաստանէին զինք: 11 Հերովդէս ալ՝ իր զօրականներուն հետ՝

անարգեց զայն, ու ծաղրելէն ետք՝ հազցուց անոր փառահեղ տարագ մը եւ ետ դրկեց Պիղատոսի:

12 Այդ օրը Պիղատոս ու Յերովդէս բարեկամ եղան իրարու հետ. որովհետեւ նախապէս թշնամութիւն կար իրենց միջեւ:

13 Պիղատոս հաւաքեց քահանայապետները, պետերն ու ժողովուրդը, **14** եւ ըսաւ անոնց. «Այս մարդը բերիք առջեւս՝ ժողովուրդը խոտորեցնողի մը պէս, բայց ես՝ ձեր առջեւ հարցաքննելով՝ ձեր ամբաստանութիւններէն ոչ մէկ յանցանք գտայ այս մարդուն վրայ, **15** ոչ ալ Յերովդէս, որովհետեւ անոր դրկեցի ձեզ. եւ ահա մահուան արժանի ոչինչ ըրած է:

16 Ուրեմն պատժեմ զայն, ու արձակեմ»: **17** (Արդարեւ տօնին ատենը՝ հարկ էր որ մէկը արձակէր անոնց:)

18 Ամբողջ բազմութիւնը միասին աղաղակեց. «Վերցնէր ասիկա, եւ Բարաբբան արձակէ մեզի» **19** (որ բանտը նետուած էր՝ քաղաքին մէջ եղած ապստամբութեան մը ու մարդասպանութեան համար):

20 Իսկ Պիղատոս՝ ուզելով Յիսուսը արձակել՝ դարձեալ խօսեցաւ անոնց: **21** Բայց անոնք կը գոչէին. «Խաչէ, խաչէ զայն»: **22** Ինք երրորդ անգամ ըսաւ անոնց. «Բայց ինչ չարիք ըրած է. ես մահուան արժանի ոչ մէկ պատճառ գտայ անոր վրայ. ուրեմն պատժեմ զայն եւ արձակեմ»:

23 Իսկ անոնք կը պնդէին բարձրաձայն աղաղակներով ու կը պահանջէին որ խաչուի. եւ անոնց ու քահանայապետներուն ձայները յաղթեցին: **24** Ուստի Պիղատոս վճռեց որ անոնց

պահանջածը ըլլայ: **25** Արձակեց անոնց՝ իրենց
 պահանջած մարդը, որ բանտը նետուած էր
 ապստամբութեան ու մարդասպանութեան
 համար, իսկ յանձնեց Յիսուսը անոնց կամքին:
26 Երբ կը տանէին զայն, բռնեցին Սիմոն
 Կիւրենացի կոչուած մէկը՝ որ արտէն կու գար, եւ
 դրին խաչը անոր վրայ, որպէսզի կրէ Յիսուսի
 ետեւէն: **27** Ժողովուրդը կը հետեւէր անոր՝ մեծ
 բազմութեամբ, նաեւ կիներ՝ որոնք կը հեծեծէին
 ու կ'ողբային անոր վրայ: **28** Յիսուս դարձաւ
 անոնց եւ ըսաւ. «Երուսաղէմի աղջիկներ, մի
 լաք իմ վրաս, հապա լացէ՛ք դուք ձեր վրայ ու
 ձեր զաւակներուն վրայ: **29** Որովհետեւ ահա՛
 կու գան օրերը՝ որոնց մէջ պիտի ըսեն. “Երանի՛
 ամուլներուն եւ այն որովայններուն՝ որոնք չծնան,
 ու ծիծերուն՝ որոնք կաթ չտուին”»: **30** Այն ատեն
 պիտի սկսին ըսել լեռներուն. “Ինկէ՛ք մեր վրայ”, ու
 բլուրներուն. “Ծածկեցէ՛ք մեզ”: **31** Որովհետեւ եթէ
 այսպէս կ'ընեն դալար փայտին, հապա ինչ պիտի
 ընեն չորին»: **32** Երկու ուրիշներ ալ՝ չարագործներ՝
 տարին անոր հետ, որպէսզի մեռցուին: **33** Երբ
 հասան Գազաթ կոչուած տեղը, հոն խաչեցին
 զայն եւ այդ չարագործներն ալ, մէկը աջ կողմը ու
 միւսը ձախ կողմը: **34** Յիսուս ըսաւ. «Յայր, ներէ՛
 անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»:
 Յետոյ անոր հանդերձները բաժնելու ատեն՝
 վիճակ ձգեցին: **35** Ժողովուրդը կայնած՝ կը դիտէր.
 պետերն ալ անոնց հետ կը քամահրէին զայն ու
 կ'ըսէին. «Ուրիշները փրկեց, ինքզինքն ալ թող

փրկէ, եթէ ինք է Քրիստոսը՝ Աստուծոյ ընտրեալը»:

36 Չինուորներն ալ կը ծաղրէին զայն. կու գային առջեւը, քացախ կը մատուցանէին անոր, **37** ու կ'ըսէին. «Եթէ դուն ես Յրեաներուն թագաւորը, փրկէ դուն քեզ»: **38** Եւ գրութիւն մը գրուած էր անոր վրայ՝ յունարէն, լատիներէն ու եբրայերէն գիրերով. «Այս է Յրեաներուն թագաւորը»: **39** Այդ կախուած չարագործներէն մէկը կը հայիոյեր անոր ու կ'ըսէր. «Եթէ դուն ես Քրիստոսը, փրկէ դուն քեզ, նաեւ մեզ»: **40** Իսկ միւսը՝ յանդիմանելով զայն՝ ըսաւ. «Դուն չեմ վախնար Աստուծոյ, որովհետեւ նոյն դատապարտութեան մէջ ես: **41** Մենք՝ իսկապէս արդարաբար, քանի որ ահա՛ կը ստանանք մեր ըրածներուն արժանաւոր հատուցումը. բայց ասիկա անտեղի ո՛չ մէկ բան ըրաւ»: **42** Եւ ըսաւ Յիսուսի. «Տէր, յիշէ զիս՝ երբ գաս քու թագաւորութեամբդ»: **43** Յիսուս ալ ըսաւ անոր. «Ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. “Դուն այսօր ինծի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ”»: **44** Գրեթէ վեցերորդ ժամն՝ էր, երբ խաւար եղաւ ամբողջ երկրին վրայ՝ մինչեւ ժամը ինը. արեւը խաւարեցաւ, **45** ու տաճարին վարագոյրը պատռեցաւ մէջտեղէն: **46** Յիսուս բարձրաձայն գոչեց. «Հայր, քո՛ւ ձեռքերուդ մէջ կ'աւանդեմ իմ հոգիս»: Ու երբ ըսաւ ասիկա՝ հոգին տուաւ: **47** Հարիւրապետը՝ տեսնելով պատահածը՝ փառաբանեց Աստուած եւ ըսաւ. «Ի՛րապէս այս մարդը արդար էր»: **48** Այս տեսարանը դիտելու համար հաւաքուած ամբողջ

բազմութիւնը՝ պատահածները տեսնելով՝ կը ծեծէր կուրծքը ու կը վերադառնար: **49** Իր բոլոր ծանօթներն ալ հեռուն կայնած էին, նոյնպէս ալ կիները՝ որ ուղեկցեր էին իրեն Գալիլեայէն, եւ կը տեսնէին այս բաները: **50** Մարդ մը կար՝ Յովսէփ անունով, որ խորհրդական էր, բարի եւ արդար մարդ մը, **51** (ասիկա հաւանութիւն տուած չէր անոնց ծրագիրին ու արարքին,) Հրեաներուն Արիմաթեա քաղաքէն. ինք ալ կը սպասէր Աստուծոյ թագաւորութեան: **52** Ասիկա գնաց Պիղատոսի քով եւ խնդրեց Յիսուսի մարմինը: **53** Ու խաչէն իջեցնելով զայն՝ փաթեց կտաւով եւ դրաւ վիմափոր գերեզմանի մը մէջ, ուր բնաւ մէկը դրուած չէր: **54** Այդ օրը Ուրբաթ էր, ու Շաբաթը պիտի սկսէր: **55** Այն կիները՝ որ անոր հետ եկեր էին Գալիլեայէն՝ հետեւեցան ու տեսան գերեզմանը, եւ թէ ինչպէս հոն դրուեցաւ անոր մարմինը: **56** Ու վերադառնալով՝ բոյրեր եւ օծանելիքներ պատրաստեցին, ու Շաբաթ օրը հանգչեցան՝ պատուիրանին համաձայն:

24 Մէկշաբթի օրը՝ առտուն շատ կանուխ՝ եկան գերեզմանը, ու բերին այն բոյրերը՝ որ պատրաստած էին. ուրիշ ոմանք ալ եկան անոնց հետ: **2** Գտան քարը՝ գերեզմանէն մէկդի գլորուած, **3** ու ներս մտնելով՝ հոն չգտան Տէր Յիսուսի մարմինը: **4** Երբ մեծ տարակոյսի մէջ էին այս մասին, ահա երկու մարդիկ՝ լուսափայլ տարագով՝ հասան անոնց: **5** Բանի վախցած ըլլալով՝ խոնարհեցուցին իրենց երեսները դէպի գետին,

այդ մարդիկը ըսին անոնց. «Ինչո՞ւ ողջը կը փնտռէք մեռելներուն մէջ: 6 Ան հոս չէ, հապա յարութիւն առաւ. յիշեցէ՛ք թէ ինչպէս խօսեցաւ ձեզի, երբ դեռ Գալիլեայի մէջ էր, ըսելով. 7 “Մարդու Որդին պէտք է որ մատնուի մեղաւոր մարդոց ձեռքը, խաչուի, եւ յարութիւն առնէ երրորդ օրը”»: 8 Այն ատեն յիշեցին անոր խօսքերը, 9 ու վերադառնալով գերեզմանէն՝ պատմեցին այս բոլորը տասնմէկին եւ ուրիշներու: 10 Այս կիներն էին՝ Մարիամ Մագդաղենացին, Յովհաննա, Յակոբոսի մայրը՝ Մարիամ, եւ անոնց հետ ուրիշներ ալ, որոնք պատմեցին այս բաները առաքեալներուն: 11 Սակայն ասոնց առջեւ զառանցանք թուեցան անոնց խօսքերը, ու չէին հաւատար անոնց: 12 Բայց Պետրոս կանգնեցաւ եւ վազեց դէպի գերեզմանը. ծռելով՝ տեսաւ թէ լաթերը առանձին դրուած էին, ու գնաց՝ ինքնիրեն զարմանալով այդ պատահածին վրայ: 13 Եւ ահա՛ նոյն օրը աշակերտներէն երկուքը կ’երթային Էմմաւուս անունով գիւղ մը, որ Երուսաղէմէն վաթսուն ասպարէզ հեռու էր: 14 Անոնք կը խօսէին իրարու հետ այս բոլոր պատահարներուն մասին: 15 Մինչ անոնք կը խօսակցէին ու կը վիճաբանէին, Յիսուս ինք ալ՝ մօտենալով՝ կ’երթար անոնց հետ. 16 բայց անոնց աչքերը ծածկուած էին, որպէսզի չճանչնան զինք: 17 Եւ ըսաւ անոնց. «Ինչի՞ մասին կը խօսակցիք՝ իրարու հետ քալելով, ու տրտում ալ էք»: 18 Անոնցմէ մէկը՝ որուն անունը Կղեովպաս էր, պատասխանեց անոր. «Միայն դո՞ւն ես որ՝ Երուսաղէմի մէջ

պանդխտացած ըլլալով՝ չես գիտեր թէ ինչէր
 պատահեցան իոն, այս օրերս»։ 19 Ան ալ ըսաւ
 անոնց. «Ինչ»։ Անոնք ալ ըսին անոր. «Ինչ որ կը
 վերաբերի Նագովրեցի Յիսուսի, որ գործով ու
 խօսքով եղաւ զօրաւոր մարգարէ մը՝ Աստուծոյ
 եւ ամբողջ ժողովուրդին ամօքել։ 20 Ինչպէս
 քահանայապետներն ու մեր պետերը մահուան
 մատնեցին զայն, եւ խաչեցին։ 21 Իսկ մենք կը
 յուսայինք թէ ինքն էր որ պիտի ազատագրէր
 Իսրայէլը։ Բացի այս բոլորէն՝ այս երրորդ օրն է,
 որ այս բաները պատահեցան։ 22 Նոյնիսկ մեր
 մէջէն քանի մը կիներ շշմեցուցին մեզ. անոնք
 առտու կանուխ գացին գերեզմանը, 23 ու չգտնելով
 անոր մարմինը՝ եկան եւ ըսին թէ հրեշտակներու
 տեսիլք ալ տեսան, որոնք ըսեր են թէ “ան ողջ
 է”։ 24 Մեզմէ ոմանք ալ գացին գերեզմանը, ու
 այնպէս գտան՝ ինչպէս ըսին այդ կիները. սակայն
 չտեսան զինք»։ 25 Ան ալ ըսաւ անոնց. «Ո՛վ
 յիմարներ եւ դանդաղամիտներ՝ հաւատալու այն
 բոլոր բաներուն, որ մարգարէները խօսեցան։ 26
 Միթէ Քրիստոս պետք չէր այսպէս չարչարուէր,
 ու մտնէր իր փառքը»։ 27 Եւ սկսելով Մովսէսէն
 ու բոլոր Մարգարէներէն՝, կը մեկնէր անոնց՝ ինչ
 որ գրուած էր իր մասին բոլոր Գիրքերուն մէջ։ 28
 Երբ մօտեցան այն գիւղին՝ ուր կ’երթային, ինք
 կը ձեւացնէր թէ պիտի երթար աւելի հեռաւոր
 տեղ մը։ 29 Բայց ստիպեցին զինք՝ ըսելով.
 «Մնացիր մեր քով, որովհետեւ իրիկունը մօտ
 է եւ օրը՝ մթնցած»։ Ու մտաւ՝ մնալու անոնց

հետ: **30** Երբ սեղան նստաւ՝ անոնց հետ, առաւ
 հացը, օրհնեց, եւ կտրելով տուաւ անոնց: **31** Այն
 ատեն անոնց աչքերը բացուեցան ու ճանչցան
 զինք, իսկ ինք աներեւոյթ եղաւ անոնցմէ: **32**
 Անոնք ալ ըսին իրարու. «Մեր սիրտերը չէին
 բորբոքեր մեր ներսը՝ երբ ինք կը խօսէր ճամբան
 մեզի հետ, ու Գիրքերը կը բացատրէր մեզի»:
33 Եւ կանգնեցան, նոյն ժամուն վերադարձան
 Երուսաղէմ, ու համախմբուած գտան տասնմէկը
 եւ անոնց հետ եղողները, **34** որոնք կ'ըսէին.
 «Իրապէս Տէրը յարութիւն առաւ ու երեւցաւ
 Սիմոնի»: **35** Իրենք ալ պատմեցին ինչ որ
 պատահեցաւ ճամբան, եւ թէ ինչպէս ինքզինք
 ճանչցուց իրենց՝ հացը կտրած ատեն: **36** Մինչ
 անոնք այսպէս կը խօսէին, Յիսուս ինք կայնեցաւ
 անոնց մէջտեղ ու ըսաւ անոնց. «Խաղաղութիւն
 ձեզի»: **37** Բայց անոնք՝ սարսափած եւ վախցած՝
 կը կարծէին թէ ոգի մը կը տեսնեն: **38** Ըսաւ անոնց.
 «Ինչո՞ւ վրդոված էք, եւ ինչո՞ւ մտածումներ կը
 ծագին ձեր սիրտերուն մէջ: **39** Տեսէ՛ք ձեռքերս
 ու ոտքերս, որ ես ինքս եմ. շօշափեցէ՛ք զիս եւ
 տեսէ՛ք, որովհետեւ ոգին մարմին ու ոսկորներ
 չ'ունենար, ինչպէս կը տեսնէք զիս՝ որ ունիմ»:
40 Ասիկա ըսելով՝ ցուցուց անոնց ձեռքերն ու
 ոտքերը: **41** Երբ իրենց ուրախութենէն՝ տակաւին
 չէին հաւատար եւ զարմանքի մէջ էին, ըսաւ
 անոնց. «Կերակուր մը ունի՞ք հոս»: **42** Անոնք
 ալ կտոր մը խորոված ձուկ ու մեղրախորիսխ
 տուին իրեն: **43** Առաւ, կերաւ անոնց առջեւ, **44**

Եւ ըսաւ անոնց. «Ահա՛ւասիկ այն խօսքերը՝ որ ըսի ձեզի, երբ դեռ ձեզի հետ էի. “Պետք է որ իրագործուին բոլոր բաները՝ որոնք գրուած են իմ մասիս Մովսէսի Օրէնքին մէջ, Մարգարէներուն մէջ եւ Սաղմոսներուն մէջ”»: 45 Այն ատեն բացաւ անոնց միտքերը՝ որպէսզի հասկնան Գիրքերը, 46 ու ըսաւ անոնց. «Այս գրուած է, եւ այսպէս պետք էր որ Քրիստոս չարչարուէր, ու մեռելներէն յարուծուին առնէր երրորդ օրը. 47 եւ անոր անունով ապաշխարութիւն ու մեղքերու ներում քարոզուէր բոլոր ազգերուն մէջ՝ սկսելով Երուսաղէմէն: 48 Դ՛հա էք այս բաներուն վկաները: 49 Եւ ահա՛ ես կը դրկեմ ձեր վրայ իմ Զօրս խոստումը. բայց դուք կեցէ՛ք Երուսաղէմ քաղաքին մէջ, մինչեւ որ բարձրեն դրկուած զօրութիւն հագնիք»: 50 Ու դուրս հանեց զանոնք՝ մինչեւ Բեթանիա, եւ իր ձեռքերը վերցնելով՝ օրհնեց զանոնք: 51 Մինչ կ’օրհներ զանոնք՝ զատուեցաւ անոնցմէ, ու վերացաւ երկինք: 52 Անոնք ալ երկրպագելով անոր՝ վերադարձան Երուսաղէմ մեծ ուրախութեամբ: 53 Եւ ամեն ատեն տաճարին մէջ էին, ու կը գովաբանէին եւ կ’օրհնէին Աստուած: Ամեն:

ՅՈՎՅԱՆՆՈՒ

1 Սկիզբէն էր Խօսքը, ու Խօսքը Աստուծոյ քով էր, եւ Խօսքը Աստուած էր. **2** ան սկիզբէն Աստուծոյ քով էր: **3** Ամէն ինչ եղաւ անով. եղածներէն ո՛չ մէկը եղաւ առանց անոր: **4** Կեանքը անով էր, ու կեանքը մարդոց լոյսն էր. **5** լոյսը կը փայլէր խաւարի մէջ, բայց խաւարը չճանչցաւ զայն: **6** Աստուծմէ դրկուած մարդ մը կար՝ որուն անունը Յովհաննէս էր: **7** Ասիկա եկաւ վկայութեան համար՝ որ վկայէ Լոյսին մասին, որպէսզի բոլորը հաւատան անոր միջոցով: **8** Ինք չէր այդ Լոյսը, հապա՛ եկաւ՝ որպէսզի վկայէ Լոյսին մասին: **9** Ճշմարիտ Լոյսը ան էր՝ որ կը լուսաւորէ աշխարհի եկող՝՝ ամէն մարդ: **10** Ինք աշխարհի մէջ էր, եւ աշխարհը եղաւ իրմով, բայց աշխարհը չճանչցաւ զինք: **11** Իրեններուն եկաւ, սակայն իրենները չընդունեցին զինք: **12** Բայց անոնց՝ որ ընդունեցին զինք - անոնց՝ որ կը հաւատան իր անունին - իրաւասութիւն տուաւ Աստուծոյ զաւակներ ըլլալու: **13** Անոնք ո՛չ արիւնէն եւ ո՛չ մարմինի կամքէն ծնան, ո՛չ ալ մարդու կամքէն, հապա՛ Աստուծմէ: **14** Եւ Խօսքը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, (եւ դիտեցինք անոր փառքը՝ Յօրը միածինի փառքին պէս,) շնորհքով ու ճշմարտութեամբ լեցուն: **15** Յովհաննէս վկայեց անոր մասին, եւ աղաղակեց. «Ասիկա՛ է ան՝ որուն մասին կ'ըսէի. "Ան որ իմ ետեւէս կու գայ՝ իմ առջեւս եղաւ, որովհետեւ ինձմէ առաջ էր": **16** Եւ անոր լիութենէն մենք բոլորս ստացանք շնորհք շնորհքի

վրայ: 17 Որովհետեւ Օրենքը տրուեցաւ Մովսէսի միջոցով, բայց շնորհքն ու ճշմարտութիւնը եղան Յիսուս Բրիստոսի միջոցով: 18 Ո՛չ մէկը երբեք տեսած է Աստուած. բայց միածին Որդին՝ որ Զօրը ծոցն է, ինք պատմեց անոր մասին»: 19 Սա է Յովհաննէսի վկայութիւնը, երբ Զրեաները Երուսաղէմէն դրկեցին քահանաներ ու Ղեւտացիներ, որպէսզի հարցնեն անոր. «Դուն ո՞վ ես»: 20 Ան խոստովանեցաւ ու չուրացաւ, հապա յայտարարեց. «Ես Բրիստոսը չեմ»: 21 Զարցուցին անոր. «Հապա ո՞վ. Եղիամն ես»: Ըսաւ. «Չեմ»: Զարցուցին. «Այն մարգարէն ես»: Պատասխանեց. «Ո՛չ»: 22 Ուրեմն ըսին անոր. «Դուն ո՞վ ես. ըսէ՛ մեզի, որպէսզի պատասխան մը տանինք մեզ դրկողներուն. ինչ կ'ըսես քու մասիդ»: 23 Ըսաւ. «Ես անոր ձայնն եմ՝ որ կը գոչէ անապատին մէջ. “Շտկեցէ՛ք Տէրոջ ճամբան”, ինչպէս Եսայի մարգարէն ըսաւ»: 24 Այդ դրկուածները Փարիսեցիներէն էին, 25 ու հարցուցին իրեն. «Հապա ինչո՞ւ կը մկրտես, եթէ դուն ոչ Բրիստոսն ես, ոչ Եղիան, ոչ ալ մարգարէն»: 26 Յովհաննէս պատասխանեց անոնց. «Ես ջուրով կը մկրտեմ, բայց մէկը կայ ձեր մէջ՝ որ դուք չէք ճանչնար. 27 ինք է իմ ետեւէս եկողը՝ որ իմ առջեւ եղաւ, որուն կօշիկին կապը քակելու արժանի չեմ»: 28 Այս բաները պատահեցան Բեթաբարայի մէջ՝ Յորդանանի միւս կողմը, ուր Յովհաննէս կը կենար ու կը մկրտէր: 29 Զետեւեալ օրը Յովհաննէս տեսաւ Յիսուսը՝ որ իրեն կու

գար, եւ ըսաւ. «Ահա Աստուծոյ Գառը՝ որ կը քաւէ աշխարհի մեղքը: **30** Ասիկա է ան՝ որուն մասին կ'ըսէի. "Իմ ետեւէս մարդ մը կու գայ՝ որ իմ առջեւ եղաւ, որովհետեւ ինձմէ առաջ էր": **31** Ես չէի ճանչնար զայն. բայց եկայ ջուրով մկրտելու, որպէսզի ան յայտնուի Իսրայէլի»: **32** Ու Յովհաննէս վկայելով ըսաւ. «Տեսայ Յոգին, որ աղաւնիի պէս կ'իջնէր երկինքէն եւ կը մնար անոր վրայ: **33** Ես չէի ճանչնար զայն, բայց ան որ դրկեց զիս ջուրով մկրտելու, ինք ըսաւ ինծի. "Որուն վրայ որ տեսնես թէ Յոգին կ'իջնէ ու կը մնայ, անիկա է՝ որ Սուրբ Յոգիով կը մկրտէ": **34** Ես ալ տեսայ, եւ վկայեցի թէ այս է Աստուծոյ Որդին»: **35** Հետեւեալ օրը Յովհաննէս դարձեալ կայնած էր, եւ իր աշակերտներէն երկուքը: **36** Նայելով Յիսուսի՝ որ կը քալէր, ըսաւ. «Ահա Աստուծոյ Գառը»: **37** Երկու աշակերտները լսեցին անկէ՝ երբ կը խօսէր, ու հետեւեցան Յիսուսի: **38** Երբ Յիսուս դարձաւ եւ տեսաւ թէ անոնք կը հետեւէին իրեն, ըսաւ անոնց. «Ի՞նչ կը փնտռէք»: Անոնք ալ ըսին իրեն. «Ռաբբի, (որ թարգմանուելով՝ վարդապետ ըսել է,) ո՞ր կը բնակիս»: **39** Ըսաւ անոնց. «Եկէ՛ք եւ տեսէ՛ք»: Գացին ու տեսան թէ ո՞ր կը բնակէր. եւ այդ օրը մնացին անոր քով, որովհետեւ գրեթէ տասներորդ ժամն՝ էր: **40** Սիմոն Պետրոսի եղբայրը՝ Անդրէաս մէկն էր այն երկուքէն, որ լսեցին Յովհաննէսէ ու հետեւեցան անոր: **41** Ան նախ գտաւ իր եղբայրը՝ Սիմոնը, եւ ըսաւ անոր. «Գտանք Մեսիան» (որ կը թարգմանուի՝ Քրիստոս).

42 ապա տարաւ զայն Յիսուսի քով: Յիսուս նայելով
 անոր՝ ըսաւ. «Դուն Սիմոնն ես, Յովնանի որդին.
 դուն Կեփաս պիտի կոչուիս», որ կը թարգմանուի՝
 Պետրոս: 43 Հետեւեալ օրը՝ Յիսուս ուզեց Գալիլեա
 երթալ, եւ գտնելով Փիլիպպոսը՝ ըսաւ անոր.
 «Հետեւ՛ ինծի»: 44 Փիլիպպոս Բեթսայիդայէն էր.
 Անդրեասի ու Պետրոսի քաղաքէն: 45 Փիլիպպոս
 գտաւ Նաթանայէլը եւ ըսաւ անոր. «Գտանք
 ան՝ որուն մասին Մովսէս գրեց Օրէնքին մէջ, ու
 մարգարէներն ալ, այսինքն՝ Յիսուս Նազովրեցին,
 Յովսէփի որդին»: 46 Նաթանայէլ ըսաւ անոր.
 «Կարելի՞ է որ Նազարէթէն բարի բան մը ելլէ»:
 Փիլիպպոս ըսաւ անոր. «Եկ՛նու ու տես»: 47
 Յիսուս, երբ տեսաւ Նաթանայէլը՝ որ իրեն կու
 գար, ըսաւ անոր մասին. «Ահա՛ ճշմարտապէս
 Իսրայելացի մը՝ որուն ներսը նենգութիւն չկայ»: 48
 Նաթանայէլ ըսաւ անոր. «Ուրկէ՞ կը ճանչնաս զիս»:
 Յիսուս պատասխանեց անոր. «Դեռ Փիլիպպոս
 քեզ չկանչած, դուն՝ որ թզենիին տակն էիր, ես
 տեսայ քեզ»: 49 Նաթանայէլ պատասխանեց
 անոր. «Ռաբբի, դուն ես Աստուծոյ Որդին, դուն ես
 Իսրայելի թագաւորը»: 50 Յիսուս պատասխանեց
 անոր. «Կը հաւատամս՝ քանի որ ըսի քեզի թէ տեսայ
 քեզ թզենիին ներքեւ: Ասկէ աւելի մեծ բաներ պիտի
 տեսնես»: 51 Նաեւ ըսաւ անոր. «Ճշմարտապէս,
 ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ասկէ ետք
 պիտի տեսնէք երկինքը բացուած, եւ Աստուծոյ
 հրեշտակները՝ որ կ’ելլեն ու կ’իջնեն մարդու
 Որդիին վրայ”»:

2 Երրորդ օրը հարսանիք մը կար Գալիլեայի Կանաքաղաքը, եւ Յիսուսի մայրը հոն էր: **2** Յիսուս ալ հրաւիրուեցաւ այդ հարսանիքին, նաեւ՝ իր աշակերտները: **3** Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը ըսաւ անոր. «Գինի չունին»: **4** Յիսուս ըսաւ անոր. «Կին, դուն ինչ ունիս ինծի հետ. իմ ժամս դեռ հասած չէ»: **5** Իր մայրը ըսաւ սպասարկուներուն. «Ի՛նչ որ ըսէ ձեզի՝ ըրէք»: **6** Հոն վեց քարէ կարաս դրուած էր՝ հրեաներուն մաքրուելու սովորութեան համաձայն. իւրաքանչիւրը կը պարունակէր երկու կամ երեք մար: **7** Յիսուս ըսաւ անոնց. «Լեցուցէ՛ք այդ կարասները ջուրով». ու լեցուցին զանոնք՝ մինչեւ բերանը: **8** Եւ ըսաւ անոնց. «Հիմա հանեցէ՛ք ու տարէ՛ք սեղանապետին». անոնք ալ տարին: **9** Երբ սեղանապետը համտեսեց գինի դարձած ջուրը՝ չէր գիտեր ուրկէ՛ ըլլալը (բայց սպասարկուները՝ որոնք հաներ էին ջուրը՝ գիտէին): Սեղանապետը կանչեց փեսան **10** եւ ըսաւ անոր. «Ամէն մարդ նախ կը մատուցանէ լաւ գինին, ու երբ արբեցած ըլլան՝ այն ատեն ցածորակը. բայց դուն լաւ գինին պահեցիր մինչեւ հիմա»: **11** Յիսուս իր նշաններուն սկիզբը ըրաւ ասիկա՝ Գալիլեայի Կանաքաղաքին մէջ, եւ ցոյց տուաւ իր փառքը. ու իր աշակերտները հաւատացին իրեն: **12** Յետոյ Յիսուս Կափառնայում իջաւ, ինք, իր մայրն ու իր եղբայրները, եւ իր աշակերտները. բայց շատ օրեր չմնացին հոն: **13** Հրեաներուն Չատիկը մօտ էր, ուստի Յիսուս բարձրացաւ Երուսաղէմ: **14**

Տաճարին մէջ գտաւ արջառ, ոչխար եւ աղաւնի
 ծախողներ, նաեւ լումայափոխներ՝ որոնք նստած
 էին: **15** Եւ չուանէ խարազան մը շինելով՝
 տաճարէն դուրս հանեց բոլորը, ոչխարներն
 ու արջառներն ալ. թափեց լումայափոխներուն
 լումաները, տապալեց սեղանները, **16** եւ ըսաւ
 աղաւնի ծախողներուն. «Վերցուցէք ատոնք ասկէ.
 առեւտուրի տուն մի՛ ընէք իմ Զօրս տունը»: **17**
 Եւ իր աշակերտները յիշեցին՝ որ գրուած է. «Քու
 տանդ նախանձախնդրութիւնը կլանեց զիս»: **18**
 Զետեւաբար Զրեաները ըսին անոր. «Ի՞նչ նշան
 ցոյց կու տաս մեզի՝ քանի կ'ընես այդ բաները»: **19**
 Յիսուս պատասխանեց անոնց. «Քակեցէք այս
 տաճարը, ու երեք օրուան մէջ պիտի կանգնեցնեմ
 զայն»: **20** Իսկ Զրեաները ըսին. «Քառասունվեց
 տարուան մէջ շինուեցաւ այս տաճարը, եւ դուն
 երեք օրուան մէջ պիտի կանգնեցնես զայն»: **21**
 Բայց ինք կը խօսէր իր մարմինին տաճարին
 մասին: **22** Ուստի երբ ինք մեռելներէն յարութիւն
 առաւ, իր աշակերտները յիշեցին թէ ըսած էր
 ասիկա, ու հաւատացին Գիրքին եւ Յիսուսի
 ըսած խօսքին: **23** Երբ Չատիկի տօնին ատենը
 Երուսաղէմ էր, շատ մարդիկ հաւատացին անոր
 անունին՝ տեսնելով անոր ըրած նշանները: **24** Բայց
 ինք՝ Յիսուս՝ չէր հաւատար անոնց, որովհետեւ կը
 ճանչնար ամեն մարդ. **25** պէտք չունէր՝ որ մէկը
 ուրիշ մարդու մասին վկայէր իրեն, քանի որ ինք
 գիտէր թէ ինչ կայ մարդուն մէջ:

3 Փարիսեցիներէն մարդ մը կար՝ Նիկողեմոս անունով, որ Զրեաներու պետ մըն էր: **2** Ասիկա գիշերուան մէջ եկաւ Յիսուսի քով եւ ըսաւ անոր. «Ռաբբի, գիտենք թէ դուն Աստուծմէ վարդապետ եկած ես. որովհետեւ մէկը չի կրնար ընել այն նշանները՝ որ դուն կ'ընես, եթէ Աստուած իրեն հետ չըլլայ»: **3** Յիսուս պատասխանեց անոր. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. “Եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ թագաւորութիւնը”»: **4** Նիկողեմոս ըսաւ անոր. «Ինչպէս կրնայ ծնիլ մարդ մը՝ որ ծերացած է: Կարելի է, որ երկրորդ անգամ մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»: **5** Յիսուս պատասխանեց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. “Եթէ մէկը ջուրէն ու Զոգիէն չծնի՝ չի կրնար մտնել Աստուծոյ թագաւորութիւնը”»: **6** Մարմինէն ծնածը՝ մարմին է, եւ Զոգիէն ծնածը՝ հոգի է: **7** Դուն մի գարմանար որ ըսի քեզի. “Դուք պետք է վերստին ծնիք”: **8** Զովը կը փչէ ո՛ր որ ուզէ. կը լսես անոր ձայնը, բայց չես գիտեր ուրկէ՛ կու գայ, կամ ո՛ր կ'երթայ: Ո՛վ որ Զոգիէն կը ծնի՝ այսպէս է»: **9** Նիկողեմոս ըսաւ անոր. «Ինչպէս կրնայ ըլլալ ատիկա»: **10** Յիսուս պատասխանեց անոր. «Դուն Իսրայէլի մէջ վարդապետ մըն ես, ու չե՞ս գիտեր այս բաները: **11** Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք, եւ ինչ որ տեսանք՝ կը վկայենք, ու չէք ընդունիր մեր վկայութիւնը: **12** Եթէ երկրային բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չէք հաւատար, ինչպէս

պիտի հաւատաք՝ եթէ երկնային բաներու մասին
 խօսիմ ձեզի: **13** Ո՛չ մէկը երկինք բարձրացաւ,
 բացի անկէ՝ որ երկինքէն իջաւ, մարդու Որդին՝ որ
 երկինքն է: **14** Եւ ինչպէս Մովսէս բարձրացուց օձը
 անապատին մէջ, այնպէս պէտք է որ բարձրանայ
 մարդու Որդին. **15** որպէսզի ի՞նչ որ հաւատայ անոր՝
 չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը:
 (aiōnios g166) **16** Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց
 աշխարհը, որ մինչեւ անգամ տուաւ իր միածին
 Որդին, որպէսզի ի՞նչ որ հաւատայ անոր՝ չկորսուի,
 հապա ունենայ յաւիտենական կեանքը: (aiōnios
 g166) **17** Բանի որ Աստուած աշխարհ զրկեց իր
 Որդին՝ ի՞նչ թէ աշխարհը դատապարտելու, հապա՝
 որպէսզի աշխարհը փրկուի անով: **18** Ա՛ն որ կը
 հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ան որ
 չի հաւատար՝ անիկա արդէն դատապարտուած
 է, որովհետեւ չհաւատաց Աստուծոյ միածին
 Որդիին անունին: **19** Սա է դատապարտութիւնը,
 որ լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ սիրեցին
 խաւարը՝ փոխանակ լոյսին, քանի որ իրենց
 գործերը չար էին: **20** Որովհետեւ ի՞նչ որ չարիք կը
 գործէ, անիկա կ'ատէ լոյսը եւ չի գար լոյսին քով,
 որպէսզի չկշտամբուին իր գործերը: **21** Բայց ան
 որ կը կիրարկէ ճշմարտութիւնը՝ կու գայ լոյսին
 քով, որպէսզի իր գործերը յայտնաբերուին թէ
 գործուեցան Աստուծոմով: **22** Ասկէ ետք՝ Յիսուս
 եւ իր աշակերտները եկան Հրեաստանի երկիրը.
 հոն կը կենար՝ անոնց հետ, ու կը մկրտէր: **23**
 Յովհաննէս ալ կը մկրտէր Այենոնի մէջ՝ Սաղիմի

մօտ, որովհետեւ հոն շատ ջուր կար. կու գային եւ կը մկրտուէին, 24 որովհետեւ Յովհաննէս դեռ քանտը նետուած չէր: 25 Ուստի վիճաբանութիւն մը եղաւ Յովհաննէսի աշակերտներէն ոմանց եւ Հրեաներուն միջեւ՝ մաքրութեան մասին: 26 Ու եկան Յովհաննէսի քով եւ ըսին անոր. «Ռաբբի, ան որ քեզի հետ՝ Յորդանանի միւս կողմն էր, որուն մասին դուն վկայեցիր, ահա՛ ինք կը մկրտէ ու բոլորը կ'երթան անոր»: 27 Յովհաննէս պատասխանեց. «Մարդ մը ոչինչ կրնայ ստանալ՝ եթէ երկինքէն տրուած չըլլայ իրեն: 28 Դուք ձեզմէ կը վկայէք ինծի համար՝ թէ ըսի. “Ես Քրիստոսը չեմ, հապա դրկուած եմ անոր առջեւէն”: 29 Ա՛ն որ ունի հարսը՝ անիկա է փեսան. բայց փեսային բարեկամը, որ կը կենայ եւ կը լսէ զայն, մեծապէս կ'ուրախանայ փեսային ծայնին համար: Ուրեմն ահա՛ լիացած է իմ ուրախութիւնս: 30 Պէտք է որ ան մեծնայ, իսկ ես՝ պզտիկնամ»: 31 Ա՛ն որ կու գայ վերէն՝ բոլորէն վեր է: Ա՛ն որ երկրէն է՝ երկրաւոր է, ու կը խօսի երկրէն. ան որ կու գայ երկինքէն՝ բոլորէն վեր է, 32 եւ ինչ որ տեսաւ ու լսեց՝ կը վկայէ անոնց մասին, եւ ոչ մէկը կ'ընդունի անոր վկայութիւնը: 33 Ա՛ն որ կ'ընդունի անոր վկայութիւնը, կը կնքէ թէ Աստուած ճշմարտախօս է. 34 որովհետեւ ան որ Աստուած դրկեց՝ կը քարոզէ Աստուծոյ խօսքերը, քանի որ Աստուած անոր չափով չի տար Հոգին: 35 Հայրը կը սիրէ Որդին, եւ ամէն բան տուած է անոր ձեռքը: 36 Ա՛ն որ կը հաւատայ Որդին՝ ունի յաւիտենական

կեանքը. իսկ ան որ չ'անսար Որդիին՝ պիտի չտեսնէ կեանքը, հապա Աստուծոյ բարկութիւնը կը մնայ անոր վրայ: (aiōnios g166)

4 Ուրեմն երբ Տէրը գիտցաւ թէ Փարիսեցիները լսեր են՝ թէ Յիսուս Յովհաննէսէ աւելի աշակերտներ կ'ընէ ու կը մկրտէ, **2** (թպէտ՝ ոչ թէ Յիսուս ինք կը մկրտէր, հապա իր աշակերտները,) **3** թողուց Յրեաստանը եւ դարձեալ Գալիլեա գնաց. **4** ու պէտք էր որ անցնէր Սամարիայի մէջէն: **5** Ուստի եկաւ Սամարացիներուն մէկ քաղաքը՝ որ Սուփար կը կոչուէր, այն վայրին մօտ՝ որ Յակոբ տուաւ իր որդիին՝ Յովսէփի: **6** Հոն կար Յակոբի մէկ աղբիւրը. ուրեմն Յիսուս՝ ճամբորդութենէն յոգնած ըլլալով՝ նստաւ այդ աղբիւրին քով: Գրեթէ վեցերորդ ժամն՝ Էր: **7** Սամարիայէն կին մը եկաւ ջուր քաշելու: Յիսուս ըսաւ անոր. «Ինծի ջուր տուր՝ խմելու». **8** (քանի որ իր աշակերտները քաղաքը զացեր էին՝ կերակուր գնելու համար:) **9** Ուստի սամարացի կինը ըսաւ անոր. «Դուն՝ որ Հրեայ ես, ինչպէս կ'ուզես ջուր խմել ինձմէ՝ սամարացի կնոջմէ մը». որովհետեւ Հրեաները չեն հաղորդակցիր Սամարացիներուն հետ: **10** Յիսուս պատասխանեց անոր. «Եթէ դուն գիտնայիր Աստուծոյ պարգեւը, եւ թէ ո՞վ է ան՝ որ կ'ըսէ քեզի. “Ինծի ջուր տուր խմելու”, դո՛ւն պիտի ուզէիր իրմէ, ու ինք կենարար ջուր պիտի տար քեզի»: **11** Կինը ըսաւ անոր. «Տէր, դուն ոչինչ ունիս՝ ջուր քաշելու համար, եւ այս հորը խորունկ է. ուրեմն ուրկէ՞ պիտի ունենաս այդ կենարար

ջուրը: **12** Միթե դուն աւելի մեծ ես քան մեր հայրը՝
 Յակոբ, որ տուաւ մեզի այս հորը, ու ասկէ խմեցին
 ինք, իր որդիները եւ իր անասունները»: **13** Յիսուս
 պատասխանեց անոր. «Ո՛վ որ խմէ այս ջուրէն՝
 դարձեալ պիտի ծարաւնայ, **14** բայց ո՛վ որ խմէ
 այն ջուրէն՝ որ ես պիտի տամ անոր, յաւիտեան
 պիտի չծարաւնայ: Հապա այն ջուրը՝ որ ես պիտի
 տամ անոր, պիտի ըլլայ անոր մէջ ջուրի աղբիւր
 մը՝ որ կը բխի յաւիտենական կեանքի համար»:
 (aiōn g165, aiōnios g166) **15** Կինը ըսաւ անոր. «Տէր,
 տո՛ւր ինծի այդ ջուրը, որպէսզի չծարաւնամ, եւ
 հոս չգամ՝ ջուր քաշելու»: **16** Յիսուս ըսաւ անոր.
 «Գնա՛, կանչէ՛ ամուսինդ ու հո՛ս եկուր»: **17** Կինը
 պատասխանեց. «Ես ամուսին չունիմ»: Յիսուս
 ըսաւ անոր. «Գի՛շդ ըսիր. “Ամուսին չունիմ”, **18**
 որովհետեւ դուն հինգ ամուսին ունեցեր ես, եւ ան
 որ հիմա ունիս՝ ամուսինդ չէ. գի՛շդ ըսիր ատիկա»:
19 Կինը ըսաւ անոր. «Տէր, կը նշմարեմ թէ դուն
 մարգարէ մըն ես: **20** Մեր հայրերը երկրպագեցին
 այս լերան վրայ. բայց դուք կ'ըսէք թէ Երուսաղէմ
 է միակ տեղը՝ ուր պէտք է երկրպագել»: **21** Յիսուս
 ըսաւ անոր. «Կի՛ն, հաւատա՛ ինծի, որ ժամը պիտի
 գայ, երբ ոչ այս լերան վրայ եւ ոչ Երուսաղէմի մէջ
 պիտի երկրպագէք: Զօրը: **22** Դուք կ'երկրպագէք
 անոր՝ որ չէք ճանչնար. մենք կ'երկրպագենք
 անոր՝ որ կը ճանչնանք. որովհետեւ փրկութիւնը
 Հրեաներէն է: **23** Բայց ժամը պիտի գայ եւ հիմա
 ալ է, երբ ճշմարիտ երկրպագողները պիտի
 երկրպագեն Զօրը՝ հոգիով ու ճշմարտութեամբ,

որովհետեւ Հայրն ալ կ'ուզէ այդպիսիներ՝ իրեն երկրպագելու համար: 24 Աստուած Հոգի է, եւ իրեն երկրպագողներն ալ պէտք է որ երկրպագեն հոգիով ու ճշմարտութեամբ»: 25 Կինը ըսաւ անոր. «Գիտեմ թէ Մեսիան պիտի գայ, (Քրիստոս կոչուածը.) երբ ինք գայ՝ պիտի հաղորդէ մեզի ամեն բան»: 26 Յիսուս ըսաւ անոր. «Ես՝ որ քեզի հետ կը խօսիմ՝ ան եմ»: 27 Այդ ատեն իր աշակերտները եկան, ու զարմացան որ կը խօսակցէր այդ կնոջ հետ, բայց անոնցմէ ոչ մէկը ըսաւ. «Ինչ կ'ուզես», կամ. «Ինչ կը խօսիս անոր հետ»: 28 Ուստի կինը թողուց իր սափորը եւ գնաց քաղաքը, ու ըսաւ քաղաքացիներուն. 29 «Եկէք, տեսէք մարդ մը՝ որ ըսաւ ինծի ամեն ինչ որ գործեր եմ. արդեօք ան է Քրիստոսը»: 30 Անոնք ալ ելան քաղաքէն եւ կու գային անոր: 31 Այդ միջոցին աշակերտները իրեն կը թախանձէին ու կ'ըսէին. «Ռաբբի, կեր»: 32 Ան ալ ըսաւ անոնց. «Ես՝ ուտելու համար՝ ունիմ կերակուր մը, որ դուք չէք գիտեր»: 33 Ուրեմն աշակերտները կ'ըսէին իրարու. «Արդեօք մէկը ուտելիք բերաւ իրեն»: 34 Յիսուս ըսաւ անոնց. «Իմ կերակուրս՝ գործադրել է զիս ղրկողին կամքը, եւ աւարտել անոր գործը: 35 Դուք չէք ըսեր. “Տակաւին չորս ամիս կայ՝ որ հունձքի ատենը գայ”: Ահա ես կը յայտարարեմ ձեզի. “Բարձրացուցէք ձեր աչքերը եւ դիտեցէք արտերը. արդէն ճերմկած ու հնձուելու պատրաստ են”: 36 Ան որ կը հնձէ՝ վարձք կը ստանայ, եւ պտուղ կը

Ժողովէ յաւիտենական կեանքի համար, որպէսզի
 սերմանողն ու հնձողը ուրախանան միասին:
 (aiōnios g166) 37 Որովհետեւ այս քանին մէջ ճշմարիտ
 է այն խօսքը. “Մէկը կը սերմանէ, եւ ուրիշ մը
 կը հնձէ”: 38 Ես դրկեցի ձեզ հնձելու զայն՝ որուն
 համար չաշխատեցաք. ուրիշները աշխատեցան,
 ու դո՛ւք մտաք անոնց աշխատանքին մէջ»: 39
 Այդ քաղաքէն շատ Սամարացիներ հաւատացին
 իրեն՝ այդ կնոջ խօսքին համար, որ վկայեց.
 «Ի՛նչ որ գործեր էի՝ ամէնը ըսաւ ինծի»: 40 Երբ
 Սամարացիները եկան իրեն, կը թախանձէին
 որ մնայ իրենց քով. ու մնաց հոն երկու օր: 41
 Շատեր իրեն հաւատացին՝ իր խօսքին համար,
 42 եւ կ’ըսէին կնոջ. «Ա՛լ կը հաւատանք՝ ո՛չ թէ
 քու խօսքիդ համար, այլ մենք իսկ լսեցինք,
 ու գիտենք թէ այս է ճշմարտապէս աշխարհի
 Փրկիչը՝ Քրիստոսը»: 43 Երկու օր ետք՝ մեկնեցաւ
 անկէ եւ գնաց Գալիլեա, 44 որովհետեւ Յիսուս
 ինք վկայեց թէ “մարգարէ մը պատիւ չ’ունենար
 իր բնագաւառին մէջ”: 45 Ուրեմն երբ Գալիլեա
 հասաւ՝ Գալիլեացիները ընդունեցին զինք, քանի
 որ տեսած էին այն բոլոր հրաշքները, որ ինք ըրաւ
 տօնին ատենը՝ Երուսաղէմի մէջ. որովհետեւ
 իրենք ալ գացեր էին այդ տօնին: 46 Յիսուս
 դարձեալ եկաւ Գալիլեայի Կանա քաղաքը, ուր
 ջուրը փոխած էր գինիի: Հոն պալատական մը
 կար, որուն որդին հիւանդ էր՝ Կափառնայուժի
 մէջ: 47 Ասիկա՝ լսելով թէ Յիսուս Հրէաստանէն
 եկած է Գալիլեա, եկաւ անոր ու կը թախանձէր՝ որ

իջնէ եւ բժշկէ իր որդին, որովհետեւ մեռնելու մօտ էր: **48** Իսկ Յիսուս ըսաւ անոր. «Եթէ նշաններ ու սքանչելիքներ չտեսնէք՝ բնաւ պիտի չհաւատաք»: **49** Պալատականը ըսաւ անոր. «Տէր, իջիր, քանի դեռ տղաս մեռած չէ»: **50** Յիսուս ըսաւ անոր. «Գնա՛, որդիդ կ'ապրի»: Մարդն ալ հաւատաց այն խօսքին՝ որ Յիսուս ըսաւ իրեն, ու գնաց: **51** Երբ արդէն կ'իջներ, իր ծառաները դիմաւորեցին զինք եւ լուր տուին՝ ըսելով. «Որդիդ ճողջ է»: **52** Ուստի հարցափորձեց զանոնք թէ որ ժամուն սկսաւ լաւանալ: Ըսին իրեն. «Երէկ եօթներորդ ժամուն» տենողը թողուց զայն»: **53** Ուստի անոր հայրը գիտցաւ թէ այն ժամն էր՝ երբ Յիսուս ըսաւ իրեն. «Որդիդ կ'ապրի», ու հաւատաց՝ ինք եւ իր ամբողջ տունը: **54** Յիսուս դարձեալ ըրաւ այս երկրորդ նշանը՝ երբ Յրեաստանէն Գալիլեա եկաւ:

5 Ասկէ ետք Յրեաներուն տօնն էր, ու Յիսուս Երուսաղէմ բարձրացաւ: **2** Երուսաղէմի մէջ՝ Ոչխարներու դրան քով աւագան մը կայ, որ եբրայերէն Բեթհեզդա կը կոչուի եւ հինգ սրահ ունի: **3** Ասոնց մէջ պառկած էր հիւանդներու մեծ բազմութիւն մը՝ կոյրեր, կաղեր, չորցածներ, որոնք կը սպասէին ջուրին խառնուելուն. **4** որովհետեւ հրեշտակ մը ատեն-ատեն կ'իջներ աւագանը ու կը խառնէր ջուրերը, եւ ճվ որ ջուրին խառնուելէն ետք անոր մէջ առաջինը մտնէր՝ կ'առողջանար, ինչ ախտ ալ ունենար: **5** Հոն մարդ մը կար, որ հիւանդութիւն մը ունէր երեսունութ տարիէ ի վեր: **6** Երբ Յիսուս տեսաւ զայն՝ պառկած,

ու գիտցաւ թէ արդէն շատ ժամանակէ ի վեր
 հիւանդ էր, ըսաւ անոր. «Կ'ուզէս առողջանալ»:
 7 Հիւանդը պատասխանեց անոր. «Տէր, մարդ
 մը չունիմ, որ երբ ջուրերը խառնուին՝ ձգէ զիս
 աւագանը. հապա՛ մինչ կ'երթամ՝ ինձմէ առաջ
 ուրիշ մը կ'իջնէ»:
 8 Յիսուս ըսաւ անոր. «Ոտքի
 ելիր, ան մահիճդ ու քալէ»:
 9 Իսկոյն մարդը
 առողջացաւ, եւ առնելով իր մահիճը՝ կը քալէր.
 իսկ այդ օրը Շաբաթ էր:
 10 Ուրեմն Հրեաները ըսին
 բժշկուած մարդուն. «Շաբաթ է, եւ արտօնուած
 չէ՝ որ վերցնես մահիճդ»:
 11 Պատասխանեց
 անոնց. «Ա՛ն որ բժշկեց զիս, ինք ըսաւ ինձի.
 “Ա՛ն մահիճդ ու քալէ”»:
 12 Ուրեմն հարցուցին
 անոր. «Ո՞վ է այն մարդը, որ ըսաւ քեզի. “Ա՛ն
 մահիճդ ու քալէ”»:
 13 Եւ բժշկուողը չէր գիտեր թէ
 ո՞վ է ան, որովհետեւ Յիսուս մեկդի քաշուեցաւ՝
 այնտեղ բազմութիւն ըլլալուն համար:
 14 Անկէ
 ետք Յիսուս՝ գտնելով զայն տաճարին մէջ՝ ըսաւ
 անոր. «Ահա՛ բժշկուեցար. ա՛յլ մի՛ մեղանչեր, որ
 աւելի գէշ բան մը չպատահի քեզի»:
 15 Մարդը
 գնաց ու հաղորդեց Հրեաներուն թէ Յիսուս
 էր՝ որ բժշկեց զինք:
 16 Ուստի Հրեաները կը
 հալածէին Յիսուսը եւ կը ջանային սպաննել զայն՝
 քանի որ Շաբաթ օրը կ'ընէր այս բաները:
 17 Բայց Յիսուս պատասխանեց անոնց. «Իմ Հայրս
 մինչեւ հիմա կը գործէ, եւս ալ կը գործեմ»:
 18 Ուստի Հրեաները ա՛յլ աւելի կը ջանային սպաննել
 զայն, քանի որ ո՛չ միայն Շաբաթ օրը կը լուծէր,
 հապա նաեւ Աստուած իր Հայրը կը կոչէր, եւ

այսպէս՝ ինքզինք Աստուծոյ հաւասար կ'ընէր:

19 Իսկ Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Որդին ինքնիրմէ ոչինչ կրնայ ընել, հապա միայն ինչ որ տեսնէ՝ որ Յայրը կ'ընէ. որովհետեւ ինչ որ ան կ'ընէ, նմանապէս Որդին ալ կ'ընէ այդ բաները”:

20 Քանի որ Յայրը կը սիրէ Որդին, եւ ամէն բան ցոյց կու տայ անոր՝ ինչ որ ինք կ'ընէ: Ասոնցմէ աւելի մեծ գործեր ալ ցոյց պիտի տայ անոր, որպէսզի դուք զարմանաք. 21 որովհետեւ ինչպէս Յայրը մեռելները կը յարուցանէ եւ կեանք կու տայ, նոյնպէս ալ Որդին կեանք կու տայ՝ անոնց որ ուզէ: 22 Քանի որ Յայրը ոչ մէկը կը դատէ, հապա ամէն դատաստան Որդիին տուաւ. 23 որպէսզի բոլորը պատուեն Որդին, ինչպէս կը պատուեն Յայրը: Ան որ չի պատուեր Որդին, չի պատուեր Յայրը՝ որ դրկեց զայն: 24 Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ան որ մտիկ կ'ընէ իմ խօսքս, ու կը հաւատայ անոր՝ որ դրկեց զիս, ունի յաւիտենական կեանքը, եւ չ'իյնար դատապարտութեան տակ, հապա անցած է մահէն դէպի կեանք”:

(aĩōnios g166) 25 Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ժամը պիտի գայ ու հիմա ալ է, երբ մեռելները պիտի լսեն Աստուծոյ Որդիին ձայնը. եւ անոնք որ կը լսեն՝ պիտի ապրին”:

26 Որովհետեւ ինչպէս Յայրը ինքնիր մէջ կեանք ունի, այնպէս ալ Որդիին տուաւ՝ որ ինքնիր մէջ կեանք ունենայ. 27 նաեւ անոր տուաւ դատաստան կիրարկելու

իշխանութիւն, քանի որ ան մարդու Որդին է: **28** Մի
 զարմանաք ասոր վրայ. որովհետեւ ժամը պիտի
 գայ՝ երբ բոլոր գերեզմաններու մէջ եղողները
 պիտի լսեն անոր ձայնը, **29** ու դուրս պիտի
 գան. անոնք որ բարիք գործեր են՝ կեանքի
 յարութեան համար, եւ անոնք որ չարիք գործեր
 են՝ դատապարտութեան յարութեան համար»:

30 «Ես ինձմէ ոչինչ կրնամ ընել. ինչպէս կը լսեմ՝
 այնպէս կը դատեմ, եւ իմ դատաստանս արդար է.
 որովհետեւ ո՛չ թէ իմ կամքս կը փնտռեմ, հապա
 անոր կամքը՝ որ զրկեց զիս: **31** Եթէ ես վկայեմ
 իմ մասիս՝ իմ վկայութիւնս ճշմարիտ չէ: **32** Ուրիշ
 մըն է՝ որ կը վկայէ իմ մասիս. ու ես գիտեմ թէ
 ճշմարիտ է այն վկայութիւնը՝ որ ինք վկայեց իմ
 մասիս: **33** Դուք մարդ զրկեցիք Յովհաննէսի, եւ
 ինք վկայ եղաւ ճշմարտութեան: **34** Բայց ես ո՛չ
 թէ մարդոցմէ վկայութիւն կը ստանամ, հապա
 այս բաները կ'ըսեմ՝ որպէսզի դուք փրկուիք: **35**
 Ան ճրագ մըն էր՝ որ կը վառէր ու կը փայլէր, եւ
 դուք ուզեցիք ժամանակ մը ցնծալ անոր լոյսով:

36 Սակայն ես ունիմ աւելի մեծ վկայութիւն՝ քան
 Յովհաննէսինը. որովհետեւ այն գործերը որ Հայրը
 տուաւ ինծի՝ որպէսզի աւարտեմ զանոնք, այդ
 նոյն գործերը որ ես կ'ընեմ՝ կը վկայեն իմ մասիս
 թէ Հայրը զրկեց զիս: **37** Եւ Հայրը, որ զրկեց զիս,
 ինք վկայեց իմ մասիս: Դուք բնաւ լսած չէք անոր
 ձայնը, ո՛չ ալ տեսած անոր կերպարանքը. **38** անոր
 խօսքն ալ բնական չէ ձեր մէջ, որովհետեւ դուք
 չէք հաւատար անոր՝ որ ինք զրկեց: **39** Չննեցէք

Գիրքերը, որովհետեւ դուք կը կարծէք անոնցմով
 ունենալ յաւիտենական կեանքը. բուն անոնք են՝
 որ կը վկայեն իմ մասին: (aiōnios g166) 40 Դուք չէք
 ուզեր ինծի գալ՝ որ կեանք ունենաք: 41 Ես փառք
 չեմ ստանար մարդոցմէ. 42 Բայց գիտեմ ձեզ, որ
 չունիք ձեր մէջ Աստուծոյ սէրը: 43 Ես եկայ իմ
 Զօրս անունով՝ ու չէք ընդունիր զիս. եթէ ուրիշ
 մէկը գայ ինքնիր անունով՝ պիտի ընդունիք զինք:
 44 Ինչպէս կրնաք հաւատալ, դուք որ փառք կը
 ստանաք իրարմէ, եւ չէք փնտռեր այն փառքը՝ որ
 կու գայ միայն Աստուծմէ: 45 Մի կարծէք թէ ես
 պիտի ամբաստանեմ ձեզ Զօրը առջեւ: Կայ մէկը՝
 որ կ'ամբաստանէ ձեզ, Մովսէս՝ որուն կը յուսաք:
 46 Որովհետեւ եթէ Մովսէսի հաւատայիք, ինծի ալ
 պիտի հաւատայիք, քանի որ ան գրեց իմ մասին:
 47 Բայց եթէ չէք հաւատար անոր գրածներուն,
 ինչպէս պիտի հաւատաք իմ խօսքերուն»:

6 Ասկէ ետք, Յիսուս գնաց Գալիլեայի՝ այսինքն
 Տիրեփայի ծովուն միւս կողմը: 2 Մեծ բազմութիւն
 մը կը հետեւէր անոր, որովհետեւ կը տեսնէին այն
 նշանները՝ որ կ'ըներ հիւանդներուն վրայ: 3 Յիսուս
 լեռը ելաւ ու նստաւ հոն՝ իր աշակերտներուն
 հետ: 4 Զրեաներուն Չատիկի տօնը մօտ էր: 5
 Երբ Յիսուս աչքերը բարձրացուց ու տեսաւ
 թէ մեծ բազմութիւն մը կու գար իրեն, ըսաւ
 Փիլիպպոսի. «Ուրկէ՞ հաց գնենք՝ որպէսզի ասոնք
 ուտեն»: 6 (Ասիկա կ'ըսէր՝ զայն փորձելու համար,
 քանի որ ինք գիտէր թէ ինչ պիտի ըներ:) 7
 Փիլիպպոս պատասխանեց անոր. «Երկու հարիւր

դահեկանի հաց չի բաւեր անոնց, որպէսզի
 իւրաքանչիւրը քիչ մը առնէ»: 8 Իր աշակերտներէն
 մէկը, Սիմոն Պետրոսի եղբայրը՝ Անդրէաս, ըսաւ
 իրեն. 9 «Յոս պատանի մը կայ, որ ունի հինգ
 գարիէ նկանակ ու երկու ձուկ. բայց ինչ են
 անոնք՝ այդչափ մարդոց համար»: 10 Յիսուս
 ըսաւ. «Նստեցուցէք այդ մարդիկը»: Յոն առատ
 խոտ կար, ու մարդիկը նստան՝ թիւով հինգ
 հազարի չափ: 11 Յիսուս առաւ նկանակները,
 շնորհակալ եղաւ եւ բաշխեց աշակերտներուն,
 աշակերտներն ալ՝ նստողներուն. նմանապէս
 ձուկերէն՝ որչափ որ ուզեցին: 12 Երբ կշտացան՝
 ըսաւ իր աշակերտներուն. «Ժողովեցէք աւելցած
 բեկորները, որպէսզի ոչինչ կորսուի»: 13 Ուստի
 ժողովեցին, եւ տասներկու կողով լեցուցին այդ
 հինգ գարիէ նկանակներէն մնացած բեկորներով,
 որոնք ուտողներէն աւելցան: 14 Իսկ մարդիկը,
 երբ տեսան Յիսուսի ըրած նշանը, կ'ըսէին.
 «Ճշմարտապէս ասիկա է այն մարգարէն, որ
 աշխարհի պիտի գար»: 15 Ուրեմն Յիսուս,
 գիտնալով թէ պիտի գան յափշտակելու զինք՝
 որպէսզի թագաւոր ընեն զինք, դարձեալ լեռը
 գնաց՝ առանձին: 16 Երբ իրիկուն եղաւ՝
 իր աշակերտները իջան ծովեզերքը, 17 ու
 նաւ մտնելով կ'երթային ծովուն միւս կողմը՝
 Կափառնայում: Արդէն մթնցած էր, բայց դեռ
 Յիսուս եկած չէր իրենց: 18 Ծովն ալ ալեկոծ
 էր՝ սաստիկ փչող հովէն: 19 Երբ թի վարելով
 քսանհինգ կամ երեսուն ասպարէզի չափ գացին՝

տեսան Յիսուսը, որ կը մօտենար նաւուն՝ ծովուն վրայ քալելով, ու վախցան: **20** Բայց ինք ըսաւ անոնց. «Ես եմ, մի՛ վախնաք»: **21** Ուստի ուզեցին ընդունիլ զինք նաւուն մէջ. եւ նաւը իսկոյն հասաւ այն երկիրը՝ ուր կ'երթային: **22** Հետեւեալ օրը՝ բազմութիւնը, որ ծովուն միւս եզերքն էր, տեսաւ թէ ուրիշ նաւակ չկար այն մէկէն զատ՝ որուն մէջ անոր աշակերտները մտած էին, եւ թէ Յիսուս իր աշակերտներուն հետ մտած չէր նաւակը, այլ անոր աշակերտները առանձին գացեր էին **23** (Բայց Տիբերիայէն ուրիշ նաւակներ եկան այն տեղին մօտ, ուր կերեր էին հացը՝ Տէրոջ շնորհակալ ըլլալէն ետք): **24** Ուրեմն բազմութիւնը՝ տեսնելով թէ ոչ Յիսուս հոն է, ոչ ալ անոր աշակերտները, իրենք ալ նաւ մտան եւ գացին Կափառնայում՝ փնտռելու Յիսուսը: **25** Երբ գտան զինք՝ ծովուն միւս եզերքը, ըսին իրեն. «Ռաբբի, նրբ եկար հոս»: **26** Յիսուս պատասխանեց անոնց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Դուք զիս կը փնտռէք՝ ոչ թէ քանի որ նշաններ տեսաք, հապա՛ որովհետեւ նկանակներէն կերաք ու կշտացաք”»: **27** Գացէ՛ք, գործեցէ՛ք ոչ թէ կորստական կերակուրին համար, հապա այն կերակուրին համար՝ որ կը մնայ յաւիտենական կեանքին մէջ, եւ մարդու Որդին պիտի տայ ձեզի, որովհետեւ Հայրը՝ Աստուած զինք կնքեց»: **(aiōnios g166)** **28** Ուրեմն ըսին իրեն. «Ի՞նչ ընենք՝ որպէսզի կատարենք Աստուծոյ գործերը»: **29** Յիսուս պատասխանեց անոնց. «Սա՛ է Աստուծոյ

գործը, որ հաւատաք անոր դրկածին»: **30** Ուստի ըսին իրեն. «Բայց դուն ինչ նշան կ'ընես, որ տեսնենք ու հաւատանք քեզի. ինչ կը գործես: **31** Մեր հայրերը անապատին մէջ մանանան կերան, ինչպէս գրուած է. “Երկինքէն հաց տուաւ անոնց՝ որպէսզի ուտեն”»: **32** Իսկ Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Մովսէս չտուաւ ձեզի երկնային հացը, բայց իմ Յայրս կու տայ ձեզի ճշմարիտ երկնային հացը”. **33** որովհետեւ Աստուծոյ հացը ան է, որ կ'իջնէ երկինքէն եւ կեանք կու տայ աշխարհի»: **34** Ուրեմն ըսին իրեն. «Տէր, ամէն ատեն տուր մեզի այդ հացը»: **35** Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ կեանքի հացը. ան որ կու գայ ինծի՝ երբեք պիտի չանօթենայ, եւ ան որ կը հաւատայ ինծի՝ պիտի չծարաւնայ: **36** Բայց ես ըսի ձեզի. “Դուք զիս տեսաք ալ, ու չէք հաւատար”: **37** Բոլոր անոնք որ Յայրը կու տայ ինծի՝ պիտի գան ինծի, եւ ան որ կու գայ ինծի՝ բնաւ պիտի չվտարեմ: **38** Որովհետեւ ես իջայ երկինքէն՝ գործադրելու ոչ թէ իմ կամքս, հապա անոր կամքը՝ որ դրկեց զիս: **39** Եւ զիս դրկող Յօրը կամքը սա է, որ ոչ մէկը կորսնցնեմ բոլոր անոնցմէ՝ որ ինք տուաւ ինծի, հապա յարուցանեմ զանոնք՝ վերջին օրը: **40** Որովհետեւ զիս դրկողին կամքը սա է, որ ով որ տեսնէ Որդին ու հաւատայ իրեն՝ ունենայ յաւիտենական կեանքը. ես ալ պիտի յարուցանեմ զայն՝ վերջին օրը»: (aiōnios g166) **41** Ուստի Յրեաները կը տրտնջէին իրեն դէմ, որովհետեւ ըսաւ. «Ես եմ երկինքէն իջած հացը»,

42 Եւ կ'ըսէին. «Ասիկա Յովսէփի որդին՝ Յիսուսը
 չէ, որուն հայրն ու մայրը կը ճանչնանք. հապա
 ինչպէս ասիկա կ'ըսէ. “Ես իջայ երկինքէն”»։ 43
 Յիսուս ալ պատասխանեց անոնց. «Մի տրտնջեք
 ձեր մէջ։ 44 Ո՛չ մէկը կրնայ գալ ինծի՝ եթէ զիս դրկող
 Յայրը չքաշէ զայն. ու ես պիտի յարուցանեմ զայն՝
 վերջին օրը։ 45 Մարգարէներուն մէջ գրուած է.
 “Բոլորն ալ սորված պիտի ըլլան Աստուծմէ”։ Ո՛վ
 որ կը լսէ Յօրմէն ու կը սորվի՝ ինծի կու գայ։ 46 Ո՛չ
 մէկը տեսած է Յայրը, բացի անկէ՝ որ Աստուծմէ
 է. անիկա՛ն տեսած է Յայրը։ 47 Ճշմարտապէս,
 ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ա՛ն որ կը
 հաւատայ ինծի՝ ունի յաւիտենական կեանքը”։
 (aiōnios g166) 48 Ես եմ կեանքի հացը։ 49 Ձեր հայրերը
 կերան մանանան անապատին մէջ, բայց մեռան։
 50 Ա՛յս է այն հացը՝ որ կ'իջնէ երկինքէն, որպէսզի
 եթէ մէկը ուտէ ասկէ՝ չմեռնի։ 51 Ես եմ կենարար
 հացը՝ որ իջայ երկինքէն։ Եթէ մէկը ուտէ այս
 հացէն՝ պիտի ապրի յաւիտեան. եւ այն հացը
 որ ես պիտի տամ՝ իմ մարմինս է, որ պիտի
 տամ աշխարհի կեանքին համար»։ (aiōn g165) 52
 Ուստի Յրեաները կը վիճէին իրարու հետ եւ
 կ'ըսէին. «Ինչպէս ասիկա կրնայ տալ մեզի իր
 մարմինը՝ ուտելու»։ 53 Իսկ Յիսուս ըսաւ անոնց.
 «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ
 ձեզի. “Եթէ չուտէք մարդու Որդիին մարմինը ու
 չխմէք անոր արիւնը, կեանքը չէք ունենար ձեր
 մէջ”։ 54 Ո՛վ որ կ'ուտէ իմ մարմինս եւ կը խմէ
 իմ արիւնս՝ ունի յաւիտենական կեանքը, ու ես

պիտի յարուցանեն զայն՝ վերջին օրը. (aiōnios g166) 55
 որովհետեւ իմ մարմինս ճշմարտապես կերակուր
 է, եւ իմ արիւնս՝ ճշմարտապես խմելիք: 56 Ա՛ն որ
 կ'ուտէ իմ մարմինս ու կը խմէ իմ արիւնս՝ անիկա
 կը բնակի իմ մէջս, եւ ես՝ անոր մէջ: 57 Ինչպէս
 ապրող Հայրը դրկեց զիս, ու ես կ'ապրիմ Հօրը
 միջոցով, այնպէս ալ ան որ կ'ուտէ զիս՝ ինք ալ
 պիտի ապրի ինձմով: 58 Ա՛յս է այն հացը՝ որ իջած
 է երկինքէն: Ա՛ն որ ուտէ այս հացը՝ պիտի ապրի
 յաւիտեան. ոչ թէ ձեր հայրերուն պէս, որոնք կերան
 մանանան՝ բայց մեռան»: (aiōn g165) 59 Այս բաները
 խօսեցաւ ժողովարանին մէջ, երբ կը սորվեցնէր
 Կափառնայումի մէջ: 60 Իսկ աշակերտներէն
 շատերը՝ երբ լսեցին՝ ըսին. «Խիստ է այդ խօսքը, ո՞վ
 կրնայ մտիկ ընել զայն»: 61 Երբ Յիսուս ինքնիրեն
 հասկցաւ թէ իր աշակերտները կը տրտնջեն ատոր
 համար, ըսաւ անոնց. «Ատիկա կը գայթակղեցնէ՞
 ձեզ: 62 Հապա ի՞նչ պիտի մտածէք, եթէ տեսնէք
 մարդու Որդիին բարձրանալը հոն՝ ուր նախապէս
 էր: 63 Հոգին է կեանք տուողը. մարմինը օգնու
 մը չունի: Այն խօսքերը որ կ'ըսեմ ձեզի՝ Հոգի ու
 կեանք են: 64 Բայց ձեր մէջ կան ոմանք՝ որ չեն
 հաւատար»: Որովհետեւ Յիսուս սկիզբէն գիտէր
 թէ որոնք են անոնք՝ որ չեն հաւատար, եւ ո՞վ է ան՝
 որ պիտի մատնէ զինք: 65 Ու ըսաւ. «Ասոր համար
 ըսի ձեզի. “Ո՛չ մէկը կրնայ գալ ինձի, եթէ իմ Հօրմէս
 տրուած չըլլայ անոր”»: 66 Այս պատճառով իր
 աշակերտներէն շատեր հեռացան, եւ ալչէին շրջեր
 իրեն հետ: 67 Ուստի Յիսուս ըսաւ տասներկուքին.

«Միթե դո՞ւք ալ կ'ուզէք երթալ»: **68** Սիմոն Պետրոս պատասխանեց անոր. «Տէր, որո՞նք պիտի երթանք. դուն ունիս յաւիտենական կեանքի խօսքերը: (aiōnios g166) **69** Մենք հաւատացինք ու գիտցանք թէ դուն ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին»: **70** Յիսուս պատասխանեց անոնց. «Ես չընտրեցի՞ ձեզ՝ տասներկուքդ. բայց ձեզմէ մէկը չարախօս է»: **71** Ան կը խօսէր Իսկարիովտացի Սիմոնեան Յուդայի մասին, որովհետեւ անիկա էր որ պիտի մատներ զինք, թէպէտ տասներկուքէն մէկն էր:

7 Ասկէ ետք Յիսուս կը շրջէր Գալիլեայի մէջ, քանի որ չէր ուզեր շրջիլ Յրեաստանի մէջ, որովհետեւ Յրեաները կը ջանային սպաննել զինք: **2** Յրեաներուն Տաղաւարներու տօնը մօտ էր. **3** ուստի իր եղբայրները ըսին իրեն. «Մեկնէ՛ ասկէ ու գնա՛ Յրեաստան, որպէսզի աշակերտներդ ալ տեսնեն քու գործերդ՝ որ կ'ընես: **4** Որովհետեւ ոչ մէկը գաղտնի կ'ընէ որեւէ բան, երբ կը ջանայ բացորոշապէս ճանչցնել ինքզինք. եթէ կ'ընես այդ բաները, դուն քեզ բացայայտէ՛ աշխարհի»: **5** Քանի որ իր եղբայրներն ալ չէին հաւատար իրեն: **6** Յիսուս ըսաւ անոնց. «Իմ ժամանակս դեռ հասած չէ, բայց ձեր ժամանակը պատրաստ է ամէն ատեն: **7** Աշխարհը չի կրնար ատել ձեզ, բայց կ'ատէ զիս, որովհետեւ ես կը վկայեմ անոր մասին թէ իր գործերը չար են: **8** Դո՛ւք բարձրացէք այս տօնին. ես (դեռ) չեմ բարձրանար այս տօնին, որովհետեւ ժամանակս դեռ լրացած չէ»: **9** Ասիկա ըսելով անոնց՝ ինք մնաց Գալիլեա:

10 Բայց երբ իր եղբայրները բարձրացան, ինքն
 ալ բարձրացաւ տօնին. ոչ թէ բացայայտօրէն,
 հապա՝ գաղտնի: **11** Իսկ Յրեաները կը փնտռէին
 զինք տօնին ատենը, ու կ'ըսէին. «Ո՛ր է ան»:
12 Բազմութեան մէջ շատ տրտունջ կար անոր
 մասին: Ոմանք կ'ըսէին. «Բարի մարդ է»: Ուրիշներ
 կ'ըսէին. «Ո՛չ, այլ ընդհակառակը՝ բազմութիւնը կը
 մոլորեցնէ»: **13** Սակայն ոչ մէկը բացորոշապէս
 կը խօսէր անոր մասին՝ Յրեաներու վախէն: **14**
 Իսկ երբ տօնը կէս եղաւ՝ Յիսուս բարձրացաւ
 տաճարը, եւ կը սորվեցներ: **15** Յրեաները կը
 զարմանային ու կ'ըսէին. «Ինչպէս ասիկա գիտէ
 Գիրքերը, քանի բնաւ սորված չէ զանոնք»: **16**
 Յիսուս պատասխանեց անոնց. «Իմ ուսուցումս՝
 իմս չէ, հապա զիս դրկողինն է: **17** Եթէ մէկը
 ուզէ գործադրել անոր կամքը, պիտի գիտնայ
 թէ այս ուսուցումը Աստուծմէ՛ է, թէ ես ինձմէ
 կը խօսիմ: **18** Ա՛ն որ կը խօսի ինքնիրմէ՝ կը
 փնտռէ իր իսկ փառքը, բայց ան որ կը փնտռէ
 զինք դրկողին փառքը՝ անիկա՛ ճշմարտախօս է,
 եւ անոր քով անիրաւութիւն չկայ: **19** Մովսէս
 չտուա՛ւ ձեզի Օրէնքը. բայց ձեզմէ ոչ մէկը կը
 գործադրէ Օրէնքը: **20** Ինչո՛ւ կը ջանաք սպաննել
 զիս»: Բազմութիւնը պատասխանեց. «Դե՛ւ կայ
 քու ներսդ. ո՞վ կը ջանայ սպաննել քեզ»: **21**
 Յիսուս պատասխանեց անոնց. «Գործ մը ըրի, եւ
 բոլորդ ալ կը զարմանաք: **22** Մովսէս տուաւ ձեզի
 թլփատութիւնը, (որ ոչ թէ Մովսէսէ էր՝ հապա
 նախնիքներէն,) ու մարդ կը թլփատէք Շաբաթ օրը:

23 Եթէ մարդ կը թլփատուի Շաբաթ օրը՝ որպէսզի Մովսէսի Օրէնքը չլուծուի, կը դառնանամք ինծի դէմ՝ որ ամբողջ մարդ մը բժշկեցի Շաբաթ օրը: **24** Մի՞ դատեք երեւոյթին համեմատ, հապա դատեցէք արդարութեանը»: **25** Ուստի Երուսաղեմացիներէն ոմանք կ'ըսէին. «Ասիկա չէ՞ ան՝ որ կը ջանան սպաննել: **26** Ահա՛ համարձակօրէն կը խօսի, ու ոչինչ կ'ըսեն անոր. միթէ պետերը գիտցան թէ ճշմարտապէս այս է Քրիստոսը: **27** Սակայն մենք գիտէնք թէ ասիկա ուրկէ՛ է. բայց երբ Քրիստոս գայ, ո՛չ մէկը պիտի գիտնայ անոր ուրկէ՛ ըլլալը»: **28** Իսկ Յիսուս՝ սորվեցնելու ատեն՝ տաճարին մէջ աղաղակեց. «Չի՛ս ալ կը ճանչնաք, եւ ուրկէ՛ ըլլալս ալ գիտէք: Ես ինձմէ եկած չեմ, հապա ան որ դրկեց զիս՝ ճշմարիտ է: Դուք չէք ճանչնար զայն. **29** բայց ես կը ճանչնամ զայն, որովհետեւ ես անկէ եմ, եւ ան դրկեց զիս»: **30** Ուստի կը ջանային ձերբակալել զինք. բայց ո՛չ մէկը ձեռք բարձրացուց իր վրայ, որովհետեւ իր ժամը դեռ հասած չէր: **31** Բազմութենէն շատեր հաւատացին իրեն, ու կ'ըսէին. «Երբ Քրիստոս գայ, միթէ աւելի՞ նշաններ պիտի ընէ՝ քան անոնք որ ասիկա ըրաւ»: **32** Փարիսեցիները լսեցին բազմութեան այս տրտունջը անոր մասին. եւ Փարիսեցիներն ու քահանայապետները սպասաւորներ դրկեցին՝ որպէսզի ձերբակալեն զայն: **33** Իսկ Յիսուս ըսաւ. «Քիչ մը ժամանակ ալ ձեզի հետ եմ, ապա կ'երթամ անոր՝ որ դրկեց զիս: **34** Դուք պիտի փնտռէք զիս՝ բայց պիտի չգտնէք, եւ չէք կրնար գալ իմ

եղած տեղս»։ 35 Ուրեմն Հրեաները ըսին իրարու.
 «Ո՛ր ախտի երթայ, որ մենք ախտի չգտնենք զինք.
 միթէ հեթանոսներուն մէջ ցրուածներո՞ւն ախտի
 երթայ, եւ հեթանոսներո՞ւն ախտի սորվեցնէ։ 36
 Ինչ է այն խօսքը՝ որ ըսաւ. “Դուք ախտի փնտռէք
 զիս բայց ախտի չգտնէք, եւ չէք կրնար գալ իմ
 եղած տեղս”»։ 37 Տօնին վերջին մեծ օրը՝ Յիսուս
 կայնած էր ու կ’աղաղակէր. «Եթէ մէկը ծարաւ
 է, թող գայ ինծի եւ խմէ։ 38 Ա՛ն որ հաւատայ
 ինծի, կենարար ջուրի գետեր ախտի բխին անոր
 փորէն, ինչպէս Գիրքը կ’ըսէ»։ 39 Ասիկա ըսաւ
 Հոգին մասին՝ որ իրեն հաւատացողները ախտի
 ընդունէին. որովհետեւ Սուրբ Հոգին տրուած
 չէր տակաւին, քանի որ Յիսուս փառաւորուած
 չէր տակաւին։ 40 Բազմութենէն շատեր՝ երբ
 լսեցին այս խօսքը՝ կ’ըսէին. «Ճշմարտապէս
 այս է մարգարէն»։ 41 Ուրիշներ կ’ըսէին. «Ա՛յս
 է Քրիստոսը»։ Ուրիշներ ալ կ’ըսէին. «Միթէ
 Քրիստոս Գալիլեայէն ախտի գայ։ 42 Միթէ Գիրքը
 չ’ըսեր թէ Քրիստոս ախտի գայ Դաւիթի զարմէն
 ու Դաւիթի եղած զիւղէն՝ Բեթլեհէմէն»։ 43
 Ուստի պառակտում եղաւ բազմութեան մէջ՝
 անոր պատճառով։ 44 Անոնցմէ ոմանք ուզեցին
 ձերբակալել զայն, բայց ոչ մէկը ձեռք բարձրացուց
 անոր վրայ։ 45 Ուստի սպասաւորները եկան
 քահանայապետներուն եւ Փարիսեցիներուն
 քով, որոնք ըսին անոնց. «Ինչո՞ւ հոս չբերիք
 զայն»։ 46 Սպասաւորները պատասխանեցին.
 «Ո՛չ մէկը երբեք խօսած է այս մարդուն պէս»։ 47

Ուստի Փարիսեցիները պատասխանեցին անոնց.
«Միթե դո՛ւք ալ մոլորեցաք: 48 Պետերէն կամ
Փարիսեցիներէն մէկը հաւատաց անոր. 49 բայց
այս բազմութիւնը՝ որ չի գիտեր Օրէնքը՝ անիծեալ
է»: 50 Նիկողեմոս ըսաւ անոնց, (որ նախապէս՝
գիշերուան մէջ գացեր էր իրեն, եւ անոնցմէ մէկն
էր.) 51 «Միթե մեր Օրէնքը կը դատէ մարդ մը,
երթէ նախապէս չլսէ զայն, եւ չգիտնայ թէ ի՞նչ
կ'ընէ»: 52 Պատասխանեցին անոր. «Միթե դո՛ւն
ալ Գալիլեայէն ես. զնո՛ւ ու նայէ, որ Գալիլեայէն
մարգարէ չ'ելլեր»: 53 Ապա իւրաքանչիւրը գնաց
իր տունը:

8 Յիսուս գնաց Ձիթենիներու լեռը: 2 Երբ
առտուն կանուխ դարձեալ եկաւ տաճարը՝
ամբողջ ժողովուրդը կու գար իրեն, եւ ինք՝
նստած կը սորվեցնէր անոնց: 3 Դպիրներն
ու Փարիսեցիները բերին անոր շնութեան մէջ
բռնուած կին մը, եւ մէջտեղ կայնեցնելով զայն՝
4 ըսին իրեն. «Վարդապէ՛տ, այս կինը շնութեան
մէջ բռնուեցաւ՝ այս մեղքը գործած ատեն: 5
Օրէնքին մէջ՝ Մովսէս պատուիրեց մեզի քարկոծել
այսպիսիները. իսկ դո՛ւն ի՞նչ կ'ըսես»: 6 Ասիկա
կ'ըսէին՝ զայն փորձելու համար, որպէսզի առիթ
ունենան զինք ամբաստանելու. բայց Յիսուս՝
վար ծռած՝ մատով կը գրէր գետինին վրայ: 7
Սակայն երբ շարունակեցին հարցնել իրեն, վեր
նայեցաւ եւ ըսաւ անոնց. «Ձեզմէ անմեղ եղողը՝
առաջ ինք թող քար նետէ ատոր վրայ»: 8 Ու
դարձեալ վար ծռելով՝ գետինին վրայ կը գրէր:

9 Իսկ անոնք՝ լսելով ասիկա եւ կշտամբուելով իրենց խղճմտանքէն՝ դուրս կ'ելլէին մէկ առ մէկ, ամենէն տարեցներէն սկսեալ՝ մինչեւ յետինները. ու Յիսուս մինակ մնաց, եւ կինը՝ մէջտեղ կայնած: **10** Յիսուս վեր նայելով ու կնոջմէն զատ ոչ մէկը տեսնելով՝ ըսաւ անոր. «Կին, ո՛ր ես անոնք՝ որ կ'ամբաստանէին քեզ. ո՛չ մէկը դատապարտեց քեզ»: **11** Ան ալ ըսաւ. «Ո՛չ մէկը, Տէր»: Յիսուս ըսաւ անոր. «Ես ալ չեմ դատապարտեր քեզ. գնա՛, եւ ասկէ ետք ալ մի՛ մեղանչեր»: **12** Յիսուս դարձեալ խօսեցաւ անոնց եւ ըսաւ. «Ես եմ աշխարհի յոյսը. ան որ կը հետեւի ինծի՝ պիտի չքալէ խաւարի մէջ, հապա պիտի ունենայ կեանքի յոյսը»: **13** Իսկ Փարիսեցիները ըսին անոր. «Դո՛ւն կը վկայես քու մասիդ. քու վկայութիւնդ ճշմարիտ չէ»: **14** Յիսուս պատասխանեց անոնց. «Թեպէտ էս կը վկայեմ իմ մասիս, իմ վկայութիւնս ճշմարիտ է, որովհետեւ զիտեմ ուրկէ՛ եկայ եւ ո՛ր կ'երթամ. իսկ դուք չէք զիտեր ուրկէ՛ կու գամ կամ ո՛ր կ'երթամ: **15** Դուք կը դատէք մարմինին համաձայն. ես ո՛չ մէկը կը դատեմ: **16** Նոյնիսկ եթէ դատեմ՝ իմ դատաստանս ճշմարիտ է, որովհետեւ ես մինակ չեմ, հապա՝ էս եւ Հայրը՝ որ ղրկեց զիս: **17** Ձեր Օրէնքին մէջ ալ գրուած է թէ երկու մարդու վկայութիւնը ճշմարիտ է: **18** Ես եմ՝ որ կը վկայեմ իմ մասիս, ու Հայրն ալ՝ որ ղրկեց զիս՝ կը վկայէ իմ մասիս»: **19** Ուստի ըսին անոր. «Ո՛ր է քու Հայրդ»: Յիսուս պատասխանեց. «Ո՛չ զիս կը ճանչնաք, եւ ո՛չ՝ իմ Հայրս. եթէ ճանչնայիք զիս, պիտի ճանչնայիք

նաեւ իմ Հայրս»: 20 Յիսուս ըսաւ այս խօսքերը՝
 գանձատուօնը, երբ կը սորվեցնէր տաճարին մէջ,
 ու ոչ մէկը ձերբակալեց զայն, որովհետեւ դեռ
 անոր ժամը հասած չէր: 21 Յիսուս դարձեալ ըսաւ
 անոնց. «Ես կ'երթամ՝ ու պիտի փնտռեմ զիս, եւ
 պիտի մեռնիք ձեր մեղքերուն մէջ. ո՛ր ես կ'երթամ
 ՝ դուք չէք կրնար գալ»: 22 Ուրեմն Հրեաները
 կ'ըսէին. «Միթէ ինքզինք պիտի սպաննէ, քանի որ
 կ'ըսէ. “Ո՛ր ես կ'երթամ՝ դուք չէք կրնար գալ”»:
 23 Ըսաւ անոնց. «Դուք վարէն էք, ես վերէն եմ.
 դուք այս աշխարհէն էք, ես այս աշխարհէն չեմ: 24
 Ուստի ըսի ձեզի թէ պիտի մեռնիք ձեր մեղքերուն
 մէջ. արդարեւ եթէ չհաւատաք թէ ես եմ ՝ պիտի
 մեռնիք ձեր մեղքերուն մէջ»: 25 Ուրեմն ըսին
 անոր. «Դուն ո՞վ ես»: Յիսուս ըսաւ անոնց. «Ինչ
 որ սկիզբէն կ'ըսեմ ձեզի: 26 Շատ բաներ ունիմ
 ձեր մասին խօսելու եւ դատելու. բայց ան որ
 դրկեց զիս՝ ճշմարտախօս է, ու ես ինչ որ լսեցի
 իրմէ՝ զայն կը խօսիմ աշխարհի մէջ»: 27 Անոնք
 չհասկցան թէ Հօրը մասին կը խօսէր իրենց: 28
 Ուստի Յիսուս ըսաւ անոնց. «Երբ բարձրացնէք
 մարդու Որդին, այն ատեն պիտի գիտնաք թէ ես
 եմ, եւ թէ ես ինձմէ ոչինչ կ'ընեմ, հապա կը խօսիմ
 այս բաները՝ ինչպէս Հայրը սորվեցուց ինծի: 29 Ու
 զիս դրկողը ինծի հետ է. Հայրը մինակ չթողուց զիս,
 որովհետեւ ես ամէն ատեն կ'ընեմ իրեն հաճելի
 եղած բաները»: 30 Երբ այսպէս խօսեցաւ՝ շատ
 մարդիկ հաւատացին իրեն: 31 Ուստի Յիսուս ըսաւ
 իրեն հաւատացող Հրեաներուն. «Եթէ իմ խօսքիս

մեջ մնաք, ճշմարտապէս իմ աշակերտներս կ'ըլլաք. 32 ու ճշմարտութիւնը պիտի գիտնաք, եւ այդ ճշմարտութիւնը պիտի ազատէ ձեզ»: 33 Պատասխանեցին իրեն. «Մենք Աբրահամի զարմն ենք, ու երբեք ստրուկ չենք եղած ոեւէ մէկուն: Դուն ինչպէս կ'ըսես. “Ազատ պիտի ըլլաք”»: 34 Յիսուս պատասխանեց անոնց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ մեղք կը գործէ, անիկա մեղքին ստրուկն է”»: 35 Եւ ստրուկը տան մէջ յաւիտեան չի կենար, բայց որդին յաւիտեան կը կենայ: (aiðn g165) 36 Ուրեմն եթէ Որդին ազատէ ձեզ, իրապէս ազատ պիտի ըլլաք: 37 Գիտեմ թէ Աբրահամի զարմն էք. բայց կը ջանաք սպաննել զիս, որովհետեւ իմ խօսքս տեղ չունի ձեր մէջ: 38 Ես ինչ որ տեսայ իմ Զօրս քով՝ զայն կը խօսիմ, ու դուք ալ ինչ որ տեսաք ձեր հօր քով՝ զայն կ'ընէք»: 39 Պատասխանեցին անոր. «Մեր հայրը՝ Աբրահամն է»: Յիսուս ըսաւ անոնց. «Եթէ Աբրահամի որդիները ըլլայիք, Աբրահամի գործերը պիտի ընէիք: 40 Բայց հիմա կը ջանաք սպաննել զիս, այնպիսի մարդ մը՝ որ խօսեցաւ ձեզի ճշմարտութիւնը, որ լսեցի Աստուծմէ. Աբրահամ չըրաւ այդ բանը: 41 Դուք կ'ընէք ձեր հօր գործերը»: Անոնք ալ ըսին անոր. «Մենք պոռնկութենէ ծնած չենք. մենք ունինք մէկ Զայր, որ Աստուած է»: 42 Յիսուս ըսաւ անոնց. «Եթէ Աստուած ըլլար ձեր Զայրը՝ պիտի սիրէիք զիս, որովհետեւ ես Աստուծմէ ելայ ու եկայ. ոչ թէ ես ինձմէ եկայ, հապա ինք որկեց զիս: 43 Ինչո՞ւ չէք հասկնար իմ

խօսածս. քանի որ չէք կրնար մտիկ ընել իմ խօսքս:

44 Դուք ձեր հօրմեն՝ Չարախօսեն էք, եւ կ'ուզէք ձեր հօր ցանկութիւնները գործադրել. ան սկիզբէն մարդասպան էր, ու ճշմարտութեան մէջ չկեցաւ՝ որովհետեւ անոր մէջ ճշմարտութիւն չկայ: Երբ ան սուտ խօսի՝ կը խօսի բռն իր էութենէն, քանի որ ան ստախօս է՝ եւ սուտին հայրը: 45 Բայց որովհետեւ ես կը խօսիմ ճշմարտութիւնը՝ չէք հաւատար ինծի: 46 Ձեզմէ ղվ կրնայ կշտամբել զիս՝ մեղքի համար. իսկ եթէ ես կը խօսիմ ճշմարտութիւնը, ինչո՞ւ չէք հաւատար ինծի: 47 Ա՛ն որ Աստուծոմէ է՝ մտիկ կ'ընէ Աստուծոյ խօսքերը. ուստի դուք մտիկ չէք ըներ, քանի որ Աստուծոմէ չէք»: 48 Զրեաները պատասխանեցին անոր. «Մենք ճիշդ չէնք ըսեր թէ դուն Սամարացի ես, ու դեւ կայ քու ներսդ»: 49 Յիսուս պատասխանեց. «Իմ ներսս դեւ չկայ, հապա ես կը պատուեմ իմ Զայրս. բայց դուք՝ կ'անպատուէք զիս: 50 Իսկ ես չեմ փնտռեր իմ փառքս: Կայ մէկը՝ որ կը փնտռէ ու կը դատէ: 51 Եղմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Եթէ մէկը պահէ իմ խօսքս, մահ պիտի չտեսնէ յաւիտեան”»: (aiṯn g165) 52 Ուստի Զրեաները ըսին անոր. «Զիմա գիտցանք թէ դեւ կայ քու ներսդ: Աբրահամ մեռաւ, ու մարգարէներն ալ, իսկ դուն կ'ըսես. “Եթէ մէկը պահէ իմ խօսքս՝ մահ պիտի չհամտեսէ յաւիտեան”»: (aiṯn g165) 53 Միթէ դուն աւելի մեծ ես՝ քան մեր հայրը՝ Աբրահամ, որ մեռաւ, ու մարգարէներն ալ մեռան. դուն քեզ ղվ կ'ընես»: 54 Յիսուս պատասխանեց. «Եթէ քս

զիս փառաւորեմ՝ իմ փառքս ոչինչ է: Իմ Հայրս է՝
 որ կը փառաւորէ զիս, որուն համար դուք կ'ըսէք
 թէ “մեր Աստուածն է”, 55 բայց չէք ճանչնար
 զայն: Իսկ ես կը ճանչնամ զայն, ու եթէ ըսէի թէ
 “չեմ ճանչնար զայն”, ձեզի պէս ստախօս կ'ըլլայի.
 մինչդեռ ես կը ճանչնամ զայն, եւ կը պահեմ
 անոր խօսքը: 56 Ձեր հայրը՝ Աբրահամ՝ ցանկաց
 տեսնել իմ օրս, ու տեսաւ եւ ցնծաց»: 57 Իսկ
 Հրեաները ըսին անոր. «Դուն տակաւին յիսուն
 տարեկան չես. Աբրահամն ալ տեսար»: 58 Յիսուս
 ըսաւ անոնց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը
 յայտարարեմ ձեզի. “Աբրահամի ըլլալէն առաջ՝
 ես եմ”»: 59 Ուստի քարեր վերցուցին՝ որպէսզի
 նետեն անոր վրայ. բայց Յիսուս ինքզինք ծածկեց
 անոնց աչքերէն, ու անոնց մէջէն անցնելով՝ դուրս
 ելաւ տաճարէն, եւ այսպէս գնաց:

9 Երբ կ'անցնէր՝ տեսաւ մարդ մը, կոյր ծնած:
 2 Իր աշակերտները հարցուցին իրեն. «Ռաբբի,
 ի՞նչ մեղանչեց, ասիկա՞ թէ անոր ծնողները, որ
 ան կոյր ծնաւ»: 3 Յիսուս պատասխանեց. «Ո՛չ
 ասիկա մեղանչած է, ոչ ալ անոր ծնողները, հապա՛
 որպէսզի Աստուծոյ գործերը յայտնաբերուին իր
 վրայ: 4 Մինչ ցերեկ է, պէտք է որ գործեմ զիս
 դրկողին գործերը. գիշերը կու գայ, երբ ոչ մէկը
 կրնայ գործել: 5 Այնքան ատեն որ ես աշխարհի մէջ
 եմ՝ աշխարհի լոյսն եմ»: 6 Երբ ըսաւ ասիկա՝ թքնեց
 գետին, կաւ շինեց թուփով, այդ կաւով ծեփեց
 կոյրին աչքերը 7 եւ ըսաւ անոր. «Գնա՛, լուացու՛
 Սելովամի աւագանին մէջ» (որ կը թարգմանուի՝

դրկուած): Ան ալ գնաց եւ լուացուեցաւ, եկաւ՝ ու կը տեսներ: **8** Իսկ դրացիները, եւ անոնք որ նախապէս տեսած էին զինք՝ թէ կոյր էր, կ'ըսէին. «Ասիկա չէր ան՝ որ կը նստէր ու կը մուրար»: Ոմանք կ'ըսէին. «Անիկա է»: **9** Ուրիշներ կ'ըսէին. «Անոր նման մէկն է»: Իսկ ինք կ'ըսէր. «Ես եմ»: **10** Ուրեմն ըսին իրեն. «Հապա ինչպէս աչքերդ բացուեցան»: **11** Ինք պատասխանեց. «Յիսուս կոչուած մարդ մը կաւ շինեց, ծեփեց աչքերս ու ըսաւ ինծի. “Գնա՛ Սելովամի աւագանը եւ լուացու՛”»: Ես ալ գացի, լուացուեցայ, ու կը տեսնեմ»: **12** Ուստի ըսին իրեն. «Ո՛ր է ան»: Ըսաւ անոնց. «Զեմ գիտեր»: **13** Փարիսեցիներուն տարին զայն՝ որ ժամանակին կոյր էր, **14** ու Շաբաթ օր էր՝ երբ Յիսուս շինեց կաւը եւ բացաւ անոր աչքերը: **15** Ուստի Փարիսեցիներն ալ դարձեալ կը հարցնէին իրեն թէ ինչպէս աչքերը բացուեցան՝: Ան ալ ըսաւ անոնց. «Կաւ դրաւ աչքերուս վրայ, ու լուացուեցայ եւ կը տեսնեմ»: **16** Ուստի Փարիսեցիներէն ոմանք կ'ըսէին. «Այդ մարդը Աստուծոմէ չէ, որովհետեւ չի պահեր Շաբաթ օրը»: Ուրիշներ կ'ըսէին. «Մեղաւոր մարդ մը ինչպէս կրնայ ընել այսպիսի նշաններ»: Եւ պառակտում եղաւ անոնց մէջ: **17** Դարձեալ ըսին կոյրին. «Դուն ինչ կ'ըսես անոր մասին՝ որ բացաւ աչքերդ»: Ան ալ ըսաւ. «Մարգարէ մըն է»: **18** Իսկ Հրեաները չէին հաւատար թէ ան կոյր էր եւ աչքերը բացուեցան, մինչեւ որ կանչեցին այդ աչքերը բացուած մարդուն ծնողները, **19** ու հարցուցին անոնց. «Ա՛յս է ձեր որդին, որուն մասին դուք

կ'ըսէք թէ կոյր ծնաւ. հապա ինչպէս հիմա կը տեսնէ»: 20 Անոր ծնողները պատասխանեցին անոնց. «Գիտենք թէ այս է մեր որդին, եւ թէ ինք կոյր ծնաւ: 21 Բայց հիմա ինչ կերպով կը տեսնէ՝ չենք գիտեր, կամ թէ ո՛վ բացաւ ատոր աչքերը՝ մենք չենք գիտեր. ինք չափահաս է, իրեն հարցուցէք, ինք թող խօսի իր մասին»: 22 Անոր ծնողները ըսին ասիկա, որովհետեւ կը վախնային Զրեաներէն. քանի որ Զրեաները արդէն միաձայնած էին, որ եթէ մէկը դաւանի զայն որպէս Քրիստոս՝ վռնտուի ժողովարանէն: 23 Ուստի անոր ծնողները ըսին. «Ինք չափահաս է, իրեն հարցուցէք»: 24 Ուրեմն կրկին կանչեցին այդ մարդը՝ որ կոյր էր, եւ ըսին անոր. «Փանք տուր Աստուծոյ. մենք գիտենք թէ այդ մարդը մեղաւոր է»: 25 Ան ալ պատասխանեց. «Չեմ գիտեր թէ մեղաւոր է՝ թէ ոչ. մէկ բան գիտեմ, թէ կոյր էի՝ ու հիմա կը տեսնեմ»: 26 Դարձեալ ըսին անոր. «Ինչ ըրաւ քեզի, ինչպէս բացաւ աչքերդ»: 27 Պատասխանեց անոնց. «Արդէն ըսի ձեզի, ու չլսեցիք. ինչո՞ւ կ'ուզէք դարձեալ լսել. միթէ դո՛ւք ալ կ'ուզէք ըլլալ անոր աշակերտները»: 28 Իսկ անոնք հեզնելով զայն՝ ըսին. «Դո՛ւն ես անոր աշակերտը, իսկ մենք՝ Մովսէսի աշակերտներն ենք: 29 Մենք գիտենք թէ Աստուած խօսեցաւ Մովսէսի. բայց չենք գիտեր թէ ասիկա ուրկէ՞ է»: 30 Մարդը պատասխանեց անոնց. «Ա՛յդ է զարմանալին, որ դուք չէք գիտեր թէ ուրկէ՞ է ան, թեպէտ ինք բացաւ իմ աչքերս: 31 Գիտենք թէ Աստուած մտիկ չ'ըներ մեղաւորներուն. բայց եթէ մէկը աստուածապաշտ

ըլլայ եւ անոր կամքը գործադրէ՝ մտիկ կ'ընէ անոր: **32** Դարերու սկիզբէն ի վեր լսուած չէ, որ մէկը բացած ըլլայ ծնունդով կոյրի մը աչքերը: (aiðn g165) **33** Եթէ անիկա Աստուծմէ չըլլար, ոչինչ կրնար ընել»: **34** Պատասխանեցին անոր. «Դուն ամբողջովին մեղքերու մէջ ծնած ես, ու մեզի կը սորվեցնես», եւ վտարեցին զայն: **35** Յիսուս լսեց թէ վտարեցին զայն. երբ գտաւ զայն՝ ըսաւ անոր. «Դուն կը հաւատամ Աստուծոյ Որդիին»: **36** Ան պատասխանեց. «Տէր, ո՞վ է՝ որ հաւատամ անոր»: **37** Յիսուս ըսաւ անոր. «Թէ տեսար զայն, թէ ալ ինքն է քեզի հետ խօսողը»: **38** Ան ալ ըսաւ. «Կը հաւատամ, Տէր», ու երկրպագեց անոր: **39** Յիսուս ըսաւ. «Ես այս աշխարհը եկայ՝ դատաստանի համար, որպէսզի չտեսնողները՝ տեսնեն, իսկ տեսնողները՝ կուրանան»: **40** Փարիսեցիներէն ոմանք, որ իրեն հետ էին, լսելով ասիկա՝ ըսին իրեն. «Միթէ մենք ալ կոյր ենք»: **41** Յիսուս ըսաւ անոնց. «Եթէ կոյր ըլլայիք՝ մեղք չէիք ունենար. բայց հիմա կ'ըսէք. “Կը տեսնենք”. ուրեմն ձեր մեղքը կը մնայ ձեր վրայ»:

10 «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ա՛ն որ դռնէն չի մտներ ոչխարներուն բակը՝ հապա ուրիշ տեղէ կը բարձրանայ, անիկա գող եւ աւազակ է. 2 բայց ան որ դռնէն կը մտնէ՝ ոչխարներուն հովիւն է”»: **3** Դռնապանը կը բանայ անոր, եւ ոչխարները կը լսեն անոր ձայնը. իր ոչխարները կը կանչէ իրենց անունով ու դուրս կը հանէ զանոնք:

4 Երբ հանէ իր ոչխարները՝ կ'երթայ անոնց առջեւէն, ու ոչխարները կը հետեւին իրեն՝ որովհետեւ կը ճանչնան իր ձայնը: 5 Սակայն չեն հետեւիր օտարի մը՝ հապա կը փախչին անկէ, որովհետեւ չեն ճանչնար օտարներու ձայնը»: 6 Յիսուս ըսաւ անոնց այս առակը, բայց անոնք չէին հասկնար թէ ինչ էր՝ որ կը խօսէր իրենց: 7 Ուրեմն Յիսուս դարձեալ ըսաւ անոնց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ես եմ ոչխարներուն դուռը”»: 8 Բոլոր անոնք՝ որ եկան ինծմէ առաջ, գող եւ աւազակ էին, բայց ոչխարները մտիկ չըրին անոնց: 9 “Ես եմ դուռը”. եթէ մէկը ներս մտնէ ինծմէ՝ պիտի փրկուի. պիտի մտնէ ու ելլէ, եւ արօտ գտնէ: 10 Գողը ուրիշ բանի համար չի գար, բայց միայն՝ գողնալու, սպաննելու եւ կորսնցնելու համար: Ես եկայ որ կեանք ունենան, եւ ճոխութեամբ ունենան: 11 “Ես եմ բարի հովիւը”. բարի հովիւը կ'ընծայէ իր անձը ոչխարներուն համար: 12 Բայց վարձկանը՝ որ հովիւ չէ եւ ոչխարները իր սեփականը չեն, երբ տեսնէ թէ գայլը կու գայ՝ կը թողու ոչխարները ու կը փախչի. եւ գայլը կը յափշտակէ ոչխարները ու կը ցրուէ զանոնք: 13 Եւ վարձկանը կը փախչի՝ որովհետեւ ինք վարձկան է, ու չի հոգար ոչխարները: 14 “Ես եմ բարի հովիւը”. կը ճանչնամ իմիններս ու կը ճանչցուիմ իմիններէս: 15 Ինչպէս Յայրը կը ճանչնայ զիս՝ ես ալ կը ճանչնամ Յայրը, եւ իմ անձս կ'ընծայեմ ոչխարներուն համար: 16 Ուրիշ ոչխարներ ալ

ունիմ՝ որոնք այս բակէն չեն. զանոնք ալ պետք է
 բերեմ. ու իմ ձայնս պիտի լսեն, եւ ըլլան մէկ հօտ ու
 մէկ հովիւ: 17 Իմ Հայրս կը սիրէ զիս՝ քանի որ ես իմ
 անձս կ'ընծայեմ, որպէսզի դարձեալ առնեմ զայն:
 18 Ո՛չ մէկը կ'առնէ զայն ինձմէ, հապա ես ինձմէ
 կ'ընծայեմ զայն: Իշխանութիւն ունիմ ընծայելու
 զայն, եւ իշխանութիւն ունիմ դարձեալ առնելու
 զայն. այս պատուէրը ստացայ իմ Հօրմէս»: 19 Այս
 խօսքերուն համար՝ դարձեալ պառակտում եղաւ
 Հրեաներուն մէջ: 20 Անոնցմէ շատեր կ'ըսէին.
 «Դէմ կայ ատոր մէջ, ու խելագարած է. ինչո՞ւ մտիկ
 կ'ընէք ատոր»: 21 Ուրիշներ կ'ըսէին. «Այս խօսքերը
 դիւահարի խօսքեր չեն. միթէ դելը կրնայ բանալ
 կոյրերուն աչքերը»: 22 Այդ ատեն Երուսաղէմի մէջ
 Նաւակատիքի տօնը կը կատարուէր՝, ու ձմեռ
 էր. 23 Յիսուս կը քալէր տաճարին մէջ՝ Սողոմոնի
 սրահը: 24 Ուստի Հրեաները շրջապատեցին զինք
 եւ ըսին իրեն. «Մինչեւ երբ պիտի մտատանջես
 մեզ. եթէ Քրիստոսը դո՞ւն ես՝ բացորոշապէս
 ըսէ՛ մեզի»: 25 Յիսուս պատասխանեց անոնց.
 «Ըսի՛ ձեզի, ու չէք հաւատար: Այն գործերը՝ որ ես
 կ'ընեմ իմ Հօրս անունով, անոնք կը վկայեն իմ
 մասիս: 26 Բայց դուք չէք հաւատար՝ որովհետեւ
 իմ ոչխարներես չէք, ինչպէս ըսի ձեզի՞»: 27 Իմ
 ոչխարներս կը լսեն իմ ձայնս, ես ալ կը ճանչնամ
 զանոնք, եւ կը հետեւին ինծի: 28 Ես կու տամ
 անոնց յաւիտենական կեանքը, ու յաւիտեան
 պիտի չկորսուին, եւ ո՛չ մէկը պիտի յափշտակէ
 զանոնք իմ ձեռքէս: (aiōn g165, aiōnios g166) 29 Իմ Հայրս՝

որ ինծի տուաւ զանոնք՝ բոլորէն մեծ է, ու ոչ մէկը կրնայ յափշտակել իմ Յօրս ձեռքէն: **30** Ես եւ Յայրը մէկ ենք»: **31** Ուստի Յրեաները դարձեալ քարեր վերցուցին՝ որպէսզի քարկոծեն զինք: **32** Յիսուս պատասխանեց անոնց. «Շատ քարի գործեր ցոյց տուի ձեզի՝ իմ Յօրմէս. անոնցմէ ո՞ր գործին համար կը քարկոծէք զիս»: **33** Յրեաները պատասխանեցին անոր. «Քեզ չենք քարկոծեր քարի գործի համար, հապա՛՝ հայիոյութեան համար. որովհետեւ դո՛ւն՝ որ մարդ ես, դո՛ւն քեզ Աստուած կ'ընես»: **34** Յիսուս պատասխանեց անոնց. «Միթէ ձեր Օրէնքին մէջ գրուած չ'է. “Ես ըսի. “Դուք աստուածներ էք””: **35** Եթէ աստուածներ կը կոչէ անոնք՝ որոնց տրուեցաւ Աստուծոյ խօսքը, (ու կարելի չ'է որ այդ գրուածը աւրուի,) **36** հապա զայն՝ որ Յայրը սրբացուց եւ աշխարհի դրկեց, դուք ինչպէս կ'ըսէք անոր. “Կը հայիոյեն”, որովհետեւ ըսի. “Աստուծոյ Որդի եմ”»: **37** Եթէ չեմ ըներ իմ Յօրս գործերը՝ մի՞ հաւատաք ինծի: **38** Իսկ եթէ կ'ընեմ, թէպէտ չէք հաւատար ինծի՝ զո՞նէ գործերո՞ւն հաւատացէք, որպէսզի զիտնաք եւ հաւատաք թէ Յայրը իմ մէջս է, ու ես՝ անոր մէջ»: **39** Դարձեալ կը ջանային ձերբակալել զայն. բայց զնաց անոնց ձեռքէն, **40** եւ դարձեալ մեկնեցաւ Յորդանանի միւս կողմը, այն տեղը՝ ուր Յովհաննէս նախապէս կը մկրտէր, ու մնաց հոն: **41** Շատեր զացին անոր եւ ըսին. «Իրա՛ւ Յովհաննէս նշանն մը չ'ըրաւ. **42** բայց ինչ որ

Յովհաննէս ըսաւ ասոր մասին՝ ամենը ճշմարիտ էր»։ Ու հոն շատեր հաւատացին անոր։

11 Մարիամի եւ անոր քրոջ՝ Մարթայի գիւղէն, Բեթանիայէն, Ղազարոս անունով մէկը հիւանդ էր։ **2** (Ասիկա այն Մարիամն էր՝ որ օծեց Տէրը օծանելիքով ու սրբեց անոր ոտքերը իր մազերով. անոր եղբայրը՝ Ղազարոս հիւանդ էր։) **3** Ուրեմն իր քոյրերը մարդ դրկեցին անոր եւ ըսին. «Տէր, ահա ան՝ որ դուն կը սիրես՝ հիւանդ է»։ **4** Երբ Յիսուս լսեց՝ ըսաւ. «Այս հիւանդութիւնը մահուան համար չէ՝ հապա Աստուծոյ փառքին համար, որպէսզի Աստուծոյ Որդին փառաւորուի անով»։ **5** Արդարեւ Յիսուս կը սիրէր Մարթան եւ անոր քոյրն ու Ղազարոսը։ **6** Ուրեմն երբ լսեց թէ հիւանդ է, եղած տեղը երկու օր ալ մնաց. **7** յետոյ ըսաւ աշակերտներուն. «Եկէ՛ք, դարձեալ Զրեաստան երթանք»։ **8** Աշակերտները ըսին իրեն. «Ռաբբի, Զրեաները հիմա կը փնտռէին քեզ՝ քարկոծելու համար, ու դմրձեալ հոն կ'երթաս»։ **9** Յիսուս պատասխանեց. «Օրը տասներկու ժամ չէ՛։ Եթէ մէկը ցերեկը քալէ՝ չի սայթաքիր, որովհետեւ այս աշխարհի լոյսը կը տեսնէ. **10** բայց եթէ մէկը գիշերուան մէջ քալէ՝ կը սայթաքի, որովհետեւ իրեն հետ լոյս չկայ»։ **11** Այս բաները խօսելէ ետք՝ ըսաւ անոնց. «Ղազարոս՝ մեր բարեկամը՝ քնացած է. բայց կ'երթամ՝ որպէսզի արթնցնեմ զայն»։ **12** Իր աշակերտները ըսին. «Տէր, եթէ քնացած է՝ պիտի առողջանայ»։ **13** Յիսուս կը խօսէր անոր մահուան մասին, բայց անոնք կը կարծէին թէ

քունով հանգստանալուն մասին կը խօսէր: **14** Այն ատեն Յիսուս բացորոշապէս ըսաւ անոնց. «Ղազարոս մեռաւ. **15** ու ես ուրախ եմ ձեզի համար՝ որ հոն չէի, որպէսզի դուք հաւատաք. բայց եկէ՛ք՝ երթանք անոր»: **16** Թովմաս, որ Երկուորեակ կը կոչուէր, ըսաւ աշակերտակիցներուն. «Մենք ալ երթանք՝ որպէսզի մեռնինք անոր հետ»: **17** Երբ Յիսուս եկաւ, գտաւ որ ան արդէն չորս օրէ ի վեր գերեզմանը դրուած էր: **18** Բերանիա Երուսաղէմի մօտ էր՝ տասնհինգ ասպարեզի չափ. **19** եւ Հրեաներէն շատեր եկած էին Մարթայի ու Մարիամի, որպէսզի սփոփեն զանոնք իրենց եղբօր համար: **20** Ուստի՝ երբ Մարթա լսեց թէ Յիսուս կու գայ՝ զնաց դիմաւորելու զայն. բայց Մարիամ նստած էր տան մէջ: **21** Մարթա ըսաւ Յիսուսի. «Տէր, եթէ հոս ըլլայիր, եղբայրս չէր մեռներ. **22** Բայց գիտեմ թէ հիմա ալ՝ դուն ինչ որ խնդրես Աստուծոյ, Աստուծոյ պիտի տայ քեզի»: **23** Յիսուս ըսաւ անոր. «Եղբայրդ յարութիւն պիտի առնէ»: **24** Մարթա ըսաւ անոր. «Գիտեմ թէ յարութեան ժամանակը՝ վերջին օրը՝ յարութիւն պիտի առնէ»: **25** Յիսուս ըսաւ անոր. «Եւ եմ յարութիւնն ու կեանքը: Ա՛յն որ կը հաւատայ ինծի, թէեւ մեռնի՝ պիտի ապրի. **26** Եւ ո՛վ որ կ'ապրի եւ կը հաւատայ ինծի, յաւիտեան պիտի չմեռնի: Դուն կը հաւատաս ասոր»: (aiōn g165) **27** Ըսաւ անոր. «Այո, Տէր, ես կը հաւատամ թէ դուն ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին, որ աշխարհ պիտի գար»: **28** Երբ ըսաւ ասիկա՝ զնաց, ու

ծածկաբար կանչեց իր քոյրը՝ Մարիամը, ըսելով.
 «Վարդապետը եկած է, եւ կը կանչէ քեզ»: 29
 Երբ ան լսեց՝ շուտով ոտքի ելաւ ու եկաւ անոր
 քով: 30 Յիսուս դեռ եկած չէր գիւղը, հապա այն
 տեղն էր՝ ուր Մարթա դիմաւորեց զինք: 31 Բայց
 Յրեաները, որ տան մէջ էին անոր հետ եւ կը
 սփռփէին զայն, երբ տեսան թէ Մարիամ շուտով
 կանգնեցաւ ու գնաց, իրենք ալ հետեւեցան անոր՝
 ըսելով. «Գերեզմանը կ'երթայ՝ որպէսզի հոն լայ»:
 32 Իսկ Մարիամ, երբ հասաւ Յիսուսի եղած տեղը
 ու տեսաւ զինք, անոր ոտքը իյնալով՝ ըսաւ անոր.
 «Տէր, եթէ հոս ըլլայիր՝ եղբայրս չէր մեռներ»: 33
 Ուրեմն երբ Յիսուս տեսաւ զայն՝ որ կու լար,
 եւ անոր հետ եկող Յրեաները՝ որոնք կու լային,
 սրդողեցաւ իր հոգիին մէջ ու վրդովեցաւ, 34 եւ
 ըսաւ. «Ո՛րդ որած էք զայն»: Ըսին իրեն. «Տէր, եկո՛ւր
 ու տնս»: 35 Յիսուս լացաւ: 36 Ուստի Յրեաները
 կ'ըսէին. «Նայեցէ՛ք, որչափ կը սիրէր զայն»: 37
 Անոնցմէ ոմանք ալ կ'ըսէին. «Ասիկա՝ որ կոյրին
 աչքերը բացաւ, չէ՞ր կրնար այնպէս ընել՝ որ այս ալ
 չմեռներ»: 38 Ուրեմն Յիսուս՝ դարձեալ սրդողելով
 ինքնիր մէջ՝ գնաց գերեզման. ան քարայր մըն
 էր, որուն վրայ քար մը դրուած էր: 39 Յիսուս
 ըսաւ. «Վերցուցէ՛ք այդ քարը»: Մեռելին քոյրը՝
 Մարթա՝ ըսաւ անոր. «Տէր, արդէն նեխած պիտի
 ըլլայ, որովհետեւ չորս օրուան է»: 40 Յիսուս ըսաւ
 անոր. «Քեզի չըսի՞ թէ պիտի տեսնես Աստուծոյ
 փառքը՝ եթէ հաւատաս»: 41 Ուստի վերցուցին
 քարը: Յիսուս բարձրացուց իր աչքերը եւ ըսաւ.

«Հայր, շնորհակալ եմ քեզմէ՝ որ լսեցիր զիս: 42 Ու ես գիտէի թէ ամէն ատեն կը լսես զիս. բայց ըսի շուրջս կայնող բազմութեան համար, որպէսզի հաւատան թէ դո՛ւն դրկեցիր զիս»: 43 Ասիկա ըսելէն ետք՝ բարձրաձայն պոռաց. «Ղազարո՛ս, դո՛ւրս եկուր»: 44 Մեռելն ալ ելաւ՝ ոտքերն ու ձեռքերը պատանքով կապուած, եւ դէմքը՝ վարշամակով պատուած: Յիսուս ըսաւ անոնց. «Արձակեցէ՛ք զինք, ու թո՛յլ տուէ՛ք որ երթայ»: 45 Հրեաներէն շատեր՝ որ եկած էին Մարիամի քով, երբ տեսան Յիսուսի ըրածը՝ հաւատացին իրեն: 46 Բայց անոնցմէ ոմանք զացին Փարիսեցիներուն ու պատմեցին անոնց Յիսուսի ըրածը: 47 Ուստի քահանայապետներն ու Փարիսեցիները ժողով գումարեցին՝ եւ ըսին. «Ի՞նչ ընենք, քանի որ այս մարդը բազմաթիւ նշաններ կ'ընէ: 48 Եթէ թոյլ տանք անոր՝ որ այսպէս շարունակէ, բոլորն ալ պիտի հաւատան անոր, ու Հռոմայեցիները պիտի գան եւ կործանեն մեր տեղն ու ազգը»: 49 Անոնցմէ մէկը՝ Կայիափա անունով, որ այդ տարուան քահանայապետն էր, ըսաւ անոնց. 50 «Դուք ոչինչ գիտէք, ու չէք ալ մտածեր թէ ասելի օգտակար է մեզի՝ որ մէկ մարդ մեռնի ժողովուրդին համար, եւ ամբողջ ազգը չկորսուի»: 51 Բայց այս բանը ո՛չ թէ ինքնիրմէ ըսաւ, հապա այդ տարուան քահանայապետը ըլլալով՝ մարգարէացաւ թէ Յիսուս պիտի մեռնէր ազգին համար. 52 եւ ո՛չ միայն ազգին համար, այլ նաեւ հաւաքելով միացնելու համար Աստուծոյ ցրուած որդիները: 53 Ուրեմն

այդ օրէն ետք խորհրդակցեցան՝ որ սպաննեն զայն: **54** Ուստի ալ Յիսուս բացորոշապէս չէր շրջեր Յրեաներուն մէջ, հապա անկէ գնաց անապատին մօտ երկրամաս մը, քաղաք մը՝ որ Եփրայիմ կը կոչուէր, եւ հոն կեցաւ իր աշակերտներուն հետ: **55** Երբ Յրեաներուն Չատիկը մօտեցաւ, այդ երկրամասէն շատեր Երուսաղէմ բարձրացան Չատիկէն առաջ՝ որպէսզի մաքրագործեն իրենք զիրենք: **56** Ուստի կը փնտռէին Յիսուսը, ու տաճարին մէջ կեցած ատեն՝ կ'ըսէին իրարու. «Ինչ է ձեր կարծիքը. արդեօք բնաւ պիտի չգամյ այս տօնին»: **57** Իսկ քահանայապետներն ու Փարիսեցիները պատուիրեր էին, որ եթէ մէկը զիտնայ անոր ճիւղը՝ ցոյց տայ, որպէսզի ձերբակալեն զայն:

12 Իսկ Յիսուս Չատիկէն վեց օր առաջ եկաւ Բեթանիա, ուր կը գտնուէր մեռած Ղազարոսը՝ որ ինք մեռելներէն յարուցանեց: **2** Հոն՝ ընթրիք մը սարքեցին անոր. Մարթա կը սպասարկէր, ու Ղազարոս անոր հետ սեղան նստողներէն՝ մէկն էր: **3** Իսկ Մարիամ՝ առնելով մէկ լիտր թանկագին նարդոսի օծանելիք՝ օծեց Յիսուսի ոտքերը, եւ սրբեց անոր ոտքերը իր մազերով. ու տունը լեցուեցաւ օծանելիքին հոտով: **4** Ուստի աշակերտներէն մէկը՝ Իսկարիոթացի Սիմոնեան Յովա, որ պիտի մատներ զինք, ըսաւ. **5** «Ինչո՞ւ այդ օծանելիքը չծախուեցաւ երեք հարիւր դահեկանի՝ որ տրուէր աղքատներուն»: **6** Ասիկա ըսաւ՝ ոչ թէ աղքատները հոգալուն համար, հապա՝ քանի որ

գող էր եւ ինք ուներ գանձանակը, ու կը կրէր ինչ որ ձգուէր: **7** Իսկ Յիսուս ըսաւ. «Թոյլ տուր անոր. այդ բանը պահեց իմ թաղումիս օրուան համար: **8** Որովհետեւ աղքատները ամէն ատեն ունիք ձեզի հետ, բայց զիս ամէն ատեն չունիք»: **9** Ուստի Յրեաներէն մեծ բազմութիւն մը գիտցաւ անոր հոն ըլլալը, ու եկաւ՝ ոչ միայն Յիսուսի համար, այլ նաեւ տեսնելու Ղազարոսը՝ որ մեռելներէն յարուցանած էր: **10** Իսկ քահանայապետները խորհրդակցեցան՝ որ սպաննեն Ղազարոսն ալ. **11** որովհետեւ Յրեաներէն շատեր անոր պատճառով կ'երթային ու կը հաւատային Յիսուսի: **12** Հետեւեալ օրը՝ մեծ բազմութիւն մը, որ եկած էր տօնին, երբ լսեց թէ Յիսուս կու գայ Երուսաղէմ, **13** առաւ արմաւենիի ոստեր, դուրս ելաւ զայն դիմաւորելու, եւ կ'աղաղակէր. «Ովսաննա՛, օրհնեալ է Իսրայէլի թագաւորը՝ որ կու գայ Տէրոջ անունով»: **14** Յիսուս՝ գտնելով աւանակ մը՝ նստաւ անոր վրայ, ինչպէս գրուած է. **15** «Մի՛ վախնար, Սիոնի՛ աղջիկ. ահա՛ Թագաւորդ կու գայ՝ նստած իշու աւանակի վրայ»: **16** Անոր աշակերտները նախապէս չհասկցան այդ բաները. բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ, այն ատեն յիշեցին թէ ատոնք գրուած էին անոր մասին, եւ թէ իրենք ըրին անոր այդ բաները: **17** Իրեն հետ եղող բազմութիւնը կը վկայէր թէ գերեզմանէն դուրս կանչեց Ղազարոսը ու մեռելներէն յարուցանեց զայն: **18** Այս պատճառով ալ բազմութիւնը դիմաւորեց զինք, որովհետեւ լսեցին թէ ինք ըրած էր այս նշանը: **19** Իսկ

Փարիսեցիները կ'ըսէին իրարու. «Կը նշմարէ՞ք թէ անօգուտ է. ահա՛ ամբողջ աշխարհը կը հետեւի անոր`»: **20** Հոն՝ տօնին երկրպագելու բարձրացողներուն մէջ՝ քանի մը Յոյներ կային: **21** Ասոնք մօտեցան Փիլիպպոսի, որ Գալիլեայի Բեթսայիդայէն էր, ու կը թախանձէին անոր՝ ըսելով. «Տէր, կ'ուզենք Յիսուսը տեսնել»: **22** Փիլիպպոս եկաւ եւ ըսաւ Անդրէասի, ապա դարձեալ Անդրէաս ու Փիլիպպոս միասին ըսին Յիսուսի: **23** Յիսուս ալ պատասխանեց անոնց. «Ժամը հասաւ՝ որ մարդու Որդին փառաւորուի: **24** Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Եթէ ցորենին հատիկը հողին մէջ իյնալով չմեռնի՝ ինք մինակ կը մնայ. բայց եթէ մեռնի՝ շատ պտուղ կը բերէ”»: **25** Ա՛ն որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ան որ կ'ատէ իր անձը այս աշխարհի մէջ՝ յաւիտենական կեանքին համար պիտի պահէ զայն: (aĩōnios g166) **26** Եթէ մէկը կը սպասարկէ ինծի՝ թող հետեւի ինծի. ու ես ո՛ր որ եմ, իմ սպասարկուս ալ հո՛ն պիտի ըլլայ. եթէ մէկը կը սպասարկէ ինծի, Հայրը պիտի պատուէ զինք»: **27** «Հիմա իմ անձս վրդոված է, եւ ի՛նչ ըսեմ. “Հայր, ազատէ՛ զիս այս ժամէն”»: Բայց ես եկած եմ ասո՛ր համար՝ այս ժամուն: **28** “Հայր, փառաւորէ՛ քու անունդ”»: Ուստի ձայն մը եկաւ երկինքէն. «Փառաւորեցի ալ, ու դարձեալ պիտի փառաւորեմ»: **29** Բազմութիւնը՝ որ կայնած էր ու կը լսէր, կ'ըսէր. «Որոտում կ'ըլլայ»: Ոմանք ալ կ'ըսէին. «Հրեշտակ մը խօսեցաւ իրեն հետ»: **30**

Յիսուս պատասխանեց. «Այս ձայնը եկաւ ռչ թէ ինծի համար, հապա՝ ձեզի համար: **31** Հիմա է այս աշխարհի դատաստանը, հիմա պիտի վտարուի այս աշխարհի իշխանը: **32** Ես ալ, երբ բարձրանամ երկրէն, բոլորդ ալ պիտի քաշեմ ինծի»: **33** Այս բանը կ'ըսեր՝ մատնանշելով թէ ինչ տեսակ մահով պիտի մեռնէր: **34** Բազմութիւնը պատասխանեց անոր. «Մենք լսեցինք Օրէնքէն թէ Քրիստոս յաւիտեան կը մնայ: Դուն ինչպէս կ'ըսես. “Մարդու Որդին պէտք է բարձրանայ”: Ո՞վ է այդ մարդու Որդին»: (aiōn g165) **35** Ուստի Յիսուս ըսաւ անոնց. «Քիչ մը ատեն ալ լոյսը ձեզի հետ է. քալեցէ՛ք՝ մինչ տակաւին լոյսը ունիք, որպէսզի խաւարը չհասնի ձեր վրայ. որովհետեւ խաւարի մէջ քալողը չի գիտեր թէ ո՛ւր կ'երթայ: **36** Մինչ լոյսը ունիք՝ հաւատացէ՛ք այդ լոյսին, որպէսզի լոյսի որդիներ ըլլաք»: Յիսուս այս բաները խօսեցաւ, ապա գնաց՝ ինքզինք ծածկելով անոնց աչքերէն: **37** Թէպէտ այնքան նշաններ ըրած էր անոնց առջեւ, անոնք չէին հաւատար իրեն. **38** որպէսզի իրագործուի Եսայի մարգարէին խօսքը՝ որ ըսած էր. «Տէր, ո՞վ հաւատաց մեր տուած լուրին, ու Տէրոջ բազուկը որո՞ւն յայտնուեցաւ»: **39** Չէին կրնար հաւատալ՝ քանի որ Եսայի դարձեալ ըսած է. **40** «Կուրցուց անոնց աչքերը եւ կարծրացուց անոնց սիրտը, որպէսզի չտեսնեն իրենց աչքերով, չհասկնան իրենց սիրտով ու դարձի չգան, եւ ես չբժշկեմ զանոնք»: **41** Եսայի ըսաւ ասիկա՝ երբ տեսաւ անոր փառքը ու խօսեցաւ անոր մասին: **42** Սակայն

միաժամանակ՝ պետերէն ալ շատեր հաւատացին իրեն. բայց չէին դաւաներ զայն՝ Փարիսեցիներուն պատճառով, որպէսզի չվնասուին ժողովարանէն. 43 որովհետեւ աւելի սիրեցին մարդոց փառքը՝ քան Աստուծոյ փառքը: 44 Յիսուս կ'աղաղակէր. «Ա՛ն որ կը հաւատայ ինծի, կը հաւատայ ո՛չ թէ ինծի, հապա՛ զիս որկողի՛ն. 45 եւ ան որ կը տեսնէ զիս, կը տեսնէ զիս որկո՛ղը: 46 Ես աշխարհ եկայ իբր լոյս, որպէսզի ո՛վ որ հաւատայ ինծի՝ չմնայ խաւարի մէջ: 47 Եթէ մէկը լսէ իմ խօսքերս ու չհաւատայ՝ ես չեմ դատեր զինք, քանի որ ես եկայ՝ ո՛չ թէ դատելու աշխարհը, հապա՛ փրկելու աշխարհը: 48 Ա՛ն որ կ'անարգէ զիս եւ չ'ընդունիր իմ խօսքերս, ունի մէկը՝ որ կը դատէ զինք. այն խօսքը՝ որ ես ըսի, անիկա՛ պիտի դատէ զինք՝ վերջին օրը: 49 Որովհետեւ ես ինձմէ չխօսեցայ, հապա Յայրը՝ որ որկեց զիս, ինք պատուիրեց ինծի թէ ինչ պիտի ըսեմ եւ ինչ պիտի խօսիմ: 50 Եւ գիտեմ թէ անոր պատուիրածը՝ յաւիտենական կեանքն է. ուրեմն ինչ որ կը խօսիմ, այնպէս կը խօսիմ՝ ինչպէս Յայրը ըսաւ ինծի»:

13 Չատիկի տօնէն առաջ՝ Յիսուս, գիտնալով թէ իր ժամը հասած է՝ որ մեկնի այս աշխարհէն Յօրը քով, սիրած ըլլալով իրենները՝ որոնք աշխարհի մէջ էին, սիրեց զանոնք մինչեւ վախճանը: 2 Երբ ընթրիքը կ'ըլլար, (Չարախօսը արդէն Իսկարիօտացի Սիմոնեան Յուդան որդած էր՝ որ մատնէ զայն,) 3 Յիսուս՝ գիտնալով թէ Յայրը ամէն բան տուաւ իր ձեռքը, եւ թէ ինք եկաւ

Աստուծոմէ ու կ'երթայ Աստուծոյ քով, 4 ոտքի ելաւ ընթրիքէն, մէկդի դրաւ հանդերձները, եւ առնելով դէնջակ մը՝ կապեց մէջքին: 5 Յետոյ ջուր լեցուց կոնքին մէջ, եւ սկսաւ լուալ աշակերտներուն ոտքերը ու սրբել մէջքին կապած դէնջակով: 6 Ուստի եկաւ Սիմոն Պետրոսի. ան ալ ըսաւ իրեն. «Տէր, դո՛ւն պիտի լուաս իմ ոտքերս»: 7 Յիսուս պատասխանեց անոր. «Ինչ որ ես կ'ընեմ՝ դուն հիմա չես ըմբռներ, բայց յետոյ պիտի ըմբռնես»: 8 Պետրոս ըսաւ անոր. «Դուն բնա՛ւ պիտի չլուաս իմ ոտքերս»: Յիսուս պատասխանեց անոր. «Եթէ չլուամ քեզ, դուն բաժին չունիս ինծի հետ»: (aiōn g165) 9 Սիմոն Պետրոս ըսաւ անոր. «Տէր, ոչ միայն ոտքերս, այլ նաեւ՝ ձեռքերս ու գլուխս»: 10 Յիսուս ըսաւ անոր. «Ա՛ն որ լոզցած է՝ միայն ոտքերը լուալու պետք ունի, որ ամբողջովին մաքուր ըլլայ. եւ դուք մաքուր էք, բայց ոչ բոլորդ»: 11 Արդարեւ գիտէր թէ ո՛վ պիտի մատներ զինք: Ուստի ըսաւ. «Բոլորդ մաքուր չէք»: 12 Երբ լուաց անոնց ոտքերը, եւ առնելով իր հանդերձները՝ դարձեալ սեղան նստաւ, ըսաւ անոնց. «Գիտե՛ք ինչ ըրի ձեզի: 13 Դուք Վարդապետ ու Տէր կը կոչէք զիս, եւ ճիշդ կ'ըսէք, որովհետեւ այնպէս եմ: 14 Ուստի եթէ ես՝ Տէրս ու Վարդապետս՝ լուացի ձեր ոտքերը, դո՛ւք ալ պարտաւոր էք լուալ իրարու ոտքերը: 15 Որովհետեւ օրինակ մը տուի ձեզի, որպէսզի ինչպէս ես ըրի ձեզի՝ դուք ալ ընէք: 16 Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ծառան իր տիրոջմէն

մեծ չէ, ոչ ալ դրկուածը՝ զինք դրկողէն մեծ է”: 17
Եթէ գիտէք այս բաները, երանելի՛ էք՝ եթէ ընէք
զանոնք: 18 Ես կը խօսիմ՝ ոչ թէ ձեր բոլորին համար,
որովհետեւ ես կը ճանչնամ իմ ընտրածներս.
հապա՛ որպէսզի իրագործուի այն գրուածը. “Ան
որ հաց կ’ուտէր ինծի հետ՝ կրունկ վերցուց ինծի
դէմ”: 19 Այժմէն կ’ըսեմ ձեզի՝ ըլլալէն առաջ,
որպէսզի երբ ըլլայ՝ հաւատաք թէ ես ան եմ: 20
Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ
ձեզի. “Ո՛վ որ ընդունի ան՝ որ ես կը դրկեմ,
կ’ընդունի զիս, եւ ո՛վ որ կ’ընդունի զիս՝ կ’ընդունի
զիս դրկողը”»: 21 Երբ Յիսուս ըսաւ ասիկա՝
վրդովեցաւ իր հոգիին մէջ, եւ վկայեց՝ ըսելով.
«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ
ձեզի թէ ձեզմէ մէկը պիտի մատնէ զիս»: 22 Ուստի
աշակերտները իրարու կը նայէին, վարանած՝
թէ որո՞ւ մասին կը խօսէր: 23 Աշակերտներէն
մէկը կար՝ Յիսուսի քով նստած, որ Յիսուս կը
սիրէր: 24 Ուրեմն Սիմոն Պետրոս նշան կ’ըներ
անոր, հարցափորձելու թէ ո՛վ պիտի ըլլայ ան՝
որուն մասին կը խօսէր: 25 Ան ալ՝ իյնալով Յիսուսի
կուրծքին վրայ՝ ըսաւ անոր. «Տէր, ո՛վ է անիկա»: 26
Յիսուս պատասխանեց. «Ա՛ն է՝ որուն թաթխելով
կու տամ այս պատառը»: Եւ թաթխելով պատառը՝
տուաւ Իսկարիովտացի Սիմոնեան Յուդայի: 27
Պատառէն ետք՝ Սատանան մտաւ անոր ներսը.
ուստի Յիսուս ըսաւ անոր. «Ինչ որ պիտի ընես՝
շուտով ըրէ»: 28 Բայց սեղան նստողներէն ոչ
մէկը հասկցաւ թէ ինչո՞ւ ըսաւ անոր ասիկա.

29 որովհետեւ ոմանք կը կարծէին թէ քանի որ Յուդաւ ունէր գանձանակը՝ Յիսուս կ'ըսէր անոր. «Գնէ ինչ որ պէտք է մեզի այս տօնին». կամ՝ որպէսզի բան մը տայ աղքատներուն: 30 Ան ալ՝ ստանալով պատառը՝ իսկոյն դուրս ելաւ. սակայն գիշեր էր: 31 Երբ ան դուրս ելաւ՝ Յիսուս ըսաւ. «Յիմա մարդու Որդին փառաւորուեցաւ, եւ Աստուած փառաւորուեցաւ անով: 32 Եթէ Աստուած փառաւորուեցաւ անով, Աստուած ալ իրմով պիտի փառաւորէ զայն, ու շուտով պիտի փառաւորէ զայն: 33 Որդեակներ, քիչ մը ատեն ալ ձեզի հետ եմ. պիտի փնտռէք զիս, եւ ինչպէս Յրեաներուն ըսի. “Դուք չէք կրնար գալ ուր որ ես կ'երթամ”, հիմա ձեզի ալ կ'ըսեմ: 34 Նոր պատուիրան մը կու տամ ձեզի. “Սիրեցէ՛ք զիրար”. ինչպէս ես սիրեցի ձեզ, դուք ալ սիրեցէ՛ք զիրար: 35 Ասով բոլորը պիտի գիտնան թէ իմ աշակերտներս էք, եթէ սէր ունենաք իրարու հանդէպ»: 36 Սիմոն Պետրոս ըսաւ անոր. «Տէր, ո՛ր կ'երթաս»: Յիսուս պատասխանեց անոր. «Ուր որ ես կ'երթամ՝ դուն հիմա չես կրնար հետեւիլ ինծի. բայց յետոյ պիտի հետեւիս ինծի»: 37 Պետրոս ըսաւ անոր. «Տէր, ինչո՞ւ հիմա չեմ կրնար հետեւիլ քեզի. ես իմ անձս ալ պիտի ընծայեմ քեզի համար»: 38 Յիսուս պատասխանեց անոր. «Քու անձդ պիտի ընծայես ինծի համար: Ծշմարտապէս, Ծշմարտապէս կը յայտարարեմ քեզի. “Աքաղաղը պիտի չկանչէ՝ մինչեւ որ դուն երէք անգամ ուրանաս զիս”»:

14 «Ձեր սիրտը թող չվրդովի. հաւատացէ՛ք Աստուծոյ, հաւատացէ՛ք նաեւ ինծի: **2** Շատ բնակարաններ կան իմ Յօրս տան մէջ. եթէ այդպէս չըլլար, միթէ պիտի ըսէի՞ ձեզի թէ կ'երթամ՝ որ տեղ պատրաստեմ ձեզի: **3** Երբ երթամ եւ տեղ պատրաստեմ ձեզի, դարձեալ պիտի գամ ու բովս ընդունիմ ձեզ, որպէսզի ո՛ր ես եմ՝ դո՛ւք ալ հոն ըլլաք: **4** Գիտէ՛ք ո՛ր կ'երթամ, գիտէ՛ք նաեւ ճամբան»: **5** Թովմաս ըսաւ անոր. «Տէր, չենք գիտեր ո՛ր կ'երթաս, եւ ինչպէս կրնանք գիտնալ ճամբան»: **6** Յիսուս ըսաւ անոր. «Ես եմ ճամբան, ճշմարտութիւնն ու կեանքը. ո՛չ մէկը կու գայ Յօրը քով՝ բայց միայն ինձմով: **7** Եթէ ճանչնայիք զիս՝ պիտի ճանչնայիք նաեւ իմ Հայրս. եւ այժմէն իսկ կը ճանչնաք զայն, ու տեսած էք զայն»: **8** Փիլիպպոս ըսաւ անոր. «Տէր, ցոյց տուր մեզի Հայրը, ու կը բաւէ մեզի»: **9** Յիսուս ըսաւ անոր. «Մ'յսքան ժամանակ ես ձեզի հետ եմ, եւ չճանչցա՞ր զիս, Փիլիպպոս: Մ'ն որ տեսաւ զիս՝ տեսաւ Հայրը. դուն ինչպէս կ'ըսես. “Ցոյց տուր մեզի Հայրը”: **10** Չե՞ս հաւատար թէ ես Յօրը մէջն եմ, ու Հայրը իմ մէջս է: Այն խօսքերը՝ որ կ'ըսեմ ձեզի, ես ինձմէ չեմ ըսեր. հապա Հայրը՝ որ բնակած է իմ մէջս, անիկա կ'ընէ այդ գործերը: **11** Հաւատացէ՛ք ինծի, թէ ես Յօրը մէջն եմ, ու Հայրը իմ մէջս է: **12** Այլապէս՝ գոնէ գործերո՛ւն համար հաւատացէ՛ք ինծի: Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Մ'ն որ կը հաւատայ ինծի, ինք ալ պիտի ընէ այն գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ

անոնցմէ աւելի մեծ գործեր պիտի ընէ, որովհետեւ ես կ'երթամ Զօրս քով»: 13 Ի՛նչ որ խնդրէք իմ անունովս՝ պիտի ընեմ զայն, որպէսզի Զայրը փառաւորուի Որդիով: 14 Եթէ որեւէ բան խնդրէք իմ անունովս, պիտի ընեմ»: 15 «Եթէ կը սիրէք զիս՝ պահեցէ՛ք իմ պատուիրաններս: 16 Ես ալ պիտի թախանձեմ Զօրը, եւ ուրիշ Մխիթարիչ մը պիտի տայ ձեզի, որպէսզի յաւիտեան բնակի ձեզի հետ.- (aiōn g165) 17 Եշմարտութեան Զոգին, որ այս աշխարհը չի կրնար ընդունիլ, որովհետեւ չի տեսներ զայն ու չի ճանչնար զայն. բայց դուք կը ճանչնաք զայն, որովհետեւ կը բնակի ձեր քով եւ պիտի ըլլայ ձեր մէջ: 18 Ձեզ որք պիտի չթողում. պիտի գամ ձեզի: 19 Բիչ մը ատենէն ետք աշխարհը ալ պիտի չտեսնէ զիս. բայց դուք պիտի տեսնէք զիս, որովհետեւ ես կ'ապրիմ, եւ դուք ալ պիտի ապրիք: 20 Այն օրը պիտի գիտնաք թէ ես իմ Զօրս մէջ եմ, ու դուք՝ իմ մէջս, ես ալ՝ ձեր մէջ: 21 Ա՛ն որ ունի իմ պատուիրաններս եւ կը պահէ զանոնք, անիկա է զիս սիրողը: Ա՛ն որ կը սիրէ զիս՝ պիտի սիրուի իմ Զօրմէս. ու ես պիտի սիրեմ զայն, եւ զիս պիտի յայտնեմ անոր»: 22 Յուդա (ոչ Իսկարիովտացին) ըսաւ անոր. «Տէր, ինչպէս կ'ըլլայ՝ որ դուն քեզ պիտի յայտնես մեզի, բայց ոչ՝ աշխարհին»: 23 Յիսուս պատասխանեց անոր. «Եթէ մէկը սիրէ զիս՝ պիտի պահէ իմ խօսքս, ու իմ Զայրս պիտի սիրէ զայն. եւ պիտի զանք անոր ու բնակինք անոր հետ: 24 Ա՛ն որ չի սիրեր զիս՝ չի պահեր իմ խօսքերս: Այն

խօսքը որ կը լսէք՝ իմս չէ, հապա Յօրս՝ որ դրկեց
 զիս: **25** Այս բաները խօսեցայ ձեզի, քանի դեռ կը
 մնամ ձեր քով: **26** Բայց Միսիթարիչը՝ Սուրբ Յոգին,
 որ Յայրը պիտի դրկէ իմ անունովս, անիկան պիտի
 սորվեցնէ ձեզի ամենը, եւ ինչ որ ըսի ձեզի՝ պիտի
 յիշեցնէ ձեզի: **27** Խաղաղութիւն կը թողուն ձեզի,
 իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի. ես չեմ տար
 ձեզի այնպէս՝ ինչպէս աշխարհը կու տայ: Ձեր
 սիրտը թող չվրդովի ու չերկնչի: **28** Լսեցիք թէ ըսի
 ձեզի. “Ես կ’երթամ, բայց դարձեալ պիտի գամ
 ձեզի”: Եթէ սիրէիք զիս, պիտի ուրախանայիք՝ որ
 ես կ’երթամ Յօրը քով, որովհետեւ իմ Յայրս ինձմէ
 մեծ է: **29** Եւ այժմէն՝ դեռ չեղած՝ ըսի ձեզի, որպէսզի
 երբ ըլլայ՝ հաւատաք: **30** Ա՛լ շատ պիտի չխօսիմ
 ձեզի հետ, որովհետեւ այս աշխարհի իշխանը
 կու գայ. բայց ո՛չ մէկ հեղինակութիւն ունի իմ
 վրաս: **31** Սակայն աշխարհը թող գիտնայ թէ ես
 կը սիրեմ Յայրը, եւ կ’ընեմ այնպէս՝ ինչպէս Յայրը
 պատուիրեց ինծի: Ոտքի ելէք, երթանք ասկէ»:

15 «Ես եմ ճշմարիտ որթատունկը, եւ իմ Յայրս՝
 մշակն է: **2** Ամեն ճիւղ՝ որ իմ վրաս է ու պտուղ չի
 բերեր, կը վերցնէ զայն. իսկ ամեն ճիւղ որ պտուղ
 կը բերէ՝ կը մաքրէ զայն, որպէսզի ան աւելի պտուղ
 բերէ: **3** Դուք արդէն մաքուր էք այն խօսքով՝
 որ ըսի ձեզի: **4** Ի՛մ մէջս մնացէք, ու ես՝ ձեր մէջ.
 ինչպէս ճիւղը չի կրնար ինքնիրմէ պտուղ բերել՝
 եթէ որթատունկին վրայ չմնայ, նոյնպէս ալ դուք
 չէք կրնար՝ եթէ իմ մէջս չմնաք: **5** Ես որթատունկն
 եմ, եւ դուք ճիւղերն էք. ան որ իմ մէջս կը մնայ, ու

ես՝ անոր մէջ, անիկա՛ շատ պտուղ պիտի բերէ,
 որովհետեւ առանց ինծի ոչինչ կրնաք ընել: **6**
 Եթէ մէկը իմ մէջս չմնայ, ան դուրս կը նետուի՝
 ճիւղի մը պէս, եւ կը չորնայ. զանոնք կը ժողվեն
 ու կրակը կը նետեն, եւ անոնք կ'այրին: **7** Եթէ
 դուք մնաք իմ մէջս, ու իմ խօսքերս ալ մնան
 ձեր մէջ, ինչ որ ուզէք՝ պիտի խնդրէք, եւ պիտի
 ըլլայ ձեզի: **8** Իմ Հայրս կը փառաւորուի՝ երբ դուք
 շատ պտուղ բերէք. այսպէս՝ իմ աշակերտներս
 կ'ըլլաք: **9** Ինչպէս Հայրը սիրեց զիս, եւ ալ սիրեցի
 ձեզ. մնացէ՛ք իմ սիրոյս մէջ: **10** Եթէ պահէք իմ
 պատուիրաններս՝ պիտի մնաք իմ սիրոյս մէջ,
 ինչպէս ես պահեցի իմ Հօրս պատուիրանները եւ
 կը մնամ անոր սիրոյն մէջ: **11** Այս բաները խօսեցայ
 ձեզի՝ որպէսզի իմ ուրախութիւնս մնայ ձեր մէջ,
 ու ձեր ուրախութիւնը լման ըլլայ: **12** Սա է իմ
 պատուիրանս՝ որ սիրէք զիրար, ինչպէս ես սիրեցի
 ձեզ: **13** Ո՛չ մէկը ունի աւելի մեծ սէր, քան այն՝
 երբ մէկը կ'ընծայէ իր անձը իր բարեկամներուն
 համար: **14** Դուք իմ բարեկամներս էք, եթէ ընէք
 ինչ որ ես կը պատուիրեմ ձեզի: **15** Այլեւս ծառայ
 չեմ կոչեր ձեզ, որովհետեւ ծառան չի գիտեր
 թէ իր տէրը ինչ կ'ընէ. հապա ես բարեկամ
 կոչեցի ձեզ, որովհետեւ ամէն ինչ որ լսեցի իմ
 Հօրմէս՝ գիտցուցի ձեզի: **16** Ո՛չ թէ դուք ընտրեցիք
 զիս, հապա ես ընտրեցի ձեզ, ու նշանակեցի
 ձեզ՝ որպէսզի երթաք եւ պտուղ բերէք, ու ձեր
 պտուղը մնայ. որպէսզի ինչ որ խնդրէք Հօրմէս՝ իմ
 անունովս, տայ ձեզի: **17** Ասիկա՛ կը պատուիրեմ

ձեզի, որ սիրէք զիրար»: **18** «Եթէ աշխարհը կ'ատէ
 ձեզ, զիտցէք թէ ատեց զիս ձեզմէ առաջ: **19** Եթէ
 աշխարհէն եղած ըլլայիք՝ աշխարհը կը սիրէր
 իրենները. բայց քանի որ աշխարհէն չէք, հապա
 ես ձեզ ընտրեցի աշխարհէն, աշխարհը կ'ատէ
 ձեզ: **20** Յիշեցէք այն խօսքը՝ որ ըսի ձեզի. “Ծառան
 իր տիրոջմէն մեծ չէ”. եթէ հալածեցին զիս, պիտի
 հալածեն նաեւ ձեզ. եթէ պահեցին իմ խօսքս,
 պիտի պահեն նաեւ ձերը: **21** Բայց այս բոլոր
 բաները պիտի ընեն ձեզի՝ իմ անունիս համար,
 որովհետեւ չճանչցան ան՝ որ դրկեց զիս: **22** Եթէ
 ես եկած եւ խօսած չըլլայի անոնց՝ մեղք չէին
 ունենար. բայց հիմա պատրուակ մը չունին իրենց
 մեղքին: **23** Ան որ կ'ատէ զիս՝ կ'ատէ նաեւ իմ Հայրս:
24 Եթէ իրենց մէջ ըրած չըլլայի այն գործերը, որ
 ուրիշ ոչ մէկը ըրած է, անոնք մեղք չէին ունենար.
 բայց հիմա տեսան եւ ատեցին զիս ալ, իմ Հայրս ալ:
25 Սակայն ատիկա եղաւ, որպէսզի իրագործուի
 այն խօսքը՝ որ գրուած է իրենց Օրէնքին մէջ. “Չուր
 տեղը ատեցին զիս”: **26** Բայց երբ Միսիթարիչը գայ՝
 որ ես Հօրմէն պիտի դրկեմ ձեզի, ճշմարտութեան
 Հոգին՝ որ կը բխի Հօրմէն, անիկա պիտի վկայէ
 իմ մասիս: **27** Եւ որքալ կը վկայէք, որովհետեւ
 սկիզբէն ի վեր ինծի հետ էք»:

16 «Այս բաները խօսեցայ ձեզի՝ որպէսզի
 չգայթակղիք: **2** Իրենց ժողովարաններէն պիտի
 վռնտեն ձեզ. նոյնիսկ ժամը պիտի գայ, երբ
 ով որ սպաննէ ձեզ՝ այնպէս պիտի կարծէ թէ
 պաշտամունք կը կատարէ Աստուծոյ: **3** Եւ այս

բաները պիտի ընեն ձեզի, որովհետեւ ոչ Հայրը ճանչցան, ոչ ալ՝ զիս: 4 Բայց այս բաները խօսեցայ ձեզի, որպէսզի երբ ժամը գայ՝ յիշէք թէ ես ըսի ձեզի: Ասոնք սկիզբէն չըսի ձեզի, որովհետեւ ձեզի հետ էի»: 5 «Սակայն հիմա կ'երթամ զիս դրկողին քով, եւ ձեզմէ ոչ մէկը կը հարցնէ ինծի. “Ո՞ր կ'երթաս”: 6 Բայց քանի որ այս բաները խօսեցայ ձեզի, ձեր սիրտը տրտմութեամբ լեցուեցաւ: 7 Սակայն ես ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի. “Աւելի օգտակար է ձեզի՝ եթէ ես երթամ”: Որովհետեւ եթէ չերթամ՝ Միսիթարիչը չի գար ձեզի. իսկ եթէ մեկնիմ՝ զինք պիտի դրկեմ ձեզի: 8 Ու երբ ինք գայ՝ պիտի կշտամբէ աշխարհը մեղքի համար, արդարութեան համար ու դատաստանի համար: 9 Մեղքի համար՝ քանի որ չեն հաւատար ինծի. 10 արդարութեան համար՝ որովհետեւ ես կ'երթամ իմ Հօրս քով, եւ ալ պիտի չտեսնէք զիս. 11 դատաստանի համար՝ քանի որ այս աշխարհի իշխանը դատուած է: 12 Տակաւին շատ բաներ ունիմ՝ ձեզի ըսելու, բայց հիմա չէք կրնար հանդուրժել: 13 Իսկ երբ ինք՝ ճշմարտութեան Հոգին գայ, ամբողջ ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզ. որովհետեւ պիտի չխօսի ինքնիրմէ, հապա ինչ որ լսէ՝ զայն պիտի ըսէ, ու գալիքները պիտի հաղորդէ ձեզի: 14 Ինք պիտի փառաւորէ զիս, որովհետեւ պիտի ստանայ իմինէս ու հաղորդէ ձեզի: 15 Ամէն ինչ որ Հայրը ունի՝ իմս է. ուստի ըսի ձեզի թէ պիտի առնէ իմինէս ու հաղորդէ ձեզի»: 16 «Քիչ մը ատենէն՝ ալ պիտի չտեսնէք զիս. եւ քիչ մը

ատենեն՝ դարձեալ պիտի տեսնէք զիս, քանի որ ես կ'երթամ Զօրը քով»։ **17** Ուստի աշակերտներէն ոմանք կ'ըսէին իրարու. «Ինչ է ասիկա, որ կ'ըսէ մեզի. “Քիչ մը ատենեն՝ ալ պիտի չտեսնէք զիս. եւ քիչ մը ատենեն՝ դարձեալ պիտի տեսնէք զիս”։ Նաեւ. “Քանի որ ես կ'երթամ Զօրը քով”»։ **18** Ուրեմն կ'ըսէին. «Ինչ է ասիկա՝ որ կ'ըսէ. “Քիչ մը ատենեն”. չենք գիտեր ինչ կը խօսի»։ **19** Ուստի Յիսուս, գիտնալով թէ կ'ուզեն հարցնել իրեն, ըսաւ անոնց. «Չիրա՞ր կը հարցափորձէք, քանի որ ըսի. “Քիչ մը ատենեն՝ ալ պիտի չտեսնէք զիս. եւ քիչ մը ատենեն՝ դարձեալ պիտի տեսնէք զիս”։ **20** Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Դուք պիտի լաք ու ողբաք, բայց աշխարհը պիտի ուրախանայ. դուք պիտի տրտմիք, սակայն ձեր տրտմութիւնը պիտի փոխուի ուրախութեան”։ **21** Կին մը տրտմութիւն կ'ունենայ ծննդաբերութեան ատեն, որովհետեւ իր ժամը հասած է. բայց երբ ծնանի մանուկը՝ ալ չի յիշեր տառապանքը, ուրախանալով որ մարդ մը ծնաւ աշխարհի մէջ։ **22** Ուրեմն դուք ալ տրտմութիւն ունիք հիմա. բայց ես դարձեալ պիտի տեսնեմ ձեզ ու ձեր սիրտը պիտի ուրախանայ, եւ ո՛չ մէկը ձեզմէ պիտի յափշտակէ ձեր ուրախութիւնը։ **23** Այդ օրը՝ ոչինչ պիտի հարցնէք ինծի։ Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Ինչ որ խնդրէք Զօրմէն՝ իմ անունովս, պիտի տայ ձեզի։ **24** Մինչեւ հիմա՝ ոչինչ խնդրեցիք իմ անունովս. խնդրեցէ՛ք՝ ու պիտի ստանաք, որպէսզի ձեր

ուրախութիւնը լման ըլլայ”»։ 25 «Այս բաները առականերով խօսեցայ ձեզի. բայց ժամը պիտի գայ, երբ ան առականերով պիտի չխօսին ձեզի, հապա բացորոշապէս պիտի հաղորդեն ձեզի Յօրը մասին։ 26 Այդ օրը՝ իմ անունովս պիտի խնդրէք։ Չեն ըսեր ձեզի թէ պիտի թախանձեն Յօրը՝ ձեզի համար. 27 քանի որ ինք՝ Հայրը կը սիրէ ձեզ, որովհետեւ դուք սիրեցիք զիս ու հաւատացիք թէ ես Աստուծմէ ելայ։ 28 Հօրմէն ելայ եւ աշխարհ եկայ. դարձեալ կը թողուն աշխարհը ու կ’երթամ Յօրը քով»։ 29 Իր աշակերտները ըսին իրեն. «Ահա բացորոշապէս կը խօսիս հիմա, եւ առանկ մըն ալ չես ըսեր։ 30 Գիտենք հիմա՝ թէ դուն գիտես ամեն բան, եւ պետք չունիս՝ որ մեկը հարցնէ քեզի որեւէ բան. ասով կը հաւատանք թէ Աստուծմէ ելար»։ 31 Յիսուս պատասխանեց անոնց. «Կը հաւատամք հիմա։ 32 Ահա ժամը պիտի գայ ու հասած ալ է, երբ պիտի ցրուիք՝ իւրաքանչիւրը իր տեղը, եւ մինակ պիտի թողուք զիս. բայց ես մինակ չեմ, որովհետեւ Հայրը ինծի հետ է։ 33 Այս բաները խօսեցայ ձեզի, որպէսզի խաղաղութիւն ունենաք ինձմով. աշխարհի մէջ տառապանք պիտի ունենաք, բայց քաջալերուեցէ՛ք, ես յաղթեցի աշխարհին»։

17 Երբ Յիսուս խօսեցաւ ասոնք, բարձրացուց իր աչքերը դէպի երկինք եւ ըսաւ. «Հայր, ժամը հասած է. փառաւորէ՛ քու Որդիդ, որպէսզի քու Որդիդ ալ փառաւորէ քեզ, 2 քանի իշխանութիւն տուիր իրեն ամեն մարմինի վրայ, որ տայ յաւիտենական

կեանքը բոլոր անոնց՝ որ տուիր իրեն: (aiōnios g166) 3 Եւ սա է յաւիտենական կեանքը.- ճանչնալ քեզ՝ միմիայն ճշմարիտ Աստուածը, ու Յիսուս Քրիստոսը՝ որ դուն ղրկեցիր: (aiōnios g166) 4 Ես փառաւորեցի քեզ երկրի վրայ. աւարտեցի այն գործը՝ որ տուիր ինծի ընելու: 5 Եւ հիմա, Հայր, փառաւորէ՛ զիս քու քովդ այն փառքով՝ որ ունէի քովդ աշխարհի ըլլալէն առաջ: 6 Բացայայտեցի քու անունդ այն մարդոց՝ որ տուիր ինծի աշխարհէն: Քուկդ էին՝ եւ ինծի տուիր զանոնք, ու պահեցին քու խօսքդ: 7 Հիմա գիտցան թէ ամեն ինչ որ տուիր ինծի՝ քեզմէ է. 8 որովհետեւ այն խօսքերը որ տուիր ինծի՝ ես տուի անոնց, անոնք ալ ընդունեցին եւ ճշմարտապէս գիտցան թէ ես քեզմէ ելայ, ու հաւատացին թէ դուն ղրկեցիր զիս: 9 Ես կը թախանձեմ անոնց համար. ոչ թէ կը թախանձեմ աշխարհին համար, այլ անոնց համար՝ որ դուն տուիր ինծի, որովհետեւ անոնք քուկդ են: 10 Եւ ամեն ինչ որ իմս է՝ քուկդ է, եւ ինչ որ քուկդ է՝ իմս է, ու ես փառաւորուած եմ անոնցմով: 11 Ա՛լ ես աշխարհի մէջ չեմ. բայց անոնք աշխարհի մէջ են, ու ես կու գամ քեզի: Սուրբ Հայր, պահէ՛ քու անունովդ անոնք՝ որ դուն տուիր ինծի, որպէսզի մէկ ըլլան՝ ինչպէս մենք մէկ ենք: 12 Մինչ անոնց հետ էի աշխարհի մէջ, զանոնք կը պահէի քու անունովդ: Անոնք որ դուն տուիր ինծի՝ ես պահեցի, եւ անոնցմէ ոչ մէկը կորսուեցաւ, բայց միայն՝ այն կորուստի որդին, որպէսզի գրուածը իրագործուի: 13 Ա՛լ հիմա կու գամ քեզի, եւ այս

բաները կը խօսիմ աշխարհի մէջ, որպէսզի իմ ուրախութիւնս լման ըլլայ իրենց մէջ: **14** Քու խօսքդ տուի անոնց, եւ աշխարհը ատեց զանոնք՝ որովհետեւ աշխարհէն չեն, ինչպէս ես աշխարհէն չեմ: **15** Չեմ թախանձեր որ վերցնես զանոնք աշխարհէն, հապա՜ որ պահես զանոնք չարէն: **16** Անոնք աշխարհէն չեն, ինչպէս ես աշխարհէն չեմ: **17** Սրբացնուր զանոնք քու ճշմարտութեամբդ. քու խօսքդ ճշմարտութիւն է: **18** Ինչպէս դուն աշխարհ դրկեցիր զիս, ես ալ աշխարհ դրկեցի զանոնք: **19** Անոնց համար ես զիս կը սրբացնեմ, որպէսզի իրենք ալ սրբացած ըլլան ճշմարտութեամբ: **20** Բայց կը թախանձեմ ո՛չ միայն ասոնց համար, այլ նաեւ անոնց համար՝ որ պիտի հաւատան ինծի իրենց խօսքով: **21** Որպէսզի բոլորն ալ մէկ ըլլան, ինչպէս դուն՝ Հայր՝ իմ մէջս, ու ես՝ քու մէջդ. որ անոնք ալ մէկ ըլլան մեր մէջ, որպէսզի աշխարհը հաւատայ թէ դուն դրկեցիր զիս: **22** Այն փառքը՝ որ դուն տուիր ինծի, ես տուի անոնց, որպէսզի մէկ ըլլան՝ ինչպէս մենք մէկ ենք. **23** (ես՝ անոնց մէջ, ու դուն՝ իմ մէջս.) որպէսզի իրենք կատարելապէս մէկ ըլլան, եւ աշխարհը գիտնայ թէ դուն դրկեցիր զիս, ու սիրեցիր զանոնք՝ ինչպէս սիրեցիր զիս: **24** Հայր, անոնք որ տուիր ինծի, կ'ուզեմ որ իրենք ալ ըլլան ինծի հետ՝ ո՛ր որ ես եմ, որպէսզի տեսնեն իմ փառքս՝ որ տուիր ինծի. որովհետեւ դուն սիրեցիր զիս աշխարհի հիմնադրութենէն առաջ: **25** Արդար՝ Հայր, աշխարհը չճանչցաւ քեզ. բայց ես ճանչցայ քեզ, եւ ասոնք գիտցան թէ դուն դրկեցիր

զիս: **26** Քու անունդ ճանչցուցի անոնց, ու պիտի ճանչցնեմ. որպեսզի այն սերը՝ որով դուն սիրեցիր զիս՝ ըլլայ անոնց մէջ, ու էս ալ անոնց մէջ»:

18 Ասոնք ըսելէն ետք՝ Յիսուս գնաց իր աշակերտներուն հետ Կեդրոն վտակին միւս կողմը, ուր պարտեզ մը կար, որուն մէջ մտան ինք եւ իր աշակերտները: **2** Յուդա ալ՝ որ պիտի մատներ զինք՝ զիտէր այդ տեղը, որովհետեւ Յիսուս յաճախ հաւաքուած էր հոն՝ իր աշակերտներուն հետ: **3** Ուստի Յուդա, առնելով իրեն հետ զինուորներուն գունդը, եւ սպասաւորներ՝ քահանայապետներէն ու Փարիսեցիներէն, եկաւ հոն՝ ջահերով, լապտերներով եւ զենքերով: **4** Իսկ Յիսուս, զիտնալով իրեն պատահելիք բոլոր բաները, գնաց եւ ըսաւ անոնց. «Ո՞վ կը փնտռէք»: **5** Պատասխանեցին անոր. «Նազովրեցի Յիսուսը»: Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ»: Յուդա ալ՝ որ պիտի մատներ զինք՝ կայնած էր անոնց հետ: **6** Երբ ըսաւ. «Ես եմ», նահանջեցին ու գետին ինկան: **7** Ուստի դարձեալ հարցուց անոնց. «Ո՞վ կը փնտռէք»: Անոնք ալ ըսին. «Նազովրեցի Յիսուսը»: **8** Յիսուս պատասխանեց. «Ձեզի ըսի՞ թէ “էս եմ”. ուրեմն եթէ զիս կը փնտռէք, ասոնց թոյլ տուէք՝ որ երթան»: **9** որպէսզի իրագործուի այն խօսքը՝ որ ըսեր էր. «Ո՛չ մէկը կորսնցուցի անոնցմէ՝ որ դո՛ւն տուիր ինծի»: **10** Իսկ Սիմոն Պետրոս՝ որ ունէր սուր մը՝ քաշեց զայն, ու զարնելով քահանայապետին ծառային՝ կտրեց անոր աջ ականջը. այդ ծառային

անունը Մադբոս Էր: **11** Հետեւաբար Յիսուս ըսաւ Պետրոսի. «Դիր սուրդ իր պատեանը. միթէ պիտի չխմեմ այն բաժակը՝ որ Հայրը տուաւ ինծի»: **12** Ուստի զինուորներուն գունդը, հազարապետն ու Հրեաներուն սպասաւորները բռնեցին Յիսուսը, կապեցին, **13** եւ տարին զայն նախ Աննայի, քանի որ ինք աներն Էր այդ տարուան քահանայապետին՝ Կայիափայի: **14** Այս Կայիափան Էր՝ որ թելադրեց Հրեաներուն. «Աւելի օգտակար Է որ մէկ մարդ մեռնի ժողովուրդին համար» **15** Սիմոն Պետրոս եւ ուրիշ աշակերտ մը կը հետեւէին Յիսուսի: Այդ աշակերտը ծանօթ Էր քահանայապետին, ու մտաւ Յիսուսի հետ քահանայապետին գաւիթը: **16** Բայց Պետրոս կը կենար դուրսը՝ դրան բով. ուստի միւս աշակերտը՝ որ ծանօթ Էր քահանայապետին՝ դուրս ելաւ, խօսեցաւ դռնապանին, ու ներս բերաւ Պետրոսը: **17** Իսկ դռնապան աղջիկը ըսաւ Պետրոսի. «Միթէ դո՛ւն ալ այդ մարդուն աշակերտներէն ես»: Ան ալ ըսաւ. «Չեմ»: **18** Ծառաներն ու սպասաւորները կայնած Էին հոն, եւ կրակ վառած՝ կը տաքնային, քանի որ ցուրտ Էր: Պետրոս ալ կայնած Էր անոնց հետ, ու կը տաքնար: **19** Քահանայապետը հարցուց Յիսուսի՝ իր աշակերտներուն եւ ուսուցումին մասին: **20** Յիսուս պատասխանեց անոր. «Ես բացորոշապէս խօսեցայ աշխարհին. ամէն ատեն սորվեցուցի ժողովարաններուն մէջ ու տաճարին մէջ, ուր բոլոր Հրեաները կը համախմբուէին, եւ ոչինչ խօսեցայ գաղտնի: **21** Ինչո՞ւ ինծի կը

հարցնես, լսողներուն հարցուր թէ ինչ խօսեցայ
 իրենց. ահա՛ իրենք գիտեն ինչ որ խօսեցայ»:
22 Երբ ըսաւ ասիկա, սպասաւորներէն մէկը՝
 որ քովը կայնած էր, ապտակ մը զարկաւ
 Յիսուսի՝ ըսելով. «Ա՛յդպէս կը պատասխանես
 քահանայապետին»: **23** Յիսուս պատասխանեց
 անոր. «Եթէ գէշ խօսեցայ, վկայէ՛ գէշին մասին.
 իսկ եթէ լաւ խօսեցայ, ինչո՞ւ կը զարնես ինծի»: **24**
 Յետոյ Աննա կապուած դրկեց զայն Կայիափա
 քահանայապետին: **25** Սիմոն Պետրոս կայնած էր
 հոն, ու կը տաքնար: Ուրեմն ըսին իրեն. «Միթէ դո՞ւն
 ալ անոր աշակերտներէն ես»: Ան ուրացաւ՝ ըսելով.
 «Չեմ»: **26** Քահանայապետին ծառաներէն մէկն ալ,
 ազգականը անոր՝ որուն ականջը Պետրոս կտրեր
 էր, ըսաւ. «Ես չտեսայ քեզ պարտեզին մէջ՝ անոր
 հետ»: **27** Ուստի Պետրոս դարձեալ ուրացաւ. եւ
 իսկոյն աքաղաղը կանչեց: **28** Կայիափայի տունէն
 տարին Յիսուսը կառավարիչին պալատը. եւ ալ
 առտու էր: Իրենք չմտան պալատը՝ որպէսզի
 չպղծուին, այլ կարենան ուտել զատիկը: **29** Ուստի
 Պիղատոս դուրս ելաւ՝ անոնց քով, եւ ըսաւ.
 «Ի՞նչ ամբաստանութիւն կը ներկայացնէք այս
 մարդուն դէմ»: **30** Պատասխանեցին իրեն. «Եթէ
 ան չարագործ մը չըլլար՝ քեզի չէինք մատներ
 զայն»: **31** Ուստի Պիղատոս ըսաւ անոնց. «Դո՛ւք
 առէք զայն, ու դատեցէ՛ք ձեր Օրէնքին համաձայն»:
 Իսկ Յրեաները ըսին իրեն. «Մեզի արտօնուած
 չէ մեռցնել ոեւէ մէկը». **32** որպէսզի իրագործուի
 Յիսուսի խօսքը՝ որ ըսեր էր, մատնանշելով թէ

ինչ մահով պիտի մեռնէր: **33** Իսկ Պիղատոս
 դարձեալ մտաւ պալատը, կանչեց Յիսուսը եւ
 ըսաւ անոր. «Դ՞նն ես Յրեաներուն թագաւորը»:
34 Յիսուս պատասխանեց անոր. «Ասիկա դուն
 քեզմէ կ'ըսես, թէ ուրիշներ ըսին քեզի՝ իմ
 մասին»: **35** Պիղատոս պատասխանեց. «Միթէ
 ես Յրեայ եմ. քոն ազգդ եւ քահանայապետները
 մատնեցին քեզ ինծի. դուն ինչ ըրած ես»: **36**
 Յիսուս պատասխանեց. «Իմ թագաւորութիւնս
 այս աշխարհէն չէ: Եթէ իմ թագաւորութիւնս
 այս աշխարհէն ըլլար, իմ սպասաւորներս կը
 պայքարէին՝ որ ես չմատնուիմ Յրեաներուն ձեռքը:
 Բայց հիմա՝ իմ թագաւորութիւնս ասկէ չէ»: **37**
 Հետեւաբար Պիղատոս ըսաւ անոր. «Ուրեմն
 դուն թագաւոր մըն ես»: Յիսուս պատասխանեց.
 «Դ՞նն կ'ըսես թէ թագաւոր եմ: Ես սոսնապատակով
 ծնած եմ, սոսնապատակով աշխարհ եկած եմ,
 որպէսզի վկայեմ ճշմարտութեան համար. ո՞վ որ
 ճշմարտութենէն է՝ կը լսէ իմ ձայնս»: **38** Պիղատոս
 ըսաւ անոր. «Ի՞նչ է ճշմարտութիւնը»: Երբ ըսաւ
 ասիկա՝ դարձեալ դուրս ելաւ Յրեաներուն քով,
 եւ ըսաւ անոնց. «Ես ո՛չ մէկ յանցանք կը գտնեմ
 անոր վրայ: **39** Բայց քանի սովորութիւն ունիք՝ որ
 մարդ մը արձակեմ ձեզի Չատիկին, կը փափաքիք
 որ արձակեմ ձեզի Յրեաներուն թագաւորը»: **40**
 Այն ատեն բոլորն ալ դարձեալ պոռացին. «Ո՛չ
 ասիկա, հապա՛ Բարաբբան», մինչդեռ Բարաբբա
 աւագակ մըն էր:

19 Այն ատեն Պիղատոս առաւ Յիսուսը եւ խարազանեց: **2** Չինուորներն ալ հիւսեցին փուշէ պսակ մը ու դրին անոր գլուխը, եւ հագցուցին անոր ծիրանի հանդերձ մը **3** ու կ'ըսէին. «Ողջոյն, Հրեաներո՛ւ թագաւոր», եւ ապտակներ կը զարնէին անոր: **4** Պիղատոս դարձեալ դուրս ելաւ ու ըսաւ անոնց. «Ահա՛ դուրս կը բերեմ զայն ձեզի, որպէսզի գիտնաք թէ ես ո՛չ մէկ յանցանք կը գտնեմ անոր վրայ»: **5** Ուստի Յիսուս դուրս ելաւ՝ կրելով փուշէ պսակն ու ծիրանի հանդերձը, եւ Պիղատոս ըսաւ անոնց. «Ահա՛ այդ մարդը»: **6** Երբ քահանայապետներն ու սպասաւորները տեսան զայն, պոռացին. «Խաչէ՛, խաչէ՛ զայն»: Պիղատոս ըսաւ անոնց. «Դո՛ւք առէք զայն ու խաչեցէք, որովհետեւ ես ո՛չ մէկ յանցանք կը գտնեմ անոր վրայ»: **7** Հրեաները պատասխանեցին իրեն. «Մենք Օրէնք մը ունինք, եւ մեր Օրէնքին համաձայն՝ պարտաւոր է մեռնիլ, որովհետեւ Աստուծոյ Որդի ըրաւ ինքզինք»: **8** Իսկ երբ Պիղատոս լսեց այս խօսքը՝ ալ աւելի վախցաւ, **9** ու դարձեալ մտնելով պալատը՝ ըսաւ Յիսուսի. «Դուն ուրկե՞ ես»: Բայց Յիսուս պատասխան չտուաւ անոր: **10** Ուստի Պիղատոս ըսաւ անոր. «Չե՞ս խօսիր ինծի հետ. չե՞ս գիտեր թէ իշխանութիւն ունիմ խաչելու քեզ, եւ իշխանութիւն ունիմ արձակելու քեզ»: **11** Յիսուս պատասխանեց. «Դուն ո՛չ մէկ իշխանութիւն կ'ունենայիր իմ վրաս, եթէ վերէն տրուած չըլլար քեզի: Ուստի ան որ մատնեց զիս քեզի՝ աւելի մեծ մեղք ունի»: **12**

Ատկէ ետք Պիղատոս կը ջանար արձակել զայն. բայց Յրեաները կ'աղաղակէին. «Եթէ արձակես ատիկա՝ կայսրին բարեկամը չես. ո՞վ որ թագաւոր կ'ընէ ինքզինք՝ կը խօսի կայսրին դէմ»: 13 Ուրեմն Պիղատոս՝ երբ լսեց այս խօսքը՝ դուրս հանեց Յիսուսը, բազմեցաւ դատարանը, այն տեղը՝ որ Քարայատակ կը կոչուէր, իսկ երրայերէն՝ Կապալաթա, 14 (Չատիկի Ուրբաթն էր, գրեթէ վեցերորդ ժամը՝,) եւ ըսաւ Յրեաներուն. «Ահա՛ ձեր թագաւորը»: 15 Բայց անոնք պռռացին. «Վերցնուր, վերցնուր, խաչէ՛ զայն»: Պիղատոս ըսաւ անոնց. «Ձեր թագաւորը խաչեմ»: Քահանայապետները պատասխանեցին. «Մենք թագաւոր չունինք՝ կայսրէն զատ»: 16 Այն ատեն յանձնեց զայն անոնց՝ որպէսզի խաչուէր: 17 Անոնք ալ առին Յիսուսը ու տարին. եւ ինք՝ վերցնելով իր խաչը՝ գնաց Գանկ կոչուած տեղը, որ երրայերէն Գողգոթա կը կոչուի: 18 Յոն խաչեցին զայն, ու երկու ուրիշներ ալ անոր հետ՝ մէկ կողմէն եւ միւս կողմէն, իսկ մէջտեղը՝ Յիսուսը: 19 Պիղատոս գրեց տիտղոս մը ու դրաւ խաչին վրայ. գրուած էր. «Յիսուս Նազովրեցի՝ Յրեաներուն թագաւորը»: 20 Ուստի Յրեաներէն շատեր կարդացին այդ տիտղոսը, որովհետեւ այն տեղը՝ ուր Յիսուս խաչուեցաւ՝ մօտ էր քաղաքին. գրուած էր երրայերէն, յունարէն ու լատիներէն: 21 Իսկ Յրեաներուն քահանայապետները ըսին Պիղատոսի. «Մի՛ գրեր. “Յրեաներուն թագաւորը”, հապա գրէ՛ թէ ի՞նք ըսաւ. “Յրեաներուն թագաւորն եմ”»: 22 Պիղատոս պատասխանեց. «Ի՞նչ որ գրեցի՝

գրեցի»: 23 Երբ զինուորները խաչեցին Յիսուսը, առին անոր հանդերձները ու բաժնեցին չորսի, իւրաքանչիւր զինուորի՝ բաժին մը. նաեւ բաճկոնը: Բաճկոնը առանց կարի էր, ամբողջովին հիւսուած՝ վերէն վար: 24 Ուստի ըսին իրարու. «Չպատռնք զայն, հապա վիճակ ձգենք անոր վրայ՝ թէ որո՞ւ պիտի ըլլայ». որպէսզի իրագործուի այն գրուածը՝ որ կ'ըսէ. «Իմ հանդերձներս բաժնեցին իրենց մէջ, եւ իմ պատմունճանիս վրայ վիճակ ձգեցին»:

Ուրեմն զինուորները ըրին այս բաները: 25 Յիսուսի խաչին քով կայնած Էին իր մայրը եւ իր մօր քոյրը, Մարիամ՝ Կղեովպասի կինը, ու Մարիամ Մագդաղենացին: 26 Ուրեմն երբ Յիսուս տեսաւ իր մայրը, եւ այն աշակերտը որ կը սիրէր՝ քովը կայնած, ըսաւ իր մօր. «Կին, ահա՛ քու որդիդ»: 27 Յետոյ ըսաւ աշակերտին. «Ահա՛ քու մայրդ»: Եւ այդ ժամէն ետք՝ աշակերտը ընդունեց զայն իր քով: 28 Անկէ ետք՝ Յիսուս, գիտնալով թէ արդէն ամեն բան կատարուած է, (որպէսզի գրուածը ամբողջանայ,) ըսաւ. «Ծարա՛ւ եմ»: 29 Հոն անօթ մը դրուած էր՝ լի քացախով. անոնք ալ լեցուցին սպունգ մը քացախով, անցուցին զոպայի մշտիկի մը եւ մատուցանեցին անոր բերանին: 30 Ուստի երբ Յիսուս առաւ քացախը՝ ըսաւ. «Ամեն բան կատարուեցաւ». ու խոնարհեցնելով գլուխը՝ աւանդեց հոգին: 31 Քանի որ Ուրբաթ էր, Հրեաները թախանձեցին Պիղատոսի՝ որ անոնց սրունքները կտորուէին ու վերցուէին, որպէսզի մարմինները չմնան խաչին վրայ մինչեւ Շաբաթ (որովհետեւ

այդ Շաբաթը մեծ օր էր): **32** Ուստի զինուորները եկան եւ կոտորեցին առաջինին սրունքները. նաեւ միւսին՝ որ խաչուած էր անոր հետ: **33** Բայց երբ եկան Յիսուսի, ու տեսան թէ արդէն մեռած էր, չկոտորեցին անոր սրունքները. **34** հապա զինուորներէն մէկը՝ գեղարդով խոցեց անոր կողը, եւ իսկոյն արիւն ու ջուր դուրս ելան: **35** Ան որ տեսաւ այս բաները՝ վկայեց, եւ անոր վկայութիւնը ճշմարիտ է, ու ինք գիտէ թէ կ'ըսէ ճշմարտութիւնը, որ դո՛ւք (ալ) հաւատաք: **36** Արդարեւ այս բաները կատարուեցան, որպէսզի իրագործուի այն գրուածը. «Անոր ո՛չ մէկ ոսկորը պիտի կոտրուի»: **37** Եւ դարձեալ ուրիշ գրուած մը կ'ըսէ. «Պիտի նային անոր՝ որ խոցեցին»: **38** Ասկէ ետք՝ Յովսէփ Արիմաթեացին, (որ Յիսուսի աշակերտ եղած էր, բայց գաղտնի՝ Յրեաներէն վախնալով,) թախանձեց Պիղատոսի՝ որ վերցնէ Յիսուսի մարմինը: Պիղատոս ալ արտօնեց, ուրեմն եկաւ ու վերցուց Յիսուսի մարմինը: **39** Նիկողեմոս ալ եկաւ (որ նախապէս՝ գիշերուան մէջ գացեր էր Յիսուսի), եւ բերաւ զմոռսի ու հալուէի խառնուրդ մը՝ հարիւր լիտրի չափ: **40** Ուրեմն առին Յիսուսի մարմինը, եւ փաթեցին զայն բոյրերուն հետ՝ լաթերու մէջ, ինչպէս Յրեաները սովորութիւն ունին թաղելու: **41** Այն տեղը ուր խաչուեցաւ՝ պարտէզ մը կար, եւ պարտէզին մէջ՝ նոր գերեզման մը, որուն մէջ ամենեւին մարդ դրուած չէր: **42** Ուստի հոն դրին Յիսուսը՝

Հրեաներու Ուրբաթին պատճառով, որովհետեւ գերեզմանը մօտ էր:

20 Մէկշաբթի օրը՝ Մարիամ Մագդաղենացին, առտուն՝ դեռ չլուցած՝ կ'երթայ գերեզման, եւ կը տեսնէ թէ քարը վերցուած է գերեզմանին դռնէն: **2** Ուստի կը վազէ՝ կու գայ Սիմոն Պետրոսի, ու միւս աշակերտին՝ որ Յիսուս կը սիրէր, եւ կ'ըսէ անոնց. «Վերցուցած են Տէրը գերեզմանէն, ու չենք գիտեր ճիշդ դրած են զայն»: **3** Ուրեմն Պետրոս եւ միւս աշակերտը մեկնեցան, ու կ'երթային դէպի գերեզմանը: **4** Երկուքն ալ կը վազէին միասին. սակայն միւս աշակերտը՝ Պետրոսէն աւելի արագ վազելով՝ անկէ առաջ հասաւ գերեզմանը, **5** ծռելով նայեցաւ, եւ տեսաւ թէ լաթերը դրուած էին հոն. բայց ներս չմտաւ: **6** Սիմոն Պետրոս ալ՝ որ կը հետեւէր անոր՝ հասաւ, մտաւ գերեզմանը, ու տեսաւ լաթերը՝ որոնք դրուած էին հոն. **7** իսկ վարշամակը՝ որ անոր գլուխն էր՝ միւս լաթերուն հետ դրուած չէր, հապա ծալուած՝ զանտ տեղ մըն էր: **8** Այն ատեն միւս աշակերտն ալ՝ որ աւելի առաջ եկած էր գերեզմանը՝ ներս մտաւ, տեսաւ եւ հաւատաց: **9** Որովհետեւ դեռ չէին գիտեր գրուածը, թէ պէտք է որ ան յարութիւն առնէ մեռելներէն: **10** Ուստի աշակերտները վերադարձան իրենց տունը: **11** Բայց Մարիամ կայնած էր գերեզմանին դուրսը, եւ կու լար: Մինչ կու լար, ծռեցաւ դէպի գերեզմանը՝ նայելու, **12** ու տեսաւ երկու հրեշտակներ՝ ճերմակ հանդերձներով, որ նստած էին հոն՝ ուր Յիսուսի

մարմինը դրուած էր, մէկը գլուխին կողմը, եւ միւսը՝ ոտքին: 13 Անոնք ըսին իրեն. «Կին, ինչո՞ւ կու լաս»: Ըսաւ անոնց. «Որովհետեւ վերցուցած են իմ Տէրս գերեզմանէն, ու չեմ գիտեր ո՞ւր դրած են զայն»: 14 Երբ ըսաւ ասիկա՝ ետեւ դարձաւ, եւ տեսաւ Յիսուսը՝ որ կայնած էր, ու չէր գիտեր թէ Յիսուսն է: 15 Յիսուս ըսաւ անոր. «Կին, ինչո՞ւ կու լաս, ո՞վ կը փնտռես»: Ինք՝ կարծելով թէ ան պարտիզպանն է, ըսաւ անոր. «Տէր, եթէ դո՛ւն տեղափոխեցիր զայն, ըսէ՛ ինծի՝ ո՞ւր դրիր զայն, որպէսզի վերցնեմ զայն»: 16 Յիսուս ըսաւ անոր. «Մարիամ»: Ան ալ դարձաւ եւ ըսաւ անոր (երայերէն). «Ռաբբունի՛», որ ըսել է՝ Վարդապետ: 17 Յիսուս ըսաւ անոր. «Մի՛ դաչիր ինծի, որովհետեւ դեռ բարձրացած չեմ Յօրս քով. հապա գնա՛ եղբայրներուս եւ ըսէ՛ անոնց. “Ես կը բարձրանամ իմ Յօրս քով ու ձեր Յօր քով, իմ Աստուծոյս քով եւ ձեր Աստուծոյն քով”»: 18 Մարիամ Մագդաղենացին գնաց, ու պատմեց աշակերտներուն թէ ինք տեսաւ Տէրը, եւ թէ ան ըսաւ իրեն այս բաները: 19 Նոյն օրը, Մէկշաբթի իրիկուն, աշակերտներուն հաւաքուած տեղին դռները գոց էին՝ քանի որ կը վախճային Յրեաներէն: Յիսուս եկաւ, կայնեցաւ անոնց մէջտեղ եւ ըսաւ անոնց. «Խաղաղութի՛ն ձեզի»: 20 Ասիկա ըսելով՝ ցուցուց անոնց իր ձեռքերն ու կողը. աշակերտներն ալ ուրախացան՝ երբ տեսան Տէրը: 21 Յիսուս դարձեալ ըսաւ անոնց. «Խաղաղութի՛ն ձեզի. ինչպէս Հայրը դրկեց զիս, ես

ալ կը դրկենմ ձեզ»։ **22** Ասիկա ըսելով՝ փչեց անոնց վրայ եւ ըսաւ անոնց. «Ընդունեցէ՛ք Սուրբ Հոգին։ **23** Որոնց մեղքերը որ ներէ՛ք՝ ներուած ըլլան անոնց, եւ որոնց մեղքերը որ պահէ՛ք՝ պահուած ըլլան»։ **24** Բայց տասներկուքէն մէկը, Երկուորեակ կոչուած Թովմաս, անոնց հետ չէր՝ երբ Յիսուս եկաւ։ **25** Ուրեմն միւս աշակերտները ըսին անոր. «Տէրը տեսանք»։ Ան ալ ըսաւ անոնց. «Պիտի չհաւատամ, եթէ չտեսնեմ գամերուն տիպը՝ իր ձեռքերուն վրայ, ու չմխեմ մատս գամերուն տիպին մէջ, եւ չմխեմ ձեռքս անոր կողին մէջ»։ **26** Ութ օր ետք՝ դարձեալ աշակերտները ներսն էին, Թովմաս ալ՝ անոնց հետ։ Յիսուս եկաւ՝ թէպէտ դռները գոց էին, կայնեցաւ անոնց մէջտեղ եւ ըսաւ. «Խաղաղութիւն ձեզի»։ **27** Յետոյ ըսաւ Թովմասի. «Հոն բեր մատդ ու տեն ձեռքերս, բեր ձեռքդ եւ մխէ կողիս մէջ, ու մի՛ ըլլար անհաւատ, հապա՛ հաւատացեալ»։ **28** Թովմաս պատասխանեց անոր. «Իմ Տէրս եւ Աստուածս»։ **29** Յիսուս ըսաւ անոր. «Դուն հաւատացիր՝ որովհետեւ տեսար զիս. երանի՛ անոնց որ կը հաւատան՝ առանց տեսնելու»։ **30** Յիսուս ըրաւ ուրիշ բազմաթիւ նշաններ ալ իր աշակերտներուն առջեւ, որոնք գրուած չեն այս գիրքին մէջ։ **31** Բայց ասոնք գրուեցան, որպէսզի հաւատաք թէ Յիսուս՝ Քրիստոսն է, Աստուծոյ Որդին, եւ հաւատալով կեանք ունենաք՝ անոր անունով։

21 Ասկէ ետք՝ Յիսուս դարձեալ բացայայտեց ինքզինք իր աշակերտներուն, Տիբերիայի ծովուն

եզերքը. եւ սնապէս բացայայտեց: **2** Սիմոն Պետրոս, թովմաս՝ Երկուորեակ կոչուածը, Նաթանայէլ՝ որ Գալիլեայի Կանա քաղաքէն էր, Չեբեղէոսի որդիները, նաեւ աշակերտներէն երկու ուրիշներ միասին էին: **3** Սիմոն Պետրոս ըսաւ անոնց. «Ես կ'երթամ ձուկ որսալու»: Ըսին անոր. «Մննք ալ կու գանք քեզի հետ»: Դուրս ելան եւ իսկոյն նաւ մտան. բայց այդ գիշեր ոչինչ բռնեցին: **4** Երբ արդէն առտու եղաւ՝ Յիսուս կայնած էր ծովեզերքը, բայց աշակերտները չճանչցան թէ Յիսուսն է: **5** Իսկ Յիսուս ըսաւ անոնց. «Չաւակներ, ունի՞ք ուտելիք բան մը»: Պատասխանեցին իրեն. «Ո՛չ»: **6** Ըսաւ անոնց. «Նետեցէ՛ք ուռկանը նաւուն աջ կողմը, ու պիտի գտնէք»: Ուրեմն նետեցին, եւ ձուկերուն շատութենէն՝ ալ կարող չէին քաշել զայն: **7** Ուստի այն աշակերտը որ Յիսուս կը սիրէր՝ ըսաւ Պետրոսի. «Անիկա Տէրն է»: Երբ Սիմոն Պետրոս լսեց թէ Տէրն է, վրան առաւ բաճկոնը՝ որովհետեւ մերկ էր, ու նետուեցաւ ծովը: **8** Իսկ միւս աշակերտները եկան նաւակով, (որովհետեւ ցամաքէն հեռու չէին, միայն երկու հարիւր կանգունի չափ,) եւ կը քաշէին ուռկանը՝ ձուկերով լեցուն: **9** Երբ ցամաք ելան՝ հոն տեսան վառուած կրակ մը, ու վրան դրուած ձուկ, եւ հաց: **10** Յիսուս ըսաւ անոնց. «Բերէ՛ք այդ ձուկերէն՝ որ բռնեցիք հիմա»: **11** Սիմոն Պետրոս նաւ մտաւ եւ ցամաք քաշեց ուռկանը՝ լի հարիւր յիսուներեք խոշոր ձուկերով. թէպէտ այդքան բան կար, ուռկանը չպատռեցաւ: **12** Յիսուս

ըսաւ անոնց. «Եկէ՛ք, ճաշեցէ՛ք»: Աշակերտներէն ո՛չ մէկը կը յանդգներ հարցնել անոր. «Դուն ո՞վ ես», որովհետեւ գիտէին թէ Տէրն է: **13** Ուստի Յիսուս եկաւ, առաւ հացը եւ տոռաւ անոնց, նմանապէս՝ ձուկը: **14** Այս արդէն երրորդ անգամն էր, որ Յիսուս բացայայտեց ինքզինք իր աշակերտներուն՝ մեռելներէն յարութիւն առնելէն ետք: **15** Երր ճաշեցին՝ Յիսուս ըսաւ Սիմոն Պետրոսի. «Սիմոն, Յովնանի որդի, կը սիրեմ գիս ասոնցմէ աւելի»: Ան ըսաւ անոր. «Այո, Տէր, դուն գիտես թէ կը սիրեմ քեզ»: Ըսաւ անոր. «Արածէ իմ գառնուկներս»: **16** Դարձեալ երկրորդ անգամ ըսաւ անոր. «Սիմոն, Յովնանի որդի, կը սիրեմ գիս»: Ըսաւ անոր. «Այո, Տէր, դուն գիտես թէ կը սիրեմ քեզ»: Ըսաւ անոր. «Հովուէ՛ իմ ոչխարներս»: **17** Ըսաւ անոր երրորդ անգամ. «Սիմոն, Յովնանի որդի, կը սիրեմ գիս»: Պետրոս տրտմեցաւ որ երեք անգամ ըսաւ իրեն. «Կը սիրեմ գիս», եւ ըսաւ անոր. «Տէր, դուն ամէն բան գիտես, դուն գիտես թէ կը սիրեմ քեզ»: Յիսուս ըսաւ անոր. «Արածէ իմ ոչխարներս: **18** Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. “Երբ դեռատի էիր, ինքնիրմէդ գօտի կը կապէիր, եւ ո՛ւր ուզէիր՝ կ’երթայիր. բայց երբ ծերանաս՝ պիտի երկարես ձեռքերդ, ուրիշը գօտի պիտի կապէ քեզի, ու պիտի տանի հոն՝ ուր չես ուզեր”»: **19** Ասիկա խօսեցաւ՝ մատնանշելով թէ ան ինչ մահով պիտի փառաւորէր Աստուած: Երբ խօսեցաւ ասիկա՝ ըսաւ անոր. «Հետեւէ՛ ինծի»: **20** Պետրոս ետեւ դարձաւ, ու տեսաւ թէ իրեն կը

հետեւէր այն աշակերտը՝ որ Յիսուս կը սիրէր. (ան նաեւ ինկեր էր անոր կուրծքին վրայ՝ ընթրիքին ատենը, եւ ըսեր էր. «Տէր, ո՞վ է ան՝ որ պիտի մատնէ քեզ».) **21** Պետրոս՝ տեսնելով զայն՝ ըսաւ Յիսուսի. «Տէր, հապա ասիկա ինչ պիտի ըլլայ»: **22** Յիսուս ըսաւ անոր. «Եթէ ես ուզեմ, որ ան մնայ՝ մինչեւ որ գամ, քու ինչ հոգո՞ւ է. դուն հետեւէ ինծի»: **23** Ուստի սա խօսքը տարածուեցաւ եղբայրներուն մէջ՝ թէ այդ աշակերտը պիտի չմեռնի: Սակայն Յիսուս չըսաւ անոր. «Պիտի չմեռնի», հապա. «Եթէ ես ուզեմ, որ ան մնայ՝ մինչեւ որ գամ, քու ինչ հոգո՞ւ է»: **24** Այս աշակերտն է՝ որ կը վկայէ այս բաներուն մասին, եւ գրեց ասոնք. ու գիտենք թէ անոր վկայութիւնը ճշմարիտ է: **25** Ուրիշ շատ բաներ ալ կան՝ որ Յիսուս ըրաւ. եթէ անոնք մէկ առ մէկ գրուած ըլլային, կարծեմ թէ նոյնիսկ աշխարհն ալ բաւական պիտի չըլլար՝ պարունակելու այն գիրքերը, որ գրուած պիտի ըլլային: Ամէն:

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

1 Առաջին պատմութիւնը գրեցի, ո՛վ Թէոփիլոս, ամէն ինչի մասին՝ որ Յիսուս սկսաւ ընել եւ սորվեցնել, **2** մինչեւ այն օրը՝ երբ Սուրբ Հոգիին միջոցով պատուէրներ տուաւ իր ընտրած առաքեալներուն, ու համբարձաւ: **3** Նաեւ ինքզինք ողջ ցոյց տուաւ անոնց իր չարչարանքներէն ետք՝ շատ ապացոյցներով, քառասուն օր տեսնուելով անոնցմէ եւ խօսելով Աստուծոյ թագաւորութեան մասին: **4** Անոնց հետ եղած ատեն հրամայեց անոնց՝ որ Երուսաղէմէն չհեռանան, հապա սպասեն Հօրը խոստումին՝ «որ ինձմէ լսեցիք», ըսաւ: **5** «որովհետեւ իրաւ է թէ Յովհաննէս մկրտեց ջուրով, բայց դուք՝ շատ օրեր չանցած՝ պիտի մկրտուիք Սուրբ Հոգիով»: **6** Անոնք ալ համախմբուելով՝ հարցուցին իրեն. «Տէր, այս ժամանակին պիտի վերահաստատես Իսրայէլի թագաւորութիւնը»: **7** Ըսաւ անոնց. «Ձեզի չի վերաբերիր գիտնալ ժամանակներն ու ատենները, որ Հայրը իր իշխանութեան մէջ դրաւ: **8** Բայց Սուրբ Հոգիին ձեր վրայ եկած ատենը՝ զօրութիւն պիտի ստանաք, եւ ինծի համար վկաներ պիտի ըլլաք Երուսաղէմի մէջ, ամբողջ Հրեաստանի ու Սամարիայի մէջ, եւ մինչեւ երկրի ծայրերը»: **9** Երբ խօսեցաւ այս բաները, մինչ կը նայէին՝ համբարձաւ, եւ ամպ մը վերցուց զայն անոնց աչքերէն: **10** Մինչ ակնապիշ կը նայէին դէպի երկինք՝ երբ ան վեր կ'ելլէր, ահա՛ երկու մարդիկ՝ ճերմակ տարագով՝ կայնեցան իրենց քով **11** եւ

ըսին. «Գալիլեացի մարդիկ, ինչո՞ւ կայնա՞ծ՝ կը նայիք դէպի երկինք. այս Յիսուսը՝ որ երկինք համբարձաւ ձեզմէ, նոյնպէս պիտի գայ՝ ինչպէս տեսաք անոր երկինք երթալը»: 12 Այն ատեն Երուսաղէմ վերադարձան Ձիթենիներու կոչուած լեռնէն, որ Շաբաթ օրուան ճամբայի չափ մօտ է Երուսաղէմի: 13 Երբ մտան քաղաքը՝ բարձրացան վերնատունը, ուր կը բնակէին Պետրոս ու Յակոբոս, Յովհաննէս եւ Անդրէաս, Փիլիպպոս ու Թովմաս, Բարթողոմէոս եւ Մատթէոս, Յակոբոս Ալփէոսեան ու Սիմոն Նախանձայոյզ եւ Յուդա Յակոբեան: 14 Ասոնք բոլորը միաբանութեամբ կը յարատեւէին աղօթքի եւ աղերսանքի մէջ՝ կիներուն հետ, ու Յիսուսի մօր՝ Մարիամի եւ անոր եղբայրներուն հետ: 15 Այդ օրերը՝ Պետրոս կանգնեցաւ աշակերտներուն մէջ, (հաւաքուած բազմութիւնը հարիւր քսան հոգիի չափ էր,) եւ ըսաւ. 16 «Մարդիկ եղբայրներ, պէտք էր որ իրագործուէր այն գրուածը, որ նախապէս Սուրբ Յոգին ըսեր էր Դաւիթի բերանով՝ Յուդայի մասին, որ առաջնորդ եղաւ Յիսուսը բռնողներուն. 17 որովհետեւ ան մեզի հետ՝ մեր համբանքէն էր, եւ բաժին վիճակուած էր անոր այս սպասարկութենէն: 18 Ուրեմն ասիկա տիրացաւ ագարակի մը՝ անիրաւութեան վարձքով, ու գլխիվայր իյնալով՝ մէջտեղէն ճեղքուեցաւ, եւ իր բոլոր աղիքները դուրս թափեցան: 19 Երուսաղէմի բոլոր բնակիչները գիտցան այս բանը, այնպէս որ այդ ագարակը կոչուեցաւ իրենց բարբառով

Ակեղդամա, այսինքն՝ Արիւնի ագարակ: 20 Որովհետեւ գրուած է Սաղմոսներու գիրքին մէջ. «Անոր բնակարանը ամայի թող ըլլայ, եւ անոր մէջ ոչ մէկը բնակի», նաեւ. «Անոր պաշտօնը ուրիշը առնէ»: 21 Ուրեմն պետք է որ այս մարդոցմէն՝ որոնք մեզի հետ էին այն ամբողջ ժամանակը, երբ Տէր Յիսուս մտաւ ու ելաւ մեր մէջ, 22 Յովհաննէսի մկրտութենէն սկսեալ մինչեւ այն օրը՝ երբ համբարձաւ մեզմէ, ասոնցմէ մէկը մեզի հետ վկայ ըլլայ անոր յարութեան»: 23 Ուստի երկու հոգի կայնեցուցին, Յովսէփը՝ որ Բարսաբա կը կոչուէր եւ Յուստոս մականուանուեցաւ, ու Մատաթիան, 24 եւ աղօթելով՝ ըսին. «Տէր, դուն որ կը ճանչնաս բոլորին սիրտերը, յայտնէ մեզի թէ որ մէկը ընտրեցիր այս երկուքէն. 25 որպէսզի բաժին առնէ այս սպասարկութենէն ու առաքելութենէն, որմէ Յուդա ինկաւ՝ երթալու համար իր տեղը»: 26 Եւ անոնց համար վիճակ ձգեցին, ու վիճակը ելաւ Մատաթիայի. եւ ան համրուեցաւ տասնմէկ առաքեալներուն հետ:

2 Երբ Պենտեկոստէի տօնը հասաւ, բոլորն ալ միաբան՝ մէկ տեղ էին: 2 Յանկարծ շառաչ մը եղաւ երկինքէն՝ սաստկաշունչ հովի մը ձայնին պէս, ու լեցուց ամբողջ տունը՝ ուր նստած էին: 3 Եւ բաժնուած լեզուներ երեւցան իրենց՝ որպէս թէ կրակէ, ու հանգչեցան անոնցմէ իւրաքանչիւրին վրայ: 4 Բոլորն ալ լեցուեցան Սուրբ Հոգիով եւ սկսան խօսիլ ուրիշ լեզուներով, ինչպէս Հոգին իրենց խօսիլ կու տար: 5 Երուսաղէմ բնակող

3րեաներ կային, բարեպաշտ մարդիկ՝ երկինքի տակ եղած ամեն ազգէ: **6** Երբ այս ձայնը եղաւ, բազմութիւնը համախմբուեցաւ ու շփոթեցաւ, որովհետեւ կը լսէին թէ անոնք կը խօսէին իրենցմէ իւրաքանչիւրին սեփական բարբառով: **7** Բոլորն ալ զմայլած էին եւ կը զարմանային՝ իրարու ըսելով. «Ահա ասոնք բոլորն ալ՝ որ կը խօսին, միթէ Գալիլեացի չեն: **8** Ուրեմն ինչպէս կը լսենք՝ մեր իւրաքանչիւրին սեփական բարբառով, այն երկրին՝ որուն մէջ ծնած ենք. **9** Պարթեւներ, Մարեր ու Եղամացիներ, եւ անոնք որ կը բնակին Միջագետքի, 3րեաստանի, Կապադովկիայի, Պոնտոսի, Ասիայի, **10** Փռիւգիայի, Պամփիլիայի ու Եգիպտոսի մէջ, եւ Կիւրենէի մօտ՝ Լիպիայի կողմերը, նաեւ 3ռոմէն գաղթած 3րեաներ ու նորահաւատներ, **11** Կրետացիներ եւ Արաբներ, կը լսենք թէ անոնք կը խօսին Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին՝ մեր լեզուներով»: **12** Բոլորն ալ զմայլած էին, ու տարակուսած՝ կ'ըսէին իրարու. «Ինչ կրնայ ըլլալ ասիկա»: **13** Ոմանք ալ ծաղրելով կ'ըսէին. «Անոնք լի են անոյշ գինիով»: **14** Բայց Պետրոս կանգնեցաւ տասնմէկին հետ, բարձրացուց ձայնը եւ ըսաւ անոնց. «Ո՛վ 3րեաստանցիներ, ու դուք բոլորդ՝ որ կը բնակիք Երուսաղէմ, սա գիտցէք եւ մտիկ ըրէք իմ խօսքերս. **15** որովհետեւ ասոնք ո՛չ թէ արբեցած են՝ ինչպէս դուք կ'ենթադրէք, քանի դեռ օրուան երրորդ ժամն է, **16** հապա ասիկա այն է՝ որ ըսուեցաւ Յովէլ մարգարէին միջոցով.

17 “Վերջին օրերը, - կ'ըսէ Աստուած, - իմ Հոգիէս
 պիտի թափեմ ամէն մարմինի վրայ, եւ ձեր
 որդիներն ու աղջիկները պիտի մարգարեանան,
 ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն,
 ու ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն: 18
 Իմ ծառաներու եւ աղախիններու վրայ ալ
 այդ օրերը իմ Հոգիէս պիտի թափեմ, ու պիտի
 մարգարեանան: 19 Վերը՝ երկինքը՝ սքանչելիքներ
 ցոյց պիտի տամ, եւ վարը՝ երկիրը՝ նշաններ,
 արիւն, կրակ ու ծուխի մառախուղ: 20 արեւը
 պիտի փոխուի խաւարի, եւ լուսինը՝ արիւնի,
 դեռ Տէրոջ մեծ ու երեւելի օրը չեկած: 21 Եւ
 ով որ կանչէ Տէրոջ անունը՝ պիտի փրկուի”: 22
 Իսրայելացի մարդիկ, լսեցէք սա խօսքերը: Յիսուս
 Նազովրեցին, Աստուծոյ ձեզի ցոյց տրուած մարդ
 մը՝ հրաշքներով, սքանչելիքներով ու նշաններով -
 որ Աստուած անոր միջոցով ըրաւ ձեր մէջ, ինչպէս
 դուք ալ գիտէք -, 23 Աստուծոյ որոշած ծրագիրով եւ
 կանխագիտութեամբ մատնուած ըլլալով՝ առիթ
 եւ սպաննեցիք անօրէններու ձեռքով՝ փայտի
 վրայ գամելով: 24 Բայց Աստուած յարուցանեց
 զայն՝ քակելով մահուան ցաւերը, քանի որ կարելի
 չէր որ ան բռնուէր անկէ: 25 Որովհետեւ Դաւիթ
 կ'ըսէ անոր մասին. “Ամէն ատեն կը տեսնեմ Տէրը
 իմ առջեւ, քանի որ իմ աջ կողմս է՝ որպէսզի
 չսասանիմ: 26 Ուստի իմ սիրտս ուրախացաւ եւ
 իմ լեզուս ցնծաց. նաեւ իմ մարմինս ալ պիտի
 հանգստանայ յոյսով. 27 որովհետեւ իմ անձս
 պիտի չթողուս դժոխքին մէջ, ու պիտի չթոյլատրես

որ քու Սուրբդ ապականութիւն տեսնէ: (Hadēs g86) 28 Կեանքի ճամբաները գիտցուցիր ինծի. քու երեսիդ ուրախութեամբ պիտի լեցնես զիս”: 29 Մարդիկ եղբայրներ, արտօնուած է ինծի համարձակութեամբ խօսիլ ձեզի Դաւիթ նահապետին մասին, որ վախճանեցաւ ու թաղուեցաւ, եւ անոր գերեզմանը մինչեւ այսօր մեր մէջ է: 30 Ուրեմն, որովհետեւ ան մարգարէ էր, - եւ գիտէր թէ Աստուած երդումով իրեն խոստացաւ, թէ պիտի յարուցանէ մարմինի համեմատ իր մէջքին պտուղէն եղող Քրիստոսը՝ որ բազմի իր գահին վրայ, - 31 ինք կանխատեսութեամբ խօսեցաւ Քրիստոսի յարութեան մասին, թէ անոր անձը դժոխքը չմնաց եւ անոր մարմինը ապականութիւն չտեսաւ: (Hadēs g86) 32 Աստուած այս Յիսուսը յարուցանեց, որուն մենք բոլորս ալ վկայ ենք: 33 Ուստի Աստուծոյ աջ ձեռքով բարձրանալով ու Զօրմէն ստանալով Սուրբ Զոգիին խոստումը՝ թափեց ասիկա, որ դուք հիմա կը տեսնէք ու կը լսէք: 34 Որովհետեւ Դաւիթ երկինք չելաւ, բայց ինք կ’ըսէ. “Տէրը ըսաւ իմ Տէրոջս. «Բազմե՛ իմ աջ կողմս, 35 մինչեւ որ քու թշնամիներդ պատուանդան դնեն ոտքերուդ»”: 36 Ուրեմն Իսրայէլի ամբողջ տունը ստուգապէս թող գիտնայ թէ Աստուած զայն Տէր ալ ըրաւ, Օծեալ ալ, այդ Յիսուսը՝ որ դուք խաչեցիք»: 37 Երբ լսեցին ասիկա, գոջացին իրենց սիրտին մէջ եւ ըսին Պետրոսի ու միւս առաքեալներուն. «Մարդիկ եղբայրներ, ինչ

ընենք»։ 38 Պետրոս ըսաւ անոնց. «Ապաշխարեցէ՛ք, ու ձեզմէ իւրաքանչիւրը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերու ներումին համար, եւ պիտի ստանաք Սուրբ Հոգիին պարգեւը։ 39 Որովհետեւ խոստումը ձեզի համար է, նաեւ ձեր զաւակներուն, ու բոլոր հեռու եղողներուն, որ Տէրը՝ մեր Աստուածը պիտի կանչէ»։ 40 Եւ ուրիշ շատ խօսքերով կը վկայէր, կը յորդորէր զանոնք ու կ'ըսէր. «Ազատեցէ՛ք դուք ձեզ այս կամակոր սերունդէն»։ 41 Ուստի անոնք՝ որ սիրայօժար ընդունեցին անոր խօսքերը՝ մկրտուեցան. եւ այդ օրը երեք հազար անձի չափ աւելցան եկեղեցիին թիւին վրայ։ 42 Անոնք միշտ կը յարատեւէին առաքեալներուն ուսուցումին ու հաղորդութեան, հաց կտրելու եւ աղօթելու մէջ։ 43 Վախը համակեց ամեն անձ, եւ շատ սքանչելիքներ ու նշաններ կատարուեցան առաքեալներուն միջոցով։ 44 Բոլոր հաւատացեալները միասին էին, եւ բոլոր բաները հասարակաց էին։ 45 Կը ծախէին իրենց ստացուածքներն ու ինչքերը, եւ անոնց գինը կը բաժնէին բոլորին, որոնք որ պէտք ըլլար։ 46 Ամեն օր կը յարատեւէին միաբանութեամբ տաճարը երթալու մէջ, եւ հաց կտրելով իրենց տուններուն մէջ՝ իրենց կերակուրը կ'ուտէին ցնծութեամբ ու պարգամտութեամբ։ 47 Աստուած կը գովաբանէին եւ շնորհք կը գտնէին ամբողջ ժողովուրդին առջեւ. ու Տէրը օրէ օր փրկուածներ կ'աւելցնէր եկեղեցիին թիւին վրայ։

3 Պետրոս ու Յովհաննէս իններորդ ժամու՝ աղօթքին ատենը միասին տաճարը կը բարձրանային: **2** Իր մօր որովայնէն կաղ ծնած մարդ մը կը բերուէր եւ ամէն օր տաճարին Գեղեցիկ կոչուած դրան քով կը դրուէր, որպէսզի տաճարը մտնողներէն ողորմութիւն խնդրէ: **3** Ան, տեսնելով Պետրոսն ու Յովհաննէսը՝ որոնք տաճարը պիտի մտնէին, ողորմութիւն խնդրեց: **4** Իսկ Պետրոս՝ Յովհաննէսի հետ աչքերը անոր վրայ սեւեռելով՝ ըսաւ. «Նայէ մեզի»: **5** Ան ալ ուշադրութիւն դարձուց անոնց, եւ կ'ակնկալէր բան մը ստանալ անոնցմէ: **6** Պետրոս ըսաւ. «Արժաթ ու ոսկի չունիմ, հապա ինչ որ ունիմ՝ զայն կու տամ քեզի. Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունով՝ ոտքի ելիր ու քալէ»: **7** Եւ բռնելով անոր աջ ձեռքէն՝ ոտքի հանեց զայն: Ամփջապէս անոր ոտքերուն ներբաններն ու կոճերը ամրացան, **8** եւ վեր ցատկելով՝ կայնեցաւ, քալեց ու անոնց հետ տաճարը մտաւ, քալելով, ցատկելով եւ Աստուած գովաբանելով: **9** Ամբողջ ժողովուրդը տեսաւ զայն՝ որ կը քալէր ու Աստուած կը գովաբանէր: **10** Գիտէին թէ ան կը նստէր տաճարին Գեղեցիկ կոչուած դրան քով՝ ողորմութեան համար. ուստի այլայլեցան եւ հիացումով լեցուեցան անոր պատահածին համար: **11** Զանի որ ան կառչած էր Պետրոսի ու Յովհաննէսի, ամբողջ ժողովուրդը՝ այլայլած՝ միասին վազեց անոնց քով, Սողոմոնի կոչուած սրահը: **12** Պետրոս՝ տեսնելով ասիկա՝ ըսաւ ժողովուրդին. «Իսրայելացի մարդիկ, ինչո՞ւ

զարմացած էք ասոր վրայ, կամ ինչո՞ւ այդպէս ականապիշ կը նայիք մեզի, իբր թէ մենք մեր զօրութեամբ կամ բարեպաշտութեամբ քալել տուինք ասոր: **13** Աբրահամի, Իսահակի ու Յակոբի Աստուածը, մեր հայրերուն Աստուածը, փառաւորեց իր Որդին՝ Յիսուսը, որ դուք մատնեցիք եւ ուրացաք Պիղատոսի առջեւ՝ երբ ինք վճռեց որ արձակէ: **14** Բայց դուք ուրացաք այդ Սուրբը եւ Արդարը, ու խնդրեցիք որ մարդասպան մը շնորհուի ձեզի, **15** եւ սպաննեցիք կեանքի Ռահվիրան: Իսկ Աստուած մեռելներէն յարուցանեց զայն, ու մենք վկայ ենք ասոր: **16** Անոր անունին հաւատքով՝ անոր անունը ամրացուց ասիկա, որ դուք կը տեսնէք եւ կը ճանչնաք: Անով եղած հաւանութիւն է՝ որ առողջացուց զայն ձեր բոլորին առջեւ: **17** Եւ հիմա, եղբայրներ, զիտեմ թէ անգիտութեամբ ըրիք, ինչպէս ձեր պետերն ալ: **18** Բայց ինչ որ Աստուած նախապէս՝ իր բոլոր մարգարէներուն բերանով՝ ծանուցանած էր Քրիստոսի չարչարուելուն մասին, այսպէս իրագործեց: **19** Ուրեմն ապաշխարեցէք ու դարձի՛ եկէք, որպէսզի ձեր մեղքերը ջնջուին. **20** որպէսզի կազդուրումի ատենները զան Տէրոջ ներկայութենէն, եւ դրկէ նախապէս ձեզի քարոզուած՝ Յիսուս Քրիստոսը: **21** Երկինքը պետք է ընդունի զայն մինչեւ այն ժամանակները՝ երբ բոլոր բաները վերահաստատուին, որոնց մասին Աստուած խօսած է իր սուրբ մարգարէներուն բերանով՝

դարերու սկիզբէն ի վեր: (aiðn g165) 22 Մովսէս ըսաւ մեր հայրերուն. “Տէրը՝ ձեր Աստուածը՝ ձեր եղբայրներէն պիտի հանէ ձեզի մարգարէ մը՝ ինծի նման. անոր մտիկ ըրէք՝ ամէն ինչ որ խօսի ձեզի: 23 Եւ ամէն անձ որ մտիկ չընէ այդ մարգարէին՝ պիտի բնաջնջուի ժողովուրդին մէջէն”: 24 Ու բոլոր մարգարէները, բոլոր անոնք որ յաջորդաբար խօսեցան Սամուէլէ սկսեալ, նախապէս ծանուցանեցին այս օրերն ալ: 25 Դժբէք որդիները մարգարէներուն եւ այն ուխտին՝ որ Աստուած հաստատեց մեր հայրերուն հետ ու ըսաւ Աբրահամի. “Քու զարմովդ պիտի օրհնուին երկրի բոլոր գերդաստանները”: 26 Աստուած իր Որդին յարուցանելով՝ նախ ձեզի՝ դրկեց զայն, որպէսզի օրհնէ ձեզ, իւրաքանչիւրդ դարձնելով ձեր չարութիւններէն»:

4 Երբ անոնք կը խօսէին ժողովուրդին, քահանաները, տաճարին մեծաւորն ու Սադուկեցիները հասան անոնց վրայ, 2 նեղանալով որ անոնք կը սորվեցնէին ժողովուրդին եւ կը հռչակէին Յիսուսի միջոցով մեռելներէն յարութիւն առնելը: 3 Ձեռք բարձրացուցին անոնց վրայ ու արգելարան դրին զանոնք մինչեւ հետեւեալ օրը, որովհետեւ արդէն իրիկուն էր: 4 Բայց այդ խօսքը լսողներէն շատեր հաւատացին, եւ մարդոց թիւը հասաւ գրեթէ հինգ հազարի: 5 Հետեւեալ օրը՝ Երուսաղէմի մէջ հաւաքուեցան անոնց պետերը, երէցներն ու դպիրները, 6 նաեւ Աննա քահանայապետը եւ

Կայիափա, Յովհաննէս ու Աղեքսանդրոս, եւ բոլոր անոնք՝ որ քահանայապետի ընտանիքներէ էին: 7 Չանոնք մէջտեղ կայնեցուցած՝ կը հարցաքննէին. «Ինչ զօրութեամբ կամ ինչ անունով ըրիք այս բանը»: 8 Այն ատեն Պետրոս՝ Սուրբ Յոգիով լեցուած՝ ըսաւ անոնց. «Ժողովուրդի պետեր եւ Իսրայէլի երէցներ, 9 եթէ մենք կը հարցաքննուինք այսօր՝ տկար մարդու մը եղած բարիքին համար, թէ ինչ կերպով բժշկուեցաւ, 10 զիտցէք դուք բոլորդ եւ ամբողջ Իսրայէլի ժողովուրդը, թէ Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունով, որ դուք խաչեցիք բայց Աստուած մեռելներէն յարուցանեց, ահա անով ասիկա բժշկուած կեցած է հոս՝ ձեր առջեւ: 11 Այս է այն բարը, ձեզմէ՝ կառուցանողներէդ անարգուած, որ անկիւնաքարը եղաւ: 12 Եւ ուրիշ ոչ մէկով փրկութիւն կայ. որովհետեւ անկէ զատ ուրիշ անուն մը չկայ երկինքի տակ՝ մարդոց մէջ տրուած, որով կարենանք փրկուիլ»: 13 Իսկ անոնք, նայելով Պետրոսի ու Յովհաննէսի համարձակութեան, եւ ըմբռնելով թէ անուս ու տգէտ մարդիկ են՝ զարմացան, եւ զիտցան թէ անոնք Յիսուսի հետ էին: 14 Տեսնելով այդ բուժուած մարդը՝ որ կայնած էր անոնց հետ, ոչինչ կրցան խօսիլ անոնց դէմ: 15 Ուստի հրամայելով անոնց՝ որ դուրս ելլեն ատեանէն, խորհրդակցեցան իրարու հետ 16 եւ ըսին. «Ինչ ընենք այս մարդոց. որովհետեւ Երուսաղէմի բոլոր բնակիչներուն բացայայտ է թէ իսկապէս երեւելի նշան մը կատարուեցաւ ասոնց միջոցով,

ու մենք չենք կրնար ուրանալ: 17 Սակայն՝
 որպէսզի ժողովուրդին մէջ ալ աւելի չտարածուի՝
 սաստիկ սպառնանք անոնց, որ այլեւս ոչ մէկուն
 խօսին այդ անունով»: 18 Ապա կանչելով զանոնք՝
 պատուիրեցին անոնց որ ամենեւին չխօսին եւ
 չսորվեցնեն Յիսուսի անունով: 19 Բայց Պետրոս
 ու Յովհաննէս պատասխանեցին անոնց. «Եթէ
 Աստուծոյ առջեւ իրաւացի է՝ որ Աստուծմէ աւելի
 ձեզի մտիկ ընենք, դուք դատեցէք. 20 որովհետեւ
 մենք չենք կրնար չխօսիլ մեր տեսածին ու լսածին
 մասին»: 21 Իսկ անոնք դարձեալ սպառնալէ
 ետք՝ արձակեցին զանոնք, առանց զիրենք
 պատուհասելու կերպ մը գտնելու, ժողովուրդին
 պատճառով, քանի որ բոլորն ալ կը փառաբանէին
 Աստուած կատարուածին համար. 22 որովհետեւ
 այն մարդը՝ որուն վրայ այս բժշկութեան նշանը
 եղաւ՝ քառասուն տարեկանէն աւելի էր: 23 Երբ
 արձակուեցան՝ զացին իրենց խումբին քով,
 ու պատմեցին ինչ որ քահանայապետները
 եւ երէցները ըսած էին իրենց: 24 Անոնք ալ,
 երբ լսեցին, միաբանութեամբ իրենց ձայնը
 բարձրացուցին Աստուծոյ՝ ըսելով. «Տէր, դո՛ւն
 ես այն Աստուածը՝ որ ստեղծեցիր երկինքն ու
 երկիրը, ծովը եւ բոլոր անոնց մէջ եղածները, 25
 որ ըսիր քու ծառայիդ՝ Դաւիթի բերանով. “Ինչո՞ւ
 հեթանոսները մոլեգնեցան ու ժողովուրդները
 ունայն բաներ խոկացին. 26 երկրի թագաւորները
 իրարու քով կայնեցան ու պետերը հաւաքուեցան՝
 Տէրոջ դէմ եւ անոր Օծեալին դէմ”: 27 Որովհետեւ

ճշմարտապէս (այս քաղաքին մէջ) հաւաքուեցան
 քու սուրբ Որդիիդ՝ Յիսուսի դէմ, որ դուն
 օծեցիր, Յերովդէս ու Պոնտացի Պիղատոս,
 հեթանոսներուն հետ եւ Իսրայէլի ժողովուրդին
 հետ, 28 ընելու այն՝ ինչ որ քու ձեռքդ ու ծրագիրդ
 նախապէս որոշած էին՝ որ կատարուին: 29 Եւ
 հիմա, Տէր, նայ՛ անոնց սպառնալիքներուն,
 ու շնորհէ՛ քու ծառաներուդ՝ որպէսզի լման
 համարձակութեամբ քարոզենք քու խօսքդ,
 30 երկարելով քու ձեռքդ՝ որ բժշկութիւններ,
 նշաններ եւ սքանչելիքներ կատարուին քու
 սուրբ Որդիիդ՝ Յիսուսի անունով»: 31 Երբ
 անոնք աղերսեցին, սարսեցաւ այն տեղը՝ ուր
 հաւաքուած էին, ու բոլորը լեցուեցան Սուրբ
 Հոգիով եւ համարձակութեամբ կը քարոզէին
 Աստուծոյ խօսքը: 32 Հաւատացեալներուն
 բազմութիւնը մէկ սիրտ ու մէկ հոգի էր: Անոնցմէ
 ոչ մէկը կ'ըսէր իր որեւէ ստացուածքին համար թէ
 “իրն է”. հապա իրենց բոլոր բաները հասարակաց
 կը սեպէին: 33 Առաքեալները մեծ զօրութեամբ
 կը վկայէին Տէր Յիսուսի յարութեան մասին,
 եւ մեծ շնորհք կար անոնց բոլորին վրայ: 34
 Անոնց մէջ ոչ մէկ կարօտեալ կար. որովհետեւ
 անոնք որ տէր էին արտերու կամ տուներու՝
 կը ծախէին, կը բերէին ծախուածներուն
 հասոյթները 35 ու կը դնէին առաքեալներու
 տրամադրութեան տակ”, եւ իւրաքանչիւրին կը
 բաշխուէր իր կարիքին համեմատ: 36 Յովսէս, որ
 առաքեալներէն Բառնաբաս մականուանուեցաւ,

(որ կը թարգմանուի՝ Մխիթարութեան որդի,)
Ղեւտացի, ծնունդով՝ Կիպրացի, 37 ազարակ
մը ունենալով՝ ծախեց, բերաւ դրամը ու դրաւ
առաքեալներու տրամադրութեան տակ:

5 Բայց մարդ մը՝ Անանիա անունով, իր կնոջ՝
Սափիրայի հետ ստացուածք մը ծախեց, 2 անոր
հասոյթէն խորեց իր կնոջ գիտակցութեամբ,
ու մաս մը բերելով՝ դրաւ առաքեալներու
տրամադրութեան տակ՝: **3** Պետրոս ըսաւ.
«Անանիա, ինչո՞ւ Սատանան լեցուց սիրտդ, որ
ստես Սուրբ Հոգիին եւ խորես արտին հասոյթէն:
4 Քուկդ չէ՞ր ան՝ քանի կեցած էր, ու ծախուած ալ՝
իշխանութեանդ տակ էր: Ինչո՞ւ այս բանը դրի
սիրտիդ մէջ. դուն ստեցիր ո՛չ թէ մարդոց, հապա՛
Աստուծոյ»: **5** Անանիա՛ լսելով այս խօսքերը՝
ինկաւ եւ շունչը փչեց. ու մեծ վախ համակեց բոլոր
անոնք՝ որ լսեցին ասիկա: **6** Երիտասարդները
կանգնեցան, պատանքով փաթեցին զայն, եւ
դուրս հանելով թաղեցին: **7** Գրեթէ երեք ժամ ետք՝
անոր կինը ներս մտաւ, չգիտնալով պատահածը:
8 Պետրոս ըսաւ անոր. «Ըսէ՛ ինծի, արտը մյդ
գինով ծախեցիք»: Ան ալ ըսաւ. «Այո՛, այդ գինով»:
9 Ուստի Պետրոս ըսաւ անոր. «Այդ ի՞նչ է, որ
դուք համաձայնեցաք՝ Տէրոջ Հոգին փորձելու.
ահա՛ ամուսինդ թաղողներուն ոտքերը դրան
քով են, բե՛զ ալ պիտի հանեն դուրս»: **10** Եւ
անմիջապէս կինը ինկաւ անոր ոտքերուն քով ու
շունչը փչեց: Երիտասարդները՝ ներս մտնելով՝
մեռած գտան զայն, եւ դուրս հանելով՝ թաղեցին իր

ամուսինին քով: **11** Մեծ վախ մը համակեց ամբողջ եկեղեցին, ու բոլոր անոնք՝ որ լսեցին այս բաները: **12** Շատ նշաններ եւ սքանչելիքներ կը գործուէին առաքեալներուն ձեռքով՝ ժողովուրդին մէջ, ու բոլորը միաբանութեամբ Սողոմոնի սրահին մէջ էին: **13** Ուրիշներէն ոչ մէկը կը յանդգներ յարիւ անոնց, բայց ժողովուրդը կը մեծարէր զանոնք: **14** Տէրոջ հաւատացողները ալ աւելի կը շատնային, այր մարդիկ ու կիներ՝ բազմութեամբ. **15** այնպէս որ հիւանդները կը հանէին հրապարակները եւ կը դնէին պատգարակներով ու մահիճներով, որպէսզի Պետրոսի անցնելու ատեն՝ գոնէ անոր շուքը իյնայ անոնցմէ մէկուն վրայ: **16** Շրջակայ քաղաքներուն բազմութիւնը Երուսաղէմ կը համախմբուէր՝ հիւանդներ եւ անմաքուր ոգիներէ տանջուողներ բերելով, որոնք բոլորն ալ կը բուժուէին: **17** Իսկ քահանայապետն ու բոլոր իրեն հետ եղողները, որոնք Սադուկեցիներու աղանդէն էին, կանգնեցան՝ նախանձով լեցուած, **18** ձեռք բարձրացուցին առաքեալներուն վրայ եւ դրին զանոնք հանրային արգելարանը: **19** Բայց Տէրոջ հրեշտակը գիշերուան մէջ բացաւ բանտին դռները, ու դուրս հանելով զանոնք՝ ըսաւ. **20** «Գացէք, եւ տաճարին մէջ կայնելով՝ ժողովուրդին քարոզեցէք այս կեանքին բոլոր խօսքերը»: **21** Երբ լսեցին ասիկա, տաճարը մտան ամտուն կանուխ, եւ կը սորվեցնէին: Իսկ քահանայապետը եկաւ, նաեւ իրեն հետ եղողները, ժողովի կանչեցին ատեանը եւ Իսրայէլի որդիներուն ամբողջ

ծերակոյտը, ու մարդ դրկեցին բանտը՝ որպէսզի բերեն զանոնք: 22 Երբ սպասաւորները գացին, չգտնելով զանոնք բանտին մէջ՝ վերադարձան, պատմեցին 23 եւ ըսին. «Իրաւ է թէ գտանք բանտը՝ ամէն ապահովութեամբ գոցուած, ու պահապանները՝ դռներուն առջեւ կայնած. բայց բանալով՝ ոչ մէկը գտանք ներսը»: 24 Երբ մեծ քահանան եւ տաճարին մեծաւորն ու քահանայապետները լսեցին այս խօսքերը, կը տարակուսէին թէ ինչ եղած էր անոնց: 25 Մէկը եկաւ եւ պատմեց իրենց. «Ահա՛ այն մարդիկը՝ որ բանտը դրած էիք, տաճարը կայնած են ու ժողովուրդին կը սորվեցնեն»: 26 Այն ատեն մեծաւորը գնաց սպասաւորներուն հետ եւ բերաւ զանոնք առանց բռնութեան, որովհետեւ կը վախնային ժողովուրդէն՝ որ չբարկոծուին: 27 Երբ բերին զանոնք՝ ներկայացուցին ատեանին, ու քահանայապետը հարցուց անոնց. 28 «Սաստիկ չպատուիրեցի՞նք ձեզի, որ չսորվեցնէք այդ անունով. բայց դուք Երուսաղէմը լեցուցիք ձեր ուսուցումով, եւ կը փափաքիք մեր վրայ բերել այն մարդուն արիւնը»: 29 Պետրոս եւ միւս առաքելները պատասխանեցին. «Աստուծոյ պէտք է հնազանդիլ՝ փոխանակ մարդոց: 30 Մեր հայրերուն Աստուածը Յիսուսը յարուցանեց, որ դուք սպաննեցիք՝ փայտէն կախելով: 31 Աստուած իր աջ ձեռքով բարձրացուց զայն՝ իբր Ռահվիրայ ու Փրկիչ, որպէսզի ապաշխարութիւն ու մեղքերու ներում տայ Իսրայէլի: 32 Եւ մենք

անոր վկաներն ենք՝ այս բաներուն համար, նաեւ Սուրբ Յոզիմ՝ որ Աստուած տուաւ իրեն հնազանդ եղողներուն»։ **33** Իսկ անոնք լսելով ասիկա՝ սաստիկ գրգռուեցան, ու խորհրդակցեցան որ սպաննեն զանոնք։ **34** Բայց փարիսեցի մը՝ որուն անունը Գամաղիէլ էր, Օրէնքի վարդապետ մը, պատուաւոր մէկը՝ ամբողջ ժողովուրդին առջեւ, կանգնեցաւ ատեանին մէջ, եւ հրամայեց որ առաքեալները կարճ պահ մը դուրս հանեն։ **35** ապա ըսաւ. «Իսրայելացի մարդիկ, դուք ձեզի ուշադիր եղէք թէ ինչ պիտի ընէք այս մարդոց հանդէպ։ **36** Քանի որ այս օրերէն առաջ Թելդաս ելաւ, իր մասին ըսելով թէ երեւելի մէկն է, ու թիւով չորս հարիւրի չափ մարդիկ յարեցան իրեն. ինք սպաննուեցաւ, եւ բոլոր անոնք որ անսացին իրեն՝ ցրուեցան ու ոչնչացան։ **37** Անկէ ետք Յուդա Գալիլեացին ելաւ՝ աշխարհագիր եղած օրերը, եւ շատ ժողովուրդ քաշեց իր ետեւէն. ինք ալ կորսուեցաւ, ու բոլոր անոնք որ անսացին իրեն՝ ցրուեցան։ **38** Եւ հիմա կ'ըսեմ ձեզի. “Յեռն մնացէք” այդ մարդոցմէն, ու թողուցէք զանոնք. որովհետեւ եթէ այդ ծրագիրը կամ գործը մարդոցմէ է՝ պիտի քանդուի, **39** իսկ եթէ Աստուծոյ է՝ չէք կրնար քանդել ատիկա. որպէսզի Աստուծոյ դէմ իսկ կռուող չգտնուիք”»։ **40** Անոնք ալ անսացին անոր. եւ առաքեալները կանչելով՝ ծեծեցին, ու պատուիրելով որ այլեւս Յիսուսի անունով չխօսին՝ արձակեցին զանոնք։ **41** Իրենք ալ մեկնեցան ատեանին առջեւէն,

ուրախանալով որ արժանացան Տէրոջ անունին
համար անպատուութիւն: 42 Ու ամէն օր տաճարը
եւ տուներուն մէջ չէին դադրեր սորվեցնելէ ու
Յիսուս Զրիստոսը աւետելէ:

6 Այդ օրերը, երբ աշակերտները շատցան,
Հելլենացիներուն կողմէն տրտունջ մը եղաւ
Եբրայեցիներուն դէմ. որովհետեւ իրենց այրիները
կ'անտեսուէին ամէն օրուան ողորմութեան
սպասարկութեան ատեն: 2 Տասներկուքը
կանչեցին աշակերտներուն բազմութիւնը եւ
ըսին. «Մեզի չի վայլեր ձգել Աստուծոյ խօսքը, եւ
սպասարկել սեղաններու: 3 Ուրեմն, եղբայրներ,
փնտռեցէ՛ք ձեր մէջ եօթը հոգի՝ բարի վկայուած,
Սուրբ Հոգիով ու իմաստութեամբ լեցուն,
որպէսզի նշանակենք զանոնք այս զբաղումին
համար, 4 իսկ մենք յարատեւենք աղօթքի եւ
Աստուծոյ խօսքին սպասարկութեան մէջ»: 5 Այս
խօսքը հաճեցուց ամբողջ բազմութիւնը. ուստի
ընտրեցին Ստեփանոսը, հաւատքով ու Սուրբ
Հոգիով լեցուն մարդ մը, Փիլիպպոսը, Պրոքորոնը,
Նիկանովրան, Տիմովնան, Պարմենան եւ
Նիկողայոս նորահաւատ Անտիոքցին: 6
Ասոնք ներկայացուցին առաքեալներուն.
անոնք ալ աղօթելով՝ իրենց ձեռքերը դրին
անոնց վրայ: 7 Եւ Աստուծոյ խօսքը կ'աճէր,
աշակերտներուն թիւը չափազանց կը շատնար
Երուսաղէմի մէջ, ու քահանաներէն մեծ
բազմութիւն մը կը հնազանդէր նոր հաւատքին:
8 Ստեփանոս, որ հաւատքով ու զօրութեամբ

լեցուած մարդ մըն էր, մեծ սքանչելիքներ եւ նշաններ կ'ըներ ժողովուրդին մէջ: **9** Բայց ոմանք, այն ժողովարանէն՝ որ կը կոչուէր Ազատագրուածներուն, Կիւրենացիներուն ու Աղեքսանդրացիներուն ժողովարանը, եւ ոմանք՝ որ Կիլիկիայէն ու Ասիայէն էին, կանգնեցան եւ կը վիճաբանէին Ստեփանոսի հետ. **10** բայց կարող չէին դիմադրել այն իմաստութեան ու հոգիին, որով ան կը խօսէր: **11** Այն ատեն կաշառեցին քանի մը մարդիկ, որպէսզի ըսեն. «Մենք լսեցինք թէ ան հայիոյական խօսքեր կ'արտասանէր Մովսէսի եւ Աստուծոյ դէմ»: **12** Այսպէս՝ գրգռեցին ժողովուրդը, երէցներն ու դպիրները, եւ հասնելով անոր վրայ՝ յափշտակեցին զինք ու տարին ատեանին առջեւ: **13** Սուտ վկաներ ներկայացուցին, որոնք կ'ըսէին. «Այս մարդը չի դադրիր հայիոյական խօսքեր արտասանելէ այս սուրբ տեղին եւ Օրէնքին դէմ: **14** Որովհետեւ լսեցինք իրմէ, որ կ'ըսէր թէ “այս Նազովրեցի Յիսուսը պիտի քակէ այս տեղը, ու պիտի փոխէ Մովսէսի մեզի աւանդած սովորութիւնները”»: **15** Բոլոր ատեանին մէջ բազմողները երբ ականապիշ նայեցան անոր, անոր երեսը տեսան՝ հրեշտակի երեսի պէս:

7 Զահանայապետը ըսաւ. «Այդ բաները այդպէս են իրապէս»: **2** Ան ալ ըսաւ. «Մարդիկ եղբայրներ ու հայրեր, մտիկ ըրէք. փառքի Աստուածը երեւցաւ մեր հօր՝ Աբրահամի, երբ Միջագետքի մէջ էր, դեռ Խառանի մէջ չքնակած, եւ ըսաւ անոր. **3** “Ելի՛ր քու երկրէդ ու ազգականներէդ, եւ գնա՛ այն երկիրը՝

որ ես պիտի ցուցնեմ քեզի”: 4 Այն ատեն՝ ելլելով Քաղդէացիներու երկրէն՝ բնակեցաւ Խառանի մէջ, եւ անոր հօր մեռնելէն ետք՝ անկէ փոխադրեց զայն այս երկիրը, ուր դուք կը բնակիք հիմա: 5 Ո՛չ մէկ ժառանգութիւն տուաւ անոր այս երկրին մէջ, ո՛չ իսկ ոտքի քայլի մը չափ տեղ. բայց խոստացաւ ասիկա իբր կալուած տալ իրեն, եւ իրմէ ետք՝ իր զարմին, երբ դեռ ինք զաւակ չունէր: 6 Աստուած սնապէս խօսեցաւ. “Անոր զարմը պանդուխտ պիտի ըլլայ օտար երկրի մը մէջ, ու զայն ստրուկ պիտի ընեն եւ չարչարեն չորս հարիւր տարի: 7 Բայց ես պիտի դատեմ այն ազգը՝ որուն ստրուկ պիտի ըլլան, - ըսաւ Աստուած, - եւ անկէ ետք պիտի ելլեն ու այս տեղին մէջ պիտի պաշտեն զիս”:

8 Անոր տուաւ թլփատութեան ուխտը, եւ յետոյ Աբրահամ ծնաւ Իսահակը, ու թլփատեց զայն ութերորդ օրը: Իսահակ ծնաւ Յակոբը, Յակոբ ալ՝ տասներկու նահապետները: 9 «Նահապետները՝ նախանձելով Յովսէփի՝ ծախեցին զայն Եգիպտոս տարուելու համար. բայց Աստուած անոր հետ էր, 10 ու ազատեց զայն իր բոլոր տառապանքներէն: Շնորհք եւ իմաստութիւն տուաւ անոր Եգիպտոսի Փարաւոն թագաւորին առջեւ. ան ալ կառավարիչ նշանակեց զայն Եգիպտոսի ու իր ամբողջ տան վրայ: 11 Երբ Եգիպտոսի եւ Քանանի ամբողջ երկրին մէջ սով եղաւ, ու մեծ տառապանք, մեր հայրերը ուտելիք չէին գտներ: 12 Յակոբ՝ երբ լսեց թէ Եգիպտոսի մէջ ցորեն կը գտնուի՝ առաջին անգամ ճամբեց մեր հայրերը: 13 Երկրորդ անգամ՝

Յովսէփի ճանչցուց ինքզինք իր եղբայրներուն,
 եւ Յովսէփի ցեղը յայտնի եղաւ Փարաւոնի: **14**
 Յովսէփ մարդ որկեց ու կանչեց իր հայրը՝ Յակոբը,
 եւ բոլոր ազգականները՝ եօթանասունհինգ անձ:
15 Յակոբ իջաւ Եգիպտոս, ուր վախճանեցան
 ինք ու մեր հայրերը, **16** եւ փոխադրուելով
 Սիւքէմ՝ դրուեցան այն գերեզմանին մէջ, որ
 Աբրահամ արժաթով գնած էր Սիւքէմի հօր՝
 Եմովրի որդիներէն: **17** Երբ մօտեցաւ ժամանակը
 խոստումին՝ որուն համար Աստուած երդում
 րած էր Աբրահամի, ժողովուրդը աճեցաւ ու
 բազմացաւ Եգիպտոսի մէջ՝ **18** մինչեւ որ ուրիշ
 թագաւոր մը ելաւ, որ չէր ճանչնար Յովսէփը: **19**
 Ան խորամանկութեամբ վարուեցաւ մեր ցեղին
 դէմ եւ չարչարեց մեր հայրերը, մինչեւ անգամ
 անոնց երախաները դուրս նետել տալով, որպէսզի
 չապրեցնէ: **20** «Այդ ատեն Մովսէս ալ ծնաւ, որ
 գեղեցիկ էր Աստուծոյ առջեւ, ու երեք ամիս
 մեծցաւ իր հօր տունը: **21** Երբ ան դուրս
 դրուեցաւ, Փարաւոնի աղջիկը տարաւ զայն եւ
 մեծցուց իբր իր որդին: **22** Մովսէս կրթուեցաւ
 Եգիպտացիներուն ամբողջ իմաստութեամբ,
 ու զօրաւոր էր իր խօսքերով եւ գործերով:
23 Երբ լման քառասուն տարեկան եղաւ, իր
 սիրտը փափաքեցաւ այցելել իր եղբայրներուն՝
 Իսրայէլի որդիներուն: **24** Անիդրաւուած տեսնելով
 Իսրայէլացիներէն մէկը՝ պաշտպանեց զայն, եւ
 ընկճուածին վրէժը առաւ՝ զարնելով Եգիպտացին:
25 Կը կարծեր թէ իր եղբայրները պիտի հասկնային

թէ Աստուած իրենց փրկութիւն պիտի տար իր ձեռքով. բայց անոնք չհասկցան: **26** Հետեւեալ օրը հանդիպեցաւ անոնց՝ երբ կը կռուէին, եւ ուզեց հաշտեցնել զանոնք՝ ըսելով. “Մարդիկ, դուք եղբայրներ էք. ինչո՞ւ կ’անիրաւէք զիրար”:

27 Բայց ան որ կ’անիրաւէր ընկերը՝ վանեց զինք ու ըսաւ. “Ո՞վ քեզ պետ եւ իրաւարար նշանակեց մեր վրայ: **28** Չի՞ս ալ կ’ուզես սպաննել, ինչպէս երէկ սպաննեցիր Եգիպտացին”: **29** Այս խօսքէն ետք Մովսէս փախաւ ու պանդխտացաւ Մադիամի երկրին մէջ, ուր ծնաւ երկու որդի: **30** Երբ քառասուն տարին լրացաւ, Տէրոջ հրեշտակը երեւցաւ անոր Սինա լեռան անապատին մէջ՝ մորենիի կրակի բոցով: **31** Մովսէս ալ՝ երբ նշմարեց՝ զարմացաւ այդ տեսիլքին վրայ, ու երբ մօտեցաւ դիտելու՝ Տէրոջ ձայնը եկաւ անոր, որ կ’ըսէր. **32** “Ես եմ քու հայրերուդ Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը”: Մովսէս ալ՝ վախէն դողալով՝ չէր յանդգներ դիտել: **33** Տէրը ըսաւ անոր. “Հանճ ոտքերուդ կօշիկները, որովհետեւ սուրբ երկիր է այն տեղը՝ ուր կայնած ես: **34** Ի՛րապէս տեսայ Եգիպտոսի մէջ եղող ժողովուրդիս չարչարանքը, լսեցի անոնց հառաչանքը, եւ իջայ զանոնք ազատելու ու հիմա եկոր, քեզ դրկեմ Եգիպտոս”:

35 «Այս Մովսէսը, որ ուրացան՝ ըսելով. “Ո՞վ պետ եւ իրաւարար նշանակեց քեզ”, զայն դրկեց Աստուած իբր պետ եւ ազատարար՝ այն հրեշտակին ձեռքով, որ երեւցաւ անոր

մորենիին մէջ: **36** Անիկա՛ դուքս հանեց զանոնք, սքանչելիքներ ու նշաններ ցոյց տալով Եգիպտոսի երկրին եւ Կարմիր ծովուն, ու քառասուն տարի՝ անապատին մէջ: **37** Այս Մովսէսն է որ ըսաւ Իսրայելի որդիներուն. “Տէրը՝ ձեր Աստուածը՝ ձեր եղբայրներէն պիտի հանէ ձեզի մարգարէ մը՝ ինծի նման. մտիկ ըրէք անոր”: **38** Ասիկա ան է որ համախմբումին մէջ էր՝ անապատը, Սինա լեռան վրայ իրեն խօսող հրեշտակին եւ մեր հայրերուն հետ: Ան կենարար պատգամներ ընդունեց՝ մեզի տալու. **39** բայց մեր հայրերը չուզեցին անոր հնազանդիլ, հապա գայն վանեցին իրենցմէ ու Եգիպտոս դարձան իրենց սիրտին մէջ՝ **40** ըսելով Ահարոնի. “Աստուածներ շինէ մեզի, որպէսզի երթան մեր առջեւէն. որովհետեւ այդ Մովսէսը՝ որ հանեց մեզ Եգիպտոսի երկրէն, չենք գիտեր թէ ինչ եղաւ անոր”: **41** Այն օրերը շինեցին հորթ մը, զոհ մատուցանեցին կուռքին, եւ կ’ուրախանային իրենց ձեռքերուն գործերով: **42** Աստուած ալ երես դարձուց ու մատնեց զանոնք պաշտելու երկինքի աստղերը, ինչպէս գրուած է Մարգարէներու գիրքին մէջ. “Միթէ ինծի՞ մատուցանեցիք մորթուած անասուններ եւ զոհեր՝ քառասուն տարի անապատին մէջ, ո՛վ Իսրայելի տունը: **43** Հապա կրեցիք Մողոքի վրանը ու ձեր Հռեմփա աստուծոյն աստղը, ձեր կերտած պատկերները՝ անոնց երկրպագելու համար: Ես ալ պիտի տարագրեմ ձեզ Բաբելոնի միւս կողմը”: **44** «Անապատին մէջ՝ մեր հայրերը

ունէին վկայութեան խորանը, ինչպէս Մովսէսի
 հետ խօսողը պատուիրած էր որ շինէ զայն՝
 տեսած տիպարին պէս: **45** Անոնց յաջորդող
 մեր հայրերն ալ՝ զայն ստանալով՝ Յեսուի հետ
 մտցուցին կալուածը այն հեթանոսներուն, որ
 Աստուած վանեց մեր հայրերուն առջեւէն: Զոն
 մնաց մինչեւ Դաւիթի օրերը, **46** որ Աստուծոյ առջեւ
 շնորհք գտաւ եւ ուզեց բնակարան մը կառուցանել
 Յակոբի Աստուծոյն. **47** բայց Սողոմոն տուն մը
 կառուցանեց անոր: **48** Սակայն Ամենաբարձրը
 չի բնակիր ձեռակերտ տաճարներու մէջ, ինչպէս
 մարգարէն կ'ըսէ. **49** “Երկինքը իմ գահս է,
 ու երկիրը իմ ոտքերուս պատուանդանն է.
 ինչպիսի տուն պիտի կառուցանեք ինծի, -
 կ'ըսէ Տէրը, - կամ ինչպէս պիտի ըլլայ իմ
 հանգստավայրիս տեղը. **50** միթէ իմ ձեռքս չ'է
 շիներ այս բոլորը”: **51** «Խստապարանոցներ
 ու սիրտով եւ ականջով անթլփատներ, դուք
 միշտ կ'ընդդիմանաք Սուրբ Զոգիին, ինչպէս ձեր
 հայրերը՝ այնպէս ալ դուք: **52** Մարգարէներէն
 ո՞րը չհալածեցին ձեր հայրերը, ու չսպաննեցին
 անոնք՝ որ նախապէս ծանուցանեցին այն
 Արդարին գալուստը: Անոր մատնիչները եւ
 սպաննողները եղաք հիմա, **53** դժբ՝ որ ստացաք
 Օրէնքը հրեշտակներու կարգադրութեամբ, բայց
 չպահեցիք զայն»: **54** Այս բաները լսելով՝ անոնք
 կը մոլեգնէին իրենց սիրտերուն մէջ եւ կը
 կրճտէին իրենց ակռաները անոր դէմ: **55** Բայց
 ան՝ լեցուած Սուրբ Զոգիով՝ ականապիշ նայեցաւ

դէպի երկինք, տեսաւ Աստուծոյ փառքը ու Յիսուսն ալ՝ որ Աստուծոյ աջ կողմը կայնած էր, եւ ըսաւ. **56** «Ահա՛ կը տեսնեմ երկինքը բացուած, ու մարդու Որդին՝ Աստուծոյ աջ կողմը կայնած»: **57** Իսկ անոնք բարձրաձայն աղաղակելով՝ գոցեցին իրենց ականջները, եւ բոլորը միաբանութեամբ խուժեցին անոր վրայ, **58** ու քաղաքէն դուրս հանելով՝ քարկոծեցին զայն. եւ վկաները իրենց հանդերձները պահ դրին երիտասարդի մը ոտքերուն քով, որ կը կոչուէր Սօդոս: **59** Ու կը քարկոծէին Ստեփանոսը, որ կը գոչէր. «Տէր Յիսուս, ընդունէ՛ իմ հոգիս»: **60** Եւ ծնրադրելով՝ բարձրաձայն աղաղակեց. «Տէր, այս մեղքը մի՛ սեպեր ատոնց»: Ասիկա ըսելով՝ ննջեց:

8 Սօդոս ալ կամակից էր անոր սպաննուելուն: Այդ օրը մեծ հալածանք եղաւ Երուսաղէմի մէջ եղող եկեղեցիին դէմ: Առաքեալներէն զատ՝ բոլորն ալ ցրուեցան Զրեաստանի ու Սամարիայի երկրամասերուն մէջ: **2** Բարեպաշտ մարդիկ վերցուցին Ստեփանոսը, եւ մեծապէս հեծեծեցին անոր վրայ: **3** Իսկ Սօդոս կ'աւերէր եկեղեցին. կը մտնէր տուները, կը քաշկռտէր այր մարդիկ ու կիներ, եւ կը մատնէր զանոնք՝ բանտ նետուելու: **4** Ուրեմն անոնք որ ցրուած էին՝ կը շրջէին խօսքը աւետելով: **5** Փիլիպպոս ալ Սամարիայի մէկ քաղաքը իջնելով՝ Քրիստոսը կը քարոզէր անոնց: **6** Եւ բազմութիւնը՝ միաբան՝ ուշադիր էր Փիլիպպոսի ըսածներուն, լսելով ու տեսնելով անոր ըրած նշանները: **7** Որովհետեւ

անմաքուր ոգիները բարձրաձայն գոռալով դուրս կ'ելլէին բազմաթիւ դիւահարներէ, 8 եւ շատ անդամալոյծներ ու կաղեր կը բուժուէին: 9 Ուստի մեծ ուրախութիւն եղաւ այդ քաղաքին մէջ: Բայց մարդ մը կար՝ Սիմոն անունով, որ նախապէս մոգութիւն կ'ըներ այդ քաղաքին մէջ եւ կը շշմեցներ Սամարիայի ազգը, իր մասին ըսելով թէ մեծ մէկն է: 10 Բոլորն ալ, պզտիկէն մինչեւ մեծը, ուշադիր էին անոր ու կ'ըսէին. «Ասիկա Աստուծոյ մեծ (կոչուած) զօրութիւնն է»: 11 Ուշադրութիւն կը դարձնէին իրեն, որովհետեւ կը շշմեցներ զիրենք մոգութիւններով՝ երկար ժամանակէ ի վեր: 12 Բայց երբ հաւատացին Փիլիպպոսի՝ որ կ'աւետէր Աստուծոյ թագաւորութեան ու Յիսուս Քրիստոսի անունին մասին, մկրտուեցան թէ՛ այր մարդիկ եւ թէ կիներ: 13 Սիմոն ինք ալ հաւատաց, ու մկրտուելով՝ չէր թողուր Փիլիպպոսը՝, եւ կը զմայլէր՝ տեսնելով կատարուած հրաշքներն ու մեծ նշանները: 14 Երբ Երուսաղէմի մէջ եղող առաքեալները լսեցին թէ Սամարացիները ընդունած են Աստուծոյ խօսքը, դրկեցին անոնց Պետրոսն ու Յովհաննէսը, 15 որոնք հոն հասնելով՝ աղօթեցին անոնց համար, որպէսզի ստանան Սուրբ Զոգին: 16 (Որովհետեւ դեռ անոնցմէ ոեւէ մէկուն վրայ իջած չէր, հապա միայն մկրտուած էին Տէր Յիսուսի անունով:) 17 Այն ատեն իրենց ձեռքերը դրին անոնց վրայ, ու կը ստանային Սուրբ Զոգին: 18 Սիմոն, տեսնելով թէ Սուրբ Զոգին կը տրուի՝ առաքեալներուն

ձեռնադրութեամբ, դրամ մատուցանեց անոնց
 եւ ըսաւ. **19** «Ինծի ալ տուէք այս իշխանութիւնը,
 որպէսզի որո՛ւ վրայ որ ձեռք դնեմ՝ ստանայ
 Սուրբ Զոգին»: **20** Պետրոս ըսաւ անոր. «Քու
 արծաթդ թող կորսուի քեզի հետ, որովհետեւ
 կարծեսիր թէ Աստուծոյ պարգեւը կը ստացուի
 դրամով: **21** Դուն մաս ու բաժին չունիս այդ
 բանին մէջ, որովհետեւ սիրտդ ուղիղ չէ Աստուծոյ
 առջեւ: **22** Ուրեմն զղջա՛ այդ չարամտութենէդ եւ
 աղերսէ՛ Աստուծոյ. թերեւս ներուի քեզի սիրտիդ
 չար մտածումը: **23** Որովհետեւ կը տեսնեմ
 քեզ մաղծի դառնութեան եւ անիրաւութեան
 կապին մէջ»: **24** Սիմոն պատասխանեց. «Դո՛ւք
 աղերսեցէք Տէրոջ ինծի համար, որպէսզի այդ
 ձեր ըսածներէն ոչինչ պատահի ինծի՞»: **25**
 Անոնք ալ՝ վկայելէ ու Տէրոջ խօսքը քարոզելէ
 ետք՝ վերադարձան Երուսաղէմ, աւետարանելով
 Սամարացիներու բազմաթիւ գիւղերուն մէջ: **26**
 Տէրոջ հրեշտակը խօսեցաւ Փիլիպպոսի՝ ըսելով.
 «Կանգնէ՛ ու գնա՛ հարաւային կողմը, այն ճամբան՝
 որ կ'իջնէ Երուսաղէմէն դէպի Գազա եւ ամայի
 է»: **27** Ան ալ կանգնեցաւ ու գնաց: Եւ ահա՛
 Եթովպիացի ներքինի մը, Եթովպիացիներու
 Կանդակա թագուհիին մէկ պալատականը, -
 որ անոր բոլոր գանձերուն վերակացուն էր
 ու Երուսաղէմ եկած էր երկրպագելու, - **28**
 կը վերադառնար եւ իր կառքը նստած՝ կը
 կարդար Եսայի մարգարէին գիրքը: **29** Զոգին
 ըսաւ Փիլիպպոսի. «Մօտեցիր ու գնա՛ այդ կառքին

քով»։ 30 Փիլիպպոս ալ վազելով գնաց մօտը, լսեց թէ կը կարդար Եսայի մարգարէին գիրքը, 31 եւ ըսաւ. «Արդեօք կը հասկնամ կարդացածդ»։ Ան ալ ըսաւ. «Ինչպէս կրնամ հասկնալ, եթէ մէկը չառաջնորդէ զիս»։ Եւ աղաչեց Փիլիպպոսի՝ որ ելլէ իր քով նստի։ 32 Գիրքին մէջ կարդացած հատուածը սա՛ էր. «Ոչխարի պէս սպանդանոց տարուեցաւ, ու զինք խուզողին առջեւ մունջ կեցող գառի պէս՝ իր բերանը չբացաւ։ 33 Իր նուաստացումին մէջ՝ իր իրաւունքը առնուեցաւ, եւ ո՛վ պիտի պատմէ անոր սերունդին մասին. որովհետեւ անոր կեանքը երկրէն վերցուած է»։ 34 Ներքինին հարցուց Փիլիպպոսի. «Կ'աղերսնմ բեզի, մարգարէն որո՞ւ համար կ'ըսէ ասիկա. ինքնիրե՞ն համար՝ թէ ուրիշի մը համար»։ 35 Ուստի Փիլիպպոս բացաւ իր բերանը, եւ սկսելով Գիրքին այդ խօսքէն՝ Յիսուսը աւետեց անոր։ 36 Մինչ կ'երթային իրենց ճամբան, եկան ջուրի մը քով։ Ներքինին ըսաւ. «Ահա՛ ջուր, ալ ի՞նչ կ'արգիլէ զիս մկրտուելէ»։ 37 (Փիլիպպոս ըսաւ անոր. «Եթէ կը հաւատաս ամբողջ սիրտովդ՝ արտօնուած է»։ Ան ալ պատասխանեց. «Կը հաւատամ թէ Յիսուս Քրիստոս՝ Աստուծոյ Որդին է»։) 38 Ու հրամայեց որ կայնեցնեն կառքը։ Երկուքն ալ իջան ջուրը, թէ՛ Փիլիպպոս, թէ՛ ներքինին. ու մկրտեց զայն։ 39 Երբ դուրս ելան ջուրէն, Տէրոջ Զոգին յափշտակեց Փիլիպպոսը. ներքինին ալ չտեսաւ զայն, եւ գնաց իր ճամբան ուրախութեամբ։ 40 Իսկ Փիլիպպոս գտնուեցաւ Ազովտոսի մէջ, ու շրջելով

աւետարանեց բոլոր քաղաքներուն մէջ՝ մինչեւ որ հասաւ Կեսարիա:

9 Բայց Սողոս տակաւին սպառնալիք եւ սպանութիւն կը փչէր Տէրոջ աշակերտներուն դէմ: Քահանայապետին քով գնաց 2 ու նամակներ ուղեց անկէ՝ Դամասկոսի ժողովարանները տանելու, որպէսզի՝ եթէ գտնէ այդ ճամբային հետեւողներ՝ այր մարդիկ կամ կիներ, կապած բերէ Երուսաղէմ: **3** Երբ կ'երթար ու մօտեցաւ Դամասկոսի, յանկարծ երկինքէն լոյս մը փայլատակեց իր շուրջը, **4** եւ ինք գետին իյնալով՝ լսեց ձայն մը որ կ'ըսէր իրեն. «Սաւռու, Սաւռու, ինչո՞ւ կը հալածես զիս»: **5** Ան ալ ըսաւ. «Դուն ո՞վ ես, Տէր»: Ու Տէրը ըսաւ. «Ես Յիսուսն եմ, որ դուն կը հալածես. տաժանելի է քեզի՝ աքացել խթանի դէմ»: **6** Ան ալ՝ դողալով եւ այլալլած՝ ըսաւ. «Տէր, ի՞նչ կ'ուզես որ ընեմ»: **7** Տէրը ըսաւ անոր՝. «Կանգնէ ու մտի՛ր քաղաքը, եւ պիտի ըսուի քեզի թէ ի՞նչ պետք է ընես»: Այն մարդիկը՝ որ իրեն կ'ուղեկցէին՝ անխօս կեցած էին. միայն ձայնը կը լսէին, բայց ո՛չ մէկը կը տեսնէին: **8** Սողոս գետինէն ոտքի ելաւ, սակայն ո՛չ մէկը կը տեսնէր բաց աչքերով. ուստի բռնեցին անոր ձեռքէն ու մտցուցին Դամասկոս: **9** Երեք օր կեցաւ՝ առանց տեսնելու. ո՛չ կերաւ, ո՛չ ալ խմեց: **10** Աշակերտ մը կար Դամասկոսի մէջ՝ Անանիա անունով: Տէրը ըսաւ անոր տեսիլքի մէջ. «Անանիա»: Ան ալ ըսաւ. «Տէր, ահա՛ հոս եմ»: **11** Տէրը ըսաւ անոր. «Կանգնէ ու գնա՛ այն փողոցը՝ որ Ուղիղ

կը կոչուի, եւ հոն՝ Յուդայի տան մէջ փնտռէ Սողոս անունով Տարսոնցի մը. որովհետեւ ահա՛ ան կ'աղօթէ, **12** ու տեսիլքի մէջ տեսաւ մարդ մը՝ Անանիա անունով, քովը մտած եւ ձեռքը դրած իր վրայ՝ որպէսզի վերստին տեսնէ»: **13** Անանիա ալ պատասխանեց. «Տէր, շատերէ լսեցի այդ մարդուն մասին թէ որչափ չարիք ըրաւ քու սուրբերուդ՝ Երուսաղէմի մէջ. **14** եւ հոն ալ քահանայապետներէն իրաւասութիւն ունի կապելու բոլոր անոնք՝ որ կը կանչեն քու անունդ»: **15** Տէրը ըսաւ անոր. «Դուն գնա՛, որովհետեւ ան ինձմէ ընտրուած անօթ մըն է՝ իմ անունս կրելու հեթանոսներուն, թագաւորներուն եւ Իսրայէլի որդիներուն առջեւ, **16** ու ես ցոյց պիտի տամ անոր թէ որչափ պետք է չարչարուի իմ անունիս համար»: **17** Ուստի Անանիա գնաց, մտաւ այդ տունը, եւ դնելով ձեռքերը անոր վրայ՝ ըսաւ. «Սաւռնդ եղբայր, Տէրը դրկեց զիս, այն Յիսուսը՝ որ ճամբան երեւցաւ քեզի երբ կու գայիր, որպէսզի վերստին տեսնես ու Սուրբ Զոգիով լեցուիս»: **18** Իսկոյն թեփերու պէս բաներ ինկան անոր աչքերէն, եւ անմիջապէս տեսողութիւնը վերստացաւ. կանգնեցաւ, մկրտուեցաւ, **19** ու կերակուր ուտելով՝ զօրացաւ, եւ քանի մը օր կեցաւ Դամասկոսի մէջ եղող աշակերտներուն հետ: **20** Իսկոյն ժողովարաններուն մէջ կը քարոզէր Յիսուսը, թէ ան է Աստուծոյ Որդին: **21** Բոլոր լսողները մեծապէս զմայլած էին ու կ'ըսէին. «Ասիկա չէ՞ ան՝ որ Երուսաղէմի մէջ

կը տապալէր այս անունը կանչողները. հոս
 ալ եկած էր ասոր համար, որպէսզի զանոնք
 կապած՝ քահանայապետներուն տանի»։ 22
 Բայց Սողոս ալ աւելի կը զօրանար եւ կը
 շփոթեցնէր Դամասկոս բնակող Զրեաները,
 ապացուցանելով թէ այս է Քրիստոսը։ 23 Շատ
 օրեր անցնելէն ետք՝ Զրեաները խորհրդակցեցան
 որ սպաննեն զայն։ 24 Բայց Սողոսի յայտնուեցաւ
 անոնց դաւադրութիւնը։ Յերեկ ու գիշեր կը
 հսկէին դռները, որպէսզի սպաննեն զայն։ 25
 Իսկ աշակերտները գիշերուան մէջ առին զայն
 եւ պարիսպէն վար իջեցուցին՝ զամբիւղի մը
 մէջ։ 26 Երբ Սողոս եկաւ Երուսաղէմ՝ կը ձգտէր
 միանալ աշակերտներուն. բայց բոլորն ալ կը
 վախնային իրմէ, չհաւատալով թէ ան աշակերտ
 էր։ 27 Բայց Բառնաբաս՝ առնելով զայն՝ տարաւ
 առաքելներուն ու պատմեց անոնց թէ ինչպէս
 ճամբան տեսաւ Տէրը՝ որ խօսեցաւ իրեն հետ,
 եւ թէ ինչպէս համարձակութեամբ քարոզեց
 Յիսուսի անունով՝ Դամասկոսի մէջ։ 28 Ուստի կը
 մտնէր ու կ'ելլէր անոնց հետ Երուսաղէմի մէջ,
 համարձակութեամբ քարոզելով Տէր Յիսուսի
 անունով։ 29 Նաեւ կը խօսէր եւ կը վիճաբանէր
 Զելլենացիներուն հետ. անոնք ալ կը ձգտէին
 սպաննել զինք։ 30 Իսկ եղբայրները՝ ասիկա
 գիտնալով՝ զինք իջեցուցին Կեսարիա, եւ անկէ
 ճամբեցին Տարսոն։ 31 Ուրեմն եկեղեցիները
 խաղաղութիւն ունեցան ամբողջ Զրեաստանի,
 Գալիլեայի ու Սամարիայի մէջ, եւ կը շինուէին

ու կը բազմանային՝ ընթանալով Տէրոջ վախով
 եւ Սուրբ Հոգիին մխիթարութեամբ: **32** Քանի
 Պետրոս ամէն կողմ կը շրջէր, Լիւդդեա բնակող
 սուրբերուն քով ալ իջաւ: **33** Հոն գտաւ մարդ
 մը՝ Ենեա անունով, որ մահիճը պառկած էր
 ութ տարիէ ի վեր՝ անդամալոյծ ըլլալով: **34**
 Պետրոս ըսաւ անոր. «Ենեա՛, Յիսուս Քրիստոս
 կը բժշկէ քեզ. կանգնէ՛ եւ շտկէ՛ անկողինդ»: Ան
 ալ իսկոյն կանգնեցաւ: **35** Լիւդդեայի ու Սարոնի
 բոլոր բնակիչները տեսան զայն, եւ դարձան
 Տէրոջ: **36** Աշակերտ եղած կին մը կար Յոպպէի
 մէջ՝ Տաբիթա անունով, որ թարգմանութեամբ
 Այծեմնիկ կը կոչուի. ասիկա լեցուած էր իր
 ըրած բարի գործերով եւ ողորմութիւններով:
37 Այդ օրերը հիւանդացաւ ու մեռաւ: Լուացին
 զինք, եւ դրին վերնատուն մը: **38** Լիւդդեա մօտ
 էր Յոպպէի. ուստի աշակերտները՝ լսելով թէ
 Պետրոս հոն է՝ դրկեցին անոր երկու մարդ,
 աղաչելով որ չյամենայ եւ զայ իրենց քով: **39**
 Պետրոս ալ կանգնեցաւ ու գնաց անոնց հետ:
 Երբ հասաւ, հանեցին զինք վերնատունը: Բոլոր
 այրիները կայնեցան անոր շուրջ, կու լային եւ կը
 ցուցնէին այն բաճկոններն ու հանդերձները, որ
 Այծեմնիկ կը շինէր՝ երբ իրենց հետ էր: **40** Պետրոս
 ալ՝ դուրս հանելով բոլորը՝ ծնրադրեց, աղօթեց,
 եւ դառնալով դէպի մարմինը՝ ըսաւ. «Տաբիթա՛,
 կանգնէ՛»: Ան ալ բացաւ իր աչքերը, ու տեսնելով
 Պետրոսը՝ ուղիղ նստաւ: **41** Ինք ալ ձեռքը տուաւ
 անոր, կանգնեցուց զայն, եւ կանչելով սուրբերն ու

այրիները՝ ողջ ներկայացուց զայն անոնց առջեւ:
42 Այս բանը գիտցուեցաւ ամբողջ Յոպպէի մէջ,
ու շատեր հաւատացին Տէրոջ: 43 Եւ ինք շատ
օրեր մնաց Յոպպէ՝ Սիմոն անունով կաշեգործի
մը քով:

10 Մարդ մը կար Կեսարիայի մէջ՝ Կոռնելիոս
անունով, հարիւրապետ՝ Իտալական կոչուած
գունդին մէջ, 2 բարեպաշտ, եւ աստուածավախ՝
իր ամբողջ տունով. ան շատ ողորմութիւններ
կու տար ժողովուրդին ու ամէն ատեն կ'աղերսէր
Աստուծոյ: 3 Գրեթէ օրուան իններորդ ժամուսն՝
տեսիլքի մէջ ան բացայայտօրէն տեսաւ Աստուծոյ
հրեշտակը, որ մտաւ իր քով եւ ըսաւ իրեն.
«Կոռնելիոս»: 4 Երբ ականապիշ նայեցաւ անոր՝
վախցած ըսաւ. «Ինչ է, Տէր»: Իսկ ան ըսաւ
անոր. «Քու աղօթքներդ ու ողորմութիւններդ
բարձրացան Աստուծոյ առջեւ՝ յիշատակի համար:
5 Հիմա մարդիկ դրկէ Յոպպէ, եւ կանչէ՛ Սիմոն
անունով մէկը՝ որ Պետրոս մականուանեալ է: 6
Ան հիւրընկալուած է Սիմոն անունով կաշեգործի
մը քով, որուն տունը ծովուն մօտ է»: 7 Երբ իրեն
հետ խօսող հրեշտակը մեկնեցաւ, կանչեց իր տան
ծառաններէն երկուքը, նաեւ իրեն տրամադրուած
զինուորներէն բարեպաշտ մէկը՝, 8 եւ ամէն
բան պատմելով՝ դրկեց զանոնք Յոպպէ: 9
Հետեւեալ օրը, մինչ անոնք կը ճամբորդէին ու կը
մօտենային քաղաքին, Պետրոս՝ վեցերորդ ժամուսն
ատենները՝ տանիքը բարձրացաւ աղօթելու: 10
Շատ անօթեցած ըլլալով՝ կ'ուզէր ճաշակել. մինչ

ճաշը կը պատրաստուէր, վերացում ունեցաւ:
 11 Տեսաւ երկինքը բացուած, ու չորս ծայրերէն
 կապուած անօթ մը՝ մեծ լաթի մը պէս՝ որ
 իջաւ երկրի վրայ. 12 անոր մէջ կային երկրի
 ամեն տեսակ չորքոտանիները, գազաններն ու
 սողունները, նաեւ երկինքի թռչունները: 13 Եւ
 ձայն մը եկաւ իրեն. «Կանգնէ՛, Պետրոս, մորթէ՛
 ու կէր»: 14 Բայց Պետրոս ըսաւ. «Ամենեւին,
 Տէր. որովհետեւ ես բնաւ չեմ կերեր պիղծ կամ
 անմաքուր բան»: 15 Դարձեալ ձայնը կրկին
 եկաւ իրեն. «Ի՛նչ որ Աստուած մաքրեց, դուն
 պիղծ մի՛ սեպեր»: 16 Ասիկա պատահեցաւ երեք
 անգամ, յետոյ անօթը դարձեալ վերացաւ երկինք:
 17 Մինչ Պետրոս ինքնիրեն կը տարակուսէր
 թէ ինչ կրնար ըլլալ իր տեսած այս տեսիլքը,
 ահա Կոռնելիոսէ ղրկուած մարդիկը՝ հարցնելով
 Սիմոնի տան մասին՝ կայնեցան դրան առջեւ, 18 եւ
 կանչելով հարցափորձեցին. «Սիմոնը, որ Պետրոս
 մականուանեալ է, հո՞նս հիւրընկալուած է»: 19 Մինչ
 Պետրոս կը մտածէր տեսիլքին մասին, Սուրբ
 Զոգին ըսաւ անոր. «Ահա երեք մարդիկ քեզ կը
 փնտռեն: 20 Զետեւաբար կանգնէ՛, իջի՛ր, ու գնա՛
 անոնց հետ՝ առանց տատամսելու, որովհետեւ ես
 ղրկեցի զանոնք»: 21 Պետրոս ալ իջաւ այդ մարդոց
 քով՝ եւ ըսաւ. «Ահա ես եմ ան՝ որ կը փնտռէք.
 ինչո՞ւ եկած էք»: 22 Անոնք ալ ըսին. «Կոռնելիոս
 հարիւրապետը, արդար ու աստուածավախ մարդ
 մը՝ բարի վկայուած ամբողջ Զրեաներու ազգէն,
 պատգամ ստացաւ սուրբ հրեշտակէ մը՝ որ կանչէ

քեզ իր տունը եւ լսէ քու խօսքերդ»: 23 Ուստի ներս
 կանչեց զանոնք ու հիւրընկալեց: Հետեւեալ օրը՝
 Պետրոս ելաւ եւ մեկնեցաւ անոնց հետ. իրեն հետ
 գացին նաեւ Յովպէէն եղող քանի մը եղբայրներ:
 24 Յաջորդ օրը մտան Կեսարիա. Կոռնելիոս
 ալ կը սպասէր անոնց՝ հրաւիրած ըլլալով իր
 ազգականներն ու մտերիմ բարեկամները: 25 Երբ
 Պետրոս ներս մտաւ, Կոռնելիոս դիմաւորեց զայն,
 եւ անոր ոտքը իյնալով կ'երկրպագէր: 26 Բայց
 Պետրոս ոտքի հանեց զայն՝ ըսելով. «Կանգնէ, ես
 ինքս ալ մարդ եմ»: 27 Ու անոր հետ խօսակցելով՝
 ներս մտաւ, շատեր գտաւ՝ համախմբուած, 28
 եւ ըսաւ անոնց. «Դուք գիտէք թէ օրինաւոր չէ
 հրեայ մարդու մը՝ հաղորդակցիլ օտարազգիի մը
 հետ կամ մօտենալ անոր. բայց Աստուած ցոյց
 տուաւ ինծի որ մարդոցմէ ոչ մէկը պիտի կամ
 անմաքուր կոչեմ: 29 Ուստի երբ կանչուեցայ՝ եկայ
 առանց հակաճառութեան. ուրեմն կը հարցնեմ,
 ինչ քանի համար կանչեցիք զիս»: 30 Կոռնելիոս ալ
 ըսաւ. «Զորս օր առաջ՝ մինչեւ այս ժամը ծոմ կը
 պահէի, ու իններորդ ժամուն տանս մէջ կ'աղօթէի.
 եւ ահա փայլուն տարագով մարդ մը կայնեցաւ
 առջեւս ու ըսաւ. 31 “Կոռնելիո՛ս, քու աղօթքդ
 ընդունուեցաւ, եւ ողորմութիւններդ Աստուծոյ
 առջեւ յիշուեցան: 32 Ուրեմն մարդ դրկէ Յովպէ
 ու կանչէ Սիմոնը, որ Պետրոս մականուանեալ է.
 ան ծովուն մօտ՝ Սիմոն անունով կաշեգործի մը
 տան մէջ հիւրընկալուած է. երբ գայ՝ պիտի խօսի
 քեզի”: 33 Ուստի անյապաղ մարդ դրկեցի քեզի,

եւ գոհ եմ՝ որ եկար: Ուրեմն հիմա մենք բոլորս
 ներկայ ենք Աստուծոյ առջեւ՝ լսելու ամէն ինչ
 որ Աստուծմէ հրամայուած է քեզի»: 34 Պետրոս
 բացաւ իր բերանը ու ըսաւ. «Ճշմարտապէս
 կ'ըմբռնեմ թէ Աստուծոյ քով աչառութիւն չկայ,
 35 հապա ամէն ազգի մէջ իրեն ընդունելի է
 ան՝ որ իրմէ կը վախնայ եւ արդարութիւն կը
 գործէ: 36 Այն խօսքը՝ որ Աստուած դրկեց
 Իսրայելի որդիներուն, աւետելու խաղաղութիւնը՝
 Յիսուս Քրիստոսի միջոցով, (ան է բոլորին Տէրը,
) 37 դուք լաւ գիտէք այդ խօսքը, որ եղաւ
 ամբողջ Հրեաստանի մէջ՝ Գալիլեայէն սկսելով,
 այն մկրտութենէն ետք՝ որ Յովհաննէս քարոզեց:
 38 Նազարեթէն եղող Յիսուսը, որ Աստուած
 օծեց Սուրբ Հոգիով եւ զօրութեամբ, շրջեցաւ
 բարիք գործելով ու բժշկելով բոլոր Չարախօսէն
 ճնշուածները, քանի որ Աստուած իրեն հետ էր.
 39 եւ մենք վկայ ենք այն բոլոր բաներուն՝ որ
 ըրաւ Հրեաստանի ու Երուսաղէմի մէջ: Չայն
 սպաննեցին՝ փայտէն կախելով: 40 Աստուած
 յարուցանեց զայն երրորդ օրը, եւ բացայայտեց
 զայն 41 ոչ թէ ամբողջ ժողովուրդին, հապա՝ մեզի
 - նախապէս Աստուծմէ ընտրուածներուս՝ վկայ
 ըլլալու -, որ կերանք ու խմեցինք իրեն հետ՝
 իր մեռելներէն յարութիւն առնելէն ետք: 42 Եւ
 ինք պատուիրեց մեզի, որ քարոզենք ու վկայենք
 ժողովուրդին թէ ինք է Աստուծմէ սահմանուած
 Դատաւորը ողջերուն եւ մեռելներուն: 43 Բոլոր
 մարգարէները կը վկայեն անոր մասին թէ ո՛վ

որ հաւատայ անոր՝ պիտի ստանայ մեղքերու ներում անոր անունով»: **44** Մինչ Պետրոս կ'ըսէր այս խօսքերը, Սուրբ Հոգին իջաւ բոլոր անոնց վրայ՝ որ կը լսէին խօսքը: **45** Թլփատուածներէն եղող բոլոր հաւատացեալները, որ եկած էին Պետրոսի հետ, զմայլեցան որ հեթանոսներուն վրայ ալ թափուեցաւ Սուրբ Հոգիին պարգեւը. **46** որովհետեւ կը լսէին թէ անոնք կը խօսէին ուրիշ լեզուներով եւ կը մեծարէին Աստուած: **47** Այն ատեն Պետրոս ըսաւ. «Կրնամք մէկը արգիլել, որ ջուրով մկրտուին ասոնք՝ որոնք ստացան Սուրբ Հոգին մեզի պէս»: **48** Ու հրամայեց որ մկրտուին Տէրոջ անունով: Այն ատեն խնդրեցին իրմէ՝ որ հոն մնայ քանի մը օր:

11 Առաքեալներն ու եղբայրները, որոնք Հրէաստանի կողմերն էին, լսեցին թէ հեթանոսներն ալ ընդունած են Աստուծոյ խօսքը: **2** Երբ Պետրոս Երուսաղէմ բարձրացաւ, թլփատուածները կը վիճէին անոր հետ **3** ու կ'ըսէին. «Դուն անթլփատ մարդոց քով մտար եւ անոնց հետ հաց կերար»: **4** Պետրոս ալ սկսաւ դէպքը կարգով բացատրել անոնց՝ ըսելով. **5** «Ես կ'աղօթէի Յոպպէ քաղաքը, երբ՝ վերացումի մէջ՝ տեսայ տեսիլք մը. անօթ մը՝ մեծ լաթի պէս, չորս ծայրերէն կախուած, իջաւ երկինքէն ու հասաւ մինչեւ ինծի: **6** Մինչ կը դիտէի՝ աչքերս սեւեռած անոր վրայ, տեսայ երկրի չորքոտանիները, զազաններն ու սողունները, նաեւ երկինքի թռչունները: **7** Ու լսեցի ձայն մը՝ որ կ'ըսէր ինծի.

“Կանգնէ, Պետրոս, մորթէ եւ կնր”։ **8** Բայց ես ըսի.
 “Ամենեւին, Տէր. որովհետեւ պիղծ կամ անմաքուր
 բան մը բնաւ մտած չէ բերանս”։ **9** Կրկին այդ
 ձայնը երկինքէն պատասխանեց ինծի. “Ի՛նչ որ
 Աստուած մաքրեց, դուն պիղծ մի՛ սեպեր”։ **10**
 Ասիկա պատահեցաւ երեք անգամ, ու ամէն
 ինչ դարձեալ վեր քաշուեցաւ՝ դէպի երկինք։ **11**
 Եւ ահա անյապաղ երեք մարդիկ՝ Կեսարիայէն
 դրկուած ինծի՝ եկան ու կեցան այն տան առջեւ,
 ուր հիւրընկալուած էի։ **12** Հոգին ալ ըսաւ ինծի՝ որ
 երթամ անոնց հետ առանց տատամսելու։ Այս
 վեց եղբայրներն ալ գացին ինծի հետ, ու մտանք
 այդ մարդուն տունը։ **13** Ան ալ պատմեց մեզի
 թէ ինչպէս իր տան մէջ տեսաւ հրեշտակ մը, որ
 կայնած էր եւ կ’ըսէր իրեն. “Մարդ դրկէ Յոպպէ
 ու կանչէ Սիմոնը, որ Պետրոս մականուանեալ
 է։” **14** Ան խօսքեր պիտի ըսէ քեզի, որպէսզի
 փրկուիք՝ դուն եւ ամբողջ տունդ”։ **15** Երբ սկսայ
 խօսիլ, Սուրբ Հոգին իջաւ անոնց վրայ, ինչպէս
 նախապէս մեր վրայ ալ։ **16** Եւ յիշեցի Տէրոջ ըսած
 խօսքը. “Արդարեւ Յովհաննէս մկրտեց ջուրով,
 բայց դուք պիտի մկրտուիք Սուրբ Հոգիով”։ **17**
 Ուրեմն եթէ Աստուած տուաւ անոնց միեւնոյն
 պարգեւը՝ ինչպէս մեզի, երբ հաւատացին Տէր
 Յիսուս Քրիստոսի, ես ո՞վ էի՝ որ կարենայի արգիլել
 Աստուած»։ **18** Այս բաները լսելով՝ հանդարտեցան,
 ու փառաբանեցին Աստուած՝ ըսելով. «Ուրեմն
 Աստուած հեթանոսներուն ալ ապաշխարութիւն
 շնորհեց՝ կեանքի համար»։ **19** Ստեփանոսի մահէն

ետք եղած հալածանքէն ցրուածները՝ հասան
 նաեւ մինչեւ Փիւնիկէ, Կիպրոս եւ Անտիոք,
 քարոզելով Աստուծոյ խօսքը ոչ մէկուն՝ բայց
 միայն Զրեաներուն: 20 Անոնցմէ ոմանք կիպրացի
 ու կիւրենացի մարդիկ էին, որոնք երբ մտան
 Անտիոք՝ կը խօսէին Զելլենացիներուն հետ,
 աւետելով Տէր Յիսուսը: 21 Տէրոջ ձեռքը անոնց
 հետ էր, եւ բազմաթիւ մարդիկ հաւատացին ու
 դարձան Տէրոջ: 22 Այս բաներուն լուրը հասաւ
 Երուսաղէմի եկեղեցիին ականջը, եւ ճամբեցին
 Բառնաբասը՝ որ երթայ մինչեւ Անտիոք: 23
 Երբ ան եկաւ ու տեսաւ Աստուծոյ շնորհքը՝
 ուրախացաւ, եւ կը յորդորէր բոլորն ալ՝ որ
 յարին Տէրոջ յօժար սիրտով: 24 (Քանի որ ինք
 բարի մարդ էր, Սուրբ Զոգիով ու հաւատքով
 լեցուն) եւ մեծ բազմութիւն մը աւելցաւ Տէրոջ
 եկեղեցիին թիւին վրայ: 25 Յետոյ Բառնաբաս
 մեկնեցաւ Տարսոն՝ փնտռելու Սողոսը, ու գտնելով
 զայն՝ բերաւ Անտիոք: 26 Անոնք լման տարի մը
 եկեղեցիին հետ հաւաքուելով՝ մեծ բազմութեան
 մը սորվեցուցին, եւ Անտիոքի մէջ աշակերտները
 Քրիստոնեայ կոչուեցան առաջին անգամ: 27
 Այդ օրերը՝ Երուսաղէմէն մարգարէներ իջան
 Անտիոք: 28 Անոնցմէ մէկը, Ագաբոս անունով,
 կանգնեցաւ եւ մատնանշեց Զոգիին զօրութեամբ՝
 թէ մեծ սով մը պիտի ըլլայ ամբողջ երկրագունդին
 մէջ. ան իրապէս եղաւ Կոդիոսի օրերը: 29
 Ուստի աշակերտները որոշեցին օգնութիւն
 դրկել Զրեաստանի մէջ բնակող եղբայրներուն,

իւրաքանչիւրը իր եկամուտին համեմատ: 30
Այդպէս ալ ըրին, դրկելով զայն երեցներուն՝
Բառնաբասի ու Սողոսի ձեռքով:

12 Այդ ատենները Յերովդէս թագաւորը ձեռք
դրաւ եկեղեցիէն ոմանց վրայ՝ չարչարելու
համար: 2 Սուրով սպաննեց Յովհաննէսի
եղբայրը՝ Յակոբոսը, 3 եւ տեսնելով թէ հաճելի
է Յրեաներուն, շարունակելով բռնեց նաեւ
Պետրոսը: (Բաղարջակերթի օրերն էին:) 4
Երբ ձերբակալեց զայն՝ բանտը դրաւ, ու
յանձնեց չորսական զինուորէ բաղկացած չորս
ջոկատի՝ որպէսզի պահեն. եւ կը փափաքէր
ներկայացնել զայն ժողովուրդին՝ Չատիկէն ետք:
5 Ուստի Պետրոս պահուած էր բանտին մէջ,
բայց եկեղեցին շերմեռանդութեամբ կ'աղօթէր
Աստուծոյ՝ անոր համար: 6 Երբ Յերովդէս
պիտի ներկայացնէր զայն դատարանին, այդ
օրուան նախորդ գիշերը՝ Պետրոս կը քնանար
երկու զինուորներու մէջտեղ՝ կրկին շղթաներով
կապուած. իսկ պահապանները կը պահէին
բանտը՝ դրան առջեւ: 7 Յանկարծ Տէրոջ
հրեշտակը անոր վրայ հասաւ, ու լոյս մը փայլեցաւ
տան մէջ: Ապա Պետրոսի կողը խթելով՝ արթնցուց
զայն եւ ըսաւ. «Կանգնէ շուտով»: Շղթաները վար
ինկան անոր ձեռքերէն, 8 ու հրեշտակը ըսաւ
անոր. «Կապէ գօտիդ ու հագիր հողաթափներդ»:
Ան ալ ըրաւ այնպէս: Յետոյ ըսաւ անոր. «Վրանդ առ
հանդերձդ ու հետեւէ ինծի»: 9 Ան ալ դուրս ելլելով՝
հետեւեցաւ անոր. բայց չէր գիտեր թէ հրեշտակին

կատարածը իրական է, հապա կը կարծեր թէ տեսիլք կը տեսնէ: **10** Երբ անոնք անցան առաջին ու երկրորդ պահապաններէն, եկան մինչեւ երկաթէ դուռը, որ քաղաքը կը տանէր եւ ինքնիրեն բացուեցաւ անոնց առջեւ: Անկէ դուրս ելլելով՝ փողոց մը անցան, ու հրեշտակը իսկոյն հեռացաւ անկէ: **11** Պետրոս ինքնիրեն գալով՝ ըսաւ. «Հիմա ճշմարտապէս գիտեմ թէ Տէրը դրկեց իր հրեշտակը եւ ազատեց զիս Հերովդէսի ձեռքէն ու Հրեաներու ժողովուրդին ամբողջ ակնկալութենէն»: **12** Եւ գիտակից ըլլալով՝ գնաց Մարկոս մականուանեալ Յովհաննէսի մօր Մարիամի տունը, ուր շատեր համախմբուած կ'աղօթէին: **13** Երբ բախեց տան դուրսի դուռը, Հռովդէ անունով աղախին մը մօտեցաւ՝ մտիկ ընելու: **14** Ճանչնալով Պետրոսի ձայնը՝ ուրախութենէն չբացաւ դուռը, հապա ներս վազելով՝ լուր տուաւ թէ Պետրոս կայնած է դրան առջեւ: **15** Իսկ անոնք ըսին անոր. «Խելագարած ես»: Բայց ինք կը պնդէր թէ այդպէս է: Անոնք ալ կ'ըսէին. «Անոր հրեշտակն է»: **16** Սակայն Պետրոս կը շարունակէր բախել, ու երբ բացին՝ շշմեցան զինք տեսնելով: **17** Իսկ ան ձեռքը շարժեց՝ որ անոնք լռեն, ու պատմեց անոնց թէ ինչպէս Տէրը հանեց զինք բանտէն, եւ ըսաւ. «Պատմեցէք այս բաները Յակոբոսի ու եղբայրներուն»: Յետոյ մեկնեցաւ եւ գնաց ուրիշ տեղ մը: **18** Երբ առտու եղաւ, մեծ խլրտում կար զինուորներուն մէջ, թէ արդեօք Պետրոս ինչ եղած էր: **19** Իսկ Հերովդէս, երբ փնտռեց զայն ու չգտաւ, հարցաքննեց

պահապանները եւ հրամայեց որ մեռցուին: Ապա Յրեաստանէն իջաւ Կեսարիա, ու հոն կը կենար: **20** Յերովդէս չափազանց զայրացած էր Տիւրացիներուն եւ Սիդոնացիներուն դէմ: Անոնք ալ միաբանութեամբ եկան իրեն, ու հաշտութիւն խնդրեցին՝ համոզելով թագաւորին Բղաստոս սենեկապետը. որովհետեւ իրենց երկիրը կը կերակրուէր թագաւորին երկրէն: **21** Որոշուած օր մը, Յերովդէս՝ հագած թագաւորական տարազը եւ բազմած դատարանը՝ կը ճառախօսէր անոնց: **22** Ամբոխն ալ կ'աղաղակէր. «Ատիկա Աստուծոյ ձայն է, ոչ թէ մարդու»: **23** Անմիջապէս Տէրոջ հրեշտակը զարկաւ զայն՝ փառքը Աստուծոյ չտալուն համար. ու որդնալից ըլլալով՝ շունչը փչեց: **24** Իսկ Աստուծոյ խօսքը կ'աճէր ու կը բազմանար: **25** Բառնաբաս եւ Սօդոս՝ երբ գործադրեցին իրենց յանձնուած սպասարկութիւնը՝ վերադարձան Երուսաղէմէն, իրենց հետ առնելով նաեւ Յովհաննէսը՝ որ Մարկոս մականուանեալ էր:

13 Քանի մը մարգարէներ ու վարդապետներ կային Անտիոք եղող եկեղեցիին մէջ. Բառնաբաս, Շմաւոն՝ որ Նիգեր կը կոչուէր, Ղուկիոս Կիւրենացին, Մանայէն՝ Յերովդէս չորրորդապետին սննդակիցը, եւ Սօդոս: **2** Մինչ անոնք Տէրոջ պաշտօն կը կատարէին ու ծոմ կը պահէին, Սուրբ Հոգին ըսաւ. «Չատեցէք ինծի Բառնաբասը եւ Սօդոսը՝ այն գործին համար, որուն ես կանչած եմ զանոնք»: **3** Ուստի՝ ծոմ պահելով ու աղօթելով՝ ձեռք դրին անոնց վրայ եւ

ուղարկեցին: **4** Անոնք ալ Սուրբ Հոգիէն դրկուած՝
 Սելէւկիա իջան, եւ անկէ նաւարկեցին դէպի
 Կիպրոս: **5** Հասնելով Սաղամինա՝ կը հռչակէին
 Աստուծոյ խօսքը Հրեաներու ժողովարաններուն
 մէջ. Յովհաննէս ալ կը սպասաւորէր իրենց: **6**
 Շրջելով այդ (ամբողջ) կղզին մինչեւ Պափոս՝
 գտան մոգ մը, Հրեայ սուտ մարգարէ մը, որուն
 անունը Բարեյեսոս էր. **7** ան փոխ-հիւպատոսին
 հետ էր, որ կը կոչուէր Սերգիոս Պողոս, խելացի
 մարդ մը: Ասիկա՝ կանչելով Բառնաբասը եւ
 Սողոսը՝ ուզեց լսել Աստուծոյ խօսքը: **8** Սակայն
 անոնց ընդդիմացաւ Եղիմաս մոգը (որովհետեւ
 այսպէս կը թարգմանուի անոր անունը), որ
 կը ջանար խոտորեցնել փոխ-հիւպատոսը
 հաւատքէն: **9** Բայց Սողոս, որ Պողոս ալ կը կոչուի,
 Սուրբ Հոգիով լեցուած՝ ականապիշ նայեցաւ անոր
10 ու ըսաւ. «Ո՛վ ամէն նենգութեամբ եւ ամէն
 չարագործութեամբ լեցուն Չարախօսի՛ որդի,
 թշնամի ամբողջ արդարութեան, պիտի չդադրիս
 խեղաթիւրելէ Տէրոջ ուղիղ ճամբաները: **11** Ահա՛
 հիմա Տէրոջ ձեռքը քու վրայ է. կոյր պիտի ըլլաս
 եւ ատեն մը պիտի չտեսնես արեւը»: Ամիջապէս
 մթութիւն ու խաւար իջաւ անոր վրայ, եւ շրջելով
 մէկը կը փնտռէր՝ որ ձեռքէն բռնելով տանէր զինք:
12 Այն ատեն փոխ-հիւպատոսը հաւատաց՝ երբ
 տեսաւ կատարուածը, մեծապէս ապշելով Տէրոջ
 ուսուցումին վրայ: **13** Պողոս եւ իր ընկերակիցները
 նաւարկեցին Պափոսէն, ու գացին Պամփիլիայի
 Պերգէն. բայց Յովհաննէս՝ զատուելով անոնցմէ՝

վերադարձաւ Երուսաղէմ: **14** Անոնք ալ գացին Պերզէէն եւ հասան Պիսիդիայի Անտիոքը, ու Շաբաթ օրը մտնելով ժողովարանը՝ նստան: **15** Օրէնքին եւ Մարգարէներուն կարդացուելէն ետք՝ ժողովարանին պետերը մարդ որկեցին իրենց ու ըսին. «Մարդիկ եղբայրներ, եթէ դուք յորդորական խօսք մը ունիք ժողովուրդին՝ ըսէք»: **16** Ուստի Պօղոս կանգնեցաւ, եւ շարժելով ձեռքը՝ ըսաւ. «Իսրայելացի մարդիկ, ու դուք՝ որ կը վախնաք Աստուծմէ, մտիկ ըրէք: **17** Այս ժողովուրդին՝ Իսրայելի Աստուածը ընտրեց մեր հայրերը, բարձրացուց ժողովուրդը՝ երբ անոնք պանդխտացած էին Եգիպտոսի երկրին մէջ, եւ զօրաւոր բազուկով դուրս հանեց զանոնք: **18** Գրեթէ քառասուն տարի կերակրեց զանոնք անապատին մէջ: **19** Քանանի երկրին մէջ, բնաջնջելով եօթը ազգ, անոնց երկիրը տուաւ իրենց՝ որ ժառանգեն: **20** Անկէ ետք՝ գրեթէ չորս հարիւր յիսուն տարի՝ դատաւորներ տուաւ իրենց, մինչեւ Սամուէլ մարգարէն: **21** Յետոյ թագաւոր ուզեցին, եւ Աստուած տուաւ իրենց Կիսի որդին՝ Սաւուղը, Բենիամինի տոհմէն մարդ մը, քառասուն տարի: **22** Երբ պաշտօնէ հեռացուց զայն, Դաւիթը նշանակեց իրենց վրայ իբր թագաւոր, որուն մասին վկայելով՝ ըսաւ. «Յեսսէի որդին՝ Դաւիթը գտայ, իմ սիրտիս համաձայն մարդ մը, որ պիտի գործադրէ իմ ամբողջ կամքս»: **23** Ասոր զարմէն Աստուած՝ իր խոստումին համաձայն՝ հանեց Իսրայելի Փրկիչ մը, Յիսուսը: **24**

Դեռ ան չեկած, Յովհաննէս նախապէս քարոզեց
ապաշխարութեան մկրտութիւնը՝ Իսրայելի
ամբողջ ժողովուրդին: 25 Երբ Յովհաննէս կը
լրացնէր իր ընթացքը՝ ըսաւ. “Ո՛վ կը կարծէք՝ թէ
եմ. ես Քրիստոսը չեմ, հապա ահա՛ իմ ետեւէս
կու գայ մէկը՝ որուն ոտքերուն կօշիկները
քակելու արժանի չեմ”: 26 Մարդիկ եղբայրներ,
Աբրահամի ցեղին որդիներ, այս փրկութեան
խօսքը ղրկուեցաւ ձեզի՛, եւ անոնց՝ որ ձեր մէջ
աստուածավախ են: 27 Քանի որ Երուսաղէմ
բնակողները եւ անոնց պետերը՝ ոչ զայն
ճանչցան, ոչ ալ մարգարէներուն ձայները՝
որոնք կը կարդացուին ամէն Շաբաթ օր. բայց
իրագործեցին գրուածները՝ դատելով զայն: 28
Թէպէտ չգտան մահուան արժանի պատճառ մը,
խնդրեցին Պիղատոսէն՝ որ ան սպաննուի: 29
Երբ գործադրեցին ամէն ինչ որ գրուած էր անոր
մասին, վար իջեցնելով փայտէն՝ դրին գերեզմանի
մը մէջ: 30 Բայց Աստուած մեռելներէն յարուցանեց
զայն: 31 Ան շատ օրեր երեւցաւ անոնց՝ որ
Գալիլեայէն Երուսաղէմ ելեր Էին իրեն հետ.
անոնք են հիմա իր վկաները ժողովուրդին առջեւ:
32 Մենք ալ կ’աւետենք ձեզի այն խոստումը՝ որ
եղած էր հայրերուն. 33 Աստուած իրագործեց
զայն մեզի համար՝ որ անոնց զաւակներն ենք,
յարուցանելով Յիսուսը՝ ինչպէս գրուած ալ
է երկրորդ Սաղմոսին մէջ. “Դուն իմ Որդիս
ես, այսօր ծնայ քեզ”: 34 Ան սա՛ կ’ըսէ զինք
մեռելներէն յարուցանելու մասին՝ որ անգամ մըն

ալ ապականութեան չվերադառնայ. “Ձեզի պիտի տամ Դաւիթի մնայուն կարեկցութիւնները”: 35 Այս մասին ուրիշ Սաղմոսի մը մէջ ալ կ’ըսէ. “Պիտի չթոյլատրես որ քու Սուրբդ ապականութիւն տեսնէ”: 36 Որովհետեւ Դաւիթ ննջեց՝ Աստուծոյ ծրագիրով սպասաւորելէ ետք իր սերունդին, դրուեցաւ իր հայրերուն քով եւ ապականութիւն տեսաւ: 37 Բայց ան՝ որ Աստուած յարուցանեց, ապականութիւն չտեսաւ: 38 Ուրեմն զիտցէք, մարդիկ եղբայրներ, թէ ասոր միջոցով մեղքերու ներում կը հռչակուի ձեզի, 39 եւ թէ իրմով ամեն հաւատացեալ կ’արդարանայ այն բոլոր բաներէն՝ որոնցմէ չկրցաք արդարանալ Մովսէսի Օրէնքով: 40 Ուրեմն զգուշացէք, որպէսզի ձեզի չպատահի” ինչ որ ըսուած է Մարգարէներուն մէջ. 41 “Տեսէք, արհամարհողներ, եւ զարմացէք ու ոչնչացէք. որովհետեւ պիտի կատարեմ արարք մը՝ ձեր օրերուն մէջ, այնպիսի արարք մը, որ եթէ մէկը պատմէ ձեզի՝ պիտի չհաւատաք”»: 42 Երբ անկէ դուրս ելան՝ կ’աղաչէին, որ հետեւեալ Շաբաթ ալ քարոզեն իրենց նոյն խօսքերը: 43 Երբ ժողովուրդը արձակուեցաւ, 3րեաներէն եւ բարեպաշտ նորահաւատներէն շատեր հետեւեցան Պօղոսի ու Բառնաբասի, որոնք կը խօսէին անոնց հետ եւ կը յորդորէին զանոնք, որ յարատեւեն Աստուծոյ շնորհքին մէջ: 44 3ետեւեալ Շաբաթ օրը, գրեթէ ամբողջ քաղաքը հաւաքուեցաւ՝ լսելու Աստուծոյ խօսքը: 45 Իսկ 3րեաները՝ երբ տեսան բազմութիւնները՝ լեցուեցան նախանձով, ու դէմ

կը խօսէին Պօղոսի ըսածներուն՝ հակաճանաչելով եւ հայհոյելով: **46** Ուստի Պօղոս ու Բառնաբաս համարձակելով ըսին. «Յարկ էր որ Աստուծոյ խօսքը քարոզուէր նախ ձեզի. բայց քանի որ կը վանէք զայն ձեզմէ, եւ դուք ձեզ արժանի չէք սեպեր յաւիտենական կեանքի, ահա մենք կը դառնանք հեթանոսներուն: **(aiōnios g166)** **47** Որովհետեւ Տէրը սա պատուիրած է մեզի. “Քեզ իբր լոյս դրի հեթանոսներուն, որպէսզի դուն փրկութեան պատճառ ըլլաս՝ մինչեւ երկրի ծայրերը”»: **48** Լսելով ասիկա՝ հեթանոսները կ’ուրախանային ու կը փառաւորէին Աստուծոյ խօսքը, եւ անոնք որ սահմանուած էին յաւիտենական կեանքին՝ հաւատացին: **(aiōnios g166)** **49** Տէրոջ խօսքը կը տարածուէր ամբողջ երկրամասին մէջ: **50** Բայց Յրեաները գրգռեցին բարեպաշտ եւ մեծայարգ կիներն ու քաղաքին գլխաւորները, եւ Պօղոսի ու Բառնաբասի դէմ հալածանք հանելով՝ իրենց հողամասէն դուրս դրին զանոնք: **51** Անոնք ալ՝ իրենց ոտքերուն փոշին թօթուելով անոնց դէմ՝ զացին Իկոնիոն. **52** իսկ աշակերտները լեցուած էին ուրախութեամբ եւ Սուրբ Յովիով”:

14 Իկոնիոնի մէջ՝ անոնք միասին մտան Յրեաներուն ժողովարանը, ու այնպէս խօսեցան՝ որ Յրեաներու եւ Յոյներու մեծ բազմութիւն մը հաւատաց: **2** Բայց չինազանդող Յրեաները՝ դրդեցին հեթանոսները, եւ անոնց անձերը չարութեան գրգռեցին եղբայրներուն դէմ: **3** Իսկ անոնք երկար ժամանակ հոն կենալով՝

համարձակութեամբ կը քարոզէին Տէրոջմով,
 որ իր շնորհքի խօսքին վկայութիւն կու տար՝
 թոյլատրելով որ նշաններ եւ սքանչելիքներ
 կատարուին անոնց ձեռքով: **4** Քաղաքին
 բազմութիւնը բաժնուեցաւ. մաս մը բռնեց
 Յրեաներուն կողմը, մաս մըն ալ՝ առաքեալներուն:
5 Երբ հեթանոսներն ու Յրեաները՝ իրենց
 պետերով՝ յարձակեցան, որ նախատեն եւ
 քարկոծեն զանոնք, **6** իրենք ալ՝ զիտակցելով՝
 փախան Լիկայոնիայի քաղաքները, Լիւստրա ու
 Դերբէ եւ շրջակայքը, **7** ու հոն կ'աւետարանէին:
8 Մարդ մը նստած էր Լիւստրայի մէջ՝ անգոր
 ոտքերով, իր մօր որովայնէն կաղ ծնած, որ
 բնաւ քալած չէր: **9** Ասիկա մտիկ կ'ըներ
 Պօղոսի խօսքերը, որ ակնապիշ նայելով
 անոր ու նշմարելով թէ բուժուելու հաւատք
 ունի՝ **10** բարձրաձայն ըսաւ. «Ուղիղ կանգնե
 ոտքերուդ վրայ»: Ան ալ ցատկեց եւ քալեց:
11 Երբ բազմութիւնը տեսաւ Պօղոսի ըրածը,
 բարձրացնելով իրենց ձայնը՝ ըսին լիկայոններէն.
 «Աստուածները իջած են մեզի՝ մարդոց
 նմանութեամբ»: **12** Բառնաբասը կը կոչէին Դիոս,
 ու Պօղոսը՝ Յերմէս, քանի որ ան էր գլխաւոր
 խօսողը: **13** Իսկ Դիոսի բուրմը՝ որ քաղաքին առջեւ
 էր, ցուլեր եւ ծաղկեպսակներ բերելով դռներուն
 բով՝ կ'ուզէր զոհ մատուցանել բազմութեան հետ:
14 Բայց երբ առաքեալները՝ Բառնաբաս ու Պօղոս՝
 լսեցին, պատռեցին իրենց հանդերձները եւ դուրս
 ցատկեցին բազմութեան մէջ՝ աղաղակելով. **15**

«Մարդիկ, ինչո՞ւ այդ բաները կ'ընէք: Մենք ալ մարդիկ ենք՝ կիրքերու ենթակայ ձեզի նման, ու կ'աւետարանենք ձեզի՝ որպէսզի այդ ունայն բաներէն դառնաք ապրող Աստուծոյ, որ ստեղծեց երկինքը, երկիրը, ծովն ու բոլոր անոնց մէջ եղածները: **16** Անցեալ սերունդներուն մէջ ան թոյլատրեց բոլոր ազգերուն՝ որ երթան իրենց ճամբաներէն: **17** Սակայն ինքզինք չթողուց առանց վկայութեան, բարիք ընելով, անձրեւ տալով մեզի երկինքէն, նաեւ պտղաբեր եղանակներ, ու մեր սիրտերը լեցնելով կերակուրներով եւ ուրախութեամբ»: **18** Այս բաները ըսելով՝ հազիւ կրցան հանգստացնել բազմութիւնը, որ զոհ չմատուցանէ իրենց: **19** Սակայն Յրեաներ հասան Անտիոքէն եւ Իկոնիոնէն, համոզեցին բազմութիւնը, քարկոծեցին Պօղոսը ու քաղաքէն դուրս քաշկռտեցին՝ կարծելով թէ մեռած է: **20** Բայց երբ աշակերտները շրջապատեցին զինք՝ կանգնեցաւ, մտաւ քաղաքը, ու հետեւեալ օրը մեկնեցաւ Դերբէ՝ Բառնաբասի հետ: **21** Այդ քաղաքին մէջ աւետարանելէ ու շատերը աշակերտելէ ետք՝ անոնք վերադարձան Լիւստրա, Իկոնիոն եւ Անտիոք, **22** ամրացնելով աշակերտներուն անձերը եւ յորդորելով՝ որ յարատեւեն հաւատքին մէջ, ըսելով. «Շատ տառապանքով պէտք է մտնենք Աստուծոյ թագաւորութիւնը»: **23** Երբ երեցներ ձեռնադրեցին անոնց՝ ամեն եկեղեցիի մէջ, ծոմապահութեամբ աղօթելով յանձնեցին զանոնք Տէրոջ՝ որուն

հաւատացած էին: 24 Եւ անցնելով Պիսիդիայի մէջէն՝ գացին Պամփիլիա: 25 Պերգէի մէջ ալ Տէրոջ խօսքը քարոզելէ ետք՝ իջան Ատալիա, 26 անկէ ալ նաւարկեցին դէպի Անտիոք, ուրկէ Աստուծոյ շնորհքին յանձնարարուած էին այն գործին համար՝ որ կատարեցին: 27 Երբ եկան, հաւաքելով եկեղեցին՝ պատմեցին ինչ որ Աստուած ըրեր էր իրենց հետ, եւ թէ հաւատքի դուռը բացեր էր հեթանոսներուն: 28 Ու հոն երկար ժամանակ կեցան աշակերտներուն հետ:

15 Ոմանք՝ իջնելով Զրեաստանէն՝ կը սորվեցնէին եղբայրներուն ու կ'ըսէին. «Եթէ Մովսէսի աւանդած սովորութեան համաձայն չթլփատուիք, չէք կրնար փրկուիլ»: 2 Ուստի, երբ Պօղոս ու Բառնաբաս սաստիկ ընդվզեցան եւ վիճաբանեցան անոնց հետ, վճռեցին որ Պօղոս ու Բառնաբաս, նաեւ անոնցմէ քանի մը ուրիշներ, բարձրանան Երուսաղէմ՝ առաքեալներուն ու երէցներուն քով՝ այս հարցին համար: 3 Անոնք ալ՝ եկեղեցիէն ուղարկուած՝ անցան Փիւնիկէն եւ Սամարիայէն, ու պատմելով հեթանոսներուն դարձի գալը՝ մեծապէս ուրախացուցին բոլոր եղբայրները: 4 Երբ հասան Երուսաղէմ, ընդունուեցան եկեղեցիէն, առաքեալներէն ու երէցներէն, եւ պատմեցին ինչ որ Աստուած ըրեր էր իրենց հետ: 5 Բայց Փարիսեցիներու աղանդէն քանի մը հաւատացեալներ կայնեցան եւ ըսին. «Պէտք է թլփատել զանոնք, ու պատուիրել՝ որ պահեն Մովսէսի Օրէնքը»: 6 Ուստի առաքեալներն

ու երեցները հաւաքուեցան՝ նկատի առնելու
 համար այս բանը: **7** Շատ վիճաբանութիւն
 ըլլալէ ետք, Պետրոս կանգնեցաւ եւ ըսաւ
 անոնց. «Մարդիկ եղբայրներ, դուք գիտէք թէ
 առաջին օրերէն ի վեր Աստուած ընտրեց զիս
 մեր մէջէն, որպէսզի իմ բերանովս հեթանոսները
 լսեն աւետարանին խօսքը, ու հաւատան: **8**
 Սրտագետն Աստուած վկայեց անոնց՝ Սուրբ
 Հոգին տալով անոնց, ինչպէս մեզի ալ, **9** ու զի մէկ
 խտրութիւն դրաւ մեր եւ անոնց միջեւ՝ մաքրելով
 անոնց սիրտերը հաւատքով: **10** Ուստի հիմա
 ինչո՞ւ կը փորձէք Աստուած, աշակերտներուն
 վիզին վրայ դնելով այնպիսի լուծ մը, որ զի մեր
 հայրերը, զի ալ մենք կարողացանք կրել: **11**
 Բայց կը հաւատանք թէ Տէր Յիսուսի շնորհքով
 կը փրկուինք մենք, ինչպէս նաեւ անոնք»: **12**
 Ամբողջ բազմութիւնը լռեց, ու մտիկ կ'ըներ
 Բառնաբասի եւ Պօղոսի, որոնք կը պատմէին
 թէ Աստուած որչափ նշաններ եւ սքանչելիքներ
 գործած էր հեթանոսներուն մէջ՝ իրենց միջոցով:
13 Երբ անոնք լռեցին, Յակոբոս ըսաւ. «Մարդիկ
 եղբայրներ, ինծի՞ մտիկ ըրէք. **14** Շմաւոն պատմեց
 թէ ինչպէս Աստուած առաջին անգամ այցելեց
 հեթանոսներուն, որպէսզի անոնց մէջէն առնէ
 ժողովուրդ մը՝ կրելու համար իր անունը: **15** Այս
 բանին հետ կը համաձայնին մարգարէներուն
 խօսքերն ալ, ինչպէս գրուած է. **16** “Ասկէ ետք
 պիտի վերադառնամ ու պիտի վերակառուցանեմ
 Դաւիթի փլած խորանը. պիտի վերակառուցանեմ

անոր աւերակները եւ վերականգնեմ զայն, 17 որպէսզի մնացած մարդիկը փնտռեն Տէրը, նաեւ բոլոր հեթանոսները՝ որոնք իմ անունովս կոչուած են“, - կ’ըսէ Տէրը՝ որ կ’ընէ այս բոլոր բաները”:

18 Աստուած գիտէ իր բոլոր գործերը՝ դարերու սկիզբէն ի վեր: (aiōn g165) **19** Ուստի ես յարմար կը դատեմ չնեղել անոնք՝ որ հեթանոսներէն կը դառնան Աստուծոյ. **20** հապա նամակ մը գրել անոնց՝ որ ետ կենան կուռքերու պղծութիւններէն, պոռնկութենէ, խեղդուածէ եւ արիւնէ: **21** Որովհետեւ Մովսէս նախկին սերունդներէն ի վեր ունի զինք քարոզողներ ամեն քաղաքի մէջ, ու կը կարդացուի ժողովարաններու մէջ ամեն Շաբաթ օր»:

22 Այն ատեն առաքեալներուն ու երէցներուն՝ ամբողջ եկեղեցիին հետ՝ հաճելի թուեցաւ, որ մարդիկ ընտրեն իրենցմէ եւ Անտիոք դրկեն՝ Պօղոսի ու Բառնաբասի հետ.- Բարսաբա մականուանեալ Յուդան եւ Շիդան, որոնք կառավարող մարդիկ էին եղբայրներուն մէջ: **23** Անոնց միջոցով դրկեցին նամակ մը՝ ստալէս գրուած. «Առաքեալներէն, երէցներէն ու եղբայրներէն՝ ողջոյն Անտիոքի, Սուրիայի եւ Կիլիկիայի մէջ եղող եղբայրներուն, որոնք հեթանոսներէն դարձած են: **24** Քանի լսեցինք թէ մեր մէջէն ելած ոմանք՝ վրդոված են ձեզ խօսքերով, ու ցնցած ձեր անձերը՝ ըսելով թէ պէտք է թլփատուիլ եւ Օրէնքը պահել, - որոնց մենք այսպէս չպատուիրեցինք, - **25** մեզի՝ միաբանութեամբ հաւաքուածներուս՝ յարմար

թուեցաւ, որ մարդիկ ընտրելով դրկենք ձեզի, մեր սիրելիներուն՝ Բառնաբասի ու Պօղոսի հետ, 26 որոնք մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի անունին համար իրենց անձերը ընծայած մարդիկ են: 27 Ուստի դրկեցինք Յուդան եւ Շիղան, որպէսզի իրենք ալ բերանով նոյն բաները պատմեն ձեզի: 28 Որովհետեւ յարմար թուեցաւ Սուրբ Յովհանն ու մեզի ալ՝ աւելի ծանրութիւն չդնել ձեր վրայ, սա՛ հարկաւոր բաներէն զատ: 29 Ետ կենալ կուռքերու զոհուածէ, արիւնէ, խեղդուածէ եւ պոռնկութենէ: Գոհ կ'ըլլաք՝ եթէ հեռու մնաք՝ ատոնցմէ: Ո՛ղջ եղէք»: 30 Անոնք ալ՝ բաժնուելով՝ գացին Անտիոք, ու հաւաքելով բազմութիւնը՝ տուին նամակը: 31 Երբ կարդացին՝ ուրախացան տրուած մխիթարութեան համար: 32 Իսկ Յուդա եւ Շիղա, իրենք ալ մարգարէ ըլլալով, շատ խօսքերով յորդորեցին եղբայրները, ու ամրացուցին: 33 Ժամանակ մը հոն կենալէ ետք՝ եղբայրներէն խաղաղութեամբ ուղարկուեցան, եւ առաքելներուն դարձան: 34 Բայց Շիղայի հաճելի թուեցաւ հոն մնալ: 35 Պօղոս ու Բառնաբաս ալ Անտիոքի մէջ կը կենային, եւ ուրիշ շատերու հետ կը սորվեցնէին ու կ'աւետէին Տէրոջ խօսքը: 36 Քանի մը օր ետք՝ Պօղոս ըսաւ Բառնաբասի. «Վերադառնանք եւ այցելենք եղբայրներուն՝ այն բոլոր քաղաքներուն մէջ, ուր Տէրոջ խօսքը հռչակեցինք, ու տեսնենք թէ ինչպէս են: 37 Բառնաբաս կ'ուզէր ամենէլ Յովհաննէսն ալ, որ Մարկոս կը կոչուէր. 38 բայց Պօղոս մտածեց

թէ լաւ չէ իրենց հետ առնել Պամփիլիայի մէջ իրենցմէ հեռացողը եւ իրենց հետ գործի չգացողը:
39 Այսպէս՝ տարակարծութիւն եղաւ անոնց միջեւ, այն աստիճան՝ որ զատուեցան իրարմէ: Բառնաբաս առաւ Մարկոսը եւ նաւարկեց դէպի Կիպրոս: **40** Պօղոս ալ ընտրեց Շիղան ու մեկնեցաւ, եղբայրներէն յանձնարարուած ըլլալով Աստուծոյ շնորհքին, **41** եւ կը շրջէր Սուրիայի ու Կիլիկիայի մէջ՝ ամրացնելով եկեղեցիները:

16 Յետոյ հասաւ Դերբէ ու Լիւստրա: Եւ ահա՛ աշակերտ մը կար հոն՝ Տիմոթէոս անունով, որ որդին էր հաւատացեալ հրեայ կնոջ մը, իսկ հայրը Յոյն էր: **2** Ան բարի վկայուած էր նաեւ Լիւստրայի եւ Իկոնիայի եղբայրներէն: **3** Պօղոս ուզեց որ ան երթայ իրեն հետ. ուստի առաւ ու թլփատեց զայն՝ այնտեղ եղող Հրեաներուն պատճառով, որովհետեւ բոլորն ալ գիտէին թէ անոր հայրը Յոյն էր: **4** Երբ կ'անցնէին քաղաքներէն, կ'աւանդէին անոնց Երուսաղէմ եղած առաքեալներէն ու երէցներէն պատուիրուած հրամանները, որպէսզի պահեն: **5** Եկեղեցիներն ալ կ'ամրանային հաւատքի մէջ, եւ անոնց թիւը կը բազմանար օրէ օր: **6** Երբ շրջեցան Փռիւզիա ու Գաղատիայի երկիրը, Սուրբ Հոգին արգիլեց քարոզել Աստուծոյ խօսքը Ասիայի մէջ: **7** Հասնելով Միւսիայի կողմերը՝ կը փորձէին երթալ դէպի Բիւթանիա. բայց (Յիսուսի) Հոգին չթոյլատրեց անոնց: **8** Ուստի՝ անցնելով Միւսիայի քովէն՝ իջան Տրովադա: **9** Հոն՝ գիշերը տեսիլք մը

երեւցաւ Պօղոսի. Մակեդոնացի մը կայնած էր ու կ'աղաչէր իրեն՝ ըսելով. «Անցիր Մակեդոնիա եւ օգնէ մեզի»: 10 Երբ տեսաւ այդ տեսիլքը՝ իսկոյն ջանացինք մեկնիլ Մակեդոնիա, եգրակացնելով թէ Տէրը կը կանչէ մեզ անոնց աւետարանելու: 11 Ուստի Տրովադայէն նաւարկելով՝ ուղիղ ընթացքով գացինք Սամոթրակէ, ու հետեւեալ օրը՝ Նէապոլիս. 12 անկէ ալ՝ Փիլիպպէ, որ Մակեդոնիայի մէկ մասին գլխաւոր քաղաքն է, նաեւ՝ գաղութ: Բանի մը օր կեցանք այդ քաղաքին մէջ: 13 Շաբաթ օրը դուրս ելանք քաղաքէն՝ գետեզերքը, ուր սովորութիւն ունէին աղօթելու. նստանք եւ խօսեցանք համախմբուած կիներուն: 14 Աստուածապաշտ կին մը՝ Լիդիա անունով, որ ծիրանավաճառ էր՝ Թիւատիր քաղաքէն, մտիկ կ'ընէր. Տէրը բացաւ անոր սիրտը՝ որ ուշադիր ըլլայ Պօղոսի ըսածներուն: 15 Երբ ինք եւ իր ընտանիքը մկրտուեցան, աղաչեց՝ ըսելով. «Եթէ Տէրոջ հաւատարիմ կը սեպէք զիս, իմ տոննս մտէք ու հոն մնացէք»: Եւ ստիպելով՝ տարաւ մեզ: 16 Մինչ աղօթքի կ'երթայինք, մեզի հանդիպեցաւ աղախին մը՝ որ հարցուկ ոգի ունէր եւ գուշակութեամբ շատ վաստակ կը բերէր իր տէրերուն: 17 Ասիկա կը հետեւէր Պօղոսի ու մեզի, եւ կ'աղաղակէր. «Այս մարդիկը Ամենաբարձր Աստուծոյ ծառաներն են, ու կը քարոզեն մեզի փրկութեան ճամբան»: 18 Շատ օրեր կ'ընէր այս բանը. Պօղոս ալ՝ նեղանալով՝ դարձաւ եւ ըսաւ այդ ոգիին. «Յիսուս Զրիստոսի անունով

կը հրամայեմ քեզի, ելիր ատկէ»։ Ու նոյն ժամուն
 ելաւ։ **19** Երբ անոր տէրերը տեսան թէ իրենց
 վաստակին յոյսը գնաց, բռնեցին Պօղոսը եւ
 Շիղան, ու քաշեցին հրապարակը՝ պետերուն
 առջեւ։ **20** Ապա տարին զանոնք մեծաւորներուն
 բով եւ ըսին. «Այս մարդիկը՝ որ Հրեայ են, իրար
 կ'անցընեն մեր քաղաքը, **21** ու կը քարոզեն
 այնպիսի սովորութիւններ՝ որ արտօնուած չէ մեզի
 ընդունիլ, ո՛չ ալ գործադրել, որովհետեւ Հռոմայեցի
 ենք»։ **22** Բազմութիւնը խռնուեցաւ անոնց շուրջ.
 մեծաւորներն ալ բռնութեամբ հանեցին անոնց
 հանդերձները, եւ հրամայեցին խարազանել
 զանոնք։ **23** Շատ հարուածներ տալէ ետք
 անոնց՝ բանտը նետեցին զանոնք, պատուիրելով
 բանտապահին՝ որ ապահովութեամբ պահէ
 զանոնք։ **24** Ան ալ՝ այսպիսի պատուէր ստանալով՝
 ներսի բանտը նետեց զանոնք, ու կոճղի մէջ
 ամրացուց անոնց ոտքերը։ **25** Կէս գիշերին՝ Պօղոս
 եւ Շիղա կ'աղօթէին ու կ'օրհներգէին Աստուծոյ.
 բանտարկեալներն ալ մոտիկ կ'ընէին անոնց։ **26**
 Յանկարծ հզօր երկրաշարժ մը եղաւ, այնպէս
 որ բանտին հիմերը սարսեցան. անմիջապէս
 բոլոր դռները բացուեցան եւ բոլորին կապերը
 քակուեցան։ **27** Բանտապահը, երբ արթնցաւ
 ու բացուած տեսաւ բանտին դռները, քաշեց
 սուրը եւ պիտի սպաններ ինքզինք, կարծելով
 թէ բանտարկեալները փախած են։ **28** Բայց
 Պօղոս բարձրաձայն գոչեց. «Մի վնասեր դուն
 քեզի, որովհետեւ բոլորս ալ հոս ենք»։ **29** Ան ալ՝

ճրագ մը ուզելով՝ վագեց ներս, դողալով ինկաւ
 Պօղոսի եւ Շիղայի առջեւ, 30 ու դուրս բերելով
 զանոնք՝ ըսաւ. «Տէրնր, ինչ պէտք է ընեմ՝ որ
 փրկուիմ»: 31 Անոնք ալ ըսին. «Հաւատա՛մ Տէր
 Յիսուս Քրիստոսի, ու պիտի փրկուիս, դուն եւ
 տունդ»: 32 Ու Տէրոջ խօսքը քարոզեցին անոր եւ
 բոլոր անոնց՝ որ անոր տան մէջ էին: 33 Ինք ալ՝
 գիշերուան նոյն ժամուն՝ առաւ զանոնք, լուաց
 անոնց վերքերը եւ անմիջապէս մկրտուեցաւ,
 ինք ու բոլոր իրենները: 34 Ապա իր տունը
 տանելով զանոնք՝ սեղան դրաւ անոնց առջեւ,
 եւ ցնծաց ամբողջ ընտանիքով՝ հաւատալով
 Աստուծոյ: 35 Երբ առտու եղաւ, մեծաւորները
 յիսնապետներ դրկեցին եւ ըսին. «Արձակէ՛ այդ
 մարդիկը»: 36 Բանտապահն ալ հաղորդեց Պօղոսի
 այդ խօսքերը՝ ըսելով. «Մեծաւորները մարդ
 դրկեցին՝ որ արձակուիք. ուստի հիմա դճուրս
 ելէք ու մեկնեցէ՛ք խաղաղութեամբ»: 37 Բայց
 Պօղոս ըսաւ անոնց. «Թէպէտ չդատապարտուած
 Հռոմայեցիներ ենք, հրապարակաւ ծեծելով մեզ՝
 բանտը նետեցին, եւ հիմա ծածկաբա՛ր կը հանեն
 մեզ: Ո՛չ այդպէս, հապա իրենք թող զան ու դուրս
 տանին մեզ»: 38 Յիսնապետները մեծաւորներուն
 հաղորդեցին այս խօսքերը: Անոնք ալ, երբ լսեցին
 թէ Հռոմայեցի են՝ վախցան, ու եկան, աղաչեցին
 անոնց, 39 եւ դուրս հանելով՝ կը թախանձէին
 որ մեկնին այդ քաղաքէն: 40 Անոնք ալ ելան
 բանտէն ու մտան Լիդիայի տունը, եւ տեսնելով
 եղբայրները՝ յորդորեցին զանոնք ու մեկնեցան:

17 Ամփիպոլիսէն եւ Ապողոնիայէն անցնելով՝
 Թեսաղոնիկէ եկան, ուր Յրեաներուն
 ժողովարանը կար: **2** Պօղոս ալ՝ իր սովորութեան
 համաձայն՝ մտաւ անոնց մէջ, ու երեք Շաբաթ
 օրեր խօսեցաւ անոնց հետ Գիրքերուն մասին,
3 բացատրելով եւ փաստարկելով անոնց թէ
 Քրիստոս պէտք է չարչարուէր ու մեռելներէն
 յարութիւն առնէր. եւ ըսաւ. «Այս Յիսուսը՝ որ
 ես կը հռչակեմ ձեզի, Քրիստոսն է»: **4** Անոնցմէ
 ոմանք անսացին ու միացան Պօղոսի եւ Շիղայի,
 նաեւ՝ բարեպաշտ Յոյներէն մեծ բազմութիւն մը.
 առաջնակարգ կիներէն հաւատացողներն ալ
 սակաւաթիւ չէին: **5** Բայց չանսացող Յրեաները
 նախանձեցան, եւ քանի մը դատարկապորտ,
 գռեհիկ մարդիկ առնելով՝ բազմութիւն ժողվեցին,
 ամբողջ քաղաքին մէջ աղմուկ հանեցին, ու
 Յասոնի տան վրայ յարձակելով կը փնտռէին
 զանոնք՝ որ ամբոխին տանին: **6** Երբ չգտան
 զանոնք, Յասոնը եւ քանի մը եղբայրներ
 քաշկռտելով տարին քաղաքապետներուն
 առջեւ՝ գոռալով. «Անոնք որ երկրագունդը
 տակնուվրայ ըրին՝ հոս ալ հասած են, **7** ու
 Յասոն ընդունած է զանոնք: Ասոնք բոլորը կը
 գործեն կայսրին հրամաններուն դէմ, ըսելով թէ
 ուրիշ թագաւոր մը կայ՝ Յիսուս անունով»: **8**
 Բազմութիւնն ու քաղաքապետները վրդովեցան՝
 լսելով այս բաները: **9** Բայց երբ երաշխիք առին
 Յասոնէն եւ միւսներէն՝ արձակեցին զանոնք:
10 Եղբայրներն ալ իսկոյն՝ գիշերուան մէջ՝

Բերիա դրկեցին Պօղոսն ու Շիղան, որոնք հոն հասնելով՝ գացին Յրեաներուն ժողովարանը:

11 Ասոնք աւելի ազնիւ էին՝ քան Թեսաղոնիկէի մէջ եղողները. Աստուծոյ խօսքը ընդունեցին լման յօժարութեամբ, եւ ամէն օր կը զննէին Գիրքերը, տեսնելու թէ այդպէս են այդ բաները:

12 Ուստի անոնցմէ շատերը հաւատացին, ու մեծայարգ յոյն կիներէն եւ այր մարդոցմէն հաւատացողներն ալ սակաւաթիւ չէին: **13** Բայց երբ Թեսաղոնիկէցի Յրեաները գիտցան թէ Բերիայի մէջ ալ Պօղոս հռչակեց Աստուծոյ խօսքը, հոն ալ եկան ու գրգռեցին բազմութիւնը: **14** Այն ատեն եղբայրները իսկոյն Պօղոսը ճամբեցին՝ որ երթայ մինչեւ ծովեզերքը, բայց Շիղա եւ Տիմոթէոս մնացին հոն: **15** Անոնք որ կը տանէին Պօղոսը՝ հասցուցին զայն մինչեւ Աթէնք, ապա մեկնեցան՝ պատուէր ստանալով Շիղայի ու Տիմոթէոսի համար, որ շուտով գան իրեն: **16** Մինչ Աթէնքի մէջ Պօղոս կը սպասէր անոնց, իր հոգին գրգռուած էր իր մէջ, տեսնելով քաղաքը՝ լեցուած կուռքերով: **17** Ուստի ժողովարանին մէջ կը խօսէր Յրեաներուն ու բարեպաշտ մարդոց, նաեւ ամէն օր հրապարակներուն մէջ՝ անոնց որ հանդիպէր: **18** Քանի մը Եպիկուրեան եւ Ստոյիկեան փիլիսոփաներ ալ կը խորհրդակցէին իրեն հետ: Ոմանք կ'ըսէին. «Ի՞նչ ըսել կ'ուզէ այս սերմնաբաղը»: Ուրիշներ ալ կ'ըսէին. «Կը թուի թէ օտար աստուածներու քարոզիչ է». որովհետեւ կ'աւետէր անոնց Յիսուսը եւ յարութիւնը: **19**

Ուստի առնելով զայն՝ տարին Արիսպագոս ու կ'ըսէին. «Կրնամք գիտնալ թէ ինչ է այդ նոր ուսուցումը՝ որ դուն կը քարոզես, 20 որովհետեւ քանի մը տարօրինակ բաներ լսել կու տաս մեզի»։ Ուրեմն կ'ուզենք գիտնալ թէ ինչ կրնան ըլլալ ատոնք»։ 21 (Որովհետեւ բոլոր Աթենացիներուն եւ հոն գաղթած օտարականներուն ժամանցը ուրիշ ոչինչ է, քան նոր բան ըսել կամ լսել։) 22 Հետեւաբար Պօղոս կայնեցաւ Արիսպագոսի մէջ եւ ըսաւ. «Աթենացի մարդիկ, կը նշմարեմ թէ ամէն ինչով չափազանց կրօնասէր էք։ 23 Քանի որ ես շրջելով ու ձեր պաշտամունքը գննելով՝ գտայ զոհասեղան մը, որուն վրայ գրուած էր. «Անծանօթ Աստուծոյն»։ Ուստի ան՝ որմէ դուք կ'ականածիք առանց ճանչնալու, ես զայն կը հռչակեմ ձեզի։ 24 Աստուած՝ որ ստեղծեց աշխարհը եւ անոր մէջ եղած բոլոր բաները, ինք՝ որ Տէրն է երկինքի ու երկրի, ո՛չ կը բնակի ձեռակերտ տաճարներու մէջ, 25 ո՛չ ալ կը խնամուի մարդոց ձեռքով՝ իբր թէ որեւէ բանի կարօտ ըլլար. քանի որ ինք կու տայ բոլորին կեանք, շունչ, եւ ամէն ինչ։ 26 Մէկ արիւնէ ստեղծեց մարդոց բոլոր ազգերը՝ որպէսզի բնակին ամբողջ երկրի մակերեսին վրայ, ու սահմանեց նախապէս որոշուած ժամանակները եւ անոնց բնակարանի սահմանները՝ որ փնտռեն Տէրը, 27 ու թերեւս գտնեն զինք խարխափելով, թէպէտ մեզմէ իւրաքանչիւրէն ալ հեռու չէ։ 28 Արդարեւ անով կ'ապրինք, կը շարժինք եւ կանք, ինչպէս ձեր բանաստեղծներէն ոմանք ալ ըսին.

“Քանի որ մենք անոր ցեղէն իսկ ենք”: 29 Ուրեմն՝ Աստուծոյ ցեղէն ըլլալով՝ պէտք չէ կարծենք՝ թէ աստուածութիւնը նման է ոսկիի կամ արծաթի կամ քարի, քանդակուած մարդկային արուեստով ու երեւակայութեամբ”: 30 Եւ հիմա Աստուած, անտեսելով այս անգիտութեան ժամանակները, ամենուրեք կը պատուիրէ բոլոր մարդոց՝ որ ապաշխարեն: 31 Որովհետեւ սահմանած է օր մը, երբ պիտի դատէ երկրագունդը արդարութեամբ՝ իր որոշած մարդուն միջոցով. եւ այս մասին հաւաստիք տուաւ բոլորին՝ մեռելներէն յարուցանելով զայն»: 32 Երբ լսեցին մեռելներու յարութեան մասին՝ ոմանք ծաղրեցին, իսկ ուրիշներ ըսին. «Այս մասին դարձեալ մտիկ պիտի ընենք քեզի»: 33 Այսպէս Պօղոս մեկնեցաւ անոնց մէջէն: 34 Սակայն քանի մը մարդիկ յարեցան իրեն, ու հաւատացին. անոնց մէջ էին Դիոնեսիոս Արիսպագացին, Դամարիս անունով կին մը, եւ իրենց հետ ուրիշներ:

18 Ասկէ ետք Պօղոս՝ հեռանալով Աթէնքէն՝ եկաւ Կորնթոս, 2 գտաւ Զրեայ մը՝ Ակիլոյաս անունով, ծնունդով՝ Պոնտացի, որ իր Պրիսկիլա կնոջ հետ նոր եկած էր Իտալիայէն (քանի որ Կղօղիոս պատուիրած էր բոլոր Զրեաներուն՝ հեռանալ Զոռմէն), եւ գնաց անոնց քով: 3 Քանի ինք արհեստակից էր, անոնց քով բնակեցաւ եւ աշխատեցաւ, որովհետեւ արհեստով վրանագործ էին: 4 Իսկ ամէն Շաբաթ օր կը խօսէր ժողովարանին մէջ, եւ կը համոզէր Զրեաներն

ու Յոյները: **5** Երբ Շիղա եւ Տիմոթէոս իջան Մակեդոնիայէն, Պօղոս հոգիի կսկիծով կը վկայէր Յրեաներուն թէ Յիսուս՝ Զրիստոսն է: **6** Բայց երբ անոնք ընդդիմացան ու կը հայհոյէին, իր հանդերձները թօթուելով՝ ըսաւ անոնց. «Ձեր արիւնը ձեր գլուխը ըլլայ, ես անպարտ եմ. ասկէ ետք՝ հեթանոսներուն պիտի երթամ»: **7** Եւ մեկնելով անկէ՝ մտաւ Յուստոս անունով մէկու մը տունը, որ աստուածապաշտ էր. անոր տունը ժողովարանին կից էր: **8** Ժողովարանին պետը՝ Կրիսպոս՝ հաւատաց Տէրոջ իր ամբողջ ընտանիքով: Կորնթացիներէն շատեր ալ լսելով՝ հաւատացին ու մկրտուեցան: **9** Գիշերը տեսիլքի մէջ Տէրը ըսաւ Պօղոսի. «Մի՛ վախնար, հապա խօսէ՛ եւ լուռ մի՛ կենար. **10** որովհետեւ ես քեզի հետ եմ, ու ո՛չ մէկը ձեռքը վրադ պիտի դնէ՝ քեզի վնասելու համար. քանի որ ես շատ ժողովուրդ ունիմ այս քաղաքին մէջ»: **11** Հոն տարի մը ու վեց ամիս կեցաւ, եւ Աստուծոյ խօսքը կը սորվեցնէր անոնց մէջ: **12** Աքայիայի փոխ-հիւպատոսին՝ Գաղիոնի օրերը, Յրեաները միաբանելով՝ ըմբոստացան Պօղոսի դէմ, եւ դատարանը տարին գայն՝ **13** ըսելով. «Ասիկա կը համոզէ մարդիկը՝ որ պաշտեն Աստուած Օրէնքին հակառակ կերպով»: **14** Երբ Պօղոս պիտի բանար իր բերանը, Գաղիոն ըսաւ Յրեաներուն. «Եթէ անիրաւութեան մը կամ չար լրբութեան մը համար ըլլար, ո՛վ Յրեաներ, կ'արժէր որ հանդուրժէի ձեզի. **15** բայց եթէ հարցը՝ խօսքի,

անուններու եւ ձեր Օրէնքին մասին է, դուք ձեզմէ տեսէք դատը. որովհետեւ ես չեմ փափաքիր այդպիսի բաներու դատաւոր ըլլալ».

16 ու զանոնք վնտեց դատարանէն: 17 Ուստի բոլոր Յոյները բռնեցին Սոսթենէսը, ժողովարանին պետը, եւ ծեծեցին դատարանին առջեւ: Բայց Գաղիոն բնաւ հոգ չէր ընել այս մասին: 18 Իսկ Պօղոս, տակաւին շատ օրեր հոն մնալէ ետք, հրաժեշտ առաւ եղբայրներէն ու նաւարկեց դէպի Սուրիա - Պրիսկիդա եւ Ակիւղաս ալ իրեն հետ -, նախապէս իր գլուխը խուզած ըլլալով Կենքրեայի մէջ, որովհետեւ ուխտ ըրած էր: 19 Երբ հասաւ Եփեսոս՝ հոն ձգեց զանոնք, իսկ ինք մտնելով ժողովարանը՝ կը խօսէր Հրեաներուն հետ: 20 Իրեն թախանձեցին որ աւելի երկար ժամանակ մնայ իրենց քով. բայց չհաւանեցաւ, 21 հապա հրաժեշտ առաւ անոնցմէ՝ ըսելով. «Պէտք է որ անպատճառ այս յառաջիկայ տօնը կատարեմ Երուսաղէմի մէջ, բայց՝ Աստուծոյ կամքով դարձեալ պիտի վերադառնամ ձեզի»: Ու Եփեսոսէն նաւարկեց 22 եւ Կեսարիա հասնելով՝ Երուսաղէմ բարձրացաւ, բարեւեց եկեղեցին, ու յետոյ իջաւ Անտիոք: 23 Ժամանակ մը հոն կենալէ ետք՝ մեկնեցաւ, եւ կարգով Գաղատացիներուն երկիրն ու Փռիւզիա կը շրջէր՝ բոլոր աշակերտները ամրացնելով: 24 Ապողոս անունով Հրեայ մը, ծնունդով՝ Ադեֆսանդրացի, ճարտասան մարդ մը՝ որ հմուտ էր Սուրբ Գիրքերուն, եկաւ հասաւ Եփեսոս: 25 Ան կրթուած էր Տէրոջ

ճամբային մէջ, ու եռանդուն հոգիով՝ կը խօսէր եւ ճգրտութեամբ կը սորվեցնէր Տէրոջ մասին. բայց ինք գիտէր միայն Յովհաննէսի մկրտութիւնը:

26 Ան սկսաւ ժողովարանին մէջ քարոզել համարձակութեամբ: Երբ Ակիւղաս ու Պրիսկիղա լսեցին զայն՝ իրենց բով առին զինք, եւ աւելի ճգրտութեամբ բացատրեցին իրեն Աստուծոյ ճամբան: **27** Երբ ան փափաքեցաւ երթալ Աքայիա, եղբայրները նամակ գրեցին ու խրախուսեցին այնտեղի աշակերտները՝ որ ընդունին զինք: Եւ հոն հասնելով՝ Աստուծոյ շնորհքով շատ օգտակար եղաւ հաւատացեալներուն. **28** քանի որ հրապարակաւ ուժգնօրէն կը համոզէր Յրեաները, Սուրբ Գիրքերէն ցոյց տալով թէ Յիսուս՝ Քրիստոսն է:

19 Մինչ Ապողոս Կորնթոսի մէջ էր, Պօղոս՝ վերի երկրամասերը շրջելէ ետք՝ հասաւ Եփեսոս, եւ գտնելով քանի մը աշակերտներ՝ **2** ըսաւ անոնց. «Երբ հաւատացիք, արդեօք ստացա՞ք Սուրբ Յոգին»: Անոնք պատասխանեցին իրեն. «Բայց մենք լսած իսկ չենք՝ թէ Սուրբ Յոգի մը կայ»: **3** Ան ալ ըսաւ անոնց. «Հապա ինչո՞վ մկրտուեցաք»: Անոնք պատասխանեցին. «Յովհաննէսի մկրտութեամբ»: **4** Պօղոս ալ ըսաւ. «Յովհաննէս մկրտեց ապաշխարութեան մկրտութեամբ, ըսելով ժողովուրդին որ հաւատան անոր՝ որ պիտի գար իրմէ ետք, այսինքն՝ Քրիստոս Յիսուսի»: **5** Երբ ասիկա լսեցին՝ մկրտուեցան Տէր Յիսուսի անունով. **6** ու երբ

Պօղոս ձեռք դրաւ անոնց վրայ՝ Սուրբ Հոգին եկաւ անոնց վրայ, եւ լեզուներ կը խօսէին ու կը մարգարեանային: **7** Բոլորը գրեթէ տասներկու մարդ էին: **8** Ապա ժողովարանը մտնելով՝ երեք ամիս համարձակութեամբ կը խօսէր Աստուծոյ թագաւորութեան մասին, եւ կը համոզէր: **9** Բայց երբ ոմանք կը յամառէին ու չէին անսար՝ անիծելով այդ ճամբան բազմութեան առջեւ, հեռացաւ անոնցմէ, զատեց աշակերտները, եւ ամէն օր կը խօսէր Տիւրան անունով մէկու մը դպրանոցին մէջ: **10** Ասիկա տեւեց երկու տարի, այնպէս որ ամբողջ Ասիայի մէջ բնակող Հրեաներն ու Յոյները լսեցին Տէրոջ խօսքը: **11** Աստուած արտասովոր հրաշքներ կը գործէր Պօղոսի ձեռքով. **12** մինչեւ իսկ անոր մարմինէն թաշկինակներ ու գոգնոցներ կը տարուէին հիւանդներուն, որոնք կ'ազատէին իրենց ախտերէն ու չար ոգիները դուրս կ'ելլէին: **13** Ուստի թափառաշրջիկ Հրեաներէն ոմանք, որոնք ոգիներ կը հանէին՝, փորձեցին Տէր Յիսուսի անունը կանչել չար ոգիներ ունեցողներուն վրայ՝ ըսելով. «Կ'երդմնեցնենք ձեզ Յիսուսով՝ որ Պօղոս կը քարոզէ»: **14** Այս բանը ընողները՝ Սկեւա կոչուած հրեայ քահանայապետի մը եօթը որդիներն էին: **15** Չար ոգին պատասխանեց անոնց. «Կը ճանչնամ Յիսուսը ու գիտեմ Պօղոսը, բայց դուք ո՞վ էք»: **16** Եւ այդ մարդը՝ որուն մէջ էր չար ոգին, ցատկեց անոնց վրայ, տիրապետեց ու յաղթեց անոնց, այնպէս որ դուրս փախան այդ տունէն՝ մերկ եւ վիրաւոր: **17** Եփեսոս

բնակող բոլոր Յրեաներն ու Յոյները գիտցան այս բանը. վախը համակեց զանոնք բոլորը՝, եւ Տէր Յիսուսի անունը կը մեծարուէր: **18** Հաւատացեալներէն շատեր կու գային, կը խոստովանէին ու կը յայտարարէին իրենց արարքները: **19** Դիւթութիւն կիրարկողներէն շատեր՝ միասին կը բերէին իրենց գիրքերը, ու կ'այրէին բոլորին առջեւ: Երբ հաշուեցին անոնց զինը, գտան թէ յիսուն հազար կտոր արծաթ կ'արժէր: **20** Այսպէս՝ Տէրոջ խօսքը մեծապէս կ'աճէր ու կը զօրանար: **21** Երբ այս բաները կատարուեցան, Պօղոս հոգիին մէջ որոշեց Երուսաղէմ երթալ՝ Մակեդոնիայէն եւ Աքայիայէն անցնելով, ու կ'ըսէր. «Հոն ըլլալէս ետք՝ պետք է Հռոմն ալ տեսնեմ»: **22** Իրեն սպասարկողներէն երկուքը, Տիմոթէոսն ու Երաստոսը, դրկեց Մակեդոնիա, եւ ինք ժամանակ մըն ալ Ասիա մնաց: **23** Այդ ատեն մեծ խլրտում եղաւ՝ Տէրոջ ճամբային համար: **24** Որովհետեւ Դեմետրիոս անունով արծաթագործ մը, որ կը շինէր Արտեմիսի փոքրիկ արծաթէ տաճարներ ու մեծ վաստակ կը բերէր արհեստաւորներուն, **25** համախմբեց զանոնք՝ նոյն արհեստին գործաւորներուն հետ, եւ ըսաւ. «Մարդիկ, դուք գիտէք թէ այս գործէն է մեր եկամուտը. **26** ու կը տեսնէք եւ կը լսէք թէ այս Պօղոսը ոչ միայն Եփեսոսի մէջ, այլ նաեւ գրեթէ ամբողջ Ասիայի մէջ մեծ բազմութիւն մը համոզեց ու մոլորեցուց, ըսելով թէ “ձեռքով շինուածները աստուածներ չեն”: **27** Ուստի վտանգ

կայ, որ ոչ միայն այս մեր կողմը անարգուի, այլ մեծ աստուածուհիին՝ Արտեմիսի տաճարն ալ ոչինչ սեպուի, եւ խորտակուի մեծափառութիւնը անոր՝ որ ամբողջ Ասիան ու երկրագունդը կը պաշտեն»։ 28 Երբ լսեցին ասիկա, զայրոյթով լեցուած կ'աղաղակէին. «Մեծ է Եփեսացիներուն Արտեմիսը»։ 29 Ամբողջ քաղաքը լեցուեցաւ խառնաշփոթութեամբ, ու յափշտակելով Գայիոս եւ Արիստարքոս Մակեդոնացիները՝ Պօղոսի ճամբորդակիցները՝ բոլորը միաբանութեամբ վազեցին թատրոնը։ 30 Իսկ երբ Պօղոս ուզեց մտնել ամբոխին մէջ, աշակերտները չթոյլատրեցին իրեն։ 31 Ասիապետներէն ոմանք ալ, որ իր բարեկամներն էին, մարդ ղրկելով իրեն՝ կ'աղաչէին որ չյանդգնի երթալ թատրոնը։ 32 Ուստի ոմանք բան մը կ'աղաղակէին, ուրիշներ՝ ուրիշ բան, որովհետեւ համախմբուած շփոթած էր. շատեր ալ չէին գիտեր թէ ինչո՞ւ համախմբուած են։ 33 Ապա բազմութեան մէջէն դուրս քաշեցին Աղեքսանդրոսը, որ 3րեաները յառաջ քշեցին. Աղեքսանդրոս ալ՝ ձեռքը շարժելով՝ կ'ուզէր ջատագովել ինքզինք ամբոխին առջեւ։ 34 Երբ գիտցան թէ ան 3րեայ է, բոլորը միաբերան՝ գրեթէ երկու ժամ աղաղակեցին. «Մեծ է Եփեսացիներուն Արտեմիսը»։ 35 Սակայն ատենադպիրը՝ հանդարտեցնելով բազմութիւնը՝ ըսաւ. «Եփեսացի մարդիկ, ղի՛վ է այն մարդը որ չի գիտեր թէ Եփեսացիներուն քաղաքը՝ պահապանն է մեծ Արտեմիսի ու Դիոսէ ինկած կուռքին

տաճարին: **36** Ուրեմն, նկատելով որ այս բաները անվիճելի են, դուք պետք է հանդարտ կենաք եւ յանդգնութեամբ ոչինչ ընէք: **37** Քանի որ դուք հոս բերիք այդ մարդիկը, որոնք ոչ տաճար կողոպտողներ են, ոչ ալ ձեր աստուածուհիին հայիոյողներ: **38** Ուրեմն, եթէ Դեմետրիոս եւ իրեն հետ եղող արհեստաւորները բան մը ունին ոեւէ մէկուն դէմ, դատի օրեր կան ու փոխ-հիւպատոսներ, թող ամբաստանեն զիրար: **39** Իսկ եթէ ձեր պահանջը ուրիշ բանի մը մասին է, թող բացատրուի օրինաւոր համախմբումի մէջ: **40** Որովհետեւ մենք ալ այսօրուան եղածին համար՝ իբր ապստամբ ամբաստանուելու վտանգին մէջ ենք, քանի որ պատճառ մը չկայ՝ որով կարենանք հաշիւ տալ այս խառնիճադանճին համար»: **41** Ու երբ այսպէս խօսեցաւ՝ արձակեց համախմբումը:

20 Աղմուկին դադրելէն ետք՝ Պօղոս իրեն կանչեց աշակերտները, ու բարեւելով զանոնք՝ մեկնեցաւ որ Մակեդոնիա երթայ: **2** Այդ վայրերը շրջելէ եւ շատ խօսքերով զանոնք յորդորելէ ետք՝ Յունաստան գնաց, **3** ու երեք ամիս հոն կեցաւ: Երբ պիտի նաւարկէր դէպի Սուրիա՝ Հրեաները դաւադրեցին իրեն դէմ. ուստի որոշեց վերադառնալ՝ Մակեդոնիայէն անցնելով: **4** Բերիացի (Պիռոսի որդին) Սոպատրոս՝ մինչեւ Ասիա իրեն հետ գնաց, նաեւ Թեսալոնիկեցիներէն՝ Արիստարքոս ու Սեկունդոս, Գայիոս Դերբացին, Տիմոթէոս, իսկ Ասիայէն՝ Տիւքիկոս եւ Տրոփիմոս: **5** Ասոնք

նախապէս գացին ու Տրովադայի մէջ սպասեցին
 մեզի: **6** Մենք ալ՝ Բաղարջակերբի օրերէն ետք՝
 Փիլիպպէէն նաւարկեցինք, հինգ օրուան մէջ
 հասանք Տրովադա՝ անոնց քով, ու հոն կեցանք
 եօթը օր: **7** Մէկշաբթի օրը, երբ հաւաքուած
 էինք՝ հաց կտրելու, Պօղոս կը քարոզէր անոնց,
 որովհետեւ հետեւեալ օրը պիտի մեկնէր. ու
 խօսքը երկարեց մինչեւ կէս գիշեր: **8** Շատ
 լապտերներ կային այն վերնատունը՝ ուր մենք
 հաւաքուած էինք: **9** Երիտասարդ մը՝ Եւտիքոս
 անունով, որ պատուհանին մէջ նստած էր,
 մտաւ խորունկ քունի մէջ: Երբ Պօղոս երկարեց
 քարոզը, ան՝ տարուած քունէն՝ ինկաւ երրորդ
 յարկէն վար, ու մեռած վերցուցին զայն: **10** Պօղոս
 վար իջաւ, ինկաւ անոր վրայ, գրկեց զայն եւ
 ըսաւ. «Մի՛ վրդովի՛ք, որովհետեւ անոր հոգին իր
 մէջն է»: **11** Ուստի՝ երբ վեր ելաւ՝ կտրեց հացը,
 ճաշակեց, ու երկար խօսեցաւ՝ մինչեւ առտու.
 յետոյ մեկնեցաւ: **12** Իսկ այդ պատանին ողջ
 բերին, եւ չափազանց մխիթարուեցան: **13** Իսկ
 մենք՝ նախապէս նաւ մտնելով՝ մեկնեցանք դէպի
 Ասոս, ուրկէ պիտի առնէինք Պօղոսը, որովհետեւ
 այդպէս պատուիրած էր. քանի որ ինք պիտի
 երթար ցամաքով: **14** Երբ Ասոսի մէջ միացաւ
 մեզի, առինք զինք եւ գացինք Միտիլինէ: **15** Անկէ
 ալ նաւարկելով՝ հետեւեալ օրը հասանք Քիոսի
 դիմաց. միւս օրը հասանք Սամոս, ու գիշերը
 մնալով Տրոգիլիոն՝ յաջորդ օրը գացինք Միլետոս:
16 Արդարեւ Պօղոս որոշած էր նաւարկել Եփեսոսի

քովէն, որովհետեւ չէր ուզեր ժամանակ անցընել
 Ասիայի մէջ, քանի որ կ'աճապարէր Երուսաղէմ
 ըլլալ Պենտեկոստէի օրը՝ եթէ կարելի ըլլար իրեն:
 17 Ուստի Միլետոսէն մարդ դրկեց Եփեսոս, ու
 կանչեց եկեղեցիին երէցները: 18 Երբ եկան իր քով,
 ըսաւ անոնց. «Դուք գիտէք թէ ինչպէս վարուեցայ
 ձեզի հետ ամբողջ ժամանակը, առաջին օրէն
 ի վեր երբ Ասիա եկայ, 19 ծառայելով Տէրոջ
 լման խոնարհութեամբ, եւ շատ արցունքով ու
 փորձութիւններով՝ որոնք պատահեցան ինծի
 Յրեաներուն դաւադրութիւններով. 20 ինչպէս
 չընկրկեցայ օգտակար բաներէն որեւէ մէկը
 հաղորդելէ եւ սորվեցնելէ ձեզի՝ հրապարակաւ ու
 տուներու մէջ, 21 վկայելով թէ Յրեաներուն եւ թէ
 Յոյներուն՝ դէպի Աստուած ապաշխարութեան
 ու մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի հանդէպ
 հաւատքին մասին: 22 Եւ հիմա ահա կ'երթամ
 Երուսաղէմ՝ հոգիով կապուած, ու չեմ գիտեր թէ
 հոն ինչ պիտի պատահի ինծի. 23 սակայն Սուրբ
 Հոգին կը վկայէ ամէն բաղաքի մէջ, եւ կ'ըսէ թէ
 կապեր ու տառապանքներ կը սպասեն ինծի: 24
 Բայց ես ոչ մէկ բան կը հաշուեմ, ոչ ալ ինծի համար
 պատուական կը նկատեմ՝ իմ անձս, որպէսզի
 ուրախութեամբ աւարտեմ ընթացքս, նաեւ այն
 սպասարկութիւնը որ ստացայ Տէր Յիսուսէն՝
 վկայ ըլլալու Աստուծոյ շնորհքի աւետարանին:
 25 Ու հիմա ահա ես գիտեմ թէ դուք բոլորդ՝
 որոնց մէջ շրջեցայ Աստուծոյ թագաւորութիւնը
 քարոզելով, ալ իմ երեսս պիտի չտեսնէք: 26 Ուստի

այսօր կը վկայեն ձեզի թէ ես անպարտ եմ բոլորին արիւնէն. **27** որովհետեւ չընկրկեցայ Աստուծոյ ամբողջ ծրագիրը հաղորդելէ ձեզի: **28** Ուրեմն ուշադիր եղէք դուք ձեզի եւ ամբողջ հօտին, որուն վրայ Սուրբ Յոգին տեսուչ դրաւ ձեզ՝ հովուելու Աստուծոյ եկեղեցին, որ ստացաւ իր արիւնով: **29** Քանի որ գիտեմ թէ իմ մեկնումէս ետք՝ ձեր մէջ պիտի մտնեն յափշտակող գայլեր, որոնք պիտի չխնայեն հօտին: **30** Ու ձեզմէ ալ պիտի ելլեն այնպիսի մարդիկ, որոնք պիտի խօսին խոտոր բաներ՝ քաշելու համար աշակերտները իրենց ետեւէն: **31** Ուստի արթնն կեցէք, եւ յիշեցէք թէ երեք տարի, զիշեր ու ցերեկ, չդադրեցայ ձեզմէ իւրաքանչիւրը արցունքով խրատելէ: **32** Եւ հիմա, եղբայրներ, կը յանձնեմ ձեզ Աստուծոյ ու անոր շնորհքի խօսքին, որ կարող է շինել եւ ձեզի ժառանգութիւն տալ՝ բոլոր սրբացածներուն հետ: **33** Ո՛չ մեկուն արծաթին, կամ ոսկիին, կամ պատմունճանին ցանկացի: **34** Դուք ձեզմէ գիտէք թէ այս ձեռքերս հոգացին իմ ու ինծի հետ եղողներուն կարիքները: **35** Ամէն բան ցոյց տուի ձեզի, թէ այսպէս պէտք է աշխատիլ եւ օգնել տկարներուն, ու յիշել Տէր Յիսուսի խօսքը՝ որ ինք ըսաւ. “Աւելի երանելի է տանը՝ քան ստանալը”»: **36** Երբ այսպէս խօսեցաւ, ծնրադրեց եւ բոլորին հետ աղօթեց: **37** Բոլորն ալ շատ լացին, ու Պօղոսի վիզին վրայ իյնալով՝ համբուրեցին զայն: **38** Կը մորմոքէին մանաւանդ այն խօսքին համար,

որ ըսաւ թէ ակ պիտի չտեսնէին իր երեսը: Եւ ուղեկցեցան անոր մինչեւ նաւը:

21 Երբ անջատուեցանք անոնցմէ ու մեկնեցանք, ուղիղ ընթացքով գացինք Կով, ու միւս օրը՝ Յռոդոն, անկէ ալ՝ Պատարա: **2** Եւ գտնելով նաւ մը՝ որ կ'երթար Փիւնիկէ, մտանք անոր մէջ ու մեկնեցանք: **3** Երբ Կիպրոս երեւցաւ, թողուցինք զայն ձախ կողմը, նաւարկեցինք դէպի Սուրիա ու հասանք Տիւրոս, որովհետեւ նաւը հոն պիտի պարպէր իր ապրանքը: **4** Գտնելով աշակերտները՝ եօթը օր մնացինք հոն. անոնք Սուրբ Հոգիով կ'ըսէին Պօղոսի՝ որ չբարձրանայ Երուսաղէմ: **5** Բայց երբ այդ օրերը լրացան, մեկնեցանք. երբ կ'երթայինք՝ բոլորն ալ, կիներով ու զաւակներով, ուղեկցեցան մեզի մինչեւ քաղաքէն դուրս, եւ ծնրադրելով ծովեզերքը՝ աղօթեցինք: **6** Ապա հրաժեշտ առնելով իրարմէ՝ մենք նաւ ելանք, անոնք ալ վերադարձան իրենց տուները: **7** Իսկ մենք՝ աւարտելով Տիւրոսէն սկսած նաւարկութիւնը՝ հասանք Պտողեմայիս, բարեւեցինք եղբայրները, եւ օր մը մնացինք անոնց քով: **8** Հետեւեալ օրը՝ մեկնեցանք ու եկանք Կեսարիա, եւ մտնելով Փիլիպպոս աւետարանիչին տունը՝ որ եօթը սարկաւազներէն մէկն էր՝ մնացինք անոր քով: **9** Ան ունէր չորս կոյս աղջիկներ, որոնք կը մարգարէանային: **10** Զանի որ շատ օրեր մնացինք հոն, Հրէաստանէն մարգարէ մը իջաւ՝ Ագաբոս անունով. **11** երբ եկաւ մեզի, առաւ Պօղոսի գօտին, կապեց իր ձեռքերն ու

ոտքերը, եւ ըսաւ. «Սա կը յայտարարէ Սուրբ
 Զոզին. “Երուսաղէմի մէջ, Զրեաները այսպէս
 պիտի կապեն այն մարդը՝ որունն է այս գօտին,
 ու պիտի մատնեն հեթանոսներուն ձեռքը”»: 12
 Երբ լսեցինք այս բաները, աղաչեցինք՝ մենք ալ,
 տեղացիներն ալ, որ չբարձրանայ Երուսաղէմ:
 13 Իսկ Պօղոս պատասխանեց. «Ի՞նչ կ'ընէք.
 ինչո՞ւ կու լաք ու կը ճմլէք իմ սիրտս. քանի որ
 ես պատրաստ եմ Երուսաղէմի մէջ ո՛չ միայն
 կապուելու, հապա նաեւ մեռնելու՝ Տէր Յիսուսի
 անունին համար»: 14 Երբ ինք չհամոզուեցաւ,
 հանդարտ կեցանք եւ ըսինք. «Տէրոջ կամքը թող
 ըլլայ»: 15 Այդ օրերէն ետք՝ պատրաստուեցանք
 ու բարձրացանք Երուսաղէմ: 16 Կեսարացի
 աշակերտներէն ալ ոմանք եկան մեզի հետ,
 ու տարին մեզ առաջին օրերէն աշակերտ
 եղած՝ Կիպրացի Մնասոնի, որուն քով պիտի
 հիւրընկալուէինք: 17 Երբ մտանք Երուսաղէմ,
 եղբայրները ուրախութեամբ ընդունեցին մեզ: 18
 Զետեւեալ օրը Պօղոս մեզի հետ գնաց Յակոբոսի
 քով, ու բոլոր երեցներն ալ եկան: 19 Բարեւելէ ետք
 զանոնք՝ մէկ առ մէկ կը պատմէր ինչ որ Աստուած
 ըրաւ հեթանոսներուն մէջ՝ իր սպասարկութեամբ:
 20 Անոնք ալ լսելով՝ փառաւորեցին Տէրը, եւ
 ըսին իրեն. «Կը տեսնե՞ս, եղբայր, քանի՞ բիւրաւոր
 հաւատացեալ Զրեաներ կան: Բոլորն ալ Օրէնքին
 նախանձախնդիր են, 21 բայց տեղեկացան քու
 մասիդ՝ թէ հեթանոսներուն մէջ եղող բոլոր
 Զրեաներուն կը սորվեցնես հրաժարիլ Մովսէսէն,

ըսելով որ չթլփատեն իրենց զաւակները եւ չընթանան սովորութիւններուն համաձայն: **22** Ուրեմն ինչ պիտի ըլլայ. անշուշտ բազմութիւն պիտի համախմբուի, որովհետեւ պիտի լսեն թէ եկած ես: **23** Ուստի ըրէ ինչ որ կ'ըսենք քեզի: Մեր քով չորս մարդիկ կան՝ որոնք ուխտ ըրած են. **24** ան զանոնք, մաքրագործէ դուն քեզ՝ իրենց հետ, եւ վճարէ անոնց ծախսը՝ որ ածիլեն իրենց գլուխը. որպէսզի բոլորն ալ գիտնան թէ սխալ են քու մասիդ իրենց ստացած տեղեկութիւնները, հապա դռն ալ մեզի հետ կ'ընթանաս՝ պահելով Օրէնքը: **25** Բայց հաւատքը ընդունող հեթանոսներուն մասին՝ մենք գրեցինք, եզրակացնելով որ անոնք բնաւ չպահեն այսպիսի բաներ, բայց միայն զգուշանան կուռքերու զոհուածէ, արիւնէ, խեղդուածէ ու պոռնկութենէ»: **26** Այն ատեն Պօղոս առաւ այդ մարդիկը, եւ հետեւեալ օրը՝ անոնց հետ մաքրագործուելէ ետք՝ մտաւ տաճարը իրենց մաքրագործումի օրերուն ամբողջացումը յայտարարելու համար, թէ նրբ ընծայ պիտի մատուցանուէր իրենցմէ իւրաքանչիւրին համար: **27** Եօթը օրերը լրանալու մօտ էին, երբ ասիացի Հրեաները՝ տեսնելով զայն տաճարին մէջ՝ խառնակեցին ամբողջ բազմութիւնը, եւ անոր վրայ ձեռք բարձրացնելով՝ կ'աղաղակէին. **28** «Իսրայելացի մարդիկ, օգնութեան հասէք: Այս է այն մարդը, որ ամենուրեք կը սորվեցնէ բոլորին՝ ժողովուրդին, Օրէնքին եւ այս տեղին դէմ. նոյնիսկ Յոյներ ալ մտցուց տաճարին մէջ

ու պղծեց այս սուրբ տեղը» 29 (որովհետեւ նախապէս տեսեր էին Եփեսացի Տրոփիմոսը իրեն հետ՝ քաղաքին մէջ, ու կը կարծէին թէ Պօղոս տաճարը մտցուցած էր զայն): 30 Ամբողջ քաղաքը շարժեցաւ ու ժողովուրդը խռնուեցաւ Պօղոսը բռնելով՝ քաշեցին տաճարէն դուրս, եւ իսկոյն դռները գոցուեցան: 31 Երբ անոնք կը ջանային սպաննել զայն, լուր հասաւ գունդին հազարապետին թէ ամբողջ Երուսաղէմը խառնաշփոթութեան մէջ է: 32 Ան ալ անյապաղ զինուորներ եւ հարիւրապետներ առած՝ վազեց անոնց քով: Անոնք ալ տեսնելով հազարապետն ու զինուորները՝ դադրեցան Պօղոսը ծեծելէ: 33 Այն ատեն հազարապետը մօտեցաւ, բռնեց զայն, ու հրամայեց որ կապեն կրկին շղթայով. ապա հարցափորձեց թէ ո՞վ էր ան եւ ինչ ըրած էր: 34 Սակայն բազմութեան մէջէն՝ մէկը բան մը կը գոռար, միւսը՝ ուրիշ բան: Երբ չկրցաւ գիտնալ ստոյգը աղմուկին մասին, հրամայեց որ բերդը տանին զայն: 35 Երբ սանդուխը հասաւ, այնպէս պատահեցաւ որ զինուորները կրեցին զայն՝ բազմութեան բռնութեան համար: 36 որովհետեւ ժողովուրդին բազմութիւնը կը հետեւէր՝ աղաղակելով. «Վերցնուր զայն»: 37 Երբ Պօղոս կը մտնէր բերդը՝ ըսաւ հազարապետին. «Արդեօք արտօնուած է որ բան մը ըսեմ քեզի»: Ան ալ ըսաւ. «Յունարէն գիտե՛ս: 38 Դուն չե՛ս այն Եգիպտացին, որ ասկէ օրեր առաջ չորս հազար սրիկայ մարդիկ ապստամբեցուց եւ դուրս

տարաւ՝ անապատը»: **39** Պօղոս ալ ըսաւ. «Ես հրեայ մարդ մըն եմ՝ Կիլիկիայի Տարսոնէն, ոչ աննշան քաղաքի մը քաղաքացի. կ'աղերսնմ քեզի, արտօնէ ինծի՝ որ խօսիմ ժողովուրդին»: **40** Երբ ան արտօնեց, Պօղոս՝ սանդուխին վրայ կայնելով՝ ձեռքը շարժեց ժողովուրդին: Երբ խոր լռութիւն եղաւ, երբայական բարբառով խօսեցաւ անոնց եւ ըսաւ.

22 «Մարդիկ եղբայրներ եւ հայրեր, լսեցէք հիմա իմ ջատագովականս՝ ուղղուած ձեզի»: **2** (Երբ լսեցին թէ երբայական բարբառով կը խօսէր իրենց, ալ աւելի հանդարտ կեցան:) **3** Եւ ան ըսաւ. «Ես հրեայ մարդ մըն եմ՝ ծնած Կիլիկիայի Տարսոնին մէջ, բայց մեծցած հոս՝ այս քաղաքին մէջ՝ Գամաղիէի ոտքը, եւ ճշգրտապէս կրթուած մեր հայրերու Օրէնքին համաձայն: Նախանձախնդիր էի Աստուծոյ, ինչպէս այսօր դուք բոլորդ: **4** Այր մարդիկ ու կիներ կապելով եւ բանտերու մատնելով՝ այս ճամբան հալածեցի մինչեւ մահ, **5** ինչպէս քահանայապետն ալ կը վկայէ իմ մասիս, եւ ամբողջ երէցներու ժողովը. նաեւ անոնցմէ նամակներ ընդունելով՝ Դամասկոս կ'երթայի, որպէսզի հոն եղածներն ալ կապուած բերեմ Երուսաղէմ՝ որ պատժուին»: **6** «Մինչ կ'երթայի ու մօտեցայ Դամասկոսի, կէսօրուան ատենները յանկարծ երկինքէն մեծ լոյս մը փայլատակեց իմ շուրջս, **7** եւ գետին ինկայ ու լսեցի ձայն մը՝ որ կ'ըսէր ինծի. «Սաւուր, Սաւուր, ինչո՞ւ կը հալածես զիս»: **8** Ես ալ պատասխանեցի. «Դուն ո՞վ ես,

Տէր»։ Ան ալ ըսաւ ինծի. «Ես Յիսուս Նազովրեցին եմ, որ դուն կը հալածես»։ **9** Անոնք որ ինծի հետ էին՝ արդարեւ տեսան յոյսը ու վախցան, սակայն չլսեցին ինծի խօսողին ձայնը։ **10** Իսկ ես ըսի. «Ինչ ընեմ, Տէր»։ Տէրը ըսաւ ինծի. «Կանգնէ, գնա՛ Դամասկոս, ու հոն պիտի խօսուի քեզի այն բոլոր բաներուն մասին, որոնք որոշուած են քեզի համար՝ որպէսզի ընես»։ **11** Քանի չէի տեսներ՝ այդ յոյսին փառաւորութեան պատճառով, ինծի հետ եղողներուն ձեռքէն բռնելով՝ մտայ Դամասկոս։ **12** Անանիա անունով մարդ մը, Օրէնքին համեմատ բարեպաշտ, եւ բարի վկայուած Դամասկոս բնակող բոլոր Յրեաներէն, **13** եկաւ ինծի ու կայնելով քովս՝ ըսաւ ինծի. «Սաւռւդ եղբայր, վերստացիր տեսողութիւնդ»։ **14** Նոյն ժամուն վերստացայ տեսողութիւնս եւ նայեցայ իրեն. ինք ալ ըսաւ. «Մեր հայրերուն Աստուածը նախապէս սահմանեց քեզ որ գիտնաս իր կամքը, տեսնես այն Արդարը եւ լսես անոր ձայնը՝ իր բերանէն. **15** քանի որ բոլոր մարդոց առջեւ պիտի ըլլաս իր վկան այն բաներուն մասին՝ որ տեսար ու լսեցիր։ **16** Եւ հիմա ալ ինչո՞ւ կը յամենաս. կանգնէ, մկրտուէ՛ ու լուսն մեղքերդ՝ կանչելով իր անունը»։ **17** Երբ վերադարձայ Երուսաղէմ, մինչ կ'աղօթէի տաճարին մէջ՝ վերացում ունեցայ **18** ու տեսայ զինք՝ որ կ'ըսէր ինծի. «Աճապարէ, շուտով դուրս ելիր Երուսաղէմէն, որովհետեւ պիտի չընդունին քու վկայութիւնդ՝ իմ մասիս»։ **19** Ես ալ ըսի. «Տէր, իրենք լաւ գիտեն թէ ես էի՝ որ կը բանտարկէի քեզի

հաւատացողները եւ կը ծեծէի ժողովարաններուն
 մէջ. 20 Երբ քու Ստեփանոս վկայիդ արիւնը
 կը թափուէր՝ ես ինքս ալ ներկայ էի, կամակից
 ըլլալով անոր սպաննուելուն՝, ու ես կը պահէի
 զայն սպաննողներուն հանդերձները»: 21 Բայց
 ըսաւ ինծի. «Գնա՛, որովհետեւ ես պիտի դրկեմ քեզ
 հեռաւոր հեթանոսներուն»: 22 Անոնք մտիկ ըրին
 իրեն մինչեւ այս խօսքը, յետոյ բարձրացուցին
 իրենց ձայները եւ ըսին. «Վերցնր աշխարհէն
 այդպիսի մարդ մը, քանի որ չի պատշաճիր անոր
 ապրիլ»: 23 Մինչ կը պոռային, իրենց հանդերձները
 կը նետէին ու փռչի կը ցանէին օդին մէջ, 24
 հազարապետը հրամայեց որ բերդը մտցնեն զայն,
 եւ ըսաւ որ խարազանելով հարցաքննեն զայն,
 որպէսզի գիտնայ թէ ինչո՛ւ այդպէս կը գոչէին
 անոր դէմ: 25 Երբ կապեցին զինք փոկերով,
 Պօղոս ըսաւ վերակացու հարիւրապետին.
 «Արտօնուած է ձեզի՝ խարազանել մարդ մը, որ
 Հռոմայեցի է ու դատապարտուած ալ չէ»: 26
 Երբ հարիւրապետը լսեց ասիկա, մօտեցաւ ու
 պատմեց հազարապետին՝ ըսելով. «Ի՞նչ պիտի
 ընես, որովհետեւ այս մարդը Հռոմայեցի է»: 27
 Ուստի հազարապետը գնաց անոր քով եւ ըսաւ.
 «Ըսէ՛ ինծի, դուն Հռոմայեցի՞ ես»: Ան ալ ըսաւ.
 «Այո՛»: 28 Հազարապետը պատասխանեց. «Ես մեծ
 գումարով տիրացայ այս քաղաքացիութեան»: Պօղոս
 ըսաւ. «Իսկ ես ծնունդով եմ»: 29 Ուստի
 անոնք որ պիտի հարցաքննէին զինք՝ իսկոյն
 հեռացան իրմէ. հազարապետն ալ վախցաւ՝ երբ

գիտցաւ թէ Զոռմայեցի Է, որովհետեւ կապած էր զայն: 30 Զետեւեալ օրը, ուզելով գիտնալ ստոյգը՝ թէ ինչո՞ւ ան ամբաստանուած էր Զրեաներէն, արձակեց զայն եւ հրամայեց որ քահանայապետներն ու ամբողջ ատեանը գան. եւ իջեցնելով Պօղոսը՝ ներկայացուց անոնց:

23 Պօղոս՝ ակնապիշ նայելով ատեանին՝ ըսաւ. «Մարդիկ եղբայրներ, ես մինչեւ այսօր բոլորովին բարի խղճմտանքով կեանք վարեր եմ Աստուծոյ առջեւ»: 2 Անանիա քահանայապետն ալ հրամայեց իր քով կայնողներուն՝ որ զարնեն անոր բերանին: 3 Այն ատեն Պօղոս ըսաւ անոր. «Աստուած պիտի զարնէ քեզի, ծեփուած պատ: Դուն բազմած ես՝ դատելու զիս Օրէնքին համաձայն, եւ կը հրամայեմ Օրէնքին հակառակ՝ որ զարնեն ինձի»: 4 Շուրջը կայնողները ըսին. «Աստուծոյ քահանայապետը կը հեզնես»: 5 Պօղոս ալ ըսաւ. «Եղբայրներ, չէի գիտեր թէ քահանայապետ Է, որովհետեւ գրուած Է. “Զու ժողովուրդիդ պետին դէմ չարախօսութիւն մի ըներ”»: 6 Երբ Պօղոս գիտցաւ թէ մէկ մասը Սաղուկեցիներ Էին, ու միւսը՝ Փարիսեցիներ, աղաղակեց ատեանին մէջ. «Մարդիկ եղբայրներ, ես Փարիսեցի եմ, Փարիսեցիի որդի. կը դատուիմ մեռելներու յարութեան յոյսին համար»: 7 Երբ ըսաւ ասիկա, ընդվզում մը ծագեցաւ Փարիսեցիներուն եւ Սաղուկեցիներուն միջեւ, ու բազմութիւնը բաժնուեցաւ. 8 քանի որ Սաղուկեցիները կ'ըսեն թէ ո՛չ յարութիւն կայ,

ոչ ալ հրեշտակ կամ հոգի, իսկ Փարիսեցիները
 կը դաւանին երկուքն ալ: **9** Հօգոր գոչիւն մը
 բարձրացաւ, եւ Փարիսեցիներու կողմէն եղող
 դպիրները կանգնեցան ու մաքառեցան՝ ըսելով.
 «Մենք ոչ մէկ չարութիւն կը գտնենք այս մարդուն
 վրայ. հապա եթէ հոգի մը կամ հրեշտակ մը խօսած
 է անոր, ինչ կրնանք ընել»: **10** Երբ աղմուկը
 սաստկացաւ,՝ հազարապետը՝ վախնալով որ
 Պօղոս բզբտուի անոնցմէ՝ հրամայեց զօրքերուն
 որ իջնեն, յափշտակեն զայն անոնց մէջէն
 ու բերեն բերդը: **11** Հետեւեալ գիշերը Տէրը
 կայնեցաւ անոր քով եւ ըսաւ. «Քաջալերուէ,
 Պօղոս, որովհետեւ ինչպէս վկայեցիր ինծի
 համար Երուսաղէմի մէջ, այնպէս ալ պէտք
 է վկայես Հռոմի մէջ»: **12** Երբ առտու եղաւ,
 Հրեաներէն ոմանք միաբանեցան եւ նգովեցին
 իրենք զիրենք, ըսելով թէ ոչ պիտի ուտեն, ոչ ալ
 խմեն՝ մինչեւ որ սպաննեն Պօղոսը: **13** Այս երդումը
 ընողները՝ քառասունէ աւելի էին: **14** Անոնք
 զացին քահանայապետներուն ու երէցներուն,
 եւ ըսին. «Սաստիկ նգովեցինք մենք մեզ, որ
 ոչ մէկ բան ճաշակենք՝ մինչեւ որ սպաննենք
 Պօղոսը: **15** Ուստի դուք հիմա՝ ատեանին
 հետ՝ խնդրանք յայտնեցէք հազարապետին, որ
 վաղը իջեցնէ զայն ձեզի, իբր թէ կ'ուզէք աւելի
 ճշգրիտ տեղեկութիւն ունենալ անոր մասին. իսկ
 մենք՝ անոր մօտենալէն առաջ՝ պատրաստ ենք
 սպաննել զայն»: **16** Բայց Պօղոսի քրոջ որդին՝
 լսելով այս դարանակալութիւնը՝ գնաց, մտաւ

բերողը, ու պատմեց Պօղոսի: 17 Պօղոս ալ կանչեց հարիւրապետներէն մէկը եւ ըսաւ. «Տա՛ր այս երիտասարդը հազարապետին, որովհետեւ լուր մը ունի՝ տալու անոր»: 18 Ան ալ առաւ զայն, տարաւ հազարապետին եւ ըսաւ. «Բանտարկեալ Պօղոսը կանչեց զիս ու խնդրեց՝ որ բերեմ քեզի այս երիտասարդը, քանի որ ըսելիք ունի քեզի»:

19 Հազարապետը անոր ձեռքէն բռնելով՝ մէկդի քաշուեցաւ եւ հարցուց. «Ի՞նչ լուր ունիս՝ տալու ինծի»: 20 Ան ալ ըսաւ. «Հրեաները միաձայնեցան թախանձել քեզի՝ որ վաղը ատեանին առջեւ իջեցնես Պօղոսը, որպէս թէ կ'ուզեն աւելի ճշգրտութեամբ հարցաքննել զայն: 21 Բայց դուն մտիկ մի ըներ անոնց, որովհետեւ անոնցմէ քառասունէ աւելի մարդիկ դարան մտած են անոր համար, եւ իրենք զիրենք նզոված՝ որ ո՛չ ուտեն, ո՛չ ալ խմեն, մինչեւ որ սպաննեն զայն. ու հիմա պատրաստ են, եւ կը սպասեն քու խոստումիդ»: 22 Հետեւաբար հազարապետը արձակեց երիտասարդը՝ պատուիրելով անոր. «Ո՛ր մէկուն ըսէ թէ այս բաները յայտնեցիր ինծի»: 23 Ապա կանչելով հարիւրապետներէն երկուքը՝ ըսաւ. «Պատրաստեցէ՛ք երկու հարիւր զինուոր, եօթանասուն ձիաւոր ու երկու հարիւր գեղարդաւոր, որպէսզի երթան մինչեւ Կեսարիա՝ գիշերուան երրորդ ժամուն՝. 24 նաեւ հայթայթեցէ՛ք գրաստներ, որպէսզի հեծցնեն Պօղոսը եւ ապահովութեամբ տանին Փելիքս կառավարիչին»: 25 Նամակ մըն ալ գրեց՝ սա՛

տիպարին համաձայն. **26** «Կողոփոս Լիւսիաս՝ պատուական Փելիքս կառավարիչին. ողջոյն: **27** Այս մարդը բռնուած էր Յրեաներէն եւ պիտի սպաննուէր անոնցմէ. իսկ ես վրայ հասայ զօրքերով եւ ազատեցի զայն, հասկնալով որ Յռոմայեցի է: **28** Ուզելով գիտնալ պատճառը՝ որուն համար կ'ամբաստանէին զինք, տարի զինք անոնց ատենին առջեւ, **29** եւ գտայ թէ ամբաստանուած էր իրենց Օրէնքին վերաբերեալ հարցերու համար, բայց մահուան կամ կապերու արժանի ոչ մէկ յանցանք ունէր: **30** Երբ տեղեկացայ թէ Յրեաները կը դաւադրեն այդ մարդուն դէմ, անյապաղ դրկեցի քեզի, պատուիրելով ամբաստանողներուն ալ՝ որ խօսին քու առջեւ անոր դէմ: Ո՛ղջ եղիր»: **31** Չինուորներն ալ առին Պօղոսը եւ գիշերուան մէջ տարին Անտիպատրոս, իրենց հրամայուածին համաձայն: **32** Հետեւեալ օրը՝ թողուցին ծիաւորները որ երթան անոր հետ, իսկ իրենք վերադարձան բերդը: **33** Անոնք ալ մտան Կեսարիա, տուին նամակը կառավարիչին ու ներկայացուցին Պօղոսը անոր: **34** Երբ կարդաց, հարցուց թէ ո՞ր գաւառէն է, եւ հասկնալով թէ Կիլիկիայէն է՝ **35** ըսաւ. «Մտիկ պիտի ընեմ քեզի՝ երբ գան քեզ ամբաստանողներն ալ»: Ու հրամայեց որ պահեն զայն Հերովդէսի պալատին մէջ:

24 Հինգ օր ետք, Անանիա քահանայապետը՝ երէցներուն եւ Տերտիւղոս անունով ճարտասանի մը հետ իջաւ, ու յայտնեցին կառավարիչին

իրենց ամբաստանութիւնը՝ Պօղոսի դէմ: 2 Երբ
 կանչեցին զայն, Տերտիլղոս սկսաւ ամբաստանել
 եւ ըսել. «Որովհետեւ խոր խաղաղութիւն կը
 վայելենք քու միջոցովդ, ու բարեբաստիկ
 կարգադրութիւններ եղած են այս ազգին՝
 քու կանխամտածութեամբդ, 3 ամէն ատեն
 եւ ամէն տեղ կ'ընդունինք զանոնք ամբողջ
 շնորհակալութեամբ, պատուական Փելիքս: 4 Բայց
 որպէսզի ալ աւելի չձանձրացնեմ քեզ, կ'աղաչեմ,
 քու ներողամտութեամբդ մտիկ ըրէ մեզի.
 համառօտաբար պիտի խօսինք: 5 Մենք գտանք թէ
 այս մարդը ժանտախտ մըն է. ապստամբութեան
 կը մղէ ամբողջ երկրագունդին բոլոր Յրեաները,
 ու պարագլուխն է Նագովրեցիներու աղանդին: 6
 Ան նոյնիսկ փորձեց տաճարը սրբապղծել. ուստի
 բռնեցինք զայն եւ ուզեցինք դատել մեր Օրէնքին
 համաձայն: 7 Բայց Լիւսիաս հազարապետը
 եկաւ, մեծ բռնութեամբ առաւ զայն մեր ձեռքէն,
 8 ու հրամայեց զայն ամբաստանողներուն որ
 զան քեզի: Դուն ինքդ հարցաքննելով զինք՝
 պիտի կարենաս գիտնալ այն բոլոր բաները,
 որոնց համար մենք կ'ամբաստանենք զայն»: 9
 Յրեաներն ալ միաձայնեցան, հաւաստելով թէ
 այդ բաները այդպէս են: 10 Երբ կառավարիչը
 նշան ըրաւ իրեն՝ որ խօսի, Պօղոս պատասխանեց.
 «Գիտնալով որ շատ տարիներէ ի վեր դուն այս
 ազգին դատաւորն ես, աւելի սիրայօժարութեամբ
 կը ջատագովեմ զիս. 11 որովհետեւ կրնան
 գիտնալ թէ ես տասներկու օրէն աւելի չէ որ

բարձրացայ Երուսաղէմ՝ երկրպագելու: **12** Չիս երբէք չգտան՝ ոեւէ մէկուն հետ վիճաբանելու կամ բազմութիւն մէկտեղելու ատեն, ո՛չ տաճարին, ո՛չ ժողովարաններուն, **13** ո՛չ քաղաքին մէջ. ո՛չ ալ կրնան ապացուցանել այն բաները, որոնց համար հիմա կ'ամբաստանեն զիս: **14** Բայց սա՛ կը դաւանիմ քու առջեւդ՝, թէ կը պաշտեմ իմ հայրերուս Աստուածը այն ճամբային համաձայն՝ որ իրենք կը կոչեն հերձուած, հաւատալով Օրէնքին ու Մարգարէներուն մէջ գրուած բոլոր բաներուն: **15** Յոյս ունիմ Աստուծոյ վրայ, ինչպէս ասո՛նք ալ ակնկալութիւն ունին, թէ մեռելներուն յարութիւն պիտի ըլլայ, թէ՛ արդարներուն եւ թէ՛ անարդարներուն: **16** Ուստի այս բանին համար ես ճիգ կը թափեմ, որ ամէն ատեն ունենամ անսայթաք խղճմտանք մը՝ Աստուծոյ ու մարդոց առջեւ: **17** Ուրեմն ես՝ շատ տարիներ ետք՝ եկայ ողորմութիւններ բերելու իմ ազգիս, նաեւ ընծաներ: **18** Այսպէս՝ քանի մը ասիացի Յրեաներ գտան զիս տաճարին մէջ՝ մաքրագործուած, առանց բազմութեան կամ աղմուկի. **19** պէտք էր որ անո՛նք գային առջեւդ եւ ամբաստանէին, եթէ ունէին ինծի դէմ ըսելիք բան մը: **20** Կամ թէ ասոնք՝ իրենք թող ըսեն, ի՞նչ անիրաւութիւն գտան իմ վրաս՝ երբ կայնած էի ատեանին առջեւ: **21** Թերեւս միայն սա՛ մէկ աղաղակս, որ բարձրացուցի երբ իրենց մէջ կայնած էի. «Մեռելներու յարութեան համար ես այսօր ձեզմէ կը դատուիմ»: **22** Փելիքս յետաձգեց անոնց հարցը, որովհետեւ

ճշգրիտ տեղեկութիւն ունէր այդ ճամբային մասին, եւ ըսաւ. «Երբ Լիւսիաս հազարապետը հոս իջնէ, պիտի քննեմ ձեր գործը»: **23** Ու հրամայեց հարիւրապետին որ պահէ զայն, բայց անդորրութիւն տայ եւ իրեններէն ո՛չ մէկը արգիլէ՝ սպասաւորելու անոր կամ երթալու անոր քով: **24** Քանի մը օր ետք, Փելիքս եկաւ իր Դրուսիդա կնոջ հետ՝ որ Զրեայ էր, կանչեց Պօղոսը, եւ լսեց անկէ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքի մասին: **25** Երբ ան կը խօսէր արդարութեան, ժողովարարեան ու գալիք դատաստանին մասին, Փելիքս՝ ահաբեկած՝ պատասխանեց. «Գնա՛ հիմա, ու երբ ատեն ունենամ՝ կը կանչեմ քեզ»: **26** Նաեւ յոյս ունէր որ Պօղոս իրեն դրամ տայ. ուստի յաճախ կը կանչէր զայն եւ կը խօսակցէր անոր հետ: **27** Բայց երբ երկու տարի անցաւ, Փելիքսի յաջորդեց Պորկիոս Փեստոս. Փելիքս ալ՝ ուզելով շնորհք ընել Զրեաներուն՝ կապուած ձգեց Պօղոսը:

25 Երբ Փեստոս հասաւ իր իշխանութեան գաւառը, երեք օր ետք բարձրացաւ Կեսարիայէն Երուսաղէմ: **2** Քահանայապետն ու Զրեաներուն գլխաւորներն ալ յայտնեցին անոր իրենց ամբաստանութիւնը՝ Պօղոսի դէմ, **3** եւ աղաչեցին իրեն ու շնորհք խնդրեցին անոր դէմ՝ որ Երուսաղէմ կանչէ զայն. մինչ իրենք դարան կը պատրաստէին՝ ճամբան սպաննելու համար զայն: **4** Սակայն Փեստոս պատասխանեց թէ Պօղոս պահուելու էր Կեսարիա, եւ թէ ինք շուտով պիտի մեկնէր հոն: **5** Ուստի ըսաւ. «Ձեզմէ անոնք որ

կարող են՝ թող իջնեն ինծի հետ, ու եթէ յանցանք մը կայ այդ մարդուն վրայ՝ թող ամբաստանեն զինք»։

6 Յոն ութ կամ տասը օրէ աւելի չկեցաւ՝, յետոյ իջաւ Կեսարիա. հետեւեալ օրը դատարանը բազմեցաւ եւ հրամայեց որ բերեն Պօղոսը։ 7 Երբ ան եկաւ, Երուսաղէմէն իջնող Յրեաները անոր շուրջը կայնեցան ու Պօղոսի վրայ բարդեցին բազմաթիւ եւ ծանր ամբաստանութիւններ, որ չէին կրնար ապացուցանել։ 8 Արդարեւ Պօղոս կը ջատագովէր ինքզինք՝ ըսելով. «Ես ոչ Յրեաներու Օրէնքին, ոչ տաճարին, ոչ ալ կայսրին դէմ մեղանչած եմ»։ 9 Բայց Փեստոս, ուզելով Յրեաներուն շնորհք ընել, պատասխանեց Պօղոսի. «Կ'ուզէս բարձրանալ Երուսաղէմ ու հոն դատուիլ իմ առջեւ՝ այդ բաներուն համար»։ 10 Պօղոս ալ ըսաւ. «Կայսրին դատարանը կայնած եմ, ուր պետք է դատուիմ։ Յրեաները անիրաւած չեմ, ինչպէս դուն ալ լաւ գիտես։ 11 Արդարեւ եթէ անիրաւած եմ կամ ըրած եմ մահուան արժանի բան մը, չեմ մերժեր մեռնիլ։ Բայց եթէ իմ վրաս ոչ մէկը կայ այն բաներէն՝ որոնց համար ասոնք կ'ամբաստանեն զիս, ոչ մէկը կրնայ յանձնել զիս ատոնց։ Կայսրին կը բողոքեմ»։ 12 Այն ատեն Փեստոս՝ խօսակցելէ ետք խորհրդականներուն հետ՝ պատասխանեց. «Կայսրին բողոքեցիր. կայսրին պիտի երթաս»։ 13 Զանի մը օր անցնելէ ետք, Ագրիպպաս թագաւորը եւ Բերինիկէ եկան Կեսարիա՝ բարեւելլու Փեստոսը։ 14 Երբ շատ օրեր մնացին հոն, Փեստոս ներկայացուց թագաւորին

Պօղոսի պարագան՝ ըսելով. «Հոս մարդ մը կայ՝ որ Փելիքս բանտարկուած ձգած է: 15 Երբ Երուսաղէմ գացի, քահանայապետներն ու Հրեաներուն երէցները յայտնեցին ինծի իրենց ամբաստանութիւնը, դատապարտութեան վճիռ խնդրելով անոր դէմ: 16 Անոնց պատասխանեցի թէ Հռոմայեցիներուն սովորութիւնը չէ մահուան մատնել մարդ մը, մինչեւ որ ամբաստանեալը իր դիմաց չունենայ ամբաստանողները, եւ պատեհութիւն չտրուի իրեն՝ ջատագովելու ինքզինք այդ յանցանքին դէմ: 17 Ուստի երբ անոնք համախմբուեցան հոս, առանց որեւէ յետաձգումի՝ հետեւեալ օրը դատարանը բազմելով հրամայեցի որ բերեն մարդը: 18 Անոր ամբաստանողներն ալ ներկայանալով՝ իմ ենթադրած ամբաստանութիւններէս ոչ մէկը յառաջ բերին. 19 Հապա անոր հետ ունէին քանի մը հարցեր՝ իրենց կրօնին վերաբերեալ, ու Յիսուս անունով մեռածի մը մասին, որուն համար Պօղոս կը հաւաստէր թէ ողջ է: 20 Մինչ կը վարանէի այսպիսի հարցերու քննութեան համար, ըսի իրեն թէ կ'ուզէր երթալ Երուսաղէմ եւ հոն դատուիլ այս բաներուն համար: 21 Բայց երբ Պօղոս բողոքեց որ վերապահուի՝ Օգոստափառ կայսրին դիմաց ելլելու, հրամայեցի որ պահեն զինք՝ մինչեւ որ ղրկեմ կայսրին»: 22 Ագրիպպաս ըսաւ Փետտոսի. «Ես ալ կ'ուզէի մտիկ ընել այդ մարդուն»: Ան ալ ըսաւ. «Վաղը մտիկ կ'ընես»: 23 Հետեւեալ օրը, երբ Ագրիպպաս

ու Բերինիկէ եկան մեծ հանդեսով եւ մտան ունկնդրութեան տեղը՝ հազարապետներուն ու քաղաքին պատուաւոր մարդոց հետ, Փեստոս հրամայեց որ Պօղոսը բերուի: **24** Փեստոս ըսաւ. «Ագրիպպան թագաւոր, եւ դժբաղձ քույր մարդիկ՝ որ մեզի հետ ներկայ էք, կը տեսնէք ասիկա՝ որուն մասին Յրեաներուն ամբողջ բազմութիւնը զանգատեցաւ ինծի Երուսաղէմի մէջ եւ հոս ալ, ու կը գոռային թէ “ալ պէտք չէ որ ան ապրի”»: **25** Բայց ես ըմբռնեցի թէ ան մահուան արժանի ոչինչ ըրած է. եւ քանի որ ինք բողոքեց Օգոստափառ կայսր ին, որոշեցի որ զրկեմ զայն: **26** Անոր մասին ստոյգ բան մը չունիմ գրելու իմ տիրոջս. ուստի ներկայացուցի զայն ձեզի, եւ մանաւանդ քեզի, Ագրիպպան թագաւոր, որպէսզի ունենամ գրելիք բան մը՝ հարցաքննելէ ետք. **27** որովհետեւ ինծի անտրամաբանական կը թուի զրկել բանտարկեալ մը՝ առանց նաեւ մատնանշելու անոր վրայ բարդուած յանցանքները»:

26 Այն ատեն Ագրիպպա ըսաւ Պօղոսի. «Արտօնուած է քեզի՝ խօսիլ դուն քեզի համար»: Պօղոս ալ՝ երկարելով ձեռքը՝ ջատագովեց ինքզինք. **2** «Ագրիպպան թագաւոր, ես երանելի կը համարեմ զիս, որ այսօր քու առջեւդ պիտի ջատագովեմ զիս՝ Յրեաներուն ինծի դէմ ըրած քույր ամբաստանութիւններուն համար. **3** մանաւանդ որ դուն լաւ գիտես Յրեաներուն քույր սովորութիւններն ու հարցերը: Ուստի կ'աղերսեմ որ համբերատարութեամբ մտիկ

ընես ինծի: **4** Բոլոր Յրեաները տեղեակ են իմ կենցաղիս՝ պատանութենես ի վեր, սկիզբէն Երուսաղէմ՝ իմ ազգիս մէջ ըլլալուս համար. **5** անոնք սկիզբէն ի վեր կը ճանչնան զիս, (եթէ ուզեն վկայել,) գիտնալով թէ ապրած եմ մեր կրօնին ամենէն խիստ աղանդին համաձայն՝ իբր Փարիսեցի: **6** Եւ հիմա դատարան ներկայացած եմ ու կը դատուիմ՝ Աստուծմէ մեր հայրերուն եղած խոստումի յոյսին համար, **7** որուն կը յուսան հասնիլ մեր տասներկու տոհմերը՝ ջերմեռանդութեամբ պաշտելով Աստուած գիշեր ու ցերեկ: Ես կ'ամբաստանուիմ Յրեաներէն այս յոյսին համար, Ագրիպպան թագաւոր: **8** Ինչո՞ւ անհաւատալի կը թուի ձեզի՝ թէ Աստուած կը յարուցանէ մեռելները: **9** Ես ինքս ալ կը կարծեի թէ շատ բաներ պէտք էր ընել Յիսուս Նազովրեցիի անունին դէմ. **10** եւ ըրի ալ Երուսաղէմի մէջ, ու քահանայապետներէն իրաւասութիւն ստացած՝ բանտարկեցի սուրբերէն շատերը, եւ հաւանութիւն տուի անոնց մեռցուած ատենը: **11** Բոլոր ժողովարաններուն մէջ յաճախ պատժելով զանոնք՝ կը հարկադրէի որ հայիոյն, եւ սաստիկ խելագարած անոնց դէմ՝ կը հալածէի զանոնք մինչեւ անգամ օտար քաղաքներու մէջ»: **12** «Այսպէս, երբ Դամասկոս ալ կ'երթայի՝ քահանայապետներուն իրաւասութեամբ ու հրահանգով, **13** կ'եսօրին, ո՞վ թագաւոր, ճամբան տեսայ արեւէն աւելի պայծառ լոյս մը՝ որ երկինքէն փայլեցաւ իմ շուրջս, նաեւ ինծի հետ զացողներուն

շուրջը: 14 Երբ մենք բոլորս գետին ինկանք,
 լսեցի ձայն մը՝ որ կ'ըսէր ինծի եբրայական
 բարբառով. «Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՛ւ կը հալածես
 զիս. տաժանելի է քեզի՝ աքացել խթանի դէմ»: 15
 Ես ալ ըսի. «Դուն ո՞վ ես, Տէր»: Եւ ան ըսաւ. «Ես
 Յիսուսն եմ, որ դուն կը հալածես: 16 Բայց կանգնե՛
 ու կեցիր ոտքերուդ վրայ. որովհետեւ երեւցայ
 քեզի՝ որպէսզի կարգեմ քեզ սպասաւոր եւ վկայ
 թէ՛ այն բաներուն՝ որ տեսար, թէ՛ ալ այն բաներուն՝
 որոնցմով պիտի երեւնամ քեզի: 17 Պիտի ազատեմ
 քեզ այդ ժողովուրդէն ու հեթանոսներէն, որոնց
 հիմա կը դրկեմ քեզ՝ 18 անոնց աչքերը բանալու,
 խաւարեն՝ լոյսի, եւ Սատանայի իշխանութենէն՝
 Աստուծոյ դարձնելու, որպէսզի անոնք ստանան
 մեղքերու ներում, նաեւ ժառանգութիւն անոնց
 հետ՝ որ սրբացած են հաւատալով ինծի»»: 19
 «Ուստի, Ագրիպպան թագաւոր, ես անհնազանդ
 չեղայ այդ երկնային տեսիլքին: 20 Հապա՛
 նախ Դամասկոս եղողներուն, յետոյ Երուսաղէմ,
 ամբողջ Հրեաստանի երկիրը ու հեթանոսներուն
 քարոզեցի որ ապաշխարեն, դառնան Աստուծոյ,
 եւ ապաշխարութեան արժանավայել գործեր
 կատարեն: 21 Այս պատճառով Հրեաները բռնեցին
 զիս տաճարին մէջ, ու կը ձգտէին սպաննել: 22
 Սակայն Աստուծմէ հասած օգնութեամբ՝ մինչեւ
 այսօր ողջ մնացի, պզտիկին թէ մեծին վկայելով,
 ոչինչ ըսելով այն բաներէն դուրս՝ որ մարգարէները
 եւ Մովսէս խօսեցան թէ պիտի ըլլային. 23
 թէ Քրիստոս պիտի չարչարուէր, ինք պիտի

ըլլար առաջինը՝ որ մեռելներէն յարութիւն պիտի առնէր, ու լոյս պիտի քարոզէր ժողովուրդին եւ հեթանոսներուն»։ 24 Մինչ ան այսպէս կը ջատագովէր ինքզինք, Փեստոս բարձրաձայն ըսաւ. «Կը ցնորին, Պօղոս. շատ կարդացած ըլլալդ քեզ կը խելագարեցնէ»։ 25 Պօղոս ալ ըսաւ. «Ես չեմ խելագարիր, պատուական Փեստոս, հապա կ'ըսեմ ճշմարտութեան ու խոհեմութեան խօսքեր. 26 քանի որ թագաւորը գիտէ այս բաները, եւ անոր առջեւ ալ համարձակութեամբ կը խօսիմ։ Արդարեւ համոզուած եմ թէ ասոնցմէ ոչինչ թաքուն մնացած է իրմէ, որովհետեւ այս բանը անկիւնի մը մէջ եղած չէ։ 27 Մարգարէներուն կը հաւատամ, Ագրիպայն թագաւոր։ Գիտեմ թէ կը հաւատաս»։ 28 Ագրիպպաս ըսաւ Պօղոսի. «Քիչ մնաց որ համոզես զիս քրիստոնեայ ըլլալու»։ 29 Պօղոս ալ ըսաւ. «Աստուծմէ պիտի խնդրէի որ ո՛չ միայն դուն, այլ նաեւ բոլոր անոնք՝ որ այսօր կը լսեն զիս, բոլորովին ինծի պէս ըլլան, այս կապերէն զատ»։ 30 Թագաւորը, կառավարիչը, Բերինիկէ, եւ անոնք՝ որ բազմած էին իրենց հետ՝ կանգնեցան. 31 ու երբ առանձնացան՝ իրարու հետ խօսակցեցան եւ ըսին. «Այս մարդը մահուան կամ կապերու արժանի ոչինչ կ'ընէ»։ 32 Ագրիպպաս ալ ըսաւ Փեստոսի. «Կարելի էր արձակել այս մարդը, եթէ բողոքած չըլլար կայսրին»։

27 Երբ որոշուեցաւ նաւարկել դէպի Իտալիա, Պօղոսը եւ ուրիշ քանի մը բանտարկեալներ յանձնեցին հարիւրապետի մը՝ որուն անունը

Յուլիոս Էր, Սեբաստեան գունդէն: 2 Մտնելով
 աղբամինտական նաւ մը՝ մեկնեցանք, եւ
 պիտի նաւարկէինք Ասիայի ծովեզերքէն. մեզի
 հետ Էր նաեւ Արիստարքոս Մակեդոնացին՝
 Թեսաղոնիկէէն: 3 Հետեւեալ օրը իջանք Սիդոն.
 Յուլիոս՝ մարդասիրութեամբ վարուելով Պօղոսի
 հետ՝ արտօնեց որ երթայ բարեկամներուն եւ
 վայելէ անոնց խնամքը: 4 Մեկնելով անկէ՝
 նաւարկեցինք Կիպրոսի վարի կողմէն, քանի որ
 հովերը հակառակ էին: 5 Յետոյ՝ նաւարկելով
 Կիլիկիայի ու Պամփիլիայի ծովուն մէջէն՝ իջանք
 Լիկիայի Միւռա քաղաքը: 6 Հարիւրապետը
 գտաւ հոն աղեքսանդրիական նաւ մը՝ որ
 կ'երթար Իտալիա, ու մեզ մտցուց անոր մէջ:
 7 Շատ օրեր դանդաղօրէն նաւարկելէ ետք՝
 հազիւ հասանք Կնիդոսի դիմաց. քանի հովը չէր
 թոյլատրեր, Կրետէի վարի կողմէն՝ Սաղմոնայի
 դիմացէն նաւարկեցինք, 8 եւ դժուարութեամբ
 անկէ անցնելով՝ եկանք տեղ մը, որ կը կոչուէր
 Գեղեցիկ նաւահանգիստ. անոր մօտ Էր Ղասեա
 քաղաքը: 9 Երբ բաւական ժամանակ անցաւ, ու
 նաւարկութիւնը արդէն վտանգաւոր էր՝ քանի
 որ ծովին ատենն ալ արդէն անցած էր, Պօղոս
 յորդորեց զանոնք՝ 10 ըսելով. «Մարդիկ, ես կը
 նշմարեմ թէ այս նաւարկութիւնը պիտի ըլլայ
 վնասով ու կորուստով, ոչ միայն բեռին եւ նաւուն՝
 հապա մեր անձերուն ալ»: 11 Բայց հարիւրապետը
 կ'անսար աւելի նաւավարին ու նաւատիրոջ՝
 քան Պօղոսի խօսքերուն: 12 Եւ քանի որ այդ

նաւահանգիստը անյարմար էր ձմերելու, շատեր
 կը թելադրէին մեկնիլ անկէ, որպէսզի ջանային
 հասնիլ Փիւնիկէ, որ Կրետէի մէկ նաւահանգիստն
 է ու կը նայի դէպի հարաւ-արեւմուտք եւ հիւսիս-
 արեւմուտք, ու հոն ձմերել: **13** Երբ հարաւային
 հովը մեղմութեամբ փչեց, կարծելով թէ հասած են
 իրենց առաջադրութեան՝ թուցուցին խարիսխը
 ու նաւարկեցին Կրետէի քովէն: **14** Բայց քիչ ետք՝
 անոր դէմ ելաւ մրրկալից հով մը, որ կը կոչուէր
 Եւրակիկլոն: **15** Երբ նաւը յափշտակուեցաւ եւ
 չկրցաւ դիմադրել հովին, թողուցինք որ քշուի:
16 Սուրալով Կղօղա կոչուող փոքր կղզիի մը
 վարի կողմէն՝ հազիւ կրցանք բռնել մակոյկը:
17 Երբ վերցուցին զայն, օգնութեան միջոցներ
 գործածելով՝ տակէն կապեցին նաւը: Վախնալով
 որ իյնան յորձանուտը՝ իջեցուցին առագաստը,
 եւ այդպէս կը քշուէին: **18** Քանի սաստիկ մրրիկի
 մէջ էինք, յաջորդ օրը դուրս նետեցին բեռները:
19 Իսկ երրորդ օրը՝ մենք մեր ձեռքերով դուրս
 նետեցինք նաւուն գործիքները: **20** Երբ շատ օրեր՝
 ոչ արեւ, ոչ ալ աստղեր երեւցան, ու սաստիկ
 մրրիկ կար մեզի դէմ, ալ փրկուելու ամէն յոյս
 կտրուեցաւ մեզմէ: **21** Քանի որ շատ օրերէ ի
 վեր անօթի էին, Պօղոս՝ կայնելով անոնց մէջ՝
 ըսաւ. «Մարդիկ, պետք էր որ մտիկ ընէիք ինձի
 ու չնաւարկէիք Կրետէէն, եւ չկրէիք այս վնասն
 ու կորուստը: **22** Իսկ հիմա կը յորդորեմ ձեզ որ
 ոգեւորուիք, քանի որ ձեզմէ ոչ մէկուն անձը պիտի
 կորսուի, բայց միայն նաւը: **23** Արդարեւ այս գիշեր

քովս կայնեցաւ հրեշտակը այն Աստուծոյն, որուն
 կը պատկանիմ եւ որ կը պաշտեմ, **24** ու ըսաւ.
 “Մի վախնար, Պօղոս. դուն պէտք է որ կայսրին
 ներկայանաս. եւ ահա Աստուած շնորհեց քեզի
 բոլոր անոնք՝ որ կը նաւարկեն քեզի հետ”: **25**
 Ուստի, մարդիկ, ոգեւորուեցէք, որովհետեւ ես կը
 հաւատամ Աստուծոյ. պիտի ըլլայ այնպէս՝ ինչպէս
 ըսուեցաւ ինծի: **26** Սակայն պէտք է որ նաւը կղզիի
 մը առջեւ խրի”»: **27** Երբ տասնչորրորդ գիշերն
 էր՝ որ կը տարուբերուէինք Ադրիական ծովուն
 մէջ, կէս գիշերին նաւաստիները ենթադրեցին թէ
 մօտեցած են ցամաքի մը: **28** Ձգելով խորաչափը՝
 գտան քսան գրկաչափ. քիչ մը յառաջ երթալով՝
 դարձեալ ձգեցին, ու գտան տասնհինգ գրկաչափ:
29 Վախնալով որ գուցէ զարնուինք խարակներու”,
 ետեւի կողմէն ձգեցին չորս խարիսիս, եւ կ’ընդային
 որ առտու ըլլայ: **30** Իսկ նաւաստիները կը
 ջանային փախչիլ նաւէն, ու ծովը իջեցուցին
 մակոյկը՝ պատրուակելով թէ առջեւի կողմէն ալ
 պիտի ձգեն խարիսիսներ: **31** Բայց Պօղոս ըսաւ
 հարիւրապետին ու զինուորներուն. «Եթէ ասոնք
 չմնան նաւուն մէջ՝ դուք չէք կրնար փրկուիլ»:
32 Այն ատեն զինուորները կտրեցին մակոյկին
 շուանները, եւ թողուցին որ դուրս իյնայ: **33** Մինչ
 առտուն կը մօտենար, Պօղոս կ’աղաչէր բոլորին
 որ կերակուր ուտեն՝ ըսելով. «Այսօր տասնչորս օր
 է՝ որ դուք սպասելով անօթի մնացած էք, ու ոչինչ
 կերած էք: **34** Ուստի կ’աղաչեմ ձեզի՝ որ կերակուր
 ուտէք, որովհետեւ ասիկա ալ ձեր փրկութեան

համար է. քանի որ ձեզմե՛րչ մեկուն գլուխէն մա՛կ մը
 պիտի իյնայ»: **35** Այսպէս խօսելէ ետք՝ հաց առաւ,
 բոլորին առջեւ շնորհակալ եղաւ Աստուծո՛մէ, ու
 կտրելով սկսաւ ուտել: **36** Բոլորն ալ ոգեւորուեցան,
 եւ իրենք ալ կերակուր կերան: **37** Նաւուն մէջ՝
 բոլորս երկու հարիւր եօթանասունվեց անձ էինք:
38 Երբ կշտացան կերակուրով, թեթեւցուցին նաւը՝
 ծովը թափելով ցորենը: **39** Երբ առտու եղաւ՝ չէին
 ճանչնար ցամաքը. բայց նշմարելով ծոց մը՝ որ
 ծովեզերք ունէր, ծրագրեցին նաւը խրել անոր
 մէջ՝ եթէ կարելի ըլլար: **40** Ուստի ծովը թողուցին
 խարխախները՝ կտրելով պարանները, թուցուցին
 դեկերուն պարանները, եւ հովին բանալով
 առագաստը՝ ուղղուեցան դէպի այդ ծովեզերքը:
41 Չարնուելով աւազակոյտի մը՝, խրեցին նաւը.
 առջեւի կողմը մխրճուելով՝ մնաց անշարժ,
 իսկ ետեւի կողմը կը քակուէր ալիքներուն
 սաստկութենէն: **42** Չինուորներն ալ ծրագրեցին
 սպաննել բանտարկեալները, որպէսզի անոնցմէ ո՛չ
 մէկը լողալով փախչի: **43** Բայց հարիւրապետը, որ
 կը փափաքէր փրկել Պօղոսը, արգելք եղաւ անոնց
 ծրագիրին: Յրամայեց որ լողալ գիտցողները նախ
 ծով նետուին ու ցամաք ելլեն. **44** իսկ միւսները
 հետեւին՝ ոմանք տախտակներով, եւ ոմանք՝
 նաւուն ուրիշ բաներով: Այսպէս՝ բոլորը ազատելով
 ցամաք հասան:

28 Երբ փրկուեցան, գիտցան թէ այդ կղզիին
 անունը Մելիտէ էր: Բնիկ ժողովուրդը արտասովոր
 մարդասիրութիւն ցոյց տուաւ մեզի. 2 որովհետեւ

կրակ վառեցին եւ մեզ բոլորս ալ ընդունեցին՝
 եկած անձրեւին ու ցուրտին պատճառով: **3** Երբ
 Պօղոս առատ խռիւ ժողվեց եւ դրաւ կրակին
 վրայ, ջերմութենէն իժ մը ելաւ ու կառչեցաւ
 անոր ձեռքին: **4** Երբ բնիկները տեսան այդ
 անասունը՝ կախուած անոր ձեռքէն, ըսին իրարու.
 «Անշուշտ ասիկա մարդասպան մըն է. թէպէտ
 փրկուեցաւ ծովէն, արդարութիւնը չթոյլատրեց
 որ ան ապրի»: **5** Իսկ ինք թօթուեց անասունը
 կրակին մէջ, եւ ոչ մէկ վնաս կրեց: **6** Ասոնք ալ
 կը սպասէին որ ան ուռի, կամ յանկարծ մեռած
 իյնայ. բայց երբ շատ սպասեցին ու տեսան թէ ոչ
 մէկ անտեղի բան եղաւ անոր, իրենց կարծիքը
 փոխելով ըսին թէ «աստուած մըն է»: **7** Այդ տեղին
 շրջակայքը կը գտնուէին ազարակները կղզիին
 գլխաւոր մարդուն, որուն անունը Պոպղիոս
 էր: Ան ընդունեց մեզ, եւ բարեսրտութեամբ
 հիւրընկալեց մեզ երեք օր: **8** Պոպղիոսի հայրը
 կը պառկէր՝ տենդով ու թանչքով հիւանդացած:
 Պօղոս մտաւ անոր քով, եւ աղօթելով՝ ձեռքերը
 դրաւ անոր վրայ ու բժշկեց զայն: **9** Երբ ասիկա
 պատահեցաւ, ուրիշ հիւանդներ ալ՝ որ այդ
 կղզիին մէջ կը գտնուէին՝ եկան եւ բուժուեցան:
10 Ասոնք ալ մեծապէս պատուեցին մեզ, ու
 երբ կը մեկնէինք՝ հայթայթեցին մեզի պէտք
 եղած բաները: **11** Երեք ամիս ետք՝ մեկնեցանք
 աղեքսանդրիական նաւով մը, որ ձմերած
 էր այդ կղզին եւ ունէր Դիոսկուրացիներուն
 զինանշանը: **12** Սիրակուսա իջնելով՝ երեք օր

մնացինք հոն. 13 անկէ ալ շրջագայելով՝ հասանք
 3ռեզիոն: Մէկ օր ետք, երբ հարաւային հովը փչեց,
 երկրորդ օրը հասանք Պատեռոդոս: 14 3ոն գտանք
 եղբայրներ, որոնք աղաչեցին որ եօթը օր մնանք
 իրենց քով. եւ այսպէս գացինք 3ռոմ: 15 Երբ
 եղբայրները լսեցին մեր մասին, անկէ եկան մինչեւ
 Ապփիոսի 3րապարակը ու Երեք Պանդոկները՝
 դիմաւորելու մեզ: Պօղոս ալ տեսնելով զանոնք՝
 շնորհակալ եղաւ Աստուծոյն եւ քաջալերուեցաւ:
 16 Երբ մտանք 3ռոմ, հարիւրապետը յանձնեց
 բանտարկեալները զօրագլուխին. իսկ Պօղոսի
 արտօնուեցաւ որ առանձին բնակի՝ զինք
 պահող զինուորի մը հետ: 17 Երեք օր ետք
 ան հրաւիրեց 3րեաներուն գլխաւորները, ու
 երբ համախմբուեցան՝ ըսաւ անոնց. «Մարդիկ
 եղբայրներ, թեպէտ ես ժողովուրդին կամ
 հայրենական սովորութիւններուն դէմ ոչինչ
 ըրեր էի, Երուսաղէմի մէջ 3ռոմայեցիներուն
 ձեռքը մատնուեցայ իբր բանտարկեալ: 18
 Երբ անոնք հարցաքննեցին զիս՝ ուզեցին
 արձակել, որովհետեւ իմ վրաս մահուան
 արժանի ոչ մէկ պատճառ կար: 19 Բայց երբ
 3րեաները հակաճառեցին, հարկադրուեցայ
 բողոքել կայսրին, սակայն առանց որեւէ
 ամբաստանութիւն ունենալու ազգիս դէմ: 20
 Ուրեմն ասոր համար կանչեցի ձեզ՝ որպէսզի
 տեսնեմ ձեզ եւ խօսիմ ձեզի. որովհետեւ Իսրայէլի
 յոյսին համար կը կրեմ այս շղթան»: 21 Անոնք
 ալ ըսին իրեն. «Մենք քու մասիդ 3րեաստանէն

ոչ գրութիւն ընդունեցինք, ոչ ալ եղբայրներէն
 մէկը հոս գալով՝ չարութիւն մը պատմեց կամ
 խօսեցաւ քու մասիդ: **22** Բայց արժանավայել է
 լսել քեզմէ թէ դուն ինչ կը մտածես. որովհետեւ
 մենք տեղեկացած ենք այդ աղանդին մասին՝
 թէ ամենուրեք ատոր դէմ կը խօսին»: **23** Երբ
 որոշեցին օր մը անոր հետ, շատեր գացին
 անոր քով՝ իր հիւրանոցը: Անոնց կը բացատրէր
 Աստուծոյ թագաւորութիւնը եւ կը վկայէր անոր
 մասին. առտուընէ մինչեւ իրիկուն կը համոզեր
 զանոնք՝ փաստարկելով Յիսուսի մասին թէ
 Մովսէսի Օրէնքէն, թէ ալ Մարգարէներէն:
24 Ոմանք անսացին ըսածներուն, ոմանք ալ
 չհաւատացին: **25** Իրարու հետ չհամաձայնած՝
 բաժնուեցան, երբ Պօղոս խօսք մըն ալ ըսաւ.
 «Սուրբ Զոզին ճիշդ խօսեցաւ մեր հայրերուն՝
 Եսայի մարգարէին միջոցով, **26** ըսելով. “Գնա՛
 այս ժողովուրդին եւ ըսէ՛. «Շատ պիտի լսէք՝ բայց
 պիտի չհասկնաք, շատ պիտի տեսնէք՝ բայց պիտի
 չըմբռնէք: **27** Որովհետեւ այս ժողովուրդին սիրտը
 թանձրացաւ. իրենց ականջներով ծանր լսեցին եւ
 իրենց աչքերը գոցեցին, որպէսզի իրենց աչքերով
 չտեսնեն, ականջներով չլսեն, սիրտով չհասկնան
 եւ դարձի չգան, ու ես չքշկեմ զանոնք»”: **28**
 Ուրեմն զիտցէք թէ Աստուծոյ փրկութիւնը
 դրկուեցաւ հեթանոսներուն, եւ անոնք մտիկ
 պիտի ընեն»: **29** Ու երբ ըսաւ ասիկա, Զրեաները
 մեկնեցան՝ սաստիկ վիճաբանելով իրարու հետ:
30 Պօղոս լման երկու տարի բնակեցաւ իր վարձած

տունը, 31 ու կ'ընդունէր բոլոր իրեն եկողները՝
քարոզելով Աստուծոյ թագաւորութիւնը եւ
սորվեցնելով Տէր Յիսուս Քրիստոսի մասին՝
ամբողջ համարձակութեամբ, առանց արգելքի:

ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

1 Պօղոս, ծառայ Յիսուս Բրիստոսի, կանչուած՝ առաքեալ ըլլալու, նշանակուած՝ քարոզելու Աստուծոյ աւետարանը, **2** (որ նախապէս խոստացած էր իր մարգարէներուն միջոցով՝ Սուրբ գիրքերուն մէջ,) **3** որ իր Որդիին՝ մեր Տէրոջ՝ Յիսուս Բրիստոսի մասին է - ան մարմնի համեմատ՝ եղաւ Դաւիթի զարմէն, **4** ու սրբութեան Հոգիին համեմատ՝ զօրութեամբ սահմանուեցաւ իբր Աստուծոյ Որդի՝ մեռելներէն յարութիւն առնելով -, **5** որուն միջոցով շնորհք եւ առաքելութիւն ստացանք՝ որպէսզի բոլոր ազգերը առաջնորդենք իր անունին հաւատքի հնազանդութեան **6** (անոնց մէջ դո՛ւք ալ կանչուած էք Յիսուս Բրիստոսէ). **7** ձեր բոլորին՝ որ Հռոմի մէջ էք, Աստուծոյ սիրելիներուն ու սուրբ ըլլալու կանչուածներուն, շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Բրիստոսէ: **8** Նախ շնորհակալ եմ ձեր բոլորին համար իմ Աստուծմէս՝ Յիսուս Բրիստոսի միջոցով, որ ձեր հաւատքը կը պատմուի ամբողջ աշխարհի մէջ: **9** Քանի որ վկայ է ինծի Աստուած, որ ես կը պաշտեմ հոգիովս՝ անոր Որդիին աւետարանը քարոզելով, **10** թէ ինչպէս անդադար կը յիշեմ ձեզ ամէն ատեն՝ աղօթքներուս մէջ, աղերսելով որ վերջապէս անգամ մը յաջողիմ գալ ձեզի Աստուծոյ կամբով: **11** Որովհետեւ կը տենչամ տեսնել ձեզ՝ որ փոխանցեմ ձեզի հոգեւոր շնորհ մը, որպէսզի ամրանաք. **12** այսինքն ես ալ մխիթարուիմ

ձեզի հետ՝ ձեր եւ իմ փոխադարձ հաւատքին միջոցով: **13** Սակայն չեմ ուզեր որ անգիտանաք, եղբայրներ, որ յաճախ առաջադրեցի զալ ձեզի, (եւ մինչեւ հիմա արգիլուեցայ,) որպէսզի ձեր մէջ ալ պտուղ մը ունենամ, ինչպէս միւս հեթանոսներուն մէջ: **14** Ես պարտական եմ թէ Յոյներուն եւ թէ օտարներուն, թէ իմաստուններուն եւ թէ անմիտներուն: **15** Ուստի, ինչ կը վերաբերի ինծի, յօժար եմ աւետարանելու նաեւ ձեզի՝ որ Հռոմի մէջ էք: **16** Արդարեւ ես ամօթ չեմ սեպեր աւետարանը, քանի որ ան Աստուծոյ զօրութիւնն է՝ ամեն հաւատացեալի փրկութեան համար, նախ Հրեային եւ ապա Յոյին. **17** որովհետեւ անով Աստուծոյ արդարութիւնը՝ որ հաւատքով է՝ կը յայտնուի հաւատքի համար, ինչպէս գրուած է. «Արդարը պիտի ապրի հաւատքով»: **18** Արդարեւ Աստուծոյ բարկութիւնը երկինքէն կը յայտնուի մարդոց ամբողջ ամբարշտութեան եւ անիրաւութեան վրայ, քանի անոնք անիրաւութեամբ գերի բռնած են ճշմարտութիւնը: **19** Որովհետեւ ինչ որ կարելի է գիտնալ Աստուծոյ մասին՝ բացայայտ է իրենց մէջ, քանի Աստուած բացայայտեց զայն անոնց: **20** Արդարեւ անոր անտեսանելի բաները, այսինքն՝ իր յաւերժական զօրութիւնը եւ աստուածութիւնը, կը տեսնուին աշխարհի արարչութենէն ի վեր ու կը հասկցուին անոր ստեղծածներով, որպէսզի անարդարանալի ըլլան: (aídios g126) **21** Թեպէտ իրենք կը ճանչնային

Աստուած, Աստուծոյ պէս չփառաւորեցին
 կամ շնորհակալ չեղան. հապա ունայնացան
 իրենց մտածումներուն մէջ, եւ իրենց սիրտը
 անխելքութեամբ՝ խաւարեցաւ: 22 Հաւաստելով
 թէ իրենք իմաստուն են՝ յիմարացան, 23 ու
 փոխեցին անեղծ Աստուծոյ փառքը՝ նմանցնելով
 եղծանելի մարդու, թռչուններու, չորքոտանիներու
 եւ սողուններու պատկերին: 24 Հետեւաբար
 Աստուած ալ մատնեց զանոնք անմաքրութեան՝
 իրենց սիրտի ցանկութիւններուն համաձայն,
 որպէսզի իրենց մարմինները անպատուեն իրենք
 իրենց մէջ. 25 քանի որ Աստուծոյ ճշմարտութիւնը
 փոխեցին սուտի հետ, եւ ակնածեցան արարածէն
 ու պաշտեցին զայն՝ քան Արարիչը, որ օրհնեալ
 է յաւիտեան: Ամէն: (aiōn g165) 26 Այս պատճառով
 Աստուած մատնեց զանոնք անպատիւ կիրքերու.
 քանի որ իրենց էգերն անգամ բնական
 յարաբերութիւնը փոխեցին բնութեան դէմ եղող
 յարաբերութեան: 27 Նմանապէս արուներն
 ալ՝ թողուցած էգին բնական յարաբերութիւնը՝
 իրենց տռփանքով վառեցան իրարու հետ.
 արուները արուներու հետ անվայելչութիւն կը
 գործադրէին, եւ իրենց մոլորութեան արժանի
 հատուցումը կը ստանային իրենց վրայ: 28
 Քանի չգնահատեցին պահել Աստուած իրենց
 գիտակցութեան մէջ, Աստուած ալ մատնեց
 զանոնք խոտելի միտքի մը՝ ընելու անպատշաճ
 բաներ: 29 Լեցուած ամէն տեսակ անիրաւութեամբ,
 պոռնկութեամբ, չարութեամբ, ազահութեամբ

եւ չարամտութեամբ, լի նախանձով, մարդասպանութեամբ, հակամարտութեամբ, նենգութեամբ ու չարասրտութեամբ, եւ ըլլալով բանսարկու, 30 բամբասող, Աստուած ատող, նախատող, ամբարտաւան, պոռոտախօս, չար բաներ հնարող, ծնողներու անհնազանդ, 31 անխելք, ուխտադրուծ, անգութ, անհաշտ եւ անողորմ, 32 անոնք՝ գիտնալով հանդերձ Աստուծոյ դատավճիռը, թէ այսպիսի բաներ ընողները արժանի են մահուան, ոչ միայն կ'ընեն այդ բաները, այլ նաեւ բարեացակամ կ'ըլլան զանոնք ընողներուն հանդէպ:

2 Ուստի, որվ մարդ, որվ ալ ըլլաս, դուն որ կը դատես՝ չունիս արդարացում. քանի որ ինչ բանով որ կը դատես ուրիշը, անով կը դատապարտես դուն քեզ. որովհետեւ դուն որ կը դատես՝ կ'ընես նոյն բաները: 2 Բայց գիտենք թէ Աստուծոյ դատաստանը կը կիրարկուի ճշմարտութեամբ անոնց հանդէպ՝ որ կ'ընեն այսպիսի բաներ: 3 Ուստի, որվ մարդ, դուն որ կը դատես այսպիսի բաներ ընողները, բայց կ'ընես նոյն բաները, կը կարծես թէ զերծ պիտի մնաս Աստուծոյ դատաստանէն: 4 Կամ թէ կ'արհամարհես անոր քաղցրութեան, հանդուրժողութեան ու համբերատարութեան ճոխութիւնը, անգիտանալով թէ Աստուծոյ քաղցրութիւնը կ'առաջնորդէ քեզ ապաշխարութեան: 5 Բայց դուն՝ խստութեամբդ եւ անզեղջ սիրտովդ՝ բարկութիւն կը կուտակես քու վրադ բարկութեան

օրուան համար, երբ Աստուծոյ արդար
 դատաստանը յայտնուի: 6 Ան պիտի հատուցանէ
 իւրաքանչիւրին՝ իր գործերուն փոխարէնը.- 7
 յաւիտենական կեանք անոնց՝ որ համբերութեամբ
 յարատելելով բարի գործերու մէջ՝ կը փնտռեն
 փառք, պատիւ եւ անմահութիւն. (aiōnios g166) 8 իսկ
 սրդողում ու բարկութիւն անոնց՝ որ հակառակող
 են, չեն անսար ճշմարտութեան բայց կ'անսան
 անիրաւութեան. 9 տառապանք եւ տագնապ
 ամէն մարդու անձին վրայ՝ որ չարիք կը գործէ, 10
 նախ Զրեային, ապա՝ Յոյնին. իսկ փառք, պատիւ
 ու խաղաղութիւն ամէն մէկուն՝ որ բարիք կը
 գործէ, նախ Զրեային, ապա՝ Յոյնին. 11 որովհետեւ
 Աստուծոյ քով աշառութիւն չկայ: 12 Բոլոր անոնք
 որ մեղանչեցին առանց Օրէնքի՝ պիտի կորսուին
 առանց Օրէնքի, եւ անոնք որ մեղանչեցին Օրէնքի
 տակ՝ պիտի դատուին Օրէնքով, 13 (որովհետեւ
 Աստուծոյ առջեւ ոչ թէ Օրէնքը լսողները
 արդար են, հապա Օրէնքը գործադրողները
 պիտի արդարանան. 14 քանի որ հեթանոսները՝
 որոնք Օրէնք չունին, երբ բնութեամբ կը
 գործադրեն Օրէնքին պարունակած բաները,
 Օրէնք չունենալով՝ բուն իրենք կ'ըլլան իրենց
 Օրէնքը. 15 անոնք ցոյց կու տան թէ Օրէնքին
 գործը իրենց սիրտին մէջ գրուած է, իրենց
 խղճմտանքին միաժամանակ վկայութեամբ, ու
 իրենց մտածումներուն զիրար ամբաստանելով
 եւ կամ ջատագովելով,) 16 այն օրը՝ երբ Աստուած
 պիտի դատէ մարդոց գաղտնիքները Յիսուս

Քրիստոսի միջոցով, իմ քարոզած աւետարանիս համաձայն: **17** Ահա՛ դուն Յրեայ կը կոչուիս, կոթնած ես Օրէնքին, եւ կը պարծենաս Աստուծով: **18** գիտես անոր կամքը, կը գատորոշես տարբեր բաները՝ խրատուած ըլլալով Օրէնքէն, **19** ու համոզուած ես՝ թէ առաջնորդ ես կոյրերուն, լոյս՝ խաւարի մէջ եղողներուն, **20** կրթիչ՝ անմիտներուն եւ վարժապետ՝ երախաներուն, Օրէնքին մէջ ունենալով գիտութեան ու ճշմարտութեան արտայայտութիւնը: **21** Ուրեմն դուն՝ որ ընկերիդ կը սորվեցնես՝ դուն քեզի՛ չես սորվեցներ: Կը քարոզես չգողնալ, բայց դուն կը գողնաս: **22** Կ'ըսես՝ շնութիւն մի՛ ըներ, սակայն դուն շնութիւն կ'ընես: Կը զգուիս կուռքերէն, բայց դուն տաճար կը կողոպտես: **23** Օրէնքով կը պարծենաս, եւ դուն Օրէնքը բեկանելով՝ Աստուած կ'անպատուես: **24** Որովհետեւ ձեր պատճառով Աստուծոյ անունը կը հայիոյուի հեթանոսներուն մէջ, ինչպէս գրուած է: **25** Արդարեւ թլփատութիւնը շահ կ'ունենայ՝ եթէ կիրարկես Օրէնքը. իսկ եթէ յանցաւոր ես Օրէնքին դէմ, քու թլփատութիւնդ կ'ըլլայ անթլփատութիւն: **26** Ուրեմն եթէ անթլփատը պահէ Օրէնքին արդարութիւնը, միթէ թլփատութիւն պիտի չսեպուի՞ անոր անթլփատութիւնը, **27** եւ բնիկ անթլփատը՝ Օրէնքը գործադրելով՝ պիտի չդատապարտէ՞ քեզ, որ գիրով ու թլփատութեամբ զանց կ'ընես Օրէնքը: **28** Որովհետեւ Յրեայ չէ ան՝ որ երեւոյթով է, եւ թլփատութիւն չէ ան՝ որ երեւոյթով է, մարմինով: **29** Հապա Յրեայ է ան՝ որ

ծածուկ է, ու իսկական թլփատութիւնը՝ սիրտինն է, հոգիով եւ ոչ թէ գիրով. ու անոր գովեստը ոչ թէ մարդոցմէ է, հապա՝ Աստուծմէ:

3 Ուրեմն ինչ առաւելութիւն ունի Յրեան, կամ ինչ շահ կայ թլփատութենէն. **2** շատ՝ ամէն կերպով: Նախ այն՝ որ Աստուծոյ պատգամները վստահուեցան անոնց: **3** Ուրեմն ինչ. եթէ անոնցմէ ոմանք հաւատարիմ չեղան, միթէ անոնց անհաւատարմութիւնը ոչնչացո՞ւց Աստուծոյ հաւատարմութիւնը. ամենեւին: **4** Հապա Աստուած ճշմարտախօս պիտի ճանչցուի՞, եւ բոլոր մարդիկ՝ ստախօս. ինչպէս գրուած է. «Հետեւաբար դուն արդար պիտի ըլլաս խօսքերուդ մէջ, եւ յաղթես՝ երբ դատուիս»: **5** Ուրեմն եթէ մեր անիրաւութիւնը կ'ապացուցանէ Աստուծոյ արդարութիւնը, ինչ ըսենք. միթէ անիրաւ է Աստուած, որ բարկութիւն կը ցուցաբերէ **6** (մարդկօրէն կ'ըսենք). ամենեւին: Այլապէս՝ Աստուած ինչպէս պիտի դատէ աշխարհը: **7** Որովհետեւ եթէ Աստուծոյ ճշմարտութիւնը կը ճոխանայ իմ ստութեամբս՝ իր փառքին համար, ալ ես ինչո՞ւ կը դատուիմ իբր մեղաւոր: **8** Եւ ինչո՞ւ պատշաճ չէ ըսել. «Չարիք գործենք՝ որ բարիք յառաջ գայ», ինչպէս ոմանք մեզի հայիոյելով կը գրպարտեն՝ թէ մենք այդպէս կ'ըսենք: Ատոնց դատապարտութիւնը արդարացի է: **9** Ուրեմն ալ ինչ ըսենք, գերազմնց ենք հեթանոսներէն: Ո՛չ մէկ կերպով. որովհետեւ նախապէս մեղադրեցինք Յրեաները եւ Յոյները,

թէ բոլորը մեղքի տակ են, 10 ինչպէս գրուած
 է. «Ո՛չ մէկ արդար կայ, ո՛չ իսկ մէկ հատ: 11 Ո՛չ
 մէկը կայ որ հասկնայ, ո՛չ մէկը կայ որ փնտռէ
 Աստուած: 12 Բոլորը խոտորեցան, միասին
 անպետ դարձան. ո՛չ մէկ բարիք ընող կայ, ո՛չ իսկ
 մէկ հատ»: 13 «Անոնց կոկորդը բաց գերեզման է,
 իրենց լեզուով նենգաւոր եղան»: «Իժերու թոյն
 կայ անոնց շրթունքներուն տակ»: 14 «Անոնց
 բերանը լեցուն է անէծքով ու դառնութեամբ»: 15
 «Անոնց ոտքերը կ'աճապարեն արիւն թափելու.
 16 կործանում եւ թշուառութիւն կայ անոնց
 ճամբաներուն մէջ: 17 Չճանչցան խաղաղութեան
 ճամբան»: 18 «Աստուծոյ վախը չկայ անոնց
 աչքերուն առջեւ»: 19 Բայց գիտենք թէ ինչ որ
 կ'ըսէ Օրէնքը, կ'ըսէ անոնց՝ որ Օրէնքին տակ
 են, որպէսզի ամեն բերան գոցուի եւ ամբողջ
 աշխարհը դատապարտուի Աստուծոյ առջեւ: 20
 Ուստի ո՛չ մէկ մարմին պիտի արդարանայ անոր
 առջեւ Օրէնքին գործերով, քանի որ Օրէնքին
 միջոցով կ'ըլլայ մեղքի գիտակցութիւնը: 21 Բայց
 հիմա՝ առանց Օրէնքին՝ Աստուծոյ արդարութիւնը
 բացայայտ եղած է, վկայուած ըլլալով Օրէնքէն
 ու Մարգարէներէն. 22 այսինքն Աստուծոյ
 արդարութիւնը՝ որ Յիսուս Քրիստոսի վրայ եղած
 հաւատքով է բոլոր հաւատացողներուն համար,
 քանի որ խտրութիւն չկայ: 23 Արդարեւ բոլորը
 մեղանչեցին, եւ գրկուած են Աստուծոյ փառքէն.
 24 Բայց ձրի կ'արդարանան անոր շնորհքով,
 Քրիստոս Յիսուսով եղած ազատագրութեամբ: 25

Աստուած նախապէս սահմանեց զայն՝ քաւութիւն ըլլալու անոր արիւնին հաւատացողներուն, որպէսզի ցոյց տայ իր արդարութիւնը՝ ներելով նախապէս - Աստուծոյ հանդուրժողութեան ժամանակ - գործուած մեղքերը: **26** Այսինքն՝ իր արդարութիւնը այս ատեն ցոյց տալու համար, որպէսզի ինք արդար ըլլայ եւ արդարացնէ Յիսուսի հաւատացողը: **27** Ուրեմն ղրկ մնաց պարծանքը. բացառուեցաւ: Ո՞ր Օրէնքէն, գործերո՞ւ Օրէնքէն: Ո՛չ, հապա հաւատքի Օրէնքէն. **28** որովհետեւ մենք կը հետեւցնենք թէ մարդ կ'արդարանայ հաւատքով՝ առանց Օրէնքին գործերուն: **29** Միթէ Աստուած միայն Հրեաներո՞ւնն է ու հեթանոսներունը չէ. այո՛, նաեւ հեթանոսներունը: **30** Քանի որ մէկ Աստուած կայ, որ թլփատութիւնը կ'արդարացնէ հաւատքով, նաեւ անթլփատութիւնը՝ նոյն հաւատքով: **31** Ուստի մենք կ'ոչնչացնենք Օրէնքը հաւատքով: Ամենեւին. նոյնիսկ կը հաստատենք Օրէնքը:

4 Ուրեմն ինչ պիտի ըսենք թէ գտաւ Աբրահամ՝ մարմինի համեմատ մեր նախահայրը. **2** որովհետեւ եթէ Աբրահամ արդարացած ըլլար գործերով՝ պիտի պարծենար անոնցմով, բայց ոչ Աստուծոյ առջեւ: **3** Արդարեւ ինչ կ'ըսէ Գիորքը. «Աբրահամ հաւատաց Աստուծոյ, եւ ատիկա արդարութիւն սեպուեցաւ իրեն»: **4** Բայց ան որ կը գործէ, անոր վարձատրութիւնը շնորհքէ եղած չի սեպուիր, հապա՝ պարտքէ: **5** Իսկ ան որ չի գործեր, բայց կը հաւատայ անոր՝

որ կ'արդարացնէ ամբարիշտը, իր հաւատքը արդարութիւն կը սեպուի իրեն: 6 Ինչպէս Դաւիթ ալ կը խօսի երանութեան մասին այն մարդուն, որուն Աստուած արդարութիւն կը սեպէ՝ առանց գործերու: 7 «Երանի՛ անոնց, - կ'ըսէ, - որոնց անօրէնութիւնները ներուեցան, եւ որոնց մեղքերը ծածկուեցան: 8 Երանի՛ այն մարդուն, որուն մեղք չի սեպեր Տէրը»: 9 Ուրեմն այս երանութիւնը միայն թլփատուածներուն համար է, թէ անթլփատներուն համար ալ. քանի որ կ'ըսենք թէ “հաւատքը արդարութիւն սեպուեցաւ Աբրահամի”: 10 Ուրեմն ինչպէս սեպուեցաւ. թլփատութեամբ մէջ եղած ատենը, թէ անթլփատութեան մէջ: Ո՛չ թէ թլփատութեան մէջ, հապա՛ անթլփատութեան: 11 Յետոյ թլփատութեան նշանը ստացաւ՝ իբր կնիք անթլփատութեան ատենը ունեցած հաւատքին արդարութեան, որպէսզի ինք ըլլայ հայրը այն բոլոր հաւատացողներուն՝ որոնք անթլփատ են (անոնց ալ արդարութիւն սեպուելու համար), 12 նաեւ հայրը թլփատութեան՝ անոնց համար, որոնք ո՛չ միայն թլփատուած են, այլ նաեւ կ'ընթանան մեր հօր Աբրահամի անթլփատութեան ատեն ունեցած հաւատքին հետքերով: 13 Արդարեւ Աբրահամի եւ անոր զարմին՝ աշխարհը ժառանգելու համար տրուած խոստումը ո՛չ թէ Օրէնքով եղաւ, հապա հաւատքին արդարութեամբ: 14 Քանի որ եթէ Օրէնքէն եղողները ժառանգորդ ըլլային, հաւատքը պիտի փճանար, եւ խոստումը

ոչնչանար: **15** Որովհետեւ Օրենքը բարկութիւն
 կը գործադրէ. քանի որ ուր Օրենք չկայ,
 օրինազանցութիւն ալ չկայ: **16** Ուստի ժառանգորդ
 ըլլալը հաւատքէն է, որ շնորհքով եղած ըլլայ,
 որպէսզի խոստումը մնայուն ըլլայ ամբողջ
 զարմին. ոչ միայն անոր՝ որ Օրենքէն է, այլ
 նաեւ անոր՝ որ Աբրահամի հաւատքէն է: Ան
 մեր բոլորին հայրն է **17** (ինչպէս գրուած է. “Քեզ
 շատ ազգերու հայր ըրի”) Աստուծոյ առջեւ՝ որուն
 ինք հաւատաց, որ կեանք կու տայ մեռելներուն
 ու չեղած բաները կը կոչէ եղածներու պէս: **18**
 Չյուսացուած բանին՝ յոյսով հաւատաց, թէ ինք
 շատ ազգերու հայր պիտի ըլլայ (ինչպէս ըսուեցաւ
 ալ թէ “քու զարմդ այսպէս պիտի ըլլայ”). **19** եւ
 հաւատքի մէջ չտկարանալով՝ ուշադիր չեղաւ իր
 մարմինին, որ արդէն մեռածի պէս էր, (որովհետեւ
 ինք հարիւր տարեկանի չափ էր,) ոչ ալ Սառայի
 արգանդին մեռած ըլլալուն: **20** Անհաւատութեամբ
 չտատամսեցաւ Աստուծոյ խոստումին հանդէպ,
 հապա հաւատքով զօրացած՝ փառք տուաւ
 Աստուծոյ, **21** եւ լման համոզուեցաւ թէ ինչ որ
 ան խոստացաւ՝ կարող է նաեւ իրագործել: **22**
 Ուստի արդարութիւն սեպուեցաւ իրեն: **23** Բայց
 գրուեցաւ ոչ միայն անոր համար՝ թէ “սեպուեցաւ
 իրեն”, **24** այլ նաեւ մեզի համար, որոնց պիտի
 սեպուի՝ քանի որ կը հաւատանք անոր՝ որ
 մեռելներէն յարուցանեց Յիսուսը՝ մեր Տէրը, **25**
 որ մատնուեցաւ մեր յանցանքներուն համար ու
 յարութիւն առաւ մեզ արդարացնելու համար:

5 Ուրեմն մենք՝ հաւատքով արդարացած ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէրոջ՝ Յիսուս Բրիստոսի միջոցով: **2** Անով նաեւ արտօնութիւն ունեցանք հաւատքով մօտենալու այս շնորհքին՝ որուն մէջ կեցած ենք, եւ կը պարծենանք Աստուծոյ փառքին յոյսով: **3** Ո՛չ միայն այսքան, հապա կը պարծենանք տառապանքներու մէջ ալ, որովհետեւ գիտենք թէ տառապանքը կ'իրագործէ համբերութիւն, **4** համբերութիւնը՝ փորձառութիւն, ու փորձառութիւնը՝ յոյս: **5** Եւ յոյսը ամօթահար չ'ըներ, որովհետեւ Աստուծոյ սէրը մեր սիրտերուն մէջ սփռուած է Սուրբ Հոգիին միջոցով՝ որ տրուեցաւ մեզի: **6** Արդարեւ մինչ մենք տակաւին տկար էինք, յարմար ժամանակին՝ Բրիստոս մեռաւ ամբարիշտներուն համար: **7** հազիւ թէ արդարի մը համար մեկը ուզէ մեռնիլ, (թերեւս բարի մարդու մը համար մեկը յօժարի մեռնիլ,) **8** մինչդեռ Աստուած մեզի հանդէպ ունեցած իր սէրը ապացուցանեց այն իրողութեամբ, որ երբ տակաւին մեղաւոր էինք՝ **9** Բրիստոս մեռաւ մեզի համար. ուրեմն հիմա որ արդարացանք իր արիւնով, ճրչափ աւելի բարկութենէն պիտի փրկուինք իրմով: **10** Որովհետեւ եթէ մեր թշնամի եղած ատենը հաշտուեցանք Աստուծոյ հետ իր Որդիին մահով, ճրչափ աւելի մեր հաշտուած ատենը պիտի փրկուինք անոր կեանքով: **11** Եւ ո՛չ միայն ասիկա, այլ նաեւ կը պարծենանք Աստուծոմով՝ մեր Տէրոջ՝ Յիսուս Բրիստոսի

միջոցով, որով հիմա ստացանք հաշտութիւնը: 12 Ուստի ինչպէս մէկ մարդով մեղքը աշխարհ մտաւ, ու մեղքով՝ մահը, եւ այնպէս՝ մահը փոխանցուեցաւ բոլոր մարդոց, քանի որ բոլորն ալ մեղանչեցին. 13 (որովհետեւ մինչեւ Օրէնքին տրուիլը՝ աշխարհի մէջ մեղք կար, բայց մեղք չէր վերագրուեր՝ երբ Օրէնք չկար: 14 Սակայն մահը թագաւորեց Ադամէն մինչեւ Մովսէս, նոյնիսկ Ադամի օրինազանցութեան նման չմեղանչողներուն վրայ. ինք նախատիպն էր անոր՝ որ յետոյ պիտի գար: 15 Բայց շնորհը յանցանքին պէս չէ. որովհետեւ եթէ մէկին յանցանքով շատեր մեռան, ակնհայտաբար աւելի շատերուն վրայ առատացաւ Աստուծոյ շնորհքը, եւ պարգեւը՝ որ շնորհուեցաւ մէկ մարդու՝ Յիսուս Բրիստոսի միջոցով: 16 Եւ պարգեւը այնպէս չէ, ինչպէս մէկ մեղանչողին պատահածը. որովհետեւ դատաստանը մէկին մեղքով դատապարտութեան մատնեց, բայց շնորհը շատ յանցանքներէ արդարութեան առաջնորդեց: 17 Քանի որ եթէ մէկ մարդու յանցանքով՝ մահը թագաւորեց այդ մէկով, ինչպէս աւելի անոնք՝ որ կը ստանան շնորհքի ու արդարութեան պարգեւին առատութիւնը, կեանքի մէջ պիտի թագաւորեն միակ Յիսուս Բրիստոսի միջոցով:) 18 Ուրեմն, ինչպէս բոլոր մարդոց դատապարտութեան վճիռ տրուեցաւ մէկին յանցանքով, այնպէս ալ բոլոր մարդոց կեանք տուող արդարութիւն շնորհուեցաւ մէկին արդարութեամբ: 19

Որովհետեւ ինչպէս շատեր մեղաւոր եղան մէկ մարդու անհնազանդութեամբ, այնպէս շատեր արդար պիտի ըլլան մէկին հնազանդութեամբ: 20 Սակայն Օրէնքը ներս սպրդեցաւ՝ որպէսզի յանցանքը աւելնայ. բայց հոն՝ ուր մեղքը աւելցաւ, շնորհքը չափազանց առատացաւ: 21 Որպէսզի՝ ինչպէս մեղքը թագաւորեց մինչեւ մահ, այնպէս ալ շնորհքը թագաւորէ արդարութեամբ՝ մինչեւ յաւիտենական կեանք, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով: (aiōnios g166)

6 Ուրեմն ինչ պիտի ըսենք. արդեօք յարատեւէնք մեղքի մէջ՝ որպէսզի շնորհքը աւելնայ: 2 Ամենեւին: Մենք՝ որ մեռած ենք մեղքին հանդէպ, ինչպէս տակաւին ապրինք անոր մէջ: 3 Չէք գիտեր թէ մենք բոլորս՝ որ մկրտուեցանք Յիսուս Քրիստոսով, մկրտուեցանք անոր մահով: 4 Ուրեմն անոր հետ թաղուեցանք մկրտութեամբ՝ մահուան համար. որպէսզի ինչպէս Քրիստոս մեռելներէն յարութիւն առաւ՝ ձօրը փառքով, այնպէս ալ մենք ընթանանք նոր կեանքի մէջ: 5 Որովհետեւ եթէ մենք տնկակից եղանք անոր մահուան նմանութեամբ, նաեւ կցորդ պիտի ըլլանք անոր յարութեան նմանութեամբ: 6 Սա գիտնանք՝ թէ մեր հին մարդը խաչուեցաւ անոր հետ, որ մեղքի մարմինը ոչնչանայ, որպէսզի այլեւս մեղքին ստրուկը չըլլանք: 7 Որովհետեւ ան որ մեռած է մեղքին, արդարացած է մեղքէն: 8 Ուրեմն եթէ մենք մեռանք Քրիստոսի հետ, կը հաւատանք թէ պիտի ապրինք ալ անոր հետ: 9 Բանի որ գիտենք թէ Քրիստոս մեռելներէն

Երբ Երեմիայի արարած իմաստը պարզվեց, ապա նա ասաց՝
 10 Որովհետեւ երբ
 ան մեռաւ, մեղքի համար մեռաւ՝ մէկ անգամ
 ընդմիջտ, եւ հիմա որ կ'ապրի՝ Աստուծոյ համար
 կ'ապրի: 11 Նոյնպէս դուք ձեզ մեռած սեպեցէք
 մեղքին, բայց ողջ՝ Աստուծոյ, մեր Տէրոջ՝ Քրիստոս
 Յիսուսի միջոցով: 12 Ուրեմն ալ մեղքը թող
 չթագաւորէ ձեր մահկանացու մարմինին վրայ,
 որ հնազանդիք անոր ցանկութիւններուն. 13 ու
 ձեր մարմինին անդամները մի՛յանձնէք մեղքին՝
 անիրաւութեան գործիք ըլլալու: Հապա դուք
 ձեզ ընծայեցէք Աստուծոյ՝ որպէս մեռելներէն
 վերապրողներ, եւ ձեր անդամները ընծայեցէք
 Աստուծոյ՝ իբր արդարութեան գործիքներ: 14
 Արդարեւ մեղքը պիտի չիշխէ ձեր վրայ. որովհետեւ
 ոչ թէ Օրէնքի տակ էք, հապա՝ շնորհքի տակ:
 15 Ուրեմն ինչ. մեղանչէնք, քանի որ Օրէնքի
 տակ չենք, հապա՝ շնորհքի տակ: Ամենեւին: 16
 Չէք գիտեր թէ որո՞ւն որ դուք ձեզ իբր ստրուկ
 յանձնէք՝ հնազանդելու համար, ստրուկ կ'ըլլաք
 անոր՝ որուն կը հնազանդիք, թէ՛ մեղքին՝ որ
 կ'առաջնորդէ մահուան, եւ թէ հնազանդութեան՝
 որ կ'առաջնորդէ արդարութեան: 17 Բայց
 շնորհակալութիւն Աստուծոյ, որ մեղքին ստրուկ
 ըլլալէ ետք՝ սրտանց հնազանդեցաք այն
 ուսուցումի տիպարին՝ որ աւանդուեցաւ ձեզի: 18
 Ուստի դուք՝ ազատած ըլլալով մեղքէն՝ ստրուկ
 եղաք արդարութեան. 19 (մարդկային կերպով կը
 խօսիմ՝ ձեր մարմինին տկարութեան պատճառով.)

քանի որ ինչպէս յանձնեցիք ձեր անդամները անօրէնութեան՝ ստրուկ ըլլալու անմաքրութեան եւ անօրէնութեան, այնպէս ալ հիմա ընծայեցէք ձեր անդամները սրբութեան՝ ստրուկ ըլլալու արդարութեան: **20** Որովհետեւ երբ դուք ստրուկ էիք մեղքին՝ ազատ էիք արդարութենէն: **21** Ուրեմն այն ատեն ինչ պտուղ ունէիք այն բաներէն՝ որոնց համար հիմա կ'ամչնաք. որովհետեւ անոնց վախճանը մահ է: **22** Իսկ հիմա, մեղքէն ազատած եւ Աստուծոյ ստրուկ եղած ըլլալով, ձեր պտուղը ունիք՝ սրբութեամբ, ու վախճանը՝ յաւիտենական կեանքը: (aiōnios g166) **23** Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է, բայց Աստուծոյ շնորհը՝ յաւիտենական կեանք է, Յիսուս Քրիստոսի՝ մեր Տէրոջ միջոցով: (aiōnios g166)

7 Միթէ չէ՞ք գիտեր, եղբայրներ, (քանի որ ես Օրէնքը գիտցողներուն կը խօսիմ,) թէ Օրէնքը կը տիրէ մարդուն վրայ՝ այնքան ատեն որ ան կ'ապրի: **2** Որովհետեւ ամուսին ունեցող կինը Օրէնքով կապուած է իր ամուսինին՝ քանի դեռ ան կ'ապրի. բայց եթէ ամուսինը մեռնի, արձակուած է ամուսինին Օրէնքէն: **3** Ուրեմն, քանի դեռ ամուսինը կ'ապրի, շնացող պիտի կոչուի՝ եթէ ուրիշ մարդու մը կին ըլլայ. բայց եթէ ամուսինը մեռնի՝ ազատ կ'ըլլայ այդ Օրէնքէն, այնպէս որ շնացող չ'ըլլար՝ եթէ ուրիշ մարդու մը կին ըլլայ: **4** Հետեւաբար դ՞ուք ալ, եղբայրներս, Օրէնքին մեռաք Քրիստոսի մարմինով, որպէսզի ըլլաք ուրիշի մը, անոր՝ որ մեռելներէն յարութիւն առաւ,

որպէսզի պտուղ արտադրենք Աստուծոյ: **5** Քանի որ երբ մենք մարմինով էինք, մեղքերու կիրքերը՝ որոնք կը դրդուէին Օրէնքէն՝ կը ներգործէին մեր անդամներուն մէջ, որպէսզի պտուղ արտադրենք մահուան: **6** Իսկ հիմա արծակուեցանք Օրէնքէն. որովհետեւ մենք մեռանք անոր՝ որ գերի բռնած էր մեզ, որպէսզի ծառայենք նորոգուած հոգիով, եւ ոչ թէ հնամաշ գիրին համաձայն: **7** Ուրեմն ինչ ըսենք. Օրէնքը մեղք է: Ամենեւին: Նոյնիսկ ես պիտի չգիտնայի մեղքը, եթէ Օրէնքը չըլլար. նաեւ պիտի չգիտնայի ցանկութիւնը, եթէ Օրէնքը ըսած չըլլար. «Մի՛ ցանկար»: **8** Բայց մեղքը՝ առիթ առնելով պատուիրանէն՝ մէջս իրագործեց ամէն տեսակ ցանկութիւն, որովհետեւ մեղքը մեռած էր առանց Օրէնքին: **9** Արդարեւ ես ժամանակ մը ողջ էի՝ առանց Օրէնքին. բայց երբ պատուիրանը եկաւ՝ մեղքը վերապրեցաւ, **10** ու ես մեռայ. եւ այն պատուիրանը՝ որ կեանքի համար էր, նոյնը ինծի մահուան համար եղաւ: **11** Որովհետեւ մեղքը՝ պատուիրանէն առիթ առնելով՝ խաբեց զիս, եւ սպաննեց անով: **12** Հետեւաբար Օրէնքը սուրբ է, ու պատուիրանը՝ սուրբ, արդար եւ բարի: **13** Ուրեմն ինչ որ բարի է՝ մահ պատճառեց ինծի: Ամենեւին: Հապա մեղքն էր որ մահ իրագործեց իմ մէջս՝ բարիին միջոցով, որպէսզի մեղքը գերազանցօրէն մեղաւոր երեւնայ՝ պատուիրանին միջոցով: **14** Արդարեւ զիտենք թէ Օրէնքը հոգեւոր է, բայց ես մարմնաւոր եմ՝ ծախուած մեղքին հպատակութեան. **15** որովհետեւ ինչ որ կը

գործադրեմ՝ չեմ ըմբռներ: Ո՛չ թէ ինչ որ կ'ուզեմ՝
 զայն կ'ընեմ, հապա ինչ որ կ'ատեմ՝ զայն կ'ընեմ:
16 Ուրեմն եթէ չուզածս կ'ընեմ, հաւանութիւն
 կու տամ Օրէնքին՝ թէ բարի է: **17** Իսկ հիմա՝
 ո՛չ թէ ես կը գործադրեմ զայն, հապա մեղքը՝
 որ կը բնակի իմ մէջս: **18** Քանի որ գիտեմ թէ
 իմ մէջս, այսինքն մարմինիս մէջ, ո՛չ մէկ բարի
 բան կը բնակի. որովհետեւ կամենայլ քովս է,
 բայց չեմ գտներ բարին գործադրելը: **19** Արդարեւ
 բարին որ կ'ուզեմ՝ չեմ ըներ, հապա չարը որ
 չեմ ուզեր՝ զայն կ'ընեմ: **20** Իսկ եթէ կ'ընեմ
 ինչ որ չեմ ուզեր, ալ ո՛չ թէ ես կը գործադրեմ
 զայն, հապա մեղքը՝ որ իմ մէջս կը բնակի: **21**
 Ուրեմն ես կը գտնեմ օրէնք մը, որ երբ կամենամ
 բարին ընելը, չարը քովս կ'ըլլայ: **22** Որովհետեւ
 ներքին մարդուն համաձայն՝ կը հաւնիմ Աստուծոյ
 Օրէնքը. **23** բայց անդամներուս մէջ կը տեսնեմ
 ուրիշ օրէնք մը, որ կը մարտնչի միտքիս Օրէնքին
 դէմ եւ գերի կը դարձնէ զիս մեղքի օրէնքին՝ որ
 անդամներուս մէջ է: **24** Ի՛նչ թշուառ մարդ եմ. ո՛վ
 պիտի ազատէ զիս այս մահկանացու մարմինէն: **25**
 Շնորհակալութիւն Աստուծոյ՝, մեր Տէրոջ՝ Յիսուս
 Քրիստոսի միջոցով: Ուրեմն ես ինքս միտքով
 կը ծառայեմ Աստուծոյ Օրէնքին, իսկ մարմինով՝
 մեղքի օրէնքին:

8 Ուրեմն հիմա դատապարտութիւն չկայ
 Քրիստոս Յիսուսով եղողներուն, որոնք մարմինին
 համաձայն չեն ընթանար. **2** քանի որ կեանքի
 Յոգիին Օրէնքը՝ Քրիստոս Յիսուսով ազատեց

զիս մեղքի եւ մահուան օրէնքէն: **3** Արդարեւ ինչ որ Օրէնքը անկարող էր ընել, որովհետեւ մարմինը տկարացուցած էր զայն, Աստուած իրագործեց. իր Որդին դրկեց՝ մեղանշական մարմինի նմանութեամբ եւ մեղքին պատճառով, ու դատապարտեց մեղքը այդ մարմինին մէջ, **4** որպէսզի Օրէնքին արդարութիւնը գործադրուի մեր մէջ՝ որ չենք ընթանար մարմինին համաձայն, այլ՝ Հոգիին: **5** Արդարեւ մարմինին համաձայն ապրողները՝ կը մտածեն մարմինին բաները, իսկ Հոգիին համաձայն ապրողները՝ Հոգիին բաները. **6** նաեւ մարմնաւոր մտածումը մահ է, իսկ հոգեւոր մտածումը՝ կեանք ու խաղաղութիւն: **7** Արդարեւ մարմնաւոր մտածումը Աստուծոյ դէմ թշնամութիւն է, քանի Աստուծոյ Օրէնքին չի հպատակիր. մանաւանդ չի կրնար ալ, **8** որովհետեւ մարմինին համաձայն ապրողները չեն կրնար հաճեցնել Աստուած: **9** Բայց դուք չէք ապրիր մարմինին համաձայն, հապա՝ Հոգիին համաձայն, եթէ իսկապէս Աստուծոյ Հոգին բնակած է ձեր մէջ. իսկ եթէ մէկը Քրիստոսի Հոգին չունի, ինք անորը չէ: **10** Սակայն եթէ Քրիստոս ձեր մէջ է, մարմինը մեռած է մեղքին պատճառով, իսկ Հոգին կեանք կը պարգեւէ արդարութեան պատճառով: **11** Ու եթէ Յիսուսը մեռելներէն յարուցանողին Հոգին բնակած է ձեր մէջ, ուրեմն ան՝ որ մեռելներէն յարուցանեց Քրիստոսը, կեանք պիտի տայ նաեւ ձեր մահկանացու մարմիններուն՝ իր Հոգիով, որ կը բնակի ձեր մէջ:

12 Ուրեմն, եղբայրներ, պարտական ենք, բայց
 ոչ մարմինին՝ մարմինին համաձայն ապրելու
 համար: **13** Որովհետեւ եթե մարմինին համաձայն
 ապրիք՝ պիտի մեռնիք, իսկ եթե Հոգիով մարմինին
 գործերը մեռցնեք՝ պիտի ապրիք: **14** Արդարեւ
 բոլոր անոնք որ կ'առաջնորդուին Աստուծոյ
 Հոգիով, անոնք են Աստուծոյ որդիները. **15**
 քանի որ դուք չստացաք ստրկութեան հոգին՝
 դարձեալ վախնալու համար, հապա ստացաք
 որդեգրութեան Հոգին, որուն միջոցով կը գոչենք՝
 «Աբբա, Հայր»: **16** Նոյնինքն Հոգին վկայութիւն
 կու տայ մեր հոգիին հետ թէ մենք Աստուծոյ
 զաւակներն ենք. **17** ու եթե զաւակներ՝ ուրեմն
 ժառանգորդներ, Աստուծոյ ժառանգորդներ եւ
 Քրիստոսի ժառանգակիցներ, որպէսզի եթե
 չարչարուինք իրեն հետ, նաեւ փառաւորուինք
 իրեն հետ: **18** Արդարեւ ես այնպէս կը սեպեմ
 թէ այս ներկայ ժամանակին չարչարանքները՝
 արժանի չեն բաղդատուելու գալիք փառքին
 հետ, որ պիտի յայտնուի մեր մէջ: **19** Քանի որ
 արարածները եռանդուն ակնկալութեամբ կը
 սպասեն Աստուծոյ որդիներուն յայտնութեան:
20 Որովհետեւ արարածները հպատակեցան
 ունայնութեան, (ոչ թէ իրենց կամքով, հապա
 անոր պատճառով՝ որ հպատակեցուց զիրենք,
) **21** այն յոյսով՝ որ արարածները իրենք ալ,
 ազատելով ապականութեան ստրկութենէն,
 հասնին Աստուծոյ զաւակներուն փառաւոր
 ազատութեան: **22** Քանի որ զիտենք թէ բոլոր

արարածները միասին կը հառաչեն ու երկունքի ցաւ կը քաշեն մինչեւ հիմա: **23** Եւ ոչ միայն անոնք, հապա մենք ալ՝ որ ունինք Յոգիին երախայրիքը, նոյնիսկ մենք մեր մէջ կը հառաչենք՝ սպասելով որդեգրութեան, այսինքն մեր մարմինին ազատագրութեան: **24** Որովհետեւ մենք յոյսով փրկուեցանք. բայց այն յոյսը որ կը տեսնուի՝ յոյս չէ. քանի որ ինչո՞ւ մէկը տակաւին յուսայ այն բանին՝ որ արդէն կը տեսնէ: **25** Իսկ եթէ կը յուսանք մեր չտեսած բանին, ալ համբերութեամբ սպասենք անոր: **26** Նոյնպէս Յոգին ալ կ'օգնէ մեր տկարութիւններուն մէջ. քանի որ չենք գիտեր ինչ բանի համար աղօթելու ենք՝ ինչպէս պետք է. բայց Յոգին ինք կը բարեխօսէ մեզի համար՝ անբարբառ հառաչանքներով: **27** Եւ ան՝ որ կը զննէ սիրտերը, գիտէ Յոգիին ինչ մտածելը, քանի որ կը բարեխօսէ սուրբերուն համար Աստուծոյ կամքին համաձայն: **28** Նաեւ գիտենք թէ բոլոր բաները բարիին գործակից կ'ըլլան անոնց՝ որ կը սիրեն Աստուած, անոնց՝ որ կանչուած են իր առաջադրութեան համաձայն: **29** Որովհետեւ անոնք՝ որ նախապէս ճանչցաւ, նաեւ նախասահմանեց՝ կերպարանակից ըլլալու իր Որդիին պատկերին, որպէսզի ան ըլլայ անդրանիկը բազմաթիւ եղբայրներու մէջ: **30** Եւ անոնք որ նախասահմանեց՝ նաեւ կանչեց, անոնք որ կանչեց՝ նաեւ արդարացուց, եւ անոնք որ արդարացուց՝ նաեւ փառաւորեց: **31** Ուրեմն ինչ ըսենք այս բաներուն մասին. եթէ Աստուած

մեր կողմն է, ո՞վ հակառակ է մեզի: 32 Ա՛ն՝ որ չխնայեց իր իսկ Որդիին, հապա մատնեց զայն մեր բոլորին համար, ինչպես անոր հետ նաեւ պիտի չպարգեւէ մեզի բոլոր բաները: 33 Ո՞վ պիտի մեղադրէ Աստուծոյ ընտրածները. Աստուած է արդարացնողը: 34 Ուրեմն ո՞վ է դատապարտողը. Քրիստոս՝ որ մեռաւ, մանաւանդ յարութիւն առաւ եւ Աստուծոյ աջ կողմն է, ան կը բարեխօսէ մեզի համար: 35 Ուրեմն ո՞վ պիտի զատէ մեզ Քրիստոսի սէրէն. տառապանքը, կամ տագնապը, կամ հալածանքը, կամ սո՛վը, կամ մերկութիւնը, կամ վտանգը, կամ սո՛ւրը: 36 (Ինչպես գրուած է. «Զեզի համար ամբողջ օրը կը մեռցուինք. սպանդանոցի ոչխարի պէս կը սեպուինք»:) 37 Նոյնիսկ այս բոլոր բաներուն մէջ աւելի քան յաղթող կ'ըլլանք անո՞վ՝ որ սիրեց մեզ: 38 Որովհետեւ ես համոզուած եմ թէ ոչ մահը, ոչ կեանքը, ոչ հրեշտակները, ոչ իշխանութիւնները, ոչ զօրութիւնները, ոչ ներկայ բաները, ոչ զալիք բաները, 39 ոչ բարձրութիւնը, ոչ խորունկութիւնը, ոչ ալ ոեւէ ուրիշ արարած պիտի կարենայ զատել մեզ Աստուծոյ սէրէն, որ Քրիստոս Յիսուսով՝ մեր Տէրոջմով է:

9 Ճշմարտութիւնը կ'ըսեն Քրիստոսով ու չեն ստեր, (իմ խղճմտանքս ալ կը վկայէ ինծի Սուրբ Հոգիով,) 2 թէ մեծ տրտմութիւն ունիմ, եւ սիրտիս մէջ՝ յարատեւ ցաւ: 3 Քանի որ կ'ըղծայի ես ինքս նզովուած ըլլալ Քրիստոսէ, իմ եղբայրներուս՝ մարմինի կողմէն ազգականներուս համար, 4 որոնք Իսրայելացի

են: Անոնցն են որդեգրութիւնը, փառքը, ուխտերը, օրենսդրութիւնը, պաշտամունքն ու խոստումները: **5** Իրենցն են նախահայրերը. իրենցմէ՛ ալ մարմինի կողմէն եկաւ Քրիստոս, որ բոլորին վրայ է, յաւիտեան օրհնեալ Աստուած: Ամեն: (aïōn g165) **6** Բայց Աստուծոյ խօսքը ապարդիւն նկատուելու չէ. քանի որ բոլոր Իսրայելէ եղողները Իսրայելացի չեն, **7** ո՛չ ալ բոլորը զաւակներ են՝ քանի որ Աբրահամի զարմն են. հապա ըսուեցաւ. «Իսահակի՛ անունով պիտի կոչուի քու զարմոյ»:

8 Այսինքն անոնք որ մարմինի զաւակներն են՝ Աստուծոյ զաւակները չեն. հապա խոստումին զաւակները զարմ կը սեպուին: **9** Որովհետեւ խոստումին խօսքը սա՛ էր. «Այս ատեն պիտի գամ, ու Սառա որդի մը պիտի ունենայ»:

10 Եւ ո՛չ միայն այդ, այլ նաեւ երբ Ռեբեկա յղացաւ մէկէն՝ մեր Իսահակ հօրմէն, **11** (քանի որ զաւակները դեռ չծնած, ո՛չ ալ որեւէ բարիք կամ չարիք գործած, որպէսզի Աստուծոյ առաջադրութիւնը հաստատ մնայ՝ ընտրութեան համաձայն, **12** այսինքն ո՛չ թէ գործերէն ըլլայ, հապա անկէ՛ որ կանչեց,) անոր ըսուեցաւ. **13** «Երեցը պիտի ծառայէ կրտսերին», ինչպէս գրուած է. «Յակոբը սիրեցի, իսկ Եսաւը ատեցի»:

14 Ուրեմն ի՞նչ ըսենք. միթէ Աստուծոյ քով անիրաւութիւն կայ: Ամենեւին: **15** Որովհետեւ ան Մովսէսի կ'ըսէ. «Անոր որ պիտի ողորմիմ՝ կ'ողորմիմ, եւ անոր վրայ որ պիտի գթամ՝ կը գթամ»:

16 Ուրեմն ո՛չ մարդուն ուզելէն, ո՛չ ալ վազելէն՝ կախեալ է, հապա Աստուծմէ՛ որ

կ'ողորմի: 17 Քանի որ Գիրքը կ'ըսէ Փարաւոնի. «Բարձրացուցի քեզ, որպէսզի իմ զօրութիւնս ցոյց տամ քու միջոցով, եւ իմ անունս հռչակուի ամբողջ երկրին մէջ»: 18 Ուրեմն կ'ողորմի որո՞նք որ ուզէ, եւ կը խստացնէ զայն որ ուզէ: 19 Յետեւաբար դուն պիտի ըսես ինծի թէ “ալ ինչո՞ւ կը մեղադրէ, որովհետեւ ո՞վ կրնայ ընդդիմանալ անոր ծրագիրին”: 20 Բայց դուն ո՞վ ես, ո՞վ մարդ, որ կը դիմադարձես Աստուծոյ: Միթէ կերտուած ը կրնայ ըսել զինք կերտողին. «Ինչո՞ւ այսպէս շինեցիր զիս»: 21 Միթէ բրուտը իրաւասութիւն չունի կաւին վրայ, որ նոյն զանգուածէն շինէ անօթ մը՝ պատիւի համար, իսկ ուրիշ մը՝ անպատուութեան համար: 22 Ինչ կրնանք ըսել՝ եթէ Աստուած, ուզելով ցոյց տալ իր բարկութիւնը եւ գիտցնել իր զօրութիւնը, շատ համբերատարութեամբ տոկաց կորսուելու պատրաստուած բարկութեան անօթներուն, 23 որպէսզի գիտցնէ իր փառքին ճոխութիւնը՝ ողորմութիւն գտնող անօթներուն, որ նախապէս պատրաստեց փառքի համար, 24 այսինքն՝ մեզի, որ կանչեց ոչ միայն Յրեաներէն, այլ նաեւ հեթանոսներէն, 25 ինչպէս Ովսէէի մէջ ալ կ'ըսէ. «Իմ ժողովուրդս չեղողը՝ “իմ ժողովուրդս” պիտի կոչեմ, ու սիրելի չեղողը՝ “սիրելի”»: 26 Եւ այն տեղը՝ ուր անոնց ըսուած էր. “Դուք իմ ժողովուրդս չէք”, հոն անոնք պիտի կոչուին “ապրող Աստուծոյ որդիները”: 27 Եսայի ալ Իսրայելի մասին կ'աղաղակէ. «Նոյնիսկ եթէ Իսրայելի որդիներուն թիւը ծովու աւազին չափ ըլլայ, միայն մնացորդ

մը պիտի փրկուի: **28** Քանի որ ան պիտի կատարէ իր խօսքը, կտրուկ կերպով եւ արդարութեամբ. Տէրը կտրուկ կերպով պիտի իրագործէ իր խօսքը երկրի վրայ»: **29** Եւ ինչպէս Եսայի նախապէս ըսաւ. «Եթէ զօրքերու Տէրը զարմ մը թողուցած չըլլար մեզի, մենք պիտի ըլլայինք Սոդոմի պէս, ու պիտի նմանէինք Գոմորի»: **30** Ուրեմն ինչ ըսենք: Հետեւեալը, թէ հեթանոսները՝ որոնք հետամուտ չէին արդարութեան՝ հասան արդարութեան, այն արդարութեան՝ որ հաւատքէն է. **31** իսկ Իսրայէլ՝ որ հետամուտ էր արդարութեան Օրէնքին՝ չհասաւ արդարութեան Օրէնքին: **32** Ինչո՞ւ. որովհետեւ ուզեց արդարանալ ոչ թէ հաւատքով, հապա որպէս թէ Օրէնքին գործերով: Արդարեւ անոնք գայթեցան սայթաքումի քարին վրայ, **33** ինչպէս գրուած է. «Ահա՛ Սիոնի մէջ կը դնեմ սայթաքումի քար մը ու գայթակղութեան ժայռ մը, եւ ո՞վ որ հաւատայ անոր՝ ամօթահար պիտի չըլլայ»:

10 Եղբայրներ, սիրտիս բաղձանքն է, նաեւ Աստուծոյ ուղղած աղերսանքս՝ Իսրայէլի համար, որ անոնք փրկուին: **2** Որովհետեւ ես անոնց համար կը վկայեմ թէ նախանձախնդրութիւն ունին Աստուծոյ հանդէպ, բայց ոչ թէ գիտակցութեամբ: **3** Քանի որ՝ անգիտանալով Աստուծոյ արդարութիւնը եւ ջանալով հաստատել իրենց արդարութիւնը՝ անոնք չհպատակեցան Աստուծոյ արդարութեան: **4** Որովհետեւ Քրիստոն է Օրէնքին վախճանը՝ ամէն հաւատացեալի

արդարութեան համար: 5 Արդարեւ Մովսէս Օրէնքէն եղող արդարութեան մասին կը գրէ. «Այն մարդը որ կը գործադրէ այդ բաները՝ պիտի ապրի անոնցմով»: 6 Բայց հաւատքէն եղող արդարութիւնը սա՛ կ'ըսէ. «Մի՛ ըսեր սիրտիդ մէջ. “Ո՛վ պիտի բարձրանայ երկինքը”, (այսինքն՝ Քրիստոսը վար իջեցնելու,) 7 կամ. “Ո՛վ պիտի իջնէ անդունդը” (այսինքն՝ Քրիստոսը մեռելներէն վեր հանելու)»: (Abyssos g12) 8 Հապա ինչ կ'ըսէ ան. «Խօսքը մօտ է քեզի, բերանիդ եւ սիրտիդ մէջ է». այսինքն հաւատքին խօսքը՝ որ մենք կը քարոզենք: 9 Որովհետեւ եթէ բերանովդ Տէր դաւանիս Յիսուսը, ու սիրտիդ մէջ հաւատաս թէ Աստուած մեռելներէն յարուցանեց զայն՝ պիտի փրկուիս. 10 (որովհետեւ սիրտով կը հաւատայ մէկը՝ արդարանալու համար, ու բերանով կը դաւանի՝ փրկուելու համար:) 11 Քանի որ Գիրքը կ'ըսէ. «Ո՛վ որ անոր հաւատայ՝ ամօթահար պիտի չըլլայ»: 12 Արդարեւ խտրութիւն չկայ Հրեային ու Յոյնին միջեւ, որովհետեւ բոլորին վրայ եղող նոյն Տէրը ճոխութեամբ կը հասնի բոլոր անոնց՝ որ զինք կը կանչեն: 13 Քանի որ “ո՛վ որ Տէրոջ անունը կանչէ՝ պիտի փրկուի”: 14 Ուրեմն ինչպէս պիտի կանչեն զայն՝ որուն հաւատացած չեն. կամ ինչպէս պիտի հաւատան անոր՝ որուն մասին լսած չեն. կամ ինչպէս պիտի լսեն՝ առանց քարոզիչի: 15 Կամ ինչպէս պիտի քարոզեն՝ եթէ չորկուին, ինչպէս գրուած է. «Ի՛նչ գեղեցիկ են ոտքերը անոնց՝ որոնք խաղաղութիւն

կ'աւետեն, բարի բաներ կ'աւետեն»: 16 Բայց բոլորը չհնազանդեցան աւետարանին, բանի որ Եսայի կ'ըսէ. «Տէր, ո՞վ հաւատաց մեր տուած լուրին»: 17 Ուրեմն հաւատքը կու գայ լսելէն, ու լսելը՝ Աստուծոյ խօսքէն: 18 Բայց կ'ըսեմ. «Միթէ չլսեցի՞ն: Անկասկած. “Անոնց հնչիւնը զնաց ամբողջ երկիրը, եւ անոնց խօսքը՝ մինչեւ երկրագունդին ծայրերը”»: 19 Բայց կ'ըսեմ. «Միթէ Իսրայել չգիտցա՞մ»: Նախ Մովսէս կ'ըսէ. «Ես պիտի գրգռեմ ձեր նախանձը անպիտան ազգով՝ մը, պիտի բարկացնեմ ձեզ անխելք ազգով մը»: 20 Բայց Եսայի շատ յանդուգն է, ու կ'ըսէ. «Ես գտնուեցայ անոնցմէ՝ որոնք չէին փնտռեր զիս, յայտնուեցայ անոնց՝ որոնք չէին հարցներ իմ մասիս»: 21 Սակայն Իսրայելի համար կ'ըսէ. «Ամբողջ օրը երկարեցի իմ ձեռքերս՝ չանսացող եւ հակաճառող ժողովուրդի մը»:

11 Ուրեմն կ'ըսեմ. «Միթէ Աստուած վանեց իր ժողովուրդը»: Ամենեւին. որովհետեւ նա ալ Իսրայելացի եմ, Աբրահամի զարմէն, Բենիամինի տոհմէն: 2 Աստուած չվանեց իր ժողովուրդը, որ նախապէս ճանչցած էր: Միթէ չէ՞ք գիտեր թէ Գիրքը ինչ կ'ըսէ Եղիայի մասին, թէ ինչպէս ան կը գանգատէր Աստուծոյ՝ Իսրայելի դէմ, ըսելով. 3 «Տէր, քու մարգարէներդ սպաննեցին ու քու զոհասեղաններդ փլցուցին. ես մինակ մնացած եմ, եւ իմ անձս ալ կը փնտռեն»: 4 Բայց ինչ կ'ըսէ անոր Աստուծոյ պատգամը. «Ինծի պահեցի եօթը հազար մարդ, որոնք Բահաղի չծնրադրեցին»:

5 Նոյնպէս ալ այս ներկայ ատենը մնացորդ մը
 կայ՝ շնորհքի ընտրութեան համաձայն: 6 Եւ եթէ
 շնորհքով է, ուրեմն ակ գործերէն չէ. այլապէս՝
 շնորհքը ակ շնորհք չ'ըլլար: Իսկ եթէ գործերէն է,
 ակ շնորհք չէ. այլապէս՝ գործը ակ գործ չ'ըլլար:
 “ 7 Ուրեմն ինչ. Իսրայել չհասաւ այն բանին՝
 որ կը փնտռէր. սակայն ընտրուածները հասան
 անոր, իսկ միւսները կուրցան 8 (ինչպէս գրուած է.
 «Աստուած անոնց տուաւ թմրութեան ոգի. աչքեր՝
 որ չտեսնեն, եւ ականջներ՝ որ չլսեն».) մինչեւ
 այսօր: 9 Ու Դաւիթ կ'ըսէ. «Անոնց սեղանը վարմ,
 որոգայթ, գայթակողութիւն եւ հատուցում թող
 ըլլայ իրենց: 10 Անոնց աչքերը թող խաւարին՝
 որպէսզի չտեսնեն, եւ անոնց կռնակը ամէն ատեն
 վար ծռէ»: 11 Ուրեմն կ'ըսեն. «Միթէ անոնք
 սայթաքեցան՝ որպէսզի իյնան»: Ամենեւին: Հապա՝
 փրկութիւնը հասաւ հեթանոսներուն անոնց
 անկումով, որպէսզի գրգռէ անոնց նախանձը:
 12 Ուստի եթէ անոնց անկումը աշխարհի
 հարստութիւն եղաւ, եւ անոնց նուաստացումը՝
 հեթանոսներուն հարստութիւն, ակ ճիշդապէս ակեղի՝
 անոնց լիութիւնը: 13 Բայց ձեզի՝ հեթանոսներու
 կ'ըսեն. «Քանի որ հեթանոսներուն առաքեալն
 եմ՝ կը փառաւորեմ իմ սպասարկութիւնս, 14
 յուսալով բարի նախանձը գրգռել իմ մարմինէս
 եղողներուն, եւ փրկել անոնցմէ ոմանք»: 15
 Որովհետեւ եթէ անոնց մեկուսացուիլը աշխարհի
 հաշտութիւն եղաւ, հապա ինչ պիտի ըլլայ
 անոնց վերստին ընդունուիլը, եթէ ոչ՝ կեանք

մեռելներէն: 16 Ուրեմն՝ եթէ երախայրիքը սուրբ է, նոյնն է նաեւ զանգուածը. ու եթէ արմատը սուրբ է, ուրեմն ճիւղերն ալ: 17 Եթէ այդ ճիւղերէն ոմանք կտրուեցան, ու դռն՝ որ վայրի ձիթենի էիր, պատուաստուեցար անոնց մէջտեղ եւ հաղորդակից եղար անոնց հետ ձիթենիին արմատին ու պարարտութեան, 18 մի պարծենար ճիւղերուն դէմ: Իսկ եթէ պարծենաս, գիտցիր թէ դռն չես որ կը կրես արմատը, հապա արմատը՝ քեզ: 19 Ուրեմն պիտի ըսես. «ճիւղերը կտրուեցան՝ որպէսզի ես պատուաստուիմ»: 20 Լա՛ւ. անոնք կտրուեցան անհաւատութեան պատճառով, ու դռն հաստատ մնացած ես հաւատքով: Մեծամիտ մի ըլլար, հապա վախցիր. 21 որովհետեւ եթէ Աստուած չխնայեց բնական ճիւղերուն, գուցէ չխնայէ նաեւ քեզի: 22 Ուրեմն տես Աստուծոյ քաղցրութիւնն ու խստութիւնը. խստութիւն՝ ինկածներուն հանդէպ, իսկ բարութիւն՝ քեզի հանդէպ, եթէ յարատեւես անոր քաղցրութեան մէջ. այլապէս՝ դռն ալ պիտի կտրուիս: 23 Իսկ անոնք ալ պիտի պատուաստուին՝ եթէ չմնան իրենց անհաւատութեան մէջ, որովհետեւ Աստուած կարող է դարձեալ պատուաստել զանոնք: 24 Քանի որ եթէ դռն կտրուեցար այն ձիթենիէն՝ որ բնութեամբ վայրի էր, եւ հակառակ բնութեան՝ պատուաստուեցար լաւ ձիթենիի մը վրայ, ալ որչափ աւելի ասոնք՝ որ բնական ճիւղերն են, պիտի պատուաստուին իրենց սեփական ձիթենիին վրայ: 25 Որովհետեւ

չեմ ուզեր, եղբայրներ, որ անգիտանաք սա խորհուրդին, (որպէսզի դուք ձեզ իմաստուն չսեպէք,) թէ մասնակի կուրութիւն պատահեցաւ Իսրայէլի, մինչեւ որ ներս մտնէ հեթանոսներուն լիութիւնը: **26** Եւ այսպէս՝ ամբողջ Իսրայէլը պիտի փրկուի, ինչպէս գրուած է. «Ազատարարը Սիոնէն պիտի գայ, ու Յակոբէն պիտի հեռացնէ ամբարշտութիւնը: **27** Եւ այս է իմ ուխտս անոնց հետ, երբ քաւեմ անոնց մեղքերը»: **28** Աւետարանին համաձայն՝ անոնք թշնամիներ են ձեր պատճառով. բայց ընտրութեան համաձայն՝ սիրելի են իրենց հայրերուն պատճառով, **29** քանի որ Աստուծոյ շնորհներն ու կոչումը անդառնալի են: **30** Որովհետեւ ինչպէս ժամանակին դուք ալ չէիք հնազանդեր Աստուծոյ, բայց հիմա ողորմութիւն գտաք անոնց անհնազանդութեամբ, **31** նոյնպէս անոնք ալ հիմա չհնազանդեցան, որպէսզի անոնք ալ ողորմութիւն գտնեն ձեր գտած ողորմութեամբ՝: **32** Որովհետեւ Աստուած ներփակեց բոլորը անհնազանդութեան մէջ, որպէսզի ողորմի բոլորին: (eleēsē g1653) **33** «Ո՛վ Աստուծոյ ճոխութեան, իմաստութեան ու գիտութեան խորութիւնը. ինչպէս անքննելի են իր դատաստանները, եւ անզննելի՝ իր ճամբաները: **34** Որովհետեւ ո՛վ գիտցաւ Տէրոջ միտքը, կամ ո՛վ անոր խորհրդատու եղաւ: **35** Կամ ո՛վ նախապէս անոր տուաւ բան մը, որ հատուցանուի իրեն»:

36 Որովհետեւ անկէ, անով եւ անորն են բոլոր բաները, որուն փանօք յաւիտեան: Ամէն: (aiōn g165)

12 Ուրեմն կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, Աստուծոյ կարեկցութեամբ, որ ձեր մարմինները ներկայացնէք որպէս ապրող զոհ մը՝ սուրբ, աստուածահաճոյ. այդ է ձեր բանական պաշտամունքը: **2** Եւ մի՛ համակերպիք այս աշխարհին, հապա փոխակերպուեցէ՛ք ձեր միտքին նորոգութեամբ, որպէսզի քննէք թէ ինչ է Աստուծոյ կամքը, որ բարի, հաճելի եւ կատարեալ է: (aiōn g165) **3** Քանի որ ինծի տրուած շնորհքով կ'ըսեմ ձեզմէ ամէն մէկուն, որ իր մասին աւելի բարձր համարում չունենայ՝ քան ինչ որ պէտք է մտածէ, հապա խոհեմութեամբ մտածէ, հաւատքի չափին համեմատ՝ որ Աստուած բաշխած է իւրաքանչիւրին: **4** Որովհետեւ ինչպէս մէկ մարմինի մէջ ունինք շատ անդամներ, եւ այդ բոլոր անդամները միեւնոյն պաշտօնը չունին, **5** նոյնպէս մենք՝ շատ ըլլալով՝ մէկ մարմին ենք Քրիստոսով, եւ իւրաքանչիւրս՝ իրարու անդամներ: **6** Ուստի՝ ունենալով շնորհներ, որոնք կը տարբերին այն շնորհքին համեմատ՝ որ մեզի տրուած է, եթէ մարգարէութիւն է՝ մարգարեանանք հաւատքին համեմատութեամբ, **7** եթէ սպասարկութիւն՝ սպասարկենք. ան որ կը սորվեցնէ՝ թող յարատեւէ սորվեցնելով, **8** ան որ կը յորդորէ՝ յորդորելով. ան որ կը բաշխէ՝ թող յարատեւէ պարգամտութեամբ, ան որ վերակացու է՝ փութաջանութեամբ, ան որ կ'ողորմի՝ ուրախութեամբ: **9** Սէրը թող ըլլայ առանց կեղծիքի. չարէն զգուեցէ՛ք, բարիին յարեցէ՛ք: **10** Իրարու հանդէպ գորովալից

եղէք՝ եղբայրական սիրով. պատուելու մէջ՝
 գիրար գերադասեցէք: **11** Փութաջանութեան
 մէջ ծոյլ մի ըլլաք. եռանդուն հոգիով Տէրոջ
 ծառայեցէք: **12** Յոյսով ուրախացէք. տառապանքի
 մէջ համբերեցէք. աղօթքի մէջ յարատեւեցէք:
13 Սուրբերու կարիքներուն հաղորդակից
 եղէք. հիւրասիրութեան հետամուտ եղէք:
14 Ձեզ հալածողները օրհնեցէք. օրհնեցէք
 եւ մի անիծէք: **15** Ուրախացողներուն հետ
 ուրախացէք, ու լացողներուն հետ լացէք: **16**
 Իրարու հանդէպ միեւնոյն մտածումը ունեցէք:
 Բարձր բաներու վրայ մի մտածէք, հապա
 խոնարհեցէք դէպի նուաստները. դուք ձեզ
 իմաստուն մի սեպէք: **17** Չարիքի փոխարէն չարիք
 մի հատուցանեցէք ոեւէ մէկուն. մտադրեցէք
 ընել ինչ որ պարկեշտ է բոլոր մարդոց առջեւ: **18**
 Որչափ կարելի է ձեզի՝ խաղաղութիւն պահեցէք
 ամէն մարդու հետ: **19** Սիրելիներ, վրէժխնդիր
 մի ըլլաք դուք ձեզի համար, հապա տեղ տուէք
 Աստուծոյ բարկութեան. որովհետեւ գրուած է.
 «Վրէժխնդրութիւնը իմն է, ես պիտի հատուցանեմ,
 - կ'ըսէ Տէրը»: **20** Ուրեմն «եթէ քու թշնամիդ
 անօթեցած է՝ սնուցանէ՛ զայն, ու եթէ ծարաւցած
 է՝ խմցնուր անոր. քանի որ այսպէս ընելով՝ կրակի
 կայծեր պիտի կուտակես անոր գլուխին վրայ»:
21 Չարէն մի յաղթուիր, հապա բարիով յաղթե
 չարին:

13 Ամէն անձ թող հպատակի իր վրայ
 եղած իշխանութիւններուն. որովհետեւ չկայ

իշխանութիւն մը՝ որ Աստուծմէ չըլլայ, եւ անոնք
 որ կան՝ կարգուած են Աստուծմէ: 2 Հետեւաբար
 զի որ կ'ընդդիմանայ իշխանութեան, կը դիմադրէ
 Աստուծոյ կարգադրութեան. եւ անոնք որ կը
 դիմադրեն՝ իրենք զիրենք կը դատապարտեն՝: 3
 Քանի որ իշխանները՝ բարի գործերու համար
 վախ չեն ազդեր, հապա՝ չար գործերու: Ուստի
 կ'ուզէն չվախնալ իշխանութենէն. բարին գործէ, եւ
 գովեստ պիտի ընդունիս անկէ: 4 Որովհետեւ ան
 Աստուծոյ սպասարկուն է քեզի համար՝ որ բարին
 գործես. բայց եթէ չարը գործես՝ վախցիր, քանի որ
 զուր տեղը չէ որ սուր կը կրէ մէջքը. որովհետեւ
 Աստուծոյ սպասարկուն է, եւ վրէժխնդիր՝
 բարկութիւն հասցնելու անոր վրայ՝ որ չարիք
 կը գործէ: 5 Ուստի հարկ է հպատակիլ. ո՛չ միայն
 բարկութեան համար, այլ նաեւ խղճմտանքի
 համար: 6 Այս պատճառով է որ տուրք ալ կը
 վճարէք. որովհետեւ Աստուծոյ պաշտօնեաներն
 են՝ բուն այս բանին յատկացուած: 7 Ուրեմն
 հատուցանեցէ՛ք բոլորին ինչ որ կը պարտիք.
 որո՛ն որ տուրք տրուելու է՝ տուրքը, որո՛ն որ
 մաքս՝ մաքսը, որո՛ն որ վախ՝ վախը, որո՛ն որ
 պատիւ՝ պատիւը: 8 Ո՛չ մէկ պարտք ունեցէ՛ք ոեւէ
 մէկուն, բացի զիրար սիրելէ. որովհետեւ զի որ
 կը սիրէ ընկերը՝ գործադրած կ'ըլլայ Օրէնքը:
 9 Արդարեւ այն ըսուածը. «Շնութիւն մի ըներ,
 սպանութիւն մի ըներ, գողութիւն մի ըներ, սուտ
 վկայութիւն մի տար, մի ցանկար», եւ եթէ կայ
 ուրիշ որեւէ պատուիրան՝ համառօտաբար կը

բովանդակուի սա՛ խօսքին մէջ. «Սիրէ՛ ընկերո՞ք
բո՛ւ անձիո՞՛ պէս»: 10 Սէրը ո՛չ մէկ չարիք կը
գործէ իր ընկերին. ուրեմն սէրն է Օրէնքին
գործադրութիւնը: 11 Նաեւ գիտնանք ատենը՝ թէ
արդէն ժամն է քունէն արթննալու, որովհետեւ
հիմա մեր փրկութիւնը աւելի մօտ է՝ քան երբ
հաւատացինք: 12 Գիշերը շատ յառաջացած
է, ու ցերեկը՝ մօտեցած. ուրեմն թօթափէնք
խաւարին գործերը, ու հագնինք լոյսին գրահը:
13 Վայելչութեամբ ընթանանք, ինչպէս ցերեկ
ատեն, ոչ թէ զեխութեամբ ու արբեցութեամբ,
ոչ թէ խառնակ անկողինով եւ ցոփութեամբ, ոչ
թէ կռիւով ու նախանձով. 14 հապա հագէք Տէր
Յիսուս Քրիստոսը, եւ մի՛ մտադրէք մարմինին
ցանկութիւնները գոհացնել:

14 Ընդունեցէ՛ք հաւատքի մէջ տկար եղողը՝
առանց քննադատելու կարծիքները. 2 քանի որ
մէկը կը հաւատայ թէ ամէն բան կրնայ ուտել,
իսկ ուրիշ մը՝ որ տկար է՝ բանջարեղէն կ'ուտէ:
3 Ա՛ն որ կ'ուտէ՝ թող չանարգէ չուտողը, եւ ան
որ չ'ուտեր՝ թող չդատէ ուտողը, որովհետեւ
Աստուած ընդունած է զայն: 4 Դուն ո՞վ ես՝ որ կը
դատես ուրիշին ծառան. հաստատուն կենայ կամ
իյնայ՝ իր իսկական Տէրոջ համար է: Բայց կանգուն
պիտի պահուի, որովհետեւ Աստուած կարող է
կանգուն պահել զայն: 5 Մէկը կը նկատէ օր մը
ուրիշէ մը գերադաս, միւսն ալ կը նկատէ բոլոր
օրերը հաւասար. իւրաքանչիւրը լման համոզուած
թող ըլլայ իր միտքին մէջ: 6 Ա՛ն որ համարում

կ'ընծայէ մէկ օրուան՝ Տէրոջ համար համարում
կ'ընծայէ, իսկ ան որ համարում չ'ընծայեր մէկ
օրուան, Տէրոջ համար համարում չ'ընծայեր:
Ան որ կ'ուտէ՝ Տէրոջ համար կ'ուտէ, քանի որ
Աստուծմէ շնորհակալ կ'ըլլայ. իսկ ան որ չ'ուտեր,
Տէրոջ համար չ'ուտեր, բայց Աստուծմէ շնորհակալ
կ'ըլլայ: **7** Արդարեւ մեզմէ ոչ մէկը ինքնիրեն
համար կ'ապրի, կամ ինքնիրեն համար կը մեռնի.
8 Քանի որ եթէ ապրինք՝ Տէրոջ համար կ'ապրինք,
ու եթէ մեռնինք՝ Տէրոջ համար կը մեռնինք:
Ուրեմն թէ ապրինք եւ թէ մեռնինք՝ մենք Տէրոջն
ենք: **9** Որովհետեւ Քրիստոս սա նպատակով
մեռաւ ու վերապրեցաւ, որպէսզի Տէր ըլլայ թէ
մեռելներուն եւ թէ ողջերուն: **10** Իսկ դուն ինչո՞ւ կը
դատես եղբայրդ, կամ ինչո՞ւ կ'անարգես եղբայրդ,
քանի բոլորս ալ պիտի ներկայանանք Քրիստոսի
դատարանը: **11** Արդարեւ գրուած է. «Ես կ'ապրիմ,
- կ'ըսէ Տէրը.- ամէն ծունկ պիտի կքի իմ առջեւ,
եւ ամէն լեզու պիտի դաւանի զիս իբր Աստուած»:
12 Ուրեմն մեզմէ իւրաքանչիւրը հաշիւ պիտի
տայ Աստուծոյ՝ ինքնիրեն համար: **13** Ուստի ան
չդատենք զիրար. այլ մանաւանդ սա վճռեցէք,
որ ոչ մէկը սայթաքում կամ զայթակողութիւն դնէ
իր եղբօր առջեւ: **14** Գիտե՛մ, ու համոզուած եմ
Տէր Յիսուսով, թէ ոչինչ ինքնիրմէ պիղծ է. բայց
ո՞վ որ պիղծ կը սեպէ որեւէ բան, անոր համար
պիղծ է ատիկա: **15** Սակայն եթէ եղբայրդ տրտմի
կերակուրի համար, ան սիրով չես ընթանար. քու
կերակուրովդ մի կորսնցներ ան՝ որուն համար

Քրիստոս մեռաւ: **16** Ուրեմն հայհոյութիւն թող չըլլայ ձեր բարիին համար, **17** քանի որ Աստուծոյ թագաւորութիւնը կերակուր ու խմելիք չէ, հապա արդարութիւն, խաղաղութիւն եւ ուրախութիւն՝ Սուրբ Հոգիով: **18** Արդարեւ ո՛վ որ այս կերպով Քրիստոսի կը ծառայէ՝ Աստուծոյ հաճելի ու մարդոցմէ գնահատուած է: **19** Ուրեմն հետամո՛ւտ ըլլանք այն բաներուն՝ որոնք խաղաղութիւն կը հայթայթեն, եւ այն բաներուն՝ որոնցմով շինութիւն կ'ըլլայ իրարու: **20** Մի՛ քանդէք Աստուծոյ գործը կերակուրի համար: Արդարեւ բոլոր բաները մաքուր են. սակայն գէշ են այն մարդուն համար՝ որ կ'ուտէ զայթակդեցնելով: **21** Լաւ է ո՛չ միս ուտել, ո՛չ գինի խմել, ո՛չ ալ որեւէ բան ընել՝ որով եղբայրդ կը սայթաքի, կը զայթակդի կամ կը տկարանայ: **22** Դուն հաւանք ունիս. քեզի վերապահէ զայն՝ Աստուծոյ առջեւ. երանի՜ անոր, որ չի դատապարտեր ինքզինք անով՝ որ ինք կը գնահատէ՞: **23** Բայց ան որ կը տատամսի, եթէ ուտէ՝ կը դատապարտուի, քանի որ հաւատքով չէ որ կ'ուտէ. արդարեւ ամէն ինչ որ հաւատքով չէ՝ մեղք է:

15 Ուստի մենք, որ զօրաւոր ենք, պարտաւոր ենք կրել տկարներուն տկարութիւնը, եւ ո՛չ թէ հաճեցնել մենք մեզ: **2** Մեզմէ իւրաքանչիւրը թող հաճեցնէ իր ընկերը՝ շինութեան համար, անոր բարիքին համար: **3** Քանի որ Քրիստոս ալ չհաճեցուց ինքզինք, հապա՝ ինչպէս գրուած է. «Քեզ անարգողներուն նախատինքները ինկան

իմ վրաս»: 4 Որովհետեւ նախապէս գրուած ամէն ինչ՝ գրուեցաւ որ մենք սորվինք, որպէսզի յոյս ունենանք՝ համբերութեամբ ու Գիրքերուն մխիթարութեամբ: 5 Ուրեմն համբերութեան ու մխիթարութեան Աստուածը թող շնորհէ ձեզի համախոհ ըլլալ իրարու հետ՝ Քրիստոս Յիսուսի համաձայն, 6 որպէսզի միաբան ու միաբերան փառաբանէք Աստուած, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը: 7 Ուստի ընդունեցէ՛ք զիրար, ինչպէս Քրիստոս ալ ընդունեց մեզ՝ Աստուծոյ փառքին համար: 8 Արդարեւ կ'ըսեմ թէ Յիսուս Քրիստոս սպասարկու եղաւ թլփատութեան՝ Աստուծոյ ճշմարտութեան համար, որպէսզի հաստատէ նախահայրերուն տրուած խոստումները 9 եւ հեթանոսները Աստուած փառաբանեն՝ իր ողորմութեան համար, ինչպէս գրուած է. «Ասոր համար պիտի ներքողեմ քեզ հեթանոսներուն մէջ, եւ սաղմոս պիտի երգեմ քու անունիդ»: 10 Դարձեալ կ'ըսեմ. «Հեթանոսներ, ուրախացէ՛ք անոր ժողովուրդին հետ»: 11 Եւ դարձեալ. «Գովաբանեցէ՛ք Տէրը, բոլոր հեթանոսներ, ու գովեցէ՛ք զայն, բոլոր ժողովուրդներ»: 12 Դարձեալ Եսայի կ'ըսեմ. «Յեսսէի մէկ արմատը պիտի ըլլայ, եւ կանգնելով՝ հեթանոսներուն վրայ պիտի իշխէ. անոր պիտի յուսան հեթանոսները»: 13 Ուրեմն յոյսի Աստուածը թող լեցնէ ձեզ ամէն ուրախութեամբ ու խաղաղութեամբ՝ ձեր հաւատքին համեմատ, որպէսզի ձեր յոյսը առատանայ Սուրբ Հոգիին

գորութեամբ: 14 Ես ինքս ալ համոզուած եմ ձեր մասին, իմ եղբայրներս, թէ դժբալ լի էք բարութեամբ, ամէն գիտութեամբ լեցուած, եւ կրնաք զիրար խրատել: 15 Սակայն, եղբայրներ, կերպով մը աւելի՛ յանդգնութեամբ գրեցի ձեզի, իբր թէ յիշեցնելով ձեզի, Աստուծոյ ինծի տրուած շնորհքին պատճառով՝ 16 որ Յիսուս Քրիստոսի պաշտօնեան ըլլամ հեթանոսներուն մէջ, Աստուծոյ աւետարանին քահանայութիւնը կատարելով, որպէսզի հեթանոսները ըլլան ընդունելի ընծայ՝ Սուրբ Հոգիով սրբացած: 17 Ուրեմն Քրիստոս Յիսուսի միջոցով պատճառունիմ պարծենալու Աստուծոյ վերաբերող բաներուն մէջ: 18 Բայց չեմ յանդգնիր խօսիլ այն բաներէն որեւէ մէկուն մասին, որ Քրիստոս ինձմով գործադրած չէ հեթանոսները հնազանդեցնելու համար, խօսքով ու գործով, 19 զօրաւոր նշաններով ու սքանչելիքներով, Աստուծոյ Հոգիին գորութեամբ. այնպէս որ, սկսելով Երուսաղէմէն եւ անոր շրջակայքէն՝ մինչեւ Իլլիւրիկոսմ, լիովին քարոզեցի Քրիստոսի աւետարանը: 20 Այսպէս, պատիւ համարեցի աւետարանել հոն՝ ուր Քրիստոս քարոզուած չէր, որպէսզի ուրիշի մը դրած հիմին վրայ չկառուցանեմ, հապա՝ ինչպէս գրուած է. 21 «Անոնք՝ որոնց չէր պատմուած անոր մասին՝ պիտի տեսնեն, եւ անոնք որ չէին լսած՝ պիտի հասկնան»: 22 Ատոր համար ալ շատ անգամ արգիլուեցայ ձեզի գալէ: 23 Իսկ հիմա, այս կողմերը այլեւս քարոզելու տեղ

չունենալով, ու շատ տարիներէ ի վեր տենչալով ձեզի գալ, 24 երբ դէպի Սպանիա ճամբորդեմ՝ կը յուսամ ճամբորդութեանս ընթացքին ձեզի հանդիպիլ, ու ձեզմէ ուղարկուած հոն երթալ, անշուշտ նախ ձեզմով մասամբ յագենալէ ետք: 25 Իսկ հիմա Երուսաղէմ կ'երթամ՝ սուրբերուն սպասարկելու: 26 Որովհետեւ Մակեդոնացիներն ու Աքայիացիները բարեհաճեցան հաղորդակից ըլլալ Երուսաղէմ եղող աղքատ սուրբերու կարիքներուն: 27 Իսկապէս բարեհաճեցան, եւ անոնց պարտական ալ են: Որովհետեւ եթէ հեթանոսները հաղորդակցեցան անոնց հոգեւոր բաներուն, պարտաւոր են նաեւ օգնել անոնց՝ մարմնաւոր բաներուն մէջ: 28 Ուրեմն երբ կատարեմ ասիկա եւ կնքեմ անոնց այս պտուղը, Սպանիա պիտի երթամ ձեր քովէն անցնելով: 29 Եւ գիտեմ թէ երբ գամ ձեզի՝ պիտի գամ Քրիստոսի աւետարանին օրհնութեան լիութեամբ: 30 Կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, մեր Տէրօջմով՝ Յիսուս Քրիստոսով ու Յոգիին սիրով, որ պայքարիք ինծի հետ ձեր աղօթքներուն մէջ՝ որոնք Աստուծոյ ուղղուած են ինծի համար, 31 որպէսզի ազատիմ Յրեաստանի անհնազանդներէն, եւ սուրբերէն ընդունուի Երուսաղէմի մէջ ընելիք իմ սպասարկութիւնս, 32 ու ես ուրախութեամբ գամ ձեզի Աստուծոյ կամքով, եւ հանգստանամ ձեզի հետ: 33 Խաղաղութեան Աստուածը ձեր բոլորին հետ: Ամէն:

16 Ձեզի կը յանձնարարեմ մեր Փիբէ քոյրը, որ Կենքրեայի եկեղեցիին սարկաւագուհին է. 2 որպէսզի ընդունիք զինք Տէրոջմով՝ ինչպէս արժանավայել է սուրբերուն, եւ օգնէք անոր՝ ինչ բանի մէջ որ պէտք ունենայ ձեզի. քանի որ ինք շատերու հոգատար եղաւ, նաեւ ինծի: 3 Բարեւեցէք Պրիսկէն եւ Ակիւղասը՝ Քրիստոս Յիսուսով իմ գործակիցներս, 4 (որոնք վտանգի մէջ դրին իրենց վիզերը՝ իմ անձիս համար. որոնցմէ ոչ միայն են շնորհակալ եմ, հապա նաեւ հեթանոսներուն բոլոր եկեղեցիները,) 5 նմանապէս եկեղեցին՝ որ անոնց տան մէջ է: Բարեւեցէք Եպենետոսը՝ իմ սիրելիս, որ Աքայիայի երախայրիքն է Քրիստոսի համար: 6 Բարեւեցէք Մարիամը, որ շատ աշխատեցաւ մեզի համար: 7 Բարեւեցէք Անդրոնիկոսն ու Յունիան, իմ ազգականներս ու գերութեան ընկերներս, որոնք երեւելի են առաքելներուն մէջ եւ Քրիստոսի պատկանեցան ինձմէ ալ առաջ: 8 Բարեւեցէք Ամպղիան՝ իմ սիրելիս Տէրոջմով: 9 Բարեւեցէք Ուրբանոսը՝ մեր գործակիցը Քրիստոսով, եւ Ստաբէսը՝ իմ սիրելիս: 10 Բարեւեցէք Ապելետը, որ գնահատուած է Քրիստոսով: 11 Բարեւեցէք անոնք՝ որ Արիստաբոլոսի տունէն են: Բարեւեցէք Յերովդիոնը՝ իմ ազգականս: Բարեւեցէք Նարկէսի տունէն եղողները՝ որոնք Տէրոջն են: 12 Բարեւեցէք Տրիփոնը եւ Տրիփոսը, որոնք կ'աշխատին Տէրոջմով: Բարեւեցէք սիրելի Պերսիդէն, որ շատ աշխատեցաւ

Տէրոջմով: **13** Բարեւեցէք Ռուփոսը՝ Տէրոջմով ընտրեալը, եւ անոր մայրը՝ որ իմս ալ է: **14** Բարեւեցէք Ասինկրիտոսը, Փղեգոնը, Յերմասը, Պատրոքան, Յերմէսն ու անոնց հետ եղող եղբայրները: **15** Բարեւեցէք Փիղողոգոսը եւ Յուլիան, Ներէոսն ու անոր քոյրը, Ողիմպասը եւ անոնց հետ եղող բոլոր սուրբերը: **16** Բարեւեցէք զիրար սուրբ համբոյրով: Քրիստոսի (բոլոր) եկեղեցիները կը բարեւեն ձեզ: **17** Կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, ուշադիր եղէք անոնց՝ որ կը գոյացնեն բաժանումներ եւ գայթակղութիւններ, հակառակ ձեր սորված ուսուցումին, ու հեռացէք անոնցմէ: **18** Որովհետեւ այդպիսիները կը ծառայեն ոչ թէ մեր Տէրոջ՝ Քրիստոսի, հապա իրենց որովայնին, եւ անմեղներուն սիրտերը կը խաբեն բարի խօսքերով ու գովեստներով: **19** Զանի որ ձեր հնազանդութիւնը բոլորին ծանօթ է, ես ալ ձեզի համար ուրախ եմ. բայց նաեւ կ'ուզեմ՝ որ դուք իմաստուն ըլլաք բարիին հանդէպ, եւ աննենգ՝ չարին: **20** Եւ խաղաղութեան Աստուածը շուտով պիտի ջախջախէ Սատանան ձեր ոտքերուն տակ: Մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզի հետ: **21** Տիմոթէոս՝ իմ գործակիցս, եւ Ղուկիոս, Յասոն ու Սոսիպատրոս՝ իմ ազգականներս, կը բարեւեն ձեզ: **22** (Ես ալ՝ Տերտիոս, որ գրեցի այս նամակը, կը բարեւեմ ձեզ Տէրոջմով:) **23** Գայիոս՝ իմ եւ ամբողջ եկեղեցիին հիւրընկալը՝ կը բարեւէ ձեզ: Երաստոս՝ քաղաքին գանձապետը՝ կը բարեւէ ձեզ, նաեւ Կուարտոս եղբայրը: **24** Մեր

Տերոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին
հետ: Ամեն: 25 Եւ հիմա՝ անոր, որ կարող է ձեզ
ամրացնել՝ իմ աւետարանիս ու Յիսուս Քրիստոսի
քարոզութեան համաձայն, այն խորհուրդին
յայտնութեան համաձայն՝ որ լռութեան մէջ
մնացած էր դարերու ժամանակներէն ի վեր,
(aiōnios g166) 26 բայց հիմա բացայայտ եղաւ ու
Մարգարէներուն գիրքերով - յաւիտենական
Աստուծոյ հրամանին համաձայն - բոլոր
հեթանոսներուն գիտցուեցաւ՝ հաւատքի
հնազանդութեան համար, (aiōnios g166) 27 միակ
իմաստուն Աստուծոյ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով
փառք յաւիտեան: Ամեն: (aiōn g165)

ԱՌԱՋԻՆ ԿՈՐՆԹԱՅԻՍ

1 Պօղոս, կանչուած Աստուծոյ կամբով՝ Յիսուս Բրիստոսի առաքեալ ըլլալու, ու Սոսթենէս եղբայրը, **2** Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցիին, անոնց՝ որ Բրիստոս Յիսուսով սրբացած են, կանչուած՝ սուրբեր ըլլալու բոլոր անոնց հետ, որ ամէն տեղ կը կանչեն մեր Տէրոջ՝ Յիսուս Բրիստոսի անունը, թէ՛ իրենց եւ թէ մեր Տէրոջ. **3** շնորհք ու խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Զօրմէն, եւ Տէր Յիսուս Բրիստոսէ: **4** Ամէն ատեն շնորհակալ կ'ըլլամ իմ Աստուծմէս ձեզի համար, քանի որ Աստուծոյ շնորհքը տրուած է ձեզի Բրիստոս Յիսուսով, **5** ու դուք ամէն քանի մէջ հարստացած էք անով՝ ամէն խօսքով եւ ամէն գիտութեամբ: **6** Այսպէս՝ Բրիստոսի վկայութիւնը հաստատուեցաւ ձեր մէջ, **7** որպէսզի ոչ մէկ շնորհ պակսի ձեզի, մինչ կը սպասէք մեր Տէրոջ՝ Յիսուս Բրիստոսի յայտնութեան: **8** Ինք նաեւ պիտի հաստատէ ձեզ մինչեւ վախճանը, որ անմեղադրելի ըլլաք մեր Տէրոջ՝ Յիսուս Բրիստոսի օրը: **9** Հաւատարիմ է Աստուած, որու միջոցով կանչուեցաք հաղորդակից ըլլալու իր Որդիին, մեր Տէրոջ՝ Յիսուս Բրիստոսի: **10** Կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, մեր Տէրոջ՝ Յիսուս Բրիստոսի անունով, որ դուք բոլորդ ունենաք նոյն խօսքը, ու պառակտումներ չըլլան ձեր մէջ. հապա հաստատուած ըլլաք նոյն միտքով ու նոյն դատումով: **11** Որովհետեւ, եղբայրներս, ձեր մասին բացայայտուեցաւ ինծի

Քողուէի տունէն եղողներէն՝ թէ կռիւներ կան ձեր մէջ: **12** Հիմա սա՛ կ'ըսեմ ձեզի. իբր թէ ձեզմէ իւրաքանչիւրը կ'ըսէ. «Ես Պօղոսեան եմ», կամ. «Ես Ապողոսեան եմ», կամ. «Ես Կեփասեան եմ», կամ. «Ես Քրիստոսեան եմ»: **13** Միթէ Քրիստոս բաժնուա՞ծ է. միթէ Պօղոսն խաչուեցաւ ձեզի համար, կամ թէ Պօղոսն անունով մկրտուեցաք: **14** Շնորհակալ կ'ըլլամ Աստուծոյ, որ ձեզմէ ո՛չ մէկը մկրտեցի, բայց միայն Կրիսպոսը եւ Գայիոսը. որպէսզի ո՛չ մէկը ըսէ **15** թէ ես մկրտած եմ իմ անունովս: **16** Ստեփանասի ընտանիքն ալ մկրտեցի: Չեմ գիտեր ամենեւին՝ թէ ա՛յլ ուրիշ մէկը մկրտեցի: **17** Որովհետեւ Քրիստոս զրկեց զիս ո՛չ թէ մկրտելու, հապա աւետարանելու. բայց ո՛չ խօսքերու իմաստութեամբ, որպէսզի Քրիստոսի խաչը ընդունայն չըլլայ: **18** Արդարեւ խաչին քարոզութիւնը յիմարութիւն է անոնց համար՝ որ կը կորսուին, իսկ մեզի համար՝ որ փրկուած ենք՝ Աստուծոյ զօրութիւնն է: **19** Որովհետեւ գրուած է. «Իմաստուններուն իմաստութիւնը պիտի կորսնցնեն, ու խելացիներուն խելքը պիտի ջնջեն»:**20** Ո՛ր է իմաստունը, ո՛ր է դպիրը, ո՛ր է այս աշխարհի վիճաբանողը. միթէ Աստուած չիմարացո՞ւց այս աշխարհի իմաստութիւնը: **(aiōn g165)** **21** Արդարեւ՝ քանի աշխարհը իր իմաստութեամբ չճանչցաւ Աստուած՝ անոր իմաստութեան մէջ, Աստուած բարեհաճեցաւ քարոզութեան յիմարութեամբ փրկել անոնք՝ որ կը հաւատան. **22** որովհետեւ Հրեաները նշան

կը պահանջեն, եւ Յոյները իմաստութիւն կը փնտռեն, 23 իսկ մենք կը քարոզենք խաչեալ Քրիստոսը, գայթակղութիւն՝ Յրեաներուն, ու յիմարութիւն՝ Յոյներուն. 24 բայց անոնց որ կանչուած են, թէ Յրեաներուն եւ թէ Յոյներուն, Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը. 25 որովհետեւ Աստուծոյ յիմարութիւնը մարդոցմէ աւելի իմաստուն է, եւ Աստուծոյ տկարութիւնը մարդոցմէ աւելի ուժեղ է: 26 Արդարեւ դուք կը տեսնէք ձեր կոչումը, եղբայրներ, թէ ինչպէս ոչ թէ շատ իմաստուններ՝ մարմինի համեմատ, շատ զօրաւորներ, շատ ազնուականներ կանչուեցան, 27 հապա Աստուած ընտրեց աշխարհի յիմարները՝ որպէսզի ամօթահար ընէ իմաստունները: Աստուած ընտրեց աշխարհի տկարները՝ որպէսզի ամօթահար ընէ հզօրները. 28 Աստուած ընտրեց աշխարհի ստորինները, անարգուածներն ու բան մը չեղողները, որպէսզի ոչնչացնէ բան մը եղողները. 29 որպէսզի ոչ մէկ մարմին պարծենայ Աստուծոյ առջեւ: 30 Բայց դուք Քրիստոս Յիսուսով անկէ էք, որ Աստուծմէ մեզի համար իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն եւ ազատագրութիւն եղաւ. 31 որպէսզի, ինչպէս գրուած է. «Ո՛վ որ պարծենայ, թող պարծենայ Տէրոջմով»:

2 Ու ես, եղբայրներ, երբ եկայ ձեզի, չեկայ խօսքի կամ իմաստութեան գերազանցութեամբ՝ հռչակելու ձեզի Աստուծոյ վկայութիւնը. 2

որովհետեւ որոշեցի ուրիշ որեւէ բան չգիտնալ ձեր մէջ, բայց միայն Յիսուս Քրիստոսը, եւ զայն՝ խաչուած: **3** Ես ձեզի հետ եղայ տկարութեամբ, ահով ու շատ դողով. **4** եւ իմ խօսքս ու քարոզութիւնս՝ ոչ թէ մարդկային իմաստութեան համոզիչ խօսքերով էին, հապա՝ Յոգիին եւ զօրութեան ապացոյցով. **5** որպէսզի ձեր հաւատքը ըլլայ ոչ թէ մարդոց իմաստութեամբ, հապա՝ Աստուծոյ զօրութեամբ: **6** Սակայն կատարեալներուն կը խօսինք իմաստութեան մասին. բայց ոչ այս աշխարհի, ոչ ալ այս աշխարհի ոչնչացող իշխաններուն իմաստութեան մասին, (aiðn g165) **7** հապա՝ Աստուծոյ խորհրդաւոր եւ ծածկուած իմաստութեան մասին կը խօսինք, որ Աստուած դարերէն առաջ սահմանեց մեր փառքին համար: (aiðn g165) **8** Այս աշխարհի իշխաններէն ոչ մէկը ճանչցաւ զայն. քանի որ եթէ ճանչցած ըլլային, չէին խաչեր փառքի Տէրը: (aiðn g165) **9** Բայց ինչպէս գրուած է. «Աչք չէ տեսեր, ականջ չէ լսեր, ոչ ալ մարդու սիրտին մէջ մտեր են այն բաները, որ Աստուած պատրաստած է զինք սիրողներուն»: **10** Սակայն Աստուած զանոնք յայտնած է մեզի իր Յոգիով, որովհետեւ Յոգին կը զննէ բոլոր բաները, մինչեւ անգամ Աստուծոյ խորունկ բաները: **11** Արդարեւ ո՞վ գիտէ մարդուն բաները, բայց միայն մարդուն հոգին՝ որ իր մէջն է. նոյնպէս ալ ոչ մէկը գիտէ Աստուծոյ բաները, այլ միայն Աստուծոյ Յոգին: **12** Իսկ մենք ստացանք ոչ թէ այս աշխարհի հոգին,

հապա այն Հոգին՝ որ Աստուծմէ Է. որպէսզի մենք
զիտնանք այն բաները՝ որ Աստուած շնորհեց
մեզի. **13** նաեւ անոնց մասին կը խօսինք, ոչ թէ
այն խօսքերով՝ որ մարդկային իմաստութիւնը
կը սորվեցնէ, հապա Հոգիին սորվեցուցածներով,
համեմատելով հոգեւոր բաները հոգեւորի հետ:
14 Իսկ շնչաւոր մարդը չ'ընդունիր Աստուծոյ
Հոգիին բաները, որովհետեւ անոնք իրեն համար
յիմարութիւն են, ոչ ալ կրնայ հասկնալ, քանի որ կը
զննուին հոգեւոր կերպով: **15** Բայց ան որ հոգեւոր
Է՝ կը զննէ ամէն բան, սակայն ինք կը զննուի ոչ
մէկէն: **16** Որովհետեւ ո՞վ գիտցաւ Տէրոջ միտքը,
որ սորվեցնէ անոր. բայց մենք ունինք Քրիստոսի
միտքը:

3 Բայց ես, եղբայրներ, չկրցայ խօսիլ ձեզի՝ որպէս
հոգեւորներու, հապա որպէս մարմնաւորներու,
նոյնիսկ որպէս Քրիստոսով երախաներու: **2**
Ձեզ սնուցանեցի կաթով, ոչ թէ կերակուրով.
որովհետեւ մինչեւ հիմա չէիք կրնար հանդուրժել,
եւ ոչ իսկ ներկայիս կրնաք, քանի որ տակաւին
մարմնաւոր էք: **3** Արդարեւ, քանի տակաւին
նախանձ, կռիւ եւ բաժանումներ կան ձեր մէջ,
միթէ մարմնաւոր չէք ու մարդկօրէն չէք ընթանար:
4 Որովհետեւ երբ ձեզմէ մէկը ըսէ. «Ես Պօղոսեան
եմ», եւ միւսը. «Ես Ապողոսեան եմ», միթէ
մարմնաւոր չէք: **5** Իսկ ո՞վ Է Պօղոս, կամ ո՞վ Է
Ապողոս. լոկ սպասարկուներ, որոնցմով դուք
հաւատացիք՝ ինչպէս Տէրը տուաւ անոնցմէ
իւրաքանչիւրին: **6** Ես տնկեցի, Ապողոս ջրեց,

բայց Աստուած աճեցուց: 7 Ուստի ո՛չ տնկողը բան մըն է, եւ ո՛չ ջրողը, հապա Աստուած՝ որ աճեցուց: 8 Ուրեմն տնկողն ու ջրողը մէկ են, եւ իւրաքանչիւրը պիտի ստանայ իր վարձատրութիւնը՝ իր աշխատանքին համեմատ. 9 որովհետեւ մենք Աստուծոյ գործակից ենք. դուք Աստուծոյ մշակութիւնն էք, Աստուծոյ շինուածքն էք: 10 Աստուծոյ շնորհքին համեմատ՝ որ տրուեցաւ ինծի, հիմ դրի իմաստուն ճարտարապետի մը պէս, բայց ուրիշ մը կը շինէ անոր վրայ. սակայն իւրաքանչիւրը թող զգուշանայ թէ ինչպէս կը շինէ անոր վրայ: 11 Արդարեւ ո՛չ մէկը ակ ուրիշ հիմ կրնայ դնել՝ դրուածէն զատ, որ Յիսուս Քրիստոսն է: 12 Եթէ մէկը այս հիմին վրայ շինէ ոսկիով, արծաթով, պատուական քարերով, փայտով, խարով, խոզանով, 13 իւրաքանչիւրին գործը բացայայտ պիտի ըլլայ. քանի որ օրը պիտի բացայայտէ, որովհետեւ կրակով պիտի յայտնուի եւ իւրաքանչիւրին գործին ինչպէս ըլլալը կրակը պիտի փորձարկէ: 14 Եթէ մէկուն գործը՝ որ շինած է անոր վրայ՝ մնայ, ինք վարձատրութիւն պիտի ստանայ. 15 եթէ մէկուն գործը այրի՝ պիտի կորսնցնէ, իսկ ինք պիտի փրկուի, սակայն իբր թէ կրակի մէջէն: 16 Չէք գիտեր թէ դուք Աստուծոյ տաճարն էք, եւ Աստուծոյ Հոգին կը բնակի ձեր մէջ: 17 Եթէ մէկը ապականէ Աստուծոյ տաճարը, Աստուած ալ պիտի քանդէ զինք. որովհետեւ Աստուծոյ տաճարը սուրբ է, եւ դո՛ւք էք այդ տաճարը:

18 Ո՛հ մեկը թող խաբէ ինքզինք: Եթէ ձեզմէ մեկը կը կարծէ իմաստուն ըլլալ այս աշխարհի մէջ, թող յիմար դառնայ՝ որպէսզի իմաստուն ըլլայ: (a18n g165) 19 Որովհետեւ այս աշխարհի իմաստութիւնը՝ Աստուծոյ քով յիմարութիւն է. բանի որ գրուած է. «Ան իմաստունները կը բռնէ իրենց խորամանկութեան մէջ»: 20 Եւ դարձեալ. «Տէրը գիտէ իմաստուններուն մտածումները՝ որ փութ են»: 21 Հետեւաբար ո՛հ մեկը թող պարծենայ մարդոցմով. 22 որովհետեւ ամէն բան ձերն է. թէ՛ Պօղոս, թէ՛ Ապողոս, թէ՛ Կեփաս, թէ՛ աշխարհը, թէ՛ կեանքը, թէ՛ մահը, թէ՛ ներկայ բաները եւ թէ՛ գալիքները: Ամէն բան ձերն է. 23 դուք ալ Քրիստոսինն էք, ու Քրիստոս՝ Աստուծոյ:

4 Մարդիկ թող սեպեն մեզ՝ որպէս Քրիստոսի սպասաւորներն ու Աստուծոյ խորհուրդներուն տնտեսները: 2 Իսկ տնտեսէ մը կը պահանջուի որ հաւատարիմ գտնուի: 3 Բայց ինծի համար չնչին բան է որ դատուիմ ձեզմէ, կամ մարդոց դատաստանէն. նոյնիսկ ե՛ս չեմ դատեր զիս. 4 (որովհետեւ ես ոչինչով գիտակից եմ իմ մասիս. բայց ո՛հ թէ ասով կ'արդարանամ.) հապա զիս դատողը՝ Տէրն է: 5 Հետեւաբար ատենէն առաջ մի՛ դատեք՝ մինչեւ որ Տէրը գայ. ինք պիտի լուսաւորէ խաւարին գաղտնիքը ու երեւան պիտի հանէ սիրտերուն ծրագիրները, եւ այն ատեն իւրաքանչիւրը գովեստ պիտի ունենայ Աստուծմէ: 6 Այս բաները, եղբայրներ, օրինակով մը կիրարկեցի՝ ինծի եւ Ապողոսի՝ ձեզի համար,

որ դուք մեզմով սորվիք գրուածէն աւելի բան մը չմտածել մարդոց մասին, որպէսզի ձեզմէ ոչ մէկը հպարտանայ մէկուն համար ուրիշի մը դէմ: **7** Որովհետեւ ո՛վ է ան՝ որ տարբեր կ'ընէ քեզ ուրիշներէն, եւ ինչ ունիս՝ որ չես ստացած. ու եթէ ստացար, ինչո՞ւ կը պարծենաս՝ իբր թէ ստացած չըլլաս: **8** Արդէն յագեցած էք, արդէն հարուստ էք, առանց մեզի թագաւորեցիք. ու երանի՜ թէ թագաւորէիք, որպէսզի մենք ալ թագաւորէինք ձեզի հետ, **9** քանի որ կը կարծեմ թէ Աստուած յետիններ ըրաւ մեզ՝ առաքեալներս, մահապարտներու պէս. որովհետեւ տեսարան եղանք աշխարհին, հրեշտակներուն ու մարդոց: **10** Մենք յիմարներ ենք Քրիստոսի համար, իսկ դուք՝ իմաստուններ Քրիստոսով: Մենք՝ տկար, բայց դուք՝ ուժեղ: Դուք՝ փառաւորուած, իսկ մենք՝ անպատուուած: **11** Մինչեւ այս ժամը թէ կ'անօթենանք, թէ կը ծարաւնանք, թէ մերկ կը մնանք, թէ կը կռփահարուինք, թէ որոշ բնակավայր չունինք, **12** թէ ալ կը տքնինք՝ մեր ձեռքերով գործելով: Երբ մեզ հեզնեն՝ կ'օրհնենք. երբ հալածեն՝ կը հանդուրժենք. **13** երբ հայիոյեն՝ կ'աղաչենք: Աշխարհի աղտեղութիւնը դարձանք, բոլորին աւելցուքը՝ մինչեւ հիմա: **14** Այս բաները կը գրեմ՝ ոչ թէ ձեզ ամչցնելու համար, հապա կը խրատեմ ձեզ՝ սիրելի զաւակներուս պէս: **15** Որովհետեւ՝ նոյնիսկ եթէ դուք տասը հազար վարժապետներ ունենաք Քրիստոսով, ոչ թէ շատ հայրեր ունիք. քանի որ Քրիստոս Յիսուսով էս

ծնայ ձեզ՝ աւետարանին միջոցով: **16** Ուրեմն կ'աղաչեմ ձեզի, նմանեցէ՛ք ինձի: **17** Ասոր համար ձեզի դրկեցի Տիմոթեոսը, որ սիրելի զաւակս է, ու հաւատարիմ է Տէրոջմով. ան պիտի վերյիշեցնէ ձեզի իմ ճամբաներս՝ որ Քրիստոսի մէջ են, ինչպէս ամենուրեք բոլոր եկեղեցիներուն մէջ կը սորվեցնեմ: **18** Ոմանք հպարտացան, որպէս թէ ես պիտի չգամ ձեզի: **19** Բայց շուտով պիտի գամ ձեզի, եթէ Տէրը կամենայ, եւ պիտի հասկնամ ո՛չ թէ հպարտացողներուն խօսքերը, հապա զօրութիւնը: **20** Որովհետեւ Աստուծոյ թագաւորութիւնը ո՛չ թէ խօսքով է, հապա զօրութեամբ: **21** Ինչպէս կ'ուզէք. գաւազանով գամ ձեզի, թէ սիրով եւ հեզութեան հոգիով:

5 Առհասարակ կը լսուի թէ ձեր մէջ պոռնկութիւն կայ. եւ այնպիսի պոռնկութիւն՝ որ հեթանոսներուն մէջ իսկ չկայ, որպէս թէ մէկը ունենայ իր հօր կինը: **2** Ու դուք հպարտացած էք, փոխանակ սգալու, որպէսզի ձեր մէջէն վերցուի ան՝ որ այս արարքը կատարեց: **3** Արդարեւ ես - թէպէտ մարմինով բացակայ եմ, բայց հոգիով՝ ներկայ - արդէն իսկ դատեցի այսպիսի արարք գործողը, որպէս թէ ներկայ ըլլալով: **4** Մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի անունով, երբ հաւաքուիք՝ դուք եւ իմ հոգիս, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի զօրութեամբ, **5** մատնեցէ՛ք այդպիսի մէկը Սատանային՝ մարմինին աւերումին համար, որպէսզի հոգին փրկուի Տէր Յիսուսի օրը: **6** Այդ ձեր պարծանքը լաւ չէ: Չէ՛ք գիտեր թէ քիչ մը

խմորը՝ կը խմորէ ամբողջ զանգուածը: 7 Ուրեմն մաքրուեցէք հին խմորէն՝ որպէսզի ըլլաք նոր զանգուած մը, քանի որ անխմոր էք: Որովհետեւ Քրիստոս՝ մեր զատիկը՝ զոհուեցաւ մեզի համար. 8 հետեւաբար տօն կատարենք՝ ոչ թէ հին խմորով, ոչ ալ չարամտութեան եւ չարութեան խմորով, հապա անկեղծութեան ու ճշմարտութեան անխմոր հացով: 9 Գրեցի ձեզի նամակին մէջ, որ չյարաբերիք պոռնկողներուն հետ: 10 Սակայն ոչ անշուշտ այս աշխարհի պոռնկողներուն, կամ ազահներուն, կամ յափշտակողներուն, կամ կռապաշտներուն հետ. այլապէս՝ պարտաւոր պիտի ըլլայիք աշխարհէն դուրս ելլել: 11 Իսկ հիմա գրեցի ձեզի որ չյարաբերիք, եթէ ոեւէ մէկը՝ որ եղբայր կը կոչուի՝, ըլլայ պոռնկող, կամ ազահ, կամ կռապաշտ, կամ հեզնող, կամ արբեցող, կամ յափշտակող. այդպիսի մարդու հետ մի՛ ուտէք անգամ: 12 Որովհետեւ ինչ պէտք ունիմ դատելու դուրսիները. միթէ դուք չէք դատեր ներսիները. 13 իսկ Աստուած պիտի դատէ դուրսիները: Ուստի վերցուցէք չարը ձեր մէջէն:

6 Եթէ ձեզմէ մէկը խնդիր մը ունենայ ուրիշի մը հետ, միթէ կը յանդգնի անարդարներուն առջեւ դատուիլ, եւ ոչ թէ սուրբերուն առջեւ: 2 Չէք գիտեր թէ սուրբերը պիտի դատեն աշխարհը. ու եթէ աշխարհը կը դատուի ձեզմէ, դուք արժանի չէք դատելու չնչին խնդիրները: 3 Չէք գիտեր թէ մենք պիտի դատենք հրեշտակները. հապա որչափ աւելի այս կեանքին բաները: 4 Ուրեմն եթէ

դատեր ունի՞ք՝ այս կեանքի բաներուն համար,
 դատաւոր նշանակեցէք եկեղեցիին անարգները: **5**
 Ձեզ ամչցնելու համար կ'ըսեն. իրա՞մ իմաստուն մը
 չկայ ձեր մէջ, ո՛չ իսկ մէկ հատ, որ կարենայ վճռել
 իր եղբայրներուն միջեւ: **6** Հապա եղբայր՝ եղբօր
 հետ դատ կը վարէ, այն ալ՝ անհաւատներուն
 առջեւ: **7** Ուրեմն արդէն ծանր յանցանք մը կայ
 ձեր մէջ, քանի որ իրարու հետ դատեր ունիք.
 ինչո՞ւ փոխարէնը դուք չէք անիրաւուիր. ինչո՞ւ
 փոխարէնը դուք զրկանք չէք կրեր: **8** Նոյնիսկ դուք
 կ'անիրաւէք ու կը զրկէք, այն ալ՝ եղբայրներուն.
9 չէ՞ք գիտեր թէ անիրաւները պիտի չժառանգեն
 Աստուծոյ թագաւորութիւնը: Մի՞ մոլորի՞ք. ո՛չ
 պոռնկողները, ո՛չ կռապաշտները, ո՛չ շնացողները,
10 ո՛չ իգացեալները, ո՛չ արուագէտները, ո՛չ գողերը,
 ո՛չ ագահները, ո՛չ արբեցողները, ո՛չ հեգնողները, ո՛չ
 ալ յափշտակողները պիտի ժառանգեն Աստուծոյ
 թագաւորութիւնը: **11** Եւ ձեզմէ ոմանք այդպիսիներ
 էին. բայց լուացուեցաք, բայց սրբացաք, բայց
 արդարացաք Տէր Յիսուսի անունով ու մեր
 Աստուծոյն Հոգիով: **12** Ամեն բան ինծի արտօնուած
 է, բայց ամեն բան օգտակար չէ: Ամեն բան ինծի
 արտօնուած է, բայց ես ո՛չ մէկուն իշխանութեան
 տակ պիտի ըլլամ: **13** Կերակուրները փորին
 համար են, փորն ալ՝ կերակուրներուն. բայց
 Աստուած ասիկա՛ն ալ, անո՞նք ալ պիտի ոչնչացնէ:
 Իսկ մարմինը պոռնկութեան համար չէ, հապա՛
 Տէրոջ, ու Տէրը՝ մարմինին համար: **14** Եւ Աստուած՝
 որ յարուցանեց Տէրը, պիտի յարուցանէ նաեւ մե՛զ՝

իր զօրութեամբ: **15** Չէք գիտեր թե ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են: Ուրեմն Քրիստոսի անդամները առնելով պոռնիկի անդամներն ընեն: Ամենեւին: **16** Չէք գիտեր թե ան որ պոռնիկի կը միանայ, անոր հետ մէկ մարմին կ'ըլլայ. քանի որ Գիրքը կ'ըսէ. «Երկուքը պիտի ըլլան մէկ մարմին»: **17** Իսկ ան որ Տէրոջ կը միանայ, անոր հետ մէկ հոգի կ'ըլլայ: **18** Փախէ՛ք պոռնկութենէն: Ամեն մեղք՝ որ մարդ կը գործէ, իր մարմինէն դուրս է. բայց ան որ կը պոռնկի, կը մեղանչէ իր մարմինին դէմ: **19** Չէք գիտեր թե ձեր մարմինը տաճարն է Սուրբ Հոգիին՝ որ ձեր մէջն է. զայն Աստուծմէ ստացաք, եւ դուք ձեզի չէք պատկանիր, **20** քանի որ մեծ զինով մը գնուեցաք. ուստի փառաւորեցէ՛ք Աստուած ձեր մարմինին ու ձեր հոգիին մէջ, որոնք կը պատկանին Աստուծոյ:

7 Ուրեմն, ինչ կը վերաբերի այն բաներուն՝ որոնց մասին գրեցիք ինծի, լաւ է մարդուն համար՝ որ կնոջ չմերձենայ: **2** Բայց պոռնկութենէն խուսափելու համար՝ իւրաքանչիւրը թող ունենայ իր կինը, եւ ամեն կին թող ունենայ իր ամուսինը: **3** Ամուսինը թող հատուցանէ կնոջ ինչ որ կը պարտի, նմանապէս կինն ալ՝ իր ամուսինին: **4** Կինը իշխանութիւն չունի իր մարմինին վրայ, հապա՛հ ամուսինը. նմանապէս ամուսինն ալ իշխանութիւն չունի իր մարմինին վրայ, հապա՛հ կինը: **5** Մի՛ գրկէք զիրար, բայց միայն համաձայնութեամբ՝ ատենի մը համար, որ դուք ձեզ աղօթքի յատկացնէք ու դարձեալ գաք իրարու քով, որպէսզի Սատանան

չփորձէ ձեզ՝ ձեր անժուժկալութեան համար: **6**
 Ասիկա կ'ըսեն՝ արտօնելով, ոչ թէ հրամայելով:
7 Որովհետեւ կ'ուզէի որ բոլոր մարդիկ ըլլային
 ինծի պէս. բայց իւրաքանչիւրը ունի իր յատուկ
 շնորհը. Աստուծմէ, մէկը՝ այսպէս, իսկ միւսը՝
 այնպէս: **8** Ուստի կ'ըսեն ամուրիներուն եւ
 այրիներուն. «Լաւ կ'ըլլայ անոնց համար՝ եթէ
 մնան ինծի պէս»: **9** Բայց եթէ ժուժկալութիւն
 չունին՝ թող ամուսնանան. որովհետեւ աւելի
 լաւ է ամուսնանալ՝ քան բորբոքիլ: **10** Իսկ
 ամուսնացածներուն կը հրամայեմ, ոչ թէ ես,
 հապա՝ Տէրը. «Կինը թող չգատուի իր ամուսինէն,
11 (իսկ եթէ գատուի ալ՝ թող մնայ անամուսին,
 կամ հաշտուի իր ամուսինին հետ,) եւ ամուսինը
 թող չձգէ իր կինը»: **12** Բայց միւսներուն ես կ'ըսեմ,
 ոչ թէ Տէրը. «Եթէ եղբայր մը ունենայ անհաւատ
 կին մը եւ անոր հաճելի ըլլայ բնակիլ իրեն հետ,
 թող չձգէ զայն: **13** Եւ կին մը որ ունի անհաւատ
 ամուսին մը, եթէ անոր հաճելի ըլլայ բնակիլ իրեն
 հետ, թող չձգէ զայն»: **14** Որովհետեւ անհաւատ
 ամուսինը սրբացած է կնոջմով, եւ անհաւատ կինը
 սրբացած է ամուսինով: Այլապէս՝ ձեր զաւակները
 անմաքուր պիտի ըլլային. բայց հիմա սուրբ են:
15 Իսկ եթէ անհաւատը գատուի՝ թող գատուի:
 Եղբայր մը կամ քոյր մը ստրուկ չէ այդպիսի
 պարագաներու մէջ. սակայն Աստուած կանչեց
 մեզ խաղաղութեան: **16** Որովհետեւ դուն ինչ
 գիտես, կին. թերեւս պիտի փրկես ամուսինդ: Կամ
 դուն ինչ գիտես, մարդ. թերեւս պիտի փրկես կինդ:

17 Այլապէս՝ ինչպէս Տէրը բաշխեց իւրաքանչիւրին,
 ինչպէս Աստուած կանչեց իւրաքանչիւրը, այնպէս
 թող ընթանայ: Ես այսպէս կը պատուիրեմ բոլոր
 եկեղեցիներուն մէջ: 18 Եթէ թլփատուած մէկը
 կանչուեցաւ հաւատքի, թող անթլփատ չդառնայ:
 Եթէ մէկը կանչուեցաւ անթլփատութեան մէջ, թող
 չթլփատուի: 19 Որովհետեւ թլփատութիւնը բան
 մը չէ, եւ անթլփատութիւնն ալ բան մը չէ, հապա
 Աստուծոյ պատուիրաններուն պահպանումն է
 Էականը: 20 Իւրաքանչիւրը ինչ կոչումի մէջ որ
 կանչուեցաւ, թող մնայ անոր մէջ: 21 Ստրոճկ
 Էիր երբ կանչուեցար. հոգ մի ըներ այդ մասին.
 Բայց եթէ կրնաս ազատագրուիլ, առաւելապէս
 օգտուէ առիթէն: 22 Որովհետեւ ղվ որ կանչուած է
 Տէրոջմով՝ ստրուկ ըլլալով, Տէրոջ ազատագրեալն
 Է. նմանապէս ղվ որ կանչուած է՝ ազատ ըլլալով,
 Քրիստոսի ստրուկն է: 23 Դուք գնուեցաք մեծ
 գինով մը. մի ըլլաք մարդոց ստրուկ: 24 Եղբայրներ,
 իւրաքանչիւրը ինչ վիճակի մէջ որ կանչուեցաւ,
 թող մնայ անոր մէջ՝ Աստուծոյ հետ: 25 Կոյսերուն
 մասին Տէրոջմէն հրաման մը չունիմ. սակայն կը
 յայտնեմ իմ դատումս, իբր մէկը՝ որ ողորմութիւն
 գտած է Տէրոջմէն՝ հաւատարիմ ըլլալու: 26 Ուրեմն
 ես կը կարծեմ թէ սա լաւ է ներկայ հարկադրանքին
 պատճառով, այսինքն լաւ է մարդու մը՝ որ մնայ
 ինչպէս որ է՝: 27 Կապուամբ ես կնոջ. մի ջանար
 արձակուիլ: Արձակուամբ ես կնոջմէ մը. մի փնտռեր
 կին: 28 Իսկ եթէ ամուսնանաս՝ չես մեղանչեր.
 ու եթէ կոյսը ամուսնանայ՝ չի մեղանչեր: Բայց

այդպիսիները մարմինի մեջ տառապանք պիտի ունենան. իսկ ես կ'ուզեմ խնայել ձեզի: **29** Բայց սա կ'ըսեմ, եղբայրներ, թե ժամանակը կարճ է: Ա՛յ անոնք որ կին ունին, այնպես ըլլան՝ որպես թե չունին. **30** անոնք որ կու լան՝ որպես թե չեն լար. անոնք որ կ'ուրախանան՝ որպես թե չեն ուրախանար. անոնք որ կը գնեն՝ որպես թե ոչ մեկ բանի տիրացած են. **31** եւ անոնք որ այս աշխարհը կ'օգտագործեն՝ որպես թե չեն չարաշահեր. որովհետեւ այս աշխարհի կերպարը կ'անցնի: **32** Բայց ես կ'ուզեի որ դուք անհոգ ըլլաք. որովհետեւ ամուրին կը հոգայ Տէրոջ բաները, թե ինչպես հաճեցնէ Տէրը: **33** Իսկ ամուսնացածը կը հոգայ աշխարհի բաները, թե ինչպես հաճեցնէ իր կինը: **34** Նոյնպես տարբերութիւն կայ ամուսնացած կնոջ եւ կոյսին միջեւ. չամուսնացած կինը կը հոգայ Տէրոջ բաները, որպէսզի ինք սուրբ ըլլայ մարմինով ու հոգիով. իսկ ամուսնացած կինը կը հոգայ աշխարհի բաները, թե ինչպես հաճեցնէ իր ամուսինը: **35** Ասիկա կ'ըսեմ ձեր օգուտին համար. ոչ թե ծուղակ ձգելու ձեր վրայ՝ հապա վայելչութեան համար, որպէսզի ձեր ուշադրութիւնը դարձնէք Տէրոջ՝ առանց մտացիր ըլլալու: **36** Իսկ եթէ մեկը կը կարծէ թե անվայելչութեամբ կը վերաբերի իր կոյսին հանդէպ, եթէ անցնի անոր ամուսնութեան տարիքը, եւ պարտաւոր է, թող ընէ ինչ որ կ'ուզէ, չի մեղանչեր. թող ամուսնանան: **37** Սակայն ան որ հաստատ կը կենայ իր սիրտին մեջ

ու հարկադրանք չունի, հապա կ'իշխէ ինքնիր կամքին վրայ եւ վճռած է իր սիրտին մէջ՝ որ պահէ իր կոյսը, լաւ կ'ընէ: **38** Ուստի ան որ կ'ամուսնացնէ իր կոյսը՝, լաւ կ'ընէ. իսկ ան որ չ'ամուսնացներ, աւելի լաւ կ'ընէ: **39** Կինը կապուած է այնքան ատեն որ իր ամուսինը կ'ապրի. բայց եթէ իր ամուսինը մեռնի, ազատ է ամուսնանալու՝ որո՞ւ հետ որ ուզէ, միայն թէ՝ Տէրոջմով: **40** Սակայն իմ դատումովս՝ ան աւելի երջանիկ կ'ըլլայ եթէ մնայ այդպէս. եւ կը կարծեմ թէ ես ալ ունիմ Աստուծոյ Յոգին:

8 Այժմ, ինչ կը վերաբերի կուռքերուն գոհուած բաներուն, գիտենք թէ բոլորս ալ գիտութիւն ունինք: Գիտութիւնը կը հպարտացնէ, բայց սէրը կը շինէ: **2** Եթէ մէկը կը կարծէ թէ բան մը գիտէ, դեռ ոչինչ գիտէ այնպէս՝ ինչպէս պէտք է գիտնալ: **3** Սակայն եթէ մէկը կը սիրէ Աստուած, ինք ճանչցուած է անկէ: **4** Ուրեմն, ինչ կը վերաբերի կուռքերուն գոհուած բաները ուտելու, գիտենք թէ կուռքը ոչինչ է աշխարհի մէջ, եւ թէ ուրիշ ոեւէ Աստուած չկայ՝ մէկէն զատ: **5** Քանի որ՝ թէեւ ըլլան աստուած կոչուածներ, թէ՛ երկինքը եւ թէ երկրի վրայ, (ինչպէս կան շատ աստուածներ ու շատ տէրեր,) **6** մենք ունինք մէկ Աստուած՝ Հայրը, որմէ են բոլոր բաները, եւ մենք՝ անոր կը պատկանինք՝, ու մէկ Տէր՝ Յիսուս Քրիստոս, որով գոյութիւն ունին՝ բոլոր բաները, եւ մենք՝ անով կանք: **7** Բայց բոլորը չունին այս գիտութիւնը. որովհետեւ ոմանք՝ մինչեւ հիմա

խղճմտանքի հարց ունենալով կուռքի մասին՝ կ'ուտեն զանոնք որպէս կուռքի զոհուած բան. եւ իրենց խղճմտանքը կը պղծուի՝ քանի որ տկար է: **8** Սակայն կերակուրը չէ որ կը մօտեցնէ մեզ Աստուծոյ՝. քանի որ ո՛չ առատութեան մէջ կ'ըլլանք՝ եթէ ուտենք, ո՛չ ալ կարօտութեան մէջ կ'ըլլանք՝ եթէ չուտենք: **9** Բայց զգուշացէ՛ք որ ձեր այս ազատութիւնը տկարներուն սայթաքում չըլլայ: **10** Քանի որ եթէ մէկը տեսնէ քեզ՝ որ գիտութիւն ունիս, սեղան նստած՝ կռատունի մէջ, այդ տկար եղողին խղճմտանքը պիտի չխրախուսուի ուտել այն բաները՝ որ կուռքերուն զոհուած են. **11** եւ քու գիտութեամբդ՝ այդ տկար եղբայրը պիտի կորսուի, որուն համար Քրիստոս մեռաւ: **12** Իսկ երբ այսպէս կը մեղանչէք եղբայրներուն դէմ ու կը վիրաւորէք անոնց տկար խղճմտանքը, կը մեղանչէք Քրիստոսին դէմ: **13** Ուստի եթէ կերակուրը կը գայթակղեցնէ եղբայրս, յաւ՛նտ միս պիտի չուտեմ՝ որպէսզի չգայթակղեցնեմ եղբայրս: (aiōn g165)

9 Միթէ ես առաքեալ չեմ. միթէ ես ազատ չեմ. միթէ աչքերովս չտեսայ Յիսուս Քրիստոսը՝ մեր Տէրը. դուք իմ գործս չէ՞ք Տէրոջմով: **2** Նոյնիսկ եթէ ուրիշներուն առաքեալ չըլլամ, գոնէ ձեզի համար՝ եմ. որովհետեւ իմ առաքելութեանս կնիքը դուք էք Տէրոջմով: **3** Սա՛ է իմ ջատագովականս անոնց՝ որ կը հարցաքննեն զիս. **4** «Միթէ մենք իրաւունք չունինք ուտելու եւ խմելու: **5** Միթէ մենք իրաւունք չունինք Քրիստոսով քոյր եղող կին մը

մեզի հետ տանելու, ինչպես միւս առաքեալները, Տէրոջ եղբայրներն ու Կեփաս կ'ընեն: **6** Կամ միայն ես ու Բառնաբամս իրաւունք չունինք աշխատելէ զերծ ըլլալու: **7** Ո՛վ երբեք մարտնչելու կ'երթայ իր սեփական ծախսով. ո՛վ այգի կը տնկէ եւ անոր պտուղէն չ'ուտեր. կամ ո՛վ կը հովուէ ու հօտին կաթով չի սնանիր": **8** Միթէ մարդկօրէն կ'ըսեմ այս բաները, կամ արդեօք Օրէնքն ալ նոյնը չ'ընէր: **9** Քանի որ Մովսէսի Օրէնքին մէջ գրուած է. «Մի՛ կապեր կալի մէջ աշխատող» եզին դունչը»: Միթէ Աստուած եզնէրը կը հոգայ, **10** թէ ոչ՝ անշուշտ մեզի համար կ'ըսէ: Անկասկած մեզի համար գրուած է. որովհետեւ ան որ կը հերկէ՝ պարտաւոր է յոյսով հերկել, եւ ան որ կը կամսէ՝ բաժին առնելու յոյսով": **11** Եթէ մենք ձեր մէջ հոգեւոր բաներ սերմանեցինք, մեծ բան է՝ եթէ ձեզմէ մարմնաւոր բաներ հնձենք: **12** Եթէ ուրիշներ բաժին ունին այս իրաւունքին՝ ձեր վրայ, առաւելապէս մենք չունինք. բայց մենք այս իրաւունքը չօգտագործեցինք, հապա ամէն բանի կը դիմանանք, որպէսզի արգելք չըլլանք Քրիստոսի աւետարանին: **13** Չէք գիտեր թէ սուրբ բաներուն պաշտօնեաները՝ տաճարէն կ'ուտեն, եւ անոնք որ զոհասեղանին կը սպասաւորեն՝ զոհասեղանէն բաժին կ'առնեն: **14** Նոյնպէս ալ Տէրը պատուիրեց որ աւետարանը հռչակողները՝ աւետարանէն ապրին: **15** Բայց ես ասոնցմէ ոչ մէկը օգտագործեցի, ոչ ալ այս բաները գրեցի՝ որ այդպէս ըլլայ ինծի հանդէպ. որովհետեւ աւելի լաւ է ինծի՝ որ մեռնիմ, քան թէ մէկը իմ պարծանքս

ոչնչացնէ: 16 Արդարեւ եթէ աւետարանեմ՝
 պարծենալիք ոչինչ ունիմ, որովհետեւ իմ վրաս
 դրուած հարկ մըն է. մանաւանդ վայ է ինծի՝
 եթէ չաւետարանեմ: 17 Քանի որ եթէ ասիկա
 կամովին ընեմ, վարձատրութիւն կ'ունենամ. իսկ
 եթէ ակամայ՝ այդ ինծի վստահուած տնտեսութիւն
 մըն է: 18 Ուրեմն ինչ է իմ վարձատրութիւնս. այն՝
 որ աւետարանելու ատենս ձրի տամ Քրիստոսի
 աւետարանը, որպէսզի չարաչար չգործածեմ
 աւետարանէն ստացած իմ իրաւունքս: 19 Քանի որ՝
 թէպէտ բոլորէն ազատ էի՝ ես զիս բոլորին ծառայ
 ւորի, որպէսզի շատերը շահիմ: 20 Հրեաներուն
 հետ Հրեայի պէս եղայ, որպէսզի Հրեաները
 շահիմ: 21 Օրէնքի տակ եղողներուն հետ՝ իբր
 թէ Օրէնքի տակ, (որչ թէ ես Օրէնքի տակ էի,
) որպէսզի Օրէնքի տակ եղողներն ալ շահիմ:
 Առանց Օրէնքի եղողներուն հետ՝ իբր թէ առանց
 Օրէնքի, (որչ թէ ես Աստուծմէ օրէնք չունէի, հապա
 Քրիստոսի օրէնքին տակ էի,) որպէսզի առանց
 Օրէնքի եղողներն ալ շահիմ: 22 Տկարներուն հետ
 տկարի պէս եղայ, որպէսզի տկարները շահիմ.
 բոլորին հետ ամէն ինչ եղայ, որպէսզի անպայման
 ոմանք փրկեմ: 23 Եւ ասիկա կ'ընեմ աւետարանին
 համար, որ հաղորդակից ըլլամ անոր: 24 Չէք
 գիտեր թէ ասպարեզին մէջ վագողները՝ բոլորը կը
 վագեն, բայց մէկը կը ստանայ մրցանակը: Ուստի
 այնպէս վագեցէք՝ որ ստանա՞ք: 25 Ո՛վ որ կը մրցի՝
 չափաւորութիւն կը պահէ ամէն բանի մէջ. անոնք՝
 եղծանելի պսակը ստանալու համար, իսկ մենք՝

անեղծանելին: 26 Ուստի ես այդպես կը վազեմ, ոչ
թե անստուգութեամբ. ես այդպես կռփամարտ
կ'ընեմ, ոչ թե հովը ծեծելով. 27 Բայց կը ճնշեմ
ու կը նուաճեմ մարմինս, որպէսզի՝ ուրիշներուն
քարոզելէ ետք՝ ես ինքս խոտելի չըլլամ:

10 Եղբայրներ, չեմ ուզեր որ անգիտանաք թէ
մեր հայրերը՝ բոլորն ալ ամպին տակ էին, բոլորն
ալ ծովէն անցան, 2 ու բոլորն ալ Մովսէսով
մկրտուեցան ամպին եւ ծովուն մէջ: 3 Բոլորն ալ
կերան նոյն հոգեւոր կերակուրը, 4 ու բոլորն ալ
խմեցին նոյն հոգեւոր խմելիքը, որովհետեւ կը
խմէին այն հոգեւոր վեմէն՝ որ իրենց կը հետեւէր, եւ
այդ վեմը՝ Քրիստոսն էր: 5 Բայց անոնցմէ շատերը
հաճելի չեղան Աստուծոյ, քանի որ անապատին
մէջ փռուած ինկան: 6 Ուրեմն այդ բաները մեզի
տիպար եղան, որպէսզի չցանկանք չար բաներու,
ինչպէս անոնք ցանկացին: 7 Ո՛չ ալ կռապաշտ
ըլլաք՝ անոնցմէ ոմանց պէս, ինչպէս գրուած է.
«Ժողովուրդը նստաւ ուտելու եւ խմելու, յետոյ
կանգնեցան զքօսնելու»: 8 Ո՛չ ալ պռռնկինք՝
ինչպէս անոնցմէ ոմանք պռռնկեցան, ու մէկ
օրուան մէջ քսաներեք հազար հոգի ինկան: 9
Ո՛չ ալ փորձենք Քրիստոսը՝ ինչպէս անոնցմէ
ոմանք փորձեցին, եւ օծերէն ջարդուեցան: 10
Ո՛չ ալ տրտնջեցէք՝ ինչպէս անոնցմէ ոմանք
տրտնջեցին, ու ջարդուեցան բնաջնջողէն: 11 Իսկ
այդ բոլոր բաները կը պատահէին անոնց՝ իբր
տիպար, եւ գրուեցան խրատելու համար մեզ՝
որ հասած ենք դարերու վախճանին: (aiðn g165) 12

Զետեւաբար ան որ կը կարծէ թէ հաստատուն
 կեցած է, թող զգուշանայ՝ որ չիյնայ: 13 Ձեզի
 պատահած չէ փորձութիւն մը՝ որ մարդկային
 չըլլայ. բայց Աստուած հաւատարիմ է, եւ պիտի
 չթոյլատրէ որ փորձուիք ձեր կարողութենէն
 աւելի, հապա փորձութեան հետ ելք մըն ալ
 պիտի տայ, որպէսզի կարենաք կրել: 14 Ուստի,
 սիրելիներս, փախէք կռապաշտութենէն: 15 Կը
 խօսիմ որպէս թէ իմաստուններու հետ. դո՛ւք
 դատեցէք ինչ որ կ'ըսեմ: 16 Օրհնութեան բաժակը՝
 որ մենք կ'օրհնենք, միթէ Քրիստոսի արիւնին
 հաղորդութիւնը չէ. հացը՝ որ մենք կը կտրենք,
 միթէ Քրիստոսի մարմինին հաղորդութիւնը չէ: 17
 Արդարեւ մենք՝ շատ ըլլալով՝ մէկ հաց, մէկ մարմին
 ենք, որովհետեւ բոլորս ալ բաժնեկից ենք այդ մէկ
 հացին: 18 Նայեցէք մարմնաւոր Իսրայէլին. անոնք
 որ զոհերէն կ'ուտեն՝ զոհասեղանին հաղորդակից
 չէն ըլլար: 19 Ուրեմն ինչ կ'ըսեմ. կու՛մքը բան մըն
 է, կամ կու՛մքերու զոհուածը բան մըն է: 20 Բայց
 սա կ'ըսեմ, թէ այն բաները՝ որ հեթանոսները կը
 զոհեն, կը զոհեն դէւերո՛ւն, եւ ո՛չ թէ Աստուծոյ.
 ուստի չեմ ուզեր որ դուք հաղորդակից ըլլաք
 դէւերուն: Չէք կրնար խմել Տէրոջ բաժակը ու
 դէւերուն բաժակը. 21 չէք կրնար բաժնեկցիլ Տէրոջ
 սեղանին եւ դէւերու սեղանին: 22 Նախանձի
 գրգռենք Տէրը. միթէ մենք իրմէ ուժեղ ենք: 23
 Ամէն բան ինծի արտօնուած է, բայց ամէն բան
 օգտակար չէ. ամէն բան ինծի արտօնուած է,
 բայց ամէն բան շինիչ չէ: 24 Ո՛չ մէկը թող փնտռէ

միայն իր շահը, հապա ամեն մեկը՝ ուրիշինն ալ:
25 Կերէք ամեն ինչ որ կը ծախուի վաճառանոցը,
 առանց զննելու՝ խղճմտանքի պատճառով. **26**
 որովհետեւ «Տէրոջն է երկիրը եւ անոր լիութիւնը»:
27 Եթէ անհաւատներէն մեկը ճաշի հրաւիրէ
 ձեզ ու տրամադիր ըլլաք երթալու, կերէք ամեն
 ինչ՝ որ կը հրամցուի ձեզի, առանց հարցնելու՝
 խղճմտանքի պատճառով: **28** Բայց եթէ մեկը ըսէ
 ձեզի. «Ատիկա կուռքերու գոհուած է», անոր
 պատճառով՝ որ ցոյց տուաւ ձեզի, եւ խղճմտանքի
 պատճառով՝ մի ուտէք: **29** Սակայն երբ խղճմտանք
 կ'ըսեմ՝ ոչ թէ քուկդ է, հապա՝ ուրիշինը: Բայց
 ինչո՞ւ իմ ազատութիւնս կը դատուի ուրիշի մը
 խղճմտանքէն: **30** Եթէ ես շնորհակալութեամբ
 կը բաժնեկցիմ, ինչո՞ւ հայիոյուիմ այն բանին
 պատճառով՝ որուն համար ես շնորհակալ կ'ըլլամ:
31 Ուրեմն՝ թէ՛ ուտէք, թէ՛ խմէք, եւ թէ՛ ինչ որ
 ընէք, ամենը ըրէք Աստուծոյ փառքին համար:
32 Մի սայթաքեցնէք ոչ Յրեաները, ոչ Յոյները,
 ոչ ալ Աստուծոյ եկեղեցին: **33** Ինչպէս ես ալ կը
 հաճեցնեմ բոլորը՝ ամեն բանի մէջ, փնտռելով
 ոչ թէ իմ օգուտս, հապա՝ շատերունը, որպէսզի
 փրկուին:

11 Ինծի նմանեցէք, ինչպէս ես ալ՝ Քրիստոսի: **2**
 Կը գովեմ ձեզ, եղբայրներ, որ ամեն բանի մէջ կը
 յիշէք զիս ու կը պահէք սորվեցուցածներս՝ ինչպէս
 ես աւանդեցի ձեզի: **3** Բայց կ'ուզեմ որ գիտնաք
 թէ ամեն այր մարդու գլուխը Քրիստոսն է, ու
 կնոջ գլուխը՝ այր մարդը, եւ Քրիստոսի գլուխը՝

Աստուած: 4 Ամեն այր մարդ՝ որ կ'աղօթէ կամ կը
 մարգարեանայ ծածկուած գլուխով, կ'անպատուէ
 իր գլուխը: 5 Իսկ ամեն կին՝ որ կ'աղօթէ կամ կը
 մարգարեանայ չծածկուած գլուխով, կ'անպատուէ
 իր գլուխը. քանի որ միեւնոյնն է՝ որպէս թէ
 ածիլուած ըլլար: 6 Որովհետեւ եթէ կինը չի
 ծածկուիր, թող կտրէ իր մազերն ալ. իսկ եթէ ամօթ
 է կնոջ մը՝ իր մազերը կտրելը կամ ածիլուիլը, թող
 ծածկուի: 7 Արդարեւ այր մարդը պարտաւոր չէ
 ծածկել գլուխը, քանի որ Աստուծոյ պատկերն
 ու փառքն է. բայց կինը՝ մարդուն փառքն է: 8
 Որովհետեւ ոչ թէ այր մարդը կնոջմէն է, հապա՝
 կինը այր մարդէն. 9 ոչ ալ այր մարդը ստեղծուեցաւ
 կնոջ համար, հապա՝ կինը մարդուն համար:
 10 Հետեւաբար կինը պարտաւոր է շուք դնել
 իր գլուխին՝ հրեշտակներուն պատճառով: 11
 Սակայն ոչ այր մարդը առանց կնոջ է, ոչ ալ կինը
 առանց այր մարդու՝ Տէրոջմով: 12 Որովհետեւ
 ինչպէս կինը այր մարդէն է, նոյնպէս ալ այր
 մարդը կնոջ միջոցով. բայց ամեն քան՝ Աստուծմէ:
 13 Դուք ձեզմէ դատեցէք. պատշաճ է որ կին
 մը աղօթէ Աստուծոյ՝ չծածկուած գլուխով: 14
 Նոյնինքն բնութիւնն ալ չի սորվեցներ ձեզի, թէ
 այր մարդ մը եթէ երկար մազեր ունի, ատիկա
 անպատուութիւն է իրեն: 15 Իսկ կին մը եթէ երկար
 մազեր ունի, ատիկա փառք է իրեն. որովհետեւ
 մազերը ծածկոցի տեղ տրուած են իրեն: 16 Սակայն
 եթէ մէկուն յարմար թուի հակառակիլ, ոչ մենք
 այդպիսի սովորութիւն ունինք, ոչ ալ Աստուծոյ

եկեղեցիները: 17 Բայց ասիկա պատուիրելով՝ չեմ
 գովեր ձեզ, որովհետեւ ձեր համախմբումը ոչ թե
 աւելի լաւ՝ հապա աւելի գէշ արդիւնք կ'ունենայ. 18
 քանի որ նախ՝ երբ կը համախմբուիք եկեղեցիին
 մէջ, կը լսեմ թե պառակտումներ կ'ըլլան ձեր
 մէջ, եւ մասամբ կը հաւատամ: 19 Արդարեւ
 պէտք է որ հերձուածներ ալ ըլլան ձեր մէջ,
 որպէսզի երեւան ելլեն անոնք՝ որ գնահատելի են
 ձեր մէջ: 20 Ուրեմն երբ դուք կը համախմբուիք
 տեղ մը, ասիկա Տէրոջ ընթրիքը ուտել չէ. 21
 որովհետեւ՝ ուտելու ատեն՝ իւրաքանչիւրը նախ
 կ'ուտէ իր ընթրիքը. մէկը անօթի կը մնայ, իսկ
 միւսը կ'արբենայ: 22 Միթէ տուն չունիք՝ ուտելու
 եւ խմելու համար. կամ կ'արհամարհէք Աստուծոյ
 եկեղեցին, եւ կ'ամչցնէք չքաւորները: Ինչ ըսեմ
 ձեզի, գովեմ ձեզ այս բանին համար. չեմ գովեր: 23
 Արդարեւ ես Տէրոջմէն ընդունեցի զայն՝ որ ձեզի ալ
 աւանդեցի, թէ Տէր Յիսուս՝ իր մատնուած գիշերը՝
 հաց առաւ, 24 ու շնորհակալ ըլլալէ ետք՝ կտրեց
 եւ ըսաւ. «Առէք ու կերէք, այս է իմ մարմինս՝ որ կը
 կտրուի ձեզի համար. ըրէք ասիկա՝ իմ յիշատակիս
 համար»: 25 Նոյնպէս ալ՝ ընթրիքէն ետք՝ բաժակը
 առաւ ու ըսաւ. «Այս բաժակը նոր ուխտն է՝ իմ
 արիւնովս. ըրէք ասիկա՝ քանի անգամ որ խմէք՝
 իմ յիշատակիս համար: 26 Որովհետեւ քանի
 անգամ որ ուտէք այս հացը եւ խմէք այս բաժակը,
 Տէրոջ մահը կը պատմէք՝ մինչեւ որ ինք գայ»: 27
 Հետեւաբար ղվ որ ուտէ այս հացը կամ խմէ Տէրոջ
 բաժակը անարժանաբար, պարտապան պիտի

ըլլայ Տէրոջ մարմինին եւ արիւնին: **28** Ուրեմն իւրաքանչիւրը թող քննէ ինքզինք, ու այդպէս ուտէ հացէն եւ խմէ բաժակէն: **29** Որովհետեւ ան որ կ'ուտէ ու կը խմէ անարժանաբար, կ'ուտէ ու կը խմէ ինքնիր դատապարտութիւնը, քանի որ չի զատորոշեր Տէրոջ մարմինը: **30** Այս պատճառով շատեր ձեր մէջ տկար եւ հիւանդ են, ու շատեր ալ կը ննջեն: **31** Որովհետեւ եթէ մենք մեզ դատէինք՝ չէինք դատուեր: **32** Իսկ երբ կը դատուինք՝ կը պատժուինք Տէրոջմէն, որպէսզի չդատապարտուինք աշխարհի հետ: **33** Հետեւաբար, եղբայրներս, երբ կը համախմբուիք ուտելու համար՝ սպասեցէ՛ք իրարու: **34** Իսկ եթէ մէկը անօթի է՝ թող ուտէ իր տան մէջ, որպէսզի չհամախմբուիք դատապարտութեան համար: Մնացածը պիտի պատուիրեմ՝ երբ գամ:

12 Հոգեւոր պարգեւներուն մասին չեմ ուզեր որ անգետ ըլլաք, եղբայրներ: **2** Դուք գիտէք թէ երբ հեթանոս էիք, կը տարուէիք դէպի մոլնջ կոռքերը՝ ինչպէս որ կ'առաջնորդուէիք: **3** Ուստի սա կը հասկցնեմ ձեզի, թէ Աստուծոյ Հոգիով խօսող ո՛չ մէկը կ'ըսէ. «Նզովեա՛լ ըլլայ Յիսուս»: Եւ ո՛չ մէկը կրնայ ըսել. «Յիսուս Տէր է», բայց միայն՝ Սուրբ Հոգիով: **4** Ուրեմն շնորհները զանազան են՝ բայց նոյն Հոգին է, **5** սպասարկութիւնները զանազան են՝ բայց նոյն Տէրն է, **6** ներգործութիւնները զանազան են՝ բայց նոյն Աստուածն է որ կը ներգործէ ամէն ինչ՝ բոլորին մէջ: **7** Սակայն Հոգիին յայտնաբերումը

իւրաքանչիւրին տրուած է՝ բոլորին օգուտին
 համար: **8** Մէկուն տրուած է իմաստութեան
 խօսք՝ Յոգիով. ուրիշին՝ գիտութեան խօսք, նոյն
 Յոգիով. **9** ուրիշին՝ հաւատք, նոյն Յոգիով. ուրիշին՝
 բժշկելու շնորհներ, նոյն Յոգիով. **10** ուրիշին՝
 հրաշագործութիւններ, ուրիշին՝ մարգարեութիւն,
 ուրիշին՝ հոգիներու գատորոշութիւն, ուրիշին՝
 զանազան լեզուներու տեսակներ, ուրիշին՝
 լեզուներու թարգմանութիւն: **11** Այս ամէնը՝
 միեւնոյն Յոգին կը ներգործէ, եւ իւրաքանչիւրին
 կը բաժնէ զատ-զատ՝ ինչպէս որ ինք փափաքի:
12 Արդարեւ՝ ինչպէս մարմինը մէկ է բայց
 շատ անդամներ ունի, եւ այն մարմինին բոլոր
 անդամները՝ թէպէտ շատ՝ մէկ մարմին են,
 նոյնպէս ալ Քրիստոս: **13** Քանի որ մենք բոլորս
 մկրտուեցանք մէկ Յոգիով՝ մէկ մարմին ըլլալու,
 թէ՛ Յրեաներ, թէ՛ Յոյներ, թէ՛ ստրուկներ, թէ՛
 ազատներ, եւ բոլորս ալ մէկ Յոգիէն խմեցինք: **14**
 Որովհետեւ մարմինը մէկ անդամ չէ, հապա՜ շատ:
15 Եթէ ոտքը ըսէ. «Քանի ես ձեռք չեմ՝ մարմինէն
 չեմ», հետեւաբար ալ մարմինէն չէ: **16** Ու եթէ
 ականջը ըսէ. «Քանի ես աչք չեմ՝ մարմինէն չեմ»,
 հետեւաբար ալ մարմինէն չէ: **17** Եթէ ամբողջ
 մարմինը աչք ըլլար, ո՛ր ախտի ըլլար լսելիքը.
 եւ եթէ ամբողջը լսելիք ըլլար, ո՛ր ախտի ըլլար
 հոտոտելիքը: **18** Բայց Աստուած անդամներ
 դրաւ մարմինին մէջ, անոնցմէ իւրաքանչիւրը՝
 ինչպէս ինք կ'ամեցաւ: **19** Եթէ ամբողջը ըլլար
 միայն մէկ անդամ, ո՛ր ախտի ըլլար մարմինը:

20 Բայց անդամները շատ են, իսկ մարմինը՝ մեկ:
 21 Աչքը չի կրնար ըսել ձեռքին. «Պետք չունիմ քեզի», եւ ոչ ալ գլուխը՝ ոտքերուն. «Պետք չունիմ ձեզի»: 22 Նոյնիսկ մարմինին այն անդամները՝ որ աւելի տկար կը թուին, շատ աւելի հարկաւոր են. 23 ու մարմինին այն անդամները՝ որ նուազ պատուաւոր կը համարենք, անոնց աւելի մեծ պատիւ կ'ընծայենք: Այսպէս՝ մեր անվայելուչ անդամները աւելի շատ վայելչութիւն ունին. 24 իսկ մեր վայելուչ անդամներուն բան մը պէտք չէ: Բայց Աստուած մարմինը յօրինեց՝ աւելի մեծ պատիւ տալով անկէ զրկուածին, 25 որպէսզի պառակտում չըլլայ մարմինին մէջ, հապա անդամները միեւնոյն խնամքը տանին իրարու: 26 Եթէ մեկ անդամը չարչարուի, բոլոր անդամները կը չարչարուին անոր հետ, ու եթէ մեկ անդամը պատուուի, բոլոր անդամները կ'ուրախանան անոր հետ: 27 Ուրեմն դուք Քրիստոսի մարմինն էք, եւ անհատաբար՝ անոր անդամները: 28 Աստուած նշանակեց ձեզմէ ոմանք եկեղեցիին մէջ, նախ՝ առաքելներ, երկրորդ՝ մարգարէներ, երրորդ՝ վարդապետներ, յետոյ՝ հրաշքներ գործողներ, ապա՝ բժշկելու, օգնելու, դեկավարելու, զանազան լեզուներու շնորհներ ունեցողներ: 29 Միթէ բոլորը առաքելալ են. միթէ բոլորը մարգարէ են. միթէ բոլորը վարդապետ են. միթէ բոլորը հրաշքներ կը գործեն. 30 միթէ բոլորը բժշկելու շնորհներ ունին. միթէ բոլորը լեզուներ կը խօսին. միթէ բոլորը կը թարգմանեն: 31 Բայց դուք նախանձախնդիր

եղէք լաւագոյն շնորհներուն, ու ես տակաւին ցոյց
պիտի տամ ձեզի գերազանց ճամբայ մը:

13 Եթէ խօսիմ մարդոց եւ հրեշտակներուն
լեզուները՝ բայց սէր չունենամ, ես հնչող պղինձի
պէս կ'ըլլամ, կամ դօղանջող ծնծղայի պէս: **2** Ու եթէ
ունենամ մարգարեութեան պարգեւը, հասկնամ
բոլոր խորհուրդները եւ ամբողջ գիտութիւնը, ու
եթէ ունենամ ամբողջ հաւատքը՝ որ կարենամ
լեռներ տեղափոխել, բայց սէր չունենամ, ես
ոչինչ եմ: **3** Եւ եթէ սնուցանեմ աղքատները՝
իմ ամբողջ ինչքովս, ու մարմինս այրուելու
ընծայեմ, բայց սէր չունենամ, ես օգուտ մը չեմ
ունենար: **4** Սէրը համբերատար է, քաղցր է.
սէրը չի նախանձիր. սէրը չի գոռոզանար, չի
հպարտանար. **5** անվայել վարմունք չ'ունենար,
իրենը չի փնտռեր, չի գրգռուիր, չարութիւն չի
մտածեր. **6** անիրաւութեան համար չ'ուրախանար,
հապա ճշմարտութեան ուրախակից կ'ըլլայ.
7 ամէն բանի կը հանդուրժէ, ամէն բանի կը
հաւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի
կը տոկայ: **8** Սէրը բնաւ չ'իյնար. բայց եթէ
մարգարեութիւններ ըլլան՝ պիտի ոչնչանան, եթէ
լեզուներ՝ պիտի դադրին, եթէ գիտութիւն՝ պիտի
ոչնչանայ: **9** Արդարեւ հիմա մասամբ գիտենք
ու մասամբ կը մարգարեանանք. **10** բայց երբ
կատարեալը գայ, մասնակին պիտի ոչնչանայ: **11**
Երբ մանուկ էի, մանուկի պէս կը խօսէի, մանուկի
պէս կը մտածէի, մանուկի կարծիք ունէի. բայց
երբ այր մարդ եղայ, մանկական բաները մէկ

կողմ դրի: **12** Հիմա կը տեսնենք հայելիի մը մէջէն՝ աղօտ կերպով, բայց այն ատեն՝ պիտի տեսնենք երես առ երես: Հիմա ես մասամբ կը ճանչնամ, բայց այն ատեն պիտի ճանչնամ այնպէս՝ ինչպէս ես ճանչցուած եմ: **13** Իսկ հիմա սա՛ երեքը կը մնան՝ հաւատքը, յոյսը, սէրը. բայց սէրն է ասոնց մեծագոյնը:

14 Սիրոյ հետամուտ եղէք, ու նախանձախնդիր եղէք՝ հոգեւոր պարգեւներու, մանաւանդ՝ մարգարեանալու: **2** Որովհետեւ ան որ կը խօսի անծանօթ լեզուով, կը խօսի ո՛չ թէ մարդոց՝ հապա Աստուծոյ, քանի որ ո՛չ մէկը կը հասկնայ զինք. սակայն ան խորհուրդներ կ'արտայայտէ հոգիով: **3** Իսկ ան որ կը մարգարեանայ, կը խօսի մարդոց՝ շինութիւն, յորդոր եւ սփոփանք տալու: **4** Ա՛ն որ անծանօթ լեզուով կը խօսի՝ ինքզինք կը շինէ. բայց ան որ կը մարգարեանայ՝ եկեղեցին կը շինէ: **5** Կ'ուզեմ որ դուք բոլորդ լեզուներ խօսիք, մանաւանդ՝ մարգարեանաք. որովհետեւ ան որ կը մարգարեանայ, աւելի մեծ է քան ան որ լեզուներ կը խօսի, բացի եթէ ինք թարգմանէ՝ որպէսզի եկեղեցին շինութիւն ստանայ: **6** Իսկ հիմա, եղբայրներ, եթէ ես գամ ձեզի՝ լեզուներ խօսելով, ի՞նչ օգուտ պիտի ստանաք ինձմէ, եթէ չխօսիմ ձեզի կամ յայտնութեամբ, կամ գիտութեամբ, կամ մարգարեութեամբ եւ կամ ուսուցումով: **7** Ձայն տուող անշունչ բաներն անգամ, ըլլայ սրինգ թէ քնար, եթէ հնչիւններու զանազանութիւն չտան, ինչպէս պիտի ճանչցուի սրինգով կամ քնարով

նուագուածը: **8** Որովհետեւ եթէ փողն ալ անորոշ ձայն տայ, ո՞վ պիտի պատրաստուի պատերազմի: **9** Նոյնպէս ալ դուք, եթէ լեզուով դիւրահասկնայի խօսքեր չարտաբերէք, ինչպէս պիտի հասկցուի խօսուածը. որովհետեւ խօսած պիտի ըլլաք օդին: **10** Ձայներու ճրճան տեսակներ ալ ըլլան աշխարհի մէջ, անոնցմէ ո՛չ մէկը անըմբռնելի է: **11** Ուրեմն եթէ չգիտնամ ձայնին իմաստը, ես օտարական մը պիտի ըլլամ խօսողին, խօսողն ալ օտարական մը պիտի ըլլայ ինծի: **12** Նոյնպէս ալ դուք, քանի նախանձախնդիր էք հոգեւոր պարգեւներու, ջանացէ՛ք գերազանց ըլլալ՝ եկեղեցիին շինութեան համար: **13** Ուստի ան որ կը խօսի անծանօթ լեզուով, թող աղօթէ՝ որ կարենայ թարգմանել: **14** Քանի որ եթէ ես աղօթեմ անծանօթ լեզուով, հոգին կ'աղօթէ, բայց միտքս անպտուղ է: **15** Ուրեմն ինչ ընելու եմ: Պիտի աղօթեմ հոգիով, պիտի աղօթեմ միտքով ալ. սաղմոս պիտի երգեմ հոգիով, սաղմոս պիտի երգեմ միտքով ալ: **16** Այլապէս, երբ դուն օրհնաբանես հոգիով, ինչպէս ան որ տգէտի տեղը գրաւած է՝ «ամէն» պիտի ըսէ քու շնորհակալութեանդ ատեն, քանի որ չի հասկնար քու ըսածը: **17** Արդարեւ դուն լաւ շնորհակալ կ'ըլլաս, բայց միւսը չի շինուիր: **18** Շնորհակալ եմ Աստուծոյ, որ ձեր բոլորէն աւելի լեզուներ կը խօսիմ. **19** սակայն կը նախընտրեմ եկեղեցիին մէջ հինգ խօսք ըսել միտքովս, որպէսզի ուրիշներուն ալ սորվեցնեմ, քան բիւրաւոր խօսքեր՝ անծանօթ

լեզուով: 20 Եղբայրներ, ըմբռնումով մանուկ
 մի ըլլաք, հապա չարամտութեան մէջ մանուկ
 եղէք, իսկ ըմբռնումով՝ չափահաս: 21 Օրէնքին
 մէջ գրուած է. «Ուրիշ լեզուներով եւ ուրիշ
 շրթունքներով պիտի խօսիմ այս ժողովուրդին,
 սակայն այդպէս ալ մտիկ պիտի չընեն ինծի, -
 կ'ըսէ Տէրը»: 22 Յետեւաբար լեզուները նշանի
 համար են, ոչ թէ հաւատացեալներուն՝ հապա
 անհաւատներուն. իսկ մարգարէութիւնը՝ ոչ թէ
 անհաւատներուն, հապա՝ հաւատացեալներուն:
 23 Ուրեմն, եթէ ամբողջ եկեղեցին համախմբուի
 տեղ մը եւ բոլորն ալ խօսին անծանօթ լեզուներ,
 ու հոն մտնեն տգէտներ կամ անհաւատներ,
 պիտի չըսեն թէ դուք խելագարած էք: 24 Իսկ
 եթէ բոլորն ալ մարգարէանան, ու հոն մտնէ
 անհաւատ մը կամ տգէտ մը, բոլորէն ալ կը
 կշտամբուի, բոլորէն ալ կը դատուի: 25 Եւ
 այսպէս՝ անոր սիրտին գաղտնիքները երեւան
 կ'ելլեն, ու երեսի վրայ իյնալով պիտի երկրպագէ
 Աստուծոյ, եւ յայտարարէ թէ իրապէս Աստուած
 ձեր մէջ է: 26 Ուրեմն ինչ, եղբայրներ: Երբ կը
 համախմբուիք, եթէ ձեզմէ իւրաքանչիւրը ունի
 սաղմոս մը, ուսուցում մը, լեզու մը, յայտնութիւն
 մը, մեկնութիւն մը՝, ամէն բան թող ըլլայ
 շինութեան համար: 27 Եթէ մէկը խօսի անծանօթ
 լեզուով, երկու, կամ ամենէն շատը՝ երեք հոգի թող
 ըլլան, եւ խօսին կարգով. մէկն ալ թող թարգմանէ:
 28 Բայց եթէ թարգմանող չըլլայ, թող լռէ եկեղեցին
 մէջ, ու թող խօսի ինքնիրեն եւ Աստուծոյ հետ:

29 Մարգարէները թող խօսին՝ երկու կամ երեք հոգի, ու միւսները վճռեն: 30 Իսկ եթէ ուրիշի մը՝ որ նստած է՝ բան մը յայտնուի, առաջինը թող լռէ: 31 Որովհետեւ բոլորդ ալ կրնաք մէկ առ մէկ մարգարեանալ, որպէսզի բոլորն ալ սորվին, եւ բոլորն ալ մխիթարուին: 32 Եւ մարգարէներուն հոգիները մարգարէներուն կը հպատակին. 33 քանի որ Աստուած խառնակութեան Աստուած չէ, հապա՝ խաղաղութեան, ինչպէս սուրբերուն բոլոր եկեղեցիներուն մէջ: 34 Եկեղեցիներուն մէջ՝ ձեր կիները թող լռեն, որովհետեւ անոնց արտօնուած չէ խօսիլ, հապա՝ հպատակիլ, ինչպէս կ'ըսէ Օրէնքն ալ: 35 Իսկ եթէ ուզեն որեւէ բան սորվիլ, թող հարցնեն տան մէջ՝ իրենց ամուսիններուն. քանի որ կիներուն ամօթ է եկեղեցիին մէջ խօսիլ: 36 Միթէ Աստուծոյ խօսքը ձեզմէ ելաւ, կամ միայն ձեզի՞ հասաւ: 37 Եթէ մէկը կը կարծէ թէ ինք մարգարէ է, կամ հոգեւոր, թող գիտակցի թէ ձեզի գրած բաներս՝ Տէրոջ պատուիրաններն են: 38 Բայց եթէ մէկը անգէտ է՝ թող անգէտ ըլլայ: 39 Յետեւաբար, եղբայրներ, նախանձախնդիր եղէք մարգարեանալու, ու մի արգիլէք լեզուներ խօսիլն ալ: 40 Ամեն բան թող ըլլայ վայելչութեամբ եւ կարգով:

15 Եղբայրներ, կը գիտցնեմ ձեզի այն աւետարանը՝ որ քարոզեցի ձեզի, ու դուք ալ ընդունեցիք եւ անոր մէջ հաստատ կը կենաք: 2 Անով նաեւ կը փրկուիք, եթէ յիշողութեան մէջ պահէք ինչ որ աւետեցի ձեզի. այլապէս՝

զուր տեղը հաւատացած կ'ըլլաք: **3** Որովհետեւ նախ աւանդեցի ձեզի այն՝ որ ես ալ ընդունեցի, թէ Քրիստոս մեռաւ մեր մեղքերուն համար՝ Գիրքերուն համաձայն, **4** թաղուեցաւ, յարութիւն առաւ երրորդ օրը՝ Գիրքերուն համաձայն, **5** ու երեւցաւ Կեփասի, ապա տասներկուքին: **6** Յետոյ միաժամանակ երեւցաւ հինգ հարիւրէ աւելի եղբայրներու, որոնց մեծ մասը կը մնայ մինչեւ այժմ, իսկ ոմանք ալ ննջեցին: **7** Ապա երեւցաւ Յակոբոսի, յետոյ՝ բոլոր առաքեալներուն: **8** Բոլորէն ետք՝ երեւցաւ նաեւ ինծի, որպէս թէ վիժածի մը: **9** Որովհետեւ ես առաքեալներուն փոքրագոյնն եմ, եւ արժանի ալ չեմ առաքեալ կոչուելու, քանի որ հալածեցի Աստուծոյ եկեղեցին: **10** Բայց Աստուծոյ շնորհքովն եմ՝ ինչ որ եմ: Եւ անոր շնորհքը՝ որ իմ վրաս է, ընդունայն չեղաւ. հապա ես անոնց բոլորէն շատ աւելի աշխատեցայ. սակայն ո՛չ թէ ես, հապա Աստուծոյ շնորհքը՝ որ ինծի հետ էր: **11** Ուստի՝ թէ՛ ես, թէ՛ անոնք այսպէս կը քարոզենք, ու դուք այսպէս հաւատացիք: **12** Ուրեմն եթէ կը քարոզուի թէ Քրիստոս մեռելներէն յարութիւն առած է, ինչպէս ձեզմէ ոմանք կ'ըսեն թէ “մեռելներու յարութիւն չկայ”: **13** Բայց եթէ մեռելներու յարութիւն չկայ, ուրեմն Քրիստոն ալ յարութիւն առած չէ: **14** Ու եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ուրեմն մեր քարոզութիւնը ունայն է, ու ձեր հաւատքն ալ ունայն է: **15** Իսկ մենք ալ Աստուծոյ սուտ վկաները կ'ըլլանք, որովհետեւ Աստուծոյ

համար վկայեցինք թե մեռելներէն յարուցանեց
 Քրիստոսը. մինչդեռ յարուցանած չէ զայն, եթէ
 իրապէս մեռելները յարութիւն չեն առներ: 16
 Քանի որ եթէ մեռելները յարութիւն չեն առներ,
 Քրիստոս ալ յարութիւն առած չէ. 17 ու եթէ
 Քրիստոս յարութիւն առած չէ, ձեր հաւատքը
 փուճ է, եւ տակաւին ձեր մեղքերուն մեջ էք. 18
 ուրեմն Քրիստոսով ննջեցեալներն ալ կորսուած
 են: 19 Եթէ միայն այս կեանքին համար Քրիստոսի
 յուսացած ենք, մենք բոլոր մարդոցմէն աւելի
 խղճալի ենք: 20 Իսկ հիմա՝ Քրիստոս մեռելներէն
 յարութիւն առած է, ու եղած երախայրիքը անոնց՝
 որ ննջեցին: 21 Որովհետեւ՝ քանի մարդով եղաւ
 մահը, մարդով ալ եղաւ մեռելներու յարութիւնը:
 22 Որովհետեւ ինչպէս Ադամով բոլորը կը մեռնին,
 նոյնպէս ալ Քրիստոսով բոլորը կեանք պիտի
 ստանան: 23 Բայց իւրաքանչիւրը իր կարգով.
 նախ երախայրիքը՝ Քրիստոս, յետոյ Քրիստոսի
 պատկանողները՝ իր գալուստին: 24 Ապա պիտի
 գայ վախճանը, երբ թագաւորութիւնը պիտի
 յանձնէ Աստուծոյ՝ Զօրը, ոչնչացնելէ ետք ամեն
 պետութիւն, ամեն իշխանութիւն ու զօրութիւն: 25
 Որովհետեւ ան պէտք է թագաւորէ, մինչեւ որ
 բոլոր թշնամիները դնէ իր ոտքերուն տակ: 26
 Վերջին թշնամին որ պիտի ոչնչացուի՝ մահն է,
 որովհետեւ Գիրքը կ'ըսէ. «Ամեն բան դրաւ անոր
 ոտքերուն տակ». 27 Բայց երբ կ'ըսէ թէ “ամեն բան
 դրուած է անոր տակ”, բացայայտ է թէ բացի անկէ՝
 որ ամեն բան դրաւ անոր տակ: 28 Ու երբ ամեն

բան հպատակի անոր, այն ատեն Որդին՝ ինք ալ՝
 պիտի հպատակի անոր՝ որ ամեն բան դրաւ իրեն
 տակ, որպէսզի Աստուած ըլլայ ամեն ինչ՝ բոլորին
 մէջ: **29** Այլապէս, ինչ պիտի ընեն անոնք՝ որ կը
 մկրտուին մեռելներուն համար, եթէ մեռելները
 երբեք յարութիւն չեն առներ: Ուրեմն ինչո՞ւ կը
 մկրտուին անոնց համար. **30** եւ ինչո՞ւ մենք ալ
 վտանգի մէջ ենք ամեն ժամ: **31** Ես ամեն օր կը
 մեռնիմ. վկայ կը բերեմ այն պարծանքը՝ որ ունիմ
 ձեր վրայ Քրիստոս Յիսուսով՝ մեր Տէրոջմով: **32**
 Եթէ Եփեսոսի մէջ կռուած ըլլայի զազաններու
 դէմ՝ մարդոց նման, ինչ օգուտ էր ինծի, եթէ
 մեռելները յարութիւն չեն առներ. ուտենք՝ ու
 խմենք, որովհետեւ վաղը պիտի մեռնինք: **33** Մի
 մոլորիք. չար ընկերակցութիւնները կ'ապականեն
 բարի բարքը: **34** Սթափեցէ՛ք արդարութեամբ
 ապրելու համար, ու մի մեղանչէք. որովհետեւ
 ձեզմէ ոմանք չունին Աստուծոյ գիտութիւնը.
 ասիկա կ'ըսեմ՝ ձեզ ամչցնելու համար: **35** Բայց
 մէկը պիտի ըսէ. «Ինչպէս մեռելները յարութիւն
 կ'առնեն, եւ ինչ մարմինով կու գան»: **36** Ա՛նմիտ,
 ինչ որ դուն կը սերմանես՝ կեանք չի ստանար
 եթէ չմեռնի: **37** Իսկ ինչ որ կը սերմանես, ո՛չ թէ
 այն մարմինը որ պիտի բուսնի՝ կը սերմանես,
 հապա մերկ հատիկը, ըլլայ ան ցորենի թէ ուրիշ
 սերմի. **38** բայց Աստուած մարմին կու տայ
 անոր՝ ինչպէս կը կամենայ, եւ իւրաքանչիւր
 սերմին՝ իր յատուկ մարմինը: **39** Ամեն մարմին
 նոյն մարմինը չէ. հապա ուրիշ է մարդոց

մարմինը, ուրիշ՝ անասուններուն մարմինը, ուրիշ՝ ձուկերունը, եւ ուրիշ՝ թռչուններունը: **40** Կան նաեւ երկնաւոր մարմիններ ու երկրաւոր մարմիններ. բայց երկնաւորներուն փառքը ուրիշ է, երկրաւորներունը՝ ուրիշ: **41** Արեւին փառքը ուրիշ է, լուսինին փառքը՝ ուրիշ, եւ աստղերուն փառքը՝ ուրիշ. որովհետեւ մէկ աստղը փառքով կը տարբերի միւս աստղէն: **42** Այսպէս է նաեւ մեռելներուն յարութիւնը: Մարմինը կը սերմանուի ապականութեամբ, եւ յարութիւն կ'առնէ անապականութեամբ. **43** կը սերմանուի անպատուութեամբ, ու յարութիւն կ'առնէ փառքով. կը սերմանուի տկարութեամբ, եւ յարութիւն կ'առնէ զօրութեամբ: **44** Կը սերմանուի իբր շնչաւոր մարմին, ու յարութիւն կ'առնէ իբր հոգեւոր մարմին: Շնչաւոր մարմին կայ, նաեւ հոգեւոր մարմին կայ, **45** եւ սա գրուած է. «Առաջին մարդը՝ Ադամ՝ եղաւ ապրող անձ». իսկ վերջին Ադամը՝ ապրեցնող հոգի: **46** Բայց ոչ թէ նախ հոգեւորը, հապա՝ շնչաւորը, ու յետոյ՝ հոգեւորը: **47** Առաջին մարդը երկրէն է՝ հողեղէն, բայց երկրորդ մարդը Տէրն է՝ երկինքէն: **48** Ինչպէս հողեղէնն է՝ նոյնպէս ալ հողեղէններն են, եւ ինչպէս երկնաւորն է՝ նոյնպէս ալ երկնաւորներն են: **49** Ինչպէս կը կրենք հողեղէնին պատկերը, նաեւ պիտի կրենք երկնաւորին պատկերը: **50** Ուրեմն սա կ'ըսեմ, եղբայրներ, թէ մարմին եւ արիւն չեն կրնար ժառանգել Աստուծոյ թագաւորութիւնը, ոչ ալ ապականութիւնը

կը ժառանգէ անապականութիւն: **51** Ահա՛ կը
 յայտնեմ ձեզի խորհուրդ մը. «Բոլորս պիտի
 չննջենք, բայց բոլորս ալ պիտի փոխուինք. **52**
 անմիջապէս, ակնթարթի մը մէջ, վերջին փողին
 հնչելու ատենը. որովհետեւ փողը պիտի հնչէ,
 մեռելները յարութիւն պիտի առնեն՝ առանց
 ապականութեան, ու մենք ալ պիտի փոխուինք»:
53 Որովհետեւ պէտք է որ այս ապականացու
 մարմինը հազնի անապականութիւն, եւ այս
 մահկանացուն հազնի անմահութիւն: **54** Ուստի
 երբ այս ապականացու մարմինը հազնի
 անապականութիւն, եւ այս մահկանացուն հազնի
 անմահութիւն, այն ատեն պիտի իրագործուի
 այն խօսքը՝ որ գրուեցաւ. «Մահը ընկղմեցաւ
 յաղթութեան մէջ»: **55** «Մահ, ո՛ր է խայթոցդ.
 դժոխք, ո՛ր է յաղթութիւնդ»: (Hades 986) **56** Մահուան
 խայթոցը մեղքն է, ու մեղքին զօրութիւնը՝
 Օրէնքը: **57** Բայց շնորհակալութիւն Աստուծոյ, որ
 մեզի յաղթութիւն կու տայ մեր Տէրոջ՝ Յիսուս
 Քրիստոսի միջոցով: **58** Հետեւաբար, սիրելի
 եղբայրներս, հաստատուն եւ անշարժ եղէք, ու
 ամեն ատեն յառաջդիմեցէ՛ք Տէրոջ գործին մէջ,
 գիտնալով թէ ձեր աշխատանքը ընդունայն չէ
 Տէրոջմով:

16 Ինչ կը վերաբերի սուրբերուն համար ըլլալիք
 հանգանակութեան, ինչպէս պատուիրեցի
 Գաղատացիներու եկեղեցիներուն, դ՛ր՛ք ալ
 այնպէս ըրէք: **2** Ամեն Մէկշաբթի՝ ձեզմէ
 իւրաքանչիւրը թող մէկդի դնէ իր քով

ինչ որ յաջողած է խնայել, 3 որպէսզի
 հանգանակութիւններ չըլլան երբ ես գամ: Ու երբ
 գամ, անոնք որ զատորոշէք՝ զիրենք պիտի դրկենմ
 նամակներով”, որպէսզի Երուսաղէմ տանին ձեր
 պարգեւները: 4 Եթէ իմ երթալս ալ արժանավայել
 ըլլայ, անոնք պիտի երթան ինծի հետ: 5 Ուրեմն ես
 պիտի գամ ձեզի՝ երբ անցնիմ Մակեդոնիայէն.
 (քանի որ պիտի անցնիմ Մակեդոնիայէն.) 6 Եւ
 թերեւս մնամ ձեր քով ու ձմերեմ ալ ձեզի հետ.
 որպէսզի դո՛ւք ուղարկէք զիս՝ ո՛ւր որ երթամ:
 7 Որովհետեւ չեմ ուզեր տեսնել ձեզ հիմա՝
 անցած ատենս, բայց կը յուսամ որ ժամանակ
 մը մնամ ձեր քով, եթէ Տէրը արտօնէ: 8 Սակայն
 Եփեսոս պիտի մնամ մինչեւ Պենտեկոստէ. 9
 որովհետեւ մեծ եւ արդիւնաւոր դուռ մը բացուած
 է ինծի, ու բազմաթիւ հակառակորդներ կան: 10
 Ուրեմն եթէ Տիմոթէոս գայ, ուշադիր եղէք որ
 մնայ ձեր քով առանց վախի. քանի որ ան կ’ընէ
 Տէրոջ գործը, ինչպէս ես ալ: 11 Ուստի ո՛չ մէկը
 թող անարգէ զայն. հապա խաղաղութեամբ
 ուղարկեցէք զայն՝ որ ինծի գայ, որովհետեւ
 անոր կը սպասեն եղբայրներուն հետ: 12 Իսկ
 ինչ կը վերաբերի Ապողոս եղբօր, շատ աղաչեցի
 անոր՝ որ ձեզի գայ եղբայրներուն հետ, բայց
 բնաւ փափաք չունեցաւ որ հիմա գայ. սակայն
 պիտի գայ՝ երբ պատեհութիւն ունենայ: 13
 Արթնն մնացէք, հաւատքի մէջ հաստատուն
 կեցէք, քաջ եղէք, զօրացէք: 14 Ձեր բոլոր բաները
 սիրով ըլլան: 15 Կ’աղաչեմ ձեզի, եղբայրներ,

(դուք կը ճանչնաք Ստեփանասի ընտանիքը, որ Աբայիայի երախայրիքն է, եւ իրենք զիրենք նուիրեցին սուրբերուն սպասարկութեան,) 16 որ հպատակիք այդպիսիներուն եւ բոլորին՝ որ կը գործակցին մեզի ու կ'աշխատին: 17 Ուրախ եմ Ստեփանասի, Փորտունատոսի եւ Աբայիկոսի գալուստին համար, որովհետեւ իրենք լրացուցին ձեր պակասը, 18 քանի որ հանգստացուցին իմ հոգիս ու ձերը. ուրեմն ճանչցէք այդպիսիները: 19 Ասիայի եկեղեցիները կը բարեւեն ձեզ. Տէրոջմով շատ կը բարեւեն ձեզ Ակիւղաս եւ Պրիսկիդա՝ իրենց տան մէջ եղող եկեղեցիին հետ: 20 Բոլոր եղբայրները կը բարեւեն ձեզ. բարեւեցէք զիրար սուրբ համբոյրով: 21 Ես՝ Պօղոս, իմ ձեռքովս կը գրեմ այս բարեւը: 22 Եթէ մէկը չի սիրեր Տէր Յիսուս Քրիստոսը, նզովեալ ըլլայ երբ մեր Տէրը գայ՝: 23 Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզի հետ: 24 Իմ սէրս ձեր բոլորին հետ՝ Քրիստոս Յիսուսով: Ամէն:

ԵՐԿՐՈՐԴ ԿՈՐՆԹԱՑԻՍ

1 Պօղոս, Աստուծոյ կամքով Յիսուս Քրիստոսի առաքեալը, ու Տիմոթէոս մեր եղբայրը, Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցիին եւ Աքայիայի մէջ եղող բոլոր սուրբերուն. **2** շնորհք ու խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, եւ Տէր Յիսուս Քրիստոսէ: **3** Օրհնեալ ըլլայ Աստուած, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը, արգահատանքի Հայրը եւ ամէն մխիթարութեան Աստուածը, **4** որ կը մխիթարէ մեզ մեր ամբողջ տառապանքին մէջ, որպէսզի մենք կարենանք մխիթարել անոնք՝ որ որեւէ տառապանքի մէջ են, այն մխիթարութեամբ՝ որով մենք կը մխիթարուինք Աստուծմէ. **5** որովհետեւ ինչպէս Քրիստոսի չարչարանքները կ'առատանան մեր մէջ, նմանապէս մեր մխիթարութիւնն ալ կ'առատանայ Քրիստոսի միջոցով: **6** Եթէ տառապինք՝ ձեր մխիթարութեան եւ փրկութեան համար է, որ արդիւնաւոր կ'ըլլայ՝ համբերելով այն նոյն չարչարանքներուն, որոնցմով մենք ալ կը չարչարուինք. ու եթէ մխիթարուինք՝ ձեր մխիթարութեան եւ փրկութեան համար է: **7** Մեր յոյսը հաստատուն է ձեր վրայ, որովհետեւ գիտենք թէ ինչպէս հաղորդակից էք մեր չարչարանքներուն, նոյնպէս ալ մխիթարութեան պիտի ըլլաք: **8** Որովհետեւ չենք ուզեր, եղբայրներ, որ անգիտանաք Ասիայի մէջ մեզի պատահած տառապանքը, չափէն աւելի ծանրաբեռնուեցանք, մեր կարողութենէն աւելի, այնքան՝ որ նոյնիսկ

յուսահատեցանք կեանքէն: **9** Բայց մահուան վճիռը ունէինք մեր վրայ, որպէսզի վստահինք ոչ թէ մենք մեզի, հապա Աստուծոյ՝ որ մեռելները կը յարուցանէ: **10** Ան այդպիսի մեծ մահէ մը ազատեց մեզ, ու կ'ազատէ. **11** եւ կը յուսանք թէ ան տակաւին պիտի ազատէ: Դուք ալ կը գործակցիք՝ մեզի համար աղերսելով, որպէսզի շատեր շնորհակալ ըլլան մեր պատճառով՝ շատ անձերու աղօթքին միջոցով մեզի եղած շնորհին համար: **12** Արդարեւ սա է մեր պարծանքը՝ մեր խղճմտանքին վկայութիւնը, թէ մենք՝ պարզամտութեամբ եւ Աստուծոյ անկեղծութեամբ, ոչ թէ մարմնաւոր իմաստութեամբ՝ հապա Աստուծոյ շնորհքով վարուեցանք աշխարհի մէջ, եւ ալ աւելի ձեզի հանդէպ: **13** Որովհետեւ ուրիշ քան չենք գրեր ձեզի, քան ինչ որ դուք կը կարդաք ու կը հասկնաք. եւ կը յուսամ թէ մինչեւ վախճանն ալ պիտի հասկնաք, **14** ինչպէս նաեւ մասամբ հասկցաք մեզ, թէ մենք ձեր պարծանքն ենք, ինչպէս դուք ալ մերը՝ Տէր Յիսուսի օրը: **15** Այս վստահութեամբ կը փափաքէի նախ գալ ձեզի, որպէսզի դուք երկրորդ շնորհք մը ընդունիք, **16** անցնիլ ձեզմէ դէպի Մակեդոնիա, եւ Մակեդոնիայէն դարձեալ գալ ձեզի, ու ձեզմէ ուղարկուած՝ երթալ Զրեաստան: **17** Ուրեմն երբ այսպէս փափաքեցայ, միթէ թեթեւութեամբ վարուեցայ. եւ կամ՝ ինչ որ ես կը ծրագրեմ, մարմնաւորապէս կը ծրագրեմ, որպէսզի իմ քովս «այո՛»ն՝ այո՛ ըլլայ, եւ «ոչ»ը՝ ոչ՞: **18** Սակայն Աստուած հաւատարիմ է, որ ձեզի հասած մեր

խօսքը «այո» եւ «ոչ» չէր. **19** քանի որ Աստուծոյ Որդին՝ Յիսուս Քրիստոս, որ քարոզուեցաւ ձեզի մեր միջոցով, (ինձմով, Սիդուանոսով ու Տիմոթէոսով,) «այո» եւ «ոչ» չեղաւ, հապա իր մէջ եղաւ «այո»ն: **20** Արդարեւ Աստուծոյ բոլոր խոստումները՝ իր մէջ «այո» են, եւ իր մէջ «ամէն» են՝ Աստուծոյ փառքին համար մեր միջոցով: **21** Ուրեմն ան որ հաստատեց մեզ Քրիստոսով՝ ձեզի հետ, եւ օծեց մեզ՝ Աստուած է, **22** որ նաեւ կնքեց մեզ ու տուաւ մեզի Հոգիին գրաւականը՝ մեր սիրտերուն մէջ: **23** Բայց ես Աստուած վկայ կը կանչեմ իմ անձիս, թէ տակաւին Կորնթոս չեկայ՝ խնայելու համար ձեզի: **24** Ո՛չ թէ կը տիրենք ձեր հաւատքին վրայ, հապա գործակիցներ ենք ձեր ուրախութեան. որովհետեւ դուք հաւատքով կը կենաք:

2 **2** Որովհետեւ եթէ ես տրտմեցնեմ ձեզ, ալ ո՛վ է որ պիտի ուրախացնէ զիս, եթէ ոչ ան՝ որ տրտմեցաւ ինձմէ: **3** Ասիկա գրեցի, որ երբ գամ՝ տրտմութիւն մը չկրեմ անոնցմէ՝ որ պէտք է ուրախացնեն զիս. քանի որ ձեր բոլորին մասին համոզուած եմ թէ իմ ուրախութիւնս ձեր բոլորինն է: **4** Որովհետեւ շատ տառապանքի մէջ եւ սիրտի կսկիծով գրեցի ձեզի՝ շատ արցունքով. ո՛չ թէ՝ որպէսզի տրտմիք, հապա գիտնաք այն յորդառատ սէրը՝ որ ունիմ ձեզի հանդէպ: **5** Իսկ եթէ մեկը տրտմեցուց, ո՛չ թէ տրտմեցուց զիս, հապա մասամբ (որպէսզի չծանրաբեռնեմ) ձեզ բոլորդ՝: **6** Բաւական է այդպիսի մարդուն այն

պատիժը՝ որ տրուեցաւ շատերէ: **7** Հետեւաբար՝
 ընդհակառակը՝ պէտք է փոխարենը ներել անոր ու
 մխիթարել զայն, որպէսզի այնպիսին չուսայթուի
 չափազանց տրտմութենէն: **8** Ուստի կ'աղաչեմ
 ձեզի, որ անոր հանդէպ վաւերացնէք ձեր սերը. **9**
 (քանի որ սա նպատակով ալ գրեցի, որպէսզի ձեզ
 փորձելով գիտնամ թէ ամէն բանի մէջ հնազանդ
 էք: **10** Անոր՝ որուն դուք որեւէ բան ներէք, էս ալ կը
 ներեմ. որովհետեւ եթէ որեւէ բան ներած եմ, ձեր
 պատճառով անոր ներած եմ՝ Քրիստոսի անձով.)
11 որպէսզի Սատանան մեզ չկեղեքէ, քանի որ
 չենք անգիտանար անոր դիտաւորութիւնները:
12 Ուրեմն երբ հասայ Տրովադա՝ Քրիստոսի
 աւետարանը քարոզելու, թէպէտ Տէրը դուռ մը
 բացած էր ինծի, **13** անդորրութիւն չունեցայ հոգիս
 մէջ, որովհետեւ հոն չգտայ եղբայրս՝ Տիտոսը.
 հապա հրաժեշտ առնելով անոնցմէ՝ մեկնեցայ
 Մակեդոնիա: **14** Շնորհակալութիւն Աստուծոյ,
 որ ամէն ատեն մեզի յաղթութիւն կը պատճառէ
 Քրիստոսով, ու զինք ճանչնալուն հոտը մեզմով
 կը յայտնաբերէ ամէն տեղ: **15** Որովհետեւ մենք՝
 Աստուծոյ համար՝ Քրիստոսի անոյշ հոտն ենք,
 թէ փրկուածներուն եւ թէ կորսուողներուն մէջ:
16 Ոմանց՝ մահուան հոտ դէպի մահ, ոմանց ալ՝
 կեանքի հոտ դէպի կեանք: Եւ ի՞նչ ընդունակ է
 ընելու այս բաները: **17** Քանի որ մենք շատերուն
 պէս չենք, որոնք կը խարդախեն Աստուծոյ խօսքը.
 հապա անկեղծութեամբ, Աստուծմէ դրկուած եւ
 Աստուծոյ առջեւ կը խօսինք՝ Քրիստոսով:

3 Սկսի՞նք դարձեալ մենք մեզ յանձնարարել. կամ թէ՛ ոմանց պէս՝ պէտք են մեզի յանձնարարական նամակներ ձեզի, կամ յանձնարարութիւն ձեզմէ։ **2** Դ՛հրէ էք մեր նամակը՝ մեր սիրտերուն մէջ գրուած, ճանչցուած ու կարդացուած բոլոր մարդոցմէն. **3** բացայայտ ըլլալով որ դուք Քրիստոսի նամակն էք՝ մեր սպասարկութեամբ, ո՛չ թէ մելանով գրուած, հապա՛ ապրող Աստուծոյ Յոգիով. ո՛չ թէ քարեղէն տախտակներու վրայ, հապա՛ սիրտին մարմնեղէն տախտակներուն վրայ։ **4** Մենք այսպիսի վստահութիւն ունինք Աստուծոյ վրայ՝ Քրիստոսի միջոցով։ **5** Ո՛չ թէ մենք մեզմէ ընդունակ ենք մտածել որեւէ բան՝ որպէս թէ մեզմէ, հապա մեր ընդունակութիւնը Աստուծմէ է։ **6** Ան նաեւ ընդունակ ըրաւ մեզ Նոր Կտակարանին սպասարկուներ ըլլալու. ո՛չ թէ գիրին, հապա՛ Յոգիին, որովհետեւ գիրը կը սպաննէ, բայց Յոգին կեանք կու տայ։ **7** Իսկ եթէ քարերու վրայ փորագրուած մահուան սպասարկութիւնը այնքան փառաւոր եղաւ, որ Իսրայէլի որդիները չէին կրնար ակնապիշ նայիլ Մովսէսի երեսին՝ անոր դէմքին պայծառութեան պատճառով, որ պիտի ոչնչանար, **8** ուրեմն ի՞նչքան աւելի փառաւոր պիտի ըլլայ հոգիին սպասարկութիւնը. **9** քանի որ եթէ դատապարտութեան սպասարկութիւնը փառաւոր էր, ի՞նչափ աւելի գերազանց պիտի ըլլայ արդարութեան սպասարկութեան փառքը. **10** որովհետեւ ինչ որ փառաւոր եղած էր՝ ա՛յլ փառք չունէր այս կապակցութեամբ, զինք գերազանցող

փառքին պատճառով: **11** Արդարեւ եթէ այն որ պիտի ոչնչանար՝ փառաւոր էր, որչանփ աւելի փառաւոր պիտի ըլլայ այն՝ որ մնայուն է: **12** Ուրեմն, նկատելով որ ունինք այսպիսի յոյս մը, մեծ համարձակութեամբ կը վարուինք մեր խօսքին մէջ. **13** ոչ թէ ինչպէս Մովսէս, որ ծածկոց կը դներ իր երեսին վրայ՝ որպէսզի Իսրայէլի որդիները ականապիշ չնայէին ոչնչանալու սահմանուածին վախճանին: **14** Սակայն անոնց միտքերը կուրցան. որովհետեւ՝ մինչեւ այսօր՝ նոյն ծածկոցը ձգուած կը մնայ Յին Կտակարանի ընթերցումին վրայ, (ան Քրիստոսով կ'ոչնչանայ,) **15** հապա մինչեւ այսօր, երբ Մովսէսի գիրքը կը կարդացուի, ծածկոցը դրուած կը մնայ անոնց սիրտին վրայ: **16** Բայց երբ Տէրոջ դառնան, ծածկոցը պիտի վերցուի: **17** Ուրեմն Տէրը այդ Յոգին է, եւ ուր Տէրոջ Յոգին կայ, հոն ազատութիւն կայ: **18** Իսկ մենք բոլորս, բաց երեսով Տէրոջ փառքը տեսնելով՝ որպէս թէ հայելիի մէջ, կը փոխուինք նոյն պատկերին՝ փառքէ փառք, որպէս թէ Տէրոջ Յոգիին միջոցով:

4 Ուստի, քանի ունինք այս սպասարկութիւնը, ողորմութիւն գտած ըլլալով՝ չենք ձանձրանար. **2** հապա հրաժարեցանք ամօթալի ծածուկ բաներէն, խորամանկութեամբ չենք ընթանար եւ Աստուծոյ խօսքը չենք խարդախեր. այլ ճշմարտութիւնը բացայայտելով մենք մեզ կը յանձնարարենք ամէն մարդու խղճմտանքին՝ Աստուծոյ առջեւ: **3** Իսկ եթէ մեր աւետարանը ծածկուած է, կորսուածներուն համար ծածկուած

Է. 4 որոնց մէջ այս աշխարհի աստուածը կուրցուց անհաւատներուն միտքերը, որպէսզի Քրիստոսի՝ Աստուծոյ պատկերին՝ փառքի աւետարանին լոյսը անոնց վրայ չշողայ: (aiðn g165) 5 Արդարեւ մենք մեզ չէ որ կը քարոզենք, հապա՝ Քրիստոս Յիսու Տէրը, ու մեզ՝ ձեր ծառաները Յիսուսի համար. 6 որովհետեւ Աստուած, որ հրամայեց լոյսին՝ փայլիլ խաւարին մէջէն, ինք փայլեցաւ մեր սիրտերուն մէջ՝ Աստուծոյ փառքին գիտութեան լոյսը տալու համար Յիսուս Քրիստոսի դէմքին վրայ: 7 Բայց մենք ունինք այս գանձը հողէ անօթներու մէջ, որպէսզի զօրութեան գերազանցութիւնը ըլլայ Աստուծմէ, եւ ոչ թէ մեզմէ: 8 Ամէն կողմէ կը տառապինք, բայց տազնապած չենք. վարանումի մէջ ենք, բայց յուսահատած չենք. 9 հալածուած ենք, բայց լքուած չենք. խորտակուած ենք, բայց կորսուած չենք: 10 Ամէն ատեն Յիսուսի մահը կը կրենք մեր մարմինին մէջ, որպէսզի Յիսուսի կեանքն ալ յայտնաբերուի մեր մարմինին մէջ: 11 Որովհետեւ մենք որ կ'ապրինք՝ ամէն ատեն Յիսուսի համար մահուան կը մատնուինք, որպէսզի Յիսուսի կեանքն ալ յայտնաբերուի մեր մահկանացու մարմինին մէջ: 12 Ուստի՝ մահը կը ներգործէ մեր մէջ, իսկ կեանքը՝ ձեր մէջ: 13 Բայց հաւատքին նոյն հոգին ունինք, ինչպէս գրուած է. «Հաւատացի, ուստի խօսեցայ»: Մենք ալ կը հաւատանք, ուստի կը խօսինք: 14 Գիտենք թէ ան՝ որ յարուցանեց Տէր Յիսուսը, մեզ ալ պիտի յարուցանէ Յիսուսի միջոցով, եւ անոր

պիտի ներկայացնէ՝ ձեզի հետ: 15 Որովհետեւ
ամէն բան ձեզի համար է, որպէսզի այն
շնորհքը՝ աւելցած շատերու շնորհակալութեամբ՝
ճոխանայ Աստուծոյ փառքին համար: 16
Յետեւաբար չենք ձանձրանար. եւ թէպէտ մեր
արտաքին մարդը կ'ապականի, ներքին մարդը
օրէ օր կը նորոգուի: 17 Արդարեւ մեր թեթեւ,
վայրկենական տառապանքը՝ մեզի համար
կը պատրաստէ գերազանց ու յաւիտենական
կշիռք ունեցող փառք մը. (aiōnios g166) 18 քանի
որ մենք կը նայինք ոչ թէ տեսանելի բաներուն,
հապա՝ անտեսանելիներուն. որովհետեւ
տեսանելի բաները ժամանակաւոր են, իսկ
անտեսանելիները՝ յաւիտենական: (aiōnios g166)

5 Արդարեւ գիտենք թէ եթէ մեր վրանի նման
երկրային տունը քակուի, շինուածք մը ունինք
Աստուծմէ, անձեռակերտ յաւիտենական տուն
մը՝ երկինքի մէջ. (aiōnios g166) 2 եւ իրապէս ասոր մէջ
կը հառաչենք՝ տենչալով հազնիլ մեր երկնաւոր
բնակութիւնը. 3 սակայն երբ զայն հազնինք՝ մերկ
չգտնուինք: 4 Որովհետեւ մենք՝ որ այս վրանին
տակն ենք, ծանրութեան տակ կը հառաչենք.
ոչ թէ կ'ուզենք հանուիլ, հապա՝ հազնիլ զայն
ասոր վրայ, որպէսզի մահկանացութիւնը ընկղմի
կեանքին մէջ: 5 Ուրեմն ան՝ որ պատրաստեց
մեզ այդ նոյն բանին համար՝ Աստուած է, որ
նաեւ տուաւ մեզի Հոգիին գրաւականը: 6 Ուստի
ամէն ատեն վստահութիւն ունինք, գիտնալով
թէ մինչ մարմինի մէջ ենք՝ հեռու ենք Տէրոջմէն.

7 (որովհետեւ հաւատքով կ'ընթանանք, եւ ոչ
թէ տեսողութեամբ.) 8 վստահութիւն ունինք,
եւ առաւելապէս կ'ուզենք հեռանալ մարմինէն
ու մօտ ըլլալ Տէրոջ: 9 Ուստի պատիւ կը
համարենք ընդունելի ըլլալ անոր, մօտ թէ
հեռու: 10 Որովհետեւ պէտք է որ բոլորս ալ
ներկայանանք Քրիստոսի դատարանին առջեւ,
որպէսզի իւրաքանչիւրը ստանայ այն բաներուն
համեմատ՝ որ իր մարմինին մէջ եղած ատեն
ըրած է, բարի կամ չար: 11 Ուրեմն՝ գիտնալով
Տէրոջ վախը՝ կը համոզենք մարդիկ. սակայն
մենք բացայայտ ենք Աստուծոյ առջեւ, եւ կը
յուսամ թէ բացայայտ ենք նաեւ ձեր խղմտանքին
մէջ: 12 Որովհետեւ մենք մեզ դարձեալ չենք
յանձնարարեր ձեզի, հապա առիթ կու տանք ձեզի՝
մեզմով պարծենալու. որպէսզի բան մը ունենաք
պատասխանելու անոնց՝ որ կը պարծենան
երեւոյթով, եւ ոչ թէ սիրտով: 13 Քանի որ եթէ
ցնորած ենք՝ ատիկա Աստուծոյ համար է, ու
եթէ խոհեմ ենք՝ ատիկա ձեզի համար է: 14
Որովհետեւ Քրիստոսի սէրը կը պարտադրէ մեզ,
ու մեր դատումը սա՛ է, թէ եթէ մէկը մեռաւ
բոլորին համար, ուրեմն բոլորն ալ մեռան: 15 Ան
բոլորին համար մեռաւ, որպէսզի ապրողները
այլեւս չապրին իրենք իրենց համար, հապա անոր
համար՝ որ մեռաւ իրենց համար, եւ յարութիւն
առաւ: 16 Հետեւաբար ասկէ ետք մենք ոչ մէկը
կը ճանչնանք մարմինով. թէպէտ Քրիստոսը
ճանչցանք մարմինով, հիմա ալ այնպէս չենք

ճանչնար: 17 Ուրեմն եթէ մէկը Քրիստոսի մէջ է, ան նոր արարած մըն է. նախկին բաները անցան, եւ ահա՛ ամէն բան նոր եղաւ: 18 Եւ ամէն բան Աստուծոյ է, որ հաշտեցուց մեզ իրեն հետ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով, ու տուաւ մեզի հաշտութեան սպասարկութիւնը. 19 այսինքն Աստուած էր, որ Քրիստոսով հաշտեցուց աշխարհը իրեն հետ՝ անոնց յանցանքները չվերագրելով իրենց, ու յանձնեց մեզի հաշտութեան խօսքը: 20 Ուրեմն մենք դեսպաններ ենք Քրիստոսի համար, որպէս թէ Աստուած կ'աղաչէր ձեզի մեր միջոցով. կ'աղերսենք ձեզի Քրիստոսի կողմէն, հաշտուեցէ՛ք Աստուծոյ հետ: 21 Որովհետեւ Աստուած մեզի համար մեղաւոր համարեց՝ ան՝ որ մեղք չէր գիտեր, որպէսզի մենք Աստուծոյ արդարութիւնը ըլլանք անով:

6 2 Որովհետեւ կ'ըսէ. «Պատեհ ժամանակին պատասխանեցի քեզի, եւ փրկութեան օրը օգնեցի քեզի»: Ահա՛ հիմա է պատեհ ժամանակը, ահա՛ հիմա է փրկութեան օրը: 3 Բնաւ սայթաքում չենք պատճառեր՝ որեւէ բանի մէջ, որպէսզի մեր սպասարկութիւնը չարատաւորուի: 4 Հապա ամէն բանի մէջ մենք մեզ կը հաստատենք որպէս Աստուծոյ սպասարկուններ, շատ համբերութեամբ, տառապանքներու մէջ, հարկադրանքներու, տաճնապներու, 5 ծեծերու, բանտերու, խառնակութիւններու, աշխատանքներու, հսկումներու, ծոմերու մէջ, 6 մաքրակեցութեամբ, գիտութեամբ,

համբերատարութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ
 Հոգիով, անկեղծ սիրով, 7 ճշմարտութեան
 խօսքով, Աստուծոյ զօրութեամբ, արդարութեան
 զրահով՝ որ աջ կողմէն ու ձախ կողմէն է. 8
 փառքով եւ անպատուութեամբ, վատ համբաւով
 թէ բարի համբաւով, մոլորեցուցիչներու պէս՝
 բայց ճշմարտախօսներ, 9 անծանօթներու պէս՝
 սակայն լաւ ճանչցուածներ. մահամերձի պէս՝ եւ
 ահա կ'ապրինք, պատժուածներու պէս՝ ու չենք
 մեռցուած. 10 տրտմածներու պէս՝ բայց միշտ
 կ'ուրախանանք, աղքատներու պէս՝ սակայն կը
 հարստացնենք շատերը, ոչինչ ունեցողներու
 պէս՝ մինչդեռ տիրացած ենք ամէն բանի: 11
 Կորնթացիներ, մեր բերանը բացուած է ձեզի,
 եւ մեր սիրտը՝ լայնցած: 12 Դուք մեր մէջ նեղը
 ինկած՝ չէք, հապա ձեր սիրտին մէջ՝ նեղը ինկած
 էք: 13 Ուրեմն, փոխարէնը հատուցանելու համար
 (կը խօսիմ ձեզի՝ իբր զաւակներուս), դուք ալ
 ձեր սիրտը լայնցուցէք: 14 Անհաւատներուն
 հետ անյարիր լծակից՝ մի ըլլաք. բանի որ
 ինչ ընկերակցութիւն ունի արդարութիւնը
 անօրէնութեան հետ, ինչ հաղորդութիւն ունի
 լոյսը խաւարին հետ, 15 եւ ինչ միաբանութիւն
 ունի Քրիստոս Բեղիարի հետ. կամ ինչ բաժին
 ունի հաւատացեալը անհաւատին հետ, 16 եւ
 ինչ համաձայնութիւն ունի Աստուծոյ տաճարը
 կուռքերուն հետ, որովհետեւ դուք ապրող
 Աստուծոյ տաճարն էք՝ ինչպէս Աստուած ըսաւ.
 «Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց մէջ պիտի

շրջիմ. անոնց Աստուած պիտի ըլլամ ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան: 17 Ուստի ելէք անոնց մէջէն եւ զատուեցէք, - կ'ըսէ Տէրը: - Անմաքուր բանի մի դաշիք, 18 ու ես պիտի ընդունիմ ձեզ. ես Հայր պիտի ըլլամ ձեզի, ու դուք՝ իմ որդիներս եւ աղջիկներս պիտի ըլլաք, - կ'ըսէ Ամենակալ Տէրը»:

7 Ուրեմն, սիրելիներ, այս խոստումները ունենալով՝ մաքրէ՛ք մենք մեզ մարմինի ու հոգիի ամէն տեսակ պղծութենէ, եւ կատարելագործէ՛ք սրբացումը Աստուծոյ վախով: 2 Ընդունեցէ՛ք մեզ՝: Ո՛չ մէկը անիրաւեցինք, ո՛չ մէկը ապականեցինք եւ ո՛չ մէկը կեղեքեցինք: 3 Չեմ ըսեր ասիկա՝ դատապարտելու համար ձեզ, որովհետեւ նախապէս ըսեր եմ թէ դուք մեր սիրտին մէջ էք՝ միասին մեռնելու եւ ապրելու: 4 Մեծ է խօսքի համարձակութիւնս ձեզի հանդէպ, մեծ է ձեզմով պարծանքս, լեցուած եմ մխիթարութեամբ, չափազանց ուրախ եմ մեր ամբողջ տառապանքին մէջ: 5 Որովհետեւ՝ երբ մենք Մակեդոնիա հասանք՝ մեր մարմինը բնաւ անդորրութիւն չունեցաւ, այլ ամէն կողմէ կը տառապէինք. դուրսէն կռիւներ կային, իսկ ներսէն՝ վախեր: 6 Բայց Աստուած, որ խոնարհները կը մխիթարէ, մեզ մխիթարեց Տիտոսի գալուստով: 7 Եւ ո՛չ միայն անոր գալուստով, այլ նաեւ այն մխիթարութեամբ՝ որով ինք մխիթարուած էր ձեզմով, երբ պատմեց մեզի ձեր տենչանքը, ձեր կոծը, ինծի հանդէպ ձեր ունեցած նախանձախնդրութիւնը, այնպէս

որ անլաւելի ուրախացայ: **8** Որովհետեւ, թէպէտ տրտմեցուցի ձեզ այդ նամակով, չեմ գղջար, (թէպէտ գղջացեր էի,) քանի որ կը նշմարեմ թէ այդ նամակը տրտմեցուց ձեզ, թէպէտ միայն ժամանակ մը: **9** Ուրեմն կ'ուրախանամ, ոչ թէ քանի որ տրտմեցաք, հապա՛ որովհետեւ տրտմեցաք ապաշխարութեան համար. քանի որ տրտմեցաք Աստուծոյ ուզած կերպով, որպէսզի ոչինչ կորսնցուցած ըլլաք մեր միջոցով: **10** Արդարեւ Աստուծոյ ուզած տրտմութիւնը կը պատճառէ՝ ապաշխարութիւն՝ փրկութեան համար, որ չի գղջացներ. բայց աշխարհի տրտմութիւնը կը պատճառէ մահ: **11** Քանի դուք տրտմեցաք Աստուծոյ ուզած կերպով, ահա՛ այդ բանը ձեր մէջ ինչ փութաջանութիւն գոյացուց, նոյնիսկ ջատագովութիւն, ընդվզում, վախ, տենչանք, նախանձախնդրութիւն, վրէժխնդրութիւն. ամէն կերպով դուք ձեզի հաւանութիւն տուիք թէ այդ խնդիրին մէջ անկեղծ էք: **12** Ուրեմն ինչ որ գրեցի ձեզի, ոչ թէ անիրաւութիւնը ընողին պատճառով էր, եւ ոչ ալ անիրաւութիւնը կրողին պատճառով, հապա՛ որպէսզի երեւնայ ձեզի Աստուծոյ առջեւ մեր ունեցած փութաջանութիւնը ձեզի հանդէպ: **13** Ուստի ձեր մխիթարութեամբ մենք մխիթարուեցանք. եւ անլաւելի ուրախացանք Տիտոսի ուրախութեան համար, որովհետեւ անոր հոգին հանգստացած էր բոլորէդ. **14** քանի որ ամօթահար չեմ ըլլար՝ ձեզմով որեւէ բանի մէջ պարծենալու համար անոր առջեւ. հապա,

ինչպէս ամէն բան ճշմարտութեամբ խօսեցանք ձեզի, նոյնպէս Տիտոսի առջեւ մեր պարծանքն ալ ճշմարիտ գտնուեցաւ: **15** Նաեւ իր գորովը աւելի առատ է ձեզի հանդէպ, մինչ կը վերյիշէ ձեր բոլորին հնազանդութիւնը, թէ ինչպէս ահով ու դողով ընդունեցիք զինք: **16** Ուստի կ'ուրախանամ որ ամէն բանի մէջ վստահութիւն ունիմ ձեր վրայ:

8 Եղբայրներ, ձեզի կը տեղեկացնենք Աստուծոյ շնորհքին մասին, որ տրուած է Մակեդոնիայի եկեղեցիներուն. **2** թէ ինչպէս՝ տառապանքի մեծ փորձի մը մէջ՝ իրենց առատ ուրախութիւնը եւ իրենց ծանր աղքատութիւնը ճոխացան իրենց հարուստ առատաձեռնութեամբ: **3** Որովհետեւ ես կը վկայեմ թէ իրենց կարողութեան համեմատ, ու կարողութենէն ալ աւելի յօժարակամ ըլլալով, **4** շատ պնդումով կ'աղերսէին մեզի՝ որ ընդունինք շնորհքը եւ սուրբերուն համար եղած սպասարկութեան հաղորդակցութիւնը: **5** Ո՛չ թէ ինչպէս մենք կը յուսայինք, հապա իրենք զիրենք ալ տուին՝ նախ Տէրոջ, ու յետոյ մեզի՝ Աստուծոյ կամքով: **6** Այնքան՝ որ աղաչեցինք Տիտոսի, որ ինչպէս ան նախապէս սկսաւ, նոյնպէս նաեւ աւարտէ ձեր մէջ այդ շնորհքն ալ: **7** Հետեւաբար, ինչպէս դուք ճոխացած էք ամէն բանով, (հաւատքով, խօսքով, գիտութեամբ, ամբողջ փութաջանութեամբ եւ մեզի հանդէպ ձեր տածած սիրով,) ճոխացէ՛ք նաեւ այս շնորհքով: **8** Կը խօսիմ ո՛չ թէ հրամայելով, հապա՝ ուրիշներուն փութաջանութեան առիթով, ու փորձարկելու

համար ձեր սիրոյն անկեղծութիւնը: **9** Քանի որ դուք գիտէք մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքը, որ թէպէտ հարուստ էր՝ ձեզի համար աղքատ եղաւ, որպէսզի դուք հարստանաք անոր աղքատանալով: **10** Եւ այս մասին կարծիք մը կու տամ, որովհետեւ ասիկա օգտակար է ձեզի, դուք՝ որ նախապէս սկսաք՝ անցեալ տարուքնէ՝ ոչ միայն ընել, այլ նաեւ կամենալ: **11** Իսկ հիմա ընէ՛ն ալ կատարեցէք, որպէսզի՝ ինչպէս յօժարութիւն կար, նոյնպէս ալ կատարում ըլլայ՝ ձեր ունեցածէն: **12** Որովհետեւ եթէ նախապէս յօժարութիւն ըլլայ, տալը ընդունելի է՝ մէկու մը ունեցածին համեմատ, եւ ոչ թէ չունեցածին համեմատ: **13** Քանի որ ես չեմ ուզեր որ ուրիշները անդորր ըլլան ու դուք տառապիք. **14** հապա հաւասարութեամբ՝ հիմա, այս ատեն, ձեր լիութիւնը լրացնէ անոնց պակասը, որպէսզի անոնց լիութիւնն ալ օր մը լրացնէ ձեր պակասը, եւ այսպէս հաւասարութիւն ըլլայ: **15** Ինչպէս գրուած է. «Անոր որ շատ ժողվեց՝ ոչինչ աւելցաւ, իսկ անոր որ քիչ ժողվեց՝ ոչինչ նուազեցաւ»: **16** Բայց շնորհակալութիւն Աստուծոյ, որ այս նոյն անձկալից փութաջանութիւնը դրաւ Տիտոսի սիրտին մէջ՝ ձեզի համար: **17** Արդարեւ ան ընդունեց մեր յորդորը. բայց աւելի փութաջան ըլլալով՝ իր իսկ համաձայնութեամբ գնաց ձեզի: **18** Անոր հետ ղրկեցինք նաեւ այն եղբայրը, որուն գովեստը կ'ըլլայ բոլոր եկեղեցիներուն մէջ՝ աւետարանին համար: **19** Եւ ոչ միայն այսքան,

հապա նաեւ եկեղեցիներէն ընտրուեցաւ իբր մեզի ճամբորդակից՝ այս շնորհքին հետ, որ մենք կը սպասարկենք նոյն Տէրոջ փառքին համար, ու ձեր յօժարութեամբ: **20** Կը զգուշանայինք որ զձեզ մեզ արատաւորէ այս ճոխութեան մէջ, որ կը սպասարկուի մեր միջոցով. **21** քանի որ կը մտադրէինք զձեզ միայն Տէրոջ առջեւ, հապա մարդոց առջեւ ալ ընել ինչ որ պարկեշտ է: **22** Անոնց հետ դրկեցինք մեր եղբայրը, որուն փութաջանութիւնը յաճախ փորձարկած ենք շատ բաներու մէջ, իսկ հիմա ալ աւելի փութաջան է, քանի որ մեծ վստահութիւն ունի ձեր վրայ: **23** Ինչ կը վերաբերի Տիտոսի, ան հաղորդակիցս է ու ձեր մօտ իմ գործակիցս. իսկ մեր եղբայրները՝ եկեղեցիներէն դրկուածներն են, եւ Քրիստոսի փառքը: **24** Ուրեմն ատոնց ու եկեղեցիներուն առջեւ ցոյց տուէք ձեր սիրոյն եւ ձեզի հանդէպ մեր պարծանքին ապացոյցը:

9 Արդարեւ աւելորդ է որ գրեմ ձեզի՝ սուրբերուն սպասարկութեան մասին, **2** քանի զիտեմ ձեր յօժարութիւնը. անոր մասին կը պարծենամ ձեզմով Մակեդոնացիներուն առջեւ, ըսելով թէ Աքայիացիները անցեալ տարուընէ պատրաստուած էին. ու ձեր նախանձախնդրութիւնը դրդեց շատ շատերը: **3** Սակայն դրկեցի եղբայրները, որպէսզի ձեզի հանդէպ մեր պարծանքը ընդունայն չըլլայ այս մասին, հապա՝ ինչպէս ըսեր եմ՝ պատրաստուած ըլլաք. **4** որպէսզի՝ երբ Մակեդոնացիները

գան ինծի հետ եւ անպատրաստ գտնեն ձեզ՝
մենք (որ չըսենք՝ դուք) ամօթահար չըլլանք
այս նոյն պարծանքին վստահութեան համար:

5 Ուրեմն հարկաւոր համարեցի յորդորել
եղբայրները, որ նախապէս գան ձեզի ու կանխաւ
համախմբեն ձեր նախապէս ծանուցանած
առատաձեռնութիւնը, որպէսզի ան պատրաստ
ըլլայ իբր առատաձեռնութիւն, ոչ թէ իբր
ագահութիւն: 6 Բայց սա գիտցէք, թէ ան որ
խնայելով կը սերմանէ՝ խնայելով ալ պիտի
հնձէ, եւ ան որ առատաձեռնութեամբ կը
սերմանէ՝ առատաձեռնութեամբ պիտի հնձէ:

7 Իւրաքանչիւրը թող տայ՝ ինչպէս որոշած
է իր սիրտին մէջ, ոչ թէ տրտմութեամբ կամ
հարկադրաբար. որովհետեւ Աստուած կը
սիրէ ցնծութեամբ տուողը: 8 Եւ Աստուած
կարող է բոլոր շնորհքներով ճոխացնել ձեզ,
որպէսզի դուք՝ ամեն բանի մէջ ամեն ատեն լման
ինքնաբաւութիւն ունենալով՝ ճոխանաք ամեն
բարի գործով, 9 ինչպէս գրուած է. «Սփռեց եւ
աղբատներուն տուաւ. անոր արդարութիւնը
յաւիտեան կը մնայ»: (aiðn 9165) 10 Ուրեմն ան՝ որ սերմ
կը հայթայթէ սերմնացանին, կերակուրի համար
հաց հայթայթէ ձեզի ու բազմացնէ ձեր հունտը՝,
եւ աճեցնէ ձեր արդարութեան պտուղները: 11
Ամեն բանի մէջ հարստացած էք ամեն տեսակ
առատաձեռնութեամբ, ինչ որ մեր միջոցով
շնորհակալութիւն կը գոյացնէ Աստուծոյ հանդէպ.
12 որովհետեւ այս պաշտօնին սպասարկումը

նչ միայն կը լրացնէ սուրբերուն պակասը, այլ նաեւ կը ճոխանայ շատ շնորհակալութիւններով՝ ուղղուած Աստուծոյ: **13** Այս սպասարկութեան փորձառութեամբ անոնք պիտի փառաւորեն Աստուած՝ Քրիստոսի աւետարանին ձեր դաւանած ենթարկումին համար, նաեւ ձեր առատաձեռն հաղորդակցութեան համար՝ անոնց եւ բոլորին հետ. **14** ու պիտի աղերսեն ձեզի համար, կարօտնալով ձեզ Աստուծոյ գերազանց շնորհքին համար՝ որ ձեր մէջ է: **15** Շնորհակալութիւն Աստուծոյ՝ իր անպատմելի պարգեւին համար:

10 Ես ինքս՝ Պօղոս՝ կ'աղաչեմ ձեզի Քրիստոսի հեզութեամբ եւ ազնուութեամբ, ես՝ որ ձեր ներկայութեան մէջ խոնարհ եմ, բայց բացակայ ըլլալով՝ խիզախ եմ ձեզի հանդէպ: **2** Կ'աղերսեմ որ ներկայ եղած ատենս խիզախ չըլլամ այն վստահութեամբ՝ որով կը մտածեմ յանդուգն ըլլալ ոմանց դէմ, որոնք մեր մասին կը մտածեն այնպէս՝ իբր թէ կ'ընթանանք մարմնաւորապէս: **3** Քանի որ՝ թեպէտ մարմինով կ'ընթանանք, ոչ թէ մարմինին համաձայն կը մարտնչինք. **4** որովհետեւ մեր մարտին զէնքերը մարմնաւոր չեն, բայց Աստուծոյ միջոցով զօրաւոր են՝ ամբողջներու քանդումին համար: **5** Մենք կը քանդենք տրամաբանութիւններ եւ Աստուծոյ գիտութեան դէմ ինքզինք պանծացնող ամէն բարձր բան, ու Քրիստոսի հնազանդութեան գերի կը դարձնենք ամէն մտածում: **6** Եւ պատրաստ ենք վրէժ առնելու ամէն անհնազանդութեան համար,

երբ ձեր հնազանդութիւնը լման ըլլայ: **7** Բաներու արտաքին երեւոյթին կը նայիք: Եթէ ոեւէ մէկը կը վստահի ինքնիր վրայ՝ թէ ինք Քրիստոսինն է, դարձեալ թող մտածէ ինքնիրմէ՝ թէ ինչպէս ինք Քրիստոսինն է, նոյնպէս ալ՝ մենք: **8** Քանի որ նոյնիսկ եթէ աւելի պարծենայի մեր իշխանութեան վրայ, որ Տէրը տուած է մեզի՝ շինութեան համար, եւ ոչ թէ ձեր քանդումին համար, պիտի չամչնայի: **9** Որպէսզի չթուի թէ ես կ'ուզեմ զարհուրեցնել ձեզ նամակներով. **10** քանի որ կ'ըսեն. «Անոր նամակները ծանր ու հզօր են, բայց անոր մարմնական ներկայութիւնը տկար է, եւ իր խօսքը՝ անարգ»: **11** Այդպիսին թող մտածէ թէ ինչպէս որ ենք խօսքով՝ նամակներուն մէջ, երբ բացակայ ենք, նոյնպէս ալ պիտի ըլլանք գործով՝ երբ ներկայ ըլլանք: **12** Որովհետեւ մենք չենք յանդգնիր մենք մեզ դասել կամ բաղդատել ոմանց հետ՝ որ իրենք զիրենք կը յանձնարարեն. անոնք չեն հասկնար թէ իրենք իրենցմով կը չափուին եւ իրարու միջեւ կը բաղդատուին. **13** իսկ մենք չափէ դուրս պիտի չպարծենանք, հապա չափին համեմատ այն սահմանին՝ որ Աստուած բաշխեց մեզի, որպէսզի հասնինք մինչեւ ձեզ: **14** Արդարեւ մենք մեզ չենք ընդարձակեր մեր չափէն աւելի, որպէս թէ հասած չըլլայինք ձեզի. քանի որ իրապէս հասանք մինչեւ ձեզ՝ Քրիստոսի աւետարանով: **15** Մեր չափէն դուրս պիտի չպարծենանք՝ ուրիշներուն աշխատանքներով, հապա յոյս ունինք որ՝ երբ ձեր հաւատքը աճի՝ առատօրէն մեծարուինք ձեզմով,

մեր սահմանին համեմատ. 16 որպէսզի ձեզմէ անդին ալ աւետարանենք, եւ ոչ թէ պարծենանք ուրիշի սահմանին մէջ եղած պատրաստ բաներով: 17 Բայց ով որ պարծենայ՝ Տէրոջմով թող պարծենայ. 18 որովհետեւ գնահատելի է ոչ թէ ան՝ որ ինքզինք կը յանձնարարէ, հապա ան՝ որ Տէրը կը յանձնարարէ:

11 Երանի թէ կարենայիք քիչ մը հանդուրժել իմ անմտութեանս. եւ իսկապէս՝ հանդուրժեցէք ինծի: 2 Որովհետեւ նախանձախնդիր եմ ձեզի հանդէպ՝ Աստուծոյ նախանձախնդրութեամբ. քանի որ մէկ ամուսինի նշանեցի ձեզ, որպէսզի Քրիստոսի ներկայացնեմ ձեզ՝ մաքրակենցաղ կոյսի մը պէս: 3 Բայց կը վախնամ որ, ինչպէս օձը խաբեց Եւան իր խորամանկութեամբ, նոյնպէս ձեր միտքերը ապականին Քրիստոսի հանդէպ եղած պարզամտութենէն: 4 Որովհետեւ եթէ մէկը զար եւ քարոզէր ուրիշ Յիսուս մը՝ որ մենք չենք քարոզած, կամ ստանայիք ուրիշ հոգի մը՝ որ չէք ստացած, կամ ուրիշ աւետարան՝ որ չէք ընդունած, լաւ կը հանդուրժէիք այդպիսիին: 5 Քանի որ ես կը սեպեմ թէ ոչինչով ետ մնացած եմ գերագոյն առաքեալներէն. 6 ու թէպէտ անվարժ եմ խօսքի մէջ, բայց ոչ՝ գիտութեամբ. սակայն ամէն բանի մէջ մենք մեզ ամբողջովին բացայայտեցինք ձեզի: 7 Միթէ սխալ գործած եղայ ես զիս խոնարհեցնելով՝ որպէսզի դուք բարձրանաք, քանի որ ձրի քարոզեցի ձեզի Աստուծոյ աւետարանը. 8 կողոպտեցի ուրիշ եկեղեցիներ՝ թոշակ առնելով

անոնցմէ, որպէսզի սպասարկեն ձեզի: **9** Ձեր մէջ ներկայ եղած ատենս՝ երբ կարօտութեան մէջ էի, ձեզմէ ոչ մէկուն բեռ եղայ. որովհետեւ Մակեդոնիայէն եկող եղբայրները լրացուցին ինչ որ կը պակսէր ինծի. եւ ամէն կերպով զգուշացայ ձեզի ծանրութիւն ըլլալէ, ու դարձեալ պիտի զգուշանամ: **10** Քանի որ Քրիստոսի ճշմարտութիւնը իմ մէջս է, ոչ մէկը պիտի արգիլէ զիս այս պարծանքէն՝ Աթայիայի շրջանները: **11** Ինչո՞ւ. քանի որ չեմ սիրեր ձեզ: Աստուած գիտէ: **12** Բայց ինչ որ ըրի՝ դարձեալ պիտի ընեմ զայն, որպէսզի առիթը զլանամ անոնց՝ որ առիթ կ'ուզեն, որպէսզի իրենք ալ մեզի պէս գտնուին ինչով որ կը պարծենան: **13** Որովհետեւ այդպիսիները սուտ առաքեալներ են, նենգ գործաւորներ, որ իրենք զիրենք կը կերպարանափոխեն Քրիստոսի առաքեալներու: **14** Եւ զարմանալի չէ, որովհետեւ նոյնինքն Սատանան լուսաւոր հրեշտակի կը կերպարանափոխուի: **15** Ուրեմն մեծ բան մը չէ, որ անոր սպասարկուներն ալ արդարութեան սպասարկուներու կերպարանափոխուին: Անոնց վախճանը պիտի ըլլայ իրենց գործերուն համեմատ: **16** Դարձեալ կ'ըսեմ, ոչ մէկը թող կարծէ թէ ես անմիտ եմ. այլապէս՝ գոնէ անմիտի մը պէս ընդունեցէք զիս, որպէսզի ես ալ քիչ մը պարծենամ ինձմով: **17** Ինչ որ կը խօսիմ, կը խօսիմ ոչ թէ Տէրոջ կողմէն, հապա՛ որպէս թէ անմտութեամբ, այս պարծանքին վստահութեամբ: **18** Քանի շատեր կը պարծենան մարմինի համեմատ, ես ալ պիտի

պարծենամ. 19 քանի որ դուք հաճոյքով կը
 հանդուրժէք անմիտներուն, դուք ձեզ իմաստուն
 նկատելով: 20 Որովհետեւ կը հանդուրժէք, եթէ
 մէկը ստրուկ ընէ ձեզ, եթէ մէկը լափէ ձեր
 ստացուածքը, եթէ մէկը բան մը առնէ ձեզմէ, եթէ
 մէկը պանծացնէ ինքզինք, եթէ մէկը զարնէ ձեր
 երեսին: 21 Կը խօսիմ որպէս անպատուութիւն, իբր
 թէ մենք տկար եղած ըլլայինք. բայց ինչ քանի մէջ
 որ մէկը յանդուգն է, (անմտութեամբ կը խօսիմ,))
 էս ալ յանդուգն եմ: 22 Անոնք Եբրայեցի են. էս ալ:
 Իսրայելացի են. էս ալ: 23 Աբրահամի զարմէն են. էս
 ալ: Քրիստոսի սպասարկուններ են. (անմտութեամբ
 կը խօսիմ) ալ աւելի ես: Աշխատանքներով՝ աւելի
 շատ, ծեծերով՝ չափէն աւելի, բանտերու մէջ՝
 աւելի շատ, մահուան վտանգներով՝ յաճախ:
 24 Հրեաներէն հինգ անգամ քառասունէն մէկ
 պակաս ծեծ ստացայ: 25 Երեք անգամ ձաղկով
 ծեծուեցայ. մէկ անգամ քարկոծուեցայ. երեք
 անգամ նաւաբեկութիւն կրեցի. գիշեր մը ու ցերեկ
 մը մնացի ծովու անդունդին մէջ: 26 Յաճախ
 չարչարուեցայ ճամբորդութիւններու մէջ. կրեցի
 վտանգներ գետերէն, վտանգներ աւազակներէն.
 վտանգներ իմ ցեղէս, վտանգներ հեթանոսներէն.
 վտանգներ քաղաքի մէջ, վտանգներ անապատի
 մէջ. վտանգներ ծովու վրայ, վտանգներ սուտ
 եղբայրներու մէջ: 27 Աշխատանքի ու տաժանքի
 մէջ էի, յաճախ՝ հսկումներու մէջ, անօթութեան
 եւ ծարաւի մէջ, շատ անգամ՝ ծոմապահութեան,
 ցուրտի ու մերկութեան մէջ: 28 Բացի այդ

արտաքին բաներէն, բոլոր եկեղեցիներուն հոգը
կը բարդուէր վրաս ամէն օր: **29** Ո՞վ տկար է, ու ես ալ
տկար չեմ. ո՞վ կը գայթակղի, եւ իմ սիրտս չի վառիր:
30 Եթէ պետք ըլլայ պարծենալ, պիտի պարծենամ
իմ տկարութիւններու վերաբերեալ բաներով:
31 Մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Աստուածը
եւ Հայրը, որ յաւիտեան օրհնեալ է, գիտէ թէ
չեմ ստեր: **(aiðn g165)** **32** Դամասկոսի մէջ, Արետա
թագաւորին ազգապետը՝ Դամասկոսցիներուն
քաղաքը կը պահպանէր պահակազօրքով,
ուզելով ձերբակալել զիս: **33** Բայց պարիսպէն վար
իջեցուցին զիս՝ պատուհանէ մը, զամբիւղի մը
մէջ, ու խուսափեցայ անոր ձեռքերէն:

12 Պարծենալ՝ իրապէս օգտակար չէ ինծի.
սակայն պիտի գամ Տէրոջ տեսիլքներուն եւ
յայտնութիւններուն: **2** Կը ճանչնամ մարդ մը
Քրիստոսով՝ աւելի քան տասնչորս տարի առաջ.
(արդեօք մարմինով էր, չեմ գիտեր. արդեօք
մարմինէն դուրս էր, չեմ գիտեր. Աստուած գիտէ.)
այդպիսի մէկը յափշտակուեցաւ մինչեւ երրորդ
երկինքը: **3** Եւ գիտեմ թէ այդպիսի մարդ մը,
(արդեօք մարմինով էր թէ մարմինէն դուրս էր,
չեմ գիտեր, Աստուած գիտէ,) **4** յափշտակուեցաւ
դրախտը ու լսեց անճառելի խօսքեր, որոնց
մասին մարդու մը համար արտօնուած չէ խօսիլ: **5**
Ես պիտի պարծենամ այդպիսի մէկով. սակայն
պիտի չպարծենամ ես ինձմով, բայց միայն իմ
տկարութիւններովս: **6** Որովհետեւ՝ նոյնիսկ եթէ
ուզեմ պարծենալ՝ անմիտ պիտի չըլլամ, քանի որ

պիտի ըսեն ճշմարտութիւնը. բայց կը խնայեն
 խօսքս՝ որ ոչ մէկը իմ վրաս աւելի համարում
 ունենայ, քան ինչ որ կը տեսնէ իմ վրաս կամ կը լսէ
 իմ մասին: 7 Եւ որպէսզի չափէն աւելի չպանծամ
 յայտնութիւններուն գերազանցութեամբ,
 մարմինի փուշ մը տրուեցաւ ինծի, Սատանայի
 պատգամաւոր մը՝ կռիւահարելու համար զիս,
 որպէսզի չպանծամ չափէն աւելի: 8 Ասոր համար
 երեք անգամ աղաչեցի Տէրոջ, որ հեռանայ
 ինծմէ: 9 Բայց ըսաւ ինծի. «Իմ շնորհքս կը բաւէ
 քեզի, որովհետեւ իմ զօրութիւնս կ'իրագործուի
 տկարութեան մէջ»: Ուրեմն մեծ հաճոյքով պիտի
 պարծենամ առաւելապէս իմ տկարութիւններովս,
 որպէսզի Քրիստոսի զօրութիւնը հանգչի իմ
 վրաս: 10 Ուստի կը յօժարիմ տկարութիւններու,
 արհամարհանքներու, հարկադրանքներու,
 հալածանքներու եւ տագնապներու՝ Քրիստոսի
 համար, որովհետեւ երբ տկար եմ՝ այն ատեն
 զօրաւոր եմ: 11 Ես անմիտ եղայ պարծենալով. որք
 հարկադրեցիք զիս. որովհետեւ եւս պարտաւոր
 էի յանձնարարուած ըլլալ ձեզմէ, քանի որ
 ոչինչով ետ կը մնամ գերագոյն առաքեալներէն,
 թպէտ ես ոչինչ եմ: 12 Իրապէս առաքեալի
 մը նշանները գործուեցան ձեր մէջ՝ ամբողջ
 համբերութեամբ, նշաններով, սքանչելիքներով եւ
 հրաշքներով: 13 Որովհետեւ ինչով ետ մնացիք
 միւս եկեղեցիներէն, բացի անով՝ որ ես բեռ
 չեղայ ձեզի: Ներեցէք ինծի այս անիրաւութիւնը:
 14 Ահա այս երրորդ անգամն է որ պատրաստ

եմ գալու ձեզի. բայց բեռ պիտի չըլլամ ձեզի,
 որովհետեւ կը փնտռեմ ո՛չ թէ ձեր ունեցածը,
 հապա՜ ձեզ: Քանի որ գաւակները պարտաւոր
 չեն գանձ դիզել ծնողներուն համար, հապա
 ծնողները՝ գաւակներուն համար: **15** Ու ես մեծ
 հաճոյքով պիտի ծախսեմ եւ ծախսուիմ ալ ձեզի
 համար, թէեւ նուազ սիրուիմ ձեզմէ՝ մինչ շատ
 աւելի կը սիրեմ ձեզ: **16** Սակայն այդպէս թող
 ըլլայ, ես ձեզ չծանրաբեռնեցի. բայց թերեւս
 մէկը ըսէ թէ խորամանկ ըլլալով՝ նենգութեամբ
 բռնեցի ձեզ: **17** Միթէ ձեզ կեղեքեցի՞ ոեւէ մէկուն
 միջոցով՝ որ դրկեցի ձեզի: **18** Աղաչեցի Տիտոսի,
 ու եղբայր մը դրկեցի անոր հետ. միթէ Տիտոս
 կեղեքեց ձեզ: Մենք նոյն հոգիով չընթացանք, նոյն
 հետքերով չբալեցինք: **19** Դարձեալ՝ կը կարծե՞ք
 թէ մենք մեզ կը ջատագովենք ձեր առջեւ: Մենք
 Քրիստոսով կը խօսինք՝ Աստուծոյ առջեւ. բայց
 ամէն բան կ'ընենք, սիրելիներ, ձեր շինութեան
 համար: **20** Որովհետեւ կը վախնամ որ երբ
 գամ՝ գուցէ չգտնեմ ձեզ ուզածիս պէս, ու ես
 ալ՝ ձեզի համար՝ գտնուիմ ձեր չուզածին պէս.
 թերեւս ձեր մէջ ըլլան հակամարտութիւններ,
 նախանձներ, գայրոյթներ, հակառակութիւններ,
 բամբասանքներ, բանսարկութիւններ,
 յիսորտանքներ, խառնակութիւններ: **21** Թերեւս
 երբ դարձեալ գամ՝ իմ Աստուծոս նուաստացնէ
 զիս ձեր քով, ու սգամ շատերուն համար՝ որ
 նախապէս մեղանշած են բայց ապաշխարած չեն

իրենց գործած անմաքրութենէն, պոռնկութենէն
ու ցոփութենէն:

13 Այս երրորդ անգամն է որ կու գամ ձեզի.
ամէն խօսք պիտի հաստատուի երկու կամ
երեք վկաներու բերանով: 2 Նախապէս ըսի,
ու երկրորդ անգամ կանխաւ կ'ըսեմ (որպէս
թէ ներկայ ըլլամ). թէպէտ հիմա բացակայ եմ,
կը գրեմ առաջուան մեղանշողներուն եւ բոլոր
միւսներուն, որ եթէ դարձեալ գամ՝ պիտի չխնայեմ.
3 որովհետեւ ապացոյց կը փնտռէք թէ Քրիստոս
կը խօսի ինձմով: Ան տկար չէ ձեզի հանդէպ,
հապա հզօր է ձեր մէջ. 4 քանի որ՝ թէպէտ
խաչուեցաւ տկարութեամբ՝ կ'ապրի Աստուծոյ
զօրութեամբ. մենք ալ տկար ենք անով, բայց
պիտի ապրինք անոր հետ՝ Աստուծոյ զօրութեամբ,
ձեզի սպասարկելու համար: 5 Փորձեցէք դուք
ձեզ՝ թէ հաւատքին մէջն էք. քննեցէք դուք ձեզ:
Չէք գիտեր դուք ձեզմէ՝ թէ Յիսուս Քրիստոս ձեր
մէջն է, եթէ խոտելի չըլլաք: 6 Բայց կը յուսամ
թէ պիտի գիտնաք՝ թէ մենք խոտելի չենք: 7
Կ'աղօթեմ Աստուծոյ՝ որ դուք ոչ մէկ չարիք ընէք.
ոչ թէ՝ որպէսզի մենք գնահատելի երեւինք, հապա՝
որպէսզի դուք ընէք ինչ որ պարկեշտ է, թէեւ մենք
խոտելի թուինք: 8 Որովհետեւ ճշմարտութեան
դէմ ոչինչ կրնանք ընել, հապա՝ ճշմարտութեան
համար: 9 Քանի որ կ'ուրախանանք՝ երբ մենք
տկար ենք, իսկ դուք՝ զօրաւոր էք. սա կ'ըղձանք
նաեւ - ձեր կատարելութիւնը: 10 Ուստի կը գրեմ
ձեզի այս բաները՝ բացակայ ըլլալով, որպէսզի

երբ ներկայ ըլլամ՝ սաստկութեամբ չվարուիմ այն
իրաւասութեան համեմատ, որ Տէրը տուաւ ինծի՝
շինելու, եւ ոչ թէ քանդելու համար: **11** Վերջապէս,
եղբայրներ, ողջ եղէք: Կատարեալ եղէք, լաւ
մխիթարուեցէք, միաբան եղէք, խաղաղութեամբ
ապրեցէք. եւ սիրոյ ու խաղաղութեան Աստուածը
ձեզի հետ պիտի ըլլայ: **12** Բարեւեցէ՛ք զիրար սուրբ
համբոյրով. **13** բոլոր սուրբերը կը բարեւեն ձեզ: **14**
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Աստուծոյ սէրը
եւ Սուրբ Հոգիին հաղորդութիւնը ձեր բոլորին
հետ: Ամէն:

ԳԱՂԱՏԱՑԻՍ

1 Պօղոս, առաքեալ եղած՝ ոչ մարդոցմէ, ոչ ալ մարդու միջոցով, հապա Յիսուս Քրիստոսի միջոցով, եւ Յայր Աստուծոյ՝ որ մեռելներէն յարուցանեց զայն, **2** ու բոլոր եղբայրները՝ որ ինծի հետ են, Գաղատիայի եկեղեցիներուն. **3** շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Յայր Աստուծմէ, ու մեր Տէրոջմէն՝ Յիսուս Քրիստոսէ, **4** որ ընծայեց ինքզինք մեր մեղքերուն համար, որպէսզի ազատէ մեզ այս ներկայ չար աշխարհէն՝ Աստուծոյ եւ մեր Յօր կամքին համաձայն, **(aiðn g165)** **5** որուն փառք դարե դար՝: Ամէն: **(aiðn g165)** **6** Կը զարմանամ որ այդչափ շուտ անցած էք այն աւետարանէն՝ որ կանչեց ձեզ Քրիստոսի շնորհքին, ուրիշ աւետարանի մը. **7** ան ուրիշ աւետարան մը չէ, այլ կան ոմանք՝ որ կը վրդովեն ձեզ, ու կ'ուզեն խեղաթիւրել Քրիստոսի աւետարանը: **8** Բայց նոյնիսկ եթէ մենք, կամ երկինքէն հրեշտակ մը, քարոզէ ձեզի ուրիշ որեւէ աւետարան՝ քան զայն որ մենք քարոզեցինք ձեզի, նզովեալ ըլլայ: **9** Ինչպէս նախապէս ըսինք, հիմա ալ ես դարձեալ կ'ըսեմ. «Եթէ մէկը քարոզէ ձեզի ուրիշ որեւէ աւետարան՝ քան զայն որ դուք ընդունեցիք, նզովեալ ըլլայ»: **10** Որովհետեւ հիմա մարդիկ կը համոզեմ՝ թէ Աստուած. կամ մարդիկ կը ջանամ հաճեցնել: Քանի որ եթէ ես տակաւին մարդիկ հաճեցնեի, ալ Քրիստոսի ծառայ չէի ըլլար: **11** Բայց ձեզի կը ծանուցանեմ, եղբայրներ, թէ ինծմէ քարոզուած աւետարանը՝ մարդու

համաձայն չէ: **12** Որովհետեւ ես զայն ոչ մարդէ
 ընդունեցի, ոչ ալ մէկէ մը սորվեցայ, հապա՝
 Յիսուս Քրիստոսի յայտնութեան միջոցով: **13**
 Քանի որ դուք լսած էք իմ նախկին վարքիս
 մասին՝ հրեութեան մէջ, թէ ինչպէս չափէն աւելի
 կը հալածէի Աստուծոյ եկեղեցին, ու կը տապալէի
 զայն: **14** Եւ հրեութեան մէջ կը յառաջդիմէի՝ աւելի
 քան իմ ցեղիս մէջ եղած շատ մը հասակակիցներս,
 գերազանցօրէն աւելի նախանձախնդիր ըլլալով
 հայրերուս աւանդութիւններուն: **15** Բայց երբ
 Աստուած, (որ զատեց զիս մօրս որովայնէն եւ
 կանչեց իր շնորհքին միջոցով,) **16** բարեհաճեցաւ
 իր Որդին յայտնել ինծի, որպէսզի աւետեմ
 զայն հեթանոսներուն մէջ, իսկոյն՝ մարմինին
 եւ արիւնին հետ չխորհրդակցեցայ, **17** ոչ
 ալ Երուսաղէմ ելայ՝ ինձմէ առաջ առաքեալ
 եղողներուն քով, հապա Արաբիա գացի, ապա
 դարձեալ Դամասկոս վերադարձայ: **18** Յետոյ՝
 երեք տարի ետք՝ Երուսաղէմ ելայ Պետրոսը
 տեսնելու, եւ տասնհինգ օր անոր հետ կեցայ: **19**
 Սակայն առաքեալներէն ուրիշ ոչ մէկը տեսայ, այլ
 միայն Յակոբոսը՝ Տէրոջ եղբայրը: **20** Ինչ որ կը
 գրեմ ձեզի, ահա Աստուծոյ առջեւ կը հաստատեմ,
 թէ չեմ ստեր: **21** Ապա գացի Սուրիայի ու
 Կիլիկիայի շրջանները: **22** Ես դեմքով անձանօթ էի
 Հրէաստանի մէջ եղած Քրիստոսի եկեղեցիներուն.
23 անոնք միայն լսած էին թէ “ան որ ժամանակին
 կը հալածէր մեզ, հիմա կ’աւետէ այն հաւատքը՝

որ ատենօք կը տապալէր”, 24 եւ ինձմով կը փառաւորէին Աստուած:

2 Յետոյ, տասնչորս տարի ետք, դարձեալ բարձրացայ Երուսաղէմ՝ Բառնաբասի հետ, Տիտոսն ալ միասին առնելով: 2 Բարձրացած էի յայտնութեամբ, եւ անոնց ներկայացուցի այն աւետարանը՝ որ հեթանոսներուն մէջ կը քարոզեմ. բայց առանձին անոնց՝ որ երեւելիներ էին, որպէսզի ընդունայն չվազեմ կամ վազած չըլլամ: 3 Բայց ոչ իսկ ինծի հետ եղող Տիտոսը, որ Յոյն էր, հարկադրուեցաւ թլփատուիլ՝ 4 գաղտնի ներս բերուած սուտ եղբայրներուն պատճառով, որոնք ներս սպրդած էին՝ լրտեսելու համար Քրիստոս Յիսուսով մեր ունեցած ազատութիւնը, որպէսզի ստրուկ ընեն մեզ. 5 անոնց տեղի չտուինք՝ նոյնիսկ քիչ մը ատեն՝ ենթարկուելով, որպէսզի աւետարանին ճշմարտութիւնը ձեր մէջ մնայ: 6 Իսկ անոնք որ կը կարծուէին բան մը ըլլալ - ինչ որ էին՝ ատիկա ինծի հարց չէ, քանի որ Աստուած մարդոց աչառութիւն չ'ըներ -, այնպէս կարծուածները աւելի ոչինչ հաղորդեցին ինծի. 7 հապա՝ ընդհակառակը, երբ տեսան թէ անթլփատներուն աւետարանը ինծի վստահուած է, ինչպէս Պետրոսի ալ՝ թլփատուածներունը, 8 (որովհետեւ ան որ ներգործեց Պետրոսի մէջ՝ թլփատուածներուն առաքելութեան համար, նոյնպէս ներգործեց իմ մէջս՝ հեթանոսներուն հանդէպ,) 9 ու երբ Յակոբոս, Կեփաս եւ Յովհաննէս, որոնք սիւներ

կարծուած էին, գիտակցեցան ինծի տրուած շնորհքին, իրենց աջ ձեռքը տուին ինծի ու Բառնաբասի՝ իբր նշան հաղորդակցութեան, որպէսզի մենք քարոզենք հեթանոսներուն, իսկ իրենք՝ թլփատուածներուն: **10** Միայն թէ կ'ուզէին որ աղքատները յիշենք, ինչ որ ես ալ փութացի ընել: **11** Սակայն երբ Պետրոս եկաւ Անտիոք՝ ես դիմադարձեցի անոր, որովհետեւ պարսաւելի էր: **12** Արդարեւ Յակոբոսի քովէն ոմանց գալէն առաջ՝ ինք հեթանոսներուն հետ անխտրաբար կ'ուտէր. բայց երբ եկան՝ ընկրկեցաւ եւ ինքզինք զատեց, թլփատուածներէն վախնալով: **13** Միւս Յրեաներն ալ նոյնպէս անոր հետ կեղծեցին, այնքան՝ որ Բառնաբաս ալ անոնց կեղծիքէն տպաւորուեցաւ: **14** Բայց երբ տեսայ թէ ուղիղ չեն ընթանար՝ աւետարանին ճշմարտութեան համաձայն, բոլորին առջեւ Պետրոսի ըսի. «Եթէ դուն՝ որ Յրեայ ես՝ հեթանոսներու պէս կ'ապրիս, եւ ոչ թէ Յրեաներու պէս, ինչո՞ւ կը հարկադրես հեթանոսները՝ որ Յրեաներու պէս ապրին»: **15** Մենք՝ որ բնիկ Յրեաներ ենք, եւ ոչ թէ հեթանոս մեղաւորներ, **16** գիտնալով թէ մարդ Օրէնքին գործերով չէ որ կ'արդարանայ, հապա Յիսուս Քրիստոսի հաւատքով, մենք ալ հաւատացինք Քրիստոս Յիսուսի՝ որպէսզի արդարանանք Քրիստոսի հաւատքով, ոչ թէ Օրէնքին գործերով. որովհետեւ Օրէնքին գործերով ոչ մէկը պիտի արդարանայ: **17** Իսկ եթէ մենք ալ՝ Քրիստոսով արդարանալու մեր

ջանքին մէջ՝ մեղաւոր գտնուինք, ուրեմն Քրիստոս մեղքի սպասարկո՞ւ կ'ըլլայ: Ամենեւին: **18** Բանի որ եթէ իմ քակած բաներս դարձեալ կառուցանեմ, ես զիս օրինազանց կը դարձնեմ: **19** Որովհետեւ ես՝ Օրէնքին միջոցով՝ մեռայ Օրէնքին, որպէսզի ապրիմ Աստուծոյ համար: **20** Քրիստոսի հետ խաչուեցայ. սակայն կ'ապրիմ, բայց ա՛յլ ո՛չ թէ ես՝ հապա Քրիստոն կ'ապրի իմ մէջս: Իսկ այն կեանքը որ հիմա մարմինովս կ'ապրիմ՝ Աստուծոյ Որդիին հաւատքով կ'ապրիմ, որ սիրեց զիս եւ ինքզինք ընծայեց ինծի համար: **21** Ես Աստուծոյ շնորհքը չեմ ջնջեր. որովհետեւ եթէ արդարութիւնը Օրէնքէն է, ուրեմն Քրիստոս ընդունայն մեռաւ:

3 Ո՛վ անմիտ Գաղատացիներ, ո՛վ ձեզ հմայեց, մինչդեռ ձեր մէջ, ձեր աչքերուն առջեւ Յիսուս Քրիստոս նախապէս նկարագրուեցաւ՝ խաչուած: **2** Սա միայն կ'ուզեմ սորվիլ ձեզմէ.- դուք Յոգին ստացաք Օրէնքին գործերո՞վ թէ հաւատքին հնազանդելով: **3** Այդքան անմիտ էք. Յոգիով սկսաք, եւ հիմա մարմինո՞վ կ'աւարտէք: **4** Չո՞ր տեղը այդքան չարչարուեցաք (եթէ զուր տեղն ալ ըլլար): **5** Ուրեմն ան՝ որ ձեզի Յոգին կը հայթայթէ ու ձեր մէջ հրաշքներ կը գործէ, միթէ ձեր կատարած Օրէնքի գործերո՞ւն համար կ'ընէ, թէ հաւատքի հնազանդութեան համար. **6** ինչպէս Աբրահամ հաւատաց Աստուծոյ, եւ ատիկա արդարութիւն սեպուեցաւ անոր: **7** Ուրեմն գիտցէ՛ք թէ անոնք որ հաւատքէն են՝ անոնք են Աբրահամի որդիները: **8** Գիրքը,

նախատեսելով թե Աստուած հեթանոսները պիտի
 արդարացնէ հաւատքի միջոցով, նախապէս
 աւետեց Աբրահամի՝ ըսելով. «Զեզմնով պիտի
 օրհնուին բոլոր ազգերը»: **9** Ուստի անոնք
 որ հաւատքէն են՝ կ'օրհնուին հաւատացեալ
 Աբրահամի հետ: **10** Որովհետեւ բոլոր անոնք որ
 Օրէնքին գործերէն են՝ անեծքի տակ են, քանի որ
 գրուած է. «Անիծեալ ըլլայ զի յարատեւեր
 Օրէնքի գիրքին բոլոր գրուածներուն մէջ՝ զանոնք
 գործադրելու համար»: **11** Իսկ բացայայտ է թէ ոչ
 մէկը կ'արդարանայ Աստուծոյ առջեւ Օրէնքով,
 քանի որ “արդարը հաւատքով պիտի ապրի”:
12 Բայց Օրէնքը հաւատքէն չէ, հապա՝ “այն
 մարդը որ կը գործադրէ զանոնք՝ պիտի ապրի
 անոնցմով”: **13** Քրիստոս փրկանքով գնեց մեզ
 Օրէնքի անեծքէն՝ մեզի համար անիծուելով,
 (որովհետեւ գրուած է. «Անիծեալ է զի փայտէն
 կը կախուի») **14** որպէսզի Աբրահամի օրհնութիւնը
 զայ հեթանոսներուն վրայ՝ Քրիստոս Յիսուսի
 միջոցով. որպէսզի մենք ալ ստանանք Յոգիին
 խոստումը՝ հաւատքի միջոցով: **15** Մարդոց
 սովորութեան համաձայն կը խօսիմ, եղբայրներ:
 Նոյնիսկ մարդրն մը վաւերացուցած կտակը
 ոչ մէկը կը ջնջէ, կամ ալ անոր վրայ ուրիշ
 բան մը կ'աւելցնէ: **16** Ուրեմն խոստումները
 եղան Աբրահամի՞ եւ անոր զարմին: Չ'ըսեր. «Եւ
 քու զարմերուդ», այսինքն՝ շատերու: Հապա կը
 խօսի մէկ զարմի մասին. «Եւ քու զարմիդ»,
 որ Քրիստոսն է: **17** Բայց սա՛ կ'ըսեն. այն

ուխտը՝ որ նախապէս Աստուծմէ վաւերացուեցաւ
 Քրիստոսով, չի կրնար չորս հարիւր երեսուն
 տարի ետք անվաւեր դառնալ Օրէնքէն՝ խոստումը
 ոչնչացնելով: **18** Որովհետեւ եթէ ժառանգութիւնը
 Օրէնքէն է, ուրեմն ալ խոստումէն չէ. բայց
 Աստուած խոստումով շնորհեց զայն Աբրահամի:
19 Հապա ինչո՞ւ տրուեցաւ Օրէնքը: Ան աւելցաւ՝
 օրինագանցութիւնները յայտնելու համար, (մինչեւ
 որ զար այն զարմը՝ որուն եղած էր խոստումը,) եւ
 հրեշտակներու կողմէ պատուիրուեցաւ միջնորդի
 մը ձեռքով: **20** Իսկ միջնորդը՝ միայն մէկ անձի
 միջնորդ չէ. սակայն Աստուած մէկ է: **21** Ուրեմն
 Օրէնքը հակառակ է Աստուծոյ խոստումներուն:
 Ամենեւին. քանի որ եթէ տրուած ըլլար այնպիսի
 Օրէնք մը՝ որ կարենար կեանք տալ, այն ատեն
 իրապէս արդարութիւնը Օրէնքով կ'ըլլար: **22**
 Բայց Գիրքը բոլորը փակեց մեղքի տակ, որպէսզի
 Յիսուս Քրիստոսի հաւատքով եղած խոստումը
 տրուի հաւատացեալներուն: **23** Բայց հաւատքին
 գալէն առաջ՝ Օրէնքին տակ պահպանուած էինք,
 փակուած այն հաւատքէն՝ որ յետագային պիտի
 յայտնուէր: **24** Հետեւաբար Օրէնքը եղաւ մեր
 դաստիարակը՝ մեզ առաջնորդելու Քրիստոսի,
 որպէսզի մենք հաւատքով արդարանանք: **25** Բայց
 հաւատքին գալէն ետք՝ այլեւս դաստիարակի
 տակ չենք, **26** որովհետեւ դուք բոլորդ Աստուծոյ
 որդիներ էք՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած
 հաւատքով. **27** քանի որ դուք բոլորդ՝ որ
 Քրիստոսով մկրտուեցաք, Քրիստոսը հագաք: **28**

Ալ ոչ Յրեայ կայ, ոչ Յոյն. ոչ ստրուկ կայ, ոչ ազատ.
ոչ արու կայ, ոչ էգ. որովհետեւ դուք բոլորդ մէկ էք
Քրիստոս Յիսուսով: 29 Իսկ եթէ դուք Քրիստոսին
էք, ուրեմն Աբրահամի զարմն էք, եւ խոստումին
համաձայն՝ ժառանգորդներ:

4 Բայց այնքան ատեն որ ժառանգորդը մանուկ
է, կ'ըսեմ թէ ոչինչով կը տարբերի ստրուկէ մը,
թէպէտ բոլորին տէրն է. 2 հապա խնամակալներու
եւ հոգատարներու հեղինակութեան տակ
է՝ մինչեւ հօրը ճշդած պայմանաժամը: 3
Նոյնպէս ալ մենք, երբ մանուկ էինք, աշխարհի
սկզբունքներուն տակ ստրուկ էինք: 4 Բայց երբ
ժամանակը լրումին հասաւ, Աստուած դրկեց
իր Որդին՝ որ կնոջմէ ծնաւ եւ Օրէնքին տակ
մտաւ, 5 որպէսզի փրկանքով գնէ Օրէնքին
տակ եղողները. որպէսզի մենք որդեգրութիւնը
ստանանք: 6 Եւ քանի որ դուք որդիներ
էք, Աստուած ձեր սիրտերուն մէջ դրկեց իր
Որդիին Յոգին, որ կ'աղաղակէ. «Աբբա, Հայր»: 7
Հետեւաբար ալ ստրուկ չես, հապա՝ որդի. ու եթէ
որդի, ուրեմն՝ Աստուծոյ ժառանգորդը Քրիստոսի
միջոցով: 8 Ուրեմն այն ատեն երբ չէիք ճանչնար
Աստուած, կը ծառայէիք անոնց՝ որ բնութեամբ
աստուածներ չէին: 9 Սակայն հիմա որ ճանչցաք
Աստուած, կամ մանաւանդ՝ ճանչցուեցաք
Աստուծմէ, ինչպէս կը վերադառնաք այն տկար եւ
աղքատ սկզբունքներուն, որոնց դարձեալ կ'ուզէք
ստրուկ ըլլալ: 10 Կը պահէք օրերը, ամիսները,
ժամանակներն ու տարիները. 11 կը վախնամ ձեզի

համար, որ գուցէ գուր տեղը աշխատած ըլլամ
 ձեր վրայ: **12** Եղբայրներ, կ'աղերսեն ձեզի, ինծի
 պէս եղէք, որովհետեւ ես ալ ձեզի պէս եղայ. դուք
 բնաւ վնասած չէք ինծի: **13** Դուք գիտէք թէ ինչպէս՝
 մարմինիս տկարութեամբ՝ աւետարանեցի ձեզի
 առաջին անգամ. **14** Բայց մարմինիս վրայ կրած
 փորձութիւնս չանարգեցիք, ոչ ալ պժգացիք.
 հապա Աստուծոյ հրեշտակի մը պէս ընդունեցիք
 զիս, Քրիստոս Յիսուսի պէս: **15** Ուստի ո՛ր է՝ ձեր
 այդ ատենուան երանութիւնը. քանի որ ես կը
 վկայեմ ձեզի թէ եթէ կարելի ըլլար՝ ձեր աչքերը
 պիտի խլէիք եւ զանոնք ինծի տայիք: **16** Միթէ ձեր
 թշնամին եղայ՝ ձեզի ճշմարտութիւնը խօսելով: **17**
 Անոնք նախանձախնդիր են ձեզի հանդէպ, բայց ոչ
 բարի նպատակով. նոյնիսկ կ'ուզեն մեզ վտարել,
 որպէսզի նախանձախնդիր ըլլաք իրենց հանդէպ:
18 Սակայն լաւ է նախանձախնդիր ըլլալ բարիին
 հանդէպ՝ ամէն ատեն, եւ ոչ թէ միայն երբ ձեր
 մէջ ներկայ են: **19** Որդեակներս, ձեզի համար
 դարձեալ երկունքի ցաւ կը քաշեմ, մինչեւ որ
 Քրիստոս ձեր մէջ կերպաւորուի: **20** Կ'ուզէի հիմա
 ձեր մէջ ներկայ ըլլալ ու շեշտս փոխել, որովհետեւ
 ձեր մասին վարանումի մէջ եմ: **21** Ըսէ՛ք ինծի,
 դուք որ կ'ուզէք Օրենքին տակ ըլլալ, Օրենքը
 չէ՞ք լսեր. **22** որովհետեւ գրուած է թէ Աբրահամ
 երկու որդի ունէր, մէկը՝ աղախինէն, միւսը՝ ազատ
 կնոջմէն: **23** Բայց ան որ աղախինէն էր՝ մարմինին
 համեմատ ծնած էր, իսկ ան որ ազատ կնոջմէն էր՝
 խոստումով: **24** Ասոնց մեկնութիւնը այլաբանօրէն

կ'ըլլայ, քանի որ ասոնք երկու Ուխտերն են. մէկը՝ Սինա լեռնէն, որ Յագարն է, ստրկութեան համար կը ծնանի. 25 որովհետեւ Յագար՝ Սինա լեռն է, Արաբիայի մէջ, ու կը համապատասխանէ այժմու Երուսաղէմին, եւ ստրկութեան մէջ է իր զաւակներուն հետ: 26 Բայց վերին Երուսաղէմը, որ մեր բոլորին մայրն է, ազատ է: 27 Արդարեւ գրուած է. «Ուրախացիր, չծնանող ամուլ. պոռթկաւ ցնծութեամբ եւ գոչէ, երկունքի ցաւ չքաշող. որովհետեւ լքեալին զաւակները շատ աւելի են՝ քան ամուսին ունեցողին զաւակները»: 28 Ուրեմն մենք, եղբայրներ, Իսահակի պէս խոստումի զաւակներ ենք: 29 Բայց ինչպէս այն ատեն մարմինին համեմատ ծնածը կը հալածէր ան՝ որ Յոգիին համեմատ ծնած էր, նոյնպէս ալ հիմա: 30 Սակայն ինչ կ'ըսէ Գիրքը. «Վտարէ այդ աղախինը եւ անոր որդին, քանի որ աղախինին որդին ժառանգորդ պիտի չըլլայ ազատ կնոջ որդիին հետ»: 31 Ուրեմն, եղբայրներ, մենք աղախինին զաւակները չենք, հապա՛ ազատ կնոջ:

5 Ուստի հաստատուն կեցէք այն ազատութեամբ՝ որով Քրիստոս ազատեց մեզ, եւ դարձեալ ստրկութեան լուծին տակ մի կաշկանդուիք: 2 Ահա՛ ես՝ Պօղոս, ձեզի կ'ըսեմ. «Եթէ թլփատուիք, Քրիստոս ոչ մէկ օգուտ կ'ունենայ ձեզի»: 3 Եւ ամէն թլփատուող մարդու դարձեալ կը վկայեմ թէ պարտաւոր է գործադրել ամբողջ Օրէնքը: 4 Քրիստոս ոչինչ դարձած է ձեզի համար, այսինքն ձեզմէ բոլոր անոնց՝ որ Օրէնքով արդարանալ

կ'ուզեն: Դուք շնորհքէն ինկած էք, 5 որովհետեւ մենք Յոգիին միջոցով կը սպասենք հաւատքով եղած արդարութեան յոյսին: 6 Արդարեւ Քրիստոս Յիսուսի մէջ եղողին՝ ոչ թլփատութիւնը որեւէ ազդեցութիւն ունի, ոչ ալ անթլփատութիւնը, հապա հաւանութիւն՝ որ կը ներգործէ սիրով: 7 Դուք լաւ կը վազէիք. ո՞վ կասեցուց ձեզ՝ որ ճշմարտութեան չանսաք: 8 Այս դրդումը անկէ չէ՝ որ ձեզ կանչեց: 9 Քիչ մը խմորը ամբողջ զանգուածը կը խմորէ: 10 Բայց ես ձեր մասին համոզուած եմ Տէրոջմով, թէ բնաւ ուրիշ կերպ պիտի չմտածէք: Իսկ ան որ ձեզ կը վրդովէ՝ ո՞վ որ ըլլայ՝ պիտի կրէ իր դատապարտութիւնը: 11 Սակայն, եղբայրներ, ալ ինչո՞ւ կը հալածուիմ, եթէ ես տակաւին թլփատութիւն կը քարոզեմ. ուրեմն խաչին գայթակղութիւնը ոչնչացած է: 12 Երանի՜ թէ նոյնիսկ կտրուէին անոնք՝ որ ձեզ տակնուվրայ կ'ընեն: 13 Որովհետեւ դուք ազատութեան կանչուած էք, եղբայրներ, միայն թէ ձեր ազատութիւնը մարմինի ցանկութիւններու առիթ չըլլայ, հապա սիրով իրարու ծառայեցէք: 14 Քանի որ ամբողջ Օրէնքը սա՛ մէկ խօսքին մէջ կը գործադրուի. «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ՝՝ պէս»: 15 Բայց եթէ զիրար խածնէք եւ լափէք, զգուշացէ՛ք որ իրարմէ չսպառիք: 16 Ուստի սա՛ կ'ըսեմ. «Հոգիով ընթացէք, ու մարմինին ցանկութիւնը պիտի չգործադրէք»: 17 Որովհետեւ մարմինը կը ցանկայ Յոգիին հակառակ, ու Հոգին՝ մարմինին հակառակ. եւ ասոնք իրարու հակառակ են, որպէսզի չընէք

ինչ որ ուզէք: **18** Բայց եթէ Յոգիէն առաջնորդուիք, ալ Օրէնքին տակ չէք ըլլար: **19** Մարմինին գործերը բացայայտ են. անոնք են՝ շնութիւն, պոռնկութիւն, անմաքրութիւն, ցոփութիւն, **20** կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւն, երկպառակութիւն, մրցակցութիւններ, զայրոյթ, հակառակութիւն, խռովութիւն, հերձուածներ, **21** չար նախանձներ, մարդասպանութիւններ, արբեցութիւններ, զեխութիւններ եւ ինչ որ ասոնց նման է. որոնց մասին կանխաւ կ'ըսեմ ձեզի, ինչպէս ժամանակին ալ ըսած եմ, թէ այսպիսի բաներ ընողները պիտի չժառանգեն Աստուծոյ թագաւորութիւնը: **22** Բայց Յոգիին պտուղն է՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերատարութիւն, **23** քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն. այսպիսի բաներու դէմ Օրէնք չկայ: **24** Անոնք որ Քրիստոսիններն են, իրենց մարմինը խաչեցին՝ բնական կիրքերուն ու ցանկութիւններուն հետ: **25** Եթէ Յոգիով կ'ապրինք՝ նաեւ ընթանանք Յոգիին համաձայն: **26** Սնափառ չըլլանք՝ զիրար գրգռելով եւ իրարու նախանձելով:

6 Եղբայրներ, եթէ մարդ մը որեւէ յանցանքի մէջ բռնուի, դուք որ հոգեւոր էք՝ այդպիսին հեզութեան հոգիով ուղղեցէք. ուշադիր եղի՛ր դուն քեզի, որ դուն ալ չփորձուիս: **2** Կրեցէք իրարու ծանրութիւնները, եւ այդպէս գործադրեցէք Քրիստոսի օրէնքը: **3** Արդարեւ եթէ մէկը՝ որ ոչինչ

Է՝ կարծե թե ինք բան մըն է, ինքզինք կը խաբէ:
4 Բայց իւրաքանչիւրը թող քննէ իր գործը, եւ
այն ատեն պարծենայ՝ միայն ինքնիր վրայ, ոչ թէ
ուրիշի վրայ. **5** որովհետեւ իւրաքանչիւրը պիտի
կրէ իր բեռը: **6** Խօսքին աշակերտը հաղորդակից
թող ընէ իր վարդապետը ամէն բարի բանի: **7** Մի
խաբուիք, Աստուած չի ծաղրուիր. որովհետեւ ինչ
որ մարդ կը սերմանէ, զայն ալ պիտի հնծէ: **8** Ա՛ն որ
իր մարմինն համար կը սերմանէ, այդ մարմինէն
ապականութիւն պիտի հնծէ. իսկ ան որ Յոգիին
համար կը սերմանէ, այդ Յոգիէն յաւիտենական
կեանք պիտի հնծէ: (aīōnios g166) **9** Ուստի բարիք
գործելէ չձանձրանա՛նք, քանի որ յատուկ ատենին
պիտի հնծենք՝ եթէ չպարտասինք: **10** Ուրեմն, քանի
պատեհութիւն ունինք, բարիք ընենք բոլորին,
մանաւանդ՝ հաւատքի ընտանիքէն եղողներուն:
11 Նայեցէ՛ք, որքան մեծ գիրերով գրեցի ձեզի՝ իմ
ձեռքովս: **12** Բոլոր անոնք՝ որ կ'ուզեն մարմինն
համեմատ լաւ երեւնալ, կը հարկադրեն ձեզ
որ թլփատուիք, միայն՝ որպէսզի չհալածուին
Քրիստոսի խաչին համար: **13** Արդարեւ ոչ իսկ
իրենք՝ թլփատուածները կը պահեն Օրէնքը.
բայց կ'ուզեն որ դուք թլփատուիք, որպէսզի
պարծենան ձեր մարմինով: **14** Բայց ես ամենեւին
պիտի չպարծենամ, այլ միայն մեր Տէրոջ՝ Յիսուս
Քրիստոսի խաչով. անով աշխարհը խաչուած է
ինծի համար, ես ալ՝ աշխարհի: **15** Որովհետեւ
Քրիստոս Յիսուսով ոչ թլփատութիւնը որեւէ
ազդեցութիւն ունի, ոչ անթլփատութիւնը, հապա՛

նոր արարած ըլլալը: 16 Խաղաղութիւն ու
ողորմութիւն բոլոր անոնց վրայ՝ որ այս կանոնին
համաձայն կ'ընթանան, եւ Աստուծոյ Իսրայելին
վրայ: 17 Ասկէ ետք ոչ մէկը թող անհանգստացնէ
զիս. որովհետեւ ես մարմինիս վրայ կը կրեմ Տէր
Յիսուսի վերքին սպիները: 18 Եղբայրներ, մեր
Տէրոջ՝ Յիսուս Զրիստոսի շնորհքը ձեր հոգիին
հետ: Ամէն:

ԵՓԵՍԱՑԻՍ

1 Պօղոս, Աստուծոյ կամբով Յիսուս Քրիստոսի առաքեալ, Եփեսոսի մէջ եղած սուրբերուն ու Քրիստոս Յիսուսով հաւատարիմներուն. 2 շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ: **3** Օրինեալ ըլլայ Աստուած եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստոսով օրինեց մեզ ամէն տեսակ հոգեւոր օրինութիւններով՝ երկնային վայրերու մէջ, **4** ինչպէս անով ընտրեց մեզ աշխարհի հիմնադրութենէն առաջ, որպէսզի մենք իր առջեւ սուրբ եւ անարատ ըլլանք սիրոյ մէջ: **5** Նախասահմանեց մեզ իր որդեգրութեան՝ Յիսուս Քրիստոսի միջոցով, իր կամքին բարեհաճութեան համաձայն, **6** որպէսզի գովաբանենք իր շնորհքին փառքը. անով ընդունելի դարձուց մեզ՝ Սիրելիին միջոցով: **7** Իրմով մենք ունինք ազատագրութիւն՝ իր արիւնին միջոցով, ու մեղքերու ներում՝ իր շնորհքին ճոխութեան համեմատ. **8** անով ճոխացուց մեզ՝ ամբողջ իմաստութեամբ եւ ուշիմութեամբ: **9** Գիտցուց մեզի իր կամքին խորհուրդը՝ իր բարեհաճութեան համաձայն, որ իր մէջ՝ առաջադրած էր. **10** որպէսզի ժամանակներու լրումին տնտեսութեան մէջ՝ Քրիստոսով համախմբէ ամէն բան, անոր մէջ միացնէ թէ՛ երկինքի մէջ եղողները, թէ՛ երկրի վրայ եղողները: **11** Անով ստացանք նաեւ ժառանգութիւն մը, նախասահմանուած ըլլալով համաձայն առաջադրութեան անոր՝ որ կը

ներգործէ ամէն բան իր կամքին ծրագիրին համաձայն, 12 որպէսզի մենք՝ նախապէս Քրիստոսի ապաւինողներս՝ գովութիւն ըլլանք իր փառքին: 13 Դ՛նք ալ ապաւինեցաք անոր՝ երբ լսեցիք ճշմարտութեան խօսքը, ձեր փրկութեան աւետարանը, եւ հաւատալէ ետք անոր՝ կնքուեցաք խոստացեալ Սուրբ Հոգիով, 14 որ մեր ժառանգութեան գրաւականն է մինչեւ ստացուածքին ազատագրութիւնը՝ իր փառքին գովութեան համար: 15 Ուստի ես ալ, լսելէ ետք Տէր Յիսուսի վրայ ձեր ունեցած հաւատքին ու բոլոր սուրբերուն հանդէպ ձեր ունեցած սիրոյն մասին, 16 չեմ դադրիր շնորհակալ ըլլալէ ձեզի համար՝ յիշելով ձեզ իմ աղօթքներու մէջ. 17 որպէսզի մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Աստուածը, փառքի Հայրը, տայ ձեզի իմաստութեան եւ յայտնութեան հոգին՝ իր գիտակցութեամբ: 18 Որպէսզի ձեր միտքին աչքերը լուսաւորուելով՝ գիտնաք թէ ինչ է անոր կոչումին յոյսը, ինչ է անոր ժառանգութեան փառքին ճոխութիւնը՝ սուրբերուն մէջ, 19 եւ ինչ է իր զօրութեան գերազանց մեծութիւնը հաւատացեալներու մէջ՝ գործադրութեան համեմատ իր ուժեղ զօրութեան, 20 որ ներգործեց Քրիստոսի մէջ՝ երբ մեռելներէն յարուցանեց զայն ու բազմեցուց իր աջ կողմը՝ երկինքի մէջ, 21 ամէն պետութենէ, իշխանութենէ, զօրութենէ եւ տէրութենէ շատ աւելի վեր, ու ամէն անունէ վեր՝ որ կ'անուանուի, ո՛չ միայն այս աշխարհին մէջ, հապա նաեւ գալիքին մէջ: (aiōn

g165) 22 Դրաւ ամէն բան անոր ոտքերուն տակ,
ու տուաւ զայն՝ իբր գլուխ ամէն բանի վրայ՝
եկեղեցիին, 23 որ անոր մարմինն է, լրումը անոր՝
որ կը լեցնէ ամէն ինչ՝ բոլորին մէջ:

2 Դուք մեռած էիք յանցանքներու եւ մեղքերու
մէջ, բայց ինք ձեզ ապրեցուց: 2 Անոնց
մէջ ժամանակին կ'ընթանայիք՝ այս աշխարհի
ընթացքին համաձայն, օղի իշխանութեան
իշխանին համաձայն, այն ոգիին՝ որ հիմա կը
ներգործէ անհնազանդութեան որդիներուն մէջ:

(aiōn g165) 3 Անոնցմով մենք բոլորս ալ ժամանակին
կը վարուէինք՝ մեր մարմինին ցանկութիւններով,
մարմինին ու միտքին փափաքները գործադրելով.
բնութեամբ բարկութեան զաւակներ էինք՝
ուրիշներու նման: 4 Բայց Աստուած՝ որ հարուստ է
ողորմութեամբ, իր մեծ սիրոյն համար՝ որով սիրեց
մեզ, 5 երբ մեռած էինք մեղքերու մէջ՝ կեանք
տուաւ մեզի Քրիստոսի հետ, (դուք շնորհքով
փրկուած էք.) 6 անոր հետ յարուցանեց մեզ եւ
անոր հետ բազմեցուց մեզ երկնային վայրերու մէջ՝
Քրիստոս Յիսուսով, 7 որպէսզի զայիք դարերուն
մէջ ցոյց տայ իր շնորհքին գերազանց ճոխութիւնը՝
Քրիստոս Յիսուսի միջոցով մեզի հանդէպ ցոյց
տուած քաղցրութեամբ: (aiōn g165) 8 Որովհետեւ
դուք շնորհքով փրկուած էք՝ հաւատքի միջոցով,
եւ ատիկա ոչ թէ ձեզմէ է՝ հապա Աստուծոյ ընծան
է. 9 ոչ թէ գործերէն է, որպէսզի ոչ մէկը պարծենայ:
10 Զանի որ մենք անոր ձեռակերտն ենք, Քրիստոս
Յիսուսով ստեղծուած՝ բարի գործերու համար.

Աստուած նախապէս պատրաստեց զանոնք,
 որպէսզի մենք ընթանանք անոնց մէջ: **11**
 Ուստի յիշեցէք թէ դուք ժամանակին մարմինով
 հեթանոսներ էիք, (որոնք անթլփատ կը կոչուին
 անոնցմէ՝ որ թլփատուած կը կոչուին, մարմինի
 մէջ՝ ձեռքով եղած.) **12** այդ ատեն դուք առանց
 Քրիստոսի էիք, ուծացած ըլլալով Իսրայէլի
 հասարակութենէն, եւ օտարացած՝ խոստումին
 ուխտերէն. ոչ յոյս ունէիք, ոչ ալ Աստուած՝
 աշխարհի մէջ: **13** Իսկ հիմա՝ Քրիստոս Յիսուսով՝
 դուք որ ժամանակին հեռաւոր էիք, մերձաւոր
 եղաք Քրիստոսի արիւնով: **14** Որովհետեւ
 ան է մեր խաղաղութիւնը. ինք երկուքը՝ մէկ
 ըրաւ, ու քակեց մեջտեղի անջատող պատը, իր
 մարմինին մէջ ոչնչացնելով իրարու միջեւ եղած
 թշնամութիւնը, **15** այսինքն՝ հրամաններով եղած
 պատուիրաններուն Օրէնքը. որպէսզի իրմով
 այդ երկուքէն ստեղծէ նոր մարդ մը՝ այսպէս
 խաղաղութիւն ընելով, **16** ու երկուքն ալ հաշտեցնէ
 Աստուծոյ հետ մէկ մարմինի մէջ՝ խաչին միջոցով:
 Անով սպաննեց թշնամութիւնը, **17** եւ եկաւ
 խաղաղութիւն աւետեց ձեզի՝ որ հեռաւոր էիք,
 ու անոնց՝ որ մերձաւոր էին: **18** Քանի որ անոր
 միջոցով մենք բոլորս ալ արտօնութիւն ունինք
 մօտենալու Հօրը՝ մէկ Հոգիով: **19** Ուրեմն հիմա
 դուք այլեւս օտարականներ ու պանդուխտներ
 չէք, հապա սուրբերուն քաղաքակիցները, եւ
 Աստուծոյ ընտանիքը, **20** շինուած առաքելներուն
 ու մարգարէներուն հիմին վրայ, որուն ծայրագոյն

անկիւնաքարը՝ նոյնինքն Յիսուս Քրիստոս է: 21
Անով ամբողջ շէնքը՝ յարմարութեամբ միասին
կազմուած՝ կ'աճի, սուրբ տաճար մը ըլլալու
Տէրոջմով. 22 անով դուք ալ միասին կը շինուիք՝
Աստուծոյ բնակավայր ըլլալու Սուրբ Յոգիին
միջոցով:

3 Ուստի ես՝ Պօղոս, Յիսուս Քրիստոսի
բանտարկեալը ձեզի՝ հեթանոսներուդ համար,
2 (եթէ գոնէ լսած էք Աստուծոյ շնորհքին
տնտեսութեան մասին՝ որ տրուած է ինծի
ձեզի համար, 3 թէ ինչպէս ան յայտնութեամբ
գիտցուց ինծի այն խորհուրդը - ինչպէս
նախապէս ալ համառօտաբար գրեցի ձեզի, 4
որպէսզի՝ երբ կարդաք՝ կարենաք հասկնալ
իմ ըմբռնումս Քրիստոսի խորհուրդին մասին
-, 5 որ ուրիշ սերունդներու մէջ մարդոց
որդիներուն չգիտցուեցաւ, ինչպէս ան հիմա՝
Սուրբ Յոգիին միջոցով՝ յայտնուած է իր
սուրբ առաքեալներուն ու մարգարէներուն,
6 թէ հեթանոսները Քրիստոսով պիտի ըլլան
ժառանգակից, մարմնակից, եւ իր խոստումին
բաժնեկից՝ աւետարանին միջոցով, 7 որուն ես
սպասարկու եղայ Աստուծոյ շնորհքին պարգեւին
համեմատ՝ որ տրուեցաւ ինծի իր զօրութեան
ներգործութեամբ: 8 Ինծի՝ որ բոլոր սուրբերուն
ամենափոքրէն աւելի փոքր եմ՝ տրուեցաւ այս
շնորհքը, որպէսզի հեթանոսներուն մէջ աւետեմ
Քրիստոսի անգննելի ճոխութիւնը, 9 եւ բոլորին
տեսնել տամ թէ ինչ է հաղորդակցութիւնը

այն խորհուրդին, որ դարերու սկիզբէն ի վեր ծածկուած էր Աստուծոյ մէջ, որ ստեղծեց ամէն բան. (aiðn g165) 10 որպէսզի Աստուծոյ բազմակողմանի իմաստութիւնը՝ եկեղեցիին միջոցով հիմա գիտցուի երկնային վայրերու մէջ եղող պետութիւններուն եւ իշխանութիւններուն, 11 իր յաւիտենական առաջադրութեան համաձայն, որ իրագործեց մեր Տէրոջմով՝ Քրիստոս Յիսուսով: (aiðn g165) 12 Անով մենք ունինք համարձակութիւն ու վստահութեամբ մօտենալու արտօնութիւն՝ հաւատալով իրեն: 13 Ուստի կը խնդրեմ որ չձանձրանաք ձեզի համար կրած տառապանքներուս պատճառով, ինչ որ ձեր փառքն է:) 14 Ուստի կը ծնրադրեմ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հօր առջեւ, 15 որմէ կ'անուանուի ամէն գերդաստան՝ երկինքի մէջ ու երկրի վրայ, 16 որպէսզի շնորհէ ձեզի՝ իր փառքին ճոխութեան համեմատ՝ զօրութեամբ ուժովնալ ներքին մարդուն մէջ, իր Հոգիին միջոցով. 17 որպէսզի Քրիստոս բնակի ձեր սիրտերուն մէջ՝ հաւատքով, եւ դուք՝ սիրոյ մէջ արմատանալով ու հիմնուելով՝ 18 կարողանաք ըմբռնել բոլոր սուրբերուն հետ թէ ինչ է լայնութիւնը, երկայնութիւնը, խորութիւնը եւ բարձրութիւնը. 19 այսինքն գիտնալ Քրիստոսի սէրը, որ գիտութենէն գերազանց է, որպէսզի լեցուիք Աստուծոյ ամբողջ լիութեամբ: 20 Ուրեմն անոր, որ կարող է գերազանցօրէն աւելի ընել՝ քան ամէն ինչ որ մենք կը խնդրենք կամ կ'ըմբռնենք,

այն զօրութեան համեմատ՝ որ կը ներգործէ մեր
մէջ, 21 իրեն փանօք եկեղեցիին մէջ՝ Քրիստոս
Յիսուսով, բոլոր սերունդներուն մէջ՝ դարե դար”:
Ամեն: (aiōn g165)

4 Ուստի ես՝ Տէրոջ բանտարկեալը՝ կ’աղաչեմ
ձեզի, որ ձեր ընթացքը արժանավայել
ըլլայ այն կոչումին՝ որով կանչուեցաք, 2
լման խոնարհութեամբ ու հեզութեամբ,
համբերատարութեամբ, սիրով իրարու
հանդուրժելով, 3 ջանալով պահել Սուրբ Հոգիին
միաբանութիւնը՝ խաղաղութեան կապով: 4
Մէկ մարմին կայ, եւ մէկ Հոգի, ինչպէս մէկ
յոյսով կանչուեցաք ձեր կոչումին: 5 Տէրը մէկ
է, հաւատքը՝ մէկ, մկրտութիւնը՝ մէկ: 6 Մէկ է
Աստուած եւ բոլորին Հայրը, որ բոլորէն վեր,
բոլորին հետ եւ ձեր բոլորին մէջն է: 7 Բայց մեզմէ
իւրաքանչիւրին շնորհք տրուած է՝ Քրիստոսի
պարգեւին չափին համեմատ: 8 Ուստի կ’ըսէ. «Երբ
ելաւ բարձր տեղը՝ գերեվարեց գերութիւնը եւ
նուէրներ տուաւ մարդոց»: 9 (Իսկ այդ «ելաւ»ը ինչ
ըսել է, եթէ ոչ նշանակել՝ թէ ինք նաեւ նախապէս
իջաւ երկրի ստորին մասերը: 10 Ա՛ն՝ որ իջաւ,
նաեւ նոյնն է՝ որ ելաւ բոլոր երկինքներէն աւելի
վեր, որպէսզի լեցնէ ամեն բան:) 11 Եւ ինք
տուաւ ոմանք՝ առաքեալներ ըլլալու, ոմանք՝
մարգարէներ, ոմանք՝ աւետարանիչներ, ոմանք՝
հովիւներ ու վարդապետներ, 12 սուրբերուն
կատարելութեան համար, սպասարկութեան
գործին համար, Քրիստոսի մարմինին շինութեան

համար. 13 մինչեւ որ բոլորս հասնինք հաւատքին
 եւ Աստուծոյ Որդին ճանչնալու միաբանութեան,
 կատարեալ մարդու վիճակին, Քրիստոսի
 լիութեան հասակի չափին: 14 Որպէսզի ակ
 ասկէ ետք մանուկ չըլլանք, տարուբերած ու
 վարդապետութեան ամէն հովէ հոս-հոն քշուած՝
 մարդոց խաբեբայութեամբ, որոնք կը մոլորեցնեն
 խորամանկութեան հնարքներով. 15 հապա՝
 ճշմարտութիւնը խօսելով սիրոյ մէջ, ամէն
 բանի մէջ աճինք անով՝ որ գլուխն է, այսինքն՝
 Քրիստոսով: 16 Անով է որ ամբողջ մարմինը,
 յարմարութեամբ միասին կազմուած եւ իրարու
 կցուած ամէն յօդի օժանդակութեամբ՝ ամէն
 մասի ներգործութեան չափին համեմատ, կ'աճի
 սիրոյ մէջ՝ իր շինութեան համար: 17 Ուրեմն
 սա՛ կը յայտարարեմ ու Տէրոջմով կը վկայեմ,
 որ դուք այլեւս չընթանաք այնպէս՝ ինչպէս
 ուրիշ հեթանոսները կ'ընթանան, իրենց միտքին
 ունայնութեան մէջ: 18 Անոնց միտքը խաւարած
 է, եւ իրենք ուժացած են Աստուծոյ կեանքէն՝
 իրենց մէջ եղած անգիտութեան եւ իրենց սիրտին
 կուրութեան պատճառով: 19 Անզգայ դարձած՝
 անձնատուր եղան ցոփութեան, որպէսզի ամէն
 տեսակ անմաքրութիւն գործեն ազահիութեամբ:
 20 Բայց դուք այնպէս չսորվեցաք Քրիստոսը, 21
 եթէ իսկապէս լսեցիք զինք եւ սորվեցաք իրմէ՝
 Յիսուսի մէջ եղող ճշմարտութեան համաձայն՝
 22 որպէսզի թօթափէք ձեր նախկին վարքին
 վերաբերող հին մարդը, - որ ապականած է

խաբեբայ ցանկութիւններով, - 23 նորոգուիք ձեր միտքին հոգիով, 24 ու հագնիք նոր մարդը, որ ստեղծուած է արդարութեամբ եւ ճշմարիտ սրբութեամբ՝ Աստուծոյ պատկերին համաձայն: 25 Ուստի՝ թօթափելով ստելը՝ ճշմարտութիւնը խօսեցէք իրարու հետ՝, որովհետեւ մենք իրարու անդամներ ենք: 26 Բարկացէք, բայց մի մեղանչէք. արեւը թող մայր չմտնէ ձեր բարկացած վիճակին վրայ, 27 ու տեղ մի տաք Չարախօսին: 28 Ա՛ն որ կը գողնար՝ ան թող չգողնայ. այլ մանաւանդ թող աշխատի՝ իր ձեռքերով գործելով ինչ որ բարի է, որպէսզի բան մը ունենայ տալու կարօտեալին: 29 Ո՛չ մէկ վատ խօսք թող ելլէ ձեր բերանէն, հապա՛ ինչ որ բարի է, շինութեան կարիքին համեմատ, որպէսզի շնորհք տայ լսողներուն: 30 Եւ մի տրտմեցնէք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով դուք կնքուեցաք ազատագրութեան օրուան համար: 31 Ամեն տեսակ դառնութիւն, զայրոյթ, բարկութիւն, գոչիւն ու հայհոյութիւն թող վերցուին ձեզմէ՝ ամեն տեսակ չարամտութեան հետ: 32 Եւ քաղցր եղէք իրարու հանդէպ, գթած, ներելով իրարու, ինչպէս Աստուած Քրիստոսով ներեց ձեզի:

5 Ուրեմն նմանեցէք Աստուծոյ՝ սիրելի զաւակներու պէս, 2 եւ ընթացէք սիրոյ մէջ, ինչպէս Քրիստոս ալ մեզ սիրեց ու մեզի համար ընծայեց ինքզինք Աստուծոյ՝ որպէս պատարագ ու զոհ, անուշաբոյր հոտ ըլլալով: 3 Բայց պոռնկութեան եւ ամեն տեսակ անմաքրութեան կամ ազահութեան անունն իսկ թող չիշուի ձեր մէջ, (ինչպէս կը

պատշաճի սուրբերուն,) 4 ոչ ալ լրբութեան, յիմար
 խօսակցութեան կամ խեղկատակութեան, որոնք
 չեն պատշաճիր. այլ փոխարէնը շնորհակալութիւն
 յայտնեցէք: 5 Քանի որ գիտէք՝ թէ ոչ մէկ պոռնկող,
 կամ անմաքուր, կամ ազահ, որ կռապաշտ
 է, ունի որեւէ ժառանգութիւն Քրիստոսի եւ
 Աստուծոյ թագաւորութեան մէջ: 6 Ո՛չ մէկը թող
 խաբէ ձեզ ունայն խօսքերով, որովհետեւ այս
 բաներուն պատճառով Աստուծոյ բարկութիւնը
 կու գայ անհնազանդութեան որդիներուն
 վրայ: 7 Ուրեմն բաժնեկից մի՛ ըլլաք անոնց, 8
 որովհետեւ ժամանակին դուք խաւար էիք, բայց
 հիմա լոյս էք Տէրոջմով. ուստի ընթացէ՛ք լոյսի
 զաւակներու պէս, 9 բանի որ Յոգիին պտուղը
 ամէն տեսակ բարութեամբ, արդարութեամբ
 ու ճշմարտութեամբ է: 10 Քննեցէ՛ք թէ ինչ է
 Տէրոջ հաճելին, 11 եւ ընկերակից մի՛ ըլլաք
 խաւարին անպտուղ գործերուն, այլ փոխարէնը
 կշտամբեցէ՛ք զանոնք: 12 Որովհետեւ անոնց
 ըրած գաղտնի բաներուն մասին խօսիլն իսկ
 ամօթ է. 13 բայց ամէն բան որ կշտամբուած է՝
 կը յայտնաբերուի լոյսին միջոցով, որովհետեւ
 լոյսն է որ կը յայտնաբերէ ամէն ինչ: 14 Ուստի
 կ'ըսէ. «Արթնցիր, դուն որ կը քնանաս, ու կանգնէ՛
 մեռելներէն, եւ Քրիստոս պիտի փայլի քու
 վրադ»: 15 Ուրեմն զգուշացէ՛ք որ ընթանաք
 շրջահայեցութեամբ. ոչ թէ անխոհեմներու պէս, 16
 հապա՛ իմաստուններու պէս: Գնեցէ՛ք ժամանակը,
 որովհետեւ օրերը չար են: 17 Ուստի անմիտ մի՛

ըլլաք, հապա հասկցէ՛ք թէ ինչ է Տէրոջ կամքը: **18**
 Մի՛ արբենաք գինիով՝ որուն մէջ անառակութիւն
 կայ, հապա Յոգիւնով լեցուեցէ՛ք: **19** Սաղմոսներով,
 օրհներգերով եւ հոգեւոր երգերով դուք ձեր
 մէջ խօսակցելով՝ երգեցէ՛ք ու սաղմոս ըսէ՛ք
 Տէրոջ ձեր սիրտերուն մէջ: **20** Ամեն ատեն՝ ամեն
 բանի համար շնորհակալ եղէ՛ք Աստուծոյ եւ
 Յօրմեն, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի անունով:
21 Իրարու հպատակեցէ՛ք Աստուծոյ վախով: **22**
 Կիներ, հպատակեցէ՛ք ձեր ամուսիններուն՝ որպէս
 թէ Տէրոջ: **23** որովհետեւ ամուսինը կնոջ գլուխն
 է, ինչպէս Քրիստոս ալ եկեղեցիին գլուխն է, եւ
 ինքն է մարմինին Փրկիչը: **24** Հետեւաբար, ինչպէս
 եկեղեցին հպատակ է Քրիստոսի, նոյնպէս ալ
 կիները թող ըլլան իրենց ամուսիններուն՝ ամեն
 բանի մէջ: **25** Ամուսիններ, սիրեցէ՛ք ձեր կիները,
 ինչպէս Քրիստոս ալ սիրեց եկեղեցին եւ ընծայեց
 ինքզինք անոր համար, **26** որպէսզի սրբացնէ զայն
 ու մաքրէ ջուրի լուացումով՝ խօսքին միջոցով: **27**
 որպէսզի ներկայացնէ զայն իրեն՝ իբր փառաւոր
 եկեղեցի մը, որ չունենայ բիծ, կամ կնճիռ, կամ
 նման որեւէ բան, հապա ըլլայ սուրբ եւ անարատ:
28 Նոյնպէս ալ ամուսինները պարտաւոր են
 սիրել իրենց կիները՝ իրենց մարմիններուն պէս.
 ան որ կը սիրէ իր կինը՝ կը սիրէ ինքզինք: **29**
 Արդարեւ ո՛չ մէկը երբեք ատած է իր մարմինը,
 հապա կը կերակրէ զայն ու կը փայփայէ, ինչպէս
 Տէրն ալ՝ եկեղեցին. **30** բանի որ մենք անոր
 մարմինին անդամներն ենք, անոր միսէն եւ

անոր ոսկորներէն: **31** “Ատոր համար մարդը պիտի թողու հայրն ու մայրը, եւ պիտի յարի իր կնոջ, ու երկուքը պիտի ըլլան մէկ մարմին”: **32** Ասիկա մեծ խորհուրդ մըն է. բայց ես կը խօսիմ Քրիստոսի եւ եկեղեցիին մասին: **33** Սակայն ձեզմէ իւրաքանչիւրը թող սիրէ իր կինը այնպէս՝ ինչպէս ինքզինք, ու կինը թող ականածի իր ամուսինէն:

6 Չաւակներ, հնազանդեցէք ձեր ծնողներուն՝ Տէրոջմով, որովհետեւ այդ է իրաւացին: **2** Պատուէ հայրդ ու մայրդ, (որ առաջին պատուիրանն է խոստումով,) **3** որպէսզի բարիք ըլլայ քեզի, ու երկար ապրիս երկրի վրայ: **4** Եւ դուք, հայրեր, մի բարկացնէք ձեր զաւակները, հապա մեծցուցէք զանոնք Տէրոջ կրթութեամբ ու խրատով: **5** Ստրուկներ, հնազանդեցէք ձեր մարմնաւոր տէրերուն՝ ահով ու դողով, ձեր սիրտին պարզամտութեամբ, որպէս թէ Քրիստոսի. **6** ոչ թէ ծառայելով աչքի առջեւ՝ մարդահաճոներու պէս, հապա Քրիստոսի ստրուկներու պէս՝ սրտանց գործադրելով Աստուծոյ կամքը: **7** Ծառայեցէք յօժարութեամբ, որպէս թէ Տէրոջ եւ ոչ թէ մարդոց, **8** գիտնալով թէ իւրաքանչիւրը՝ ինչ բարիք որ գործէ, նոյնը պիտի ստանայ Տէրոջմէն, ստրուկ ըլլայ թէ ազատ: **9** Իսկ դուք, տէրեր, ըրէք անոնց նոյն բաները, հրաժարելով սպառնալիքէն: Գիտցէք թէ անոնց ալ, ձեր ալ Տէրը երկինքն է, ու աչառութիւն չկայ անոր քով: **10** Վերջապէս, եղբայրներս, զօրացէք Տէրոջմով եւ անոր հզօր կարողութեամբ: **11** Հազէք Աստուծոյ

ամբողջ գրահը, որպէսզի կարենաք դիմադրել Չարախօսին հնարքներուն: **12** Որովհետեւ մեր գօտեմարտը մարմինի եւ արիւնի հետ չէ, հապա պետութիւններու, իշխանութիւններու, այս խաւար աշխարհին՝ իշխանաւորներուն հետ, երկնաւոր վայրերու մէջ եղող չար ոգիներուն հետ: **(aiōn g165)** **13** Ուստի առէք ձեր վրայ Աստուծոյ ամբողջ գրահը, որպէսզի կարենաք դիմադրել չար օրը, **14** ու ամէն բան կատարելէ ետք՝ հաստատուն կայնիլ: Ուստի կայնեցէք ձեր տեղը՝ ձեր մէջքը գօտեպնդած ճշմարտութեամբ եւ հագած արդարութեան գրահը, **15** ու ձեր ոտքերուն իբր կօշիկ անցուցած խաղաղութեան աւետարանին պատրաստութիւնը: **16** Բոլորին վրայ՝ առէք հաւատքին վահանը, որով պիտի կարենաք մարել Չարին բոլոր հրավառ նետերը. **17** եւ առէք փրկութեան սաղաւարտն ու Յոգիին սուրը՝ որ Աստուծոյ խօսքն է: **18** Ամէն ատեն աղօթեցէք Յոգիով՝ ամէն տեսակ աղօթքով եւ աղերսանքով: Հսկեցէք ասոր վրայ բոլորովին յարատեւութեամբ ու աղերսանքով՝ բոլոր սուրբերուն համար. **19** ինծի՛ համար ալ, որպէսզի խօսք տրուի ինծի, որ համարձակութեամբ բանամ բերանս՝ գիտցնելու խորհուրդը աւետարանին, **20** որուն համար ես դեսպան մըն եմ՝ շղթաներով. որպէսզի անով համարձակութեամբ խօսիմ՝ ինչպէս պէտք է խօսիմ: **21** Բայց որպէսզի դո՛ւք ալ գիտնաք իմ մասիս՝ թէ ինչ կ'ընեմ, ամէն բան պիտի գիտցնե՛ ձեզի Տիւբիկոս սիրելի եղբայրն ու Տէրոջմով

հաւատարիմ սպասարկուն: **22** Չինք յատկապէս
դրկեցի ձեզի, որպէսզի գիտնաք մեր մասին, եւ
ինք մխիթարէ ձեր սիրտերը: **23** Խաղաղութիւն
եղբայրներուն, ու սէր՝ հաւատքով միասին՝ Յայր
Աստուծմէ ու Տէր Յիսուս Քրիստոսէ: **24** Շնորհք
բոլոր անոնց հետ՝ որ անկեղծութեամբ կը սիրեն
մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոսը: Ամէն:

ՓԻԼԻՊՊԵՑԻՍ

1 Պօղոս եւ Տիմոթէոս՝ Յիսուս Քրիստոսի ծառաները՝ Քրիստոս Յիսուսով բոլոր սուրբերուն, որ Փիլիպպէի կողմերն են՝ եպիսկոպոսներով ու սարկաւագներով. **2** շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Զօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ: **3** Շնորհակալ կ'ըլլամ իմ Աստուծմէս՝ ձեզմէ ունեցած բոլոր յիշատակներուս համար, **4** ամէն ատեն՝ ամէն աղերսանքիս մէջ: Ուրախութեամբ կ'աղերսեմ ձեր բոլորին համար, **5** քանի որ հաղորդակից եղաք աւետարանին՝ առաջին օրէն մինչեւ հիմա. **6** այս մասին համոզուած եմ թէ ան որ սկսաւ բարի գործ մը ձեր մէջ, պիտի աւարտէ մինչեւ Յիսուս Քրիստոսի օրը: **7** Իրաւացի ալ է ինծի այսպէս մտածել ձեր բոլորին մասին, քանի որ ձեզ ունիմ իմ սիրտիս մէջ՝, ու դուք բոլորդ հաղորդակցեցաք ինծի եղած շնորհքին՝ թէ իմ կապերուս, թէ ալ աւետարանին ջատագովութեան եւ հաստատութեան մէջ: **8** Որովհետեւ Աստուած վկայ է թէ իմ քան կարօտցած եմ ձեզ բոլորդ՝ Քրիստոս Յիսուսի գութով, **9** ու սնալէս կ'աղօթեմ՝ որ ձեր սէրը հետզհետէ աւելի առատանայ գիտակցութեամբ եւ ամբողջ դատողութեամբ, **10** որպէսզի դուք զատորոշէք տարբեր բաները՝ անկեղծ եւ անսայթաք ըլլալու համար մինչեւ Քրիստոսի օրը, **11** լեցուած արդարութեան պտուղներով Յիսուս Քրիստոսի միջոցով՝ Աստուծոյ փառքին ու գովութեան համար: **12** Կ'ուզեմ որ գիտնաք,

եղբայրներ, թէ ինչ որ պատահեցաւ ինծի՝
 առաւելապէս պատճառ եղաւ աւետարանի
 յառաջդիմութեան, 13 այնպէս որ Քրիստոսի
 համար կրած կապերս՝ բացայայտ եղան ամբողջ
 պալատին մէջ եւ ամենուրեք, 14 ու Տէրոջմով
 եղբայրներէն շատերը, վստահութիւն առնելով
 կապերէս, ալ աւելի յանդուգն են՝ քարոզելու
 Աստուծոյ խօսքը առանց վախի: 15 Արդարեւ
 ոմանք կը քարոզեն Քրիստոսը՝ նախանձե ու կռիւէ
 մղուած, ոմանք ալ՝ բարեացականութեամբ: 16
 Անոնք կը հռչակեն Քրիստոսը՝ հակառակութեան
 համար, ոչ թէ անկեղծութեամբ, կարծելով թէ
 տառապանք կ'աւելցնեն կապերուս վրայ. 17 իսկ
 ասոնք՝ սիրոյ համար, որովհետեւ գիտեն թէ ես
 սահմանուած եմ աւետարանին ջատագովութեան
 համար: 18 Սակայն ինչ փոյթ. ամէն կերպով,
 թէ՛ պատրուակով եւ թէ՛ ճշմարտութեամբ,
 Քրիստոս կը հռչակուի, ու կ'ուրախանամ
 ասոր համար, եւ պիտի ուրախանամ ալ: 19
 Քանի որ գիտեմ թէ ասիկա պիտի յանգի
 իմ փրկութեանս՝ ձեր աղերսանքներով ու
 Յիսուս Քրիստոսի Յոգիին օժանդակութեամբ,
 20 իմ եռանդուն ակնկալութեանս եւ յոյսիս
 համեմատ՝ թէ բնան պիտի չամչնամ. հապա՝
 բոլորովին համարձակութեամբ, ինչպէս ամէն
 ատեն՝ նոյնպէս ալ հիմա, Քրիստոս պիտի
 մեծարուի մարմինիս մէջ, կան կեանքով, կան
 մահով. 21 որովհետեւ ինծի համար՝ ապրիլը
 Քրիստոս է, ու մեռնիլը՝ շահ: 22 Բայց եթէ մարմինի

մէջ ապրիլս պտուղ կը բերէ իմ գործիս, ալ
չեմ գիտեր որ մէկը ընտրեմ: **23** Երկուքէն ալ
պարտադրուած եմ. ցանկութիւն ունիմ մեկնելու
եւ Քրիստոսի հետ ըլլալու, ինչ որ շատ աւելի
լաւ է. **24** սակայն մարմինի մէջ մնալը աւելի
հարկաւոր է ձեզի համար: **25** Այս համոզումը
ունենալով՝ գիտեմ թէ պիտի մնամ ու ձեր
բոլորին հետ կենամ, որ դուք յառաջդիմէք եւ
ուրախ ըլլաք հաւատքով. **26** որպէսզի իմ վրաս
ձեր ունեցած պարծանքը ճոխանայ Քրիստոս
Յիսուսով՝ դարձեալ ձեզի գալուս պատճառով:
27 Սակայն ապրեցէք Քրիստոսի աւետարանին
արժանավայել կերպով. որպէսզի եթէ գամ ու
տեսնեմ ձեզ, եւ կամ բացակայ ըլլամ, ձեր մասին
լսեմ թէ հաստատուն կը կենաք՝ մէկ հոգիով, ու
միասին կը մարտնչիք՝ իբր մէկ անձ՝ աւետարանի
հաւատքին համար, **28** ոչ մէկ բանով սոսկալով
հակառակորդներէն: Ատիկա անոնց համար
ապացոյց մըն է կորուստի, իսկ ձեզի համար՝
փրկութեան, **29** որ Աստուծոմէ է. որովհետեւ՝
Քրիստոսի պատճառով՝ ձեզի շնորհուեցաւ ոչ
միայն հաւատալ անոր, այլ նաեւ չարչարուիլ անոր
համար, **30** մղելով նոյն պայքարը՝ որ տեսաք իմ
մէջս, ու հիմա կը լսէք թէ իմ մէջս է:

2 Ուրեմն՝ եթէ մխիթարութիւն կայ Քրիստոսով,
եթէ կան սիրոյ սփոփանք, Հոգիի հաղորդութիւն,
գութ ու կարեկցութիւն, **2** լիացուցէք իմ
ուրախութիւնս՝ ըլլալով համախոհ եւ ունենալով
միեւնոյն սէրը, մէկ անձ ու մէկ մտածում: **3**

Ո՛հ մեկ բան ըրէք հակառակութեամբ կամ
 սնափառութեամբ. հապա՛ խոնարհութեամբ
 ուրիշը ձեզմէ գերազանց համարեցէք՝: 4
 Իւրաքանչիւրը թող նկատի չառնէ միայն իր
 շահը, այլ նաեւ ուրիշներունը: 5 Ունեցէք
 այն մտածումը՝ որ Քրիստոս Յիսուսի մէջ
 էր. 6 Աստուծոյ կերպարանքը ունենալով՝
 ան յափշտակութիւն մը չհամարեց Աստուծոյ
 հաւասար ըլլալը, 7 հապա ունայնացուց ինքզինք,
 իր վրայ առաւ ծառայի մը կերպարանքը եւ
 նմանեցաւ մարդոց. գտնուելով մարդկային
 կերպարով՝ 8 խոնարհեցուց ինքզինք ու հնազանդ
 եղաւ մինչեւ մահ, նոյնիսկ՝ խաչին մահը: 9
 Ուստի Աստուած ալ մեծապէս բարձրացուց զայն
 եւ շնորհեց անոր անուն մը՝ որ ամէն անունէ
 գերազանց է, 10 որպէսզի Յիսուսի անունին
 ծնրադրեն բոլորը՝ երկնաւորները, երկրաւորներն
 ու սանդարամետականները, 11 եւ ամէն լեզու
 դաւանի թէ Յիսուս Քրիստոս Տէր է՝ Հայր
 Աստուծոյ փառքին համար: 12 Հետեւաբար,
 սիրելիներս, ինչպէս ամէն ատեն հնազանդեցաք,
 ո՛չ միայն իմ ներկայութեանս մէջ, հապա ալ աւելի
 հիմա՝ իմ բացակայութեանս ատեն, գործադրեցէք
 ձեր փրկութիւնը՝ ահով ու դողով. 13 որովհետեւ
 Աստուած է որ ձեր մէջ կը ներգործէ թէ՛ կամենալը
 եւ թէ ընելը՝ իր բարեհաճութեան համաձայն:
 14 Ըրէք ամէն ինչ՝ առանց տրտունջներու
 եւ առարկութիւններու, 15 որպէսզի ըլլաք
 անմեղադրելի ու աննենգ, Աստուծոյ անարատ

զաւակներ՝ կամակոր եւ խոտորեալ սերունդի մը մէջ: Դուք կը փայլիք անոնց մէջ՝ որպէս յուսաւորներ աշխարհի մէջ, 16 ամուր բռնելով կեանքին խօսքը, որպէսզի կարենամ պարծենալ Քրիստոսի օրը՝ թէ ընդունայն չեմ վազած, ոչ ալ ընդունայն աշխատած: 17 Նոյնիսկ եթէ ընծայուիմ ձեր գոհին ու հաւատքի պաշտօնին համար, կ'ուրախանամ եւ ուրախակից կ'ըլլամ ձեր բոլորին: 18 Նոյնպէս ալ դուք ուրախացէք եւ ուրախակից եղէք ինծի: 19 Տէր Յիսուսով կը յուսամ շուտով ձեզի դրկել Տիմոթէոսը, որպէսզի իմ սիրտս ալ հանգչի՝ երբ գիտնամ ձեր վիճակը: 20 Որովհետեւ անոր նման ոչ մէկ սրտակից ունիմ, որ անկեղծաբար հոգայ ձեզ. 21 քանի որ բոլորը կը փնտռեն իրենց շահը, ոչ թէ Յիսուս Քրիստոսինը: 22 Բայց դուք փորձով գիտէք թէ ան ծառայեց աւետարանին ինծի հետ՝ ինչպէս զաւակ մը հօրը հետ: 23 Ուստի կը յուսամ ձեզի դրկել զինք անյապաղ, երբ տեսնեմ թէ ինչ պիտի ըլլայ վիճակս: 24 Սակայն վստահութիւն ունիմ Տէրոջմով՝ թէ նա ալ շուտով պիտի գամ: 25 Բայց հարկաւոր համարեցի հիմա ձեզի դրկել Եպափրոդիտոսը, իմ եղբայրս, գործակիցս ու զինակիցս, որ դուք դրկած էիք իբր կարիքներուս պաշտօնեան: 26 Որովհետեւ ինք ալ կարօտցած է բոլորդ, եւ կը վշտանար որ լսեր էիք թէ հիւանդացեր էր: 27 Արդարեւ ինք հիւանդացաւ ու շատ մօտեցաւ մահուան, բայց Աստուած ողորմեցաւ անոր. ոչ միայն անոր՝ հապա ինծի ալ, որպէսզի չունենամ

տրտմութիւն տրտմութեան վրայ: **28** Ուստի աւելի փութաջանութեամբ դրկեցի, որպէսզի՝ տեսնելով զայն՝ դարձեալ ուրախանաք ու ես նուազ տրտմիմ: **29** Ուրեմն ընդունեցէք զայն Տէրոջմով՝ բոլորովին ուրախութեամբ, եւ պատուեցէք այդպիսիները. **30** քանի որ մահուան մօտեցաւ Քրիստոսի գործին համար՝ վտանգելով իր անձը, որպէսզի լրացնէ ինչ որ կը պակսէր ձեր կատարելիք պաշտօնին՝ ինծի հանդէպ:

3 Վերջապէս, եղբայրներս, ուրախացէք Տէրոջմով: Արդարեւ նոյն բաները գրել ձեզի՝ ձանձրոյթ չէ ինծի, բայց ապահովութիւն է ձեզի: **2** Չգուշացէք շուներէն, զգուշացէք չար գործաւորներէն, զգուշացէք թլփատութենէն. **3** որովհետեւ թլփատութիւնը մէնք ենք, որ կը պաշտենք Աստուած Հոգիով եւ կը պարծենանք Քրիստոս Յիսուսով, ու վստահութիւն չունինք մարմնի վրայ. **4** թէեւ ես ալ ունենալու էի նոյն վստահութիւնը մարմնի վրայ: Եթէ ուրիշ մէկը կը կարծէ թէ վստահութիւն ունի մարմնի վրայ, ալ աւելի ես՝ **5** ութերորդ օրը թլփատուած, Իսրայէլի ցեղէն, Բենիամինի տոհմէն, Եբրայեցի մը՝ Եբրայեցիներէն, Օրէնքին համեմատ՝ Փարիսեցի, **6** նախանձախնդրութեան համեմատ՝ եկեղեցին կը հալածէի, Օրէնքէն եղած արդարութեան համեմատ՝ անմեղադրելի էի: **7** Բայց ինչ որ շահ էր ինծի, վնաս համարեցի զայն՝ Քրիստոսի համար: **8** Ու նոյնիսկ բոլոր բաներն ալ վնաս կը համարեմ՝ իմ Տէրոջս Քրիստոս Յիսուսի գիտութեան

գերազանցութեան համար: Բոլոր բաներէն զրկուեցայ անոր համար, եւ աղբ կը համարեմ զանոնք, որպէսզի շահիմ Քրիստոսը **9** ու գտնուիմ իր մէջ, ունենալով ո՛չ թէ իմ արդարութիւնս՝ որ Օրէնքէն է, հապա ան՝ որ Քրիստոսի հաւատքին միջոցով է, արդարութիւնը՝ որ Աստուծմէ Է՝ հաւատքով. **10** որպէսզի ճանչնամ զինք եւ իր յարութեան զօրութիւնը, ու հաղորդակից ըլլամ իր չարչարանքներուն՝ կերպարանակից դառնալով իր մահուան, **11** որպէսզի կարենամ հասնիլ՝ մեռելներուն յարութեան: **12** Ո՛չ թէ ես արդէն ստացած եմ մրցանակը, կամ արդէն կատարեալ եղած եմ. հապա հետամուտ եմ բռնելու զայն, որուն համար ալ բռնուեցայ Քրիստոս Յիսուսէ: **13** Եղբայրներ, ես չեմ սեպեր թէ բռնած եմ: Հապա կ'ընեմ սա՛ մէկ բանը. մոռցած եմ ետեւի եղածները, եւ կը դիմեմ առջեւի եղածներուն: **14** Կը հետապնդեմ նպատակակէտը՝ Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին մրցանակին համար: **15** Ուրեմն մենք բոլորս՝ որ կատարեալ ենք՝ մտածենք այսպէս. իսկ եթէ տարբեր կերպով մտածէք բանի մը մասին, Աստուած զայն ալ պիտի յայտնէ ձեզի: **16** Սակայն ինչ աստիճանի որ հասած ենք՝ ընթանանք նոյն կանոնին համաձայն, մտածենք նոյնպէս: **17** Եղբայրներ, բոլորդ միասին նմանեցէ՛ք ինծի, եւ ուշադիր եղէ՛ք անոնց՝ որ կ'ընթանան անյնպէս՝ ինչպէս մենք, որ ունիք իբր տիպար: **18** Որովհետեւ շատեր կ'ընթանան,

որոնց մասին յաճախ կ'ըսէի ձեզի եւ հիմա կ'ըսեմ՝ նոյնիսկ լալով, այսինքն՝ Քրիստոսի խաչին թշնամիները. 19 անոնց վախճանը կորուստ է, անոնց աստուածը՝ իրենց որովայնն է, ու անոնց փառքը՝ իրենց ամօթն է: Անոնք կը մտածեն միայն երկրային բաներու մասին. 20 իսկ մեր քաղաքացիութիւնը երկինքն է, ուրկէ կը սպասենք Փրկիչին՝ Տէր Յիսուս Քրիստոսի, 21 որ պիտի կերպարանափոխէ մեր նուաստացած մարմինը՝ կերպարանակից ըլլալու իր փառաւոր մարմինին, այն ներգործութեան համեմատ՝ որ կարող է նաեւ ամէն ինչ հպատակեցնել իրեն:

4 Հետեւաբար, սիրելի ու կարօտալի եղբայրներս, իմ ուրախութիւնս ու պսակս, այսպէս հաստատուն կեցէք Տէրոջմով, սիրելիներս: 2 Կ'աղաչեմ Եւոդիայի ու կ'աղաչեմ Սիւնտիքի, որ ունենան միեւնոյն մտածումը Տէրոջմով: 3 Եւ կը խնդրեմ քեզմէ ալ, իմ հարազատ լծակիցս, օգնէ ասոնց՝ որ աւետարանին համար մարտնչեցան ինծի հետ, նաեւ Կղեմեսի եւ միւս գործակիցներուս հետ, որոնց անունները կեանքի գիրքին մէջ են: 4 Ամէն ատեն ուրախացէք Տէրոջմով. դարձեալ կ'ըսեմ, ուրախացէք: 5 Ձեր ազնուութիւնը թող յայտնի ըլլայ բոլոր մարդոց. Տէրը մօտ է: 6 Մի՛ մտահոգուիք որեւէ բանի համար. հապա ամէն բանի մէջ՝ աղօթքով ու աղերսանքով, շնորհակալութեամբ միասին, գիտցուցէք ձեր խնդրանքները Աստուծոյ. 7 եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն միտքէ

գերիվեր է, պիտի պահպանէ ձեր սիրտերն ու մտածումները՝ Յիսուս Քրիստոսով: **8** Վերջապէս, եղբայրներ, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ՝ պատկառելի, ինչ որ՝ արդար, ինչ որ՝ անկեղծ, ինչ որ՝ սիրալիր, ինչ որ՝ բարի համբաւով, ինչ որ առաքինութեամբ եւ ինչ որ գովելի է, ատո՛նց մասին մտածեցէք: **9** Ինչ որ սորվեցաք, ընդունեցիք, լսեցիք ու տեսաք իմ վրաս՝ զանո՛նք ըրէք, եւ խաղաղութեան Աստուածը պիտի ըլլայ ձեզի հետ: **10** Մեծապէս ուրախացայ Տէրոջմով, որ հիմա վերջապէս նորոգուեցաւ իմ վրաս ձեր ունեցած մտածմունքը, ինչպէս կը մտածէիք ալ, սակայն պատեհութիւն չունէիք: **11** Կարօտութեան համար չէ որ կ'ըսեմ. որովհետեւ ես սորվեցայ ինքնաբաւ ըլլալ իմ եղած վիճակիս մէջ: **12** Թէ՛ գիտեմ նուաստանայ, թէ՛ ալ գիտեմ առատութեան մէջ ըլլալ: Ամէն բանի մէջ՝ ամէն կերպով վարժուած եմ թէ՛ կշտանայ, թէ՛ ալ անօթենայ, թէ՛ առատութեան եւ թէ՛ կարօտութեան մէջ ըլլալ: **13** Ամէն բանի կարող եմ անով՝ որ զօրացուց զիս: **14** Սակայն լաւ ըրիք՝ որ հաղորդակից եղաք տառապանքիս: **15** Դ՛հրէք ալ գիտէք, Փիլիպպեցիներ, թէ աւետարանին քարոզութեան սկիզբը, երբ մեկնեցայ Մակեդոնիայէն, ո՛չ մէկ եկեղեցի հաղորդակից եղաւ ինծի՝ տալու եւ ընդունելու համար, հապա միայն դ՛հրէք: **16** որովհետեւ նոյնիսկ մինչեւ Թեսաղոնիկէ ղրկեցիք ինծի պէտք եղածը՝ մէկ-երկու անգամ: **17** Ես կը փնտռեմ ո՛չ թէ նուէր, հապա կը փնտռեմ պտուղ,

որ աւելնայ ձեր հաշիւին վրայ: **18** Իսկ ես ամեն
բան ունիմ, եւ առատօրէն. լիացած եմ՝ ստանալով
Եպափրոդիտոսի միջոցով ձեր դրկածները, որ
անուշաբոյր հոտ մըն է, ընդունելի գոհ մը, հաճելի՝
Աստուծոյ: **19** Եւ իմ Աստուածս պիտի լեցնէ ձեր
բոլոր կարիքները՝ իր ճոխութեան համեմատ,
փառքով՝ Քրիստոս Յիսուսի միջոցով: **20** Ուրեմն
փանօք Աստուծոյ ու մեր Յօր՝ դարե դար՝: Ամեն:
(aiōn g165) **21** Բարեւեցէք բոլոր սուրբերը Յիսուս
Քրիստոսով: **22** Կը բարեւեն ձեզ ինծի հետ եղող
եղբայրները: **23** Կը բարեւեն ձեզ բոլոր սուրբերը,
մանաւանդ անոնք՝ որ Կայսրին տունեն են: Տէր
Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ:
Ամեն:

ԿՈՂՈՍԱՑԻՍ

1 Պօղոս, Աստուծոյ կամբով Յիսուս Քրիստոսի ամաքեալը, եւ Տիմոթէոս եղբայրը՝ **2** Կողոսայի մէջ եղող սուրբերուն ու Քրիստոսով հաւատարիմ եղբայրներուն. **3** շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ՝: Ամեն ատեն աղօթելով ձեզի համար՝ շնորհակալ կ'ըլլանք Աստուծմէ ու մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հօրմէն, **4** լսելով Քրիստոս Յիսուսի վրայ ձեր ունեցած հաւատքին եւ բոլոր սուրբերուն հանդէպ ձեր տածած սիրոյն մասին, **5** այն յոյսին պատճառով՝ որ երկինքը վերապահուած է ձեզի համար: Անոր մասին նախապէս լսեցիք՝ աւետարանին ճշմարտութեան խօսքով, **6** որ հասաւ ձեզի՝ ինչպէս ամբողջ աշխարհի, ու պտուղ կ'արտադրէ (եւ կ'աճի) նոյնպէս ձեր մէջ ալ, այն օրէն ի վեր՝ երբ լսեցիք ու ճշմարտութեամբ գիտցաք Աստուծոյ շնորհքը, **7** ինչպէս սորվեցաք մեր սիրելի ծառայակիցէն՝ Եպափրասէն: Ան Քրիստոսի հաւատարիմ սպասարկու մըն է ձեզի համար, **8** եւ ինք ալ բացայայտեց մեզի ձեր սերը՝ Հոգիով: **9** Հետեւաբար մենք ալ՝ այն օրէն երբ լսեցինք՝ չենք դադրիր աղօթելէ ձեզի համար, եւ խնդրելէ որ լեցուած ըլլաք անոր կամքին գիտակցութեամբ՝ ամբողջ իմաստութեամբ ու հոգեւոր ըմբռնումով, **10** որպէսզի ընթանաք Տէրոջ արժանավայել կերպով՝ հաճեցնելով զինք ամեն բանի մէջ, պտղաբեր ըլլալով ամեն

տեսակ բարի գործով, եւ անելով Աստուծոյ ճանաչումով. **11** ու զօրացած ամբողջ ոյժով՝ իր փառաւոր զօրութեան համեմատ, ուրախութեամբ համբերող եւ համբերատար ըլլաք, **12** շնորհակալ ըլլալով Հայր Աստուծոյ, որ արժանացուց մեզ մասնակից ըլլալու լոյսի մէջ բնակող սուրբերու ժառանգութեան, **13** եւ ազատեց մեզ խաւարի իշխանութենէն ու փոխադրեց իր սիրելի Որդիին թագաւորութեան. **14** անով մենք ազատագրութիւն ունինք՝ իր արիւնով, այսինքն՝ մեղքի ներում: **15** Ան անտեսանելի Աստուծոյ պատկերն է, բոլոր արարածներուն անդրանիկը, **16** որովհետեւ անով ստեղծուեցաւ ամեն բան, ինչ որ երկինքի մէջ է եւ ինչ որ երկրի վրայ կայ, տեսանելի կամ անտեսանելի. թէ՛ գահերը, թէ՛ տէրութիւնները, թէ՛ պետութիւնները, թէ՛ իշխանութիւնները: Բոլոր բաները ստեղծուեցան անով եւ անոր համար: **17** Ան ամեն բանէ առաջ է, ու անով ամեն բան հաստատ կը կենայ: **18** Ան է մարմինին, այսինքն՝ եկեղեցիին գլուխը. ան է սկիզբը, մեռելներէն անդրանիկը, որպէսզի նախապատիւ ըլլայ ամեն բանի մէջ. **19** որովհետեւ Հայրը բարեհաճեցաւ որ Աստուածութեան ամբողջ լիութիւնը բնակի անոր մէջ, **20** եւ անով հաշտեցնէ իրեն հետ բոլորը, թէ՛ երկրի վրայ ու թէ՛ երկինքի մէջ եղողները, խաղաղութիւն ընելով անոր արիւնով, որ թափուեցաւ խաչին վրայ: **21** Եւ ձեզ ալ, որ ժամանակին ուծացած ու ձեր միտքով թշնամիներ էիք՝ չար գործերով, **22** հիմա

հաշտեցուց անոր բուն մարմինով՝ մահուան միջոցով, որպեսզի անոր առջեւ սուրբ, անարատ եւ անմեղադրելի ներկայացնե՝ ձեզ, **23** եթե հիմնուած ու հաստատուած մնաք հաւատքին վրայ, առանց խախտելու յոյսէն այն աւետարանին՝ որ դուք լսեցիք. ան քարոզուեցաւ երկինքի տակ եղած բոլոր արարածներուն, ու ես՝ Պօղոս՝ սպասարկու եղայ անոր: **24** Հիմա ուրախ եմ ձեզի համար կրած չարչարանքներուս մէջ, ու Քրիստոսի կրած տառապանքներուն պակասը կը լրացնեմ իմ մարմինիս մէջ՝ անոր մարմինին համար, որ եկեղեցին է: **25** Ես սպասարկու եղայ անոր Աստուծոյ տնտեսութեամբ՝ որ տրուեցաւ ինծի ձեզի համար, որպէսզի լիովին քարոզեմ Աստուծոյ խօսքը, **26** այն խորհուրդը՝ որ ծածկուած էր բոլոր դարերէն ու սերունդներէն, իսկ հիմա յայտնաբերուեցաւ իր սուրբերուն, (aïōn g165) **27** որոնց Աստուած ուզեց գիտցնել թէ ինչ է այս խորհուրդին փառքին ճոխութիւնը հեթանոսներուն մէջ, այսինքն՝ Քրիստոս ձեր մէջ, փառքի յոյսը: **28** Մենք կը հռչակենք զինք, խրատելով ամեն մարդ եւ սորվեցնելով ամեն մարդուն՝ ամբողջ իմաստութեամբ, որպէսզի ներկայացնենք ամեն մարդ կատարեալ՝ Քրիստոս Յիսուսով: **29** Ասոր համար ես կ'աշխատիմ, պայքարելով իր ներգործութեան համեմատ՝ որ զօրութեամբ կը գործէ իմ մէջս:

2 Արդարեւ կ'ուզեմ որ գիտնաք թէ ինչպէս մեծ պայքար կը մղեմ ձեզի, Լաւոդիկեցիներուն

ու բոլոր անոնց համար՝ որ չեն տեսեր իմ երեսս մարմինով, 2 որպէսզի անոնց սիրտերը մխիթարուին՝ սիրով իրարու կցուած, եւ ըմբռնեն լման վստահութեան ամբողջ ճոխութիւնը, այսինքն գիտակցին Յայր Աստուծոյ ու Քրիստոսի խորհուրդին, 3 որուն մէջ պահուած են իմաստութեան եւ գիտութեան բոլոր գանձերը: 4 Կ'ըսեմ ասիկա՝ որպէսզի ո՛չ մէկը խաբէ ձեզ հրապուրիչ խօսքերով. 5 որովհետեւ թէպէտ բացակայ եմ մարմինով, ձեզի հետ եմ հոգիով, ու կ'ուրախանամ՝ տեսնելով ձեր կարգապահութիւնը եւ ձեր հաւատքին ամրութիւնը՝ Քրիստոսի վրայ: 6 Ուրեմն, ինչպէս ընդունեցիք Քրիստոս Յիսուս Տէրը՝ այնպէս ընթացէք անով, 7 արմատացած ու շինուած անոր վրայ, եւ հաստատուած հաւատքին մէջ՝ ինչպէս սորվեցաք, ու ճոխացէք անոր մէջ շնորհակալութեամբ: 8 Չգուշացէք որ ո՛չ մէկը որսայ ձեզ փիլիսոփայութեամբ եւ ունայն խաբէութեամբ, մարդոց աւանդութեան ու աշխարհի սկզբունքներուն համաձայն, եւ ո՛չ թէ Քրիստոսի վարդապետութեան համաձայն. 9 որովհետեւ Աստուածութեան ամբողջ լիութիւնը կը բնակի անոր մէջ մարմնապէս, 10 ու դուք ալ ամբողջացած էք անով՝ որ գլուխն է ամեն պետութեան եւ իշխանութեան: 11 Անով ալ թլփատուեցաք՝ անձեռակերտ թլփատութեամբ, մերկանալով մեղքերու մարմինէն՝ Քրիստոսի թլփատութեամբ:

12 Անոր հետ թաղուեցաք մկրտութեամբ,
 նաեւ անով եւ անոր հետ յարութիւն առիք՝
 հաւատալով Աստուծոյ ներգործութեան, որ
 մեռելներէն յարուցանեց զայն, 13 եւ ձեզի ալ՝ որ
 ժամանակին մեռած էիք յանցանքներու մէջ ու
 ձեր մարմինին անթլփատութեան մէջ՝ կեանք
 տուաւ անոր հետ: Մեր բոլոր յանցանքները
 ներեց մեզի, 14 եւ մեզի դէմ հրամաններով
 եղած պարտամուրհակը՝ որ հակառակ էր
 մեզի՝ ջնջեց, ու մէջտեղէն վերցուց զայն՝
 զամելով խաչափայտին վրայ. 15 եւ մերկացուց
 պետութիւններն ու իշխանութիւնները, եւ
 հանրութեան նշաւակ դարձուց՝ անով յաղթելով
 անոնց: 16 Ուրեմն ալ ո՛չ մէկը թող դատէ
 ձեզ կերակուրի կամ խմելիքի համար, կամ
 տօներու, ամսագլուխներու կամ Շաբաթներու
 կապակցութեամբ, 17 որոնք զալիք բաներուն
 շուքն են. բայց մարմինը Քրիստոսի է: 18 Ո՛չ
 մէկը ձեզ թող գրկէ ձեր մրցանակէն՝ յօժարակամ
 խոնարհութեամբ ու հրեշտակներու կրօնով,
 միջամուխ ըլլալով չտեսած բաներուն, զուր
 տեղը հպարտանալով իր մարմնաւոր միտքով,
 19 եւ չբռնելով գլուխը՝ որմէ ամբողջ մարմինը,
 յօդերով ու յօդակապերով հայթայթուած եւ
 իրարու կցուած, կ'աճի Աստուծոյ աճումով:
 20 Ուրեմն, եթէ դուք մեռաք Քրիստոսի հետ՝
 այս աշխարհի սկզբունքներուն հանդէպ, ալ
 ինչո՞ւ՝ աշխարհի մէջ ապրողներու նման՝
 ենթակայ կ'ըլլաք հրամաններու, ինչպէս՝ 21

«մի մերձենար, մի համտեսեր, մի դպչիր», 22 (ասոնք՝ բոլորը գործածութեամբ սահմանուած են ապականութեան,) մարդոց պատուէրներուն ու վարդապետութիւններուն համաձայն: 23 Ասոնք արդարեւ իմաստութեան կերպարանք մը ունին՝ ինքնակամ կրօնով, խոնարհութեամբ եւ մարմինին չխնայելով. բայց արժանի են ոչ մէկ պատիւի, հապա կը ծառայեն մարմինը գոհացնելու:

3 Ուրեմն, եթէ յարութիւն առիք Քրիստոսի հետ, փնտռեցէք այն բաները՝ որ վերն են, ուր Քրիստոս կը բազմի՝ Աստուծոյ աջ կողմը: 2 Մտածեցէք վերի բաներուն մասին, ոչ թէ երկրի վրայ եղող բաներուն մասին. 3 որովհետեւ դուք մեռաք, ու ձեր կեանքը պահուած է Քրիստոսի հետ՝ Աստուծոյ մէջ: 4 Երբ Քրիստոս՝ մեր կեանքը՝ երեւնայ, այն ատեն դուք ալ փառքով պիտի երեւնաք՝ անոր հետ: 5 Ուրեմն մեռցուցէք ձեր երկրաւոր անդամները.- պոռնկութիւնը, անմաքրութիւնը, անսանձ կիրքը, չար ցանկութիւնը եւ ագահութիւնը, որ կռապաշտութիւն է: 6 Ասոնց համար Աստուծոյ բարկութիւնը կու գայ անհնազանդութեան որդիներուն վրայ, 7 որոնց մէջ դուք ալ ժամանակին կ'ընթանայիք, երբ կ'ապրէիք անոնց մէջ: 8 Բայց հիմա դուք ալ թօթափեցէք սա՛ ամէնը.- բարկութիւնը, զայրոյթը, չարամտութիւնը, հայիոյութիւնը, լիբէ խօսքերը՝ ձեր բերանէն: 9 Մի ստէք իրարու. հանեցէք ձեր վրայէն հին մարդը՝ իր գործերով, 10 ու հագէք այն նորը, որ

նորոգուած է գիտակցութեամբ՝ իր Արարիչին
 պատկերին համաձայն, 11 եւ որուն մէջ ոչ
 Յոյն կայ, ոչ ալ Հրեայ, թլփատութիւն կամ
 անթլփատութիւն, օտար, Սկիւթացի, ստրուկ կամ
 ազատ. հապա Քրիստոս է ամէն ինչ, եւ բոլորին
 մէջ: 12 Ուրեմն, որպէս Աստուծոյ ընտրեալներ՝
 սուրբ ու սիրելի, հազէք գութը, կարեկցութիւնը,
 քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեգութիւնը,
 համբերատարութիւնը, 13 հանդուրժելով իրարու
 եւ ներելով իրարու՝ եթէ մէկը տրտունջ մը
 ունենայ միւսին դէմ. ինչպէս Քրիստոս ներեց
 ձեզի, նոյնպէս ալ դուք ներեցէք: 14 Եւ այս բոլոր
 բաներուն վրայ՝ հազէք սէրը, որ կատարելութեան
 կապն է: 15 Ձեր սիրտերուն մէջ թող հովանաւորէ
 Աստուծոյ խաղաղութիւնը, որուն ալ կանչուեցաք՝
 մէկ մարմինով, ու շնորհակալ եղէք: 16 Քրիստոսի
 խօսքը ճոխութեամբ թող բնակի ձեր մէջ, որպէսզի
 ամբողջ իմաստութեամբ սորվեցնէք իրարու եւ
 խրատէք զիրար՝ սաղմոսներով, օրհներգերով ու
 հոգեւոր երգերով, շնորհակալութեամբ երգելով
 Աստուծոյ՝ ձեր սիրտերուն մէջ: 17 Եւ ամէն
 ինչ որ կ'ընէք, թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով, ըրէք
 Տէր Յիսուսի անունով, շնորհակալ ըլլալով
 Աստուծոյն ու Հօրմէն՝ անոր միջոցով: 18 Կիներ,
 հպատակեցէք ձեր ամուսիններուն, ինչպէս կը
 պատշաճի Տէրոջմով: 19 Ամուսիններ, սիրեցէք
 ձեր կիները եւ մի՛ դառնանաք անոնց դէմ: 20
 Չաւակներ, հնազանդեցէք ձեր ծնողներուն ամէն
 բանի մէջ, որովհետեւ այդ է Տէրոջ հաճելին: 21

Յայրեր, մի գրգռեք ձեր զաւակները, որպէսզի չվհատին: **22** Ստրուկներ, հնազանդեցէ՛ք ձեր մարմնաւոր տէրերուն ամէն բանի մէջ. ոչ թէ աչքի առջեւ ծառայելով՝ մարդահաճո՞նքնու պէս, հապա՝ պարզամտութեամբ, Տէրոջմէն վախնալով: **23** Ի՛նչ որ կ'ընէք՝ սրտանց ըրէք, որպէս թէ Տէրոջ եւ ոչ թէ մարդոց, **24** գիտնալով թէ Տէրոջմէն պիտի ստանաք ժառանգութեան հատուցումը, որովհետեւ Տէր Քրիստոսի կը ծառայէք: **25** Բայց անիրաւը պիտի ստանայ իր անիրաւութեան պատիժը, եւ աչառութիւն չկայ:

4 Տէրեր, հատուցանեցէ՛ք ձեր ստրուկներուն՝ իրաւունքով ու հաւասարութեամբ, գիտնալով թէ դո՛ւք ալ ունիք Տէր մը՝ երկինքը: **2** Յարատեւեցէ՛ք աղօթքի մէջ, եւ արթո՛ւն կեցէք անոր մէջ՝ շնորհակալութեամբ: **3** Միաժամանակ աղօթեցէ՛ք նաեւ մեզի համար, որ Աստուած խօսքի դուռ մը բանայ մեզի՝ խօսելու Քրիստոսի խորհուրդին մասին, որուն համար կապուած ալ եմ, **4** որպէսզի յայտնաբերեմ զայն այնպէս՝ ինչպէս պէտք է խօսիմ: **5** Իմաստութեամբ վարուեցէ՛ք դուրսիներուն հետ՝ գնելով ժամանակը: **6** Ձեր խօսքը ամէն ատեն շնորհքով թող ըլլայ, աղով համեմուած, որ գիտնաք թէ ինչպէս պէտք է պատասխանէք իւրաքանչիւրին: **7** Իմ մասիս ամէն ինչ պիտի գիտցնէ ձեզի Տիւբիկոս՝ սիրելի եղբայրը, հաւատարիմ սպասարկուն եւ ծառայակիցը Տէրոջմով: **8** Չինք սս նպատակով դրկեցի ձեզի, որպէսզի գիտնայ ձեր մասին՝ ու մխիթարէ

ձեր սիրտերը, **9** Ոնեսիմոս հաւատարիմ եւ սիրելի եղբօր հետ՝ որ ձեզմէ է. իրենք պիտի զիտցնեն ձեզի ամէն ինչ որ կայ հոս: **10** Կը բարեւէ ձեզ Արիստարքոս՝ գերութեան ընկերս. նաեւ Մարկոս՝ Բառնաբասի եղբօրորդին, (որուն մասին պատուէրներ ստացաք. ընդունեցէք զինք՝ եթէ գայ ձեզի,) **11** եւ Յիսուս՝ որ Յուստոս կը կոչուի, որոնք թլփատութենէն են: Միայն ասոնք գործակցեցան ինծի՝ Աստուծոյ թագաւորութեան մէջ, եւ միսիթարութիւն եղան ինծի: **12** Կը բարեւէ ձեզ Եպափրաս՝ Բրիստոսի ծառան, որ ձեզմէ է. ամէն ատեն աղօթքի մէջ կը պայքարի ձեզի համար, որպէսզի դուք կատարեալ ու լման կենաք՝ Աստուծոյ ամբողջ կամքին մէջ: **13** Անոր համար կը վկայեմ թէ շատ նախանձախնդրութիւն ունի՝ ձեզի, ինչպէս նաեւ Լաւոդիկէի ու Յերապոլիսի մէջ եղողներուն համար: **14** Կը բարեւեն ձեզ Ղուկաս՝ սիրելի բժիշկը, եւ Դեմաս: **15** Բարեւեցէք եղբայրները՝ որ Լաւոդիկէ են, ու Նիմփիաս եւ անոր տան մէջ եղող եկեղեցին: **16** Երբ այս նամակը կարդացուի ձեր մէջ, կարդա՛լ տուէք նաեւ Լաւոդիկէցիներու եկեղեցիին մէջ: Դուք ալ կարդացէք Լաւոդիկէէն եկած նամակը, **17** եւ ըսէք Արքիպպոսի. «Չգուշացիր քու սպասարկութեանդ համար՝ որ ստացար Տէրոջմով, որպէսզի գործադրես զայն»: **18** Ես՝ Պօղոս, իմ ձեռքովս կը գրեմ այս բարեւը: Յիշեցէք կապերս: Շնորհքը ձեզի հետ: Ամէն:

ԱՌԱՋԻՆ ԹԵՍԱԴՈՆԻԿԵՑԻՍ

1 Պօղոս, Սիդուանոս եւ Տիմոթէոս, Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին՝ Յայր Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստոսով. **2** շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ: Ամէն ատեն շնորհակալ կ'ըլլանք Աստուծմէ՝ ձեր բոլորին համար, յիշելով ձեզ մեր աղօթքներուն մէջ, **3** անդադար յիշելով ձեր հաւատքին գործը, սիրոյ աշխատանքը, եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի յոյսին համբերութիւնը՝ Աստուծոյ ու մեր Հօր առջեւ, **4** գիտնալով՝ սիրելի եղբայրներ՝ թէ Աստուած ընտրեց ձեզ: **5** Որովհետեւ մեր աւետարանը քարոզուեցաւ ձեզի ոչ միայն խօսքով, այլ նաեւ զօրութեամբ, Սուրբ Հոգիով ու լման վստահութեամբ: Դո՛ւք ալ գիտէք թէ ինչպէս կեցանք ձեր մէջ՝ ձեզի համար, **6** եւ դուք նմանեցաք մեզի ու Տէրոջ, ընդունելով խօսքը շատ տառապանքի մէջ՝ Սուրբ Հոգիին ուրախութեամբ: **7** Հետեւաբար դուք տիպար եղաք բոլոր հաւատացեալներուն՝ որ Մակեդոնիայի եւ Աթալիայի մէջ են, **8** որովհետեւ ոչ միայն Մակեդոնիայի եւ Աթալիայի մէջ հռչակուեցաւ Տէրոջ խօսքը ձեզմէ, այլ նաեւ ամէն տեղ տարածուեցաւ Աստուծոյ վրայ ձեր ունեցած հաւատքը, այնպէս որ պէտք չունինք որեւէ բան խօսելու. **9** քանի որ իրենք իրենցմէ կը պատմեն մեր մասին, թէ ինչպիսի մօլոք ունեցանք ձեր մէջ, եւ ինչպէս դուք կուռքերէն դարձաք Աստուծոյ՝ ապրող ու ճշմարիտ Աստուծոյ ծառայելու համար,

10 եւ երկինքէն սպասելու անոր Որդիին՝ որ ինք մեռելներէն յարուցանեց, այսինքն Յիսուսի, որ կ'ազատէ մեզ գալիք բարկութենէն:

2 Եղբայրներ, դուք ձեզմէ գիտէք թէ մեր մուտքը ընդունայն չեղաւ ձեր մէջ. 2 հապա՝ նախապէս Փիլիպպէի մէջ չարչարուելէ եւ նախատուելէ ետք, ինչպէս գիտէք, Աստուծոյ համարձակեցանք քարոզել ձեզի Աստուծոյ աւետարանը՝ շատ պայքարելով: 3 Որովհետեւ մեր յորդորը ոչ մոլորութենէ էր, ոչ անմաքրութենէ, ոչ ալ նենգութեամբ. 4 այլ կը խօսինք այնպէս՝ ինչպէս մենք զատորոշուեցանք Աստուծմէ, որպէսզի աւետարանը վստահուի մեզի, ոչ թէ մարդիկ հաճեցնելու համար, հապա Աստուած՝ որ կը քննէ մեր սիրտերը: 5 Զանի որ մենք բնաւ չգործածեցինք շողոքորթութեան խօսքեր, - ինչպէս գիտէք, - ոչ ալ ազահութեան պատրուակ մը, - Աստուած վկայ է.- 6 եւ փառք չփնտռեցինք մարդոցմէ, - ոչ ձեզմէ, ոչ ալ ուրիշներէն: - 7 Թէեւ կրնայինք՝ իբր Զրիստոսի առաքեալներ՝ ծանրութիւն ըլլալ ձեզի, մենք հեզահամբոյր եղանք ձեր մէջ: 8 Ինչպէս դայեակ մը կը փայփայէ իր զաւակները, նոյնպէս մենք՝ գորովագութ ըլլալով ձեզի հանդէպ՝ կը յօժարէինք տալ ձեզի ոչ միայն Աստուծոյ աւետարանը, հապա մեր անձերն ալ, որովհետեւ դուք սիրելի եղաք մեզի: 9 Կը յիշէք, եղբայրներ, մեր աշխատանքն ու տաժանքը. գիշեր ու ցերեկ գործելով քարոզեցինք ձեզի Աստուծոյ աւետարանը, չծանրաբեռնելու համար ձեզմէ ոեւէ

մէկը: **10** Դուք վկայ էք, եւ Աստուած ալ, թէ ինչպէս սրբութեամբ, արդարութեամբ ու անմեղադրելի կերպով վարուեցանք ձեզի հետ՝ որ կը հաւատաք: **11** Նոյնպէս գիտէք թէ ձեզմէ իւրաքանչիւրը՝ ինչպէս հայր մը իր զաւակները՝ **12** յորդորեցինք եւ սփռփեցինք, ու վկայեցինք որպէսզի ձեր ընթացքը արժանավայել ըլլայ Աստուծոյ՝ որ կանչեց ձեզ իր թագաւորութեան եւ փառքին: **13** Հետեւաբար մենք ալ անդադար շնորհակալ կ'ըլլանք Աստուծմէ, որովհետեւ երբ ընդունեցիք Աստուծոյ խօսքը՝ որ մեզմէ լսեցիք, ընդունեցիք զայն ոչ թէ իբր մարդոց խօսք, հապա - ինչ որ ան ճշմարտապէս է - որպէս Աստուծոյ խօսք. եւ ան կը ներգործէ նաեւ ձեր մէջ՝ որ կը հաւատաք: **14** Արդարեւ դուք, եղբայրներ, նմանեցաք Աստուծոյ եկեղեցիներուն՝ որ Հրեաստանի մէջ են Քրիստոս Յիսուսով, որովհետեւ դուք ալ կրեցիք նոյն չարչարանքները ձեր տոհմակիցներէն, ինչպէս անոնք՝ Հրեաներէն, **15** որ սպաննեցին թէ՛ Տէր Յիսուսը, թէ՛ ալ մարգարէները, ու հալածեցին մեզ: Աստուծոյ անհաճոյ եւ բոլոր մարդոց հակառակ են, **16** ու կ'արգիլեն մեզ խօսիլ հեթանոսներուն՝ անոնց փրկութեան մասին, որպէսզի լեցնեն իրենց մեղքերուն չափը՝ ամէն ատեն. բայց բարկութիւնը հասած է անոնց վրայ՝ մինչեւ վախճանը: **17** Իսկ մենք, եղբայրներ, քիչ մը ատեն ձեզմէ որբ մնացած ըլլալով, - երեսով եւ ոչ թէ սիրտով, - ալ աւելի փութացինք տեսնել ձեր երեսը՝ մեծ ցանկութեամբ: **18** Ուստի ուզեցինք գալ ձեզի - եւ

ինքս՝ Պօղոս՝ մեկ-երկու անգամ -, բայց Սատանան արգիլեց մեզ: **19** Քանի որ ինչ է մեր յոյսը, կամ ուրախութիւնը, կամ մեր պարծանքին պսակը: Միթէ դո՛ւք չէ՞ք, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի առջեւ, անոր գալուստին ատենը. **20** որովհետեւ դո՛ւք էք մեր փառքը եւ ուրախութիւնը:

3 Ուստի, չկարենալով ալ աւելի դիմանալ, յօժարեցանք առանձին մնալ Աթէնք, **2** եւ դրկեցինք Տիմոթէոսը - մեր եղբայրը, Աստուծոյ սպասարկուն ու մեր գործակիցը Քրիստոսի աւետարանին մէջ - , ամրացնելու ձեզ եւ յորդորելու ձեր հաւատքին մէջ. **3** որպէսզի այս տառապանքներուն մէջ ձեզմէ ո՛չ մէկը խախտի, որովհետեւ դո՛ւք ձեզմէ գիտէք թէ մենք սահմանուած ենք ատոնց համար: **4** Քանի որ երբ մենք ձեր քով էինք, կանխաւ կ'ըսէինք ձեզի թէ տառապանքներ պիտի կրենք, ինչպէս եղաւ ալ ու դո՛ւք գիտէք: **5** Հետեւաբար ես ալ, չկարենալով աւելի դիմանալ, մարդ դրկեցի՝ գիտնալու ձեր հաւատքը, թէ արդեօք Փորձիչը փորձած է ձեզ, ու մեր աշխատանքը ընդունայն եղած է: **6** Բայց հիմա Տիմոթէոս ձեզմէ եկաւ մեզի եւ ձեր հաւատքին ու սիրոյն աւետիսը տուաւ մեզի, եւ ըսաւ թէ ամէն ատեն լաւ յիշատակ ունիք մեզմէ՝ տենչալով տեսնել մեզ, ինչպէս մենք ալ՝ ձեզ: **7** Հետեւաբար, եղբայրներ, ձեր մասին մխիթարուեցանք մեր բոլոր տառապանքներուն ու հարկադրանքներուն մէջ՝ ձեր հաւատքով. **8** որովհետեւ հիմա մենք կ'ապրինք՝ եթէ դո՛ւք հաստատուն կենաք Տէրոջմով: **9** Քանի որ ինչպէս

կրնանք շնորհակալ ըլլալ Աստուծոյ՝ ձեզի համար, այն ամբողջ ուրախութեան համար՝ որ ձեր պատճառով կ'ուրախացնէ մեզ մեր Աստուծոյն առջեւ. 10 զիշեր ու ցերեկ չափազանց կ'աղերսենք, որպէսզի տեսնենք ձեր երեսը եւ լրացնենք ինչ որ կը պակսի ձեր հաւատքին: 11 Նոյնիւնքն Աստուած՝ մեր Հայրը, ու մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, թող ուղղեն մեր ճամբան դէպի ձեզ: 12 Տէրը թող աճեցնէ եւ առատացնէ ձեր սէրը իրարու հանդէպ ու բոլորին հանդէպ, ինչպէս մենք ունինք ձեզի հանդէպ, 13 որպէսզի ամրացնէ ձեր սիրտերը՝ սրբութեան մէջ անմեղադրելի ըլլալու Աստուծոյ եւ մեր Հօր առջեւ, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի գալուստին ատենը՝ իր բոլոր սուրբերուն հետ:

4 Ուրեմն, եղբայրներ, կը թախանձենք ձեզի ու կը յորդորենք ձեզ Տէր Յիսուսով, որպէսզի՝ ինչպէս ընդունեցիք մեզմէ թէ ինչպէս պետք է ընթանաք եւ հաճեցնէք Աստուած՝ ալ աւելի ճոխանաք անոր մէջ, 2 քանի որ գիտէք թէ ինչ պատուէրներ տուինք ձեզի՝ Տէր Յիսուսով: 3 Որովհետեւ Աստուծոյ կամքը՝ ձեր սրբացումն է, որ ետ կենաք պոռնկութենէ, 4 ու ձեզմէ իւրաքանչիւրը զիտնայ իր անօթին տիրանալ սրբութեամբ եւ պատիւով. 5 ոչ թէ ցանկութեան կիրքով, ինչպէս հեթանոսները՝ որ չեն ճանչնար Աստուած: 6 Ո՛չ մէկը թող չափազանցէ այդ բանին՝ մէջ ու կեղեքէ իր եղբայրը, քանի որ Տէրը վրէժխնդիր է այդ բոլորին համար, ինչպէս մենք ալ նախապէս ըսինք ձեզի եւ վկայեցինք. 7 որովհետեւ Աստուած կանչեց

մեզ ոչ թե անմաքրութեան, հապա՝ սրբութեան: 8 Ուստի ան որ կ'անարգէ՝ կ'անարգէ ոչ թե մարդ մը, հապա Աստուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ տուաւ մեզի: 9 Իսկ եղբայրսիրութեան մասին պէտք չունիք որ գրեմ ձեզի, որովհետեւ դուք արդէն Աստուծմէ ստրված էք սիրել զիրար, 10 եւ արդարեւ ատիկա կ'ընէք ամբողջ Մակեդոնիայի մէջ եղող բոլոր եղբայրներուն հանդէպ: Սակայն կ'աղաչենք ձեզի, եղբայրներ, որ ալ աւելի ճոխանաք, 11 ու պատիւ համարէք հանդարտ կենալ, ձեր գործերով զբաղիլ եւ ձեր ձեռքերով աշխատիլ, (ինչպէս պատուիրեցինք ձեզի,) 12 որպէսզի դուրսիններուն հետ վարուիք վայելչութեամբ ու ոչ մէկ բանի՝ պէտք ունենաք: 13 Եղբայրներ, չենք ուզեր որ անգէտ ըլլաք ննջեցեալներուն մասին, որպէսզի չտրտմիք ինչպէս ուրիշները՝ որ յոյս չունին: 14 Արդարեւ եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ եւ յարութիւն առաւ, նոյնպէս ալ հաւատանք թէ Աստուած պիտի բերէ Յիսուսով ննջողները՝ անոր հետ: 15 Որովհետեւ սա՛ կը յայտարարենք ձեզի՝ Տէրոջ խօսքով, թէ մենք՝ մինչեւ Տէրոջ գալուստը ողջ մնացողներս՝ բնաւ պիտի չկանխենք ննջեցեալները: 16 Քանի որ նոյնինքն Տէրը պիտի իջնէ երկինքէն՝ ազդարարութեան հրամանով, հրեշտակապետին ձայնով եւ Աստուծոյ փողով, ու նախ Քրիստոսով մեռածները յարութիւն պիտի առնեն: 17 Ապա մենք, ողջ մնացողներս, անոնց հետ պիտի յափշտակուինք ամպերով՝ Տէրը դիմաւորելու

օղին մէջ, եւ այդպէս Տէրոջ հետ պիտի ըլլանք յաւիտեան: **18** Հետեւաբար միսիթարեցէք զիրար այս խօսքերով:

5 Բայց, եղբայրներ, պետք չունիք որ գրեմ ձեզի այդ ժամանակներուն եւ ատեններուն մասին, **2** քանի որ դուք իսկ ճշգրտութեամբ գիտէք թէ Տէրոջ օրը կու գայ զիշերուան գողին պէս: **3** Երբ մարդիկ ըսեն թէ “խաղաղութիւն եւ ապահովութիւն է”, այն ատեն աւերումը անակնկալօրէն պիտի հասնի անոնց վրայ՝ յղիին երկունքին պէս, ու զերծ պիտի չմնան: **4** Բայց դժբաղդ, եղբայրներ, խաւարի մէջ չէք, որ այդ օրը գողի մը պէս հասնի ձեր վրայ. **5** որովհետեւ դուք բոլորդ լոյսի որդիներ էք, եւ ցերեկուան որդիներ. **6** զիշերուան որդիներ չենք, ո՛չ ալ խաւարի: Ուրեմն չքնանանք ուրիշներու նման, հապա ըլլանք արթուն ու զգաստ. **7** քանի որ անոնք որ կը քնանան՝ զիշերը կը քնանան, եւ անոնք որ կ'արբենան՝ զիշերը կ'արբենան: **8** Իսկ մենք՝ որ ցերեկուան որդիներն ենք, զգաստ ըլլանք՝ հագնելով հաւատքի ու սիրոյ զրահը, եւ իբր սաղաւարտ՝ փրկութեան յոյսը: **9** Որովհետեւ Աստուած որոշեց մեզ ո՛չ թէ բարկութեան համար, հապա՝ փրկութեան տիրանալու մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով: **10** Ան մեռաւ մեզի համար, որպէսզի մենք ապրինք իրեն հետ, արթուն ըլլանք թէ քնացած: **11** Ուստի յորդորեցէք զիրար եւ շինեցէք զիրար, ինչպէս արդէն կ'ընէք: **12** Կը թախանձենք ձեզի, եղբայրներ, որ ճանչնաք ձեր մէջ աշխատողները, Տէրոջմով վերակացուններն

ու ձեզ խրատողները: **13** Պատուեցէք զանոնք
 մեծ սիրով՝ իրենց գործին համար: Խաղաղութիւն
 ունեցէք իրարու հետ: **14** Կը յորդորենք ձեզ,
 եղբայրներ, խրատեցէք անկարգները, սփոփեցէք
 թուլասիրտները, ձեռնտու եղէք տկարներուն,
 համբերատար եղէք բոլորին հանդէպ: **15**
 Չգուշացէք, ոչ մէկը չարիքի փոխարէն չարիք
 հատուցանէ ոեւէ մէկուն. հապա՛ւ՝ ամէն ատեն
 հետամուտ եղէք բարիին, թէ՛ ձեր միջեւ, թէ՛
 բոլորին հանդէպ: **16** Ամէն ատեն ուրախ եղէք:
17 Անդադար աղօթեցէք: **18** Ամէն բանի մէջ
 շնորհակալ եղէք, որովհետեւ այս է Աստուծոյ
 կամքը ձեզի հանդէպ՝ Քրիստոս Յիսուսով: **19**
 Մի մարեք Սուրբ Հոգին: **20** Մի անարգէք
 մարգարեութիւնները: **21** Քննեցէք ամէն բան,
 բարին ամուր բռնեցէք: **22** Եւ կեցէք ամէն
 տեսակ չարութենէ: **23** Նոյնինքն խաղաղութեան
 Աստուածը ամբողջովին սրբացնէ ձեզ, եւ ձեր
 հոգին, անձն ու մարմինը ամբողջութեամբ
 անմեղադրելի պահուին մինչեւ մեր Տէրոջ՝ Յիսուս
 Քրիստոսի գալուստը: **24** Ա՛ն որ կանչեց ձեզ՝
 հաւատարիմ է. նաեւ ինք պիտի կատարէ ատիկա:
25 Եղբայրներ, աղօթեցէք մեզի համար: **26**
 Բարեւեցէք բոլոր եղբայրները սուրբ համբոյրով:
27 Կը պարտադրեմ՝ ձեզ Տէրոջմով, որ կարդաք
 այս նամակը բոլոր սուրբ եղբայրներուն: **28** Մեր
 Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզի հետ:
 Ամէն:

ԵՐԿՐՈՐԴ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

1 Պօղոս, Սիդուանոս ու Տիմոթեոս, Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին՝ մեր Յայր Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստոսով: **2** շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Յօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ: **3** Պարտական ենք ամէն ատեն Աստուծմէ շնորհակալ ըլլալ ձեզի համար, եղբայրներ, ինչպէս որ արժանավայել է. քանի որ ձեր հաւատքը շատ կ'աճի, եւ ձեզմէ իւրաքանչիւրին սերը կ'աւելնայ իրարու հանդէպ: **4** Ուստի մենք ալ կը պարծենանք ձեզմով Աստուծոյ եկեղեցիներուն մէջ, ձեր համբերութեան ու հաւատքին համար՝ ձեր բոլոր հաւածանքներուն եւ տառապանքներուն մէջ, որոնց կը հանդուրժէք: **5** Ասիկա Աստուծոյ արդար դատաստանին ապացոյցն է՝ որպէսզի դուք արժանանաք Աստուծոյ թագաւորութեան, որուն համար կը չարչարուիք ալ: **6** Քանի որ Աստուծոյ քով արդարութիւն է տառապանք հատուցանել ձեզ տառապեցնողներուն, **7** իսկ ձեզի՝ տառապանք կրողներուդ՝ անդորրութիւն մեզի հետ, երբ Տէր Յիսուս յայտնուի երկինքէն՝ իր հզօր հրեշտակներով, **8** բոցավառ կրակով վրէժ առնելու անոնցմէ՝ որ չեն ճանչնար Աստուած, ու չեն հնազանդիր մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի աւետարանին: **9** Անոնք պիտի պատժուին յաւիտենական աւերումով՝ վտարուելով Տէրոջ ներկայութենէն եւ անոր ոյժին փառքէն, (aiōnios g166) **10** երբ ինք գայ փառաւորուելու իր սուրբերուն

մէջ, ու այդ օրը սքանչացումի առարկայ ըլլալու բոլոր հաւատացեալներուն մէջ (որովհետեւ դուք հաւատացիք ձեր մէջ տրուած մեր վկայութեան):
11 Հետեւաբար ամէն ատեն կ'աղօթենք ձեզի համար, որ մեր Աստուածը արժանացնէ ձեզ ձեր կոչումին, եւ զօրութեամբ իրագործէ իր բարութեան ամբողջ բարեհաճութիւնն ու հաւատքին գործը. **12** որպէսզի մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի անունը փառաւորուի ձեր մէջ, եւ դուք ալ անոր մէջ, մեր Աստուծոյն ու Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքին համաձայն:

2 Կը թախանձենք ձեզի, եղբայրներ, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի գալուստին եւ անոր քով մեր հաւաքուելուն մասին, **2** որ շուտով չսարսիք ձեր միտքին մէջ, ու չվրդովիք՝ ո՛չ հոգիով, ո՛չ խօսքով, ո՛չ ալ նամակով մը՝ իբր թէ մեզմէ զրուած, որպէս թէ Քրիստոսի օրը եկած հասած ըլլայ: **3** Ո՛չ մէկը թող խաբէ ձեզ որեւէ կերպով. որովհետեւ այդ օրը պիտի չգայ՝ եթէ նախ չգայ ուխտադրժումը ու չյայտնուի մեղքի մարդը, կորուստի որդին, **4** որ պիտի հակառակի եւ պանծացնէ ինքզինք ամէն բանէ վեր՝ որ Աստուած կը կոչուի կամ կը պաշտուի. մինչեւ անգամ պիտի բազմի Աստուծոյ տաճարին մէջ՝ ներկայացնելով ինքզինք իբր Աստուած: **5** Չէք յիշեր թէ երբ տակաւին ձեր քով էի, կ'ըսէի ձեզի այս բաները: **6** Եւ հիմա դուք ձեզմէ գիտէք թէ ինչը կը զսպէ՝ որ ինք յայտնուի իր ատենին: **7** Որովհետեւ անօրէնութեան խորհուրդը արդէն կը ներգործէ.

բայց ան որ հիմա կը զսպէ, պիտի զսպէ՝ մինչեւ որ ինք վերցուի մէջտեղէն: **8** Այն ատեն պիտի յայտնուի այդ անօրէնը, որ Տէր (Յիսուս) պիտի սպառէ իր բերանին շունչով եւ պիտի ոչնչացնէ իր գալուստին փայլով: **9** Անօրէնը պիտի գայ Սատանային ներգործութեամբ՝ ամէն տեսակ հրաշքներով, նշաններով ու սուտ սքանչելիքներով, **10** եւ անիրաւութեան ամբողջ խաբէութեամբ, անոնց համար՝ որ կը կորսուին, քանի որ անոնք չընդունեցին ճշմարտութեան սէրը՝ որպէսզի փրկուին: **11** Այս պատճառով Աստուած ալ պիտի դրկէ անոնց ազդեցիկ մոլորութիւն մը՝ որ հաւատան ստութեան, **12** որպէսզի դատապարտուին բոլոր անոնք՝ որ չհաւատացին ճշմարտութեան, հապայօժարեցան անիրաւութեան: **13** Բայց մենք պարտական ենք ամէն ատեն շնորհակալ ըլլալ Աստուծոյ՝ ձեզի համար, Տէրոջմէն սիրուած եղբայրներ, քանի որ Աստուած սկիզբէն ընտրեց ձեզ փրկութեան համար՝ Հոգիին սրբացումով եւ ճշմարտութեան հաւատքով, **14** որուն կանչեց ձեզ մեր աւետարանով, որպէսզի տիրանաք մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի փառքին: **15** Ուրեմն, եղբայրներ, հաստատուն կեցէք, ու պահեցէք այն աւանդութիւնները՝ որ սորվեցաք կան խօսքով, կան մեր նամակով: **16** Եւ մեր Տէրը՝ նոյնինքն Յիսուս Քրիստոս, ու մեր Հայրը՝ Աստուած, որ սիրեց մեզ եւ տուաւ մեզի յաւիտենական միսիթարութիւն ու բարի յոյս՝ շնորհքով, (aiōnios g166)

17 թող մխիթարեն ձեր սիրտերը եւ ամրացնեն ձեզ ամեն բարի խօսքի ու գործի մէջ:

3 Վերջապէս, եղբայրներ, աղօթեցէ՛ք մեզի համար, որպէսզի Տէրոջ խօսքը արագ ընթանայ ու փառաւորուի ամեն տեղ՝ ինչպէս ձեր մէջ, 2 եւ մենք ազատինք վատ ու չար մարդոցմէ. որովհետեւ բոլորը հաւատք չունին: **3** Բայց Տէրը հաւատարիմ է. ան պիտի ամրացնէ ձեզ եւ պահէ Չարէն: **4** Ու մենք համոզոււմ ունինք ձեր վրայ Տէրոջմով, թէ ինչ որ պատուիրեցինք ձեզի՝ կ'ընէք եւ պիտի ընէք ալ: **5** Տէրը թող ուղղէ ձեր սիրտերը դէպի Աստուծոյ սէրն ու Քրիստոսի համբերութիւնը: **6** Կը պատուիրենք ձեզի, եղբայրներ, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի անունով, որ զգուշանաք ամեն եղբօրմէ՝ որ կ'ընթանայ անկարգութեամբ, եւ ո՛չ թէ այն աւանդութեան համաձայն՝ որ ընդունեցիք մեզմէ: **7** Որովհետեւ դուք ձեզմէ զիտէք թէ ինչպէս պէտք է նմանիք մեզի. քանի որ մենք անկարգութեամբ չընթացանք ձեր մէջ, **8** ո՛չ ալ ձրի կերանք մէկուն հացը, այլ զիշեր ու ցերեկ կը գործէինք՝ աշխատանքով եւ տաժանքով, ձեզմէ ո՛չ մէկը ծանրաբեռնելու համար: **9** Ո՛չ թէ իրաւունք չունէինք, հապա մենք մեզ տիպար դարձուցինք ձեզի՝ որպէսզի նմանիք մեզի: **10** Որովհետեւ երբ ձեր քով էինք, սա՛ կը պատուիրէինք ձեզի, թէ “ան որ չ'ուզեր գործել, հանց ալ թող չուտէ”: **11** Արդարեւ կը լսենք թէ ձեր մէջէն ոմանք կ'ընթանան անկարգութեամբ, բնա՛ւ չեն գործեր, հապա հետաքրքրամով կ'ըլլան: **12**

Այդպիսիներուն կը պատուիրենք ու կը յորդորենք
մեր Տէրոջմով՝ Յիսուս Քրիստոսով, որ գործեն
հանդարտութեամբ եւ ուտեն իրենց հացը: **13** Իսկ
դժբ, եղբայրներ, մի ձանձրանաք բարիք գործելէ:
14 Եթէ ոեւէ մէկը չհնազանդի այս նամակին մէջ
մեր ըսած խօսքին, նշանակեցէք զայն ու մի
յարաբերիք անոր հետ, որպէսզի ամչնայ: **15** Բայց
թշնամի մի համարէք զինք, հապա խրատեցէք
իբր եղբայր: **16** Նոյնինքն խաղաղութեան Տէրը
խաղաղութիւն տայ ձեզի, ամէն ատեն եւ ամէն
կերպով. Տէրը ձեր բոլորին հետ: **17** Ես՝ Պօղոս, իմ
ձեռքովս կը գրեմ այս բարեւը, որ ամէն նամակի
մէջ իմ նշանս է. ես այսպէս կը գրեմ: **18** Մեր Տէրոջ՝
Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ:
Ամէն:

ԱՌԱՋԻՆ ՏԻՄՈԹԵՈՍ

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ մեր Փրկիչ Աստուծոյ եւ մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսի՝ հրամանով, **2** Տիմոթէոսի՝ հաւատքով հարազատ զաւակիս. շնորհք, ողորմութիւն ու խաղաղութիւն Աստուծմէ՝ մեր Զօրմէն, եւ Քրիստոս Յիսուսէ՝ մեր Տէրոջմէն: **3** Զեզի աղաչեցի որ Եփեսոս մնաս, երբ ես Մակեդոնիա կ'երթայի, որպէսզի պատուիրես ոմանց՝ ուրիշ կերպով չսորվեցնել, **4** ոչ ալ ուշադրութիւն դարձնել առասպելներու եւ անվերջանալի ազգաբանութիւններու, որոնք կը պատճառեն վեճեր՝ փոխանակ Աստուծոյ հաճելի շինութեան, որ կ'ըլլայ հաւատքով: **5** Իսկ պատուէրին վախճանը սերն է՝ բխած սուրբ սիրտէ, բարի խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէ: **6** Ասոնցմէ վրիպելով՝ ոմանք խոտորեցան փուճ խօսքերու մէջ. **7** կ'ուզեն Օրէնքի վարդապետ ըլլալ, բայց չեն հասկնար ոչ ինչ որ կը խօսին, ոչ ալ այն բաները՝ որոնց վրայ կը պնդեն: **8** Սակայն գիտենք թէ Օրէնքը լաւ է, եթէ մէկը գործածէ զայն օրինաւոր կերպով, **9** սա՛ գիտնալով թէ Օրէնքը տրուած է ոչ թէ արդարներուն համար, հապա՛ անօրէններուն եւ ըմբոստներուն, ամբարիշտներուն ու մեղաւորներուն, անսուրբերուն եւ սրբապիղծներուն, հայր զարնողներուն, մայր զարնողներուն, մարդասպաններուն, **10** պոռնկողներուն, արուագէտներուն, մարդ գողցողներուն, ստախօսներուն, երդմնազանցներուն, եւ

ուրիշ որեւէ բանի համար՝ որ հակառակ է ողջամիտ վարդապետութեան, **11** համաձայն երանելի Աստուծոյ փառաւոր աւետարանին՝ որ վստահուեցաւ ինծի: **12** Շնորհապարտ եմ զիս զօրացնող Քրիստոս Յիսուսի՝ մեր Տէրոջ, բանի որ հաւատարիմ համարեց զիս ու դրաւ այս սպասարկութեան մէջ: **13** Նախապէս հայիոյիչ էի, հալածող եւ նախատող. բայց ողորմութիւն գտայ, որովհետեւ անգիտանալով ըրի՝ անհաւատութեան մէջ. **14** եւ մեր Տէրոջ շնորհքը յորդեցաւ ինծի հանդէպ՝ հաւատքով ու սիրով, որ Քրիստոս Յիսուսով է: **15** Սա վստահելի եւ բոլորովին ընդունուելու արժանի խօսք մըն է, թէ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ՝ փրկելու մեղաւորները, որոնց գլխաւորը ես եմ: **16** Բայց ողորմութիւն գտայ սա պատճառով, որ Յիսուս Քրիստոս նախ իմ վրաս ցոյց տայ իր համբերատարութիւնը, տիպար ըլլալու անոնց որ պիտի հաւատային իրեն՝ յաւիտենական կեանքի համար: (aiōnios g166) **17** Ուրեմն յաւիտենական Թագաւորին՝ որ անեղծ եւ անտեսանելի է, միակ Աստուծոյն՝ պատիւ ու փառք դարձ դարձ: Ամէն: (aiōn g165) **18** Սա պատուէրը կ'աւանդեմ քեզի, որդեակս Տիմոթէոս, քեզի համար նախապէս եղած մարգարէութիւններուն համաձայն, որ անոնցմով մարտնչիս բարի մարտը, **19** պահելով հաւատքն ու բարի խղճմտանքը, որ ոմանք վանեցին իրենցմէ եւ հաւատքի վերաբերեալ նաւակոծութիւն կրեցին: **20** Ասոնցմէ են Հիմենոս

եւ Աղեքսանդրոս, որ մատնեցի Սատանային՝
որպէսզի վարժուին չհայհոյել:

2 Ուրեմն կը յորդորեմ որ ամէն բանէ
առաջ աղերսանք, աղօթք, պաղատանք
ու շնորհակալութիւն մատուցանէք բոլոր
մարդոց համար, **2** մանաւանդ թագաւորներուն
եւ իշխանաւորներուն համար, որպէսզի
խաղաղ ու հանդարտ կեանք վարենք՝ ամբողջ
բարեպաշտութեամբ ու պատկառանքով. **3**
որովհետեւ այդ է բարին եւ ընդունելին մեր
Փրկիչ Աստուծոյն առջեւ: **4** Ան կ'ուզէ որ բոլոր
մարդիկը փրկուին ու գան ճշմարտութեան
գիտակցութեան. **5** քանի որ մէկ Աստուած
կայ եւ մէկ միջնորդ Աստուծոյ ու մարդոց
միջեւ, Զրիստոս Յիսուս մարդը, **6** որ
ինքզինք իբր փրկանք ընծայեց բոլորին տեղը՝
յատուկ ատենին վկայութիւն ըլլալով: **7** Ես
անոր քարոզիչ եւ առաքեալ նշանակուեցայ,
(ճշմարտութիւնը կ'ըսեմ Զրիստոսով, չեմ
ստեր,) ու հեթանոսներուն վարդապետ եղայ՝
հաւատքով եւ ճշմարտութեամբ: **8** Ուրեմն կը
փափաքիմ որ այր մարդիկ ամէն տեղ աղօթեն՝
սուրբ ձեռքեր վերցնելով, առանց բարկութեան
եւ առարկութեան: **9** Նոյնպէս ալ կիները
իրենք զիրենք զարդարեն համեստ տարազով,
ամօթխածութեամբ եւ խոհեմութեամբ, ոչ թէ
հիւսուածքներով, ոսկիով, մարգարիտներով
կամ մեծածախս պատմունքներով, **10**
հապա բարի գործերով՝ ինչպէս կը պատշաճի

աստուածաշտուրթիւն դաւանող կիներուն: **11** Կինը թող սորվի՝ հանդարտ կենալով, բոլորովին ենթարկուելով: **12** Բայց կնոջ չեն արտօներ որ սորվեցնէ, ոչ ալ իշխէ այր մարդուն. հապա թող հանդարտ կենայ: **13** Որովհետեւ նախ Ադամ կերտուեցաւ, ու յետոյ՝ Եւա. **14** եւ Ադամ չխաբուեցաւ, հապա կինը խաբուելով օրինազանց եղաւ: **15** Սակայն ան պիտի փրկուի որդեծնութեամբ, եթէ խոհեմութեամբ յարատեւէ հաւատքի, սիրոյ ու սրբութեան մէջ:

3 Սա խօսքը վստահելի է. եթէ մէկը եպիսկոպոսութեան կը բաղձայ, բարի գործի կը ցանկայ: **2** Ուստի եպիսկոպոսը պէտք է ըլլայ անարատ, մէկ կնոջ ամուսին, զգաստ, խոհեմ, համեստ, հիւրասէր, սորվեցնելու ընդունակ, **3** ոչ գինեմոյ, ոչ զարնող, հապա՝ ազնիւ, ոչ կռուազան, ոչ արծաթասէր, **4** իր տան լաւ վերակացու եղող, ենթարկուած զաւակներ ունեցող՝ ամբողջ պատկառանքով. **5** (քանի որ եթէ մէկը չգիտնայ վերակացու ըլլալ իր տան, ինչպէս հոգ պիտի տանի Աստուծոյ եկեղեցիին.) **6** ոչ ալ նորահաւատ, որ հպարտանալով չիյնայ Չարախօսին սահմանուած դատապարտութեան մէջ: **7** Նաեւ պէտք է ունենայ բարի վկայութիւն դուրսիններէն ալ, որպէսզի չիյնայ նախատինքի ու Չարախօսին թակարդին մէջ: **8** Նմանապէս սարկաւազները պէտք է ըլլան պատկառելի, ոչ երկլեզու, ոչ գինեմոյ, ոչ ամօթալի շահախնդրութեան

հետամուտ եղող, **9** հապա հաւատքին խորհուրդը
 պահող՝ մաքուր խղճմտանքով: **10** Ասոնք ալ
 նախ թող փորձարկուին, ու յետոյ կատարեն
 սարկաւագութիւն՝ եթէ անմեղադրելի գտնուին:
11 Նոյնպէս ալ անոնց կիները պէտք է ըլլան
 պատկառելի, ոչ չարախօս, հապա զգաստ,
 հաւատարիմ՝ ամէն բանի մէջ: **12** Սարկաւագները
 թող ըլլան մէկ կնոջ ամուսին, եւ լաւ վերակացու
 իրենց զաւակներուն ու տան. **13** որովհետեւ
 անոնք որ լաւ կը կատարեն սարկաւագութիւնը՝
 կը տիրանան բարի աստիճանի մը, ու շատ
 համարձակութեան՝ Քրիստոս Յիսուսի վրայ
 եղած հաւատքին մէջ: **14** Կը գրեմ քեզի այս
 բաները, թէպէտ կը յուսամ շուտով զալ քեզի,
15 որպէսզի՝ եթէ յապաղիմ՝ գիտնաս թէ ինչպէս
 պէտք է վարուիս Աստուծոյ տան մէջ, որ
 ապրող Աստուծոյ եկեղեցին է, ճշմարտութեան
 սիւնն ու խարիսխը: **16** Անվիճելիօրէն մեծ
 է բարեպաշտութեան խորհուրդը. Աստուած
 երեւցաւ մարմինով, արդարացաւ Հոգիով,
 տեսնուեցաւ իրեշտակներէն, քարոզուեցաւ
 հեթանոսներուն մէջ, հաւատացուեցաւ աշխարհի
 մէջ, եւ համբարձաւ փառքով:

4 Հոգին յատկապէս կ'ըսէ թէ վերջին
 ատենները՝ ոմանք պիտի հեռանան հաւատքէն,
 ուշադրութիւն դարձնելով մոլորեցուցիչ
 ոգիներու եւ դելերու վարդապետութիւններու:
2 Կեղծաւորութեամբ սուտ պիտի խօսին,
 խանձուած խղճմտանք պիտի ունենան, **3** պիտի

արգիլեն ամուսնանալ ու ետ պիտի պահեն
կերակուրներէն, որ Աստուած ստեղծեր է
որպէսզի հաւատացեալները եւ ճշմարտութիւնը
գիտցողները շնորհակալութեամբ ընդունին. 4
որովհետեւ ամէն ինչ որ Աստուած ստեղծած է՝
բարի է, ու ոչինչ մերժուելու է՝ եթէ ընդունուի
շնորհակալութեամբ, 5 քանի որ կը սրբացուի
Աստուծոյ խօսքով եւ աղօթքով: 6 Եթէ թելադրես
այս բաները եղբայրներուն, պիտի ըլլաս Յիսուս
Քրիստոսի բարի սպասարկու մը, սնած խօսքերով
հաւատքին ու բարի վարդապետութեան՝ որուն
հետեւեցար: 7 Բայց մերժ՝ սրբապիղծ ու
պառաւական առասպելները, եւ դուն քեզ
վարժեցուր բարեպաշտութեան. 8 որովհետեւ
մարմինին վարժութիւնը օգտակար է քիչ բանի,
բայց բարեպաշտութիւնը օգտակար է ամէն
բանի, ունենալով թէ՛ ներկայ եւ թէ՛ ապագայ
կեանքին խոստումը: 9 Այս խօսքը վստահելի է ու
բոլորովին ընդունուելու արժանի: 10 Արդարեւ
մենք կ'աշխատինք եւ կը նախատուինք սա՛
նպատակով, որովհետեւ կը յուսանք ապրող
Աստուծոյ, որ Փրկիչն է բոլոր մարդոց, մանաւանդ՝
հաւատացեալներուն: 11 Պատուիրէ եւ սորվեցնուր
այս բաները: 12 Ո՛չ մէկը թող արհամարհէ
քու երիտասարդութիւնդ, հապա տիպար եղիր
հաւատացեալներուն՝ խօսքով, վարքով, սիրով,
հաւատքով ու մաքրակեցութեամբ: 13 Մինչեւ
որ գամ՝ ուշադիր եղիր կարդալու, յորդորելու,
սորվեցնելու: 14 Անհոգ մի՛ ըլլար քու մէջդ

եղած շնորհին հանդէպ, որ մարգարէութեամբ տրուեցաւ քեզի՝ երեցներուն ձեռնադրութեամբ: **15** Խոկման այդ բաներուն մասին եւ զքաղէ ատոնցմով, որպէսզի քու յառաջդիմութիւնդ երեւնայ ամենուն: **16** Ուշադիր եղիր դուն քեզի ու վարդապետութեան, եւ միշտ յարատեւէ ատոնց մէջ. քանի որ այդպէս ընելով՝ պիտի փրկես թէ քեզ, թէ քեզ լսողները:

5 Մի սաստեր տարեցը, հապա յորդորէ զայն՝ հօր մը պէս. երիտասարդները՝ եղբայրներու պէս, **2** տարեց կիները՝ մայրերու պէս, դեռահասակները՝ քոյրերու պէս, բոլորովին մաքրակեցութեամբ: **3** Պատուէ՛ այն այրիները՝ որ իրապէս այրի են: **4** Բայց եթէ այրի մը ունի զաւակներ կամ թոռներ, անոնք թող սորվին նախ իրենց տան մէջ բարեպաշտութիւն ցոյց տալ, ու փոխարէնը հատուցանել իրենց ծնողներուն. որովհետեւ այդ է բարին եւ ընդունելին Աստուծոյ առջեւ: **5** Իսկ ան որ իրապէս այրի է ու մինակ մնացած, կը յուսայ Աստուծոյ, եւ գիշեր-ցերեկ կը յարատեւէ աղերսանքի ու աղօթքի մէջ. **6** մինչդեռ փափկասէր այրին մեռած է, թէպէտ կ'ապրի: **7** Պատուիրէ՛ այս բաները, որպէսզի անարատ ըլլան: **8** Բայց եթէ մէկը չի հոգար իրենները ու մանաւանդ իր ընտանիքը, ան ուրացած է հաւատքը, եւ աւելի գէշ է՝ քան անհաւատ մը: **9** Իբր այրի թող դասուի ան՝ որ վաթսուն տարեկանէն կրտսեր չէ, մէկ մարդու կին եղած է, **10** ու բարի գործերով վկայուած. եթէ զաւակներ մեծցուցած է, հիւրեր ընդունած,

սուրբերուն ոտքերը լուացած, տառապեալներուն նպաստած, ամէն բարի գործի հետամուտ եղած: **11** Բայց մերժէ դեռահասակ այրիները. քանի որ երբ պերճանքը հեռացնէ զիրենք Քրիստոսէ, կ'ուզեն ամուսնանալ **12** եւ դատապարտութիւն կը կրեն", որովհետեւ կ'անարգեն իրենց առաջին հաւատքը: **13** Նաեւ կը սորվին դատարկապորտ ըլլալ՝ շրջելով տունէ տուն. եւ ոչ միայն դատարկապորտ, այլ նաեւ շաղակրատ ու հետաքրքրամոլ՝ խօսելով անպատեհ բաներ: **14** Ուրեմն կը փափաքիմ որ դեռահասակ կիները ամուսնանան, զաւակներ ծնանին, իրենց տունը կառավարեն", եւ հեզնելու առիթ չտան հակառակորդին, **15** քանի որ արդէն ոմանք խոտորեցան՝ երթալով Սատանայի ետեւէն: **16** Եթէ հաւատացեալ այր մարդ մը կամ կին մը ունի այրիներ, ինք թող նպաստէ անոնց, որպէսզի եկեղեցին չծանրաբեռնուի ու կարենայ նպաստել իրական այրիներուն: **17** Լաւ վերակացու եղող երեցները, մանաւանդ անոնք՝ որոնց աշխատանքն է խօսքը քարոզել եւ սորվեցնել, թող արժանանան կրկնապատիկ պատիւի, **18** որովհետեւ Գիրքը կ'ըսէ. «Մի կապեր կալի մէջ աշխատող՝ եզին դունչը»: Նաեւ. «Գործաւորը արժանի է իր վարձքին»: **19** Երեցի դէմ ամբաստանութիւն մի՛ ընդունիր, բայց միայն երկու կամ երեք վկայի առջեւ: **20** Անոնք որ կը մեղանչեն՝ կշտամբէ բոլորին առջեւ, որպէսզի միւսներն ալ վախնան: **21** Կը վկայեմ Աստուծոյ, Յիսուս Քրիստոսի եւ ընտրեալ հրեշտակներուն առջեւ, որ

պահեստ այս բաները առանց նախընտրանքի, ոչինչ ընելով կողմնակալութեամբ: 22 Աճապարելով ձեռք մի դներ ոեւէ մէկուն վրայ, եւ մի հաղորդակցիր ուրիշներուն մեղքերուն: Դուն քեզ մաքրակենցանդ պահէ: 23 Այլեւս միայն ջուր մի խմեր, հապա քիչ մըն ալ գինի գործածէ՝ ստամոքսիդ ու յաճախադէպ հիւանդութիւններուդ համար: 24 Կարգ մը մարդոց մեղքերը առաջուրնէ յայտնի են, նախքան իրենց դատաստանը. իսկ ոմանց մեղքերը յետոյ կը յայտնուին՝: 25 Նոյնպէս ալ ոմանց բարի գործերը յայտնի են. իսկ անոնք որ տարբեր են՝ չեն կրնար պահուիլ:

6 Լուծի տակ եղող բոլոր ստրուկները թող արժանի համարեն իրենց տէրերը ամեն պատիւի, որպէսզի Աստուծոյ անունն ու վարդապետութիւնը չհայհոյուին: 2 Իսկ անոնք որ հաւատացեալ տէրեր ունին՝ թող չարհամարհեն զանոնք՝ որովհետեւ եղբայրներ են. այլ մանաւանդ թող ծառայեն անոնց յօժարութեամբ, քանի բարերարութենէն օգտուողները հաւատացեալ են ու սիրելի: Սորվեց՝ որ այս բաները եւ յորդորէ: 3 Եթէ մէկը սորվեցնէ ուրիշ կերպով, ու չյարի մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի ողջամիտ խօսքերուն եւ այն վարդապետութեան՝ որ համաձայն է բարեպաշտութեան, 4 այդպիսին հպարտացած է ու ոչինչ գիտէ, հապա վարակուած է վեճերու եւ բանակռիւներու ախտէն, որոնցմէ կը յառաջանան նախանձ, կռիւ, հայհոյութիւններ, չար ենթադրութիւններ, 5 զրաքանութիւններ՝

միտքով ապականած ու ճշմարտութենէն զրկուած մարդոց, որ կը կարծեն թէ բարեպաշտութիւնը շահավաճառութիւն է. հեռացիր այդպիսիներէն: **6** Սակայն բարեպաշտութիւնը՝ ինքնաբաւութեամբ միասին՝ մեծ շահավաճառութիւն մըն է. **7** որովհետեւ ոչինչ բերինք աշխարհ, եւ բացայայտ է թէ ոչինչ կրնանք դուրս հանել անկէ. **8** ուստի կերակուր ու հագնելիք ունենալով՝ բաւարարուինք անոնցմով: **9** Բայց անոնք որ կը փափաքին հարստանալ՝ կ'իյնան փորձութեան եւ թակարդի, ու շատ անմիտ եւ վնասակար ցանկութիւններու մէջ, որոնք կ'ընկղմեն մարդիկը աւերումի կամ կորուստի մէջ. **10** որովհետեւ բոլոր չարիքներուն արմատը՝ արծաթսիրութիւնն է, որուն բաղձալով՝ ոմանք մոլորեցան հաւատքէն եւ իրենք զիրենք խոցեցին շատ ցաւերով: **11** Բայց դժն, ո՛վ Աստուծոյ մարդ, փախիր այս բաներէն, եւ հետամո՛տ եղիր արդարութեան, բարեպաշտութեան, հաւատքի, սիրոյ, համբերութեան ու հեզութեան: **12** Պայքարէ՛ հաւատքին բարի պայքարը, բռնէ՛ յաւիտենական կեանքը՝ որուն համար կանչուեցար եւ տուիր բարի դաւանութիւնը շատ վկաներու առջեւ: **(aiōnios g166)** **13** Կը պատուիրեմ քեզի՝ Աստուծոյ առջեւ, որ կեանք կու տայ բոլոր բաներուն, ու Քրիստոս Յիսուսի առջեւ, որ վկայեց բարի դաւանութիւնը Պոնտացի Պիղատոսի առջեւ, **14** որ պահես այս պատուէրը՝ ապրելով անբիծ, անարատ, մինչեւ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի

երեւումը: 15 Չայն իր ատենին ցոյց պիտի տայ
 Երանելին եւ միակ Յգօրը, Թագաւորներուն
 թագաւորն ու Տէրերուն տէրը: 16 Միայն ինք
 ունի անմահութիւն, եւ կը բնակի անմերձեանայի
 լոյսի մէջ: Մարդոցմէ ոչ մէկը տեսեր է զինք, ոչ
 ալ կրնայ տեսնել: Իրեն պատիւ ու զօրութիւն
 յաւիտեան: Ամէն: (aiōnios g166) 17 Պատուիրէ
 այս աշխարհի մէջ հարուստ եղողներուն՝
 որ մեծամիտ չըլլան, ոչ ալ յուսան անստոյգ
 հարստութեան, հապա՝ ապրող Աստուծոյ, որ
 ամէն բան կու տայ մեզի ճոխութեամբ՝ վայելելու
 համար: (aiōn g165) 18 Բարիք թող գործեն, բարի
 գործերով թող հարստանան, առատաձեռն եւ
 ուրիշին կարիքներուն հաղորդակից ըլլան, 19
 ապագային համար իրենք իրենց լաւ հիմ դնելով
 իբր պահեստ՝ որպէսզի բռնեն յաւիտենական
 կեանքը: 20 Ո՛վ Տիմոթէոս, պահէ՛ քեզի
 յանձնուած աւանդը, խուսափելով սրբապիղծ
 ունայնաբանութիւններէն ու սուտանուն
 գիտութեան հակադրութիւններէն. 21 ոմանք
 վրիպեցան հաւատքէն՝ դաւանելով զանոնք:
 Շնորհքը քեզի հետ: Ամէն:

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՄՈԹԵՈՍ

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամբով, կեանքի խոստումին համաձայն՝ որ Քրիստոս Յիսուսով է, **2** Տիմոթեոսի՝ սիրելի զաւակիս. շնորհք, ողորմութիւն ու խաղաղութիւն Յայր Աստուծմէ, եւ Քրիստոս Յիսուսէ՝ մեր Տէրոջմէն: **3** Շնորհապարտ եմ Աստուծոյ, որ կը պաշտեմ նախնիքներու նման՝ մաքուր խղճմտանքով, (անդադար կը յիշեմ քեզ իմ աղերսանքներու մէջ՝ զիշեր ու ցերեկ, **4** տենչալով տեսնել քեզ, եւ յիշելով արցունքներդ, որպէսզի լեցուիմ ուրախութեամբ,) **5** երբ կը մտաբերեմ քու մէջդ եղած անկեղծ հաւատքը, որ նախ բնակեցաւ մեծ մօրդ՝ Լաւոդեայի ու մօրդ՝ Եւնիկէի մէջ, եւ համոզուած եմ թէ քու մէջդ ալ կայ: **6** Ուստի կը վերյիշեցնեմ քեզի՝ որ արծարծես Աստուծոյ շնորհը, որ տրուեցաւ քեզի՝ երբ ձեռնադրեցի քեզ. **7** որովհետեւ Աստուած տուաւ մեզի զի թէ երկչոտութեան՝ այլ զօրութեան, սիրոյ ու խոհեմութեան Յոգին: **8** Ուրեմն մի՛ ամչնար մեր Տէրոջ վկայութեան համար, զի ալ ինծի՝ անոր բանտարկեալին համար. հապա մասնակցէ՛ աւետարանին չարչարանքներուն՝ Աստուծոյ զօրութեան համեմատ: **9** Ան փրկեց մեզ եւ կանչեց սուրբ կոչումով, զի թէ մեր գործերուն համեմատ, հապա՝ իր առաջադրութեան ու շնորհքին համաձայն, որ Քրիստոս Յիսուսով տրուեցաւ մեզի՝ դարերու ժամանակներէն առաջ, (*aiōnios g166*) **10** բայց հիմա բացայայտուեցաւ՝ մեր Փրկիչ

Յիսուս Բրիստոսի երեւումով: Ան ոչնչացուց մահը, եւ լուսաւորեց կեանքն ու անմահութիւնը՝ աւետարանով, **11** որուն նշանակուեցայ քարոզիչ, առաքեալ, եւ հեթանոսներու վարդապետ: **12** Այս պատճառով ալ կը կրեմ այս չարչարանքները. բայց չեմ ամչնար, որովհետեւ գիտեմ թէ որո՞ւն հաւատացած եմ, ու համոզուած եմ թէ ան կարող է պահել իմ իրեն յանձնած աւանդս մինչեւ այն օրը: **13** Ամուր բռնէ տիպարը այն ողջամիտ խօսքերուն՝ որ լսեցիր ինձմէ, հաւատքով եւ Բրիստոս Յիսուսի մէջ եղած սիրով: **14** Պահէ այդ բարի աւանդը Սուրբ Հոգիին միջոցով՝ որ կը բնակի մեր մէջ: **15** Սա գիտես, թէ ինձմէ երես դարձուցին բոլոր անոնք՝ որ Ասիա էին. ասոնցմէ են Փիզեղոս եւ Հերմոգենէս: **16** Տէրը ողորմութիւն շնորհէ Ոնեսիփորոսի տան, որովհետեւ յաճախ կազդուրեց զիս եւ ամօթ չսեպեց շղթաս, **17** հապա՛ երբ եկաւ Հռոմ՝ փութաջանութեամբ փնտռեց զիս եւ գտաւ: **18** (Տէրը շնորհէ իրեն՝ որ այն օրը ողորմութիւն գտնէ Տէրոջմէն.) ու դուն շատ լաւ գիտես թէ որչափ սպասարկեց ինծի Եփեսոսի մէջ ալ:

2 Ուրեմն դո՛ւն, որդեակս, զօրացի՛ր այն շնորհքով՝ որ Բրիստոս Յիսուսի մէջ է, **2** եւ ինչ որ լսեցիր ինձմէ շատ վկաներով՝ աւանդէ՛ հաւատարիմ մարդոց, որոնք ընդունակ ըլլան սորվեցնել նաեւ ուրիշներուն: **3** Չարչարանք կրէ Յիսուս Բրիստոսի բարի զինուորի մը պէս: **4** Ո՛չ մէկ զինուորագրեալ կը կաշկանդուի այս կեանքին

գործառնութիւններով, որպէսզի հաճեցնէ իր
 զօրավարը. **5** Եւ մարգիկ մը պսակ չի ստանար,
 եթէ չմրցի օրինաւոր կերպով: **6** Աշխատող մշակը
 պէտք է առաջինը ըլլայ՝ պտուղներէն բաժին
 ստանալու: **7** Հասկցիր ինչ որ կ'ըսեմ. Տէրը թող տայ
 քեզի ըմբռնում ամէն բանի մէջ: **8** Յիշէ թէ Դաւիթի
 զարմէն եղող Յիսուս Քրիստոս՝ մեռելներէն
 յարութիւն առած է, համաձայն իմ քարոզած
 աւետարանիս, **9** որուն մէջ կը չարչարուիմ
 չարագործի մը պէս՝ մինչեւ անգամ կապերով.
 Բայց Աստուծոյ խօսքը կապուած չէ: **10** Ուստի
 կը տոկամ ամէն բանի՝ ընտրեալներուն համար,
 որպէսզի անոնք ալ հասնին այն փրկութեան՝ որ
 Քրիստոս Յիսուսի մէջ է՝ յաւիտենական փառքով:
 (aiōnios g166) **11** Այս խօսքը վստահելի է. որովհետեւ
 եթէ մեռանք անոր հետ, պիտի ապրինք ալ անոր
 հետ. **12** եթէ տոկանք, պիտի թագաւորենք ալ
 անոր հետ: Եթէ ուրանանք զինք, ինք ալ պիտի
 ուրանայ մեզ. **13** եթէ հաւատարիմ չըլլանք՝
 ինք հաւատարիմ կը մնայ, չի կրնար ուրանալ
 ինքզինք: **14** Յիշեցնու անոնց այս բաները, Տէրոջ
 առջեւ վկայելով որ բանակոյիւ չընեն, ինչ որ
 պիտանի չէ, հապա միայն կը կործանէ լսողները:
15 Ջանա՛ դուն քեզ գնահատելի ցոյց տալ Աստուծոյ
 առջեւ, ըլլալով այնպիսի գործաւոր մը՝ որ պիտի
 չամչնայ, շիտակ բացատրելով ճշմարտութեան
 խօսքը: **16** Բայց հեռու կեցիր սրբապիղծ
 ունայնաբանութիւններէն, քանի որ անոնք աւելի
 պիտի յառաջդիմեն ամբարշտութեան մէջ, **17**

եւ անոնց խօսքը պիտի ճարակէ քաղցկեղի պէս: Ասոնցմէ են Հիմենոս եւ Փիղետոս, **18** որոնք վրիպած են ճշմարտութենէն՝ ըսելով թէ մեռելներուն յարութիւնը արդէն եղած է, եւ կը կործանեն ոմանց հաւատքը: **19** Սակայն Աստուծոյ հիմը ամուր կը կենայ եւ ունի սա՛ կնիքը. “Տէրը կը ճանչնայ անոնք որ իրն են”, նաեւ. “Ո՛վ որ կ’արտասանէ Քրիստոսի անունը՝ թող հեռանայ անիրաւութենէ”: **20** Մեծ տան մը մէջ կան ո՛չ միայն ոսկիէ ու արծաթէ անօթներ, այլ նաեւ փայտէ եւ հողէ անօթներ: Ոմանք պատիւի համար են, ու ոմանք՝ անպատուութեան համար: **21** Ուստի եթէ մէկը մաքրէ ինքզինք ասոնցմէ, պիտի ըլլայ պատիւի անօթ մը՝ սրբացած եւ պիտանի իր Տէրոջ, պատրաստուած ամեն բարի գործի համար: **22** Փախի՛ր նաեւ երիտասարդական ցանկութիւններէն, ու հետամո՛ղս եղի՛ր արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան, անոնց հետ՝ որ կը կանչեն Տէրոջ անունը մաքուր սիրտով: **23** Բայց հրաժարե՛ յիմար եւ անիմաստ վեճերէն, գիտնալով որ կռիւներ կը ծնին ասոնցմէ: **24** Տէրոջ ծառան պետք չէ կռուի, հապա՛ ըլլայ հեզահամբոյր բոլորին հանդէպ, սորվեցնելու ընդունակ, անոխակայ, **25** ընդդիմացողները հեզութեամբ կրթող, որ թերեւս Աստուած ապաշխարութիւն տայ անոնց՝ ճշմարտութիւնը գիտնալու համար, **26** ու սթափին Չարախօսին թակարդէն, որմէ բռնուած են՝ անոր կամքին ծառայելու:

3 Գիտցիր թէ վերջին օրերը դաժան ժամանակներ պիտի գան. **2** որովհետեւ մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծաթասէր, պոռոտախօս, ամբարտաւան, հայիոյիչ, ծնողներու անհնազանդ, ապերախտ, անսուրբ, **3** անգութ, անհաշտ, չարախօս, անժուժկալ, դաժանաբարոյ, բարին չսիրող, **4** մատնիչ, յանդուգն, հպարտ, աւելի հաճոյասէր քան աստուածասէր: **5** Անոնք ունին բարեպաշտութեան դրսերելոյթը, բայց ուրացած են անոր զօրութիւնը: Դուն հեռացիր անոնցմէ. **6** որովհետեւ ասոնցմէ են անոնք՝ որ կը մտնեն տուններէն ներս, եւ կը գերեվարեն մեղքով բեռնաւորուած տկարամիտ կիները՝ զանազան ցանկութիւններէ դրդուած, **7** որոնք միշտ կը սորվին բայց բնաւ չեն կրնար հասնիլ ճշմարտութեան գիտակցութեան: **8** Հապա, ինչպէս Յանէս ու Յամրէս ընդդիմացան Մովսէսի, նոյնպէս ասոնք ալ կ'ընդդիմանան ճշմարտութեան: Միտքով ապականած մարդիկ, որ խոտելի են հաւատքի մէջ. **9** բայց աւելի պիտի չառաջդիմեն, որովհետեւ իրենց անմտութիւնը բացայայտ պիտի ըլլայ բոլորին, ինչպէս եղաւ անոնց երկուքինը: **10** Իսկ դուն հետեւեցար իմ վարդապետութեանս, ապրելակերպիս, առաջադրութեանս, հաւատքիս, համբերատարութեանս, սիրոյս, համբերութեանս, **11** հալածանքներուս եւ չարչարանքներուս, որոնք պատահեցան ինծի Անտիոքի, Իկոնիոնի ու Լիւստրայի մէջ: Ինչ հալածանքներ կրեցի. բայց

Տէրը ազատեց զիս բոլորէն: **12** Եւ բոլոր անոնք՝ որ կ'ուզեն բարեպաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսով, պիտի հալածուին: **13** Բայց չար ու զեղծարար մարդիկ աւելի պիտի յառաջանան չարութեան մէջ՝ մոլորեցնելով եւ մոլորելով: **14** Սակայն դուն հաստատ կեցիր այն բաներուն մէջ՝ որ սորվեցար ու որոնց հաւատացիր, որովհետեւ զիտես թէ որմէ սորվեցար: **15** Նաեւ մանկութենէդ ի վեր զիտես Սուրբ Գիրքերը, որոնք կրնան իմաստուն ընել քեզ՝ փրկուելու Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքով: **16** Ամբողջ Գիրքը աստուածաշունչ է, եւ օգտակար՝ սորվեցնելու, կշտամբելու, ուղղելու եւ արդարութեան մէջ կրթելու համար. **17** որպէսզի Աստուծոյ մարդը ըլլայ կատարեալ, պատրաստուած ամեն բարի գործի համար:

4 Ուրեմն կը վկայեմ Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի առջեւ, որ պիտի դատէ ողջերն ու մեռելները իր երեւումին եւ թագաւորութեան ատենը. **2** բարոզէ խօսքը, պնդէ ժամանակին թէ անժամանակ, կշտամբէ, յանդիմանէ, յորդորէ ամբողջ համբերատարութեամբ եւ ուսուցումով: **3** Որովհետեւ պիտի գայ ատենը՝ երբ պիտի չհանդուրժեն ողջամիտ վարդապետութեան. հապա՝ իրենց ականջներուն մարմաջով ու ցանկութիւններուն համաձայն վարդապետներ պիտի կուտակեն իրենց համար. **4** իրենց ականջները պիտի դարձնեն ճշմարտութենէն, եւ պիտի խոտորին՝ հետեւելով առասպելներու: **5**

Բայց դուն արթուն եղիր ամեն բանի մեջ, տոկան չարչարանքներու, աւետարանիչի գործ ըրէ, լման կատարէ քու սպասարկութիւնդ. 6 որովհետեւ ես արդէն ընծայուած եմ զոհ ըլլալու, եւ իմ մեկնումիս ատենը հասած է: 7 Պայքարեցայ բարի պայքարը, աւարտեցի ընթացքը, պահեցի հաւատքը: 8 Ասկէ ետք վերապահուած է ինծի արդարութեան պսակը, որ Տէրը՝ արդար Դատաւորը՝ պիտի տայ ինծի այն օրը. եւ ոչ միայն ինծի, այլ նաեւ բոլոր անոնց՝ որ կը սիրեն անոր երեւումը: 9 Ջանա՜ շուտով գալ ինծի. 10 որովհետեւ Դեմաս լքեց զիս՝ սիրելով այս ներկայ աշխարհը, ու մեկնեցաւ Թեսաղոնիկէ: Կրէսկէս գնաց Գաղատիա, Տիտոս՝ Դադմատիա. (aiōn g165) 11 միայն Ղուկաս ինծի հետ է: Ա՜ռ Մարկոսը եւ բէր քեզի հետ, որովհետեւ պիտանի է ինծի՝ սպասարկութեան համար: 12 Տիւբիկոսը դրկեցի Եփեսոս: 13 Այն վերարկուն, որ ձգեցի Տրովադա՝ Կարպոսի քով, բեր՝ երբ գաս, նաեւ գիրքերը, մանաւանդ մագաղաթները: 14 Դարբին Ադեքսանդրոսը շատ չարիք ըրաւ ինծի. Տէրը անոր հատուցանէ իր արարքներուն համեմատ: 15 Դուն ալ զգուշացիր անկէ, որովհետեւ մեծապէս ընդդիմացաւ մեր խօսքերուն: 16 Առաջին անգամ, երբ դատարանին առջեւ կը ջատագովէի զիս, ոչ մէկը եկաւ հետս, հապա բոլորն ալ լքեցին զիս. ատիկա յանցանք թող չվերագրուի իրենց: 17 Սակայն Տէրը կայնեցաւ քովս ու զօրացուց զիս, որպէսզի քարոզութիւնը լման ըլլայ իմ միջոցովս

եւ բոլոր հեթանոսները լսեն, ու ես ազատեցայ
ամիւծին երախէն: 18 Տէրը պիտի ազատէ զիս
ամեն չար գործէ, եւ պիտի փրկէ՝ իր երկնային
թագաւորութեան հասցնելով: Իրեն փանք դարե
դար՝: Ամեն: (aiðn g165) 19 Բարեւէ՛ Պրիսկէն եւ
Ակիւղասը, ու Ոնեսիփորոսի ընտանիքը: 20
Երաստոս մնաց Կորնթոս, իսկ Տրոփիմոսը ձգեցի
Միլետոս՝ հիւանդացած: 21 Ջանա՛ ձմեռէն առաջ
գալ: Եւբուդոս, Պուղէս, Լինոս, Կղօղիա ու բոլոր
եղբայրները կը բարեւեն քեզ: 22 Տէր Յիսուս
Քրիստոս քու հոգիիդ հետ: Շնորհքը ձեզի հետ:
Ամեն:

ՏԻՏՈՍ

1 Պօղոս, Աստուծոյ ծառայ եւ Յիսուս Քրիստոսի առաքեալ՝ համաձայն Աստուծոյ ընտրեալներուն հաւատքին ու բարեպաշտութեամբ եղած ճշմարտութեան գիտակցութեան, **2** յաւիտենական կեանքի յոյսով՝ որ անսուտն Աստուած խոստացաւ դարերու ժամանակներէն առաջ **(aiōnios g166)** **3** - բայց յատուկ ատենին իր խօսքը բացայայտեց քարոզութեամբ՝ որ վստահուեցաւ ինծի մեր Փրկիչ Աստուծոյ հրամանով -, **4** Տիտոսի՝ հարազատ զաւակիս հասարակաց հաւատքին համեմատ. շնորհք եւ խաղաղութիւն Յայր Աստուծմէ ու Տէր Յիսուս Քրիստոսէ՝ մեր Փրկիչէն: **5** Ես ձգեցի քեզ Կրետէ, որպէսզի ուղղես բոլոր պակաս մնացած բաները ու երեցներ նշանակես ամեն քաղաքի մէջ՝ ինչպէս պատուիրեցի քեզի. **6** եթէ մէկը ըլլայ անմեղադրելի, մէկ կնոջ ամուսին, եւ ունենայ հաւատարիմ զաւակներ, որոնք անառակութեան համար ամբաստանուած կամ ըմբոստ չըլլան: **7** Որովհետեւ եպիսկոպոսը՝ իբր Աստուծոյ տնտես՝ պէտք է ըլլայ անմեղադրելի. ոչ ինքնահաւան, ոչ բարկացող, ոչ գինեմոլ, ոչ զարնող, ոչ ամօթալի չափախնդրութեան հետամուտ եղող, **8** հապա՝ հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ, **9** հաստատ բռնելով վարդապետութեան հաւատարիմ խօսքը, որպէսզի կարենայ թէ՛ յորդորել ողջամիտ վարդապետութեամբ, թէ՛ կշտամբել հակաճառողները: **10** Քանի որ

շատ են ըմբոստները, դատարկախօսներն ու հրապուրողները, մանաւանդ անոնք՝ որ թլփատութենէն են: **11** Պէտք է պապանձեցնել զանոնք. անոնք կը կործանեն ամբողջ տուններ, եւ կը սորվեցնեն անպատեհ բաներ՝ ամօթալի շահախնդրութեան համար: **12** Անոնցմէ մէկը՝ իրենց սեփական մարգարէն՝ ըսած է. «Կրետացիները միշտ ստախօս են, չար զազաններ, դատարկապորտներ»: **13** Այս վկայութիւնը ճշմարիտ է. ուստի սաստիկ կշտամբէ զանոնք, որպէսզի առողջանան հաւատքին մէջ, **14** ուշադրութիւն չդարձնելով հրեական առասպելներուն ու ճշմարտութենէն խոտորող մարդոց պատուէրներուն: **15** Մաքուրներուն՝ ամէն բան մաքուր է. բայց պիղծերուն եւ անհաւատներուն՝ ոչինչ մաքուր է, հապա անոնց միտքն ալ, խղճմտանքն ալ պղծուած են: **16** Կը դաւանին թէ կը ճանչնան Աստուած. բայց կ'ուրանան զայն իրենց գործերով, ըլլալով զարշէլի եւ անհնազանդ, ու խոտելի՝ ամէն բարի գործի հանդէպ:

2 Իսկ դուն խօսէ ինչ որ կը պատշաճի ողջամիտ վարդապետութեան: **2** Տարեցները թող ըլլան զգաստ, պատկառելի, խոհեմ, եւ ողջամիտ՝ հաւատքով, սիրով ու համբերութեամբ: **3** Տարեց կիներն ալ թող վարուին այնպէս՝ ինչպէս կը վայլէ սրբութեան, եւ ըլլան ո՛չ չարախօս, ո՛չ զինեմոյ, հապա՝ բարի բաներ սորվեցնող. **4** որպէսզի սորվեցնեն դեռահասակ կիներուն՝ սիրել

իրենց ամուսինները, սիրելի իրենց զաւակները,
 5 եւ ըլլալ խոհեմ, մաքրակենցաղ, տնաշէն,
 բարեգործ, իրենց ամուսիններուն հպատակ,
 որ Աստուծոյ խօսքը չհայհոյուի: 6 Նոյնպէս
 յորդորէ երիտասարդները որ ըլլան խոհեմ:
 7 Ամէն բանի մէջ դուն քեզ ցոյց տուր իբր
 տիպար՝ բարի գործերու վարդապետութեան
 մէջ՝ ցոյց տուր անեղծութիւն, պատկառանք,
 8 ողջամիտ եւ անպարսաւելի խօսք, որպէսզի
 հակառակողը ամչնայ՝ մեր մասին չարախօսելիք
 ոչինչ ունենալով: 9 Յորդորէ ստրուկները՝ որ
 հպատակին իրենց տէրերուն ու հաճելի ըլլան
 անոնց՝ ամէն բանի մէջ. չհակաճառեն, 10 չխորեն,
 հապա բոլորովին բարի հաւատարմութիւն
 ցոյց տան, որպէսզի զարդարեն մեր Փրկիչ
 Աստուծոյ վարդապետութիւնը՝ ամէն բանի
 մէջ: 11 Բանի որ Աստուծոյ փրկարար շնորհքը
 երեւցաւ բոլոր մարդոց, 12 կրթելով մեզ՝ որ
 ուրանանք ամբարշտութիւնն ու աշխարհային
 ցանկութիւնները, եւ ապրինք խոհեմութեամբ,
 արդարութեամբ ու բարեպաշտութեամբ՝ այս
 ներկայ աշխարհին մէջ, (aiōn g165) 13 սպասելով
 այն երանելի յոյսին եւ մեծ Աստուծոյ ու մեր
 Փրկիչ Յիսուս Բրիստոսի փառքին երեւումին:
 14 Ան ընծայեց ինքզինք մեզի համար, որպէսզի
 ազատագրէ մեզ ամէն անօրէնութենէ, եւ
 մաքրելով՝ ընէ իր սեփական ժողովուրդը,
 նախանձախնդիր բարի գործերու: 15 Ըսէ

այս բաները, յորդորէ՛ ու կշտամբէ՛ ամբողջ
հեղինակութեամբ: Ո՛չ մէկը թող արհամարհէ քեզ:

3 Յիշեցնուր անոնց՝ որ հպատակին
պետութիւններուն եւ իշխանութիւններուն,
անսան պետութեան, ու պատրաստ ըլլան ամէն
բարի գործի. **2** ո՛չ մէկուն հայիոյեն, ըլլան ո՛չ թէ
կռուազան, հապա՝ ազնիւ, բոլորովին հեգութիւն
ցոյց տալով ամէն մարդու: **3** Որովհետեւ մենք ալ
ժամանակին անմիտ էինք, անհնազանդ, մոլորեայ,
ու կը ծառայէինք զանազան ցանկութիւններու եւ
հաճոյքներու. կը վարուէինք չարամտութեամբ ու
նախանձով, հակակրեյի էինք եւ կ'ատէինք զիրար:
4 Բայց երբ մեր Փրկիչ Աստուծոյ քաղցրութիւնն ու
մարդասիրութիւնը երեւցան, **5** ան փրկեց մեզ - ո՛չ
թէ մեր ըրած արդարութեան գործերով, հապա իր
ողորմութեան համաձայն - աւագանին վերստին
ծնունդով եւ Սուրբ Հոգիին նորոգութեամբ: **6** Չայն
ճոխութեամբ թափեց մեր վրայ՝ մեր Փրկիչ Յիսուս
Քրիստոսի միջոցով, **7** որպէսզի՝ անոր շնորհքով
արդարացած ըլլալով՝ ժառանգորդ դառնանք,
յաւիտենական կեանքի յոյսին համաձայն: (*aiōnios*
ց166) **8** Այս խօսքը վստահեյի է, եւ կը փափաքիմ որ
պնդես այս բաներուն վրայ, որպէսզի Աստուծոյ
հաւատացողները ճիշդ թափեն մատակարար
ըլլալու բարի գործերու. այս բաները բարի
են, ու մարդոց օգտակար: **9** Բայց հեռու
կեցիր յիմար վեճերէն, ազգաբանութիւններէն,
հակառակութիւններէն եւ Օրէնքին շուրջ եղած
կռիւներէն, որովհետեւ անօգուտ են ու փուճ:

10 Զրաժարէ՛ հերձուածող մարդէն՝ առաջին եւ երկրորդ խրատէն ետք, 11 գիտնալով թէ այդպիսին խոտորած է ու կը մեղանչէ՝ դատապարտելով ինքզինք: 12 Երբ Արտեման կամ Տիւքիկոսը դրկեմ քեզի, փութա՛ գալ ինծի՝ Նիկոպոլիս, որովհետեւ որոշեցի հոն ձմերել: 13 Փութաջանութեամբ ուղարկէ Չենաս օրինականը եւ Ապողոսը, հոգ տանելով որ ոչինչ պակսի անոնց: 14 Մերիններն ալ թող սորվին մատակարար ըլլալ բարի գործերու՝ հարկաւոր կարիքներու համար, որպէսզի անպտուղ չըլլան: 15 Կը բարեւեն քեզ բոլոր անոնք՝ որ ինծի հետ են. բարեւէ՛ հաւատքին մէջ մեզ սիրողները: Շնորհքը ձեր բոլորին հետ: Ամէն:

ՓԻԼԻՄՈՆ

1 Պօղոս՝ Յիսուս Բրիստոսի բանտարկեալը, եւ Տիմոթէոս եղբայրը, Փիլիմոնի՝ մեր սիրելիին ու գործակիցին, **2** Ապփիա սիրելիին, Արքիպպոսի՝ մեր զինակիցին, ու քու տանդ մէջ հաւաքուող եկեղեցիին. **3** շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Բրիստոսէ: **4** Շնորհակալ կ'ըլլամ իմ Աստուծմէս՝ ամէն ատեն յիշելով քեզ իմ աղօթքներուս մէջ, **5** երբ կը լսեմ քու սիրոյդ եւ հաւատքիդ մասին՝ որ ունիս Տէր Յիսուսի ու բոլոր սուրբերուն հանդէպ, **6** որպէսզի քու հաւատքիդ հաղորդակցութիւնը արդիւնաւոր ըլլայ՝ Բրիստոս Յիսուսով ձեր մէջ եղած ամէն բարիքի գիտակցութեամբ: **7** Բանի որ մեծ ուրախութիւն եւ մխիթարութիւն ունինք քու սիրոյդ համար, որովհետեւ սուրբերուն սիրտը քեզմով հանգստացած է, եղբայր: **8** Ուստի, թէպէտ Բրիստոսով շատ համարձակութիւն ունիմ հրամայելու քեզի ինչ որ պատշաճ է, **9** փոխարէնը կ'աղաչեմ՝ սիրոյ համար, ըլլալով այնպիսի մէկը, ինչպէս եմ ես՝ Պօղոս, ծերացած, եւ հիմա՝ նաեւ Յիսուս Բրիստոսի բանտարկեալը: **10** Կ'աղաչեմ քեզի զաւակիս՝ Ոնեսիմոսի համար, որ ծնայ իմ կապերուս մէջ: **11** Ան ժամանակին անպէտ էր քեզի. իսկ հիմա պիտանի է թէ՛ քեզի, թէ՛ ինծի: **12** Ետ դրկեցի զայն քեզի. իսկ դուն ընդունէ՛ զինք իբր իմ սիրտս: **13** Կ'ուզէի իմ քովս պահել զայն, որպէսզի քու կողմէդ սպասարկէ ինծի՝ աւետարանի կապերուն մէջ. **14** բայց ուզեցի ոչինչ

ընել առանց քու կարծիքիդ, որպեսզի քու բարիքդ
 չըլլայ որպես թէ հարկադրաբար, հապա՝ ըլլայ
 կամովին: **15** Թերեւս ան ժամանակ մը զատուեցաւ,
 որպեսզի յաւիտեան ունենաս զինք. (*aiōnios g166*) **16**
 ալ ոչ թէ ստրուկի մը պէս, հապա ստրուկէ մը
 գերիվեր՝ սիրելի եղբօր մը պէս: Ու եթէ սիրելի է
 մանաւանդ ինծի, որչափ աւելի պիտի ըլլայ քեզի՝
 թէ մարմինի համեմատ, թէ ալ Տէրոջմով: **17** Ուրեմն
 եթէ զիս հաղորդակից կը նկատես՝ քեզի, ընդունէ
 զայն՝ որպէս թէ զիս: **18** Ու եթէ անիրաւած է քեզ
 կամ պարտք մը ունի, անցնէր զայն իմ հաշիւիս: **19**
 Ես՝ Պօղոս՝ գրեցի իմ ձեռքովս. ես կը վճարեմ, որ
 չըսեմ քեզի թէ դուն ալ՝ դուն քեզ կը պարտիս ինծի:
20 Այո, եղբայր, քեզմէ այս օգուտը թող ունենամ
 Տէրոջմով. հանգստացնէր իմ սիրտս Տէրոջմով:
21 Վստահելով հնազանդութեանդ՝ գրեցի քեզի,
 քանի որ գիտեմ թէ ըսածես ալ աւելի պիտի ընես:
22 Միաժամանակ ինծի ալ պատրաստէ հիւրանոց
 մը, որովհետեւ կը յուսամ թէ պիտի շնորհուիմ
 ձեզի՝ ձեր աղօթքներուն միջոցով: **23** Կը բարեւէ
 քեզ Եպափրաս՝ գերութեան ընկերս Քրիստոս
 Յիսուսով. **24** նաեւ Մարկոս, Արիստարքոս, Դեմաս,
 Ղուկաս՝ գործակիցներս: **25** Մեր Տէրոջ՝ Յիսուս
 Քրիստոսի շնորհքը ձեր հոգիին հետ: Ամէն:

ԵՐԲԱՅԵՑԻՍ

1 Աստուած, որ վաղուց՝ շատ անգամներ ու շատ կերպերով՝ խօսած էր հայրերուն մարգարէներով, **2** այս վերջին օրերը խօսեցաւ մեզի իր Որդիով, որ ժառանգորդ նշանակեց ամէն բանի եւ տիեզերքն ալ ստեղծեց անով: (aiԹո g165) **3** Ան իր փառքին շողն է ու իր Էութեան նկարագրութիւնը, եւ իր զօրութեան խօսքով հաստատ կը բռնէ ամէն բան: Ինք էր որ՝ մաքրելէ ետք մեր մեղքերը՝ բազմեցաւ բարձրերը, Աստուծոյ մեծափառութեան աջ կողմը, **4** այնչափ գերադաս ըլլալով հրեշտակներէն, քանի որ անոնցմէ գերազանց անուն մը ժառանգեց: **5** Արդարեւ հրեշտակներէն որոնք ըսաւ երբեք. «Դուն իմ Որդիս ես, այսօր ծնայ քեզ»: Եւ դարձեալ. «Ես Հայր պիտի ըլլամ անոր, ան ալ Որդի պիտի ըլլայ ինծի»: **6** Դարձեալ՝ երբ Անդրանիկը կը մտցնէ երկրագունդը՝ կ'ըսէ. «Աստուծոյ բոլոր հրեշտակներն ալ թող երկրպագեն անոր»: **7** Նաեւ հրեշտակներուն մասին կ'ըսէ. «Իր հրեշտակները հոգիներ կ'ընէ, եւ իր պաշտօնեաները՝ կրակի բոց»: **8** Իսկ Որդիին կ'ըսէ. «Քու գահիդ, որվ Աստուած, կը կենայ դարե դար՝. քու թագաւորութեանդ մականը ուղղամտութեան մականն է: (aiԹո g165) **9** Դուն սիրեցիր արդարութիւնը եւ ատեցիր անօրէնութիւնը. հետեւաբար, որվ Աստուած, քու Աստուածդ օծեց քեզ ցնծութեան իւղով՝ ընկերակիցներէդ աւելի»: **10** Նաեւ. «Տէր, դուն սկիզբէն դիր երկրի հիմերը, ու քո՛ւ ձեռքերուդ գործն է երկինքը: **11** Անոնք պիտի կորսուին, բայց

դուն կը մնաս. բոլորը պիտի մաշին հանդերձի պէս: 12 Պիտի ոլորես զանոնք ծածկոցի պէս, եւ պիտի փոխուին. իսկ դուն՝ միշտ նոյնն ես, ու քու տարիներդ պիտի չպակսին»: 13 Եւ հրեշտակներէն որո՞ւն ըսաւ երբեք. «Բազմէ իմ աջ կողմս, մինչեւ որ քու թշնամիներդ պատուանդան դնեն ոտքերուդ»: 14 Միթէ անոնք բոլորը պաշտօն կատարող հոգիներ չէն, դրկուած սպասարկելու անոնց՝ որ պիտի ժառանգեն փրկութիւնը:

2 Ուստի պետք է ալ աւելի ուշադիր ըլլանք մեր լսած բաներուն, որպէսզի չգրկուինք անոնցմէ: 2 Որովհետեւ եթէ հրեշտակներուն ըսած խօսքը հաստատուեցաւ, եւ որեւէ օրինազանցութիւն ու անհնազանդութիւն՝ ստացաւ արդար վարձատրութիւն, 3 մենք ինչպէս զերծ պիտի մնանք՝ եթէ անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկութեան մը հանդէպ, որ սկիզբ առաւ Տէրոջ խօսքով ու մեր մէջ հաստատուեցաւ լսողներուն միջոցով. 4 Աստուած ալ վկայեց նշաններով եւ սքանչելիքներով, ու զանազան հրաշքներով եւ Սուրբ Հոգիին բաշխումներով՝ իր կամքին համաձայն: 5 Արդարեւ հրեշտակներուն չհպատակեցուց այն զալիք երկրագունդը՝ որուն մասին մենք կը խօսինք, 6 հապա մէկը տեղ մը վկայեց եւ ըսաւ. «Մարդը ինչ է՝ որ կը յիշես զայն, կամ մարդու որդին՝ որ կ'այցելես անոր: 7 Հրեշտակներէն քիչ մը վար ըրիր զայն. փառքով ու պատիւով պսակեցիր զայն, եւ քու ձեռքերուդ գործերուն վրայ նշանակեցիր զայն. 8 ամէն բան

հպատակեցուցիր անոր ոտքերուն ներքեւ»։
 Քանի որ բոլորը հպատակեցուց անոր, անոր դէմ
 ըմբոստացող ոչինչ թողուց. բայց հիմա բոլորը
 անոր հպատակած չենք տեսներ։ **9** Սակայն
 փառքով ու պատիւով պսակուած կը տեսնենք
 Յիսուսը, որ հրեշտակներէն քիչ մը վար եղած
 էր մահուան չարչարանքին համար, որպէսզի
 Աստուծոյ շնորհքով մահ համտեսէ բոլորին
 համար։ **10** Որովհետեւ կը պատշաճէր անոր,
 - որուն համար է ամէն բան, եւ անով եղած
 է ամէն բան, - որ շատ որդիներ փառքի մէջ
 մտցնելու համար՝ չարչարանքներով կատարեալ
 ընէ անոնց փրկութեան Ռահվիրան։ **11** Արդարեւ
 ան որ կը սրբացնէ եւ անոնք որ կը սրբանան՝
 բոլորն ալ մէկէ մըն են։ Այս պատճառով ինք
 ամօթ չի սեպեր եղբայր կոչել զանոնք՝ ըսելով. **12**
 «Քու անունդ պիտի հաղորդեմ եղբայրներուս,
 համախմբումին մէջ պիտի օրհներգեմ քեզի»։
13 Եւ դարձեալ. «Ես պիտի վստահիմ անոր»։ Ու
 դարձեալ. «Ահաւասիկ ես եւ այն զաւակները՝
 որ Աստուած տուաւ ինծի»։ **14** Ուրեմն, քանի
 որ զաւակները հաղորդակցեցան մարմինին
 ու արիւնին, ինք ալ նմանապէս բաժնեկից
 եղաւ անոնց, որպէսզի իր մահով ոչնչացնէ ան՝
 որ մահուան իշխանութիւնը ունէր, այսինքն՝
 Չարախօսը, **15** եւ ազատէ անոնք՝ որ, մահուան
 վախով, ենթակայ էին ստրկութեան՝ իրենց
 ամբողջ կեանքի ընթացքին։ **16** Արդարեւ ան կը
 բռնէ ինչ թէ հրեշտակներուն ձեռքը, հապա կը բռնէ

Աբրահամի գարմին ձեռքը: 17 Ուստի պարտաւոր էր բոլորովին նմանիլ իր եղբայրներուն, որպէսզի ըլլար ողորմած ու հաւատարիմ քահանայապետ մը Աստուծոյ քով՝ քաւելլու համար ժողովուրդին մեղքերը: 18 Հետեւաբար կարող է օգնել անոնց՝ որ կը փորձուին, որովհետեւ ինք իսկ չարչարուեցաւ՝ փորձուելով:

3 Ուստի, սո՛ւրբ եղբայրներ, երկնային կոչումին բաժնեկիցներ, ուշադիր եղէք մեր դաւանութեան Առաքեալին ու Քահանայապետին՝ Քրիստոս Յիսուսի, 2 որ հաւատարիմ էր զինք նշանակողին, ինչպէս Մովսէս ալ՝ անոր ամբողջ տան մէջ: 3 Որովհետեւ ինք արժանացաւ Մովսէսէն անքան աւելի փառքի, որքան աւելի պատիւ կ'ունենայ տուն կառուցանողը՝ քան տունը: 4 Քանի որ ամեն տուն ունի կառուցանող մը. բայց ան որ կառուցանեց բոլոր բաները՝ Աստուած է: 5 Արդարեւ Մովսէս անոր ամբողջ տան մէջ հաւատարիմ էր իբր ծառայ՝ ըսուելիքներուն վկայ ըլլալու համար. 6 բայց Քրիստոս՝ իբր որդի կը տիրէ իր իսկ տան վրայ: Մէնք ենք անոր տունը, եթէ գէթ մինչեւ վախճանը ամուր բռնենք համարձակութիւնը եւ յոյսին պարծանքը: 7 Ուստի, ինչպէս Սուրբ Հոգին կ'ըսէ. «Այսօր, եթէ պիտի լսէք անոր ձայնը, 8 մի՛ խստացնէք ձեր սիրտերը՝ ինչպէս դաճնութեան ատեն, փորձութեան օրը՝ անապատին մէջ, 9 ուր ձեր հայրերը փորձեցին ու քննեցին զիս, թէպէտ քառասուն տարի տեսան իմ գործերս: 10 Ուստի զգուեցայ այդ սերունդէն

եւ ըսի. “Անոնք միշտ մոլորած են իրենց սիրտով, ու չգիտցան իմ ճամբաներս”: 11 Յետեւաբար երդում ըրի իմ բարկութեանս մէջ. “Անոնք պիտի չմտնեն իմ հանգստավայրս”»: 12 Չգուշացէք, եղբայրներ, որպէսզի ձեզմէ ոչ մէկուն ներսը անհաւատութեան չար սիրտ մը ըլլայ՝ հեռանալով ապրող Աստուծմէն: 13 Հապա ամէն օր յորդորեցէք զիրար, քանի «այսօր» կ’ըսուի, որպէսզի ձեզմէ ոչ մէկը խստանայ մեղքին խաբէութեամբ: 14 Արդարեւ մենք բաժնեկից եղած ենք Քրիստոսի, եթէ զէթ մինչեւ վախճանը հաստատ բռնենք մեր սկիզբի վստահութիւնը, 15 մինչ կ’ըսուի. «Այսօր, եթէ պիտի լսէք անոր ձայնը, մի՛ խստացնէք ձեր սիրտերը՝ ինչպէս դառնութեան ատեն»: 16 Քանի որ ոմանք՝ լսելէ ետք՝ դառնացուցին. սակայն ոչ՝ բոլորը՝ որ Եգիպտոսէն ելած էին Մովսէսի միջոցով: 17 Իսկ որոնցմէ՞ զգուեցաւ քառասուն տարի. մեղանշողներէն չէր, որոնց դիակները ինկան անապատին մէջ: 18 Եւ որոնց երդում ըրաւ՝ թէ պիտի չմտնեն իր հանգստավայրը, եթէ ոչ՝ անհնազանդներուն: 19 Ու կը տեսնենք թէ չկրցան մտնել՝ իրենց անհաւատութեան պատճառով:

4 Ուրեմն վախճանք, որպէսզի ձեզմէ ոչ մէկը զրկուած թուի անոր հանգստավայրը մտնելու խոստումէն, որ մնացած է մեզի: 2 Որովհետեւ մեզի ալ աւետուած էր՝ ինչպէս անոնց. բայց անոնց օգտակար չեղաւ այդ խօսքը լսելը, քանի որ հաւատքի միացած չէր լսողներուն մէջ: 3 Իսկ մենք՝ որ հաւատացինք, պիտի

մտնենք հանգիստը, ինչպէս ըսաւ. «Յետեւաբար երդում ըրի իմ բարկութեանս մէջ. “Անոնք պիտի չմտնեն իմ հանգստավայրս”», թէպէտ իր գործերը աշխարհի հիմնադրութենէն ի վեր եղած էին: 4 Որովհետեւ Գիրքը սա կ’ըսէ տեղ մը՝ եօթներորդ օրուան համար. «Եւ Աստուած եօթներորդ օրը հանգստացաւ իր բոլոր գործերէն»: 5 Ու հոս դարձեալ կ’ըսէ. «Անոնք պիտի չմտնեն իմ հանգստավայրս»: 6 Ուրեմն, քանի որ ոմանց կը մնայ հոն մտնել, իսկ անոնք որ նախապէս ստացած էին աւետիսը՝ անհնազանդութեան պատճառով չմտան, 7 դարձեալ օր մը կը սահմանէ՝ այնքան ժամանակէ ետք, եւ Դաւիթի բերանով կ’ըսէ՝ «այսօր», ինչպէս ըսուեցաւ. «Այսօր, եթէ պիտի լսէք անոր ձայնը, մի՛ խստացնէք ձեր սիրտերը»: 8 Որովհետեւ եթէ Յեսու հանգստացուցած ըլլար զանոնք, ալ անկէ ետք պիտի չխօսէր ուրիշ օրուան մասին: 9 Ուրեմն դեռ հանգիստի Շաբաթ մը կը մնայ Աստուծոյ ժողովուրդին. 10 որովհետեւ ան որ մտաւ անոր հանգստավայրը, ինք ալ հանգստացաւ իր գործերէն, ինչպէս Աստուած՝ իրեններէն: 11 Ուրեմն ջանանք մտնել այդ հանգստավայրը, որպէսզի ոչ մէկը իյնայ՝ նոյն անհնազանդութեան օրինակին պէս: 12 Որովհետեւ Աստուծոյ խօսքը կենարար է, ազդու, եւ ամէն երկսայրի սուրբ կտրուկ: Ան թափանցելով կը բաժնէ անձն ու հոգին, յօդերը եւ ծուծը. կը քննարկէ սիրտին մտածումներն ու մտադրութիւնները: 13 Չկայ արարած մը՝ որ

աներեւոյթ ըլլայ անոր առջեւ, հապա ամէն բան մերկ ու բաց է անոր աչքերուն առջեւ՝ որուն պիտի տանք մեր հաշիւը: **14** Ուրեմն, քանի որ ունինք երկինքը անցած մեծ Քահանայապետ մը, Յիսուսը՝ Աստուծոյ Որդին, ամուր բռնենք մեր դաւանութիւնը: **15** Արդարեւ մենք չունինք քահանայապետ մը՝ որ անկարող ըլլայ կարեկցիլ մեր տկարութիւններուն, հապա ինք ամէն բանի մէջ փորձուած է մեզի նման, սակայն առանց մեղքի: **16** Ուրեմն համարձակութեամբ մօտենանք շնորհքի գահին, որպէսզի ողորմութիւն ստանանք եւ շնորհք գտնենք՝ պատեհ ատեն օգնելու մեզի:

5 Արդարեւ, մարդոց մէջէն առնուած ամէն քահանայապետ՝ նշանակուած է մարդոց համար, որպէսզի Աստուծոյ մատուցանէ ընծաներ ու մեղքերու համար գոհեր: **2** Ան կրնայ հասկացող ըլլալ անոնց՝ որ անգէտ եւ մոլորեալ են, որովհետեւ ինք ալ համակուած է տկարութեամբ. **3** եւ այս պատճառով պարտաւոր է մեղքի պատարագ մատուցանել՝ ինչպէս ժողովուրդին համար, նոյնպէս ալ իրեն համար: **4** Ո՛չ մէկը ինքնիրեն կ'առնէ այս պատիւը, հապա միայն ան՝ որ կանչուած է Աստուծմէ, ինչպէս Ահարոն: **5** Նոյնպէս ալ ո՛չ թէ Քրիստոն փառաւորեց ինքզինք՝ քահանայապետ ըլլալու համար, հապա ան՝ որ ըսաւ իրեն. «Դուն իմ Որդիս ես, այսօր ծնայ քեզ»: **6** Ինչպէս ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ. «Դուն յաւիտեան քահանայ ես՝ Մելքիսեդեկի կարգին համեմատ»: (aiōn g165) **7** Ան՝ իր մարմինին օրերը,

սաստիկ գոչիւնով եւ արցունքով, աղերսանք ու պաղատանք մատուցանեց անոր՝ որ կարող էր մահէն փրկել զինք. եւ ընդունուեցաւ՝ իր բարեպաշտութեան պատճառով՝: 8 Թեպէտ ինք Որդի էր, հնազանդութիւն սորվեցաւ իր չարչարանքներէն. 9 ու երբ կատարեալ եղաւ, յաւիտենական փրկութիւն պատճառեց բոլոր իրեն հնազանդողներուն, (aiōnios g166) 10 եւ Աստուծմէ յորջորջուեցաւ՝ Քահանայապետ Մեքիսեղեկի կարգին համեմատ: 11 Անոր մասին ունինք շատ ըսելիք, որ դժուար է մեկնաբանել, քանի որ լսելու մէջ անփոյթ էք: 12 Արդարեւ, մինչ ժամանակին համեմատ պարտաւոր էիք վարժապետ ըլլալ, դո՛ւք պէտք ունիք դարձեալ սորվելու թէ որո՞նք են Աստուծոյ պատգամներուն նախաբայլերը: Դուք պէտք ունիք կաթի՛, ո՛չ թէ ամուր կերակուրի. 13 քանի որ ամէն կաթնկեր՝ արդարութեան խօսքին անհմուտ է, որովհետեւ երախայ է. 14 բայց ամուր կերակուրը չափահասներուն համար է, որոնց զգայարանքները սովորութեամբ վարժուած են զատորոշել բարին ու չարը:

6 Ուստի՝ ձգէ՛նք Քրիստոսի վերաբերեալ նախաբանը ու յառաջանանք դէպի կատարելութիւն, փոխանակ դարձեալ հիմը դնելու մեռած գործերէն ապաշխարութեան եւ Աստուծոյ հանդէպ հաւատքին, 2 մկրտութիւններու ուսուցումին ու ձեռնադրութեան, մեռելներու յարութեան եւ յաւիտենական դատաստանին. (aiōnios g166) 3 այս է որ պիտի ընենք՝ եթէ գէթ

Աստուած արտօնէ: **4** Արդարեւ անկարելի է անոնց՝ որոնք անգամ մը լուսաւորուեցան, համտեսեցին երկնային պարգեւը, բաժնեկից դարձան Սուրբ Հոգիին, **5** եւ համտեսեցին Աստուծոյ բարի խօսքն ու գալիք աշխարհին սքանչելիքները, (aïōn g165) **6** որ վերանորոգուին ապաշխարութեամբ՝ եթէ սայթաքին. քանի որ կրկին կը խաչեն Աստուծոյ Որդին իրենք իրենց համար, ու կը խայտառակեն զայն: **7** Որովհետեւ այն երկիրը՝ որ կը խմէ իր վրայ յաճախ եկած անձրեւը, եւ կ'արտադրէ յարմար բոյսեր անոնց՝ որոնց համար կը մշակուի, օրհնութիւն կը ստանայ Աստուծմէ. **8** բայց ան որ կ'արտադրէ փուշեր ու տատասկներ՝ անպէտ է եւ անիծուելու մօտ. անոր վախճանն է այրուիլ: **9** Թեպէտ այսպէս կը խօսինք, ձեր մասին՝ սիրելիներ՝ մենք համոզում ունինք լաւագոյն բաներու, որոնք կը վերաբերին փրկութեան: **10** Քանի որ Աստուած անիրաւ չէ՝ որ մոռնայ ձեր գործը, եւ այն սերը՝ որ ցոյց տուիք իր անունին համար, երբ սպասարկեցիք սուրբերուն ու կը սպասարկէք ալ: **11** Սակայն կը ցանկանք որ ձեզմէ իւրաքանչիւրը ցոյց տայ նոյն փութաջանութիւնը՝ մինչեւ վախճանը պահելու համար յոյսի լման վստահութիւնը. **12** որպէսզի դուք անփոյթ չըլլաք, հապա նմանիք անոնց՝ որ հաւատքով ու համբերատարութեամբ ժառանգեցին խոստումները: **13** Արդարեւ, երբ Աստուած խոստում ըրաւ Աբրահամի, քանի որ իրմէ մեծը չկար՝ որ երդում ընէր անոր վրայ, **14**

երդուն ըրաւ ինքնիր վրայ եւ ըսաւ. «Այո, մեծապէս պիտի օրինեմ քեզ ու մեծապէս պիտի բազմացնեմ քեզ»: 15 Եւ այսպէս՝ ան համբերատարութեամբ հասաւ խոստումին: 16 Արդարեւ մարդիկ երդուն կ'ընեն իրենցմէ մեծին վրայ, ու իրենց համար՝ երդումը կը հաստատէ ամէն հակաճառութեան աւարտը: 17 Ուստի Աստուած, փափաքելով աւելի ճոխութեամբ ցոյց տալ իր ծրագիրին անփոփոխ ըլլալը խոստումի ժառանգորդներուն, միջնորդեց երդումով մը, 18 որպէսզի երկու անփոփոխելի բաներով - որոնց մէջ անկարելի է որ Աստուած ստէ - հզօր մխիթարութիւն ունենանք մենք՝ որ իբր ապաստան ամուր բռնեցինք մեզի առաջարկուած յոյսը: 19 Մենք ունինք զայն որպէս ապահով եւ հաստատ խարիսխ մեր անձին. ան կը մտնէ վարագոյրին ներսի կողմն ալ, 20 հոն ուր Յիսուս՝ իբր յառաջընթաց՝ մտաւ մեզի համար, յաւիտենական Քահանայապետ եղած՝ Մելքիսեդեկի կարգին համեմատ: (aiōn g165)

7 Արդարեւ այս Մելքիսեդեկն էր, Սաղեմի թագաւորն ու Ամենաբարձր Աստուծոյ քահանան, որ դիմաւորեց Աբրահամը՝ երբ ան կը վերադառնար թագաւորներու կոտորածէն, եւ օրինեց զայն. 2 Աբրահամ ալ տասանորդ տուաւ անոր իր բոլոր բաներէն: Ան նախ Արդարութեան թագաւոր է՝ թարգմանութեան համաձայն, ու յետոյ՝ նաեւ Սաղեմի թագաւոր, այսինքն՝ Խաղաղութեան թագաւոր: 3 Առանց հօր, առանց մօր, առանց ազգաբանութեան, ան ունի ղչ

օրերու սկիզբ, ոչ ալ կեանքի վախճան. բայց նմանցուած է Աստուծոյ Որդիին եւ մշտնջենապէս կը մնայ քահանայ: **4** Ուրեմն տեսէք թէ ինչ մեծ մէկն էր ան՝ որուն Աբրահամ նահապետն ալ տուաւ աւարին տասանորդը: **5** Արդարեւ Ղեւիի որդիներէն եղողները, որոնք քահանայութիւն կը ստանան, Օրէնքին համաձայն պատուէր ունին տասանորդ առնելու ժողովուրդէն, այսինքն՝ իրենց եղբայրներէն, թէպէտ անոնք Աբրահամի մեջքէն ելած են: **6** Բայց ան՝ որուն ազգաբանութիւնը անոնցմէ չէր, տասանորդ ստացաւ Աբրահամէն եւ օրհնեց խոստումները ունեցողը: **7** Իսկ առանց որեւէ հակաճառութեան՝ կրտսէրը կ'օրհնուի գերադասէն: **8** Հոս՝ մահկանացուն մարդիկ տասանորդ կը ստանան, բայց հոն կը ստանայ ան՝ որուն համար վկայուած է թէ կ'ապրի: **9** Նաեւ կրնայ ըսուիլ թէ Ղեւի ալ, որ տասանորդ կը ստանայ, տասանորդ տուաւ Աբրահամի միջոցով. **10** որովհետեւ տակաւին իր հօր մեջքն էր՝ երբ Մելքիսեդեկ դիմաւորեց զայն: **11** Ուրեմն, եթէ կատարելութիւնը Ղեւտացիներու քահանայութեամբ ըլլար, (քանի որ ժողովուրդը Օրէնքին տակ դրուեցաւ անոր ատենը,) ալ ինչ պէտք կար որ ուրիշ քահանայ մը ելլէր՝ Մելքիսեդեկի կարգին համեմատ, եւ չկոչուէր Ահարոնի կարգին համեմատ: **12** Արդարեւ՝ քահանայութեան փոփոխումով՝ հարկ էր որ փոփոխութիւն ըլլար նաեւ Օրէնքին: **13** Եւ իրաւ եղաւ, որովհետեւ ան՝ որուն մասին կ'ըսուին

այս բաները, կը պատկանէր ուրիշ տոհմի, որմէ
 ոչ մէկը մօտեցած էր զոհասեղանին. 14 քանի
 որ յայտնի է թէ մեր Տէրը սերած է Յուդայի
 տոհմէն: Իսկ այդ տոհմին մասին Մովսէս ոչինչ
 ըսաւ՝ քահանայութեան վերաբերեալ: 15 Ասիկա
 ալ աւելի յայտնի է, քանի որ Մեքիսեդեկի
 նմանութեամբ ուրիշ քահանայ մը կ'ելլէ, 16 որ
 եղած է ոչ թէ մարմնաւոր պատուերի մը Օրէնքին
 համաձայն, հապա՝ անբակտելի կեանքի մը
 զօրութեան համեմատ: 17 Որովհետեւ կը վկայէ.
 «Դուն յաւիտեան քահանայ ես՝ Մեքիսեդեկի
 կարգին համեմատ»: (aiðn g165) 18 Արդարեւ նախկին
 պատուէրը կը ջնջուի իր տկարութեան ու
 անշահեկանութեան համար, 19 (որովհետեւ
 Օրէնքը ոչինչ կատարեալ ըրաւ,) եւ անոր տեղ
 կը մտնէ լաւագոյն յոյս մը՝ որով կը մօտենանք
 Աստուծոյ: 20 Եւ քանի որ ասիկա չեղաւ առանց
 երդումի, (որովհետեւ անոնք քահանայ եղած են
 առանց երդումի, 21 իսկ ասիկա՝ երդումով, անոր
 միջոցով՝ որ ըսաւ իրեն. «Տէրը երդում ըրեր է ու
 պիտի չզոյջայ. “Դուն յաւիտեան քահանայ ես՝
 Մեքիսեդեկի կարգին համեմատ”»,) (aiðn g165) 22
 Յիսուս երաշխաւոր եղաւ լաւագոյն ուխտի մը:
 23 Իրապէս շատ եղած են քահանաները, քանի
 որ մահը կ'արգիլէր որ անոնք միշտ մնան: 24
 Բայց ասիկա ունի անփոփոխ քահանայութիւն,
 որովհետեւ յաւիտեան կը մնայ: (aiðn g165) 25 Ուստի
 կարող ալ է կատարելապէս փրկել անոնք՝ որ
 իրմով կու գան Աստուծոյ. որովհետեւ ինք միշտ

կ'ապրի՝ անոնց բարեխօս ըլլալու համար: 26
 Արդարեւ ճիշդ այսպիսի քահանայապետ մը
 կը պատշաճէր մեզի, սուրբ, անմեղ, անարատ,
 մեղաւորներէն զատուած ու երկինքէն աւելի վեր
 բարձրացած: 27 Անոր հարկաւոր չէ ամէն օր զոհ
 մատուցանել՝ միւս քահանայապետներուն պէս,
 նախ իր մեղքերուն համար, յետոյ ժողովուրդին
 մեղքերուն համար. որովհետեւ ինք ըրաւ ասիկա
 մէկ անգամ ընդմիշտ՝ մատուցանելով ինքզինք: 28
 Արդարեւ՝ Օրէնքը քահանայապետ կը նշանակէ
 տկարութիւն ունեցող մարդիկ, բայց երդումին
 խօսքը՝ որ Օրէնքէն ետք էր՝ Որդին, որ կատարեալ
 եղած է յաւիտեան: (aiōn g165)

8 Ահա՛նասիկ մեր ըսած խօսքերուն գլխաւորը.-
 մենք ունինք այնպիսի քահանայապետ մը, որ
 բազմած է երկինքը՝ Աստուծոյ մեծափառութեան
 գահին աջ կողմը, 2 իբր պաշտօնեայ սրբարանին
 ու ճշմարիտ խորանին՝ որ Տէրը կանգնեց, եւ ոչ
 թէ մարդը: 3 Քանի որ ամէն քահանայապետ
 նշանակուած է ընծաներ ու զոհեր մատուցանելու
 համար, հարկ էր որ ասիկա՛ ալ ունենար
 մատուցանելիք բան մը: 4 Ան քահանայ անգամ
 պիտի չըլլար՝ եթէ երկրի վրայ ըլլար, որովհետեւ
 կան քահանաներ՝ որ ընծաներ կը մատուցանեն
 Օրէնքին համաձայն: 5 (Անոնք պաշտամունք
 կը կատարեն երկնային բաներուն օրինակով
 եւ շուքով, ինչպէս Աստուած պատգամ տուաւ
 Մովսէսի՝ երբ պիտի շինէր խորանը, քանի որ
 ըսաւ. «Տես, որպէսզի ամէն բան ընես լեռը քեզի

ցոյց տրուած տիպարին համաձայն»։) **6** Իսկ հիմա Յիսուս հասաւ գերագանց պաշտօնի մը, քանի որ միջնորդ է լաւագոյն ուխտի մը՝ որ օրինադրուած է լաւագոյն խոստումներու վրայ։ **7** Արդարեւ եթէ առաջինը անմեղադրելի ըլլար, բնաւ տեղ չէր փնտռուեր երկրորդին համար։ **8** Որովհետեւ կ'ըսէ՝ մեղադրելով զանոնք. «Ահա կու գան օրերը, - կ'ըսէ Տէրը, - երբ նոր ուխտ մը պիտի կնքեմ Իսրայելի տան հետ ու Յուդայի տան հետ։ **9** Սակայն ոչ այն ուխտին պէս՝ որ կնքեցի անոնց հայրերուն հետ, այն օրը երբ բռնեցի անոնց ձեռքէն՝ Եգիպտոսի երկրէն հանելու համար զանոնք. քանի անոնք չյարատեւեցին իմ ուխտիս մէջ, ես ալ անհոգ եղայ անոնց հանդէպ, - կ'ըսէ Տէրը։ - **10** Արդարեւ սա է այն ուխտը՝ որ պիտի հաստատեմ Իսրայելի տան հետ այդ օրերէն ետք, - կ'ըսէ Տէրը.- իմ օրէնքներս պիտի դնեմ անոնց միտքին մէջ, զանոնք պիտի գրեմ անոնց սիրտին վրայ, ու ես պիտի ըլլամ անոնց Աստուածը, անոնք ալ պիտի ըլլան իմ ժողովուրդս։ **11** Ա՛լ իւրաքանչիւրը պիտի չտրվեցնէ իր ընկերին, ոչ ալ իւրաքանչիւրը իր եղբօր՝ ըսելով. “Ճանչցիր Տէրը”, քանի որ անոնց պգտիկէն մինչեւ մեծը՝ պիտի ճանչնան զիս. **12** արդարեւ ես պիտի քաւեմ անոնց անիրաւութիւնները, եւ ալ պիտի չիշեմ անոնց մեղքերն ու անօրէնութիւնները»։ **13** “Նոր ուխտ” կոչելով՝ հինցուց առաջինը. իսկ ինչ որ կը հիննայ եւ կը ծերանայ՝ մօտ է աներեւութանալու։

9 Արդարեւ առաջին ուխտն ալ ունէր պաշտամունքի կանոններ, նաեւ աշխարհային

սրբարան մը. 2 որովհետեւ խորան մը կառուցանուած էր: Առաջինը, որուն մէջ կային աշտանակը, սեղանը եւ առաջադրութեան հացը, Սրբութիւն կը կոչուէր: 3 Իսկ երկրորդ վարագոյրին ետեւ կար խորան մը՝ որ Սրբութիւններու սրբութիւն կը կոչուէր. 4 անոր մէջ էին ոսկիէ բուրվառը եւ ամէն կողմէ ոսկեպատ ուխտին տապանակը, որուն մէջ կային ոսկիէ սափորը՝ մանանայով լեցուն, Ահարոնի գաւազանը՝ որ ծաղկեցաւ, եւ ուխտին տախտակները: 5 Անոր վրայ ալ՝ փառքի քերովքները, որ հովանի կ'ընէին Քաւութեան վրայ: Այս մասին հիմա մանրամասն խօսելու կարիք չկայ: 6 Ասոնք այսպէս կառուցանուած ըլլալով, քահանաները ամէն ատեն կը մտնէին առաջին խորանը՝ պաշտամունք կատարելու: 7 Իսկ միայն քահանայապետը կը մտնէր երկրորդին մէջ, տարին մէկ անգամ. բայց ոչ առանց արիւնի, որ կը մատուցանէր իրեն համար, նաեւ ժողովուրդին անգիտութեան մեղքերուն համար: 8 Սուրբ Հոգին սա՛ կը բացայայտէր, թէ սրբարանին ճամբան յայտնաբերուած չէր, քանի դեռ կը կենար առաջին խորանը, 9 որ նախատիպար մըն էր ներկայ ատենին համար: Անոր մէջ կը մատուցանուէին ընծաներ ու զոհեր, որոնք չէին կրնար կատարեալ ընել պաշտամունք կատարողը՝ խղճմտանքին հանդէպ. հապա՛ կերակուրներով, խմելիքներով 10 եւ տարբեր լուացումներով՝ միայն մարմնաւոր կանոններ

Էին, որոնք կը պարտադրուէին մինչեւ ուղղումի
 ատենը: **11** Բայց երբ Քրիստոս եկաւ իբր գալիք
 բարիքներու Քահանայապետ, անցաւ աւելի մեծ
 ու կատարեալ խորանին մէջէն՝ որ անձեռակերտ
 է, (այսինքն՝ այս արարչութենէն չէ,) **12** Եւ իր իսկ
 արիւնով - ո՛չ թէ նոխագներու եւ զուարակներու
 արիւնով - մէկ անգամ ընդմիշտ մտաւ սրբարանը,
 յաւիտենական ազատագրութիւն ստանալով:
(aiōnios g166) **13** Որովհետեւ եթէ ցուլերուն ու
 նոխագներուն արիւնը, եւ պիղծերուն վրայ
 սրսկուող երինջին մոխիրը, կը սրբացնէին՝
 մարմինի մաքրութեան համար, **14** ակնորչափ աւելի
 Քրիստոսի արիւնը, որ յաւիտենական Յոգիին
 միջոցով մատուցանեց ինքզինք Աստուծոյ՝ իբր
 անարատ զոհ, պիտի մաքրէ ձեր խղճմտանքը
 մեռած գործերէն՝ պաշտելու համար ապրող
 Աստուածը: **(aiōnios g166)** **15** Հետեւաբար ինք
 նոր ուխտին միջնորդն է, քանի որ իր մահը
 եղաւ առաջին ուխտին ժամանակ գործուած
 օրինազանցութիւններուն ազատագրութեան
 համար, որպէսզի կանչուածները ստանան
 յաւիտենական ժառանգութեան խոստումը:
(aiōnios g166) **16** Որովհետեւ հո՛ն՝ ուր կտակ մը կայ,
 հարկ է որ կտակարարը մեռնի: **17** Արդարեւ
 կտակը կը հաստատուի մահէն ետք. այլապէս
 ոյժ չունի՝ այնքան ատեն որ կտակարարը ողջ
 է: **18** Հետեւաբար առաջին ուխտն ալ չէր կրնար
 հաստատուիլ՝ առանց արիւնի. **19** քանի որ
 երբ Մովսէս ամբողջ ժողովուրդին հաղորդեց

Օրենքին բոլոր պատուէրները, ցուելուն եւ նոխազներուն արիւնը առաւ ու նոյնինքն Գիրքին եւ ամբողջ ժողովուրդին վրայ սրսկեց՝ ջուրով, որդան կարմիր բուրդով ու գոպայով, 20 եւ ըսաւ. «Այս է արիւնը այն ուխտին՝ որ Աստուած հրահանգեց ձեզի»: 21 Ու խորանին վրայ, եւ պաշտօնին բոլոր առարկաներուն վրայ նոյնպէս սրսկեց արիւնը: 22 Օրենքին համաձայն՝ գրեթէ ամէն բան կը մաքրուի արիւնով. եւ առանց արիւն թափելու՝ ներում չ'ըլլար: 23 Ուրեմն հարկ էր որ երկնային բաներուն օրինակները մաքրուէին ասոնցմով, իսկ նոյնինքն երկնաւորները՝ ասոնցմէ լաւագոյն զոհերով: 24 Զանի որ Զրիստոս մտաւ ոչ թէ ձեռակերտ սրբարանը, որ ճշմարիտին կրկնատիպն էր, հապա նոյնինքն երկինքը, որպէսզի հիմա Աստուծոյ առջեւ երեւնայ մեզի համար. 25 ոչ ալ մտաւ՝ ինքզինք յաճախ իբր զոհ մատուցանելու համար, ինչպէս քահանայապետը՝ որ ամէն տարի սրբարանը կը մտնէ ուրիշին արիւնով. 26 այլապէս, պէտք էր որ յաճախ չարչարուէր՝ աշխարհի հիմնադրութենէն ի վեր: Բայց հիմա, դարերու վախճանին, մէկ անգամ երեւցաւ՝ ջնջելու համար մեղքը ինքզինք զոհելով: (aiōn g165) 27 Եւ ինչպէս մարդոց վերապահուած է մէկ անգամ մեռնիլ, իսկ անկէ ետք՝ դատաստանը, 28 նոյնպէս ալ Զրիստոս մէկ անգամ իբր զոհ մատուցանուեցաւ՝ քաւելու համար շատերու մեղքերը, ու երկրորդ անգամ պիտի երեւնայ՝

առանց մեղքի, փրկելու համար անոնք՝ որ կը սպասեն իրեն:

10 Արդարեւ Օրենքը, ունենալով գալիք բարիքներուն շուքը, ոչ թէ այդ բաներուն բո՛ւն պատկերը, երբեք չի կրնար կատարեալ ընել անոնք՝ որ կը մօտենան, շարունակ ամէն տարի մատուցանուած նոյն զոհերով: **2** Այլապէս՝ պիտի չդադրէին մատուցանուելէ, քանի որ պաշտամունք կատարողները՝ մէկ անգամ մաքրուելէն ետք՝ ալ խղճահարութիւն պիտի չունենային մեղքերու համար: **3** Բայց ամէն տարի մեղքերու յիշատակութիւն կ'ըլլայ անոնցմով. **4** որովհետեւ նոխագներուն ու ցուլերուն արիւնը անկարող է քաւել մեղքերը: **5** Ուստի երբ մտաւ աշխարհ՝ ըսաւ. «Չոհ եւ ընծայ չուզեցիր, հապա մարմին մը պատրաստեցիր ինծի: **6** Ողջակէզներու եւ մեղքի պատարագներու չբարեհաճեցար: **7** Այն ատեն ըսի. “Ահա՛ կու գամ (ին մասիս գրուած է Գիրքի պատատին մէջ) քու կամքդ գործադրելու, ո՛վ Աստուած”»: **8** Վերը կ'ըսէ. «Չոհ, ընծայ, ողջակէզներ ու մեղքի պատարագներ չուզեցիր եւ անոնց չբարեհաճեցար», (որոնք կը մատուցանուէին Օրենքին համաձայն,) **9** յետոյ կ'ըսէ. «Ահա՛ կու գամ քու կամքդ գործադրելու, ո՛վ Աստուած»: Կը վերցնէ առաջինը, որպէսզի հաստատէ երկրորդը: **10** Այդ կամքով է որ մենք սրբացանք՝ Յիսուս Քրիստոսի մարմինին մէկ անգամ ընդմիշտ պատարագուելով: **11** Ամէն քահանայ ամէն

օր կը կայնի՝ պաշտօն կատարելու եւ նոյն
 զոհերը յաճախ մատուցանելու, որոնք երբեք
 չեն կրնար քաւել մեղքերը: **12** Մինչդեռ ասիկա
 մշտնջենապէս Աստուծոյ աջ կողմը բազմեցաւ՝
 մեղքերու համար մէկ զոհ մատուցանելով,
13 եւ անկէ ետք կը սպասէ, մինչեւ որ իր
 թշնամիները պատուանդան դրուին իր ոտքերուն.
14 որովհետեւ մէկ պատարագով մշտնջենապէս
 կատարեալ ըրաւ սրբացածները: **15** Սուրբ Հոգին
 ալ կը վկայէ մեզի, քանի որ նախապէս ըսելէն
 ետք. **16** «Սա է այն ուխտը՝ որ պիտի հաստատեմ
 անոնց հետ այդ օրերէն ետք, - կ'ըսէ Տէրը.- իմ
 օրէնքներս պիտի դնեմ անոնց սիրտին մէջ,
 եւ զանոնք պիտի գրեմ անոնց միտքին մէջ.
17 անոնց մեղքերն ու անօրէնութիւնները ալ
 պիտի չիշեմ»: **18** Ուստի, ո՛ր որ ասոնց ներում
 տրուեցաւ, ալ մեղքի համար պատարագ պէտք
 չէ: **19** Ուրեմն, եղբայրներ, համարձակութիւն
 ունինք սրբարանը մտնելու՝ Յիսուսի արիւնով, **20**
 նոր ու կենարար ճամբայով մը - որուն բացումը
 կատարեց մեզի համար - վարագոյրին մէջէն,
 որ իր մարմինն է. **21** նաեւ ունինք մեծ քահանայ
 մը՝ նշանակուած Աստուծոյ տան վրայ: **22**
 Ուստի մօտենանք ճշմարիտ սիրտով, հաւատքի
 լման վստահութեամբ, մեր սիրտերը սրսկումով
 մաքրուած չար խղճմտանքէն, եւ մեր մարմինները
 մաքուր ջուրով լուացուած: **23** Ամո՛ղր բռնենք
 մեր յոյսին դաւանութիւնը՝ առանց երերալու,
 որովհետեւ հաւատարիմ է ան՝ որ խոստացաւ:

24 Ուշադիր ըլլանք զիրար հրահրելու սիրոյ ու բարի գործերու: **25** Եւ չքենք մեր հաւաքոյթները, ինչպէս ոմանց սովորութիւնն է. հապա յորդորենք զիրար, այնչափ աւելի՝ որչափ կը տեսնէք այն օրուան մօտենալը: **26** Արդարեւ եթէ կամովին մեղանչենք՝ ճշմարտութեան գիտակցութիւնը ստանալէ ետք, ալ ուրիշ զոհ չի մնար մեղքերու համար, **27** հապա կը մնայ դատաստանի ահարկու սպասում մը ու նախանձախնդրութեան կրակ մը, որ պիտի լափէ հակառակորդները: **28** Ա՛ն՝ որ կ'անարգէր Մովսէսի Օրէնքը, կը մեռնէր առանց արգահատանքի, երկու կամ երեք վկաներով: **29** Ա՛լ որչափ աւելի խիստ պատիժի կը կարծէք թէ պիտի արժանանայ ան՝ որ ոտնակոխ ըրած է Աստուծոյ Որդին, պիղծ համարած է ուխտին արիւնը՝ որով ինք սրբացաւ, եւ նախատած է շնորհքի Հոգին: **30** Քանի որ կը ճանչնանք ան՝ որ ըսաւ. «Վրէժխնդրութիւնը իմն է, եւ պիտի հատուցանեմ, - կ'ըսէ Տէրը»: Եւ դարձեալ. «Տէրը պիտի դատէ իր ժողովուրդը»: **31** Ահարկու բան է իյնալ ապրող Աստուծոյ ձեռքը: **32** Ուրեմն վերյիշեցէք նախկին օրերը, երբ՝ լուսաւորուելէ ետք՝ տոկացիք չարչարանքներու մեծ մարտի մը. **33** երբեմն տեսարան եղաք՝ նախատինքներով ու տառապանքերով, երբեմն ալ հաղորդակցեցաք այդպիսի վիճակի մէջ եղողներուն հետ: **34** Որովհետեւ իմ կապերուս մէջ ինծի՝ կարեկցեցաք, եւ ձեր ինչքին յափշտակուիլը ընդունեցիք ուրախութեամբ, գիտնալով թէ ձեզի համար

լաւագոյն ու մնայուն ինչքեր ունիք երկինքը:
35 Ուրեմն մի լքէք ձեր համարձակութիւնը,
որ ունի մեծ վարձատրութիւն: 36 Որովհետեւ
համբերութիւն պէտք է ձեզի, որպէսզի ստանաք
խոստումը՝ գործադրած ըլլալով Աստուծոյ
կամբը: 37 Քանի որ «քիչ մը ատենէն պիտի գայ
ան՝ որ գալիք է, ու պիտի չուշանայ: 38 Եւ արդարը
հաւատքով պիտի ապրի. իսկ եթէ մէկը ընկրկի, իմ
անձս պիտի չբարեհաճի անոր»: 39 Բայց մենք
անոնցմէ չենք՝ որ կ'ընկրկին կորուստի համար,
հապա անոնցմէ՝ որ կը հաւատան, իրենց անձին
փրկութեան համար:

11 Իսկ հաւատքը՝ յուսացուած բաներուն
խարիսխն է, եւ անտեսանելի բաներուն
ապացոյցը. 2 որովհետեւ անով նախնիքները
ընդունեցին բարի վկայութիւն մը: 3 Հաւատքով
կ'ըմբռնենք թէ տիեզերքը կազմուեցաւ Աստուծոյ
խօսքով, այնպէս որ տեսանելի բաները գոյացան
աներեւոյթ բաներէն: (aiōn g165) 4 Հաւատքով Աբել
աւելի լաւ զոհ մատուցանեց Աստուծոյ՝ քան
Կայէն, որով վկայուեցաւ թէ արդար էր, քանի
որ Աստուած վկայեց իր ընծաներուն մասին.
Եւ անով՝ թէպէտ մեռաւ՝ տակաւին կը խօսի:
5 Հաւատքով Ենովք փոխադրուեցաւ երկրէն՝
որպէսզի մահ չտեսնէ, ու ոչ մէկ տեղ կը գտնուէր,
որովհետեւ Աստուած փոխադրեց զայն, քանի
որ անոր փոխադրուելէն առաջ վկայուեցաւ
թէ հաճելի էր Աստուծոյ: 6 Սակայն առանց
հաւատքի անկարելի է հաճելի ըլլալ Աստուծոյ.

որովհետեւ ան՝ որ կը մօտենայ Աստուծոյ, պէտք է հաւատայ թէ Աստուած կայ, եւ կը վարձատրէ անոնք՝ որ կը փնտռեն զինք: **7** Հաւատքով Նոյ, պատգամ ստանալով Աստուծմէ՝ տակաւին անտեսանելի բաներու մասին, երկիւղածութեամբ կերտեց տապան մը՝ իր ընտանիքին փրկութեան համար, որով դատապարտեց աշխարհը եւ ժառանգորդ եղաւ այն արդարութեան՝ որ կ'ըլլայ հաւատքով: **8** Հաւատքով Աբրահամ հնազանդեցաւ, երբ կանչուեցաւ մեկնելու տեղ մը՝ որ պիտի ստանար իբր ժառանգութիւն, ու մեկնեցաւ՝ առանց գիտնալու թէ ո՛ր կ'երթար: **9** Հաւատքով պանդխտացաւ խոստացուած երկրին մէջ՝ որպէս թէ օտարութեան մէջ, վրաններու մէջ բնակելով Իսահակի եւ Յակոբի հետ, որոնք ժառանգակիցներն էին նոյն խոստումին: **10** որովհետեւ ինք կը սպասէր հիմեր ունեցող քաղաքի մը, որուն ճարտարապետն ու կառուցանողը Աստուած է: **11** Հաւատքով Սառա ինք ալ կարողութիւն ստացաւ սերնդագործելու, ու հասունութեան մէջ զաւակ ծնաւ, քանի որ հաւատարիմ համարեց ան՝ որ խոստացած էր: **12** Ուստի այդ մէկէն - որ մեռածի պէս էր - ծնան այնքան բազմաթիւ՝ որքան երկինքի աստղերը, եւ անհամար՝ ինչպէս ծովեզերքի աւազը: **13** Ասոնք բոլորն ալ մեռան հաւատքով՝ առանց ստացած ըլլալու խոստումները, բայց հեռուէն տեսան զանոնք եւ բարեւեցին, ընդունելով թէ իրենք օտարականներ ու գաղթականներ են երկրի

վրայ. 14 որովհետեւ անոնք որ կը խօսին այսպիսի բաներ, կը յայտնեն թէ կը փնտռեն բնագաւառ մը: 15 Արդարեւ, եթէ յիշէին այն հայրենիքը՝ ուրկէ դուրս ելած էին, պատեհութիւն կ'ունենային հոն վերադառնալու: 16 Իսկ հիմա կը բաղձան լաւագոյն հայրենիքի մը, այսինքն՝ երկնայինին. ուստի Աստուած ամօթ չի սեպեր անոնց Աստուածը կոչուիլ, որովհետեւ ինք բաղաք մը պատրաստեց անոնց: 17 Հաւատքով Աբրահամ, երբ կը փորձուէր, Իսահակը զոհ մատուցանեց: Ինք՝ որ ընդունած էր խոստումները՝ մատուցանեց իր մէկ հատիկ որդին, - 18 որուն համար ըստած էր. «Իսահակի անունով պիտի կոչուի քու զարմոյ», - 19 որովհետեւ կը մտածէր թէ Աստուած կարող է յարուցանել զայն, նոյնիսկ մեռելներէն. ուրկէ ալ ստացաւ զայն՝ որպէս նախատիպար: 20 Հաւատքով Իսահակ, մարգարեանալով զալիք բաներուն մասին, օրհնեց Յակոբն ու Եսաւը: 21 Հաւատքով Յակոբ, երբ մահամերձ էր, օրհնեց Յովսէփի որդիներէն իւրաքանչիւրը, ու երկրպագեց՝ յենելով իր գաւազանին ծայրին վրայ: 22 Հաւատքով Յովսէփ, երբ կը վախճանէր, յիշեց Իսրայելի որդիներուն մեկնումը Եգիպտոսէն, ու պատուէր տուաւ իր ոսկորներուն համար: 23 Հաւատքով Մովսէս, երբ ծնաւ, երեք ամիս պահուեցաւ իր ծնողներուն կողմէ, որովհետեւ տեսան գեղեցիկ մանուկը, ու չվախցան թագաւորին հրամանէն: 24 Հաւատքով Մովսէս, երբ մեծցաւ, մերժեց Փարաւոնի աղջիկին որդի կոչուիլ, 25 նախընտրելով չարչարուիլ

Աստուծոյ ժողովուրդին հետ՝ քան վայելել մեղքին ժամանակաւոր զուարճութիւնը: 26 Աւելի մեծ հարստութիւն համարեց Քրիստոսի նախատինքն՝ քան Եգիպտոսի գանձերը, որովհետեւ կը դիտէր վարձատրութիւնը: 27 Հաւատքով ձգեց Եգիպտոսը՝ առանց վախնալու թագաւորին զայրոյթէն, որովհետեւ հաստատ մնաց որպէս թէ տեսնելով Անտեսանելին: 28 Հաւատքով կատարեց զատիկը եւ արիւնին հեղումը, որպէսզի անդրանիկները բնաջնջողը չդաշի իրենց: 29 Հաւատքով Կարմիր ծովէն անցան՝ որպէս թէ ցամաքէ, ինչ որ Եգիպտացիները փորձեցին՝ սակայն ընկղմեցան: 30 Հաւատքով Երիթովի պարիսպները ինկան, երբ Իսրայելացիները եօթը օր դարձան անոնց շուրջը: 31 Հաւատքով Ռախաբ պոռնիկը չկորսուեցաւ անհնազանդներուն հետ, խաղաղութեամբ ընդունած ըլլալով լրտեսները: 32 Եւ ակ ինչ ըսեմ. որովհետեւ ժամանակը պիտի պակսի՝ պատմելու Գեդէոնի, Բարակի, Սամփսոնի, Յեփթայէի, Դաւիթի, Սամուէլի եւ ուրիշ մարգարէներու մասին, 33 որոնք հաւատքով պայքարեցան թագաւորութիւններու դէմ, արդարութիւն գործեցին, խոստումներու հասան, առիւծներու երախներ գոցեցին, 34 կրակի զօրութիւն մարեցին, սուրի բերանէ խուսափեցան, տկարութենէ զօրացան, պատերազմի մէջ ուժեղացան, օտարներու բանակներ ընկճեցին: 35 Կիներ ընդունեցին իրենց մեռելները՝ յարութիւն

առած. իսկ ուրիշներ գանակոծուեցան՝ շընդունելով ազատագրութիւնը, որպէսզի հասնին լաւագոյն յարութեան մը: **36** Ուրիշներ ալ փորձառութիւնը ունեցան ծաղրանքի եւ խարազանի, նաեւ կապերու ու բանտերու. **37** քարկոծուեցան, սղոցուեցան, տանջուեցան, սուրով սպաննուեցան, ոչխարի մորթերով եւ այծի մորթերով շրջեցան, զրկուելով, տառապելով, չարչարուելով, **38** (որոնց արժանի չէր աշխարհը,) մոլորելով անապատներու, լեռներու, քարայրներու եւ երկրի խռոչներուն մէջ: **39** Ասոնք բոլորն ալ ընդունեցին բարի վկայութիւն մը իրենց հաւատքին համար, սակայն խոստումը չստացան, **40** քանի որ Աստուած մեզի համար նախատեսած էր աւելի լաւ բան մը, որպէսզի անոնք չհասնին խոստումին իրագործումին՝ առանց մեզի:

12 Ուստի մենք ալ, քանի որ շրջապատուած ենք այսչափ շատ վկաներու բազմութեամբ, թօթափենք ամէն ծանրաբեռնում, եւ մեղքը՝ որ դիւրաւ կը պաշարէ մեզ, ու համբերութեամբ վազենք մեզի առաջարկուած մրցարշաւը՝ **2** նայելով Յիսուսի, մեր հաւատքի ռահվիրային եւ իրագործողին. իրեն առաջարկուած ուրախութեան համար՝ ան տոկաց խաչին, արհամարհեց ամօթը, ու բազմեցաւ Աստուծոյ գահին աջ կողմը: **3** Արդարեւ մտածեցէք անոր մասին, որ տոկաց մեղաւորներուն իրեն դէմ այսպէս հակաճառելուն, որպէսզի ձեր անձերը

չթուլնան ու չպարտասին: 4 Տակաւին արին թափելու չափ չդիմադրեցիք՝ պայքարելով մեղքին դէմ, 5 եւ մոռցաք այն յորդորը որ կը խօսի ձեզի հետ՝ որպէս թէ որդիներու հետ. «Որդեակս, մի անտեսեր Տէրոջ պատիժը, ու մի պարտասիր՝ երբ կշտամբուիս իրմէ: 6 Որովհետեւ Տէրը կը պատժէ իր սիրածը, եւ կը խարազանէ ամէն որդի՝ որ կ'ընդունի»: 7 Եթէ տոկաք պատիժի, Աստուած կը վերաբերի ձեզի հետ՝ իբր որդիներ. քանի որ ո՞վ է այն որդին՝ որուն հայրը չի պատժեր զինք: 8 Իսկ եթէ ըլլաք առանց պատիժի՝ որուն բոլորը բաժնեկից են, ուրեմն ապօրինի զաւակ էք, եւ ոչ թէ հարազատ որդի: 9 Յետոյ՝ երբ մեր մարմնաւոր հայրերը կը պատժէին մեզ, կը պատկառէինք անոնցմէ. շատ աւելի պիտի չհպատակինք հոգիներուն Զօր՝ որ ապրինք: 10 Արդարեւ անոնք քիչ օրեր կը պատժէին մեզ՝ իրենց դատումին համաձայն. բայց Աստուած՝ մեր օգուտին համար, որպէսզի բաժին ստանանք իր սրբութենէն: 11 Ո՛չ մէկ պատիժ նոյն պահուն կը թուի ուրախարար, հապա՝ տրտմարար. բայց յետոյ կու տայ արդարութեան խաղաղարար պտուղը՝ անով կրթուածներուն: 12 Ուստի հաստատեցէք թուլցած ձեռքերն ու կթոտ ծունկերը, 13 եւ պատրաստեցէք ուղիղ արահետներ՝ ձեր ոտքերուն համար, որպէսզի ո՞վ որ կաղ է՝ չխոտորի, այլ փոխարէնը բժշկուի: 14 Զետամո՛ւտ եղէք խաղաղութեան՝ բոլորին հետ, եւ սրբութեան՝ առանց որուն ոչ մէկը պիտի

տեսնէ Տէրը: 15 Ուշադիր եղէք՝ որ ոչ մէկը գրկուի Աստուծոյ շնորհքէն. դառնութեան արմատ մը բուսնելով՝ թող չվրդովէ ձեզ, եւ շատեր չպղծուին անով: 16 Ո՛չ մէկը թող ըլլայ պոռնկող, կամ սրբապիղծ՝ Եսաւի պէս, որ մէկ կերակուրի համար ծախեց իր անդրանկութեան իրաւունքը: 17 Քանի որ գիտէք թէ յետոյ՝ երբ ուզեց ժառանգել օրհնութիւնը՝ մերժուեցաւ, թէպէտ փնտռեց զայն արցունքով, որովհետեւ իր ապաշխարութիւնը անօգուտ եղաւ՝: 18 Արդարեւ դուք մօտեցած չէք շօշափելի լերան՝ որ կը վառէր կրակով, ոչ ալ մթութեան, խաւարին ու մրրիկին, 19 եւ փողին շառաչին ու խօսքերուն ձայնին. զայն լսողները խնդրեցին որ այդ խօսքը այլեւս չըսուի իրենց: 20 (Արդարեւ չէին կրնար տոկալ այդ պատուէրին. «Եթէ նոյնիսկ անասուն մը դաչի լերան՝ պիտի քարկոծուի»): 21 Ա՛յնպէս ահարկու էր երեւոյթը՝ որ Մովսէս ըսաւ. «Սաստիկ կը զարհուրիմ ու կը դողամ»:) 22 Բայց դուք մօտեցած էք Սիոն լերան, ապրող Աստուծոյ քաղաքին՝ երկնային Երուսաղէմին, բիւրաւոր հրեշտակներու համաժողովին, 23 երկինքը արձանագրուած անդրանիկներու համախմբումին, Աստուծոյ՝ որ բոլորին Դատաւորն է, արդարներուն հոգիներուն՝ որոնք կատարելութեան հասած՝ են, 24 Յիսուսի՝ որ նոր ուխտի միջնորդն է, եւ սրսկումի արիւնին՝ որ կը խօսի Աբելի արիւնէն աւելի լաւ: 25 Չգուշացէք որ չմերժէք ան՝ որ կը խօսի ձեզի. որովհետեւ եթէ պատիժէ չխուսափեցան

անոնք՝ որ մերժեցին երկրի վրայ Աստուծոյ պատգամները տուողը, որչափ աւելի մենք՝ եթէ երես դարձնենք երկինքէն խօսողէն: **26** Այն ատեն անոր ձայնը շարժեց երկիրը, իսկ հիմա խոստացած է՝ ըսելով. «Անգամ մըն ալ պիտի շարժեմ. ոչ միայն երկիրը, այլ նաեւ երկինքը»:
27 Այս «անգամ մըն ալ» խօսքը կը բացայայտէ շարժուած բաներուն փոփոխութիւնը՝ իբր շինուած բաներ, որպէսզի անշարժ բաները մնան հաստատուն: **28** Ուստի՝ ընդունած ըլլալով անշարժ թագաւորութիւն մը՝ շնորհակալ ըլլանք, եւ պաշտենք Աստուած իրեն հաճելի կերպով, ակնածանքով ու բարեպաշտութեամբ. **29** որովհետեւ մեր Աստուածը սպառող կրակ է:

13 Յարատեւեցէք եղբայրսիրութեան մէջ: **2** Մի՛ մոռնաք հիւրասիրութիւնը, որովհետեւ ոմանք անով հրեշտակներ հիւրընկալեցին թաքուն կերպով: **3** Յիշեցէք բանտարկեալները՝ որպէս թէ դո՛ւք ալ կապուած էք անոնց հետ, եւ չարչարուողները՝ որպէս թէ դո՛ւք ալ մարմինի մէջ էք: **4** Ամուսնութիւնը թող պատուական համարուի բոլորէն, ու անկողինը՝ անարատ պահուի, քանի որ Աստուած պիտի դատէ պոռնկողներն ու շնացողները: **5** Ձեր վարուելակերպը թող ըլլայ առանց արծաթսիրութեան. բաւարարուեցէ՛ք ձեր ունեցածով, որովհետեւ ինք ըսաւ. «Բնա՛ւ պիտի չթողում քեզ, ոչ ալ պիտի լքեմ քեզ»: **6** Հետեւաբար վստահութեամբ ըսենք. «Տէրը իմ օգնականս է, ուստի պիտի չվախնամ. մարդը ինչ պիտի

ընէ ինծի»։ 7 Յիշեցէք ձեզ կառավարողները՝ որ Աստուծոյ խօսքը քարոզեցին ձեզի, եւ հետեւեցէք անոնց հաւատքին՝ զննելով անոնց վարքին աւարտը։ 8 Յիսուս Քրիստոս նոյնն է՝ երէկ, այսօր ու յաւիտեան։ (aiðn g165) 9 Մի տարուիք բազմազան եւ օտարոտի ուսուցումներէ, քանի որ լաւ է որ սիրտը հաստատուի շնորհքով, եւ ոչ թէ կերակուրներով, որոնք օգտակար չեղան անոնց համաձայն ընթացողներուն։ 10 Մենք ունինք զոհասեղան մը, որմէ ուտելու իրաւունք չունին անոնք՝ որ կը ծառայեն խորանին. 11 քանի որ բանակավայրէն դուրս կ'այրուին մարմինները այն կենդանիներուն, որոնց արիւնը կը տարուի սրբարանը՝ քահանայապետին միջոցով, մեղքի բաւութեան համար։ 12 Ուստի Յիսուս ալ չարչարուեցաւ դռնէն դուրս, որպէսզի իր արիւնով սրբացնէ ժողովուրդը։ 13 Ուրեմն երթանք անոր՝ բանակավայրէն դուրս, կրելով իր նախատինքը. 14 որովհետեւ մենք հոս չունինք մնայուն քաղաք, հապա կը փնտռենք գալիք քաղաքը։ 15 Ուստի՝ անոր միջոցով ամեն ատեն գովաբանութեան զոհ մատուցանենք Աստուծոյ, այսինքն՝ իր անունը դաւանող շրթունքներուն պտուղը։ 16 Բայց մի մոռնաք բարեգործութիւնն ու կարօտեալներուն հաղորդակցութիւնը, քանի որ այդպիսի զոհեր հաճելի են Աստուծոյ։ 17 Անսացէք ձեզ կառավարողներուն եւ ենթարկուեցէք անոնց, որովհետեւ անոնք կը հսկեն ձեր անձերուն վրայ՝ որոնց համար հաշիւ պիտի տան. որպէսզի

ուրախութեամբ ընեն այդ գործը, եւ ոչ թէ
 հառաչելով, քանի որ ատիկա օգտակար չէ ձեզի: 18
 Աղօթեցէք մեզի համար, որովհետեւ համոզուած
 ենք թէ ունինք բարի խղճմտանք ու կ'ուզենք
 ամեն բանի մէջ վարուիլ պարկեշտութեամբ: 19
 Բայց առաւելապէս կ'աղաչեմ որ ընէք ատիկա,
 որպէսզի աւելի շուտ վերադարձուիմ ձեզի: 20
 Խաղաղութեան Աստուածը, որ մեռելներէն վեր
 հանեց մեր Տէրը՝ Յիսուսը - ոչխարներուն
 մեծ Յովիւը՝ յաւիտենական ուխտին արիւնով
 -, (aiōnios g166) 21 ամեն բարի գործի մէջ
 հաստատե՛ ձեզ՝ իր կամքը գործադրելու, ձեր մէջ
 իրագործելով իր առջեւ հաճելի եղածը՝ Յիսուս
 Քրիստոսի միջոցով, որուն փանք դարե՛ դար՝:
 Ամեն: (aiōn g165) 22 Կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ,
 որ հանդուրժէք այս յորդորական խօսքիս,
 որովհետեւ համառօտաբար գրեցի ձեզի: 23
 Գիտցէք թէ մեր եղբայրը՝ Տիմոթէոս արձակուած
 է. եթէ շուտով գայ՝ անոր հետ պիտի տեսնեմ
 ձեզ: 24 Բարեւեցէք բոլոր ձեզ կառավարողներն
 ու բոլոր սուրբերը. կը բարեւեն ձեզ անոնք՝ որ
 Իտալիայէն են: 25 Շնորհքը ձեր բոլորին հետ:
 Ամեն:

ՅԱԿՈԲՈՒ

1 Յակոբոս, Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստոսի ծառայ, տասներկու տոհմերուն՝ որ ցրուած են ամեն կողմ. ողջոյն: **2** Եղբայրներս, բոլորովին ուրախութիւն համարեցէք՝ երբ զանազան փորձութիւններու մէջ իյնաք, **3** գիտնալով թէ ձեր հաւատքին փորձը համբերութիւն կ'իրագործէ: **4** Բայց համբերութիւնը թող ունենայ իր կատարեալ գործը, որպէսզի կատարեալ եւ ամբողջ ըլլաք, եւ ոչինչ պակսի ձեզի: **5** Իսկ եթէ իմաստութիւն կը պակսի ձեզմէ մէկուն, թող խնդրէ Աստուծմէ՝ որ բոլորին կու տայ առատապէս՝ առանց կշտամբելու, եւ պիտի տրուի անոր: **6** Բայց հաւատքով թող խնդրէ, առանց տատամսելու. որովհետեւ ան որ կը տատամսի՝ նման է ծովուն հողմակոծեալ ու տատանեալ ալիքներուն: **7** Այդ մարդը թող չկարծէ թէ որեւէ բան պիտի ստանայ Տէրոջմէն. **8** երկմիտ մարդը անհաստատ է իր բոլոր ճամբաներուն մէջ: **9** Նուաստ եղբայրը թող պարծենայ իր բարձրացումով, **10** իսկ հարուստը՝ իր նուաստացումով, որովհետեւ ինք պիտի անցնի խոտի ծաղիկին պէս. **11** քանի որ արեւը կը ծագի այրող տաքութեամբ ու կը չորցնէ խոտը, անոր ծաղիկը կը թափի, եւ անոր տեսքին վայելչութիւնն ալ կը կորսուի: Այդպէս ալ հարուստը պիտի թառամի իր ճամբաներուն մէջ: **12** Երանի՛ այն մարդուն՝ որ կը տոկայ փորձութեան. որովհետեւ երբ փորձարկուի եւ ընտիր գտնուի՝ պիտի ստանայ կեանքի պսակը, որ Տէրը խոստացաւ

զինք սիրողներուն: **13** Ո՛չ մէկը թող ըսէ՝ երբ կը փորձուի. «Աստուծո՛մէ՛ կը փորձուիմ». որովհետեւ Աստուած չարէն չի փորձուիր, ո՛չ ալ ինք կը փորձէ ոեւէ մէկը: **14** Սակայն իւրաքանչիւրը կը փորձուի՝ հրապուրուած ու խաբուած իր ցանկութենէն. **15** Յետոյ՝ ցանկութիւնը յղանալով մեղք կը ծնանի, իսկ երբ մեղքը կատարուի՝ մահ կը ծնանի: **16** Մի՛ մոլորիք, սիրելի՛ եղբայրներս. **17** ամէն բարի նուէր եւ ամէն կատարեալ պարգեւ՝ վերէն է, ու կ'իջնէ լոյսի Զօրմէն, որուն մէջ բնաւ փոփոխութիւն չկայ, ո՛չ ալ դառնալու շուք: **18** Ան ի՞ր փափաքով ծնաւ մեզ՝ ճշմարտութեան խօսքով, որպէսզի մենք երախայրիք մը ըլլանք իր արարածներուն: **19** Զետեւաբար, սիրելի՛ եղբայրներս, ամէն մարդ թող արագ ըլլայ՝ լսելու մէջ, դանդաղ՝ խօսելու մէջ, դանդաղ՝ բարկանալու մէջ. **20** որովհետեւ մարդուն բարկութիւնը չ'իրագործեր Աստուծոյ արդարութիւնը: **21** Ուստի, թօթափելով ամէն աղտեղութիւն ու չարամտութեան աւելցուք, հեզութեանմբ ընդունեցէք ձեր մէջ տնկուած խօսքը, որ կարող է փրկել ձեր անձերը: **22** Սակայն խօսքը գործադրողներ եղէք, եւ ո՛չ թէ միայն լսողներ՝ դուք ձեզ խաբելով: **23** Արդարեւ, եթէ մէկը միայն լսէ խօսքը ու չգործադրէ, կը նմանի մարդու մը՝ որ հայելիի մէջ կը դիտէ իր բնական երեսը, **24** որովհետեւ կը դիտէ ինքզինք ու կ'երթայ, եւ իսկոյն կը մոռնայ թէ ինչպէս էր: **25** Բայց ան որ ականկառոյց կը նայի ազատութեան կատարեալ Օրէնքին ու կը կենայ անոր մէջ, - ո՛չ թէ մոռացկոտ

լսող մը ըլլալով, հապա՛ գործը կատարող մը, - երանելի պիտի ըլլայ իր ըրածին մէջ: 26 Եթէ մէկը կը կարծէ կրօնասէր ըլլալ ու չի սանձեր իր լեզուն, այլ կը խաբէ իր սիրտը, անոր կրօնասիրութիւնը փունճ է: 27 Աստուծոյ եւ Զօրը առջեւ՝ մաքուր ու անարատ կրօնասիրութիւնը սա՛ է.- այցելել որբերուն եւ այրիներուն՝ իրենց տառապանքին մէջ, ու ինքզինք անբիծ պահել աշխարհէն:

2 Եղբայրներս, առանց աչառութեան թող ըլլայ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի՝ փառքի Տէրոջ հաւատքը: 2 Արդարեւ եթէ ձեր ժողովարանին մէջ մտնէ մարդ մը՝ ոսկիէ մատանիով ու փայլուն տարազով, եւ մտնէ նաեւ աղքատ մը՝ աղտոտ տարազով, 3 ու նայիք անոր՝ որ փայլուն տարազ կը կրէ, եւ ըսէք. «Յո՛ս նստէ՛ պատիւով», իսկ աղքատին ըսէք. «Յո՛ն ոտքի կայնէ, կամ հո՛ս նստէ՛ պատուանդանիս քով», 4 միթէ ձեր մէջ խտրութիւն դրած չէ՞ք ըլլար, ու չար մտածումներու դատաւոր եղած: 5 Լսեցէ՛ք, սիրելի՛ եղբայրներս. միթէ Աստուած չընտրե՞ց այս աշխարհի աղքատները՝ որոնք հարուստ են հաւատքով, ու ժառանգորդ արքայութեան՝ որ խոստացաւ զինք սիրողներուն: 6 Բայց դուք անպատուեցիք աղքատները: Հարուստները չէ՞ն՝ որ կը հարստահարեն ձեզ ու դատարանները կը քաշեն: 7 Անոնք չէ՞ն որ կը հայիոյեն այն բարի անունը՝ որով կոչուած էք: 8 Ուրեմն՝ եթէ դուք կը գործադրէք արքայական Օրէնքը՝ Գիրքին ըսածին համաձայն. «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ՝

պէս», լաւ կ'ընէք: **9** Բայց եթէ աչառութիւն
 կ'ընէք՝ մեղք կը գործէք, եւ կը կշտամբուիք
 Օրէնքէն՝ օրինազանցներու պէս. **10** քանի որ
 ղվ որ պահէ ամբողջ Օրէնքը սակայն սայթաքի
 մէկ քանի մէջ, պարտապան կ'ըլլայ բոլորին:
11 Արդարեւ ան որ ըսաւ. «Շնորհիւն մի՛ ըներ»,
 ըսաւ նաեւ. «Մի՛ սպաններ»: Ուստի եթէ շնորհիւն
 չընես բայց սպաննես, օրինազանց կ'ըլլաս: **12**
 Այնպէս խօսեցէք եւ այնպէս գործեցէք՝ որպէս
 թէ պիտի դատուիք ազատութեան Օրէնքով: **13**
 Որովհետեւ դատաստանը անողորմ պիտի ըլլայ
 անոր՝ որ չէ ողորմած. սակայն ողորմութիւնը կը
 պարծենայ դատաստանին դիմաց: **14** Ինչ օգուտ
 ունի, եղբայրներս, եթէ մէկը ըսէ թէ հաւատք
 ունի սակայն գործեր չունենայ. միթէ հաւատքը
 կրնայ փրկել զինք: **15** Եթէ եղբայր մը կամ քոյր մը
 մերկ ըլլայ եւ օրուան կերակուրին կարօտ, **16** ու
 ձեզմէ մէկը ըսէ անոնց. «Գացէք խաղաղութեամբ,
 տաքցէք եւ կշտացէք», բայց մարմինին հարկաւոր
 բաները չտայ անոնց, ինչ օգուտ ունի: **17** Այնպէս ալ
 հաւատքը՝ եթէ գործեր չունենայ իրեն հետ՝ մեռած
 է ինքնիր մէջ: **18** Նոյնիսկ մէկը կրնայ ըսել. «Դուն
 հաւատք ունիս, ես ալ գործեր ունիմ. ցոյց տուր
 ինծի քու հաւատքդ՝ առանց գործերու, իսկ ես ցոյց
 պիտի տամ քեզի իմ հաւատքս՝ գործերովս»: **19**
 Դուն կը հաւատաս թէ Աստուած մէկ է. լաւ կ'ընես:
 Դեւերն ալ կը հաւատան ու կը սարսռան: **20** Բայց
 կ'ուզեն զիտնայ, ղվ սնոտի մարդ, թէ հաւատքը
 մեռած է առանց գործերու: **21** Աբրահամ՝ մեր

հայրը՝ գործերով չարդարացաւ, երբ իր որդին՝ Իսահակը մատուցանեց գոհասեղանին վրայ: **22** Կը տեսնէս թէ հաւատքը գործակից եղաւ անոր գործերուն, ու գործերով հաւատքը կատարեալ եղաւ, **23** եւ իրագործուեցաւ Գիրքին խօսքը՝ որ կ'ըսէ. «Աբրահամ հաւատաց Աստուծոյ, ու ատիկա արդարութիւն սեպուեցաւ անոր, եւ ինք Աստուծոյ բարեկամ կոչուեցաւ»: **24** Կը նկատէք թէ մարդ կ'արդարանայ գործերով, ու ոչ թէ՝ միայն հաւատքով: **25** Նմանապէս Ռախաբ պոռնիկն ալ չարդարացաւ գործերով, երբ ընդունեց պատգամաւորները եւ ուրիշ ճամբայով ուղարկեց զանոնք: **26** Արդարեւ ինչպէս մարմինը մեռած է առանց հոգիի, այդպէս ալ հաւատքը մեռած է առանց գործերու:

3 Եղբայրներս, ձեր մէջ շատ վարդապետներ թող չըլլան, գիտնալով թէ աւելի խստութեամբ պիտի դատուինք՝: **2** Որովհետեւ բոլորս ալ կը սայթաքինք շատ բաներու մէջ. եթէ մէկը չի սայթաքիր խօսքով՝ կատարեալ մարդ է, կարող՝ սանձելու նաեւ ամբողջ մարմինը: **3** Ահա ձերուն բերանը սանձ կը դնենք՝ որպէսզի հնազանդին մեզի, եւ կը կառավարենք անոնց ամբողջ մարմինը: **4** Ահա նաւերն ալ, որ այդչափ մեծ են ու կը քշուին սաստիկ հովերէն, կը կառավարուին ամենափոքր դեկով մը՝ ինչպէս նաւուղիդը փափաքի: **5** Այդպէս ալ լեզուն պզտիկ անդամ մըն է, բայց կը պարծենայ մեծ բաներով: Ահա որչափ նիւթ կը վառուի

քիչ մը կրակով: **6** Լեզուն ալ կրակ մըն է, անիրաւութեան աշխարհ մը: Լեզուն այնպէս դրուած է մեր անդամներուն մէջ, որ կ'ապականէ ամբողջ մարմինը ու կը բռնկեցնէ բնութեան շրջանը, իսկ ինք կը բռնկի գեհենէն: (**Geenna 91067**) **7** Գազաններու, թռչուններու, սողուններու եւ ծովային արարածներու ամէն բնութիւն՝ կը նուաճուի ու նուաճուած է մարդկային բնութենէն: **8** Բայց ոչ մէկը կրնայ նուաճել լեզուն. ան անգուսպ չար է, լի մահաբեր թոյնով: **9** Անով կ'օրհնաբանենք Աստուած ու Հայրը, եւ անով կ'անիծենք մարդիկ՝ որ ստեղծուած են Աստուծոյ նմանութեամբ: **10** Միեւնոյն բերանէն կ'ելլեն օրհնաբանութիւն եւ անէծք: Եղբայրներս, պէտք չէ որ այս այսպէս ըլլայ: **11** Միթէ աղբիւր մը միեւնոյն ակէն կը բխեցնէ՞ անոյշ ու դառն ջուր: **12** Եղբայրներս, թզենին կրնամ ձիթապտուղ տալ, կամ որթատունկը՝ թուզ: Նմանապէս՝ ոչ մէկ աղբիւր կրնայ տալ թէ՛ աղի, թէ՛ անոյշ ջուր: **13** Ո՛վ որ իմաստուն ու խելացի է ձեր մէջ, բարի վարքով թող ցոյց տայ իր գործերը՝ իմաստութեան հեզութեամբ: **14** Բայց եթէ դառն նախանձ եւ հակառակութիւն ունենաք ձեր սիրտերուն մէջ, ճշմարտութեան դէմ մի՛ պարծենաք ու մի՛ ստէք: **15** Այս իմաստութիւնը չ'իջներ վերէն, հապա՛ երկրային, շնչաւոր եւ դիւական է: **16** Որովհետեւ ո՛ր կայ նախանձ ու հակառակութիւն, հո՛ն կայ խառնակութիւն եւ ամէն տեսակ չար բան: **17** Բայց վերէն եղող իմաստութիւնը՝ նախ անկեղծ է, յետոյ՝

խաղաղարար, ազնիւ, հլու, լի ողորմութեամբ ու բարի պտուղներով, անկողմնակալ եւ անկեղծ: 18 Արդարութեան պտուղը խաղաղութեամբ կը սերմանուի անոնց միջոցով՝ որ խաղաղութիւն կ'ընեն:

4 Ուրկէ կը ծագին պատերազմներն ու կռիւները ձեր մէջ: Միթէ չէն ծագիր ձեր կիրքերէն, որոնք կը մարտնչին ձեր անդամներուն մէջ: 2 Կը ցանկաք, բայց չունիք. կը սպաննէք ու կը նախանձիք, սակայն չէք կրնար հասնիլ ձեր ուզածին: Կը կռուիք եւ կը պատերազմիք, բայց չունիք՝ որովհետեւ չէք խնդրեր: 3 Կը խնդրէք՝ սակայն չէք ստանար, որովհետեւ կը խնդրէք չարամտօրէն՝ որպէսզի վատնէք ձեր կիրքերուն համար: 4 Շնացողներ, չէք գիտեր թէ այս աշխարհի բարեկամութիւնը՝ Աստուծոյ դէմ թշնամութիւն է. ուրեմն ճիշդ որ կը փափաքի բարեկամ ըլլալ աշխարհի, ինքզինք թշնամի կ'ընէ Աստուծոյ: 5 Կամ կը կարծէք թէ Գիրքը ընդունայն կ'ըսէ. «Նախանձի կը տենչայ մեր մէջ բնակող հոգին»՝: 6 Սակայն աւելի մեծ շնորհք մը կու տայ, ուստի կ'ըսէ. «Աստուած կ'ընդդիմանայ ամբարտաւաններուն, բայց շնորհք կու տայ խոնարհներուն»: 7 Ուրեմն հպատակեցէք Աստուծոյ: Դիմադրեցէք Չարախօսին, եւ ան պիտի փախչի ձեզմէ: 8 Մօտեցէք Աստուծոյ, եւ ան պիտի մօտենայ ձեզի: Մաքրեցէք ձեր ձեռքերը, մեղաւորներ, ու սրբացուցէք ձեր սիրտերը, երկմիտներ: 9 Չգացէք ձեր թշուառութիւնը,

սգացէք եւ լացէք. ձեր խնդուքը թող փոխուի սուգի, ու ձեր ուրախութիւնը՝ տրտմութեան: **10** Խոնարհեցէք Տէրոջ առջեւ, եւ ան պիտի բարձրացնէ ձեզ: **11** Մի բամբասէք զիրար, եղբայրներ: Ան որ կը բամբասէ իր եղբայրը կամ կը դատէ իր եղբայրը, կը բամբասէ Օրէնքը եւ կը դատէ Օրէնքը: Իսկ եթէ դատես Օրէնքը, ակ Օրէնքը գործադրող չես, հապա՝ դատաւոր: **12** Միայն մէկ Օրէնսդիր (ու Դատաւոր) կայ, որ կարող է փրկել եւ կորսնցնել: Դուն ղվ ես՝ որ կը դատես ուրիշը: **13** Հիմա գանք ձեզի՝ որ կ'ըսէք. «Այսօր կամ վաղը պիտի երթանք այսինչ բաղաքը, հոն տարի մը պիտի կենանք, առեւտուր պիտի ընենք ու պիտի շահինք»: **14** (Դուք՝ որ չէք գիտեր թէ ինչ պիտի ըլլայ վաղը: **15** Քանի որ ինչ է ձեր կեանքը. արդարեւ շոգի մըն է, որ քիչ մը ատեն կ'երեւնայ, յետոյ կ'աներեւութանայ:) Փոխարէնը ըսելու էիք. «Եթէ Տէրը կամենայ, պիտի ապրինք եւ պիտի ընենք այս կամ այն բանը»: **16** Բայց հիմա կը պարծենաք ձեր պոռոտախօսութեամբ. այդպիսի ամէն պարծանք չար է: **17** Ուրեմն ղվ որ գիտէ բարին ընել՝ բայց չ'ըներ, ատիկա մեղք է իրեն համար:

5 Հիմա գանք ձեզի՝ հարուստներ. լացէք եւ վայեցէք այն թշուառութիւններուն համար՝ որ պիտի պատահին ձեզի՝: **2** Ձեր հարստութիւնը փտած է, ու ձեր հանդերձները ցեցի կեր եղած են: **3** Ձեր ոսկին եւ արծաթը ժանգոտած են. անոնց ժանգը վկայ պիտի ըլլայ ձեզի դէմ ու կրակի

պէս պիտի ուտէ ձեր մարմինը: Գանձ դիզեցիք
 վերջին օրերուն համար. 4 սակայն ահա՛ ձեր
 արտերը քաղող գործաւորներուն վարձքը՝ որմէ
 զրկեցիք զանոնք՝ կ'աղաղակէ, եւ հնձուորներուն
 կանչը հասաւ զօրքերու Տէրոջ ականջներուն: 5
 Յեշտանքով ու ցոփութեամբ ապրեցաք երկրի
 վրայ, կերակրեցիք ձեր սիրտերը՝ որպէս թէ
 մոլորուելու օրուան համար: 6 Դատապարտեցիք,
 սպաննեցիք արդարը՝ որ չէր ընդդիմանար ձեզի: 7
 Ուրեմն համբերատար եղէք, եղբայրներ, մինչեւ
 Տէրոջ գալուստը: Ահա՛ մշակը կը սպասէ երկրի
 պատուական պտուղին՝ համբերատար ըլլալով
 անոր համար, մինչեւ որ ստանայ առաջին
 անձրեւն ու վերջին անձրեւը: 8 Դուք ալ
 համբերատար եղէք եւ ամրացուցէ՛ք ձեր սիրտերը,
 որովհետեւ Տէրոջ գալուստը կը մօտենայ: 9
 Մի՛ հառաչէք իրարու դէմ, եղբայրներ, որպէսզի
 չդատապարտուիք: Ահա՛ Դատաւորը կայնած է
 դրան առջեւ: 10 Եղբայրներս, չարչարանքներու
 եւ համբերատարութեան համար օրինակ առէք
 մարգարէներէն, որոնք խօսեցան Տէրոջ անունով:
 11 Ահա՛ երանելի կը կոչենք տոկացողները: Դուք
 լսեցիք Յոբի համբերութեան մասին, եւ տեսաք
 Տէրոջ անոր շնորհած վախճանը, որովհետեւ Տէրը
 բազմագույթ է, եւ արգահատող: 12 Բայց ամէն
 բանէ առաջ, եղբայրներս, երդու՛մ մի՛ ընէք, ո՛չ
 երկինքի վրայ, ո՛չ երկրի վրայ. ո՛չ ալ ուրիշ որեւէ
 երդում: Հապա ձեր «այո՛»ն՝ այո՛ ըլլայ, ու «ո՛չ»ը՝
 ո՛չ, որպէսզի չիյնաք դատապարտութեան տակ:

13 Ձեզմէ մէկը կը չարչարուի՛. թող աղօթէ: Մէկը
ոգեւորուած է. թող սաղմոս երգէ: 14 Ձեզմէ մէկը
հիւանդ է. թող կանչէ եկեղեցիին երէցները, եւ
անոնք թող աղօթեն իր վրայ՝ իւղով օծելով զինք
Տէրոջ անունով: 15 Հաւատքով եղած աղօթքը
պիտի փրկէ հիւանդը, եւ Տէրը ոտքի պիտի հանէ
զայն. ու եթէ մեղք ալ գործած է, պիտի ներուի անոր:
16 Խոստովանեցէ՛ք իրարու ձեր յանցանքները, եւ
աղօթեցէ՛ք իրարու համար, որպէսզի բժշկուիք:
Արդարին ներգործող աղերսանքը շատ ազդեցիկ
է: 17 Եղիա կիրթերու ենթակայ մարդ մըն էր՝ մեզի
նման: Ան աղօթեց որ անձրեւ չտեղայ, ու երկրի
վրայ անձրեւ չտեղաց երեք տարի եւ վեց ամիս: 18
Ապա դարձեալ աղօթեց, ու երկինք անձրեւ տուաւ
եւ երկիր ծաղկեցուց իր պտուղը: 19 Եղբայրներ,
եթէ ձեզմէ ոեւէ մէկը մոլորի ճշմարտութենէն, ու
մէկը վերադարձնէ զայն, 20 թող գիտնայ թէ ան՝
որ կը վերադարձնէ մեղաւորը իր մոլորութեան
ճամբայէն, կը փրկէ անձ մը մահէն, ու կը ծածկէ
մեղքերու բազմութիւն մը:

ԱՌԱՋԻՆ ՊԵՏՐՈՍԻ

1 Պետրոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ, Պոնտոսի, Գաղատիայի, Կապադովկիայի, Ասիայի ու Բիւթանիայի մէջ ցրուած գաղթականներուն, **2** որոնք ընտրուած են Յայր Աստուծոյ կանխագիտութեան համաձայն՝ Յոգիին սրբացումով, Յիսուս Քրիստոսի հնազանդութեան եւ արիւնին սրսկումին համար. շնորհք ու խաղաղութիւն թող շատնան ձեր վրայ: **3** Օրհնեալ ըլլայ Աստուած, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Յայրը, որ իր առատ ողորմութեան համաձայն վերստին ծնաւ մեզ կենարար յոյսի մը համար՝ Յիսուս Քրիստոսի մեռելներէն յարութեամբ, **4** եւ անեղծանելի, անարատ ու անթառամ ժառանգութեան մը համար՝ որ երկինքը վերապահուած է ձեզի: **5** Դուք Աստուծոյ զօրութեամբ ու հաւատքով պահպանուած էք փրկութեան համար, որ պատրաստ է յայտնուելու վերջին ատենը. **6** ուստի ցնծացէ՛ք անով, թեպէտ հիմա՝ քիչ մը ատեն, եթէ պէտք ըլլայ, կը տրտմիք բազմազան փորձութիւններով, **7** որպէսզի ձեր հաւատքին փորձը (որ կորստական ոսկիէն շատ աւելի պատուական է, թեպէտ ան կը փորձարկուի կրակով,) գտնուի գովեստով, պատիւով եւ փառքով՝ Յիսուս Քրիստոսի յայտնութեան ատենը: **8** Դուք կը սիրէք զայն՝ չտեսած. կը հաւատաք անոր՝ թեպէտ հիմա չէք տեսներ զայն, եւ կը ցնծաք անպատմելի ու փառաւոր ուրախութեամբ, **9** ստանալով ձեր անձերուն

փրկութիւնը՝ որպէս վախճանը ձեր հաւատքին:

10 Այդ փրկութիւնը փնտռեցին եւ զննեցին մարգարէները, որոնք մարգարեացան ձեզի սահմանուած շնորհքին մասին: **11** Կը զննէին թէ ինչ կամ ինչպիսի ատեն կը բացայայտէր իրենց մէջ եղած Քրիստոսի Յոգին, երբ կանխաւ կը վկայէր Քրիստոսի չարչարանքներուն եւ անոնց հետեւող փառքին մասին: **12** Անոնց յայտնուեցաւ թէ ոչ թէ իրենց՝ հապա մեզի կը սպասարկէին այն բաները, որոնք հիմա հաղորդուեցան ձեզի անոնց միջոցով՝ որ աւետարանեցին ձեզի երկինքէն դրկուած Սուրբ Յոգիով: Այդ բաներուն է որ հրեշտակները կը ցանկան ակնկառոյց նայիլ:

13 Ուստի գօտեպնդեցէք ձեր միտքին մէջքը, զգանստ եղէք, ու կատարելապէս յուսացէք այն շնորհքին՝ որ պիտի տրուի ձեզի Յիսուս Քրիստոսի յայտնութեան ատենը: **14** Հնազանդ զաւակներու պէս՝ մի համակերպիք ձեր անգիտութեան ատենուան նախկին ցանկութիւններուն: **15** Հապա, ինչպէս ձեզ կանչողը սուրբ է, որոք ալ սուրբ եղէք ձեր ամբողջ վարքին մէջ: **16** Որովհետեւ գրուած է. «Սուրբ եղէք, քանի որ ես սուրբ եմ»: **17** Եթէ Հայր կը կոչէք ան՝ որ առանց աչառութեան կը դատէ իւրաքանչիւրին արարքին համեմատ, երկիւղածութեանը ընթացէք հոս՝ ձեր պանդխտութեան ժամանակ: **18** Որովհետեւ դուք գիտէք թէ ոչ թէ ապականացու արծաթով կամ ոսկիով ազատագրուեցաք ձեր հայրերէն աւանդուած փուճ վարքէն, **19** հապա Քրիստոսի

պատուական արիւնով՝ որպէս անարատ եւ անբիծ
 գառի մը արիւնը: 20 Արդարեւ ան նախապէս
 ճանչցուած էր՝ աշխարհի հիմնադրութենէն
 առաջ, բայց այս վերջին ժամանակները երեւցաւ
 ձեզի համար: 21 Անոր միջոցով հաւատացիք
 Աստուծոյ, որ մեռելներէն յարուցանեց զայն
 եւ փառաւորեց զայն, որպէսզի ձեր հաւատքն
 ու յոյսը ըլլան Աստուծոյ վրայ: 22 Մաքուր
 սիրտով՝ ջերմեռանդութեամբ սիրեցէք զիրար,
 քանի որ մաքրագործեցիք ձեր անձերը անկեղծ
 եղբայրսիրութեան համար՝ ճշմարտութեան
 հնազանդելով Յոգիին միջոցով, 23 ու վերստին
 ծնած ըլլալով՝ ոչ թէ ապականացու հունտէն,
 հապա՝ անապականէն - Աստուծոյ խօսքով՝
 որ կ'ապրի ու կը մնայ յաւիտեան: (aiԹո g165) 24
 Արդարեւ «ամէն մարմին խոտի պէս է, ու մարդուն
 ամբողջ փառքը՝ խոտի ծաղիկի պէս. խոտը կը
 չորնայ եւ անոր ծաղիկը կը թափի, 25 բայց Տէրոջ
 խօսքը կը մնայ յաւիտեան»: Եւ այս խօսքն է՝ որ
 աւետարանուեցաւ ձեզի: (aiԹո g165)

2 Ուրեմն, թօթափելով ամէն չարամտութիւն
 եւ ամէն նենգութիւն, կեղծաւորութիւնները,
 նախանձներն ու բոլոր բամբասանքները, 2
 նորածին երախաներու պէս տենչացէք Աստուծոյ
 խօսքին անխարդախ կաթին, որպէսզի աճիք անով
 (մինչեւ փրկութիւնը), 3 եթէ համոտեսած էք Տէրոջ
 քաղցր ըլլալը: 4 Մօտեցէք անոր՝ ապրող քարին, որ
 արդարեւ մարդոցմէ մերժուած է, բայց Աստուծմէ
 ընտրուած ու պատուական է: 5 Դ՛հրէք ալ՝ ապրող

քարերու պէս՝ կը շինուիք իբր հոգեւոր տաճար մը,
 սուրբ քահանայութիւն մը, որպէսզի մատուցանէք
 հոգեւոր զոհեր, Աստուծոյ ընդունելի՝ Յիսուս
 Քրիստոսի միջոցով: **6** Որովհետեւ Գիրքին մէջ
 ալ կայ. «Ահա՛ Սիոնի մէջ կը դնեմ ծայրագոյն
 անկիւնաքար մը, ընտիր ու պատուական, եւ ճվ որ
 հաւատայ անոր՝ բնաւ ամօթահար պիտի չըլլայ»:
7 Ուրեմն ձեզի՝ որ կը հաւատաք՝ պատուական
 է ան, իսկ անհնազանդներուն համար՝ «այն
 քարը՝ որ կառուցանողները մերժեցին, անիկա՛
 եղաւ անկիւնաքարը, **8** ու սայթաքումի քար
 եւ գայթակղութեան ժայռ» անոնց՝ որ խօսքին
 անհնազանդ ըլլալով կը գայթին, որուն համար
 ալ որոշուած էին: **9** Բայց դուք ընտրուած
 ցեղ մըն էք, թագաւորական քահանայութիւն
 մը, սուրբ ազգ մը, սեփական ժողովուրդ մը,
 որպէսզի հռչակէք առաքինութիւնները անոր՝
 որ կանչեց ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին:
10 Ժամանակին ժողովուրդ չէիք, բայց հիմա
 Աստուծոյ ժողովուրդն էք. առանց ողորմութեան
 էիք, բայց հիմա ողորմութիւն գտաք: **11**
 Սիրելիներ, կ'աղաչեմ ձեզի, պանդուխտներու եւ
 գաղթականներու պէս՝ ետ կեցէք մարմնաւոր
 ցանկութիւններէն, որոնք կը մարտնչին անձին
 դէմ: **12** Պարկէշտ վարք ունեցէք հեթանոսներուն
 մէջ, որպէսզի՝ այն բանին համար որ կը
 բամբասեն ձեզ իբր չարագործներ, այցելութեան
 օրը փառաւորեն Աստուած՝ տեսնելով ձեր
 բարի գործերը: **13** Ուստի հպատակեցէ՛ք ամեն

մարդկային հաստատութեան՝ Տէրոջ համար. ըլլայ թագաւորին՝ որպէս բարձրագոյնին, 14 ըլլայ կառավարիչներուն՝ որպէս անոր կողմէն ղրկուածներու, վրէժ առնելու չարագործներէն եւ գովելու բարեգործները: 15 Որովհետեւ Աստուծոյ կամքն է որ պապանձեցնէք անմիտ մարդոց անգիտութիւնը՝ բարիք գործելով, 16 ըլլալով ազատ բայց գործածելով ձեր ազատութիւնը ոչ թէ որպէս չարամտութեան ծածկոց, հապա՝ իբր Աստուծոյ ծառաներ: 17 Պատուեցէք բոլորը. սիրեցէք եղբայրները. վախցէք Աստուծմէ. պատուեցէք թագաւորը: 18 Ծառաներ, հպատակեցէք ձեր տէրերուն ամբողջ երկիւղածութեամբ. ոչ միայն բարիներուն եւ ազնիւներուն, այլ նաեւ կամակորներուն: 19 Քանի որ եթէ մէկը՝ Աստուծոյ հանդէպ բարի խղճմտանքով՝ տոկայ անիրաւօրէն չարչարուելու տրտմութեան, ասիկա շնորհիք մըն է: 20 Արդարեւ գովեստի արժանի ինչ կայ, եթէ տոկաք՝ մինչ կը կռփահարուիք մեղանչած ըլլալով: Բայց եթէ տոկաք՝ մինչ կը չարչարուիք բարիք գործած ըլլալով, ասիկա շնորհիք մըն է Աստուծոյ բով: 21 Քանի որ դուք կանչուեցաք այս բանին համար, որովհետեւ Քրիստոս ալ չարչարուեցաւ ձեզի համար եւ օրինակ թողուց ձեզի՝ որպէսզի հետեւիք իր հետքերուն: 22 Ան մեղք չգործեց, ոչ ալ նենգութիւն գտնուեցաւ անոր բերանին մէջ: 23 Երբ կը հեգնուէր, փոխարէնը չէր հեգներ. կը չարչարուէր, բայց չէր սպառնար, հապա կը

յանձներ ինքզինք արդարութեամբ դատողին: 24
Ի՞նք քաւեց մեր մեղքերը խաչափայտին վրայ՝
իր մարմինով, որպէսզի՝ զերծ ըլլալով մեղքէն՝
ապրինք արդարութեան համար: Դուք անոր
վերքերով բժշկուեցաք. 25 որովհետեւ մոլորեալ
ոչխարներու պէս էիք, բայց հիմա վերադարձաք
ձեր անձերուն Յովիւին եւ Տեսուչին:

3 Նմանապէս դուք, կիներ, հպատակեցէ՛ք ձեր
ամուսիններուն, որպէսզի եթէ նոյնիսկ ոմանք
չանսան խօսքին, շահուին առանց խօսքի՝
կիներուն վարքով, 2 մինչ կը տեսնեն ձեր
մաքրակենցաղ ու երկիւղած վարքը: 3 Ձեր
գարդարանքը թող չըլլայ դուրսէն՝ մազերու
հիւսքերով, ոսկիներու շարքերով կամ շքեղ
հանդերձներ հագնելով, 4 հապա ձեր գարդը
թող ըլլայ սիրտին ծածուկ մարդը, հեզ եւ
հանդարտ հոգիի մը անապականութեամբ,
ինչ որ թանկագին է Աստուծոյ առջեւ: 5
Որովհետեւ ժամանակին սուրբ կիներն ալ,
որոնք կը յուսային Աստուծոյ, այսպէս կը
գարդարէին իրենք զիրենք՝ հպատակելով իրենց
ամուսիններուն, 6 ինչպէս Սառա կը հնազանդէր
Աբրահամի՝ տէր կոչելով զայն: Դուք անոր
զաւակներն էք, քանի բարիք կը գործէք ու չէք
վախնար որեւէ սարսափէ: 7 Նմանապէս դուք,
ամուսիններ, գիտակցելով բնակեցէ՛ք անոնց
հետ, պատուելով կիները իբր աւելի տկար
անօթներ եւ կեանքի շնորհքին ժառանգակիցներ,
որպէսզի ձեր աղօթքները չընդհատուին: 8

Վերջապէս, բոլորդ եղէք համախոհ, կարեկից, եղբայրասէր, գթած ու բարեսիրտ: **9** Չարիքի փոխարէն չարիք մի հատուցանէք, կամ հեզնանքի փոխարէն՝ հեզնանք. այլ ընդհակառակը՝ օրհնեցէք, գիտնալով թէ ատոր համար կանչուեցաք, որպէսզի օրհնութիւն ժառանգէք: **10** Որովհետեւ «ան որ կ'ուզէ կեանքը սիրել ու բարի օրեր տեսնել, թող դադրեցնէ իր լեզուին չարախօսութիւնը, եւ իր շրթունքը խաբէութիւն թող չխօսի: **11** Չարութենէ թող հեռանայ ու բարիք գործէ. խաղաղութիւն թող փնտռէ եւ անոր հետամուտ ըլլայ: **12** Որովհետեւ Տէրոջ աչքերը արդարներուն վրայ են, ու իր ականջները բաց են անոնց աղերսանքին. բայց Տէրոջ երեսը չարագործներուն դէմ է»: **13** Եւ ո՞վ պիտի չարչարէ ձեզ՝ եթէ դուք նմանիք բարիին: **14** Բայց նոյնիսկ եթէ չարչարուիք արդարութեան համար՝ երանելի էք, եւ մի վախնաք անոնց ահէն, ու մի վրդովիք: **15** Հապա սրբացուցէք Տէր Աստուածը ձեր սիրտերուն մէջ, եւ միշտ պատրաստ եղէք հեզութեամբ ու երկիւղածութեամբ ջատագովական ներկայացնելու ամէն մէկուն՝ որ կը խնդրէ ձեզմէ ձեր մէջ եղած յոյսին պատճառը. **16** բարի խղճմտանք ունեցէք, որպէսզի՝ այն բանին համար որ կը բամբասեն ձեզ իբր չարագործներ, ամօթահար ըլլան անոնք՝ որ կը պախարակեն Քրիստոսով եղած ձեր բարի վարքը: **17** Որովհետեւ ակելի լաւ է չարչարուիլ - եթէ այդ է Աստուծոյ կամքը - բարիք ընելով, քան թէ չարիք

ընելով: **18** Արդարեւ Քրիստոսն ալ մէկ անգամ չարչարուեցաւ՝ մեղքերու համար, Արդարը՝ անարդարներուն համար, որպէսզի մօտեցնէ մեզ Աստուծոյ: Ան մարմինով մեռցուեցաւ, բայց Հոգիով կեանք ստացաւ, **19** եւ անով ալ գնաց ու քարոզեց բանտի մէջ եղած հոգիներուն: **20** Անոնք ժամանակին անհնազանդ եղան, երբ Աստուծոյ համբերատարութիւնը կը սպասէր անոնց՝ Նոյի օրերը, մինչ տապանը կը կերտուէր: Անոր մէջ քիչեր, այսինքն ութ անձ, փրկուեցան ջուրէն: **21** Անոր կրկնատիպը եղող մկրտութիւնն ալ հիմա կը փրկէ մեզ, (որչ թէ մարմինին աղտը լքելը, հապա Աստուծոյ հանդէպ բարի խղճմտանքի մը յանձնառութիւնը,) Յիսուս Քրիստոսի յարութեամբ: **22** Ան երկինք գացած՝ Աստուծոյ աջ կողմն է, եւ հրեշտակները, իշխանութիւններն ու զօրութիւնները հպատակած են իրեն:

4 Ուրեմն, քանի որ Քրիստոս չարչարուեցաւ մեզի համար՝ մարմինով, որւք ալ զինուեցէք նոյն մտադրութեամբ: Որովհետեւ ան որ չարչարուած է մարմինով՝ դադրած է մեղանչելէ, **2** որպէսզի՝ իր մարմինին մէջ մնացած ժամանակը՝ այլեւս ապրի որչ թէ մարդոց ցանկութիւններուն համաձայն, հապա՝ Աստուծոյ կամքին համաձայն: **3** Որովհետեւ կը բաւէ մեզի գործադրած ըլլալ հեթանոսներուն կամքը՝ մեր կեանքին անցած ժամանակը, երբ կ'ընթանայինք ցոփութիւններու, ցանկութիւններու, զինեմոյութիւններու, զեխութիւններու, արբեցութիւններու եւ անօրէն

կռապաշտութիւններու մէջ: **4** Անոնք տարօրինակ
կը սեպեն, որ դուք չէք սուրար իրենց հետ
դէպի նոյն անառակութեան ծայրայեղութիւնը,
ու կը հայհոյեն ձեզի: **5** Անոնք հաշիւ պիտի
տան անոր՝ որ պատրաստ է դատել ողջերն
ու մեռելները. **6** քանի որ սա նպատակով
մեռելներուն ալ աւետարանուեցաւ, որպէսզի
դատուին մարմինով՝ մարդոց համեմատ, իսկ
ապրին հոգիով՝ Աստուծոյ համաձայն: **7** Սակայն
ամէն քանի վախճանը մօտեցած է. ուրեմն
խոհեմ եղէք, եւ արթուն կեցէք՝ աղօթելու
համար: **8** Ամէն քանէ առաջ՝ ջերմեռանդ սեր
ունեցէք իրարու հանդէպ. որովհետեւ սերը կը
ծածկէ մեղքերու բազմութիւնը: **9** Հիւրասէր
եղէք իրարու հանդէպ՝ առանց տրտնջելու: **10**
Քանի ձեզմէ իւրաքանչիւրը ստացած է շնորհ
մը, սպասարկեցէք զայն իրարու՝ Աստուծոյ
բազմազան շնորհքին բարի տնտեսներուն
պէս: **11** Եթէ մէկը խօսի, թող խօսի Աստուծոյ
պատգամներուն պէս. եթէ մէկը սպասարկէ,
թող սպասարկէ Աստուծոյ հայրայթած ոյժին
համեմատ. որպէսզի ամէն քանի մէջ Աստուած
փառաւորուի Յիսուս Քրիստոսի միջոցով, որուն
կը պատկանին փառքն ու գօրութիւնը դարեւ
դար՝: Ամէն: **(aiōn g165)** **12** Սիրելիներ, տարօրինակ
մի՛ սեպէք այն փորձութեան հրդեհը, որ կ'ըլլայ
ձեզ փորձելու համար, որպէս թէ օտար բան մը կը
պատահի ձեզի: **13** Հապա ուրախացէ՛ք՝ քանի որ
կը հաղորդակցիք Քրիստոսի չարչարանքներուն,

որպէսզի անոր փառքի յայտնութեան ատենն ալ ուրախանաք ցնծութեամբ: **14** Եթէ նախատուիք Քրիստոսի անունին համար՝ երանելի էք, որովհետեւ փառքի (ու զօրութեան) եւ Աստուծոյ Հոգին հանգչած է ձեր վրայ. արդարեւ ան կը հայիոյուի անոնցմէ, բայց կը փառաւորուի ձեզմէ՝: **15** Ձեզմէ ոչ մէկը թող չարչարուի իբր մարդասպան, կամ գող, կամ չարագործ, կամ իբր ուրիշին միջամուխ: **16** Սակայն եթէ չարչարուի իբր քրիստոնեայ՝ թող չամչնայ, հապա թող փառաւորէ Աստուած այս մասին: **17** Որովհետեւ ատենը եկած է՝ որ դատաստանը սկսի Աստուծոյ տունէն: Ու եթէ նախ սկսի մեզմէ, հապա ինչ պիտի ըլլայ վախճանը անոնց՝ որ չեն անսար Աստուծոյ աւետարանին: **18** Եթէ արդարը հազիւ կը փրկուի, ինչ պիտի ըլլան՝ ամբարիշտն ու մեղաւորը: **19** Հետեւաբար, անոնք որ կը չարչարուին Աստուծոյ կամքին համաձայն, բարիք գործելով թող աւանդեն իրենց անձերը անոր՝ իբր հաւատարիմ Արարիչին:

5 Կը յորդորեմ ձեր մէջ եղող երեցները, նս ալ ըլլալով երեց իրենց պէս, Քրիստոսի չարչարանքներուն վկայ, նաեւ հաղորդակից այն փառքին՝ որ պիտի յայտնուի.- **2** հովուեցէք Աստուծոյ հօտը՝ որ ձեր մէջ է, տեսուչ ըլլալով՝ ոչ թէ հարկադրաբար, հապա՝ կամովին. ոչ թէ ամօթալի շահախնդրութեամբ, հապա՝ յօժարութեամբ. **3** ոչ ալ տիրապետելով թեմին վրայ, հապա՝ տիպար ըլլալով հօտին. **4** ու երբ Հովուապետը

երեւնայ, պիտի ստանաք փառքի անթառամ պսակը: 5 Նմանապէս դուք, դեռատիներ, հպատակեցէք տարեցներուն: Բոլորդ իրարու հպատակելով՝ խոնարհութիւն հագէք. որովհետեւ «Աստուած կ'ընդդիմանայ ամբարտաւաններուն, բայց շնորհք կու տայ խոնարհներուն»: 6 Ուրեմն խոնարհեցէք Աստուծոյ հզօր ձեռքին տակ, որպէսզի ժամանակին բարձրացնէ ձեզ: 7 Ձեր ամէն հոգը ձգեցէք անոր վրայ, որովհետեւ ան կը հոգայ ձեզ: 8 Չգնատ եղէք, արթուն կեցէք. որովհետեւ ձեր ոսոխը՝ Չարախօսը՝ կը շրջի մոնչող առիւծի պէս, փնտռելով թէ ո՞վ կ'լլէ: 9 Դիմադրեցէք անոր՝ ամուր հաւատքով, գիտնալով թէ ձեր եղբայրներն ալ աշխարհի մէջ կը կրեն նոյն չարչարանքները: 10 Եւ ամէն շնորհքի Աստուածը, որ իր յաւիտենական փառքին կանչեց մեզ Քրիստոս Յիսուսի միջոցով, ձեզ կատարեալ պիտի ընէ, ամրացնէ, ուժովցնէ եւ անսասան հիմերու վրայ դնէ, երբ չարչարուիք քիչ մը ատեն: (aiōnios g166) 11 Իրեն եւն փառքը եւ զօրութիւնը դարձէ դարձ: Ամէն: (aiōn g165) 12 Սիդուանոսի միջոցով, որ՝ ինչպէս կը սեպեմ՝ հաւատարիմ եղբայր մըն է, գրեցի ձեզի համառօտաբար, յորդորելով ու վկայելով թէ այս է Աստուծոյ ճշմարիտ շնորհքը, որուն մէջ հաստատ կեցած էք: 13 Կը բարեւէ ձեզ Բաբելոնի մէջ եղած եկեղեցին, որ ընտրուած է ձեզի հետ, նաեւ Մարկոս՝ իմ որդիս: 14 Բարեւեցէք զիրար սիրոյ համբոյրով: Խաղաղութիւն ձեր բոլորին՝ որ Քրիստոս Յիսուսի մէջ էք: Ամէն:

ԵՐԿՐՈՐԴ ՊԵՏՐՈՍԻ

1 Սիմոն Պետրոս, ծառայ եւ առաքեալ Յիսուս Քրիստոսի, անոնց՝ որոնց վիճակուած է նոյն պատուական հաւատքը մեզի հետ, Աստուծոյ ու մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի արդարութեամբ. **2** շնորհք եւ խաղաղութիւն թող շատնան ձեր վրայ Աստուծոյ եւ մեր Տէրոջ՝ Յիսուսի ճանաչումով: **3** Արդարեւ իր աստուածային զօրութիւնը պարգեւեց մեզի ամեն ինչ՝ որ կը վերաբերի կեանքի ու բարեպաշտութեան, ճանչցնելով ան՝ որ կանչեց մեզ փառքի եւ առաքինութեան: **4** Ասոնցմով ամենամեծ ու պատուական խոստումներ պարգեւուած են մեզի, որպէսզի անոնցմով հաղորդակցիք աստուածային բնութեան՝ փախչելով ապականութենէն, որ ցանկութենէն յառաջացած է աշխարհի մէջ: **5** Ասոր համար ալ՝ ամբողջ փութաջանութեամբ աւելցուցէք ձեր հաւատքին վրայ առաքինութիւն, առաքինութեան վրայ՝ գիտութիւն, **6** գիտութեան վրայ՝ ժուժկալութիւն, ժուժկալութեան վրայ՝ համբերութիւն, համբերութեան վրայ՝ բարեպաշտութիւն, **7** բարեպաշտութեան վրայ՝ եղբայրսիրութիւն, ու եղբայրսիրութեան վրայ՝ սէր: **8** Որովհետեւ եթէ այս բաները ըլլան ձեր մէջ եւ աւելնան, անգործ ու անպտուղ չեն ըներ ձեզ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի ճանաչումով: **9** Բայց ան՝ որուն մէջ այս բաները չկան՝ կոյր է, կարճատես, եւ մոռցած է իր հին մեղքերէն մաքրուած ըլլալը: **10** Ուստի, եղբայրներ,

առաւելապէս ջանացէ՛ք՝ որ հաստատէք ձեր կոչումն ու ընտրութիւնը, որովհետեւ ասիկա ընելով՝ բնաւ պիտի չսայթաքիք. **11** արդարեւ այսպէս է որ ճոխութեամբ պիտի հայթայթուի ձեզի մեր Տէրոջ ու Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի յաւիտենական թագաւորութեան մուտքը: (*aiōnios g166*) **12** Ուստի երբեք անհոգ պիտի չըլլամ միշտ յիշեցնելու ձեզի այս բաները, թէպէտ գիտէք եւ ամրացած էք ներկայ ճշմարտութեան մէջ: **13** Իրաւացի կը համարեմ, այնքան ատեն որ այս մարմինին մէջ եմ, յիշեցնելով ձեզ արթուն պահել, **14** գիտնալով թէ շուտով պիտի լքեմ այս մարմինս, ինչպէս մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս բացայայտեց ինծի: **15** Ուստի պիտի ջանամ որ միշտ յիշէք այս բաները՝ այս աշխարհէն մեկնելէս ետքն ալ: **16** Արդարեւ մենք չհետեւեցանք յերկրածոյ առասպելներու, երբ գիտցուցինք ձեզի մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի գորութիւնն ու գալուստը, հապա ականատես եղանք անոր մեծափառութեան: **17** Որովհետեւ ինք պատիւ եւ փառք ստացաւ Հայր Աստուծմէ, երբ այն մեծավայելուչ փառքէն այսպիսի ձայն մը եկաւ իրեն. «Այս է իմ սիրելի Որդիս՝ որուն ես հաճեցայ»: **18** Ու մենք լսեցինք երկինքէն եկած այս ձայնը, երբ անոր հետ էինք սուրբ լերան վրայ: **19** Նաեւ ունինք մարգարէական խօսքը՝ որ աւելի հաստատուն է, ու նպաստաւոր է՝ ուշադիր ըլլալ անոր, որպէս թէ մութ տեղը լուսաւորող ճրագի մը, մինչեւ որ օրը լուսնայ եւ արուսեակը

ծագի ձեր սիրտերուն մէջ: 20 Բայց նախ սա՛
գիտցէ՛ թէ Գիրքերուն ո՛չ մէկ Մարգարեութիւնը
ունի իր յատուկ մեկնութիւնը. 21 որովհետեւ
Մարգարեութիւնը երբեք չտրուեցաւ մարդոց
կամքին համաձայն, հապա Աստուծոյ սուրբ
մարդիկը խօսեցան՝ մղուած Սուրբ Յոգիէն:

2 Բայց նաեւ սուտ մարգարէներ կային
ժողովուրդին մէջ, ինչպէս ձեր մէջ ալ պիտի
ըլլան սուտ վարդապետներ, որոնք գաղտնի
պիտի ներմուծեն կորստաբեր հերձուածներ,
եւ ուրանալով զիրենք գնող Տէրը՝ արագահաս
կորուստ պիտի բերեն իրենց վրայ: 2 Շատեր պիտի
հետեւին անոնց կորստաբեր ճամբաներուն՝, եւ
անոնց պատճառով ճշմարտութեան ճամբան
պիտի հայհոյուի: 3 Անոնք ազահուլեամբ
ու շինծու խօսքերով պիտի շահագործեն
ձեզ. սակայն անոնց դատաստանը՝ վաղուց
պատրաստ ըլլալով՝ անգործ չէ, եւ անոնց
կորուստը չի մրափեր: 4 Արդարեւ Աստուած
չխնայեց մեղանչած հրեշտակներուն, հապա
նետեց տարտարոսը ու մատնեց մթութեան
կապանքներուն՝ դատաստանի վերապահելու
համար: (Tartaroօ g5020) 5 Նաեւ չխնայեց նախկին
աշխարհին. բայց պահեց Նոյը՝ ուրերորդ անձը,
արդարութեան քարոզիչը, երբ ջրհեղեղը բերաւ
ամբարիշտներու աշխարհին վրայ: 6 Մոխիի
վերածելով Սողոմի ու Գոմորի քաղաքները՝
դատապարտեց զանոնք կործանումով, եւ
օրինակ դարձուց յետագայ ամբարիշտներուն. 7

սակայն ազատեց արդար Ղովտը, որ ընկճուած էր անօրէններուն շուայտ վարքէն: 8 (Որովհետեւ անոնց մէջ բնակող այդ արդարը, տեսնելով ու լսելով անոնց անօրէն գործերը, օրէ օր կը տանջէր իր արդար անձը:) 9 Տէրը գիտէ բարեպաշտները ազատել փորձութենէ, եւ անարդարները վերապահել դատաստանի օրուան՝ պատուհասի համար. 10 մանաւանդ անոնք՝ որ կ'ընթանան մարմինի ետեւէն՝ պղծութեան ցանկութեամբ, ու կ'արհամարհեն տէրութիւնը: Յանդուգն եւ ինքնահաւան ըլլալով՝ չեն դողար փառաւորներուն հայիոյելով, 11 մինչդեռ հրեշտակները՝ որ անոնցմէ աւելի մեծ են ոյժով ու կարողութեամբ՝ Տէրոջ առջեւ հայիոյալից դատավճիռ չեն արձակեր՝ անոնց դէմ: 12 Իսկ ասոնք կը հայիոյեն իրենց չգիտցած բաները. սակայն բնութեան անբան կենդանիներուն պէս, (որոնք եղած են որսի եւ ապականութեան համար,) պիտի ապականին իրենց ապականութեան մէջ, 13 ստանալով անիրաւութեան վարձատրութիւնը: Ասոնք ցերեկուան մէջ եղած հեշտանքը հաճոյք կը համարեն: Բիծ ու արատ են, զուարճանալով իրենց խաբէութիւններով՝ մինչ խրախճանք կ'ընեն ձեզի հետ: 14 Շնութեամբ լի աչքեր ունին, որոնք երբեք չեն դադրիր մեղանչելէ՝ խաբելով անհաստատ անձերը: Ազահութեան վարժուած սիրտ ունին, եւ անիծեալ զաւակներ են: 15 Ուղիղ ճամբան ձգելով մոլորեցան՝ հետեւելով Բեովրեան Բաղաամի ճամբային,

որ սիրեց անհրաւութեան վարձքը. 16 բայց կշտամբուեցաւ իր օրինազանցութեան համար, երբ մունջ էշը՝ խօսելով մարդկային ձայնով՝ արգիլեց մարգարէին անմտութիւնը: 17 Ասոնք անջուր աղբիւրներ են, ու փոթորիկէն բշուած ամպեր, որոնց վերապահուած է խաւարին մթութիւնը յաւիտեան: (questioned) 18 Քանի որ երբ կը խօսին ունայնութեան յոխորտաբանութիւններ, մարմինի ցանկութիւններով, ցոփութիւններով կը խաբեն անոնք՝ որ հազիւ փախեր էին մոլորութեան մէջ ընթացողներէն: 19 Ազատութիւն կը խոստանան անոնց, մինչդեռ իրենք ստրուկներ են ապականութեան. որովհետեւ մէկը ինչ բանէ որ պարտուի, ստրուկ կ'ըլլայ անոր: 20 Արդարեւ եթէ իրենք, փախչելէ ետք աշխարհի պղծութիւններէն՝ Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի ճանաչումով, դարձեալ կաշկանդուին ու պարտուին անոնցմէ, իրենց վախճանը աւելի գէշ կ'ըլլայ առաջին վիճակէն: 21 Որովհետեւ աւելի լաւ կ'ըլլար իրենց՝ որ բնաւ չգիտնային արդարութեան ճամբան, քան թէ՝ գիտնալէ ետք՝ հեռանային իրենց աւանդուած սուրբ պատուիրանէն: 22 Սակայն իրենց պատահեցաւ ինչ որ ճշմարիտ առակը կ'ըսէ. «Շունը կը վերադառնայ իր փսխածին, ու լուացուած խոզը՝ ցեխին մէջ թաւալելու»:

3 Սիրելիներ, այս երկրորդ նամակն է որ կը գրեմ ձեզի: Երկուքին մէջ ալ՝ յիշեցնելով արթուն կը պահեմ ձեր անկեղծ միտքը, 2 որպէսզի յիշէք սուրբ մարգարէներուն նախապէս ըսած խօսքերը, նաեւ

մեր՝ այսինքն Տէրոջ ու Փրկիչին առաքեալներուն պատուէրը: 3 Նախ սա՛ գիտցէ՛ թէ վերջին օրերը պիտի գան ծաղրողներ, որոնք պիտի ընթանան իրենց սեփական ցանկութիւններուն համաձայն 4 եւ պիտի ըսեն. «Ո՛ր է անոր գալուստին խոստումը, որովհետեւ հայրերուն ննջելէն ի վեր՝ ամէն բան կը մնայ անյալէս, ինչպէս որ էր արարչութեան սկիզբը»: 5 Քանի որ անոնք կ'ուզեն սա՛ թաքուն պահել, թէ երկինք վաղուց կար Աստուծոյ խօսքով, ու երկիր միասին կանգուն էր՝ ջուրերէն եւ ջուրերուն մէջտեղ: 6 Անով կորսուեցաւ այն ատենուան աշխարհը՝ ջրհեղեղով: 7 Իսկ երկինքն ու երկիրը որ կան հիմա՝ պահեստի դրուած են նոյն խօսքով, վերապահուած կրակի համար՝ մինչեւ դատաստանին եւ ամբարիշտ մարդոց կորուստին օրը: 8 Բայց, սիրելիներ, սա՛ մէկ բանը թող թաքուն չմնայ ձեզմէ, թէ Տէրոջ բով՝ մէկ օրը հազար տարուան պէս է, ու հազար տարին՝ մէկ օրուան պէս: 9 Տէրը չի յապաղիր իր խոստումը գործադրելու մէջ, ինչպէս ոմանք յապաղած կը համարեն, հապա՛ համբերատար է մեզի հանդէպ. որովհետեւ կը փափաքի որ ոչ մէկը կորսուի, հապա՛ բոլորը ընդունին ապաշխարութիւնը: 10 Սակայն Տէրոջ օրը պիտի գայ գողի պէս: Այդ ատեն երկինքը պիտի անցնի շառաչիւնով, տարրերը բռնկելով պիտի անջատուին, իսկ երկիրը եւ անոր մէջ եղող գործերը պիտի այրուին: 11 Ուրեմն, քանի որ այս բոլոր բաները պիտի լուծուին,

ինչպիսի մարդիկ պետք է ըլլաք՝ սուրբ վարքով ու բարեպաշտութեամբ, **12** սպասելով եւ փութալով Աստուծոյ օրուան գալուստին, երբ հրավառ երկինքը պիտի լուծուի, ու տարրերը բռնկելով պիտի հալին: **13** Սակայն մենք՝ իր խոստումին համաձայն՝ կը սպասենք նոր երկինքի մը եւ նոր երկրի մը, որոնց մէջ արդարութիւնը կը բնակի: **14** Ուստի, սիրելիներ, սպասելով ասոնց՝ փութացէ՛ք որ ան գտնէ ձեզ խաղաղութեան մէջ, անբիծ եւ անարատ. **15** փրկութիւն համարեցէ՛ք մեր Տէրոջ համբերատարութիւնը, ինչպէս մեր սիրելի եղբայրը՝ Պօղոս ալ գրեց ձեզի, իրեն տրուած իմաստութեամբ: **16** Բոլոր նամակներուն մէջ ալ կը խօսի այս բաներուն մասին. անոնց մէջ կան քանի մը դժուարիմաց խօսքեր, որ տգետներն ու անհաստատները կը խեղաթիւրեն՝ ինչպէս միւս Գիրքերն ալ՝ իրենց սեփական կորուստին համար: **17** Ուրեմն դժբ, սիրելիներ, կանխաւ գիտնալով այս բաները, զգուշացէ՛ք որ չիյնաք ձեր ամրութենէն՝ տարուած անօրէններուն մոլորութենէն: **18** Հապա աճեցէ՛ք շնորհքով, եւ մեր Տէրոջ ու Փրկիչին՝ Յիսուս Զրիստոսի գիտութեամբ: Անոր փանք թէ՛ հիմա, թէ՛ մինչեւ յաւիտենական օրը: Ամէն: (aiōn g165)

ԱՌԱՋԻՆ ՅՈՎՅԱՆՆՈՒ

1 Կեանքի Խօսքին մասին - որ սկիզբէն էր, որ մենք լսեցինք, որ մեր աչքերով տեսանք, որ դիտեցինք ու մեր ձեռքերը շօշափեցին. **2** (արդարեւ կեանքը յայտնուեցաւ, մենք տեսանք զայն, եւ կը վկայենք ու կը պատմենք ձեզի այդ յաւիտենական կեանքին մասին, որ Զօրը քով էր եւ յայտնուեցաւ մեզի.) - (*aiōnios g166*) **3** Ինչ որ տեսանք ու լսեցինք՝ կը պատմենք ձեզի, որպէսզի դժբաղ Եւ Կը գրենք ձեզի այս բաները, որպէսզի ձեր ուրախութիւնը լման ըլլայ: **5** Եւ սա է այն պատգամը՝ որ լսեցինք իրմէ ու կը հաղորդենք ձեզի, թէ Աստուած լոյս է, եւ անոր մէջ բնաւ խաւար չկայ: **6** Եթէ ըսենք. «Մենք հաղորդութիւն ունինք անոր հետ», սակայն խաւարի մէջ ընթանանք, կը ստենք ու չենք կիրարկել ճշմարտութիւնը: **7** Իսկ եթէ լոյսի մէջ ընթանանք, ինչպէս ան լոյսի մէջ է, հաղորդութիւն կ'ունենանք իրարու հետ, եւ անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի արիւնը կը մաքրէ մեզ ամէն մեղքէ: **8** Եթէ ըսենք. «Մենք մեղք մը չունինք», կը խաբենք մենք մեզ, ու ճշմարտութիւն չկայ մեր մէջ: **9** Իսկ եթէ խոստովանինք մեր մեղքերը, ան հաւատարիմ եւ արդար է՝ ներելու մեր մեղքերը, ու մաքրելու մեզ ամէն անիրաւութենէ: **10** Եթէ ըսենք. «Մենք մեղանշած չենք», ստախօս կը նկատենք՝ զայն, եւ անոր խօսքը մեր մէջ չէ:

2 Որդեակներս, կը գրեմ ձեզի այս բաները՝ որպէսզի չմեղանչէք. իսկ եթէ մէկը մեղանչէ, Յօրը քով ունինք Բարեխօս մը՝ Յիսուս Քրիստոս արդարը: **2** Ա՛ն է մեր մեղքերուն բաւութիւնը. եւ ո՛չ միայն մեր, այլ նաեւ ամբողջ աշխարհի մեղքերուն:

3 Եթէ պահենք անոր պատուիրանները, ասով կը գիտնանք թէ կը ճանչնանք զայն: **4** Ո՛վ որ կ'ըսէ. «Ես կը ճանչնամ զայն», բայց չի պահեր անոր պատուիրանները, ստախօս է, եւ իր մէջ ճշմարտութիւն չկայ: **5** Բայց ով որ կը պահէ անոր խօսքը, Աստուծոյ սէրը իրապէս կատարեալ է իր մէջ. ասով կը գիտնանք թէ անոր մէջ ենք: **6** Ո՛վ որ կ'ըսէ թէ կը բնակի անոր մէջ, պարտաւոր է ընթանալ այնպէս՝ ինչպէս ան ընթացաւ: **7** Եղբայրներ, կը գրեմ ձեզի ո՛չ թէ նոր պատուիրան մը, հապա հին պատուիրան մը՝ որ սկիզբէն ունէիք: Հին պատուիրանը այն խօսքն է՝ որ դուք սկիզբէն լսեցիք: **8** Դարձեալ՝ կը գրեմ ձեզի նոր պատուիրան մը, որ ճշմարիտ է անոր մէջ եւ ձեր մէջ. որովհետեւ խաւարը կ'անցնի ու ճշմարիտ լոյսը արդէն կը փայլի: **9** Ա՛ն որ կ'ըսէ թէ լոյսի մէջ է եւ կ'ատէ իր եղբայրը, տակաւին խաւարի մէջ է: **10** Ա՛ն որ կը սիրէ իր եղբայրը, կը բնակի լոյսի մէջ, ու զայթակողութիւն չկայ իր մէջ: **11** Բայց ան որ կ'ատէ իր եղբայրը՝ խաւարի մէջ է, խաւարի մէջ կը քայլէ եւ չի գիտեր թէ ո՛ւր կ'երթայ, որովհետեւ խաւարը կուրցուցած է իր աչքերը: **12** Կը գրեմ ձեզի, որդեակներ, որովհետեւ ձեր մեղքերը ներուած են ձեզի՝ անոր անունին համար: **13** Կը գրեմ

ձեզի, հայրեր, որովհետեւ դուք ճանչցաք ան՝
 որ սկիզբէն է: Կը գրեմ ձեզի, երիտասարդներ,
 որովհետեւ դուք յաղթեցիք Չարին: **14** Գրեցի ձեզի,
 զաւակներ, որովհետեւ դուք ճանչցաք Հայրը:
 Գրեցի ձեզի, հայրեր, որովհետեւ դուք ճանչցաք
 ան՝ որ սկիզբէն է: Գրեցի ձեզի, երիտասարդներ,
 որովհետեւ դուք ուժեղ էք, եւ Աստուծոյ խօսքը
 կը բնակի ձեր մէջ, ու յաղթեցիք Չարին: **15** Մի
 սիրէք աշխարհը, ոչ ալ ինչ որ աշխարհի մէջ է:
16 Եթէ մէկը կը սիրէ աշխարհը, Հօրը սէրը չկայ
 իր մէջ. որովհետեւ ամէն ինչ որ աշխարհի մէջ է՝
 մարմնի ցանկութիւնը, աչքերու ցանկութիւնը եւ
 այս կեանքին ամբարտաւանութիւնը՝ Հօրմէն չէ,
 հապա այս աշխարհէն է: **17** Աշխարհն ալ կ'անցնի,
 անոր ցանկութիւնն ալ. բայց ան որ կը գործադրէ
 Աստուծոյ կամքը՝ կը մնայ յաւիտեան: (*aiōn g165*) **18**
 Չաւակներ, վերջին ժամն է. եւ ինչպէս լսեցիք թէ
 Նեռը պիտի գայ, արդէն շատ նեռեր կան. ատկէ կը
 գիտնանք թէ վերջին ժամն է: **19** Անոնք մեր մէջէն
 ելան, բայց մեզմէ չէին. որովհետեւ եթէ ըլլային
 մեզմէ, կը մնային մեզի հետ: Բայց մեզմէ ելան,
 որպէսզի բացայայտուի թէ անոնք բոլորն ալ մեզմէ
 չէին: **20** Սակայն դուք օծութիւն ունիք Սուրբէն,
 ու գիտէք ամէն բան: **21** Չգրեցի ձեզի՝ որպէս թէ
 չէք գիտեր ճշմարտութիւնը, հապա՝ որովհետեւ
 գիտէք զայն, եւ քանի որ սուտը ճշմարտութենէն
 չէ: **22** Ո՛վ է ստախօսը, եթէ ոչ ան՝ որ կ'ուրանայ թէ
 Յիսուս՝ Քրիստոսն է. նեռը ան է՝ որ կ'ուրանայ
 Հայրն ու Որդին: **23** Ո՛վ որ կ'ուրանայ Որդին,

անիկա Յայրն ալ չունի. (բայց ան որ կը դաւանի Որդին, անիկա Յայրն ալ ունի:) 24 Ուրեմն ինչ որ լսեցիք սկիզբէն՝ թող բնակի ձեր մէջ. եթէ ձեր մէջ բնակի ինչ որ սկիզբէն լսեցիք, դո՛ւք ալ պիտի բնակիք Որդիին մէջ ու Յօրը մէջ: 25 Եւ սա՛ է այն խոստումը՝ որ ինք տուաւ ձեզի, այսինքն՝ յաւիտենական կեանքը: (aiōnios g166) 26 Գրեցի ձեզի այս բաները՝ ձեզ մոլորեցնողներուն համար: 27 Այն օծութիւնը որ ստացաք իրմէ՝ կը բնակի ձեր մէջ. ուստի պէտք չկայ որ մեկը սորվեցնէ ձեզի: Իսկ քանի որ այդ նոյն օծութիւնը կը սորվեցնէ ձեզի ամեն բան, ու ճշմարիտ է եւ ո՛չ թէ սուտ, իր մէջ բնակեցէ՛ք՝ ինչպէս ան սորվեցուց ձեզի: 28 Ուրեմն հիմա, որդեակներ, բնակեցէ՛ք իր մէջ, որպէսզի երբ ինք երեւնայ՝ համարձակութիւն ունենանք, ու չամչնանք իրմէ իր գալուստին ատենը: 29 Եթէ գիտէք թէ ինք արդար է, կ'ըմբռնէք թէ ո՛վ որ արդարութիւն կը գործէ՝ իրմէ ծնած է:

3 Տեսէ՛ք թէ Յայրը ինչպիսի՜ սէր շնորհեց մեզի, որպէսզի մենք Աստուծոյ զաւակներ կոչուինք. ուստի աշխարհը չի ճանչնար մեզ, որովհետեւ չճանչցաւ զինք: 2 Սիրելիներ, հիմա մենք Աստուծոյ զաւակներն ենք, եւ տակաւին բացայայտ չէ թէ ինչ պիտի ըլլանք. բայց գիտենք թէ երբ ինք երեւնայ՝ իրեն պէս պիտի ըլլանք, որովհետեւ պիտի տեսնենք զինք՝ ինչպէս որ է: 3 Ո՛վ որ այս յոյսը ունի անոր վրայ, կը մաքրագործէ ինքզինք՝ ինչպէս ան մաքուր է: 4 Ո՛վ որ մեղք կը գործէ՝ կը գործէ նաեւ անօրէնութիւն, եւ բո՛ւն մեղքը՝

անօրէնութիւնն է: 5 Եւ գիտէք թէ անյայտնութեամբ՝
 որպէսզի քաւէ մեր մեղքերը. բայց անոր մէջ
 մեղք չկայ: 6 Ո՛վ որ կը բնակի անոր մէջ՝ չի
 մեղանշեր. ո՛վ որ մեղանշէ, տեսած չէ զայն ու
 ճանչցած չէ զայն: 7 Որդեակներ, ո՛չ մէկը թող
 մոլորեցնէ ձեզ. ո՛վ որ արդարութիւն կը գործէ՝
 արդար է, ինչպէս ան արդար է: 8 Ո՛վ որ մեղք կը
 գործէ՝ Չարախօսէն է, որովհետեւ Չարախօսը
 կը մեղանշէ սկիզբէն ի վեր. Աստուծոյ Որդին
 յայտնութեամբ՝ որպէսզի քանդէ Չարախօսին
 գործերը: 9 Ո՛վ որ Աստուծոյ ծնած է՝ մեղք չի
 գործեր, որովհետեւ անոր սերմը կը մնայ իր մէջ.
 ու չի կրնար մեղանշել, քանի որ Աստուծոյ ծնած է:
 10 Ասով բացայայտ կ'ըլլան Աստուծոյ զաւակներն
 ու Չարախօսին զաւակները: Ո՛վ որ արդարութիւն
 չի գործեր՝ Աստուծոյ չէ, ո՛չ ալ ան՝ որ չի սիրեր իր
 եղբայրը: 11 Արդարեւ սա է այն պատգամը՝ որ դուք
 լսեցիք սկիզբէն, որ սիրենք զիրար: 12 Չըլլանք
 Կայենի պէս, որ Չարէն էր ու մորթեց իր եղբայրը:
 Եւ ինչո՞ւ մորթեց զայն. քանի որ իր գործերը
 չար էին, իսկ իր եղբօր գործերը՝ արդար: 13 Մի՛
 զարմանաք, եղբայրներս, եթէ աշխարհը ատէ
 ձեզ: 14 Մենք գիտենք թէ անցանք մահէն կեանքի,
 որովհետեւ կը սիրենք եղբայրները. ան որ չի
 սիրեր եղբայրը՝ կը բնակի մահուան մէջ: 15 Ո՛վ որ
 կ'ատէ իր եղբայրը՝ մարդասպան է, եւ գիտէք թէ ո՛չ
 մէկ մարդասպանի մէջ կը բնակի յաւիտենական
 կեանքը: (aïōnios g166) 16 Մենք գիտցանք Զրիստոսի
 սերը, քանի որ ան ընծայեց իր անձը մեզի համար.

մենք ալ պարտաւոր ենք ընծայել մեր անձը մեր եղբայրներուն համար: 17 Բայց եթէ մէկը՝ որ ունի այս աշխարհի ապրուստը, տեսնելով իր կարօտեալ եղբայրը՝ իր գութը գոցէ անկէ, ինչպէս անոր մէջ Աստուծոյ սէրը բնականօրէն կ'ըլլայ: 18 Որդեակներս, սիրենք ոչ թէ խօսքով ու լեզուով, հապա՝ գործով եւ ճշմարտութեամբ: 19 Ասով կը գիտնանք թէ ճշմարտութենէն ենք, ու մեր սիրտերը կը վստահին անոր առջեւ երեւնալու. 20 որովհետեւ եթէ մեր սիրտը պարսաւէ մեզ, Աստուած աւելի մեծ է քան մեր սիրտը եւ գիտէ ամէն բան: 21 Սիրելիներ, եթէ մեր սիրտը չպարսաւէ մեզ, այն ատեն համարձակութիւն կ'ունենանք Աստուծոյ առջեւ, 22 եւ ինչ որ խնդրենք՝ կը ստանանք անկէ, որովհետեւ կը պահենք անոր պատուիրանները, ու կ'ընենք անոր առջեւ հաճելի եղած բաները: 23 Սա է անոր պատուիրանը, որ հաւատանք իր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի անունին, ու սիրենք զիրար՝ ինչպէս պատուիրեց մեզի: 24 Ո՛վ որ կը պահէ անոր պատուիրանները՝ կը բնակի անոր մէջ, ան ալ՝ իր մէջ. եւ ասով գիտենք թէ ան կը բնակի մեր մէջ, այսինքն այն Հոգիով՝ որ տուաւ մեզի:

4 Սիրելիներ, մի՛ հաւատաք ամէն հոգիի, հապա քննեցէ՛ք հոգիները՝ թէ արդեօք Աստուծմէ՛ են. որովհետեւ շատ սուտ մարգարէներ երեւան ելած են աշխարհի մէջ: 2 Սնայէս կը ճանչնաք Աստուծոյ Հոգին.- ամէն հոգի որ կը դաւանի թէ Յիսուս Քրիստոս մարմինով եկաւ, Աստուծմէ է. 3 իսկ

ամեն հոգի որ չի դաւանիր թէ Յիսուս Քրիստոս
 մարմինով եկաւ, Աստուծոմէ չէ. եւ այս է Նեոի
 հոգին, որուն մասին լսեցիք թէ պիտի գայ, ու
 արդէն աշխարհի մէջ է: **4** Դուք Աստուծոմէ էք,
 որդեակներ, եւ յաղթեցիք անոնց. որովհետեւ
 ան որ ձեր մէջ է՝ աւելի մեծ է, քան ան՝ որ
 աշխարհի մէջ է: **5** Անոնք աշխարհէն են. ուստի
 կը խօսին աշխարհի մասին, եւ աշխարհը մտիկ
 կ'ընէ անոնց: **6** Իսկ մենք Աստուծոմէ ենք. ան
 որ կը ճանչնայ Աստուած՝ մտիկ կ'ընէ մեզի, ան
 որ Աստուծոմէ չէ՝ մտիկ չ'ըներ մեզի: Ասով կը
 գիտնանք ճշմարտութեան Հոգին ու մոլորութեան
 հոգին: **7** Սիրելիներ, սիրենք զիրար, քանի որ սերը
 Աստուծոմէ է: Ո՛վ որ կը սիրէ՝ ծնած է Աստուծոմէ
 ու կը ճանչնայ Աստուած: **8** Ա՛ն որ չի սիրեր՝ չի
 ճանչնար Աստուած, որովհետեւ Աստուած սեր է:
9 Աստուծոյ սերը սնապէս բացայայտուեցաւ մեզի
 հանդէպ. Աստուած աշխարհ ղրկեց իր միածին
 Որդին, որպէսզի ապրինք անոր միջոցով: **10** Սերը
 ասոր մէջ է. ո՛չ թէ մենք սիրեցինք Աստուած,
 հապա ան սիրեց մեզ եւ ղրկեց իր Որդին՝ իբր
 քաւութիւն մեր մեղքերուն: **11** Սիրելիներ, եթէ
 Աստուած այսպէս սիրեց մեզ, մենք ալ պարտաւոր
 ենք սիրել զիրար: **12** Ո՛չ մէկը երբեք տեսած
 է Աստուած: Եթէ սիրենք զիրար, Աստուած կը
 բնակի մեր մէջ ու անոր սերը կատարեալ է: **13**
 Ան իր Հոգիէն տուաւ մեզի. ասով գիտենք թէ
 մենք կը բնակինք անոր մէջ, ան ալ՝ մեր մէջ:
14 Ու մենք տեսանք եւ կը վկայենք թէ Հայրը

դրկեց իր Որդին իբր աշխարհի Փրկիչ: **15** Ո՛վ որ կը դաւանի թէ Յիսուս Աստուծոյ Որդին է, Աստուած կը բնակի անոր մէջ, ան ալ՝ Աստուծոյ մէջ: **16** Մենք գիտցանք Աստուծոյ մեզի հանդէպ ունեցած սէրը, ու հաւատացինք: Աստուած սէր է. ան որ կը բնակի սիրոյ մէջ՝ կը բնակի Աստուծոյ մէջ, եւ Աստուած՝ անոր մէջ: **17** Ինչպէս ինք է, նոյնպէս մենք ենք այս աշխարհի մէջ. ասով մեր սէրը կատարեալ է, որպէսզի համարձակութիւն ունենանք դատաստանին օրը: **18** Սիրոյ մէջ վախ չկայ, հապա կատարեալ սէրը կը վտարէ վախը. որովհետեւ վախը կ'ենթադրէ պատուհաս: Ուստի ղվ որ կը վախնայ՝ կատարեալ չէ սիրոյ մէջ: **19** Մենք կը սիրենք զայն, որովհետեւ նախ ան սիրեց մեզ: **20** Եթէ մէկը ըսէ. «Ես կը սիրեմ Աստուած», եւ ատէ իր եղբայրը, ստախօս է. որովհետեւ ան որ չի սիրեր իր եղբայրը՝ որ կը տեսնէ, ինչպէս կրնայ սիրել Աստուած՝ որ չի տեսներ: **21** Եւ սա պատուիրանը ունինք անկէ. «Ո՛վ որ կը սիրէ Աստուած, թող սիրէ նաեւ իր եղբայրը»:

5 Ո՛վ որ կը հաւատայ թէ Յիսուս՝ Քրիստոնսն է, ծնած է Աստուծմէ. եւ ղվ որ կը սիրէ ծնողը՝ կը սիրէ նաեւ անկէ ծնածը: **2** Երբ սիրենք Աստուած ու պահենք անոր պատուիրանները, ատով կը գիտնանք թէ կը սիրենք Աստուծոյ զաւակները: **3** Քանի որ սա է Աստուծոյ սէրը.- պահել անոր պատուիրանները: Իսկ անոր պատուիրանները ծանր չեն, **4** որովհետեւ ղվ որ Աստուծմէ ծնած է՝ կը յաղթէ աշխարհին. մեր հաւատքն է որ կը

յաղթե աշխարհին՝: 5 Ո՞վ կը յաղթե աշխարհին,
 եթե ոչ ան՝ որ կը հաւատայ թէ Յիսուս Աստուծոյ
 Որդին է: 6 Ինքն է՝ Յիսուս Քրիստոս՝ որ եկաւ
 ջուրով ու արիւնով. ոչ միայն ջուրով, հապա՝
 ջուրով եւ արիւնով. ու Յոգին է որ կը վկայէ,
 որովհետեւ Յոգին ճշմարտութիւն է: 7 Արդարեւ
 երեք են՝ որ կը վկայեն երկինքի մէջ.- Յայրը,
 Խօսքը եւ Սուրբ Յոգին, ու այս երեքը մէկ են:
 8 Նաեւ երեք են՝ որ կը վկայեն երկրի վրայ՝.-
 Յոգին, ջուրը եւ արիւնը, ու այս երեքը միաձայն
 են: 9 Եթէ կ'ընդունինք մարդոց վկայութիւնը,
 Աստուծոյ վկայութիւնը աւելի մեծ է. որովհետեւ
 այս է Աստուծոյ վկայութիւնը՝ որ տուաւ իր
 Որդիին մասին: 10 Ա՛ն որ կը հաւատայ Աստուծոյ
 Որդիին՝ իր մէջ ունի այս վկայութիւնը: Ա՛ն որ
 չի հաւատար Աստուծոյ՝ ստախօս կը նկատէ՝
 զայն, որովհետեւ չի հաւատար այն վկայութեան՝
 որ Աստուած տուաւ իր Որդիին մասին: 11
 Իսկ սա՛ն է վկայութիւնը.- Աստուած տուաւ մեզի
 յաւիտենական կեանքը, եւ այս կեանքը անոր
 Որդիին մէջ է: (aiōnios g166) 12 Ա՛ն որ ունի Որդին՝
 ունի կեանքը. ան որ չունի Աստուծոյ Որդին՝
 չունի կեանքը: 13 Գրեցի այս բաները ձեզի՝ որ կը
 հաւատաք Աստուծոյ Որդիին անունին, որպէսզի
 զիտնաք թէ ունիք յաւիտենական կեանքը: (aiōnios
 g166) 14 Այն համարձակութիւնը որ ունինք անոր
 քով՝ սա՛ն է.- եթէ որեւէ բան խնդրենք իր կամքին
 համաձայն, կը լսէ մեզ: 15 Ու եթէ զիտենք թէ կը
 լսէ մեզ՝ ինչ որ ալ խնդրենք, զիտենք նաեւ թէ

կ'ունենանք այն բաները՝ որ կը խնդրենք իրմէ: **16**
Եթէ մէկը տեսնէ թէ իր եղբայրը կը գործէ մեղք
մը՝ որ մահացու չէ, թող խնդրէ, եւ Աստուած
կեանք պիտի տայ անոր, այսինքն անոնց՝ որ
մահացու մեղք չեն գործեր: Մեղք կայ՝ որ մահացու
է. չեմ ըսեր որ թախանձէ անոր համար: **17** Ամէն
անիրաւութիւն մեղք է, բայց մեղք կայ՝ որ մահացու
չէ: **18** Գիտենք թէ ո՛վ որ Աստուծմէ ծնած է՝ չի
մեղանչեր: Ո՛վ որ Աստուծմէ ծնած է՝ կը պահէ
ինքզինք, ու Չարը չի դաշիր իրեն: **19** Գիտենք
թէ մենք Աստուծմէ ենք, իսկ ամբողջ աշխարհը
Չարին մէջ մխրճուած է: **20** Նաեւ գիտենք թէ
Աստուծոյ Որդին եկաւ, եւ ուշիմութիւն տուաւ
մեզի՝ որպէսզի ճանչնանք ճշմարիտը: Ու մենք
այդ ճշմարիտին մէջ ենք, անոր Որդիին՝ Յիսուս
Քրիստոսի մէջ. ինքն է ճշմարիտ Աստուածը եւ
յաւիտենական կեանքը: (aiōnios g166) **21** Որդեակներ,
զգուշացէ՛ք կոռւքերէն:

ԵՐԿՐՈՐԴ ՅՈՎՅԱՆՆՈՒ

1 Երեցը՝ ընտրեալ տիկնոջ եւ անոր զաւակներուն, որ կը սիրեմ ճշմարտութեամբ, (ոչ միայն ես, այլ նաեւ բոլոր անոնք՝ որ գիտցած են ճշմարտութիւնը,) **2** այն ճշմարտութեան համար՝ որ կը բնակի մեր մէջ ու յաւիտեան պիտի ըլլայ մեզի հետ. (aiōn g165) **3** ձեզի հետ թող ըլլան շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն՝ Հայր Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստոսէ, Հօրը Որդիէն, ճշմարտութեամբ եւ սիրով: **4** Մեծապէս ուրախացայ, գտնելով թէ զաւակներէդ ոմանք կ'ընթանան ճշմարտութեամբ, այն պատուիրանին համաձայն՝ որ ստացանք Հօրմէն: **5** Հիմա կը թախանձեմ քեզի, տիկի՛ն, որ սիրենք զիրար. կը գրեմ քեզի ոչ թէ նոր պատուիրան մը, հապա ան՝ որ ունէինք սկիզբէն: **6** Մերը սա՛ է.- ընթանալ անոր պատուիրաններուն համաձայն: Եւ պատուիրանը սա՛ է.- ընթանալ սկիզբէն ի վեր ձեր լսածին համաձայն: **7** Արդարեւ աշխարհի մտած են շատ մոլորեցուցիչներ, որոնք չեն դաւանիր թէ Յիսուս Քրիստոս մարմինով եկաւ: Այսպիսին մոլորեցուցիչ ու նեղ է: **8** Չգուշացէ՛ք դուք ձեզի համար, որ չկորսնցնենք մեր աշխատանքը, հապա ստանանք լման վարձատրութիւն: **9** Ո՛վ որ զանցառու կ'ըլլայ եւ չի մնար Քրիստոսի ուսուցումին մէջ, չունի Աստուած: Իսկ ան որ կը կենայ Քրիստոսի ուսուցումին մէջ, ունի թէ՛ Հայրը, թէ՛ ալ Որդին: **10** Եթէ մէկը զայ ձեզի ու չքերէ այս ուսուցումը, մի՛ ընդունիք զայն ձեր

տունը, եւ մի բարեւէք. **11** որովհետեւ ո՛վ որ բարեւէ
զայն՝ կը հաղորդակցի անոր չար գործերուն: **12**
Ձեզի գրելիք շատ բան ունէի, բայց չուզեցի գրել
թուղթով ու մելանով. քանի որ կը յուսամ գալ ձեզի
եւ խօսիլ դէմ առ դէմ, որպէսզի մեր ուրախութիւնը
լման ըլլայ: **13** Ընտրեալ քրոջդ զաւակները կը
բարեւեն քեզ:

ԵՐՐՈՐԴ ՅՈՎՅԱՆՆՈՒ

1 Երեցը՝ սիրելի Գայիոսին, որ կը սիրեմ ճշմարտութեամբ: **2** Սիրելիս, կ'ըղծամ որ ամեն կերպով յաջողիս եւ առողջ ըլլաս, ինչպէս քու անձդ ալ յաջողութեան մէջ է: **3** Որովհետեւ մեծապէս ուրախացայ, երբ քանի մը եղբայրներ եկան ու վկայեցին քու ճշմարտութեանդ մասին, թէ կ'ընթանաս ճշմարտութեամբ: **4** Ամենամեծ ուրախութիւնս է լսել՝ թէ իմ զաւակներս կ'ընթանան ճշմարտութեամբ: **5** Սիրելիս, դուն հաւատարմաբար կ'ընես՝ ինչ որ կ'ընես եղբայրներուն եւ օտարականներուն. **6** անոնք վկայեցին քու սիրոյդ մասին եկեղեցիին առջեւ: Եթէ ուղարկես զանոնք աստուածահաճոյ կերպով՝ լաւ կ'ընես. **7** որովհետեւ անոնք մեկնեցան Աստուծոյ անունին համար՝ ոչինչ առնելով հեթանոսներէն: **8** Ուրեմն մենք պարտաւոր ենք ընդունիլ այդպիսիները, որպէսզի գործակից ըլլանք ճշմարտութեան: **9** Գրեցի եկեղեցիին. բայց Դիոտրեփէս, որ կ'ուզէ անոնց մէջ առաջին ըլլալ, չ'ընդունիր մեզ: **10** Ուստի եթէ գամ՝ պիտի մտաբերեմ անոր ըրած գործերը, քանի որ կը շաղակրատէ մեզի դէմ չար խօսքերով: Չի բաւարարուիր ասով, եւ ոչ միայն չ'ընդունիր եղբայրները, հապա կ'արգիլէ ու եկեղեցիէն կը վտարէ անոնք՝ որ կ'ուզեն ընդունիլ: **11** Սիրելիս, մի՛ նմանիր չարին, հապա՝ բարիին: Ա՛ն որ բարիք կ'ընէ՝ Աստուծմէ է. բայց ան որ չարիք կ'ընէ՝ տեսած չէ Աստուած: **12** Իսկ Դեմետրիոս բարի

վկայուած է բոլորէն, նոյնինքն ճշմարտութենէն
ալ: Մէնք ալ կը վկայենք, եւ դուք գիտէք թէ մեր
վկայութիւնը ճշմարիտ է: **13** Գրելիք շատ բան
ունէի, բայց չեմ ուզեր մեղանով ու գրիչով գրել
քեզի: **14** Սակայն կը յուսամ թէ շուտով պիտի
տեսնեմ քեզ, եւ պիտի խօսինք դեմ առ դեմ:
Խաղաղութիւն քեզի: Բարեկամները կը բարեւեն
քեզ. բարեւէ մեր բարեկամները՝ իւրաքանչիւրը
իր անունով:

ՅՈՒՂԱՅԻ

1 Յուդա, Յիսուս Բրիստոսի ծառան ու Յակոբոսի եղբայրը, անոնց՝ որ Հայր Աստուծոմով սրբացած, Յիսուս Բրիստոսով պահուած ու կանչուած են. **2** ողորմութիւն, խաղաղութիւն եւ սէր թող շատնան ձեր վրայ: **3** Սիրելիներ, երբ ամբողջ փութաջանութեամբ կը գրէի ձեզի հասարակաց փրկութեան համար, հարկաւոր նկատեցի գրել ձեզի եւ յորդորել՝ որպէսզի պայքարիք այն հաւատքին համար, որ մէկ անգամ աւանդուեցաւ սուրբերուն: **4** Որովհետեւ քանի մը մարդիկ - որոնց դատապարտութիւնը վաղուց արձանագրուած է՝ - գաղտնի մտան ձեր մէջ, ամբարիշտներ՝ որոնք մեր Աստուծոյն շնորհքը այլափոխեցին ցոփութեան, եւ ուրացան միակ Տիրակալն ու մեր Տէրը՝ Յիսուս Բրիստոսը: **5** Ուրեմն կը փափաքիմ յիշեցնել ձեզի, թեպէտ ժամանակին գիտէիք ասիկա, թէ Տէրը՝ որ փրկեց ժողովուրդը Եգիպտոսի երկրէն՝ երկրորդ անգամ կորսնցուց չհաւատացողները. **6** եւ այն հրեշտակները, որոնք չպահեցին իրենց սկզբնական դիրքը՝, հապա ձգեցին իրենց բնակութիւնը, յաւերժական կապերով վերապահեց մեծ օրուան դատաստանին համար՝ մթութեան մէջ: (aidios g126) **7** Նմանապէս Սողոմ ու Գոմոր, ինչպէս նաեւ անոնց շուրջը եղած քաղաքները, որոնք անձնատուր եղան պոռնկութեան եւ ընթացան ուրիշ մարմինի ետեւէն, իբր օրինակ դրուած են մեր առջեւ,

կրելով յաւիտենական կրակին վճիռը: (aiōnios g166)

8 Նմանապէս այս ցնորածներն ալ կը պղծեն մարմինը, կ'անարգեն տէրութիւնը ու կը հայհոյեն փառքերը: 9 Բայց Միքայէլ հրեշտակապետը, երբ կը վիճէր Չարախօսին հետ՝ խօսելով Մովսէսի մարմինին մասին, չյանդգնեցաւ հայհոյալից դատավճիռ արձակել՝ անոր դէմ, հապա ըսաւ. «Տէրը յանդիմանէ քեզ»: 10 Մինչդէռ ասոնք կը հայհոյեն այն բաները՝ որ չեն գիտեր. իսկ ինչ որ գիտեն բնականաբար, անբան կենդանիներու պէս, կ'ապականին այդ բաներուն մէջ: 11 Վայ անոնց, քանի որ զացին Կայէնի ճամբայէն, ինկան Բաղաամի մոլորութեան մէջ՝ վարձքի համար, եւ կորսուեցան Կորիսի հակաճառութեամբ: 12 Ասոնք բիծեր են ձեր սիրոյ խնճոյքներուն մէջ, երբ խրախճանք կ'ընեն ձեզի հետ, իրենք զիրենք արածելով առանց վախի: Անջուր ամպեր են՝ հովերէն քշուած, աշնանային խամրած պտուղով ծառեր, անպտուղ, երկու անգամ մեռած, արմատախիլ եղած. 13 ծովու վայրագ ալիքներ, որ կը փրփրցնեն իրենց ամօթը. մոլորած աստղեր, որոնց համար վերապահուած է խաւարին մթութիւնը յաւիտեան: (aiōn g165) 14 Ենովք ալ, եօթներորդը Ադամէն ետք, մարգարէացաւ ասոնց համար եւ ըսաւ. «Ահա՛ Տէրը կու գայ իր բիւրաւոր սուրբերով՝ 15 դատաստան կիրարկելու բոլորին հանդէպ, ու կշտամբելու անոնց մէջ եղող բոլոր ամբարիշտները՝ իրենց ամբարշտութեամբ ըրած բոլոր ամբարիշտ գործերուն համար,

եւ բոլոր խիստ խօսքերուն համար՝ որ ամբարիշտ մեղաւորները խօսեցան անոր դէմ»:

16 Ասոնք տրտնջողներ ու քրթմնջողներ են, որոնք կ'ընթանան իրենց ցանկութիւններուն համաձայն. իրենց բերանները կը խօսին յոխորտաբանութիւններ, ու երեսպաշտութիւն կ'ընեն օգուտի համար: **17** Բայց դո՛ւք, սիրելիներ, յիշեցէ՛ք այն խօսքերը՝ որ նախապէս ըսուեցան մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի առաքեալներուն կողմէ: **18** Ասոնք կ'ըսէին ձեզի թէ “վերջին ժամանակը ծաղրողներ պիտի ըլլան, որոնք պիտի ընթանան իրենց ամբարիշտ ցանկութիւններուն համաձայն”: **19** Ասոնք՝ իրենք զիրենք զատող, շնչաւոր մարդիկ են, որոնք չունին Յոգին: **20** Իսկ դո՛ւք, սիրելիներ, շինելով դուք ձեզ՝ ձեր ամենասուրբ հաւատքին վրայ, եւ աղօթելով Սուրբ Յոգիով, **21** պահեցէ՛ք դուք ձեզ Աստուծոյ սիրոյն մէջ, սպասելով մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի ողորմութեան՝ յաւիտենական կեանքի համար: (aiōnios g166) **22** Կարեկցեցէ՛ք ոմանց՝ զատորոշելով. **23** իսկ փրկեցէ՛ք ուրիշները, վախով յափշտակելով զանոնք կրակէն, ատելով մարմինէն ապականած բաճկոնն ալ: **24** Անոր՝ որ կարող է գերծ պահել ձեզ անկումէ, եւ անարատ կեցնել իր փառքին առջեւ՝ ցնծութեամբ, **25** մեր Փրկիչին՝ միակ Աստուծոյ, (մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով) փանք ու մեծափառութիւն, զօրութիւն եւ իշխանութիւն (բոլոր դարերէն

առաջ,) հիմա ու բոլոր դարերուն մէջ: Ամէն: (aiōn
g165)

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՅԱՆՆՈՒ

1 Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը, որ Աստուած տուաւ անոր՝ ցոյց տալու համար իր ծառաներուն ինչ որ պէտք է շուտով ըլլայ, եւ իր հրեշտակին միջոցով դրկեց ու մատնանշեց իր Յովհաննէս ծառային, **2** որ վկայեց Աստուծոյ խօսքին եւ Յիսուս Քրիստոսի վկայութեան մասին, ամէն ինչի մասին՝ որ տեսաւ: **3** Երանի՛ անոր՝ որ կը կարդայ, ու անոնց՝ որ կը լսեն այս մարգարէութեան խօսքերը, եւ կը պահեն ինչ որ անոր մէջ գրուած է. որովհետեւ ատենը մօտ է: **4** Յովհաննէս՝ եօթը եկեղեցիներուն, որոնք Ասիայի մէջ են. շնորհք ու խաղաղութիւն ձեզի անկէ՝ որ է, որ Էր եւ որ պիտի գայ, ու եօթը Հոգիներէն՝ որոնք անոր գահին առջեւ են, **5** եւ Յիսուս Քրիստոս հաւատարիմ վկայէն, որ մեռելներուն անդրանիկն է ու երկրի թագաւորներուն իշխանը: Անոր՝ որ սիրեց մեզ, իր արիւնով լուաց մեզ մեր մեղքերէն, **6** եւ թագաւորներ ու քահանաներ ըրաւ մեզ՝ Աստուծոյ եւ իր Հօր համար, անոր փառք ու զօրութիւն դարեւ դար՝: Ամէն: (aiōn g165) **7** Ահա՛ ամպերով կու գայ, եւ ամէն աչք պիտի տեսնէ զայն. նաեւ անոնք՝ որ խոցեցին զայն: Երկրի բոլոր տոհմերը պիտի հեծեծեն անոր վրայ: Այո՛. ամէն: **8** «Ես եմ Ալֆան ու Օմեղան», կ'ըսէ Տէր (Աստուած), ան՝ որ է, որ Էր եւ որ պիտի գայ, Ամենակալը: **9** Ես՝ Յովհաննէս, ձեր եղբայրը եւ հաղորդակիցը Յիսուս Քրիստոսի տառապանքին, թագաւորութեան ու համբերութեան, Պատմոս

կոչուած կղզին էի՝ Աստուծոյ խօսքին համար եւ Յիսուս Քրիստոսի վկայութեան համար: 10 Կիրակի օրը լեցուեցայ Յոգիով, ու ետեւէս լսեցի հզօր ձայն մը՝ փողի ձայնի պէս, որ կ'ըսէր. 11 «Ինչ որ կը տեսնես՝ գրէ գիրքի մը մէջ, ու դրկէ զայն եօթը եկեղեցիներուն՝ որոնք Եփեսոսի, Չմիւռնիայի, Պերգամոնի, Թիւատիրի, Սարդիկէի, Ֆիլատելֆիայի եւ Լաւոդիկէի մէջ են»: 12 Դարձայ տեսնելու այն ձայնը՝ որ կը խօսէր ինծի: Երբ դարձայ՝ տեսայ եօթը ոսկիէ աշտանակներ, 13 ու եօթը աշտանակներուն մէջտեղ՝ մէկը, մարդու Որդիին նման, մինչեւ ոտքերը երկարող պատմունճան մը հագած եւ կուրծքին վրայ ոսկիէ գօտի մը կապած: 14 Անոր գլուխն ու մազերը՝ բուրդի պէս ճերմակ էին, ձիւնի պէս ճերմակ. աչքերը՝ կրակի բոցի պէս էին, 15 ոտքերը՝ ոսկեպղինձի նման, որպէս թէ հնոցի մէջ բոցավառած, ու ձայնը՝ յորդառատ ջուրերու ձայնին պէս: 16 Իր աջ ձեռքին մէջ ունէր եօթը աստղ, բերանէն սրած երկսայրի թուր մը կ'ելլէր, եւ դէմքը արեւի պէս էր՝ երբ կը փայլի իր զօրութեամբ: 17 Երբ տեսայ զայն, անոր ոտքը ինկայ՝ մեռելի պէս. իսկ ան՝ իր աջ ձեռքը դրաւ իմ վրաս ու ըսաւ ինծի. «Մի՛ վախճար. էս եմ Առաջինը եւ Վերջինը: 18 Ես ան եմ՝ որ կ'ապրի. ես մեռած էի, ու ահա կ'ապրիմ դարե դար. էս ունիմ մահուան եւ դժոխքին բանալիները: (aiōn g165, Hadēs g86) 19 (Ուստի) գրէ ինչ որ տեսար, թէ՛ ինչ որ կայ, թէ՛ ինչ որ պիտի ըլլայ ասկէ ետք: 20 Ահա՛ւասիկ խորհուրդը եօթը

աստղերուն՝ որ իմ աջ ձեռքիս մէջ տեսար, ու եօթը
ոսկիէ աշտանակներուն.- այդ եօթը աստղերը՝
եօթը եկեղեցիներուն հրեշտակներն են, իսկ եօթը
աշտանակները եօթը եկեղեցիներն են»:

2 «Գրէ Եփեսոսի եկեղեցիին հրեշտակին.- “Սա
կ’ըսէ ան՝ որ իր աջ ձեռքին մէջ կը բռնէ
եօթը աստղերը, եւ կը շրջի եօթը ոսկիէ
աշտանակներուն միջեւ. 2 “Գիտեմ բոլ գործերդ,
աշխատանքդ ու համբերութիւնդ, եւ թէ չես կրնար
հանդուրժել չարերուն: Փորձեցիր անոնք՝ որ կը
հաւաստեն թէ իրենք առաքեալ են, բայց չեն, եւ
գտար թէ ստախօս են: 3 Համբերութիւն ունեցար,
տառապանք կրեցիր իմ անունիս համար” ու
չթուցար: 4 Սակայն սա ունիմ քեզի դէմ, որ
թողուցիր առաջին սերդ: 5 Ուրեմն յիշէ թէ ուրկէ
ինկար, ապաշխարէ, եւ ըրէ առաջին գործերդ.
այլապէս՝ շուտով պիտի գամ քեզի, ու աշտանակդ
պիտի շարժեմ իր տեղէն՝ եթէ չապաշխարես: 6
Բայց սա ունիս.- կ’ատես Նիկողայոսեաններուն
գործերը, որ ես ալ կ’ատեմ””: 7 Ա՛ն որ ականջ
ունի, թող լսէ թէ Հոգին ինչ կ’ըսէ եկեղեցիներուն:
Ո՛վ որ յաղթէ՝ անոր ուտել պիտի տամ կեանքի
ծառէն, որ Աստուծոյ դրախտին մէջ է»: 8
«Գրէ նաեւ Չմիւռնիայի եկեղեցիին հրեշտակին.-
“Սա կ’ըսէ Առաջինը եւ Վերջինը, որ մեռաւ ու
կ’ապրի. 9 “Գիտեմ բոլ գործերդ, տառապանքդ
եւ աղքատութիւնդ, (բայց հարուստ ես,) ու
հայիոյութիւնը անոնց՝ որ կ’ըսեն թէ իրենք Հրեայ
են, բայց չեն, հապա՝ Սատանայի ժողով: 10

Բնաւ մի վախնար այն չարչարանքներէն՝ որ պիտի կրես. ահա՛ Չարախօսը բանտը պիտի նետէ ձեզմէ ոմանք՝ որպէսզի փորձուիք, եւ տասը օր տառապանք պիտի ունենաք: Մինչեւ մահ հաւատարիմ եղիր, ու պիտի տամ քեզի կեանքի պսակը””: 11 Ա՛ն որ ականջ ունի, թող լսէ թէ Յոգին ինչ կ’ըսէ եկեղեցիներուն: Ո՛վ որ յաղթէ՝ պիտի չվնասուի երկրորդ մահէն»: 12 «Գրէ՛ նաեւ Պերգամոնի եկեղեցիին հրեշտակին.- “Սա կ’ըսէ ան՝ որ ունի սրած երկսայրի թուրը. 13 “Գիտե՛մ քու գործերդ, եւ թէ ո՛ւր կը բնակիս, հո՛ն՝ ուր Սատանայի գահն է. բայց ամուր կը բռնես իմ անունս ու չուրացար իմ հաւատքս, նոյնիսկ այն օրերը՝ երբ Անթիպաս, իմ հաւատարիմ վկաս, սպաննուեցաւ ձեր մէջ՝ ուր Սատանան կը բնակի: 14 Սակայն քեզի դէմ ունիմ քիչ բան մը, քանի որ հող ունիս Բաղաամի ուսուցումը պահողներ. ան Բաղակի սորվեցուց գայթակղութիւն դնել Իսրայելի որդիներուն առջեւ, որպէսզի անոնք ուտեն կուռքերու զոհուածներ ու պոռնկին: 15 Այսպէս՝ դուն ալ ունիս Նիկողայոսեաններուն ուսուցումը պահողներ, որ ես կ’ատեմ: 16 (Ուստի) ապաշխարէ. այլապէս՝ շուտով պիտի գամ քեզի, եւ պիտի պատերազմիմ անոնց դէմ բերանիս թուրով””: 17 Ա՛ն որ ականջ ունի, թող լսէ թէ Յոգին ինչ կ’ըսէ եկեղեցիներուն: Ո՛վ որ յաղթէ՝ անոր ուտել պիտի տամ պահուած մանանայէն. նաեւ պիտի տամ անոր ճերմակ խիճ մը, եւ այդ խիճին վրայ գրուած նոր անուն մը՝ որ ոչ մէկը գիտէ, բայց

միայն զայն ստացողը»։ 18 «Գրէ նաեւ Թիւատիրի եկեղեցիին հրեշտակին.- “Սա կ’ըսէ Աստուծոյ Որդին, որ ունի կրակի բոցի պէս աչքեր, եւ իր ոտքերը նման են ոսկեպղինձի. 19 “Գիտեմ քու գործերդ, սերդ, սպասարկութիւնդ, հաւատքդ ու համբերութիւնդ. եւ թէ քու վերջին գործերդ աւելի շատ են՝ քան առաջինները։ 20 Սակայն քեզի դէմ ունիմ բան մը”, որովհետեւ կը թոյլատրես Յեզաբելի, - ինքզինք մարգարէուհի կոչող այդ կնոջ, - որ մոլորեցնէ իմ ծառաներս եւ սորվեցնէ անոնց պոռնկիլ ու կոռւքերու զոհուածներ ուտել։ 21 Ես ժամանակ տուի անոր՝ ապաշխարելու իր պոռնկութենէն, բայց չապաշխարեց։ 22 Ահա ես մահիճ պիտի նետեմ զայն, իսկ անոր հետ շնութիւն ընողները՝ մեծ տառապանքի մէջ, եթէ չապաշխարեն իրենց գործերէն։ 23 Պիտի մեռցնեմ անոր զաւակները, եւ բոլոր եկեղեցիները պիտի գիտնան թէ ես ան եմ՝ որ կը զննեմ խիղճերն ու սիրտերը. պիտի հատուցանեմ ձեզմէ իւրաքանչիւրին՝ ձեր գործերուն համեմատ։ 24 Բայց կ’ըսեմ ձեզի, Թիւատիրի մէջ եղող միւս բոլորին՝ որ չունին այս ուսուցումը եւ չգիտցան Սատանային խորհուրդները (ինչպէս կ’ըսեն).- ուրիշ ծանրութիւն պիտի չդնեմ ձեր վրայ, 25 հապա ամուր բռնեցէք ինչ որ ունիք՝ մինչեւ որ գամ։ 26 Եւ ղվ որ յաղթէ ու պահէ իմ գործերս մինչեւ վախճանը, անոր իշխանութիւն պիտի տամ անոր ազգերուն վրայ, 27 (եւ պիտի հովուէ զանոնք երկար ժամանակ. անոնք պիտի

փշրուին բրուտի անօթներու պէս.) 28 ինչպէս
ես ալ ստացայ իմ Զօրմէս, ու պիտի տամ անոր
առտուան աստղը””: 29 Ա՛ն որ ականջ ունի, թող
լսէ թէ Զոգին ինչ կ’ըսէ եկեղեցիներուն»:

3 «Գրէ նաեւ Սարդիկէի եկեղեցիին հրեշտակին.-
“Սա կ’ըսէ ան՝ որ ունի Աստուծոյ եօթը Զոգիներն
ու եօթը աստղերը. ”Գիտեմք քու գործերդ. դուն
անուն ունիս թէ կ’ապրիս, բայց մեռած ես: 2
Արթուն կեցիր եւ ամրացուր մնացած բաները՝ որ
մեռնելու մօտ են, որովհետեւ կատարեալ չգտայ
գործերդ Աստուծոյ առջեւ: 3 Ուրեմն յիշէ թէ ինչպէս
ընդունեցիր եւ լսեցիր, ու պահէ եւ ապաշխարէ.
Իսկ եթէ արթուն չկենաս, գողի պէս պիտի գամ
քու վրադ, ու բնաւ պիտի չգիտնաս թէ որ ժամուն
պիտի գամ վրադ: 4 Սակայն Սարդիկէի մէջ ունիս
բանի մը մարդոց անուններ, որոնք չպղծեցին
իրենց հանդերձները եւ ճերմակներով պիտի շրջին
ինծի հետ, բանի որ արժանի են: 5 Ո՛վ որ յաղթէ՝
պիտի հագնի ճերմակ հանդերձ. ու ես պիտի չջնջեմ
անոր անունը կեանքի գիրքէն, հապա պիտի
դաւանիմ անոր անունը իմ Զօրս առջեւ եւ անոր
հրեշտակներուն առջեւ””: 6 Ա՛ն որ ականջ ունի,
թող լսէ թէ Զոգին ինչ կ’ըսէ եկեղեցիներուն»:

7 «Գրէ նաեւ Ֆիլատելֆիայի եկեղեցիին հրեշտակին.-
“Սա կ’ըսէ Սուրբը, Շշմարիտը, ան՝ որ ունի
Դաւիթի բանալին, ան՝ որ կը բանայ ու ճչ մէկը կը
գոցէ, եւ կը գոցէ ու ճչ մէկը կը բանայ. 8 ”Գիտեմք
քու գործերդ: Ահա՛ առջեւդ դրի բացուած դուռ
մը՝ որ ճչ մէկը կրնայ գոցել, որովհետեւ դուն քիչ

գորութիւն ունիս, բայց պահեցիր իմ խօսքս եւ չուրացար իմ անունս: **9** Ահա պիտի ստիպեմ Սատանայի ժողովէն եղողները, - որ կ'ըսեն թէ իրենք Հրեայ են, բայց չեն, հապա կը ստեն, - ահա պիտի ստիպեմ զանոնք՝ որ զան ու երկրպագեն ոտքերուդ առջեւ, եւ գիտնան թէ ես սիրեցի քեզ: **10** Քանի որ պահեցիր իմ համբերութեան խօսքս, ես ալ պիտի պահեմ քեզ փորձութեան ժամուն, որ պիտի գայ ամբողջ երկրագունդին վրայ՝ փորձելու համար երկրի բնակիչները: **11** Ահա շուտով կու գամ: Ամռնը բռնէ ունեցածդ, որպէսզի ոչ մէկը առնէ քու պսակդ: **12** Ո՛վ որ յաղթէ, սիւն մը պիտի ընեմ զայն իմ Աստուծոյ տաճարին մէջ, եւ ան դուրս պիտի չելլէ: Անոր վրայ պիտի գրեմ իմ Աստուծոյ անունը, ու իմ Աստուծոյ քաղաքին անունը, այսինքն՝ Նոր Երուսաղէմ, - որ կ'իջնէ երկինքէն՝ իմ Աստուծոյ քովէն, - եւ իմ նոր անունս՝: **13** Ա՛ն որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն»: **14** «Գրէ՛ նաեւ Լաւողիկէի եկեղեցիին հրեշտակին.- “Սա կ'ըսէ Ամենը, հաւատարիմ ու ճշմարիտ Վկան, Աստուծոյ արարչութեան Սկիզբը. **15** “Գիտեմ քու գործերդ, թէ ոչ պաղ ես, ոչ ալ տաք. երանի՛ թէ պաղ ըլլայիր, կամ՝ տաք: **16** Ուստի դուն որ գաղջ ես, եւ ոչ տաք, ոչ ալ պաղ, բերանէս դուրս պիտի փսիսեմ քեզ: **17** Քանի որ կ'ըսես. «Ես հարուստ եմ, հարստացայ, ու ոչ մէկ բանի կարիք ունիմ »: Բայց չես գիտեր թէ դուն թշուառ, խեղճ, աղքատ, կոյր եւ մերկ ես: **18** Կը թելադրեմ քեզի, որ գնես ինձմէ կրակի

բովէն անցած ոսկի՝ որ հարստանաս, ու ճերմակ հանդերձ՝ որ հագնիս, որպէսզի մերկութեանդ ամօթը չերեւնայ. եւ դէղ դիր աչքերուդ՝ որ տեսնես: **19** Ես կը կշտամբեմ ու կը պատժեմ բոլոր սիրածներս. ուրեմն նախանձախնդիր եղիր եւ ապաշխարէ: **20** Ահա՛ կայնած եմ դրան առջեւ ու կը բախեմ. եթէ մէկը լսէ իմ ձայնս եւ բանայ դուռը, պիտի մտնեմ անոր քով ու պիտի ընթերեմ անոր հետ, ան ալ՝ ինծի հետ: **21** Ո՛վ որ յաղթէ, ինծի հետ բազմիւ պիտի տամ անոր՝ իմ գահիս վրայ, ինչպէս ես ալ յաղթեցի ու իմ **3**օրս հետ բազմեցայ իր գահին վրայ””: **22** Ա՛ն որ ականջ ունի, թող լսէ թէ **3**ոգին ինչ կ’ըսէ եկեղեցիներուն»:

4 Ասկէ ետք՝ նայեցայ, եւ ահա՛ դուռ մը բացուած էր երկինքի մէջ, ու ինծի հետ խօսող առաջին ձայնը - փողի մը պէս - որ լսած էի՝ ըսաւ. «**3**ոն բարձրացիր, եւ ցոյց պիտի տամ քեզի ինչ որ պետք է ըլլայ ասկէ ետք»: **2** Իսկոյն լեցուեցայ **3**ոգիով, եւ ահա՛ գահ մը դրուած էր երկինքի մէջ, ու մէկը բազմած էր գահին վրայ: **3** Բազմողին տեսքը նման էր յասպիս եւ սարդիոն քարերու, ու գահին շուրջը կար ծիածան մը՝ տեսքով գմբուխտի նման: **4** Գահին շուրջը կային քսանչորս գահեր, եւ այդ գահերուն վրայ բազմած էին՝ քսանչորս երեցներ. ճերմակ հանդերձներ հագած էին, ու ոսկիէ պսակներ ունէին իրենց գլուխին վրայ: **5** Գահէն կ’ելլէին փայլակներ, ձայներ եւ որոտումներ, ու գահին առջեւ կային եօթը հրավառ ջահեր, որոնք Աստուծոյ եօթը **3**ոգիներն են: **6** Գահին առջեւ կար

ապակեղէն ծով մը՝ բիւրեղի նման, իսկ գահին մէջտեղը եւ գահին շուրջը կային չորս էակներ, աչքերով լեցուն՝ առջեւէն ու ետեւէն: **7** Առաջին էակը նման էր առիւծի, երկրորդ էակը նման էր զուարակի, երրորդ էակը ուներ մարդու երեւոյթ, իսկ չորրորդ էակը նման էր թռչող արծիւի: **8** Չորս էակներէն ամէն մէկը վեց թեւ ուներ շուրջը, եւ ներսէն լեցուն էր աչքերով: Անոնք առանց հանգստանալու՝ ցերեկ ու գիշեր կ'ըսէին. «Մըւրք, Մըւրք, Մըւրք է Տէրը, Ամենակալ Աստուածը, որ էր, որ է եւ որ պիտի գայ»: **9** Երբ այդ էակները փառք ու պատիւ կու տային եւ շնորհակալ կ'ըլլային գահին վրայ բազմողէն, որ դարձ դար՝ կ'ապրի, (aiōn g165) **10** քսանչորս երեցները կ'իյնային գահին վրայ բազմողին առջեւ ու կ'երկրպագէին անոր՝ որ դարձ դար կ'ապրի, եւ իրենց պսակները կը ձգէին գահին առջեւ՝ ըսելով. (aiōn g165) **11** «Արժանի ես, Տէր, փառք, պատիւ ու զօրութիւն ընդունելու, որովհետեւ դուն ստեղծեցիր բոլոր բաները. քո՛ւ կամքովդ անոնք գոյութիւն ունին եւ ստեղծուեցան»:

5 Գահին վրայ բազմողին աջ ձեռքին մէջ տեսայ գիրք մը՝ գրուած ներսէն ու դուրսէն, եւ կնքուած եօթը կնիքով: **2** Տեսայ նաեւ հզօր հրեշտակ մը, որ բարձրաձայն կը յայտարարէր. «Ո՞վ արժանի է բանալու այդ գիրքը եւ քակելու ատոր կնիքները»: **3** Բայց ոչ մէկը, ոչ երկինքի մէջ, ոչ երկրի վրայ, ոչ ալ երկրի ներքեւ՝ կարող էր բանալ այդ գիրքը, ոչ ալ նայիլ անոր: **4** Ես ալ սաստիկ կու լայի՝ քանի որ ոչ մէկը արժանի գտնուեցաւ

բանալու այդ գիրքը, ոչ ալ նայելու անոր: 5 Իսկ երեցներէն մէկը ըսաւ ինծի. «Մի լար. ահա՛ Յուդայի տոհմէն եղող Առիւծը, Դաւիթի Արմատը, յաղթեց՝ որպէսզի բանայ այդ գիրքը եւ քակէ ատոր եօթը կնիքները: 6 Ու տեսայ թէ գահին եւ չորս Էակներուն մէջտեղ, ու երեցներուն մէջտեղ, կայնած էր Գառնուկ մը՝ որպէս թէ մորթուած. ան ունէր եօթը եղջիւր ու եօթը աչք, որոնք Աստուծոյ եօթը Հոգիներն են՝ դրկուած ամբողջ երկիրը: 7 Ան եկաւ եւ առաւ գիրքը գահին վրայ բազմողին աջ ձեռքէն: 8 Երբ առաւ գիրքը, չորս Էակներն ու քսանչորս երեցները ինկան Գառնուկին առջեւ եւ երկրպագեցին. անոնցմէ իւրաքանչիւրը ունէր քնար մը, ու ոսկիէ սկաւառակ մը՝ խունկերով լեցուն, որ սուրբերուն աղօթքներն են: 9 Անոնք կ'երգէին նոր երգ մը՝ ըսելով. «Դուն արժանի ես առնելու այդ գիրքը եւ քակելու ատոր կնիքները. որովհետեւ մորթուեցար, ու քու արիւնովդ գնեցիր մեզ Աստուծոյ համար՝ ամէն տոհմէ, լեզուէ, ժողովուրդէ եւ ազգէ, 10 թագաւորներ ու քահանաներ ըրիր մեզ մեր Աստուծոյն, եւ երկրի վրայ պիտի թագաւորենք»: 11 Տեսայ, ու լսեցի ձայնը շատ հրեշտակներու՝ որոնք գահին, Էակներուն եւ երեցներուն շուրջն էին. անոնց թիւը բիւրերով բիւր ու հազարներով հազար էր: 12 Անոնք բարձրաձայն կ'ըսէին. «Այդ մորթուած Գառնուկը արժանի է ընդունելու զօրութիւն, հարստութիւն, իմաստութիւն, ոյժ, պատիւ, փառք եւ օրինաբանութիւն»: 13 Ու

լսեցի բոլոր արարածները՝ երկինքի մէջ, երկրի վրայ, երկրի ներքեւ եւ ծովու մէջ եղող, ու ամէն ինչ որ անոնց մէջ կայ, որոնք կ'ըսէին. «Գահին վրայ բազմողին եւ Գառնուկին՝ օրհնաբանութիւն, պատիւ, փառք ու զօրութիւն դարե դար»։ (aiōn g165)

14 Եւ չորս Էակները կ'ըսէին. «Ամէն»։ Ու երեցները ինկան եւ երկրպագեցին։

6 Նայեցայ՝ երբ Գառնուկը բացաւ կնիքներէն մէկը՝, եւ լսեցի չորս Էակներէն մէկուն ձայնը՝ որոտումի պէս, որ կ'ըսէր. «Եկ՛րու ու տէ՛ս»։ 2 Եւ տեսայ. ահա՛ ճերմակ ձի մը կար, որուն վրայ հեծնողը ունէր աղեղ մը։ Պսակ մը տրուեցաւ անոր, ու դուրս ելաւ իբր յաղթող՝ որպէսզի յաղթէ։ 3 Երբ բացաւ երկրորդ կնիքը, լսեցի երկրորդ Էակը՝ որ կ'ըսէր. «Եկ՛րու»։ 4 Ուրիշ, շառագոյն ձի մը դուրս ելաւ, եւ անոր վրայ հեծնողին իշխանութիւն տրուեցաւ՝ որ երկրէն վերցնէ խաղաղութիւնը, որպէսզի մորթեն զիրար. ու մեծ սուր մը տրուեցաւ անոր։ 5 Երբ բացաւ երրորդ կնիքը, լսեցի երրորդ Էակը՝ որ կ'ըսէր. «Եկ՛րու ու տէ՛ս»։ Եւ տեսայ. ահա՛ սեւ ձի մը կար, որուն վրայ հեծնողը՝ ձեռքին մէջ ունէր կշիռք մը։ 6 Չորս Էակներուն մէջէն լսեցի ձայն մը՝ որ կ'ըսէր. «Կապի՛ճ մը ցորենը՝ մէկ դահեկանի, ու երեք կապի՛ճ գարին՝ մէկ դահեկանի։ Մի՛ վնասեր ձեթին եւ գինիին»։ 7 Երբ բացաւ չորրորդ կնիքը, լսեցի չորրորդ Էակին ձայնը՝ որ կ'ըսէր. «Եկ՛րու ու տէ՛ս»։ 8 Եւ տեսայ. ահա՛ տժգոյն ձի մը կար, որուն վրայ հեծնողին անունը Մահ էր, ու դժոխքը կը հետեւէր անոր։

Իշխանութիւն տրուեցաւ անոնց՝ երկրի քառորդին վրայ, որ սպաննեն թուրով, սովով, մահով ու երկրի գազաններով: (Hadēs 986) 9 Երբ բացաւ հինգերորդ կնիքը, զոհասեղանին ներքեւ տեսայ անձերը անոնց՝ որ մորթուած էին Աստուծոյ խօսքին համար, եւ իրենց տուած վկայութեան համար: 10 Անոնք բարձրաձայն աղաղակեցին. «Սո՛ւրբ եւ ճշմարիտ Տիրակալ, մինչեւ ե՛րբ պիտի չդատես ու չառնես մեր արիւնին վրէժը երկրի բնակիչներէն»: 11 ճերմակ պարեգօտ տրուեցաւ անոնցմէ իւրաքանչիւրին, եւ ըսուեցաւ անոնց որ հանգչին քիչ մը ժամանակ ալ, մինչեւ որ ամբողջանան իրենց ծառայակիցներն ու անոնց եղբայրները՝ որոնք պիտի սպաննուէին իրենց պէս: 12 Տեսայ՝ երբ բացաւ վեցերորդ կնիքը, եւ ահա՛ մեծ երկրաշարժ մը եղաւ: Արեւը սեւցաւ՝ մագեղէն քուրձի մը պէս, լուսինը (բոլորովին) արիւնի գոյնի պէս եղաւ, 13 ու երկինքի աստղերը ինկան երկրի վրայ, ինչպէս սաստիկ հովէն շարժուած թզենին կը թափէ իր տհաս պտուղները: 14 Երկինքը կծկուեցաւ ոլորուող մագաղաթի մը պէս, եւ բոլոր լեռներն ու կղզիները շարժեցան իրենց տեղերէն: 15 Երկրի թագաւորները, մեծամեծները, հարուստները, հազարապետները, գօրաւորները, եւ բոլոր ստրուկներն ու բոլոր ազատները պահուըտեցան քարայրներու եւ լեռներու ժայռերուն մէջ, 16 ու կ'ըսէին լեռներուն եւ ժայռերուն. «Ինկէ՛ք մեր վրայ ու պահեցէ՛ք մեզ գահին վրայ բազմողին երեսէն, եւ Գառնուկին

բարկութենէն: 17 Որովհետեւ անոր բարկութեան մեծ օրը եկաւ, եւ ի՞նչ կրնայ դիմանալ»:

7 Ասկէ ետք տեսայ չորս հրեշտակներ, որ կայնած էին երկրի չորս անկիւնները ու բռնած էին երկրի չորս հովերը, որպէսզի հով չփչէ՝ ո՛չ երկրի վրայ, ո՛չ ծովու վրայ, ո՛չ ալ ծառի մը վրայ: 2 Տեսայ նաեւ ուրիշ հրեշտակ մը, որ բարձրացաւ արեւելքէն եւ ունէր ապրող Աստուծոյ կնիքը: Ան բարձրաձայն աղաղակեց այն չորս հրեշտակներուն, որոնց իշխանութիւն տրուած էր վնասելու երկրին ու ծովուն. 3 «Մի վնասէք՝ ո՛չ երկրին, ո՛չ ծովուն, ո՛չ ալ ծառերուն, մինչեւ որ կնքենք մեր Աստուծոյն ծառաներուն ճակատը»: 4 Լսեցի կնքուածներուն թիւը.- հարիւր քառասունչորս հազար կնքուած՝ Իսրայելի որդիներուն բոլոր տոհմերէն. 5 Յուդայի տոհմէն՝ տասներկու հազար կնքուած, Ռուբէնի տոհմէն՝ տասներկու հազար կնքուած, Գադի տոհմէն՝ տասներկու հազար կնքուած, 6 Ասերի տոհմէն՝ տասներկու հազար կնքուած, Նեփթաղիմի տոհմէն՝ տասներկու հազար կնքուած, Մանասէի տոհմէն՝ տասներկու հազար կնքուած, 7 Շմալոնի տոհմէն՝ տասներկու հազար կնքուած, Դեւիի տոհմէն՝ տասներկու հազար կնքուած, Իսաքարի տոհմէն՝ տասներկու հազար կնքուած, 8 Զաքուղոնի տոհմէն՝ տասներկու հազար կնքուած, Յովսէփի տոհմէն՝ տասներկու հազար կնքուած, Բենիամինի տոհմէն՝ տասներկու հազար կնքուած: 9 Ասկէ ետք տեսայ, եւ ահա՛ մեծ

բազմութիւն մը կար, որ ի՞նչ մէկը կրնար համրել, բոլոր ազգերէն, տոհմերէն, ժողովուրդներէն ու լեզուներէն: Անոնք կայնած էին գահին առջեւ եւ Գառնուկին առջեւ՝ հագած ճերմակ պարեգօտներ ու արմաւենիներ բռնած իրենց ձեռքերուն մէջ, 10 եւ բարձրաձայն կ'աղաղակէին. «Փրկութիւնը մեր Աստուծոյնն է՝ որ կը բազմի գահին վրայ, նաեւ՝ Գառնուկինը»: 11 Բոլոր հրեշտակները, որ կայնած էին գահին, երեցներուն ու չորս էակներուն շուրջը, ինկան իրենց երեսին վրայ՝ գահին առջեւ, եւ երկրպագեցին Աստուծոյ՝ 12 ըսելով. «Ամէն. օրհնաբանութիւն, փանֆ, իմաստութիւն, շնորհակալութիւն, պատիւ, զօրութիւն ու կարողութիւն մեր Աստուծոյն՝ դարե դար»: Ամէն»: (aiōn g165) 13 Երեցներէն մէկը ըսաւ ինծի. «Ո՞վ են ասոնք՝ որ հագած են ճերմակ պարեգօտներ, եւ ուրկէ՞ եկած են»: 14 Ես ալ ըսի անոր. «Տէր, դո՛ւն գիտես»: Ան ալ ըսաւ ինծի. «Ասոնք մեծ տառապանքէն եկողներն են, որ լուացին իրենց պարեգօտները ու ճերմկցուցին զանոնք Գառնուկին արիւնով: 15 Ուստի Աստուծոյ գահին առջեւ են, եւ կը պաշտեն զինք ցերեկ ու գիշեր՝ իր տաճարին մէջ. եւ գահին վրայ բազմողը պիտի բնակի անոնց մէջ: 16 Այլեւս ի՞նչ պիտի անօթենան, ի՞նչ պիտի ծարաւնան, ի՞նչ ալ արեւը կամ որեւէ տօթ պիտի իյնայ անոնց վրայ. 17 որովհետեւ Գառնուկը՝ որ գահին մէջտեղն է՝ պիտի հովուէ զանոնք, պիտի առաջնորդէ զանոնք դէպի կենարար ջուրերու աղբիւրները, եւ

Աստուած բոլոր արցունքները պիտի սրբէ անոնց աչքերէն»:

8 Երբ բացաւ եօթներորդ կնիքը, լռութիւն եղաւ երկինքը՝ կէս ժամու չափ: **2** Ու տեսայ այն եօթը հրեշտակները՝ որ կայնած էին Աստուծոյ առջեւ. եօթը փողեր տրուեցան անոնց: **3** Ուրիշ հրեշտակ մը եկաւ եւ կայնեցաւ զոհասեղանին առջեւ. ան ունէր ոսկիէ խնկանոց մը, ու շատ խունկ տրուեցաւ իրեն, որպէսզի ընծայէ բոլոր սուրբերուն աղօթքներուն հետ՝ գահին առջեւ եղող ոսկիէ զոհասեղանին վրայ: **4** Եւ խունկերուն ծուխը՝ սուրբերուն աղօթքներուն հետ՝ հրեշտակին ձեռքէն բարձրացաւ Աստուծոյ առջեւ: **5** Ապա հրեշտակը առաւ խնկանոցը, լեցուց զայն զոհասեղանին կրակէն, ու նետեց երկրի վրայ. եւ ձայներ, որոտումներ, փայլակներ ու երկրաշարժ եղան: **6** Եւ եօթը հրեշտակները, որ ունէին եօթը փողերը, պատրաստուեցան հնչեցնելու զանոնք: **7** Առաջին հրեշտակը հնչեցուց փողը, եւ արիւնով խառնուած կարկուտ ու կրակ եղաւ եւ նետուեցաւ երկրի վրայ. (երկրի մէկ երրորդը այրեցաւ,) ծառերուն մէկ երրորդը այրեցաւ, ու ամեն կանաչ խոտ այրեցաւ: **8** Երկրորդ հրեշտակը հնչեցուց փողը, եւ հրավառ մեծ լեռան պէս բան մը նետուեցաւ ծովը. ծովուն մէկ երրորդը արիւն եղաւ, **9** ծովուն մէջ ապրող արարածներուն մէկ երրորդը մեռաւ, ու նաւերուն մէկ երրորդը փճացաւ: **10** Երրորդ հրեշտակը հնչեցուց փողը, ու երկինքէն մեծ աստղ մը ինկաւ՝

ջահի պէս վառելով. ան ինկաւ գետերուն մէկ երրորդին եւ ջուրերու աղբիւրներուն վրայ: **11** Այդ աստղին անունը Օշինդր էր, ու ջուրերուն մէկ երրորդը օշինդր եղաւ, եւ շատ մարդիկ մեռան ջուրերէն՝ քանի որ դառնացած էին: **12** Չորրորդ հրեշտակը հնչեցուց փողը, ու արեւին մէկ երրորդը զարնուեցաւ, նաեւ լուսինին մէկ երրորդը եւ աստղերուն մէկ երրորդը. հետեւաբար անոնց մէկ երրորդը խաւարեցաւ, օրուան մէկ երրորդը չլուսաւորուեցաւ, նմանապէս՝ գիշերուան: **13** Տեսայ, ու լսեցի երկինքի մէջտեղէն թռչող հրեշտակ մը՝ որ բարձրաձայն կ'ըսէր. «Վայ, վայ, վայ երկրի բնակիչներուն՝ այն միւս փողի ձայներուն համար, որ երեք հրեշտակները պիտի հնչեցնեն»:

9 Հինգերորդ հրեշտակը հնչեցուց փողը, ու տեսայ աստղ մը՝ որ երկինքէն ինկաւ երկրի վրայ: Անդունդի գուրբին բանալին տրուեցաւ անոր. *(Abyssos g12)* **2** ան ալ բացաւ անդունդին գուրբը, եւ այդ գուրբէն ծուխ բարձրացաւ՝ մեծ հնոցի մը ծուխին պէս: Արեւն ու օդը խաւարեցան գուրբին ծուխէն: *(Abyssos g12)* **3** Ծուխէն մարախներ ելան երկրի վրայ, եւ անոնց իշխանութիւն տրուեցաւ՝ երկրի կարիճներուն ունեցած իշխանութեան պէս: **4** Ըսուեցաւ անոնց որ վնասեն ո՛չ երկրի խոտին, ո՛չ որեւէ կանաչութեան, ո՛չ ալ որեւէ ծառի, հապա միայն այն մարդոց՝ որոնք չունին Աստուծոյ կնիքը իրենց ճակատին վրայ: **5** Հրաման տրուեցաւ անոնց որ չսպաննեն զանոնք, հապա

տանջեն զանոնք հինգ ամիս. անոնց տուած տանջանքը՝ կարիճի տուած տանջանքին պէս էր, երբ կը խայթէ մարդը: **6** Այդ օրերը մարդիկ պիտի փնտռեն մահը, սակայն պիտի չգտնեն. պիտի ցանկան մեռնիլ, բայց մահը պիտի փախչի իրենցմէ: **7** Մարախները կը նմանէին պատերազմի պատրաստուած ձիերու. անոնց գլուխներուն վրայ կային որպէս թէ ոսկիէ պսակներ, եւ անոնց երեսները մարդոց երեսներուն պէս էին: **8** Ունէին մագեր՝ կիներու մագերուն պէս. անոնց ակռաները՝ առիւծներու ակռաներուն պէս էին: **9** Ունէին զրահներ՝ երկաթէ զրահներու պէս, իսկ անոնց թելերուն ձայնը՝ պատերազմի վազող բազմաթիւ ձիերէ քաշուած կառքերու ձայնին պէս էր: **10** Ունէին պոչեր՝ կարիճներու նման, ու խայթոցներ կային պոչերուն վրայ: Իշխանութիւն ունէին հինգ ամիս վնասելու մարդոց, **11** եւ իրենց վրայ թագաւոր ունէին անդունդին հրեշտակը, որուն անունը եբրայերէն Աբադոն է, իսկ յունարէն՝ Ապոդիոն: (Abyssos g12) **12** Մէկ վայր անցաւ. ասկէ ետք ահա՛ երկու վայ ալ կու գայ: **13** Վեցերորդ հրեշտակը հնչեցուց փողը, ու լսեցի ձայն մը՝ Աստուծոյ առջեւ եղող ոսկիէ զոհասեղանին չորս եղջիւրներէն, **14** որ կ'ըսէր փող ունեցող վեցերորդ հրեշտակին. «Արձակէ՛ Եփրատ մեծ գետին վրայ կապուած չորս հրեշտակները»: **15** Եւ արձակուեցան այն չորս հրեշտակները, որ պատրաստուած էին Ժամուան, օրուան, ամսուան ու տարուան համար՝ որպէսզի սպաննեն մարդոց մէկ երրորդը: **16**

Ձիաւոր զօրքերուն թիւը երկու բիւր բիւր՝ էր. եւ լսեցի անոնց թիւը: 17 Այսպէս՝ տեսիլքին մէջ տեսայ ձիերը եւ անոնց վրայ հեծնողները, որոնք ունէին կրակի, յակինթի ու ծծումբի գոյն զրահներ: Ձիերուն գլուխները առիւծներու գլուխներու պէս էին. կրակ, ծուխ եւ ծծումբ կ'ելլէին անոնց բերանէն: 18 Այս երեք (պատուհաս) ներէն մարդոց մէկ երրորդը սպաննուեցաւ, այսինքն՝ կրակէն, ծուխէն ու ծծումբէն, որոնք կ'ելլէին անոնց բերանէն: 19 Որովհետեւ անոնց իշխանութիւնը իրենց բերաններուն եւ պոչերուն մէջ էր, քանի որ անոնց պոչերը նման էին օձերու, եւ ունէին գլուխներ՝ որոնցմով կը վնասէին: 20 Միւս մարդիկը՝ որ չսպաննուեցան այս պատուհասներէն, չապաշխարեցին իրենց ձեռքերուն գործերէն՝ որ չերկրպագեն դէւերուն, նաեւ ոսկիէ, արծաթէ, պղինձէ, քարէ ու փայտէ շինուած կուռքերուն, որոնք ոչ կրնան տեսնել, ոչ լսել, ոչ ալ քալել: 21 Նաեւ չապաշխարեցին ոչ իրենց մարդասպանութիւններէն, ոչ իրենց կախարդութիւններէն, ոչ իրենց պոռնկութենէն, ոչ ալ իրենց գողութիւններէն:

10 Տեսայ ուրիշ հզօր հրեշտակ մը՝ որ կ'իջնէր երկինքէն: Հագած էր ամպ մը, եւ ծիածան մը կար իր գլուխին վրայ: Իր երեսը արեւի պէս էր, ու ոտքերը՝ կրակէ սիւներու պէս. 2 ձեռքին մէջ ունէր բացուած գրքոյկ մը: Իր աջ ոտքը դրաւ ծովուն վրայ, իսկ ձախը՝ ցամաքին վրայ, 3 եւ բարձրաձայն աղաղակեց՝ առիւծի մը մոնչիւնին պէս: Երբ

աղաղակեց, եօթը որոտումները խօսեցան իրենց ձայներով: **4** Երբ եօթը որոտումները խօսեցան՝ ես պիտի գրէի, բայց լսեցի երկինքէն ձայն մը՝ որ կ'ըսէր. «Կնք՛ այն բաները՝ որ եօթը որոտումները խօսեցան, ու մի՛ գրեր զանոնք»: **5** Այն հրեշտակը որ տեսած էի՝ կայնած ծովուն վրայ եւ ցամաքին վրայ, իր (աջ) ձեռքը բարձրացուց երկինք, **6** ու երդում ըրաւ անով՝ որ դարե՛ դար՝՝ կ'ապրի, եւ ստեղծեց երկինքն ու ինչ որ անոր մէջ է, երկիրը եւ ինչ որ անոր մէջ է, ու ծովը եւ ինչ որ անոր մէջ է, թէ ալ ժամանակ պիտի չըլլայ: (aiðn g165) **7** Հապա՛ եօթներորդ հրեշտակին ձայնին օրերը, երբ սկսի փող հնչեցնել, Աստուծոյ խորհուրդը պիտի կատարուի, ինչպէս ինք աւետած էր իր ծառաներուն՝ մարգարէներուն: **8** Այն ձայնը՝ որ լսեր էի երկինքէն, դարձեալ խօսեցաւ ինծի եւ ըսաւ. «Գնա՛, ան՝ այն բաց գրքոյկը՝ որ ծովուն ու ցամաքին վրայ կայնող հրեշտակին ձեռքին մէջ է»: **9** Ես ալ գացի հրեշտակին եւ ըսի անոր. «Տո՛ւր ինծի այդ գրքոյկը»: Ան ալ ըսաւ ինծի. «Ա՛ռ ասիկա ու լափէ. պիտի դառնացնէ փորդ, բայց մեղրի պէս անոյշ պիտի ըլլայ բերանիդ մէջ»: **10** Առի գրքոյկը հրեշտակին ձեռքէն եւ լափեցի զայն: Մեղրի պէս անոյշ էր բերանիս մէջ, բայց երբ կերայ՝ փորս դառնացաւ: **11** Ան ալ ըսաւ ինծի. «Պէտք է որ դուն դարձեալ մարգարէանաս շատ ժողովուրդներու, ազգերու, լեզուներու եւ թագաւորներու մասին»:

11 Ինծի տրուեցաւ եղեգ մը՝ գաւազանի նման, եւ կայնած հրեշտակը ըսաւ. «Ոտքի՛ ելիր ու

չափէ Աստուծոյ տաճարը, զոհասեղանը, եւ անոր մէջ երկրպագողները: **2** Բայց ձգէ՛ գաւիթը՝ որ տաճարէն դուրս է, ու մի՛ չափեր գայն, որովհետեւ ան տրուած է հեթանոսներուն. անոնք ոտնակոխ պիտի ընեն սուրբ քաղաքը՝ քառասուններկու ամիս: **3** Եւ զօրութիւն պիտի տամ իմ երկու վկաներուս, եւ անոնք՝ քուրճ հագած՝ պիտի մարգարէանան հազար երկու հարիւր վաթսուն օր: **4** Ասոնք այն երկու ձիթենիներն ու երկու աշտանակներն են՝ որ կը կանգնին երկրի Տէրոջ առջեւ: **5** Եթէ մէկը ուզէ վնասել անոնց, կրակ պիտի ելլէ անոնց բերանէն եւ պիտի լափէ իրենց թշնամիները. եթէ մէկը ուզէ վնասել անոնց, պետք է որ այսպէս մեռցուի: **6** Ասոնք իշխանութիւն ունին երկինքը գոցելու, որպէսզի անձրեւ չտեղայ իրենց մարգարէութեան օրերը. իշխանութիւն ունին նաեւ ջուրերուն վրայ՝ արին դարձնելու զանոնք, եւ զարնելու երկիրը ամէն տեսակ պատուհասներով՝ քանի՛ անգամ որ ուզեն: **7** Երբ աւարտեն իրենց վկայութիւնը, այն ատեն անդունդէն բարձրացող գազանը պիտի պատերազմի անոնց հետ, պիտի յաղթէ անոնց եւ պիտի մեռցնէ զանոնք: (*Abyssos g12*) **8** Անոնց դիակները ինկած պիտի մնան հրապարակին վրայ այն մեծ քաղաքին՝ որ հոգեւորապէս Սողոմ ու Եգիպտոս կը կոչուի, ուր մեր Տէրն ալ խաչուեցաւ: **9** Եւ ժողովուրդները, տոհմերը, լեզուներն ու ազգերը պիտի տեսնեն անոնց դիակները՝ երեք ու կէս օր, ու թոյլ պիտի չտան որ անոնց

դիակները դրուին գերեզմանի մէջ: **10** Երկրի բնակիչները պիտի ուրախանան անոնց համար, պիտի գուարճանան, եւ մինչեւ անգամ ընծաներ պիտի դրկեն իրարու. որովհետեւ այս երկու մարգարէները տանջած էին երկրի բնակիչները: **11** Երեք ու կէս օր ետք, Աստուծմէ եկող կեանքի հոգի մտաւ անոնց մէջ, կայնեցան իրենց ոտքերուն վրայ, ու մեծ վախ համակեց զիրենք տեսնողները՝:

12 Լսեցին երկինքէն հզօր ձայն մը ` որ կ'ըսէր իրենց. «Յո՛ւ բարձրացէք»: Եւ ամպով մը երկինք բարձրացան, ու իրենց թշնամիներն ալ տեսան զիրենք: **13** Նոյն ժամուն հզօր երկրաշարժ մը եղաւ, եւ քաղաքին մէկ տասներորդը կործանեցաւ: Եօթը հազար մարդիկ սպաննուեցան այդ երկրաշարժէն. մնացողները վախցան ու փառք տուին երկինքի Աստուծոյն: **14** Երկրորդ վայր անցաւ. ահա՛ երրորդ վայր շուտով կու գայ: **15** Եօթներորդ հրեշտակը հնչեցուց փողը, ու երկինքի մէջ եղան հզօր ձայներ՝ որ կ'ըսէին. «Աշխարհի թագաւորութիւնները եղան մեր Տէրոջ եւ իր Օծեալին, ու ան պիտի թագաւորէ դարե՛ դար՝»: (aiōn g165) **16** Քսանչորս երեցները, որոնք բազմած էին իրենց գահերուն վրայ՝ Աստուծոյ առջեւ, ինկան իրենց երեսին վրայ ու երկրպագեցին Աստուծոյ՝ ըսելով. **17** «Քեզմէ շնորհակալ ենք, Տէր, Ամենակալ Աստուած, որ ես եւ որ էիր, որովհետեւ կիրարկեցիր՝ քու մեծ գօրութիւնդ ու թագաւորեցիր: **18** Ազգերը բարկացան. քու բարկութիւնդ եկաւ, նաեւ մեռելներուն ատենը՝ որպէսզի դատուին, եւ

դուն վարձատրես քու ծառաներդ՝ մարգարէները,
սուրբերն ու քու անունէդ վախցողները, պզտիկ
թէ մեծ, եւ ապականես երկիրը ապականողները»:
19 Եւ Աստուծոյ տաճարը բացուեցաւ երկինքի մէջ.
անոր ուխտին տապանակը երեւցաւ իր տաճարին
մէջ, ու եղան փայլակներ, ձայներ, որոտումներ,
երկրաշարժ եւ խոշոր կարկուտ:

12 Մեծ նշան մը երեւցաւ երկինքի մէջ.- կին մը՝
արելը հագած, լուսինը՝ իր ոտքերուն ներքեւ, եւ
տասներկու աստղէ պսակ մը՝ իր գլուխին վրայ, **2**
յոյի ըլլալով կ'աղաղակէր. երկունքի ցաւ կը քաշէր
ու կը տանջուէր ծնանելու համար: **3** Ուրիշ նշան
մըն ալ երեւցաւ երկինքի մէջ. ահա մեծ շառագոյն
վիշապ մը կար, որ ունէր եօթը գլուխ ու տասը
եղջիւր, եւ իր գլուխներուն վրայ՝ եօթը թագ: **4**
Անոր պոչը կը քաշէր երկինքի աստղերուն մէկ
երրորդը, ու նետեց զանոնք երկրի վրայ: Վիշապը
կայնեցաւ այն կնոջ առջեւ՝ որ ծնանելու մօտ էր,
որպէսզի լափէ անոր գաւակը՝ երբ ծնի: **5** Կինը
ծնաւ արու գաւակ մը, որ երկաթէ գաւազանով
պիտի հովուէր բոլոր ազգերը: Անոր գաւակը
յափշտակուեցաւ Աստուծոյ եւ անոր գահին քով:
6 Կինն ալ փախաւ անապատը, ուր Աստուծոմէ
տեղ պատրաստուած էր անոր, որպէսզի հոն
կերակրուի հազար երկու հարիւր վաթսուն
օր: **7** Ապա պատերազմ եղաւ երկինքի մէջ.
Միքայէլ եւ իր հրեշտակները պատերազմեցան
վիշապին հետ: Վիշապն ալ պատերազմեցաւ
իր հրեշտակներով, **8** բայց չկրցաւ յաղթել, ու

երկինքի մէջ ալ տեղ չգտնուեցաւ անոնց: **9** Ուստի վտարուեցաւ մեծ վիշապը, այն նախկին օձը՝ Չարախօս ու Սատանայ կոչուած, որ մոլորեցուց ամբողջ երկրագունդը. վտարուեցաւ դէպի երկիր, եւ իր հրեշտակները վտարուեցան իրեն հետ: **10** Ու լսեցի երկինքի մէջ հզօր ձայն մը՝ որ կ'ըսէր. «Յիմա եղաւ մեր Աստուծոյն փրկութիւնը, զօրութիւնն ու թագաւորութիւնը, եւ անոր Օծեալին իշխանութիւնը. որովհետեւ խորտակուեցաւ մեր եղբայրներուն Ամբաստանողը, որ ցերեկ ու գիշեր կ'ամբաստանէր զանոնք մեր Աստուծոյն առջեւ: **11** Անոնք յաղթեցին անոր՝ Գառնուկին արիւնով եւ իրենց վկայութեան խօսքով, ու չսիրեցին իրենց անձը՝ մինչեւ մահ: **12** Ուստի ուրախացէ՛ք, երկինք, եւ դուք՝ որ կը բնակիք անոր մէջ. վայ երկրին ու ծովուն, որովհետեւ Չարախօսը իջաւ ձեզի՝ սաստիկ զայրոյթով, քանի որ գիտէ թէ ունի կարճ ժամանակ»: **13** Երբ վիշապը տեսաւ թէ ինք նետուեցաւ երկրի վրայ, հալածեց արու գաւակ ծնանող կիներ: **14** Մեծ արծիւի երկու թւեր տրուեցան այդ կնոջ, որպէսզի թռչի դէպի անապատ, իր տեղը՝ ուր պիտի կերակրուէր ժամանակ մը, ժամանակներ ու կէս ժամանակ՝ հեռու օձին երեսէն: **15** Իսկ օձը իր բերանէն հեղեղի պէս ջուր թափեց կնոջ ետեւէն, որպէսզի հեղեղով ընկղմէ զայն: **16** Բայց երկիրը օգնեց կնոջ. երկիրը բացաւ իր բերանը եւ կլլեց այն հեղեղը՝ որ վիշապը թափեց իր բերանէն: **17** Վիշապն ալ բարկացաւ կնոջ դէմ, ու գնաց պատերազմելու

անոր զարմեն մնացողներուն հետ, որոնք կը պահէին Աստուծոյ պատուիրանները եւ ունէին Յիսուսի վկայութիւնը: Ապա կայնեցայ ծովու աւազին վրայ:

13 Տեսայ թէ գազան մը կը բարձրանար ծովէն. ան ունէր եօթը գլուխ ու տասը եղջիւր: Անոր եղջիւրներուն վրայ տասը թագ կար, եւ անոր գլուխներուն վրայ՝ հայհոյութեան անուններ: **2** Այդ գազանը նման էր ընձառիւծի. անոր ոտքերը՝ արջի ոտքերու պէս էին, եւ անոր երախը՝ առիւծի երախի պէս: Վիշապը տուաւ անոր իր զօրութիւնը, իր գահն ու մեծ իշխանութիւն: **3** Անոր գլուխներէն մէկը մորթուածի պէս էր. բայց անոր մահացու վերքը բուժուեցաւ, եւ ամբողջ երկիրը սքանչանալով գազանին հետեւեցաւ՝: **4** Անոնք երկրպագեցին վիշապին՝ որ իշխանութիւն տուաւ գազանին, ու երկրպագեցին գազանին՝ ըսելով. «Ո՛վ նման է գազանին. ո՛վ կրնայ պատերազմիլ անոր հետ»: **5** Անոր տրուեցաւ բերան մը՝ մեծ բաներ եւ հայհոյութիւններ խօսող, ու իշխանութիւն տրուեցաւ անոր՝ ընելու իր կամքը քառասուններկու ամիս: **6** Հայհոյութեամբ բացաւ իր բերանը Աստուծոյ դէմ, եւ հայհոյեց անոր անունին, խորանին ու երկինքը բնակողներուն դէմ: **7** Անոր իշխանութիւն տրուեցաւ սուրբերուն հետ պատերազմելու եւ յաղթելու անոնց: Անոր իշխանութիւն տրուեցաւ բոլոր տոհմերուն (եւ ժողովուրդներուն) ու լեզուներուն եւ ազգերուն վրայ: **8** Անոր պիտի երկրպագեն բոլոր անոնք որ

կը բնակին երկրի վրայ եւ որոնց անունը աշխարհի հիմնադրութենէն ի վեր գրուած չէ մորթուած Գառնուկին կեանքի գիրքին մէջ՝: **9** Ո՛վ որ ականջ ունի, թող լսէ: **10** Ա՛ն որ գերեվարէ, ինք գերի պիտի տարուի. ան որ սուրով սպաննէ, պետք է որ սուրով սպաննուի: Զո՛ւն է սուրբերուն համբերութիւնն ու հաւատքը: **11** Տեսայ նաեւ ուրիշ գազան մը, որ կը բարձրանար երկրէն. ունէր երկու եղջիւր՝ գառնուկի նման, եւ կը խօսէր վիշապի պէս: **12** Կը վարէր առաջին գազանին ամբողջ իշխանութիւնը՝ անոր առջեւ, ու կը ստիպէր երկիրը եւ անոր բնակիչները՝ որ երկրպագեն առաջին գազանին, որուն մահացու վերքը բուժուած էր: **13** Մեծ նշաններ կ'ըներ, եւ մինչեւ անգամ երկինքէն կրակ կ'իջեցներ երկրի վրայ՝ մարդոց առջեւ: **14** Կը մոլորեցներ երկրի բնակիչները այն նշաններով՝ որ ընելու կարողութիւն տրուած էր իրեն՝ գազանին առջեւ: Կ'ըսէր երկրի բնակիչներուն որ շինեն պատկերը այն գազանին՝ որ սուրով վիրաւորուած էր բայց ապրեցաւ: **15** Եւ կարողութիւն տրուեցաւ իրեն՝ որ հոգի տայ գազանին պատկերին, որպէսզի գազանին պատկերը խօսի, նաեւ մեռցնել տայ բոլոր անոնք՝ որ չեն երկրպագեր գազանին պատկերին: **16** Կը ստիպէր բոլորն ալ, պզտիկ թէ մեծ, հարուստ թէ աղքատ, ազատ թէ ստրուկ, որ դրոշմ ընդունին իրենց աջ ձեռքին վրայ կամ իրենց ճակատին վրայ, **17** որպէսզի ի՛նչ մէկը կարենայ գնել կամ ծախել, բայց միայն ան՝ որ ունի դրոշմը, կամ գազանին անունը, կամ անոր անունին թիւը:

18 Զոն է իմաստութիւնը. ո՛վ որ միտք ունի, թող հաշուէ գազանին թիւը, քանի որ մարդու մը թիւն է, եւ անոր թիւը՝ վեց հարիւր վաթսունվեց է:

14 Յետոյ նայեցայ, եւ ահա՛ Գառնուկը կայնած էր Սիոն լեռան վրայ, ու անոր հետ՝ հարիւր քառասունչորս հազարը, որոնց ճակատին վրայ գրուած էր (անոր անունը եւ) անոր Զօր անունը: 2 Ու լսեցի երկինքէն ձայն մը՝ յորդառատ ջուրերու ձայնի պէս, եւ հզօր որոտումի մը ձայնին պէս. լսած ձայնս կը նմանէր քնարահարներուն նուագած քնարներու ձայնին: 3 Ասոնք կ'երգէին նոր երգ մը՝ գահին, չորս էակներուն ու երեցներուն առջեւ. ո՛չ մէկը կրնար սորվիլ այդ երգը՝ բացի այդ հարիւր քառասունչորս հազարէն, որոնք գնուած էին երկրէն: 4 Ասոնք անո՛նք են՝ որ չպղծուեցան կիներու հետ, քանի որ կոյս են: Ասոնք անո՛նք են՝ որ կը հետեւին Գառնուկին, ո՛ր որ ան երթայ. ասոնք գնուեցան մարդոց մէջէն՝ երախայրիք ըլլալու Աստուծոյ ու Գառնուկին: 5 Նենգութիւն չգտնուեցաւ իրենց բերանը, որովհետեւ անարատ են: 6 Տեսայ նաեւ ուրիշ հրեշտակ մը, որ կը թռչէր երկինքի մէջ եւ ունէր յաւիտենական աւետարանը՝ քարոզելու երկրի վրայ բնակող բոլոր ազգերուն, տոհմերուն, լեզուներուն ու ժողովուրդներուն: (aiōnios g166) 7 Ան բարձրածայն կ'ըսէր. «Վախցէ՛ք Աստուծմէ եւ փա՛ռք տուէ՛ք անոր, որովհետեւ անոր դատաստանին ժամը հասաւ. երկրպագեցէ՛ք անոր՝ որ ստեղծեց երկինքը, երկիրը, ծովն ու

ջուրներուն աղբիւրները»: 8 Ուրիշ հրեշտակ
 մը հետեւեցաւ անոր եւ ըսաւ. «Կործանեցա՛ւ,
 կործանեցա՛ւ մեծ Բաբելոնը, որովհետեւ բոլոր
 ազգերուն խմցուց իր պոռնկութեան զայրոյթի
 գինիէն»: 9 Երրորդ հրեշտակ մըն ալ հետեւեցաւ
 անոնց ու բարձրաձայն ըսաւ. «Ո՛վ որ երկրպագէ
 զազանին ու անոր պատկերին, եւ ընդունի անոր
 դրոշմը իր ճակատին կամ իր ձեռքին վրայ, 10
 անիկա՛ պիտի խմէ Աստուծոյ զայրոյթի գինիէն,
 որ անխառն լեցուած է անոր բարկութեան
 բաժակին մէջ, ու կրակով եւ ծծումբով պիտի
 տանջուի սուրբ հրեշտակներուն առջեւ ու
 Գառնուկին առջեւ: 11 Անոնց տանջանքին ծուխը
 պիտի բարձրանայ դարե՛ դար՛. ցերեկ ու գիշեր
 հանգստութիւն պիտի չունենան անոնք՝ որ
 կ'երկրպագեն զազանին ու անոր պատկերին, եւ
 ո՛վ որ կ'ընդունի անոր անունին դրոշմը»: (aiōn g165)
 12 Հոն է համբերութիւնը սուրբերուն, որոնք կը
 պահեն Աստուծոյ պատուիրաններն ու Յիսուսի
 հաւատքը: 13 Ու լսեցի երկինքէն ձայն մը՝ որ կ'ըսէր.
 «Գրէ՛. այժմէ՛ն իսկ երանելի են այն մեռելները՝
 որ կը մեռնին Տէրոջմով»: «Այո՛, - կ'ըսէ Հոգին,
 - թող հանգչին իրենց աշխատանքէն, քանի որ
 իրենց գործերը կը հետեւին իրենց»: 14 Ապա
 նայեցայ, եւ ահա՛ ճերմակ ամպ մը կար, ու ամպին
 վրայ մէկը բազմած էր՝ մարդու Որդիին նման.
 իր գլուխը ունէր ոսկիէ պսակ մը, եւ իր ձեռքին
 մէջ՝ սուր մանգաղ մը: 15 Ուրիշ հրեշտակ մը
 դուրս ելաւ տաճարէն, ու բարձրաձայն աղաղակեց

ամպին վրայ բազմողին. «Ղրկէ քու մանգաղդ եւ հնձէ. որովհետեւ հնձելու ժամը հասաւ, քանի որ երկրի հունձքը հասունցած է»: 16 Ամպին վրայ կը բազմողն ալ դրաւ իր մանգաղը երկրի վրայ, ու երկիրը հնձուեցաւ: 17 Ուրիշ հրեշտակ մը դուրս ելաւ երկինքի մէջ եղող տաճարէն. ինք ալ ունէր սուր մանգաղ մը: 18 Նաեւ զոհասեղանէն դուրս ելաւ ուրիշ հրեշտակ մը՝ որ իշխանութիւն ունէր կրակին վրայ. հզօր կանչով գոչեց անոր՝ որ ունէր սուր մանգաղը. «Ղրկէ քու սուր մանգաղդ ու կրէ երկրի այգիին ողկոյզները, որովհետեւ անոր խաղողները հասունցած են»: 19 Ուստի այդ հրեշտակը դրաւ իր մանգաղը երկրի վրայ, կրեց երկրի այգիին խաղողները եւ նետեց Աստուծոյ զայրոյթի մեծ հնձանին մէջ: 20 Հնձանը կոխուեցաւ քաղաքէն դուրս, ու արիւն ելաւ հնձանէն՝ մինչեւ ձիերուն սանձերը, հազար վեց հարիւր ասպարեզի տարածութեան վրայ:

15 Երկինքի մէջ տեսայ ուրիշ նշան մը՝ մեծ եւ զարմանալի.- եօթը հրեշտակներ՝ որոնք ունէին եօթը վերջին պատուհասները, որովհետեւ անոնցմով կ'աւարտէր Աստուծոյ զայրոյթը: 2 Տեսայ նաեւ որպէս թէ ապակեղէն ծով մը՝ կրակով խառնուած. անոնք որ յաղթած էին գազանին, անոր պատկերին եւ անոր անունին թիւին, կայնած էին ապակեղէն ծովուն վրայ՝ ունենալով Աստուծոյ քնարները: 3 Անոնք կ'երգէին Աստուծոյ ծառային՝ Մովսէսի երգը, ու Գառնուկին երգը, ըսելով. «Մեծ եւ սքանչելի են քու գործերդ, Տէր,

Ամենակալ՝ Աստուած. արդար ու ճշմարիտ են քու ճամբաներդ, Ազգերո՛ւ թագաւոր: **4** Տէ՛ր, ո՛վ պիտի չվախնայ քեզմէ եւ չփառաւորէ քու անունդ, որովհետեւ միակ սուրբը դո՛ւն ես. արդարեւ բոլոր ազգերը պիտի գան ու երկրպագեն քու առջեւդ, քանի որ քու արդար դատավճիռներդ յայտնաբերուեցան»: **5** Ասկէ ետք նայեցայ, եւ ահա՛ երկինքի մէջ բացուեցաւ վկայութեան խորանին տաճարը: **6** Եօթը պատուհասներ ունեցող եօթը հրեշտակները դուրս ելան տաճարէն, մաքուր ու փայլուն կտաւ հագած, եւ ոսկիէ գօտի կապած իրենց կուրծքին վրայ: **7** Չորս Էակներէն մէկը՝ եօթը հրեշտակներուն տուաւ եօթը ոսկիէ սկաւառակներ, լեցուն դարէ դար՝ ապրող Աստուծոյ զայրոյթով: **(aiṯn g165)** **8** Ու տաճարը ծովի մէջ լեցուեցաւ՝ Աստուծոյ փառքին եւ անոր զօրութեան պատճառով. ո՛չ մէկը կրնար մտնել տաճարը, մինչեւ որ իրագործուէին եօթը հրեշտակներուն եօթը պատուհասները:

16 Լսեցի տաճարէն հզօր ձայն մը՝ որ կ'ըսէր եօթը հրեշտակներուն. «Գացէ՛ք, թափեցէ՛ք Աստուծոյ զայրոյթին (եօթը) սկաւառակները երկրի վրայ»: **2** Առաջին հրեշտակը գնաց եւ թափեց իր սկաւառակը երկրի վրայ. գէշ ու չարորակ պալար մը եղաւ այն մարդոց վրայ՝ որ ունէին գազանին դրոշմը, եւ անոնց վրայ՝ որ կ'երկրպագէին անոր պատկերին: **3** Երկրորդ հրեշտակը թափեց իր սկաւառակը ծովուն վրայ. ջուրերը մեռած մարդու մը արիւնին պէս եղան, ու ծովուն մէջի բոլոր

կենդանիները մեռան: 4 Երրորդ հրեշտակը թափեց իր սկաւառակը գետերուն եւ ջուրերու աղբիւրներուն վրայ, ու անոնք արիւն եղան: 5 Լսեցի ջուրերուն հրեշտակը՝ որ կ'ըսէր. «Արդար ես, դուն՝ որ ես եւ որ էիր, ու սուրբ ես՝ որ այսպէս դատեցիր, 6 որովհետեւ անոնք թափեցին սուրբերուն եւ մարգարէներուն արիւնը. դուն արիւն խմել տուիր անոնց՝ քանի որ արժանի են»: 7 Ու զոհասեղանէն լսեցի՝ որ կ'ըսէր. «Այո, Տէր, Ամենակալ Աստուած, քու դատաստաններդ ճշմարիտ եւ արդար են»: 8 Չորրորդ հրեշտակը թափեց իր սկաւառակը արեւին վրայ, 9 ու զօրութիւն տրուեցաւ անոր՝ որ կրակով տօթակէզ ընէ մարդիկը: Մարդիկ տօթակէզ եղան սաստիկ տօթէն, եւ հայիոյեցին անունը Աստուծոյ՝ որ իշխանութիւն ունի այս պատուհասներուն վրայ. բայց չապաշխարեցին՝ որ փառք տան անոր: 10 Յինգերորդ հրեշտակը թափեց իր սկաւառակը գազանին գահին վրայ, ու անոր թագաւորութիւնը խաւարեցաւ: Յաւեն՝ մարդիկ կը ծամէին իրենց լեզուն, 11 ու հայիոյեցին երկինքի Աստուծոյն՝ իրենց ցաւերուն եւ պալարներուն պատճառով. բայց չապաշխարեցին իրենց գործերէն: 12 Վեցերորդ հրեշտակը թափեց իր սկաւառակը Եփրատ մեծ գետին վրայ, ու անոր ջուրերը ցամբեցան, որպէսզի պատրաստուի արեւելքի թագաւորներուն ճամբան: 13 Տեսայ թէ վիշապին բերանէն, գազանին բերանէն եւ սուտ մարգարէին բերանէն դուրս ելան երեք անմաքուր ոգիներ՝

գորտերու նմանող: **14** Արդարեւ անոնք դեւերու ոգիներ էին, որ նշաններ կ'ընէին ու կ'երթային ամբողջ երկրագունդի թագաւորներուն, որպէսզի հաւաքեն զանոնք Ամենակալ Աստուծոյ այդ մեծ օրուան պատերազմին համար: **15** (Ահա՛ գողի պէս կու գամ. երանի՛ անոր՝ որ արթուն կը կենայ եւ կը պահէ իր հանդերձները, որպէսզի մերկ չշրջի ու իր անվայելչութիւնը չտեսնուի:) **16** Եւ հաւաքեցին զանոնք տեղ մը, որ երրայերէն Արմագեդոն կը կոչուի: **17** Եօթներորդ հրեշտակը թափեց իր սկաւառակը օդին մէջ, ու երկինքի տաճարէն՝ զահէն հզօր ձայն մը ելաւ, որ կ'ըսէր. «Եղա՛ւ»: **18** Եւ փայլակներ, ձայներ ու որոտումներ՝ եղան: Հզօր երկրաշարժ մըն ալ եղաւ. այդպիսի մեծ ու հզօր երկրաշարժ եղած չէր երկրի վրայ՝ մարդոց ըլլալէն ի վեր: **19** Մեծ քաղաքը երեք մաս եղաւ, եւ ազգերուն քաղաքները կործանեցան: Մեծ Բաբելոնը յիշուեցաւ Աստուծոյ առջեւ, որպէսզի տայ անոր իր զայրագին բարկութեան գինիին բաժակը: **20** Ամեն կղզի փախաւ, ու լեռները չգտնուեցան: **21** Գրեթէ տաղանդ մը կշռող խոշոր կարկուտ իջաւ երկինքէն՝ մարդոց վրայ. եւ մարդիկ հայհոյեցին Աստուծոյ՝ կարկուտի պատուհասին համար, որովհետեւ այդ պատուհասը չափազանց սաստիկ էր:

17 Եօթը սկաւառակներ ունեցող եօթը հրեշտակներէն մէկը եկաւ եւ ինծի հետ խօսեցաւ՝ ըսելով. «Եկր՛ւր. ցոյց պիտի տամ քեզի դատաստանը այն մեծ պոռնիկին, որ

կը բազմի յորդառատ ջուրերու վրայ. 2 անոր հետ պոռնկեցան երկրի թագաւորները, եւ անոր պոռնկութեան գինիով արբեցան երկրի բնակիչները»: 3 Չիս առաւ՝ հոգիով տարաւ անապատը, ու տեսայ կին մը՝ որ բազմած էր որդան կարմիր գազանի մը վրայ: Այդ գազանը լեցուն էր հայիոյութեան անուններով, եւ ուներ եօթը գլուխ ու տասը եղջիւր: 4 Կինը հագած էր ծիրանի եւ որդան կարմիր, պճնուած էր ոսկիով, պատուական քարերով ու մարգարիտներով, եւ ձեռքին մէջ ուներ ոսկիէ բաժակ մը՝ գարշութիւններով ու իր պոռնկութեան անմաքութիւններով լեցուն: 5 Անոր ճակատին վրայ գրուած էր անուն մը. «Խորհուրդ, Մեծ Բաբելոն, պոռնիկներուն ու երկրի գարշութիւններուն մայրը»: 6 Տեսայ այդ կինը, որ արբեցած էր սուրբերուն արիւնով եւ Յիսուսի վկաներուն արիւնով: Երբ տեսայ զայն՝ մեծապէս զարմացայ: 7 Հրեշտակը ըսաւ ինծի. «Ինչո՞ւ զարմացար. քեզի պիտի ըսեմ խորհուրդը այդ կնոջ ու այդ գազանին՝ որ կը կրէ զայն իր վրայ, եւ ունի եօթը գլուխ ու տասը եղջիւր: 8 Այդ գազանը որ տեսար՝ կար, բայց չկայ. սակայն պիտի բարձրանայ անդունդէն ու երթայ դէպի կորուստ: Երկրի բնակիչները, որոնց անունը գրուած չէ կեանքի գիրքին մէջ՝ աշխարհի հիմնադրութենէն ի վեր, պիտի զարմանան՝ երբ տեսնեն այդ գազանը որ կար, բայց չկայ, թէպէտ կայ»: (Abyssos 912) 9 Հոն պէտք է իմաստութիւն ունեցող միտք մը:

Այդ եօթը զլուխները՝ եօթը լեռներ են, որոնց վրայ կը բազմի կինը. նաեւ եօթը թագաւորներ են: **10** Զինգը ինկած են, մէկը կայ, իսկ միւսը դեռ եկած չէ. երբ գայ՝ պետք է որ կարճ ատեն մը մնայ: **11** Այդ գազանը՝ որ կար, բայց չկայ, ան ալ ութերորդն է. եօթնէն է, ու կ'երթայ դէպի կորուստ: **12** Տասը եղջիւրները՝ որ տեսար, տասը թագաւորներ են, որոնք դեռ թագաւորութիւն ստացած չեն. սակայն գազանին հետ մէկ ժամու չափ թագաւորներու պէս իշխանութիւն պիտի առնեն: **13** Ասոնք միեւնոյն նպատակը ունին.- իրենց զօրութիւնն ու իշխանութիւնը տալ գազանին: **14** Ասոնք պիտի պատերազմին Գառնուկին հետ, եւ Գառնուկը պիտի յաղթէ անոնց. քանի որ ան տէրերուն Տէրն է, ու թագաւորներուն Թագաւորը, եւ անոր հետ եղողները՝ կանչուած, ընտրուած ու հաւատարիմ են»: **15** Նաեւ ըսաւ ինծի. «Այն ջուրերը՝ որ տեսար, որոնց վրայ բազմած էր պոռնիկը, ժողովուրդներ են, բազմութիւններ, ազգեր եւ լեզուներ: **16** Այն տասը եղջիւրները՝ որ տեսար գազանին վրայ, անոնք պիտի ատեն պոռնիկը. ամայի ու մերկ պիտի ընեն գայն, պիտի ուտեն անոր մարմինը եւ կրակով պիտի այրեն գայն: **17** Որովհետեւ Աստուած դրդեց գանոնք՝ գործադրելու իր նպատակը, միեւնոյն նպատակը.- իրենց թագաւորութիւնը տալ գազանին, մինչեւ որ իրագործուին Աստուծոյ խօսքերը: **18** Եւ կինը՝ որ տեսար, այն մեծ քաղաքն է՝ որ կը թագաւորէ երկրի թագաւորներուն վրայ»:

18 Ասկէ ետք՝ տեսայ (ուրիշ) հրեշտակ մը, որ երկինքէն կ'իջներ եւ մեծ իշխանութիւն ունէր, ու երկիրը լուսաւորուեցաւ անոր փառքով: **2** Ան հզօր ձայնով աղաղակեց. «Կործանեցան, կործանեցան մեծ Բաբելոնը, եւ եղաւ դէւերու բնակավայր, ամէն անմաքուր ոգիի բանտ, ու ամէն անմաքուր եւ ատելի թռչունի բանտ. **3** որովհետեւ բոլոր ազգերը խմեցին անոր պոռնկութեան զայրոյթի գինիէն, երկրի թագաւորները պոռնկեցան անոր հետ, ու երկրի առեւտրականները հարստացան անոր պերճանքին գօրութենէն»: **4** Լսեցի երկինքէն ուրիշ ձայն մըն ալ՝ որ կ'ըսէր. «Ելէ՛ք ատոր մէջէն, իմ ժողովուրդս, որպէսզի հաղորդակից չըլլաք անոր մեղքերուն ու բաժին չստանաք ատոր պատուհասներէն. **5** որովհետեւ ատոր մեղքերը կուտակուեցան մինչեւ երկինք, եւ Աստուած յիշեց անոր անիրաւութիւնները: **6** Հատուցանեցէ՛ք անոր՝ ինչպէս ինք հատուցանեց, ու կրկնապատիկ փոխարինեցէ՛ք անոր՝ իր արարքներուն համեմատ: Այն բաժակը որ ինք լեցուց՝ կրկնապատիկ լեցուցէ՛ք իրեն: **7** Ո՛րչափ փառաւորեց ինքզինք եւ ապրեցաւ պերճանքով, այդչափ ալ տանջանք ու սո՛ւգ տուէ՛ք անոր, որովհետեւ իր սիրտին մէջ կ'ըսէ. “Ես կը գահակալեմ իբր թագուհի. բնան այրի չեմ եւ բնան սուգ պիտի չտեսնեմ”»: **8** Ուստի մէկ օրուան մէջ պիտի գան անոր պատուհասները՝ մահ, սուգ ու սով, եւ կրակով պիտի այրուի. որովհետեւ հզօր է զայն դատող Տէր Աստուածը:

9 Երկրի թագաւորները, որ պռոնկեցան անոր
 հետ եւ ապրեցան պերճանքով, պիտի լան ու
 հեծեծեն անոր վրայ, երբ տեսնեն անոր հրդեհին
 ծուխը: **10** Անոր տանջանքին վախէն՝ հեռու
 պիտի կայնին եւ ըսեն. «Վայ, վայ քեզի, մեծ
 Բաբելոն քաղաք, հզօր քաղաք, քանի որ մէկ
 ժամուան մէջ եկաւ քու դատաստանդ»: **11**
 Երկրի առեւտրականներն ալ պիտի լան ու
 սգան անոր վրայ, որովհետեւ ալ ի՛նչ մէկը պիտի
 գնէ իրենց ապրանքը.- **12** ոսկիի, արծաթի,
 պատուական քարերու եւ մարգարիտներու,
 բեհեզի, ծիրանիի, մետաքսի ու որդան կարմիրի
 ապրանք. ամեն տեսակ բուրումնաւետ փայտ,
 ամեն տեսակ առարկայ՝ փղոսկրէ, եւ ամեն տեսակ
 առարկաներ՝ պատուական փայտէ, պղինձէ,
 երկաթէ ու մարմարէ. **13** կինամոն, (ամոմոն,)
 խունկեր, օծանելիքներ եւ կնդրուկ. գինի, ձէթ,
 նաշիի ու ցորեն. անասուններ, ոչխարներ, ձիեր,
 կառքեր, մարմիններ եւ մարդոց անձեր: **14** Զու
 անձիդ ցանկացած պտուղները գացին քեզմէ,
 բոլոր շքեղ ու փայլուն բաները գացին քեզմէ,
 եւ այլեւս բնաւ պիտի չգտնես զանոնք»: **15** Այս
 բաներուն առեւտրականները՝ որ հարստացած
 էին անոր միջոցով, հեռու պիտի կայնին անոր
 տանջանքին վախէն՝ լալով ու սգալով, **16** եւ
 պիտի ըսեն. «Վայ, վայ, մեծ քաղաք, դուն որ
 հագած էիր բեհեզ, ծիրանի ու որդան կարմիր,
 եւ պճնուած էիր ոսկիով, պատուական քարերով
 ու մարգարիտներով. **17** որովհետեւ այսչափ

շատ հարստութիւնը աւերեցաւ մէկ ժամուան մէջ»: Ամեն նաւաւար, բոլոր նաւագնացները, նաւաստիները, եւ անոնք՝ որ կ'օգտագործեն ծովը, հեռու կայնեցան 18 ու աղաղակեցին՝ երբ տեսան անոր հրդեհին ծովիւր. «Ո՛ր քաղաքը նման էր այս մեծ քաղաքին»: 19 Յող ցանեցին իրենց գլուխին վրայ, ու լալով եւ սգալով աղաղակեցին. «Վայ, վայ այդ մեծ քաղաքին, որուն մէջ՝ իր փարթամութենէն հարստացան բոլոր անոնք՝ որ նաւեր ունէին ծովուն վրայ. որովհետեւ մէկ ժամուան մէջ ամայացաւ: 20 Ուրախացէ՛ք անոր համար, երկինք, եւ դո՛ւք՝ սո՛ւրբ առաքեալներ ու մարգարէներ, քանի որ Աստուած ձեր վրէժը առաւ՝ անկէ»: 21 Յօրի հրեշտակ մը վերցուց քար մը՝ մեծ ջաղացքի քարի պէս, ու նետեց ծովը՝ ըսելով. «Ա՛յսպէս սաստկութեամբ պիտի խորտակուի Բաբելոն մեծ քաղաքը եւ անլ բնան պիտի չգտնուի: 22 Քնարահարներուն, երաժիշտներուն, սրնգահարներուն ու փողահարներուն ձայնը անլ բնան պիտի չլսուի քու մէջդ. անլ արհեստաւոր մը պիտի չգտնուի քու մէջդ, ինչ արհեստէ ալ ըլլայ. ջաղացքի քարին ձայնը անլ բնան պիտի չլսուի քու մէջդ. 23 ճրագին լոյսը անլ բնան պիտի չփայլի քու մէջդ. փեսային ձայնը եւ հարսին ձայնը անլ բնան պիտի չլսուին քու մէջդ. քանի որ երկրի մեծամեծներն էին քու առելտրականներդ, ու բոլոր ազգերը մոլորեցան քու կախարդութեամբդ»: 24 Եւ մարգարէներուն,

սուրբերուն ու երկրի վրայ բոլոր մորթուածներուն արիւնը գտնուեցաւ անոր մէջ:

19 Ասկէ ետք լսեցի երկինքէն մեծ բազմութեան հզօր ձայն մը՝ որ կ'ըսէր. «Ալէլուիա. փրկութիւն, փառք, պատիւ ու զօրութիւն մեր Աստուծոյն. 2 որովհետեւ ճշմարիտ եւ արդար են անոր դատաստանները, քանի որ դատեց այն մեծ պոռնիկը՝ որ իր պոռնկութեամբ ապականեց երկիրը, ու վրէժը առաւ իր ծառաներուն արիւնին՝ պահանջելով զայն անոր ձեռքէն»: **3** Եւ կրկին ըսին. «Ալէլուիա. անոր ծուխը կը բարձրանայ դարէ դար՝»: (aiōn g165) **4** Քսանչորս երեցները եւ չորս էակները ինկան ու երկրպագեցին Աստուծոյ՝ որ կը բազմի գահին վրայ, ըսելով. «Ամէն. ալէլուիա »: **5** Եւ գահէն ելաւ ձայն մը՝ որ կ'ըսէր. «Գովաբանեցէք մեր Աստուածը, դո՛ւք՝ իր բոլոր ծառաները, ու դո՛ւք որ կը վախնաք իրմէ՝ թէ՛ պգտիկներ, թէ՛ մեծեր»: **6** Լսեցի նաեւ ձայն մը՝ մեծ բազմութեան ձայնի պէս, յորդառատ ջուրերու ձայնի պէս եւ սաստիկ որոտումներու ձայնի պէս, որ կ'ըսէր. «Ալէլուիա, որովհետեւ Տէրը, (մեր) Ամենակալ Աստուածը թագաւորեց: **7** Ուրախանանք, ցնծանք ու փառք տանք անոր, քանի որ Գառնուկին հարսանիքը հասաւ եւ իր կինը պատրաստեց ինքզինք: **8** Անոր շնորհուեցաւ հագնիլ մաքուր ու փայլուն բեհեզ, քանի որ այդ բեհեզը՝ սուրբերուն արդարութիւնն է»: **9** Նաեւ ըսաւ ինծի. «Գրէ. երանի՛ անոնց՝ որ հրաւիրուած են Գառնուկին հարսանիքի ընթրիքին»: Ու

ըսաւ ինծի. «Ասո՛նք են Աստուծոյ ճշմարիտ խօսքերը»: 10 Ես ալ ինկայ անոր ոտքերուն առջեւ՝ որպէսզի երկրպագեմ անոր: Բայց ըսաւ ինծի. «Չգուշացիր, մի՛ ըներ. որովհետեւ ես ծառայակից եմ քեզի եւ եղբայրներուդ՝ որոնք ունին Յիսուսի վկայութիւնը: Աստուծոյ երկրպագէ (որովհետեւ Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է) »: 11 Ապա տեսայ երկինքը բացուած, եւ ահա՛ ճերմակ ձի մը կար: Անոր վրայ հեծնողը կը կոչուի Յաւատարիմ ու ճշմարիտ, եւ արդարութեամբ կը դատէ ու կը պատերազմի: 12 Անոր աչքերը կրակի բոցի պէս էին, գլուխին վրայ շատ թագեր կային, եւ ուներ գրուած անուն մը՝ որ ոչ մէկը գիտէր, հապա միայն ինք: 13 Հագած էր արիւնի մէջ թաթխուած հանդերձ մը: Անոր անունը կը կոչուի՝ “Աստուծոյ Խօսքը”: 14 Երկինքի մէջ եղող զօրքերը կը հետեւէին անոր՝ ճերմակ ձիերով, ճերմակ ու մաքուր բեհեզներ հագած: 15 Անոր բերանէն կ’ելլէր սրած թուր մը, որպէսզի անով զարնէ ազգերը: Ինք պիտի հովուէ զանոնք՝ երկաթէ գաւազանով, եւ ինք պիտի կոխէ Ամենակալ Աստուծոյ զայրագին բարկութեան զինիին հնձանը: 16 Իր հանդերձին վրայ ու իր ազդրին վրայ ուներ գրուած անուն մը՝ “Թագաւորներու թագաւոր եւ Տէրերու տէր”: 17 Տեսայ նաեւ հրեշտակ մը՝ որ կայնած էր արեւին մէջ: Ան բարձրաձայն աղաղակեց երկինքի մէջտեղ թռչող բոլոր թռչուններուն. «Եկէ՛ք ու հաւաքուեցէ՛ք Աստուծոյ մեծ

ընթրիքին՝, 18 որպէսզի ուտէք թագաւորներուն մարմինները, հազարապետներուն մարմինները, հզօրներուն մարմինները, ձիերուն եւ անոնց վրայ հեծնողներուն մարմինները, ու բոլորին մարմինները, ազատներուն թէ ստրուկներուն, պզտիկներուն թէ մեծերուն»: 19 Եւ տեսայ զազանը, ու երկրի թագաւորները եւ անոնց զօրքերը, հաւաքուած՝ պատերազմելու ձիուն վրայ հեծնողին հետ, ու անոր զօրքերուն հետ: 20 Գազանը բռնուեցաւ, եւ անոր հետ՝ սուտ մարգարէն, որ անոր առջեւ ըրաւ նշաններ՝ որոնցմով մոլորեցուց զազանին դրոշմը ընդունողներն ու անոր պատկերին երկրպագողները: Երկուքն ալ ողջ-ողջ նետուեցան ծծումբով վառող կրակի լիճը: (Limnē Pyr g3041 g4442) 21 Իսկ մնացողները սպաննուեցան ձիուն վրայ հեծնողին թուրէն, որ կ'ելլէր անոր բերանէն. ու բոլոր թռչունները կշտացան անոնց մարմիններէն:

20 Յետոյ տեսայ հրեշտակ մը՝ որ կ'իջնէր երկինքէն. իր ձեռքին մէջ ունէր անդունդի բանալին եւ մեծ շղթայ մը: (Abyssos g12) 2 Ան բռնեց վիշապը, այն նախկին օձը՝ որ Չարախօսն ու Սատանան է, եւ կապեց զայն հազար տարի: 3 Անդունդը նետեց զայն, զոցեց ու կնիք դրաւ անոր վրայ, որպէսզի ալ չմոլորեցնէ ազգերը՝ մինչեւ որ աւարտի հազար տարին: Անկէ ետք՝ ան պէտք է արձակուի կարճ ժամանակուան մը համար: (Abyssos g12) 4 Տեսայ

նաեւ գահեր, որոնց վրայ բազմեցան, եւ անոնց տրուեցաւ դատաւարութիւնը: Տեսայ նաեւ Յիսուսի վկայութեան համար ու Աստուծոյ խօսքին համար գլխատուածներուն անձերը: Անոնք չերկրպագեցին գագանին, ո՛չ ալ անոր պատկերին. չընդունեցին անոր դրոշմը իրենց ճակատին կամ իրենց ձեռքին վրայ: Ուստի ապրեցան ու հազար տարի թագաւորեցին Քրիստոսի հետ: **5** Միւս մեռելները չվերապրեցան մինչեւ որ աւարտեցաւ հազար տարին: Ա՛յս է առաջին յարութիւնը: **6** Երանելի եւ սո՛ւրբ են անոնք՝ որ բաժին ունին՝ առաջին յարութեան մէջ: Երկրորդ մահը իշխանութիւն չունի ասոնց վրայ. հապա անոնք պիտի ըլլան Աստուծոյ ու Քրիստոսի քահանաները, եւ հազար տարի պիտի թագաւորեն անոր հետ: **7** Երբ հազար տարին աւարտի, Սատանան պիտի արձակուի իր բանտէն, դուրս պիտի ելլէ ու մոլորեցնէ երկրին չորս անկիւնները եղող ազգերը, Գոգը եւ Մագոգը, որպէսզի հաւաքէ զանոնք պատերազմելու. անոնց թիւը ծովու աւազին չափ է: **8** Անոնք բարձրացան երկրի լայնութեան վրայ, ու շրջապատեցին սուրբերուն բանակավայրը եւ սիրելի քաղաքը: **9** Սակայն երկինքէն՝ Աստուծմէ կրակ իջաւ ու լափեց զանոնք: **10** Իսկ Չարախօսը՝ որ մոլորեցուց զանոնք, նետուեցաւ կրակի եւ ծծումբի լիճին մէջ: Հոն էին գագանն ու սուտ մարգարէն, եւ պիտի տանջուին ցերեկ ու գիշեր՝ դարձ դարձ: (aiōn g165, Limnē Pyr g3041 g4442) **11** Յետոյ

տեսայ մեծ, ճերմակ գահ մը, եւ անոր վրայ բազմողը, որուն երեսէն երկիրն ու երկինքը փախան եւ տեղ չգտնուեցաւ անոնց: **12** Տեսայ նաեւ մեռելները, պզտիկ ու մեծ, որոնք կայնած էին Աստուծոյ առջեւ: Գիրքերը բացուեցան. բացուեցաւ նաեւ ուրիշ գիրք մը՝ որ կեանքի գիրքն է. ու մեռելները դատուեցան գիրքերուն մէջ գրուածներուն համաձայն, իրենց արարքներուն համեմատ: **13** Ծովը տուաւ իր մէջ եղող մեռելները, եւ մահն ու դժոխքը տուին իրենց մէջ եղող մեռելները. եւ անոնք դատուեցան, իւրաքանչիւրը՝ իր արարքներուն համեմատ: (Hadēs g86) **14** Մահն ու դժոխքը նետուեցան կրակի լիճին մէջ. այս է երկրորդ մահը: (Hadēs g86, Limnē Pyr g3041 g4442) **15** Ո՛վ որ կեանքի գիրքին մէջ արձանագրուած չգտնուեցաւ՝ նետուեցաւ կրակի լիճին մէջ: (Limnē Pyr g3041 g4442)

21 Ապա տեսայ նոր երկինք մը եւ նոր երկիր մը, որովհետեւ առաջին երկինքն ու առաջին երկիրը անցան, եւ ալ ծով չկար: **2** Տեսայ սուրբ քաղաքը՝ նոր Երուսաղէմը, որ կ'իջնէր երկինքէն՝ Աստուծմէ, իր ամուսինին համար զարդարուած հարսի մը պէս պատրաստուած: **3** Ու լսեցի երկինքէն հզօր ձայն մը՝ որ կ'ըսէր. «Ահա Աստուծոյ խորանը՝ մարդոց մէջ: Ի՞նք պիտի բնակի հոն, եւ անոնք պիտի ըլլան իր ժողովուրդը. Աստուած ինք պիտի ըլլայ անոնց հետ՝ իբր անոնց Աստուածը: **4** Ի՞նք պիտի սրբէ անոնց աչքերէն բոլոր արցունքները. ալ մահ պիտի չըլլայ, ո՛չ սուգ, ո՛չ գոչիւն: Այլեւս բնաւ ցաւ պիտի չըլլայ, որովհետեւ առաջուան

բաները անցան»։ 5 Գահին վրայ բազմողը ըսաւ.
 «Ահա՛ նոր կ'ընեմ բոլոր բաները»։ Եւ ըսաւ ինծի.
 «Գրէ՛, որովհետեւ այս խօսքերը ճշմարիտ ու
 վստահելի են»։ 6 Նաեւ ըսաւ ինծի. «Եղան. ես
 եմ Ալֆան եւ Օմեղան, Սկիզբն ու Վախճանը.
 ես ծարաւին ձրի՛ պիտի տամ կեանքի ջուրին
 աղբիւրէն։ 7 Ա՛ն որ կը յաղթե՛ պիտի ժառանգէ
 բոլոր բաները, ու ես Աստուած պիտի ըլլամ
 անոր, ան ալ որդի պիտի ըլլայ ինծի։ 8 Բայց
 երկչոտներուն, անհաւատներուն, գարշելիներուն,
 մարդասպաններուն, պոռնկողներուն,
 կախարդներուն, կռապաշտներուն եւ բոլոր
 ստախօսներուն բաժինը՝ պիտի ըլլայ կրակով
 ու ծծումբով վառող լիճին մէջ, որ երկրորդ
 մահն է»։ (Limnē Pyr g3041 g4442) 9 Եօթը վերջին
 պատուհասներով լեցուն եօթը սկաւառակները
 ունեցող եօթը հրեշտակներէն մէկը եկաւ եւ ինծի
 հետ խօսեցաւ՝ ըսելով. «Եկն՛ր. ցոյց պիտի տամ
 քեզի հարսը՝ Գառնուկին կինը»։ 10 Ու հոգիով
 տարաւ զիս մեծ եւ բարձր լերան մը վրայ, ու
 ցոյց տուաւ ինծի սուրբ քաղաքը՝ Երուսաղէմը,
 որ կ'իջնէր երկինքէն՝ Աստուծմէ, 11 եւ ունէր
 Աստուծոյ փառքը։ Անոր լուսաւորութիւնը շատ
 պատուական քարի նման էր, բիւրեղեայ յասպիս
 քարի պէս։ 12 Անոր պարիսպը մեծ ու բարձր
 էր, եւ ունէր տասներկու դուռ. տասներկու
 հրեշտակներ կային դռներուն քով, որոնց վրայ
 գրուած էին անուններ, այսինքն՝ Իսրայէլի
 որդիներուն տասներկու տոհմերուն անունները.

13 արեւելքէն՝ երեք դուռ, հիւսիսէն՝ երեք դուռ,
 հարաւէն՝ երեք դուռ, արեւմուտքէն՝ երեք դուռ: 14
 Քաղաքին պարիսպը ունէր տասներկու հիմ, եւ
 անոնց վրայ գրուած էին Գառնուկին տասներկու
 առաքեալներուն (տասներկու) անունները:
 15 Ինծի հետ խօսողը ունէր ոսկիէ եղէգ մը,
 որպէսզի անով չափէ քաղաքը, անոր դռներն
 ու անոր պարիսպը: 16 Քաղաքը քառակուսի
 կառուցանուած էր, եւ անոր երկայնքը լայնքին
 չափ էր. քաղաքը եղէգով չափեց՝ տասներկու
 հազար ասպարէգ: Անոր երկայնքը, լայնքն ու
 բարձրութիւնը նոյնչափ էին: 17 Չափեց նաեւ անոր
 պարիսպը՝ հարիւր քառասունչորս կանգուն,
 մարդու չափով, այսինքն՝ հրեշտակին չափով: 18
 Անոր պարիսպը շինուած էր յասպիս քարէ, իսկ
 քաղաքը գուտ ոսկի էր՝ մաքուր ապակիի նման: 19
 Քաղաքին պարիսպին հիմերը զարդարուած էին
 ամեն տեսակ պատուական քարերով. առաջին
 հիմը յասպիս էր, երկրորդը՝ շափիւղայ, երրորդը՝
 քաղկեդոն, չորրորդը՝ զմրուխտ, 20 հինգերորդը՝
 եղնգնաքար, վեցերորդը՝ սարդիոն, եօթներորդը՝
 ոսկեքար, ութերորդը՝ վանակն, իններորդը՝
 տպագիոն, տասներորդը՝ քրիստապրասոս,
 տասնմեկերորդը՝ յակինթ, տասներկրորդը՝
 մեղեսիկ: 21 Տասներկու դռները՝ տասներկու
 մարգարիտ էին. իւրաքանչիւր դուռ՝ միակտուր
 մարգարիտ էր: Քաղաքին հրապարակը գուտ
 ոսկի էր՝ թափանցիկ ապակիի պէս: 22 Անոր մէջ
 տաճար չտեսայ, որովհետեւ Տէրը՝ Ամենակալ


Աստուածը, եւ Գառնուկն են անոր տաճարը: **23** Քաղաքը պէտք չունի արեւի, ո՛չ ալ լուսինի, որ լուսաւորեն զայն. որովհետեւ Աստուծոյ փառքը կը լուսաւորէ զայն, եւ Գառնուկն է անոր ճրագը: **24** (Փրկուած) ազգերը պիտի ընթանան անոր լոյսով, ու երկրի թագաւորները իրենց փառքը եւ պատիւը պիտի բերեն անոր մէջ: **25** Անոր դռները բնաւ պիտի չգոցուին ցերեկը. (որովհետեւ հոն գիշեր պիտի չըլլայ.) **26** ազգերուն փառքն ու պատիւը պիտի բերեն անոր մէջ: **27** Հոն բնաւ պղծութիւն մը պիտի չմտնէ, ո՛չ ալ զարշուծիւն գործող կամ սուտ խօսող մը. հապա պիտի մտնեն միայն անոնք՝ որ արձանագրուած են Գառնուկին կեանքի գիրքին մէջ:

22 Նաեւ ցոյց տուաւ ինծի կեանքի ջուրի գետ մը՝ բիւրեղի պէս փայլուն, որ կը բխէր Աստուծոյ ու Գառնուկին գահէն: **2** Այդ քաղաքին՝ հրապարակին մէջտեղը, եւ այդ գետին մէկ կողմն ու միւս կողմը կար կեանքի ծառը՝ որ կու տար տասներկու տեսակ պտուղ. ամէն ամիս կու տար իր պտուղը, իսկ ծառին տերեւները ազգերուն բուժումին համար էին: **3** Ա՛յ բնաւ նզովք պիտի չըլլայ, հապա անոր մէջ պիտի ըլլայ Աստուծոյ ու Գառնուկին գահը: Անոր ծառաները պիտի պաշտեն զայն, **4** պիտի տեսնեն անոր երեսը, եւ անոր անունը պիտի ըլլայ իրենց ճակատին վրայ: **5** Հոն ալ գիշեր պիտի չըլլայ. անոնք պէտք չունին ճրագի, ո՛չ ալ արեւի լոյսի, քանի որ Տէր Աստուած պիտի լուսաւորէ զանոնք,

ու պիտի թագաւորեն դարե դար՝: (aiṯn g165) 6

Եւ ըսաւ ինծի. «Այս խօսքերը վստահելի ու ճշմարիտ են: Տէրը, սուրբ մարգարէներուն՝ Աստուածը, դրկեց իր հրեշտակը՝ իր ծառաներուն ցոյց տալու ինչ որ պէտք է շուտով ըլլայ»: 7 «Ահա՛ շուտով կու գամ: Երանի՛ անոր՝ որ կը պահէ այս գիրքին մարգարէութեան խօսքերը»: 8 Ես՝ Յովհաննէս՝ տեսայ այս բաները, ու լսեցի: Երբ լսեցի եւ տեսայ, ինկայ որ երկրպագեմ այն հրեշտակին ոտքերուն առջեւ՝ որ ասոնք ցոյց կու տար ինծի: 9 Բայց ան ըսաւ ինծի. «Չգուշացիր, մի՛ ըներ. որովհետեւ ես ծառայակից եմ քեզի ու եղբայրներուդ՝ մարգարէներուն, եւ այս գիրքին խօսքերը պահողներուն: Աստուծոյ երկրպագէ՛: 10 Նաեւ ըսաւ ինծի. «Մի՛ կնքեր այս գիրքին մարգարէութեան խօսքերը, որովհետեւ ժամանակը մօտ է: 11 Ա՛ն որ անիրաւ է՝ դարձեալ թող անիրաւ ըլլայ, ան որ աղտոտ է՝ դարձեալ թող աղտոտ ըլլայ, ան որ արդար է՝ դարձեալ թող արդար ըլլայ, եւ ան որ սուրբ է՝ դարձեալ թող սուրբ ըլլայ»: 12 «Ահա՛ շուտով կու գամ, ու վարձատրութիւնս ինծի հետ է՝ իւրաքանչիւրին հատուցանելու իր արարքին համեմատ: 13 Ես եմ Ալֆան եւ Օմեղան, Սկիզբն ու Վախճանը, Առաջինը եւ Վերջինը»: 14 «Երանի՛ անոնց՝ որ կը գործադրեն անոր պատուիրանները, որպէսզի իրաւունք ունենան ուտելու կեանքի ծառէն, ու դռներէն ներս՝ քաղաքը մտնեն: 15 Քանի որ դուրս պիտի մնան շուները,

կախարդները, պոռնկողները, մարդասպանները, կռապաշտները, եւ զի որ սուտը կը սիրէ ու կը խօսի»: 16 «Ես՝ Յիսուս, դրկեցի իմ հրեշտակս՝ այս բաներուն մասին վկայելու ձեզի՝ եկեղեցիներուն մէջ: Ես եմ Դաւիթի արմատն ու ցեղը, առտուան պայծառ աստղը»: 17 Հոգին ու հարսը կ'ըսեն. «Եկ՛ր», եւ ան որ կը լսէ՝ թող ըսէ. «Եկ՛ր»: Ան որ ծարաւ է՝ թող գայ, եւ զի որ կ'ուզէ՝ թող ծրի առնէ կեանքի ջուրը: 18 Ես կը վկայեմ բոլոր անոնց՝ որ կը լսեն այս գիրքին մարգարէութեան խօսքերը. եթէ մէկը ասոնց վրայ աւելցնէ բան մը, Աստուած ալ իր վրայ պիտի աւելցնէ այն պատուհասները՝ որ գրուած են այս գիրքին մէջ: 19 Ու եթէ մէկը վերցնէ բան մը այս մարգարէութեան գիրքին խօսքերէն, Աստուած ալ պիտի վերցնէ անոր բաժինը կեանքի գիրքէն եւ սուրբ քաղաքէն՝ որոնց մասին գրուած է այս գիրքին մէջ: 20 Այս բաները վկայողը կ'ըսէ. «Այո, շուտով կու գամ»: Ամէն. եկ՛ր, Տէր Յիսուս: 21 Մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին՝ հետ: Ամէն:



*Տեսայ սուրբ քաղաքը՝ նոր Երուսաղեմը, որ կ'իջնէր երկինքէն՝ Աստուծմէ,
իր ամուսինին համար վարդարուած հարսի մը պէս պատրաստուած:
Ու լսեցի երկինքէն հօր ձայն մը՝ որ կ'ըսէր. «Ահա Աստուծոյ խորանը՝
մարդոց մէջ: Բնք պիտի բնակի ինն, եւ անոնք պիտի ըլլան իր ժողովուրդը.
Աստուած ինք պիտի ըլլայ անոնց հետ՝ իբր անոնց Աստուածը:
ՅԱՅՏԵՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՅԱՆՆՈՒ 21:2-3*

ընթերցողի ուղեցույց

Արեւմտահայերէն at AionianBible.org/Readers-Guide

The Aionian Bible republishes public domain and Creative Common Bible texts that are 100% free to copy and print. The original translation is unaltered and notes are added to help your study. The notes show the location of eleven special Greek and Hebrew Aionian Glossary words to help us better understand God's love for individuals and for all mankind, and the nature of afterlife destinies.

Who has the authority to interpret the Bible and examine the underlying Hebrew and Greek words? That is a good question! We read in 1 John 2:27, *"As for you, the anointing which you received from him remains in you, and you do not need for anyone to teach you. But as his anointing teaches you concerning all things, and is true, and is no lie, and even as it taught you, you remain in him."* Every Christian is qualified to interpret the Bible! Now that does not mean we will all agree. Each of us is still growing in our understanding of the truth. However, it does mean that there is no infallible human or tradition to answer all our questions. Instead the Holy Spirit helps each of us to know the truth and grow closer to God and each other.

The Bible is a library with 66 books in the Protestant Canon. The best way to learn God's word is to read entire books. Read the book of Genesis. Read the book of John. Read the entire Bible library. Topical studies and cross-referencing can be good. However, the safest way to understand context and meaning is to read whole Bible books. Chapter and verse numbers were added for convenience in the 16th century, but unfortunately they can cause the Bible to seem like an encyclopedia. The Aionian Bible is formatted with simple verse numbering, minimal notes, and no cross-referencing in order to encourage the reading of Bible books.

Bible reading must also begin with prayer. Any Christian is qualified to interpret the Bible with God's help. However, this freedom is also a responsibility because without the Holy Spirit we cannot interpret accurately. We read in 1 Corinthians 2:13-14, *"And we speak of these things, not with words taught by human wisdom, but with those taught by the Spirit, comparing spiritual things with spiritual things. Now the natural person does not receive the things of the Spirit of God, for they are foolishness to him, and he cannot understand them, because they are spiritually discerned."* So we cannot understand in our natural self, but we can with God's help through prayer.

The Holy Spirit is the best writer and he uses literary devices such as introductions, conclusions, paragraphs, and metaphors. He also writes various genres including historical narrative, prose, and poetry. So Bible study must spiritually discern and understand literature. Pray, read, observe, interpret, and apply. Finally, *"Do your best to present yourself approved by God, a worker who does not need to be ashamed, properly handling the word of truth."* 2 Timothy 2:15. *"God has granted to us his precious and exceedingly great promises; that through these you may become partakers of the divine nature, having escaped from the corruption that is in the world by lust. Yes, and for this very cause adding on your part all diligence, in your faith supply moral excellence; and in moral excellence, knowledge; and in knowledge, self-control; and in self-control patience; and in patience godliness; and in godliness brotherly affection; and in brotherly affection, love. For if these things are yours and abound, they make you to be not idle nor unfruitful to the knowledge of our Lord Jesus Christ,"* 2 Peter 1:4-8.

բառգիրք

Արեւմտահայերէն at AionianBible.org/Glossary

The Aionian Bible un-translates and instead transliterates eleven special words to help us better understand the extent of God's love for individuals and all mankind, and the nature of afterlife destinies. The original translation is unaltered and a note is added to 64 Old Testament and 200 New Testament verses. Compare the meanings below to the Strong's Concordance and Glossary definitions.

Abyssos g12

Greek: proper noun, place

Usage: 9 times in 3 books, 6 chapters, and 9 verses

Meaning:

Temporary prison for special fallen angels such as Apollyon, the Beast, and Satan.

aīdios g126

Greek: adjective

Usage: 2 times in Romans 1:20 and Jude 6

Meaning:

Lasting, enduring forever, eternal.

aiōn g165

Greek: noun

Usage: 127 times in 22 books, 75 chapters, and 102 verses

Meaning:

A lifetime or time period with a beginning and end, an era, an age, the completion of which is beyond human perception, but known only to God the creator of the aiōns, Hebrews 1:2. Never meaning simple endless or infinite chronological time in Greek usage. Read Dr. Heleen Keizer and Ramelli and Konstan for proofs.

aiōnios g166

Greek: adjective

Usage: 71 times in 19 books, 44 chapters, and 69 verses

Meaning:

From start to finish, pertaining to the age, lifetime, entirety, complete, or even consummate. Never meaning simple endless or infinite chronological time in Koine Greek usage. Read Dr. Heleen Keizer and Ramelli and Konstan for proofs.

eleēse g1653

Greek: verb, aorist tense, active voice, subjunctive mood, 3rd person singular

Usage: 1 time in this conjugation, Romans 11:32

Meaning:

To have pity on, to show mercy. Typically, the subjunctive mood indicates possibility, not certainty. However, a subjunctive in a purpose clause is a resulting action as certain as the causal action. The subjunctive in a purpose clause functions as an indicative, not an optative. Thus, the grand conclusion of grace theology in Romans 11:32 must be clarified. God's mercy on all is not a possibility, but a certainty. See ntgreek.org.

Geenna g1067

Greek: proper noun, place

Usage: 12 times in 4 books, 7 chapters, and 12 verses

Meaning:

Valley of Hinnom, Jerusalem's trash dump, a place of ruin, destruction, and judgment in this life, or the next, though not eternal to Jesus' audience.

Hadēs g86

Greek: proper noun, place

Usage: 11 times in 5 books, 9 chapters, and 11 verses

Meaning:

Synonymous with Sheol, though in New Testament usage Hades is the temporal place of punishment for deceased unbelieving mankind, distinct from Paradise for deceased believers.

Limnē Pyr g3041 g4442

Greek: proper noun, place

Usage: Phrase 5 times in the New Testament

Meaning:

Lake of Fire, final punishment for those not named in the Book of Life, prepared for the Devil and his angels, Matthew 25:41.

Sheol h7585

Hebrew: proper noun, place

Usage: 66 times in 17 books, 50 chapters, and 64 verses

Meaning:

The grave or temporal afterlife world of both the righteous and unrighteous, believing and unbelieving, until the general resurrection.

Tartaroō g5020

Greek: proper noun, place

Usage: 1 time in 2 Peter 2:4

Meaning:

Temporary prison for particular fallen angels awaiting final judgment.

բանգիրք +

AionianBible.org/Bibles/Armenian---Armenian-Bible-Western/Noted

Glossary references are below. Strong's Hebrew and Greek number notes are added to 64 Old Testament and 200 New Testament verses. Questioned verse translations do not contain Aionian Glossary words and may wrongly imply *eternal* or *Hell*. * The note placement is skipped or adjusted for verses with non-standard numbering.

Abyssos

ՂոՒԻԿԱՍ 8:31
ՀՈՌՎՄԱՅԵՑԻՍ 10:7
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 9:1
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 9:2
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 9:11
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 11:7
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 17:8
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 20:1
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 20:3

aidios

ՀՈՌՎՄԱՅԵՑԻՍ 1:20
ՅՈՒԴԱՅԻ 1:6

aiōn

ՄԱՏԹԵՈՍ 12:32
ՄԱՏԹԵՈՍ 13:22
ՄԱՏԹԵՈՍ 13:39
ՄԱՏԹԵՈՍ 13:40
ՄԱՏԹԵՈՍ 13:49
ՄԱՏԹԵՈՍ 21:19
ՄԱՏԹԵՈՍ 24:3
ՄԱՏԹԵՈՍ 28:20
ՄԱՐԿՈՍ 3:29
ՄԱՐԿՈՍ 4:19
ՄԱՐԿՈՍ 10:30
ՄԱՐԿՈՍ 11:14
ՂՈՒԿԱՍ 1:33
ՂՈՒԿԱՍ 1:55
ՂՈՒԿԱՍ 1:70
ՂՈՒԿԱՍ 16:8
ՂՈՒԿԱՍ 18:30
ՂՈՒԿԱՍ 20:34
ՂՈՒԿԱՍ 20:35
ՅՈՎՀԱՆՆՈՒ 4:14
ՅՈՎՀԱՆՆՈՒ 6:51
ՅՈՎՀԱՆՆՈՒ 6:58
ՅՈՎՀԱՆՆՈՒ 8:35
ՅՈՎՀԱՆՆՈՒ 8:51
ՅՈՎՀԱՆՆՈՒ 8:52
ՅՈՎՀԱՆՆՈՒ 9:32
ՅՈՎՀԱՆՆՈՒ 10:28
ՅՈՎՀԱՆՆՈՒ 11:26
ՅՈՎՀԱՆՆՈՒ 12:34
ՅՈՎՀԱՆՆՈՒ 13:8
ՅՈՎՀԱՆՆՈՒ 14:16

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 3:21
ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 15:18
ՀՈՌՎՄԱՅԵՑԻՍ 1:25
ՀՈՌՎՄԱՅԵՑԻՍ 9:5
ՀՈՌՎՄԱՅԵՑԻՍ 11:36
ՀՈՌՎՄԱՅԵՑԻՍ 12:2
ՀՈՌՎՄԱՅԵՑԻՍ 16:27
ԱՌԱՋԻՆ ԿՈՐՆԹԱՅԻՍ 1:20
ԱՌԱՋԻՆ ԿՈՐՆԹԱՅԻՍ 2:6
ԱՌԱՋԻՆ ԿՈՐՆԹԱՅԻՍ 2:7
ԱՌԱՋԻՆ ԿՈՐՆԹԱՅԻՍ 2:8
ԱՌԱՋԻՆ ԿՈՐՆԹԱՅԻՍ 3:18
ԱՌԱՋԻՆ ԿՈՐՆԹԱՅԻՍ 8:13
ԱՌԱՋԻՆ ԿՈՐՆԹԱՅԻՍ 10:11
ԵՐԿՐՈՐԴ ԿՈՐՆԹԱՅԻՍ 4:4
ԵՐԿՐՈՐԴ ԿՈՐՆԹԱՅԻՍ 9:9
ԵՐԿՐՈՐԴ ԿՈՐՆԹԱՅԻՍ 11:31
ԳԱՂԱՏԱՑԻՍ 1:4
ԳԱՂԱՏԱՑԻՍ 1:5
ԵՓԵՍԱՑԻՍ 1:21
ԵՓԵՍԱՑԻՍ 2:2
ԵՓԵՍԱՑԻՍ 2:7
ԵՓԵՍԱՑԻՍ 3:9
ԵՓԵՍԱՑԻՍ 3:11
ԵՓԵՍԱՑԻՍ 3:21
ԵՓԵՍԱՑԻՍ 6:12
ՓԻԼԻՊՊԵՑԻՍ 4:20
ԿՈՂՈՍԱՑԻՍ 1:26
ԱՌԱՋԻՆ ՏԻՄՈԹԵՈՍ 1:17
ԱՌԱՋԻՆ ՏԻՄՈԹԵՈՍ 6:17
ԵՐԿՐՈՐԴ ՏԻՄՈԹԵՈՍ 4:10
ԵՐԿՐՈՐԴ ՏԻՄՈԹԵՈՍ 4:18
ՏԻՖՈՍ 2:12
ԵՔՐԱՑԵՑԻՍ 1:2
ԵՔՐԱՑԵՑԻՍ 1:8
ԵՔՐԱՑԵՑԻՍ 5:6
ԵՔՐԱՑԵՑԻՍ 6:5
ԵՔՐԱՑԵՑԻՍ 6:20
ԵՔՐԱՑԵՑԻՍ 7:17
ԵՔՐԱՑԵՑԻՍ 7:21
ԵՔՐԱՑԵՑԻՍ 7:24
ԵՔՐԱՑԵՑԻՍ 7:28
ԵՔՐԱՑԵՑԻՍ 9:26
ԵՔՐԱՑԵՑԻՍ 11:3
ԵՔՐԱՑԵՑԻՍ 13:8
ԵՔՐԱՑԵՑԻՍ 13:21
ԱՌԱՋԻՆ ՊԵՏՐՈՍԻ 1:23

ԱՌԱՋԻՆ ՊԵՏՐՈՍԻ 1:25
ԱՌԱՋԻՆ ՊԵՏՐՈՍԻ 4:11
ԱՌԱՋԻՆ ՊԵՏՐՈՍԻ 5:11
ԵՐԿՐՈՐԴ ՊԵՏՐՈՍԻ 3:18
ԱՌԱՋԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 2:17
ԵՐԿՐՈՐԴ ՅՈՎՀԱՆՆՈՒ 1:2
ՅՈՒԴԱՅԻ 1:13
ՅՈՒԴԱՅԻ 1:25
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 1:6
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 1:18
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 4:9
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 4:10
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 5:13
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 7:12
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 10:6
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 11:15
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 14:11
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 15:7
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 19:3
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 20:10
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 22:5

aiōnios

ՄԱՏԹԵՈՍ 18:8
ՄԱՏԹԵՈՍ 19:16
ՄԱՏԹԵՈՍ 19:29
ՄԱՏԹԵՈՍ 25:41
ՄԱՏԹԵՈՍ 25:46
ՄԱՐԿՈՍ 3:29
ՄԱՐԿՈՍ 10:17
ՄԱՐԿՈՍ 10:30
ՂՈՒԿԱՍ 10:25
ՂՈՒԿԱՍ 16:9
ՂՈՒԿԱՍ 18:18
ՂՈՒԿԱՍ 18:30
ՅՈՎՀԱՆՆՈՒ 3:15
ՅՈՎՀԱՆՆՈՒ 3:16
ՅՈՎՀԱՆՆՈՒ 3:36
ՅՈՎՀԱՆՆՈՒ 4:14
ՅՈՎՀԱՆՆՈՒ 4:36
ՅՈՎՀԱՆՆՈՒ 5:24
ՅՈՎՀԱՆՆՈՒ 5:39
ՅՈՎՀԱՆՆՈՒ 6:27
ՅՈՎՀԱՆՆՈՒ 6:40
ՅՈՎՀԱՆՆՈՒ 6:47
ՅՈՎՀԱՆՆՈՒ 6:54
ՅՈՎՀԱՆՆՈՒ 6:68

3043ԱՆՆՈՒ 10:28
 3043ԱՆՆՈՒ 12:25
 3043ԱՆՆՈՒ 12:50
 3043ԱՆՆՈՒ 17:2
 3043ԱՆՆՈՒ 17:3
 ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 13:46
 ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 13:48
 ՀՈՌՎՄԱՑԵՑԻՍ 2:7
 ՀՈՌՎՄԱՑԵՑԻՍ 5:21
 ՀՈՌՎՄԱՑԵՑԻՍ 6:22
 ՀՈՌՎՄԱՑԵՑԻՍ 6:23
 ՀՈՌՎՄԱՑԵՑԻՍ 16:25
 ՀՈՌՎՄԱՑԵՑԻՍ 16:26
 ԵՐԿՐՈՐԴ ԿՈՐՆԹԱՑԻՍ 4:17
 ԵՐԿՐՈՐԴ ԿՈՐՆԹԱՑԻՍ 4:18
 ԵՐԿՐՈՐԴ ԿՈՐՆԹԱՑԻՍ 5:1
 ԳԱՂԱՏԱՑԻՍ 6:8
 ԵՐԿՐՈՐԴ ԹԵՍԱԴՈՆԻԿԵՑԻՍ 1:9
 ԵՐԿՐՈՐԴ ԹԵՍԱԴՈՆԻԿԵՑԻՍ 2:16
 ԱՌԱՋԻՆ ՏԻՄՈԹԵՆՍ 1:16
 ԱՌԱՋԻՆ ՏԻՄՈԹԵՆՍ 6:12
 ԱՌԱՋԻՆ ՏԻՄՈԹԵՆՍ 6:16
 ԵՐԿՐՈՐԴ ՏԻՄՈԹԵՆՍ 1:9
 ԵՐԿՐՈՐԴ ՏԻՄՈԹԵՆՍ 2:10
 ՏԻՏՈՍ 1:2
 ՏԻՏՈՍ 3:7
 ՓԻԼԻՍՈՆ 1:15
 ԵՔՐԱՑԵՑԻՍ 5:9
 ԵՔՐԱՑԵՑԻՍ 6:2
 ԵՔՐԱՑԵՑԻՍ 9:12
 ԵՔՐԱՑԵՑԻՍ 9:14
 ԵՔՐԱՑԵՑԻՍ 9:15
 ԵՔՐԱՑԵՑԻՍ 13:20
 ԱՌԱՋԻՆ ՊԵՏՐՈՍԻ 5:10
 ԵՐԿՐՈՐԴ ՊԵՏՐՈՍԻ 1:11
 ԱՌԱՋԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 1:2
 ԱՌԱՋԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 2:25
 ԱՌԱՋԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 3:15
 ԱՌԱՋԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 5:11
 ԱՌԱՋԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 5:13
 ԱՌԱՋԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 5:20
 ՅՈՒԴԱՑԻ 1:7
 ՅՈՒԴԱՑԻ 1:21
 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 14:6

eleēsē

ՀՈՌՎՄԱՑԵՑԻՍ 11:32

Geenna

ՄԱՏԹԵՆՍ 5:22
 ՄԱՏԹԵՆՍ 5:29
 ՄԱՏԹԵՆՍ 5:30
 ՄԱՏԹԵՆՍ 10:28
 ՄԱՏԹԵՆՍ 18:9
 ՄԱՏԹԵՆՍ 23:15
 ՄԱՏԹԵՆՍ 23:33
 ՄԱՐԿՈՍ 9:43

ՄԱՐԿՈՍ 9:45
 ՄԱՐԿՈՍ 9:47
 ՂՈՒԿԱՍ 12:5
 ՅԱԿՈԲՈՒ 3:6
Hadēs
 ՄԱՏԹԵՆՍ 11:23
 ՄԱՏԹԵՆՍ 16:18
 ՂՈՒԿԱՍ 10:15
 ՂՈՒԿԱՍ 16:23
 ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 2:27
 ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 2:31
 ԱՌԱՋԻՆ ԿՈՐՆԹԱՑԻՍ 15:55
 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 1:18
 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 6:8
 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 20:13
 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 20:14

Limnē Pyr

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 19:20
 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 20:10
 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 20:14
 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 20:15
 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 21:8

Sheol

ԾՆՆԴՈՑ 37:35
 ԾՆՆԴՈՑ 42:38
 ԾՆՆԴՈՑ 44:29
 ԾՆՆԴՈՑ 44:31
 ԹՈՒԵՐ 16:30
 ԹՈՒԵՐ 16:33
 ԵՐԿՐՈՐԴ ՕՐԷՆՔ 32:22
 ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Ա 2:6
 ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Բ 22:6
 ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Գ 2:6
 ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Գ 2:9
 ՅՈՒԲ 7:9
 ՅՈՒԲ 11:8
 ՅՈՒԲ 14:13
 ՅՈՒԲ 17:13
 ՅՈՒԲ 17:16
 ՅՈՒԲ 21:13
 ՅՈՒԲ 24:19
 ՅՈՒԲ 26:6

ՍԱՂՄՈՍ 6:5

ՍԱՂՄՈՍ 9:17

ՍԱՂՄՈՍ 16:10

ՍԱՂՄՈՍ 18:5

ՍԱՂՄՈՍ 30:3

ՍԱՂՄՈՍ 31:17

ՍԱՂՄՈՍ 49:14

ՍԱՂՄՈՍ 49:15

ՍԱՂՄՈՍ 55:15

ՍԱՂՄՈՍ 86:13

ՍԱՂՄՈՍ 88:3

ՍԱՂՄՈՍ 89:48

ՍԱՂՄՈՍ 116:3

ՍԱՂՄՈՍ 139:8

ՍԱՂՄՈՍ 141:7

ԱՌԱԿՆԵՐ 1:12

ԱՌԱԿՆԵՐ 5:5

ԱՌԱԿՆԵՐ 7:27

ԱՌԱԿՆԵՐ 9:18

ԱՌԱԿՆԵՐ 15:11

ԱՌԱԿՆԵՐ 15:24

ԱՌԱԿՆԵՐ 23:14

ԱՌԱԿՆԵՐ 27:20

ԱՌԱԿՆԵՐ 30:16

ԺՈՂՈՎՈՂ 9:10

ԵՐԳ ԵՐԳՈՑ 8:6

ԵՍԱՑԻ 5:14

ԵՍԱՑԻ 7:11

ԵՍԱՑԻ 14:9

ԵՍԱՑԻ 14:11

ԵՍԱՑԻ 14:15

ԵՍԱՑԻ 28:15

ԵՍԱՑԻ 28:18

ԵՍԱՑԻ 38:10

ԵՍԱՑԻ 38:18

ԵՍԱՑԻ 57:9

ԵԶԵԿԻԷԼ 31:15

ԵԶԵԿԻԷԼ 31:16

ԵԶԵԿԻԷԼ 31:17

ԵԶԵԿԻԷԼ 32:21

ԵԶԵԿԻԷԼ 32:27

ՕՍԷԷ 13:14

ԱՄՈՍ 9:2

ՅՈՎՆԱՆ 2:2


ԱՄԲԱԿՈՒՄ 2:5

Tartaroō

ԵՐԿՐՈՐԴ ՊԵՏՐՈՍԻ 2:4

Questioned


ԵՐԿՐՈՐԴ ՊԵՏՐՈՍԻ 2:17



Հաւատքով Արրահամ հնապանեցաւ, երբ կանչուեցաւ մեկնելու տեղ մը՝ որ պիտի առանար իրր ժառանգութիւն,
ու մեկնեցաւ՝ առանց գիտնալու թէ ո՞ր կ'երթար: - ԵԲՐԱՅԵՑԻՍ 11:8



Երբ փախաւոնն արձակեց ժողովրդին, Աստուած նրանց կարճ ճանապարհով՝ Փղշտացիների երկրով չառաջնորդեց, որովհետև Աստուած մտածեց, թէ ժողովուրդը պատեհալսի քննուելով՝ զուրկ վախենայ ու Եգիպտոս վերադառնայ: - ԵԼԲ 13:17



Քանի որ մարդու Որդին եկաւ ո՛չ թէ ապաստարկութիւն ընդունելու, հապա՛ւ՛ ապաստարկելու եւ իր անձը իր փրկանք տալու շատերու համար:

- ՄԱՐԿՈՍ 10:45



Պողոս, ծառայ Յիսուս Քրիստոսի, կանչուած՝ առաքելալ ըլլալու, նշանակուած՝ բարոյեկրու Աստուծոյ անկախարանը, - ՀՈՌՎԱԿԱՆՅԵՑԻՍ 1.1

Creation 4004 B.C.

Adam and Eve created	4004
Tubal-cain forges metal	3300
Enoch walks with God	3017
Methuselah dies at age 969	2349
God floods the Earth	2349
Tower of Babel thwarted	2247
Abraham sojourns to Canaan	1922
Jacob moves to Egypt	1706
Moses leads Exodus from Egypt	1491
Gideon judges Israel	1245
Ruth embraces the God of Israel	1168
David installed as King	1055
King Solomon builds the Temple	1018
Elijah defeats Baal's prophets	896
Jonah preaches to Nineveh	800
Assyrians conquer Israelites	721
King Josiah reforms Judah	630
Babylonians capture Judah	605
Persians conquer Babylonians	539
Cyrus frees Jews, rebuilds Temple	537
Nehemiah rebuilds the wall	454
Malachi prophesies the Messiah	416
Greeks conquer Persians	331
Seleucids conquer Greeks	312
Hebrew Bible translated to Greek	250
Maccabees defeat Seleucids	165
Romans subject Judea	63
Herod the Great rules Judea	37

(The Annals of the World, James Ussher)

Jesus Christ born 4 B.C.

New Heavens and Earth

1956	Christ returns for his people
1830	Jim Elliot martyrd in Ecuador
1731	John Williams reaches Polynesia
1614	Zinzendorf leads Moravian mission
1572	Japanese kill 40,000 Christians
1517	Jesuits reach Mexico
1455	Martin Luther leads Reformation
1323	Gutenberg prints first Bible
1276	Franciscans reach Sumatra
1100	Ramon Llull trains missionaries
1054	Crusades tarnish the church
997	The Great Schism
864	Adalbert martyrd in Prussia
716	Bulgarian Prince Boris converts
635	Boniface reaches Germany
569	Alopen reaches China
432	Longinus reaches Alodia / Sudan
397	Saint Patrick reaches Ireland
341	Carthage ratifies Bible Canon
325	Ulfilas reaches Goth / Romania
250	Niceae proclaims God is Trinity
197	Denis preaches Paris, France
70	Tertullian writes Christian literature
61	Titus destroys the Jewish Temple
52	Paul imprisoned in Rome, Italy
39	Thomas reaches Malabar, India
33	Peter reaches Gentile Cornelius
	Holy Spirit empowers the Church

(Wikipedia, Timeline of Christian missions)

Resurrected 33 A.D.

Where?

When?									
Innocence			Fallen			Glory			
Eternity Past	4000 BC Creation	Fall to Sin No Law	1500 BC Moses' Law	Advent of Christ 0-33 AD	Church Age Kingdom Age	Great White Throne	New Heaven and Earth		
God	God's Perfect Fellowship John 10:30	God's Perfect Fellowship with Adam in the Garden of Eden	Living in Unapproachable Light, 1 Timothy 6:16			God's Perfectly Restored Fellowship with All Mankind in the Holy City	All Restored Acts 3:21		
		Pre-Incarnate, John 8:58	Incarnate, John 1:14	Paradise, Luke 23:43					
		Everywhere, Psalm 139:7	Indwelling Believers, John 14:17						
		Serving the Savior or Satan on Earth, Ephesians 2:1-5							
		Blessed in Paradise, Luke 16:22							
Mankind	No Creation	No Fall No Death Gen 1:31	Punished in Hades until the final judgment, Luke 16:23 and Rev 20:13			No Hades No Dead Rev 20:3			
	No people Gen 1:1	Serving Mankind at God's Command, Hebrews 1:14							
		Imprisoned in Tartarus, 2 Peter 2:4 and Jude 6							
		Rebelling Against Christ Accusing Mankind							
		1 Peter 5:8 and Revelation 12:10							
Angels	Imprisoned Angels	No Fall	Thalaasa, Rev 20:13			Lake of Fire Prepared for the Devil and his Angels	Fallen Angels Forgiven? Col 1:20 Yes? Heb 2:16 No?		
	Fugitive Angels	No Unholy Angels	Lake of Fire Revelation 19:20						
	First Beast Demon		Abyss Revelation 20:2						
	False Prophet Demon								
	Satan								

Who?

ճակատագիր

Արեւմտահայերէն at AionianBible.org/Destiny

The Aionian Bible shows the location of eleven special Greek and Hebrew Aionian Glossary words to help us better understand God's love for individuals and for all mankind, and the nature of after-life destinies. The underlying Hebrew and Greek words typically translated as *Hell* show us that there are not just two after-life destinies, Heaven or Hell. Instead, there are a number of different locations, each with different purposes, different durations, and different inhabitants. Locations include 1) Old Testament *Sheol* and New Testament *Hadēs*, 2) *Geenna*, 3) *Tartaroō*, 4) *Abyssos*, 5) *Limnē Pyr*, 6) *Paradise*, 7) *The New Heaven*, and 8) *The New Earth*. So there is reason to review our conclusions about the destinies of redeemed mankind and fallen angels.

The key observation is that fallen angels will be present at the final judgment, 2 Peter 2:4 and Jude 6. Traditionally, we understand the separation of the Sheep and the Goats at the final judgment to divide believing from unbelieving mankind, Matthew 25:31-46 and Revelation 20:11-15. However, the presence of fallen angels alternatively suggests that Jesus is separating redeemed mankind from the fallen angels. We do know that Jesus is the helper of mankind and not the helper of the Devil, Hebrews 2. We also know that Jesus has atoned for the sins of all mankind, both believer and unbeliever alike, 1 John 2:1-2. Deceased believers are rewarded in Paradise, Luke 23:43, while unbelievers are punished in Hades as the story of Lazarus makes plain, Luke 16:19-31. Yet less commonly known, the punishment of this selfish man and all unbelievers is before the final judgment, is temporal, and is punctuated when Hades is evacuated, Revelation 20:13. So is there hope beyond Hades for unbelieving mankind? Jesus promised, "*the gates of Hades will not prevail*," Matthew 16:18. Paul asks, "*Hades where is your victory?*" 1 Corinthians 15:55. John wrote, "*Hades gives up*," Revelation 20:13.

Jesus comforts us saying, "*Do not be afraid*," because he holds the keys to *unlock* death and Hades, Revelation 1:18. Yet too often our *Good News* sounds like a warning to "*be afraid*" because Jesus holds the keys to *lock* Hades! Wow, we have it backwards! Hades will be evacuated! And to guarantee hope, once emptied, Hades is thrown into the Lake of Fire, never needed again, Revelation 20:14.

Finally, we read that anyone whose name is not written in the Book of Life is thrown into the Lake of Fire, the second death, with no exit ever mentioned or promised, Revelation 21:1-8. So are those evacuated from Hades then, "*out of the frying pan, into the fire?*" Certainly, the Lake of Fire is the destiny of the Goats. But, do not be afraid. Instead, read the Bible's explicit mention of the purpose of the Lake of Fire and the identity of the Goats, "*Then he will say also to those on the left hand, 'Depart from me, you cursed, into the consummate fire which is prepared for... the devil and his angels,'"* Matthew 25:41. Bad news for the Devil. Good news for all mankind!

Faith is not a pen to write your own name in the Book of Life. Instead, faith is the glasses to see that the love of Christ for all mankind has already written our names in Heaven. "*If the first fruit is holy, so is the lump*," Romans 11:16. Though unbelievers will suffer regrettable punishment in Hades, redeemed mankind will never enter the Lake of Fire, prepared for the devil and his angels. And as God promised, all mankind will worship Christ together forever, Philippians 2:9-11.



Ուրեմն զացէ՛ք, աշակերտեցէ՛ք բոլոր ազգերը, մկրտեցէ՛ք պանոսք Յօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով:
- ՄԱՏԹԷՈՍ 28:19